

ՕՏՐԻՆԻՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

10

ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ  
ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ИСТОРИИ

# ВИЗАНТИЙСКИЕ ИСТОЧНИКИ

## III

# ИОАНН СКИЛИЦА

ПЕРЕВОД С ОРИГИНАЛА.  
ПРЕДИСЛОВИЕ И ПРИМЕЧАНИЯ  
Р. М. БАРТИКЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1979



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Գ

ՀՈՎՀԱՆՆԵՍ  
ՍԿԻԼԻՑԵՍ

ԹԱՐԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԳՐԻՑ  
ԱՊԱԶՍԲԱՆ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՀՐԱՉ ԲԱՐԹԻԿՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1979

## Մ Ա Տ Ե Ն Ա Շ Ա Ր Ի Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ (գլխավոր խմբագիր), Լ. Ս. ԽԱԶՆԻՅԱՆ,  
 Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ, Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ (գլխավոր խմբագրի  
 տեղակալ), Հ. Գ. ՓԱՓԱԶՅԱՆ, Հ. Մ. ԲԱՐՔԻԿՅԱՆ  
 (գիտական ֆարտուղար)

Հատորի խմբագիր  
 Ս. Մ. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

## Հովհաննես Սկիլիցես.

Հ 851 [Բնագրեր] / Թարգմ. բնագրից, առաջաբան և ծա-  
 նոթագր. Հ. Բարթիկյանի; խմբ. Ս. Մ. Կրկյաշարյան.—  
 Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979.—LXXXIII. 439 էջ.—(Օտար  
 աղբյուրները Հայաստանի և հայերի մասին; 10. Բյու-  
 ղանդական աղբյուրներ; 3 / ՀՍՍՀ ԳԱ, Պատմ. ին-տ).

Գրքում տրվում է XI դ. երկրորդ կեսի բյուզանդական խոշորա-  
 գույն ժամանակագիր Հովհաննես Սկիլիցեսի «Համառոտություն պատ-  
 մությանց» երկի երկրորդ ինքնուրույն մասի (959—1057), ինչպես  
 և նրա «Շարունակության» (1057—1081) ամբողջական թարգմա-  
 նությունը: Հիշյալ երկր XI դ. բյուզանդական ամենակարևոր աղ-  
 բյուրն է ինդրո առարկա ժամանակաշրջանի ոչ միայն կայսրության  
 պատմության, այլև հարևան երկրների ու սելջուկների նվաճումների  
 ուսումնասիրության:

0503000000  
 Հ 703 (02)—79 24--78

902.9  
 ԳՄԴ 63.2

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979. քաղցմանության,  
 ուսումնասիրության և ծանոթագրությունների համար:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԿԻԼԻՑԵՍԸ, ՆՐԱ «ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆՑ»-Ը ԵՎ ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԳԱԿԱՆ  
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՄԱՆՈՍ II-ԻՑ (959—963)  
ՆԻԿԵՓՈՐ III ԲՈՏԱՆԻԱՏԵՍ (1078—1081)**

Գեորգիոս Կեղրենոս: Հայագիտության (և ոչ միայն հայագիտության) մեջ հաճախ այգ անունն են տալիս «Համառոտություն սլատմութիանց» (Σύντομος ιστοριών) խորագիրը կրող մի ընդարձակ պատմական երկի հեղինակին, որի դերն իրականում եղել է այն, որ իր՝ աշխարհի արարչագործությունից սկսվող ժամանակագրության 811—1057 թթ. դեպքերը շարադրելիս բառացիորեն արտագրել է Հովհաննես Սկիլիցեսի երկը<sup>1</sup>:

Դեռևս հայոց նոր պատմագրության հիմնադիր Միքայել Չամչյանն իր «Պատմություն հայոց» եռահատոր աշխատության երկրորդ հատորում օգտագործել է Հովհաննես Սկիլիցեսի տվյալները, նրանց հեղինակին անվանելով Կեղրենոս, ապա և Սկիլիցես<sup>2</sup>:

Հայագիտության մեջ «Համառոտություն պատմությանց» երկի հեղինակին Կեղրենոս են անվանում մինչև օրս: Ակադ. Հ. Մանանդյանն իր «Քննական տեսության» մեջ Հայաստանի պատմության տարբեր դրվագների վերաբերյալ բերում է Սկիլիցեսի տվյալները և նրանց հեղինակ համարում Կեղրենոսին<sup>3</sup>: Եվ այդպես է ոչ միայն հայագիտության

<sup>1</sup> Հովհաննես Սկիլիցեսի մասին մանրամասն մատենագիտությունը տե՛ս հետևյալ գործերում. G. Moravcsik, Byzantinoturcica I. Die byzantinischen Quellen der Geschichte der Türkvolker. Zweite durchgearbeitete Auflage, Berlin, 1958, S. 335—341; M. E. Colonna, Gli storici bizantini dal IV al XV secolo, I. Storici profani, Napoli, 1956, p. 116—118; Ioannis Scylitzae Synopsis historiarum, editio princeps, recensuit Ioannes Thurn. Corpus Fontium Historiae Byzantinae, Consilio Societatis Internationalis Studiis Byzantinis Provehendis Destinatae Editum, vol. V, Series Berolinensis, ediderunt H.-G. Beck, A. Kambylis, R. Keydell. Apud Walter de Gruyter et socios. Berolini et Novi Eboraci, MCMLXXIII (1973) p. XLVII—LVI.

<sup>2</sup> Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հտ. Բ, Վենետիկ, 1785, էջ 925, 935 և այլուր:

<sup>3</sup> Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. Գ, Երևան, 1952, էջ 21, 25 ծանոթ. 5, 41, 42 ծանոթ. 1 և այլն:

մեջ: Վրացի բյուզանդագետ Ս. Գ. Կաուիշիշվիլին իր՝ «Գևորգիկա» (Բյուզանդական աղբյուրները Վրաստանի մասին) բազմահատոր աշխատության IV գրքում վրացերեն թարգմանություն մբ տալիս է Սկիլիցեսի ժամանակագրության Վրաստանին վերաբերող տվյալները, հեղինակությունը վերագրելով Գեորգիոս Կեղրենոսին<sup>4</sup>: Նույն բանը կարելի է հանդիպել բաղամթիվ բյուզանդագետների աշխատություններում:

Այդ «սխալի» պատճառն այն է, որ, ինչքան էլ տարօրինակ թվա, Հովհաննես Սկիլիցեսի գործն առաջին անգամ լույս տեսավ միայն 1973 թ.: Դրանից չորս հարյուր տարի առաջ լույս էր տեսել այդ երկի Գաբրիուսի իրականացրած լատիներեն թարգմանությունը<sup>5</sup>, որը, հասկանալի է, ոչ միայն մատենագիտական unicum է, այլև գիտական ուսումնասիրության համար ոչ պիտանի: Սկիլիցեսի ժամանակագրության հունարեն բնագրի շտպագրվելու պատճառն, անշուշտ, հրատարակիչների կողմից այդ գործի թերազնահատումը չէր, ոչ էլ քննական բնագրի կազմման իսկապես առկա դժվարությունները, այլ պարզապես այն հանգամանքը, որ XII դարի բյուզանդական ժամանակագիր Գեորգիոս Կեղրենոսը, ինչպես ասվեց, Սկիլիցեսի գործն ամբողջությամբ ընդգրկել էր իր տիեզերական ժամանակագրության մեջ, որը որպես Կեղրենոսի գործ հրատարակվել էր բազմիցս: Որպես Կեղրենոսի ժամանակագրության մաս, այն առաջին անգամ հրատարակվել էր դեռ 1566 թ. Բազելում և կրում է հետևյալ խորագիրը. «Georgii Cedreni Annales, sive Historiae ab exordio mundi ad Isaacium Comnenum usque compendium. Guilielmo Xylandro Augustano interprete, qui annotationes etiam addidit et tabellas chronologicas, Basiliae per Ioan. Oporinum et Episcopios Fratres.

Այնուհետև Սկիլիցեսի երկը որպես Գեորգիոս Կեղրենոսի ժամանակագրության մաս և «Շարունակությունը» որպես Հովհաննես Սկիլիցեսի գործ հրատարակվեց 1647 թ. Փարիզում, Շ. Ֆաբրոյի կողմից՝ բյուզանդական պատմիչների փարիզյան մատենաշարում («Corpus Byzantinae Historicae») հետևյալ երկարաշունչ խորագրի տակ. Georgii Cedreni Compendium historiarum ex versione Guilelmi Xylandri, cum ejusdem annotationibus. Accedunt huic editioni praeter lacunas tres ingentes

<sup>4</sup> Сведения византийских писателей о Грузии, том V. Греческие тексты с грузинским переводом издал и примечаниями снабдил С. Г. Каухчишвили, Тбилиси, 1963.

<sup>5</sup> Historiarum compendium, quod incipiens a Nicephori imperatoris a Genicis obitu ad Imperium Isaaci Comneni pertinet. A Joanne Curopalate Scillizae magno drungario viglae conscriptum a J. B. Gabio conversum, Venetis, 1570.



et alias expletas, Notae in Cedrenum P. Iacobi Goar, Ord. Praedicator et Caroli Annibaldi Fabroti I. C. Glossarium ad eundem Cedrenum. Item Ioannes Skylitzae Curopalates, excipiens ubi Cedrenus dessinit nunc primum graece editus ex Bibliotheca Regia. Parisiis e typographia regia MDCXLVII (1647).

Փարիզում լույս տեսած բնագիրն այնուհետև վերահրատարակվեց բյուզանդական հեղինակների վենետիկյան մատենաշարում («Byzantinae Historiae scriptores in unum corpus redacti», Venetiis, 1729), նույն խորագրով, ապա Բոննյան մատենաշարում՝ Իմմ. Բեկկերի կողմից («Corpus Scriptorum Historiae Byzantinae», 1839), և վերջապես Migne-ի հայտնի Հունական Հայրաբանություն («Patrologia graeca») 121 և 122 հատորներում (Փարիզ, 1864):

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հովհաննես Սկիլիցեսի երկի հունարեն բնագիրը մատչելի էր ուսումնասիրողներին, թեև ոչ հազվագեպ, մասնագետները այս կամ այն անվան, թվականի և այլ հարցերի ճշգրտման համար ստիպված էին դիմելու Սկիլիցեսի՝ աշխարհի տարբեր մատենադարաններում պահվող բազմաթիվ ձեռագրերին:

Հովհաննես Սկիլիցեսի «Համառոտություն պատմությանցը», ինչպես ասվեց, ընդգրկում է 811—1057 թթ. դեպքերը և կարելի է երկու մասի բաժանել: Առաջին մասը «Թեոփանեսի Շարունակող» խորագիրը կրող հայտնի ժամանակագրության վերաշարադրությունն է և հասցվում է մինչև X դ. կեսը: Այս մասն այնքանով է արժեքավոր, որ կարող է օգտակար լինել Թեոփանեսի Շարունակողի հիշյալ երկի գիտական հրատարակությունը պատրաստելու, ինչպես և այդ ժամանակագրության առանձին տեղեր ստուգելու, ճշգրտելու տեսակետից: Քանի որ Սկիլիցեսի ժամանակագրության առաջին մասն ըստ էության բանաբաղություն է մի աղբյուրից, որ ամբողջությամբ պահպանվել է և նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Թեոփանեսի Շարունակողը» կազմելու է սույն՝ «Բյուզանդական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի 5-րդ գիրքը, ապա «Բյուզանդական աղբյուրների» այս՝ երրորդ հատորում Սկիլիցեսի երկի առաջին մասը մենք շենք ընդգրկելու: Ինչ վերաբերում է Սկիլիցեսի աշխատության երկրորդ մասին, ապա այն ինքնուրույն արժեք է ներկայացնում և անգնահատելի է X դ. երկրորդ կեսից մինչև XI դ. առաջին կեսն ընկած ժամանակահատվածի պատմության ուսումնասիրության համար: Նյութի ընդգրկման առումով այդ շրջանի և ոչ մի բյուզանդական աղբյուր չի կարող համեմատության մեջ դրվել Հովհաննես Սկիլիցեսի պատմական երկի հետ: Ճիշտ է, այդ շրջ-



ջանի պատմության վերաբերյալ մենք ունենք բյուզանդական այնպիսի անվանի հեղինակների գործերը, ինչպիսիք են Աեոն Սարկավազը, Միքայել Պսելլոսը և Միքայել Ատտալիատեսը, բայց առանց Սկիլիցեսի երկի այդ ժամանակաշրջանի պատմության լուսաբանությունն, անտարակույս, կլիներ թերի:

Հովհաննես Սկիլիցեսի անձի վերաբերյալ մեր տեղեկությունները ծայր աստիճան աղքատիկ են: Իր աշխատության խորագրում նշված է, որ նա կուրապաղատ էր և վիզլայի մեծ դրոնգար: Կարծում են, որ պատմիչ Հովհաննես Սկիլիցեսը և կուրապաղատ ու վիզլայի դրոնգար, պրոտովեստիարիոս Հովհաննես Թրակեսիացին նույն անձնավորություններն են: Հայտնի է, որ Հովհաննես Թրակեսիացին 1092 թ. մի հուշագիր է ներկայացրել Ալեքսիոս I կայսեր<sup>6</sup>:

Կուրապաղատը Բյուզանդիայում բարձր պատվաստիճան էր, որի կրողը վաղ շրջանում կայսրից, կեօարից և նոբելիսսիմոսից հետո շորորոդ մարդն էր: Բայց IX դ. վերջից այդ պատվաստիճանն սկսեց հասարականալ, մասամբ այն պատճառով, որ արդեն շնորհվում էր և օտարերկրացի իշխանավորներին: Ինչ վերաբերում է վիզլայի դրոնգարին, ապա այդ պաշտոնը կրողը Կոստանդնուպոլսում գտնվող շորս գվարդիաներից մեկի՝ Արիթմոսների հրամանատարն էր: Հիշյալ գվարդիայի հիմնական պարտականությունը արքունիքի անվտանգության ապահովումն էր:

Սկիլիցեսը ծերակուտական էր, նա դրական է գնահատում այն կայսրերին, որոնք սիրալիք էին ծերակույտի հանդեպ և պարսավում ներանց, որոնք ոտնահարում կամ արհամարհում էին նրա շահերը: Սկիլիցեսը զայրացած է այն բանի համար, որ Միքայել VI-ր պատասխանատու պաշտոններում նշանակեց ոչ ծերակուտականներին, այլ մանր ժառանգողներին: Մեր պատմիչը, լինելով ռազմական շրջաններին մոտիկ կանգնած անձնավորություն, հետևողականորեն պաշտպանում է ռազմական ավագանու շահերը, բարձր գնահատում բանակի դերը երկրի պաշտպանության գործում:

Որպես իր ժամանակի ծնունդ, Սկիլիցեսը ծայր աստիճան սնոտիապաշտ է: Նա հավատում է, թե կայսրության սահմաններում խոշոր եղջյուրավոր անասունների անկման պատճառը, Կոստանդնուպոլսում ամառային պալատի կառուցման ժամանակ հիմքեր փորելիս հայտնաբեր-

<sup>6</sup> Εὐδόξου Θ. Τσολακη, 'Η Συνεχεια τῆς Χρονογραφίας τοῦ Ἰωάννου Σκυλίτζη (Ioannes Scyllitzes Continuatus), Θεσσαλονίκη, 1968, σελ. 96. Каждан, Реч. на Скил., стр. 208.

ված ցլի մարմարյա գլուխը բանվորների կողմից ջարդելն ու կիր պատ-  
րաստելու համար կրակը նետելն էր: Նա հավատում է ժողովրդի մեջ  
տարածված զրույցներին, թե Նիկեփոր II Փոկասը, թեև կարող էր գրա-  
վել Անտիոքը, չգրավեց այն, քանզի կանխագուշակված էր, թե քաղաքի  
առման օրը կայսրը մեռնելու է: Ավելորդ է ասել, որ տարերային երե-  
վույթները՝ երկրաշարժ, գիսավոր աստղի երևալը, արեգակի խավարու-  
մը և այլն, անպայման վատ բան են կանխագուշակում (կայսեր մահ,  
ապստամբություններ, թշնամիների արշավանք, հոռոմների պարտու-  
թյուն և այլն): Նա հավատում է նաև տեսիլքներին ու երազներին:

Հովհաննես Սկիրիցեսն ապրել է XI դ. երկրորդ կեսին և XII դ. առա-  
ջին տարիներին<sup>7</sup> և հույն ուսումնասիրող Ե. Յուլակիսի հաշվումներով  
ծնվել է 1045 թ. հետո<sup>8</sup>: Նա իրեն փրկիսոփա Պսելլոսի (1018—1096) ժա-  
մանակակից է համարում<sup>9</sup>:

Ահա այն ամենը, ինչ մենք գիտենք Հովհաննես Սկիրիցեսի մասին:  
Հայտնի է, որ բացի «Համառոտություն պատմությունաց» երկից նա գրել է  
նաև իրավագիտական գործեր, որոնք Ի. Բեկկերը հրատարակել է Բոն-  
նում, 1838—1839 թթ.:

Հովհաննես Սկիրիցեսի պատմական երկը ներկայացնում է Թեոփա-  
նես խոստովանողի հայտնի ժամանակագրության շարունակությունը,  
սկսվում է այն տեղից, որտեղ Թեոփանեսն ավարտել է իր գործը (811) և  
հասցվում է մինչև 1057 թ., մինչև Իսահակ I Կոմնենոսի բյուզանդական  
գահին տիրանալը: Սկիրիցեսի գործը շարունակվել և հասցվել է մինչև  
Նիկեփոր III Բոտանիատես կայսեր թագավորության վերջը (1081): Գի-  
տություն մեջ «Սկիրիցեսի Շարունակություն» կամ «Շարունակված Սկի-  
րիցես» (Συνεχεια του Σκυλιτση, Scylitzes Continuatus) խորագիրը կրող  
մասի հեղինակի վերաբերյալ դեռ խոսք կլինի:

Ի՞նչ աղբյուրներ է օգտագործել Հովհաննես Սկիրիցեսը «Համառոտու-  
թյուն պատմությանը» շարադրելիս: Ամբողջ ժամանակագրության մեջ

7 Սկիրիցեսների ընտանիքը հայտնի էր Բյուզանդիայում: Հիշված են մի քանի ներ-  
կայացուցիչներ, որոնք, որպես կանոն, պատկանում էին XI—XII դդ. քաղաքացիական  
ավագանուն: Նրանցից գրող Գեորգ Սկիրիցեսը Մանուիլ կայսեր օրոք (1143—1180)  
Սերդիկայի (Սոֆիա) կառավարիչն էր:

8 Τ σ ο λ ό α η ε . նշվ. աշխ., էջ 97: Ա. Պ. Կաժգանը ենթադրում է, որ Սկիրիցեսն  
իր երկը գրում էր այն ժամանակ, երբ դեռ Կոստանդին IX-ի (1042—1055) և նրա մերձա-  
վորադույն հաջորդների մասին հիշողությունները շատ թարմ էին, այսինքն նա կարող է  
ծնված լինել 1045 թ. էլ առաջ: Տե՛ս Καждан, Рец. на Скил., стр. 208.

9 Ըստ Ե. Յուլակիցի (նույն տեղում, էջ 96) կրոսեր ժամանակակիցը, իսկ ըստ  
Կաժգանի՝ հասակակիցը (նույն տեղում, էջ 208):



նա ոչ մի հղում չի տալիս, ոչ մի աղբյուր, հեղինակ չի հիշատակում, բայց իր համառոտ նախաբանում հիշում է բաղձաթիվ հեղինակների անուններ: Նկատի ունենալով, որ այդ համառոտ նախաբանը կարևոր է ոչ միայն հիշյալ ժամանակաշրջանի բյուզանդական պատմագիտության մոտավոր վիճակը պատկերացնելու համար, ապա և մեր պատմիչի նախասիրությունների, պատմության առարկայի վերաբերյալ նրա ըմբռնումների ու այդ պատմությունը գրելու սկզբունքների, նպատակահարմար ենք գտնում այն այստեղ բերել ամբողջությամբ: Հովհաննես Սկիլիցեսը գրում է. «Պատմության համառոտությունը հենրից հետո գերազանց կատարեցին նախ Գեորգիոս Վանականը, որ սրբազնագույն պատրիարք Տարասիոսի սինկելլոսի [պաշտոնը] վարեց, իսկ նրանից հետո Ագրոսի վանահայր Թեոփանես խոստովանողը: Նրանք ամենայն բարեխղճությամբ հետազոտելով պատմական գրքերը, պարզ ու հասարակ ոճով համառոտեցին, առանց խորանալու տեղի ունեցած դեպքերի էության մեջ: Նրանցից Գեորգիոսը [իր շարադրանքն] սկսելով աշխարհի արարչագործությունից, այն հասցրեց մինչև բռնակալները, էս նկատի ունեմ Մաքսիմիանոսին և նրա որդի Մաքսիմինոսին: Իսկ Թեոփանեսը նրա [շարադրանքի] վերջն իր համար սկիզբ անելով, համառոտեց մնացած ժամանակագրությունը, հասցնելով [մինչև] նախկինում՝ դենիկոնի [պաշտոնը վարած] Նիկեփոր կայսեր վախճանը: Նրանից հետո ոչ ոք չնվիրվեց նման գործի: [Ճիշտ է], ոմանք փորձեր արեցին, ինչպես, օրինակ, վարդապետ Սիկիլիացին, մեր ժամանակակից՝ փիլիսոփաների հյուպատոս և հյուպերտիմոս Պսելլոսը և ուրիշներ, բայց նրանք գործին ի միջի այլոց լծվեցին, բազում կարևոր [հարցեր] շրջանցելով, ճշմարտության դեմ մեղանչեցին, հաջորդներին էլ օգուտ չտվեցին, [բանալի] սոսկ կայսրերին թվեցին, ցույց տվեցին, թե ով ումից հետո տիրացավ գայիսոնին, և ոչինչ ավելի: Նվ եթե անգամ թվում է նրանք կանոն են առել այս կամ այն դեպքի վրա, այդ էլ մակերեսայնորեն գրի առած լինելով, ավելի վնասեցին, քան թե օգուտ տվեցին: Թեոդորոս Դափնոպատեսը, Նիկետաս Պափլագոնացին, բյուզանդացիներ Հովսեփ Գենեսիոսն ու Մանուիլը, փուլուգիացի Նիկեփոր Սարկավագը, ասիացի Լևոնը, Սիդևի եպիսկոպոս եղած Թեոդորոսն ու նրա համանուն զարմիկը, որ Նեբաստիայի եկեղեցու առաջնորդը եղավ, այնուհետև Կյուզիկոսի [եսլիսկոպոս] Դեմետրիոսը, վանական Հովհաննես Լյուգացին, յուրաքանչյուրն իր առջև անձնական նպատակ դնելով, մեկը, ասենք, կայսեր ներբողյան [գրեց], մյուսը՝ պատրիարքի պարսավագիր, երրորդը՝ բարեկամի գովք, ամեն մեկը պատմության զգեստի մեջ սևփական դիտավորություն դնելով, հեռացան հիշյալ աստվածակիր այրերի սկզբունքներից: Իրենց

ապրած ժամանակի դեպքերը երկար ընթացքով [շարադրելով], մի քիչ էլ վերից սկսելով, [դրածին] պատմության ձև տալով, մեկը՝ համակրության մամբ, մյուսը՝ հակակրության մամբ, երրորդը՝ հաճոյանալու համար, մի ուրիշն էլ որևէ մեկի կարգադրության մամբ, յուրաքանչյուրն իր պատմությունը շարահարեց, որոնք միևնույն հարցերում իրարից տարբերվելով, ունկընդիրներին գցեցին շփոթության ու տարակուսանքի մեջ: Իսկ մենք հավանություն տալով հիշյալ այրերի<sup>10</sup> ջանքին, հույս ունենք, որ [սույն] համառոտությունը պատմություն սիրողներին շատ օգտակար կլինի, հատկապես նրանց, ովքեր գերադասում են դյուր [ընկալելին] դժվար [ընկալելիից], այն կտա համառոտ, ավելորդություններից բեռնաթափված սլափները տարբեր ժամանակներում տեղի ունեցած դեպքերի: Մենք վերցրինք վերոհիշյալ հեղինակների արժանահավատ պատմությունները, մի կողմ թողնելով այն, ինչ նրանց մոտ ասված է աշառության մամբ կամ հաճոյանալու միտումով, շրջանցեցինք անհամաձայնություններն ու հակասությունները, հրաժարվեցինք այն ամենից, ինչ առասպելապատում համարեցինք, հավաքեցինք արժանահավատը և վրստահելին: Դրա վրա ավելացրինք այն, ինչ բանավոր իմացանք տարեց մարդկանցից: Այդ բոլորի համառոտությունը տալով, մենք հաջորդ սերունդներին թողեցինք փափուկ, ինչպես ասում են՝ աղացած սնունդ, որպեսզի վերոհիշյալ պատմիչների գրքերի ընթերցողները ի դեմս այս գրքի մեկնություններ ունենան, իրենց համար ուղեկից, հետևեն նրան, քանզի ընթերցումը հուշեր է առաջացնում, հուշերը սնում և ընդարձակում են հիշողությունը, իսկ անհոգությունն ու անփութությունը, ընդհակառակը, բթացնում են հիշողությունը, դրան հետևում է տեղի ունեցած իրադարձությունների մասին հիշողությունը մթագնող և շփոթող մոռացությունը: Իսկ նրանց համար ովքեր ձեռքի տակ չեն ունենա պատմական [հիշյալ գրքերը], այս համառոտությունը ուղեցույց կլինի և հետագոտելով ավելի ընդարձակապատում շարադրանքները, իրադարձությունների մասին ավելի կատարյալ տեղեկություններ կստանան...»:

Վերոբերյալից այսպիսով է, որ Հովհաննես Սկիլիցեսի համար պատմություն շարադրելու տիպարներ են եղել Գեորգիոս Վանականն ու Թեոփանես Խոստովանողը: Քանի որ վերջինս իր շարադրանքը հասցրել էր մինչև 811 թ., ապա Սկիլիցեսը, համոզված լինելով, որ հիշյալ այրերից հետո գրված պատմագիտական երկերը քննադատության չեն դիմառնում, իր ժամանակագրությունն սկսում է հենց 811 թ.: Բայց Սկիլիցեսը, ինչպես տեսանք, հիշատակում է բազմաթիվ անուններ, որոնք այս կամ

10 Նկատի ունի Գեորգիոս Վանականին և Թեոփանես Խոստովանողին:



այն շափով մինչև իր օրերը զբաղվել են պատմությամբ և շարադրել իրենց երկասիրությունները: Նիկետաս Պափլագոնացին IX դ. վերջի և X դ. սկզբի անվանի գրող է, որ պարսավագիր շարադրեց ընդդեմ Փոտ պատրիարքի: Լեոն Ասիացուն նույնացնում են հայտնի պատմագիր Լեոն Սարկավագի հետ<sup>11</sup>: Վերջինս գրել է Նիկեփոր II Փոկասի և Հովհաննես Չմշկիկի պատմությունը<sup>12</sup>: Սկիլիցեսի հիշատակած Հովսեփ Գենեսիոսը այժմ համարվում է այդ անունով հրատարակված «Գիրք թագավորությանց» (Βιβλίος βασιλειῶν) երկի հեղինակից տարբեր անձնավորություն<sup>13</sup>:

Հովհաննես Սկիլիցեսի հիշատակած հեղինակների մեծ մասը մեղ հայտնի է սոսկ իրենց անուններով: Դրանցից են Մանուիլը, որ ութ զորքից բաղկացած իր պատմական երկը ձոնել էր X դ. հայազգի նշանավոր զորավար Հովհաննես Կուրկուասին, շատ քիչ բան գիտենք Վասիլ II-ի ժամանակակցի՝ Թեոդորոս Սեբաստացու մասին: Նրա երկից պահպանվել է ընդամենը երեք հատված, որոնք վերաբերում են Վասիլ II-ի թագավորությանը: Մնացած հեղինակների մասին գրեթե ոչինչ չգիտենք:

Օգտագործել է արդյոք Հովհաննես Սկիլիցեսը իր հիշած հեղինակների գործերը: Մի բան որոշ է, որ նա չի օգտագործել Նիկետաս Պափլագոնացու վերոհիշյալ աշխատությունը, ոչ էլ Մանուիլի՝ Հովհաննես Կուրկուասին ձոնված գիրքը: Մեր պատմիչը պատրիարք Փոտի, պատրիարք Իգնատիոսի և Հովհաննես Կուրկուասի մասին շարադրանքը վերցրել է Թեոփանեսի Շարունակողից, այն է եղել նրա հիմնական աղբյուրը 811—945 թթ. պատմության համար: Ռոմանոս Լակպենոսի (920—944) անկումից սկսած դեպքերի շարադրանքի համար Սկիլիցեսն այլևս չի օգտագործում Թեոփանեսի Շարունակողի

<sup>11</sup> Այդ կարծիքը առաջին անգամ հայտնեց Վ. Ֆիշերը (*W. Fischer*, Beiträge zur historischen Kritik des Leon Diaconus und Michael Psellos, „Mitteilungen des Instituts für osterr. Geschichtsschreibung“, Bd. 7, 1886, S. 376), այն որդեգրեց Գ. Կրումբախերը (*K. Krumbacher*, Geschichte der Byzantinischen Litteratur, München, 1897, S. 266, 367): Դրա դեմ ելավ Մ. Յա. Սյուզյուժովը (*М. Я. Сюзюмов*, Об источниках Льва Диякона и Скилицы. „Византийское обозрение“, том II, вып. I, 1916, стр. 112, прим. 3): Ա. Պ. Կաթաղանը այդ հարցը դեռևս չլուծված է համարում և գտնում, որ Սկիլիցեսի առաջարկում Լեոն Ասիացու անվան հիշատակությունից դեռևս չենք կարող եզրակացնել, որ նա, Սկիլիցեսը, օգտագործել է Լեոն Սարկավագի «Պատմությունը»: Տե՛ս *Каждан*, Из истории, 2, стр. 116.

<sup>12</sup> Այն պահպանվել է: Տե՛ս *C. B. Hasii*, Leonis Diaconi Caloensis Historiae, Bonnae, 1828.

<sup>13</sup> Տե՛ս *C. de Boor*, Zu Johannes Skylitzes, Byzantinische Zeitschrift, Bd. 13, 1904, S. 361, An. 1.



ժամանակագրությունը: Բայց նա ի՞նչ աղբյուրներ է օգտագործել X դ. կեսերից սկսած ժամանակաշրջանի պատմությունը գրելու համար: Այդ հարցի շուրջ լուրջ աշխատանք է կատարել Մ. Յա. Սյուզյումովը: Նա եկել է այն եզրակացության, որ Հովհաննես Սկիլիցեսը օգտագործել է երկու աղբյուր, որոնք իրարից տարբերվում են Նիկեփոր II Փոկասի հանդեպ ունեցած իրենց դիրքորոշմամբ: Այգ աղբյուրներից մեկը հաղորդում էր այդ կայսեր մասին եղած թշնամական ավանդույթը, մյուսն՝ ընդհակառակը՝ բարեկամական<sup>14</sup>: Առաջինն արտահայտում էր ֆեոդալական ավագանու շահերը, գլխավորապես հոգևոր, և, ամենայն հավանականությամբ, ստեղծվել էր X դ. վերջին կամ XI դ. սկզբին (շուրջ 1000 թ.): Այդ աղբյուրի հեղինակը ժամանակակից էր Նիկեփոր II Փոկասին և Հովհաննես Չմշկիկին:

XI դ. պատմության համար, ըստ Սյուզյումովի, Սկիլիցեսն ունեցել է միանգամայն այլ բնույթի աղբյուրներ, որոնք ծագում են Նիկեփոր II Փոկասի և Վասիլ II-ի շրջապատից, քանզի այստեղ հեղինակի շարադրանքը դրական գնահատական է տալիս հիշյալ երկու կայսրերի անձին ու գործունեությանը: Այս փաստը ցույց է տալիս, որ Սկիլիցեսն այնքան էլ քննադատական վերաբերմունք չունի իր աղբյուրների նկատմամբ: Նա կարող է նույն անձնավորության մասին տարբեր, միանգամայն հակոտնյա աղբյուրներից քաղած նյութն առանց որևէ փոփոխության ընդգրկել իր գրքում, չնկատելով բացահայտ հակասությունը: Նմանատիպ փաստի ենք հանդիպում Սկիլիցեսի ժամանակագրության մեջ նաև հոգեվոր ավագանու վերաբերյալ: Նա X դ. մասին շարադրանքում, որպես կանոն, դրական գնահատական է տալիս նրան, բայց Ռոմանոս III-ի թագավորությունից սկսած շարադրանքում հոգևորականները մոայլ ղույններով են հանդես գալիս: Սա վկայում է Սկիլիցեսի օգտագործած աղբյուրների բազմատարրության մասին, որն աչքի է զարնում նաև Վասիլ II-ից հետո առավել կամ պակաս չափով երկարատև թագավորած երկու կայսրերի՝ Միքայել IV-ի (1034—1041) և Կոստանդին IX Մոնոմախի (1042—1055) մասին շարադրանքի մեջ: Միքայել IV-ի վերաբերյալ շարադրանքը ծաղկաբաղույթյան տպավորություն է թողնում, այստեղ իրար հետ անմիջական կապ չունեցող առանձին պատմություններ հաջորդում են միմյանց: Ինչ վերաբերում է Կոստանդին Մոնոմախին նվիրված շարադրանքին, ապա այն բաղկացած է մի քանի գլխավոր թեմաներից և փաստորեն ներկայացնում է X—XI դդ. ծնունդ առնող ամբողջական պատմական շարադրանքի մասին պատկերացումը, որ փո-

<sup>14</sup> Сюзюмов, Об источниках, стр. 107 и сл.

խարինելու է գալիս Թեոփանեսի և նրա շարունակողների որդեգրած պատմությունը շարադրելու ժամանակագրական սիստեմին<sup>15</sup>,

Ա. Պ. Կաթողանն իր տարբեր աշխատություններում զարգացնում է այն միտքը, որ Հովհաննես Սկիլիցեսն իր առաջաբանում հիշած հեղինակներից և ոչ մեկի գործը չի օգտագործել, որ նա նրանց հիշատակում է, որպեսզի ցույց տա, թե ինչպես չպետք է գրել պատմությունը<sup>16</sup>: Այս միտքը հաստատելու կամ մերժելու հնարավորություն, հասկանալի է, չկա. քանզի չկան հիշյալ հեղինակների գործերը, որպեսզի կարելի լիներ համեմատություն կատարել: Բայց այդուհանդերձ մեզ անհնարին է թվում, որ Սկիլիցեսն իր ձեռքի տակ ունենար այնքան շատ պատմական գործեր և օգտագործած չլիներ նրանց տվյալները: Մերժել այդ հեղինակները պատմագիտական հայացքները, դեռևս չի նշանակում մերժել նրանց գործերում սուկա պատմական նյութը: Ա. Պ. Կաթողանը ուշադրություն չի դարձրել Սկիլիցեսի առաջաբանում ասվածի ամբողջությանը: Զ<sup>17</sup> է որ մեր պատմիչը պարզիպարոզ գրում է. «Մենք վերցրինք վերոհիշյալ հեղինակների արժանահավատ պատմությունները, մի կողմ թողնելով այն, ինչ նրանց մոտ ասված է աշառությամբ կամ հաճոյանալու միտումով, շրջանցեցինք անհամաձայնություններն ու հակասությունները, հրաժարվեցինք այն ամենից, ինչ առասույելապատում համարեցինք, հավաքեցինք արժանահավատը և այն, ինչ վստահելի էր»:

Այժմ անցնենք մեր պատմիչի՝ «Սկիլիցեսի Շարունակող» հայտնի բաժնին: Այն ընդգրկում է 1057—1080 թթ. դեպքերի շարադրանքը: Սի շարք փաստեր, սակայն, վկայում են, որ «Շարունակության» բնագիրը չէր ավարտվում այն տեղում, ինչ մեզ այսօր հայտնի է, այսինքն Նիկեփոր III Բոտանիատեսի թագավորության երկրորդ տարով, շարադրանքն հասցվում էր մինչև Ալեքսիոս I Կոմնենոսի գահ բարձրանալը (1081): Փաստերից մեկն այն է, որ Vindob. hist. gr. 35, XII դ. առաջին կեսում արտագրված ձեռագիրն ունի հետևյալ խորագիրը. «Հովհաննես կուրապաղատի, վիդլայի նախկին դրունգար Սկիլիցեսի սլատմությանց համառոտությունը, որն սկսվում է նախկինում գենիկոնի [պաշտոնը վարած] Նիկեփոր կայսեր մահից և ավարտվում Ալեքսիոս Կոմնենոսի հրոշակմամբ»: Հենց Շարունակության բնագրից էլ երևում է, որ վերջից սլակասավոր է, նախադասությունը կիսատ է մնացել, հակադրությունը չկա: Ընթացողովում է, որ պակասում է ձեռագրի երեք և կես էջ<sup>17</sup>:

<sup>15</sup> Каждан, Рец. на Скил., стр. 210.

<sup>16</sup> Каждан, Из истории 1, стр. 94. Его же, Из истории 2, стр. 110, 114—115.

<sup>17</sup> Το σολάκις, Η Συνέχεια, σελ. 25—29.



Ե՞րբ է գրի առնվել Սկիլիցեսի Շարունակությունը: Անվիճելի է, որ այն շարադրված է 1101 թ. հետո, քանզի նա հիշատակում է Բողինոսի, խրվաթների իշխան Միխայիլասի որդու իշխանության ավարտը: Հայտնի է, որ Բողինոսն իշխեց մինչև 1101 թ.<sup>18</sup>, եթե սա Շարունակության դրության ստորին սահմանն է, ապա վերին սահմանը որոշվում է այն փաստով, որ Հովհաննես Զոնարասը (XII դ. կես) օգտագործել է Շարունակությունն իր պատմական երկում, բացի այդ, վերոհիշյալ Vindob. hist. gr. 35 ձևազրում Շարունակության արտագրությունը կատարվել է Հովհաննես Կոմնենոսի (1118—1143) օրոք:

Ի՞նչ աղբյուրներից է օգտվել Շարունակության հեղինակը: Վաղուց հայտնի է, որ նրա գլխավոր աղբյուրը Միքայել Ատտալիատեսի պատմական երկն է, որտեղից մեր հեղինակը հաճախ՝ ամբողջական էջեր է արտագրել: Այդ էր պատճառը, որ իտալացի բյուզանդագետ Ա. Պերտուզին անհրաժեշտ էր գտնում, որ Ատտալիատեսի «Պատմության» քննական բնագրի հրատարակությանը նախորդի Սկիլիցեսի Շարունակության քննական հրատարակությունը<sup>19</sup> (ինչ որ իրականացրեց 1968 թ. հունյն գիտնական Ե. Յուլակիսը): Յուլակիսը գուցահեռ համեմատության մեջ դնելով Շարունակությունն ու Ատտալիատեսի «Պատմությունը», պարզեց, որ Շարունակությունն այնուամենայնիվ բազում տեղեկություններ ու դատողություններ է բովանդակում, որոնք չկան Ատտալիատեսի երկում<sup>20</sup>: Շարունակողն Ատտալիատեսի գործն օգտագործել է տարբեր ձևերով: 1. Գրեթե բառացիորեն արտագրելով այն, 2. առավել կամ պակաս շափով համառոտելով իր աղբյուրի շարադրանքը, 3. ընդարձակելով Ատտալիատեսի շարադրանքը ի հաշիվ սեփական տեղեկությունների, դիտողությունների ու դատողությունների՝ տարբեր դեմքերի ու դեպքերի վերաբերյալ: Կան դեպքեր, երբ Շարունակության հեղինակը միանգամայն անկախ է Ատտալիատեսի բնագրից, պատմում է նշելություններ, որոնց մասին Ատտալիատեսը անհրաժեշտ կամ նպատակահարմար չի գտել գրելու: Պետք է նշել այնուհետև, որ Շարունակության հեղինակը բաց է թողել Ատտալիատեսի մոտ հանգամանորեն գրի առնված առանձին դեպքերի շարադրանքը<sup>21</sup>: Որոշ հարցերում Սկիլիցեսի Շարունակողը միանգամայն այլ մոտեցում ունի, քան

<sup>18</sup> Τσολάκης, 'Η Συνέχεια, σελ. 75—76, 79—80.

<sup>19</sup> A. Pertusi, Per la critica del testo della „Storia“ di Michele Attaliate, Jahrbuch der Österreichischen byzantinischen Gesellschaft, 7, Wien, 1958, S. 73.

<sup>20</sup> Τσολάκης, 'Η Συνέχεια, σελ. 84—87; D. I. Poimisis, Notes on eleventh-century chronology, „Byzantinische Zeitschrift“, Bd. 58, Heft I (1965), p. 60, n. 1.

<sup>21</sup> Τσολάκης, 'Η Συνέχεια, σελ. 61—72.

Ատտալիատեսը<sup>22</sup>, Շարունակությունը հաճախ ավելի լավ ընթերցումներ է տալիս, քան Ատտալիատեսի Պատմության պահպանված գրչագրերը<sup>23</sup>:

Բացի Ատտալիատեսից, Սկիլիցեսի Շարունակողն օգտագործել է նաև Պսելլոսի պատմական աշխատությունը<sup>24</sup>: Բայց նրա աղբյուրները չեն սահմանափակվում Ատտալիատեսով ու Պսելլոսով, նա մեզ տալիս է բազմաթիվ տեղեկություններ, որոնք բացակայում են նրանց աշխատություններում: Այգ տեղեկությունները նա, հասկանալի է, քաղել է իրենից առաջ գրած հեղինակների գործերից, որոնք, դժբախտաբար, չեն պահպանվել, ինչպես և, անժխտելի է, նա գրի է առել ականատեսի իր հուշերը, քանզի ինքը շարադրածի դեպքերի ժամանակակիցն է:

Ո՞վ է Սկիլիցեսի Շարունակողը: Նրա վերաբերյալ բյուզանդագիտության մեջ արտահայտված են երկու հակադիր կարծիքներ, մեկի համաձայն Սկիլիցեսի Շարունակողն հենց նույն ինքը Սկիլիցեսն է, ըստ մյուսի՝ այլ, մեզ անհայտ անձնավորություն է: Այսպես, Կարլ Կրումբախերը գտնում է, որ Շարունակությունը նույն Սկիլիցեսի գործն է<sup>25</sup>, De Boor-ն ընդհակառակը, Շարունակությունը համարում է Ատտալիատեսի երկի մեզ անծանոթ մի համառոտողի գործ, որն իր այդ համառոտությունը կցել է Սկիլիցեսի ժամանակագրությանը<sup>26</sup>: Այդ կարծիքը պաշտպանում է հունգարացի բյուզանդագետ և թուրքագետ Գ. Մորավչիկը<sup>27</sup>, հիմնվելով հետևյալ կովանների վրա. 1. Սկիլիցեսի երկը բովանդակող ձեռագրերի մեծ մասը շարադրանքը հասցնում է մինչև 1057 թ., 2. Գեորգիոս Կեղրենոսը, որ բառացի արտագրում է Սկիլիցեսի գործը, 811—1057 թթ. պատմության շարադրանքի համար, այն կողմ չի անցնում, 3. Սկիլիցեսն իր նախաբանում չի հիշատակում Ատտալիատեսի անունը որպես իր կողմից օգտագործված աղբյուրի հեղինակի, հակառակ, որ Շարունակությունը ոչ այլ ինչ է, քան Ատտալիատեսի երկի արտագրությունն ու համառոտումը:

Սկիլիցեսի և նրա Շարունակողի տարբեր հեղինակներ լինելու կարծիքը բաժանում է նաև սովետական բյուզանդագետ Գ. Գ. Լիտավրինը: Նա գտնում է, որ Սկիլիցեսը և նրա Շարունակողը որոշ հարցերում հա-

<sup>22</sup> «Советы и рассказы», стр. 71.

<sup>23</sup> *Kajdan*, Критические заметки, стр. 285 и сл.

<sup>24</sup> *G. Moravcsik*, *Byzantinoturcica*, I, S. 340; Ավելի հանգամանորեն տե՛ս Γκολτζης, «Π Συνέχεια», σελ. 72—74.

<sup>25</sup> *Krumbacher*, *Geschichte*, S. 367.

<sup>26</sup> *C. de Boor*, Weiteres zur Chronik des Skylitzes, *Byzantinische Zeitschrift*, Bd. 14, 1905, S. 467.

<sup>27</sup> *Moravcsik*, *Byzantinoturcica*, I, S. 340—341.



կադիր դիրքերում են կանգնած: Լիտավրինի ամենագլխավոր կովանն այն է, որ Սկիլիցեսը դրական կարծիք ունի Պսելլոսի մասին, այնինչ Շարունակողը միանգամայն բացասական<sup>28</sup>:

Մ. Ե. Կոլոննան ավելի հավանական է գտնում, որ հենց Սկիլիցեսն է գրել աշխատության երկրորդ մասը<sup>29</sup>:

Սկիլիցեսի ժամանակագրության Շարունակության հարցը մանրազնին ուսումնասիրության ենթարկեց Ե. Յուլակիսը, դրան նվիրելով մի ամբողջ մենագրություն<sup>30</sup>: Հույն բյուզանդագետը վստահորեն գրում է, որ Մորավչիկի և ոչ մի կովանը ապացուցող նշանակություն չունի<sup>31</sup>, որ հենց Սկիլիցեսն է լրացրել իր գործը՝ ընդգրկելով 1057—1079/1080 թթ. դեպքերը՝ Միքայել Ատտալիատեսի Պատմության հրապարակ գալուց հետո: Նրա ասելով Սկիլիցեսն իր առաջաբանը գրել է նախքան Ատտալիատեսի երկի հրապարակ գալը և այդ է պատճառը, որ վերջինիս անունը բացակայում է այնտեղ<sup>32</sup>: Ինչ վերաբերում է Կեղրենոսին, ապա հայտնի է, որ նա իր երկն ավարտել է XI դ. վերջին կամ XII դ. սկզբին, հետևաբար նրա երկի ավարտվելը 1057 թ. դեպքերով ոչ մի հիմք չի տալիս, որպեսզի Շարունակությունը Սկիլիցեսի գործ չհամարենք<sup>33</sup>:

Ե. Յուլակիսը Սկիլիցեսին և նրա Շարունակողին տարբեր անձնավորություններ համարելու հիշյալ փաստարկումների դեմ բերում է մի շարք կովաններ ևս, որոնք, իր համոզմամբ, այդ նույնացումը դարձնում են անվիճելի: Նրա կովանները հետևյալներն են. 1. Սկիլիցեսն ու նրա Շարունակողը նույն ժամանակներում են ապրել. 2. Սկիլիցեսի Շարունակողը հավատարմությամբ հետևում է պատմություն գրելու այն սկզբունքներին, որոնք արտահայտված են Սկիլիցեսի երկի առաջաբանում<sup>34</sup>: 3. Սկիլիցեսի ժամանակագրությունը Շարունակության հետ օրգանական կապի մեջ են, Շարունակության մեջ հաճախ Սկիլիցեսի երկին հղում է տրվում<sup>35</sup>: 4. Լեզվական առումով այդ երկու երկերը նույնական են: Կան երկուսին էլ ընդհանուր բազում դարձվածքներ<sup>36</sup>:

28 Советы и рассказы, стр. 74.

29 *Colonna*, *Gli storici*, p. 116.

30 Τσολάκης, 'Η Συνέχεια.

31 նույն տեղում, էջ 78:

32 նույն տեղում:

33 նույն տեղում, էջ 80:

34 նույն տեղում, էջ 84, 87—88:

35 նույն տեղում, էջ 88:

36 նույն տեղում, էջ 91—95: Ա. Պ. Կաժղանը նույնություն ապացուցող այդ հանգամանքները վիճելի է համարում, քանզի, ըստ իրեն, բյուզանդական գրական ունիֆորմիզմի պայմաններում, այդ մեթոդը վստահելի չէ:



Բացի այդ փաստերից, Յուլակիսը բերում է երկու այլ կովան ևս: 1118—1143 թթ. միջև արտագրված Vindob. hist. gr. 35 ձեռագիրը բովանդակում է Սկիլիցեսի երկն իր Շարունակությամբ հանդերձ և գրիչը դրանք համարում է Հովհաննես Սկիլիցեսի գրչին պատկանող գործեր: Բյուզանդական պատմիչ Հովհաննես Զոնարասը, որ իր ժամանակագրությունը գրել է XII դ. առաջին կեսին, որպես աղբյուր օգտագործել է և Շարունակությունը, որը վերագրում է Հովհաննես Սկիլիցեսի գրչին: Յուլակիսի ասելով, Զոնարասը Սկիլիցեսի կրտսեր ժամանակակիցն էր և նա չէր կարող սխալված լինել<sup>37</sup>:

Այդ բոլոր հանգամանքները նկատի ունենալով Յուլակիսը եզրակացնում է, որ պետք է Սկիլիցեսին համարենք նաև Շարունակության հեղինակ<sup>38</sup>:

Վերջերս Յուլակիսի եզրակացությունների պաշտպանությամբ հանդես եկավ ավստրիացի բյուզանդագետ Վ. Զայբտը: Նրա ասելով Շարունակության հեղինակը նույն Սկիլիցեսն է: Նա տալիս է Սկիլիցեսի կենսագրության հետևյալ հիմնական կետերը: Ծնվել է շուրջ 1040 թ., XI դարի 70-ական թվականներին ստացել է պրոտովեստեսի, պրոտովեստարքեսի պատվաստիճանները: Հենց այս ժամանակ է գրել աշխատության հիմնական մասը: 80-ական թվականներին դարձել է մագիստրոս և պրոեդրոս, 90-ական թվականներին՝ նաև պրոտոպրոեդրոս, վիզլայի դրունգար և էպարքոս, 1092-ին կուրապաղատ էր և վիզլայի դրունգար: XI—XII դդ. սահմանագլխին որպես մասնավոր անձնավորություն գրել է Շարունակությունը: Վախճանվել է XII դարի առաջին տասնամյակում<sup>39</sup>:

Հասկանալի է, վերոհիշյալ վեճը դեռևս ավարտված չէ, բայց վերջին հաշվով հայագիտության համար այն երկրորդական նշանակություն ունի, մեզ համար կարևորն այդ աղբյուրի բովանդակած նյութի արժեքն է:

Քանի որ, ինչպես ասվեց, Շարունակության հեղինակի վերաբերյալ բանավեճը փակված չէ, ապա Սկիլիցեսի և նրա Շարունակողի Հայաստանի և հայերի մասին տեղեկություններին կանդրադառնանք ոչ թե առանձին-առանձին, այլ միասին: Նախքան մեր աշխատության հիմնական նպատակը հանդիսացող այգ հարցին անցնելը, այստեղ անհրաժեշտ ենք գտնում ընդգծել, որ Հովհաննես Սկիլիցեսի ժամանակագրությունն իր Շարունակությամբ հանդերձ անգնահատելի արժեք է ներկայացնում ոչ միայն հայոց պատմության, սոցիալ-տնտեսական հարաբե-

<sup>37</sup> Τσολάκης, 'Η Συνέχεια, σελ. 99:

<sup>38</sup> Նույն տեղում:

<sup>39</sup> Seibt, Ioannes Skylitzes, S. 81—85.



րությունների, հայ-բյուզանդական փոխհարաբերությունների ուսումնասիրության համար, այլև Հայաստանի պատմական աշխարհագրության, անդամ ազգագրության: Դեռ ավելին: Նա հնարավորություն է տալիս ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրելու հայերի՝ բյուզանդական ավագանու կազմում խաղացած դերը, մի բան, որ հազիվ թե կարելի լիներ անել լոկ Լևոն Սարկավագի, Միքայել Պսելլոսի և Միքայել Ատտալիատեսի գործերով: Նույնը կարելի է ասել հայկական աղբյուրների մասին: Քանզի, ինչքան էլ տարօրինակ թվա, այդ հարցը միջնադարյան հայ հեղինակների տեսադաշտից դուրս է գտնվել: Հայ պատմիչներին քիչ է հետաքրքրել Բյուզանդական կայսրության սլատմությունը, առավել ևս Բյուզանդիայում ապրող և ծառայող հայ բարձրաստիճան ազնվականությունը, գուցե վերջինիս որպես կանոն քաղկեդոնիկ լինելու, կամ էլ, ավելի ճիշտ, այդ մասին բավարար տեղեկություններ չունենալու պատճառով: Բոլոր դեպքերում փաստը մնում է փաստ, որ միջնադարյան Հայաստանում և ոչ մի բյուզանդական սլատմիչի գործը չի թարգմանվել հայերեն<sup>40</sup>, թեև դա դեռևս ապացույց չէ այն բանի, որ բյուզանդական պատմիչների գործերին Հայաստանում լիակատար անտեղյակ էին: Այդուհանդերձ, ինչ խոսք, այդ հանգամանքը վկայում է տվյալ երկերի հանդեպ հայերի ունեցած ոչ առաջնակարգ հետաքրքրության մասին: Վերադառնալով մեր խնդրին, կարելի է անանց վարանելու ասել, որ Սկիլիցեսի և նրա Շարունակության տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին բացարձակապես նորություն են, չկան հայկական միջնադարյան աղբյուրներում և եթե այս կամ այն դեպքի կամ դեմքի մասին գտնվի որևէ տեղեկություն, ապա այն էլ դիտված է այլ տեսանկյունից և այլ կերպ է լուսաբանված: Այդ երկու՝ բյուզանդական և հայկական աղբյուրներում առկա փաստերի համադրությամբ, համեմատությամբ միայն կարելի է ճիշտ պատկերացում կազմել որևէ հարցի վերաբերյալ:

Խուսափելով կրկնողությունից, Սկիլիցեսի և նրա Շարունակողի բոլոր տեղեկությունների վրա մենք այստեղ կանգ չենք առնի, քանզի սույն առաջաբանի երկրորդ բաժնում, որ նվիրված է հայ-բյուզանդական հարաբերությունների պատմության X դ. կեսից մինչև XI դ. 70-ական թթ., նրանց մեծ մասը քննության է ենթարկվել՝ հայկական և այլ աղբյուրների ընձեռած նյութի համադրությամբ: Այդ նկատառումներից ելնելով այստեղ համառոտակի կխոսվի Սկիլիցեսի և նրա Շարունակողի հայոց պատմության այլ հարցերի վերաբերյալ հաղորդած տեղեկու-

40 Ս. Տեր-Ներսեսյան, Բյուզանդիա և Հայաստան (Խնդիրներ և հետազոտությունների արդի վիճակը), Պատմա-բանասիրական հանդես, № 1, 1970, էջ 159:

թյունների մասին: Նախ հայերի խաղացած դերի մասին Բյուզանդիայում: Դժբախտաբար Սկիլիցեսը (ոչ միայն նա, այլև բյուզանդական հեղինակներն ընդհանրապես) ոչինչ չի ասում Բյուզանդիայի տարածքի վրա ստեղծված հայկական գաղութների մասին, հայ աշխատավորության, առևտրական-արհեստավորական խավերի մասին, որոնք, կասկածից վեր է, Բյուզանդիայում եղել են և լայն գործունեություն ծավալել: Այդ հարցը միջնադարյան հեղինակներին քիչ է հուզել, ավելի ճիշտ՝ ամենևին էլ չի հուզել: Ինչ վերաբերում է բյուզանդական ավագանու կազմում (հատկապես ռազմական) հայերի խաղացած դերին, ապա Սկիլիցեսի տվյալներն այդ մասին չափազանց հանգամանալից են: Մենք այնտեղ կհանդիպենք ամենացածր զինվորական աստիճանը կրողից մինչև կայսեր գահին, գուցե և Կոստանդնուպոլսի պատրիարքի սթոպին բազմած (եթե նկատի ունենանք պատրիարք Հովհաննես Քսիֆիլինոսի եղբոր անունը՝ Վարդ, ապա հայկական ծագում պիտի տանք նաև պատրիարքին) բազմաթիվ հայերի մասին ամենամանրամասն տեղեկությունների: Սկիլիցեսը և նրա Շարունակողը հանվանե հիշում են շուրջ հարյուր հայ բարձրաստիճան գործիչների, որոնց բացարձակ մեծամասնությունը անծանոթ է միջնադարյան հայ հեղինակներին (Շարունակողի հիշատակած Պավղոսին, Եղեսիայի կառավարչին, օրինակ, չգիտե անգամ Մատթեոս Ուռհայեցին): Դեռ ավելին, մեր հեղինակից կարելի է իմանալ նաև բյուզանդական ծառայության մեջ գտնվող հայկական առանձին զորամասերի մասին: Այդ հարցի վերաբերյալ հայկական աղբյուրները բավական առատ տեղեկություններ են հաղորդում, բայց միայն Սկիլիցեսից կարելի է իմանալ, որ Բյուզանդիայում ծառայող հայկական զորամասերը կրում էին իրենց՝ հայկական համազգեստը (στολή Ἀρμενίων) և իրենց արտաքինով միանգամայն տարբերվում էին հույն զինվորներից: Սկիլիցեսից և այլ աղբյուրներից կարելի է մոտավոր պատկերացում կազմել նաև Բյուզանդիայի հայ ազգաբնակչության նկատմամբ բնիկների ունեցած վերաբերմունքի մասին: Այն միշտ չէ, որ եղել է բարյացակամ և դրա մեջ քիչ դեր պետք է խաղացած շլինի դավանանքի տարբերությունը: Նիկեփոր II Փոկասին մայրաքաղաքի բնակչությունը չի սիրում, քանզի նա հայ է, Վարդաս Սկլերոսի ապստամբության ժամանակ գերի ընկած հայերին են միայն սրի քաշում և այլն: Տարբեր չէր և հայերի վերաբերմունքը դեպի բյուզանդացիները: Ռոմանոս IV Դիոգենեսը Եկեղյաց գավառում միջոցների է դիմում, որպեսզի իր զինվորները հայերից սրի չքաշվեն:

Սկիլիցեսի և նրա Շարունակողի տվյալները Հայաստանի պատմական աշխարհագրության մասին շատ-շատ են: Բավական է միայն



Թվարկել անուններն այն նահանգների, քաղաքների, բերդերի, որ հիշում է մեր պատմիչը, համոզվելու համար այդ բանում: Մեծ Հայք (Շիրակ), Իբերիա (Տայք), Վասպուրական, Եկեղյաց գավառ, Անի, Դվին, Կարս, Վան, Գանձակ, Մանազկերտ, Բերկրի, Թեոդոսուպոլիս (Կարին), Խլաթ, Սեբաստիա, Մելիտենե, Տիվրիկ, Արծն, Արգովան, Սուրմառի, Սբ. Գրիգոր, Ամբերդ, Միծեռնակաբերդ, Ծամնդավ, Հայաստանից դուրս գտնվող, բայց հայաշատ եղեսիա, Տլուք, Կարկառ, Մոպսուեստիա (Մսիս), Սարվանդիքար, Ադանա, Լարիսա, Աբարա, Գերմանիկիա (Մարաշ), Մարտիրուպոլիս (Նփրկերտ), Լիկանգոս, Կուկուսոս, Կուրնիա և այլն: Սկիլիցեսը պարզապես չի թվարկում դրանք, այլ տալիս է այնպիսի մանրամասնություններ, որոնք չկան անգամ հայկական աղբյուրներում: Միայն Սկիլիցեսից ենք իմանում, որ Վասպուրականը կոչվել է նաև Վերին Մարաստան, որ Ծամնդավը բազմամարդ ու արտակարգ հարուստ քաղաք էր: Միծեռնակաբերդի առաջին հիշատակությունը հենց Սկիլիցեսի մոտ է հանդիպում: Հայկական աղբյուրներում այն առաջին անգամ հիշվում է ուշ միջնադարում: Միայն Սկիլիցեսից ենք իմանում, որ IX դ. վերջում և X դ. սկզբներում՝ արաբների ձեռքից խլված հողերի վրա Բյուզանդիան ստեղծում է բանակաթեմեր, որոնք «Հայկական» են կոչվել ('Αρμενιακά Θέματα) իրենց զուտ հայ բնակչության պատճառով: Սկիլիցեսը մանրամասն խոսում է նաև Հայաստանի սահմաններում գտնվող արաբական ամիրայությունների մասին (Բերկրիի, Խլաթի, Մանազկերտի), և նրա տվյալները միշտ չէ որ համընկնում են հայկական աղբյուրների հազորդածներին: Սկիլիցեսը չի մոռանում խոսել նաև իր հիշատակած շրջանների բնակչության դավանանքի մասին անգամ: Որպես կանոն այն հայադավան էր, քանզի, ինչպես Շարունակողն է ասում, «Իբերիայում (իմա՝ Տայք և Շիրակ)<sup>41</sup>, Միջագետքում՝ մինչև Լիկանգոս և Մելիտենե և նրանց շուրջ ընկած նահանգներում հերետիկոս (իմա՝ միաբնակ) հայեր են բնակվում»:

Սկիլիցեսի և նրա Շարունակողի երկերն անգնահատելի արժեք ունեն նաև սելջուկ թուրքերի Փոքրասիական թերակղզուն, այդ թվում և Հայաստանին տիրելու պատմությունն ուսումնասիրելու համար: Ճիշտ է, Հայաստանի վերաբերյալ Արիստակես Լաստիվերցու և Մատթեոս Ուսհայեցու տվյալները հանգամանալից են ու ծավալուն, բայց բյուզանդական հեղինակի հիշյալ գործում եղած առատ նյութը հնարավորություն է տալիս առավել խորությամբ հետազոտելու այդ կարևոր հարցը:

<sup>41</sup> Որ Իբերիայի տակ նա ենթադրում է Հայաստանը, պարզվում է հետևյալից: Խոսելով Միծեռնակաբերդի մասին, նա ցույց է տալիս, որ այն գտնվում է Դվինի մոտ՝ Իբերիայում:

Սկիզբիցեսի և նրա Շարունակողի ժամանակագրությունը բովանդակող ձեռագրերի մանրամասն մատենագիտությունը տվել են Դ. Մորավլիկը և Մ. Ե. Կոլոննան: Ավելի հանգամանորեն նրանց վրա կանգ առան քննական բնագրի հրատարակիչներ Յ. Թուրնը և Ե. Յոլակիսը: Ըստ Թուրնի Սկիզբեսի երկը բովանդակող ձեռագրերը բաժանվում են երեք խմբի.

- I. Vindobonensis Hist. gr. 35 (արտագրված 1118—1143 միջև):  
Bibliothèque Nationale, fonds Coislin 136 (XII դ.).  
Scorialensis T III 9 (166), (XIV դ.).
- II. Achridensis 79 (XII դ. այժմ կորած):  
Vaticanus Graecus 161 (սրանից է կատարված Գաբրիուսի լատիններին թարգմանությունը):  
Ambrosianus C 279 (XIV դ.).
- III. Matritensis II (XIII—XIV դդ. բազմաթիվ մանրանկարներով: Մանրանկարները հրատարակվել են. „Skylitzes Matritensis, vol. I. Reproducciones y miniaturas por Sebastian Cirac Estopañan, Barcelona—Madrid, 1965).  
Neapolitanus III. B.24 (XIV դ.).  
Vindobonensis Hist. gr. 74 (XIV դ. առաջին կես: Միքայել Դեոլցու ընդմիջարկություններով):  
Գեորգիոս Կեդրենոսի բնագիրը:

Ե. Յոլակիսի համաձայն Սկիզբեսի Շարունակությունը բովանդակող ձեռագրերը հետևյալներն են.

- I. Vindobonensis Hist. gr. 35:
- II. Vindobonensis Hist. gr. 74:
- III. Marcian. gr. VII, 12 (XC, 5), 1283 թ.
- IV. Vaticanus Graecus 161:
- V. Ambrosianus gr. 912 (C 279 inf.):

Բացի վերոհիշյալներից, պահպանվել են և XVI—XVIII դդ. այլ ձեռագրեր Շարունակությունն ամբողջությամբ կամ հատվածաբար բովանդակող, որոնք, սակայն, արտագրված են նշված ձեռագրերից և աղբյուրագիտական արժեք չեն ներկայացնում:

\* \* \*

Ստորև տալիս ենք X դ. կեսից մինչև XI դ. 70-ական թթ. ընկած ժամանակաշրջանի հայ-բյուզանդական հարաբերությունների պատմությունը: Դա ոչ Հայաստանի և ոչ Բյուզանդիայի պատմություն է, այդ



բանը շատ հանգամանորեն կատարված է բազմաթիվ մենագրություններում և կոլեկտիվ աշխատություններում: Մեր տվածը այդ շրջանի հայ-բյուզանդական հարաբերությունների գեռևս չգրված պատմության մի ակնարկ է լուկ<sup>42</sup>: Մենք ամենևին չենք կարծում, որ այս շարագրանքը կատարյալ է և ամբողջական: Մի շարք հարցեր այստեղ ամենևին քննության չեն ենթարկված և դեռ սպասում են իրենց հետազոտողին (հայ-բյուզանդական գրական կապերը), այլ հարցեր ուսումնասիրված են ոչ այն խորությամբ, ինչ հնարավոր էր անել, նկատի ունենալով աղբյուրների արդի վիճակը (հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները):

\* \* \*

«Եթե պատահի սեփական երկրում բերդեր ունենաս կամ գյուղեր, դրանց տոպարիսը լինես կամ էքսուսիաստեսը, քեզ շմուրեցնեն գանձերը կամ պաշտոնները<sup>43</sup>, կայսրերի մեծ խոստումները և հանկարծ երկիրդ տաս կայսեր, փոխարենն ստանալու համար դրամ ու կալվածքներ՝ թեկուզ [տվածիդ] քառապատիկը: Պահպանիր քո երկիրը թեկուզ և փոքրիկ ու շնչին, քանզի նախընտրելի է քեզ [կայսեր] ինքնիշխան բարեկամը լինել, քան ստրուկն ու հպատակը: Դու կայսեր և բոլորի մոտ այնքան ժամանակ հարգանք, պատիվ, գովք ու փառք կվայելես, քանի դու, երեխաները քո ու նրանց [երեխաները] երկրիդ տերն եք: Եթե ղրկվես քո երկրից, տապալվես իշխանությունիցդ, ճիշտ է, սկզբնական շրջանում պիտի վայելես կայսեր սերը, բայց քիչ անց նա քեզ պիտի արհամարհի, նա քեզ բանի տեղ չի դնելու և [այն ժամանակ] պիտի համոզվես, որ ստրուկ ես և ոչ բարեկամ: Այն ժամանակ քո ստորադրյալն անգամ քեզ համար պիտի սարսափելի դառնա. եթե նրան նեղացնես, կգնա կայսեր մոտ և քեզ կամբաստանի, որ [իբր] նրա դեմ

42 Առանձին հարցերի նվիրված հոդվածներ կան: Հիշատակելի են Ն. Ադոնցի մի շարք հոդվածները, որոնք մեկ հատորով լույս տեսան Լիսաբոնում (*N. Adontz. Etudes Armeno-Byzantines, Lisbonne, 1965*): Հիշենք նաև հետևյալները. Վ. Կ. Իսկանյան, Հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունների պատմությունից (X—XI դդ.): Երևանի Պ. Արուսյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու № 6, Երևան, 1957: Կ. Ն. Yuzbashian, L'administration byzantine en Arménie aux X<sup>e</sup>—XI<sup>e</sup> siècles, *Revue des Etudes Arméniennes*, t. X, 1973—1974, p. 139—183.

43 Հմմտ. Մատթ. Ումմ. էջ 84. «Յովհաննէս (Հովհաննես-Սմբատ Բագրատունի թագավորը—Չ. Բ.) ի կենդանութեան իւրում գիր էր տուեալ Հոռոմոց՝ եթէ զկնի մահուան իմոյ Անի Հոռոմոց լինի, և այնու առնոյր տօրս և իշխանութիւնս ի Հոռոմոց զամս հնգետասան»:

դավ ես նյութում, որ ուզում ես փախուստի դիմել և զնալ քո առաջվա երկիրը, երբ նման բան մտքովդ անդամ չէր անցել: Դրա վրա քո նկատմամբ ահեզ դատաստան սլիտի տեսնեն, դատապարտեն որպես նենդ ու շարադավ ստրկի: Դու ճշմարտությունը սլիտի ասես, բայց քեզ չպիտի հավատան, քո վաղեմի ստորադրյալ ստրկի սուտը ճշմարտություն համարվի, նա կայսեր պատիվներին՝ կարժանանա, իսկ դու պիտի պապանձվես, ոչինչ չկարողանաս պատասխանել: Կայսեր կողմից քո կուրացման մասին վճիռ պիտի արձակվի, դուցե և նա կասի. «Իմ թագավորությունը խղճում է քեզ» և զրկելով քեզ ունեցվածքիցդ, պիտի աքսոր ուղարկի կամ բանտ նետի: Եվ այն ժամանակ միայն պիտի հիշես այդ փոքրիկ երկրիդ և իշխանությանդ մասին, այն մասին, թե ինչպես ազատ լինելով, հոժարակամ ստրուկ դարձար, ինչպես դու, արդար դատաստան տեսնողդ ու պատժողդ, այժմ անիրավ կերպով դատապարտվում ես ու պատժվում: Բացառված չէ, որ կայսրն իմանա, որ քո դեմ չեղկայացված մեղադրանքները անհիմն են, սակայն քեզ շնորհածը ետ առնելու և իր խոստացածը [չկատարելու] համար անտես կանի արդարությունը, այդ պատճառով քեզ համար շատ ավելի լավ է մնաս սեփական երկրում»<sup>44</sup>:

Մենք դիտմամբ մեջ բերեցինք XI դարի երկրորդ կեսի բյուզանդական նշանավոր հայազգի գործիչ Կեկավմենոսի աշխատությունից այս ընդարձակ քաղվածքը, քանզի նա ամենից խոսուն կերպով է ցույց տալիս X—XI դդ. հայ-բյուզանդական հարաբերությունների ճշմարիտ պատկերը: Նա այդ հարաբերությունները դիտում է երկուսի տեսանկյունից էլ, և՛ Բյուզանդիայի, և՛ Հայաստանի, ցույց տալիս, թե ինչին է ձգտում առաջինը, և ինչ պետք է անի երկրորդը: Ճիշտ է, Կեկավմենոսը այս դեպքում ամենևին էլ Հայաստանի անունը չի տալիս, Բյուզանդիայի զոհն այստեղ անանուն է, բայց անկասկած է թվում, որ նա նրկատի ունի Բյուզանդական կայսրության կողմից նաև հայկական հողերի նվաճումը<sup>45</sup>: Կեկավմենոսն ականատես է եղել Վասպուրականի, Շիրակի, Վանանդի նվաճմանը կայսրության կողմից, իր հորից կամ Մեծ

<sup>44</sup> Советы и рассказы Кекамена. Сочинение византийского полководца XI века. Подготовка текста, введение, перевод и комментарий Г. Г. Лутавина, М., 1972, стр. 298—300.

<sup>45</sup> Նրա օգտագործած տերմիններից կարելի է հանգի նման եզրակացության: Կեկավմենոսը իր խորհուրդն ուղղում է «տոպարիին» ու «էքսուսիաստեսին»: Սկիլիցեսը Շիրակի Բագրատունի թագավոր Գագիկ II-ին կոչում է Անիի տոպարիս (τοῦ Ἀνίου τοπάρχη), իսկ Գագիկ I-ի որդի Աշոտին, Հովհաննես—Սմբատի եղբոր՝ Մեծ Հայքի էքսուսիարիս (ἐξουσιάρχης):



Հայքում տոպարիս եղած իր պապից<sup>46</sup> լսել Տարոնի, Տայքի և հայկական այլ նահանգների նվաճման մասին, ականատես է եղել այդ շրջաններում բյուզանդական վարչության կամայականություններին, բռնություններին ու ծանր հարկապահանջության<sup>47</sup>, ինչպես և Բյուզանդիա գաղթած կամ բռնագաղթեցված հայության ու նրա մեծամեծների ողբալի վիճակին՝ օտարության մեջ:

Բյուզանդական կայսրությունը VIII դ. «մոռացել» էր Հայաստանը, նրա համար ավելի առաջնահերթ հոգսեր կային, պաշտպանել իր հողերը արաբներից և այլ թշնամիներից: Բայց IX դ. կեսերից խալիֆայության թուլացումը հնարավորություն տվեց կայսրության իր արտաքին քաղաքականության մեջ նոր էջ բացել, վերանվաճել այն, ինչ ձեռք էր բերել դեռևս Մավրիկիոս կայսեր օրոք: Եվ նա մեկ հարյուրամյակի ընթացքում կարողացավ իրականացնել իր նպատակը՝ նվաճել գրեթե ողջ Հայաստանը:

1. Տարոնի նվաճումը: Բյուզանդիայի ձեռքն ընկած առաջին զոհը Տարոնի հայկական իշխանությունն էր: Նրա վերջին իշխան Գրիգորը, գտնվելով երկու աշխարհակալ տերությունների՝ արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության միջև, ստիպված էր խուսանավել, երկուսից ավելի վտանգավոր համարելով հենց Բյուզանդիան: «Հենց սկզբից նա, — գրում է Կոստանդին Միրանաժինը, — երկու լարի վրա էր խաղում, խոսքով ձևացնում էր, թե գնահատում է կայսեր բարեկամությունը, բայց իրականում աշխատում էր հաճոյանալ սարակիսոսների առաջնորդին: ...նա ձևացնում էր, թե հռոմայեցիների կողմից է, բայց իրականում նախապատվություն էր տալիս սարակիսոսներին և գործում նրանց օգտին»<sup>48</sup>:

Տարոնի իշխանի համար պակաս դժվարություններ չէին ներկայացնում նաև ներքին հակասությունները, որոնք պայմանավորված էին իշխան Գրիգորի և վերջինիս եղբայր Ապոզանեմի շահերի բախմամբ, հակասություններ, որոնք Բյուզանդական կայսրությունն էր սրում և աշխատում օգտագործել հեռու գնացող իր նպատակների համար: Կայսրության առաջին մտահոգությունն էր իշխան Գրիգորին ստիպել արաբական խալիֆայությունից կապերը խզելու: Երկար դիմադրությունից հետո իշխան Գրիգորն ընդառաջ գնաց դրան: Կայսրությունը նրան շնորհեց մագիստրոսի՝ օտարերկրացուն պարգևվող ամենաբարձր պատվաստի-

<sup>46</sup> «Советы и рассказы», стр. 168—170.

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 152—154:

<sup>48</sup> Լաստանդին Միրանաժին, էջ 4—5:



ճանը, և այդ աստիճանը կրողին հասնող տաս լիտր ոսկի ու տաս լիտր արծաթ հոռզը: Նրան հայտարարեցին Տարոնի ղորավար (στρατηγός): Դա արդեն ապացույց է այն բանի, որ Տարոնի իշխանությունն արդեն վասալական կախվածության մեջ է ընկել կայսրությանից:

Բյուզանդական կայսրությունը Տարոնի վրա իր ազդեցությունը տարածելու համար օգտագործում էր Բյուզանդիայում ծառայող հայ բարձրաստիճան պաշտոնյաներին: Նրանցից էին օքսենոս դրոմոսի խարտուլար ներքինի Սինուտեսը (Սյունեցի), հայ թարգման Թեոդորոսը, պրոտոսպաթար Կոստանդինը, թարգման Կրինիտեսը և ուրիշներ: Փոքր դեր չէին խաղում նաև խնամիական կապերը: Տարոնի իշխան Գրիգորի ավագ որդի Բագարատին և նա VI կայսրը կնուծյան տվեց մագիստրոս Թեոփիլակտոսի քրոջը, Գրիգորի եղբայր Ապոգանեմին՝ պրոտոսպաթար Կոստանդինի դստեր:

Բյուզանդիայի համար քիչ էր Տարոնը վասալական կախման մեջ գցելը: Նրա վերջնական նպատակը Տարոնի զավթումն էր և այն՝ արաբների դեմ մղվող պատերազմի հենարան դարձնելը: Դրա հետ միասին կայսրությունը հենարան կունենար ծավալվելու նաև դեպի կենտ. Հայաստան, որ երկդարյա ստրկությունից հետո հազիվ էր ոտքի կանգնել, ստեղծելով սեփական թագավորություններ և իշխանություններ:

X դարի կեսերին Բյուզանդիային հաջողվեց իր ազդեցությունը տարածել Տարոնի վրա, ինչպես ասվեց, օգտագործելով Տարոնի ներսում ծագած երկպառակությունները: Մագիստրոս Գրիգորի որդիներ Բագարատն ու Աշոտը միացած աշխատում էին տիրանալ իրենց հորեղբայր Ապոգանեմի որդու՝ Թոռնիկի տիրույթներին: Ի վերջո Թոռնիկն ստիպված իր տիրույթները կտակեց Բյուզանդիային: Թեև Բագարատի և Աշոտի պահանջով կայսրությունն այն ժամանակ ստիպված հրաժարվեց Ապոգանեմի տիրույթներից, այնուամենայնիվ Տարոնը բաժանվել էր երկու մասի՝ Գրիգորի որդիներ Բագարատի և Աշոտի, և Գրիգորի եղբայր Ապոգանեմի որդիների միջև: Այս հանդամանքը թուլացրեց Տարոնի իշխանության դիմադրողականությունը և Տարոնի զավթումը արդեն օրակարգի հարց էր: Իշխան Աշոտը Տարոնը «կտակեց» կայսրության և նրա մահից հետո (696) Բյուզանդիան տիրացավ իր «ժառանգության»<sup>49</sup>: Խորամուխ լինելով դրան հաջորդող մի ամբողջ հարյուրամյակի հայ-

<sup>49</sup> Պետք է ասել, որ Տարոնը միացվելով կայսրության, ամբողջությամբ չմտավ նրա կազմի մեջ: Դեռևս անկախ մնացին որոշ բերդեր, որոնք հպատակություն էին հայտնում հայոց Բագրատունի թագավորին: Նրանցից էր Այծյաց բերդը, որը գրավելու Չմշկիկ փորձը ապարդյուն անցավ: Տե՛ս Մատթ. Ուռն., էջ 18:

բյուզանդական քաղաքական պատմության ամենախորը ծալքերի մեջ, ուշադրություն դարձնելով Տարոնի իշխան Աշոտի մահվան հաջորդած Բյուզանդիայի համար շատ ձեռնտու և կարծես պատվերով ու ժամանակին տեղի ունեցած հայոց աշխարհի վեհապետների «մահվան» (Դավիթ կուրապաղատի, Աշոտ և Հովհաննես Բազրատունիների և այլն), ապա և ուշադիր կարդալով Հովհաննես Սկիլիցեսի պատմական երկը, որի մեջ շատ շատ են Բյուզանդիայում բարձրաստիճան գործիչների, մինչև անգամ կայսրերի ու պատրիարքների անաղմուկ, ժամանակին ու «ինքնաբերաբար» մահանալու դեպքերի մասին հիշատակությունները, կարելի է համոզվել, որ կայսրության մեջ քաղաքական տեղորոշ պետական քաղաքականության մակարդակին էր բարձրացված: Այդ առումով՝ «վախճանեցաւ Տարօնոյ իշխանն Աշոտ: Եւ Տարօնոյ Հոռոմք տիրեցին» Ասողիկի խոսքերը շատ են հիշեցնում երեք տասնամյակ հետո Տայքում կատարված դեպքերը. վախճանվեց Դավիթ կուրապաղատը և Տայքին հոռոմները տիրեցին: Հայտնի է, որ Դավիթ կուրապաղատին նահատակեցին: Նույնը չկատարվե՞ց արդյոք Տարոնի իշխան Աշոտի հետ...

Իշխան Աշոտի «կտակը» և «մահը» առաջինն էին: Դրանց հաջորդելու էին և այլ «կտակներ» ու «մահեր», որոնց հետևանքով վերջ էր տրվելու: հայոց ինքնուրույն պետականությանը:

2. Տայքի նվաճումը: Տարոնի նվաճումը ոգևորեց կայսրության: Ընդամենը հինգ տարի էր անցել, երբ Նիկեփոր II Փոկասի հաջորդ Հովհաննես Չմշկիկը փորձեց նորանոր հայկական հողերի տիրանալ: Օգտորվելով դեպի Ասորիք և Լիբանան՝ արաբների դեմ կատարած իր արշավանքից, նա այդ ընթացքում ուզեց ոտք դնել Հայաստան: Այդ առթիվ հայոց թագավոր Աշոտ III-ն իր շուրջ հավաքելով ողջ հայության զինյալ ուժերը, շուրջ ութսուն հազար հոգի, բանակեց Հարք գավառում՝ պատրաստ ընդդիմակայելու բյուզանդական զորքերին: Չմշկիկի փորձը անհաջողության մատնվեց<sup>50</sup>:

Հայոց հողերին զենքի ուժով տիրանալու փորձ կատարեց նաև Չմշկիկի հաջորդ Վասիլ III-ը: Նրա օրոք 993 թ. «ելանէր մեծ տուկն Հոռոմոց և գայր բազում զօրօք ի վերայ աշխարհին Հայոց»<sup>51</sup>: Դարձյալ

50 Այդ մասին աղոտ գրում է Մատթեոս Ուռհայեցին (էջ 17—18), բայց հստակ՝ Սմբատ Սպարապետը. «Չմշկիկ շարժեցաւ ի բարկութիւն, և ժողովեաց զամենայն զօրսն Յունաց և էառ օգնական ի ֆրանկոնոյն. և կամեցաւ նախ յառաջ Հայոց տիրել...» (Սմբատ Սպարապետ, էջ 9):

51 Մատթ. Ուռհ., էջ 41:



ողջ հայությունը մի մարդու պես ոտքի կանգնեց և պարտության մատնեց հոռոմոց զորքերին<sup>52</sup>։

Բյուզանդիայի համար պարզ դարձավ, որ քանի հայկական թագավորությունները և իշխանությունները հանդես են դալիս միասնական, իրեն դժվար կլինի զենքի ուժով հաջողության հասնել։ Ստրատեգիան թողնելով նույնը, նա պետք է փոխեր իր տակտիկան, ջանքեր թափեր հայերի միասնականությունը խախտելու, դորժ ունենալու հայկական պետական միավորումների հետ առանձին-առանձին։ Այսինքն զենքը ժամանակավորապես փոխարինել դիվանագիտությամբ։

Ամռապնդվելով Տարոնում, Բյուզանդիան իր ուշադրությունը բեռեց Տայքի կուրապաղատության վրա։ Առաջ քաշելով այն պատրվակը, որ Դավիթ կուրապաղատը օղնություն էր ցուցաբերել Վասիլ II-ի դեմ ապստամբած Վարդաս Փոկասին (ամենայն հավանականությամբ պարզ պատկերացնելով բյուզանդական առկա վտանդն իր իշխանության համար), ապստամբության ճնշումից հետո կայսրը ստիպեց Դավթին իր իշխանությունը Բյուզանդիային կտակել։

Տայքում Վասիլ II-ն ստեղծել էր բավական ընդարձակ լրտեսական ցանց, կարողացել էր կաշառել և իր հլու հնազանդ կամակատարները դարձնել Տայքի ավադանու մի մասին և նրա օգնությամբ իրագործել իր նպատակները։ Դավթին իր իշխանությունը կտակել էր կայսրության, բայց մեռնելու նպատակ չուներ։ Բյուզանդիայի կամակատար Տայոց ավագանին, նրա «ազատագունդը», ինչպես գրում է Արիստակես Լաստիվերցին, «ձանձրացեալ կէնօք նորա», ասել է անհամբեր սպասելով Դավթի ուշացող մահվան, ամեն ինչ արեցին այն արագացնելու։ Այդ բանը շասու լավ գիտակցում էր Դավիթ կուրապաղատը և հնարավոր թունավորումից խուսափելու համար հակաթուլն օգտագործում։ Դավիթ կուրապաղատին Վերին Երուսաղեմ ուղարկելու գործն իրենց վրա վերցրին վրաց աշխարհի արքեպիսկոպոս Իլարիոնը և Դավթի «չար իշխանները»։ Արքեպիսկոպոսը 1000 թ. ավագ շաբաթվա հինգշաբթի օրը «ի կենդանարար մարմնին և յարիւնն Քրիստոսի դեղ մահու խառնեաց», այսինքն հաղորդության հացի ու գինու մեջ թույն խառնեց։ Մահափորձը հաջողություն չունեցավ, քանզի «գիտացեալ աստուածասէր իշխանին Դաւթի, ...առեալ դեղ բժշկութեան շիջուցանէր զցաւսն ի մարմնոյ իւրոյ»<sup>53</sup>։ Սնում էր այլ քայլի դիմել։ Եվ Իլարիոնը երեք օր անց, Ջատկի օրը, երբ Դավիթը «խաղաղիկ ի քուն կայր... առեալ նորա զբարձն ի սնարիցն

52 նույն տեղում։

53 նույն տեղում, էջ 38։

դնէր ի վերայ բերանոյն Դաւթին և անկեալ սաստկապէս ուժգին ի վերայ նորա և շարշարանօք խեղզէր զաստուածասէր կուրապաղատն յԴաւթ»<sup>54</sup>։

Դավիթ կուրապաղատի հանդեպ Վասիլ II-ի գործած քաղաքական տեռորի մասին պարզ վկայում է Արիստակես Լաստիվերցին, ցույց տալով, որ նրան սպանող Տայոց ազատագունդը ակնկալություններ ուներ կայսրից, վերջինս նրանց ինչ-որ խոստումներ էր տվել. «վասն առաջիկայ խոստմանցն՝ որ ի թագաւորէն ակն ունէին»<sup>55</sup>։ Կայսրն իր խոստումը կատարեց, բայց և ոճրագործության հետքերը թաքցնելու ու Տայքի բնակչութեանը հանգստացնելու համար մահապատժի ենթարկեց արքեպիսկոպոս Իլարիոնին։

Վասիլը տիրացավ ոչ միայն Տայքին, այլև Տայքի կուրապաղատ Դավթի ողջ իշխանութեան, որի մեջ մտնում էին այլ գավառներ ևս։ Լաստիվերցին գրում է, որ կայսրը «տիրէ բազում գաւառաց և բերդից և քաղաքաց»<sup>56</sup>։ Նրանցից նա հանվանե հիշատակում է Հարքը, Մանաղկերտը, ասել է՝ Ապահունիքը, Բագրևանգը և Եկեղաց գավառը<sup>57</sup>։

Ինչպե՞ս է նկարագրված Տայքի նվաճումը Սկիլիցեսի մոտ։ Ինչպես և պետք էր սսլասել, Սկիլիցեսը ոչինչ «չգիտե» գուցե և իսկպես չգիտե Տայքը նվաճելու գործում Վասիլ II-ի գործադրած միջոցները։ Նրա ասելով, կայսրը զբաղված էր Սամուիլի դեմ պատերազմով։ Թեսաղոնիկեից գալով Կոստանդնուպոլիս, նա այնտեղից շտապում է Իբերիա, քանզի արդեն մեռել էր Դավիթ կուրապաղատը, իր տիրույթների ժառանգ նշանակելով կայսեր։ Գալով Իբերիա, Վասիլը տիրանում է «իր» ժառանգութեան, վրաց թագավոր Գիորգիի հետ հաշտություն կնքում և այնտեղից գնում Փյունիկե, իր հետ տանելով Տայքի մեծամեծներից Բալուրլանին, Թեղատին և Փերսին։

3. Վասսալուրականի նվաճումը։ Տայքի նվաճումից հետո Բյուզանդիան շարունակեց իր զավթողական քաղաքականութեանը։ Թեև նրան ամենից առաջ հետաքրքրում էր Շիրակի թագավորութեանը, բյուզան-

54 Նույն տեղում։ Արիստ. Լաստ. էջ 23։ Քաղաքական տեռորի այս ոճին մենք հանդիպում ենք մի քանի տասնամյակ հետո, երբ Բյուզանդիան նույն ձևով տեռորի ենթարկեց, նույնպես հոգևորականի ձեռքով, հայոց իշխան Եպիխտին։ Նրա խոստովանահայրը «յաւուր միում մտեալ առ Պիխտն և տեսեալ զնա, զի ննջեալ կայր քաղցրիկ ի մահիճս իւր, յարձակեցաւ զազանարար ի վերայ նորա և առեալ զբարձն դնէր ի վերայ բերանոյ նորա՝ և ուժգին անկեալ ի վերայ նորա և շարաշար սպանանէր զայր հօր և քաջ՝ շարագործ և պիղծ կրօնաւորն Հոսոմոց» (Մատթ. Ուռն., էջ 214)։

55 Արիստ. Լաստ., էջ 23։

56 Նույն տեղում, էջ 24։

57 Նույն տեղում։



դական աղբյուրների Մեծ Հայքը (Μεγάλη Ἀρμενία), բայց նա Տայքից անմիջապես հետո շէր կարող իր ուշադրութիւնը բեռել Շիրակի վրա: Այն բավական հզոր էր, բացի այդ, նրան օգնութեան կարող էր հասնել Վասպուրականի Արծրունյաց թագավորութիւնը: Մնում էր նախ և առաջ շեղոքացնել Վասպուրականը: Դրանով ոչ միայն Շիրակը կմնար առանց օգնականի, այլ հյուսիսից և հարավից՝ Տայքից և Վասպուրականից կառնվեր աքցանի մեջ:

XI դարի սկզբներին դրութիւնն առաջին հայացքից բարենպաստ էր Բյուզանդիայի համար: Ասպարեզ էր եկել այնպիսի մի ուժ՝ օղուզները, որոնց վտանգը թեև կայսրութեան համար գեռևս շոշափելի չէր, բայց շոշափելի էր Վասպուրականի համար: Հենց դրանից էլ ուզեց օգտվել Բյուզանդական կայսրութիւնը: Մատթեոս Ուռհայեցին, խոսելով հայոց 465 թ. (1016) դեպքերի մասին, գրում է. «զարթեալ աստուածասաստ բարկութիւնն ի վերայ ամենայն քրիստոսական ժողովրդեանն և երկրպաղողաց սուրբ խաչին, զի զարթեալ վիշապն մահաշունչ հանդերձ մահաբեր հրով, եհար զհաւատացեալս Սրբոյ Երրորդութեանն: Յայսմ ի թուականիս սասանեցաւ հիմունք առաքելականացն և մարգարէականացն, վասն զի օձք թևավորք հասին և կամին ցոլանալ ընդ ամենայն աշխարհս հաւատացելոցս Քրիստոսի. այս է առաջին ելն արեանարբու գաղանացն: Ընդ աւուրսն ընդ այնոսի՛ն որաժողով լինէին խուժաղուժ ազգն անօրինացն, որք անուանեալ կոչին Թուրք, և հասեալ մտանէին յաշխարհն Հայոց ի Վասպուրական գաւառին և անողորմ ի բերան սրոյ կոտորէին զհաւատացեալքս Քրիստոսի»<sup>58</sup>:

Թուրքերի դեմ դուրս եկավ Վասպուրականի թագավոր Սենեքերիմի որդի Դավիթը, բայց ի վիճակի չեղավ կանգնեցնել նրանց հրոսակներին: Եթե հավատանք Մատթեոս Ուռհայեցուն և այլ պատմիչների, թուրքերի հենց այս արշավանքի առթիվ Սենեքերիմը «խորհեցաւ տալ զաշխարհ հայրենեաց իւրոց յարքայն Յունաց Վասիլ և առնուլ զՍեբաստիա և գրէր վաղվաղակի առ թագաւորն. զոր իբրև լուաւ թագաւորն Վասիլ՝ ուրախ եղև և ետ նմա զՍեբաստիա. և տայր Սենեքերիմ զաշխարհն Վասպուրականի...»<sup>59</sup>:

Բայց աղբյուրների արժանահավատ տվյալներով տարածքների փոխանակութիւնը կատարվեց 1021-ին<sup>60</sup> և ոչ 1016-ին: Նույն Ուռհայեցու

58 Մատթ. Ուռհ., էջ 46—47:

59 Նույն տեղում, էջ 48—49:

60 Մանրամասն տե՛ս Վ. Վաղանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորութիւնը 908—1021 թթ., Երևան, էջ 210 և հտ.



տվյալներով 1016 թ. Կոստանդնուպոլիս է գնում Սենեքերիմի պատվիրակութիւնը, այն գլխավորում է վերջինիս որդի Դավիթը: Եթե Սենեքերիմն արդեն տվել էր Վասպուրականը, համաձայնվել էր փոխանակութեան, բյուզանդական կայսրն էլ ինչո՞ւ էր Բյուզանդիա հրավիրում Սենեքերիմի որդուն: «Եւ առաքեաց թագաւորն Վասիլ առ Սենեքերիմ առաքել առ նա զԴաւիթ թագաւորական ճոխութեամբ...»<sup>61</sup>: Դավիթը, ազատաց բազում որդիների, եպիսկոպոս տեր Եղիշեի հետ, գանձերով բռնավորված 300 ջորիներով, 1000 արաբական ձիերով գնաց Կոստանդնուպոլիս: Սա վկայում է, որ Կոստանդնուպոլիս գնաց արքայազներ, երկրի տերը, և ոչ հայրենիքը օտարի ձեռքը հանձնելու մտադրութիւն ունեցող մեկը: Հարցը պարզվում է, եթե նկատի առնենք Հովհաննես Սկիլիցեսի տվյալները: Խոսելով բյուզանդա-բուլղարական պատերազմի վերջին դրվագներից մեկի մասին, նա ցույց է տալիս, որ Վասիլ II-ը, գրավելով Մակեդոնիայի Մոզլենա բերդը, զենք կրելու ընդունակ բոլոր ռազմագերի բուլղարներին ուղարկեց Վասպուրական<sup>62</sup> (τοὺς μὲν ὅπια θύναμένους χιναίῃν εἰς Ἀσπραχανίαν ἐκπέμπει ὁ βασιλεὺς): Բուլղար պատմաբան Չլատարսկու հաշիվներով Մոզլենայի համար պատերազմն սկսվեց 1015 թ. ապրիլին<sup>63</sup>: Պարզ է, նրանք հենց 1015 թ. չէին կարող Վասպուրական հասած լինել, դեռ ավելին, հենց 1015 թ. ուղարկված: Ի՞նչ էր այդ ընթացքում տեղի ունեցել: Վասպուրականը 1015—1016 թթ. դեռևս սուվերեն պետութիւն էր, Վասիլը Վասպուրականի հետ ոչ մի պատերազմ չունեց, էլ ի՞նչու էր բյուզանդական զորք ուղարկում Վասպուրական: Պարզ է, մեկը պիտի խնդրեր, որպեսզի Վասիլը Վասպուրական զորք ուղարկեր: Դարձյալ հարց է ծագում: Ինչո՞ւ 1016-ին Դավիթը, այն էլ «թագաւորական ճոխութեամբ», բազում թանկագին նվերներով գնաց Կոստանդնուպոլիս: Եթե նա արդեն տվել էր Վասպուրականը կամ այն տալու նպատակով էր գնում, էլ ինչո՞ւ էր այդ նվերներով գնում բյուզանդական պետութեան մայրաքաղաքը, ինչո՞ւ նրան քաղաքի բնակչութիւնն ընդունեց մեծ հանդիսավորութեամբ. «Փառաւորութեամբ եմուտ Դաւիթ ի Կոստանդնուպոլիս՝ և դրդեցաւ քաղաքն և ելին ամենեքեան ընդ առաջ նորա և զարդարեցին զփողոցս և զապարանս և գանձս բազումս ցանէին ի վերայ նորայ»<sup>64</sup>: Այդպես կգնար սուվերեն վեհապետը, այդպես կընդունեին սուվերեն վեհապե-

61 Մատթ. Ուռհ. էջ 49:

62 Տե՛ս ստորև, էջ 84:

63 Златарски, История, том I, часть 2, стр. 707.

64 Մատթ. Ուռհ., էջ 49:



տին, հետևաբար 1016 թ. Դավիթը Կոստանդնուպոլիս գնաց ոչ թե հայրենիքը զոհաբերելու համար, այլ այն փրկելու: Միանգամայն անհավանական է, որ թուրքերի առաջին իսկ լուրջ վտանգի առաջ Սենեֆերիմը որոշեր հրաժարվել իր հայրենիքից: Ավելի տրամաբանական է ենթագրել, որ նա նախ և առաջ պիտի փորձեր վտանգի առաջն առնել ժամանակի քրիստոնեական հզորագույն տերության զինական օգնությամբ: Ահա այդ օգնությունը խնդրելու էր գնում Դավիթը Կոստանդնուպոլիս: Եվ նա ստացավ այն՝ հանձինս Մոզլենայում գերեվարված բուլղար ռազմադերիներին:

Բյուզանդիան, իր ղորքերը վասպուրական ուղարկելով ամենևին էլ նպատակ չուներ պաշտպանելու Արծրունյաց թագավորությունն արտաքին թշնամուց: Նա իր հաշիվներն ուներ: Արիստակես Լաստիվերցին ցույց է տալիս, որ Վասիլ II-ը, գրավելով Բուլղարիան (1018), բուլղարական զորքերը «խաբանօք ի մի վայր ժողովէ, որպէս թէ պարգևս տալ նոցա, և գրով զհամար նոցա կալեալ՝ առաքէ զնոսա յարևելս անդառնալի եկիւք. որք եկեալ զաշխարհս յաւեր ռարձուցին»<sup>65</sup>: Կասկած չի կարող լինել, որ Լաստիվերցու հիշատակած բուլղարական զորքը նույնանում է Հովհաննես Սկիլիցեսի բուլղարական այն զորքի հետ, որ Վասիլ II-ը ուղարկեց վասպուրական: Հենց նրանք «ղաշխարհս յաւեր դարձուցին», մեր համոզմամբ վասպուրականը տակնուվրա արեցին և հող նախապատրաստեցին այն «վոխանակության», որ տեղի ունեցավ 1021 թ.: Բյուզանդիան Արծրունյաց թագավորությունը ներսից պայթեցրեց և ոչ դրսից՝ ճնշում գործադրելով, ինչպես կարծում են:

Ինչպես տեսնում ենք, Հովհաննես Սկիլիցեսի և հայկական աղբյուրների տվյալների դուգորդությունը միայն պարզ է դարձնում հայոց պատմության մի շատ կարևոր հարց, վասպուրականի Արծրունյաց թագավորության վերջին տարիների պատմության հետ կապված:

Նման իրավիճակ ստեղծվել էր Հայաստանում մոտ մեկ հարյուրամյակ դրանից առաջ, այն ժամանակ, երբ Հայաստան ոտք էր դրել Ատրսյատականի ամիրա Յուսուֆը և Բաղրատունիների համար դժվար էր նրա դեմ մարտնչել: Աշոտ II Երկաթը ստիպված եղավ 913 թ. գնալ Կոստանդնուպոլիս զինական ուժ խնդրելու: Այդ օգնությունը նրան տրվեց. «Իսկ կայսր Կոստանդին (Միրանաժինը—Հ. Բ.)... սիրալիր սրտիւ հաւանեալ խնդրոյն Աշոտոյ, ...բազում զօրավարս և զօրս Հոովմայեցիս ի ձեռս նորա դումարեալ՝ յուղարկէ յիրական աշխարհս»<sup>66</sup>:

65 Արիստ. Լաստ., էջ 24—25:

66 Հովն. Դրասխ., էջ 292—293:



Բայց բյուզանդական զորքերն սկսեցին տակնուվրա անել Հայաստանի մի շարք շրջաններ, նրանք նվաճեցին Հայաստանի արևմտյան մի քանի գավառներ<sup>67</sup>, սկսեցին խառնվել Բագրատունիների ներքին գործերին, Աշոտ II-ի կենտրոնական իշխանության դեմ նախարարների խռովություններ կազմակերպել: Եվ Աշոտ II-ը 922 թ., երբ բյուզանդական զորքերը Հովհաննս Կուրկուասի գլխավորությամբ փորձեցին գրավել Դվին քաղաքը, ինչքան էլ դա տարօրինակ թվա, դաշնակցեց Ատրպատականի ամիրա Սբուքին, հանդես եկավ բյուզանդական զորքերի դեմ և դուրս շարտեց նրանց Հայաստանից, մի բան որ հարյուր տարի անց չկարողացավ անել Սենեքերիմ Արծրունին, և, հավանաբար, չէր էլ կարող անել՝ նկատի ունենալով ժամանակվա միջազգային իրադրությունը և Բյուզանդիայի հղորությունը: Սենեքերիմը հեռացավ Վասպուրականից 1021-ին, այսինքն այն ժամանակ, երբ արևելք եկավ Վասիլ II-ը: Ո՞րքան այդ Սենեքերիմը, երևի, չէր էլ մտածում հրաժարվել Վասպուրականից: Վասիլը, հարկավ, կարող էր առանց քաղաքական ճնշման էլ վերացնել Վասպուրականի թագավորությունը, նրան բավական էր շարժման մեջ դնել իր զինական ուժերը: Բայց գործը գրան չհասավ: Ստեղծված իրադրության մեջ Սենեքերիմին այլ բան չէր մնում անել, քան տեղի տալ Վասիլ II-ի առաջարկի առջև և ընդառաջ գնալ բյուզանդական թելադրանքին:

Վասպուրականի նվաճումը ներկայացնել որպես ազնիվ գործարք՝ հավասար կողմերի միջև կնքված, հողերի պարզ փոխանակություն՝ ձեռնտու էր և՛ Բյուզանդիային, և՛ Վասպուրականին: Առաջինին այն պատճառով, որ նա դեռևս պայքար ուներ մղելու Բագրատունիների թագավորության դեմ, և ջանում էր ցույց տալ հայերին, որ Վասպուրականի կցումը կայսրության սովորական փոխանակություն էր, երկուստեք ձեռնտու փոխանակություն և ոչ թե նվաճում, իսկ Վասպուրականի տերերի համար այն պատճառով, որ նրանք այդ ձևով մի կերպ պաշտպանում էին իրենց պատիվը, ցույց տալով, որ կատարվածը բյուզանդական ճնշման ու թելադրանքի հետևանք չէր: Իսկ գործարքը Բյուզանդիայի կողմից ամենևին էլ ազնիվ չէր, իսկ Վասպուրականի համար էլ՝ փոխադարձ ձեռնտու և իրավահավասար, քանզի Սեբաստիա տեղափոխված հայերն «արկան ընդ լծով ծառայութեանն Հոռոմոց»<sup>68</sup>:

Վերևում ասվածից հետո Սենեքերիմ թագավորը մեզ համար հանդես է գալիս միանգամայն այլ տեսքով: Նա վախկոտ մի վեհապետ չէր,

67 Տեր-Ղևոնդյան, Արարական ամիրայությունները, էջ 136:

68 Թովմա Արծրունի, էջ 500:



առաջին վտանգի առաջ իր հայրենիքն ու ժողովրդին ծախելու պատ-  
րաստ, ինչպես նա պատկերված է մի շարք աղբյուրներում և ժամանա-  
կակից ուսումնասիրություններում: Սենեքերիմն իրականում, չափա-  
զանց բարձր իրավիճակում ամեն ինչ արեց փրկելու իր հայրենիքն ու  
ժողովրդին՝ արևելքի ու արևմուտքի ահարկու թշնամիներից: Գուցե նա  
սխալվե՞ց դաշնակցի ընտրության գործում: Բայց նա էլ ու՞մ կարող էր  
այն ժամանակ դիմել օգնության: Չէ՞ որ սեփական ուժերով նա ի վի-  
ճակի չէր ընդդիմակայելու թուրքերին: 20—25 տարի անց ի վիճակի չէր  
լինելու նրանց ընդդիմակայել ամենահզոր Բյուզանդական կայսրու-  
թյունը...<sup>69</sup>:

Վասպուրականը «հոյսանակության» կարգով ստանալով, կայսրու-  
թյունը դեռևս Վասպուրականին շտիրացավ: Հենց այստեղ էլ Հովհաննես  
Սկիլիցեսի պատմական երկը հանդես է գալիս որպես բացառիկ արժեք  
ունեցող աղբյուր, քանզի Բյուզանդիայի՝ Վասպուրականի նվաճման հա-  
մար մղած հետագա պայքարը հայկական աղբյուրներում թերի է լու-  
սաբանված: Վասպուրականում հաստատված էին մի շարք արաբական  
ամիրայություններ, որոնք լուրջ դիմադրություն էին ցուցաբերում: Նը-  
րանցից էր Բերկրիի ամիրայությունը: Կայսրության գործադրած ճնշման  
տակ նրա ամիրա Ալիմն այն զիջեց Բյուզանդիային, ենթադրելով, որ  
կարժանանա պատրիկության և այլ բազում փոխհատուցումների, բայց  
իր ակնկալածը չստանալով, գաղտնի դաշինք կնքեց հարևան թուրքերի  
հետ և գիշերով վերագրավեց Բերկրին ու սրի քառեց բյուզանդական վեց  
հազարանոց կայազորը: Կայսրը պաշտոնանկ անելով կառավարիչ Նի-  
կոլայի՝ Խրիսելիոսին, նրա պաշտոնը տվեց Նիկետաս Պեգոնիտեսին,  
որը ռուս վարձկանների և այլ զինական ուժով, վերագրավեց Բերկրին,  
իսկ ամիրային մահվան դատասյարտեց: Դեպքերի հետագա պատմու-  
թյունը մեզ հաղորդում են հայկական աղբյուրները: Միքայել III կայսեր  
օրոք Բերկրիի արաբները ապստամբեցին և «եղև մեծ կոտորած զօրացն  
Հոռոմոց՝ ի բերդաքաղաքն որ կոչի: Բերկրի, որ ի վիճակի Արծրունեաց  
աշխարհի, զոր վաղնջուց յափշտակեալ էր Պարսից՝ հանդերձ իւրովք  
դաստակերտօքն, և ունէին ընդ ձեռամբ: Յորոյ վերայ եկեալ Կաւասիլաս  
ոմն՝ որ Վասպուրականի գաւառապետն էր՝ բազում զօրու, էառ զքա-  
ղաքն և կացոյց զունդս հեծելոց պահապան քաղաքին»<sup>70</sup>:

Բերկրիից հետո Բյուզանդիան նվաճեց Արճեշը: Այդ բանը կատա-

69 Հարցի մասին մանրամասն տե՛ս Бартикян, О болгарском войске, էջ 88—95:  
Նույնի, Վրիզոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի շուրջը:

70 Արիստ. Լաստ., էջ 48:



րեց Վասպուրականի կատապան Նիկեփոր Կոմնենոսը. «զԱրճէշ իւրով դաստակերտօքն նա ած ընդ ձեռամբ Հոռոմոց»<sup>71</sup>,

Վասպուրականը, որ կազմեց վարչական մեկ միավոր՝ Վասպուրականի կատապանությունը՝ կատապանի գլխավորութեամբ<sup>72</sup>, Տայք-Իբերիայի հետ դարձավ այն հենակետը, որտեղից կայսրությունն սկսեց իր կործանիչ քաղաքականությունը Շիրակի Բագրատունյաց թագավորության դեմ: Վասպուրականը դարձավ այն ապաստարանը, որտեղ փրկություն էր փնտրում ու գտնում Շիրակի թագավորության դեմ ոտնձգություններ կատարող և պատասխանատվությունից խուսափել ձգտող ամեն մի անձնավորություն: Անգամ հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձը, որ Բյուզանդիայի գործակալն էր Անիում, ստիպված եղավ 1037 թ. «ծա:ծկաբար» ապաստանել Վասպուրականում, որտեղ մնաց ամբողջ շորս տարի<sup>73</sup> և Հայաստան վերադարձավ Բյուզանդիայի միջնորդութեամբ:

4. Շիրակի (Մեծ Հայքի—Μεγάλη Ἀρμενία) նվաճումը: Տայքի և Վասպուրականի կցումը ու նրան հաջորդած բյուզանդական վարչության հաստատումը բարդացրեց Շիրակի Բագրատունիների վիճակը, քանզի կայսրության առաջնահերթ նպատակը Շիրակի նվաճումն էր, հայոց թագավորության վերացումը: Այդ բանը շատ լավ էին գիտակցում Բագրատունիները և պատահական չէ, որ նրանք վաղուց էին վտանգը կանխելու միջոցներ ձեռք առնում: Վտանգի մասին շատ լավ պատկերացում ունեին նաև վրաց տիրակալները: Այդպիսի պայմաններում օրակարգի հարց դարձավ հայ-վրացական դաշինքը, որի հիմքը դրվել էր դեռևս X դարի վերջերին: Երբ Դավիթ կուրապաղատի վրա հարձակվել էր Ատրպատականի արաբ ամիրա Ռավադյան Մամլանն իր հրոսակներով, «կիրապաղատն, Դավիթ և արքայն Հայոց Գագիկ և Աբաս ընդ

71 Նույն տեղում, էջ 41:

72 Կ. Յուզբաշյանը, ելնելով Գրիգոր Մագիստրոսի Կելաոփսի արձանագրության տվյալներից, գտնում է, որ XI դարի կեսերից Վասպուրականն ու Տարոնը միացվեցին և կաղմեցին մեկ միացյալ բանակաթեմ՝ Վասպուրականի և Տարոնի բանակաթեմը (Yuzbashian, L'administration, p. 147, 152): Բայց իր մի թղթում Գրիգոր Մագիստրոսն իրեն հորջորջում է նաև «Վասպուրականի և Տարոնոյ և Մանազկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր և Մօնումախին մագիստրոս, վէստ և տուկ» (էջ 213): Այս բոլոր նահանգները երբեք մեկ միացյալ բանակաթեմ չեն կաղմել, պարզ է, որ նա թվարկում է տարբեր ժամանակներում գրաված պաշտոնները (հմտ. Юзбашян, Экекуссия, стр. 107, прим. 14, նաև Каждан, Армяне, стр. 38): Ինքը՝ Մագիստրոսը, մի այլ թղթում իրեն անվանում է լոկ Տարոն բանակաթեմի (բղեշխության) կառավարիչ (էջ 48): Հնարավոր է, որ տվյալ դեպքում էլ նույն բանն է եղել, քանզի Վասպուրականն ու Տարոնը միացյալ բանակաթեմ լինելու վերաբերյալ փաստեր չկան:

73 Մատթ. Ուռն., էջ 75:



նմա, և Բագարատ թագաւոր Վրաց՝ դան ընդդէմ նոցա ի գաւառն Բագրևանդ, բանակ մեծ բոլորեալ ի Վաղարշակերտ քաղաքի»<sup>74</sup>: Հայ-վրացական միացալ բանակը սարսափեցնում է թշնամիներին, որոնք «դարձան չերկիրն իւրեանց»<sup>75</sup>:

Հայ-վրացական զինական դաշինքն իր բարի պտուղներն է տալիս և մի փոքր անց, 998 թ., երբ նույն Մամլանը դարձյալ է հարձակվում Տալթի կուրապաղատ Դավթի վրա: Դավթին ռազմական օգնութիւն է տալիս հայոց արքա Գագիկը և վրաց թագաւոր Գուրգենը՝ Բագարատը որդին: «Միաբան հասանէին զօրքն Հայոց և Վրաց» գրում է Ասողիկը<sup>76</sup>, «որոց հետամուտ եղեալ Հայոց և Վրաց զօրուն՝ սաստիկ հարուածովք հարկանէին, ի սուր սուսերի մաշելով զնոսա... մինչև ի դուռն Արճէշ քաղաքին»<sup>77</sup>:

Բյուզանդական վտանգի առջև այդ դաշինքը շարունակում է գործել: Երբ 1020 թ. Գագիկ I-ի մահից հետո նրա որդիներ Հովհաննես-Սմբատի և Աշոտի միջև գահակալական պայքար սկսվեց, որը հրահրում էր Բյուզանդական կայսրութիւնը<sup>78</sup>, պայքարին միջամտեց «թագաւորն Ափխաղաց Գէորգի՝ ի խաղաղութիւն համողեաց զնոսա»<sup>79</sup>: Երբ 1022 թ. Վասիլ II-ի դեմ ապստամբութիւն բարձրացրեց Վարդաա Փոկասի որդի Նիկեփոր Ծովիզը, վրաց թագաւոր Գիորգին և Գագիկ I-ի որդիները ապստամբին միացան և զինական օգնութիւն ցույց տվեցին, մի բան, որ ահաբեկեց Վասիլ II-ին<sup>80</sup>:

Այդուհանդերձ, ո՛չ հայերը, ո՛չ վրացիները ի վիճակի չէին հաջողությամբ ընդդիմակայելու հզորութիւն գազաթնակետին գտնվող Բյուզանդական կայսրության: Վասիլ II-ը 1021 թ. Տրապիզոնում իր կամքն էր թելադրում հայոց և վրաց վեհապետներին: Հովհաննես-Սմբատի հրամանով Տրապիզոն գնաց հայոց կաթողիկոս Պետրոսը: «Անգ՝ եղև Հայոց կորստեան գիր և նամակ,— գրում է Լաստիվերցին,— քանզի

74 Ասողիկ, էջ 267:

75 նույն տեղում:

76 նույն տեղում, էջ 271:

77 նույն տեղում, էջ 273:

78 Աշոտը «թողեալ զաշխարհն՝ երթեալ հասանէ ի դուռն թագաւորին Հոռոմոց. և հաճոյ եղեալ նմա՝ խնդրէր զօրս յօգնականութիւն. և առեալ զայ անցանէ յաշխարհն իւր: Եւ յաջողեալ նմա յԱստուծոյ, տիրէ բաղում գաւառաց և բերգից»: Արիստ. Լաստ., էջ 28: Տարիներ անց, 1030 թ. Ռոմանոս III Արգիրոսն իր զարմուհուն կնության տվեց «Մեծ Հայքի էքսուսիարխին», հավանաբար հենց Աշոտին:

79 Արիստ. Լաստ., էջ 27:

80 Մատթ. Ուոհ., էջ 51:

Յովհաննէս պատուէր տուեալ էր հայրապետին, եթէ՝ Գրէ գիր և տուր կտակ թագաւորին, զի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս և զերկիրս նմա տաց ի ժառանգութիւն»<sup>81</sup>։

Տրապիղոնի պայմանագրի մասին պատմում է Հովհաննէս Սկիլիցեսը, արձանագրելով Վասիլ II-ի գործադրած ճնշումը հայոց թագավորի վրա։ Մենք հենց Սկիլիցեսից ենք իմանում, որ Հովհաննէս-Սմբատը և վրաց թագավոր Գիորգին զինական դաշինք ունեին ընդդէմ Բյուզանդիայի, որ հայոց թագավորը Գիորգիի պարտությունից հետո ստիպված էր տեղի տալ Վասիլ II-ի ճնշմանը և իր երկիրը «կտակել» կայսեր։ Մենք հայկական աղբյուրներից չգիտենք, որ Հովհաննէսը Վասիլի կողմից ստացավ մագիստրոսի պատվաստիճանը, այլ միայն անորոշ կերպով, թե նա կայսրությունից ստանում էր «տուրս և իշխանութիւնս ի Հոռոմոց զամս հնգետասան»<sup>82</sup>։ Ահա թե ինչ է գրում Հովհաննէս Սկիլիցեսը. «Երբ իբերների առաջնորդ Գեորգիոսը հռոմայեցիների դէմ զենք բարձրացրեց, նրան զինակցութիւն ցուցաբերեց Անիի շրջանին տիրող Հովհաննէսիկը։ Բայց երբ, ինչպես նախապես ասվեց, Վասիլ կայսրը բարձրանալով Իբերիա, ճակատեց Գեորգիոսի գէմ, նրան պարտության մատնեց ու ոչնչացրեց, Հովհաննէսիկը ահ ու դողի մեջ ընկավ, մտածելով, որ կայսրը Գեորգիոսին՝ իր ցուցաբերած զինակցության համար զլխին փորձանք կբերի։ Դրա համար ահա, վերցնելով քաղաքի բանալիները, անձամբ գնում է կայսեր մոտ, կամավոր հանձնվում նրան և ընձեռում բանալիները։ [Կայսրը] ընդառաջ գնաց նրա խելամտությանը, մագիստրոսի պատվաստիճան շնորհեց և նշանակեց Անիի ու Մեծ Հայք կոչվածի ցմահ կառավարիչ, նրանից գրավոր փաստաթուղթ պահանջելով, թե իր՝ Հովհաննէսիկի մահից հետո համայն իշխանութիւնը դառնում է հռոմեական պետության բաղկացուցիչ մասը»<sup>83</sup>։

Մագիստրոսի տիտղոսը կրողը կայսրությունից ամեն տարի հոռոգ էր ստանում՝ տասը լիտր ոսկի և տասը լիտր արծաթ։ Ինչպես տեսանք, այդ ոռճիկը (հոռոգը) ստանում էր ժամանակին Տարոնի իշխան Գրիգորը։ Հովհաննէս-Սմբատը, Տարոնի իշխան Գրիգորի նման, գուցե ստացած լիներ նաև զորավարի (στρατηγός) աստիճանը։ Թեև աղբյուրներում այդ մասին ուղղակի հիշատակութիւն չկա, բայց Մատթեոս Ուռհայեցու խոսքերից՝ «և այնու առնոյր տուրս և իշխանութիւնս ի Հոռոմոց զամս հնգետասան»<sup>84</sup>, կարելի է հանգել այդ եզրակացության։ Հովհան-

81 Արիստ. լաստ., էջ 32։

82 Մատթ. Ուռհ., էջ 84։

83 Տե՛ս ստորս, էջ 146—147։

84 Մատթ. Ուռհ., էջ 84։



նեսի «զորավար» աստիճանը ստացած լինելու հանդամանքը հավանական է և այն տեսակետից, որ Սկիլիցեսը նրան Անիի տոպարիս է անվանում (του Ἁγίου τοπαρχη)՝<sup>85</sup> իսկ բյուզանդական աղբյուրներում առկարիս էին կոչվում նաև բյուզանդական բանակաթեմերի զորավարները<sup>86</sup>։ Այս բոլորը վկայում են այն մասին, որ Տրապիզոնի պայմանագրից հետո մինչև իր մահը Հովհաննես-Սմբատը անտարակույս կախման մեջ էր կայսրութունից։

Տրապիզոնի դաշնագրությունը դամոկլյան սրի նման կախված էր Շիրակի թագավորության գլխին։ Երկրում կար երկու թագավոր, Հովհաննես-Սմբատը և Աշոտը։ Առաջինի մահվան դեպքում, ըստ պայմանագրի, Մեծ Հայքը (Շիրակը) պետք է դառնար Բյուզանդիայի սեփականությունը։ Հովհաննեսը ժառանգ չունեի։ «Իւր ոչ գոյր որդի թագակալ թագաւորութեանն. վասն զի որդին նորա Երկաթ վաղ վախճանեցաւ, և շժամանեաց ի պատիւ հօրն»<sup>87</sup>։ Այս հանգամանքը շատ ձեռնտու էր Բյուզանդիային, բայց նրան ավելի էր մտահոգում Հովհաննես-Սմբատի եղբայր Աշոտը, մի «քաջասիրտ և պատերազմասէր»<sup>88</sup> մարդ, որը Բյուզանդիային այնքան ժամանակ էր պետք, ինչքան նա, Աշոտը, պայքար էր մղում իր եղբոր դեմ և թուլացնում հայոց թագավորությունը։ Սակայն երբ երկու եղբայրների միջև վեճը մի կերպ հարթվեց, իսկ Աշոտն էլ «զօրանայ քան զամենեսեան, որ յառաջ քան զնա էին. մինչ զի բազումք ի մեծամեծացն՝ զհայրենի տեղիս իւրեանց ի նա թողեալ, նմա զանձինս կամօքն ի հնազանդութիւն ետուն»<sup>89</sup>, կայսրությունը ստիպված փոխում է իր դիրքը նրա նկատմամբ, քանզի նա միշտ կարող էր հանդես գալ որպես հայոց միահեծան թագավոր և, որ պակաս կարևոր չէր, ուներ ժառանգ՝ Գագիկ անունով։ Հովհաննեսի մահվան դեպքում Բյուզանդիան, թեև կարող էր, հենվելով Տրապիզոնի գաշնագրության վրա պահանջել Շիրակը, բայց կար և մի այլ պայմանագիր՝ Հովհաննեսի և Աշոտի միջև կնքված, համաձայն որի Հովհաննես-Սմբատի մահից հետո Անիի թագավորությունը ժառանգում էր Աշոտը<sup>90</sup>։ Հենց դա էլ մտահոգում էր կայսրության։ Եվ հանկարծ կատարվեց այն, ինչ, եթե նկատի ունենանք Բյուզանդիայի շահերը, պիտի կատարվեր. «ի միում ամի

85 Տե՛ս ստորև, էջ 146։

86 Leo Diac., p. 96.

87 Արիստ. Լաստ., էջ 32։

88 Նույն տեղում, էջ 27։

89 Նույն տեղում, էջ 28։

90 «Եւ եթէ յառաջագոյն մահ հասցէ Յովհաննիսի՝ Աշոտ լիցի թագաւոր ամենայն Հայոց»։ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 6։

զրաւեալ յաստեացս՝ բարձան ի կենաց երկոքին հարազատ եղբարքն Աշոտ և Յովհաննէս, որ ունէին զթագաւորութիւն մերոյ աշխարհիս...»<sup>91</sup>։ Նախ մեռաւ Աշոտը (Բյուզանդական արքունիքում գրված սցենարի համաձայն այդպես էլ պիտի լիներ), քանզի հենց նա էր կայսրության համար ամենից վտանգավոր։ Նա կայսրության հետ որևէ պայմանագիր չէր կնքել և ոչ մի պարտավորություն չուներ, դեռ ավելին, նա, ինչպես ասացինք, ուներ և ժառանգ։ Աշոտի մահվան ժամանակ նրա որդին Գադիկը ընդամենը տասնհինգ տարեկան էր, այսինքն անշափահաս էր, Բյուզանդիան շտապէց, քանի Գադիկը չի հասել թագ կապելու տարիքին<sup>92</sup>։ Աշոտից մի քանի ամիս անց «մեռաւ» և Հովհաննէս-Սմբատը։ Եթե պետք լինի պատասխանել այն հարցին, թե ու՞մ էր ձեռնտու նրանց սահը, այդ բանն անել դժվար չէ։ Իհարկե Բյուզանդիային։ Հետևաբար նրանց «մահը» ոչ այլ ինչ էր, քան կայսրության կողմից կազմակերպված քաղաքական տեղորոշման ակտ։ Քաղաքական հակառակորդներին հրապարակից այդ ձևով վերացնելը Բյուզանդիայի համար նորություն չէր<sup>93</sup>։ Մենք արդեն գիտենք, դրան նախորդել էր Դավիթ կուրապաղատի «մահը»։

Ազգանշանը տրված էր։ Շիրակում Բյուզանդական կայսրության գլխավոր գործակալը վեստ Սարգիսն էր և պատահական չէ, որ նա իսկույն «կամեցաւ թագաւորել ի վերայ Հայոց»<sup>94</sup>, «եղ շուք անձինն թագաւորել ի վերայ տանն Շիրակայ և որ շուրջ զնովաւ գաւառք»<sup>95</sup>։ Հավանաբար դա էլ Բյուզանդիայի նախաձեռնութեամբ էր, Հայաստանի նվաճումը աստիճանաբար իրագործելու դիտավորություն։ Բայց սպարապետ Վահրամ Պահլավունին «հանդերձ իւրովք ազգակցօք, որզւովք և եղբօրորդւովք իբրև երեսուն ագատօք, ոչ միաբանեցան ընդ նմա. այլ կո-

91 Արիստ. լաստ., էջ 55։

92 Ինչպես հայտնի է, Գադիկին թագավորեցրին 18 տարեկան հասակում, իր հոր մահից երեք տարի անց։ Պարզ է, որ մինչ այդ Գադիկը իրավունք չուներ թագ կրելու։

93 Ինչպես գիտենք, Դավիթ կուրապաղատին փորձեցին սպանել հաղորդության գինու մեջ թույն խառնելով։ Դա նորություն չէր։ Թեոփանո կայսրուհին նույն եղանակով թունավորեց ու սպանեց Ռոմանոս I-ի որդի Ստեփանոսին։ Բյուզանդիայում քաղաքական նկատառումներով այս ժամանակաշրջանում թունավորեցին Չմշկիկին, Վարդաս Փոկասին, Ռոմանոս III-ին, ատրիկլին Կոստանդինին, թունավորելու փորձ արեցին Վասիլ II-ին և Հովհաննէս Օրֆանոտրոֆոսին։ Երբ Իսահակ Կոմնենոս կայսրը երկար ժամանակ չէր կարողանում համոզել պատրիարք Միքայել Կերուլարիոսին հրաժարական տալ, պատրիարքը հենց «այդ միջոցին ...խաղաղությամբ հոգին ավանդեց»։ Ընդ որում կար երկու տեսակի թույն, արագ և դանդաղ գործող։

94 Մատթ. Ուոհ. էջ 84։

95 Արիստ. լաստ., էջ 57։



չեալ առ ինքեանս գԳագիկ որդի Աշոտոյ, թագաւորեցուցին ի վերայ իւրեանց, և իմաստութեամբ և հնարիւք մուծին ի քաղաքն»<sup>96</sup>;

Վեստ Սարգիսը ըսկույս «ազդ առնէր Հոռոմոց և ի տուր տայր զաշխարհն Հայոց»<sup>97</sup>: Նա դիմեց և մի այլ կարևոր քայլի: Նա ուզեց տնտեսապես խախտել Շիրակի թագավորութեան հիմքերը, ղրկել այն տնտեսական հենարանից, քանզի առանց ֆինանսների բանակ գոյութիւն ունենալ չէր կարող, բանակ, որ պետք էր ընդդիմակայելու համար բյուզանդական հարձակմանը: Եվ նա «զգանձատունն առաջին թագաւորացն Հայոց յափշտակեաց և տարաւ յԱփխազք, բերդամուտ եղեալ. և աւանս քաղումս էառ ընդ ձեռամբ իւրով»<sup>98</sup>:

Հովհաննես-Սմբատի «մահը» (1041) պատճառ դարձավ Տրապիզոնի պայմանագիրը կյանքի կոչելուն: Բյուզանդական կայսր Միքայելը, հալոց թագավորի մահվան լուրն առնելով, հավանաբար պահանջած պիտի լիներ «իր ժառանգութիւնը» և անկասկած մերժում ստացած, քանզի միայն այդ դեպքում նա զենքի ուժին սլիտի դիմեր: «Ժողով արարեալ թագաւորն Հոռոմոց Միխայլն և հասանէր յաշխարհն Հայոց և աւար հարկանէր զտունն Հայոց սրով և գերութեամբ»<sup>99</sup>: Այս լույսի տակ բավականին կասկածելի է թվում Դավիթ Անհողինի գիրքը՝ Շիրակի թագավորութեան հանդեպ: «Յայսմ ամի,— գրում է Մատթեոս Ուռհայեցին Հովհաննես-Սմբատի մահվան և բյուզանդացիների Հայաստանի վրա հարձակվելու մասին խոսքն ավարտելուց հետո,—բազում անցումն եղև տանս Հայոց ի ձեռն Դաւթի Անհողինի... Սա յարուցեալ ի վերայ թագաւորութեանն Հայոց և մատնեաց ի սուր և ի գերութիւն զգաւառս քաղումս... անթիւ կրակով այրեցան ի ղօրաց նորա»<sup>100</sup>: Նման քայլը դուրս բացատրեինք նրա ցանկութեամբ՝ Շիրակի վրա թագավորելու: Բայց դրա դեմ է խոսում այն, որ նա այդ բոլորը կատարելուց հետո թողեց հեռացավ սեփական տիրույթները<sup>101</sup>: Հետևաբար նրա միակ նպատակը Շիրակի թագավորութեան վնասելն էր, այն թուլացնելը: Դարձյալ հարց է ծագում: Ո՞ւմ էր դա ձեռնտու: Անկասկած Բյուզանդիային, և բացառված չէ, որ Դավիթ Անհողինը, մի մարդ, որ հայերի մեջ կոչվում

96 Արիստ. Լաստ., էջ 58:

97 Մատթ. Ուռհ., էջ 84:

98 Նույն տեղում:

99 Նույն տեղում, էջ 84:

100 Նույն տեղում, էջ 84—85:

101 Նույն տեղում, էջ 85:

էր Դա Վիհ, քանզի «ի վիհն տառապանաց էած զազգս քրիստոնէից»<sup>102</sup>, գործում էր Բյուզանդիայի դրդմամբ: Ուռհայեցին, ճիշտ է, մշուշապատ, դա ցույց է տալիս: «Յայնժամ յազգմանէ շարին կրկին շարժումն լինէր Յունաց դաւաճանութեամբ և կեղծաւորութեամբ սուտ քրիստոնէին Դաւթի Անհողինին...»<sup>103</sup>: Դավիթ Անհողինն իր նախաձեռնութեամբ շէր համարձակվի նման քայլի գիմել, քանզի դրանից շատ քիչ առաջ, հենց Աշոտ Բագրատունու մահվան տարին, նա դժվարին պատերազմ էր մղում իր հարեան ամիրա Աբու -լ- Ասվարի դեմ և անել վիճակից դուրս գալու համար գիմել և ստացել էր Հովհաննես-Սմբատի ռազմական օգնութիւնը<sup>104</sup>: Արդ, նա Դվինի ամիրայից այլևս չէր վախենում: Ի՞նչն էր պատճառը: Պատասխանը տալիս է Հովհաննես Սկիլիցեսը: Նա գրում է. «Դվինի և Արաքս գետի շուրջ ընկած Պերմարմենիայի կառավարիչ Ապլեսֆարեսին [Աբու -լ-Ասվարին] կայսեր նամակն ուղարկվեց, որով կոչ էր արվում ասպատակել Մեծ Հայքը և Գագիկին [Գագիկ II Բագրատունուն] ենթակա երկիրը: Նիկոլայոսը [բյուզանդական սպարապետը] գնաց ու գործի անցավ, նամակն էլ ուղարկեց Ապլեսֆարեսին, իր կողմից էլ գրեց ու հրահրեց, նվերներով ու խոստումներով նրան գրգեց՝ կյանքի կոչեց կայսեր կամքը: [Ապլեսֆարեսը] ստանալով նամակները, պատասխանեց, թե հրամանը կկատարի, եթե իրեն կայսերական հրովարտակ ուղարկվի այն բանը հաստատող, թե ինքը որպես տեր կտիրի Գագիկին պատկանող բոլոր այն բերդերին ու շրջաններին, որոնք կկարողանա գրավել պատերազմի օրենքով: Կայսրը համաձայնվեց գրան և խրիստովուլ գրութեամբ հաստատեց Ապլեսֆարեսի պահանջը, որը փաստաթուղթն ստանալուց հետո, գործի լծվեց: Նա պաշարմամբ գրավեց Գագիկին պատկանող բազմաթիվ ամրոցներ ու շրջաններ: Գագիկը մի կողմից պատերազմ մղելով հոռմեական բանակի դեմ, մյուս կողմից ենթարկվելով Դվինի կառավարչի ասպատակութիւններին, կատարյալ հուսաբեկ եղած, պարակիմոմենոսի հետ հաշտութիւն է կնքում և նրա միջոցով հանձնվում կայսեր ու տալիս [Անի] քաղաքը»<sup>105</sup>:

Դավիթն ու Աբու -լ-Ասվարը հանդես էին գալիս որպես Բյուզանդիայի դաշնակիցներ՝ ընդդեմ Շիրակի թագավորութեան: Բայց Աբու -լ-Ասվարն ու Դավիթ Անհողինը միակը չէին, որոնց Բյուզանդիան ոտքի

102 Մաաթ. Ուտն., էջ 88:

103 Նույն տեղում:

104 Նույն տեղում, էջ 79—82:

105 Տե՛ս ստորն, էջ 147—148:



էր հանել Շիրակի դեմ: Եթե ուշադիր կարդանք Մատթեոս Ուռհայեցու պատմական երկը, ապա կտեսնենք, որ կայսրությունը Շիրակի դեմ էր հանել նաև Ատրպատականի այլազգիներին, քանզի հայոց թագավոր Գագիկ II-ն իր թագավորության երկրորդ տարին «երթեալ բազմութեամբ զօրօք, բանակ հարկանէր յԱյրարատեան գաւառին՝ առնուլ զվրէժխնդրութիւն յազգէն հարաւայնոյ»<sup>106</sup>: Շիրակի Բաղրատունիների դեմ միաժամանակ հանդես եկած այսքան թշնամիները հենց Բյուզանդիայի գործունեութեամբ պիտի բացատրել:

Բյուզանդիան Շիրակի դեմ այլ դաշնակիցներ էլ ուներ: Այսպես «նենգաւորն Սարգիս և այլ ոք յազատացն յառաջ մատեան, որք բանատուք էին առ Մոնոմախն...»<sup>107</sup>: շարունակում էին իրենց գործունեությունը: Այդ «աստուածուրաց նենգաւորքն... առաքեն քառասուն բանալիս զքաղաքին Անույ առ թագաւորն Մոնոմախն և ի հետ թուղթ՝ թէ Անի քաղաքն և ամենայն արևելքն քեզ եղև...»<sup>108</sup>: Այդ «նենգավոր ազատներին» Մատթեոս Ուռհայեցին մի այլ տեղ «նախարարքն Հայոց» է անվանում<sup>109</sup>: Նրանց գործունեությունը զխավորում էր հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձը, որի դիրքը հնարավորություն չի տալիս մեր պատմիչներին բացահայտ նրա դեմ գրելու, բայց այդուհանդերձ պետք եղածը նրանք ասում են: Արիստակես Լաստիվերցին, օրինակ, գրում է, թե բյուզանդացիները Բագրատունյաց թագավորության վերացման «զշնորհակալիսն և զտրից տուրսն կաթողիկոսին հատուցին, յորմէ զքաղաքն առին»<sup>110</sup>:

Ինչպես տեսնում ենք, Շիրակում գործում էր բյուզանդական գործակալների բավականին ընդարձակ ցանց:

Այդ բոլորի վերջը հանրահայտ է: Հոռոմոց զորքերը «չորս անգամ զկնի միմեանց մտին յաշխարհն Հայոց, մինչև մարդաթափ արարին զերկիրն ամենայն սրով և հրով և գերութեամբ»<sup>111</sup>: Գագիկ II-ը ստիպված գնաց Կոստանդնուպոլիս և այլևս չտեսավ իր հայրենիքը: Այդ առթիվ Հովհաննես Սկիլիցեսը գրում է. «Գալով կայսեր մոտ նա [Գագիկը] մագիստրոսի պատվաստիճան ստացավ, շատ եկամտաբեր շրջաններ

106 Մատթ. Ուռհ., էջ 87—88:

107 Նույն տեղում, էջ 94:

108 Նույն տեղում, էջ 95:

109 Նույն տեղում, էջ 97:

110 Արիստ. Լաստ., էջ 63:

111 Նույն տեղում, էջ 58:

Կապագողովկիայում, Խարսխանոնում, Լիկանդոսում և այսուհետև խաղաղ ու անվրդով կյանք ապրեց»<sup>112</sup>,

Հայկական աղբյուրներից քաջ հայտնի է, թե ինչքան էր «խաղաղ ու անվրդով» Գաղիկի կյանքը Բյուզանդական կայսրության սահմաններում:

5. Բյուզանդիայի պայքարը Դվինի ամիրա Աբու-լ-Ասվարի դեմ: Նվաճելով Շիրակը և վերջ տալով Բաղրատունյաց թագավորությանը, Բյուզանդական կայսրությունը սկսեց պահանջել Բագրատունիների այն տիրույթները, որոնց մի քիչ առաջ, իր իսկ դրդամբ և համաձայնությամբ, տիրել էր Դվինի ամիրա Աբու-լ-Ասվարը: Կոստանդին Մոնոմախը նրանից պահանջեց այդ բերդերն ու շրջանները (φρούρια καὶ χωρία), որպես Անիի (ասել է՝ Շիրակի թագավորության) բաղկացուցիչ մասեր (ὡς μέρος τοῦ Ἀνίου): Աբու-լ-Ասվարը, հենվելով կայսեր կողմից ստացած ոսկեկնիք գրության վրա (χρυσόβουλλος γραφή), որով նա համաձայնվել էր ամիրային թողնել այն բոլորը, ինչ նա Գագիկ II-ից կգրավեր պատերազմի օրենքով, մերժեց: Դրա վրա Մոնոմախը Դվինի ամիրային պատերազմ է հայտարարում և հրամայում նիկոլայոս պարակիմոմենոսին բյուզանդական բանակով, իբերական զորքով (Ἰβηρικὸς στρατός, ասել է՝ Իբերիա բանակաթեմի) և Մեծ Հայքի զինյալ ուժերով (τῆς ἐν τῇ Μεγαλῇ Ἀρμενίᾳ οὐνάμεως, անկասկած Բագրատունիների բանակով), որոնց զխավորում էր Սկիլիցեսի ասելով Անեցին (Ἄνωτες), որ նույնանում է սպարապետ վահրամ Պահլավունու հետ<sup>113</sup>, հարձակվել Դվինի վրա: Նիկոլայոս պարակիմոմենոսը այդ զինյալ ուժերի զխավոր հրամանատար նշանակեց վեստարի Միքայել Իասիտեսին, Իբերիա բանակաթեմի նախկին կատապանին, որ Շիրակի գրավումից հետո դարձել էր Հայաստանի և Իբերիայի կատապան, և իր «ծառա» (δοῦλος) մագիստրոս Կոստանդին Ալանի հետ Դվինի դեմ ուղարկեց: Սկիլիցեսի համաձայն, Աբու-լ-Ասվարը ռազմագիտական հարցերում շատ հմուտ մարդ էր, տեսնելով, որ ի վիճակի չէրնդդիմակայել բյուզանդական զորքերին, փակվեց Դվինի պարիսպների ետևում, մոտիկից հոսող գետի հոսանքը շրջեց դեպի դաշտերը,

<sup>112</sup> Տե՛ս ստորև, էջ 148:

<sup>113</sup> Հ. Արվայլըրը սխալմամբ կարծում է, որ Անեցին Գագիկ II Բագրատունին է: Գագիկը դեռ 1045 թ. գնացել էր Կոստանդնուպոլիս և մինչև իր մահը՝ 1079 թ. Անի չի վերադարձել: Բյուզանդական այս արշավանքը դեպի Դվին տեղի ունեցավ 1045 թ. Մարմաշենի մի տապանաքարի վրա գրված է. «Աստ ամփոփի նշխար վահրամ իշխանաց ի խանի Հայոց Մեծաց ի ցեղէ Պահլավունի, որ նահատակեցաւ ի Թուրքաց պատերազմի ի Մարմաշէն ի հայոց թվ(ին) ՆՂԳ»: Տե՛ս Орбели, Надписи Мармашена, стр. 449:



դրանք համատարած տիղմի վերածեց, որի մեջ հակառակորդի ձիերն ու ուղմիկները խրվեցին: Դվինի ամիրան պարտության մատնեց բյուզանդացիներին: Այդ մարտում սպանվեց նաև սպարապետ Վահրաման իր Գրիգոր որդով հանդերձ, «որ մեծ սուղ հասոյց Հայոց»<sup>114</sup>:

Կոստանդին Մոնոմախր պաշտոնանկ արեց Նիկոլայոս պարակիմոմենոսին և Միքայել Իասիտեսին, նրանց փոխարեն Հայաստանի և Իբերիայի կատապան նշանակեց Կատակալոն Կեկավմենոսին, լաստիվերցու Կամենասին<sup>115</sup>, իսկ Նիկոլայոսի պաշտոնում զորավարավտոկրատոր նշանակվեց մեծ հետերիարխ, ներքինի Կոստանդինը, ծաղումով սարակինոս<sup>116</sup>:

Հաջորդ տարին, 1047 թ. ամռանը, բյուզանդական զորքերը դարձյալ հարձակվում են Աբուլ-Ասվարի վրա: Այս արշավանքի մասին հայկական աղբյուրները շատ համառոտ են խոսում: Մատթեոս Ուռհայեցին դրում է, թե ՆՂԶ (496—1047) թ. «դարձեալ գայ Տելիարխն դօրօք բազմօք և իջանէր ի վերայ քաղաքին Դվնայ. և բազում շարշարանս և տագնապս գործեաց այնմ գաւառին և սրով և գերութեամբ ապականեաց զամենայն ազգն Տաճկաց և դարձաւ յաշխարհն Յունաց խաղաղութեամբ»<sup>117</sup>: Ավելի հանգամանալից շարադրանք է տալիս Սկիլիցեսը: Նրա ասելով բյուզանդացիները 1047 թ. արշավանքի ժամանակ «չուզեցին հարձակվել Դվին քաղաքի վրա, որը համայն ազգի մայրաքաղաքն է, այլ փորձեցին [տիրանալ] Անիին ստորանկյալ բերդերին, գրավեցին գահավեժ տեղանքում գտնվող շատ անառիկ Սուրբ Մարիամը, Ամբերդ կոչվածը, Սուրբ Գրիգորը: Ապլեսֆարեսը բազմիցս անգամ փորձեց պաշարյալներին օգնության հասնել, բայց ամեն անգամ պարտություն կրեց: Նրանք եկան նաև Խելիդոնիոն կոչվող բերդը, որը գահավեժ լեռան վրա է կառուցված և գտնվում է Դվինից ոչ հեռու: Ահա այդ [բերդը] խրամատներով ու ցանկապատով օղակի մեջ առնելով, ջանում էին [երկարատև] պաշարմամբ տիրանալ... [Հռոմայեցիները] այս [բերդն] էլ կգրավեին, եթե Արևմուտքում հանկարծակի շրջանկներ պատրիկ Լևոն Թոռնիկի ապստամբությունը»<sup>118</sup>: Բյուզանդացիներն ըս-

114 Արիստ. լաստ., էջ 63: նաև Մատթ. Ուռհ., էջ 98:

115 Արիստ. լաստ., էջ 63:

116 Տե՛ս ստորև, էջ 149: Ուռհայեցին նրան անվանում է Տելիարխ (հետերիարխ): Մատթ. Ուռհ., էջ 100: Մանրամասն տե՛ս Բարթիկյան, Մի քանի բյուզանդական տերմինների մասին, էջ 72—77:

117 Մատթ. Ուռհ., էջ 100:

118 Տե՛ս ստորև, էջ 149:

տիպված Աբու-լ-Ասվարի հետ հաշտութիւնն են կնքում և իրենց զորքերը տեղափոխում Արևմուտք ընդդեմ ապստամբ Լևոն Թոռնիկի:

Բյուզանդական կայսրութիւնը հասել էր իր նպատակին: Նրան այժմ մտահոգում էր ձեռք բերածը ապահովել, ամրապնդել Հայաստանում:

6. Բյուզանդական վարչութեան հաստատումը Հայաստանում: Բյուզանդական զորքերի հետ Հայաստան մուտք էր գործում բյուզանդական վարչութիւնը և կարգն ու կանոնը: Պետք է նկատել, որ կայսրութիւնն իր նվաճած նահանգներում իշխանութիւնը տալիս էր իր զինվորականներին, կամ էլ հազվադեպ, տեղացի այն բարձրաստիճան գործակալներին, որոնք այս կամ այն շափով նպաստել էին իր ձեռք բերած հաջողութեան: Տարոնի վերաբերյալ մենք քիչ տեղեկութիւններ ունենք, բայց, ամենայն հավանականութեամբ, այդ երկրամասը Դերջանի հետ միասին մեկ բանակաթեմ կազմեց: Մենք չգիտենք ով դարձավ նրա առաջին կառավարիչը: Բացառված չէ, որ 966-ից անմիջապես հետո, բայց 974 թ. առաջ Բյուզանդիան նահանգի կառավարումը թողած լինի իշխան Գրիգորի երկու որդիների՝ Բագարատի և Աշոտի ձեռքը, բայց դա երկար չէր կարող տևած լինել, քանզի 974 թ. նահանգի կառավարիչն էր պրոտոսպաթար Լևոնը: Հովհաննէս Չմշկիկ կայսեր՝ Աշոտ III-ին ուղարկած նամակում գրված է. «Եւ յանափոռաէն պոտոսպաթարին Դերջնայ Լևոնի և Տարոնոյ զօրավարին»<sup>119</sup>: Սրանից երևում է, որ Դերջանն ու Տարոնը, համենայն դեպս 974 թ. մեկ վարչական միավոր են կազմել զորավարի զխավորութեամբ, որն ուներ պրոտոսպաթարի աստիճանը<sup>120</sup>:

119 Մատթ. Ուռն., էջ 27:

120 Ն. Ադոնցը, մեր համոզմամբ, ճիշտ է հասկացել Ուռնայեցու վերոհիշյալ նախադասութիւնը և թարգմանել. «protospathaire de Derdjan, Léon, général de Taron» (Adontz, La lettre de Tzimisces, p. 144): Կ. Յուզարշայանը գտնում է, որ խոսքը երկու անձնավորութիւնների մասին է, Դերջանի պրոտոսպաթար Լևոնի և Տարոնի անանուն զորավարի (տե՛ս նրա L'administration, 145—146): Սակայն եթե այդպես լինելը, ապա Դերջանի կառավարիչը Տարոնում գտնվող Այծյաց բերդի վերաբերյալ Չմշկիկին ուղղված անափոռա-ղեկուցագրի կազմմանը ինչո՞ւ պետք է մասնակցեր: 971—975 թթ. միջև կազմված էսկուրիալի Տակտիկոնում Դերջանն ու Տարոնը, ճիշտ է, հիշված են որպես առանձին վարչական միավորներ (Otkonomidès, Les lists, p. 265, 267), բայց գուցե Չմշկիկի թուղթը Աշոտ III-ին հնարավորութեան տա ավելի ևս սեղմել հիշյալ Տակտիկոնի գրութեան ժամկետները: Ավելորդ չէ նշել, որ Ուռնայեցու գրածը սխալ է հասկացել դեռևս Սմբատ Սպարապետը: Նա ասում է, «Գրեաց և ի պոտոսպաթարն, և ի Տարոնոյ զօրավարն զի առաքեսցեն առ թագաւորն Աշոտ զխրսոյվուն և դահեկան լի»



Տարոնը որպես առանձին վարչական միավոր հիշվում է մոտ մեկ հինսունամյակ անց. այն մասին վկայում է Գրիգոր Մագիստրոսը, որը վարել է այդ նահանգի կառավարչի պաշտոնը: Նա գրում է. «մեք առժամանակս այսր եմք ի Տարօն յաշխարհիս Մամիկոնէից, այլ ականունիմք, զի եթէ կամեսցի Տէր, երթամք առ արքայ, զի թերևս ղերծեալք ի մրրկեալ այսմ բղեղիութենէ պարապել Աստուծոյ»<sup>121</sup>:

Տարոնի կառավարիչն ուներ իր գործակալները, որոնք բավական լայն իրավունքներ ունեին: Այդ մասին գրում է Արիստակես Լաստիվերցին. «Հրահատ ոմն ի գործակալաց մեծին Գրիգորի որդւոյ Վասակայ» և նշում, որ նրանք, այդ գործակալները, «երկրին (իմա Տարոնի) տէր էին»<sup>122</sup>:

Տայքի հարցը տարբեր էր: Սկզբնական շրջանում այն առանձին վարչական միավոր չկազմեց, այլ, ամենայն հավանականությամբ, դրվեց հարևան բանակաթեմի զորավարի ենթակայության տակ<sup>123</sup>: Հարցն այն է, որ Տայքի նվաճումից սկսած մոտավորապես քառորդ դարի ընթացքում Տայքի կատապանություն կամ զորավարություն դառնալու, սեփական կառավարիչ ունենալու մասին և ոչ մի փաստի չենք հանդիպում աղբյուրներում: Քաջատեղյակ Արիստակես Լաստիվերցին ցույց է տալիս, որ Վասիլ II-ը, գրավելով Տայոց աշխարհը, «կացուցանէ ի վերալ նոցա գործակալս և դատաւորս և վերակացուս»<sup>124</sup>: Մենք գիտենք նաև, թե ովքեր են նրանք: Ստեփանոս Տարոնեցին զորում է, որ Վասիլը «զամենայն բերդս և զամրոցս Տայոց նուաճեաց ընդ ձեռամբ իւրով, զհաւատարիմս կարգեալ ի նոսա, և ղմնացեալ ազատսն Տայոց առեալ տարաւ ընդ ինքեան՝ բնակեցուցանէ յաշխարհին

(30.000) և ծառայս ԲՌ (2000), ձի ԺՌ (10.000) և ջորի Ռ (1000) վասն սիրոյն և միաբանութեան ղոր արար նմա» (էջ 12—13):

121 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 48:

122 Արիստ. Լաստ., էջ 118:

123 Չ. Արվայրըրը («Recherches», p. 85) գտնում է, որ Տայքն «անկասկած» միացավ Միջագետք (Մեսոպոտամիա) բանակաթեմին, բայց այդ ենթադրությունն անառարկելի չէ: Հեղինակի միակ փաստարկն այն է, որ Մոնոմախի ոաղմական ռեֆորմի մասին դրելով, բյուզանդական հեղինակները նշում են, որ այն տարածվեց Իբերիայի և Մեսոպոտամիայի վրա, բայց դա դեռ փաստ չէ, որ այդ երկուսը մեկ մավոր են կազմել: Ավելի հավանական է, որ միացվեց Կաբինին՝ Թեոդոսուպոլսին: Ինչպես հայտնի է, Ուղթիքը Տայքի կենտրոնն էր: Սմբատ Սպարապետը այդ քաղաքը տեղադրում է Թեոդոսուպոլիս գավառում. «...և Պառակամանոսն ձմեռեաց Յուղտիքն (պիտի լինի՝ յՈւղտիքն—Չ. Բ.), ի գավառն Թեոդուպոլեաց» (Սմբատ Սպարապետ, էջ 42):

124 Արիստ. Լաստ., էջ 24:

Յունաց»<sup>125</sup>: Պարզ է, որ նա Տայքում իշխանությունը տվեց իրեն հավատարիմ մնացած բնիկ ազատանուն:

Տայքը բյուզանդական աղբյուրներում հայտնի է որպես Իբերիա, Տայք անվանումն այդ շրջանի բյուզանդական աղբյուրներում չի հանդիպում: Սկզբնական շրջանում Իբերիան այնքան մեծ կարևորություն չուներ կայսրության համար: Միայն 1021 թ. հետո նրա կարևորությունն արտակարգ մեծացավ: Հարցն այն է, որ Վասպուրականի նվաճումից և Շիրակի թագավոր Հովհաննես-Սմբատի հետ Տրապիզոնում 1021 թ. կնքած պայմանագրից հետո, Տայք-Իբերիան հյուսիսից և Վասպուրականը՝ հարավից Շիրակի թագավորությունն առան արջանի մեջ, այսինքն իրականացավ այն, ինչ ծրագրել էր Բյուզանդիան: Հենց այս հանգամանքը կյանքի կոչեց Իբերիա բանակաթեմը, որը Վասպուրականի կատապանության հետ պետք է Շիրակի Բագրատունիների թագավորության մեռելաթաղի դերը խաղար<sup>126</sup>:

Ն. Ադոնցը գտնում է, որ Իբերիա բանակաթեմն ստեղծվեց Վասիլ II-ի կողմից 1023 թ. բյուզանդա-վրացական պատերազմի ավարտումից հետո, որ բյուզանդական առաջին կառավարիչն այնտեղ եղել է Ռոմանոս Դալասենոսը<sup>127</sup>, որը Կարինն «վրացական» կոչվող դարբասների վրա թողած հունարեն վիմագիր արձանագրության մեջ իրեն անվանում է «Իբերիայի կատապան»<sup>128</sup>: Ն. Ադոնցի ասելով նա կառավարել է մինչև 1026 թ., քանզի 1027 թ., ինչպես հայտնի է բյուզանդական և հայկական աղբյուրներից<sup>129</sup>, այդ պաշտոնն ստացավ Նիկետաս Պիսիդացին: Սակայն պետք է նկատել, որ Ռոմանոս Դալասենոսի կառավարման ժամանակի վերաբերյալ աղբյուրները ոչինչ չեն ասում, նրա՝ Իբերիայի կատապան լինելու միակ վկայությունը Կարինի վերոհիշյալ արձանագրությունն է, որն անթվակիր է, հետևաբար Ռոմանոս Դալասենոսին Նիկետաս Պիսիդացու անմիջական նախորդը լինելու մասին ոչ մի կովան չունենք: Ռոմանոսը բյուզանդական ծառայության

<sup>125</sup> Աստղիկ, էջ 278:

<sup>126</sup> 1045 թ. Անիի վրա հարձակվեց Միքայել Իասիտեսը, Իբերիա բանակաթեմի զորավարը, նրա ջանքերով ոչնչացվեց Բագրատունիների թագավորությունը: Մատթեոս Ուհայեցու տվյալներով, Անիի պարիսպների տակ պարտություն կրած Նիկողայոս պարակիմոմենոսը նահանջեց և ձմեռեց հենց Ուղթիքում, Տայքի մայրաքաղաքում («Մատթ. Ուռն.», էջ 96):

<sup>127</sup> Adontz, Les Dalassènes, p. 171.

<sup>128</sup> Սարգսյան, Տեղագրութիւն, էջ 74:

<sup>129</sup> Տե՛ս ստորև, էջ 96. Արխա. Լաստ., էջ 41:



մեջ էր մինչև 1038/1039 թթ.<sup>130</sup>, հետևաբար նա կարող էր Իբերիայի կատապան լինել ոչ անպայման 1023—1026 թթ.<sup>131</sup>:

Բոլոր դեպքերում Իբերիա բանակաթեմն ստեղծվեց Վասպուրականի գրավումից և վրաց թագավոր Գիորգիի Վասիլ II-ից պարտվելուց հետո: 1023 թ. նրանց միջև հաշտութուն կնքվեց, Վասիլ II-ը տիրացավ Դավիթ կուրապաղատի այն հողերին, որ Գիորգին էր գրավել, որից հետո՝ ահա «թագաւորին (Վասիլ II-ը) իշխանս ի վերայ գաւառին կացուցեալ»<sup>132</sup>:

«Իշխան» տերմինը Արիստակես Հաստիվերցին օգտագործում է կառավարիչ-կատապան նշանակութամբ: Օրինակ, խոսելով Կոստանդին VIII-ի գահակալության մասին, սլատմիչը նշում է, որ նա «զիշխանս որ գաւառակալի էին, զորս մեծն Վասիլ կարդեալ էր, ի նոյն հաստատեաց»<sup>133</sup>: Իսկ խոսելով Տարոնի մասին, նույն հեղինակը գրում է. «Իսկ ի կողմանս Տարօնոյ Թէոգորոս որդի Ահարոնի... նա էր իշխան գաւառին»<sup>134</sup>: «Իշխան գաւառին» դարձվածքը բյուզանդական աղբյուրներում հանդես է գալիս ἀρχων τῆς γῶρας ձևով, որի տակ կատապանն է ենթադրվում: Վասպուրականի կառավարիչ Ահարոն Բուլղարին Սկիլիցեսն անվանում է հենց ἀρχων τῆς γῶρας:

Այսպիսով պարզ է դառնում, որ Տայք-Իբերիան բանակաթեմի ստատուս ստացավ 1023 թ. հետո: Հենց այդ թվականից սկսյալ այդ բանակաթեմը հայկական աղբյուրներում սկսեց կոչվել «գաւառն վրաց»<sup>135</sup> տարբերվելու համար վրաստանից, որ հայտնի էր «աշխարհն վրաց» ձևով<sup>136</sup>: Մենք գիտենք, որ 1027 թ. բանակաթեմի կատապան էր նշանակվել Նիկետոս Պիսիդացին: Դրանից հետո Իբերիա բանակաթեմի կառավարչի մասին տեղեկություններ չունենք ընդհուպ մինչև XI դ. 30-ական թվականների վերջերը: Հնարավոր է, որ այդ ընթացքում կառավարած լինեն հիշյալ Ռոմանոս Դալասենոսը, ինչպես և նրա եղբայր Թեոփիլակտոսը:

130 Տե՛ս Бартикян, О феме Иверия, стр. 69.

131 Պետական էրմիտաժի բյուզանդական արձճն կնիքների ժողովածուի մեջ կա Թեոփիլակտոս Դալասենոսի, Ռոմանոս Դալասենոսի եղբոր, մի կնիքը, որի վրա գրված է. «Թեոփիլակտոս Դալասենոս, Իբերիայի կատապան»: Հայտնի չէ, ե՞րբ է Թեոփիլակտոսը կառավարել Իբերիա բանակաթեմը: Կնիքի մասին տե՛ս Шандровская, Неизвестный правитель, стр. 79—86.

132 Արիստ. Լաստ., էջ 38:

133 Նույն տեղում, էջ 40:

134 Նույն տեղում, էջ 41:

135 Նույն տեղում, էջ 41—42: Գրիգոր Մագիստրոսը հիշում է «Վերիացուց կողմ»-ը (էջ 231), հավանաբար Իբերիա բանակաթեմը:

136 Նույն տեղում:

Իբերիայի վարչական ստատուտը փոփոխություն կրեց 1045 թ. Բագրատունյաց թագավորության վերացումից հետո:

Շիրակը, բյուզանդական աղբյուրների Մեծ Հայքը ( (Μεγάλη Ἀρμενία), անցնելով Բյուզանդական կայսրության ձեռքը, Տայք-Իբերիայի հետ կազմեց վարչական մեկ միավոր՝ բյուզանդական կառավարչի՝ կատապանի կամ դուքսի իշխանության ներքո, որի պաշտոնական տիտղոսն էր «Հայաստանի և Իբերիայի կատապան» (Κατεπάνω Ἀρμενίας καὶ Ἰβηρίας)<sup>137</sup>: Այդպես է իրեն անվանում կառավարիչ Հովհաննես Մոնաստիրիոտեսը: Պահպանվել են նաև կառավարիչ Ահարոն Բուլղարի արձձեկնիքները հետևյալ մակագրությամբ. «Տե՛ր, օգնյա՛ Իբերիայի և Մեծ Հայքի մագիստրոս և դուքս Ահարոնին»<sup>138</sup>, (Κύριε βοήθει Ἀαρὼν μαγίστρω καὶ δούκι Ἰβηρίας καὶ τῆς Μεγάλης Ἀρμενίας):

Բյուզանդական պատմողական աղբյուրներում ևս, այդ թվում և Հովհաննես Սկիլիցեսի երկում, հիշյալ անձնավորությունը կոչվում է «Անիի և Իբերիայի կառավարիչ» (τοῦ Ἀνίου καὶ τῆς Ἰβηρίας κατάρχων)<sup>139</sup>, որտեղ Անիի տակ ենթադրվում է հայ Բագրատունիների ողջ տիրույթը<sup>140</sup>: Ավելորդ չէ նշել, որ նման հասկացություն հայկական աղբյուրներում գոյություն չունի: Արիստակես Լաստիվերցին առաջին կառավարիչ Ասիտին (Իասիտես) անվանում է «տեղակալ քաղաքին Անուլ»<sup>141</sup>, իսկ ամբողջ վարչական միավորը՝ «տէրութիւն Հայոց»<sup>142</sup>, Կառավարի: Կեկավմենոսի մասին խոսելիս, Արիստակես Լաստիվերցին գրում է, թե նա «ունէր զիշխանութիւն տանն Հայոց»<sup>143</sup>, իսկ Մատթեոս Ուռհայեցին, խոսելով Բագարատ Վիկացու և Գրիգոր Բակուրյանի մասին, նշում է, թե նրանց «կացուցեալ էր թագաւորն պահապանս տանն Հայոց»<sup>144</sup>:

Հայաստանի տարրեր նահանգներում կազմակերպված բյուզանդական բանակաթեմերի մեջ ամենից կարևորը «Հայաստանի և Իբերիայի» կատապանությունն էր, և պատահական չէ, որ հայկական աղբյուրներում եթե բոլոր կատապանությունների կառավարիչները կոչված են գավառապետ, իշխան գավառի, ապա Հայաստանի և Իբերիայի կա-

137 Бенешевич, Три анийские надписи, стр. 19.

138 Шандровская, Неизвестные печати, стр. 61.

139 Տե՛ս ստորև, էջ 157:

140 Տե՛ս Բարտիկյան, О феме Иверия, стр. 74, прим. 30, 32.

141 Արիստ. Լաստ., էջ 63:

142 Նույն տեղում, էջ 63:

143 Նույն տեղում, էջ 80:

144 Մատթ. Ուռհ., էջ 148:



տապանը մեկ անգամ կոչված է «տեղակալ»<sup>145</sup>։ Հայկական և ոչ մի այլ բանակաթեմի կառավարիչ այդ տիտղոսը չի կրել։ Այդ «տեղակալը» կրում էր նաև մագիստրոսի բարձր պատվաստիճանը։ Արիստակես Լաստիվերցին ընդգծում է այդ հանգամանքը. «իշխանին որ նստէր յԱնի և ունէր զպատիւ մագիստրոսութեան»<sup>146</sup>։ Աղբյուրների տվյալների հիման վրա կարելի է կազմել «Հայաստանի և Իբերիայի» բանակաթեմի կառավարիչների ցուցակը.

- |                         |                            |
|-------------------------|----------------------------|
| 1. Միքայել Իասիտես      | 4. Ահարոն Բուլղար          |
| 2. Կատակալոն Կեկավմենոս | 5. Հովհաննես Մոնաստիրիոտես |
| 3. Լևոն Թոռնիկ          | 6. Բագարատ Վխկացի          |

Վասպուրականը հենց սկզբից կազմեց մի առանձին վարչական միավոր, Վասպուրականի կատապանությունը ('Ασπρα χανία, Βασπραχανία), որը կոչվում էր նաև Վերին Մարաստան (ἄνω Μηδία)<sup>147</sup>։ Նրա կառավարիչը հայկական աղբյուրներում կոչվում է «Վասպուրականի գաւառապետ»<sup>148</sup> կամ «դուքս»<sup>149</sup>։ Մայրաքաղաքը Վան քաղաքն էր (τὸ Ἴβαν (μητροπόλις ὅε αὐτῆ τοῦ Βασπραχανῶν)։ Կատապանը որպես կանոն նստում էր Վանում, բայց մենք նրան հանդիպում ենք նաև Արճեշում. «հասանէր (թուրքերի զորքը 1045 թ.) մինչև յԱրճէշ քաղաքն Հայոց։ Եւ էր անդ զօրավար մի Հոռոմոց՝ որում անուն ասէին Ստեփան կատապան»<sup>150</sup>։

Աղբյուրները հնարավորություն են տալիս առավել հանգամանորեն կազմել հենց Վասպուրականի կատապանների ցուցակը՝ 1021—1060 թթ. ընկած ժամանակաշրջանում.

145 Արիստ. Լաստ., էջ 63 (εχτροσωποσ?)։

146 Նույն տեղում, էջ 106։

147 Գրիգոր Մագիստրոսի մի նամակի վերնագրից, ինչպես և Կեղառիսի 1051 թ. արձանագրությունից կարելի է հանգել այն թյուր եզրակացության, որ Վասպուրականը Տարոնի հետ կազմեց մեկ միավոր («յորժամ էր գուքս ի Վասպուրական և ի Տարոն» («Գր. Մագ. թղթերը», էջ 148)։ Գրիգոր Մագիստրոսը հավանաբար տարբեր ժամանակներում է վարել Վասպուրականի, ապա Տարոնի, կառավարչի պաշտոնը։ Համենայն դեպս Գրիգոր Մագիստրոսի մի այլ նամակից (և ոչ նամակի վերնագրից, որ Մագիստրոսինը չէ), որն արդեն առիթ ունեցանք հիշելու, Տարոնը հիշված է որպես առանձին վարչական միավոր («Գր. Մագ. թղթերը», էջ 48)։ Հետաքրքրական է նշել, որ ըստ Մխիթար Այրիվանեցու (էջ 58) Կոստանգին Մոնոմախը նվաճելով Հայաստանը, «ետ զիշխանութիւն երկրիս Գրիգորոյ Մագիստրոսի, որ շինեաց զեկեղեցին Կեղառուաց»։

148 Արիստ. Լաստ., էջ 48։

149 Գրիգոր Մագիստրոս, էջ 148։

150 Մատթ. Ուեճ., էջ 99։

- |                        |                                     |
|------------------------|-------------------------------------|
| 1. Վասիլ Արդիրոս       | 6. Կոստանդին Կավասիլաս              |
| 2. Նիկեփոր Կոմնենոս    | 7. Ստեփան Լիխուդես                  |
| 3. Նիկոլայոս Խրիսելիոս | 8. Գրիգոր Մագիստրոս                 |
| 4. Նիկետաս Պեգոնիտես   | 9. Ահարոն Բուլղար                   |
| 5. Գեորգիոս Մանիակես   | 10. Բագարատ Վիկացի <sup>151</sup> , |

Վասպուրականի կատապանր (ինչպես, անկասկած, մյուս կատապանները ևս), ուներ իր պաշտոնեությունը, որից Սկիլիցեսը հիշատակում է Ահարոն Մագիստրոսի «ենթաքարտուղարին» (ὑπογραμματοῦς) Գեորգիոս Դրոսոսին, որ սուլթանի մոտ մեկնած դեսպանությունն էր գլխավորում:

Բացի այս խոշոր վարչական միավորներից, բյուզանդական կառավարությունը հայկական մի շարք շրջաններում ու քաղաքներում հաստատել էր կառավարիչներ, որոնք աղբյուրներում նույնպես իշխան կամ կատապան են կոչված: Չորրորդ Հայքի Պաղին (Պաղնատուն) գավառում 1051 թ. հիշվում է Պեռոս անունով կատապան<sup>152</sup>, որին 1055 թ.

151 Կ. Յուզբաշյանն իր հողվածում (L'administration, էջ 182—183) տալիս է Վասպուրականի կատապանների ցուցակը, որը, չգիտես ինչու, սկսում է 1016 թ. (այդ թվականից կառավարած ցույց տալով Վասիլ Արգիրոսին և Նիկեփոր Կոմնենոսին), երբ դեռևս մինչև 1021 թ. գոյություն ուներ Վասպուրականի Արծրունյաց անկախ հայկական թագավորությունը: Սկիլիցեսը ցույց է տալիս, որ Վասիլ Արգիրոսը Վասպուրականի կառավարիչ նշանակվեց Սենեքերիմի Սեբաստիա գնալուց (1021) հետո (տե՛ս ստորև, էջ 86), հետևաբար նա չէր կարող 1016 թ. Վասպուրականի կառավարիչ եղած լինել: Դժվար է պատկերացնել, որ Վասպուրականում 1016—1021 թթ. միաժամանակ կառավարել են Սենեքերիմ Արծրունին և բյուզանդական, այն էլ մեկը չէ, երկու կատապան: Յուզբաշյանի ցուցակում բացակայում է Նիկետաս Պեգոնիտեսի անունը: Նա հաջորդել է Նիկոլայոս Խրիսելիոսին (տե՛ս ստորև, էջ 111): Գեորգիոս Մանիակեսին Յուզբաշյանն հիշում է Վասպուրականի կատապանի պաշտոնում երկու անգամ՝ 1030 և 1035 թթ., ընդ որում մի անգամ «Ստորին Մարաստանի», որի տպի նա հասկանում է Անձևացիքն ու Մանազկերտը, երկրորդ անգամ «Վերին Մարաստանի»: Ստորին Մարաստանը Վասպուրականի հետ ոչ մի առնչություն չունի (տե՛ս ստորև, ծանոթ. 352): Մանիակեսը Վասպուրականի կառավարիչ դարձավ մեկ անգամ: Կատապանների Յուզբաշյանի ընդունած հերթականության մեջ ևս կան անճշտություններ: Այսպես: Նրա ցուցակում Կոստանդին Կավասիլասին հաջորդում է Նիկոլայոս Խրիսելիոսը, այնինչ իրականում հակառակն է եղել: Նիկոլայոս Խրիսելիոսին Վասպուրականի կառավարչի պաշտոնից հեռացնում է Ռոմանոս III Արգիրոսը (տե՛ս ստորև, էջ 111), իսկ Կավասիլասը, ինչպես Արիստակես Լաստիվերցին է ցույց տալիս, կառավարել է Վասպուրականում Ռոմանոս III կայսեր հաջորդ Միքայել Պափլագոնացու օրոք (Արիստ. Լաստ., էջ 48): Այնուհետև, Ստեփան Լիխուդեսի իշխանության սկիզբ է նշված 1046 թ., այնինչ Մատթեոս Ուոհայեցին հիշատակում է նրան այդ պաշտոնում դեռևս 1045 թ. (Մատթ. Ուոհ., էջ 99):

152 Մատթ. Ուոհ., էջ 111:



փոխարինեց Մելիսանոսը<sup>153</sup>, Մանաղկերտի մասին խոսելիս, Լաստիվերցին գրում է. «Իսկ Վասիլն՝ որ քաղաքին իշխանն էր»<sup>154</sup> կամ «իշխանն որ ունէր զհոգ վերակացութեան քաղաքին»<sup>155</sup> (Մանաղկերտի): Նա հիշում է նաև Կարին քաղաքի իշխանին<sup>156</sup>, որ, ամենայն հավանականութամբ, ենթարկվում էր «Հայաստանի և Իբերիայի» կատասլանին<sup>157</sup>:

Բացի կատապան-նահանգապետից, Հայաստանի բյուզանդական կատապանություններում հաստատված էին նաև բյուզանդական դատավորներ— *κρίται*, որոնց իրավասության մեջ էր գատ-գատաստանը տվյալ նահանգում: Դեռևս Վասիլ II-ի օրոք, երբ հիշյալ կայսրը «տիրէ բազում գաւառաց և բերդից և քաղաքաց... կացուցանէ ի վերայ նոցա գործակալս և դատաւորս և վերակացուս»<sup>158</sup>, Դատավորները, ինչպես երևում է աղբյուրներից, շատ ընդարձակ իրավունքներ ունեին, բացի դատականից, նաև ֆինանսական ու քաղաքական: Խոսելով 1057 թ. դեպքերի մասին, Լաստիվերցին հիշում է մի դատավորի, որ «ունէր զհոգս արևելից», հավանաբար «Հայաստանի և Իբերիայի» բանակաթեմի, որն անգամ հրամայեց ձերբակալել Լիպարիտի որդի Իվանեին, նրան բանտ նետել, բռնագրավել նրա «անչափ գանձը», ձիերը, ջորիներն ու «զամենայն զոր ինչ և նա յարևելից ժողովեալ էր»<sup>159</sup>: Բյուզանդական դատավորին հիշատակում է Լաստիվերցին նաև թոնդրակյան շարժման առնչությամբ, որ «առաքի ի թագաւորէն»: Նա է «դատաւոր իրաւանց աշխարհին»<sup>160</sup>, որ իրավունք ունի անգամ զինվորներ ուղարկելու<sup>161</sup>:

7. Բյուզանդիայի տնտեսական փաղափականությունը Հայաստանում: Բյուզանդական կայսրության շուրջ հարյուրամյա տիրապետության ժամանակ Հայաստանում վարած տնտեսական քաղաքականության մասին աղբյուրներում շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Ինքնըստինքյան հասկանալի է, որ կայսրության առաջնահերթ միջոցառումներից մեկը երկրում հարկային լուծ հաստատելն է: Արիս-

153 Նույն տեղում, էջ 122:

154 Արիստ. Լաստ., էջ 94:

155 Նույն տեղում, էջ 90:

156 Նույն տեղում, էջ 106:

157 Նույն տեղում:

158 Նույն տեղում, էջ 24:

159 Նույն տեղում, էջ 106:

160 Նույն տեղում, էջ 130:

161 Նույն տեղում:

տակես Լաստիվերցուց հայտնի է, որ Վասիլ II-ը «ի շորեքհարիւր վաթսուն և եօթն ամի թուականիս մերոյ» (1018), այսինքն հենց բուլղարական պատերազմի ավարտին, երբ նա իրեն բավականին ապահով էր զգում, «առաքէ ... զնիկոմիտացի իշխան ոմն, որ եկեալ մարդահարկ արկանէ յերկրիս»<sup>162</sup>:

Հարկահանութիւն Հայաստանում գոյութիւն ունէր նաև Կոստանդին Մոնոմախ կայսեր օրոք, այդ մասին է վկայում նույն Լաստիվերցին. «զոր ի հարկաց ամենայն աշխարհաց ժողովէր»<sup>163</sup>: Պետք է ընդգծել, որ Վասիլ II-ի և Կոստանդին Մոնոմախի քաղաքականութիւնը Հայաստանում իրարից արմատապես տարբերվում էր: Վասիլը, ինչպես և նրան հաջորդած եղբայրը՝ Կոստանդին VIII-ը շատ զգույշ քաղաքականութիւն էին վարում, լինի տնտեսական, լինի հարկային, լինի կրոնական կամ իրավական: Եվ պատահական չէ, որ այդ երկու կայսրերին, ինչքան էլ տարօրինակ դա թվա, հայկական աղբյուրներում գրական գնահատական է տրված: Վասիլ II-ը Լաստիվերցու համար «երանելի»<sup>164</sup> կայսր է, Ուոհայեցու համար՝ «հայրն ամենեցուն» որ «անուն բարի ստացաւ ի վերայ արարածոցս՝ ողորմած ի վերայ այրեաց և գերեաց ի իրաւարար զրկելոց»<sup>165</sup>, նա «եղև որպէս զհայր աշխարհիս Հայոց...»<sup>166</sup>, որ իբր իր մահվան մահիճում «անդարձ արարեալ նմա (իր եղբայր Կոստանդին) վասն աշխարհին Հայոց, զի հայրաբար սիրով խնամեսցէ զազգն զայն»<sup>167</sup>:

Նույն գնահատականին է արժանացել նաև Կոստանդին VIII-ը: Նա «քաղցրութեամբ հովուեաց զամենայն հաւատացեալս Աստուծոյ... և բարի յիշատակաւ գնաց առ հարս իւր»<sup>168</sup>: Հայ ժողովրդի մեջ տարածվել էր նույնիսկ մի առասպել (անկասկած Բագրատունիների անկումից հետո), համաձայն որի Կոստանդին VIII-ը ուզում էր հավիտյան պահպանել հայոց թագավորութիւնը<sup>169</sup>:

Բոլորովին այլ էր Կոստանդին Մոնոմախի հարկային քաղաքակա-

162 Արիստ. Լաստ., էջ 28:

163 Նույն տեղում, էջ 95: Գրիգոր Մագիստրոսը հիշատակում է Մելիտենեի շքրջանում գործող «պուատեայատրիկ և աշխարհագիր» մի անձնավորության մասին: «Գր. Մագ. թղթերը», էջ 225:

164 Արիստ. Լաստ., էջ 95:

165 Մատթ. Ուոհ., էջ 30:

166 Նույն տեղում, էջ 50:

167 Նույն տեղում, էջ 55:

168 Նույն տեղում, էջ 56:

169 Արիստ. Լաստ., էջ 57:



նությունը: Կեկավմենոսը այդ առթիվ դրում էր, թե կայսրը Իբերիա և Միջագետք ուղարկեց իր պաշտոնյա Սերվլիասին՝ գույքի հաշվառում կատարելու և հարկեր նշանակելու համար, այնպիսի հարկեր, որոնք, պատմիչի ասելով, այդ մարդիկ իրենց օրում չէին տեսել: Հարկերի ծանրությունը պատճառ դարձավ, գրում է Կեկավմենոսը, որ այդ մարդիկ տնով տեղով (καυοιχει) անցնեն պարսից թագավորի (իմասելջուկ սուլթանի) կողմը<sup>170</sup>:

Կեկավմենոսն Իբերիայի տակ նկատի ունի Հայաստանի և Իբերիայի միացյալ բանակաթեմը, իսկ Միջագետքի մեջ, ինչպես տեսանք, մտնում էին ի միջի այլոց Չորրորդ Հայքը և Բարձր Հայքը:

Բյուզանդիան բացի ընդհանուր մարդահարկից, հարկեր էր գանձում նաև Հայաստանի քաղաքների առևտրականներից և արհեստավորներից: Այդ մասին պատմողական աղբյուրներում որևէ տեղեկություն չկա<sup>171</sup>, վկայություններ են պահպանվել Անիի մայր տաճարի պատերին փորագրված երկու վիմագիր արձանագրություններում, որոնցից մեկը Հայաստանի և Իբերիայի կատապան Ահարոն Բուլղարն է փորագրել տվել շուրջ 1056 թ., մյուսը՝ Բագարատ Վիկացին հավանաբար 1060 թ.:

Տվյալ ժամանակաշրջանում Անին շատ հարուստ ու զարգացած քաղաք էր, միջազգային առևտրի աշխույժ կենտրոն: Այստեղ բարձր զարգացման էին հասել արհեստները<sup>172</sup>: Այդ մասին վկայում են ոչ միայն հայկական, այլև բյուզանդական աղբյուրները: Միքայել Ատտալիատեսը, օրինակ, գրում է, որ Անին հրաշալի քաղաք էր (ναυμασιε πολιε), որ նրա ողջ բնակչությունը առևտրով էր ղբաղված<sup>173</sup>:

Նվաճելով Հայաստանի քաղաքները, բյուզանդացիները քաղաքային բնակչությունից՝ առևտրականներից ու արհեստավորներից սկսեցին հարկեր գանձել, հարկեր, որոնք կայսրության հիմնական եկամուտն էին կազմում: XI—XII դդ. սահմանագլխին գրած արաբ գիտնական Մարվազին ցույց է տալիս, որ Բյուզանդիայի «պետական եկամտի մեծ մասը կազմում են առևտրականներից գանձած հարկերը»<sup>174</sup>: Ահարոն

170 «Советы и рассказы», стр. 152—154.

171 Կցկտուր տեղեկություններ կան Սկիլիցեսի մոտ՝ Եղեսիայի վերաբերյալ, Գեորգիոս Մանիակեսը, 1032 թ. գրավելով Եղեսիան, կայսեր ուղարկեց քաղաքի տարեկան հարկը, որ կաղմում էր 50 լիտր ոսկի (3600 ոսկեդրամ): Տե՛ս ստորև, էջ 110:

172 Манандян, О торговле... Առաքելյան, Քաղաքները և արհեստները, հտ. Ա—Բ:

173 Mich. Attal., էջ 80—81:

174 Mlnorsky, Marwazi..., էջ 462:

Մագիստրոսի վերոհիշյալ արձանագրության մեջ, ի միջի այլոց, ասված է. «Բերի ոսկի մատանեալ (այսինքն՝ կայսերական խրիսովուլով հաստատված) գիր աղատութեան զինքնակալ ծիրանեծին թագուհոյն վասն պախտից տանց քաղաքիս և քաստակին, զոր տաին ամ յամ է շափ ութից լտերց. [այ]լ և ի խնգրո իշխանաւորացս խափանեցի և զգիտ երկուց լտերց զոր տայր մութասիբն...»<sup>175</sup>: Այս արձանագրությունից պարզվում է, որ Անիի առևտրականներն ու արհեստավորները մինչև այս արձանագրության փորագրությունը բյուզանդական կառավարության վճարում էին ութ լիտր ոսկի (576 ոսկեդրամ) հարկ: Քաղաքապետը (մութասիբը) հավանաբար պետության, իր հերթին հարկ էր վճարում՝ երկու լիտր ոսկու շափով (144 ոսկեդրամ), հարկ, որ արձանագրության մեջ «գիտ» է կոչված:

Անիի արհեստավորների ու առևտրականների վճարած հարկի մասին վկայում է և Անիի կառավարիչ Բադարատի արձանագրությունը, այն տարբերությամբ, որ եթե Ահարոնի արձանագրության մեջ այդ հարկը բյուզանդական տերմինով է նշանակված (պախտ տանց), ապա Բադարատի արձանագրության մեջ արդեն մշակվել է հայկական տերմին՝ «տանուտուրիս»<sup>176</sup> (տուրք տներից՝ արհեստանոցներից, խանութ-կուղպականերից): Այս արձանագրությունից պարզվում է, որ եթե Ահարոն Մագիստրոսի կառավարման ժամանակ Անիի արհեստավորներն ու վաճառականները ազատվում էին այդ հարկից, ապա շուրջ 1060 թ. Բադարատի իշխանության օրոք վերականգնվում էր, այն տարբերությամբ, որ եթե Ահարոնի ժամանակ հարկի գումարը հաստատուն էր և այն վճարվում էր ուղղակի պետության, ապա Բադարատի ժամանակ հարկի գումարը անորոշ էր և նրա գանձման գործը կապալով տրվում էր հարկահաններին, որոնք աղբյուրներում հայտնի են որպես «պակտոնարիոս» (πακτοναριος)<sup>177</sup>, «պախտ» գանձող: Նրանց խղճից էր կախված գանձվելիք հարկի քանակը:

Նման հարկային քաղաքականությունը անկասկած տարածված էր Հայաստանի և այլ քաղաքներում: Դժբախտաբար, այդ մասին աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել:

Մենք որևէ տեղեկություն չունենք խոշոր կալվածատերերի վճարած հարկերի մասին, իսկ այդպիսիներ՝ աշխարհիկ թե հոգևոր, Հայաստանում շատ-շատ էին: Հայոց եկեղեցին Պետրոս Գետադարձի օրոք ուներ

175 «Դիվան հայ վիմագրության», պր. I, էջ 38:

176 Նույն տեղում, էջ 37:

177 «Советы и рассказы», стр. 238.



«հինդ հարիր դեղ անուանի և մեծանիստ և շահաւէտ ընտիր ընտիր»<sup>178</sup>, Բյուզանդական տիրապետութեան օրոք, հասկանալի է, հայ եկեղեցին դրանցից զրկվեց, բայց այդուհանդերձ հայոց եկեղեցին եկամուտներ ուներ, քանի որ բյուզանդացիները Պետրոս Գետադարձի հաջորդին՝ Խաչիկին «ընդ հարկիւ կամէին արկանել»<sup>179</sup>: Սակայն ասվածից չի կարելի եզրակացնել, որ հայ հողևորականներն ընդհանրապես զրկվեցին իրենց կալվածներից: Կաթողիկոսութեան հողային հարստութեան հարված հասցնելն ավելի քաղաքական դրդապատճառներ ուներ, քան տրնտեսական: Հայաստանում հենց բյուզանդական տիրապետութեան օրոք լայնածավալ կալվածներ հայ հողևորականներն ունեին: Օրինակ, Արծնի Դավթուկ քորեպիսկոպոսի հարստութեանները սելջուկ-թուրքերը քառասուն ուղտերի վրա բարձեցին ու տարան, իսկ նրա տնից «ուժ հարիր վեցկի եզանց ելանէին»<sup>180</sup>: Այդքան անասուն աշխատացնելու համար մշակելու համապատասխան հողային տարածություն էր պետք:

Բյուզանդական կայսրությունը, ինչպես ասվեց, չէր հանդուրժում հայ ֆեոդալների, ավազանու առկայությունը Հայաստանում: Աշխատելով հեռացնել նրանց մալր երկրից, միաժամանակ նա ոչ հայ ֆեոդալների էր հաստատում: Նրանց շնորհելով ընդարձակածավալ կալվածներ, ջանում էր իր համար տնտեսական ու քաղաքական հենարան ստեղծել Հայաստանում: Դրա փայլուն օրինակը Նվստաթիոս Բոյիլասն էր, որին Բյուզանդական կայսրությունը հաստատեց Կղարչքում, նվիրելով բազմաթիվ եկամտաբեր կալվածներ<sup>181</sup>:

8. Բյուզանդիայի փաղափականությունը տեղական ավազանու նրկատմամբ: Բյուզանդական կայսրությունը, նվաճելով Հայաստանը, նրա ավազանու (աշխարհիկ, թե հողևոր) նկատմամբ մշակել էր որոշակի քաղաքականություն, որն իրադործում էր ամենայն բժախնդրութեամբ: Այդ քաղաքականության էությունը մի քանի խոսքով տալիս է Մատթեոս Ուռհայեցին. «Յորժամ այր քաջ և զօրաւոր դտանէին,— գրում է նա,— զաչսն խաւարեցուցանէին և կամ ի ծովն ձղեալ խեղդամահ սատակէին»<sup>182</sup>: Բայց կայսրությունը միաժամանակ ամեն կերպ աշխատում էր պահպանել, սիրաշահել պաշտոններ ու աստիճաններ շնորհելով, հլու դործիք դարձնել իր կողմնակիցներին, իսկ հակառակորդներին ցրել կայսրության ամրողջ տարածքով մեկ: Սի փաստ, որ

178 «Մատթ. Ուռհ., էջ 153:

179 Արիստ. Լաստ., էջ 83:

180 Մատթ. Ուռհ., էջ 103:

181 Բարթիկյան, Բոյիլասի կտակը, էջ 393—429:

182 Մատթ. Ուռհ., էջ 136:



հանդիպում է Ստեփանոս Տարոնեցու պատմական երկում, վերաբերում է սոսկ Տայքին, բայց բոլոր հիմքերը կան այն տարածելու ողջ Հայաստանի վրա: Պատմիչը դրում է. «Թագաւորն Վասիլ... զամենայն բերդս և զամրոցս Տայոց նուաճեաց ընդ ձեռամբ իւրով, զհաւատարիմս կարգեալ ի նոցա, և զմնացեալ ազատսն Տայոց առեալ տաւաւ ընդ ինքեան՝ բնակեցուցանել յաշխարհին Յունաց»<sup>183</sup>:

Վասիլ կայսեր այս քաղաքականութիւնը կայսրութեան համար նորութիւն չէր, այն մշակված էր բազում դարեր առաջ, դեռևս Արշակունյաց հարստութեան վերացումից հետո և որի հոյակապ ձևակերպումը գտնում ենք Սեբեոսի մոտ: Հանրահայտ է Մավրիկիոս կայսեր նամակը՝ ուղղված պարսից շահնշահ Խոսրովին. «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց եկ, ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել: Զի եթէ մեռանին թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խազազութեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեղ հանգչել ոչ լինի»<sup>184</sup>: Մավրիկիոսը, հարկավ, նկատի ուներ ոչ ողջ հայ ժողովրդին, այլ նրա ավագանուն և ղինյալ ուժերին:

Վասիլ II-ի այդ քաղաքականութիւնը շարունակեցին և նրա հաջորդները: Վասիլի եղբայր Կոստանդինն իր իշխանութեան երկրորդ տարում, 1027 թ., «առաքէ ...յարևելս վերակացու աշխարհին զնիկիտ ոմն ներքինի, որ եկեալ անցանէ ի գաւառն Վրաց (իմա Իբերիա բանակաթեմր), և պատիր բանիւք զբազումս յազատաց աշխարհին հանեալ ի հայրենեաց՝ առաքէ ի դուռն քազաւորին: Զոր տեսեալ և ուրախացեալ՝ մեծամեծ պարգևօք և իշխանական գահու պատուէ զնոսա, և տայ նոցա ըստ արժանեաց գիւղս և աւանս գրով և մատանեաւ ժառանգութիւն յաւիտենից»<sup>185</sup>:

Արիստակես Լաստիվերցու վերոբերյալ տողերի մեջ հայելու նման արտացոլված է կայսրութեան քաղաքականութիւնը. եկամտաբեր կալվածներ շնորհելով կայսրութեան սահմաններում, հեռացնել ավագանուն իր հայրենիքից, որպեսզի վերացնի ժողովրդի հնարավոր ազատա-

183 Ասողիկ, էջ 278: Այդ մասին վկայում է անգամ Հովհաննես Սկիլիցեսը, ցույց տալով, որ Իբերիայի (Տայքի) նվաճումից հետո Վասիլ II-ը իր հետ Փյունիկե տարավ Իբերիայի ազնվականութեան զլիսավորներին (τους ἐν τῇ κατ'αὐτὸν Ἰβηρία κατὰ γένος πρωτεύοντας), որոնցից հիշատակում է Պակուրյանին (Գրիգոր Բակուրյանի հորը), Թևդատին և Ֆերսին (տե՛ս ստորև, էջ 75):

184 Սեբեոս, էջ 49:

185 Արիստ. Լաստ., էջ 41:



գրական շարժումը գլխավորելու ընդունակ մարդկանց վտանգը: Շատ խոստուն է Կոստանդին Մոնոմախի գործունեությունը Չորրորդ Հայքում, որտեղ նա ձերբակալել է տալիս, սսլանում կամ կղզիները աքսորում ապստամբություն նախապատրաստող Պաղինի իշխաններին<sup>186</sup>:

Բյուզանդիան առաջին հերթին ուզում էր գլխատել հայ ժողովրդի ռազմական ավագանուն, քանզի նա էր իր հնարավոր հակառակորդը:

9. Բյուզանդիայի ռազմական ֆաղափականությունը Հայաստանում: Կայսրությունը թեև դեմ էր հայկական ավագանու գոյությանը Հայաստանում, այդուհանդերձ դեմ չէր հայկական ռազմական ուժերի գոյության, քանզի այդ զորքերն իրեն միշտ էլ պետք էին: Գրավելով Հայաստանի այս կամ այն նահանգը, Բյուզանդիան լուծարքի չէր ենթարկում տեղի զինական ուժերը: Տարոնը կայսրության կցվեց 966 թ., բայց մի քանի տարի անց Հովհաննես Չմշկիկի ժամանակ, հիշվում է Բուլղարիայում ռուսների դեմ պատերազմող հայոց հետևակը<sup>187</sup>: Ասողիկը հայոց 425 (976) թ. տակ հիշում է «զհեծելագունդ զօրն Հայոց, որ ընդ Յունաց թագաւորութեամբն»<sup>188</sup>: 1000 թ. նա խոսում է Չորրորդ Հայքի և Տարոնի զորքերի մասին<sup>189</sup>: Դավիթ կուրապաղատը իր կտակում Վասիլ II-ին էր թողել բացի իր երկրից, նաև իր «ազատագունդը»<sup>190</sup>: Հայկական զորքեր կային Սասունում: Նրանք բավական նեղություն պատճառեցին Չմշկիկի հոռոմ զորքերին<sup>191</sup>:

Հայկական զորքերի մասին հիշատակություն ունի Մատթեոս Ուոհայեցին Միքայել V-ի օրոք, հետևյալ պարզաբանությամբ. «որք ընդ Հոռոմոց իշխանութեամբն էին՝ Սեբաստիա և Տարոն և ամենայն Վասպուրական»<sup>192</sup>: Չորքեր ուներ հայ իշխան Գանձին՝ Բերկրիի համար մղվող պատերազմի ժամանակ<sup>193</sup>: «Հայոց աշխարհի» զորքեր են հիշվում Կոստանդին Մոնոմախի ժամանակ<sup>194</sup>, որոնց մի մասը, անկասկած, Շիրակի Բագրատունիների վերացած թագավորության զինյալ ուժերն էին:

Մենք որոշ գաղափար ունենք նաև հայկական զինուժի քանակի մասին: Հովհաննես Չմշկիկի դեմ Աշոտ III Ողորմածը դուրս հանեց

186 Մատթ. Ուոհ., էջ 110—112:

187 Ասողիկ, էջ 184:

188 Նույն տեղում, էջ 191:

189 Նույն տեղում, էջ 276:

190 Նույն տեղում, էջ 275:

191 Մատթ. Ուոհ. էջ 18:

192 Նույն տեղում, էջ 88:

193 Նույն տեղում, էջ 75:

194 Նույն տեղում, էջ 93, 98:

ողջ Հայաստանից գումարված ութսուն հազար հոգի<sup>195</sup>, Երբ 983 թ. Ատրպատականի ամիրա Մամլանը հարձակվեց Տալթի կուրապաղատ Դավթի վրա, վերջինս նրա դեմ հանեց «հետևակս աղեղնաւորս երեք հազար, և ձիաւորս երկու հազար և հինգ հարիւր»<sup>196</sup>, Դավիթը հենց այս գորքերը կտակեց Վասիլ II-ին: 989 թ. հայոց սպարապետը զորածո-ղով արեց «զՄարզպետական գունդն քառասուն և հինգ հազար արանց քաջաց, զատ ի յարքունական գնդէն»<sup>197</sup>: Գագիկ I-ի թագադրման հանդեսներին մասնակցեցին հայոց թագավորության «հարիւր հազարաց վառելոց ընտիր արանց ի մարտ պատերազմաց անուանեաց և քաջ կորովեաց»<sup>198</sup>: 1020 թ. հայոց թագավոր Հովհաննես-Սմբատն իր եղբոր Աշոտի վրա արշավեց քառասուն հազարանոց հետևակով և քսան հազարանոց հեծելազորով<sup>199</sup>: Աշոտն էլ ուներ իր զորքերը, որոնց քանակը հայտնի չէ: Մենք չգիտենք նաև Վասպուրականի թագավորության (հետագայում՝ կատապանության) զինուժի քանակի մասին: Բյուզանդացիները՝ Անիի վրա կատարած երկրորդ հարձակման ժամանակ՝ XI դ. 40-ական թվականների սկզբին, սպարապետ Վահրամ Պահլավունին դուրս հանեց «մնացեալք զօրքն Հայոց»՝ «արք երեսուն հազար հետեւակք և ձիաւորք»<sup>200</sup>:

Ինչպես տեսնում ենք, հայկական զորքեր կային Հայաստանի՝ Բյուզանդիայի կողմից նվաճված բոլոր նահանգներում, որոնց հաշվի չառնել կայսրությունը չէր կարող: Նա ջանում էր դրանք փոշիացնել, չթողնել Հայաստանում, մշտապես ուղարկում էր պատերազմական տարբեր ճակատներ՝ ընդդեմ թշնամիների: Մենք հայկական զորքերի ենք հանդիպում Բուլղարիայում՝ Չմշկիկի ժամանակ<sup>201</sup>, նրանց մենք տեսնում ենք այնտեղ 986 թ. Վասիլ II-ի բանակում<sup>202</sup>, 994 թ. Անտիոքի շրջանում՝ եգիպտացիների դեմ պատերազմելիս<sup>203</sup> և այլն:

Բայց, հարկավ, հայոց ողջ զինուժը երկրից հեռացնել հնարավոր չէր: Եվ ահա հանկարծ կատարվում է անսպասելին, հրապարակվում է Կոստանդին Մոնոմախի հրովարտակը տեղական զորքերի լուծարքի վերաբերյալ: Միքայել Ատտալիատեսը, գրելով սելջուկ-թուրքերի Հայաս-

195 Մատթ. Ուռն., էջ 17:

196 Նույն տեղում, էջ 36:

197 Նույն տեղում, էջ 3:

198 Նույն տեղում, էջ 4:

199 Նույն տեղում, էջ 8:

200 Նույն տեղում, էջ 85:

201 Ասողիկ, էջ 184:

202 Նույն տեղում, էջ 245:

203 Նույն տեղում, էջ 262:



տանում տարած դյուրին հաղթանակների մասին, այդ բանում մեղավոր է համարում Կոստանդին Մոնոմախին: Ունենալով ռազմունակ «իբերական»<sup>204</sup> զորք, դրում է նա, որն իր «կերակուրն» (ὄψονιον) ստանում էր մերձակա գյուղերից, կայսրը զրկեց զորքը այդ «կերակրից», որով ոչ միայն կորցրեց իր դաշնակիցներին, այլև նրանց իր թշնամիների վերածեց<sup>205</sup>: Ավելի պարզ ու հստակ է գրում Հովհաննես Սկիլիցեսը: Կոստանդին Մոնոմախը, գրում է նա, «Լևոն Սերվլիասի միջոցով լուծարքի ենթարկեց շուրջ հիսուն հազարի հասնող իբերական զորքը, և զինվորների փոխարեն այդ վայրերից բազում հարկեր էր հավաքում»<sup>206</sup>:

Կոստանդին Մոնոմախի ռազմական ռեֆորմը տարածվում էր ոչ միայն «Հայաստանի և Իբերիայի» բանակաթեմի վրա, այլև Միջագետք բանակաթեմի, որի մեջ էին մտնում նաև Չորրորդ Հայքն ու Բարձր Հայքը: Կեկավմենոսը, խոսելով նույն Սերվլիասի մասին, նշում է, որ կայսեր հրամանով նա գնաց Իբերիա և Մեսոպոտամիա (Միջագետք բանակաթեմը), որպեսզի աշխարհագիր անցկացնի և հարկեր նշանակի, որոնց տեղի բնակիչներն իրենց օրում շէին տեսել:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Մոնոմախի օրենքի էությունը կայսրության ենթակա տեղական զորքերի լուծարքն էր: Ի՞նչն էր գրապատճառը: Եթե հավատանք բյուզանդական աղբյուրներին, ապա գրապատճառը կալսեր ազահուծյունն էր ու շռայլությունը, դրամ կորզելու ու խնայելու նրա մարմաջը<sup>207</sup>: Այդպես է դատում նաև Արիստակես Լաստիվերցին, «զգանձս, զոր ի հարկաց ամենայն աշխարհաց ժողովէր,— գրում է նա,— զոր պարտ էր ի պէտս հեծելոց բաշխել և բազմացուցանել հեծելազօրս ընդդէմ թշնամեաց՝ որ զաշխարհս ի խաղաղութեան կարէին պահել յաղթելով թշնամեացն... ի բողից ծախսն վճարէր...»<sup>208</sup>:

Բայց այդպե՞ս էր արդյոք իրականում: Եթե ուշադիր կարդանք հայկական աղբյուրները, ասլա կարելի է գալ միանգամայն այլ եզրակացություն, համոզվել, որ Բյուզանդական կայսրությունը XI դ. կեսերին այդ քայլին դիմելու լուրջ շարժառիթներ ուներ:

<sup>204</sup> Ենթադրվում է «Հայաստանի և Իբերիայի» բանակաթեմի զինուժը: Է. Հոնիգմանը «Իբերական» զորքը համարում է զուտ հայկական: Տե՛ս Honigmann, Die Ostgrenze, S. 178.

<sup>205</sup> Mich. Attal., p. 44—45.

<sup>206</sup> Տե՛ս ստորև, էջ 180:

<sup>207</sup> Mich. Attal., p. 44.

<sup>208</sup> Արիստ. Լաստ., էջ 95:

Հայկական զինված ուժերը Բյուզանդիայի համար երկսայրի սուր էին: Նրանք, ճիշտ է, օգուտ էին տալիս, բայց և գլխացավանք պատճառում: Նիկեփոր II Փոկասին վերագրվող «De velitatione bellica» երկում խոսվում է հայ սահմանասլահ զորքերի անհուսալիության մասին<sup>209</sup>: Սասունցիների հետևակազորը Տարոնում, Այծյաց բերդի մոտ մեծ վնաս հասցրեց Հովհաննես Չմշկիկի զորքերին<sup>210</sup>: Տարոնի նվաճումից անցել էր ընդամենը տասը տարի, երբ 976 թ. մենք տեսնում ենք, որ հայոց զորքը հենց Տարոնի իշխաններ Գրիգորի ու Բագարատի գլխավորությամբ «ահաբեկ արարեալ զգօրսն Յունաց՝ զօրէն փոթորկեալ մրրկի շփոթէին, զյոլովս սրախողխող արարեալ և զբազումս ձերբակալ»<sup>211</sup>: Մի փոքր անց, 990 թ. հայերը միանում են կենտրոնական կառավարության դեմ ապստամբած Վարդաս Փոկասին<sup>212</sup>: 1000 թ. Դավիթ կուրապաղատի զորքերը մարտ տվեցին Տայքը գրավող բյուզանդական զորքերին<sup>213</sup>:

Շուրջ 1040 թ. Բյուզանդիայի դեմ ապստամբություն նախապատրաստեցին Սենեբերիմ Արծրունու որդիներ Ատոմն ու Ապուսահչը Սեբաստիայում: Միքայել կայսրը նրանց դեմ ուղարկեց ակոլութոսին՝ տասնհինգ հազարանոց վարձկան բանակով, ձերբակալեց ապստամբների ղեկավարներին և Կոստանդնուպոլիս բերեց<sup>214</sup>: Եթե ծրագրված ապստամբությունը կանխելու համար անհրաժեշտ է լինում տասնհինգ հազարանոց բանակ ուղարկել, պիտի ենթագրել, որ ապստամբները զգալի զինուժ էին ոտքի հանել: 1051 թ. Կոստանդին Մոնոմախի դեմ ապստամբություն բարձրացրեց Բալահովիտը Չորրորդ Հայքում: Ապրստամբների դեմ ուղարկված կատապան Պեռոսը ձերբակալեց ապրստամբների պարագլուխներին՝ իշխան Աբելի որդիներ Հարպիկին, Դավթին, Լևոնին և Կոստանդինին, առաջինին գլխատեց, մյուսներին աքսոր ուղարկեց<sup>215</sup>:

Շիրակի նվաճումից հետո Բյուզանդական կայսրությունը հայոց կաթողիկոս Պետրոսին պատվավոր աքսորի մեջ էր պահում Կոստանդնուպոլսում, նրան շէր թողնում Հայաստան վերադառնալ, քանզի վախենում էր, որ նա «երթեալ ապստամբեցուցանէ զԱնի»<sup>216</sup>:

209 Կոստանդին Միքանաժին, էջ 202:

210 Մատթ. Ուոհ., էջ 18:

211 Ասողիկ, էջ 191:

212 Նույն տեղում, էջ 251:

213 Նույն տեղում, էջ 277:

214 Մատթ. Ուոհ., էջ 83:

215 Նույն տեղում, էջ 109—112:

216 Արիստ. Լաստ., էջ 82:



Ասվածից պարզ է դառնում Կոստանդին Մոնոմախի ռեֆորմի իմաստը: Նա պարզապես կես հազարամյակ անց կրկնում էր Զենոն և Հուստինիանոս I կայսրերի ռեֆորմները: Բյուզանդական Չորրորդ Հայքը, որ գտնվում էր կայսրության կազմում, կառավարվում էր հայ նախարար-սատրապների կողմից, որոնք ունեին իրենց սեփական դինուժը: Նրանք պատերազմական գործերում ինքնուրույն ու անկախ էին: Այն պատճառով, որ Չորրորդ Հայքի նախարարները մասնակից դարձան Զենոնի դեմ բարձրացված Իլլոսի և Լեոնտիոսի ապստամբությանը, կայսեր կողմից զրկվեցին սեփական զինված ուժեր ունենալու իրավունքից: Վերջնական հարվածը հասցրեց Հուստինիանոս I-ը: Նա վերջ տվեց սատրապների իշխանությանը Չորրորդ Հայքում, տեղում դուքսերի նշանակեց և հաստատեց զուտ բյուզանդական կայազորներ<sup>217</sup>:

Այսպիսով, Մոնոմախի ռեֆորմի նպատակը Հայաստանում հնարավոր ապստամբությունների առաջն առնելն էր, բյուզանդական վարչության գործը հեշտացնելը: Ինչ խոսք, դիմելով նման քայլի, կայսրությունը ելնում էր այդօրվա կամ ծայրահեղ դեպքում՝ վաղվա շահերից, բայց ոչ ավելի կամ պակաս հեռավոր ապագայի, և նման քաղաքականությունը ճակատագրական դարձավ ոչ միայն Հայաստանի, այլև իր իսկ Բյուզանդիայի համար: Միայն հայ ղորքերը կարող էին շահագրգռված լինել Հայաստանի պաշտպանությամբ, և ոչ օտար վարձկանները, որոնց կայսրությունը հաստատում էր Հայաստանի տարբեր շրջաններում: Հանուն ինչի՞, օրինակ, պետք է իրենց կյանքը զոհեին բուլղարները Վասպուրականում<sup>218</sup>, ռուսները՝ Տայքում<sup>219</sup>, վարյազները՝ Բաբերդում<sup>220</sup>, կամ ուզերն ու պաժինակները՝ Մանազկերտում<sup>221</sup>: Եվ պատահական չէ, որ Մատթեոս Ուռհայեցին բյուզանդական ղորքերը Հայաստանում որակում է որպես «սուտ պահապաններ»<sup>222</sup>: Շատ խոսուն է Մանազկերտի դեպքը: «Առ ի շգոյէ պահապանաց քաղաքին,— դրում է Ուռհայեցին,— յաւուր միում առաւ քաղաքն Մանձկերտ, վասն զի փախեան Հոռոմոց պահապանքն»<sup>223</sup>:

Ավելորդ չէ ասել, որ վերացնելով հայկական կանոնավոր ղորամասերը Հայաստանում, կայսրությունը, երբ դա անհրաժեշտ էր, շա-

217 Պրոկոպիոս Կեսարացի, էջ 191:

218 Տե՛ս ստորև, էջ 84. Հմմտ. Արիստ. Լաստ., էջ 25:

219 Ասողիկ, էջ 277:

220 Արիստ. Լաստ., էջ 88:

221 Մատթ. Ուռհ., էջ 201—202:

222 Նույն տեղում, էջ 135:

223 Նույն տեղում, էջ 194:



րունակում էր զորահավաք կատարել: Կոստանդին Դուկաս կայսրն, օրինակ, հրք Արևմուտքում ուզերի դեմ պատերազմ սկսեց, Հայաստանում զորահավաք հայտարարեց<sup>224</sup>: Նույն բանը կատարեցին Մանազկերտի ճակատամարտի նախօրեին Ռոմանոս IV Դիոգենեսը<sup>225</sup>, Ալեքսիոս I Կոմնենոսը՝ երբ սլաժինակաների դեմ պատերազմ սկսեց<sup>226</sup>:

Թե ի՞նչ հետևանքներ ունեցավ բյուզանդացիների ռազմական այս քաղաքականությունը Հայաստանում, կարելի է ցույց տալ մի երկու օրինակով: «Յայսմ ամի (1041),— դրում է Մատթեոս Ուռհայեցին,— զօրածողով արար թագաւորն Հոռոմոց Միխայլն զամենայն աշխարհն Յունաց և այլ ի Հայոց զօրացն, որք ընդ Հոռոմոց իշխանութեամբն էին՝ Սեբաստիա և Տարօն և ամենայն Վասպուրական. և անթիւ բազմութեամբ հասանէր թագաւորն Միխայլ յարևմուտք...»<sup>227</sup>:

Վասպուրականի հայկական զորքերը տարվում են Արևմուտք: Եվ հենց նույն տարին «ժողովեցան Հեր և Սամուսատ և ասպատակ արարին զթոռնեան գաւառն» Վասպուրականում<sup>228</sup>: Իշխան Խաչիկը, որ «էր այր քաջ և յաղթող (ի) պատերազմօղ, յազգէ ի վերոյն յառիժ ջոկէ. բայց ծերացեալ էր և թողեալ զգործ պատերազմին և հառաչելով ապաշաւէր, քանզի աւագ որդին նորա քաջն Հասան և Ճննդուկն հանդերձ զօրօքն ի յարևմուտքն էին զհետ թագաւորին Միխայլի»<sup>229</sup>: Թե ի՞նչ տեղի ունեցավ, հանրահայտ է: Ծերունի Խաչիկը և իր տասնհինգամյա որդին՝ Իշխանը սպանվում են պատերազմում, գավառը թալանվում, ավերակ է դառնում:

Բյուզանդական կատապան Պեռոսը 1051 թ. ձերբակալում է Զորորդ Հայքի Պաղին գավառի իշխաններին, եղբայրներ Հարպիկին, Դավթին, Լևոնին և Կոստանգնին, առաջինին գլխատում է, մյուսներին աքսոր ուղարկում<sup>230</sup>: Հետևանքը. թուրքական բանակները գալիս են «ի գաւառն, որ կոչի Պաղին, և սրով սրտմտութեամբ հեղաւ բազում արին ի հաւատացելոցն, և գերեցաւ ամենայն գաւառն Պաղնայ»<sup>231</sup>:

Ստեղծված դրության փայլուն բնութագիրը տվել է Մատթեոս Ուռհայեցին. «Ո՞վ կարասցէ մի ըստ միոջէ պատմել զկորուստ բարկու-

224 Մատթ. Ուռհ.. էջ 151:

225 Նույն տեղում, էջ 198:

226 Նույն տեղում, էջ 238:

227 Նույն տեղում, էջ 88:

228 Նույն տեղում, էջ 90:

229 Նույն տեղում, էջ 90:

230 Նույն տեղում, էջ 110—112:

231 Նույն տեղում, էջ 138:



թեանն և զլաց ապաշաւանաց տանս Հայոց, զոր յանօրէն և յարեանարբու գագանացն զօրացն Թուրքաց կրեաց յանտիրութենէ, և սուտ պահապանացն, ի տկար և ի թուլամորթ վատ ազգին Յունաց. վասն զի մի առ մի քակեալ հանին զքաջ զզօրականսն ի տանէն Հայոց, զորս հանին յարկաց և ի գաւառաց և բարձեալ խափանեցին զաթոռ թագաւորութեանն Հայոց. քակեցին զցանկ պահպանութեանն զօրաց և զօրավարաց. և ազգն Հոռոմոց իւրեանց անուն քաջութեան զանդարձ փախչելն արարին պարծանք. նմանեցան վատ հովուացն, որ յորժամ զգայլն տեսանէ՝ փախչի: Սակայն Հոռոմք յայն ջանս ջանացան, որ լուր զպարիսպ ամրութեան տանս Հայոց քակեալ կործանեցին և զՊարսիկք (իմա՝ թուրքերին) ի վերայ արձակեցին սրով... մինչ և Պարսիկք անտէր տեսին զամենայն արևելք...»<sup>232</sup>: Եվ այնուհետև. «արեանարբու և գագանացեալ ազգն Թուրքաց տարածեցաւ ընդ ամենայն երեսս երկրի, որ ոչ մնաց գաւառ ի խաղաղութեան, այլ կայր մատնեալ ամենայն տունն քրիստոնէից ի սուր և ի գերութիւն. և արգելաւ վաստակ հողագործութեան յերկրէ, և հատաւ կերակուր հացի, և սրով և գերութեամբ հատան մշակք և վաստակաւորք, և առ հասարակ տարածեցաւ (սով) ընդ ամենայն աշխարհս: Եւ անմարդ եղեն բազում գաւառք, և քակեցաւ տունն արևելից, և եղև աւերակ աշխարհն Հոռոմոց...»<sup>233</sup>:

10. Բյուզանդիայի կրօնական քաղաքականութիւնը Հայաստանում: Քաղկեդոնի ժողովը (451) բյուզանդական ու հայկական եկեղեցիների, հայերի ու հույների միջև ստեղծեց այնպիսի մի անջրպետ, որ հնարավոր չեղավ վերացնել Բյուզանդիայի ամբողջ գոյութեան ընթացքում: Հենց V դարից սկսել էին միաբնակ-երկաբնակ դավանաբանական վեճերը, որոնք պատճառ դարձան երկու հարևան երկրների ու ժողովուրդների փոխադարձ անհանդուրժողութեան ու հակամարտութեան: Հասկանալի է, այդ վեճերը կրօնական քողով քողարկված քաղաքական ու մշակութային ավելի խոր արմատներ ունեին: IX դարից սկսած, երբ Բյուզանդական կայսրութեան համար Հայաստանի նվաճումը մտավ օրակարգի մեջ, բնականաբար լույս աշխարհ եկավ հիշյալ հարցը: Բյուզանդիան քաղկեդոնական էր, Հայաստանը՝ միաբնակ: Այս հանգամանքը չէր կարող դժվարութիւնների առջև չկանգնեցնել կայսրութեանը, որը որոշել էր երկար ժամանակով հաստատվել այդտեղ: Քանի որ Բյուզանդիան մտադիր չէր միաբնակութիւն ընդունել, իսկ

232 Նույն տեղում, էջ 135—136:

233 Նույն տեղում, էջ 217:

միջին գիծն էլ իր համար ցանկալի չէր, մնում էր ամեն ջանք թափել հայ ժողովրդին քաղկեդոնական դարձնելու: Եվ կայսրությունը հենց այդ ուղղությամբ էլ սկսեց գործել: Հարցը արտաքուստ կրոնական էր, հետևաբար գործը գլխավորեցին Բյուզանդիայի հոգևոր պետերը: Դեռևս Փոտ պատրիարքը այդ ուղղությամբ լուրջ աշխատանք էր տարել: Պահպանվել է 862 թ. իշխան Աշոտին գրած նրա մի նամակը, որից իմանում ենք Չորրորդ Հայքում և Տարոնում «ուղղափառություն» (իմա՝ քաղկեդոնականություն) ընդունած հայերի մասին (καὶ τῶν Ἀρμενίων τοὺς ὀρθόδοξήσαντας δευτέρα πάλιν σταλείσα ἐπιστολή, τοὺς κατοικοῦντας τὴν Τετάρτην Ἀρμενίαν Ταρρωνίτας), որոնց Փոտը երկու նամակ է ուղարկել<sup>234</sup>: Փոտը մի շարք նամակներ էլ ունի գրած նույն հայոց իշխանաց իշխան Աշոտին և կաթողիկոս Զաքարիային, դարձյալ դավանաբանական բնույթի<sup>235</sup>:

Փոտի սկսած գործը մեծ եռանդով շարունակեց Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսը, որ մի քանի նամակներ է ուղարկել հայոց թագավոր Սմբատին և կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն<sup>236</sup>: Այդ նամակների հունարեն բնագրերը պահպանվել են, իսկ ինքը կաթողիկոսն իր պատմական երկում հիշում է դրանց մասին<sup>237</sup>: Թոմանոս I կակասյենոս կայսեր օրոք Բյուզանդիան աշխույժ նամակագրություն ուներ անգամ հեռավոր Սյունիքի հոգևոր պետերի հետ, հավանաբար, տնդում հենարան ստեղծելու մտահոգությամբ՝ ընդդեմ

<sup>234</sup> Darrouzès, Deux lettres, p. 147.

<sup>235</sup> Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 279—294: նաև՝ «Православный Палестинский Сборник», вып. 31, СПб., 1892, стр. 179—226. «Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց վասն երկու միաւորեալ բնութեանցն մի անձնաւորութիւն գոլով Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և վասն ճշմարտախոհութեան ժողովոյ սուրբ հարցն որ ի Քաղկեդոն»: Հրտ. ն. Ակիւնյան, Հանդէս ամսօրեայ, 1968, № 1—3, սյունակ 61—100: «Պատճէն թղթոյն Մեծի հայրապետին Կոստանդնուպոլսի Փոտայ առ Աշոտ իշխանաց իշխան»: Հրտ. ն. Ակիւնյան, Հանդէս ամսօրեայ, 1968, № 10—12, սյունակ 439—450: «Պատասխանի թղթոյն Փոտայ դրեալ Աշոտայ իշխանաց իշխանի Հայոց»: Հրտ. ն. Ակիւնյան, Հանդէս ամսօրեայ, 1968 № 10—12, սյունակ 451—472:

<sup>236</sup> Հ. Մ. Բաղթիկյան, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին: Պատմա-բանասիրական հանդես, 1966, № 4, էջ 251—256: նաև Каждан-Бартикаян, Рец. на Ник., стр. 277—279.

<sup>237</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 280—282:



Բագրատունիների: Պահպանվել է հիշյալ կայսեր կարգադրությամբ Սյունիքի հայոց եպիսկոպոսին գրված թուղթը (ցարդ անտիպ)<sup>238</sup>:

Կայսրությունը Սյունիքում որոշ հաջողությունների հասավ, և անգամ Սյունիքի 9-րդ՝ Բաղաց գավառից կաթողիկոս դարձած Վահան Սյունեցին (968—969) «ընդ քաղկեդոնականս սիրելութին և հաճութին կամեցաւ առնել թղթովք»<sup>239</sup>: Երբ Անիում նրա դեմ եկեղեցական ժողով դումարեցին, Վահանը փախավ Վասպուրական, որտեղ էլ հավանաբար քաղկեդոնականների կողմնակիցներ կալին<sup>240</sup>:

Հաճախակի դարձան հայ և հույն վարդապետների դավանաբանական վեճերը, որոնք, որպես կանոն, տեղի էին ունենում հենց Բյուզանդական կայսրության մայրաքաղաքում և որոնց մասնակցություն էին ցուցաբերում նաև աշխարհիկ տերերը: Դեռևս Հովհաննես Չմշկիկ կայսեր օրոք Կոստանդնուպոլիս գնաց «և խօսեցաւ վարդապետն Հալոց (Պանգալեոն) առաջի թագաւորին ընդ ամենայն իմաստասիրացն Հոռոմոց»<sup>241</sup>: Վասիլ II-ի թագավորության վերջին տարիներին կայսեր հրավերով Կոստանդնուպոլիս գնաց վարդապետ Սամուել Կամրջաձորեցին, նրան Վասիլ II-ը «կացուցանէր... յատենի խօսել ընդ վարդապետացն Յունաց»<sup>242</sup>: Նման բանավեճեր ունեցան Կոստանդնուպոլսում Հակոբ Սանահնեցին կամ Քարաբնեցին<sup>243</sup>, Գագիկ II Բագրատունին<sup>244</sup>, Գագիկ Աբասյանը<sup>245</sup>, Գրիգոր Մագիստրոսը<sup>246</sup>, Բագրեանդի իշխան Ատրնբերսեհը<sup>247</sup> և ուրիշներ: Աշխուժ էր նաև դավանաբանական բնույթի նամակագրությունը<sup>248</sup>:

Միջնագարում կրոնական հարցը շատ փափուկ հարց էր, նամանավանդ, որ միաբնակների և երկաբնակների հակամարտությունը շատ էր սուր: Հայերը հույներին հերետիկոս էին համարում («աստուածուրաց և նենգաւոր ազգն հերետիկոսացն»)<sup>249</sup>: Անանիա Նարեկացին նույնիսկ հրաման էր արձակել «ղթաղկեղանական մկրտեալսն կրկին անգամ

<sup>238</sup> Darrouzès, Un recueil épistolaire, p. 115.

<sup>239</sup> Ասողիկ, էջ 181:

<sup>240</sup> Նույն տեղում, էջ 182:

<sup>241</sup> Մատթ. Ուոհ., էջ 28:

<sup>242</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>243</sup> Նույն տեղում, էջ 161, 227:

<sup>244</sup> Նույն տեղում, էջ 163—178:

<sup>245</sup> Նույն տեղում, էջ 183:

<sup>246</sup> Նույն տեղում:

<sup>247</sup> Նույն տեղում:

<sup>248</sup> Նույն տեղում, էջ 39, 44:

<sup>249</sup> Նույն տեղում, էջ 96:

...մկրտել»<sup>250</sup>: Բյուզանդացիների համար էլ հերետիկոս էին հայերը («Իբերիայում, Միջագետքում, մինչև Լիկանդոս ու Մելիտենե և կից Հայաստանում ապրող հերետիկոս բնակիչները») <sup>251</sup>: Ինչպես գրում է հայոց հաշիկ կաթողիկոսը (973—992) Սեբաստիայի մետրոպոլիտին ուղղած թղթում, «ի սկիզբն թղթոյս ձերոյ և զկնի բաղում անգամ՝ եռետիկոս զմեզ յեղանակեալ էիք»<sup>252</sup>: Ռոմանոս III կայսրը, տեսնելով Սև լեռան հայադավան վանականներին, հարց տվեց. «Զի՞նչ են այն բազմութիւն հերետիկոսացն»<sup>253</sup>:

Փոխադարձ անհանդուրժողականությունն այն աստիճան էր խորացել, որ հլաթը պաշարող Դավիթ կուրապաղատի քաղկեդոնիկ զինվորները հայոց եկեղեցին գոմի էին վերածել և հարևան արաբներին առանց քաշվելու ասում էին, թե «մեք զհայ եկեղեցին և զձեր մզկիթն միապէս ընդունիմք»<sup>254</sup>: Դեռ ավելին, Կեսարիայի հույն մետրոպոլիտ Մարկոսը «ամենայն շան Արմէն (իմա՝ հայ) կոչէր»<sup>255</sup>: Նման պայմաններում Հայաստանը նվաճել ծրագրած կայսրության գործը բավականին դժվարանում էր, նա ստիպված էր հայերի հանդեպ ճկուն քաղաքականություն վարել: Բայց ոչ բոլոր կայսրերն էին գիտակցում այդ բանը: Համեմատաբար ճկուն քաղաքականություն էր վարում Վասիլ II-ը: Հայկական աղբյուրներում նրա անձնավորությանը տրված դրական գնահատականը հենց այդ մասին է վկայում: «Մեծ թագաւորն Հոռոմոց, Վասիլն, — գրում է Պողոս Տարոնացին, — զայգ ամենայն քննութիւնդ վասն հաւատոյ ոչ է արարեալ ընդ Հայս»<sup>256</sup>: Իսկ ըստ Արիստակես Լաստիվերցու, Վասիլ II-ը և նրան նախորդող կայսրերը «խնամակալութիւն ցուցին առ ազգս՝ զորս ընդ ձեռամբ ունէին»<sup>257</sup>: Իհարկե, դա չի նշանակում, որ հիշյալ կայսեր օրոք Բյուզանդիան հայադավաններին չէր հալածում: Վասիլ II-ի թագավորության սկզբնական շրջանում, գեո 979 թ. բյուզանդացիներն «արգելին զժամաձայն Հայոց ի քաղաքէն Սեբաստիոյ»<sup>258</sup>, իսկ 986 թ. «կանացի հովիւքն և մետրապօլիտն Սեբաստիոյ սկսան նեղել զազգն Հայոց վասն հաւատոյ. և զբռնութիւն ի ձեռն ա-

250 Ասողիկ, էջ 178:

251 ՏԵ՛ս ստորս, էջ 233:

252 Ասողիկ, էջ 203:

253 Արիստ. Լաստ., էջ 43:

254 Ասողիկ, էջ 268:

255 Մատթ. Ուոհ., էջ 180:

256 Պողոս Տարոնացի, էջ 273:

257 Արիստ. Լաստ., էջ 43:

258 Ասողիկ, էջ 202:



ուեալ՝ սկսան տանջել զքահանայս վասն հաւատոյ, և զգլխաւոր քահանայս Սեբաստիոյ քաղաքին երկաթեղէն կապանօք հասուցանէր ի դուռն թագաւորին: Եւ ի բանտի շարշարեալ զաւագն երիցանց զԳաբրիէլ սպանին...»<sup>259</sup>,

Ինքնրստինքյան հասկանալի է, որ վիճակը այդպիսին էր ոչ միայն Սեբաստիայում, այլև հայաբնակ ուրիշ վայրերում:

Վասիլ II-ի և, անկասկած, նրան նախորդած ու հաջորդած կայսրերի օրոք, քաղկեդոնականությունը ընդունող հայն օրենքի առջև առավելութուններ ունեւր միաբնակ հայի համեմատությամբ: Թոնդրակեցի Վրվեռը դատաստանից խուսափելու համար «Հոռոմ խոստանայ լինել...»<sup>260</sup>: Այս հանգամանքը, ինչպես նաև բռնությունները, կայսրության համար շոշափելի արդյունք տալիս էին: Օրինակ, կրոնական հալածանքների պատճառով Սեբաստիայի և Լառիսայի հայ եպիսկոպոսներ Սիոնն ու Հովհաննեսը «ի ձեռն նոյն մետրապօլտին ընկալան զժողովն Քաղկեդոնի, ի բաց կալով ի միաւորութենէն Հայոց»<sup>261</sup>: Ավելի ուշ Հակոբոս Սանահնեցին Կոստանդնուպոլսում «սակաւ մի վասն երկբնութեանն Քրիստոսի ի կողմն Հոռոմոց դարձաւ... գրեաց գիր միաբանութեան Հայոց և Հոռոմոց»<sup>262</sup>,

նման պայմաններում Հայաստանում սկսեցին սնկի նման աճել քաղկեդոնիկ եպիսկոպոսությունները<sup>263</sup>, որոնք հաճախ հանդիսանում էին Բյուզանդիայի օգտին աշխատող կենտրոններ: Այդ տեսակետից շատ հատկանշական է Վաղարշակերտ քաղաքում հաստատված և Բյուզանդիայի օգտին գործող քաղկեդոնիկ եպիսկոպոսությունը<sup>264</sup>, նա բավականին աշխույժ գործունեություն ծավալեց XI դարի 20-ական թվականների սկզբներին, բյուզանդա-վրացական պատերազմի ժամանակ: Վաղարշակերտի վրացադավան հայ եպիսկոպոս («վրացի ազգաւ») Զաքարիան ոչ միայն Վասիլ II-ի և վրաց թագաւոր Գիորգիի միջև բանագնացի դեր էր խաղում, այլ հօգուտ Վասիլի աշխատում խաբել վրաց թագաւորին («հաւանական բանիւք պատրեալ զԳէորգի») <sup>265</sup>,

259 Աստղիկ, էջ 201:

260 Արիստ. Լաստ., էջ 132:

261 Աստղիկ, էջ 202:

262 Մատթ. Ուտհ., էջ 161—162:

263 Տե՛ս Honlmann, Die Ostgrenze, S. 198—210: Thierry, Notes, p. 159—173.

264 Հավանաբար այն ստեղծվել էր VII դ. «նեբսէս Հայոց կաթողիկոս, որ ի Տայոց էր ծննդեամբ, այն որ զՎաղարշակերտոյ սուրբ Աստուածածինն շինեաց»: Տե՛ս Հովհան. Մամիկոնյան, էջ 280:

265 Արիստ. Լաստ., էջ 36:

Վասիլին տեղյակ պահում վրացական զորքի վիճակի և պատերազմին պատրաստ լինելու մասին. «Ձաքարիայն ասէ (Վասիլ II-ին), թէ Բաղում զօրս ունի (Գիորգին) որպէս ոչ այլ ոք, և հօրս զօրութեամբ և պատրաստ առ ի պատերազմել»<sup>266</sup>, Պատահական չէ, որ 1000 թ. Վասիլ II-ը Տարոնից Տայք գնալու ճանապարհին «բանակի ի դաշտին մերձ ի քաղաքն Վաղարշակերտ»<sup>267</sup>, Հենց այստեղից նա գնաց Ուխթիք<sup>268</sup>,

Վասիլ II-ը անգամ կապեր ուներ հեռավոր Անտիոքի շրջանում, Սև լեռան ստորոտում գտնվող քաղկեդոնիկ հայոց վանքի վանահոր հետ<sup>269</sup>,

Վասիլ II-ը կրոնական հարցերում տարբերվում էր մյուս կայսրերից նրանով, որ պետք եղած ժամանակ կարողանում էր սիրաշահել հայերին, ժամանակավորապես դադարեցնել հայադավանների հալածանքները, եթե դա քաղաքականությունն էր պահանջում: Եթե 979 թ., անգամ 986 թ. Սեբաստիայում հայադավաններն հալածանքի էին ենթարկվում, ընդամենը տասնհինգ տարի անց, երբ օրակարգի հարց դարձավ Տայքի նվաճումը և կայսրին պետք էր սիրաշահել հայերին, այս անգամ նա հայերին «հրամայեաց համարձակ լինել յամենայն գործս հաւատոց և հնչեցուցանել զձայն ժամահարի»<sup>270</sup> Սեբաստիայի հայ եկեղեցիներում:

Վասիլի մահից հետո Բյուզանդիայի կրոնական քաղաքականությունը Հայաստանում էապես փոխվեց: Ռոմանոս III-ը «ինքնօրէն հրամանաւ կամէր նորաձևս առնել յեկեղեցիս Աստուծոյ»<sup>271</sup>, նա անգամ զինվորագրեց Սև լեռան հայադավան վանքերի միաբաններին<sup>272</sup>, Դրությունը է՛լ ավելի վատթարացավ Հայաստանի նվաճումից հետո, երբ արդեն հայերին սիրաշահելու որևէ ձգտում չկար. «յորժամ առաւ Հայք ի Յունաց,—գրում է Մատթեոս Ուռհայեցի,— արգելաւ ամենայն շարութիւնն Հոռոմոց յազգէն Հայոց. և զկնի այսորիկ հնարեցան այլ կերպիւ պատերազմ յարուցանել ընդ ազգն Հայոց. նստան ի քննութիւն հաւատոյ և այսու ատեալ զհանդէս պատերազմին, զմարտի և զկռիւս և զաղմուկ յեկեղեցի Աստուծոյ կարգեալ հաստատեցին: Ի Պարսից

266 Արիստ. Լաստ., էջ 36:

267 Ասողիկ, էջ 277:

268 Նույն տեղում, էջ 278:

269 Մատթ. Ուռհ., էջ 50:

270 Ասողիկ, էջ 276:

271 Արիստ. Լաստ., էջ 43:

272 Նույն տեղում:



պատերազմէն յօժարութեամբ փախչին և զամենայն ճշմարիտ հաւատացեալքս Քրիստոսի ի հաւատոյն ջանային խափանել և խախտել...»<sup>273</sup>,

Եթե մինչև Հայաստանի նվաճումը կայսրութիւնը հիմնականում գործ ուներ հայագավանների հետ, նվաճումից հետո նա դեմ առ դեմ կանգնեց հայոց կաթողիկոսութեան: Հայկական պետականութեան վերացման պայմաններում հայոց կաթողիկոսութիւնը հայերին կենտրոնացնող գլխավոր ուժն էր: Բյուզանդիան շէր կարող այդ հանգամանքը հաշվի չառնել: Այդ իսկ պատճառով նրա առաջին գործերից մեկն եղավ Անիում հայոց կաթողիկոսութիւնը վերացնելը: Եթե 1045 թ. Անիի գրավումից անմիջապէս հետո «Հայաստանի և Իբերիայի» բնակաթեմի առաջին կառավարիչ Իասիտեսը, գալով իր նոր մայրաքաղաքը՝ Անի «անշափ պատուով մեծարէ զհայրապետն Պետրոս»<sup>274</sup>, հասկանալի է, վերջինիս բյուզանդասիբական գործունեութեան համար, ապա նրա անմիջական հաջորդը՝ Կատակալոն Կեկավմենոսը մեկ տարի անց «ոչ ըստ առաջին պատուոյն մեծարէ զհայրապետն»<sup>275</sup>: Դեռ ավելին, Պետրոս կաթողիկոսին, հայոց հոգևոր պետին, հեռացնում են Անիից, նախ ուղարկում Արծն, այնտեղից էլ Կոստանդնուպոլիս, որտեղ երեք (կամ չորս) տարի պահելուց հետո, նրա մշտական բնակութեան վայր է նշանակվում Սեբաստիա քաղաքը, քանզի բյուզանդական կառավարութիւնը շէր համարձակվում նրան թողնել վերադառնալու Անի, վախենալով, որ նա «երթեալ ապստամբեցուցանէ զԱնի»<sup>276</sup>: Սեբաստիայում երկու տարի մնալուց հետո Պետրոս կաթողիկոսը վախճանվում է, իսկ նրան հաջորդող Խաչիկ կաթողիկոսին, Պետրոսի քեռորդուն, կայսրը նույն ձևով բերում է Կոստանդնուպոլիս, երեք տարի պահում և ապա թուլյատրում գնալ Երկրորդ Հայքի Տարնտա գավառը, «քանզի անգ հրամայեցին նմա տեղի բնակութեան»<sup>277</sup>:

Հայոց կաթողիկոսութիւնն, այսպիսով, Հայաստանում վերանում է, նրա գոյութիւնը Բյուզանդիայի սահմաններում հայերի համար էական որևէ նշանակութիւն ունենալ չէր կարող. «ժառանգ աթոռոյն,— գրում է Արիստակես Լաստիվերցին,— յօտար աշխարհ հեռացեալ իբրև զգերի և զկալանաւոր»<sup>278</sup>:

273 Մատթ. Ուոհ., էջ 136:

274 Արիստ. Լաստ., էջ 63:

275 Նույն տեղում:

276 Նույն տեղում, էջ 82:

277 Նույն տեղում:

278 Նույն տեղում, էջ 99:



Հայ եկեղեցու հզորությունը բխում էր նրա տնտեսական բարգաձաճումից: «Յորժամ էր Տէր Պետրոս յաթոռ հայրապետութեանն և ի Հայաստան աշխարհին,— գրում է Մատթեոս Ուռհայեցին,— ունէր կազմութիւն հայրենեաց՝ տուեալ ի թագաւորացն Հայոց՝ հինգ հարիւր գեղանուանի և մեծանիստ և շահաւէտ ընտիր ընտիր, նոյնպէս և եպիսկոպոսս հինգ հարիւր փառաւոր և գաւառապետս ի վերայ եօթն հարիւր թիմի հանապազ... և շէր նուաստ աթոռ հայրապետութեանն քան զթագաւորութեանն Հայոց»<sup>279</sup>: Պատմիչը դրանց հետ միասին հիշատակում է հայ եկեղեցու գանձերի մասին: Բյուզանդիան, նվաճելով Հայաստանը, զրկեց հայ եկեղեցին իր կալվածներից: Բայց գա քիչ էր կայսրության համար: Բյուզանդացիները «արարին... խնդիր բազմութեան գանձուցն ոսկւոյ և արծաթոյ Տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի»<sup>280</sup>: Բյուզանդական կառավարության հաջողվեց Կոստանդնուպոլիս տեղափոխել հայոց կաթողիկոսության գանձերը, որոնք հայտնաբերեցին «թէ անդ (Սեբաստիայում) և թէ ի Հայս»<sup>281</sup>:

Այդ բոլորն անելուց հետո կայսրությունը դիմեց մի այլ քայլի: Նա փորձեց հայոց կաթողիկոսությունը հարկատու դարձնել. Հոռոմները,— գրում է Արիստակես Լաստիվերցին,— իաշիկ կաթողիկոսին «ընդ հարկիւ կամէին արկանել»<sup>282</sup>: Իաշիկ կաթողիկոսը վճռականորեն մերժեց դա, ասելով, թե «զոր մինչև յիմ ժամանակն չէ լեալ՝ և ոչ ես հաւանիմ...»<sup>283</sup>:

Հայադավանների հալածանքները բորբոքվեցին նոր թափով հատկապես Կոստանդին Դուկաս կայսեր օրոք (1059—1067): Նա «խորհեցաւ խորհուրդ շար և կամեցաւ բառնալ և խափանել զաթոռ հայրապետութեան սրբոյն Գրիգորի ի տանէն Հայոց... յարուցանէր հալածանս և առնէր քննութիւնս պէսպէսս յաղագս հաւատոյ Հայաստանեայց ազգիս»<sup>284</sup>:

Բյուզանդական կայսրության կրոնական քաղաքականությունը Հայաստանում բացասաբար անդրադարձավ ոչ միայն հայերի վրա, այլև հենց իրենց՝ հույների: Այդ մեկ հարյուրամյակի ընթացքում հայադավանների ու քաղկեդոնականների միջև գոյություն ունեցող վիճելի ավելի խորացավ ու լայնացավ, Բյուզանդիան չկարողացավ ամուր հե-

279 Մատթ. Ուռհ., էջ 153—154:

280 նույն տեղում, էջ 137:

281 Արիստ. Լաստ., էջ 82:

282 նույն տեղում, էջ 83:

283 նույն տեղում:

284 Մատթ. Ուռհ., էջ 138: Հմմտ. նաև էջ 160—161:



նարան ստեղծել Հայաստանում, նա այնտեղ զգում էր իրեն որպես օտարական, թշնամական միջավայրում, մի բան, որ չէր կարող ճակատագրական նշանակություն չունենալ թուրքական նվաճումների ժամանակ:

11. Իիմադրողական պայքար: Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականությունը հանդիպում էր հայ ժողովրդի համառ դիմագրություն: Արաբական երկդարյա տիրապետության լուծը հազիվ թոթափած ժողովուրդը չէր ուզում դարձյալ կրել օտարի լուծը, թեկուզ և քրիստոնյայի: Դեռևս 972 թ., երբ Հովհաննես Չմշկիկը սկսեց իր արշավանքը արաբների դեմ, նա «կամեցաւ զմուտն յաշխարհն Հայոց առնել»<sup>285</sup> այսինքն ուզեց խալիֆայության վրա հարձակվել Հայաստանի վրայով, պարզ է, նպատակ ունենալով Հայաստանից էլ որոշ հողեր նվաճել: Հայերի համար Տարոնի մասին հուշերը շատ թարմ էին, ընդամենը վեց տարի էր անցել և այդ նոր վտանգի դեմ հայոց իշխանավորները ստիպված էին պատնեշ կազմել<sup>286</sup>: «Յայնժամ ամենայն թագաւորազունքն Հայոց,— գրում է Մատթեոս Ուռհայեցիին,— ազատքն և իշխանքն և ամենայն մեծամեծքն աշխարհաց տանն արևելից ժողովարարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի. թագաւորն Կապանին Փիլիպպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն, Աբաս Կարուց տէրն և Սենեքերիմ Վասպուրականիս տէրն և Գուրգէն Անձևացեաց տէրն և բովանդակ ամենայն տունն Սասանու (իմա՝ Սասունի). և բանակ հարեալ ի Հարքայ գաւառին արք իբրև ութսուն հազար: Եւ եկեալ հրեշտակ թագաւորին Հոռոմոց առ նոսա և տեսին պատրաստական զամենայն տունն Հայոց ժողովեալ ի մի վայր և երթեալ պատմեցին թագաւորին Չմշկանն...»<sup>287</sup>: Չմշկիկը չհամարձակվեց պատերազմել հայոց միասնական զինուժի դեմ: Նա միայն փորձեց գրավել Տարոնի Այծյաց բերդը, բայց անհաջող: Նրան դիմադրություն ցուցաբերեցին սասունցիք: Հայերն այդպես միասնական հանդես եկան նաև 993 թ., երբ «ելանէր մեծ տուկն Հոռոմոց և գայր բաղում զօրօք ի վերայ աշխարհին Հայոց»<sup>288</sup>: Մենք չգիտենք ոչ այդ դուքսի անունը, ոչ նրա ոտնձգությունների տարածքը, բայց գիտենք, որ «ի մտանելն նորա յաշխարհն Հայոց, ժողովեցան ընդ յառաջ նորա զօրքն Հայոց ազատացն... եղեն

285 Մատթ. Ուռհ., էջ 17:

286 Տարոնի թեև 966 թ. կայսրությունը նվաճել էր, բայց նրա Այծյաց բերդը Աշոտ III-ը պահում էր իր տիրապետության տակ և չէր զիջում Բյուզանդիային: Մատթ. Ուռհ., էջ 27:

287 Մատթ. Ուռհ., էջ 17—18:

288 Նույն տեղում, էջ 41:

պարտեալք զօրքն Հոռոմոց առաջի զօրացն Հայոց և դարձան ի փախուստ դիմօք յաշխարհն իւրեանց...»<sup>289</sup>, Սա ցույց է տալիս, որ Չմշկիկի հաջորդ Վասիլ II-ի օրոք էլ կայսրութիւնը համառորեն շարունակում էր իր փորձերը՝ զենքի ուժով նվաճել Հայաստանը, բայց և այն, որ Աշոտ III-ի հաջորդները ևս, այդ թվում և Գաղիկ I-ը կարողանում էին ի մի հավաքել Հայաստանի տարածքի վրա գոյութիւն ունեցող թագավորութիւնների և իշխանութիւնների զինված ուժերը և հաջողութեամբ ընդդիմակայել հասարակաց թշնամուն:

993 թ. հարձակումը Հայաստանի վրա կայսրութեան ձեռնարկած վերջին ճակատային հարձակումն էր, Բյուզանդիան սրանից հետո դիմեց այլ քաղաքականութեան, հարձակվել թւերով, աշխատել ջլատել հայոց միասնութիւնը, մեկ-մեկ ջախջախել հայ իշխանութիւններն ու թագավորութիւնները, նույնիսկ զենքի շղիմելով, այլ գործի դնելով Հայաստանում գործող իր գործակալներին, շխորշելով անգամ քաղաքական տեռորից:

Հայ ժողովուրդը բյուզանդական վտանգին ընդդիմակայում էր և այլ ձևով՝ բյուզանդական կենտրոնական կառավարութեան դեմ բռնկվող ապստամբութիւններում ակտիվ մասնակցութիւն ցուցաբերելով: Այդ ձևով նա ոչ միայն դեռևս անկախութիւնը պահպանած հայ իշխանութիւնների գոյութիւնն էր ուզում ապահովել, այլ ազատագրել այն շրջանները, որոնք արդեն դարձել էին կայսրութեան գոհր: Տարոնի օրինակը ամենալավ հաստատումն է այդ մտքի:

Վարդաս Սկլերոսը ազգութեամբ հայ էր: Նա 976 թ. ապստամբելով Վասիլ II-ի դեմ, հնարավոր է, նպատակ չունէր հայկական հողերն ազատագրել բյուզանդական լծից: Նրա նպատակները, հավանաբար, այլ էին: Բայց մենք իրավունք չունենք նրա կողմն անցած բոլոր հայերին համարել ապստամբներ, որոնց միտքն ու նպատակը Սկլերոսին բյուզանդական թագն ապահովելն էր: Վերջինիս ապստամբութիւնը բռնկվեց կայսրութեան կողմից Կարինի, Տարոնի նվաճումից շատ շանցած: Ապստամբ Սկլերոսին կայսր հռչակեցին նախ և առաջ հայերը<sup>290</sup> (τοιῶν Ἀρμενίων κατὰρξάντων τῆς εὐφημίας): Առաջին վայրը, որտեղ Սկլերոսը հաստատվեց՝ հայկական Խարբերդ ամրոցն էր<sup>291</sup> (Χάρπετε): Ապստամբի ձեռքում էր գտնվում հայկական Միջագետքի և Չորրորդ Հայքի զգալի մասը՝ Հիսն ալ Կ. ո. զ. Գ. Տ-ը, Հովիտը Տարոնից

289 Մատթ. Ուռն., էջ 41:

290 Տե՛ս ստորև, էջ 56:

291 Նույն տեղում, էջ 57:



հարավ, Սասնա բերդը, Անգեղտունը, Անձիտը, Թիլ Խումը՝ Արզանայից հարավ-արևելք և Հանին<sup>292</sup>: Վարդաս Սկլերոսն իրեն կայսր հռչակեց նախկին Երրորդ Հայքի մայրաքաղաք Մելիտենեում<sup>293</sup>: Ապստամբների կողմն է անցնում Բյուզանդիայում ծառայող հայկական հեծելազորը<sup>294</sup>: Սկլերոսին են միանում Մոկֆի-իշխան Զափրանիկը, ինչպես և Տարոնի իշխանի որդիներ Գրիգորն ու Բագարատը<sup>295</sup>, որոնք դրանից տասը տարի առաջ զրկվել էին իրենց տիրույթներից: Ակլերոսին է միանում բյուզանդական հայազգի զորավար Սահակ-Վահրամը<sup>296</sup>: Ապստամբները դալիս են Լիկանոս բանակաթեմը, որը Կոստանդին Միրանածինի տրվյալներով, հիմնադրվել էր հայերի կողմից և որի բնակչությունը բացարձակապես հայերից էր բաղկացած<sup>297</sup>: Սկլերոսի կողմն է անցնում Անտիոքի հայազգի դուքս Բուրցիսը (Բուրճ) հայկական զորքերով<sup>298</sup>: Նա դալիս է հայկական Մամնդավ (Մζαμανδός) քաղաքը<sup>299</sup>: Սկլերոսին է միանում նաև բյուզանդական հայազգի ծովակալ Միքայել Քուրդիկը<sup>300</sup>: Մի՞թե բոլոր այս հայերի նպատակը Սկլերոսին բյուզանդական դահին տիրանալուն օժանդակելն էր միայն: Թվում է ոչ: Նրանց նպատակն էր նախ և առաջ Բյուզանդիայի ձեռքն անցած հայկական շրջանների ազատագրումը, մնացած անկախ հայկական հողերի նվաճման կանխումը: Եվ եթե ի վերա մմենայնի նկատի ունենանք այն խոսուուն փաստը, որ Վասիլ II-ը Վարդաս Սկլերոսի դեմ հավաքագրեց բացարձակապես հույներին ('Ρωμαίοι)' «զղօրսն Բիւղանդիոնի և ՂԹրակացին և զՄակեդոնացին, հանդերձ ամենայն արևմտեայ ազգօքն»<sup>301</sup>, որոնք Սկլերոսի առաջին իսկ պարտության ժամանակ սկսեցին կոտորել գերի ընկած հայերին միայն (πολλοί τῶν σὺν αὐτῷ (τῷ Βουρτζη) ἀπώλοντο, καὶ μᾶλλον τῶν Ἀρμενίων· πάντας γὰρ τοὺς ἀλόντας τῶν Ἀρμενίων ἀπέσραττον οἱ Ῥωμαῖοι, μὴ λαμβάνοντες οἶκτον διὰ τὸ πρῶτους προσχωρῆσαι τῷ ἀποστάτῃ)<sup>302</sup>, ապա մեր ենթադրությունը Սկլերոսի ապստամբությունից բնույթի մասին կհաստատուի:

292 Մանրամասն տե՛ս Canard, Deux documents arabes p. 60—61.

293 Ասողիկ, էջ 191:

294 Նույն տեղում:

295 Նույն տեղում:

296 Տե՛ս ստորև, էջ 59:

297 Կոստանդին Միրանածին, էջ 171—172:

298 Տե՛ս ստորև, էջ 60, 61:

299 Նույն տեղում, էջ 59:

300 Նույն տեղում, էջ 60:

301 Ասողիկ, էջ 191:

302 Տե՛ս ստորև, էջ 61:

Հայերը մասնակից դարձան նաև Վարդաս Փոկասի ապստամբության, որը դարձյալ Վասիլ II-ի դեմ էր ուղղված: Նրան միացել էր մագիստրոս Չորտվանելը, Թոռնիկ աբեղայի եղբորորդին, որ «բռնացեալ էր ի կողմանս Դերջանայ և Տարօնոյ»<sup>303</sup>: Ապստամբ Չորտվանելի գրաված տարածքը՝ Դերջանն ու Տարոնը, պարզ ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը չէր հաշտվել Տարոնի կորստյան մտքի հետ:

Երբ 1022 թ. նույն Վասիլ II-ի դեմ բռնկվեց Վարդաս Փոկասի որդու՝ Նիկեփոր Ծովիզի ապստամբությունը, ապստամբը «կոշեաց ի միաբանութիւն իւր զթագաւորն Վրաց Գորգի և զորդիսն Գագկայ. զնաց յահէ նորա Դաւիթ առ նա զօրօֆն Հայոց, և աճ մեծ եղև ի վերայ Վասլին»<sup>304</sup>: Սա պարզ վկայում է, որ բյուզանդական վտանգին պատրաստ էին ընդդիմակայելու նաև հայ ու վրացի թագակիրները:

Հազվագեպ չէին և հայերի ապստամբական փորձերը հենց Բյուզանդական կայսրության սահմաններում: Սենեքերիմ Արծրունու որդիներ Ատոմն ու Ապուսահլը Սեբաստիայում շուրջ 1040 թ. ամբաստանվում են Միքայել կայսեր առաջ այն բանում, թե «կամին ապստամբել ի վերայ քո և յարուցանել քեզ վիշտս և հալածանս»<sup>305</sup>: Եթե կայսրը նրանց դեմ ուղարկում է տասնհինգ հազարանոց բանակ ակոլութոսի գլխավորությամբ, պարզ է, թե ինչպիսի լուրջ վտանգ էին նրանք ներկայացնում պետության համար: Հայ ապստամբներն այնքան հզոր էին իրենց զգում և այնքան վստահ իրենց հաջողության, որ ապստամբներից մեկը՝ Շապուհ իշխանն ասում էր Ատոմին և Ապուսահլին. «Կամի՞ք զի զղօրսդ Հոռոմոց ցիր ու ցան ածեմ ընդ երեսս դաշտաց...»<sup>306</sup>:

Տասը տարի անց Կոստանդին Մոնոմախ կայսեր օրոք ապստամբության փորձ տեղի ունեցավ Չորրորդ Հայքում: Պաղին գավառի իշխաններ, Հաբելի որդիներ Հարպիկը, Դավիթը, Լևոնն ու Կոստանդինը ամբաստանվեցին կայսեր առջև, թե «կամին ապստամբ լինել ի քէն»<sup>307</sup>: Նրանց դեմ կայսրն ուղարկեց «զօրապետս հանդերձ զօրօքն»<sup>308</sup>: Պեռոս կատապանը «սկսաւ ապականել զամենայն գաւառն. և զամենայն իշխանսն սկսաւ ի փառաց ընկենուլ»<sup>309</sup>: Նա գլխատեց Հարպիկին, իսկ

303 Ասողիկ, էջ 251:

304 Մատթ. Ուռն., էջ 51:

305 Նույն տեղում, էջ 83:

306 Նույն տեղում:

307 Նույն տեղում, էջ 109:

308 Նույն տեղում:

309 Նույն տեղում, էջ 110:



մյուս երեքին տարավ Կոստանդնուպոլիս, Մոնոմախի մոտ, որ «հրամայեաց անցուցանել զնոսս ի կղզի»<sup>310</sup>։

Հայոց պայքարը բյուզանդական լծի դեմ շարունակվեց և ապադայում, նաև Ռոմանոս IV Դիոդենեսի իշխանության օրոք<sup>311</sup>։

Բյուզանդական առաջխաղացման ու տիրապետության դեմ պայքարողների մեջ էին նաև թոնդրակյան աղանդավորները<sup>312</sup> և պատահական. չէ, որ նրանց դեմ Բյուզանդիան պայքար էր մղում դեռևս Տարոնի նվաճումից անմիջապես հետո<sup>313</sup>, պայքար, որ շարունակվեց ու ավարտին հասավ մեկ հարյուրամյակ անց՝ XI դարի կեսերին արդեն բյուզանդական ռազմական ու պետական գործիչ Գրիգոր Մագիստրոսի ջանքերով<sup>314</sup>։

12. Հայոց արտագաղթը: Բյուզանդական կայսրության բանակում ծառայող հայ սահմանապահ զորքերի հողերին վերաբերող նիկեփոր II Փոկասի (963—969) մի օրենքում ի միջի այլոց նշված է. «Ա. Եթե հայ զինվորներից (ստրատիոտներից) ոմանք, ովքեր հեռացել են [իրենց հողերից] և երեք տարի անցկացրել այլ տեղում, և վերադառնալով իրենց հողերը. գտել են ի պահ տրված ուրիշի, որպես պարգև տրված այլ՝ աչքի ընկած զինվորների (ստրատիոտների), բանակաթեմային կամ տագմատային արխոնտների, սխրանքներ կատարած զորավարների, կամ էլ [վերջապես] ուրիշ ոմանց՝ հանրօգուտ օգտագործման նպատակներով, հրամայում ենք. երեք տարին լրանալուց հետո վերադարձող հայ զինվորներն իրավունք չունեն պահանջելու և ստանալու այդպիսի հողերը»: Կայսրը բացատրում է իր օրենքի լույս աշխարհ գալու դրդապատճառները. «Որովհետև եթե հայոց անկայուն (ἀστατον) և անվերջ թափառել սիրող (πολυπλανέζ) բնավորությունն այսպիսի օրենսդրությամբ շսանձվի ... ապա ողջ հայությունը կչքանա»<sup>315</sup>։

310 Նույն տեղում, էջ 112։

311 Նույն տեղում, էջ 198։

312 Աս. Մնացականյան, Թոնդրակյան շարժման մի քանի զլխավոր հարցերի մասին, *Տեղեկագիր*, № 3, 1954, էջ 63—84։

313 Anne Comnène, *Alexiade*, ed. B. Leib, t. III, Paris, 1945, p. 180—181 Հմմտ. Բարթիկյան, Պավլիկյանների ծագումը, էջ 87—89։

314 P. M. Бартияян, Ответное послание Григория Магистра Пахлавуни сирийскому католикону, «Палестинский Сборник» вып. 7(70), 1962, стр. 130—145; *ego же*, Два послания Григория Магистра Пахлавуни (XI в.) относительно еретиков-тондракитов, «Палестинский Сборник», вып. 9(72), 1962, стр. 133—140.

315 Nov. XVIII Imp. Nicephori Phocae de fundis millitum Armenicorum et homicidarum. Jus graecoromanum, cura J. Zepi et P. Zepi, vol. I, Scientia Aalen, 1962, p. 247.

Հայկական ծագում ունեցող կայսրը, պետք է ենթադրել, բոլորից լավ գիտեր իր հայրենակիցների ազգային բնավորությունը: Մի բան պարզ է, որ X դարի կեսերին հայերը համարվում էին անկայուն և թափառող ժողովուրդ: Բնածին էր այդ բնավորությունը, թե՛ ձեռք բերովի, դժվար է ասել, բայց հավանաբար ձեռք բերովի. գտնել դրա ակունքները հնարավոր չէ, բայց մի բան պարզ է, որ այդ «բնավորությունը» հայոց ծանր ճակատագրի արդյունք էր, նրանց պետականության գոյության անբնականոնությունը: Այդ գիծը սկսեց հանդես գալ դեռևս Հռոմի ու Պարսկաստանի՝ Հայաստանի համար մղվող պայքարի ժամանակաշրջանում և ամբողջ հասակով կանգնեց 387 թ. Հայաստանի՝ Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև բաժանվելուց և հայոց Արշակունյաց հարստության վերջնական անկումից հետո (428):

Հայ ժողովուրդը, ընկնելով երկու խոշոր տերությունների լծի տակ, իր ֆիզիկական գոյությունն ապահովելու համար ջանում էր շարունակ խուսանավել նրանց միջև, գաղթել Հայաստանի մեկ կեսից մյուսը:

Եթե մինչև VII դարը ներառյալ «թափառող» էր հայոց ավագանին և նրա զինված ուժերը, ապա հաջորդ դարերին մենք նկատում ենք մի այլ երևույթ: Գաղթում են հայ ժողովրդի աշխատավոր խավերը, այն էլ ոչ կամովին, այլ բռնի: VIII դարի կեսերին Կոստանդին V կայսրը Կաբինից և Մելիտենեից հայեր է բռնագաղթեցնում Թրակիա: Այնտեղ նրանք տարածում են պավլիկյան աղանդը, մի բան, որ ամենից լավ է վկայում բռնագաղթեցվածների ժողովրդական խավերին պատկանելու մասին:

Արաբական տիրապետության օրոք հայերի արտագաղթի պրոցեսը է՛լ ավելի ուժեղացավ: Խալիֆայության տիրապետությունը Հայաստանում արմատապես տարբերվում էր Պարսկաստանի և Բյուզանդիայի տիրապետությունից: Խալիֆայության համար բոլոր հայերը «անհավատներ» էին, նրանց քաղաքական, տնտեսական լուծք բոլորի վրա էր ընկած, կրոնական հալածանքների էին ենթարկվում բոլորը: Նրանց ավելի քան երկուհարյուրամյա տիրապետության օրոք Հայաստանում չի կառուցվել և ոչ մի եկեղեցի: Եթե այդուհանդերձ Բյուզանդիայում հնարավոր էր վիճակը որոշ չափով բարելավել՝ քաղկեդոնիկ դառնալով, բոլոր դեպքերում մնալով քրիստոնյա, արաբական տիրապետության օրոք պետք էր պապենական հավատքից հրաժարվել, դառնալ մահմեդական, մի բան, որ անընդունելի էր հայերի համար: Այս պայմաններում հայերին մնում էր արտագաղթի մեկ ճանապարհ՝ քրիստոնյա Բյուզանդիա տանողը:

Հայերի բռնագաղթեցումները շարունակվեցին նաև Հովհաննես



Չմշկիկի օրոք (969—976): Նա ևս Պոնտոսից և հայկական շրջաններից հայեր գաղթեցրեց նույն Թրակիա: Հայոց ավագանին նույնպես շարունակում էր գաղթել: Մեծաթիվ հայերի առկայությունը բյուզանդական ավագանու կազմում VIII—XI դդ. դրա լավագույն վկայությունն է:

Հայերի արտագաղթը մինչև XI դարը, թեև բացասաբար անդրադարձավ Հայաստանի վրա, բայց այն չի կարելի աղետալի համարել: Ժողովրդի բացարձակ մեծամասնությունը, այդ թվում և ավագանին, մնաց երկրում, հակառակ այն ֆիզիկապես ոչնչացնելու խալիֆայության ջանքերին: Հայոց պետականության վերականգնումը IX դարի վերջերին, դրա լավագույն ապացույցն է:

Հայաստանի՝ Բյուզանդիայի կողմից նվաճվելու ընթացքում հայոց արտագաղթն արդեն այլ բնույթ է կրում: Եթե մինչև այդ կայսրությունը ջանքեր էր թափում ձերբազատվելու հայոց քաղաքական, հոգևոր ու ռազմական ղեկավարներից, այժմ տեսնում ենք, որ նա դեմ չէր Բյուզանդիա գաղթեցնել հայկական ամբողջական նահանգների բնակչությունը: Նա հավատացած էր, որ այդ ճանապարհով ավելի հեշտությամբ կյուրացնի երկիրը: 1021 թ. տեղի ունեցավ Վասպուրականի գաղթը, շուրջ 14.000 հոգի, չհաշված կանանց ու երեխաներին, հաստատվեցին Սեբաստիայում: Սա նախընթացը շունեցող երևույթ էր հայոց պատմության մեջ:

Հայոց արտագաղթի մի նոր հոսանք սկիզբ առավ Շիրակի (1045) և Վանանգի (1065) նվաճումից հետո: Հայերը գաղթում էին արևմուտք, հարավ և հարավ-արևմուտք: Այդ շարժմանն էլ ավելի ուժեղ թափ հաղորդեցին սելջուկ թուրքերի նվաճումները: Միայն Ուռհայեցին հիշում է XI դարի երկրորդ կեսին կատարված տասնհինգից ավելի թուրքական խոշոր արշավանքներ Հայաստանում, որոնց ընթացքում հողին հավասարվեցին, կրակի ճարակ դարձան, կողոպտվեցին ու ավերվեցին բազում նահանգներ՝ Վասպուրականը, Ապահունիքը, Տարոնը, Բալահովիտը, Բարձր Հայքը, Փոքր Հայքը, Գուգարքը, Շիրակը, Տայքը, Սասունը, քաղաքներ՝ Արծնը, Բերկրին, Արճեշը, Մանաղկերտը, Մելիտենեն, Աբբաստիան, Թլմուխը, Կարինը, Անին, Կարսը և շատ ուրիշներ, բնակչությունը սրի քաշվեց ու գերության տարվեց: Նկարագրելով թուրքերի արշավանքները մինչև 1064 թ., մինչև Անիի առումը, Արիստակես Լաստիվեցին իր պատմածն ավարտում է սովորական դարձած խոսքերով, թե «մարդակոտոր սատակամբ ապականեցին գաւառս բազումս, և առ և գերի բազում առեալ իջին յաշխարհն իւրեանց»<sup>316</sup>, Բայց Անիի գրավ-

316 Արիստ. Լաստ. էջ 68, նաև 94, 102, 107, 110.

ման մասին խոսելուց հետո, պատմիչի մոտ արդեն հանդես են գալիս Նոր դարձվածքներ. «եղև գործ պատերազմի յերկիրս Հայոց ընդարձակեցուցանել զբնակուրիւնս իւրեանց, և տիրել ի վերայ սահմանի այլոյ րազաւորութեան»<sup>317</sup>: Մի խոսքով, նա արդեն գրում է թուրքերի հաստատման մասին Հայաստանում:

Երկրում ստեղծվեց անապահով վիճակ. «արեանարբու և գազանացեալ ազգն թուրքաց,—գրում է Մատթեոս Ուռհայեցին,—տարածեցաւ ընդ ամենայն երեսս երկրի, որ ոչ մնաց գաւառ ի խաղաղութեան, այլ կայր մատնեալ ամենայն տունն քրիստոնէից ի սուր և ի գերութիւն. և արգելաւ վաստակ հողագործութեան յերկրէ, և հատաւ կերակուր հացի, և սրով և գերութեամբ հատան մշակք և վաստակաւորք, և առհասարակ տարածեցաւ (սով) ընդ ամենայն աշխարհս: Եւ անմարդ եղեն բազում գաւառք, և քակեցաւ տունն արևելից...»<sup>318</sup>:

Սելջուկ թուրքերի՝ փոքրասիական թերակղզով առաջխաղացման պատճառով, հայերը, անգամ միևնույն սերնդի, ստիպված էին դարձյալ վերցնել գաղթականի ցուպը: Սեբաստիա ապաստանած հայերի մի մասը շարժվում է հարավ՝ Կիլիկիա, Միջագետք և Ասորիք<sup>319</sup>: «Պանդխտեցան երկրորդ անգամ և եղեն վտարանդիք,—գրում է Արիստակես Լաստիվերցին,—... ցրուեցան զօրէն աստեղաց մոլորական կոչեցելոց»<sup>320</sup>:

Հայոց արտագաղթը XI դ. ժողովրդի և երկրի համար ունեցավ ծանր հետևանքներ: 1021 թ. սկսվեց մի պրոցես, որ պիտի շարունակվեր շուրջ 900 տարի: Այն հնարավորություն տվեց օտար նվաճողներին ավելի հեշտությամբ հաստատվելու իրենց նվաճած երկրում, ավելի հեշտությամբ յուրացնելու այն ու մարսելու, մի բան, որ ճանապարհ բացեց նորանոր գաղթերի:

Հայոց արտագաղթը դեպի արևմուտք, հարավ և հարավ-արևմուտք ունեցավ և այլ հետևանքներ: Արևմտյան Հայաստանը հռոմեական, ապա և բյուզանդական բազմադարյան տիրապետության օրոք բռնել էր ապազգայնացման ու ձուլման ճանապարհը, սկսել էր կորցնել իր ազգային դեմքը: Հուստինիանոս I-ի բոլոր շորս Հայքերը գնում էին ապազգայնացման ճանապարհով: Նրան նպաստեց նաև մի շարք շրջանների նվաճումը արաբների կողմից և արաբ տարրի հաստատումը: Առաջին գավառը, որտեղ նրանք հաստատվեցին, Աղձնիքն էր, հետագա-

317 Արիստ. Լաստ., էջ 135:

318 Մատթ. Ուռհ., էջ 217:

319 Michel le Syrien, Chronique, t. III, pp. 133, 188.

320 Արիստ. Լաստ., էջ 22:



յում նրանք հասան մինչև Կարին<sup>321</sup>։ Այդ ճանապարհով խալիֆայությունն ապահովում էր բյուզանդա-արաբական սահմանի անվտանգությունը։ Երբ այդ շրջանները վերանվաճվեցին կայսրության կողմից, Բյուզանդիան բոլոր միջոցներով ջանում էր այդտեղ հաստատել հայ բնակչություն, ունենալով նույն դրդապատճառները։ Հիմնադրվեցին այսպես կոչված, «Հայկական բանակաթեմերը» ('Αρμενιακά θέματα)։ Հայերի գաղթը դեպի արևմուտք XI դարում նպաստեց ապազգայնացման ճանապարհը բռնած հայկական այդ շրջանների հայացման։ Նրանք այն աստիճան հայացան, այնտեղ այնքան շատ հայեր բնակվեցին. որ Սենեքերիմ Արծրունին Սեբաստիայում, Գագիկ II Բագրատունին Կապադովկիայում հայերի շրջանում շարունակում էին հայոց թագավորներ համարվել, իսկ նրանց տիրույթները՝ հայկական թագավորություններ, թեև և Արծրունյաց, և Բագրատունյաց թագավորությունները վաղուց էին վերացել։ Բագրատունյաց թագավորությունը դադարեց գոյություն ունենալուց 1045 թ., բայց Մատթեոս Ուռհայեցին այդ թագավորության վերջ է համարում 1079 թ., Գագիկ II-ի սպանության տարին. «և աստանօր դադարեալ եղև թագաւորութիւնն ի տանէն Հայոց և յագգէն Բագրատունեաց։ Յայսմ վայրի լցեալ կատարեցաւ մարգարէութիւն արքայն Ներսէսի Հայոց կաթողիկոսին՝ որ ասաց. «Եթէ ջնջելով ջնջեսցի թագաւորութիւն ի տանէն Հայոց»<sup>322</sup>։

Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը վերացավ 1021 թ.։ Վերջին թագավոր Սենեքերիմը գաղթեց Սեբաստիա, ուր և մեռավ 1025 թ.։ Բյուզանդական հեղինակները նրան անվանում են պարզապես մագիստրոս և պատրիկ, Կապադովկիայի զորավար (πατριχιος... και στρατηγός Καπαδοκίας)<sup>323</sup>, բայց հայերի համար նա շարունակում էր թագավոր կոչվել։ Սենեքերիմի մահից հետո, — գրում է Մատթեոս Ուռհայեցին, — «Հաստատեալ լինէր քագատրական իշխանութիւնն տանն Հայոց յաւագ որդին իւր ի Դաւիթ...»<sup>324</sup>, Եվ այնուհետև. «Յայսմ ժամանակի մեռանէր արքայն Դաւիթ՝ որդին Սենեքարիմայ արքային Հայոց, և տայ զիշխանութիւնն հայրենեաց իւրոց ի յեղբայրն իւր յԱտոմ...»<sup>325</sup>։ Եվ այդ բոլորը Սեբաստիայում և Կապադովկիայում, Բյուզանդական կայսրության փոքրասիական տարածքի հենց սրբտում...

321 Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները, էջ 58—59։

322 Մատթ. Ուռհ., էջ 220։

323 Տե՛ս ստորև, էջ 86։ Նաև «Советы и рассказы», стр. 282.

324 Մատթ. Ուռհ., էջ 55։

325 Նույն տեղում, էջ 65։

Հայկական միաձույլ բնակչության առկայությունը Հայաստանի և Բյուզանդիայի հարավում հնարավորություն տվեց ստեղծելու փոքր հայկական իշխանություններ, որոնք տվյալ էտապում դրական դեր խաղացին հայ բնակչության այլազգիներից պաշտպանելու գործում: Ամենակարևորներից մեկը Փիլարտոս Վարաժնունու իշխանությունն էր Մարաշ (Գերմանիկիա) կենտրոնով, որն ստեղծվեց Մանազկերտի ճակատամարտից (1071) անմիջապես հետո: Միջայել Ատտալիատեսը շատ հանգամանորեն է խոսում այս իշխանության հիմնադրման նախադրյալների և տարածքի մասին: Փիլարտոսը, — գրում է նա, — «հաստատվեց անանցանելի լեռներում, թուրքական անցուղիներից հեռու ընկած վայրերում, նա պարսպապատեց կիրճերի մեծ մասը, ամրացրեց լեռնանցքները և այդ ձևով թշնամու համար այդ վայրերը անառիկ դարձրեց: Այնուհետև նա իր շուրջ հավաքեց բազմաթիվ հայերի և փախրստականների և նրանցից կազմեց ռազմունակ ուժ: Նա հպատակություն չհայտնեց նախորդ կայսեր (Միջայել VII-ին), սկսեց ինքնուրույն գործել, ձեռք գցել կայսեր պատկանող քաղաքները և ընդարձակել իր տիրույթները»<sup>326</sup>:

Փիլարտոսի ծրագրերը շատ հեռուն գնացող էին: Նա ջանում էր իրեն ենթարկել շրջակա հայկական իշխանությունները, այդ թվում և Սասունի Թոռնիկյանների հզոր իշխանությունը<sup>327</sup>, 1083 թ. նա իրեն ենթարկեց Ուռհան<sup>328</sup>: Իրեն բավական հզոր զգալով, Փիլարտոսը որոշեց հայոց կաթողիկոսությունն իր իշխանության սահմաններում հաստատել, և եթե այդ ծրագրին հավանություն տվեց հայոց կաթողիկոս Գրիգորիսը, նշանակում է, որ վերջինս էլ Փիլարտոսի իշխանությունն այդպիսին էր համարում<sup>329</sup>: Հոնիում և Մարաշում հաստատվեց հայոց կաթողիկոսություն և այնտեղ աթոռակալեցին կաթողիկոսներ Սարգիսը, Թեոդորոսը և Պողոսը:

Հայկական իշխանություն ստեղծվեց նաև Մելիտենեում: Նրա իշխանն էր Գաբրիելը, Ուռհայի կառավարիչ Թորոս կուրապաղատի աները: Գաբրիելն այնքան հզոր էր, որ կարողացավ 1096 թ. հաջողությամբ հակադրվել Խլիճ-Արսլանին, ապա և Սեբաստիայի Դանիշմանյաններին (1100):

Բյուզանդիայի հարավում՝ Քեսունում հիմնադրվեց մեծ իշխան Գող Վասիլի իշխանությունը, որի շուրջ հավաքվեցին հայոց զորքի մնացորդ-

<sup>326</sup> *Mlch. Attal.*, էջ 301: Նաև՝ ստորև, էջ 270.

<sup>327</sup> Մատթ. Ուռհ., էջ 206:

<sup>328</sup> Նույն տեղում, էջ 223—224:

<sup>329</sup> Նույն տեղում, էջ 210:



ները, Բագրատունյաց ու Պահլավունյաց բեկորները: Գող Վասիլն իր իշխանությունը տարածեց մի շարք այլ շրջանների վրա և հաջողությամբ պայքարում էր ոչ միայն թուրքական, այլև խաչակիրների հրոսակների դեմ: Նա Քեսունում հայկական կաթողիկոսություն հաստատեց, մի բան, որ այդ իշխանության հզորության մասին է վկայում: Գող Վասիլի ժամանակ հայկական իշխանություն կար Բիրում և Մրծբինում, որը գլխավորում էին Վասակի որդիներ Ապլղարիպն ու Լիկոսը:

Այս բոլոր իշխանությունները, որոնք հայկական գաղթի արդյունք էին, շատ կարճ կյանք ունենալով, բազմաթիվ հզոր թշնամիների՝ թուրքերի, բյուզանդացիների, խաչակիրների հարվածների տակ ստիպված հեռացան հրապարակից: Միակը, որ կարողացավ ընդդիմակայել բազմաթիվ հակառակորդների, Կիլիկիայի Ռուբինյանց իշխանությունն էր, որ 1198 թ. վերածվելով թագավորության, ամբողջ երեք հարյուրամյակ գոյություն ունեցավ: Կիլիկիան դարձավ այն ապահով ապաստարանը, որտեղ փրկություն էր գտնում այլադգինների բռնություններից փախչող հայությունը: Կիլիկիայում այնքան շատ հայություն հավաքվեց, երկիրն այնքան հայացավ, որ Բյուզանդիայում «Կիլիկիա» և «Հայաստան», «կիլիկեցի» և «հայ» հասկացությունները հոմանիշ դարձան, անհրաժեշտություն առաջացավ բյուզանդական աշխարհագրական բառարաններում պարզիպարզո գրել, թե Կիլիկիան Հայաստան է նշանակում, իսկ կիլիկեցի՝ հայ (Κιλικια ή Ἀρμενία, Κιλικ ὁ Ἀρμένιος)<sup>330</sup>:

Կապաղովկիան, Ասորիքը, Միջագետքը, Կիլիկիան շրջաններ էին, որոնք առավել կամ պակաս չափով Հայաստանին հարևան էին, կամ տարածքային առումով նրան շատ մոտիկ էին գտնվում: XI դարում հայերն սկսեցին գաղութներ հիմնադրել հայրենիքից շատ հեռու գրտնըվող երկրներում: Մատթեոս Ուռհայեցին ցույց է տալիս, որ XI դարի վերջում Եգիպտոսում կար 30.000-անոց հայկական գաղութ, որ այդ ժամանակներում Եգիպտոսում հիմնադրվեց հայկական պատրիարքություն<sup>331</sup>, Առաջացավ «սփյուռք» հասկացությունը: Եվ պատահական չէ, որ բազմաթիվ հայկական գաղութներ, որոնք հակառակ որ ստեղծվեցին հետագա դարերում, իրենց սկիզբը համարում էին XI դարը, այն կապում էին Անիի՝ թուրքերի կողմից գրավվելու հետ, իրենց էլ, որպես կանոն, Անիից գաղթածներ:

<sup>330</sup> Hieroclis Synecdemus, recensuit Augustus Burckhardt, Lipsiae, 1893, p. 6: Նաև Diller, Byzantine lists, p. 33: Հմմտ. Հեթում պատմիչ, էջ 20—21. «Եւ այս Կիլիկիա այժմ Հայք կամ Արմենիա յորջորջի»:

<sup>331</sup> Մատթ. Ուռհ., էջ 211, 229, 231:

\* \* \*

Ստորև տալիս ենք Հովհաննես Սկիլիցեսի պատմական երկի երկրորդ մասի և Շարունակության ամբողջական թարգմանությունը, որը (եթե նկատի չունենանք շորս հարյուր տարի առաջ Գարիուսի կողմից իրականացված լատիներեն թարգմանությունը՝ առանց Շարունակության) հանդիսանում է միակը: Հրապարակի վրա կան եվրոպական լեզուներով, ինչպես և վրացերեն, բուլղարերեն, սերբերեն առանձին հատվածների թարգմանությունները միայն: Թարգմանությունն իրականացված է բյուզանդական պատմիչների երկերի Բոննյան մատենաշարում Ի. Բեկկերի աշխատասիրած բնագրից, իսկ Շարունակությունը՝ Ե. Ցուլակիսի կազմած քննական բնագրից: Մեր թարգմանությունն ավարտված էր, երբ լույս տեսավ Սկիլիցեսի երկի՝ Թուրնի կազմած քննական բնագիրը: Թարգմանիչն ամենայն բժախնդրությամբ համեմատեց իր թարգմանությունն այդ հրատարակության հետ և եկավ այն հաստատ համոզման, որ քննական բնագիրը Բոննի հրատարակությունից իմաստային առումով և ոչ մի էական տարբերություն չի պարունակում: Թարգմանիչն ընդունեց բնագրի՝ Թուրնի կատարած ենթաբաժանումները: Թարգմանության լուսանցքներում տրված թվական տվյալները, որպես կանոն, վերցված են Թուրնի հրատարակությունից, բայց Հայաստանին վերաբերող թվական նշումները մեծամասամբ մերն են, քանզի Թուրնի մոտ նրանք հաճախ ճիշտ չեն<sup>332</sup>: Կրկնողություններից խուսափելու համար ծանոթագրություններում բյուզանդական տերմինների բացատրությունների վերաբերյալ հղում ենք «Բյուզանդական աղբյուրների» երկրորդ գրքին («Կոստանդին Միրանաժին»), եթե այդ տերմինները այնտեղ մեկնաբանված են:

332 Օրինակ, Դավիթ կուրապաղատի մահվան թվականը Թուրնը նշում է 990 թ., երբ նա մեռել է 1000 թ.: Նա 990 թ. է նշում նաև Վասիլ II-ի և վրաց թագավոր Գիորգի I-ի միջև կնքված հաշտության պայմանագիրը, երբ Գիորգին սկսեց թագավորել 1014 թ.: Գագիկ II-ի գահակալումը Թուրնը նշում է 1040 թ., երբ Գագիկը թագավոր օժվեց 1043 թ.: Եվ այլն:



ΙΩΑΝΝΟΥ ΤΟΥ ΣΚΥΛΙΤΖΗ  
ΣΥΝΟΨΙΣ ΙΣΤΟΡΙΩΝ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԿԻԼԻՑԵՍ  
ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆՑ

ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆՑ՝ ՍԿՍՅԱԼ ԿԱՍԿԻՆՈՒՄ  
ԳԵՆԻԿՈՆԻՒՄ [ՊԱՇՏՈՆԸ ՎԱՐԱԾ] ՆԻԿԵՓՈՐ ԿԱՅՍԵՐՉ  
ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԻՍԱՀԱԿ ԿՈՄՆԵՆՈՍԻ  
ԹԱԳԱՎՈՐԵԼԸ, ՇԱՐԱԳՐՅԱԼ ԿԱՍԿԻՆՈՒՄ ՎԻԳԼԱՅԻ ՄԵԾ  
ԳՐՈՒՆԳԱՐԻՒՄ [ՊԱՇՏՈՆԸ ՎԱՐԱԾ] ԿՈՒՐԱՊՈԱԳԱՏ  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԿԻԼԻՑԵՍԻՑ

Պատմության համառոտությունը հենրից հետո գերազանց կատարեցին նախ Գեորգիոս Վանականը<sup>5</sup>, որ սրբազնագույն պատրիարք Տարասիոսի<sup>6</sup> սինկելլոսի<sup>7</sup> [պաշտոնը] վարեց, իսկ նրանից հետո Ագրոսի վանահայր Թեոփանես խոստովանողը<sup>8</sup>: Նրանք ամենայն բարեխղճությամբ հետազոտելով պատմական գրքերը, պարզ ու հասարակ ոճով համառոտեցին, առանց խորանալու տեղի ունեցած դեպքերի էություն մեջ: Նրանցից Գեորգիոսը [իր շարադրանքն] սկսելով աշխարհի արարչագործությունից, այն հասցրեց մինչև բռնակալները, ես նկատի ունեմ Մաքսիմիանոսին և նրա որդի Մաքսիմինոսին<sup>9</sup>: Իսկ Թեոփանեսը նրա [շարադրանքի] վերջն իր համար սկիզբ անելով, համառոտեց մնացած ժամանակագրությունը, հասցնելով [մինչև] նախկինում գենիկոնի [պաշտոնը վարած] Նիկեփոր կայսեր վախճանը: Նրանից հետո ոչ ոք չնվիրվեց նման գործի: [Ճիշտ է], ոմանք փորձեր արեցին, ինչպես, օրինակ, վարդապետ Սիկիլիացին<sup>10</sup>, մեր ժամանակակից՝ փիլիսոփաների հյուպատոս և հյուպերտիմոս Պսելլոսը<sup>11</sup> և ուրիշներ, բայց նրանք գործին ի միջի այլոց լծվեցին, բազում կարևոր [հարցեր] շրջանցելով, ճշմարտության դեմ մեղանչեցին, հաջորդներին էլ օգուտ չտվեցին, [քանզի] սոսկ կայսրերին թվեցին, ցույց տվեցին, թե ով ումից հետո տիրացավ գայիսոնին, և ոչինչ ավելի: Եվ եթե անգամ թվում է նրանք կանգ են առել այս կամ այն դեպքի վրա, այդ էլ մակերեսայնորեն գրի առած լինելով, ավելի վնասեցին, քան օգուտ տվեցին: Թեոդորոս Դափնոպատեսը, Նիկետաս Պափլագոնացին, բյուզանդացիներ Հովսեփ Գենեսիոսն ու Մանուիլը, վուլուգիացի Նիկեփոր Սարկավազը, ասիացի Լևոնը, Սիդեի եպիսկոպոս եղած Թեոդորոսն ու նրա համանուն զարմիկը, որ Սեբաստիայի եկեղեցու առաջնորդը եղավ, այնուհետև



կյուզիկոսի [եպիսկոպոս] Դեմետրիոսը, վանական Հովհաննես Լյուդացին<sup>12</sup>, յուրաքանչյուրն իր առջև անձնական նպատակ դնելով, մեկը, ասենք, կայսեր ներքողյան [գրեց], մյուսը՝ պատրիարքի պարսավագիր, երրորդը՝ բարեկամի գովք, ամեն մեկը պատմության զգեստի մեջ սեփական դիտավորությունն դնելով, հեռացան հիշյալ աստվածակիր այրերի սկզբունքներից: Իրենց ապրած ժամանակի դեպքերը երկար բարակ [շարադրելով], մի քիչ էլ վերից սկսելով, [գրածին] պատմությանն ձև տալով, մեկը՝ համակրությանմբ, մյուսը՝ հակակրությանմբ, երրորդը՝ հաճոյանալու համար, մի ուրիշն էլ որևէ մեկի կարգադրությանմբ, յուրաքանչյուրն իր պատմությունը շարահարեց, որոնք միևնույն հարցերում իրարից տարբերվելով, ունկնդիրներին գցեցին շփոթության ու տարակուսանքի մեջ: Իսկ մենք հավանություն տալով հիշյալ այրերի<sup>13</sup> ցանքին, հույս ունենք, որ [սույն] համառոտությունը պատմությունն սիրողներին շատ օգտակար կլինի, հատկապես նրանց, ովքեր գերադասում են դյուր[ընկալելին] դժվար[ընկալելից], այն կտա համառոտ, ավելորդություններից բեռնաթափված պատկերը տարբեր ժամանակներում տեղի ունեցած դեպքերի: Մենք վերցրինք վերոհիշյալ հեղինակների արժանահավատ պատմությունները, մի կողմ թողնելով այն, ինչ նրանց մոտ ասված է աշառությանմբ կամ հաճոյանալու միտումով, շըրջանցեցինք անհամաձայնություններն ու հակասությունները, հրաժարվեցինք այն ամենից, ինչ առասպելապատում համարեցինք, հավաքեցինք արժանահավատը և վստահելին: Դրա վրա ավելացրինք այն, ինչ բանավոր իմացանք տարեց մարդկանցից: Այդ բոլորի համառոտությունը տալով, մենք հաջորդ սերունդներին թողեցինք փափուկ, ինչպես ասում են՝ աղացած սնունդ, որպեսզի վերոհիշյալ պատմիչների գրքերի ընթերցողները ի դեմս այս գրքի [փաստերը] ստուգելու հնարավորություն ունենան, իրենց համար ուղեկից, հետևեն նրան, քանզի ընթերցումը հուշեր է առաջացնում, հուշերը սնում և ընդարձակում են հիշողությունը, իսկ անհոգությունն ու անփութությունը, ընդհակառակը, բթացնում են հիշողությունը, դրան հետևում է տեղի ունեցած իրադարձությունների մասին հիշողությունը մթազնոզ և շփոթող մոռացությունը: Իսկ նրանց համար, ովքեր ձեռքի տակ չեն ունենա պատմական [հիշյալ գրքերը], այս համառոտությունը ուղեցույց կլինի և հետազոտելով ավելի ընդարձակապատում շարադրանքները, իրադարձությունների մասին ավելի կատարյալ տեղեկություններ կստանան...<sup>14</sup>

## Ռ Ո Մ Ա Ն Ո Ս

[10 նոյեմբեր 959—15 մարտ 963 թթ.]<sup>15</sup>

1. Կոստանդին [Միրանաթինի]<sup>16</sup> վախճանվելու և հանդերձ-  
10—XI յալ աշխարհը գնալու առնչությամբ, իշխանությունն անցնում է  
—959 նրա որդի Ռոմանոսի ձեռքը: Նա բարձր պաշտոնների նշանակեց  
իրեն բարյացակամ ու ցանկալի մարդկանց և [իր] թագավորու-  
թյունն հնարավորին չափ ամրապնդելու դիտավորությամբ ին-  
դիկտիոնի նույն երրորդ տարվա զատկի օրը<sup>17</sup> մեծ եկեղեցում<sup>18</sup>  
22—IV իր որդուն էլ կայսր թագադրեց<sup>19</sup> ձեռամբ Պոլիեկտոս պատ-  
—960 րիարքի<sup>20</sup>:

2. Հաջորդ տարին նա Պեգեի պալատում<sup>21</sup> մի որդի էլ ու-  
նեցավ որին կոչեց իր հոր՝ Կոստանդնի անունով<sup>22</sup>:

3. Լինելով երիտասարդ, նա իրեն տվեց հաճույքների, իսկ  
հասարակաց հոգսերը թողեց պրեպոզիտոս<sup>23</sup> և պարակիմոմենոս<sup>24</sup>  
Հովսեփին, մականունը, Բրինգաս: Իր [Ռոմանոսի] միակ հոգսը  
կնաբարո ու պիղծ մարդուկների, անբարոյական կանանց, մի-  
մոսների ու ծաղրածուների հետ զբաղվելն էր: Նա, իշխանու-  
թյունն իր ձեռքն առնելուց հետո, ինչ-որ լպիրշ արարքների հա-  
մար Կոստանդին կայսեր սպառնալիքի տակ վանականի սքեմն  
հագած ու մինչև նրա վախճանը թաքնվող ոմն ներքինի Հովհան-  
նես քահանայի, վանականի սքեմից ազատեց, քահանայի հան-  
դերձներ հագրեց ու դասեց իր սենեկապանների թվին: Պո-  
լիեկտոսը շատ էր նեղվում և ջանք թափում կայսեր վրա ճնշում  
գործել՝ հեռացնելու համար նրան իր սպասավորությունից, որ-  
պես վանականի ուխտը դրժողի: [Կայսրը] մերժեց, պատճառա-  
բանելով, որ [Հովհաննեսը] վանականի սքեմն էր հագել ոչ թե  
իսկականից, նա որևէ հոգևորականից օրհնություն էլ չէր ստա-  
ցել, այլ [Կոստանդին] կայսեր վախից [ստիպված]: Պոլիեկտո-  
սը խաբվեց և թողեց նրան: Այստեղ բավական աշխատեց նաև

\* Անկյունավոր փակագծերի մեջ առնված բառերը թարգմանչինն են, կոր փակագծե-  
րի մեջ առնված բառերը՝ հեղինակինը:



Հովսեփ: Հովհաննեսը մինչև Ռոմանոսի վախճանը աշխարհական ու երիտասարդին վայել կյանք վարեց: Նրա վախճանվելուց հետո նա վերստին հագավ վանականի սքեմը, բայց իր մտայնությունը չփոխեց:

4. Այդ տարի կայսրը մագիստրոս<sup>25</sup> Նիկեփոր Փոկասին, (որը դեռ Կոստանդին կայսեր կողմից արևելից սխոլերի գոմեստիկոս<sup>26</sup> էր նշանակվել և արևելքի սարակինոսների դեմ բազում հաղթանակներ տարել<sup>27</sup>, գլխովին պարտության մատնել Տարսոնի ամիրա Կարամոնին, Հալեպի [ամիրա] Համդունին, և Տրիպոլիսի [ամիրա] Եզիդին)<sup>28</sup>, տալով բազմաթիվ ընտիր ղինվորներ<sup>29</sup> և լավ համալրված նավատորմիդ, Կրետեի սարակինոսների դեմ ուղարկեց: Նավելով դեպի կղզի և առաջին անգամ ափ ամառ դուրս գալով, նա պարտություն մատնեց իրեն ընդդիմակայելու ելած սարակինոսներին, նրանց փախուստի մատնեց և իր զինվորներով անվտանգ ափ ելավ: Նա խոր խրամատով ու ցցերով պաշտպանված ամուր ցանկապատնեշ շինեց, իր նավերը՝ խարսխեց ալեկոծությունից կատարելապես անվտանգ ծովախորշերում. ամեն ինչ ապահով կերպով կարգի բերելով, նա եռանդագին լծվեց կղզու քաղաքների պաշարման աշխատանքին, ամբողջ յոթ ամիս գործի դրեց պաշարողական բոլոր մեքենաները և քանդելով պարիսպները, գրավեց քաղաքներ ու բերդեր: Ինդիկտինի 4-րդ տարվա մարտ ամսի 7-ին նա գրոհով վերցրեց [կղզու] ամենամուր քաղաքը, որ տեղացիները Խանդաքս<sup>30</sup> էին անվանում, գերեց կղզու ամիրա Կուրուպեսին, նրանից հետո կղզու առաջին դեմքը հանդիսացող Անեմասին: Նվաճելով բովանդակ կղզին<sup>31</sup>, նա մտադիր էր ավելի երկար մնալ այնտեղ, կարգավորելու նրա գործերը, բայց [երկրում] կանխասացություն էր տարածվել, թե այն հռոմայեցի այրը, որ գրավելու է [Կրետե կղզին], անխուսափելիորեն դառնալու է հռոմայեցիների կայսր<sup>31ա</sup>: Կղզու գրավման լուրը հասնելուն պես, Ռոմանոսը, Հովսեփի խորհրդով, Նիկեփորին այնտեղից ետ կանչեց: Նիկեփորի Կրետեում գտնված ժամանակ, Ռոմանոսը ջանալով, որ արևելքի արաբները, և ամենից առաջ Հալեպի ամիրա Համդունը, ռազմունակ ու մյուսներից ավելի գործունյա մի մարդ, արևելքը շասպատակեն, լեռն Փոկասին, Նիկեփոր Փոկասի եղբոր, մագիստրոսի պատվաստիճանը շնորհելով, ուղարկեց [արևելից սխոլերի] գոմեստիկոսի պաշտոնը վարելու<sup>32</sup>: Նա անցնելով [Ասիա] և Ադրասոս կոչվող վայրում<sup>33</sup> հան-

դիպելով Համդունին, նրան գլխովին պարտության մատնեց ու ոչնչացրեց: Մարտում ընկածներին հաշվելն անհնարին էր, իսկ գերվածներն ու քաղաք ուղարկվածներն այնքան շատ էին, որ քաղաքի տներն ու ագարակները ստրուկներով լցվեցին<sup>34</sup>: Նրանց առաջնորդ Համգունը միայն կարողացավ փոքրաթիվ մարդկանցով խուսափել վտանգից և գնալ իր երկիրը: Երբ Լևոնը [քաղաք]<sup>35</sup> մտավ, կայսրը նրան մեծ սիրալիրությամբ ընդունեց, նրա պատվին հաղթական շքերթ կազմակերպեց<sup>36</sup>, ըստ արժանվույն պարգևներ շնորհեց, նաև պատիվներ ու բարձր աստիճաններ բոլոր նրա հետ աչքի ընկածներին:

5. Ռոմանոսի թագավորության երկրորդ տարին բազում քաղաքացիներ ձերբակալվեցին՝ նրա դեմ դավադրություն նյութած լինելու պատճառով: Դավադրության նախաձեռնողն ու կազմակերպիչը Վասիլ մագիստրոսն էր, մականունը Պետինոս և երևելիներից մի քանիսը, այն է՝ պատրիկ Պասքալիոսը, պատրիկ Վարդասը՝ Լիվոսի որդին և Նիկոլայոս Խալկոցիսը: Սրանք որոշել էին ձիարշավական մրցումների<sup>37</sup> օրը, երբ կայսրը իշներ [ձիարշավարան], սպանել նրան, իսկ Վասիլին, նստեցնելով թագավորական գահին, կայսր հռչակել: Բայց դավադիրներից մեկը՝ անունը Իոաննիկիոս, ծագումով սարակինոս, դավադրության մասին տեղյակ պահեց կայսրին նախքան այդ օրը ծագելը: Հովսեփը ձերբակալեց [դավադիրներին], նրանց բոլորին, բացի Վասիլից, խայտառակ արեցին, անգթորեն խոշտանգեցին և հենց մրցումների օրը [ձիարշավարանում] ծաղր ու ծանակի ենթարկելով, աքսորեցին ու վանական խուզեցին<sup>38</sup>: Կարճ ժամանակ աքսորում տառապելուց հետո, նրանք ետ կանչվեցին, քանզի Ռոմանոսը նրանց հանդեպ մարդասիրություն ցուցաբերեց: Միայն Վասիլ Պետինոսը, որ խելագարվել էր, վախճանվեց Պրիկոնեսոսում<sup>39</sup>: Նա իր արդար պատիժն ստացավ, քանզի շարանենգորեն Ստեփանոսին կայսր դարձնելով, այնուհետև նրան Կոստանդնի ձեռքը գցեց<sup>40</sup>:

6. Մագիստրոս Ռոմանոս Սարոնիտեսը, ծերունի Ռոմանոսի դստեր ամուսինը, տեսնելով Պետինոսի և մյուսների գլխին եկածը, և երկյուղ կրելով, որ նույնն էլ իրեն կպատահի (իր փառահեղությունը մարդկանց մեջ նախանձ ու կասկածամտություն էր առաջացրել), իր ունեցվածքը իր երեխաների միջև ցանկացածին պես բաժանեց, մնացածն էլ՝ աղքատներին, և վանականի սքեմ հագավ: Նա հաստատվեց էլեգմոն վանքում<sup>41</sup> ու մնաց եր-



կար տարիներ, հաշորդ կայսրերի կողմից արտակարգ պատիվների արժանանալով:

7. Այդ ժամանակները հրապարակ եկավ Ֆիլորեոս անունով մեկը՝ մագիստրոս Ռոմանոս Մոսելեի, ծերունի Ռոմանոսի թոռան<sup>42</sup> թիկնապահը: Սա շատ արագավազ ձիու թամբի վրա կանգնած, ձեռքին սուր բռնած, ձիու կարողացածի չափ արագ վազելու ընթացքում, սուրում էր ձիարշավարանի վազքուղիներում, սուրը վերև, ներքև պտտեցնելով և կանգնած տեղից ամենևին չսահելով:

8. Այդ օրերին տարածվեց խոշոր եղջյուրավոր անասուններին ոչնչացնող ու կոտորող կրավրա կոչվող սուր հիվանդություն, որ անցյալում էլ հռոմայեցիների երկիրն էր խուժել: Ասում են, որ դա սկիզբ առավ ծերունի Ռոմանոսի օրերում: Պատմում են, որ Ռոմանոսը Բոնոսի ջրամբարին<sup>43</sup> շատ մոտիկ տեղում ամառվա տապից հովանալու համար պալատ էր կառուցում. երբ հիմքն էին փորում, ցուլի մարմարյա գլուխ գտնվեց, որը հայտնաբերողները ջարդեցին ու կիր պատրաստելու հնոցը . գցեցին: Ահա այդ ժամանակներից մինչև օրս հռոմայեցիների համայն տիրապետության մեջ դադար չգտավ խոշոր եղջյուրավոր անասունների անկումը:

9. Ռոմանոսը կնոջ դրդամամբ փորձեց իր մոր՝ Հելենեին և քույրերին հեռացնել արքունիքից և արգելափակել Անտիոքոսի պալատում<sup>44</sup>: Հելենեն, իմանալով այդ մասին, լաց ու կոծ բարձրացրեց, անեծք թափեց որդու գլխին, «րից նա երկյուղեց<sup>45</sup>: Նրան թույլ տրվեց մնալ տեղում, իսկ քույրերին դուրս հանելով, Ստուդիոնի [վանքի]<sup>46</sup> վանահոր Հովհաննեսի միջոցով միանձնուհի խուզեց: Բայց երբ [Հովհաննեսը] հեռացավ, նրանք հրաժարվեցին միանձնուհու սքեմից և աշխարհիկ կյանք էին վարում: Իսկ Հելենեն, իր դուստրերի հեռացման առթիվ մեծ ապրումներ ունեցավ և մի փոքր անց, ինդիկտիոնի 5-րդ տարվա սեպտեմբեր ամսի 20-ին վախճանվելով, թագավորավայել թաղվեց հոր դամբարանում:

10. Նիկեփոր Փոկասը, ինչպես նախապես ասվեց, կարգադրություն ստացավ Կրետեից վերադառնալ, բայց նրան թույլ չտվեցին մուտք գործել մայրաքաղաք<sup>47</sup>, այլ հրաման ստացավ համայն զորքով գնալ արևելք: Համգունը, կրած պարտությունից սթափվելով, սկսել էր հզորանալ: Մարտունակ զորք հավաքելով, նա հարմար առիթի էր սպասում հռոմայեցիների պետության

վրա հարձակվելու: Բայց Փոկասը, մուտք գործելով Ասորիք, համառ ճակատամարտում նրան հաղթեց, գլխովին պարտության մատնեց, հալածեց Ասորիքի խորքերը, գրոհով վերցրեց Բերիա քաղաքը<sup>48</sup> բացի միջնաբերդից, որպես ավար մեծ հարստություն և ռազմագերիներ վերցրեց, ազատագրեց այնտեղ կապանքների մեջ պահվող քրիստոնյաներին, և տուն ուղարկեց:

15—III 11. 6471 թվի, ինդիկտիոնի 6-րդ տարվա մարտ ամսի 15-ին  
963 24 տարեկան հասակում վախճանվեց Ռոմանոս կայսրը, թագավորելով 13 տարի, 4 ամիս և 5 օր<sup>49</sup>: Ոմանք ասում են, թե նա ժամանակից շուտ վատնեց իր մարմինը՝ խայտառակ ու վավաշոտ արարքներում, իսկ ուրիշներն էլ գտնում են, որ նրան թունավորեցին<sup>50</sup>:

## Վ Ա Ս Ի Լ Ե Վ Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ի Ն

[16 մարտ 963—16 օգոստոս 963 թթ.]

1. Նրա իշխանությունը ժառանգեցին իր որդիներ Վասիլն ու Կոստանդինը<sup>51</sup>՝ իրենց Թեոփանո մոր հետ: [Ռոմանոսի] վախճանից երկու օր առաջ նա դուստր էլ ունեցավ, որին Աննա կոչեցին:

2. Ռոմանոսը բարձրահասակ էր, թեև հորից կարճ, համեստ էր, ուներ հեզ ու մեղմ բնավորություն: Հակառակ իր երիտասարդ տարիքին, նա սուր միտք ուներ և ընդունակ էր, պետական գործերը վարելու շատ հմուտ, եթե, իհարկե, սպասավորները թույլ տային նրան դրսևորելու այդ գծերը: Բայց այդ ամենամտերիմները նրան մղեցին դեպի երիտասարդության հատուկ հաճույքները, որպեսզի իրենք հասարակաց գործերին ձեռք զցելով, անհաշիվ հարստություն դիզեն, որով նրան անգործունյա ու անկարող դարձրին:

963 3. Ինդիկտիոնի նույն՝ 6-րդ տարվա ապրիլ ամսին տիրուհու<sup>52</sup> հրամանով, հակառակ Հովսեփի վճռական ընդդիմակայության<sup>53</sup>, որ նախկինում էլ էր նա ցուցաբերում, նիկեփոր Փոկասը Կոստանդնուպոլիս մտավ: Նա ձիարշավարանում Կրետեից ու Բերիայից բերած ավարով հաղթական երթ կազմակերպեց: Նա Հովհաննես Մկրտչի հանդերձից մի կտոր էլ բերեց, որ Բերիայում գտավ պահված: Բրինգասը վախենում էր [Փոկասից] և



կասկածում նրա վրա: [Փոկասը] սակայն նենգությամբ ու երկերեսանիությամբ կարողացավ նրան խաբել, ահա թե ինչպես. Փոկասը իր թիկնապահներից մեկի հետ ճաշի ժամանակ դնում է Հովսեփի տունը և դուռը թակելով, հրամայում դռնապանին հայտնել իր գալստյան մասին: [Դռնապանը] հայտնում է, [Փոկասը] թույլտվություն ստանում ներս մտնելու, ապա առանձին մի կողմ քաշելով Հովսեփին, նրան ցույց տալիս մազե հանդերձները, որ իր հագուստների տակ էր հագել և երդումներով հավաստիացնում, թե ինքը վանականի կյանքի կողմնակից է և վաղուց հազած կլիներ [վանականի] սքեմը, աշխարհիկ կյանքի հոգսերից կհրաժարվեր, եթե այդ բանին արգելք չկանգներ կայսրերի՝ Կոստանդնի և Ռոմանոսի<sup>54</sup> հանդեպ իր տածած համակրանքը, և որ ինքը մտադիր է կատարել իր նպատակը: Նա աղաչեց իզուր տեղ իր վրա չկասկածել: Հովսեփը, տեսնելով դա, իսկույն նրա ոտքերն է ընկնում, ներողություն խնդրում, հավաստիացնում, թե չի հավատա նրա դեմ ուղղված և ոչ մեկի ամբաստանություններին:

4. Բրինգասը կասկածում էր նաև Ստեփանոս կայսեր վրա<sup>55</sup>, որ դեռ կենդանի էր, աքսորում՝ Մեթիմնեում<sup>56</sup>, նա ամեն կերպ ջանում էր, որ նրան արտակարգ զգոնությամբ հսկեն: Սակայն [Ստեփանոսը] ավագ շաբաթվա տոնին, ստանալով սուրբ հաղորդությունը, հանկարծակի մեռավ, առանց որևէ պատճառի: Նրա գլուխը Թեոփանոն կերավ, թեև նրանից շատ հեռու էր ապրում:

968/ 969 5. Բուլղարների թագավոր Պետրոսը<sup>57</sup> իր կնոջ մահվան [առթիվ] իբրև թե ցանկանալով վերականգնել խաղաղությունը, կայսրերի հետ հաշտության պայմանագիր կնքեց, որպես սլատանդ տալով իր երկու որդիներին՝ Բորիսին և Ռոմանոսին: Փոքր անց Պետրոսը վախճանվեց, իսկ նրա երկու որդիները Բուլղարիա ուղարկվեցին՝ իրենց հոր թագավորությունն ստանալու և կոմսաձագերի վտանգի առաջն առնելու<sup>58</sup>. Դավիթը, Մովսեսը, Ահարոնն ու Սամուիլը Բուլղարիայում մեծ դեր խաղացած կոմսերից մեկի որդիները, ապստամբություն էին բարձրացրել և տակնուվրա էին անում Բուլղարիան<sup>59</sup>: Այդպիսին էր ահա վիճակն այնտեղ:

6. Բրինգասը Նիկեիոսի կողմից մեր սլատմած ձևով խաբվելով և թողնելով նրան տուն գնալ<sup>60</sup>, զղջաց, նա շատ վատ զգաց. մտածելով, որ հիմարի պես բաց է թողել արդեն ցանցը



զցած որսին: Նա մտահոգված էր այն հարցով, թե ինչպե՞ս, ի՞նչ մեքենայությամբ կպրծնի այդ գլխացավանքից: Նա ամենանպատակահարմարը գատեց նամակ գրել մագիստրոս Հովհաննես Չմշկիկին<sup>61</sup>, մի քաջ ու գործունյա, Փոկասից հետո հոռմայեցի ղորավարների մեջ ամենաանվանի մարդուն, որ տվյալ պահին Անատոլիկոնի զորավարն էր<sup>62</sup>, ինչպես նաև շատ հայտնի և անվանի մագիստրոս Ռոմանոս Կուրկուասին<sup>63</sup> արևելից ստրատելատին<sup>64</sup>, և պատիվներ, նվերներ ու շնորհներ խոստանալով, ոտքի հանել՝ Փոկասին տապալելու: Նամակներ գրվեցին, որոնց միտքը հետևյալն էր. եթե նրանք ոտքի կանգնեն ու տապալեն Փոկասին, նրան վանական խուզեն, կամ որևէ կերպ մեջտեղից հանեն, ապա արևելից սխուլերի գոմեստիկոսի բարձրագույն իշխանությունը կստանա Հովհաննեսը, իսկ արևմուտքի գոմեստիկոսինը՝ Ռոմանոսը: Երբ նամակները հանձնվեցին հիշյալ մարդկանց, նրանք, Փոկասի նկատմամբ լինելով բարյացակամորեն տրամադրված, իսկույն կարդալ են տալիս նրան նամակները և կոչ անում զենքի դիմել ու մտածել ինչ-որ քաջ ու խիզախ գործ կատարելու: Եթե նա զլանա կամ խուսափի, սպառնացին իրենց ձեռքով սպանել նրան: [Փոկասը] մահվան սպառնալիքից սարսափած համաձայնվեց և ինդիկտիոնի նույն՝ 6-րդ տարվա հուլիս ամսի երկուսին, Չմշկիկի դրդմամբ արևելից համայն զորքերի կողմից հոռմայեցիների կայսր հռչակվեց<sup>65</sup>:

963

7. Դա այդպես էր ըստ մեկ վարկածի: Բայց մի վարկած էլ կա, որ ավելի ճիշտ է թվում, թե [Փոկասը] վաղուց ցանկություն ուներ թագավորության տիրանալու և նրան այնքան չէր խորովում [թագավորության] սերը, ինչքան կայսրուհի Թեոփանոյի: Մայրաքաղաքում գտնվելու ժամանակ [Փոկասը] հանդիպել էր նրան և իր ամենահավատարիմ սպասավոր Միքայելին<sup>66</sup> բազմիցս ուղարկել նրա մոտ: Ահա դրա պատճառով է, որ Բրինգասը կասկածում էր [Փոկասի] վրա: Երբ նրա [կայսր] հռչակվելու մասին լուրը հասավ Կոստանդնուպոլիս, իրարանցում առաջացավ, հասարակաց հոգսերը հոգացող Հովսեփը ահուգողի մեջ ընկավ, նա ամենևին չգիտեր ի՞նչ անել, քանզի իրեն քաղաքացիները, իր ներփակ բնավորության պատճառով, չէին սիրում: Երբ նիկեփոր Փոկասը ամբողջ զորքով, ներբողվելով<sup>66ա</sup> իջավ Խրիսուպոլիս<sup>67</sup>, Բրինգասը մտածեց որևէ մեկին կայսր հաստատել<sup>68</sup>, ուզեց այդ միջոցով բանակի թափը կոտրել: Երբ Փոկասը կայսր հռչակվեց, նրա հայր վարդասը<sup>69</sup>,



963

որ այդ պահին մայրաքաղաքում էր գտնվում, ապաստան է հայցում Մեծ եկեղեցում, իսկ [Փոկասի] եղբայր Լևոնը, թեև ուժեղ հսկողութեան տակ էր գտնվում, փախուստի դիմեց և միացավ իր եղբոր: Բրինգաւր սրտաբեկ եղավ, ընկավ անելանելի դրութեան ու սարսափի մեջ: Դժվարին կացութեան մեջ նա ի վիճակի չէր սիրաշահել ամբոխին, խաբել զանգվածներին: Երբ պետք էր հեզ ու շոյող խոսքերով մեղմել զանգվածների թափը, նա ընդհակառակը գրգռեց ու գազազեցրեց նրանց. երբ բոլորը շտապում էին Մեծ եկեղեցի, նա զանգվածներին սպառնում էր, դիմելով նրանց մեծամիտ ու կոպիտ խոսքերով, թե «Ըստ ձեր հանդրգնութեան ու անամոթութեան վերջ կտամ, այնպես կանեմ, որ դահեկանով գնված ցորենը ծոցում տեղավորվի»<sup>70</sup>: Դեռ մի օր էլ չէր անցել այն պահից, երբ նա այդ բանն ասաց, (կիրակի օր էր, օգոստոս ամսի իննին), երբ նույն օրվա երեկոյան Վասիլը, Կոստանդին կայսեր պարակիմոմենոսը<sup>71</sup>, որ Հովսեփին չէր սիրում և թշնամաբար էր նրա հանդեպ տրամադրված, իր բարեկամներին ու ազգականներին սեփական սպասավորներով քաղաքի բազում շրջաններն ուղարկեց, իր հակառակորդների բնակարանները: Երկուշաբթի օրվա առաջին ժամից մինչև վեցերորդ ժամը նրանք քանդեցին, հողին հավասարեցրին քաղաքացիների բազում տներ, որոնցից ամենաերևելին Հովսեփինն էր: Ավերակ դարձան ոչ միայն հակառակորդ համարվող նշանավոր ու քաղաքական գործիչների բնակարանները, այլ բազում հասարակ մարդկանց, որոնց հաշիվը չկա<sup>72</sup>: Ով երբևիցե մեկի հետ հաշիվ ուներ, իր հետ բազում անկարգների տանելով, անարգել կերպով նրան բնաջնջում էր: Նման անկարգությունների ժամանակ շատ մարդիկ էլ սպանվեցին: Այդպիսի արարքներ գործելով, նրանք քաղաքի հրապարակներում, պողոտաներում, շուկաներում ու փողոցներում նիկեփորին Բարեհաղթ էին ներբողում: [Վասիլ պարակիմոմենոսը] Մեծ եկեղեցուց աղատում է Վարդասին՝ Փոկասի հորը, թշվառ փախստականին, որի գլխին դեռ կախված էր վտանգը, իսկ մի փոքր առաջ անշափ վախճած ու գոռոզ պարակիմոմենոս Հովսեփին նրա փոխարեն [Մեծ եկեղեցին] է մտցնում՝ որպես ապաստան հայցող մի ողորմելի մարդու, որի փրկությունը կասկածի տակ էր: Վասիլ պարակիմոմենոսի մտերիմ մարդիկ տրիբերաներ<sup>73</sup> պատրաստելով, կայսերական դրոմոնր<sup>74</sup> վերցնելով, ամբողջ նավատորմիղով անցնում են Նրիսուպոլիս և այնտեղից նիկեփորին առնելով, բերում են

14—VIII Հեբրոմոն<sup>75</sup>, որտեղից իրենք և քաղաքի համայն դեմոսը, փա-  
 —963 օաբանություններով, ծափահարություններով, փողահարությամբ  
 ու թմբկահարությամբ, համաժողովրդական շքերթով Ոսկե Դըռ-  
 նից<sup>76</sup> նրան մայրաքաղաք են բերում: Լինելով Մեծ եկեղեցում,  
 նրանք Պոլիեկտոս պատրիարքին համոզում են կայսերական թա-  
 գր կապել նրա գլխին<sup>77</sup>: Պոլիեկտոսը թագադրում է նրան աստ-  
 ծո Մեծ եկեղեցու ամբիոնում<sup>78</sup>: Օրը կիրակի էր, օգոստոս ամսի  
 16-ը, ինդիկտիոնի 6-րդ տարին<sup>79</sup>:

Ն Ի Կ Ե Փ Ո Ր Փ Ո Կ Ա Ս

[ 16 օգոստոս 963—10 դեկտեմբեր 969 թթ. ]

1. [Նիկեփորը] վանական ու սինկելլոս Անտոն Ստուդիտե-  
 սին ուղարկեց, պալատից Թեոփանոյին իջեցրեց և կարգադրեց  
 Պետրիոնի պալատը<sup>80</sup> տանել: Մի փոքր անց պարակիմոմենոս  
 Հովսեփին էլ Պափլագոնիա<sup>81</sup> աքսորեց, այնտեղից էլ մի քիչ անց  
 տեղափոխեց Ասեկրեստիս կոչվող վանքը՝ Պիթիայում<sup>82</sup>: Նա ամ-  
 բողջ երկու տարի այնտեղ ապրեց և հոգին ավանդեց: [Նիկեփո-  
 րը] իր հորը՝ Վարդասին կեսար<sup>83</sup> հռչակեց:

963

2. Իսկ սեպտեմբեր ամսի 20-ին դիմակը դեն գցելով, դերա-  
 սանության վերջ տալով, օրինավոր կարգով ամուսնացավ Թեո-  
 փանոյի հետ: Նա այն ժամանակ միս էլ կերավ (այն օրից, երբ  
 նախկին կնոջից ծնված որդի Վարդասը, դաշտում ձիավարելիս՝  
 իր զարմիկ Պլևսեսի հետ խաղալիս, պատահամբ նիզակի հար-  
 վածի զոհ էր գնացել, նա հրաժարվել էր միս ուտելուց): Նա  
 կամ իսկապես ծոմ էր պահում, կամ էլ կայսրերին խաբելու  
 մտադրությամբ էր այդպես վարվում: Դա աստված գիտե, մեկ  
 էլ ինքը: Ամուսնության հանդեսը տեղի ունեցավ պալատի նոր  
 եկեղեցում<sup>84</sup>: Նրանք պետք է խորան մտնեին, Պոլիեկտոսը նրա  
 ձևնքից բռնած մոտեցավ սուրբ վանդակապատին, ինքը մտավ  
 սրբության սրբոցը, իսկ [Փոկասին] հրեց, ասելով, թե քանի չի  
 կրել կրկնամուսնացողների վերաբերյալ տույժը, իրեն չի կարելի  
 խորան մտնել: Այդ բանը Նիկեփորին վշտացրեց և նա մինչև մահ  
 [Պոլիեկտոսի] հանդեպ բարկացած մնաց: Ամենուրեք լուր էր  
 տարածվել, որը եկեղեցին քիչ չհուզեց, թե Նիկեփորը Թեոփանո-  
 յի մի զավակի կնքահայրն է դարձել: Պոլիեկտոսը դրանից ուզեց



օգտվել և հարց բարձրացրեց, կամ նա կանոնի համաձայն կհրա-  
ժարվի կնոջից, կամ կհեռանա եկեղեցուց<sup>85</sup>: Փոկասը միացավ  
Թեոփանոյին: Նա հրավիրեց քաղաքում գտնվող եպիսկոպոսնե-  
րին ու գլխավոր սենատորներին<sup>86</sup> և առաջարկեց, այդ հարցի շուրջ  
խորհրդակցել: Բոլորն ասացին, թե դա Կոպրոնիմոսի<sup>87</sup> սահմա-  
նած օրենքն է, որից պետք է հրաժարվել: Դրա վրա նրանք թողու-  
թյան մի լիբելլոս<sup>88</sup> ստորագրեցին, և հանձնեցին նրան: Երբ  
Պոլիեկտոսը դարձյալ հրաժարվեց կայսեր հաղորդություն տալ,  
կեսարը<sup>89</sup> բացեիբաց վկայեց, թե Փոկասը կնքահայր չի եղել:  
Մեծ պալատի պրոտոպապաս<sup>90</sup> Ստիլիանոսն էլ, որից, ինչպես ա-  
սում են, սկիզբ առաւ այդ լուրը, ներկայանալով սինոդին և սե-  
նատին, երդվեց, որ ինքը ոչ տեսել է, ոչ էլ լսել, թե վարդա-  
սը կամ Նիկեփորը կնքահայր է եղել: Պոլիեկտոսը, թեև համոզ-  
ված էր, որ Ստիլիանոսը բացահայտ սուտ երդում է տալիս, քա-  
վություն տվեց կնքահայրության զանցանքին և նա, ով անցյա-  
լում հանդես էր գալիս կրկնամուսնության համար տույժ սահ-  
մանելու, այս մեծ մեղսագործության կողքով անցավ:

3. Նիկեփորը իր թագավորության առաջին տարին մարտու-  
նակ զորք ու նավատորմիղ տալով, Սիկիլիայի սարակինոսների  
դեմ ուղարկեց պատրիկ Սանուիլին, իր հորեղբայր Լևոնի ապօ-  
րինի որդուն, ով նախկինում սխուլերի դոմեստիկոս էր եղել և  
ծերունի Ռոմանոսի<sup>91</sup> ժամանակ կուրացվել: [Նիկեփորը] իր  
անձի համար անպատվություն էր համարում, որ իր իշխանության  
ժրոք հռոմայեցիների կայսրությունը սարակինոսներին հարկա-  
տու է:

4. Բայց քանի որ առիթն է ներկայացել, անհրաժեշտ է ա-  
սել, թե ինչո՞ւմն է [հռոմայեցիների]՝ սարակինոսներին հարկա-  
տու լինելը, և ե՞րբ է այդ բանն սկիզբ առել: Երբ Սիրակուսա  
քաղաքը<sup>92</sup> վասիլ Մակեդոնացու<sup>93</sup> օրոք գրավվեց Աֆրիկայի սա-  
րակինոսների կողմից և ողջ կղզին ընկավ նրանց տիրապետու-  
թյան տակ, նրա քաղաքները հիմնահատակ կործանվեցին, բա-  
ցի Պանոբոմոսից<sup>94</sup>, որը հազարացիները, օգտագործելով որպես  
ռազմական խարիսխ, դիմացի մայր ցամաքին տիրացան: Այն-  
տեղից նավելով, նրանք թալանում էին կղզիները մինչև Պելո-  
պոննեսոս և այլ վայրեր, որտեղ դեռևս չէին սպասում նրանց  
հայտնվելը: Վասիլ կայսրը, ընկնելով անել վիճակի մեջ, նրանց  
ընդդիմակայելու կարող մի անձնավորություն էր փնտրում: Նա  
նպատակահարմար գտավ այդ գործը վստահել իր նախնիներից



մեկի օրոք աչքի ընկած սխուլերի դոմեստիկոս պատրիկ Նիկեփորին, մականունը՝ Փոկա:<sup>95</sup> Այս Նիկեփորը, Նիկեփոր կայսեր պապն էր, մի քաջարի ու խոհեմ մարդ, սուտծու հանդես: Բարեպաշտ, իսկ մարդկանց հանդես՝ արդար: Նա մի զորամասով անցավ Իտալիա և կարճ ժամանակամիջոցում սարակինոսներին Իտալիայից դուրս շարտելով, ստիպեց հանդիստ մնալ Սիկիլիայում: Պատմում են, թե իտալացիներն այս մարդու առաքինության հավերժական հիշատակի համար տաճար կառուցեցին, ոչ ի նշանավորումն [իրենց ձեռք բերած] ազատության, այլ արժանահիշատակ մի այլ գործի: Երբ հռոմայեցիները պետք է իրենց զորավարի հետ տուն վերադառնային, նրանք բազում իտալացիների բռնելով, ուզում էին որպես ստրուկ դիմացի ափր հանել: Երբ այդ բանն իմացվեց, Նիկեփորը մինչև Բրենտեսիոն<sup>96</sup> հասնելը (այնտեղից պետք է նավեին դեպի Իլլիրիա)<sup>97</sup> ոչինչ չսասաց, ոչ էլ որևէ կասկած հարուցեց, բայց երբ հասան [Բրենտեսիոն], ինքն անձամբ զինվորներից յուրաքանչյուրին նավ բարձրացնելով ճամփու դրեց, իսկ տեղացիներին թողեց աներկյուղ բնակվել իրենց նրկրում: Իտալիան խաղաղ ապրեց մինչև Կոստանդին Ծիրանածինի և նրա մոր օրերը: Այն ժամանակներից սկսյալ սարակինոսները դարձյալ ոտքի ելան և որևէ դիմադրության չհանդիպելով, Իտալիայի վրա ասպատակ սփռեցին: Պետությունը, համոզվելով, որ ի վիճակի չէ միաժամանակ ընդդիմակայել և՛ արևելքի, և՛ արևմուտքի սարակինոսներին, նամանավանդ, որ բուլղարներն էլ վերացրել էին հաշտության պայմանագիրը, որոշեց Սիկիլիայի սարակինոսների հետ դաշինք կնքել: Կայսերական սենեկապաններից<sup>98</sup> մեկի, Կալաբրիայի<sup>99</sup> զորավար Եվստաթիոսի միջոցով պայմանագիր ստորագրվեց, որի համաձայն [հռոմայեցիները] սարակինոսներին վճարում են տարեկան 22 հազար ոսկի:

5. Պայմանագրի ստորագրումից հետո Կալաբրիայի զորավար նշանակվեց պատրիկ Հովհաննեսը, մականունը Մուզալոն, որին, սակայն, տեղացիները, իրենց հետ դաժան վարվելու պատճառով, սրի քաշեցին և անցան Լոնգիբարդիայի ոեքս Դանդուֆոսի<sup>100</sup> կողմը: Այն ժամանակ հռոմայեցիների գալիսոնը դեռ Ռոմանոս ծերունու ձեռքում էր գտնվում, որը նայատակահարմար գտնվելով նախընտրվելով զինվորներ ուղարկել և ամբողջից պոկված մասը վերստին փրկել: Ուղարկվեց նաև Դանդուֆոսին ծանոթ թեսաղոնիկեցի Կոսմաս պատրիկը, որն անցնելով Իտալիա և



հանդիպելով Դանդուֆոսին, հորդորում էր հրաժարվել հռոմայեցիների հողերից, հաշտվել կայսեր հետ՝ թշնամու փոխարեն բարեկամ դառնալ ու դաշնակից: Սկզբում նա մերժեց, իսկ Կոսման, լինելով խոհեմ ու ողջամիտ մարդ, Դանդուֆոսին ասաց. «Իմ պարտքն էր բարեկամական փրկարար խորհուրդներ տալ, իսկ եթե դու չես ուղում ուշադրություն դարձնել իմ օգտակար խոսքերին, ապա ճշմարտության դեմ մեծապես մեղանշելուդ կհամոզվես, երբ քեզ էլ, համայն ժողովուրդին էլ մեծադուլն վտանգների ենթարկես, ի վիճակի չլինելով ընդդիմակայել այդպիսի մեծ ու հզոր պետության»: Դանդուֆոսը համոզվեց, որ պատրիկր իսկապես լավ խորհուրդ է տալիս, ընդառաջ գնաց նրա հորդորին և դաշինք կնքեց: Նա խորհուրդ տվեց ապստամբած բանակաթեմերի կառավարիչներին վերադառնալ նախկին իշխանության ներքո, ճանաչել իրենց կայսեր: Նրանք համոզվեցին, և Իտալիայում ու Լոնգիբարդիայում դարձյալ տիրեց կայուն խաղաղությունը:

6. Բուլղարների առաջնորդ Սիմեոնը<sup>101</sup>, որը հռոմայեցիների դեմ բազում հաղթանակներ էր տարել և այդ առթիվ գոռոզացել, երազում էր ձեռք գցել նաև հռոմայեցիների թագավորությունը: Նա աֆրիկացիների տեր Փատլունի<sup>102</sup> մոտ դեսպանություն ուղարկեց, կոչ անելով մայրաքաղաքի<sup>103</sup> դեմ նավատորմիդ դուրս բերել, խոստանալով իր կողմից բազմաթիվ և ուժեղ զորքով շարժվել Թրակիայի վրայով, և իրար միանալով, ցամաքով ու ծովով պաշարել մայրաքաղաքը, նրա հարստությունը հավասար կերպով իրենց միջև բաժանել, որից հետո Փատլունը պետք է տուն վերադառնար, իսկ ինքը մնար Կոստանդնուպոլսում: Բուլղարներն ահա թաքուն նավեցին դեպի Աֆրիկա, և համոզված լինելով, որ Սիմեոնի առաջարկությունը օգտակար է, իրենց հետ վերցրին երևելի սարակինոսներից ոմանց՝ որոշումը ամուր հիմքերի վրա դնելու համար: Վերադարձին, սակայն, նրանք ընկան կալաբրացիների ձեռքը և սարակինոսների հետ Բյուզանդիոն ուղարկվեցին: Կայսրը (Ժերունի Թեոֆանոսը), տեսնելով նրանց և ճշգրիտ իմանալով նրանց միջև կայացած համագործակցության մասին և շատ լավ հասկանալով, որ եթե այդ բանն իրականանա ինքը մեծ գլխացավանքի մեջ կընկնի, մտածեց մեծահոգություն ու բարեգործություն ցուցաբերելով, սարակինոսներին սանձել: Նա բուլղարներին բանտ նետեց, իսկ սարակինոսներին առատ նվերներ տվեց, իրենց տիրոջ թանկարժեք ընծաներ ուղարկեց,

նրանց անվնաս ճամփու դրեց, պատվիրելով հայտնել իրենց տիրոջ, թե հոռմայեցիներին կայսրերը սովոր են այդ կերպ փոխհատույց լինել իրենց թշնամիներին: Նա բացատրություն տվեց նաև տարեկան հարկատվության մասին<sup>104</sup>, թե ուշացրել է այն ոչ թե ինչ-որ հետաձգելու կամ ձգձգելու նպատակով, այլ երկրում տիրող տակնուվրայության պատճառով: Սարակինոսները, վերագառնալով իրենց տիրոջ մոտ, իրենց հանդեպ կայսեր ցուցաբերած վերաբերմունքի մասին պատմեցին, ներբողեցին նրա սիրալիր վերաբերմունքը, հանձնեցին նաև նրա համար նախատեսված ընծաները: Փատլունը իր լսածից գոհ մնալով, հոռմայեցիներին զիջեց իրեն պարտք մնացած հարկերի կեսը՝ քսաներկու հազարից տասնմեկ [հազարը] կտրեց: Այդ հարկը սարակինոսներին էր վճարվում [Ռոմանոսի] օրից մինչև Նիկեփորի գահ բարձրանալը: Իշխողների մեծախոհության, երկրների միջև հաստատված արդար փոխհարաբերությունների պատճառով, հպատակներն էլ անվրդով կյանք էին վարում, իսկ հարկն էլ սարակինոսներին վճարվում էր անխափան: Եթե իշխանությունը տրվի անարդար և ազահ մարդկանց, ապա դրանից հպատակ ժողովուրդն էլ է տուժում և սարակինոսների հետ կնքված հաշտությունը սասանվում: Երբ Միրանաթինը<sup>105</sup> Կրինիտես իալզին<sup>106</sup> նշանակեց Կալաբրիայի [զորավար], Աֆրիկայի ու Սիկիլիայի սարակինոսները սովի ու Կյուրենեի<sup>107</sup> սարակինոսների հետ ունեցած պատերազմի պատճառով դատապարտված էին կորուստյան, բայց Կրինիտեսն իր ազահությամբ փրկեց նրանց, իսկ իր հպատակ ժողովրդին էլ անշափ վնասեց: Նա տեղացիներից շատ էժան գներով սննդամթերք էր գնում և թանկ-թանկ վաճառում սարակինոսներին, որոնք շատ փող ունենալով և ճնշվելով սովից ու թշնամիներից, հանգիստ վճարում էին: Կրինիտեսը, սակայն, Կոստանդնի<sup>108</sup> կողմից պաշտոնանկ արվեց, խայտառակ կերպով վճարեց փողերը և մեռավ ծերության մեջ: Պատերազմի ժամանակ հոռմայեցիները ընդունեցին իրենց կողմն անցած փախստակ կարքեղոնացիների<sup>109</sup>, որոնց կարքեղոնացիները ամենևին էլ չէին պահանջում: [Սարակինոսները] նույնիսկ տարեկան հարկից հրաժարվեցին, վախենալով, որ դա կխրտնեցնի հոռմայեցիներին և նրանք կդադարեցնեն պարենի վաճառքը, իսկ իրենք սովամահության վտանգի առջև կկանգնեն: Բայց երբ պատերազմն ավարտվեց, նրանք պահանջեցին և՛ փախստակներին, և՛ հարկը: Երբ նրանց պահանջին ոչ ոք ուշադրություն չը-



դարձրեց, նրանք վերացրին խաղաղությունը և ամեն օր նավելով ավարառում էին Կալաբրիան:

7. Կոստանդին կայսրը (ինչպես և նրա աները)<sup>110</sup> շուզեց քաղցրությամբ լուծել սարակինոսների հետ ունեցած [վեճը] և վերանորոգել խաղաղությունը, այլ նպատակահարմար գտավ ավելի շուտ հարցը լուծել պատերազմով: Նա ոտքի հանեց մարտունակ զորք, նրա հրամանատար նշանակեց պատրիկ Մալակենոսին և Կալաբրիա ուղարկեց, հրամայելով միանալ երկրի գորավարին (նա մի փոքր առաջ հիշատակված Պասքալիոսն էր) և միասին զլխավորել կարճեդոնացիների ու սիկիլիացիների հրահրած պատերազմը: Նավատորմիղ էլ ուղարկվեց Մակրոտիոանենսի հրամանատարությամբ: Նրանք տեղ հասնելով, իրենց ազահության պատճառով տեղացիների գլխին անթիվ փորձանքներ բերեցին, այլ վատություններ ևս արեցին, ինչ նույնիսկ իրենք թըշնամիները չէին անի: Երբ այդ մասին իմացավ սարակինոսների ամիրա Աբուլխարեն (Փատլունն արդեն մահացել էր), գոտեպընդեց իր մարդկանց, հորդորեց չվախենալ իրենց ազգակիցների գլխին այդպիսի փորձանքներ բերող զորքից և ընդդիմակայելով, ուժեղ մարտ տվեց, փայլուն ու հոյակապ հաղթանակ տարավ: Քիչ էր մնացել զորավարներն էլ գերի ընկնեին:

8. Դրանից հետո Կոստանդին կայսրը Հովհաննես ասեկրետին<sup>111</sup>, մականունը Պիղատոս, ուղարկեց սարակինոսների հետ ամառ խաղաղության շուրջ բանակցություններ վարելու: [Սարակինոսները] սովոր չեն փքվել տարած հաղթանակներով, այլ հզոր վիճակում էլ խաղաղության կողմնակից են, դրա համար ուրախությամբ ընդառաջ գնացին և որոշ ժամտնակով հաշտություն կրեցին: [Հաշտության] վերացումից հետո նրանք դարձյալ նավելով, անցնում ու ավարառում էին Կալաբրացիներին: Կոստանդինը նրանց դեմ վերստին հետևակ ու ծովային ուժ է ուղարկում: Նավատորմիղը զլխավորում էին Կրամբեաս մականունով մեկը և Մորուլեոնը, իսկ հետևակի զորավարն էր պատրիկ Մարիանոս Արգիրոսը: Հասնելով Հիգրունտ<sup>112</sup> և նավերը ափ քաշելով, նրանք նախապատրաստվում էին Սիկիլիա նավելու: Սարակինոսները այդ լուրի վրա շփոթվեցին (այն բերնե բերան տարածվելով ծավալվեց, և իրադրությունը եղածից ավելի սարսափելի ներկայացվեց) և վախենալով փորձանքի հանդիսել, թշնամին իրենց էր մոտեցել անսպասելի կերպով, երբ իրենք անպատրաստի վիճակում էին, խուճապի մատնված լքեցին իրենց ճամբարը և Հոե-

գիտնից<sup>113</sup> փախան անցան Սիկիլիա: Պանորմոս նավելու ժամանակ նրանց գլխին սոսկալի փոթորիկ պայթեց, նավերն ալեկոծուլթյունից ջարդուփշուր եղան, բայց ավելի շուտ իրենց կողմից անարգվող Քրիստոս աստծուց, և գլխովին կորստյան մատնվեցին: Դրանից հետո ահա նրանք հոռմայեցիների հետ հաշտություն կնքեցին և խաղաղությունը անխախտ պահպանվեց մինչև Փոկասի գահ բարձրանալը:

9. Երբ նա կայսր հռչակվեց, կատարյալ խայտառակություն համարելով սարակինոսներին հարկատու լինելը, ինչպես ասացինք, Մանուիլին զինական ուժով նրանց դեմ ուղարկեց: Լինելով երիտասարդ և վերջերս զինվորական ծառայության մեջ մտած, զորավարելու անկարող և բացասական բաղում այլ գծերի տեր, ուշադրություն չդարձնելով լավ խորհուրդ տվողներին, Սիկիլիայի քարքարոտ ու դժվարանցանելի վայրերում իր համայն զորքով շրջապատման մեջ ընկավ ու գլխովին ոչնչացավ: Գերի ընկավ նաև նավատորմի ղրունգարը<sup>114</sup> ներքինի պատրիկ Նիկետասը և շղթայակապ Աֆրիկա ուղարկվեց: Ահա այսպիսի փորձանքի մեջ ընկավ Մանուիլը, դառնալով և ողջ զորքի կորստյան պատճառ:

963 վերջ. 10. Կայսրը այդ նույն ժամանակ Կիլիկիայի դեմ ուղարկեց մագիստրոս Հովհաննես Չմշկիկին, որն արդեն արևելից զորքերի դոմեստիկոս էր նշանակված: Հասնելով Ադանա քաղաքը, նա հանդիպեց համայն Կիլիկիայից զինվորագրված ընտիր հազարացիների և մարտի բռնվելով, գլխովին պարտության մատնեց: Հազարացիների մի մասը մարտի դաշտում սրի քաշվեց, իսկ մյուսը՝ շուրջ հինգ հազար հողի, ձիերից ցած իջնելով, փախուստի դիմեց մի գահավեժ ու դժվարանցանելի լեռ և ապավինելով վայրի հարմար գիրքին, սկսեց համառորեն դիմադրել հարձակվողներին: Հովհաննեսը շրջապատեց նրանց, բայց համոզվելով, որ ձիերով ի վիճակի չէ նրանց դեմ պայքարել, հրամայեց զինվորներին ձիուց ցած իջնել և ինքն էլ նրանց հետ ոտքով բարձրացավ լեռը: [Հովհաննեսը] նրանց բոլորին պարտության մատնեց ու սրի քաշեց: [Սարակինոսներից] և ոչ ոք փախուստի չդիմեց, արյունը գետի պես հոսեց բարձրից ցած, որի պատճառով լեռը «Արյան լեռ» կոչվեց: Այս սխրանքը էլ ավելի փառավորեց Հովհաննեսի անունը և սարակինոսների կատարյալ կորստյան պատճառ դարձավ:

964 11. Նիկեփոսը իր թագավորության երկրորդ տարին, ինդիկ-



տիոնի 7-րդ տարվա հուլիս ամսին, հոռմայեցիներին և դաշնակից իբերներից ու հայերից<sup>115</sup> բաղկացած ծանր զինական ուժով Կիլիկիա արշավեց, հետը տանելով նաև իր կնոջ Թեոփանոյին և նրա զավակներին: [Թեոփանոյին] նա թողեց Կիլիկիայից դուրս գտնվող Դրիզիոն կոչվող ինչ-որ բերդում, իսկ ինքը մուտք գործելով Կիլիկիա, ավերեց Անադարվա, Ռոսսոս, Ադանա քաղաքները և այլ բազում բերդեր: Նա շհամարձակվեց գնալ դեպի Տարսոն և Մոպսուեստիա<sup>116</sup>, քանի որ ձմեռն արդեն վրա էր հասել: Տեղում անհրաժեշտ քանակությամբ զորք թողնելով, նա գնաց Կապադոկիա՝ ձմեռելու:

12. Գարնան սկզբին նա դարձյալ մտավ Կիլիկիա և իր զորքերը՝ երկու մասի բաժանելով, մի մասը իր եղբայր Լևոնի՝ գլխավորությամբ թողեց Տարսոնը պաշարելու, իսկ մնացած մասն էլ ինքը վերցնելով, եկավ Մոպսուեստիա: Համառ պաշարման ենթարկելով այն, և դաշնակից ունենալով նաև [քաղաքում տարածված] սովը, նա գրավեց քաղաքի մեկ մասը. քաղաքը մեջտեղից կիսում է Սարոս<sup>117</sup> գետը, կարծես այն երկու քաղաք լինի: Երբ, ինչպես ասվեց, քաղաքի մեկ մասը գրավվեց, սարակինոսները ապաստանեցին մյուս մասում, գրավված կեսը նախօրոք ամեն կողմից կրակի տալով: Բայց կայսրը ավելի համառ պաշարմամբ գրավեց և մյուս մասը. [թշնամիներից] և ոչ ոք չկարողացավ այնտեղից ճողոպրել: Ինչ վերաբերում է Տարսոնը պաշարող կայսեր եղբայր Լևոնին, ապա նա իր զորքի մի մասը Մոնաստիրիոտեսի<sup>118</sup> գլխավորությամբ խոտ ու պարեն հայթայթելու ուղարկելով, փորձանքի հանդիպեց, քանզի այդ գործով զբաղվողները անզգուշորեն դես ու դեն ցրվեցին, իսկ տարսոնցիներն էլ գիշերով աննկատ դուրս գալով հարձակվեցին այդպես ցրված վիճակում գտնվողների վրա և շատերին կոտորեցին, այդ թվում և հենց Մոնաստիրիոտեսին: Տարսոնցիները, տեղեկանալով Մոպսուեստիայի առման մասին, և պաշարումից ու սովից նեղվելով, Լևոնի մոտ պատգամավորություն ուղարկեցին, կոչ անելով կայսեր ու պաղատելով պատժի շենթարկվել, որի դիմաց խոստացան հանձնել իրենց քաղաքը: Նա թույլ տվեց յուրաքանչյուրին որոշակի [մեծության] բեռով դուրս գալ, իսկ քաղաքի մնացած ողջ հարստության տերը դարձավ:

13. Քաղաքի գրավումից երեք օր անց Եգիպտոսից Տարսոնին օգնության հասավ մի հսկայական նավատորմի՝ լի ցորենով և այլ պարենամթերքով: Բայց կայսեր կողմից ծովափին հսկելու

965

օգոս.

նշանակված զինվորները, թույլ չտվեցին նրանց խարխսխ գցել, ոչ էլ ավի դուրս դալ: Նրանք չգիտենալով տվյալ դեպքում ինչպես վարվել, ետ դարձան, հանդիպելով սարսափելի նավաբեկության, նրանք ցրիվ եկան և՛ քամիներից, և՛ կայսեր ռազմանավերի կողմից հարձակման ենթարկվելով:

966

14. Կայսրը ավարառելով ու մոխրի վերածելով Կիլիկիայի մնացած քաղաքները, ինդիկտիոնի իններորդ տարվա հոկտեմբեր ամսին վերադարձավ Կոստանդնուպոլիս, իր հետ տանելով նաև Տարսոնի և Մոպսուեստիայի դարբասները, որոնք ոսկով պատելով, մայրաքաղաքը բերեց որպես զարդ: Մի [դարբասը] նա կանգնեցրեց ալրոպոլսի<sup>119</sup> վրա, իսկ մյուսը՝ Ոսկե Դռան պարսպի վրա: Աստծուն էլ նա ընծաներ մատուցեց, որպես իր բանակի տասանորդ՝ գերի տարված պատվական խաչերը. [նրանք տարվել էին այն ժամանակ], երբ սխուրի գոմեստիկոսը Ստիպիոտեսն էր, որը Տարսոնը պաշարելիս, իր տխմարությամբ զորքերը կատարյալ կորստյան մատնեց: Ահա դրանք նա մատուցեց աստծո Բանի իմաստության<sup>120</sup> ամենասուրբ տաճարին:

15. Իր թագավորության նույն երկրորդ տարին Նիկեփորը Կիպրոս կղզին էլ ամբողջությամբ հռոմայեցիների տիրապետությանը ենթարկեց<sup>121</sup>, պատրիկ Նիկետաս Խալկոցիսի միջոցով հագարացիներին այնտեղից դուրս շարտելով: Իսկ իր թագավորության երրորդ տարին, գարնան սկզբին, կայսրը դարձյալ ներխուժեց Ասորիք: Նա հասավ Անտիոք, բայց նրա վրա չհարձակվեց, քանզի համոզված էր, որ անտիոքացիք Կիլիկիայի քաղաքների գլխին եկած փորձանքից սարսափած իր անունն անգամ ի վիճակի չէին լինելու լսել: Շրջանցելով [Անտիոքը], նա Ասորիքի խորքերը գնաց, ավերեց Լիբանանին մերձակա ծովափնյա բազում քաղաքներ ու գյուղեր և դեկտեմբեր ամսին վերադարձավ: Անտիոքացիները սակայն համառ դիմադրություն ցուցաբերեցին, քանզի շրջակայքից քաղաք էր մտել օգնություն ցուցաբերելու բազում ժողովուրդ: Բացի այդ, հռոմայեցիների զորքի անհրաժեշտ պարենն էլ սպառվելու վրա էր, նաև երկնքից տեղացած անձրևներից մի անանցանելի ճահիճ էր գոյացել: Ահա դրա պատճառով [կայսրը] ձեռնունայն մայրաքաղաք վերադարձավ, իր հետ բերելով նաև Հիերապոլսի<sup>122</sup> առման ժամանակ այնտեղ գտած աղյուսը<sup>123</sup>, որի վրա կար մեր աստծու՝ Քրիստոսի անձեռակերտ պատկերը, ապա նաև Հովհաննես Մկրտչի մազերից արյունաներկ մի փունջ:



16. Այսպիսին էր Նիկեփորը, նա նման փայլուն ուղղամար-  
 րությամբ մեծապես ընդլայնեց հռոմայեցիների տիրապետու-  
 թյունը (նա ավելի քան հարյուր քաղաք ու բերդ գրավեց Կիլի-  
 կիայում, Ասորիքում, Լիբանանյան Փյունիկեում, որոնցից խոշո-  
 րագույններն ու անվանիններն են Անազարվան, Ադանան, Մոպ-  
 սուեստիան, Տարսոնը, Պագրասը, Սիննեֆիոնը<sup>124</sup>, Լավոդիկիան,  
 Հալեպը: Նա հարկատու դարձրեց Փյունիկեի Տրիպոլիսը և Դա-  
 մասկոսը): Բայց հաչառակ այդ բոլորին, նա ամենքի համար  
 ատելի էր, բոլորը ծարավի էին տեսնելու նրա կործանումը: Խե-  
 ինչո՞ւ, այդ մասին խոսք կլինի իր տեղում:

968

17. Նիկեփորը Անտիոքից մայրաքաղաք վերադառնալու  
 ճանապարհին Տավրոսը (որ տեղացիները Սև լեռ են անվա-  
 նում)<sup>125</sup> անցնելիս, լեռան մեջտեղում, մի անառիկ բլրի վրա  
 բերդ կառուցեց, իսկ Միքայել Բուրցիսին<sup>126</sup> պատրիկի աստիճանը  
 շնորհելով, թողեց [այդ] բերդում, անվանելով Սև լեռան զորա-  
 վար<sup>127</sup>: Նրան նա կարգադրեց արթուն հսկել ու ամեն միջոցներով  
 խոչընդոտել անտիոքացիների [քաղաքից] դուրս դալը՝ անհրա-  
 ժեշտ պարենամթերքը ձեռք բերելու նպատակով: Նա թողեց նաև  
 իր ներքինիներից մեկին, ստրուկ Պետրոսին, մի գործունյա մար-  
 դու, նշանակելով Կիլիկիայի ստրատոպեդարխ<sup>128</sup>, հրաման տր-  
 վեց զորքը ցրել՝ ձմեռելու և սսլասել իր գալստյան՝ հաջորդ տա-  
 րի: Պատմում էին, թե կայսրը կարող էր գրոհով վերցնել Անտիո-  
 քը, բայց դիտմամբ ձգձգել [քաղաքի] առումը, վախենալով տա-  
 րածում գտած կանխագուշակությունից: Բուրցի շրթներում այն  
 խոսքն էր, թե Անտիոքի գրավման հետ միաժեխ կայսրը կմա-  
 հսնա: Հարկավ, նա այդ բանից վախեցած, շհարձակվեց Անտիո-  
 քի վրա: Պետրոսին ու Բուրցիսին էլ կարգադրեց [քաղաքի] վրա  
 ոչ մի հարձակում չգործել: Նիկեփորն ահա մեր ասածի պիս-  
 անելով, մտավ մայրաքաղաք: Սակայն Բուրցիսը, լինելով Ան-  
 տիոքի կողքին և ցանկանալով հավերժական փառքի արժանա-  
 նալ, անուշադրության մատնեց կայսեր խորհուրդները, նա պիշեր  
 ու ցերեկ մտածում էր քաղաքը գրավելու ուղիների մասին: Նա  
 շարունակ գնում և համաձայնության գալու բանակցություններ  
 էր վարում անտիոքացիների հետ: Վերջիններս սակայն մեծա-  
 մրտացած հրաժարվում էին բանակցությունների մեջ մտնել:  
 Դրա վրա [Բուրցիսը] ծածուկ կերսյով բարեկամացավ մի սարա-  
 կինոսի հետ (նա Ավլաքսն էր), նվերներով ու խոստումներով  
 կաշառեց նրան և կարողացավ [նրանից] ստանալ Անտիոքի



արևմտյան աշտարակներից մեկի՝ անունը Կալլա<sup>129</sup>, շափերը: Դրանից հետո նա մինչև աշտարակի գագաթը հասնող աստիճաններ շինեց և օգտվելով մի խավար ու անձրևոտ գիշերից, ծածուկ կերպով աստիճանները հենեց պարսպին: Իր երեք հարյուր մարդկանցով նա վեր բարձրացավ և սրի քաշեց այդ, ինչպես և դրա կողքի աշտարակի պահապաններին: Իր երեք հարյուր մարդկանցով տիրանալով այս երկու աշտարակներին, նա ստրատոպեդարխի մոտ անհապաղ սուրհանդակ ուղարկեց հայտնելու, որ շտապի համայն զորքով գալ, քանզի քաղաքն արդեն գրավվել է: Պետրոսը, սակայն, այդ տեղեկությունն ստանալով, զլացավ ու խուսափեց, նա երկյուղում էր կայսեր զայրույթից, որ նրա հրամանները դրժելու սլատճառով կարող է գլխին փորձանք գա: Բուրցիսը պնդում էր, իրար ետևից սուրհանդակներ ուղարկում, կոչ անելով շտապ տեղ հասնել, քանզի ի վիճակի չէ այլևս դիմանալ պաշարման (անտիոքացիք, իմանալով աշտարակների գրավման մասին, ամեն տեղից շտապեցին ու ջանում էին պաշարել աշտարակները: Նրանք բաղում նետեր էին արձակում, բաբաններ գործի դնում, կրակ վառում, դիմում ամեն մի քայլի, ինչպես է անեին մարդիկ, որոնց գլխին կախված էր կանանց ու երեխաներով հանդերձ կործանվելու վտանգը, ովքեր չէին ուզում կորցնել արևելքի ամենաերևելի քաղաքը): Ստրատոպեդարխը, երկյուղելով, որ այսքան ու այսպիսի մարտիկների ու քաղաքի՝ իր անհնազանդության պատճառով տեղի ունենալիք կորուստը հոռմայեցիների պետությանը վնաս կբերի, իր կամքին ու ցանկության հակառակ համայն զորքով շտապ տեղ հասավ: Նա Բուրցիսի մարդկանց զտավ ու ժասպառ վիճակում, նրանք երեք օր ու գիշեր պաշարման մեջ էին: Անտիոքացիք, իմանալով [Պետրոսի] հարձակման մասին, հուսաբեկ եղան, նրանց թափը կտրվեց: Բուրցիսը առիթից օգտվելով, դարբասի մոտ իջավ, թրով կտրեց կղպանքի լծակը, բացեց դարբասները և Պետրոսին համայն զորքով հանդերձ ներս մտցրեց: Ահա այս ձևով գրավվեց մեծ ու հռչակավոր Անտիոքը<sup>130</sup>: Նիկեփորը պետք է որ ուրախանար այսպիսի քաղաքի առման առթիվ և իր [ճակատագիրը] աստծուն վստահեր, բայց նա, ընդհակառակը, տխրեց, ստրատոպեդարխին պատասխանատվության ենթարկեց, իսկ Բուրցիսի ոչ միայն եռանդն ու քաջությունը բանի տեղ չդրեց, նրա գործած սխրանքին արժանի պարգև չընորհեց, այլ գլխին լուտանքներ թափելով, պաշտոնանկ արեց, հրամայեց տնային կալանքի մեջ պահել նրան:



18. Սրա (և դեռ ասվելիքի) պատճառով ահա նիկեփորր բուրիին ատելի ու գարշելի դարձավ: Սկզբում նա մարդկանց աչքից ընկավ այն պատճառով, որ իր զինվորների գործած բաղում զանցանքները անպատիժ թողեց, ասելով, թե «զարմանալու ոչինչ չկա, որ այսքան բազմության մեջ մի քանիսն էլ անկարգություններ են գործում»: Երբ մտավ քաղաք և [իմացավ], որ բաղում թե՛ երևելի և թե՛ շարքային մարդկանց ունեցվածքը հափրշտակվել է, նա ոչ մեկին պատասխանատվության չենթարկեց, աչք փակեց անօրեն արարքների հանդեպ: Նա բավականություն էր զգում այն խայտառակություններից, այն բանից, որ անկարգ մարդիկ քաղաքացիներին վատություններ էին գործում և այն էլ այնպիսի մարդկանց նկատմամբ, որ քիչ բան շարեցին նրան գահ բարձրացնելու համար: Անվերջ արշավանքների գնալու պատճառով նա շարաշար էր գործածում հպատակ ժողովրդին, ոչ միայն հարկերը բարձրացնելով և ամեն տեսակի միջոցների գանձմամբ ու անհիմն բռնագրավումներով: Նա ի վերա ամենայնի կրճատեց այն նվերները, որ սենատին էին տրվում, այն պատճառաբանությամբ, որ պատերազմի համար փողի<sup>130</sup> կարիք կա: Դեռ ավելին. նա կտրեց բարեգործական հիմնարկություններին ու եկեղեցիներին բարեպաշտ կայսրերից ոմանց կողմից օրենքով հաստատված վճարումները, օրենք սահմանեց, որ եկեղեցիներն իրավունք չունեն ընդարձակելու իրենց անշարժ ունեցվածքը<sup>131</sup>, պատճառաբանելով, որ եպիսկոպոսները ի շարս են վատնում աղքատների դրամները, որ զինվորների թիվը կրճատվում է<sup>132</sup> և, որ ամենից վատն է, նա օրենք հրապարակեց, որի տակ ստորագրեցին նաև անկայուն ու շողոթորթ մի քանի եպիսկոպոսներ, որի համաձայն առանց իր հավանության ու թույլտվության չի կարելի եպիսկոպոս ընտրել կամ նշանակել: Երբ որևէ եպիսկոպոս էր վախճանվում, նա կայսերական մարդ էր ուղարկում, հրաման տալով չափավոր թաղում կատարել, իսկ ավելացած գումարն ինքն էր վերցնում: Նա այլ, անհրաժեշտությունից զուրկ հրամաններ էլ հրապարակեց, որոնց մասնակի շարադրելն անգամ մեծ միտք ու ճարտար լեզու է պահանջում: Նա ջանաց նաև օրենք հրապարակել՝ պատերազմներում զոհված զինվորներին մարտիրոսական պատիվների արժանացնել, հոգու փրկություն որոնելով միայն պատերազմի և ոչ որևէ այլ բանի մեջ: Նա ճնշում էր գործադրում նաև պատրիարքի ու եպիսկոպոսների վրա ընդունելու այդ վարդապետությունը: Բայց նրան-

964

ցից ոմանք քաջաբար դիմադրեցին, շթողեցին, որ նրա մտադր-  
 րածը կատարվի, առաջ քաշելով Բարսեղ Մեծի կանոնը, որի հա-  
 մաձայն պատերազմում թշնամի սպանողը երեք տարի իրավունք  
 չունի հաղորդություն ստանալու<sup>133</sup>: Այդ բոլորից բացի [Նիկե-  
 փորը] արժեքազրկեց և դահեկանը՝ հորինելով, այսպես կոչված,  
 տեսարտերոնը<sup>134</sup>: Այդ օրվանից ահա շրջանառության մեջ երկու  
 տեսակի դրամ մտավ. երբ պետք էր պետական հարկերը գանձել,  
 նա լիարժեքն էր պահանջում, բայց երբ հարցը վճարումներին էր  
 վերաբերում, արժեքազրկվածն էր բաժանվում: Թեև ըստ օրենքի  
 և տիրող սովորության, եթե դրամի վրա կա [որևէ] կայսեր պատ-  
 կերը, ապա (եթե այդ դրամը քաշով պակաս չէ) նույն արժեքն  
 ունի, նա օրենք հաստատեց, համաձայն որի նախապատվություն  
 ունի իր [պատկերը կրող] դրամը, իսկ մյուս կայսրերի [պատ-  
 կերը] կբող դրամների արժեքը իջեցրեց: Դրանով նա մեծապես  
 վնասեց հպատակներին, այսպես կոչված, ռազմագերիների փո-  
 խանակությունների ժամանակ: Եվ, որ ամենավատն է, պետու-  
 թյունը նման բեռի տակ գտնվելու պատճառով, ապրանքների  
 գների և ոչ մի էժանություն չեղավ: Թեև վատ բաները շատ-շատ  
 էին, բայց մարդկանց ամենից շատ գազազեցնողը պալատի պա-  
 րսպի կառուցումն էր: Պալատի շուրջ կային բազում գեղեցիկ ու  
 հսկա շինություններ, որոնք նա քանդեց և նրանց տեղ թշվառ քա-  
 ղաքացիների դեմ ուղղված միջնաբերդ, բռնակալի կացարան կա-  
 ռուցեց, ներսում պահեստներ ու հացահատիկի ամբարներ, որոնք  
 լցրեց պարենով, կերակուր եփելու և հաց թխելու փոքր: Նրան  
 կանխագուշակել էին, թե պալատի ներսում պետք է մահանա:  
 Նա, թվում է, չգիտեր, որ եթե քաղաքը աստված չպահի, պահա-  
 պանն իզուր է արթուն մնում<sup>135</sup>: Պարսպի կառուցումն ավարտելու  
 օրն էլ նա մեռավ, հենց այն պահին, երբ շինարարության վերա-  
 կացուն բերեց ու նրան հանձնեց բանալիները:

19. Մի ուրիշ բան էլ պատահեց, որ էլ ավելի գրգռեց նրա  
 դեմ կուտակված ատելությունը: Սուրբ Զատիկի տոնի օրը նա-  
 վաստիներին ու հայերի միջև տեղի ունեցած ընդհարման ժամա-  
 նակ բաղում մարդիկ սպանվեցին<sup>136</sup>, քիչ էր մնացել զոհ դառնար  
 նաև [քաղաքի] էպարքոս<sup>137</sup> Սիսինիոս մագիստրոսը: Այդ առթիվ  
 լուր տարածվեց, որ Նիկեփորը, զայրացած լինելով քաղաքացի-  
 ների հանդեպ, որպես խառնակությունների առիթ տվողների,  
 մտադիր է ձիարշավությունների օրը դեմոսին ծուղակը գցել և  
 պատժել: Մի փոքր ժամանակ անց, երբ ձիարշավական [մրցում-



ներն] էին տեղի ունենում, նիկեփորը, ուղենալով քաղաքացիներին ցույց տալ, թե ինչ բան է պատերազմը, գուցե և ավելի ճիշտ քաղաքացիների մեջ երկյուղ սփռելու համար, ոմանց հրամայեց սրերը մերկացնելով, ռազմախաղ կատարել, իբրև թե գիտողներին զվարճացնելու համար: Երբ գա տեղի ունեցավ, դիտողները, իրենց տեսածի նպատակին անտեղյակ, ենթադրելով, որ տարածված լուրն արդեն կյանքի է կոչվում, վազքով շտապեցին դեպի դիք ու նեղ ելքերը և իրար տրորելով, կոտորվում էին: Բոլորն էլ իրար ոտնատակ լինելով գլխովին կկոտորվեին, եթե չնկատեին, որ կայսրը հանգիստ ու անշարժ նստած է իր բազկաթոռին: Դեմոսը նրան անշարժ տեսնելով և համոզվելով, որ տեղի ունեցածը [կայսեր] կամքից անկախ եղավ, դադարեցրին փախուստը:

20. Քրիստոսի համբարձման տոնի օրը նիկեփորը Պեգեում<sup>138</sup> պաշտոնական շքերթ կազմակերպեց: Վերադարձին, ձիարշավարանում սպանված մարդկանց ազգականները նրան հացավաճառների հրապարակում լուտանքներով դիմավորեցին, անվանեցին ոճրագործ ու մարդասպան, ցեղակիցների արյամբ պրղծված: Նրանք նրա վրա հող ու քարեր էին շարտում՝ մինչև Կոստանդին Մեծի հրապարակը: [Նիկեփորը] սարսափից կքարանար կմնար, եթե հարգարժան քաղաքացիներից ոմանք չկանխեին դա, և խռովարարներին շքեին: Նրանք [կայսեր] ներբողելով մինչև պալատ ուղեկցեցին: Ահա այս բոլորի պատճառով նա դիտեր, որ ատելի է քաղաքացիներին և նրանց հարձակումից վախենալուց էր, որ միջնաբերդը կառուցեց: Բայց ճակատագրից նա շխուսափեց: Երբ թվում էր, թե ամեն ինչ բարովոք վիճակում է, նա վախճանվեց: Թե ինչպե՞ս, իր տեղում կասվի<sup>139</sup>: Իր թագավորութայն շորրորդ տարին, ինդիկտիոնի 10-րդ տարվա հունիս ամսին, [կայսրը] գնաց Թրակիայի քաղաքները շրջելու: Հասնելով, այսպես կոչված, մեծ խրամը, նամակ գրեց Բուլղարիայի կառավարիչ Պետրոսին<sup>140</sup> թույլ շտալ թուրքերին<sup>141</sup> անցնել Իստրոս գետը<sup>142</sup> և ասուպատակել հոռմայեցիների [շրջանները]: [Պետրոսը] սակայն կայսեր ասածին ականջ չկախեց և ամեն տեսակ սլատրվակներ առաջ քաշելով, հրաժարվեց [ենթարկվել], որի վրա նիկեփորը Խերսոնի կառավարչի որդի Կալոկիրեսին, պատրիկի պատվաստիճանը շնորհելով, Ռուսիայի իշխան Սվյատոսլավի մոտ ուղարկեց<sup>143</sup>, նրան բազում նվերներ<sup>144</sup> ու պատիվներ խոսամառ տանալով, համոզելու համար բուլղարների դեմ արշավել: Ռուս-

ները համաձայնվեցին և ինդիկտիոնի 11-րդ տարվա օգոստոս ամսին, Նիկեփորի թագավորության հինգերորդ տարին, հարձակվեցին Բուլղարիայի վրա և բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր ավերեցին և հսկայական ավարով իրենց երկիրը վերադարձան: Նրանք [Նիկեփորի] թագավորության վեցերորդ տարին դարձյալ արշավեցին Բուլղարիայի վրա և նախկինից ավելի մեծ ասպատակ սփռեցին: Ինդիկտիոնի 11-րդ տարվա սեպտեմբեր ամսի երկուսին, գիշերվա տասներկուերորդ ժամին, երկրի ղարհուրելի եռում ու սասանում եղավ, որի ժամանակ տուժեցին Հոնորիասն<sup>145</sup> ու Պափլագոնիան: Նույն ինդիկտիոնի մայիս ամսին սաստիկ ու կիզիչ քամիներ փչեցին, որոնք փչացրին բերքը, որթատունկներով ու ծառերով հանդերձ, որի պատճառով ինդիկտիոնի 12-րդ տարում սաստիկ սով եղավ: Կայսրը պարտավոր էր հոգալ հպատակների փրկության մասին, բայց նա թագավորական [պահեստների] ցորենը քիչ-քիչ էր վաճառում, հպատակների դժբախտությունից օգուտ քաղում և պարծենում, որ ինչ-որ մեծ սխրանք է գործել, որ ցորենի մոդո<sup>146</sup> մեկ դահեկանի վաճառելու փոխարեն, հրամայեց մեկ դահեկանի դիմաց երկու մոդ տալ: Նա շնամանվեց Վասիլ Մակեդոնացի կայսեր, որ Նոր կիրակիի օրը գնալով մեծ առաքելոց տաճարը և տեսնելով մի քանի արգո ու պատվարժան մարդկանց մռայլ ու գլխակախ, իր մոտ կանչեց և հարցրեց, ինչո՞ւ իրենք էլ պայծառ հանդերձներ հազած չեն մասնակցում տոնին, այլ խոժոռ են, կարծես քաղաքի գլխին մեծ փորձանք է եկել: Քաղաքացիներից մեկը պատասխանեց. «Քեզ ու քո մերձավորներին է վայել, ո՞վ տեր, պայծառ հանդերձներ հազնելն ու ուրախանալը, նրանք որոնց մահն է սպասում, այդպիսի բաներից հեռու են կանգնած: Ի՞նչ է, չգիտե՞ս, որ սաստիկ քամիների պատճառով երկու մեդիմն<sup>147</sup> ցորենը մեկ դահեկանով են վաճառում»: Դրա վրա կայսրը խորը հառաչեց, նրա աչքից կարեկցանքի արցունք կաթեց: Այդ մարդկանց նա մեծ օգնություն ցուցաբերեց, և պալատ վերադառնալով, հավաքեց քաղաքի ու արքունիքի կարիքները հոգացող մարդկանց<sup>148</sup>, նրանց գլխին բյուր լուտանքներ ու անեծքներ թափեց՝ բերքի մասին իրեն տեղյակ չպահելու համար: Նա կայսերական ու հասարակայան ցորենը անհապաղ մեջտեղ հանեց և հրամայեց մեկ դահեկանի դիմաց տասներկու [մեդիմն] տալ: Աստված հավանություն տրվեց նրա լիճոին և մարդկանց մեծ էժանություն պարգևեց: Այս բոլորը ասվեց [Վասիլ Մակեդոնացուն] ներբողելու համար: Իսկ



Նիկեփորը տառապյալ հպատակների վրա նայելով, ավելի շուտ ուրախանում էր, քան թե օգնության հասնում: Ոչ միայն նա, այլև նրա եղբայր Լևոնը գբաղվելով մթերքների շարաշահությանամբ<sup>149</sup>, երկիրը բազում ու բազմազան փորձանքների ենթարկեց: Սրանց շարաշահումները քաղաքացիները վարպետորեն ծաղրի ենթարկեցին. մի անգամ, երբ կայսրը զինվորներին մարզելու համար գաշտ դուրս եկավ, ալեհեր մեկը մոտեցավ և ուզեց զինվորների շարքը մտնել: [Նիկեփորն] ասաց նրան. «Այ մարդ, դու ծեր ես, ինչո՞ւ ես շտապում դասվելու իմ զինվորների շարքը»: Նա դիպուկ պատասխանեց. «Այժմ ես ավելի գորեղ եմ, քան երիտասարդ ժամանակ»: [Կայսեր] հարցին, «ինչպե՞ս թե», նա ասաց. «Առաջ մեկ դահեկանի դիմաց առածս ցորենը երկու ջորիի վրա էի բարձում, իսկ քո թագավորության ժամանակ երկու դահեկանի դիմաց առածս ցորենը իմ ուղերի վրա շատ հեշտությամբ տանում եմ»: [Նիկեփորը] հասկացավ հեզնանքի իմաստը և հեռացավ առանց շփոթվելու:

21. Սարակինոսները Ասորիքի ու Կիլիկիայի քաղաքների գրավումից հետո, Երուսաղեմի պատրիարք Հովհաննեսին<sup>150</sup> ողջակեզ արեցին, իբրև թե Նիկեփոր կայսրը սրա հորդորներով էր եկել իրենց վրա: Նրանք կրակի տվեցին նաև տերունական գերեզմանի գեղեցիկ տաճարը: Նույն կերպ վարվեցին և անտիոքացիք, որոնք իրենց Քրիստափոր պատրիարքին<sup>151</sup> սպանեցին: Կայսեր կողմն անցան Գրիգոր ու Բագարատ եղբայրները, նրան ընձեռելով իրենց Տարոն երկիրը<sup>152</sup>: [Կայսրը] նրանց պատրիկի պատվաստիճան շնորհեց<sup>153</sup>, շատ եկամտաբեր կալվածներ նվիրաբերեց: Արեգակի խավարում էլ եղավ դեկտեմբեր ամսի 22-ին, շուրջ երրորդ ժամին, այնպես, որ աստղերն էլ երևացին<sup>154</sup>:

22. Իսկ կայսրուհի Թեոփանոն, խորշելով Նիկեփորի հետ մարմնական հարաբերություն ունենալուց, Չմշկիկի մարդկանցից մեկին ուղարկեց և սեփական տանը նստած [Չմշկիկին] իր մոտ հրավիրեց: Կայսրը ինչ-որ կասկածի հիման վրա ղրկել էր նրան դոմեստիկոսի պաշտոնից ու հրամայել սեփական տանը տնային կալանքի մեջ մնալ<sup>155</sup>: Պոռնիկը [Թեոփանոն] Չմշկիկի համար հատուկ գրություն էլ ձեռք բերեց՝ տնից դուրս գալը թույլատրող: Այնտեղ ուղարկված մարդը, առնելով [Չմշկիկին]; եկավ Քաղկեդոն: Այն հարցին, թե կարելի՞ է թողնել [Չմշկիկին] մայրաքաղաք մտնել, կայսրը պատասխանեց, մի քիչ թող սպասի: 6478 թվականի, ինդիկտիոնի 13-րդ տարվա, դեկտեմբեր ամսի 11-ի

գիշերը Թեոփանոն մարգ ուղարկեց և Չմշկիկին բերեց պալատի ներքևում գտնվող ձեռակերտ նավահանգիստը և կողովի մեջ իր բոլոր մարգկանց հետ վեր քաշեց: Նրանք էին. պատրիկ Միքայել Բուրցիսը, տաքսիարիս<sup>156</sup> Լևոն Աբալանտեսը, Չմշկիկի ամենահավատարիմ մարդկանցից՝ Ացիպոթեոդորոսը և երկու ուրիշներ<sup>157</sup>: Սրանք սրերը քաշած վեր բարձրանալով, մտան կայսեր ննջասենյակը և նրան իր սովորական մահճակալի վրա շգտնելով, սկսեցին մտածել, թե նկատել են իրենց և քիչ էր մնացել իրենց [շենքից] ցած գլորեին: Կանանց հարկաբաժնի սպասավորներից ինչ-որ մարդուկի<sup>158</sup> ուղեկցությամբ նրանք գնում և Նիկեփորին գտնում են հատակին պառկած՝ կարմիր գույնի թաղիքի ու արջի մորթու վրա, որը նա ստացել էր իր մորեղբայր վանական Միքայել Մալեյինոսից<sup>159</sup>: [Նիկեփորը] քուն էր մտած, նա ամենևին չգաց իրեն սպանելու համար եկածների ժամանումը: Չմշկիկը ոտքով զարթնեցրեց նրան: Երբ Նիկեփորը զարթնեց և իր աչ թևի արմուռնկը դնելով գետնին գլուխը բարձրացրեց, Լևոն Աբալանտեսը մերկացրած սրով ուժեղ հարված հասցրեց նրա բաց գլխին (վեր կենալու ժամանակ նրա գլխանոցն ընկել էր) և ծանր վերք պատճառեց: Դրանից հետո [Նիկեփորին] սփռոցից բարձրացնելով, տարան Չմշկիկի մոտ, որ կայսերական մահճակալի վրա էր նստել, գլխին բազում լուսանքներ, հայճոյանքներ ու հիշոցներ թափելով: Նա մի բան էր միայն ասում. «Տե՛ր, ողորմյա՛» և «Աստվածածի՛ն, օղնյա՛»: Վերջը, երբ պալատի պահակները նրանց նկատեցին և նրանց դեմ կռվելու դուրս եկան բազում մարդիկ, Նիկեփորին սրի քաշեցին և գլուխը կտրելով ինչ-որ լուսամուտից Նիկեփորին օգնության շտապող մարգկանց ցույց տվեցին: Ահա այդ ձևով սրանք կանգ առան, իսկ Չմշկիկի մարգկանց հնարավորություն տրվեց իրենց ուզածը աներկյուղ ու հանգիստ գործելու<sup>160</sup>:

23. Պատմում են, որ մահվանից տասը օր առաջ կայսրը ննջասենյակում մի գրություն գտավ, որ իրեն խորհուրդ էր տալիս զգույշ լինել, քանզի Չմշկիկն իր դեմ դավադրություն է նախապատրաստում: Պատմում են նաև, որ մի վանական էլ [կայսեր] սպանության երեկոյան նրան հետևյալ բովանդակությամբ մի նամակ է տվել. «Ո՛վ կայսր, զգույշ եղի՛ր, քանզի այս գիշեր քեզ մեծ վտանգ է սպառնում»: Ոմանք ասում են, թե կայսրը վերցրեց նամակը, բայց ենթադրելով, որ դիմում է, շքնթերցեց, ուրիշներն էլ թե՛ կարդաց, բայց չզգուշացավ, նրան խոչընդոտ



կանգնեց ճակատագիրը: Նրա մահվանից հետո գտան այդ գրությունը: Ոմանք էլ ասում են, թե կարդալով այն, պրոտոէկեստիարիոսին<sup>161</sup> կարգադրեց գտնել և բանտարկել [Չմշկիկին], բացի այդ գրեց և տանը գտնվող իր եղբայր Լևոնին, պատվիրելով զինյալ մարդկանց վերցնել ու շտապել պալատ: Երբ [Լևոնը] նամակն ստացավ, չբացեց էլ այն (նա զբաղված էր ոմանց հետ վեգ խաղալով, քանզի շատ մոլի խաղացող էր) և դրեց մահճակալի բարձի տակ: Երբ խաղը վերջացրեց, հիշեց նամակը, ծանոթացավ նրա բովանդակությանը և ինչքան որ կարողացավ մարդկանց հավաքելով, գնաց դեսպի պալատ: Հասնելով ձիարշավարանի սֆենդոնե<sup>162</sup>, նա լսեց ոմանց խոսակցությունը, թե սպանված է Նիկեփոր կայսրը, լսեց նաև թե ինչպես հրապարակներում և փողոցներում Չմշկիկին [կայսր] էին ներբողում: Անակնկալից ապշած, այլևս չկարողացավ որևէ սխրանք գործելու մասին մտածել և իր որդու՝ Նիկեփորի հետ շտապ Մեծ եկեղեցին գնաց: Դրա շուրջն եղած խոսակցությունն ահա այս է: Ես չեմ կարող ասել ճիշտ է դա, թե ոչ: Համենայն դեպս Նիկեփորը սպանվեց պալատի ներսում<sup>163</sup>:

## Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս 2 Մ Շ Կ Ի Կ

[11 դեկտեմբեր 969—10 հունվար 976 թթ.]

1. Նիկեփորի մահվանից հետո հռոմայեցիների իշխանության հոգսերը վերցրեց Հովհաննես Չմշկիկը<sup>164</sup>, որպես կայսերակից ունենալով Ռոմանոսի որդիներ Վասիլին և Կոստանդին<sup>165</sup>: Վասիլը յոթ տարեկան էր, իսկ Կոստանդինը՝ հինգ: [Չմշկիկն] իսկույն Վասիլ պարակիմոմենոսի մոտ գիշերով մարդ ուղարկեց և նրան բերեց քարձրեց իշխանության հաղորդակից<sup>166</sup>, քանզի նա [երեխաների] հայր Ռոմանոս ծերունու և նրա փեսա Կոստանդին Միրանածինի օրոք երկար տարիներ քաղաքական [պաշտոններ] էր վարել, բազմիցս արշավել հազարացիների դեմ: Նա դժվարին իրավիճակներից մեծ խոհեմությամբ դուրս գալու հմտություն ուներ: Սրան Նիկեփոր կայսրը, որպես իրեն գահ բարձրացնելու գործում մեծուպես օժանդակած, պրոեզրոսի<sup>167</sup> աստիճանն էր շնորհել, մի աստիճան, որ մինչև այդ պոյություն չուներ և առաջին անգամ ինքն էր հիմնադրել: Նա ձեռքը վերցնելով պետական գործերը, Նիկեփորի բոլոր համակիրներին հրապարակից հանեց,

լևոն կուրապաղատին<sup>168</sup> Լեսբոս աքսորեց, նրա որդի վեստ Նիկեփորին<sup>169</sup> Իմբրոս, իսկ Նոր Վարդասին<sup>170</sup> Խալդիայի և Կոլոնիայի այն ժամանակվա դուքսին պաշտոնանկ անելով, նամակներով Ամասիա ուղարկեց: Մնացածներին էլ, ովքեր քաղաքական կամ զինվորական պաշտոններ էին վարում, պաշտոնանկ անելով նրանց տեղում իր մարդկանց և նոր կայսեր համակիրներին նշանակեց: Նա թույլ տվեց նաև աքսորից վերադառնալ Նիկեփորի կողմից քշվածներին, ամենից առաջ այն եպիսկոպոսներին, որոնք եկեղեցու կործանման ու խայտառակման համար իր սարքած դրուժյան տակ ստորագրել շքանկանալու պատճառով աքսորվել էին, ինչպես այդ մասին տեղում արդեն ասվել է<sup>171</sup>:

2. Հարցերն ահա այս լուծումն ստացան և կայսրը այլևս ոչ մի կասկած չունենալով, մի քանի հոգու հետ գնաց Մեծ եկեղեցին, ցանկանալով թադ ստանալ պատրիարքի ձեռքից: Բայց Պոլիսկտոսը շթողեց նրան [եկեղեցի] մտնել, ասելով, թե արժանի չէ սուրբ տաճարը մտնել նա, ում ձեռքերն իր ազդականի<sup>172</sup> արյամբ դեռ նոր են պղծված, երբ այդ ձեռքերից արյան գոլորշիներ են դեռ բարձրանում. նա պետք է շտապի ապաշխարելու արարքներ գործել և դրանից հետո նրան թույլ կտրվի ոտք դնել Տիրոջ տան հատակին: Հովհաննեսը հեզորեն ընդունեց տույժը, խոսք տվեց ամեն ինչ սիրով կատարել, միաժամանակ բացատրություն տվեց, թե ինքն անձամբ չի սպանել Նիկեփորին, այլ կայսրուհու դրդմամբ Աբալանտեսն ու Ացիպոթեոդորոսը: Պատրիարքը հրաման տվեց պալատից հեռացնել [կայսրուհուն] և արգելափակել ինչ-որ կղզի, ապա պատժել Նիկեփորին սպանողներին, պատռել եկեղեցին տակնուվրա անելու համար Նիկեփորի ներկայացրած հրովարտակր: Հովհաննեսն առանց հապաղելու նրանց քաղաքից արտաքսեց, իսկ Թեոփանոյին Պրիկոնեսոս աքսորեց: Հետագայում նա այնտեղից ծածուկ փախավ և մի եկեղեցում ապաստան հայցեց, բայց Վասիլ պարակիմոմենոսը նրան դուրս հանեց ու աքսորեց Արմենիականների բանակաթեմը<sup>173</sup>, կայսեր կողմից նոր իւուուցված Դամիդիա վանքը: [Թեոփանոն] կայսեր ու Վասիլի գլխին լուտանքների տարափ թափեց, Վասիլին անվանեց սկյութ ու բարբարոս, նրա գլխին էլ բռունցքի հարված իջեցրեց: [Թեոփանոյի] հետ Մանտինիա<sup>174</sup> աքսոր ուղարկվեց և նրա մայրը: [Նիկեփորի կազմած] հրովարտակր բերվեց ու պատռվեց, եկեղեցուն շնորհվեց նախկին ազատությունը<sup>175</sup>:



3. Հովհաննեսն այնուհետև խոսք տվեց գործած մեղքի քավության համար աղքատներին բաժանել իր անձնական՝ նախքան կայսր գառնալն ունեցած սեփականությունը, որից հետո Պոլիեկտոսը նրան թույլ տվեց մտնել եկեղեցի: Եվ մեր աստծո Քրիստոս—XII տոսի ծննդյան տոնին նա մտավ եկեղեցի, որտեղ պատրիարքը —969 նրա զլխին կապեց թագավորական թագը: Կայսրությունը և՛ արեւելքում, և՛ արևմուտքում մեծ սասանման ու տակնուվրայություն մեջ էր: Նիկեիոսը ժամանակ շունեցավ Կիլիկիայում, Փյունիկեում և Կյուլե Ասորիքում<sup>176</sup> գրավված հազարացիների քաղաքները կարգավորել ու ամրացնել, այդ պատճառով նրանք մտադիր էին ապստամբել, իսկ ռուսներին էլ ժամանակին անխոհեմաբար բուղարներին դեմ հանելը պետությունը մեծագույն վտանգի առջև կանգնեցրեց<sup>177</sup>: Բացի այդ, ամբողջ հինգ տարի հռոմայեցիների երկրում տարածված սովը սաստիկ նեղում էր քաղաքները: [Չմշկիկը] մտածում էր ու խորհում այդ քաղաքների համար դարման գտնել, վերացնել սպառնալիքը: Անտիոքի սլատրիարքի մինչ այդ թափուր [աթոռին] նա նստեցրեց բոլոր առաքինություններով օժտված, իր գահ բարձրանալը կանխագուշակած ոմն Թեոդորոս վանականի<sup>178</sup>: Սա [Չմշկիկին] խորհուրդ էր տվել շտապել, քանզի աստված որոշել է իրեն թագավորական բարձրության հասցնել, նախազգուշացրել անխոհեմաբար չվարվել, թագավորությունը ձեռք գցելու շտապողականություն հանդես չբերել, քանզի ոտնձգություն գործած կլինի իր կյանքի դեմ: [Թեոդորոսը] նրանից պահանջեց համայն արևելքը ողողած և իրենց պիղծ կրոնի տարածմամբ այն ապականած մանիքեցիներին արևմուտք վերաբնակեցնել, անմարդաբնակ մի ծայրամասում, ինչ որ [Չմրշկիկն] արեց հետագայում, նրանց տեղափոխելով և բնակեցնելով Ֆրիպպուլոսում<sup>179</sup>: Չմշկիկի գահ բարձրանալուց հազիվ 35 օր անց Պոլիեկտոսը վախճանվեց: Նրա փոխարեն պատրիարք է նշանակվում վանական Վասիլ Սկամանդրենոսը<sup>180</sup>, որի կատարյալ առաքինությունը վկայված է: Քաղաքական հարցերն ահա այսպիսի վիճակում էին գտնվում:

4. Անտիոքի և վերևում մեր թվարկած մյուս քաղաքների գրավման առթիվ վշտացած համայն աշխարհի սարակինոսները և նույն կրոնը դավանող մյուս ազգերը՝ եգիպտացիները, պարսիկները, էլամացի արաբները<sup>181</sup>, ինչպես և Երջանիկ կոչված [Արաբիայում]<sup>182</sup> և Սաբայում<sup>183</sup> բնակվողները համաձայնություն եկան և զինակցություն հաստատեցին, ամեն տեղից մեծ

զորք հավաքեցին, այն գլխավորել տվեցին ցամաքային ու ծովային ճակատամարտերի հմուտ մասնագետ համարվող կարբեդոնացիներին, որոնց հրամանատարն էր Զոխարը, մի գործունյա մարզ և հմուտ պատերազմող: Ահա նրանք բոլոր զինյալ ուժերը՝ հարյուր հազար մարտունակ ռազմիկների մի տեղ հավաքելով, դուրս եկան հռոմայեցիների դեմ: Հասնելով Անտիոքի [արվարձան] Դափնե, փութաշանությամբ անցան [քաղաքի] պաշարման: Պաշարյալները պաշտպանվում էին քաջաբար ու խիզախորեն, որով պաշարումը երկարեց: Երբ այլազգիների հարձակման մասին հայտնվեց կայսեր, շտապ կարգով Մեսոպոտամիայի զորավարին<sup>184</sup> նամակներ ուղարկվեցին այնտեղի ուժերը հավաքելու և պաշարվածներին օգնության գնալու հրամանով: [Կայսրը] զորքի ընդհանուր հրամանատար նշանակեց, այլ զորքեր էլ տվեց պատրիկ Նիկոլայոսին, իր մտերիմ ներքինիներից մեկին, որը միանալով մյուս ուժերին և ընդհարվելով բյուրապատիկ ավելի բարբարոսների հետ, փայլուն հաղթանակ տարավ, մի ճակատամարտում նրանց ցիր ու ցան արեց, հռոմայեցիներին հպատակ քաղաքների անվտանգությունն ապահովեց:

5. Իսկ ռուսների ազդր մեր ասած ձևով Բուլղարիան գրավելով և Պետրոսի երկու որդիներին՝ Բորիսին ու Ռոմանոսին գերի վերցնելով, մտադիր չէր այլևս տուն վերադառնալ: Հիացած լինելով երկրի բարեբերության վրա, նրանք Նիկեփոր կայսեր հետ կնքած պայմանագրին մնաս բարով ասացին և նպատակահարմար գտան մնալ երկրում և տիրել այն: Նրանց այդ բանին էլ ավելի էր դրդում Կալոկիրեսը, ասելով, որ եթե ինքը նրանց կողմից հռոմայեցիների կայսր հռչակվի, կհրաժարվի Բուլղարիայից, երկարատև խաղաղություն կկնքի, բազմապատիկ ավելի կտա պայմանավորված գումարը և ողջ կյանքում նրանց դաշնակից ու բարեկամ կունենա: Ռուսները այդ խոսքերից մեծամրտացած, ուզում էին Բուլղարիան, որպես զենքով տիրացած երկրի, սեփականացնել, և երբ կայսրը նրանց մոտ դեսպանություն ուղարկեց, խոստանալով լրիվ կատարել Նիկեփորի ուխտածը, չընդունեցին, բարբարոսական գոռոզամտությամբ լի պատասխաններ տալով: [Կայսրը] ստիպված եղավ հարցր պատերազմով լուծել<sup>185</sup>: Նա նամակներ գրեց և կարճ ժամանակվա ընթացքում արևելքի զորքերն արևմուտք փոխադրեց, նրանց մարտ հրամանատար նշանակելով մագիստրոս Վարդաս Սկլերոսին<sup>186</sup>, որին ստրատելատ կոչեց<sup>187</sup>: [Չմշկիկը] սրա քրոջ՝ Մարիային,



նախքան կայսր դառնալը, օրինական կին էր առել: Նա որոշել էր գարնանը ինքն էլ պատերազմի դուրս գալ: Ռուսները և նրանց առաջնորդ Սվյատոսլավը, իմանալով հռոմեական ղորքի [արևմուտք] անցնելու մասին, արդեն ստրկացված բուլղարների հետ համագործակցություն հաստատեցին, որպես դաշնակից վերցրին նաև պաթիւնականներին<sup>188</sup> և արևմուտքում՝ Պաննոնիայում բնակված թուրքերին<sup>189</sup> և հավաքելով երեք հարյուր ութ հազարանոց մարտունակ զորք, անցան Հեմոսը<sup>190</sup> ու համայն Թրակիան կրակի տվեցին ու ասպատակեցին: Նրանք Արկադիուպոլսի<sup>191</sup> պարիսպներին մոտիկ տեղում բանակեցին, մտադիր լինելով ճակատամարտ սալ հենց այստեղ: Մագիստրոս Վարդաս Սկլերոսը, զգալով, որ իր զորքը թվական տեսակետից շատ է զիջում [հակառակորդին] (իր ողջ զորքը 12 հազար հոգու էր հասնում), որոշեց ռազմագիտական խորամանկությամբ հաղթահարել հակառակորդներին, ճարտարությամբ ու հնարագիտությամբ բնաջնջել նման բազմությունը: Այդպես էլ եղավ: Ինքը ղորքով հանդերձ ներփակվելով պարիսպներից ներս, ականջ չկախեց թշնամիների՝ դուրս գալու և վճռական մարտ տալու բազում կոչներին: Տեսնելով հանդերձ, թե ինչպես թշնամիները հանդիպածը ոտնատակ են անում, այնուամենայնիվ ձևացրեց, որ երկյուղում է և հարմար առիթի էր սույասում: Սկլերոսի բռնած դիրքը բարձրոսներին [հռոմայեցիների նկատմամբ] մեծ արհամարհանքով լցրեց, նրանք հավատացին, որ Սկլերոսը իսկապես վախից է հռոմեական փաղանդները պարիսպների մեջ ներփակել ու չի համարձակվում դուրս գալ, դրա համար ահա նրանք առանց վախենալու դեսուդեն ցրվեցին, բանակեցին: Ոչ ինչպես որ պետք էր, ուշադրություն չդարձրին պահակության վրա, և ամբողջ գիշեր իրենց հանձնեցին բարբարոսական կեբուխումի, սրինգների ու թմբուկների նվագին ու սլարերին, անհրաժեշտ ոչ մի բանի մասին հող չտանելով: Վարդասը, հարմար առիթ ձեռք գցելով և թշնամիների վրա ինչպես հարձակվելու մասին լավ կշռադատելով, որոշեց [հարձակման] օրն ու ժամը: Նա գիշերը մի քանի ամենակարևոր տեղերում ծուղակներ ու դարաններ սարքեց, սլատրիկ Հովհաննես Ալակասևսին փոքր զորախմբով ուղարկեց, կարգադրելով առաջ վազել և լրտեսել թշնամիներին, հաճախակի տեղեկացնել, ճշգրիտ հաղորդել նրանց գտնվելու վայրը, ապա և հարձակվել ու ընդհարվել նրանց հետ, բայց մարտի հենց սկզբում նահանջել ու ձևացնել, թե փսի-

խուստի է դիմում: Բայց նա պետք է փախուստի դիմի ոչ թե գլխովին՝ ձիերի սանձերը լրիվ բաց թողած, այլ հանգիստ ու կազմակերպված, իսկ որտեղ որ հնարավոր է, շուռ գա ու կովի բռնվի թշնամիների հետ: Այդպես պետք է անել մինչև որ նրանց քաշեն այդ ծուղակներն ու դարանները, որից հետո ահա կարող են փախուստի դիմել խառնիխուռն ու առանց ետ նայելու: Բարբարոսները երեք մասի բաժանվեցին, առաջին մասը բաղկացած էր բուլղարներից ու ռուսներից<sup>192</sup>, իսկ թուրքերն ու պաժինակները ամեն մեկն առանձին էին: Հովհաննեսը ճանապարհին պատահամաբ հանդիպում է պաժինակներին ու նրանց հետ կովի բռնվում և ստացած կարգադրության համաձայն փախուստ է ձևացնում, արագ կերպով նահանջելով: Պաժինակները հետապնդում էին [հռոմայեցիներին] իրենց շարքերը ցրած, որպեսզի, ինչպես իրենք կարծում էին, գլխովին ոչնչացնեն փախուստի դիմողներին: Իսկ [հռոմայեցիները] մեկ կազմակերպված կերպով նահանջելով, մեկ շուռ գալով ու պաշտպանվելով, շտապում էին դեպի ծուղակները: Երբ հասան [ծուղակների] մեջտեղը, ահա այն ժամանակ բաց թողնելով սանձերը, քառատրոփ փախուստի դիմեցին, իսկ պաժինակներն էլ վրա խուժելով, անկազմակերպ հետապնդում էին: Հանկարծակի հայտնվեց համայն զորքի գլուխն անցած մագիստրոսը: [Պաժինակները] անակընկալից շանթահարված, հետապնդումը դադարեցրին, բայց փախուստի էլ չդիմեցին, այլ մնացին տեղում: հնարավոր հարձակումն ընդդիմակայելու համար: Երբ մագիստրոսի զինվորներն ուժեղ թափով նրանց վրա խոյացան, իսկ մնացած փաղանգն էլ կարգ ու կանոնով նրանց ետևից հարձակվեց, սկյուլթների ամենախիզախներն իսկույն գետին տապալվեցին: Երբ փաղանգը խորանալով հրկուսի բաժանվեց, պաժինակներն ընկան այդ ծուղակների մեջ, քանզի [փաղանգի] թևերը իրար միանալով, նրանց օղակեցին: նրանք մի փոքր դիմադրեցին, բայց տեղի տալով, գրեթե բոլորն էլ կոտորվեցին:

6. Վարդասն ահա այս կերպ պարտության մատնեց նրանց, իսկ գերիներից իմանալով, որ մնացած թարմ ուժերն էլ կազմ ու պատրաստ պատերազմի են սպասում, քառատրոփ շարժվեց նրանց վրա: նրանք իմացած լինելով պաժինակների գլխին եկած անսպասելի փորձանքի մասին, սրտաբեկ եղան: Բայց և այնպես իրենց գոտեպնդելով և փախուստի դիմածներին հավաքելով, հարձակվեցին հռոմայեցիների վրա. առաջից հեծելա-



գորն էր գնում, ետևից՝ հետևակը: Երբ առաջին ընգհարման ժամանակ ձիավորների թափը կոտրվեց՝ անակնկալ կերպով հայտնրված հռոմայեցիներին, նրանք նահանջեցին ու միացան հետեվակազորին: Այնտեղ նրանք գարծյալ գոտեպնդվելով, սպասում էին հարձակման անցած հռոմայեցիներին: Մարտը մոտավորապես հավասար էր, մինչև այն ժամանակ, երբ մի սկյուլթ, իր աժդահա մարմնի ու քաջասրտության վրա ապավինած, մյուսներից առաջ անցավ ու հարձակվեց ձի հեծած և զորաշարքերը ոգևորող մագիստրոսի վրա և թրով հարված իջեցրեց նրա սաղավարտին: Բայց թուրը [սաղավարտի վրայով] սահեց և հարվածը նպատակին չհասավ: Մագիստրոսը թրի հարված իջեցրեց նրա սաղավարտին: Նրա ձեռքի ուժի և [թրի] երկաթի կոփվածությունից պատճառով այնպիսի ուժեղ հարված հասցվեց, որ սկյուլթը վերից վար կիսվեց: Մագիստրոսի եղբայր Կոստանդինն էլ, որ եղբոր օգնության էր դիմել, շտապեց հարվածել սկյուլթին օգնության ձեռք մեկնած և ավելի հանդգնություն ցուցաբերող մի այլ սկյուլթի գլխին, բայց վերջինս մի կողմ թեքվեց, Կոստանդինի թրի հարվածը շեղվեց և իջավ [սկյուլթի] ձիու պարանոցին ու կտրեց այն: Սկյուլթն ընկավ գետին, իսկ [Կոստանդինը] ձիուց իջնելով և բռնելով նրա մորուքը, խողխողեց նրան: Այս քաջագործությունը ոգևորեց հռոմայեցիներին, նրանց ավելի համարձակ դարձրեց, իսկ սկյուլթներին ահ ու սարսափով պատեց: Իսկույն մոռանալով արիության մասին, նրանք խայտառակ կերպով, առանց որևէ կարգ ու կանոնի, փախուստի դիմեցին: Հռոմայեցիներն ընկան նրանց ետևից և համայն դաշտը դիակներով ծածկեցին: Սպանվածներից շատ էին դերի ընկածները, մնացած բոլորն էլ, բացի մի քանիսից, վիրավոր: Վտանգից ոչ ոք չէր պրծնի, եթե վրա չհասներ գիշերը, որի ժամանակ հռոմայեցիները դադարեցրին հետապնդումը: Ահա այսօրվան բյուրավոր բարբարոսներից շատ քչերը վերապրեցին, իսկ հռոմայեցիներից մարտի դաշտում ընկան 25 հոգի<sup>193</sup>, իսկ վերջ ստացան գրեթե բոլորը:

7. Սկլերոսի սկյուլթական պատերազմը դեռ չէր վերջացել, իսկ հռոմայեցիներն էլ դեռ չէին հասցրել մաքրվել մարտի արյունից, երբ վրա հասավ կայսերական՝ մագիստրոսին կայսեր 970 մոտ կանչող նամակը: Տեղ հասնելով նա հրաման է ստանում աշուն անցնել Ասիա, իր հետ վերցնելով ասլադա պատերազմի համար անհրաժեշտ քանակություն մեզ<sup>194</sup>, քանզի վարդաս Փո-

կասր, որ դատապարտվել էր Ամասիայում մնալ, ազդականներով, ընկերներով ու մերձավորներով, այնտեղից փախուստի էր դիմել: Նրանց միջև գաղտնի պայմանավորվածություն կար՝ Կապադովկիայի Կեսարիան գրավել: Այնտեղ նա մեծաթիվ վարձկաններ հավաքեց, որոնց գլխավորում էին պատրիկ Թեոդոլոս Պարսակուտենոսի որդիներ Թեոդորոսն ու Նիկեփորը<sup>195</sup>, ինչպես և մի այլ պատրիկ՝ Սիմեոն Ամպելասը: [Փոկասն] իր գլխին թագ դնելով և առնելով կայսերական մյուս նշանակները, կայսեր դեմ ապրտամբույթուն՝ բարձրացրեց<sup>196</sup>: Իր հայր կուրապաղատ Լեոնը սրանցից ոմանց նվերներ տալով, ոմանց էլ պաշտոններ ու կալվածքներ խոստանալով, համոզել էր միանալ նրան, օգտվելով Աբիդոսի եպիսկոպոսի ծառայություններից: Ինքն էլ մտադիր էր Լեսբոսից իր որդի Նիկեփորի հետ ծածուկ անցնել Թրակիայի շրջանները: Կայսրն իմացավ այդ մասին, (եպիսկոպոսն էլ, որ ձերբակալվել էր, չկարողանալով քննությունից խուսափել, ամեն ինչ բացահայտեց), որի վրա կուրապաղատին դատավորներին հանձնեցին, որոնք միահամուռ կերպով իրեն և իր որդուն մահվան դատապարտեցին: Կայսրը, սակայն, բարեսրտություն հանդես բերեց և նրանց երկուսին էլ կուրացման ու ցմահ աքսորի դատապարտեց: Բայց պատմում են, որ կայսրը դահիճներին թաքուն պատվիրեց նրանց աչքերին ամենևին վնաս չհասցնել, լոկ ձևացնել, որ կուրացնում են, բայց իրականում խնայել նրանց աչքի լույսը, բացի այդ, շասեն, որ կայսրն է այդպես հրամայել, այլ այդ բանը իրենց [դահիճների] իբրև թե մարդասիրությանը վերագրեն, որ նրանց աչքի լույս է պարգևում<sup>197</sup>: Կուրապաղատի հարցն ահա այսպես լուծվեց: Իսկ Սկլերոսն անցնելով Ասիա, և լինելով Դորիլեոնում<sup>198</sup>, նախ փորձեց Փոկասին և նրա կողմնակիցներին լավ խոստումներով ետ կանգնեցնել իրենց մտադրությունից (Սկլերոսը կայսրից կարգադրություն էր ստացել ինչքան հնարավոր է ջանալ ձեռքերը եղբայրական արյամբ չպղծել), բայց երբ տեսավ, որ իր ջանքերը արդյունք չեն տալիս (ապստամբները այդ միջնորդություններից ավելի գոռոզ էին դառնում, քան թե տեղի տալիս), որոշեց գործի անցնել: Զորքն առնելով, նա շարժվեց դեպի Կեսարիա: Փոկասի մարդիկ իմանալով այդ մասին, նպատակահարմար գտան անորոշ հույսերով օրորվելու փոխարեն, ձեռքում եղածը չփախցնել և կայսեր կողմից իրենց տրված ընծաներն առնելով, գիշերով անցան Սկլերոսի կողմը: Առաջինը Դիոգենես Ադրալեստոսն էր.



ապա Ամպելասն ու Թեոդուլոսի որդիները, մի խոսքով բոլոր նրանք, ովքեր ապստամբության նախապատրաստմանը առնչություն ունեին, այնուհետև համայն զորքը, այնպես որ Փոկասը իր սպասավորներով մնաց մենակ: Ոչ մեկից օգնություն չստանալով, նա ընկղմվեց վշտի ու կսկծի մեջ՝ իրեն ոտքի հանողների, բայց հետո դավաճանողների առթիվ: Երբ գիշեր եղավ ու նա քուն մտավ, երազում տեսավ, որ ինքը զայրացած ու դազադած աստծո հետ խոսում է իրեն անիրավողների մասին, ասելով. «Դատյա՛ դու, տեր, ինձ անիրավողներին»: Երբ նա ուզեց շարունակել սաղմոսի խոսքերը, մի ձայն լսեց, որ ասում էր շարունակել սաղմոսի շարունակությունը Սկլերոսն ասաց: [Փոկասը] սարսափահար զարթնեց և համոզվելով, որ ոչ մի հույս չունի, ինչպես որ էր, ձի նստավ և իր մերձավորների հետ փախավ դեպի Տյուրոպիոս<sup>199</sup> բերդը: Երբ նրա փախուստի մասին տեղեկացրին Վարդաս Սկլերոսին, նա ճարտար ձիավորների ուզարկեց շուտափույթ հասնելու նրան նախքան բերդ մտնելը: Նրանք արագ թափով հետապնդեցին նրան և հասան դաշտում, երբ նա դեռ չէր մոտեցել բերդի պարիսպներին: Հետապնդողներից ամենից համարձակն ու քաջը, անունը Կոստանդին, մականունը Խարոն, մնացածներին ետևում թողնելով, թափով շարժվեց իր վերջապահ զինվորներին մեջ գտնվող Փոկասի վրա՝ պատրաստ իր վրա հարձակվողին դիմադրելու: Խարոնը հեռվից տեսավ նրան ու ճանաչեց, խայտառակ ու ամոթալի լուտանքներ թափեց գլխին, անվանեց ողորմելի ու վախկոտ, կոչ արեց սպասել մի քիչ, որ ստանա իր ապստամբության մրցանակը: Փոկասը, լսելով իր հասցեին ուղղված լուտանքները և ճանաչելով իրեն անարգողին, քաշեց սանձը, շուռ եկավ դեպի նա և ասաց. «Դու, ով մարդ, նկատի ունենալով մարդու բախտի փոփոխականությունը, մի հայհոյիր, մի վիրավորիր արդեն դժբախտացած մարդուն, այլ գթա ու ողորմիր ինձ, տարաբախտիս, մի մարդու, որ կուրապաղատ հայր է ունեցել, կեսար պապ, կայսր հորեղբայր<sup>200</sup>, մի մարդու, որ ինքն էլ դուքս է եղել, գերագույն ավագանու շարքին դասվել, իսկ այժմ ընկել է կատարյալ դժբախտության ու փոքրության մեջ»: [Խարոնը] պատասխանեց ու ասաց. «Ո՛վ շար գլուխ, այդ բաները լավ է երևիսաներին ասես, որոնց կարելի է խաբել, իսկ նման փուչ խոսքերով ինձ չես հիմարացնի»: Նա խթանեց ձին և ավելի հանդուգն մոտեցավ, իսկ Փոկասը, քաշելով իր էֆեստրիսից<sup>201</sup> կախված լախտը,



դեմը կանգնեց, նրա սաղավարտին հարված իջեցրեց և տեղն ու տեղը սպանեց. սաղավարտը շղիմացավ հարվածի ուժգնությանը: [Փոկասը] քաշելով սանձերը, շարունակեց ճանապարհը: Ետևից եկողները, հասնելով հարոնի ընկած տեղը, նրա անակրնկալ սպանության վրա ապշեցին և բոլորը դադարեցրին հետապնդումը: Ոչ ոք չէր համարձակվում առաջանալ: Այսպիսով, Փոկասը հնարավորություն ստացավ բարձրանալ բերդ: Ապա տեղ հասավ և Սկլերոսը: Նա [Փոկասի] մոտ անվերջ մարդ էր ուղարկում, որպես իր խնամու շահագրգռված երգմնագրեր տալիս<sup>202</sup> (Սկլերոսի հարսը, իր որդու Կոստանդինի<sup>203</sup> կինը, [Փոկասի] քույր Սոֆիան էր), խորհուրդ տալիս կայսեր կողմն անցնել և այդ կերպ ձեռք բերել նրա ներողամտությունը: Իր անձի ասպնոսության մասին երգումներ ստանալով, նա իր մարդկանցով հանձնվեց Սկլերոսին: Նա ոչ մի սլատիս չստացավ, այլ միայն, երբ դարձավ վանական, կայսրը նրան Քիոս կղզին աքսորեց, իսկ Սկլերոսին հրաման տվեց թեթևազեն տազմաներով<sup>204</sup> դարձյալ անցնել արևմուտք:

970 8. Հովհաննես կայսրը կնության առավ Ռոմանոսի քույր նույնմ. Թեոդորային, Կոստանդին Միրանաժինի դստեր: Իր այգ արարքը մայրաքաղաքի բնակիչներին շատ դուր եկավ, քանզի դրանով նա պահպանում էր թագավորական իշխանությունը հարստության<sup>205</sup> համար:

971 9. Իր թագավորության երկրորդ տարին նա վճռեց ուսնների դեմ արշավել: Նվերներ բաժանելով, նա սիրաշահեց զորքը, զորավար նշանակեց իրենց խոհեմությամբ ու ռազմավարական փորձով անուն հանած մարդկանց և այլ պատրաստություն տեսավ, որպեսզի զորքը ոչ մի բանի պակասը չզգա: Նա նավատորմիղի դրունգար, հետագայում պրոտովեստիար դարձած Լեոնտիոսի միջոցով նաև նավատորմիղը կարգի բերեց՝ հին նավերը վերանորոգեց, ապա և նորերը շինեց և ուժեղ նավատորմիղ ստեղծեց<sup>206</sup>: Գարնանն արդեն ամեն ինչ պատրաստ էր և նա աստծուն աղոթելով, քաղաքացիներին հրաժեշտ տվեց ու մայրաքաղաքից դուրս եկավ: Հասնելով Ռեդեստոս<sup>207</sup>, իր մոտ եկան սկյուֆների երկու ղեսպսին, որոնք առերևս դեսպանության էին ժամանել, բայց իրականում հռոմայեցիներին լրտեսելու Սրանք նախատում էին [հռոմայեցիներին], ասում, թե իզուր են իրենց փորձության ենթարկում, որի վրա կայսրը հրամայեց նրանց ողջ ճամբարով մեկ պտույտ կատարել և ականատես լի-



նել զորաշարքերին (նա շատ լավ հասկացավ նրանց գալստյան նպատակը): Երբ նրանք այդպես պտույտ կատարեցին և ամեն ինչ հետախուզեցին, [կայսրը] նրանց հրամայեց վերադառնալ և իրենց առաջնորդին հայտնել, թե այդպիսի կազմակերպված ու կարգապահ զորքով է հռոմայեցիների կայսրը սպառառեն գալիս նրա դեմ պատերազմելու: Ահա այսպես նա ճամփու դրեց դեսպաններին, իսկ ինքն էլ այնուհետև մարտունակ զինվորներ վերցնելով՝ շուրջ հինգ հազար հետևակ և շորս հազար հեծյալ, առաջ շարժվեց, մնացած համայն զորքին հրամայելով Վասիլ պարակիմոմենոսի գլխավորութեամբ առանց շտապելու հետևել իրեն<sup>208</sup>: Աննկատ Հեմոսն անցնելով, նա ոտք դրեց թշնամու երկիրը ու բանակեց բուլղարների արքայանիստ Մեծ Պրեսլավա<sup>209</sup> քաղաքի մոտ: Իր հանկարծակի [գալուստը] սկյութներին ապշեցրեց ու անելանելի վիճակի մեջ գցեց, իսկ այդ փորձությունների կազմակերպիչ ու պատճառ Կալոկիրեսը նախքան պատերազմական փողերի ձայնը լսելը (սա էլ էր այնտեղ գտնվում), և իմանալով, որ կայսրը եկել է պատերազմին անձամբ մասնակցելու, քաղաքից ծածուկ ճողոպրեց, փախավ ոռուների ճամբարը<sup>210</sup>: [Ռուսները], տեսնելով նրան և իմանալով կայսեր ժամանման մասին, մեծ տազնապի մեջ ընկան, բայց Սվյատոսլավի բազում հորդորների, նրա տվյալ իրադրության հարմար արտասանած ճառի վրա իրենց հավաքելով, գնացին ու բանակեցին հռոմայեցիներին մոտիկ: Այդ ընթացքում կայսեր հետ գտնվող զորամասը, հասնելով քաղաքի առջև տարածված դաշ-

12—IV տը, հանկարծակի ու անսպասելի հարձակվեց թշնամիների վրա:

971 Նա հասավ պարիսպներից դուրս զորավարժութեամբ զբաղված ութ հազար հինգ հարյուր հոգուց բաղկացած [թշնամիներին], որոնք որոշ ժամանակ դիմադրելուց հետո, հոգնատանջ փախուստի դիմեցին: Նրանցից մի մասը անփառունակ կոտորվեց, մյուսն էլ փրկություն գտավ քաղաքում: Այս դեպքերի ժամանակ, քաղաքի ներսում գտնվող սկյութները, իմանալով հռոմայեցիների անակնկալ գալստյան և յուրաջինների հետ նրանց մարտի բռնվելու մասին, յուրաքանչյուրն իրենց ձեռքն անցած զենքն առնելով, դուրս եկան օգնության: Հռոմայեցիները, հանդիպելով նրանց անկազմակերպ ու ցրված վիճակում, կոտորում էին: Չկարողանալով անգամ կարճատև դիմադրություն ցույց տալ, նրանք փախուստի գիմեցին: Հռոմեական փաղանգի հեծյալները առաջ անցնելով, փակեցին քաղաք տանող ճանապար-

հը, իսկ դաշտով մեկ ցրված թշնամիները, փորձելով փախուստի դիմել, հռոմայեցիների ձեռքն էին ընկնում ու կոտորվում: Համայն դաշտը լցվեց դիակներով, իսկ ավելի շատ մարդիկ էլ գերի ընկան: Պրեսլավայի համայն զորքի առաջնորդ Սֆանգելլոսը (սա Սվյատոսլավից հետո սկյուլթների մեջ երկրորդ մարդն էր համարվում)<sup>211</sup>, երկյուղելով քաղաքի մասին, փակեց դարբասները, լծակներով դրանք ապահովեց և բարձրանալով պարիսպը, ամեն տեսակի նետերով ու քարերով դիմադրում էր հարձակման անցած հռոմայեցիներին: Երբ վրա հասավ գիշերը, պաշարումը դադարեց: Վաղ առավոտյան երևաց պրոեղրոս Վասիլը<sup>212</sup>, իր գլխավորած համայն զորքով: Սրա գալստյան վրա կայսրը շատ ուրախացավ, նա մի բլրի վրա բարձրացավ, որպեսզի սկյուլթներն իրեն տեսնեն, իսկ միացյալ զորքերը օղակի մեջ առան: Կայսրը նրանց բազմիցս կոչ արեց տեղի տալ, գլխովին շկոտորվել, բայց [սկյուլթները] չէին համաձայնվում պարիսպից իջնել: Դրա վրա հռոմայեցիները արդար զայրույթով լցված, շարունակեցին պաշարումը, նետաձգությամբ զսպելով պարիսպների վրա կանգնածներին, և պարիսպներին աստիճաններ հենելով: Մի քաջարի գինվոր, աջ ձեռքին թուր բռնած, իսկ ձախ ձեռքով էլ իր գլուխը վահանով ծածկած, առաջինը բարձրացավ աստիճաններից մեկից վեր: Վահանով նա ետ էր մղում հարվածները, իսկ թրով մարտնչում իր վրա հարձակվողների ու ճանապարհը փակել փորձողների դեմ: Նա բարձրացավ [պարիսպի] ատամնաշարի վրա և այնտեղ գտնվող բոլոր [թշնամիներին] ցիր ու ցան անելով, հնարավորություն ստեղծեց իր ետևից եկողներին բարձրանալու<sup>213</sup>: Սրա օրինակին հետևեցին և շատ ուրիշներ: Ընդհարման ժամանակ սկյուլթները պարտություն կրելով, իրենց պարսպից ցած էին գլորում: Նախորդների եռանդից վարակված բազում այլ հռոմայեցիներ պարսպի տարբեր տեղերում աստիճաններ հենելով, վեր էին բարձրանում: Երբ սկյուլթներն իրարանցման մեջ ընկան, [հռոմայեցիներից] մի քանիսին հաջողվեց աննկատ, առանց որևէ դժվարության մոտենալ դարբասին և բացելով այն, հնարավորություն տալ զորքերին ներս մտնելու: Այս ձևով ահա քաղաքը գրավվեց: Սկյուլթները փախուստի դիմեցին քաղաքի փողոցներով և [հռոմայեցիների] ձեռքն ընկնելով կոտորվում էին, իսկ կանայք ու երեխաները՝ գերեվարվում: Կնոջ ու երեխաներով գերի ընկավ նաև բուլղարների թագավոր Բորիսը, դեռևս թագավորի



նշանակները վրան: Նրան կայսեր մոտ բերեցին, որը մարդասիրաբար վարվեց, կոչելով բուլղարների թագավոր: Նա ազատ էր արձակում գերի ընկնող ամեն մի բուլղարի, թույլ տալով նրանց գնալ ուր ցանկանան, ասելով, որ ինքը եկել է ոչ թե բուլղարներին ստրկացնելու, այլ նրանց ազատագրելու, որ միայն ռուսներին է նա թշնամի համարում և նրանց նկատմամբ վերաբերվում որպես թշնամիների:

10. Սկյութներից ամենաքաջերը, ութ հազար հոգի, տիրելով քաղաքի ներսում գտնվող պալատի ինչ-որ ամրության, որոշ ժամանակ վրիպեցին [հռոմայեցիների] ուշադրութունից և թաքուն բռնելով կոտորում էին բազում [հռոմայեցիների], ուժքեր ետ էին մնում կամ դիակապտության նպատակով այնտեղ էին լինում: Երբ այդ մասին կայսրն իմացավ, նրանց դեմ ուժեղ զորք ուղարկեց<sup>214</sup>, որո, սակայն, եռանդով գործի չլծվեց, վախեցավ պաշարման անցնել, ոչ թե ռուսներից երկյուղելու պատճառով, այլ որովհետև տեղանքը շատ ամուր էր ու անառիկ: Բայց կայսրը այս հարցն էլ հեշտությամբ լուծեց, զենքն առնելով և մյուսներից առաջ հետիոտն անցնելով: Զինվորները, տեսնելով դա, իրենք էլ իսկույն զենքերն առան ու վազեցին, յուրաքանչյուրը շտապելով կայսրից առաջ անցնել և աղմուկ աղաղակով բերդի վրա հարձակվեցին: Ռուսները պաշարողներին համառ դիմադրութուն ցույց տվեցին և [հռոմայեցիները] բազում տեղերից հրդեհ գցելով, դիմադրողներին հաղթեցին: Կրակի ուժին ու հռոմայեցիների զենքին չդիմանալով, նրանք յուրաքանչյուրն իրեն ցած նետելով, փախուստի էր դիմում: Շատերը հրո զոհ դարձան, գահավիժելով սպանվեցին, իսկ մնացածներն էլ սրի քաշվեցին ու գերի ընկան: Ահա քաղաքը այս կերպ դրավվեց, այն չկարողացավ ամբողջ երկու օր անգամ դիմադրել: Գրավված քաղաքին վերստին տիրանալով, կայսրը տեղում ուժեղ կայազոր հաստատեց, առատ պարենով ապահովեց, ապա նշեց սուրբ Հարության տոնը<sup>215</sup>, քաղաքն էլ իր անունով Հովհաննուպոլիս կոչելով, հաջորդ օրը ճամփա ընկավ դեպի Դորոստոլոն, որը Դրիստրա էլ է կոչվում:

11. Իսկ Սվյատոսլավը, իմանալով Պրեսլավայի առման մասին, ինչպես սպասելի էր, իրարանցման մեջ ընկավ, բայց և այնպես միտքը չփոխեց, այլ իր մարդկանց գոտեպնդեց, կոչ անելով ավելի մեծ քաջութուն ցուցաբերել և ինչ հնարավոր է կատարելով, ապա և բոլոր կասկածելի բուլղարներին, շուրջ և-

րեք հարյուր հոգի, սպանելով, դուրս եկավ հռոմայեցիների դեմ: Կայսրը իր ճանապարհին ընկած քաղաքները<sup>216</sup> գրավեց, նրանց մեջ զորավարներ հաստատեց, դրոհով վերցրեց բազմաթիվ բերդեր ու քաղաքներ, և դրանք հանձնելով զինվորներին թալանելու, առաջ շարժվեց: Երբ հետախույզներն ասացին, թե ինչ-որ սկյութներ են գալիս, նա ընտիր զինվորների ուղարկեց: Թեոդորոս Միսթեացուն նա զորահրամանատար նշանակեց և կարգադրեց գլխավորել զորքը, հետախույզել հակառակորդների քանակը և իրեն այդ մասին տեղյակ պահել: Իսկ նթե թշնամին առաջ անցնի, ապա հեռամարտությամբ գաղափար կազմել նրանց հզորության մասին: Ինքը հետևեց նրանց, համայն բանակը կարգի բերած: Երբ Թեոդորոսի զորքը բախվեց թշնամիներին, ուժեղ թափով նրանց վրա խուժեցին: Ռուսները վախենալով ծուղակի մեջ ընկնել, առաջ շէին գնում և որովհետև նրանցից շատերը վիրավորվել էին, ոմանք էլ սպանվել, տեղի տալով ցրիվ եկան մերձակայքում գտնվող լեռները, այնտեղի խիտ ու ընդարձակ անտառները և լեռնային [կաժանով] ապավինեցին Դրիստրայում: Նրանք յոթ հազար հոգի էին, իսկ իրենց հետ կռվի բռնված ու պարտության մատնած հռոմայեցիները՝ երեք հարյուր: Սկյութները միացան Սվյատոսլավին և նրան այնտեղից վերցնելով երեք հարյուր երեսուն հազար հոգուց բաղկացած համայն զորքով բանակեցին Գորոստոլոնից տասներկու մղոն առաջ, վճռելով քաջաբար և ուժով իրենց վրա եկող կայսեր ընդդիմակայելու: Հռոմայեցիները մոտալուտ հաղթանակներից բերկլրացած, սպասում էին վճռական ճակատամարտին: Նրանք վստահ էին, որ աստված իրենց սատար է կանգնելու, քանզի նա շի սիրում անարդար իշխանավորներին, այլ մշտապես օգնում է նրանց, ում նկատմամբ անարդար են վարվել, այդ իսկ սլատճառով ոչ միայն քաջարիները, այլև վախկոտներն ու թույլ հոգու տեր մարդիկ պատրաստակամություն հանդես բերեցին, արիությամբ և մարտին մասնակից դառնալու անհամբերությամբ լցվեցին: Հակառակորդ զորքերը, երբ մոտեցան միմյանց, և՛ կայսրը, և՛ Սվյատոսլավը [իրենց զինվորներին] կոչով դիմեցին, ողևորեցին նրանց, ապա ստեղծված իրադրության կապակցությամբ անհրաժեշտ կարգադրություններն անելով, պա-

23—IV տերազմական փողերը հնչելուց հետո նույն եռանդով բախվեցին միմյանց: Առաջին ընդհարման ժամանակ հռոմայեցիները ուժեղ թափով հարձակում գործելով և շատերին դետին տապա-



լելով, սասանեցին բարբարոսների գորաշարքերը: Սակայն բարբարոսները շնահանջեցին, հռոմայեցիներն էլ գլխովին շհալածեցին նրանց, և սկյուիթները, իրենց գարձյալ գոտեպնդելով, աղաղակներով հռոմայեցիների վրա վերստին հարձակվեցին: Ուրոշ ժամանակ պայքարը հավասար էր, բայց երբ սկսեց միջնել, հռոմայեցիները իրար ոգևորելով և հորդորներից կարծես ուժ ստացած, խուժեցին սկյուիթների ձախ թևի վրա և իրենց անկասելի թափով շատերին տապալեցին: Բայց ռուսները, ընկնելով ծանր դրության մեջ, դեռ դիմադրում էին, դրա համար կայսրն իր մտերիմներից մի քանիսին օգնության ուղարկեց, ինքն էլ, առանց կայսերական նշանակների, նիղակր ձեռքին, ձին խթանելով և զինվորներին ոգևորելով, շտապեց նրանց ետևից: Համառ ճակատամարտ տեղի ունեցավ, մարտի ելքը բազմիցս փոփոխվեց (պատմում են, որ պայքարի ելքը տասերկու անգամ մեկ այս, մեկ այն կողմ տասուանվեց) և ռուսները վտանգներից հուսաբեկ եղած, խալտառակ կերպով փախուստի դիմեցին և դաշտով մեկ ցրիվ եկան: Հռոմայեցիները, հետապնդելով նրանց, ձեռքն անցածին կոտորում էին: Շատերն ընկան, դրանցից ավելին էլ գերի վերցվեց, իսկ ովքեր որ կարողացան վտանգից պրծնել, ապավինեցին Դորոսսուլոնում:

12. Կայսրը հաղթանակի առթիվ բարեհաղթ վկա Գեորգին գոհություն մատուցեց (թշնամիներին նա ճակատամարտ տվեց նրա հիշատակի օրը)<sup>217</sup>, իսկ հաջորդ օրը ինքն էլ ճամփա ընկավ դեպի Դորոսսուլոն: Տեղ հասնելով, նա ամուր ճամբար հաստատեց, բայց պաշարման շանցավ, քանզի վախեցավ, որ գետի<sup>212</sup> [ափը] բռնած շլինելով, ռուսներին կաշողլի նավերով փախուստի դիմել: Դրա համար նա բանակեց, սպասելով հռոմեական նավատորմիդին: Այդ միջոցին Սվյատոսլավը, երկյուղելով, որ իր մոտ գտնվող շուրջ 20 հազար բուլղար ռազմադերիները կարող են ապստամբել, նրանց առավ երկաթե և այլ կասլանքների մեջ, և նախապատրաստվեց պաշարման [դեմ պայքարելու]: Երբ նավատորմիզը տեղ հասավ, կայսրն անցավ սլարրսպամարտի և բազմիցս հարձակման անցած սկյուիթներին փախուստի մատնեց: Օրերից մեկը, երբ հռոմայեցիները երեկոյան մոտ ցրվեցին ճաշելու, բարբարոսները երկու մասի բաժանված, ձիավոր ու հետևակ, մարտնշելու համար դուրս եկան քաղաքի երկու փոքր դռներից՝ արևելյանից, որի հսկողությունը դրված էր ստրատոպեդարիս<sup>210</sup> Պետրոսի և նրա թրակացի ու մակեդո-

նացի [զինվորների] վրա, և արևմտյանից՝ որի հսկողութունը վստահված էր վարդաօ Սկլերոսին և նրա արևելյան զորաբանակին: [Սկյութները] առաջին անգամ այստեղ ահա ձիավոր հանդես եկան, նախորդ մարտերում նրանք հետևակ մարտնչեցին: Հռոմայեցիները նրանց համառորեն ընդդիմակայեցին և քաջաբար կռվեցին: Երկար ժամանակ պայքարը հավասար էր, բայց ի վերջո հռոմայեցիներն իրենց արիությամբ բարբարոսներին փախուստի մատնեցին դեպի պարիսպները: Այս մարտի ընթացքում նրանցից շատերն ընկան, հատկապես ձիավորներից<sup>220</sup>, իսկ հռոմայեցիներից ոչ ոք չվիրավորվեց, միայն երեք ձի սպանվեց: Բարբարոսներն ահա այսպիսի ջարդ ստանալով, պարիսպներից ներս քշվեցին: Վրա հասավ գիշերը, բայց նրանք գիշերն անքուն անցկացրին, վայրենի ու սարսափելի կոծով ողբացին մարտում ընկածներին, այն աստիճանի, որ լսողներին թվում էր, թե գազաններ են ոռնում ու կաղկանծում և ոչ թե մարդիկ ողբում ու կոծում: Երբ լույսը բացվեց, [ռուսները] տարբեր բերդերում հաստատված իրենց բոլոր կայազորները Դորոստոլոն կանչեցին. նրանք շտապ կարգով տեղ հասան: Իսկ կայսրը վերցնելով իր ողջ զորքը, եկավ քաղաքի առջև փրկված դաշտը և բարբարոսներին պատերազմի էր դրդում: Երբ նրանք չեկան, նա ճամբարը վերադարձավ ու հանգիստ մնաց: Կոստանտիայից<sup>221</sup> և Իստրոս գետից այն կողմ գտնվող բերդերից նրա մոտ դեսպաններ ժամանեցին, իրենց գործած շարիքները: Համար ներում աղերսելով և իրենց, ամբողջուններով հանդերձ [կայսեր] հանձնելով: Կայսրը նրանց սիրալիք ընդունեց, այդ բերդերը ընդունելու համար մարդկանց ուղարկեց, ինչպես և նրանց պահպանության համար բավարար կայազոր: Երբ վրա հասավ երեկոն, ռուսները, բացելով քաղաքի բոլոր դարբասները, նախորդներից շատ ավելի մեծ թվով հարձակվեցին հռոմայեցիների վրա, որոնք գիշերվա վրա [հույս դրած] հանգիստ վիճակում էին: Առաջին ընդհարման ժամանակ, նրանք կարծես գերակշռեցին, բայց փոքր անց հռոմայեցիները գերազանցեցին: Երբ հերոսաբար կռվող Սֆանգելլոսն սպանվեց, [ռուսները] շփոթվեցին և նրանց թափը կտրվեց: Հակառակ դրան, ամբողջ գիշերը նրանք տեղի չտվեցին, ինչպես և հաջորդ օրը՝ մինչև կեսօր: Երբ կայսրը զորք ուղարկեց փակելու համար բարբարոսների մուտքը դեպի քաղաք և այդ բանը ռուսներն իմացան, դիմեցին փախուստի: Քաղաք տանող [ճանապարհները] փակված



գտնելով, նրանք գաշտի վրայով [փորձեցին] փախուստի գիմել, բայց բռնվելով, սպանվում էին: Սվյատոսլավը գիշերը քաղաքի պարիսպը օղակեց խոր խրամով, որպեսզի խոչընգոտի հոռմայեցիների թափով հարձակումը քաղաքի պարսպի վրա: Ահա այսպես ապահովվելով քաղաքը, նա կարծեց, որ կկարողանա քաջաբար դիմանալ պաշարմանը: Այն պատճառով, որ նրա զինվորների մեծ մասը վիրավոր լինելով վատ վիճակում էր, որի վրա բարդվեց և սովը (նրանց պարենն արդեն սպառվել էր, իսկ հոռմայեցիներն էլ արգելակում էին նրանց դրսից մատակարարումը), Սվյատոսլավն ահա օգտվելով մուժ ու անլուսին մի գիշերից, երբ երկնքից տեղատարափ անձրև ու սարսափելի կարկուտ էր թափվում, սահմուկեցուցիչ որոտ ու կայծակ, երկու հազար հոգով, մտնելով միափայտ նավերը<sup>222</sup>, դուրս եկավ պարեն հայթայթելու: Յուրաքանչյուրն որտեղից որ կարողացավ հացահատիկ, կորեկ և այլ սննդամթերքներ հավաքելով, միափայտ նավակներով, գետի վրայով, վերադառնում էին դեպի Դորոստոլոն: Վերադարձին նրանք գետափին նկատեցին զինվորների բազում սպասավորների, որոնցից ոմանք ձիերին էին ջրում, ոմանք խոտ հավաքում, ուրիշներն էլ փայտ ջարդում, և նավերից դուրս գալով անշշուկ գնացին և անսպասելիորեն ու թաքուն հարձակվելով, նրանցից շատերին սպանեցին, մնացածներին էլ ստիպեցին ցրվել մերձակա թավուտներում: Ապա դարձյալ նավերը մտնելով, նպաստավոր քամու օգնությամբ հասան Դորոստոլոն: Երբ այդ բանն իմացվեց, կայսրն ընկավ մեծ տրտմության մեջ, նա նավատորմի չհամանատարներին խիստ պախարակեց այն բանի համար, որ նրանք չիմացան բարբարոսների Դորոստոլոնից դուրս նավելու մասին: Նա սպառնաց նրանց մահապատժի ենթարկել, եթե այդ բանը մի անգամ ևս կրկնվի: [Նավատորմի չհամանատարները] արդեն ուշադիր հսկում էին դետի երկու ափերն էլ, իսկ կայսրը ամբողջ վաթսուն հինգ օր պաշարման մասնակցեցելով, ամեն օր համառ մարտ տալով, գտավ որ պետք է օղակմամբ, պաշարյալներին սովի մատնելով փորձել քաղաքին տիրանալ: Դրա համար նա ամեն տեղից խրամներով փակեց ճանապարհները, պահակություն հաստատեց այդտեղ, որպեսզի և ոչ ոք չկարողանա դուրս գալ պարեն հայթայթելու, իսկ ինքը հանգիստ մընաց: Դորոստոլոնում ահա դուրսնան այսպիսին էր:

13. Իսկ ինչո՞ն կուրապաղատը և նրա որդի նիկեփորը, որոնք

971  
 Ինչպես նախապես ասացինք ստից կուրացվել էին, (նրանց աչքի լույսի հետ ոչինչ չէր պատահել), դարձյալ խռովություն են նախապատրաստում՝ կաշառելով մայրաքաղաքի բազում բնակիչների, ինչպես և արքունիքի պահապանների: Երբ նրանք վճիոր կայացրին, մի նավ վարձեցին և նրա մեջ մտնելով, նավեցին այն կղզուց, որտեղ ապրելու էին դատապարտվել, և հասան մայրաքաղաքի դիմացի ափը դտնվող մայր ցամաքը, Պելամիդա կոչվող արվարձանը, այնտեղից էլ վաղ առավոտյան շարժվեցին դեպի Բյուզանդիոն: Դավադիրներից մեկը այդ մասին տեղյակ պահեց նավատորմի ղեկավար Լևոնին, որին, Վասիլ ռեքտորի<sup>223</sup> հետ վստահված էր արքունիքի պահպանությունը: [Լևոնը] զգալի ուժեր ուղարկեց կուրասլագատին և նրա որդուն բռնելու համար: Երբ վերջիններս այդ բանն իմացան, ապավինեցին Մեծ եկեղեցում, բայց այնտեղից բռնի դուրս հանվելով, տարվեցին Պրոտե կղզին<sup>224</sup> ուր և կուրացվեցին: Այդ ժամանակները մի բան էլ մեջտեղ եկավ, որի մասին արժե պատմել: Սենատորներից մեկի այգում պրիկոնեսյան քարից պատրաստված և անուշադրությամբ գցված մի պնակ գտնվեց, որի վրա պատկերված էր երկու դեմք՝ մեկը տղամարդու, մյուսը՝ կնոջ: Պնակի ճակատին գրված էր մոտավորապես հետևյալ արձանագրությունը. «Քրիստոսասեր Հովհաննեսին և Թեոդորային<sup>225</sup> երկար կյանք»: Այդ բանը ոմանց ապշեցրեց, քանզի շատ պարզ կերպով կատարվածների մասին էր վկայում: Ուրիշներն էլ գտնում էին, որ դա զուրկ չէ խորամանկությունից ու կախարդանքից, որ այգու տերը այսպիսի խորամանկությամբ ցանկանում է կայսերական բարեհաճությանն արժանանալ: Ես չեմ կարող ասել, թե ովքեր էին իրավացի:

14. Իսկ պաշարված սկյութները ներսում սովից տառապելով, դրսից էլ պարսպավեր մեքենաներից, հատկապես այն կողմից, որի հսկողությունը դրված էր Ռոմանոս Կուրկուասի որդի մագիստրոս Հովհաննեսի վրա<sup>226</sup> (այնտեղ գտնվող քարանետ մեքենան շատ էր պաշարվածներին վնաս հասցնում), առանձնացնելով ամենաքաջ ծանրազեն զինվորներից ոմանց, թեթևազենների հետ միասին ուղարկեցին, փորձելու այդ մեքենան ոչնչացնել: Կուրկուասը, իմանալով դա, վերցրեց իր լավագույն մարդկանց, շտապ օգնության դիմեց, բայց ընկնելով սկյութների շրջապատման մեջ, նիզակի հարվածից ձին կորցրեց, նրա հետ գետին գլորվեց և սրախողխող արվեց: Վրա հա-



սած հոռմայեցիները ոուսների հետ կովի բռնվեցին, մեքենան  
 փրկեցին, իսկ սկյուրներին էլ ետ շարտելով, [ստիպեցին] քա-  
 20—VIII դաքում փակվել: Հուլիս ամսի քսանին ոուսները հսկայական  
 971 բազմությամբ [քաղաքից] դուրս եկան և հոռմայեցիների հետ  
 կովի բռնվեցին: Իրենց դոտեպնդում և մարտի էր պատրաստում  
 սկյուրների մոտ նշանավոր Իկմոր անունով մեկը, որը Սֆան-  
 գելլոսի սպանությունից հետո նրանց մոտ մեծ պատիվ ուներ:  
 Նրան բոլորը հարգում էին ոչ թե իր տոհմիկ ծագման պատճա-  
 ռով, ոչ էլ համակրելով նրան, այլ իր քաջության համար: Կրե-  
 տեի ամիրա Կուրուպեսի որդի Անեմասը, որ կայսերական թիկ-  
 նապահներից մեկն էր, տեսնելով, թե ինչպես [Իկմորը] քաջա-  
 բար կովելով և մյուսներին էլ ոգևորելով ու նույն բանին մղե-  
 լով, սասանում էր հոռմայեցիներին շարքերը, նրա աժդահա կա-  
 ռուցվածքից ամենևին չերկյուղեց, ոչ էլ նրա արիությունից, և  
 քաջությամբ լի, ձին դեռուղեն շարժելուց հետո, իր ազդրից  
 կախված թուրը քաշելով, անզուսպ թափով շարժվեց սկյուրի  
 վրա, հարվածեց նրա ձախ ուսին, անրակի մոտ և կտրեց վիզը:  
 Գլուխը աջ թևի հետ միասին գետին ընկավ: Սկյուրը գետին  
 փովեց, իսկ Անեմասը անվնաս վերադարձավ ճամբար: Այս  
 դեպքի առթիվ խառնիճաղանջ աղմուկ բարձրացավ՝ հոռմայե-  
 ցիները հաղթականորեն աղաղակեցին, իսկ սկյուրները՝ անփա-  
 ռունակ կոծեցին ու տեղի տվեցին: Հոռմայեցիների աղաղակնե-  
 րի տակ նրանք փախուստի դիմեցին և խայտառակ կերպով  
 քաղաքում ապաստանեցին: Այդ օրը [նրանցից] շատերը սպան-  
 վեցին՝ ոմանք տեղի նեղվածքի պատճառով իրար ոտնատակ  
 անելով, մյուսները ընկնելով հոռմայեցիների ձեռքը ու սրի  
 քաշվելով: Քիչ էր մնացել գերի ընկներ հենց ինքը՝ Սվլատոս-  
 լավը, բայց վրա հասած գիշերը փրկեց նրան: Վերապրածները,  
 ապաստանելով պարիսպների ետևում, Իկմորի սպանության  
 առթիվ մեծ լացուկոծ բարձրացրին<sup>227</sup>: Ընկած բարբարոսներին  
 դիակապտելու ժամանակ հոռմայեցիները սպանվածների մեջ  
 կանանց էլ գտան, որոնք տղամարդու շորեր հագած տղամարդ-  
 կանց հետ հոռմայեցիների դեմ էին կովել:

15. Քանի որ պատերազմը բարբարոսների համար անհաջող  
 էր ընթանում և ոչ մի տեղից օգնության հույս չկար (ցեղակից-  
 ները հեռու էին գտնվում, իսկ սահմանակից այլազգի բարբա-  
 րոսները, հոռմայեցիներից սարսափած, մերժեցին օգնել: Նը-  
 բանց պարենն էլ սպառվեց և ոչ մի սեղանից հնարավոր էլ չէր

այն ձեռք բերել, քանզի հոռմեական նավատորմիղը ուշադիր կերպով հսկում էր գետի ափերը: Իսկ հոռմայեցիների համար ամեն օր, կարծես առատ աղբյուրից, հոսում էր ամեն մի բարիք, հեծելազորն ու հետևակը գնալով ստվարանում: Սկյութները չէին կարող նաև իրենց նավակների մեջ մտնելով փախուստի դիմել, քանզի, ինչպես ասացինք, դուրս գալու տեղերը ուշադիր հսկվում էին), նրանք ժողով արեցին: Նրանցից ոմանք խորհուրդ էին տալիս գիշերով ծածուկ հեռանալ, մյուսները գտնում էին, որ քանի որ նահանջելու ոչ մի հնարավորություն չկա, հոռմայեցիների հետ պայման կնքեն, երաշխիքներ խնդրեն և այդպես հեռանան դեպի իրենց երկիրը: Ուրիշներն էլ իրենց կարծիքով ձեռնտու այլ խորհուրդներ էին տալիս: Բոլորն էլ ցանկանում էին մեկրնդմիշտ վերջ տալ պատերազմին, բայց Սվյատոսլավն ասաց մի անգամ ևս պատերազմել հոռմայեցիների դեմ և կամ հաղթել հակառակորդներին լավ մարտնչելով, կամ էլ պարտություն դեպքում գերադասել փառավոր ու երանելի մահը խայտառակ ու ամոթալի կյանքից, քանզի փախուստով փրկվելու դեպքում կյանքն իրենց համար անտանելի կլինի, իրենք արհամարհանքի առարկա կդառնան անցյալում իրենցից սարսափող հարևան ազգերին: Սվյատոսլավի խորհուրդը նրանց դուր եկավ և բոլորը համաձայնվեցին ամբողջ ուժով մասնակցել մահու կենաց պայքարին: Հաջորդ օրը նրանք բոլորը միասին դուրս եկան քաղաքից, փակեցին դարբասները, որպեսզի ոչ ոք չկարողանա փախուստի դիմելով ապաստանել քաղաքում, և բախվեցին հոռմայեցիներին: Տեղի ունեցավ կատաղի մարտ, բարբարոսները քաջաբար էին կռվում, իսկ ծանր սպառազինված հոռմայեցիները, կիզիչ արևից ու ծարավից տանջվելով (միջօրե էր), սկսեցին տեղի տալ: Կայսրը, տեսնելով դա, իր մարդկանցով շտապեց օգնության, կռվի ամբողջ ծանրությունը նա իր վրա վերցրեց, իսկ արևից ու ծարավից տանջվող զինվորների համար կարգադրեց գինով ու ջրով լի տիկեր բերել: Իրենց ծարավն հագեցնելով և կիզիչ արևից որոշ ժամանակ խուսափելով, նրանք իրենց կարգի բերեցին և ուժգնությամբ ու թափով խուժեցին սկյութների վրա: Վերջիններս քաջաբար դիմադրեցին և մտրտը հավասար էր: Կայսրը հասկացավ, որ սկյութների տոկունության պատճառը նեղ տեղանքն է, որը հոռմայեցիներին շիթողնում ծավալվել և իրենց արիությանը վայել մեծագործություններ ցուցաբերել, դրա համար զորավարներին հրամայեց



նահանջել դեպի դաշտը, հեռանալ քաղաքից, փախուստի դիմելու տպավորություն թողնելով, բայց ոչ շտապողականությամբ, այլ հանդարտ ու քիչ-քիչ և երբ [իրենց] հետապնդողներին քաղաքից հեռու քաշեն, հանկարծակի ձգեն սանձերը, շրջեն ձիերին և սկյուծների հետ կռվի բռնվեն: Զորավարները կատարում էին հրամանը, իսկ ուսները հռոմայեցիների նահանջը փախուստ համարելով, իրար կոչ անելով, աղաղակներով անցան հետապնդման: Հռոմայեցիները, երբ հասան կանխորոշված վայրը, շրջվեցին ու քաջաբար հարձակվեցին նրանց վրա: Այստեղ կատաղի մարտ տեղի ունեցավ, որի ժամանակ զորավար Թեոդորոս Միսթեացու ձին նիզակահար եղավ, իսկ Թեոդորոսը դետին ընկավ: Նրա շուրջը համառ կռիվ տեղի ունեցավ, ուսները ջանում էին սպանել նրան, իսկ հռոմայեցիները՝ փրկել: Այս Թեոդորոսը ձիուց ընկնելով սկյուծներից մեկի դոտիից բրունեց և կարծես մի թեթև վահանիկ լինելը, իր բազկի զորությամբ այս ու այն կողմ շարժելով, ետ էր մղում իր վրա ուղղված հարվածները, և քիչ քիչ նահանջում դեպի հռոմայեցիները, որոնք ի վերջո դերակշռության հասնելով, սկյուծներին ետ մղեցին և մարդուն վտանգից փրկեցին: Պատերազմը ելք չգտած, զորքերը բաժանվեցին միմյանցից:

16. Կայսրը, տեսնելով, որ սկյուծները նախկինից ավելի համառորեն են պայքարում, ցավելով շարշարվող և պատերազմից տառապող հռոմայեցիներին, ասլա և ժամավաճառությունից նեղված, վճռեց հարցը մենամարտությամբ լուծել: Նա Սվյատոսլավի մոտ դեսպանություն ուղարկեց, կոչ անելով մենամարտել, ասելով, թե ավելի լավ է մի մարդու մահվամբ հարցը լուծվի, քան թե ժողովուրդներ սրախողխող արվեն և կամաց կամաց սպառվեն, որ թող հաղթողը տերը լինի ամենայնի: Սվյատոսլավը սակայն շրնդառաջեց կայսեր կոչին և գոռոզաբար պատասխանեց, թե ինքը թշնամուց լավ գիտե իր համար ի՞նչն է ավելի լավ, և եթե [կայսրը] մտահոգված է այս աշխարհից հեռանալու, ապա մահվան բյուր ճանապարհներ կան, թող ուզածն ընտրի: Ահա այսպես պոռոտախոսելով, նա ավելի եռանդով պատերազմի նախապատրաստություն տեսավ: Կայսրը մենամարտից հույսը կտրած աշխատում էր բոլոր միջոցներով փակել բարբարոսների մուտքը դեպի քաղաք: Այդ գործը գլուխ բերելու համար նա ուղարկեց մագիստրոս Վարդաս Սկլերոսին՝ իր գլխավորած տազմաներով: Իսկ ծերունի Ռոմա-

նոսի որդի Կոստանդին կայսեր որդի պատրիկ Ռոմանոսին և Պետրոս ստրատոպեդարխին իրենց գլխավորած ուժերով կարգադրեց հարձակվել թշնամիների վրա: Նրանք համառ կռվի բռնվեցին սկյուլթների հետ, որոնք դիմադրություն ցույց տվեցին: Մարտի ելքը շատ փոփոխական էր, երկար ժամանակ հավասար: Այստեղ ևս Կրետեի ամիրայի որդի Անեմասը ձին այստեղ այնտեղ շարժելով ու ավելի ուժեղ խթանելով, երիտասարդական ավյունով խուժեց հենց Սվյատոսլավի վրա, և թշնամու փաղանգն երկուսի բաժանելով, թրով նրա գլխին հարված իջեցրեց: Նրան թեև ձիուց ցած գլորեց, բայց չսպանեց, նրա հագած զրահը թույլ շտվեց այդ բանն անել: [Անեմասին] շրջապատեցին և նա շատերից հարվածներ ստանալով, հերոսաբար զոհվեց, արժանանալով անգամ հակառակորդների մեծ հիացմունքին<sup>228</sup>:

17. Պատմում են, թե հռոմայեցիները ի վերուստ էլ օգնություն ստացան. հարավից սկյուլթների դեմքին մրրիկ բարձրացավ, որ թույլ չէր տալիս նրանց իրենց ուզածի պես մարտ մղել: Հռոմայեցիների ողջ բանակին մի ինչ-որ մարդ էլ երևաց, որ սպիտակ ձիու վրա նստած առջևից մարտնչում էր, սասանում ու դղրդացնում թշնամիների փաղանգները: Նա ո՛չ նախապես, ոչ է՛լ դրանից հետո չճանաչվեց: Ասում են, թե նա Թեոդորոսներից՝ բարեհաղթ մարտիրոսներից մեկն էր: Կայսրն ահա մշտապես այսպիսի պաշտպաններ ու սատարներ ուներ թշնամիների դեմ: Այնպես էր պատահել, որ այս ճակատամարտը տեղի ունեցավ հենց այն օրը, երբ մենք ընդունված կարգի համաձայն նշում ենք ստրատելատի<sup>229</sup> հիշատակը: Բյուզանդիոնում էլ մի առաքինի կին հաստատեց, որ երևույթը գերագույն ուժից էր, նա ճակատամարտի նախօրեին երազ էր տեսել, իրեն թվաց, թե աստվածածինն է մոտը կանգնել և լսել նրա ասածը ինչ-որ զինվորի, թե «Տեր Թեոդորոս, իմ և քո Հովհաննեսը դժվարին կացության մեջ է, շտապիր նրա օգնության»: Առավոտյան նա իր տեսածը հարևաններին պատմեց: Այդպիսին էր ահա երազը: Իսկ սկյուլթները դարձյալ փախուստի մատնվեցին, բայց քաղաքի դարբասները Սկլերոսի կողմից փակված գտնելով, դաշտով մեկ ցրվեցին ու կոտորվեցին, մի մասը՝ իրար տրորելով, իսկ մեծ մասն էլ հռոմայեցիներից սրի քաշվելով: Մնացած գրեթե բոլորը վիրավոր էին: Կայսրը ի պատիվ [Թեոդորոս] մարտիրոսի, նրա օժանդակությանը փոխհատույց լինելով հիմնովին քանդեց



այն տաճարը, որտեղ ամփոփված էր նրա սուրբ մարմինը, և շատ ավելի մեծն ու գեղեցիկը կառուցեց, նրա համար նա առանձնացրեց հոյակապ տիրույթներ, իսկ այդ [քաղաքը] Եվխանիայի փոխարեն վերանվանեց Թեոդորոպոլիս<sup>230</sup>:

18. Իսկ Սվյատոսլավը բոլոր միջոցները փորձելով, բայց ոչ մի արդյունքի չհասնելով, համոզվելով, որ իրեն ոչ մի հույս չի մնացել, որոշեց համաձայնության գալ: Նա կայսեր մոտ դեսպաններ ուղարկեց՝ ապահովության երաշխիքներ խնդրելով, որ հռոմայեցիների դաշնակիցն ու բարեկամը դառնալով, իրեն թույլ տրվի իր մարդկանց հետ տուն վերադառնալ, իսկ սկյուծներին ով ցանկանա առևտուր անելու, առանց վախի [իդավունք ունենա] գալ [Ռոմանիա]: Կայսրն ընդունեց դեսպաններին, նրանց ասաց ընդունված խոսքը, թե հռոմայեցիները սովորություն ունեն թշնամիներին պարտության մատնել, ոչ թե զենքով, այլ բարերարությամբ: Նա հաստատեց [Սվյատոսլավի] բոլոր խնդրանքները: Երբ հաշտությունը կնքվեց<sup>231</sup>, Սվյատոսլավը աղերսեց տեսակցել կայսեր հետ: Նրա այդ խնդրանքն էլ նա բավարարեց և Սվյատոսլավն եկավ կայսեր մոտ: Հանդիպելով միմյանց, նրանք տեսակցություն ունեցան իրենց ցանկացած նյութի շուրջ և բաժանվեցին<sup>232</sup>: Դարձյալ Սվյատոսլավի խրնդրանքով, կայսրը պաժինակների մոտ դեսպանություն ուղարկեց՝ բարեկամություն և դաշնակցություն առաջարկելով, որպեսզի նրանք [այլևս] չանցնեն Իստրոս դետը և չասպատակեն Բուլղարիան, թույլ տան ռուսներին առանց խոչընդոտի անցնել իրենց՝ պաժինակների երկրի վրայով և նույն տեղով էլ տուն վերադառնալ: Դեսպանության գնացողը Եվխայիտների Եպիսկոպոս Թեոփիլոսն էր: [Պաժինակները], ընդունելով դեսպանությունը, մերժեցին միայն ռուսներին անցում տալու կետը, իսկ մնացածների վերաբերյալ պայմանագիր կնքեցին: Ռուսները նավեցին, գնացին, իսկ կայսրը դետի ափին գտնվող բերդերի ու քաղաքների մասին հոգալով, դեպի հռոմայեցիների երկիրը շարժվեց: Քաղաքի քահանայապետը սինոդով հանդերձ, ապա և բոլոր պաշտոնավոր անձինք հալթական հիմներով ու ներբողներով, պսակներ հադած ելան նրան ընդառաջ՝ մի շատ հոյակապ, չորս սսիտակ ձիերով լծված կառք պատրաստած: Նրանք մտադիր էին այդ կառքի վրա կայսեր հաղթական շքերթ կազմակերպել: Կայսրը սակայն ոչ մի արտակարգ բան չէր ուղում, նա իրեն պարզ էր պահում. նա ընդունեց իրեն մատուցված պսակները,

972 բայց հաղթական շքերթ կատարեց սպիտակ ձիու վրա նստած, կառքի վրա նա բուլղար թագավորների հանգերձները դրեց, նրանց վրա՝ քաղաքի պաշտպան աստվածամոր պատկերը և հրամայեց [կառքն] իր առջևից տանել: Հասնելով Ֆորում<sup>233</sup> կոչվող տեղը և ըստ արժանվույն ներբողների արժանանալով, հաղթանակի առթիվ աստվածամոր և նրա որդուն գոհություն մատուցելով, քաղաքացիների առաջ բուլղարական թագավորության նշանակները Բորիսի վրայից հանեց. դրանք էին՝ ոսկե պսակ, բարակ թելից գործած խույր և կարմիր կոշիկներ: Այնտեղից նա գնաց Մեծ եկեղեցի, որտեղ բուլղարական թագը աստծուն մատուցեց, Բորիսին մագիստրոսի պատվաստեճանը շնորհեց և ուղևորվեց պալատ: Իսկ Սվյատոսլավը պաժինակների երկրի միջով իր երկիրը վերադառնալիս նախօրոք իր համար պատրաստված ծուղակի մեջ ընկավ և իր համայն բազմությամբ հանդերձ գլխովին կոտորվեց<sup>234</sup>: Պաժինակները այդ ձևով ահա իրենց վրեժը լուծեցին [Սվյատոսլավից] հոռմայեցիների հետ դաշինք կնքելու համար:

974 19. Իսկ կայսրը հաղթանակի առթիվ փրկիչ Քրիստոսին գոհություն հայտնելուց հետո, խալկե կամարից վերև ի նորո տաճար կառուցեց՝ նրա պաճուճանքի ու զարդարանքի համար ոչինչ չխնայելով: Նա ողջ հարկատու բնակչությունից դադարեց ծխահարկի՝ այսպես կոչված, կապնիկոնի<sup>235</sup> գանձումը: Նա հրաման տվեց դահեկանի և օբոլոսի վրա Փրկչի պատկերը դրոշմել, մի բան, որ նախապես չէր եղել: [Դրամի] երկու երեսին էլ հոռմեական տառեր գրվեցին<sup>236</sup>, որ կարդացվում էին հետևյալ կերպ. «Հիսուս Քրիստոս թագավոր թագավորաց»: Այդ սովորությունը պահպանեցին և հաջորդ կայսրերը: Իր նկատմամբ առաջ քաշված մեղադրանքի վրա սինոդով Վասիլ պատրիարքին կարգալույծ արեցին. պատրիարք ձեռնադրվեց Անտոնիոս Ստուգիտեսը<sup>237</sup>:

975 20. Ինդիկտիոնի երրորդ տարվա օգոստոս ամսին գիսաստղ երևաց, պոգոնիաս<sup>238</sup> կոչվածը: Նա երևաց մինչև ինդիկտիոնի չորրորդ տարվա հոկտեմբեր ամիսը: Նա կայսեր մահն էր կանխագուշակում և եղբայրասպան պատերազմների պատճառով հոռմայեցիների երկրի գլխին գալիք անմխիթարական փորձանքները:

21. Նիկեփոր կայսեր կողմից գրավված և հոռմայեցիներին հարկատու դարձած քաղաքները, ինչպես վերևում ասացինք,



975

ապստամբություն բարձրացնելով, տապալել էին հռոմեական գերիշխանությունը: Ահա սրանց դեմ դուրս եկավ կայսրը և հասավ մինչև Դամասկոս<sup>239</sup>: Համոզելով, [քաղցր] խոսքով, բայց և պատերազմով ու բռնությամբ նա դրանք վերագրավեց և ամեն ինչ պետք եղածի պես կարգի բերելով, ճանապարհ ընկավ դեպի մայրաքաղաքը<sup>240</sup>: Հասնելով Անավարզա, նա շրջեց Պողանգոսով<sup>241</sup> և մյուս շրջաններով<sup>242</sup>, ամեն ինչ աչքից անցկացրեց, տեսավ հոյակապ կալվածներ, ծաղկող ու բերքառատ գյուղեր և իր մոտ գտնվողներին հարցրեց, ու՞մ են դրանք պատկանում: Երբ իմացավ, որ բոլորը պատկանում են Վասիլ պարակիմոմենոսին, որոնցից սրան ու դրան վերջերս հռոմայեցիները տիրացան նիկեփոր կայսեր ձեռքով, [Ուկ սրան ու դրան սխուլերի այսինչ դոմեստիկոսի, այս էլ մի ուրիշի, վերջապես սրան ու դրան քո կողմից, և նվեր են տրվել Վասիլին, երբ տեսավ, որ ձեռք բերվածից պետությանը ոչ մի կարգին՝ բան չի մնացել, նա շատ տխրեց և խոր հառաչելով ասաց. «Շատ վատ է, ով ներկաներ, երբ պետական ունեցվածքը այդպես շոռայվում է, հռոմեական զորքերը այդպես տառապում, կայսրերն անսահման շարշարանքներ են իրենց վրա վերցնում, և այդքան տքնությամբ ու շարշարանքով ձեռք բերվածը մի ներքինու սեփականություն է դառնում»: Կայսրն այդքանն ասաց, իսկ ներկաներից մեկը կայսեր ասածը Վասիլին հասցնելով, նրա զայրույթը գրգռեց: Նա այդ պահից սկսած առիթ էր որոնում կայսեր մեջտեղից հանելու: Նա կարողացավ քաղցր խոսքով ու նվերներով խաբել կայսեր մատրովակին, [նրա միջոցով] կայսեր խմելիք գինու մեջ թույն խառնել ու խմեցնել, ոչ ազդու և արագ գործող, այլ դանդաղ, խմողի ուժը կամաց կամաց կործանող: Նա խմեց, աստիճանաբար հիվանդացավ, ուժասպառ եղավ, վերջը նրա ուսերն էլ ածխացան, աչքերից մեծ արյունահոսություն ունեցավ, և մայրաքաղաք մտնելով վախճանվեց, թագավորելով վեց տարի, այդքան էլ ամիս<sup>243</sup>, կյանքի ժառանգ թողնելով Ռոմանոսի որդիներ Վասիլին և Կոստանդինին:

10—I

—976

## Վ Ա Ս Ի Լ Ե Վ Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ի Ն

[11 հունվար 976—15 դեկտեմբեր 1025 թթ.]

1. Հովհաննեսն ահա ասված ձևով վախճանվեց, իսկ թագավորական իշխանությունը՝ 6484 թվականին, ինդիկտիոնի 4-րդ տարվա դեկտեմբեր ամսին, անցավ Ռոմանոսի որդիներ Վասիլին և Կոստանդինին: Վասիլի 20-րդ տարին էր ընթանում, Կոստանդինը նրանից երեք տարով փոքր էր: Սրանք դեռ ջանել էին ու թույլ, ոչ հաստատուն կամքով, և անունով էին կայսրեր, պետական գործերի փաստական տերը պրոեգրոս Վասիլն էր<sup>244</sup>: Երբ իշխանությունն անցավ Ռոմանոսի որդիներին, [Վասիլը] սուրհանդակներ ուղարկեց և աքսորից պալատ բերեց նրանց մորը: Նա վախենում էր թագավորության դեմ [հնարավոր] ապստամբություններից, հատկապես մագիստրոս Վարդաս Սկլերոսից, որը թագավորության վրա շարունակ աչք ուներ և մշտապես ապստամբելու ցանկություն (նա գեռ Հովհաննես կայսեր դեմ դավադրություն նյութելու համար ձերբակալվել և դատապարտվել էր կուրացման, բայց [Հովհաննեսը] փրկել էր նրան այդ դատավճռից): Ահա Վասիլը ամենից շատ սրանից էր վախենում, քանզի այն ժամանակ հռոմեական բոլոր զինված ուժերը նրա ձեռքում էին, նա հեշտությամբ ցանկացած տեղն էր նրանց տանում (նա նշանակված էր համայն Արևելքի ստրատելատ): [Վասիլը] գտավ, որ թագավորության համար նպատակահարմար է ու անհրաժեշտ ջլատել, թուլացնել նրա անսահման հզորությունը, ենթադրվող՝ ապստամբության առնչությամբ: Նա [Վարդասին] զրկում է ստրատելատի աստիճանից և նշանակում Մեսոպոտամիայի տագմանների դուքս<sup>245</sup>, հրամայելով արթուն կերպով հսկել սարակինոսների արշավանքները: Նա նույնպես վարվեց և կասկածներ հարուցող Միքայել Բուրցիսի հետ. ջանալով հեռացնել նրան Սկլերոսի հետ ունեցած ընկերությունից (Բուրցիսն էլ նրա հետ էր՝ և ինչ-որ զինվորական տագմա էր գլխավորում): Ահա [Վասիլը] սրան մագիստրոսի պատվաստիճանը շնորհելով, նշանակեց Օրոնտես [գետի] վրա գտնվող Անտիոքի դուքս, իսկ արևելից համայն զորքերի վերատեսուչ ու վերակացու՝ Փոկասի ստրուկ պատրիկ Պետրոսին, տալով ստրատոպեդարխի կոչումը. սա ներքինի էր, բայց արտակարգ գործունյա և պատերազմական հարցերում



շատ հմուտ: Այդ բանը Սկլերոսին շատ տխրեցրեց, այն աստի-  
ճան, որ նա չկարողացավ արիաբար իր մեջ պահել կսկիծը<sup>246</sup>,  
նա պարսավեց ու նախատեց [սլետությունը] ասելով, թե իր  
գործած սխրանքների ու տարած հաղթանակների դիմաց ահա  
այսպիսի հատուցում է ստանում, փոխանակ առաջ քաշելու,  
ես են մղում, և դա պարակիմոմենոսին քիչ, գուցե ամենևին էլ  
չի հետաքրքրում. [պարակիմոմենոսն] ասել էր, թե [Սկլերո-  
սը] թող բավարարվի տրվածով և սվելին չպահանջի, թե չէ, լի-  
նելով սեփական տան տեր, կարող է դրա ծառան դառնալ:

2. Պարակիմոմենոսն ահա այդ քայլերին դիմեց: Վարդասը  
մայրաքաղաքից վաղվաղակի գնաց ստանձնեց իրեն տրված  
պաշտոնը: Անցյալում նա ռազմավարական հարցերում բազմիցս  
հանդես եկավ որպես խոհուն և գործունյա մարդ, և, բանաս-  
տեղծաբար ասած, համայն գորքի սիրելին դարձավ: Իր գաղտ-  
նիքը հայտնեց նրանց, որոնց վստահում էր, հատկապես ստրա-  
տելատների տաղմային: Եվ ահա իր ծրագրերը ի հայտ բերելու  
համար ժամանակ որսալով, իր մերձավորների հետ խորհրդակ-  
ցելուց հետո, երկար ժամանակ երկնած ապստամբությունը  
ծնավ, կայսրերի և ցեղակիցների դեմ զենք բարձրացրեց: Նա  
առանց հապաղելու մայրաքաղաք ուղարկեց Անթեսին, մակա-  
նունը Ալիատես, իր ամենագործունյա սպասաւորին, որպեսզի  
փորձի փախցնել և իր մոտ բերել մայրաքաղաքում գտնվող իր  
որդուն՝ Ռոմանոսին: [Անթեսը] լինելով քաղաքում և ջանալով  
իր իսկությունը ծածկել, սկսեց Սկլերոսի հասցեին վատ լուրեր  
տարածել, որով հաջողվեց առանց իր վրա կասկած հարուցելու,  
Ռոմանոսին փախցնել և Սկլերոսի մոտ բերել: Վարդասն իր  
մտադրություններն արդեն բացահայտեց, կապեց թագը, վերց-  
րեց թագավորության մնացած նշանակները և իր հետ եղող հոռ-  
մեական համայն գորքի կողմից կայսր հռչակվեց<sup>247</sup>: Առաջինը նը-  
րան [կայսր] ներբողեցին հայերը<sup>248</sup>: Քանի որ այսպիսի վեզ գցողը  
բազում դրամի կարիք ունի, առանց որի, ինչպես հոետոր [Դե-  
մոսթենեսն] է ասում, ոչինչ չես կարող անել<sup>249</sup>, նա իսկույն դի-  
մեց դրամ հավաքելու, բռնեց պետական հարկահավաքնե-  
րին<sup>250</sup> և սկսեց ինքը գանձել պետական գումարները, ձերբակա-  
լել ու պատժել փող ունենալու մեջ ենթադրվող մարդկանց:  
Ոմանք կամուլին էին բերում ու հանձնում իրենց ունեցվածքը,  
հույս ունենալով [ապագայում] բազմապատիկն ստանալ: Եվ  
ահա կարճ ժամանակամիջոցում նա բաղում դրամ է կուտակում:

976

Գրավելով Մեսոպոտամիայում գտնվող Խարբերգ անունով անա-  
ոիկ բերդը<sup>251</sup>, ամեն տեսակետից այն ապահովելով, պետք եղած  
կայազորը հաստատելով, այնտեղ էր պահում հավաքված դրամ-  
ները, որոշելով անհաջողության դեպքում այն դարձնել ապաս-  
տարան և փրկության նավահանգիստ: Նա հարևան սարակինոս-  
ների հետ դաշինք կնքեց, այն է Ամիդի, որ էմետ է կոչվում, ա-  
միրա Աբու Դուլափի, և Մարտիրոպոլսի, որ Մայաֆարիկին էն  
կոչում, ամիրա Աբու Տաղլիբի հետ<sup>252</sup>, նրանց հետ խնամիական  
կապեր հաստատեց, որոնցով ամրապնդեց բարեկամությունը,  
նրանցից բաղում դրամ ստացավ և դաշնակից զորք՝ 300 ա-  
րաբ ձիավորներ<sup>253</sup>: Երբ [ապստամբության] լուրը տարածվեց  
ամենուրեք, խառնակությունների սիրահար ամեն մարդ նրա  
մոտ հավաքվեց: Երբ ամառը եկավ, նա հույսերով լի համայն  
զորքով շտապ ճամփա ընկավ դեպի մայրաքաղաքը՝ ոչ ավելի,  
ոչ պակաս պալատ մտնելու ակնկալությամբ: Այս քայլին դիմե-  
լու հարցում իրեն ավելի համարձակ ու հանդուգն դարձրեց  
ինչ-որ առաքինի մարդ լինելու հավակնությունն ունեցող մի  
վանականի գիշերային տեսիլքը: Նա [երազում] հրեղեն այրեր  
էր տեսել, որոնք Վարդասին առնելով տանում էին դեպի մի  
շատ բարձր տեղ, որտեղ տղամարդուց ավելի խոժոռադեմ մի  
կին հանդիպեց և նրան ընձեռեց կայսերական խարազանը: Վար-  
դասն այդ խարազանը թագավորության նշանակ համարեց, բայց  
իրականում դա աստծու ցասումն էր հռոմայեցիների դեմ:

3. Երբ [ապստամբության] լուրը մայրաքաղաք էլ հասավ,  
կայսրերը սարսափահար եղան, պետության ամբողջականու-  
թյան մասին մտածող ողջախոհ մարդկանց տազնապ համակեց:  
Բերկրանք ապրեցին միայն նրանք, ովքեր պետական հեղաշր-  
ջումների և թալանի սիրահարներ էին: Անհապաղ Պետրոս ստրա-  
տոպեդարխին նամակ ուղարկվեց և զորքի առողջ մասը անհա-  
ամառ պաղ Կեսարիայում հավաքվեց: Այդ ընթացքում Նիկոմեդիայի  
պրոեդրոս<sup>254</sup> սինկելլոս Ստեփանոսը, մի անվանի, իմաստու-  
թյամբ ու առաքինությամբ հռչակված, մարդու դաժան ու ան-  
զուսպ մտադրությունները քաղցր խոսքով մեղմել կարողացող  
մեկը, Սկլերոսի մոտ դեսպան է ուղարկվում, ջանալու նրան հա-  
մողել, որ զենքը ցած դնի: Բայց [Սկլերոսը] մի բանի մասին էր  
մտածում, թագավորությունը ձեռք գցելու, և երբ [Ստեփանոսը]  
նրա մոտ գալով բազում սիրալիր ու հրապուրիչ խոսքեր ասաց,  
նա երկար բարակ պատասխան շտվեց, այլ երկարելով աջ ոտքը

976

ամառ



և ցույց տալով կարմիր կոշիկը, ասաց. «Ո՛վ մարդ, բազում մարդկանց ներկայության սա մի անգամ հագնելուց հետո, հնարավոր չէ հեշտությամբ հանել<sup>255</sup>, Քեզ ուղարկողներին ասա, որ ինձ կամովին կայսր ընդունեն, մեկ է, ես նրանց կամքին հակառակ էլ կջանամ տիրել իշխանության»։ Այդ ասելով և քառասուն օր ժամկետ տալով, հրամայեց նրան բաց թողնել։ Սինկելլոսը վերադարձավ և կայսրերին ու թագավորության դեկավար Վասիլին<sup>256</sup> հայտնեց Սկլերոսի պատասխանը։ Դրա վրա ստրատոպեդարխին գրություն ուղարկվեց՝ ներքին պատերազմ չսկսել, այլ ապահով կերպով հսկել անցումները և եթե որևէ մեկը պատերազմելու գա, պաշտպանվել։ Սկլերոսը ճամփա ընկնելով դեպի Կեսարիա, առաջընթաց [մարտիկներ] և հետախույզներ ուղարկեց, որպեսզի լրտեսեն, իրեն տեղեկացնեն հակառակորդների գտնված վայրը, հարթեցնեն իր ճանապարհը։ Ուղարկվածների հրամանատար էր նշանակված Անթես Ալիատեսը։ Նրանք մի կիրճ հասան (այդ վայրը կոչում են Կուկոսի քար), որտեղ հանդիպեցին կայսերական բանակի մի զորամասի, որին գլխավորում էր մագիստրոս Եվստաթիոս Մալեյինոսը<sup>257</sup>, և հեռամարտի բռնվելով, փորձեցին բախվել։ Որոշ ժամանակ ահա երկու կողմերն էլ այդպես հեռամարտությամբ էին զբաղված և ոչ ոք թիկունք չէր ցույց տալիս, երբ Ալիատեսը, չկարողանալով այլևս իրեն զսպել, տաքացած, խթանեց իր ձին և աննկարագրելի թափով բախվեց հակառակորդների վրա։ Խոսքի արժանի բան չգործած, նա մահացու վերք ստացավ ու ընկավ, իսկ իր ողջ [զորքը] ցրվեց մերձակա անտառներում ու թավուտներում։ Այդ ժամանակ լուր տարածվեց, որ Վարդասի հետերիարխը<sup>258</sup> մտադիր է կայսեր զորքի կողմն անցնել։ Սկլերոսը նրան իր մոտ կանչեց, սլախարակեց, բացահայտ ոչինչ չարած աղատ արձակեց, բայց վարձկան սարակինոսներին ծածուկ կարգադրեց ու սպանեց. օր ցերեկով [փողոցում] անցնելիս նրանք դաշույններով վրա խուժեցին և խողխողեցին։

4. Կայսերական զորաբանակների հրամանատարները որոշեցին նախքան Սկլերոսի հայտնվելը ճանապարհի կարևոր դիրքերը բռնել։ Նրանք ամբողջ զորքով գնացին ու բանակեցին նրա դիմաց, կանխօրոք բռնելով այն ճանապարհները, որոնցով անցնելու էր [Սկլերոսը]։ Երբ այդ բանը Սկլերոսն իմացավ, նրա թափը կոտրվեց, նա այլևս չէր շտապում առաջանալ, և ձղձրգամամբ ժամանակն էր վատնում, սպասելով, թե ի՞նչ ցույց կտա

ապագան: Նրան ոտքի հանեց ու եռանդն էր բորբոքում իր մոտ եկած դասալիք մի զորավար, անունը Սահակ, մականունը՝ Վահրամ<sup>259</sup>: Նա [Սկլերոսի] մոտ գալով, խորհուրդ տվեց իզուր տեղ ժամավաճառ շլինել, քանզի, նրա ասելով ժամավաճառությունը անկումայնություն է առաջացնում: [Սկլերոսը] գտնելով, որ նա իրավացի է, նրան նշանակում է արշավանքի ղեկավար ու առաջնորդ: Ահա [Սահակը] առջևից էր գնում, իսկ [Սկլերոսը]՝ հետևում նրան: Երեք օրից նա հասնում է Լապարա<sup>260</sup>: Սա Կապադովկիայի մի մասն է կազմում, որ այժմ Լիկանդոս է կոչվում: Նա [Լապարա] է կոչվել իր բարբերության և բերքատուության պատճառով: Ստրատոպեդարիսը իմանալով այդ մասին և երկյուղելով, որ Սկլերոսը կարող է իրեն շրջանցելով գնալ, գիշերով առաջ շարժվեց ու բանակեց հակառակորդների դեմ դիմաց: Որոշ ժամանակ երկու կողմերն էլ խուսանավում էին, ձգձգում բացահայտ բախումը և ջանում խորամանկությամբ հաղթանակ տանել: Վարդասը գերազանցեց իր հակառակորդներին. նա առատ ընթրիք պատրաստեց, ձևացնելով, թե ուզում է իր զորքերին ճաշ տալ, և այդպիսով խաբեց թշնամիներին, որոնք, ենթադրելով, որ [Սկլերոսն] այդ օրը պատերազմ չի ձեռնարկի, իրենք էլ իրենց կերուխումի տվեցին: Երբ այդ մասին իմացավ Սկլերոսը (նա զորքերը մարտական պատրաստության մեջ էր պահում), հանկարծակի պատերազմական շեփորը հնչեցնելով, հարձակվեց ճաշի նստած թշնամիների վրա, որոնք, յուրաքանչյուրը, պատահած զենքն առնելով, առանց անակնկալից շփոթվելու, հարձակվողներին ընդդիմակայեցին: Նրանք որոշ ժամանակ համառորեն դիմադրում էին: Այնուհետև Վարդասը թևանցում կատարելով, թշնամիների մեջ շրջապատման սարսափ գցեց, վարձկաններին ուղարկելով թիկունքից հարձակվելու, նրանց փախուստի մատնեց և մեծ ջարդ տվեց<sup>261</sup>: Առաջինը նահանջեց Անտիոքի դուքս Բուրցիսը՝ կամ վախկոտությունից, կամ էլ դավաճանելով. երկու վարկածն էլ կար: [Վարդասը] տիրացավ ամբողջ ճամբարին, իր կայքով հանդերձ. նա ձեռք բերեց անհաշիվ հարստություն: Այնտեղից այնուհետև նա եկավ Ծամրնդավ կոչվող [վայրը]<sup>262</sup>: Ծամրնդավը գահավեժ ժայռի վրա գտնվող բազմամարդ ու շատ հարուստ քաղաք է: Տեղացիք [քաղաքը] նրան տվեցին կամավոր, և նա հսկայական հարստություն հավաքեց: Այս հաղթանակը կայսեր կողմնակիցներից շատերին ցնցեց և ստիպեց Սկլերոսի կողմն անցնել: Սկլերոսի կողմն ա-



ուաջինն անցավ Բուրցիսը, պատրիկ Անդրոնիկոս Դուկաս Լիզոսը՝ որդիներով հանդերձ: Իսկ ատտալիացիներն էլ կայսեր ծովակալին բանտարկելով, համայն նավատորմիղով անցան Սկլերոսի՝ Կիբիրեոտների բանակաթեմի զորավար նշանակած Միքայել Կուրտիկի կողմը<sup>263</sup>:

5. Երբ այդ բոլորի մասին հայտնվեց կայսեր և պարակիմոմենոսին, նրանք խորհրդակցելով որոշեցին կայսեր մտերիմներից մեկին կայսերակից դարձնել, ազատելով նրան որևէ պատասխանատվությունից, բայց իրավունք տալ իր կողմն անցած մարդկանց պաշտոններ, առատ ընծաներ շնորհել և շարժվել ապրտամբների դեմ: Այդ միտքը հավանություն գտավ և կայսեր պրոտովեստիարիոս Լևոնն ուղարկվեց: Նա որպես խորհրդական վերցրեց ոմն պատրիկ Հովհաննեսի, հայտնի, ճարտասան մի մարդու: [Լևոնը] կայսեր կողմից լիազորություն ստացավ անարգել որպես կայսր գործելու: Նա դուրս գալով, հասավ Փոյուզիայի Կոտիեոն, միացավ Պետրոս ստրատոպեդարխին ու այնտեղ բանակեց. վարդասը վրան էր խփել Դիպոտամոսում: Սա մի կայսերական գյուղ է, որը տեղացիք Սեսանակտա են կոչում: [Լևոնը] ծածուկ ջանում էր ապստամբներին իր կողմը գրավել և կայսեր կողմնակից դարձնել, նրանց նվերներ ու պաշտոններ խոստանալով, բայց իր հաշիվների մեջ սխալվեց. իր կոչը հակառակորդը թուլության նշան համարելով, էլ ավելի գոտեպնդվեց: Դրա վրա նա հույսը կտրած, գիշերով Կոտիեոնից, Սկլերոսի կողքից անցնելով, շարժվեց դեպի արևելք: Այդ բանը Սկլերոսի մարդկանց ահուդողի մեջ գցեց, նրանք երկյուղեցին ոչ միայն [իրենց] ունեցվածքի ու կալվածների համար, այլև իրենց ամենաթանկագին բանի: Բաղում մարդիկ, հրաժարվելով ապստամբությունից, պրոտովեստիարիոսի կողմն էին անցնում, այնպես որ վտանգ առաջացավ ապստամբների փոշիացման: Սկլերոսը դրանից վախեցած, մագիստրոս Միքայել Բուրցիսին, որ, ինչպես ասացինք, վերջերս իր կողմն էր անցել, ինչպես և պատրիկ Ռոմանոս Տարոնացուն<sup>264</sup>, հզոր զորքով ուղարկեց, հրամայելով խոչընգոտել պրոտովեստիարիոսին, նրա վրա հանկարծակի հարձակումներ գործել, ինչքան հնարավոր է խանգարել նրա գրոհները, բայց խուսափել վճռական ճակատամարտից: Բուրցիսի զինվորները, մոտենալով կայսերական զորքին, հակառակ Սկլերոսի կարգադրության, ստիպված եղան ակամայից կռվի բռնվել: Պատճառը հետևյալն էր. լուր ստաց-

վեց, որ Արևելքի Բերիայի<sup>265</sup> սարակինոսները դուրս են եկել գնալու մայրաքաղաք՝ հռոմայեցիներին տանելու տարեկան հարկը, որ այսինչ օրը նրանք պետք է անցնեն բանակների միջով: Երբ այդ օրը եկավ և սարակինոսները պետք է Օքսիլիթոս<sup>266</sup> կոչվող բերդի մոտով անցնեին, Բուրցիսի մարդիկ զինեցին իրենց զինվորներին, նույն բանն արեցին նաև պրոտովեստիարիոսի մարդիկ և եռանդագին դիմեցին մարտի: Նրանց առջև էր դրված, կարծես մրցանակ, սարակինոսների ոսկին: Երբ [սարակինոսները] մոտեցան, նրանք հարձակվեցին միմյանց վրա և մարտի բռնվեցին: Բուրցիսը պարտվեց, նրա զինվորներից շատերը սպանվեցին, հատկապես հայերը, քանզի հռոմայեցիները, այն բանի համար, որ հայերն առաջինն անցան ապստամբի կողմը, իրենց ձեռքն ընկած բոլոր հայերին անխնա սրի քաշեցին:

Ե. Երբ պարտության լուրն իրեն հայտնվեց, Վարդասն առանց հապաղելու իր զորքերը վերցնելով, շտապեց օգնություն: Հասնելով Ռագեսա կոչվող ինչ-որ վայր, նա բանակեց, սպասելով մարտ տալու հարմար պահի: Կայսերական զորքերի ժամավաճառության պատճառով ճակատամարտի պահը ձգձգվում էր, որի ընթացքում բազում ապստամբներ, նախորդ պարտությունից ցնցված, անցնում էին պրոտովեստիարիոսի կողմը: Կայսեր բանակում եղած երիտասարդներն ու պատերազմների փորձ չունեցողները մոտալուտ հաղթանակից ամբարտավանացած, կռիվն սկսելու մեծ եռանդ էին ցուցաբերում, իսկ ավելի տարեցներն ու մարտում կոփվածները վախենում էին ու խուսափում ճակատամարտից: Բայց ինչպես մի մարդ ասել է, «դյուրահավատը փորձանքի ետևից է գնում»<sup>267</sup>, պրոտովեստիարիոսը ականջ է դնում երիտասարդների խոսքին և պատերազմական շեփոքը հնչեցնելով, զորքը կովի է հանում: Վարդասն իր զորքը երեք աշուն մասի բաժանեց, կենտրոնը զլխավորեց ինքը, աջ թևի վրա հրամանատար նշանակեց իր եղբայր Կոստանդինին, իսկ ձախ թևի՝ Կոստանդին Գավրասին<sup>268</sup>: Բախման ընթացքում թևերի զորավարները հեծելազորով հարձակվեցին հակառակորդների վրա, պրոտովեստիարիոսի զինվորները շկարողանալով դիմագրել, պարտություն կրեցին: Տեղի ունեցավ մեծ կոտորած: Այստեղ, ի միջի այլոց ընկան պատրիկ Հովհաննեսը, Պետրոս ստրատոպեդարխը և երևելիներից շատ ուրիշներ: Պրոտովեստիարիոսը և այլ հրամանատարներ գերի ընկան: [Վարդասը] հրաման տվեց



պրոտովեստիարիոսին հսկողութեան տակ պահել, իսկ եղբայրները Թեոդորոս ու Նիկետաս Հագիողախարիտներին, որպէս թե իր նկատմամբ ուխտագրուած եղածների և պրոտովեստիարիոսի կողմն անցածների, ամբողջ զորքի ներկայութեամբ կուրացրեց:

7. Այս հաղթանակից հետո Վարդասի համբավը մեծացավ ու տարածվեց, բոլորը, այսպէս ասաց մեծն ու փոքրը նրա կողմըն էին անցնում: Իսկ կայսեր համար մի հույս էր մնացել, սուրբ խարիսխը՝ աստծո օգնութիւնը: Պարակիմոմենոսը իր ուշադրութիւնը թեև բեւեռել էր ցամաքի վրա, բայց ավելի շատ հոգ էր տանում ծովի մասին, քանզի նրան նեղութիւնն էր պատճառում հակառակորդի նավատորմիղի հրամանատար Միքայել Կուրտիկը, որը գրավելով բոլոր կղզիները, մտադիր էր պաշարել Հելլեսպոնտոսի Աբիդոսը: Այդ իսկ պատճառով [պարակիմոմենոսն] ահա նավատորմիղը շատ լավ կարգի բերելով, պատրիկ Թեոդորոս Կարանտենոսի ծովակալութեամբ Կուրտիկի դեմ է ուղարկում: [Պատրիկ Թեոդորոսը], նավելով և Հելլեսպոնտոսի նեղուցներն անցնելով, Փոկեսյում բախվում է Կուրտիկին: Տեղի ունեցավ համառ նավամարտ, որտեղ Կուրտիկի մարդիկ պարտութիւնն են կրում ու ցիր ու ցան լինում: Կարանտենոսը ծովի տերը դարձավ և ծովում անդորր տիրեց: Ծովում հաջողութիւնն ձեռք բերելուց հետո, պարակիմոմենոսը սկսեց ցամաքի վրա ուշադրութիւն դարձնել: Նա պատրիկ Մանուիլ էրոտիկոսին, ազնվական, իր առաքինութեամբ ու արիութեամբ անուն հանած մի մարդու, ուղարկեց Նիկիայի պաշտպանութեան: Մի փոքր անց տեղ է հասնում նաև Սկլերոսը, որ Նիկիայի շուրջ գտնվող գյուղերը հրկիզելով, վերջը հենց Նիկիայի վրա է հարձակվում, ջանալով քաղաքավեր մեքենաներով գրավել այն: Մանուիլը արիաբար դիմադրում էր, պարիսպների վրա [հակառակորդի] հենած աստիճաններն ու մեքենաները հունական հրով կրակի տալիս: Սկլերոսը պաշարումից արդյունքի չհասնելով, հույս ունենալով քաղաքը գրավել [բնակչութեանը] սովի մատնելով: Պաշարումը երկարեց, քաղաքացիները պարենի պակասից սկսեցին տառապել, Մանուիլը չգիտեր ի՞նչ անի, Սկլերոսը շատ ուշադիր հսկում էր մուտքերը և ինքը չէր կարող քաղաքը պարեն բերել, և դրա համար որոշեց Սկլերոսին խորամանկութեամբ հաղթահարել: Նա Նիկիայի ցորենի ամբարները ավաղով լցրեց, ավազը ցորենով ծածկեց, այնպէս արեց, որ դիտողը խաբւի, որից հետո հակառակորդ զորամասից գերի ընկած ոմանց բերեց և ամբարները

ցույց տալով, արձակեց, որ գնան Սկլերոսի մոտ և ասեն, թե «Ես սովից չեմ վախենում (քանզի երկու տարվա համար բավարար պարեն ունեմ), իսկ պաշարելով քաղաքը առնել հնարավոր չէ: Արդ, լինելով քո համախոհը, ես պատրաստ եմ քո օգտին հեռանալ քաղաքից, եթե դու ինձ և իմ մարդկանց երդումներով երաշխիք տաս [անվնաս] գնալու ուր որ ցանկանանք»: Վարդասն ուրախությամբ ընդունեց դա, երաշխիքներ տվեց, և Մանուիլը, առնելով նիկիացիներին ու իր զորքը, իրենց ողջ ունեցվածքով, մտան մայրաքաղաք: Սկլերոսն առավ նիկիան, տեսնեսկիղբ 978 լով հացահատիկի հետ կապված խորամանկությունը, իր խաբվելու համար տխրեց, բայց և այնպես տեղում ուժեղ կայազոր թողնելով, և նրա զորավարը նշանակելով: Ոմն Պեգասիոսի, ինքը անցավ իր անելիքին:

8. Պարակիմոմենոսը ամեն ինչից հույսը կտրած (Սկլերոսն արդեն մոտենում էր մայրաքաղաքին) մի բանից էր միայն իսկական օգնություն ակնկալում, աքսորից Վարդաս Փոկասին կանչելուց: Միայն սրան էր նա Սկլերոսի դեմ պայքարելու ընդունակ ուժ համարում: Նա անհապաղ կանչեց նրան, երդումներով ապահովեց, մեծ հարստություն տվեց, պատվեց մագիստրոսի պատվաստիճանով և սխուրիի դոմեստիկոս նշանակելով, Սկլերոսի դեմ հանեց<sup>269</sup>: [Փոկասը] հանուն ամենայնի ընթացող պայքարը գլխավորելով, նախ և առաջ փորձեց Թրակիայից Աբիգոս անցնել: Հելլեսպոնտոսի շրջանները Սկլերոսի որդի Ռոմանոսն էր պահպանում: Դիմադրության հանդիպելով<sup>270</sup>, այնտեղից նա մայրաքաղաք վերադարձավ, որտեղ նավ նստելով, հակառակորդից ծածուկ անցավ նեղուցների դիմացի ափը, և գիշերներն ընթանալով, եկավ Կեսարիա, որտեղ մագիստրոս Եվստաթիոս Մալեյինոսին և Միքայել Բուրցիսին ընկերանալով (սա մեղայի գալով դարձյալ կայսեր կողմն էր անցել) նրանց հետ պատերազմի նախապատրաստություն տեսավ: Ինչքան որ ժամանակները թույլ էին տալիս զորք հավաքելով, փախուստի դիմածներին էլ որսալով, նա եկավ Ամորիոն: Սկլերոսը, լսելով սրա դուրս գալու մասին, առաջին անգամ լինելով հասկացավ, որ մարտնչելու է պատերազմող, քաջարի, ռազմավարության արվեստի գիտակ մի մարդու հետ, և ոչ ինչպես մինչ այդ էր՝ ձվատ, կանանոցում օրն անցկացնող, փափկասուն մարդուկնե-

19—VI ըրի: Նա նիկիայից դուրս գալով շարժվեց դեպի Ամորիոն և հան-  
—978 դիպելով Փոկասին, նրա հետ կովի բռնվեց: Փոկասի զինվորնե-



րը, որոնց արիությունն ու հանդգնությունը նախկինում կրած պարտությունների պատճառով խամրել էր, շղիմացան և Սկլերոսը գերակշռեց: Բայց Փոկասի զորքն անկազմակերպ ցիրուցան շեղավ, թեև տեղի տվեց, բայց նահանջեց դանդաղորեն, որպեսզի չստեղծվի այն տպավորությունը, որ վախից դրդված է փախչում, այլ ենթարկվելով զորավարական հրամանին, կարգ ու կանոնով: Երբ զինվորները թիկունքը շրջելով դիմեցին փախուստի, նրանց զորաշարքերը եզրափակող Փոկասն ընդդիմակայում էր հարձակվողներին, թույլ չէր տալիս, որ նրանք մեծ ուժով ու թափով հարձակվեն: Պատմում են, որ այդ ընթացքում իր զինվորներով փախուստի գիմողներին հետապնդող Կոստանդին Գավրասը, անտեղի փառամոլությունից դրդված, կարծելով, թե մեծ փառքի կարժանանա, եթե Փոկասին անձամբ գերեվարի, խթանելով իր ձին, մեծագույն թափով նետվեց Փոկասի վրա: [Փոկասը] տեսավ ու ճանաչեց նրան, և ձին հանդարտ մի կողմ քաշելով, գիմադրեց, գուրզով հարվածեց նրա սաղավարտին: Ուժգին հարվածից նա ուշաթափվեց, իսկույն ձիուց ցած զլորվեց, իսկ Փոկասը առիթից օգտվելով, առանց շտապելու, ոտքով գնաց առաջ, ձեռքից բաց շթողներով սանձերը: Գավրասի զինվորները, տեսնելով իրենց զորավարի տապալումը, դադարեցրին հետապնդումը և նրա մասին էին հոգում: Իսկ Փոկասն իր զինվորներով հասնելով Խարսիանոն<sup>271</sup> կոչված [նահանգը], այնտեղ բանակեց և իր անելիքի մասին էր մտածում: Այնտեղ նա կայսերական պատիվներ էր շնորհում իր կողմն անցնող բազում մարդկանց, շնորհներ ցուցաբերելով զրգոում էր [զինվորների] շերմեռանդությունը: Սկլերոսը ևս հետապնդելով նրան, վրաններ խփեց Թագավորական ջերմուկներ<sup>272</sup> կոչվող վայրում և իր անվանակցին մարտի հրավիրեց: Փոկասը սիրով ընդունեց նրա հրավերը, դարձյալ մարտ տեղի ունեցավ: Փոկասի զինվորները որոշ ժամանակ ընդդիմակայեցին, [Փոկասը] ձի նստած ամեն տեղ էր հասնում և երկաթե գուրզով ճեղքում հակառակորդի շարքերը, անհամար կոտորած սարքում: Բայց նրա զինվորները դարձյալ թիկունքը շուռ տալով փախուստի գիմեցին:

978

9. Փոկասն այնտեղից անհապաղ բարձրացավ Իբերիա<sup>273</sup> և գալով Իբերիայի արխոնտ Դավթի մոտ, նրանից օգնական զորք խնդրեց<sup>274</sup>: Նա պատրաստակամորեն ընդառաջեց (նա Փոկասի հետ լավ հարաբերությունների մեջ էր, երբ վերջինս Խալդիայի<sup>275</sup>

դուքսն էր) և [Փոկասը] այնտեղից մեծ զորք առնելով, ապա և փախուստի ժամանակ ցիրուցան եղած իր զինվորներին հավաքե-  
 24—111 լով, իջավ Պանկալիա, որտեղ Սկլերոսն էր բանակել: Պանկա-  
 979 լիան բարձրադիր մի վայր է, ձիավարութեան համար հարմար, Հալիս գետին շատ մոտիկ: Գարձյալ համառ մարտ է լինում: Փոկասը այստեղ տեսնելով, թե ինչպես իր զորքը աստիճանաբար տեղի է տալիս և մտադիր է փախուստի դիմել, համարելով, որ փառքով մեռնելը խայտառակ ու ամոթալի ապրելուց լավ է, հակառակորդների շարքերը ճեղքելով, ուժեղ թափով շարժվեց Սկլերոսի վրա: [Սկլերոսը] արիաբար դիմադրեց, նրանք ուզում էին հարցը լուծել առաջնորդների մենամարտով, առանց զինվորների որևէ օգնութեան: (Դիտելու հոյակապ տեսարան էր, նայողների համար ապշեցուցիչ, մենամարտը իրենց շատ քաջարի ու հոգով հզոր համարող երկու տղամարդկանց): Նրանք իրար դեմ դիմաց կանգնելով, մոտիկից կռվում էին: Սկլերոսը թրի հարվածով կտրեց Փոկասի ձիու աչ ականջը սանձով հանդերձ, իսկ Փոկասը գուրզով հարվածելով նրա գլխին, ծանր վերք հասցրեց և ձիու պարանոցի վրա փռեց, ապա խթանելով ձիւն, ճեղքեց հակառակորդների շարքերը, դուրս եկավ և մի բլուր բարձրանալով, կանչեց փախուստի դիմած իր զինվորներին: Սկլերոսի զինվորները, տեսնելով ստացած վերքից վատ վիճակում, արդեն ուշաթափվելու վրա գտնվող իրենց [հրամանատարին], նրան մի աղբյուրի մոտ տարան վերքի արյունը լվանալու Ենթադրում էին, որ Փոկասն էլ է գլխովին կորել, քանզի [նրա] ձիւն մի կողմ նետվեց, իր տիրոջ մոտից փախավ, զորքերի միջով առանց հեծյալի ու արյունլվա, սանձարձակ թափով անցավ գնաց (ձիուն եգիպտական էին անվանում): [Զինվորները] իմանալով, թե ո՞ւմ ձիւն է այն և ենթադրելով, որ իրենց հրամանատարը սպանված է, երբ նրանց ոչ ոք չէր հալածում, անկազմակերպ փախուստի դիմեցին և իրենց զահավեժ անելով անդունդն ու Հալիս գետի մեջ, անփառունակ կոտորվեցին<sup>276</sup>: Փոկասը բլրի վրայից այդ բանին ականատես լինելով և ենթադրելով, որ կատարվածը աստվածուստ է, դա հենց այդպես էր, իր զինվորներով ցած իջավ և իրար տրորող, արիութեան մասին կատարելապես մոռացած փախստականներին հալածեց, ոմանց սպանեց, ոմանց էլ գերի վերցրեց: Իսկ Սկլերոսը փոքրաթիվ մարդկանց հետ փրկվելով, փախչում է Մարտիրոսապոլիս, այնտեղից իր եղբայր Կոստանդինին դեսպանութեան է ուղարկում Բաբելոնի ար-



խոնտ հոսորովի մոտ<sup>277</sup>, օգնություն և դաշնակցություն աղերսելով: Խոսորովը սակայն հարցը ձգձգում էր, ոչ խոստանում էր օգնություն տալ, ոչ էլ մերժում էր այգ: Կոստանդինը երկար ժամավաճառ եղավ և Սկլերոսն իր բոլոր մարգկանցով ստիպված էր գնալ Խոսորովի մոտ:

979 10. Կայսրը Փոկասի նամակից տեղեկանալով Սկլերոսի պարտության և նրա Բաբելոն գնալու մասին, ընդունեց Փոկասին և ըստ արժանվույն պատվեց, ապա վեստ Նիկեփոր Ուրանոսին Բաբելոնի ամիրապետի մոտ դեսպան ուղարկեց, խնդրելով ապստամբին ոչ մի ապաստան չտալ, ապագա սերունդներին վատ օրինակ չդառնալ՝ լինելով թագավոր շանգոսնել անիրավված թագավորին, շմիանալ անիրավ և ապստամբ բռնակալին: Նա տվեց նաև կայսերական կնքված նամակը, որով նա Սկլերոսին և նրա մարդկանց կատարյալ ներում էր շնորհում, եթե զղջան, ճանաչեն իրենց տիրոջ և հայրենիք վերադառնան: Երբ Ուրանոսը կայսերական նամակներով եկավ Խոսորովի մոտ, վերջինս և՛ դեսպանին, և՛ Սկլերոսին ու նրա բոլոր հոռմայեցիներին կասկածի տակ առնելով բանտարկեց<sup>278</sup>: Սրանք ահա բանտ նետվեցին, իսկ Սկլերոսի հետ չգնացող ապստամբները՝ Լևոն Գերին, Անդրոնիկոս Դուկաս Լիդոսի որդիներ Քրիստափոր Էպիփստը<sup>279</sup> և Վարդաս Մոնգոսը ([Անդրոնիկոսն] արդեն մահացել էր), Թրակեսիոն բանակաթեմում գտնվող Արմակուրիոն, Տափակ Քար<sup>280</sup> և այլ անառիկ բերդեր զրավելով, դիմադրում էին մինչև 980 ինչիկտիոնի ութերորդ տարին, այդ վայրերից հարձակումներ գործելով, ասպատակում էին կայսեր երկիրը: Նրանք շարունակեցին նահանգների ավարառությունները մինչև որ պատրիկ Նիկեփոր Պարսակուտենոսի միջոցով ներում ստանալով անցան կայսեր կողմը:

11. Հենց այդ ժամանակներում վախճանվեց Անտոնիոս պատրիարքը, որ Սկլերոսի ապստամբության ժամանակ հրաժարվել էր աթոռից: Պատրիարք ձեռնադրվեց Նիկողայոսը, մականունը՝ Խրիսովերգես<sup>281</sup>: Չորս և կես տարի եկեղեցին անհովիվ էր մնացել: Միջօրեին արեգակի խավարում էլ եղավ, որ աստ- 10—I ղերն անգամ երևացին<sup>282</sup>, Երբ Հովհաննես կայսրը վախճանվեց, 976 բուղարներն ապստամբեցին, իրենց իշխանությունը վարելու համար առաջ քաշեցին չորս եղբայրների՝ Դավթին, Մովսեսին, Ահարոնին և Սամուիլին, բուղարների մեջ իր գործունեությամբ աչքի ընկած մի կոմսի որդիներին, որի պատճառով էլ ահա նր-

րանք կոմսաձագ էին կոչվում. Պետրոսի տոհմին պատկանողներին մի մասը մահացել էր, իսկ նրա որդիներ Բորիսն ու Ռոմանոսը, ինչպես վերևում ասվել է, քաղաք բերվելով, այնտեղ էին մնում: Նրանցից առաջինը Հովհաննես [Կայսեր] կողմից մագիստրոսի պատվաստիճանին էր արժանացել, իսկ Ռոմանոսն էլ նախկին պարակիմոմենոս Հովսեփի կողմից ներքինացվել: Երբ Հովհաննես կայսրը վախճանվեց, նրանք [քաղաքից] փախան և շտապեցին Բուլղարիա հասնել: Նրանցից Բորիսը, Թավուտի միջով անցնելիս, մի բուլղարի կողմից նետահար եղավ և սպանվեց. բուլղարը նրան հոռոմայեցու տեղ էր դրել, քանզի նա հոռոմեական հանդերձներ էր հագած, իսկ Ռոմանոսը ողջ առողջ տեղ հասավ, բայց որոշ ժամանակ անց դարձյալ մայրաքաղաք է գալիս, ինչպես այդ մասին իր տեղում կասվի: Այդ շորս եղբայրներից Դավիթը շատ չանցած մեռավ, իսկ Մովսեսն էլ Սերբեն<sup>283</sup> պաշարելու ժամանակ պարսպից նետված մի քարից վիրավորվելով, վախճանվեց: Ինչ վերաբերում է Ահարոնին, ապա նրան էլ, ինչպես ասում են, որպես հոռոմեաների, ողջ ընտանիքով

14—VI հանդերձ կոտորեց Սամուիլը<sup>284</sup>: Սամուիլի որդի Ռադոմիր-Ռոմանոսի օգնությամբ փրկվեց միայն [Ահարոնի] որդի Հովհաննես-Վլադիսլավը<sup>285</sup>, Համայն Բուլղարիայի վրա միահեծան իշխեց Սամուիլը<sup>286</sup>: Սա պատերազմող, անհանգիստ մարդ էր, որ օգտվելով հոռոմեական զորքերի՝ Սկլերոսի դեմ մղվող մարտերով զբաղված լինելու հանգամանքից, բովանդակ արևմուտքը ոտնատակ արեց, ոչ միայն Թրակիան ու Մակեդոնիան և Թեսաղոնիկեի շրջակայքը, այլև Թեստալիան, Հելլագան և Պելոպոննեսը, գրավեց բազմաթիվ բերդեր, որոնցից ամենագլխավորը Լարիսան էր<sup>287</sup>, նրա բնակիչներին տնով տեղով վերաբնակեցրեց Բուլղարիայի խորքերը, նրանց զինվորագրեց և հոռոմայեցիների դեմ դաշնակից դարձրեց: Նա Լարիսայի եպիսկոպոս եղած սուրբ Աքիլլիոսի աճյունը տեղափոխեց ու Պրեսպայում ամփոփեց, որտեղ որ իր արքունիքն էր գտնվում:

985

12. Կայսրը մեծ ցանկություն ուներ նրա գործունեության առաջն առնել և երբ ազատվեց Սկլերոսի հետ կապված հոգսերից, հավաքեց հոռոմեական զինված ուժերը և որոշեց անձամբ Բուլղարիա ներխուժել, բանի տեղ չդնելով դեռևս սխուրթի դոմեստիկոսի շատիճանն ունեցող Վարդաս Փոկասին և արևելից մյուս մեծամեծներին: Նա մուսաբ գործեց Բուլղարիա Ռոզոպեի և էվրոս գետի մոտ գտնվող ճանապարհով, իսկ իր ետևում



թողեց լեռն Մելիսսենոսին՝ կիրճերը պահպանելու հրաման տալով: Տրիագիցայի<sup>288</sup>, հենում Սարգիկե կոչվածի միջև գտնվող կիրճերն ու թավուտները անցնելով, նա հասավ Ստոպոնիոն կոչվող ինչ-որ վայր ու բանակեց, մտածելով՝ ինչպե՞ս ձեռնարկել Սարգիկեի պաշարումը: Իմացվել էր, որ Սամուիլը շրջակա լեռների գագաթներն է բռնած (նա վախենում էր բացահայտ ու մոտիկից մղվող մարտից), ամենուրեք ծուղակներ էր լարել, հակառակորդներին վնասելու նպատակով: Այդ ընթացքում, երբ կայսրն ահա այդպիսի մտածմունքի մեջ էր, արևմուտքի սխուլերի գոմեստիկոս Ստեփանոսը, որին իր կարճահասակույթյան պատճառով Կոնտոստեփանոս էին անվանում, լեռն Մելիսսենոսին անչափ ատող մի մարդ, գիշեր ժամանակ գալիս է կայսեր մոտ և կոչ անում նրան ամեն ինչ երկրորդական համարելով, անհապաղ մայրաքաղաք վերադառնալ, քանզի, իբրև թե Մելիսսենոսը թագավորության վրա աչք ունենալով, քառատրոփ այնտեղ է գնացել: Այդ բանը ցնցեց կայսեր և նա իսկույն ճասպարհ ընկնելու հրաման տվեց: Սամուիլը անկազմակերպ հեռանալը փախուստ համարելով, աղմուկ աղաղակով իսկույն հռոմայեցիների վրա հարձակվեց, նրանց երկյուղով պատեց և

17—VIII ստիպեց փախուստի դիմել: Նա գրավեց [հռոմայեցիների] —986 ճամբարը և տիրացավ նրանց ողջ ունեցվածքին, այդ թվում և կայսերական վրանին ու կայսերական նշանակներին: Կայսրը մի կերպ անցնելով կիրճերը, ողջ առողջ հասավ Ֆիլիպպուպոլիս<sup>289</sup>: Հասնելով այնտեղ, նա տեսավ որ Մելիսսենոսը անշարժ տեղում է կանգնած և ուշադիր հսկում է այն, ինչ իրեն էր վրստահված, որի վրա նա լուտանքներ թափեց Կոնտոստեփանոսի գլխին՝ համարելով ստախոս և այսպիսի փորձանքի պատճառ: Վերջինս պարսավանքը հանգիստ շտարավ և էլ ավելի համառույթյամբ պնդում էր իր խորհրդի ճիշտ լինելու վրա: Կայսրը, նրա անպատկառ ստորույթունից դրգռված, գահից վեր թռավ և բռնելով նրա մորուքից ու մաղերից գետին փռեց<sup>290</sup>:

987

13. Ինդիկտիոնի 15-րդ տարվա հոկտեմբեր ամսին, 6494 թ. ուժեղ երկրաշարժ եղավ, բազմաթիվ տներ ու տաճարներ փլվեցին, նաև աստծո Մեծ եկեղեցու գմբեթի մի մասը: Կայսրը նախանձախնդրությամբ այն վերականգնեց: Միայն ամբարձիչ մեքենաների համար (որոնց վրա կանգնած վարպետները ընդունում էին շինանյութն ու վերանորոգում [գմբեթի] փլված մասը) ծախսելով տասը կենսոինար ոսկի<sup>291</sup>:



987 14. Իսկ հռոմայեցիների մեծամեծները՝ Վարդաս Փոկասը և նրա մտերիմներից ոմանք կայսեր դեմ զայրացած այն բանի համար, որ նա Բուլղարիա արշավելիս արհամարհեց իրենց և անգամ վարձկանի տեղ շղրեց, ուրիշներն էլ իրենց ստացած տարբեր վիրավորանքների ու անարգանքի, իսկ Եվստաթիոս Մալեյինոսն էլ այն պատճառով, որ խայտառակ կերպով հեռացվեց հիշյալ արշավանքին մասնակցելուց, հավաքվելով հիշյալ Մալեյինոսի տանը՝ Խարսիանոնում, օգոստոս ամսի 15-ին, ինդիկտիոնի 15-րդ տարում, Վարդաս Փոկասին կայսր հռչակեցին, նրան թագ կապելով և տալով կայսերական մյուս նշանակները: Երբ նա կայսր հռչակվեց, լուր էլ հասավ, թե Ասորիքից Սկլերոսն է գալիս: Ինչպես ասացինք, Բաբելոնում Խոսրովի կողմից նա և իր մարդիկ բանտ էին նետվել: Նա ամեն տեսակի հոգատարությունից զրկված, տառապում էր շարչարանքներից ու բանտապանների վայրագություններից: Հանկարծակի բախտը նրան ժպտաց, նա և իր մարդիկ բանտից տարօրինակ կերպով ազատ արձակվեցին: Ես այժմ կպատմեմ, թե նա ինչպես կապանքներից ազատվեց և ինչպես ողջ-առողջ վերադարձավ հռոմեական [պետության] սահմանները:

15. Պարսից ժողովուրդը սարակինոսներից թագավորական իշխանությունից զրկվելով, նրանց նկատմամբ մշտապես թաքուն թշնամություն էր տածում և առիթ ու միջոց որոնում տապալելու նրանց գերիշխանությունը և վերականգնելու սեփական պետականությունը: Սրանց մեջ ազնվական ծագումով մի մարդ կար, անունը Ինարգոս, որ ճարտար հռետոր էր, բացի այդ նաև պատերազմական գործերին հմուտ ու գործունյա: Նա պարզ նկատեց, որ Խոսրով թագավորը իշխում է վատ ու անշնորհ և որոշելով, որ պարսիկների սպասած հարմար ժամանակը հենց դա է՝ որ կա, ոտքի է հանում Աքեմենյանների ողջ տոհմը և սարակինոսների դեմ ապստամբություն բարձրացնում: Նա ընդունեց նաև արևելքի թուրքերից<sup>292</sup> բաղկացած շուրջ քսան հազարանոց վարձկան զորք և սկսեց ավարառել ու ասպատակել սարակինոսներին, գլխովին կոտորել գերի ընկածներին, շինայելով երեխաներին անգամ: Խոսրովը բազմիցս անգամ նրա դեմ իր զորավարներին ուղարկեց, ապա և ինքը անձամբ նրա դեմ դուրս եկավ, բայց բոլոր մարտերում էլ պարտություն կրեց: Դրա վրա հուսաբեկ եղած և հասկանալով, որ այսուհետև ի վիճակի չէ զենքով մարտնչել պարսիկների դեմ, քանզի զինվորները բա-



զում անգամ ջարդ ստանալով պարսկի անունից անգամ վախենում էին, մտաբերում է բանտարկյալ հռոմայեցիներին: Նա միանգամայն խոհեմ կերպով մտածեց, որ բանտարկյալը, եթե նշանավոր ու երևելի, հոգով ու մարմնով հզոր մեկը շլիններ, չէր կարող սեփական տիրոջ գեմ ապստամբել և նրան նման օրի հասցնել, չէր կարող փախստական լինելուց և դժբախտանալուց հետո էլ, այդքան ու այդպիսի մարդկանց կողմից որպես կայսր ներբողվել: Ահա խոսրովը խորհրդակցելով իր ծերակուտականների հետ, բանտից ազատում է [Սկլերոսին], նրա նկատմամբ ցուցաբերում ամեն տեսակի հոգատարություն և վերջում պահանջ դնում պատերազմին մասնակցություն ունենալու: Սկլերոսը նախ սկսեց կոտորտվել և քմծիծաղով ասաց, թե այսքան ժամանակ բանտարկված, բանտի տառապանքները կատարելապես ճաշակած մարդիկ ինչպե՞ս կարող են զենք շարժել: Խոսրովը դարձյալ իր ասածի վրա էր պնդում, խնդրում նրան վերցնել անհաշիվ դրամ, անթիվ, գերազանց զինված զինվորներ, և գրլխավորել պատերազմը, մոռանալ բանտարկության հետ կապված ամեն մի դժվարություն, քանզի ինքը՝ [խոսրովը] կարող է իր ապագա լավություններով ու պատիվներով կոծկել նախկին վատություններն ու բանտային անտանելի կյանքը: Սկլերոսն ի վերջո տեղի է տալիս և խոստանում կատարել խնդիրքը: Նա կտրականապես մերժեց վերցնել արաբ, սարակիհնոս կամ էլ այլազգի, խոսրովին ենթակա զինվորների, այլ պահանջեց Ասորիքի քաղաքների բանտերը ստուգել և այնտեղ բանտարկված հռոմայեցիներին ազատ արձակել ու զինել: Նա ասաց, որ միայն նրանցով, և ոչ այլ ձևով ինքը կարող է նախաձեռնել պատերազմը ընդդեմ պարսիկների: Խոսրովն ընդունեց նրա պահանջը. բանտերի դռներն անհապաղ բացվեցին և այնտեղ գտնվող հռոմայեցիներն ազատ արձակվեցին: Նրանցից երեք հազար հոգի հավաքվեց: Սկլերոսը նրանց բաղանիք ուղարկեց, մաքրեց բանտի աղտեղությունից, նոր հագուստ ու հանդերձներ հագրեց, յուրաքանչյուրին անհրաժեշտ ու բավարար կերպով զինեց և ճանապարհ ցույց տվողների վերցնելով, շարժվեց ընդդեմ պարսիկների: Հանդիպելով միմյանց, Սկլերոսի զինվորները ուժեղ թափով հարձակվեցին պարսիկների վրա, որոնք [հակառակորդի] տարօրինակ զենքից, օտար բարբառից, իրենց համար անսովոր մարտական կարգից, ի վերա ամենայնի հռոմայեցիների արտակարգ թափից ու ուժգնությունից ապուշ կտրած, գլխովին

պարտություն կրեցին ու կոտորվեցին, այն աստիճան, որ, ինչպես ասում են, բոթն անգամ տանող շեղավ: Այդ մարտում ընկավ նաև Ինարգոսը: Հսկայական ավար վերցնելով, բաղում ձիեր ձեռք բերելով, նրանք վճռեցին այլևս հոսրովի մոտ չվերադառնալ, այլ բռնեցին դեպի Ռոմանիա<sup>293</sup> տանող ճանապարհը: Նրանք փութանակի ճանապարհ կտրելով, կարողացան ծածուկ ճողոպրել ու փրկվել իրենց սահմաններում: Այս առթիվ մի այլ վարկած էլ կա, թե պարսիկների դեմ տարած հաղթանակից հետո նրանք վերադարձան և հոսրովի կողմից սիրալիր ընդունելության արժանացան, որի փոքր անց վախճանվելուց հետո հաջորդած համանուն որդին<sup>294</sup> նրանց՝ հոմայեցիներին որպես իրենց դաշնակիցների տվեց զորք և տուն ուղարկեց<sup>295</sup>: Սկլերոսն ահա, ըստ վերևում ասված երկու վարկածներից մեկի, եկավ հոմայեցիների երկիրը, գտավ Վարդաս Փոկասին կայսր հռչակված և ինքն էլ այդպիսին հռչակվեց իր մարդկանց կողմից<sup>296</sup>:

987

սկիզբ

16. [Սկլերոսն] ահա վիճակն այդպիսին գտնելով, տարակուսանքի մեջ էր: Իրեն նա շատ թույլ էր համարում մեն մենակ շարունակելու ու տանելու ապստամբությունը, բայց և շատ անպատվաբեր ու անարի՛ միանալ Փոկասին կամ կայսեր: Իր մրտերիմների հետ երկար կշռադատելուց հետո նա գտավ, որ իրեն միահեծան կայսր հռչակելը վտանգի հետ է կապված և ձեռնտու չէ՝ անհնարինություն պատճառով, իրերի ելքը պարզ չլինելու պատճառով էլ տերերից մեկի կողմն անցնելուն և մյուսին արհամարհելուն ևս դեմ էր, դրա համար ահա վճռեց երկու իշխանություններն հնարավորին չափ սիրաշահել, որպեսզի մեկի անհաջողության դեպքում մյուսի օգնությունն ու սատարն ունենա: Նա Փոկասին նամակ ուղարկեց, համագործակցության և թագավորությունը իրար մեջ բաժանելու առաջարկությամբ՝ եթե կարողանան հաղթել կայսեր, բայց [միաժամանակ] իր որդի Ռոմանոսին իբրև թե դասալիք, ծածուկ կայսեր մոտ ուղարկեց: Նա շատ խոհեմ դատեց. եթե Փոկասը գերակշռեր, ինքը [Սկլերոսը] կփրկեր իր որդուն, իսկ եթե կայսեր կողմը հաղթանակեր, ինքը [իր որդու] միջնորդությամբ վտանգից կփրկվեր: Ահա Ռոմանոսը փախուստ ձևացնելով, գնում է կայսեր մոտ, որը նրան մեծ պատվով և ուրախությամբ ընդունեց, իսկույն մագիստրոսի պատվաստիճանը շնորհեց և պատերազմներում մըշտապես նրա խորհուրդներին էր դիմում: Սկլերոսի Ասորիք նահանջելուց հետո հոգսերից ազատված կայսրն ավելի արիու-



985 թյամբ ձեռք գցեց պետական գործերին: Երբ իմացավ, որ իր միջոցառումները պարակիմոմենոսին դուր չեն գալիս, որ նա փնթփնթում է, որ հարմար առիթ ձեռք գցելու դեպքում հնարավոր է, որ սարսափելի գործերի կդիմի, ահա այդ [նկատառումներով] նրան պաշտոնանկ է անում և տնային կալանքի դատապարտում, բայց տեսնելով, որ նա դարձյալ հանգիստ չի մնում, այլ մշտապես սոսկալի բաներ է ծրագրում, ջանքեր թափում նախկին պաշտոնը ձեռք գցելու, աքսորում է Ստանոն, գրավում նրա ունեցվածքի մեծ մասը, որպեսզի նա միջոցներից զուրկ լինելով, հնարավորություն չունենա ահավոր արարքներ գործելու: Իսկ ինքը այլևս խորհրդական չունենալով և ստեղծված իրադրության մեջ ընկերների ու գործակիցների կարիքն զգալով, այն ժամանակ սրտաբաց ընդունեց Ռոմանոսին, նրա մեջ տեսնելով փորձառու, գործունյա և պատերազմական հարցերում շատ հմուտ մարդու:

17. Հարդաս Փոկասը, երբ ստացավ Սկլերոսի վերադարձի լուրը, նրան նամակ գրեց, հավանուեցա՞ տվեց նրա առաջարկներին և երդումներով խոստացավ, թե «եթե մեր ծրագրերն իրականանան, դու կիշխես Անտիոքի, Փյունիկեի, Կյուլե Ասորիքի, Պաղեստինի և Միջագետքի վրա, իսկ ես էլ կտիրեմ հենց մայրաքաղաքի և մնացած ազգերի վրա»: Սկլերոսն ուրախությամբ ընդունեց այդ խոստումները և տրված երդումներին վստահելով, գնում է Փոկասի մոտ՝ Կապադովկիա, իբրև թե համադործակցությունն անհապաղ իրականացնելու: Սակայն Փոկասը նրան ծուղակը գցելով, վրայից հանում է կայսերական նշանակները և ուղարկում Տյուրոպիոս բերդը<sup>297</sup>, նրան հսկող ուժեղ պահակություն սահմանելով<sup>298</sup>, ապա բանակի մի մասն էլ տալով պատրիկ Կալոկիրոս Դելֆինասին, ուղարկում է մայրաքաղաքի դիմացի ափում գտնվող Խրիսուպոլիս: Ինքն էլ մնացած բանակով իջնում է Աբիդոս, հուսալով, որ նեղուցներին տիրանալով, սկիզբ մայրաքաղաքի բնակիչներին սովի կմատնի: Կայսրը Դելֆինասին շատ խնդրեց հեռանալ Խրիսուպոլիսից, չբանակել մայրաքաղաքի դիմաց, բայց չկարողանալով նրան համոզել, գիշեր օրամանակ նավեր նախասլատրաստեց, նրանց մեջ ուռաների նստեցրեց (նա նրանց հետ խնամիական կապեր էր հաստատել, նրանց իշխան Վլադիմիրին կնության տվել իր քրոջ Աննային և նրանցից օգնություն ստացել)<sup>299</sup> և աննկատ անցնելով դիմացի ափը, հարձակվում է թշնամիների վրա և դյուրությամբ հաղթա-

988



նակ տանում: Դելֆինասին հենց վրան խփած տեղում փայտից կախում է<sup>300</sup>, իսկ Փոկասի եղբայր Նիկեփոր Կուլրին բանտարկում, մյուս գերվածներին էլ համապատասխան պատիժներ սահմանելով, վերադառնում է մայրաքաղաք:

18. Փոկասը, հասնելով Աբիդոս, տենդագին պաշարման մեջ առավ այն: Պաշտպանները քաջաբար դիմադրում էին. նախօրոք կայսեր կողմից նրանց մոտ ուղարկված նավատորմի ղեկավար Կիրիակոսը գոտեպնդում էր պաշարյալներին: Փոքր անց այնտեղ նավեց նաև կայսեր եղբայր Կոստանդինը, նրանից հետո տեղ հասավ նաև ինքը՝ կայսրը: Երբ նրանք ահա անցան այս ափը, Փոկասը իր ղորքի մի մասին հրաման տալով շարունակել Աբիդոսի պաշարումը, մնացած զորքով կայսրերի դեմ դուրս եկավ<sup>301</sup>: Ճակատամարտն արդեն սկսվելու վրա էր, երբ Փոկասը ազնվորեն գերադասելով քաջաբար մեռնել, քան թե ամոթով ապրել, հեռվից տեսնելով ձիու վրա նստած և այստեղ այնտեղ գնացող կայսեր, իր զինվորների շարքերը կարգի բերեց, գոտեպնդեց նրանց և դատելով, որ եթե նրան հաղթահարի, ապա մյուսներին պարտության մատնելը դյուրին կլինի, ձին խթանելով սրընթացորեն դիմեց նրա վրա, ցիրուցան արեց իր դիմաց գտնվող շարքերը և բոլորի համար անդիմազրավելի մարդու տպավորություն թողեց: Նա արդեն կայսեր մոտ էր, երբ հանկարծակի շրջվեց, մի բլուր բարձրացավ, ձիուց ցած իջավ և

13—IV գետին պառկելով, հոգին փչեց: Նա կամ այս ու այն կողմ գնա-  
989 լու ժամանակ զինվորներից մեկից մահացու վերք ստացավ, կամ էլ ինչ-որ ներքին հիվանդությունից հյուծվելով, քանզի նրա մարմնի վրա ոչ մի վերք չգտան, դրա համար տիրում է այն կարծիքը, որ թունավորեցին նրան: Ասում են, թե նրա ամենահավատարիմ սպասավորներից Սիմեոնը, կայսեր կողմից նվերներ ստանալով, համարձակվեց նրան թուլյնով սպանել: Փոկասը սովորություն ուներ պատերազմների ժամանակ, մարտից առաջ սառը ջուր խմել: Հստ իր սովորության նա այստեղ էլ նույն բանն արեց և առանց գիտենալու ջրի հետ միասին թուլյն խմեց: Երբ Փոկասը բլրի վրա երկար պառկած մնաց, բոլորը ենթադրեցին, թե վատ զգալով ցանկացել է մի փոքր հանգստանալ, բայց երբ այդ բանը երկար տևեց, մեկը մոտենցավ ու տեսավ, որ նա մեռած է ու անշնչացած<sup>302</sup>: Բոլորն իմացան նրա մահվան մասին և ապստամբներն իսկույն փախուստի դիմեցին, իսկ կայսեր ղորքերը գոտեպնդված կրնկակոխ հետապնդում էին նրանց:



Գերի են վերցվում Լևոն և Թեոգնոստոս Մելիսսենոսները, Թեոգոսոսի Մեսանիկոսը և շատ ուրիշներ: Կայսրը սրանց իր հետ մայրաքաղաք տարավ և ավանականների վրա բարձած հրապարակի միջով ծանակեց: Նա խնայեց միայն Լևոն Մելիսսենոսին: Պատմում են, թե երբ հակառակորդները դեմ դիմաց էին կանգնած և Լևոնի եղբայր Թեոգնոստոսը ծաղրի էր ենթարկում կայսրերին ու անպարկեշտ լուտանքներ թափում նրանց վրա, Լևոնը արտասովից աչքերով պարսավում էր նրան, խնդրում փակել բերանը, անպատկառորեն շանարդել սեփական տերերին, բայց երբ չկարողացավ նրանց այդ բանից ետ պահել, նիզակը քաշեց և նրանով բազում հարվածներ իջեցրեց նրանց, այն աստիճան, որ կայսրը, դեպքերին ականատես լինելով, ներկաներին բացականչեց. «Տեսե՛ք, մի փայտից պատրաստված խաչ ու բահ»: Ահա ասում են, որ այս պատճառով է, որ Լևոնին խայտառակությունից զերծ պահեցին:

19. Արդ, ինդիկտինի երկրորդ տարվա ապրիլ ամսին 6497 թ. Փոկասի մահից և նրա ապստամբության վերացումից հետո<sup>303</sup>, Սկլերոսը առիթից օգտվելով դարձյալ հրապարակ եկավ և որոշեց շարունակել նախկին ապստամբությունը: Կայսրը իմանալով այդ մասին, նրան նամակով հորդորեց քրիստոնյաների արյան հեղմանը վերջ տալ, չէ՞ որ ինքն էլ մարդ է, մահկանացու, [վերջին] դատաստանին ենթակա, թեև բավականին ուշացած, գիտենալ, թե ի՞նչն է [իր համար] ձեռնտու, ճանաչել աստվածատուր արքային<sup>304</sup>: Այգ նամակի վրա նա տեղի տվեց և անձեռնմխելիության մասին երաշխիքներ ստանալով, ցած դրեց զենքերը և հաշտվեց կայսեր հետ՝ կուրպաղատի պատվաստիճանն ստանալով<sup>305</sup>: Բայց և այնպես նա շարժանացավ կայսրին տեսնելու, քանզի ճանապարհին տեսողությունը կորցրեց, տեսողական զգայարանը այլևս չգործեց և կույր վիճակում կայսեր մոտ բերվեց: Տեսնելով, թե ինչպես նրան ձեռքից բռնած են առաջնորդում, կայսրը ներկաներին ասաց. «Նըրան, ումից ես սարսափում էի ու դողում, ձեռքից բռնած են բերում»<sup>306</sup>:

20. Կայսրն ահա ներքին պատերազմներից ու հոգսերից ազատված, մտածում էր, թե ինչպես սլետք է կարգավորի իր գործերը Սամուիլի և մնացած տոպարխների հետ, որոնք օգտը վելով կայսեր ապստամբություններով զբաղված լինելու հանգամանքից, հոռմեական տիրապետություններին մեծ վնաս

հասցրին<sup>307</sup>։ Կայսրը դուրս եկավ ու գնաց Թրակիայի և Մակեդոնիայի շրջանները, իջավ Թեսաղոնիկե՝ վկա Դեմետրիոսին<sup>308</sup> գոհություն հայտնելու։ Մագիստրոս Գրիգոր Տարոնացուն<sup>309</sup> թողնելով այնտեղ որպես կառավարիչ, տալով նրան նաև Սամուիլի ասպատակությունների գեմ պայքարելու և նրանց ճամփան փակելու մարտունակ զորք, նա մայրաքաղաք վերադարձավ, որտեղից էլ բարձրացավ Իբերիա։ Դավիթ կուրապա-

31—III դատն արդեն մեռել էր՝ իր տիրույթների ժառանգ կայսեր նշա-  
—1000 նակելով<sup>310</sup>։ Նա եղավ տեղում, իրեն տրված ժառանգությունը կարգի բերեց, Դավիթ կուրապաղատի եղբոր Գեորգիոսին<sup>311</sup> ներքնագույն Իբերիայի իշխանին<sup>312</sup> համոզեց իր սեփական տիրույթներով բավարարվել և աչք չունենալ ուրիշի [ունեցվածքին], նրա հետ դաշինք կնքեց և նրա որդուն պատանդ վերցնելով<sup>313</sup>, գնաց Փյունիկե, իր հետ տանելով նաև իրեն պատկանող Իբերիայի տոհմիկ իշխաններին<sup>314</sup>, որոնցից գլխավորներն էին եղբայրներ Պակուրիանր, Ֆեդատն ու Ֆերսը<sup>315</sup>, որոնց նաև պատրիկի պատվաստիճանը շնորհեց։ Լինելով Փյունիկեում, նա Տրիպոլսի, Դամասկոսի, Տյուրոսի և Բերիտոսի ամիրաներին նախկինի պես հռոմայեցիների հպատակության տակ առավ և նրանցից պատանդ վերցնելով, վերադարձավ Բյուզանդիոն։ Երբ կայսրը Փոկասի դեմ մղվող պատերազմով էր զբաղված, այդ [ամիրաները] համաձայնության էին եկել և Անտիոքի դեմ զենք շարժել, նրանց դիմադրություն ցուցաբերած պատրիկ Դամիանոսին, Անտիոքի կառավարչին սպանել և քաղաքի համար մեծ վտանգ ստեղծել<sup>316</sup>։

21. Կապադովկիայի վրայով վերադառնալիս կայսեր և նրա համայն զորքին իր կալվածներում ընդունեց մագիստրոս Եվստաթիոս Մալեյինոսը, որ նրան և նրա զորքին ճոխ հյուրընկալություն ցուցաբերեց։ Կայսրը թեև ընդունեց նրան, դրվատեց և իր հետ մայրաքաղաք բերեց, բայց այլևս չթույլատրեց ետ վերադառնալ. ինչ որ անհրաժեշտ էր նա առատաձեռն կերպով տրամադրում էր նրան, բայց կարծես որչում վայրի գազան էր պահում, այնքան ժամանակ, մինչև որ նրա կյանքի վերջն եկավ։ Նրա մահից հետո ողջ ունեցվածքը գրավվեց։ Կայսրը օրենք էլ հրապարակեց, որով արգելում էր բոլոր դինատներին<sup>317</sup> ընդարձակելու իրենց հողային տարածությունները։ Անցյալում նույն բանն էին արել նաև սրա պապը՝ Կոստանդին Ծիրանածինը և նրա աներ Թիմանոսը։



996

22. Նիկողայոս Խրիսովերգեսը, եկեղեցին 12 տարի և 7 ամիս հովվելուց և վախճանվելուց հետո, 6503 թվականին, ինդիկտիոնի 8-րդ տարում [պատրիարք] է ձեռնադրվում մագիստրոս Սիսինիոսը<sup>318</sup>, անվանի, բժշկության ասպարեզում ծայր աստիճան հմուտ մի մարդ: Սա թուլյատրեց չորրորդ ամուսնությունը և եկեղեցին երեք տարի հովվելուց հետո վախճանվեց: [Պատրիարք] առաջ քաշվեց Սերգիոսը<sup>319</sup>, Մանուիլի վանքի վանահայրը, որ ծագումով Փոտ պատրիարքի տոհմին էր պատկանում:

998

23. Սամուիլը արշավեց Թեսաղոնիկեի վրա, զորքի մեծ մասը նա տեղագրեց դարանակալելու և որոգայթներ լարելու, իսկ քչերին էլ ուղարկեց ասպատակելու ընդհուպ մինչև Թեսաղոնիկե [ընկած շրջանը]: Դուքս Գրիգորը<sup>320</sup>, իմանալով հարձակման մասին, իր հարազատ որդի Աշոտին ուղարկեց տեսնելու և որոշելու [հարձակվողների] քանակը և իրեն այդ մասին տեղյակ պահելու, իսկ ինքն էլ գնաց նրա ետևից: Աշոտը դուրս եկավ և [բուլղարների] առաջամարտիկ զինվորների հետ կռվի բռնվելով, նրանց փախուստի մատնեց, բայց առանց իմանալու, լարված որոգայթի մեջ ընկավ: Երբ Գրիգորն իմացավ այդ մասին, անհապաղ օգնության դիմեց՝ որդուն գերի ընկնելուց փրկելու համար: Սակայն ինքն էլ բուլղարների կողմից շրջապատվեց ու թեև մարտնչեց քաջաբար ու հերոսաբար, այնուամենայնիվ սպանվեց<sup>321</sup>: Երբ կայսրը լսում է դուքսի սպանության մասին, որպես համայն Արևմուտքի կառավարի ուղարկում է մագիստրոս Նիկեփոր Ուրանոսին. սրան էլ հաջողվել էր Բաբելոնից<sup>322</sup> փախչել և մայրաքաղաք գալ: Լինելով Թեսաղոնիկեում և իմանալով, թե ինչպես Սամուիլը դուքս Գրիգոր Տարոնացու սպանության և նրա որդու գերի վերցնելու առթիվ ամբարտավանանալով անցել է Թեստալիայի Տեմպեն և Պենիոս գետը, ներխուժել Թեստալիա, Բեովտիա, Ատտիկա, ինչպես և Կորնթոսի նեղուցով Պելոպոննես, ամենուրեք ավեր ու ավար սփռելով, ահա ինքն էլ իր զորքերը վերցնելով, Օլիմպոսի փեշերով անցավ եկավ Լարիսա, բռններն այնտեղ թողեց և թեթևադեն զորքով արագ քայլով անցավ Թեստալիան, Ֆարսալիայի դաշտը, և Ապիդանոս գետը ու բանակեց Սպերիսիոս գետի ափին. դիմացի ափին բանակել էր ինքը՝ Սամուիլը: Երբ երկնքից առատ անձրև տեղաց և գետը հորդացավ ու ծովացավ, հույս չկար, թե հենց հիմի մարտ տեղի կունենա: Սակայն մագիստրոսը գետը վերից վար ուշադիր զննելով, մի տեղ գտավ, որտեղից իր կար-

ծիքով հնարավոր էր այն անցնել, և գիշերով զորքը ոտքի հանելով, անցավ գետն ու հարձակվեց Սամուիլի անհոգ քնած զինվորների վրա: Անհամար հոգի սրի քաշվեց, ոչ ոք անգամ չհամարձակվեց արիության մասին մտածել, ինքը՝ Սամուիլն էլ, նրա որդի Ռոմանոսն էլ ծանր վերք ստացան: Նրանք դերի կրնկնեին, եթե սպանվածների դիակներին շխառնվեին և մեռածի պես պառկած շմնաչին: Երբ գիշերը վրա հասավ, նրանք ծածուկ էտոլիայի լեռները փախան, որտեղից, այդ լեռների գագաթների վրայով, Պինդոսն անցնելով ապավինեցին Բուլղարիա: Մագիստրոսը հոռմայեցի գերիներին աղատեց, ընկած բուլղարներին դիակապտեց, թշնամիների ճամբարը հափշտակեց և հսկայական հարբստություն ձեռք բերելով, զորքով Թեսաղոնիկե վերադարձավ:

24. Սամուիլն իր երկիրը գալով, Տարոնացու որդի Աշոտին կասկանքներից ազատ արձակեց և իրեն փեսայացրեց՝ կնության տալով իր դստեր<sup>323</sup>, որը սիրահարվել էր նրան և սպառնում էր ինքնասպանություն գործել, եթե օրինավոր կերպով [Աշոտի] հետ չամուսնանա: [Սամուիլը] կատարելով ամուսնությունը, [Աշոտին] իր դստեր հետ Դյուրախիոն<sup>324</sup> է ուղարկում, իբրև թե շրջանները պահպանելու համար: [Աշոտը] տեղ հասնելով, իր կնոջ հետ խորհրդակցեց, համոզեց և նրա հետ փախավ տրվյալ վայրի ավերի մոտ հսկողություն վաճող հոռմեական տրիերաները և նրանցով կայսեր մոտ գալով, նրանից ստացավ մագիստրոսի պատվաստիճանը, իսկ իր կինն էլ՝ զոստեի<sup>325</sup>: [Աշոտը] իր հետ բերեց նաև Դյուրախիոնի մեծամեծներից Նրիսելիոս անունով մեկի նամակը, որով խոստանում էր կայսեր հանձնել Դյուրախիոն քաղաքը, եթե ինքը և իր երկու որդիները պատրիկի պատվաստիճանն ստանան<sup>326</sup>: Կայսրը նամակով խոստացավ կատարել նրա խնդրանքը, որով ահա Դյուրախիոնը դավաճանությամբ հանձնվեց պատրիկ Եվստաթիոս Դաֆնոմելեսին: Նրիսելիոսի որդիները ստացան պատրիկի պատվաստիճանը. [Նրիսելիոսը] մինչ այդ արդեն վախճանվել էր:

25. Նույն ժամանակները մագիստրոս Պավլոս Բոբոսը, Թեսաղոնիկեի առաջին մարդը, և պրոտոսպաթար<sup>327</sup> Մալակենոսը, մի խոհեմ ու ճարտարախոս մարդ, շուրջարասիրության մեջ մեղադրվելով, հեռացվեցին [քաղաքից], Պավլոսը Թրակեսիոնի Պեղիադայում, իսկ Մալակենոսը՝ Բյուզանդիոնում: Ազրիանուսյուսի կասկածելի համարվող իլյուստրիոսներից և զորավարական պաշտոններ վարած մարդկանցից ոմանք, վախենալով, որ

997



- իրենց գլխին էլ նույն փորձանքը կգա, Սամուիլի կողմն անցան, Բատացեսը՝ հանդերձ ընտանյոք, իսկ Վասիլ Գլաբասը մենակ: Վերջինիս որդուն կայսրը ամբողջ երեք տարի բանտում պահեց, որից հետո ազատ արձակեց: Այդ նույն ժամանակները կայսրը, ուզենալով [վենետիկցիներին] սիրաշահել, Վենետիկի իշխանին օրինական կնության տվեց Արգիրոսի դստեր, հետագայում
- 1004 կայսր դարձած Ռոմանոսի քրոջ: Կայսրը ներխուժում էլ գործեց Բուլղարիա՝ Ֆիլիպպուպոլսի վրայով, որի պաշտպանությունը վստահեց պատրիկ Թեոդորականին<sup>328</sup>: Տրիպոլիցայի բազմաթիվ բերդեր ավերելով, [կայսրը] վերադարձավ Մոսինուպոլիս:
- 999/ 26. 6508 թվականին, ինդիկտոնի 13-րդ տարում, կայսրը
- 1000 Հեմոսից այն կողմ գտնվող բուլղարական բերդերի դեմ պատրիկ Թեոդորականի և պրոտոսպաթար Նիկեփոր Քսիֆիասի առաջնորդությամբ մեծ զորք ուղարկեց և գրավեց Մեծ ու Փոքր Պրեսլավաները, Պլիսկովան<sup>329</sup>, որից հետո հռոմեական զորքն անվնաս ու հաղթական ետ վերադարձավ:
- 1001 27. Հաջորդ տարին կայսրը դարձյալ գնաց բուլղարների դեմ՝ Թեսաղոնիկեի վրայով: Նրա կողմն անցավ Բերիայի<sup>330</sup> կառավարիչ Դոբրոմիրը, կայսեր հանձնելով քաղաքը և [նրա կողմից] անթիպատոսի<sup>331</sup> պատվաստիճանն ստանալով: Իսկ Սերվիան<sup>332</sup> պահպանող Նիկոլայոսը, որին իր կարճահասակության պատճառով փաղաքշորեն Նիկոլիցա էին անվանում, քաջաբար դիմանում էր և պատրաստակամությամբ տանում պաշարումը: Բայց կայսեր եռանդագին գործելու հետևանքով բերդը գրավվեց, իսկ Նիկոլիցան էլ գերի ընկավ: Կայսրը բուլղարներին այդտեղից վերաբնակեցրեց և [բերդի] պահպանությունը թողեց հռոմայեցիների ձեռքը: Այդ բոլորը կատարելուց հետո նա մայրաքաղաք վերադարձավ, իր հետ տանելով նաև Նիկոլիցային, որին շնորհեց պատրիկի պատվաստիճանը: Նիկոլիցան սակայն միտքը փոխելով, այնտեղից փախավ և ծածուկ Սամուիլի մոտ եկավ, որի հետ գնաց պաշարեց Սերվիան: Բայց կայսրը այս անգամ ևս
- 1001 և ուստի ցուցաբերելով, ջարդեց պաշարման օղակը. Նիկոլիցան ու ամառ Սամուիլը փախան, բայց ուխտադրուժ [Նիկոլիցային] այդ բանը մինչև վերջ անել չհաջողվեց. նա ընկավ հռոմայեցիների որոգայթո, գերի վերցվեց և շղթայակապ կայսեր մոտ բերվեց, և Կոստանդնուպոլիս ուղարկվելով, բանտ նետվեց: Կայսրը, գալով Թեստալիա, վերականգնեց Սամուիլի կողմից ավերված բերդերը, իսկ բուլղարների ձեռքում գտնվողները պաշարելով, գրա-

վեց, բուլղարներին Վուլերոսում<sup>333</sup> վերաբնակեցրեց և բուլոդ [բերդերում] մարտունակ կայազոր թողնելով, վերադարձավ Վոդինա<sup>334</sup> կոչված [վայրը]: Վոդինան գահավեժ ժայռի վրա գտնվող մի բերդ է, որի մոտից հոսում է Օսարով լճի ջուրը. այն հոսում է դետնի տակով, շի երևում և այնտեղ է երկրի երեսը դուրս դալիս: Քանի որ [Վոդինայի] պաշտպանները կամավոր կերպով չհանձնվեցին, [կայսրն] այն պաշարմամբ գրավեց: Սրանց էլ նա Վուլերոսում վերաբնակեցրեց, իսկ [Վոդինան] մարտունակ կայազորով ապահովելով, Թեսաղոնիկե վերադարձավ:

28. Բերդի կառավարիչ Դրաքսանոսը, մի պատերազմող մարդ, խնդրեց, որ իրեն թույլ տան Թեսաղոնիկեում բնակվել: Կայսրը համաձայնվեց դրան. նա կնության առավ վկա Դեմետրիոսի տաճարի ավագերեցի դստեր, որից երկու երեխա ունեցավ: [Դրաքսանոսն] այնուհետև փորձեց փախչել, բայց բռնվեց և իր աներոջ միջնորդությամբ ազատ աշձակվեց: Նա երկրորդ անգամ էլ փորձեց փախչել, բայց դարձյալ ներման արժանացավ: Նա երկու երեխա էլ ունեցավ, բայց երբ փորձեց երրորդ անգամ փախչել, ձերբակալվեց ու ցցահան արվեց:

29. Այն սլատճառով, որ նումերիտ և ատաֆիտ արաբները<sup>335</sup> չարաչար ոտնատակ էին անում Կյուլե Ասորիքն ու հենց Անտիոքը, կայսրը մագիստրոս Նիկեփոր Ուրանոսին Անտիոքի կառավարիչ նշանակելով, [Անտիոք] ուղարկեց, նրա փոխարեն Թեսաղոնիկեի կառավարիչ նշանակելով պատրիկ Դավիթ Արիանիտեսին: Նա Ֆիլիպպուպոլսում զորավար նշանակեց պրոտոսպաթար Նիկեփոր Քսիֆիասին, քանզի Թեոդորականը ծերության պատճառով հրաժարական էր տվել: Իսկ մագիստրոս Նիկեփոր Ուրանոսը, լինելով Անտիոքում, արաբների առաջնորդ Կիտրինիտեսի հետ երկու երեք անգամ մարտի բռնվեց և նրան պարտության մատնելով, համոզեց հանգիստ մնալ, որով նա կայուն ու անխախտ խաղաղություն հաստատեց:

1002

30. Կայսրը հաջորդ՝ ինդիկտիոնի 15-րդ տարին արշավում է Վիգինի<sup>326</sup> դեմ և ամբողջ ութ ամիս պաշարման մեջ առնելով, գրոհով գրավում է քաղաքը: Երբ ինքը պաշարմամբ էր զբաղված, Սամուիլը քառատրոփ վրա հասնելով հենց ընթացքից հարձակվում է Ադրիանուպոլսի վրա՝ ամենաանբիժ աստվածածնի հենց ննջման օրը, երբ ամեն տարի ընդունված սովորության համաձայն պետական ծախսերով տոնահանգես է կատարվում, և



հանկարծակի գրոհելով, դրավում է այն և հսկայական ավար  
վերցնելով, վերադառնում իր եղկիրը: Կայսրը Վիդինը շատ լավ  
ամրացնելով, ողջ առողջ մայրաքաղաք վերադարձավ, ճանա-  
պարհին հանդիպած բոլոր բուլղարական բերդերը ավերելով ու  
1003 կործանելով: Մոտենալով Սկոպիա քաղաքին, նա Սամուիլին  
անհոգ վրան խփած դտավ Աքսիոս դետի (որին այժմ Վարդար  
են կոչում)<sup>337</sup> այն կողմում. նա իրեն ապահով էր զգում, քանզի  
զետը վարարել էր և նրա կարծիքով այն անանցանելի էր, դրա  
համար նա հանգիստ բանակել էր: Զինվորներից ոմանք, սակայն,  
գետանց գտան և այդտեղով կայսրին դիմացի ափր անցկաց-  
րին: Սամուիլը անակնկալից ապշած գլխովին փախուստի դի-  
մեց: Նրա վրանն ու ողջ ճամբարը ընկավ [հոռմայեցիների]  
ձեռքը: Սկոպիա քաղաքը կայսեր հանձնեց Սամուիլի կողմից  
նրա կառավարիչ նշանակված Ռոմանոսը, բուլղարների թագա-  
վոր Պետրոսի որդին և Բորիսի եղբայրը, որ պապի անունով  
Սիմեոն էր վերանվանվել: Կայսրը նրա արարքից գոհ, պատրիկի  
և սրեպոզիտոսի պատվաստիճանը տվեց և ուղարկեց Աբիդոս  
գորավարելու:

31. Կայսրն այնտեղից եկավ Պերնիկ<sup>338</sup>, որի պահպանու-  
թյունը Կրակրասի ձեռքում էր, պատերազմական գործերում  
արտակարգ հմուտ մի մարդու: Այստեղ նա երկար մնաց, պա-  
շարման ընթացքում բազում զինվորներ կորցրեց, և երբ տեսավ,  
որ ամրությունն անառիկ է, Կրակրասին էլ շոշող խուճաքերով ու  
այլ խոստումներով հնարավոր չէ համոզել, գնաց Ֆիլիպպուպո-  
լիս, որտեղից էլ դուրս գալով, եկավ Կոստանդնուպոլիս:

1002 32. Ինդիկտիոնի նույն տարին [կայսրը] օրենք հրապարա-  
կեց, որի համաձայն հեռացած աղքատների հարկերը դինատներն  
են վճարելու: Այս հարկը ալլիլենգիոն<sup>339</sup> կոչվեց: Պատրիարք Սեր-  
գիոսը, բաղում եպիսկոպոսներ ու վանականներ շատ խնդրեցին՝  
վերացնել այս անտրամաբանական բեռը, բայց կայսրը չլսեց  
նրանց:

1009/ 33. Ինդիկտիոնի ութերորդ տարում, 6518 թվականին, Ե-  
1010 դիպսոսի կառավարիչ Ազիզը աննշան ու ոչինչ սլատճառաբա-  
նություններով, վեբացրեց հոռմայեցիների հետ [կնքած] հաշ-  
տությունը, քանզեց Երուսաղեմում փրկիչ Գրիստոսի գերեզմանի  
[վրա] հսկայական ծախսերով կառուցված սուրբ տաճարը<sup>340</sup>,  
թալանեց սուրբ վանքերը, իսկ նրանց մեջ ճգնող վանականներին  
աշխարհով մեկ ցիրուցան արեց:

34. Հաջորդ տարի շատ ծանր ձմեռ արեց, բոլոր դետերն ու լճերը, անդամ ծովը, սառցակալեցին: Ինդիկտիոնի նույն տարվա հունվար ամսին ամենասոսկալի երկրաշարժ եղավ և երկիրը սասանվում էր մինչև մարտ ամսի 9-ը: Այդ օրը ցերեկվա շուրջ տասներորդ ժամին մայրաքաղաքում ու նահանգներում սարսափելի ցնցում ու տակնուվրայություններ եղան, փլվեցին Սրբոց Քառասներորդաց և Ամենայն սրբոց տաճարների գմբեթները: Կայսրըն իսկույն վերականգնեց դրանք: Այս բոլորը կանխագուշակությունն էր Իտալիայում կատարվելիք պատամբության: Քանզի Բարի քաղաքի նորաբնակներից Մելես անունով մի իշխանավոր Հոնգիբարդիայի ժողովրդին զրգոնց ու հոռմայեցիների դեմ գնեք բարձրացրեց: Վասիլ կայսրը նրանց դեմ ուղարկեց Սամոսի զորավար Արգիրոսին և Կեֆալոնիայի զորավար Կոնտոլեոնին՝ հոռմեական տիրապետությունը վերականգնելու համար: Մելեսը նրանց դեմ դուրս գալով, փառավոր հաղթանակ տարավ, հակառակորդներից շատերն ընկան, ոչ քչերն էլ գերի վերցվեցին: Մնացածները ամոթալի կյանքը նախընտրելով դիմեցին փախուստի:

35. Կայսրը չէր դադարում ամեն տարի Բուլղարիա ներխուժել և հանդիպածն ավերել ու ասպատակել: Սամուիլը ի վիճակի չլինելով բաց դաշտում դիմադրություն ցույց տալ, ոչ էլ կայսեր բացեիբաց՝ ճակատամարտ, ամեն տեղից ջարդ կրելով և կորցնելով սեփական հզորությունը, որոշեց խրամներով ու պատնեշներով փակել նրա ճանապարհը գեպի Բուլղարիա: Գիտենալով, որ կայսրը սովորաբար, այսպես կոչված, Կիավա Հոնդոսի և Կլիդիոնի<sup>341</sup> միջով է ներխուժում, ահա որոշեց այդ կիրճը պարսպապատել և կայսեր մուտքը փակել: Նա շատ լայն մի պատնեշ կառուցեց, և այնտեղ կարող պահապաններ հաստատելով, սպասում էր կայսեր: Նա ժամանեց ու փորձեց մուտք գործել, բայց քանի որ պահապանները քաջաբար դիմադրում էին և հարձակվողներին բարձրից հարվածելով ու խոցելով կոտորում, իսկ կայսրն էլ անցումը [հաղթահարելու] հույս չունեի, այն ժամանակվա Ձիլիպպուպուսի զորավար Նիկեփոր Քսիֆիասը, որ կայսեր հետ արշավանքի էր դուրս եկել, խորհուրդ տվեց մնալ տեղում և անդադար հարձակումներ գործել կառույցի վրա, իսկ ինքն ասաց, թե գնում է որևէ օգտակար ու փրկարար գործ կատարելու: Իր զորքը վերցնելով և շրջանցելով Կլիդիոնից հարավ գտնվող բարձրագույն լեռը, որին Բալասիցա են անվանում,



1014 կտրելով դժվարանցանելի ու ճանապարհներից զուրկ տեղերը, նա ինդիկտիոնի 12-րդ տարվա հուլիս ամսի 29-ին, վերևից հանկարծակի աղմուկ աղաղակով անցնում է բուլղարների թիկունքը, որոնք անակնկալից շփոթված, դիմում են փախուստի: Իսկ կայսրն էլ անպաշտպան մնացած պարիսպը քանդելով, ռսկրսեց [թշնամուն] հետապնդել: Շատերն սպանվեցին, դրանցից ավելին էլ գերի ընկան: Հազիվ հազ կարողացավ վտանգից խուսափել Սամուիլը՝ իր որդու օգնությամբ, որ քաջաբար դիմադրում էր հետապնդողներին<sup>342</sup>. նա [Սամուիլին] ձի նստեցնելով բերեց Պրիլպոս կոչվող բերդը: Կայսրը, ինչպես պատմում են, շուրջ 15 հազար գերված բուլղարների կուրացրեց<sup>343</sup>, յուրաքանչյուր հարյուրյակին առաջնորդել հրամայեց մեկ միակնանու և Սամուիլին ուղարկեց: Վերջինս տեսնելով ժամանողների քանակն ու վիճակը, չկարողացավ արհամարհան արիաբար ու քաջաբար տոկալ, նվաղեց, ուշաթափվեց ու գետին ընկավ: Ներկաները ջրով ու վարդաջրով նրան մի փոքր սթափեցրին, ուշքի բերեցին: Ուշքի գալով, նա սառը ջուր ուզեց խմել, խմեց, բայց սրտի կաթ-  
6-X— ված ստանալով, երկու օր հետո մեռավ: Բուլղարների իշխանու-  
1014 թյունը վերցնում է նրա որդի Գաբրիել-Ռոմանոսը, որը թեև ֆիզիկական ուժով ու կարողությամբ գերազանցում էր հորը, բայց մտավոր ընդունակություններով նրան շատ էր զիջում: Սամուիլն այդ որդուն ունեցավ լարիսացի ինչ-որ գերուհուց: Նա իշխանությունն ստացավ ինդիկտիոնի 13-րդ տարվա սեպտեմբեր ամսի 15-ին, բայց մի տարին էլ չբոլորելով, որսի ժամանակ սրախող-խող արվեց Ահարոնի որդի Հովհաննես-Վլադիսլավի կողմից, որին [Գաբրիելը] ժամանակին մահից փրկել էր:

36. Այս դեպքերից առաջ Արիանիտեսի փոխարեն Թեսաղոնիկեի կառավարիչ էր նշանակվել Թեոփիլակտոս Բոտանիատեսը, իսկ բուլղար մեծամեծներից Դավիթ Նեստորիցեսը, Սամուիլի կողմից մեծ ուժով Թեսաղոնիկեի վրա էր ուղարկվել: Թեոփիլակտոսը, իր որդի Միքայելի հետ ընդդիմակայեց նրանց և կովի բռնվելով, գլխովին պարտության մատնեց, ձեռք բերեց մեծ ավար ու բազմաթիվ գերիների, որոնց ուղարկեց այն ժամանակ Կլիդիոնի կլեյսուրում գտնվող կառույցը պաշարող կայսեր: Այդ կառույցն անցնելով, ինչպես ասվեց, կայսրը հասնում է Ստրումպիցա, պաշարում Ստրումպիցայի մոտիկ գտնվող Մացուկո բերդը, իսկ Թեսաղոնիկեի դուքս Թեոփիլակտոս Բոտանիատեսին հրամայում է զորքով անցնել Ստրումպիցայի լեռները, նրանց

մոտի ճանապարհներում գտնվող կառույցները կրակի տալ, հարթել իր ճանապարհը դեպի Թեսաղոնիկե: Վայրը պահպանող բուլղարները, առանց խոչընդոտելու, թույլ տվեցին նրան մուտք գործել, բայց երբ նա հրամանը կատարելուց հետո ուզեց կայսեր մոտ վերադառնալ, մի երկար կիրճում ընկավ նրա համար հատուկ դարան մտած [բուլղարների] ծուղակը: Ընկնելով ահա այդ ծուղակը, նա բոլոր կողմերից շրջապատվեց, նրա վրա վերևից սկսեցին շարտել քարեր և նետեր արձակել: Կիրճի անանցելիության ու [զինվորների] խտության պատճառով ոչ ոք չէր կարողանում մարտնչել. ինքը՝ [Թեոփիլակտոսը] ընկավ, չկարողանալով անգամ իր ձեռքերը գործի դնել, նրա հետ ոչնչացավ նաև զորքի մեծ մասը: Երբ այդ մասին տեղեկացրին կայսեր, նա մեծ կսկիծ ապրեց ու որոշեց այլևս չխորանալ, և նահանջելով եկավ Զագորա, որտեղ մի ժայռի վրա, բոլոր կողմերից խորագույն անդունդներով ու կիրճերով շրջապատված, կառուցված է ամենաանառիկ Մելնիկոս բերդը<sup>344</sup>: Երջակայքի բոլոր բուլղարներն այստեղ էին ապավինել, ամենևին ուշադրություն չդարձնելով հռոմայեցիների [կարգադրություններին]: Կայսրը սրանց մոտ ներքինի ոմն Սերգիոսի, իր ամենամտերիմ սենեկապաններից մեկին, խոհեմ, ճարտարախոս մի մարդու ուղարկեց, որպեսզի փորձի խելքի բերել: Լինելով տեղում, բազում խոստումներով նա կարողացավ համոզել նրանց ճիշտ ընտրություն կատարելու, զենքերը ցած դնելու, իրենց էլ, բերդն էլ կայսեր հանձնելու: Կայսրը սիրալիր ու պատվով ընդունեց նրանց և բերդում անհրաժեշտ կայազոր թողնելով, շարժվեց դեպի Մոսինուպոլիս: Այդտեղ գտնվելու ժամանակ հոկտեմբեր ամսի 24-ին նրան հայտնեցին Սամուիլի մահվան լուրը: Կայսրը Մոսինուպոլսից անհապաղ դուրս գալով, իջնում է Թեսաղոնիկե, այնտեղից էլ գնում է Պելագոնիա, ճանապարհին ոչինչ չասպատակելով: Նա կրակի տվեց միայն Բուտելիում գտնվող Գաբրիելի ապարանքը: Այնուհետև նա զորք ուղարկեց ու գրավեց Պրիլպոն ու Ստիպիոն բերդերը, ապա հասավ Չեռնա կոչվող գետը, լաստերի ու փշած տիկերի օգնությամբ անցավ այն և վերադարձավ Վոդինա, այնտեղից էլ՝ հունվարի 9-ին եկավ Թեսաղոնիկե:

37. Գարնանը նա դարձյալ վերադարձավ Բուլղարիա և դեմ արեց Վոզինա բերդին, քանզի նրանք հասցրել էին կայսեր հանդեպ հայտնած իրենց հպատակությունը դրժել և հռոմայեցիների դեմ զենք բարձրացնել: Համառ պաշարման ենթարկելով նը-



րանց ստիպեց, երաշխիքներ ստանալով, հանձնել ներսում գրտ-  
 նը վողներին: [Կայսրը] սրանց դարձյալ վոլերոսում վերաբնա-  
 կեցրեց, դժվարանցանելի վայրերի մեջ տեղում երկու այլ բերդեր  
 կառուցեց: որոնցից մեկն անվանեց Կարդիա, մյուսը՝ Սուրբ Ե-  
 դիա, որից հետո Թեսաղոնիկե վերադարձավ: Այստեղ Ռոմանոս-  
 Փաբրիելի կողմից մի ոմն կոնատ հռոմայեցի էր ուղարկվել, հպա-  
 տակույթյուն ու հնազանդություն հայտնելու: Կայսրը կասկածեց  
 նամակի [խսկության] վրա, դրա համար պատրիկ նիկեփոր  
 Քսիֆիասին, Բոտանիատեսից հետո Թեսաղոնիկեի զորավար  
 նշանակված Կոստանդին Դիոդենեսի հետ զորքով Մոզլենայի<sup>345</sup>  
 նահանգն ուղարկեց, որի ողջ շրջանն աստիատակելու և քաղաքը  
 սլաշարելու ժամանակ, վրա հասավ նաև կայսրը: Նա քաղաքի  
 մոտով հոսող գետի հունը փոխելով, քայքայեց պարիսպների  
 հիմքերը, քանդված տեղերում ցախ ու այլ դյուրավառ նյութ դր-  
 րեց և կրակի տալով պարիսպն ավերեց: Ներսում եղողները,  
 տեսնելով դա, աղիոզորմ կայսեր ողորմածության դիմեցին  
 և բերդն ու իրենց նրան հանձնեցին: Դերի վերցվեց մի իշխանա-  
 վոր, Փաբրիելի սիմպարեդրոս կավխան<sup>346</sup> Դոմեստիանոսը, Մոզ-  
 լենայի կառավարիչ Իլիցեսը և բազում այլ իշխանավորներ, ու  
 1015 ամառ անթիվ մարտիկներ: Չենք կրելու ընդունակ մարդկանց կայսրը  
 վասպուրական ուղարկեց<sup>347</sup>, հրամայեց մնացած ամբոխի ունեց-  
 վածքը թալանել, իսկ բերդն էլ կրակի տալ: Գրավվեց նաև Մոզ-  
 լենայի մոտիկ գտնվող մի այլ բերդ՝ էնոտիա կոչվողը:

38. Հինգերորդ օրը եկավ կոնատ հռոմայեցին՝ Ահարոնի  
 որդի Հովհաննես-Վլադիսլավի ծառաներով, նամակ բերելով,  
 որով հայտնվում էր, թե ինքը սպանել է Փաբրիելին, ողջ իշխա-  
 նությունն իր ձեռքը վերցրել: Նա խոստանում էր ինչպես պետքն է  
 հպատակություն ու հնազանդություն հայտնել կայսեր: Կարդա-  
 լով դա, կայսրը խրիստովուլ նամակ գրեց՝ անհրաժեշտ երաշխիք-  
 ները տալով և այն Հովհաննեսին ուղարկեց: Մի քանի օր անց  
 կոնատ հռոմայեցին դարձյալ վերադարձավ, բերելով Հովհան-  
 նեսի և Բուլղարիայի իշխանների գրությունները, որոնցով նը-  
 րանք խոստանում էին լինել կայսեր հպատակներն ու ծառանե-  
 րը: Կայսեր կողմն անցավ նաև Մոզլենայում գերի ընկած Դոմե-  
 տիանոսի եղբայր Կավխանը<sup>348</sup>: [Կայսրը] սրան սիրալիր ընդու-  
 նեց ու պատիվների արժանացրեց: Իմանալով, որ Հովհաննեսի  
 գրածը անկեղծ չէ, այլ հետին մտքեր է հետապնդում, որ նա իր  
 գրածի հակառակն է մտադիր անել, նա դարձյալ Բուլղարիա վե-

րադարձավ, ասպատակեց Օստրովի և Սոսկոսի շրջակայքը, Պելագոնիայի դաշտավայրը, կուրացնելով դերի ընկնող բոլոր բուլղարներին: Նա հասավ մինչև Ախրիդա քաղաքը, որտեղ գտնվում էին Բուլղարիայի թագավորների ապարանքները: Նա առավ քաղաքը, ամեն ինչ կարգի բերեց և մտադիր էր առաջ անցնել ու Դյուրախիոնի շրջանով էլ զբաղվել, քանզի այդ շրջաններն իր ներկայության կարիքն էին զգում: Քանի Տրիվալիայի և Սերբիայի անմիջապես հարող շրջանների վրա իշխում էր Սամուիլի փեսան՝ նրա դստեր ամուսին Վլադիմիրը<sup>349</sup>, մի հեզ, խաղաղասեր ու առաքինի մարդ, Դյուրախիոնի շրջանը անդորրության մեջ էր: Հովհաննեսը Գաբրիելին սպանեց, իսկ երբ Վլադիմիրն էլ Բուլղարիայի արքեպիսկոպոս Դավթի միջնորդությամբ Հովհաննեսի տված պատիր երդումներից խաբվելով հանձնվեց ու փոքր անց զոհվեց, այդ շրջանները մեծ խառնաշփոթության ու տակնուվրայության մեջ էին: Հովհաննեսն անձամբ կամ իր զորավարների հետ, շարունակ փորձեր էր անում վերագրավելու քաղաքը: Ահա սրա համար էր կայսրն ուզում գնալ և օգնել, բայց մի ծանրակշիռ պատճառ խանգարեց դրան: Նա Ախրիդա գնալիս, բազում զինվորներով իր ետևում թողեց զորավար Գեորգիոս Գոնիցիատեսին և պրոտոսպաթար Օրեստես Գերիին, նրանց հրաման տալով ասպատակել Պելագոնիայի հարթավայրերը: Բուլղարները մի շատ երևելի ու փորձված մարդու, զորավար Իվացեսի գլխավորությամբ սրանց ծուղակն են գցում և բոլորին կոտորում: Կայսրը այդ բանից կսկիծով լի, Պելագոնիա վերադարձավ, հարձակվեց Իվացեսի վրա և հալածական անելով, գնաց Թեսաղոնիկե, այնտեղից էլ անցավ Մոսինուպոլիս, [նախապես] Ստրումպիցայի դեմ պատրիկ Դավիթ Արիանիտեսի գլխավորությամբ զորք ուղարկելով: Սա հանկարծակի հայտնվելով, գրավեց Թերմիցա կոչվող բերդը: [Կայսրը] Քսիֆիասի գլխավորությամբ մի ուրիշ զորք էլ Տրիպոլիցայի բերդերի դեմ ուղարկեց: Սա բաց տեղանքներում ինչ հանդիպեց ավերեց, իսկ պաշարմամբ գրավեց Բոյիոն<sup>350</sup> կոչվող ամրոցը:

1016

39. Կայսրը 6524 թ. հունվարին Կոստանդնուպոլիս գնաց և Անդրոնիկոս Դուկաս Լյուդոսի որդի Մոնոդոսի գլխավորությամբ խազարիա նավատորմիղ ուղարկեց: Սա թագավորի փեսա Վլադիմիրի<sup>351</sup> եղբայր Սֆենգոսի համագործակցությամբ հպատակեցրեց երկիրը. հենց առաջին ընդհարման ժամանակ նահանգի կառավարիչ Գեորգիոս Յուլեսը<sup>351</sup> գերի ընկավ: Ահա այդ ժա-



մանակներում էր, որ Վերին Մարաստանի (որին այժմ Վասպուրական են անվանում) արխոնտ Սենեքերիմը, ամբողջ տոհմով կայսեր կողմն անցավ, նրան հանձնեց իրեն պատկանող համայն երկիրը և ստացավ պատրիկի պատվաստիճանը և Կապադովկիայի զորավարի [պաշտոնը], տվածի դիմաց որպես տիրություն ստանալով հետևյալ քաղաքները. Սեբաստիան, Լարիսան, Աբարան և այլ բազում տիրույթներ: Նեղվելով հարևան հագարացիներից և ի վիճակի չլինելով նրանց ընդգրկակայել, նա կայսեր կողմն անցավ, նրան հանձնելով իր երկիրը<sup>352</sup>: Այնտեղ որպես կառավարիչ ուղարկվեց պատրիկ Վասիլ Արգիրոսը, որն ամեն ինչում սխալներ թույլ տալու պատճառով, պաշտոնանկ արվեց: Նրան փոխարինելու ուղարկվեց պրոտոսպաթար Նիկեփոր Կոմնենոսը, որ տեղ հասնելով, և գործի գնելով և քաղցր խոսքը, և բռնությունը, կարողացավ երկիրը կայսրին հպատակեցնել:

40. 6524 թ. ինգիկտիոնի 14-րդ տարին, կայսրը մայրաքաղաքից դուրս գալով, գնում է դեպի Տրիագիցա, պաշարում Պերնիկ ամրոցը, որի պաշտպանները հաստատակամ ու քաջարի դիմադրություն ցուցաբերեցին. բազում հռոմայեցիներ ընկան: Կայսրը ամբողջ ութսունութ օր համառորեն պաշարեց, բայց համոզվելով, որ անկարելին է ձեռնարկում, ձեռնունայն նահանջեց, իջավ Մոսինուպոլիս: Այստեղ նա զորքերին հանգիստ տվեց, իսկ գարնանը Մոսինուպոլսից դուրս գալով, մուտք գործեց Բուղարիա և պաշարելով Լոնգան կոչվող բերդը, գրավեց այն: Դավիթ Արիանիտեսին և Կոստանդին Դիոգենեսին նա Պելագոնիայի դաշտերն ուղարկեց և բազում անասուններ ու գերիներ ձեռք բերեց: Կայսրը գրավված բերդը կրակի տվեց, գերիներին երեք մասի բաժանեց, մի մասը տվեց դաշնակից ռուսներին<sup>353</sup>, մյուսը՝ հռոմայեցիներին, իսկ երրորդն էլ ինքը վերցնելով, առաջ շարժվեց: Հասնելով մինչև Կաստորիա<sup>354</sup>, նա փորձ արեց գրավել քաղաքը, բայց համոզվելով, որ դա անհնարին է, վերադարձավ: Կայսրը Դորոստոլի զորավար Զոչիկից, իբերացի պատրիկ Թեդատի<sup>355</sup> որդուց նամակ ստացավ, թե Գրակրասը բաղում զորք հավաքելով, և Հովհաննեսին միանալով, պաժինակների էլ վերցնելով, մտադիր է Ռոմանիա ներխուժել: Այս նամակի վրա իրար անցած, [կայսրը] շտապ կարգով վերադարձավ: Ճանապարհին նա գրավեց Բոսոգրադ բերդը, որը կրակի տվեց, գրավեց Բերիան, ասպատակ սփռեց ու ավերակ դարձրեց Օստրովի և Մո-

լիսկոսի շրջակայքը, որից հետո կանգ առավ, քանզի իրեն հայտնեցին, որ Կրակրասի ու Հովհաննեսի նախատեսած հարձակումը հռոմայեցիների գեմ խոչընգոտի հանդիպեց՝ պածինակների նրանց զինական օգնություն չտալու պատճառով: Ահա դրա համար [Կայսրը] վերադառնալով, մի այլ բերդ պաշարեց՝ Սետենան, որտեղ Սամուիլի ապարանքն էր գտնվում, մեծ քանակությամբ հացահատիկ, որը հրամայեց իր զինվորներին հափշտակել, իսկ մնացած ամեն ինչը նա կրակի տվեց: Նա մոտիկ գտնվող Հովհաննեսի դեմ Արևմուտքի սխողերի տազման ուղարկեց, ինչպես և Թեսաղոնիկեի՝ Կոստանդին Դիոգենեսի զխավորությամբ: Երբ սրանք ճամփա ելան, Հովհաննեսը դարանակալեց: Կայսրը, իմանալով այդ մասին ձի նստեց և միայն, «ով կովող է, թող ինձ հետևի» ասելով, անհապաղ ճամփա ընկավ: Հովհաննեսի հետախույզները, իմանալով այդ մասին, սարսափահար Հովհաննեսի ճամբարն եկան, այն ահով ու իրարանցմամբ լցրին, միայն մի բան աղաղակելով. «Բեժիտե, ցեսարը»<sup>356</sup>, Բուրբո Հովհաննեսի հետ խառնիճաղանջ փախուստի դիմեցին, իսկ Դիոգենեսի զինվորները գոտեպնդված հալածում էին նրանց: Նրանք շատերին սպանեցին, երկու հարյուր հոգու կատարյալ սպառազինությամբ գերեցին, ձեռք գցեցին Հովհաննեսի ձիերն ու հանդերձանքը և նրա եղբորորդուն: Այգ գործը կատարելուց հետո նա վերադարձավ Վոդինա և այդտեղի ամեն ինչը կարգի բերելով, վերադարձավ Բյուզանդիոն՝ ինդիկտիոնի 15-րդ տարին, 6526 թվականի<sup>357</sup>, հունվար ամսի 9-ին:

41. Հովհաննեսը առիթ ձեռք բերելով, բարբարոսին հատուկ փրվածությամբ ու գոռոզությամբ գնում է Դյուրախիոնը պաշարելու: Պաշարման ժամանակ տեղի ունեցած ընդհարման ընթացքում նա սպանվեց. ոչ ոք չիմացավ, ո՞վ էր նրան սպափետր. նոդը<sup>358</sup>: Նա բուլղարների վրա իշխեց 2 տարի և 5 ամիս: Երբ կայսրը Դյուրախիոնի զորավար պատրիկ Նիկետաս Պեգոնիտեսի<sup>359</sup> միջոցով իմացավ Հովհաննեսի մահվան մասին, իսկույն դուրս եկավ և երբ հասավ Ադրիանուպոլիս, նրան ընդառաջ ելան համբավավոր Կրակրասի եղբայրն ու որդին, ավետելով նշանավոր Պերնիկ բերդի և ուրիշ երեսունհինգ [բերդերի] հանձնման մասին: [Կայսրը] նրանց ըստ արժանվույն պատվեց, Կրակրասին պատրիկի պատվաստիճան շնորհեց և եկավ Մոսինուպոլիս: Այստեղ Պելագոնիայից, Մորովիսգոսից, և Լիպենիոնից դեսպաններ եկան՝ քաղաքները կայսեր հանձնելու:



Այստեղից կայսրը գնաց Սերրև, որտեղ ժամանեց Կրակրասը՝ հանձնվելու [համաձայնություն տված] 35 արխոնտների հետ: Նա լավ ընդունելություն արժանացավ. Հանձնվեց և Դրագոմուզոսը, որը Ստրումպիցայի [բերդերը] տվեց. նա պատրիկի պատվաստիճան ստացավ: Սա իր հետ բերեց և պատրիկ Հովհաննես Խալդին, որ երկարամյա բանտարկությունից ազատ էր արձակվել: Սամուիլն էր նրան բռնել և նա քսաներկու տարի բանտում էր մնացել: Երբ կայսրը մոտեցավ Ստրումպիցային, նրա մոտ եկավ Բուլղարիայի արքեպիսկոպոս Դավիթը՝ Հովհաննեսի կին Մարիայի նամակով. նա խոստանում էր հեռանալ Բուլղարիայից, եթե իր մտադրությունն իրականանա: Ընդառաջ եկավ նաև երկրի խորքում գտնվող բերդերի տոսլարխ Բոգդանը, որը ևս ստացավ պատրիկի պատվաստիճան, որպես հին կայսերասեր և իր աներոջ սպանող: [Կայսրն] այնտեղից գնաց Սկոպիա, քաղաքում զորավար-ալտոկրատոր<sup>60</sup> թողեց պատրիկ Դավիթ Արիանիտեսին և Ստիպիոն ու Պրոսակ բերդերի վրայով ետ վերադարձավ, աղոթքների, փառաբանությունների ու պատիվների արժանանալով: Ապա քաջաբար գնաց Ախրիդա, ուր և բանակեց. համայն բնակչությունը նրան ընդառաջ ելավ՝ հաղթական երգերով, ծափահարություններով ու փառաբանություններով: Ախրիդա քաղաքը բարձր բլրի վրա է կառուցված, շատ մոտ մեծագույն մի լճի, որտեղից սկիզբ է առնում դեպի հյուսիս հոսող Դրինոս գետը, որն այնուհետև արևմուտք շրջվելով, էլիսոս բերդի մոտ Օրինոն է թափվում: [Ախրիդան] համայն Բուլղարիայի մայրաքաղաքն է, այնտեղ են գտնվում Բուլղարիայի թագավորների ապարանքներն ու գանձարանը, որը կայսրը բացելով, բազում դրամ գտավ, մարգարտյա թագեր, ոսկեհյուս հանդերձներ, և հարյուր կենտինար ոսկեդրամ, որն ամբողջությամբ որպես ոռճիկ տվեց իր զինվորներին: Քաղաքի կառավարիչ հաստատելով պատրիկ Եվստաթիոս Դաֆնոմելեսին, նրան թողնելով ուժեղ կայազոր, նա դուրս եկավ ճամբար, ուր ընդունեց իր մոտ առաջնորդված Հովհաննես-Վլադիսլավի կնոջը, որն իր հետ էր բերել նաև երեք որդիներին ու վեց դուստրերին, Սամուիլի ապօրինածին որդուն, Սամուիլի որդի Ռագոմիրի երկու դուստրերին ու հինգ որդիներին, որոնցից մեկը, Հովհաննեսի ձեռքն ընկնելով, կուրացվել էր. դա այն ժամանակ էր ևղել, երբ [Հովհաննեսը] սպանել էր Սամուիլի որդի Ռագոմիրին, վերջինիս կնոջը և [Սամուիլի] փեսա Վլադիմիրին: Մարիան Հովհաննեսից երեք

որդի էլ ունենր, բայց նրանց հաջողվել էր փախուստի դիմել Տմորոս լեռը, Կերավնիա լեռնաշղթայի գագաթը: [Կայսրը Մարիային] մեղմ ու սիրալիր ընդունեց և հրամայեց պահպանել նրան մյուսանների հետ միասին: Կայսեր մոտ եկան բուլղարների և այլ մեծամեծներ՝ Նեստորիցեսը, Լազարիցեսը, Կրտսեր Դոբրոմիրը, յուրաքանչյուրն իր տագմաներով, որոնք սիրալիր ընդունելության արժանացան և թագավորավայել պատվի: Այն ժամանակները նաև Վլադիսլավի Տմորոս փախած, (այդ մասին ասվեց), որդիներ՝ Պրուսիանը և նրա երկու եղբայրները, երկարատև շրջապատման մեջ ընկնելով, (կայսեր հրամանով զինվորները հսկում էին լեռից իջնելու ուղիները), կայսեր դիմեցին և երաշխիքներ խնդրեցին, խոստանալով հանձնվել: Կայսրը նրանց մարդասիրական պատասխան տվեց: Ախրիդայից դուրս գալով, նա եկավ Պրեսպա կոչվող լիճը, մեջտեղում գտնվող լեռն անցնելիս նրա վրա բերդ կառուցեց, որը Վասիլիդա կոչեց, մի ուրիշն էլ հիշյալ լճի [ափին]: Պրեսպայից կայսրը գնաց Դիաբոլիս<sup>361</sup>: Այստեղ մի բարձր բեմ շինեցին [որի վրա կայսրն] ընդունեց ներս մտած Պրուսիանին և նրա եղբայրներին, մեղմ ու մարդասիրական խոսքերով մխիթարեց: [Պրուսիանին] նա մագիստրոսի, իսկ մյուսներին պատրիկի պատվաստիճան շնորհեց: Այստեղ բերվեց և կուրացված Իվացեսը: Արժե պատմել նրա կուրացման մանրամասնությունների մասին, դրա պատմությունը հետաքրքիր է և զարմանալի:

42. Հովհաննես-Վլադիսլավի մահից, նրա կնոջ Մարիայի և վերջինիս երեսանների [կայսեր] կողմն անցնելուց և համայն Բուլղարիայի մյուս արխոնտների հպատակվելուց հետո, այս Իվացեսը փախուստի դիմեց և ապավինեց դժվարանցանելի մի լեռ (Բրոխոտոս է այն կոչվում), որտեղ կան շատ գեղեցիկ ապարանքներ (նրանց Պրոնիստա են կոչում), պարտեզներ ու հաճույքի վայրեր: Նա չէր ուզում տեղի տալ աստօր կամքին և կամաց-կամաց զորք հավաքելով, տակնուվրա էր անում շրջակայքը, ապստամբություն ծրագրում, երազում բուլղարական իշխանություն տիրանալ: Այդ բանը շատ էր անհանգստացնում կայսեր և նա ուղիղ ճանապարհը թողած թեքվեց դեպի հարավ և հասավ վերոհիշյալ Դիաբոլիսը, վճռելով կամ ստիպել ապրստամբին զենքերը ցած դնել, կամ պատերազմով նրան ոչնչացնել: Կայսրն ահա հիշյալ վայրում կանգ առնելով, Իվացեսին նամակ ուղարկեց, նրան հորդորելով, քանի որ արդեն Բուլղարիան



հպատակվել է, զենք չբարձրացնել, անկարելին շերագել, իմանալ, որ իր ձեռնարկած գործն անհաջողության կմատնվի: Նա նամակն ստանալով, պատասխան գրեց, բազմապիսի պատճառաբանություններ առաջ քաշեց, սկսեց ձգձգել ու խուսանավել, ստիպելու համար կայսեր իր՝ [Իվացեսի] տված խոստումներից խաբված այգ տեղում հիսուն հինգ օր մնալ: Իրերի գրության մասին տեղյակ պահվեց Ախրիգայի կառավարիչ Եվստաթիոս Դաֆնոմելեսը, որին հայտնվեց, թե կայսրը վճռել է Իվացեսին ոչնչացնել: [Եվստաթիոսը] հարմար առիթ որսալով, խորհրդակցեց իր ամենահավատարիմ սպասավորներից երկուսի հետ, նրանց բացահայտեց նպատակը և գործի անցավ: Իվացեսը նրշում էր ամենասուրբ աստվածամոր Ննջման համաժողովրդական 15—VIII տոնը: Այգ օրը նա սովորություն ուներ ճաշկերույթի հրավիրել —1018 ոչ միայն մոտիկ հարևաններին, այլև բազում մարզկանց հեռավոր շրջաններից: Եվստաթիոսն ահա ինքնագլուխ գնում է տոնին մասնակից դառնալու: Հանգիպելով անցումների պահապաններին, նա հրամայում է զեկուցել իր ով լինելը, ասել, թե ուղում է արխոնտի հետ ճաշկերույթին մասնակցել: Սրանց ղեկուցման վրա Իվացեսն ապշեց, [խորհելով], թե ինչպես իրեն թշնամաբար շորամադրված մի մարդ կամավոր կերպով գալիս ու իրեն ընձեռում է ոսոխին: Հակառակ դրան նա թույլ է տալիս նրան գալ, ուրախությամբ ընդունում ու ողջագուրվում: Առավոտվա աղոթքից հետո, երբ բոլոր հավաքվածներն իրենց կացարանները ցրվեցին, Եվստաթիոսը մտավ Իվացեսի մոտ և պահանջեց, որ բոլորը կարճ ժամանակով դուրս գան, իբրև թե ուզում է Իվացեսի հետ առանձին խոսակցել նրա համար շատ կարևոր ու օգտաշատ մի հարցի շուրջը: [Իվացեսը] առանց որևէ նենգություն ու խաբեություն կասկածելու, հավատաց, որ նա իսկապես ուզում է միանալ իր բարձրացրած ապստամբության, և հրամայեց սպասավորներին կարճ ժամանակով հեռանալ, ապա բռնելով [Եվստաթիոսի] ձեռքից, ծառախիտ, փոս մի տեղ տարավ, որտեղից ծառերի խտության պատճառով ոչ մի ձայն լսելի չէր դառնա: Եվստաթիոսն ահա լինելով այդ վայրում, օգտվեց Իվացեսի մենակ լինելու հանգամանքից, և նրան իսկույն գետին տապալեց, ծունկը դրեց նրա կրծքին (ֆիզիկապես նա ուժեղ էր) և սկսեց խեղդել, [միաժամանակ] կոչ անելով իր երկու սպասավորներին՝ շտապ օգնության հասնել: Նրանք, պայմանավորվածության համաձայն, կանգնած հետամուտ էին դեպքերի ընթաց-

քին և երբ լսեցին տիրոջ ձայնը, շտապ վազեցին, բռնեցին իվացեսին, նրա բերանը պատմուճանով փակեցին, որպեսզի նա հանկարծ չգոռա, չկանչի իր մարդկանց և գործը չխափանվի, և կուրացրին: Ահա այդպես կույր նրան պարտեզից հանեցին, բակը բերեցին, իրենք էլ մի բարձր շենքի վերին հարկը փախչելով ու թուրը քաշելով, պատրաստվեցին ընդդիմակայելու: Երբ աղետի մասին իմացվեց, անհամար բազմություն վրա խուժեց, ոմանք թրերով, ոմանք նիզակներով ու աղեղներով, ուրիշներն էլ քարերով, փայտերով ու վառված ջահերով, դյուրավառ նյութերով, գոռում գոչյունով վազեցին, աղաղակելով. «խողխողել, այրել, կտոր-կտոր, քարկոծ անել ոճրագործներին ու սրիկաներին, չխնայել շարագործներին»: Հսկայական ամբոխը տեսնելով և փրկության հույսը կտրելով, Եվստաթիոսը իր մարզկանց կոչ արեց արիանալ, թուլամորթություն հանդես չբերել, չհանձնվել, չընկնել իրենց կորստին ծարավի մարդկանց ձեռքը, իրենց պետք չէ ոչ նրանց տալիք փրկությունը, ոչ էլ եղկելի ու տանջալից մահը: Նա ինչ-որ փոքր լուսամուտից գլուխն հանեց ու ձեռքի նշանով լռեցնելով ամբոխին, նրանց դիմեց հետևյալ խոսքերով. «Ո՛վ հավաքված այրեր, ես ոչ մի թշնամություն չէի տածում ձեր իշխանավորի հանդեպ, դուք բոլորդ վկան եք դրան, որ նա բուլղար է, իսկ ես՝ հռոմայեցի, այն էլ ոչ Թրակիայի և Մակեդոնիայի, այլ Փոքր Ասիայի, ձեր մեջ կլինեն իմացողներ, թե ձեզնից ինչքան հեռու է այն գտնվում: Ես նման բանի դիմեցի ոչ անխոհեմաբար ու անտեղի, այդ բանին ինձ պարագաներն ստիպեցին, թող ձեր ամենախոհեմները միտք անեն: Ես այդպես խելահեղորեն ինձ վտանգի մեջ չէի գցի, իմ կյանքից ձեռք չէի քաշի, եթե այդ բանին դրդող պատճառ չլիներ: Դուք իմացեք, որ դա կայսեր հրամանով տեղի ունեցավ, որին ես ենթարկվեցի որպես կարգապահ գործակալ: Արդ, եթե դուք որոշել եք ինձ սպանել, ահա ես ձեր կողմից շրջապատված եմ: Բայց իմացեք, ես իմ կյանքը հեշտ ու խաղաղ չեմ տա, ոչ էլ զենքերը ցած դնելով կհանձնվեմ ձեզ, որպեսզի դուք իմ անձի նկատմամբ ցանկացածն անեք: Ես կմաքառեմ իմ կյանքի համար իմ մարդկանց հետ մինչև մահ, կընդդիմակայեմ իմ վրա եկողներին: Եթե նույնիսկ զոհվենք, այդ էլ հնարավոր է, քանի որ շրջապատված ենք քանակապես ավելի շատերի կողմից, ապա մահը մենք երջանիկ ու երանելի ենք համարում, քանզի գիտենք, որ կա մեր արյան վրեժն առնողը, իսկ թե դուք կարո՞ղ եք նրան երկար գիմադրել, ապա



մտածեք»։ Հավաքվածները, լսելով նման խոսքերը, կայսեր երկ-  
յուղից Քարսափած, քիչ-քիչ ցրվեցին, ավելի տարեցներն ու խո-  
հեմները փառաբանելով կայսեր հնազանդություն հայտնեցին,  
իսկ Եվստաթիոսն էլ հեշտ ու հանգիստ Իվացեսին առնելով, բե-  
րեց կայսեր, որը գնահատելով [Եվստաթիոսի] խիզախությունը,  
նրան իսկույն Դյուրախիոնի զորավար նշանակեց, Իվացեսի շար-  
ժական ողջ ունեցվածքը նվիրեց, [Իվացեսին] էլ բանտ նետեց։

43. Այն ժամանակ էր, որ բազում անգամ բռնված և նույն-  
քան էլ աղատ արձակված Նիկոլիցան ինքնաբերաբար իջավ  
կայսեր ճամբարը և իր ձեռքով թակելով դուռը, հայտնեց իր իս-  
կությունը և ասաց, թե կամովին հանձնում է իր մարմինը կայ-  
սեր։ Նա ինչ-որ լեռներում էր թաքնվում և նման քայլին գիմեց  
այն բանից հետո, երբ նրա և նրա հետ եղողների դեմ զորք ու-  
ղարկվեց և մի մասը կամովին հանձնվեց, մյուսն էլ գերի վերց-  
վեց։ Կայսրը սակայն շուզեց նրան տեսնել անգամ, և Թեսաղոնի-  
կե ուղարկեց, հրամայելով բանտարկել, ապա Դյուրախիոնի, Կո-  
լոնիայի<sup>362</sup> և Դրյուլինուպոլսի գործերը իր կարծիքով հնարավորին  
չափ լավ կարգավորելով, բանակաթեմերում կայազորեր ու զո-  
րավարներ հաստատելով, ռազմագերի հռոմայեցիներից<sup>363</sup> ով որ  
ցանկացավ տեղում մնալ թողնելով, մյուսներին հրամայեց իրեն  
հետևել։ Նա եկավ Կաստորիա, որտեղ իր մոտ բերվեցին Սա-  
մուիլի երկու դուստրերը, որոնք տեսնելով կայսեր մոտ կանգնած  
Մարիային, Հովհաննեսի կնոջ, վրան հարձակվեցին սպանելու։  
Կայսրը նրանց դայրույթը մեղմեց, խոստանալով պատիվների ու  
անչափ հարստության արժանացնել։ Նա Մարիային տվեց զոս-  
տե պատրկուհու սլատվաստիճան և որդիներով մայրաքաղաք ու-  
ղարկեց։ Կայսրը Քսիֆիասի ձեռքով քանդեց, գետնին հավա-  
սարեցրեց Սերբիայում<sup>364</sup> և Սոսկոսում գտնվող բոլոր բերդերը։  
Ասլա եկավ Ստագուս բերդը, որտեղ իր իշխանավորներով ժա-  
մանեց ու նրան հնազանդություն հայտնեց Բելգրադի արխոնտ  
էլեմագոսը։ [Կայսրն] այդտեղից ելավ եկավ Աթենք։ Զետունիո-  
նի միջով անցնելիս, նա տեսավ ու ապշեց այնտեղ ընկած բուլ-  
ղարների ոսկորների վրա, այն բուլղարների, որոնք [սպանվե-  
ցին], երբ մագիստրոս Նիկեփոր Ուրանոսը պարտության մատ-  
նեց Սամուիլին։ Նա հիացավ նաև բուլղարների առաջն առնելու  
համար Թերմոպիլեում Ռուբենի կողմից կառուցված պարսպի  
վրա<sup>365</sup>, որն այժմ Սկելոս է կոչվում։ Լինելով Աթենքում, նա  
հաղթանակի առթիվ աստվածածնին գոհություն հայտնեց, բա-

1019

զում, փառահեղ ու արժեքավոր նվերներով պերճացրեց նրա տաճարը<sup>366</sup>, որից հետո վերադարձավ Կոստանդնուպոլիս: Նա մսկե դռան մեծ դարբասներով, ցցունքով ոսկե պսակը գլխին հաղթական երթ կազմակերպեց: Առջևից գնում էին վլադիսլավի կին Մարիան, Սամուիլի դուստրերը և մնացած բուլղարները: Ինդիկտինի 2-րդ տարին էր, 6527 թվականը: Ահա այդպես հաղթավարով ու հաղթական նա մտավ Մեծ եկեղեցին, աստծուն գոհություն հայտնեց ու գնաց արքունիք<sup>367</sup>: Պատրիարք Սերգիոսը հաղթական վերադարձած կայսեր շատ էր աղաչում՝ վերացնել ալլիլենգիոնը<sup>368</sup> (նա խոստացել էր այդ բանը, եթե հաղթեր բուլղարներին), բայց չկարողացավ նրան համոզել: Աստծու եկեղեցին ամբողջ քսան տարի հովվելուց հետո, ինդիկտինի 2-րդ տարում, 6527 թվականի հուլիս ամսին նա փոխեցավ առ տեր: Պատրիարք առաջ քաշվեց Եվստաթիոսը, պալատի տաճարի ավագ երեցը<sup>369</sup>:

44. Բուլղարիայի հպատակվելուց հետո, կայսեր կողմնանցան նաև սահմանակից խորվաթների ցեղերը, որոնց արխոնտներն էին երկու եղբայրներ. երբ նրանք հնազանդություն հայտնեցին և պաշտոններ ու լայնատարած կալվածներ ստացան, ապա այդ ցեղերն էլ հպատակ դարձան<sup>370</sup>: Զուգեց հնազանդություն հայտնել միայն Նեստոնգի եղբայր Սերմոնը<sup>371</sup>, Սիրմիոնի տերը: Այդ շրջանների կառավարիչ Կոստանդին Դիոգենեսը, բարեկամություն ձևացնելով, նրա մոտ դեսպան ուղարկեց և երզումներով հավաստիացրեց, թե ցանկություն ունի նրան հանդիպել և խորհրդակցել կարևոր հարցերի շուրջը: Եթե նա որևէ երկյուղ է տածում, երեք սպասավորներով թող իրեն հանդիպի մոտիկում հոսող գետի մեջտեղում, որտեղ ինքը ևս պիտի գար երեք սպասավորներով: [Սերմոնը] հավատաց նրան և եկավ գետը ու հանդիպեց Դիոգենեսին: Երբ նրանք պետք է բանակցություններն սկսեին, Դիոգենեսը հանկարծակի քաշեց ծոցում պահած դաշույնը և նրա կողքին հարվածելով, իսկույն ըսպանեց: [Սիրմիոնի] մարդիկ փախուստի դիմեցին, իսկ Դիոգենեսն էլ մոտիկ կանգնած զինվորներին հավաքելով, թափով գալիս է Սիրմիոն, վախճանվածի ապուշ կտրած կնոջ խոստումներով հանգստացնում և համոզում [կայսեր] կողմն անցնել և Սիրմիոնը նրան հանձնել: Նա Բյուզանդիոն ուղարկվեց և կնության տրվեց մայրաքաղաքի մեծամեծներից մեկին, իսկ Դիոգենեսն էլ նշանակվեց նորանվաճ շրջանի կառավարիչ:



45. Կայսրը վերանորոգեց Վալենտինոս կայսեր ջրատարը, քաղաքացիներին<sup>372</sup> առատ ջրով ապահովելու համար: Երբ Աբազգիայի արխոնտ Գեորգիոսը<sup>373</sup> խախտեց հռոմայեցիների հետ ունեցած պայմանագիրը և սկսեց ասպատակել սահմանակից շրջանները, կայսրը համայն բանակով նրա դեմ դուրս եկավ, իր հետ շվեբացիներով պատրիկ Նիկեփոր Քսիֆիասին և Վարդաս Փոկասի որդի պատրիկ Նիկեփորին: Նրանք, արշավանքին շնորհաբար կվելու համար մեծապես վիրավորված, Կապադովկիայից, Ռոդանդոնից և շրջակա շրջաններից պատահած զինվորներին հավաքելով, ապստամբություն բարձրացրին: Երբ այդ բանը հաղորդվեց կայսեր, ճամբարում ահ ու սարսափ տարածվեց, նըրանք վախեցան, որ կընկնեն աբազգների ու ապստամբների արանքը (լուր էր տարածվել, որ Քսիֆիասի մարդիկ այդ հարցի շուրջը պայմանավորվել են Աբազգիայի արխոնտի հետ) և փորձանքի կհանդիպեն: Կայսրը Քսիֆիասին ու Փոկասին նամակներ ուղարկեց, նամակատարին կարողորելով դրանք մեկը մյուսից թաքուն առանձին-առանձին հանձնել: Նա հրամանի համաձայն էլ կատարեց, թաքուն հանձնեց նամակները: Փոկասն իսկույն իր ստացած [նամակը] ընթերցեց Քսիֆիասին, վերջինս սակայն իր ստացածը թաքցրեց, նա բացարձակապես ուրացավ իր նամակ ստանալը և օրերից մեկը նրան խորհրդակցություն հրավիրեց. [Փոկասը] եկավ, բայց [Քսիֆիասը] նրան նախօրոք լարած թակարդի մեջ գցելով, սպանեց: Ապստամբների կազմակերպությունն իսկույն ցրիվ եկավ: Երբ Փոկասի սպանությունը մասին կայսրն իմացավ, ուղարկվեց Դամիանոս Դալասսենոսի որդի Թեոփիլակտոսը, որը Քսիֆիասին ձերբակալելով, շղթայակապ մայրաքաղաք ուղարկեց՝ պրոտոնոտարիոս Հովհաննեսին, որը նրան Անտիգոնոսի կղզում վանական խուզեց<sup>374</sup>: Կայսրը ապստամբների վտանգից ձերբազատվելով, աբազգների վրա է հարձակվում. բազում հռոմայեցիներ են ընկնում: Հակառակորդ զորքերը ցրվեցին և հաղթանակը անորոշ էր: Դրանից հետո տեղի ունեցավ երկրորդ ընդհարում ինդիկտիոսի 6-րդ տարում, 6531 թվականի սեպտեմբեր ամսի 11-ին, [որտեղ] սպանվում է Լիպարիտը<sup>375</sup> (սա Գեորգիոսի սպարապետն էր), նրա հետ նաև աբազգների ողջ ընտրանին: Գեորգիոսը փախուստի դիմեց դեպի Իբերիայի խորքերում գտնվող լեռները: Փոքր անց նա [կայսեր մոտ] դեսպանություն ուղարկեց, նրան զիջեց ինչքան տա-

րածուծյունն որ նա ցանկանում էր և հաշտուծյուն կնքեց, որպէս պատանդ տալով իր որդի Բագարատին<sup>376</sup>: Կայսրը սրան մագիստրորոս անելով, ետ վերադարձրեց: [Կայսրը] Քսիֆիասի և Փոկասի հետ ապստամբուծյուն բարձրացնողների ունեցվածքը գրավելով, բանտ նետեց, մահապատժի ենթարկեց միայն պատրիկ Ֆերսին<sup>377</sup>, որպէս ապստամբներին առաջինը հարողի, հարևան արխոնտների շորս կուրատորների սպանողի և կայսերական մի ներքինու անձամբ գլխատողի: Առյուծներին կուր տրվեց մի կայսերական սենեկապան. նա մեղադրվեց այն բանում, թե Քսիֆիասի օգտին կամեցել է կայսեր թունավորել:

46. Երբ կայսեր քույր Աննան մահացավ Ռուսիայում, իսկ նրանից առաջ՝ նրա ամուսին Վլադիմիրը, վերջինիս ազգականներից ոմն Նրիստիսի, ութ հարյուր հոգու հավաքագրելով և նավերի մեջ նստեցնելով, եկավ Կոստանդնուպոլիս իբրև թե վարձով բանակում ծառայելու: Կայսրը պահանջեց նախ զենքերը ցած դնել, որից հետո իրեն հանդիպել, բայց նա շուզենալով այդ բանն անել, անցավ Պրոպոնտիս: Լինելով Աբիգոսում և կովի բռնվելով ափերի պաշտպան զորավարի հետ, հեշտուծյամբ հաղթեց, ապա իջավ Լեմնոս, որտեղ սակայն ուխտադրժորեն բուլորն էլ սրի քաշվեցին Կիբիրրեոտների նավատորմիղի, Սամոսի զորավար Դավիթ Ախրիդացու և Թեսաղոնիկեի դուքս Նիկեփոր Կավասիլասի կողմից:

47. Կայսրը, ցանկանալով արշավել Սիկիլիայի դեմ, նախապես մեծ ուժով Օրեստեսին, իր ամենահավատարիմ ներքինիններից մեկին ուղարկեց, ինքը սակայն չհասցրեց գնալ մահկանացուն կնքելուն պատճառով: Նա հանկարծակի հիվանդացավ ու վախճանվեց ինդիկտիոնի 9-րդ տարում, 6534 թվականի դեկտեմբերի 15—XII տեմբեր ամսին: Իրենից մի քանի օր առաջ մեռել էր պատրիարք —1025 Եվստաթիոսը<sup>378</sup>, որի աթոռին կայսրը վանական Ալեքսիոսին, Ստուդիոնի վանքի վանահորը նշանակեց<sup>379</sup>, իր մոտ նա այցելուծյան էր եկել՝ Կարապետի պատվական գանգով: Ահա սրան ճամփու դնելով [պատրիարքական] աթոռին նստեցրեց ձեռամբ Հովհաննես պրոտոնոտարիոսի, որին կայսրը հասարակաց գործերի տնօրինուծյան մեջ օգնական ուներ: Կայսրը նույն երեկոյան վախճանվեց, ապրելով 70 տարի, բուլորն էլ որպէս կայսր, իսկ միահեծան՝ 50 տարի: Նա իր եղբորը (որին իշխանուծյու-



նր ժառանգեց) խնդրեց իրեն թաղել Հեբգոմոնում գտնվող [Հովհաննես] Աստվածաբան ավետարանիչի տաճարում, ինչ որ կատարվեց<sup>380</sup>:

## ԿՈՍՏԱՆԴԻՆ՝ ԵՂԲԱՅՐԸ ՎԱՍԼԻԻ

[16 ԳԵԿՏԵՄԲԵՐ 1025—11 ՆՈՅԵՄԲԵՐ 1028 ԹԹ.]

1. Կոստանդինն իր ձեռքն առնելով համայն իշխանությունը և ցանկացածն անելու հնարավորությունը և ունենալով արտառոց արարքներ գործելու սեր, պետության գլխին եկած բազում փորձանքների պատճառ դարձավ: Նա ինչ անհրաժեշտ էր չէր անում, ոչ էլ մտածում այդ մասին, այլ զվարճանում էր ձիարշավներով, միմոսներով ու խեղկատակներով, գիշերները լուսացնում կոտտաբ խաղալով: Նա քաղաքների ու բանակաթեմերի ղեկավար պաշտոնները տալիս էր մարդկանց ոչ թե նկատի ունենալով նրանց գործնական ու մտավոր կարողությունները, այլ ամեն տեսակի աղտեղությունք ու գարշանքով լի հարբեցող ու ձվատ ստրկամիտ մարդկանց: Նա նրանց ամենաբարձր պաշտոններին էր առաջ քաշում, բանի տեղ չդնելով [ազնվական] ծաղում, առաքինություն և փորձ ունեցողներին: Իր առաջին սենեկապան Նիկողայոսին սխուլերի դոմեստիկոս նշանակեց և պարակիմոմենոս, նրանից հետո երկրորդ տեղը գրավող մարդուն, Նիկեփորին՝ պրոտովեստիարիոս, իսկ երրորդ տեղում գտնվող Սիմեոնին՝ վիզլայի դրունգար<sup>381</sup>: Բոլորին պրոեդրոսի պատվաստիճան շնորհեց, իսկ իրենից ոչինչ չներկայացնող Եվստրատիոսին տվեց հաջորդ՝ մեծ հետերիարխի [աստիճանը]: Նա Անտիոքի դուքս նշանակեց մի ոմն ներքինու՝ անունը Սպոնդիլես, իսկ Իբերիայի՝ Նիկետաս Պիսիդացուն<sup>382</sup>. Երկուսն էլ խայտառակ ու նենգ մարդիկ էին: Ահա սրանք երկիրը տակնուվրայությունքով ու խառնաշփոթությամբ լցրին և քիչ էր մնացել կործանեին կայսրությունը, որ երկու կայսրերի հայր Ռոմանոսի ինքնակալությունից սկսած հաջորդաբար գայիսոնն ստացած Նիկեփորի, Հովհաննեսի և Վասիլի օրերում լավ էր կառավարվում և անդամ սարսափելի դառնում մերձակա ազգերի համար: Նա ոչ միայն անտարբեր էր իշխանավորների պաշտոնների նշանակման հարցում, այն պաշտոնների, որոնք նա անցյալից ժառանգեց, այլ

1027

դավեր նյութելով առավել նշանավոր ու փորձառու, բարի անուն հանած մարդկանց նկատմամբ, անվերջ հալածում էր նրանց: Նա կուրացրեց պատրիկ Կոստանդին՝ մաղիստրոս Միքայել Բուրցիսի որդուն, որովհետև նախքան իր ինքնակալ դառնալը նա հակառակվում էր իրեն և իր խայտառակ արարքների մասին տեղյակ պահում Վասիլ կայսեր: Նա ոչնչացրեց շատ ուրիշ առաքինի մարդկանց, այդ մասին կասվի: Եթե իր թագավորության սկզբին ահա այսպիսին էր, ապա ո՞ր պատմությունն ի վիճակի է ըստ արժանվույն ներկայացնելու զրանից հետո կատարվածը: Ինչպես ասվեց, նրա խելքն ու միտքը խեղկատակներն ու միմոսներն էին, ձիարշավների սրանից մեծ սիրահար չկար, նա ամենակարևոր բանը ձիարշավներն էր համարում, իսկ մնացածների վրա ոչ մի ուշադրություն չէր դարձնում, գտնում, որ մնացած ամեն ինչ իր խայտառակ արարքների համեմատությամբ երկրորդական նշանակություն ունի: Նա առանց որևէ էական պատճառի, պարզապես առաքինությունից նախանձելով, գերագույն դավաճանության մեջ մեղադրեց ու կուրացրեց Նիկեփոր Կոմնենոսին, խոհեմ, իր առաքինությամբ ու քաջությամբ հռչակված մի մարդու, [Վերին] Մարաստանի՝ այն է Վասպուրականի կառավարչին, հարևան ազգերին հպատակեցնողին: Սա բազմիցս բախվել էր [Վերին] Մարաստանում հարևան սարակիստներին և տեսնելով իր փափկասուն զինվորներին, որոնք խայտառակ կերպով թիկունքն էին ցույց տալիս ու փախուստի դիմում, ոմանց ամոթանք էր տալիս, մյուսներին կոչ անում այդպես խայտառակ կերպով չփախչել, այլ քաջաբար ընդդիմակայել հակառակորդներին, որով նրան հաջողվեց համոզել նրանց իր հետ լինել: Նա նրանցից պահանջում էր երդումներով հաստատեն, թե իր հետ կզոհվեն պայքարելով թշնամիների դեմ: Եվ նրանք զրավոր՝ սարսափելի անեծքներով ու սոսկալի երդումներով նրան հավաստիացրեցին, թե քաջաբար կկանգնեն զորաշարքում և իրենց զորավարի հետ կմեռնեն: Երբ այդ բանը հասավ Կոստանդինի ականջին, Նիկեփորն իսկույն պաշտոնանկ արվեց, բերվեց մայրաքաղաք, դատի տրվեց և կայսեր դեմ դավ նյութելու մեղադրանքով կուրացվեց<sup>383</sup>: Չարացած լինելով մագիստրոս Վարդաս Փոկասի թոռ պատրիկ Վարդասի<sup>384</sup>, ինչպես և մի քանի ուրիշների դեմ, նա [իր] մակաբույծ զրպարտիչներից մեկի միջոցով նրա դեմ գործ սարքեց, թե նա իբր իր գեմ խոռվույթուն է նախապատրաստում և իսկույն կուրացրեց և՛ նրան, և՛



նրա հետ զրպարտվածներին: Իր թեթևամտության պատճառով Մորոզեորգիոս<sup>385</sup> կոչվող նավպակտոսի զորավար Գեորգիոսի դեմ խռովություն բարձրացավ, զորավարը սպանվեց, նրա ողջ ունեցվածքը հափշտակվեց. նա տեղական բնակչության հետ վատ էր վարվում, կեղեքում անհիմն ու անվերջ հարկապահանջություններ: Կայսրը ոճրագործներին խստորեն շպատեց, այլ հենց նավպակտոսի եպիսկոպոսին կուրացրեց: Ռոմանոս Սկլերոսի որդի պատրիկ Վասիլը<sup>386</sup> ընդհարվել էր Բուկելլարների զորավար մագիստրոս Պրուսիան բուլղարի հետ, և նա այն աստիճան հանդուգն էր դարձել, որ անգամ մարտ տվեց նրան: Կոստանդին կայսրը սրանց վեճը թագավորության նկատմամբ անպատվություն որակելով, երկուսին էլ աքսորում է, մեկին Օքսիա կղզում, մյուսին՝ Պլատե: Փոքր անց փախուստի փորձ կատարելու մեջ՝ ամբաստանելով, Վասիլին կուրացրեց, իսկ Պրուսիանին, որ քիչ էր մնացել նույն բախտին արժանանար, ազատ արձակեց: Նա կուրացրեց նաև Ռոմանոս Կուրկուասին, որ Պրուսիանի քրոջ ամուսինն էր, Բոգդանին, Գլաբասին և Գուդելիոսին, իսկ վեստ Թեդատի ազգական Ջաբարիա վանականի լեզուն կտրեց: Բուլոնն էլ մեղադրվեցին իր դեմ դավ նյութելու մեջ<sup>387</sup>:

2. Այդ տարի պաժինակներն էլ ներխուժեցին Բուլղարիա. նրանք սրի քաշեցին ու գերի վերցրին բազում զինվորների, զորավարների ու տազմատարիսների: Դրա համար Կոստանդին կայսրը Սիրմիոնի կառավարիչ Դիոգենեսին դարձրեց նաև Բուլղարիայի դուքս: Սա բազմիցս բախվեց երկրով մեկ ցրված [պաժինակների] հետ և նրանց փախուստի մատնեց, ստիպեց անցնել Իստրոս գետը և հանգիստ մնալ: Կոստանդին կայսեր թագավորության բոլոր տարիների ընթացքում սարսափելի երաշտ եղավ, այն աստիճան, որ ցամաքեցին մշտահոս աղբյուրներն ու գետերը: Վասիլ կայսրը, գթալով չքավորներին, ժամանակին չէր գանձել պետական հարկերը, նա դադարեցրել ու հետաձգել էր հարկերի գանձումը, և երբոր վախճանվեց [հարկատուների վրա] երկու տարվա [չմուծված] հարկ էր մնացել, որը Կոստանդինն իսկույն գանձեց: Նա գանձեց նաև երեք տարվա [հարկեր] (նա այդքան ժամանակ իշխեց), որով կեղեքվեցին ոչ միայն չքավորներն ու աղքատները, այլև ունևորները, քանզի երեք տարում հինգ տարվա հարկ վճարեցին: Հագարացիների նավատորմիղ էլ դուրս եկավ Կիկլադյան կղզիների դեմ:

Սրանց հետ բախվեց Սամսուի զորավար Գեորգիոս Թեոդորականը՝ Քիոսի զորավար Բերիբոեսի հետ միասին և նրանց պարտության մատնեց, տասներկու [նավ] անձնակազմով հանդերձ զրավեց, մնացածներն էլ ցրիվ արեց:

1928

3. 6537 թվականի նոյեմբեր ամսի իննին, ինդիկտիոնի 12-րդ տարին, Կոստանդինը հանկարծակի հիվանդացավ: Բժիշկները դտան, որ նա չի լավանա և նա արդեն մտածում էր թագավորության ժառանգի մասին: Նա որոշեց կանչել Արմենիակների [բանակաթեմում] սեփական ապարանքում մասնավոր կյանք վարող պատրիկ Կոստանդին Դալասսենոսին, նրան կնություն տալ իր դուստրերից մեկին և կայսր հռչակել: Նրան [բաղաբ] բերելու համար ուղարկվում է ամենահավատարիմ ներքինիներից մեկը, էրպոդոտես<sup>388</sup> կոչվածը: Բայց պատրիկ Ռոմանոս Արգիրոսի նկատմամբ բարեկամաբար տրամադրված Սիմեոնի ջանքերով այդ որոշումն անուշադրության մատնվեց: Դալասսենոսի մոտ ինչ-որ մեկն ուղարկվեց, իբրև թե կայսեր կողմից, մինչև իր նամակի ստանալը տեղում մնալու կարգազրույթամբ, որի ընթացքում ահա Ռոմանոսին բերեցին արքունիք և առաջարկեցին ընտրություն կատարել. կամ բաժանվել իր օրինավոր կնոջից, ամուսնանալ կայսեր գասեր հետ և կայսր հռչակվել, կամ դատապարտվել կուրացման: Ռոմանոսը քիչ մնաց ուշաթափվի, նա ոչ մեկն էր ուզում, ոչ մյուսը: Կինը վախենալով, որ ամուսնու գլխին փորձանք կգա, իսկույն հրաժարվեց աշխարհիկ կյանքից, [վանք մտավ], որով նա ոչ միայն իր ամուսնու աչքի լույսը փրկեց, այլև նրան թագավորություն շնորհեց: Կոստանդինը պատրիկ Ալիպիոսի դստրից, (որի հետ ամուսնացել էր գեռ Վասիլի կենդանության օրոք), երեք դուստր ուներ, որոնցից մեծը Եվդոկիան վանք էր մտել, փոքրը՝ Թեոդորան հրաժարվել էր ամուսնանալ Ռոմանոսի հետ, պատճառաբանելով, ինչպես ասում են, իրենց ունեցած արենակցական կապը, կամ էլ այն պատճառով, որ նրա՝ Ռոմանոսի կինը դեռ կենդանի էր: Իսկ միջնեկ դուստրը, Զոեն, հաճույքով ընդունեց ամուսնության մասին առաջարկը: Երբ արենակցության հարց մեջտեղ եկավ, եկեղեցին՝ պատրիարքի միջոցով արգելքը վերացրեց և Ռոմանոսը պսակվեց:

12—XI լով Զոեի հետ, ինքնակալ կայսր հռչակվեց: Երեք օր անց Կոստանդինը մեռավ: Նա ապրեց 70 տարի, իսկ [միահեծան] թագավորեց երեք տարուց մեկ ամիս պակաս:



Ռ Ո Մ Ա Ն Ո Ս Ա Ր Գ Ի Ր Ո Ս

[ 12 ՆՈՅԵՄԲԵՐ 1028—11 ԱՊՐԻԼ 1034 թթ. ]

1. Ահա այսպես անակնկալ ու անսպասելի կուրացման վտանգից պրծնելով, Ռոմանոսը իր ձեռքն է վերցնում թագավորական իշխանությունը և Կոստանգնի դուստր Զոեի հետ հռչակվում ինքնակալ կայսր: Նստելով կայսերական գահին, նա լավ սկիզբ, գովելի հիմք դնելով սկսեց կառավարել հպատակ ժողովրդին՝ իր բարեգործությունները բարեպաշտությունից սկսելով: Տեսնելով, որ Մեծ եկեղեցին քիչ եկամուտներ ունի (ինքն անցյալում նրա տնտեսն էր եղել), ինչպես և սլական է զգում տարբեր բաների; որոնք սովորաբար սպասարկության համար անհրաժեշտ են նրա կղերին, նա կարգադրեց պետական գանձարանից տարեկան հավելյալ ութսուն լիտր ոսկի<sup>389</sup> տալ այդ [ծախսերի] համար: Նա վերացրեց, կատարելապես արմատախիլ արեց ալիլենգիոնը, որը Կոստանդինը մտադիր էր իրականացնել, բայց չհասցրեց: Նա բանտերը դատարկեց այլևայլ զանցանքների համար կալանվորված մարդկանցից, շնորհեց պետության հանդեպ ունեցած նրանց պարտքերը և փոխհատուցելով նրանց մասնավոր մարդկանց տալիքը, փրկագնեց Պաժինակիայում գտնվող ռազմագերիներին: Նա երեք մետրոպոլիտների սինկելլոսի<sup>390</sup> պատիվ շնորհեց, Եփեսոսի Կիրիակոսին, որպես սլատրիարքի եղբոր, Կյուզիկոսի Դեմետրիոսին, որին նա շատ էր սիրում դեռ կայսր շղարձած, և Եվխայիտների [մետրոպոլիտ] Միքայելին, որպես իր արյունակցի: Նա ծագում էր, այսպես կոչված, Ռադենոսներից: Վասիլ կալսեր պրոտոնոտարիոս Հովհաննեսին, որ վանական էր դարձել, [վանքից] կանչեց և սինկելլոսի պատիվը շնորհելով, իր քենի Թեոդորային հսկող նշանակեց: Նա ոտքի կանգնեցրեց ալիլենգիոնից ծայր աստիճան աղքատացած աստծու բազմաթիվ սպասավորների, իսկ մյուսներին՝ չբավորությունից դժգոհ ու ճնշվածներին, մխիթարեց: Նա իր աներոջ հոգու փրկության համար անհամար դրամ տրամադրեց, ավելիով օժանդակեց նրա կողմից տուժածներին, ոմանց պաշտոններ տալով, ոմանց կալվածներ, ուրիշներին էլ դրամով սփոփեց: Նա մագիստրոսի փառավոր աստիճանին բարձրացրեց իր քրոջ ամուսին Ռոմանոս Սկլերոսին, որին Կոստանդինը, ինչպես ասացինք, կուրացրել էր: Նրկարատև աքսորից նա ետ կանչեց

Նիկեփոր Քսիֆիասին, որ կամավոր կերպով Ստուդիոնի վանքում վանականի սքեմն հագավ:

2. Այգ տարի աստված շափավոր անձրև տեղաց և պտուղների առատ բերք եղավ, հատկապես ձիթենու: Սուրբ Պենտեկոստեի օրը տակնուվրայություն եղավ՝ պատարագի ժամանակ կաթեգրայում նստելու առնչությամբ. մետրոպոլիտները շուգեցին, որ սինթրոնոնի բարձր տեղում սինկելլոսները նստեն:

3. Այդ տարի մագիստրոս Պրուսիան բուլղարը, ամբաստանվելով, թե թագուհու քույր Թեոդորայի հետ գործակցության մեջ է մտել՝ կայսրությանը տիրանալու մտադրությամբ, արգելափակվեց Մանուիլի վանքում<sup>391</sup>: Երբ այդ մեղադրանքը հաստատվեց, [Պրուսիանը] կուրացվեց, իսկ նրա մայրը, զոստեն, քաղաքից վտարվեց: Կայսեր փեսա Կոստանդին Դիոգենեսը<sup>392</sup>, (կայսեր եղբոր Վասիլի դստեր ամուսինը), որ Սիրմիոնից փոխադրվելով Թեսաղոնիկե, դարձել էր նրա դուքսը, Վասիլ կայսեր սպասավոր Օրեստեսի կողմից ամբաստանվելով ապստամբություն նախապատրաստելու մեջ, ուղարկվում է որպես Թրակեսիոն [բանակաթեմի] զորավար: Երբ այդ մեղադրանքը հաստատվեց, նա շղթայակապ մայրաքաղաք բերվեց և բանտ նետվեց: Նրա դավակիցները՝ պրոտոնոտարիոս և սինկելլոս Հովհաննեսը, պատրիկ և զորավար Եվստաթիոս Դաֆնոմելեսը, Միքայել Բուրցեսի որդիներ Միքայելը, Թեոգնոստոսն ու Սամուիլը, պատրիկ Թևդատի եղբորորդիներ Գեորգն ու Վարազվաչեն<sup>393</sup>, (որ Աթոս լեռան վրա իբերների վանքը հիմնադրեց)<sup>394</sup>, սաստիկ դանակոծվելով, Մեսե պողոտայով ծանակվելով, աքսոր ուղարկվեցին: Թեոդորան էլ պալատից դուրս հանվեց և Պետրիոնի [պալատում] արգելափակվեց: Հոկտեմբեր ամսի 31-ին աստղի թափում եղավ: Նա ընթանում էր արևմուտքից արևելք: Նույն օրը Ասորիքում հռոմեական զորքի մեծ կոտորած եղավ. ավագ Անտիոքի զորավարն էր Միքայել Սպոնդիլեսը: Հորդառատ անձրևներ էլ տեղացին, որոնք տևեցին մինչև մարտ ամիսը, դիտերն հորդեցին, ցածրագիր վայրերը ողողվեցին, գրեթե բոլոր անասունները ջրահեղձ եղան, ցանքերը ոչնչացան, որով մյուս տարին հաջորդեց սոսկալի սովը: Կայսրը ուզենալով Ասորիքի սլատահարը դարմանած լինել, արշավեց Բերիայի դեմ: Նա զգալի ուժով [այնտեղ] ուղարկեց իր քրոջ ամուսին պատրիկ Կոստանդին Կարանտենոսին, կարգադրելով զնալ, հետախուզել անցման վայրերը, հնարավորին չափ վնաս պատճառել թշնա-

1029

1030



միներին, բայց մինչև իր՝ [կայսեր] գալը ճակատ առ ճակատ մարտնչելուց ձեռնպահ մնալ: Զորահավաքի միջոցին հիվանդացավ ու վախճանվեց Աբազգիայի արխոնտ Գեորգիոսը<sup>394</sup>, իսկ նրա կինը նվերներով դեսպաններ ուղարկեց կայսեր մոտ, խնդրելով խաղաղության դաշինք կնքել, ինչպես և իր որդի Բագարատի համար՝ կին: Կայսրն ընդունեց նրա դեսպանությունը, հաստատեց դաշինքը, իսկ իր եղբոր Վասիլի դուստր Հելենեին հարսնության ուղարկեց Աբազգիա, [նրան] փեսայացած Բագարատին բարձրացնելով կուրապաղատի աստիճանին:

4. Այգ տարի Թրակեսիոն [բանակաթեմում] մի զարմանալի հրաշք եղավ: Կուղինա լեռան ստորոտին, որտեղ շատ լավ ու զուլալ ջրի աղբյուր կա, լաց ու կոծի ձայն էր լսվում, վայնասուն, կնոջ ողբի նման: Դա ոչ թե մեկ, կամ երկու անգամ տեղի ունեցավ, այլ մարտ ամսից մինչև հունիսը՝ օր ու գիշեր: Երբ ոմանք գնացին զննելու վայրը, որտեղից ձայնն էր գալիս, այս անգամ աղաղակը սկսեց այլ տեղից դուրս գալ: Ըստ երևույթին դա կանխագուշակությունն էր Կյուլե Ասորիքում հռոմայեցիների գլխին պայթելիք փորձանքի: Նիկեփոր կայսրը գրավել էր Ասորիքի և Փյունիկեի բազմաթիվ քաղաքները, նրանից հետո Հովհաննես [Զմշկիկը] գրավված [վայրերում] ամրապնդեց [հռոմայեցիների գերիշխանությունը], սահմաններն ընդարձակեց մինչև Դամասկոս, բայց նրանց հաջորդող Վասիլը, սկզբնական շրջանում զբաղված լինելով ներքին պատերազմներով, ապա Սամուիլի դեմ գործելով, ժամանակ շունեցավ լավ, ինչպես որ պետքն էր ապահովել դրությունն Արևելքում: Նա այնտեղ եղավ ուրվականի պես և ժամանակի պահանջների չափով կարգի բերելով, վերադարձավ, նրա մշտական զբաղմունքն ու հոգսը բուլղար ժողովրդին հնազանդեցնելն էր: Ահա դա պատճառ եղավ, որ համեմատաբար ավելի ուժեղ քաղաքները թոթափեն լուծը, ջանան ազատություն ձեռք բերել: Քանի [Վասիլը] կենդանի էր, ապստամբությունը ծրագրվում էր, բայց ծածուկ և ոչ բացահայտ: Իսկ երբ նա հոգին ավանդեց, նրա եղբայր Կոստանդինն էլ սկսեց անշնորհք ու թույլ կերպով թագավորել՝ խելքը միտքը ունենալով այն հարցերի վրա, որոնց մասին արդեն ասվել է, իսկ մնացածն էլ մեծ անուշադրության մատնել, սարակիստներն, ահա, առիթից օգտվելով, քաղաքի կայազորերին պարտության մատնեցին ու կոտորեցին: Նրանցից հատկապես աչքի ընկավ Բերիայի (որին Հալեպ էլ են ասում) առաջնորդը: Նա ան-

վերջ հարձակումներ էր գործում, վնասներ հասցնում Անտիոքին, ինչպես և հռոմայեցիներին հարևան ու մերձակա ժողովուրդներին: Ահա, ինչպես ասվեց, Անտիոքի դուքս Սպոնդիլեսը նրա վրա արշավեց՝ դեռ Կոստանդինի կենդանության օրոք, մտադիր լինելով սխրանք ու քաջագործություն ցուցաբերել: Նա մարտ տվեց Բերիայի առաջնորդին, բայց պարտվեց, նրա զինվորներից շատերը սպանվեցին, իսկ ինքն էլ խայտառակ կերպով պրծավ Անտիոքում: Նրան ռազմավարական պարտության մատնեց և ոմն արաբ, անունը Մուսարաֆ<sup>395</sup> ահա թե ինչպես: Այս Մուսարաֆը ռազմագերի էր Անտիոքում (նրան գերի էր վերցրել Պոթոս Արգիրոսը): Երբ [Անտիոքի] կառավարչի պաշտոնն անցավ Սպոնդիլեսի ձեռքը, [Մուսարաֆը] քաջատեղյակ լինելով [Սպոնդիլեսի] անկայուն նկարագրին, խոստացավ մեծապես օգտակար լինել հռոմայեցիներին, ամեն ինչ կատարել, եթե ազատեն իրեն կապանքներից: Նա խոստացավ վնասել իր ազգակիցներին, ցույց տվեց մի վայր և ասաց, որ եթե այնտեղ բերդ կառուցվի և տրվի իրեն, դրանից հռոմայեցիները մեծ օգուտ կբաղեն: Սպոնդիլեսը նրա նենգությանն անտեղյակ, բանտից ազատեց, նրա ասածի պես բերդը կառուցեց<sup>396</sup>, պաշտպանությունը վստահեց նրան՝ տեղում հազար հռոմայեցիներից բաղկացած կայազոր հաստատելով: Մուսարաֆը, սպասած առիթը ձեռք գցելով, ծածուկ բանակցությունների մեջ մտավ Տրիպոլսի ամիրայի և Եգիպտոսի սպարապետ Տուսբերի<sup>397</sup> հետ և նրանց ուղարկրված գորքով կոտորեց այդ հազար հոգուն, իսկ բերդն էլ նրանց հանձնեց: Ահա այդ բարձրագույն տեղում գտնվող բերդից սարակինոսներն անդադար ավերում ու ավարառում էին Ասորիքի՝ հռոմայեցիներին հպատակ շրջանները:

5. Ռոմանոսը [Սպոնդիլեսին] պաշտոնանկ է անում և նրա փոխարեն [դուքս] նշանակում իր քրոջ ամուսին Կոստանդին Կարանտենոսին, իսկ ինքը նախապատրաստություն էր տեսնում նրանից հետո սարակինոսների վրա արշավելու: Երբ նա հասավ Ֆիլոմիլիոն, Բերիայից առատ նվերներով դեսպաններ եկան, թողություն աղերսելով, [խոստանալով] դարձյալ հպատակություն հայտնել և պատրաստակամություն՝ տարեկան հարկերը վճարելու: [Ռոմանոսի] հետ արշավանքի դուքս եկած բազում ու խոհեմ զինվորականներ (նրանցից մեկը պատրիկ Հովհաննես Խալդոսն էր) կայսեր կոչ էին անում ամառ ժամանակ շարշավել Ասորիքի վրա, քանզի այդ ժամանակ ջրի պակասություն է



զգացվում, բացի այդ, արաբ ժողովուրդն անպարտելի է, քանզի նա սովոր է քաջաբար տոկալու տեղական շոգին ու տապին, իսկ հոռմայեցիները լրիվ զինվածությամբ ի վիճակի չեն գիմանալու այդ եղանակին: [Կայսրր սակայն] ասվածի վրա ուշադրություն չդարձրեց, հիշելով իրենից առաջ թագավորածների սխրագործությունները և ջանալով ինքն էլ ինչ-որ հերոսություն գործել, գնաց Ասորիք: Նա Բերիայից երկու օրվա ճանապարհ հեռավորության վրա գտնվող ինչ-որ բերդում (բերդի անունը Ազազ էր) բանակեց՝ անելիքի մասին մտածելով: Ահա այս բերդում վրան խփած [Ռոմանոսը], էքսկուբիտների հրամանատար պատրիկ Լևոն Խիրոսֆակտեսին սեփական տաղմայով հետախուզության ուղարկեց, իմանալու գալի՞ս են արդյոք ինչ-որ արաբներ և որտե՞ղ է ավելի նպատակահարմար տեղափոխելու ճամբարը: Բայց դարանակալած ու մոտակա դաշտերի վրա հսկող արաբները, հարմար առիթ ձեռք գցելով, հանկարծակի հարձակվեցին, բռնեցին [Լևոնին], իսկ նրա զինվորներին ցիրուցան արեցին: Նրանք այնքան հանդգնություն ու անամոթություն ունեցան, որ բացահայտորեն շէին թողնում հոռմայեցիներին [ձիերի] համար խոտ հավաքեն և անհրաժեշտ այլ պարեն ձեռք բերեն: Բայց նրանք ավելի մեծ վնաս էին հասցնում ջրի գնացած հոռմայեցիներին. նրանք, իրենց ձիերն ու գրաստները ծարավից նեղվելով, բացահայտ վտանգի էին իրենց ենթարկում, [արաբների] ձեռքն ընկնողները սպանվում էին: Այդ պատճառով պատրիկ Կոստանդին Դալասսենոսն ուղարկվեց՝ ետ մղելու հարձակվողներին, քաջություն ու սխրանք գործելու, բայց նրանց բախվելով, նա անփառունակ փախուստի դիմեց, հոռմայեցիների և անգամ կայսեր մեծ իրարանցման ու շփոթության մեջ գցելով. երբ նա շվարած վերադարձավ և ողջ ճամբարը ահ ու դողի մեջ գցեց ու անկարգությամբ լցրեց, այլևս պատերազմի մասին խոսք լինել չէր կարող և յուրաքանչյուրը, ինչպես կարող էր, իր գլխի ճարն էր տեսնում: Առաջարկություն եղավ հենց արշալույսին վերացնել ճամբարը, վերադառնալ Անտիոք: Եվ ահա 6538 թվականի օգոստոս ամսի տասին, ինդիկտիոնի 13-րդ տարին, ընդունած որոշման համաձայն ամեն տեղից ճամբարի զոները բացելով, դեպի Անտիոք շտապեցին: Նրանցից շատերը որովայնային հիվանդությամբ էին տառապում, շատերն էլ ծարավից էին հյուծված: Արաբները ուժեղ թափով հարձակվեցին ճամբարից դուրս եկողների վրա, որոնք ամենևին չկա-

1030

րողացան այդ թափի առաջն առնել և սարսափելի պարտություն կրեցին. ոմանք մահը գտան իրար տրորելով, մյուսներն էլ գերի ընկան: Այստեղ մի գեղեցիկ բան էլ տեղի ունեցավ: Այն ժամանակ, երբ քաջի անուն հանած զորավարներն ու բոլոր զինվորները շէին համարձակվում իրենց վտանգի ենթարկել, այլ անփառունակ կերպով փախուստի էին գիմում, կայսերական սենեկապաններից մի ներքինի, տեսնելով, թե ինչպես են տանում իր իրերն ու ծառաներին, և այդ բանը շատ ծանր տանելով, իր ձին այստեղ ու այնտեղ շարժելով, ուժեղ թափով հարձակվում է սարակինոսների վրա, ձգելով աղեղը սպանում է մեկին, իսկ մյուսներին փախուստի մատնում, և փրկելով իրեն պատկանածը, ուրախությամբ ետ վերադառնում: Իսկ կայսրը գերվելուց հազիվ պրծած, մի կերպ փրկվում է Անտիոքում. այդ բանում [օգնեցին] կայսեր մերձավորները, որոնք քաջաբար կռվելով, փրկեցին և՛ իրենց, և՛ կայսեր<sup>398</sup>:

6. Այն ժամանակները Տլուքի բանակաթեմի զորավար Գեորգիոս Մանիակեսի<sup>399</sup> մոտ հաղթանակից գլխապտույտ ստացած ութ հարյուր արաբներ եկան, կոշ անելով անհապաղ հեռանալ, թողնել քաղաքը, քանզի կայսրը գերի է ընկել, հռոմեական ողջ բանակը գլխովին կորել, բացահայտ վտանգի շենթարկել իրեն, քանզի հենց որ լույսը բացվեց, ինքն էլ, իր զինվորներն էլ օղակի մեջ առնվելով, շարաշար կոտորվելու են: [Մանիակեսը] ձևացրեց, որ ընդունում է նրանց առաջարկը, մտադիր է ընդունաջ գնալ նրանց կոշին, և նրանց բազում հաց ու խմիչք ուղարկելով, ասաց հանգստանան և հենց որ լուսացավ, ինքն իր զինվորներով կհեռանա, [արաբներին] դարձնելով Տլուք քաղաքի և հռոմեական բովանդակ ունեցվածքի տերը: Նրանք [Մանիակեսի] ասածից ու արածից խաբված, համոզված, որ հաջորդ օրը ձեռք կբերեն ամեն ինչ, իրենց հարբեցողության տվեցին և գիշերն էին անցկացնում միանգամայն անփույթ ու անհոգ: Իսկ [Մանիակեսը] կես գիշերին հարձակվեց այդ գինով ու անհոգ քնածների վրա ու բոլորին սրի քաշեց, ձեռք զցեց հռոմեական ամեն տեսակի բարիքներով բարձված ու լի երկու հարյուր ութսուն ուղտ, ապա սպանվածների ականջներն ու քթերը կտրելով, տարավ Կապադովկիա՝ կայսեր: Նա փախուստի դիմելով, ապաստանել էր Փոկասի տանը, ուր և մնում էր: Կայսրը հավանություն տալով [Մանիակեսի] արածին, նրան նշանակեց Ստորին Մարաստանի<sup>400</sup> կատապան<sup>401</sup>:



7. [Կայսրը], հեռանալով Ասորիքից, սխուրի դոմեստիկոս նշանակեց իր աներոջ Կոստանդնի սպասավոր Սիմեոնին, իսկ Անտիոքի կառավարիչ՝ Միսթիացի<sup>402</sup> նիկետասին: Սրանց նա կարգադրեց հնարավոր բոլոր միջոցներով փորձել գրավել Մուսարաֆի կառուցած բերդը, որի անունը Մենիկոս էր, Ասորիքը աղատելու համար Մուսարաֆի ասպատակություններից: Բայց նրանք պետք եղածը չարեցին, պաշարումը կատարեցին ապաշնորհ կերպով: Մուսարաֆը գիշեր ժամանակ բերդից դուրս գալով կրակի տվեց բաբանները և նրանց խայտառակ կերպով այնտեղից քշեց: Երբ դա կայսրն իմացավ, չկարողացավ խայտառակությունը տանել և իր ամենահավատարիմ սպասավորներից մեկին, պրոտոսպաթար Թեոկտիստոսին, որ այն ժամանակ մեծ հետերիարխ էր, զորավար-ավտոկրատոր նշանակելով, հռոմայեցիներից և այլազգիներից բաղկացած ծանր ուժով Ասորիքի դեմ ուղարկեց, կարգադրելով միանալ Տրիպոլսի ամիրա Իբն Ջարախին<sup>403</sup> և նրա հետ ավարառել արաբների շրջանները: Այս Իբն Ջարախը ինչ-որ վիրավորանքի պատճառով, մի փոքր առաջ ապստամբություն էր բարձրացրել Եգիպտոսի ամիր ուլ մումնիի դեմ և նրա դեմ զենք բարձրացրել: Երբ Եգիպտոսի [ամիր ուլ մումնիին] իր գնդերի հրամանատար թուրք Տուսպերին մեծ ուժով Իբն Ջարախի դեմ ուղարկեց, նրան ոչնչացնելու համար, իսկ վերջինս համոզված լինելով, որ միայնակ ի վիճակի չէ ընդդիմակայելու եգիպտացիների ուժերին, դիմում է հռոմայեցիների կայսեր և զինակցություն աղերսում: Ռոմանոսը ընդառաջ գնաց նրա աղերսանքին և ուժեղ զորքով Թեոկտիստոսին ուղարկեց, կարգադրելով զինական օգնություն ցուցաբերել Իբն Ջարախին և այդ ընթացքում գրավել Մենիկոս բերդը: [Թեոկտիստոսը] գնաց միացավ Իբն Ջարախին և գործի անցավ: Եգիպտացիների սպարապետ Տուսպերը անակնկալ հարձակումից ու [հակառակորդի] բազմաթվությունից սարսափած, իր երկիրը նահանջեց: Իր հերթին Մուսարաֆն էլ չկարողացավ ընդդիմակայել թշնամիների հարձակման և լքելով Մենիկոս [բերդը] փախուստի դիմեց, բայց Տրիպոլսի սահմաններում բռնվելով, ռսպանվեց: Թեոկտիստոսի ղինվորները դրավեցին և Մենիկոսը, որ նրանց հանձնվեց Մուսարաֆի եղբորորդու կողմից, և զառիթափ ժայռի վրա գտնվող մի այլ բերդ, որ Արգիրոկաստրոն է կոչվում: Ահա տյո բոլորը կատարելուց հետո, Թեոկտիստոսը մտավ մայրաքաղաք, իր հետ բերելով Իբն Ջարախի որդուն՝

Ալախին: Ինքնակալը նրան պատրիկի աստիճանին արժանացրեց: Այնուհետև, Անտիոքի կառավարիչ դարձած Միսթիացի Նիկետասի առաջնորդությամբ ու ուղեկցությամբ ժամանեց նաև Իբն Ջարախը, որին կայսրը սիրալիք ընդունեց, տվեց մեծ նվերներ, բազում բարերարություններ ցուցաբերեց և նրան դոհացած տուն ուղարկեց: [Կայսրը] փրկադնամբ գերությունից ազատեց Խիրոսֆակտեսին և հանձնեց նրա հարազատներին:

8. Պրոտոսպաթար Օրեստեսը, որին, ինչպես վերևում ասվեց, Վասիլ կայսրը Սիկիլիա էր ուղարկել, պատերազմակա՝ հարցերում լինելով անփորձ, գործերը ապաշնորհ կերպով էր վարում, այդ պատճառով Սիկիլիայի սարակինոսները հարմար առիթ ձեռք գցելով, հանկարծակի հարձակվեցին հոռմայեցի [գինվորների] վրա, որոնք, ի դեպ, վարելով շվայտ կյանք<sup>404</sup>, որովայնային հիվանդությամբ էին տառապում, և մեծ ջարդ տվեցին: Դժբախտությունը դարձանելու համար կայսրը Իտալիա ուղարկեց Հելլադայում ու Մակեդոնիայում հավաքած զգալի զորք, որը սակայն զորավարի ապաշնորհության ու վախկոտության պատճառով խոսքի արժանի ոչինչ անել չկարողացավ: Այդ՝ 6539 թ. ինդիկտիոնի 14-րդ տարին, Պրուսիանը կամավոր կերպով վանական է դառնում, նրա մայրը Բուկելլարների [բանակաթեմում] գտնվող Մանտինիոն վանքից Թրակեսիոն [բանակաթեմն] է փոխադրվում, իսկ պատրիկ Կոստանդին Դիոգենեսն էլ, բանտից հանվելով, Ստուդիոն վանքում վանական է դառնում: Ռոմանոս կայսրը, գնելով Տրիակոնտաֆիլոսի տունը<sup>405</sup>, այն վանքի վերածեց հանուն մեր տիրուհի աստվածածնի, ոչ մի ծախսի առաջ չկանգնեց. նա այդ պատրվակի տակ քիչ շտանջեց ու շարշարեց հպատակներին քարերի և այլ նյութերի փոխադրմամբ: Ռոմանոսը արժաթով ու ոսկով պայծառացրեց նաև Մեծ եկեղեցու, ինչպես և Վլախերնայի ամենասրբուհի աստվածածնի [տաճարի] սյուների իռլակները: Երբ նա զբաղված էր Վլախերնայի [տաճարի] բեմի վերաշինությամբ, կախված մի հին սրբապատկեր գտավ, և հրամայեց նորոգել այն: Տեսնելով, որ պատի ծեփը փշացած է, նա հրամայեց քանգել այն և նորն անել: Երբ հին ծեփը հանեցին, նրա տակ գտան փայտե մոմանկար մի սրբապատկեր, որի վրա պատկերված էր աստվածածինը՝ մեր տեր աստծուն կրծքին տեղմած: Նա Կոպրոնիմոսի<sup>406</sup> ժամանակներից մինչև օրս անաղարտ էր մնացել, հակառակ որ անցել էր երեք հարյուր տարի:



9. 6540 թվականի սեպտեմբեր ամսին, ինդիկտիոնի 15-րդ տարին բազում նվերներով Ռոմանոս կայսեր մոտ եկավ Հալեպի [ամիրայի] որդի Ամերը, խնդրելով նորոգել հաշտության պայմանագիրը, խոստանալով վճարել անցյալում հստատաված հարկերը: Այդ խնդրով [Հալեպ] է ուղարկվում պրոտոսպաթար Թեոփիլակտոս Աթենացին, որը պայմանագիրը կնքեց և հալեպցիների հետ համագործակցության հաստատեց: Իսկ թագուհի Զոեն սպառվական խաչի վերացումից [խաչվերացից] հետո հանկարծակի գնաց Պետրիոն<sup>407</sup> և իր քրոջ Թեոդորային վանական խուղեց, ասելով, որ այլ կերպ հնարավոր չէ տանել նրա ոտնձգություններն ու գայթակղությունները: Ռոմանոս կայսրը իր զարմուհուն մեծ օժիտով կնուխյան տվեց Մեծ Հայքի էքսուսիարխիսին<sup>408</sup>: Կայսրը վճռելով անհապաղ երկրորդ անգամ ներխուժել Ասորիք, դուրս եկավ Մեսանակտա: Իր այդտեղ լինելու ժամանակ, Թեոփանես Թեսաղունիկեցին թագուհի Զոենին տեղեկացնում է, թե Կոստանդին Դիոգենեսը, համաձայնության գալով իր քրոջ Թեոդորայի հետ, մտադիր է փախչել Իլլիրիայի [բանակաթեմը], որ այդ մասին տեղյակ է Դյուրախիոնի մետրոպոլիտն ու Պերիթեորիոնի եպիսկոպոսը: Ե՛վ եպիսկոպոսները, և՛ Դիոգենեսը իսկույն ձերբակալվում են: Երբ պրեպոզիտոս Հովհաննեսը (ապագա կայսր Միքայելի եղբայրը, որ այնուհետև Օրֆանոտրոֆոս<sup>409</sup> դարձավ) վլախերնայի պալատում քննության էր ենթարկում Կոստանդինին, նա իրեն պարսպից ցած դցեց և սպանվեց: Նրան նետեցին ինքնասպանների գերեզմանոցը<sup>410</sup>, իսկ եպիսկոպոսներին ուղարկեցին կայսեր մոտ Մեսանակտա, որտեղ և նրանք ազատ արձակվեցին:

10. Հուլիս ամսի 28-ին, [շաբաթվա] վեցերորդ օրը, գիշերվա 2-րդ ժամին, աստղի թափում եղավ՝ հարավից հյուսիս. նա ողջ երկիրը լուսավորեց: Փոքր անց լուր է հասնում հռոմայեցիների գլխին եկած դժբախտությունների մասին. թե արաբները ավարանեցին Միջագետքը՝ մինչև Մելիտենե, պածինակները անցնելով Իստրոսը, Մյուսիան տակնուվրա արեցին, իսկ սարակինոսներն էլ հարձակվեցին Իլլիրիայի [բանակաթեմի] ծովափնյա շրջանների վրա՝ մինչև Կերկիրա, որը և կրակի տվեցին: Թեև մյուսներն անվնաս տուն վերադարձան, սակայն սարակինոսները ռաուսցիներին<sup>411</sup> և նավպիտոնի զորավար պատրիկ Նիկեփոր Կարանտենոսի կողմից ջտրոգ ստացան, պարտության կրելով կորցրին իրենց նավերի մեծ մասը: Իսկ ովքեր էլ որ պըր-

ծան, սպանեցին իրենց ձեռքն անցան հոռմայեցի ռազմագերիներին: Վերադարձի ճանապարհին, սակայն, նրանք նավաբեկ եղան և ոչնչացան Սիկիլիական ծովում:

11. Այդ տարի սով ու համաճարակ էլ ներխուժեց՝ Կապագովկիա, Պափլադոնիա, Արմենիակաների [բանակաթեմ] և Հոնորիաս, այն աստիճան, որ բանակաթեմերի բնակիչներն անգամ իրենց հայրենի օջախները թողած վերաբնակեցում էին պահանջում: Կայսրը Մեսանակաայից մայրաքաղաք վերադառնալիս հանդիպելով նրանց և իմանալով նրանց տեղաշարժի պատճառը, ստիպեց տուն վերադառնալ, օժանդակություն ցուցաբերելով՝ դրամով ու պարենով: Անկյուրայի եկեղեցու այն ժամանակվա ղեկավար Միքայելը առաքինի գործեր կատարեց, ոչ ոչ չխնայեց սովի ու համաճարակի հետևանքները վերաջնելու համար:

12. 6540 թ. օգոստոս ամսի 13-ին, կիրակի օրը, գիշերվա առաջին ժամին ուժեղ երկրաշարժ եղավ: Կայսրը մտավ մայրաքաղաք և իր նախկին կնոջ՝ Հելենեի մահվան առթիվ նրա համար առատ հոգեդրամ բաժանեց: Նույն տարվա փետրվար ամսի 28-ին մի աստղ աղմուկ թնդյունով հյուսիսից հարավ շարժվեց: Նա [երկնակամարում] երևաց մինչև մարտի 15-ը, նրա վրա աղեղ կար: Իսկ մարտի 6-ին, երեքշաբթի օրը երկրաշարժ եղավ:

13. Նույն տարին Աֆրիկայի սարակինոսների հարձակում էլ եղավ. հազար նավ, տասը հազար մարտիկներով բազում կրղզիներ ու ծովափնյա շրջաններ ավերեցին: Նրանց հետ ինչ-որ տեղում բախվեց Նիկեփոր Կարանտենոսը և նրանց պարտության մատնեց, հինգ հարյուր սարակինոսների շղթայակապ կայսեր ուղարկեց: Նույն տարին Գուդելիոս Մանիակեսի որդի պրոտոսպաթար Գեորգիոս Մանիակեսը, որ Մերձեփրատյան քաղաքների զորավարն էր և հաստատված էր Սամոսատ քաղաքում, փորձեց գրավել Օսրոենի Եդեսիա քաղաքը: Այն գտնվում էր թուրք Սալամանի ձեռքում, նրան քաղաքի կառավարիչ էր նշանակել Մարտիրոսպոլսի, այն է Մայաֆարիկիսի ամիրան: Մանիակեսը նվերներով, խոստումներով ու պատիվներով կաշառեց Սալամանին, որը մի խավար գիշեր քաղաքը նրան հանձնեց: Մանիակեսը, տիրանալով երեք շատ ամուր աշտարակների, իրեն օղակի մեջ առնողների դեմ քաջաբար պաշտպանվում էր և դրսից օգնություն աղերսում: Մայաֆարիկիսի ամիրա Աբու Մրրվանը<sup>412</sup>, իմանալով քաղաքի առման մասին, մեծ զորքով

1032



շտապ տեղ հասավ և ձեռնարկեց աշտարակները պաշարելու գործին: Գեորգիոսը քաջաբար նրան ետ մղեց և [Աբու Մրվանը], չգիտենալով ինչ անել, ավերեց ամենագեղեցիկ ապարանքները, ոչնչացրեց քաղաքի զարդերը, այգ թվում և Մեծ եկեղեցու<sup>413</sup>, իսկ լավագույն [իրերն էլ] ուղտերի վրա բարձելով, քաղաքի մնացած մասն էլ կրակի տալով, վերագարձավ Մարտիրուպոլիս: Մանիակեսը հարմար առիթ ձեռք գցելով, գրավեց քաղաքի մեջտեղում, ժայռոտ բլրի վրա գտնվող բերգը, գրսից օգնություն աղերսելով, ապահով կերպով տիրացավ քաղաքին<sup>414</sup>: [Մանիակեսը Եգեսիայում] գտավ տիրոջ Հիսուս Քրիստոսի՝ Աբգարին ուղղված ինքնագիր նամակը, որը կայսեր ուղարկեց Բյուզանդիոն<sup>415</sup>:

14. Եգիպտոսի [ամիրապետ] Ազիզը<sup>416</sup> գազազած, քրիստոնյաների գլխին անհամար փորձություններ բերեց, ավերակ գարձրեց մեր տիրոջ՝ Փրկիչ Հիսուս Քրիստոսի տաճարը Երուսաղեմում, իսկ երբ խայտառակ կերպով հոգին ալանգեց, նրա որդին, որ ծնվել էր ինչ-որ հռոմայեցի գերի տարված կնոջից, ցանկացողներին թույլ տվեց տաճարը վերակառուցել: Կայսրը մարդիկ ուղարկեց և բարեպաշտորեն ջանաց կառուցել տաճարը, բայց մահը վրա հասավ, իսկ գործը ավարտին հասցրեց իրեն հաջորդող Միքայել [կայսրը]:

15. Մագիստրոս Վասիլ Սկլերոսը, կայսեր քրոջ ամուսինը, որ Կոստանզնի կողմից կուրացվել էր, հեղհեղուկ ու փոփոխական մտածողության տեր մի մարգ, հակառակ, որ Ռոմանոսի կողմից ստացել էր մագիստրոսի պատվաստիճան և արժանացել նրա բազում բարերարություններին, նրա դեմ դավադրություն է նյութում: Երբ այդ բանը բացահայտվեց, նա իր կնոջ հետ քաղաքից արտաքսվեց:

16. Եգեսիայից Մանիակեսը կայսեր ուղարկեց տարեկան հարկը՝ հիսուն լիտր [ոսկի]<sup>417</sup>: Տրիպոլսի ամիրա Իբն Զարախը, եգիպտացիներից պարտություն կրելով, փախավ եկավ մայրաքաղաք: Կայսրը մեծ գորքով նրան հետերիարխ Թեոկտիստոսի հետ դարձյալ Ասորիք ուղարկեց, իսկ աբիդոսցի սյրոտոսպաթար Տեկնեասին նավատորմիղով Եգիպտոս, նեղոսի գետաբերանը, և հենց Ալեքսանդրիան, հնարավորին չափ ավերելու: Նա ուղիղ նավեց, հասավ ընդհուպ մինչև Ալեքսանդրիա և գրավելով բազում նավեր ու ավար, վերագարձավ անվնաս: Բարելոնի<sup>418</sup> մոտ գտնվող Բերկրի կոչվող բերդի տեր սարակինոս Ալիմը բերդը

Ռոմանոս կայսեր հանձնեց, հուսալով դրա դիմաց նրանից պատրիկություն ստանալ և բազում այլ պարգևներ: Այդ գործով նա կայսեր մոտ ուղարկեց իր որդուն: Բերդը ստացավ պատրիկ Նիկոլայոս Բուլղարը, մականունը՝ հրիսելիոս<sup>419</sup>, բայց սարակինոսի որդին, դալով Բյուզանդիոն և կայսեր հիվանդության պատճառով ոչ մի ուշադրության չարժանանալով, զայրացած ետ վերադարձավ և հորը համոզեց ետ վերցնել սեփական բերդը: [Ալիմը] սահմանակից պարսիկների հետ համաձայնության գալով, և օգտվելով [բերդին] տիրացած հրիսելիոսի անփութությունից ու անհոգությունից, գիշեր ժամանակ գրավեց բերդը և կոտորեց հռոմայեցի վեց հազար ռազմիկների<sup>420</sup>, Փոքր անց այդտեղի կառավարիչ նշանակվեց Նիկետաս Պեգոնիտեսը, որը ռուսներից ու հռոմեական այլ ուժերից բազկացած զորքով պաշարումից հետո գրոհով գրավեց բերդը, իսկ Ալիմին իր որդու հետ մահապատժի ենթարկեց<sup>421</sup>: Այն ժամանակ Գեորգիոս Աբազգի<sup>422</sup> կին Ալդեն, որ ծագումով ալան էր<sup>423</sup>, կայսեր կողմն անցավ, նրան հանձնելով ամրագույն Անակուֆիա<sup>424</sup>: Բերդը: Կայսրը նրա որդի Դեմետրիոսին<sup>425</sup> շնորհեց մագիստրոսի պատվաստիճանը: Կարանտենոսը դարձյալ հաղթանակ տարավ, [այս անգամ] ավարառության համար դուրս եկած սարակինոսների դեմ և նրանցից վեց հարյուր հոգու շղթայակապ կայսեր ուղարկեց:

1034 17. 6542 թվին<sup>426</sup>, փետրվար ամսի 17-ին երկրաշարժից տուժեցին Ասորիքի քաղաքները: Օրեստեսի պաշտոնանկ արվելու առնչությամբ որպես Իտալիայի հետևակի հրամանատար ուղարկվեց Լևոնը, մականունը Օպոս, իսկ նավատորմիղի հրամանատար՝ Վասիլ կայսեր սենեկապաններից մեկը: Այն պատճառով, որ մորեխը երկար ժամանակ ավերում էր արևելյան բանակաթեմերը, նրանց բնակիչներն ստիպված էին վաճառել իրենց երեխաներին և վերաբնակվել Թրակիայում: Կայսրը, յուրաքանչյուրին երեքական դահեկան տալով, նախապատրաստեց նրանց տուն վերադառնալը, երբ մորեխը ուժեղ քամուց ոչնչացավ Հելլեսպոնտոսի ծովում և ափ դուրս գալով, ծածկեց ծովափնյա ավազը: Կայսրը սարքեց քաղաքին ջուր մատակարարող և երկրաշարժից տուժած ջրատարը, ջրամբարտակները, [վերականգնեց] ուրկանոցները, որբանոցները և բոլոր հյուրանոցները, մի խոսքով ձեռնարկեց ամեն տեսակի բարի գործեր: Նա հիվանդացավ տևական ախտով, նրա գլխի մազերն ու մո-



րուքը թափվեց: Ասում են, թե նրա գլուխը Հովհաննեսը կերավ, որն այնուհետև Օրֆանոտրոֆոս դարձավ: Այս Հովհաննեսը ծառայում էր Ռոմանոսին նախքան նրա կայսր դառնալը, և երբ նա իշխանության գլուխն անցավ, մեծ ազդեցություն ձեռք բերեց: Նա ուներ եղբայրներ՝ Միքայելին, Նիկետասին, Կոստանդինին և Գեորգին: Հիշյալ Հովհաննեսը, ապա Կոստանդինն ու Գեորգը ներքինիներ էին, խաբեբա մարդիկ: Նիկետասը ներքինի չէր, նրա ազվամազը նոր էր բուսնում, իսկ Միքայելն արդեն տղամարդ էր, շատ գեղեցիկ դիմագծերով: Երկուսն էլ լուսայափոխություններ էին զբաղվում և դրամ կեղծում: Բոլորն էլ Հովհաննեսի միջոցով կայսեր մտերիմները դարձան, իսկ բախտը, որ վկայում էր սրանց ապագայում իշխանության հասնելու մասին, հզորություն գազաթնակետին բարձրացրեց: Նրանք տարբեր պաշտոններ ստացան, իսկ Միքայելին կայսրը նշանակեց պանթեոնի<sup>427</sup> արխոնտ: Ահա սրա նկատմամբ թագուհին սատանայական ու մոլեգին սեր տածեց, նրա հետ գաղտնի հանդիպումներ ունեցավ ու ծածուկ խառնակվեց նրան: Այս բանը նկատի ունենալով է, որ մարդիկ ասում են, թե կայսեր [առողջությունը] քայքայվեց դանդաղ գործող թուլյներով, նա շարաշար տառապեց և որ կայսրուհին հարմար առիթ էր որոնում առանց կասկածներ հարուցելու կայսեր մեջտեղից վերացնել, իսկ Միքայելին կայսերական գահին նստեցնել: Դրա համար էլ նա, ինչպես ասում են, նրան թունավորեց ոչ թե արագ, այլ կամաց կամաց գործող թուլյնով, դանդաղ սպանող: Եվ նա քայքայվեց, մնացած կյանքն ապրեց թշվառ ու ցավալից, անկողնին գամված, ամբողջ հոգով մահ աղերսելով: Նա ապրեց մինչև ինդիկտինի 2-րդ տարին, 6542 թվականի ապրիլ ամսի 11-ը: Ավագ հինգշաբթի օրը նա սենատորների հոռզ<sup>428</sup> բաժանեց, ապա ցանկություն հայտնեց լոգանք ընդունելու մեծ պալատի բաղանիքում, որի ավազանում Միքայելի մարդիկ նրան ջրահեղձ արեցին<sup>429</sup>: Նա թագավորեց 5 տարի և 6 ամիս: Գիշերը [Քրիստոսի] սուրբ շարշարանքների երգասացության պահին պատրիարք Ալեքսիոսին՝ լուր բերեցին, իբրև թե Ռոմանոս կայսրը իրեն կանչում է արքունիք: Բարձրանալով այնտեղ նա Ռոմանոս արքային գտավ մեռած: Խրիստոսիկլինը զարդարեցին, Ձոնն բազմեց գահին, ներս բերեց Միքայելին, իսկ պատրիարքին էլ ստիպեց կատարել պսակի արարողությունը: Պատրիարքը այդ խոսքի վրա ապշած, պասլանձվեց և չէր համարձակվում նրանց պսակել:

Բայց Հովհաննեսն ու Զոեն պաարիարքին հիսուն լիտր ոսկի տալով, հիսուն էլ կղերին, համոզեցին կատարել իրենց պսակի արարողությունը:

## ՄԻՔԱՅԵԼ ՊԱՓԼԱԳՈ՛ՆԱՑԻ

[ 12 ԱՊՐԻԼ 1034—10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1041 ԹԹ. ]

1. Ռոմանոս կայսրն ահա այդպես սպանվելով հողին հանձնելվեց՝ իր կողմից նորոգված Պերիբլեպտոս վանքում<sup>430</sup> հենց ավագ ուրբաթ օրը:

2. Զոեն Միքայելին կայսերական գահին նստեցնելով կարծում էր, որ ամուսնու և կայսեր փոխարեն մի ծառա ու սպասավոր կունենա: Նա իր հոր ներքինիներին պալատ մտցնելով, ավելի համարձակ լծվեց գործի: Բայց ամեն ինչ իր համար բացահայտորեն հակառակ ընթացքն ունեցավ, քանզի կայսեր եղբայր Հովհաննեսը, մի գործունյա և վճռական մարդ, պալատ մտնելուն պես և իր եղբոր մասին երկյուղ կրելով, որ հանկարծ նրա գլխին փորձանք չգա (Ռոմանոսն իր համար դաս էր), կայսրուհու ներքինիներին պալատից դուրս է հանում, հեռացնում նաև նրա ամենահավատարիմ աղախիններին, իր ազգական կանանց նշանակում թագուհու պահակ և հսկող: Ոչ մի բան, փոքր թե մեծ, չէր կատարվում առանց [Հովհաննեսի] համաձայնությունից: Նա թագուհուն թույլ չէր տալիս զբօնելու, բաղանիք էր գնում միայն նրա թույլտվությամբ, նա բացարձակապես զրկված էր ամեն տեսակի զվարճություններից: Ահա բոլոր ներքին գործերը կարգի բերելով, նա աշխարհով մեկ գրություններ է ուղարկում, տեղեկացնելով Ռոմանոսի մահվան, Միքայելի՝ դեռ [Ռոմանոսի] կենդանություն օրոք և նրա կամքով գահ բարձրանալու և Միքայելի թագուհի Զոեի հետ ամուսնանալու մասին: Բոլորը հպատակություն հայտնեցին [Միքայելին] և նրան կայսր ներքողեցին, բացի պատրիկ Կոստանդին Դալասսենոսից, որ իր տանն<sup>431</sup> էր մնում: Նա այդ լուրը վատ ընդունեց, հավատ չընծայեց դրան, մնաց ապշած, թե ինչպես եղավ, որ բազում, փառավոր, հայտնի ընտանիքներից սերող հոյակապ մարդկանց առկայություն դեպքում ինչ-որ հասարակ ու շնչին արժեք ունե-



ցող մեկը մյուս բոլորից ավելի նախընտրելի է համարվել և հրոշակվել տեր ու կայսր: Հովհաննեսը իմանալով այդ մասին, հասկանալի է, մտահոգության ու իրարանցման մեջ ընկավ և ըսկըսեց մտածել ու խորհել այդ մարդուն ևս իր ցանցը գցելու մասին: Կոստանդին Դալասսենոսի մոտ է ուղարկվում ներքինիներից մեկը՝ էրզոդոտես կոչվածը, նման գործերում փորձառու մի մարդ, որ առաջադրանք ստացավ երդումներ տալով մարդուն կայսեր մոտ բերել: [էրզոդոտեսն] ահա գնում է Դալասսենոսի մոտ, իսկ Հովհաննեսը սկսում է սիրաշահել սենատին ու ժողովրդին. գլխավոր սենատորների աստիճանները բարձրացնելով, հասարակ ժողովրդին էլ նվերներ ու շնորհներ բաժանելով, նա շատերի համակրանքը շահեց, հպառակ ժողովրդին մեկընդմիջտ իր կողմը թեքեց: Թե կատարվածը աստծուն հաճելի չէր պարզ ի պարզո երևաց հետևյալ կանխանշաններից. ավագ կիրակի օրվա 11-րդ ժամին սարսափելի, ուժեղ կարկուտ տեղաց, այն աստիճան, որ ջարդ ու փշուր եղան ոչ միայն պտղատու և ոչ պտղատու ծառերը, այլ փուլ եկան նաև տներ ու տաճարներ, գետնին հավասարվեցին ցանքսերն ու այգիները, որով այդ տարի ամեն տեսակի երկրագործական մթերքների անբերություն եղավ: Աստղի թափում էլ եղավ՝ զատկի հաջորդ կիրակի օրը՝ գիշերվա երրորդ ժամին: Նա իր պայծառությամբ այն աստիճան խավարեցրեց մնացած բոլոր աստղերը, որ շատերին թվաց, թե արև ծագեց: Կայսրն էլ այսահար եղավ: Նրա մերձավորները հիվանդությանը ավելի վերամբարձ անուն տալով, մոլեգնություն անվանեցին:

10—XII նա այդպես [հիվանդ] մնաց մինչև իր կյանքի վերջը, բուժում —1041 շտացավ ոչ աստվածային զորությունից, ոչ էլ բժիշկներից, այլ եղկելիորեն քարշ եկավ ու տառապեց<sup>432</sup>:

3. էրզոդոտեսը ժամանեց Դալասսենոսի մոտ, բայց վերջինս չուզեց հավատալ երդումներին և նրա հետ Բյուզանդիոն գնալ: Նա իր ամենահավատարիմ մարդկանցից ոմանց ուղարկեց ավելի մեծ երդումներ պահանջելով, այն մասին, որ իրեն ոչ մի վատ բան չի պատահի, որից հետո խոստացավ գնալ: [Դալասսենոսի] մոտ ուղարկվեց ներքինի Կոստանդին Ֆազիցեսը, պափլագոնացի, կայսեր մտերիմը. նա իր հետ տարավ սուրբ խաչափայտը, սուրբ վարշամակը, մեր տիրոջ ու Փրկչի Հիսուս Քրիստոսի՝ Աբգարին ուղարկած ինքնագիր նամակը և ամենասրբուհի աստվածածնի պատկերը: Ահա նա եկավ, Կոստանդին փոխադարձաբար երդումներ տվեց ու ստացավ և նրա հետ եկավ Բյու-

զանդիոնն, կայսրը նրան սիրալիր ընդունեց, շնորհեց անթիպատոսի պատվաստիճան, պարգևեց մեծագույն ընծաներ և թույլ տվեց խաղաղ ու աներկյուղ ապրել Կյուրոսում գտնվող իր տանը<sup>433</sup>,

4. Այդ տարին պատմելու արժանի մի այլ բան էլ տեղի ունեցավ: Թրակեսիոն բանակաթեմում ձմեռելու ցրված վարյազներից մեկը անմարդ մի վայրում տեղացի մի կնոջ հանդիպելով, փորձեց տիրանալ նրան: Երբ իր նպատակին չհասավ, դիմեց բռնության, կինը, սակայն, քաշելով նրա դաշույնը, խրեց այն վարյազի սրտին և բարբարոսին տեղն ու տեղը օւպանեց: Երբ կատարվածի լուրը շրջակայքում տարածվեց, վարյազները հավաքվեցին, կնոջ գլխին պսակ դրեցին, բռնաբարության փորձ կատարողի ողջ ունեցվածքը տվեցին այդ կնոջ, իսկ [սպանված վարյազին] էլ անթաղ թողեցին՝ ինքնասպանների վերաբերյալ օրենքի համաձայն: Ինչ վերաբերում է Հելլեսպոնտոսի ափի ավազներում ոչնչացած մորեխի երամներին, որոնց մասին վերեվում խոսք եղավ, նրանք հանկարծակի երևացին և դարձյալ ողողեցին Հելլեսպոնտոսի ծովափը և ամբողջ մի եռամյակ ավերեցին Թրակեսիոն բանակաթեմը: Գալով Պերգամոն, նրանք ոչնչացան: Սրանց վերաբերյալ եպիսկոպոսի սպասավորներից մեկը տեսիլք էր տեսել, ոչ թե քնի մեջ, այլ արթուն ժամանակ<sup>434</sup>: Նրան սպիտակ հանդերձներ հագած մի պայծառադեմ ներքինի երևաց, որը հրամայեց քանդել իր առջև գտնվող երեք պարկերից մեկի կապը և դատարկել այն, նաև երկրորդի, և վերջապես՝ երրորդի: Մարդը հրամանի համաձայն էլ կատարեց. առաջին պարկի միջից դուրս ժայթքեցին օձեր, իժեր և կարիճներ, երկրորդի միջից՝ սև թունավոր գորտեր, ասպիդներ, քարբեր, եղջյուրավոր օձեր և այլ թունավոր [սողուններ], իսկ երրորդի միջից՝ բզեզներ, մժեղներ և այլ, ետևում խայթոց ունեցող [միջատներ]: Տեսածի վրա նա ապշեց, իսկ ուրախադեմ այդ մարդը, մոտենալով իրեն, ասաց. «սրանք եկել են և գալու են ձեր գլխին, քանզի դուք ուրացել եք աստծու պատվիրանները, ինչպես և այն անսուրբ գործի համար, ինչ կատարվեց Ռոմանոս կայսեր և նրա մահիճի հետ»: Այդ բանն էլ ահա այդտեղ եղավ:

5. Միքայել կայսրը, տառապելով այսահարության ախտից, ի վիճակի չէր զբաղվելու պետական գործերով, նա անունով էր կայսր, իսկ ողջ իշխանությունը՝ և՛ քաղաքական, և՛ ռազմական, գտնվում էր Հովհաննեսի ձեռքում: Սա իր եղբայր Նիկետասին իսկույն նշանակում է Անտիոքի դուքս, անտիոքացիք սակայն



1034

չթողեցին, որ նա քաղաք մտնի, քանզի մի փոքր առաջ Սալիբաս անունով մեկը, որ իրենց վրա հարկահավաք էր նշանակված և կեղեքում էր մարդկանց, սպանվել էր Անտիոքի բնակչության կողմից: Ահա վախենալով, որ այս սպանության համար իրենց գլխին կարող է փորձանք գա, Նիկետասին շօղեցին Անտիոք մտնել: Երբ Նիկետասը նրանց երզումներով հավաստիացրեց, թե ինքը նրանց ներում կշնորհի, որ Սալիբասի սպանության համար ոչ ոք չի տուժի, նրանք թույլ տվեցին նրան մտնել: [Նիկետասը], սակայն, ոտք դնելով [քաղաք] և իրերի տերը դառնալով, իր տված երզումների մասին քիչ, գուցե ամենևին էլ չմտածեց և մոտ 100 հոգու մահապատժի ենթարկեց՝ գլխատմամբ ու ցցահան անելով, [քաղաքի] տասնյակ նշանավոր, մեծահարուստ անվանի ընտանիքներից սերող մարդկանց, որոնցից ամենանշանավորը պատրիկ էլպիդիոսն էր, և շղթայակապ Բյուզանդիոն ուղարկեց, իր եղբոր՝ Հովհաննեսին գրելով, թե իրեն չէին թողնում քաղաք մտնել ոչ թե Սալիբասի սպանության պատճառով, այլ Դալասսենոսի նկատմամբ [իրենց] տաժաժ սիրո: Այս բանը ավելի բռնկեց ու բորբոքեց Հովհաննեսի՝ Դալասսենոսի հանդեպ արդեն ունեցած կասկածը: [Դալասսենոսին] իսկույն կայսեր մոտ են բերում և ինդիկտիոնի երկրորդ տարվա օգոստոս ամսի երեքին արգելափակում Պլատե կղզում: Մի ինչ-որ աշտարակում է բանտարկվում նաև նրա դստեր ամուսին Կոստանդին Դուկասը, այն պատճառով, որ նա դատապարտում էր անօրինությունը, քննադատում երզմնազանցությունը և աստծուն վկայության կոչում: Նրա պատճառով տուժեցին երեք հոգի էլ՝ Փոքր Ասիայից սերող ազնվական ու հարուստ մարդիկ՝ Գուդելիսը, Բայանոսը և Պրովատաս կոչվողը, որոնց ունեցվածքը բռնագրավվեց ու հանձնրվեց արքաեղբայր Կոստանդինին: Այդ ժամանակները քաղաքից վտարվեց և պրոտոնոտար Սիմեոնը, Կոստանդին կայսեր սպասավորներից մեկը, այն պատճառով, որ նա հավանություն չէր տալիս տեղի ունեցածներին, դատապարտում էր Դալասսենոսի անձի նկատմամբ կատարված անօրինությունը, արքունիքի թույլ տված երզմնազանցությունը: Նա եկավ Օլիմպոս<sup>435</sup> և հրաժարվելով աշխարհիկ կյանքից, իր կողմից նորոգված վանքում վանական դարձավ:

6. Նույն տարին երկրաշարժ էլ եղավ, որի ժամանակ տուժեց Երուսաղեմը, եկեղեցիների և տների փլատակների տակ բազում մարդիկ սպանվեցին: Երկիրը շուրջ քառասուն օր ցրեց-

վում էր: Իսկ 6543 թ. սեպտեմբեր ամսին, արևելքում հրեղեն սյուն էր երևում, գլուխը գեպի հարավ թեքած: Այդ օրերին սաբակինոսները գրավեցին Մյուրան, իսկ բերիացիք, որ և հալեացիք, վճռեցին կայսեր կողմից իրենց վրա նշանակված կառավարչին: Իսկ աբազգ Բագարատը<sup>436</sup> Ռոմանոս կայսեր [սպանություն] վրեժն առնելու պատրվակի տակ (կայսրը իր կնոջ հորեղբայրն էր) վերացրեց հռոմայեցիների հետ ունեցած հաշտությունը և վերագրավեց անցյալում հռոմայեցիներին հանձնված բոլոր բերդերն ու ամրոցները: Պաժինակներն էլ, անցնելով Իստրոս գետը, ամբողջությամբ ավարառեցին Մյուսիան մինչև Թեսաղոնիկե, իսկ աֆրիկացիների նավերն էլ սաստիկ ավերեցին Կյուկլադները: Այս բոլորն ամենևին էլ Հովհաննեսի փուլթը չէր, նրա միակ ու մշտական մտահոգությունը Դալասսենոսին ապահով հսկելն էր, այն, որ իրենից թաքուն շման նրա մեքենայությունները, դրա համար Պլատե կղզուց նրան փոխադրում ու բանտարկում է ապահով մի աշտարակում, նրա վրա կարգելով ոչ շարքային պահակների: Նա Եղեսիայից տեղափոխում է պատրիկ Գեորգիոս Մանիակեսին, նրան նշանակում Վերին Մարաստանի՝ այն է Վասպուրականի կառավարիչ, իսկ Եղեսիայի՝ Լեոն Լեպանդրինոսին<sup>437</sup>: Օրֆանոտրոֆոսը տառապում էր բերանում դուրս եկած խոցից, բոլոր բժշկական միջոցները անկարող դուրս եկան և նա երազում տեսավ նշանավոր սբանչելագործ Նիկողայոսին, որն իրեն հրամայում է փութանակի Մյուրա գնալ, քանզի նա այդտեղ է գտնելու ապաքինումը: [Օրֆանոտրոֆոսը] անհապաղ տեղ հասավ, մյուռոն և այլ թանկարժեք ընծաներ տվեց մեծ [սրբի] սուրբ տաճարին, մյուրոնցիների քաղաքը շրջապատեց ամենաամուր պարսպով և ապաքինում գտնելով, առողջ ետ վերադարձավ:

7. Ասորիքի Անտիոք [քաղաքի] զորավար Նիկեստասի վախճանվելու առթիվ նրան փոխարինեց մյուս եղբայրը՝ Կոստանդինը<sup>438</sup>, իսկ վերջինը՝ Գեորգիոսը դարձավ պրոտովեստիարիոս, քանզի, ինչպես ասացինք, Սիմեոնը վանականի սքեմն էր հագել: Կայսրը երկարամյա բանտարկությունից աղատ արձակեց անտիոքացիներին, իսկ իր քրոջ՝ Մարիայի որդի Միքայելին բարձրացրեց կեսարի փառավոր աստիճանին: Նա անվերջ ողբում էր Ռոմանոս կայսեր նկատմամբ իր գործած մեղքի համար, ուզում էր աստծուն իր նկատմամբ ողորմած դարձնել՝ բարեգործություններով, աղքատներին դրամ բաժանելով, նոր վանքեր կա-



ուրացելով և նրանցում վանականներ բնակեցնելով, գործելով այլ, աստվածահաճո արարքներ: Այդ արածներն, իհարկե, օգտակար կլինեին, եթե նա նաև հրաժարվեր թագավորութունից, որի սիրույն կատարվեցին այդպիսի ոճիրներ, վտարեր անառակ կնոջ և ներքուստ ողբար գործած մեղքը: Սրանցից և ոչ մեկը չկատարեց, ընդհակառակը, նա շարունակում էր կենակցել այդ կնոջ հետ, ամուր բռնել թագավորության սանձերը, իսկ բարերարութուններ էր գործում ի հաշիվ պետական ու հասարակական միջոցների, և այդ բոլորից հետո նա հույս ուներ քավության արժանանալ, կարծում էր, թե աստված անմիտ է ու անարդար, նա ուրիշի դրամով էր ուղում ապաշխարութուն գնած լինել:

1035

8. 6543 թվականի մայիս ամսին, ինդիկտիոնի 3-րդ տարին աֆրիկացիներ ու սիկիլիացիներ ասպատակեցին Կյուկլաղներն ու Թրակեսիոն [բանակաթեմի] ափերը, բայց ի վերջո այդտեղ պահապանների կողմից պարտութուն կրեցին. նրանցից հինգ հարյուր հոգի գերի տարվեցին կայսեր, իսկ մնացած բոլորը ծովափում ցցահան արվեցին՝ Ատրամյուտիոնից մինչև Ստրոբելլոս: Հովհաննեսը Գեորգիոս Պրովատասին<sup>439</sup> որպես դեսպան Սիկիլիա է ուղարկում նրա ամիրայի հետ հաշտության մասին բանակցութուններ վարելու: Նա գնաց և ճարտարորեն բանակցութուններ վարեց, ամիրայի որդուն առնելով, մայրաքաղաք բերեց: Այդ տարի Բուկելլարների բանակաթեմում երկրաշարժի հետևանքով գետնի վրա ճեղքվածքներ առաջացան, որոնց մեջ կուլ գնաց ամբողջ հինգ գյուղ: Կոստանդին կայսեր ներքինի պրոեդրոս Նիկեփորը, ուր այնտեղ էր գտնվում, քիչ էր մնացել փորձանքի հանդիպեր և անսպասելիորեն պրծնելով, Ստուդիոնի վանքում վանական դարձավ:

9. Սիկիլիայի ամիրա Աբուլաֆար Մոհամմեդը, որ կայսեր հետ դաշնակցութուն էր կնքել, մագիստրոսի պատվաստիճանն ստացավ: Նեղվելով իր դեմ ապստամբութուն բարձրացրած իր եղբայր Աբու իսաֆից, նա դիմեց կայսեր օգնության: Զինական ուժով լոնգիբարդիա է ուղարկվում որպես զորավար-ավտոկրատոր պատրիկ Գեորգիոս Մանիակեսը, նրա հետ նաև ծովակալ պատրիկ Ստեփանոսը՝ կայսեր քրոջ ամուսինը: Երբ աֆրիկացի ու սիկիլիացի սարակինոսները բազում նավերով հարձակում գործեցին կղզիների ու ծովափնյա շրջանների վրա, Կիբիրեոտների [բանակաթեմի] զորավար Կոստանդին իսայեն<sup>440</sup> տեղական նավատորմիղով բախվեց նրանց, ղլխովին պարտութուն մատ-

նեց, հինգ հարյուր ռազմագերիների կայսեր ուղարկեց, իսկ մնացածներին ծովահեղձ արեց: Սարսափելի սառնամանիքի պատճառով իստրոս գետը սառցակալեց և պածինակները նրա վրայով անցնելով, մեծապես վնասեցին Մյուսիային, Թրակիային՝ մինչև Մակեդոնիա: Թրակեսիոն [բանակաթեմի] վրա դարձյալ մորեխը խուժեց և բերքը փչացրեց:

1036

10. 6544 թվականին, ինդիկտիոնի 4-րդ տարում, զարնանը, պածինակները հոռոմայեցիների վրա երիցս ներխուժեցին և պատահաժը կատարելապես ավերեցին, բռնած տղամարդուն կոտորեցին, գերի ընկածներին աննկարագրելի տանջանքների ենթարկեցին: Նրանք դերի վերցրին նաև հինգ զորավարների՝ Հովհաննես Դերմոկայիտեսին, Վարդաս Պիցեսին<sup>441</sup>, Լևոն հալկուցեսին, Կոստանդին Պտերոտոսին և Միքայել Ստրավոտրիխարեսին: Վախճանվեցին ռուսաց իշխաններ Մստիսլավն ու Յարոսլավը, ռուսաց իշխան ընտրվեց վախճանվածների ազգական Զինոսլավը<sup>442</sup>: Սերբիան, որ Ռոմանոս կայսեր մահից հետո ապստամբել էր, դարձյալ հանդարտվեց: Վախճանվեց Եգիպտոսի ամբմումնի Ամերը, իսկ նրա կինը, որ քրիստոնյա էր, իր որդուն կայսեր մոտ դեսպանության ուղարկեց՝ խաղաղության հարցով: Կայսրը ընդառաջեց այդ կնոջ առաջարկին և նրա հետ երեսնամյա պայմանագիր կնքեց: 6545 թվականի դեկտեմբեր ամսի 18-ին, ինդիկտիոնի 5-րդ տարին, գիշերվա շորրորդ ժամին երեք երկրաշարժ եղավ, երկուսը թույլ, մեկը՝ ուժեղ: Այն բանից հետո, երբ պատրիկ Գեորգիոս Մանիակեսը, որ, ինչպես ասացինք, Եդեսիայից տեղափոխվեց և նրա փոխարեն [քաղաքի] կառավարիչ նշանակվեց Լեպեսդրինոսը, Միջագետքում բնակվող արաբները, համագործակցություն հաստատելով, Եդեսիայի վրա հարձակվեցին և պաշարեցին քաղաքը: Այն քիչ էր մնացել գրավվելու, բայց կայսեր եղբայր Կոստանդինը Անտիոքից անհրաժեշտ օգնությունն ուղարկելով, անակնկալորեն փրկեց [Եդեսիան]: Կայսրը, գնահատելով նրա արարքը, արևելից սխուլերի դոմեստիկոս նշանակեց: Նիկոմեդիայի եպիսկոպոս ձեռնադրվեց ներքինի Անտոնիոս Պախեսը, որ կայսեր ազգականն էր, եպիսկոպոսի և ոչ մի շնորհք չունեցող, խոսելու անընդունակ մի մարդ: Ամբողջ վեց ամիս շորային եղանակ արեց, ոչ մի կաթիլ անձրև չտեղաց, ահա դրա համար կայսեր եղբայրները թափոր կազմած դուրս եկան՝ Հովհաննեսը սուրբ վարչամակը բռնած, մեծ դոմեստիկոսը՝ Քրիստոսի Արդարին ուղարկած նամակը<sup>443</sup>, իսկ պրոտովես-



տիարիոսը՝ սուրբ պարուրը: Նրանք ոտքով Մեծ պալատից գնացին հասան Վլախերնայի ամենասրբուհի աստվածածնի տաճարը: Մի այլ թափոր էլ պատրիարքն ու կղերը կազմեցին: Ոչ միայն անձրև չէր տեղացել, այլև անշափ մեծության կարկուտ էր եկել ու ջարդուփշուր արել ծառերն ու քաղաքի տների կրղմինդրները: Այն պատճառով, որ քաղաքը սկսեց հացի պակասություն զգալ, Հովհաննեսը Պելոպոննեսում ու Հելլադայում 100 հազար [մոդ] ցորեն գնեց և օգնություն հասավ քաղաքի բնակիչներին:

11. Ինչպես ասվեց, Սիկիլիայում երկու եղբայրներն իրար դեմ էին կռվում և երբ գերակշռության հասավ Աբուլաֆարը, մյուս եղբայրը օգնություն կանչեց Աֆրիկայի արխոնտ Ումարին: Վերջինս խոստանում էր դաշնակցել, պայմանով, որ կղզում որևէ կալված ստանա: Սիկիլիացին սիրով համաձայնվեց և նա տեղ հասնելով, բախվեց Աբուլաֆարին: Օգտվելով այն բանից, որ պատրիկ Գեորգիոս Մանիակեսի հետ [Աբուլաֆարին] ուղարկված օգնական զորքն ուշանում էր, [Ումարը] նրան գլխովին պարտության մատնեց և նա ապաստան գտավ Լոնգիբարդիայի արխոնտ Լևոն Օպոսի մոտ, որից և օգնություն էր խնդրում: [Լևոն Օպոսը] հնարավորության սահմաններում զորք հավաքելով, անցնում է Սիկիլիա և բազմիցս բախվելով աֆրիկացիների առաջնորդի հետ և գերակշռության հասնելով, կոտորում նրա անսանձելի թափը: Հետագայում, երբ նա իմացավ, որ երկու եղբայրները դաշինք են կնքում և նպատակ ունեն միացյալ ուժերով հռոմայեցիների վրա հարձակվել, նա դարձյալ Իտալիա է անցնում: Նրա հետ նավ նստեցին և 15 հազար հռոմայեցի ռազմագերիներ, որոնք Իտալիայում փրկվեցին և իրենց տները վերադարձան: Կարճեղոնացին հարմար առիթ ձեռք բերելով, նեղում էր Սիկիլիան և իրեն շատ ազատ զգալով, ավերում այն: Սիկիլիայում ահա գործերն այսպիսի վիճակում էին:

12. Երբ Հովհաննեսն սկսեց սուր քննադատության ենթարկել Կոստանդնուպոլսի պատրիարքին, Կյուզկոսի եպիսկոպոս Դեմետրիոսը, Նիկոմեդիայի Անտոնիոսը, Սիդեսի և Անկյուրայի եղբայր [եպիսկոպոսները], այլ մետրոպոլիտների հետ համաձայնության գալով, որոշեցին Ալեքսիոսին աթոռից իջեցնել և նրա տեղում Հովհաննեսին նստեցնել: Ալեքսիոս պատրիարքը կղերի մնացած մասով սրանց նամակներ ուղարկեց, որտեղ ասված էր. «Քանի որ, ըստ ձեզ, [պատրիարքական] աթոռին

ես նստել եմ ոչ եպիսկոպոսների ընտրութեամբ, այլ ոչ կանոնական ճանապարհով՝ վասիլ կայսեր հրամանով, ապա թող իմ տասնմեկ և կեսամյա աթոռակալութեան ընթացքում ձեռնադրած մետրոպոլիտները կարգալույծ լինեն, նզովյալ լինեն նաև թագադրած երեք կայսրերը, որից հետո, եթե ուզում եք, ես կհրաժարվեմ աթոռից»։ Դեմետրիոսի գործակիցները այդ գրությունն ստանալով, ամոթահար եղան, լցվեցին երկյուղով (քանզի իրենցից շատերը նրա կողմից էին ձեռնադրված), լռեցին և այսուհետև Հովհաննեսը աթոռին տիրանալու իր ախորժակները սանձեց։

1037

13. 6546 թվականի նոյեմբերի 2-ին, ինդիկտիոնի 6-րդ տարվա, օրվա 10-րդ ժամին երկրաշարժ եղավ։ Երկիրը ցնցվում էր ամբողջ հունվար ամսի ընթացքում։ Սով էլ եղավ՝ Թրակիայում, Մակեդոնիայում, Ստրիմոնում և Թեսաղոնիկեում՝ մինչև Թեսալիա։ Երբ Թեսաղոնիկեի հոգևորականները բողոքեցին մետրոպոլիտ Թեոփանեսի դեմ՝ իրենց օրինավոր ոռճիկը շտալու համար, Թեսաղոնիկեում գտնվող կայսրը [Թեոփանեսին] դիմեց հորդորական խոսքերով, խորհուրդ տվեց շղկել եկեղեցու սպասավորներին օրենքով սահմանված ոռճիկից։ Թեոփանեսը համառում էր, չէր զիջում, դրա համար էլ կայսրը որոշեց խաբել նրան ու պատժել նրա ազահոլթյունը։ Նա իր սպասավորներից մեկին Թեոֆանեսի մոտ ուղարկեց, խնդրելով իրեն պարտքով մեկ կենտինար ոսկի տա՝ մինչև Բյուզանդիոնից դրամ կբերվեր։ [Թեոփանեսը] երզվեց, թե ունեցածը ընդամենը երեսուն լիտր [ոսկի] է։ Կայսրը նրան հեռացրեց, մարդ ուղարկեց նրա գանձարանը ստուգելու, ուր գտնվեց երեսուներեք կենտինար ոսկի։ Դրանից նա վճարեց Թեոփանեսի աթոռակալութեան առաջին տարուց մինչև ներկա պահը ընկած ժամանակաշրջանի համար հոգևորականներին պարտք մնացած գումարը, իսկ մնացածն էլ բաժանեց աղքատներին, մետրոպոլիտին էլ եկեղեցուց վտարելով, արգելափակեց ինչ-որ կալվածքում։ Նա մետրոպոլիտ նշանակեց Պրոմեթևսին, որից [Թեոփանեսը] որոշման համաձայն պետք է ստանար իր ոռճիկը և մասնավոր կյանք վարեր։

14. Այն պատճառով, որ Աբազգիայի էքսուսիաստես Բագարատը<sup>444</sup> սաստիկ նեղում էր Իբերիայի<sup>445</sup> կատապան Իասիտեսին<sup>446</sup>, Հովհաննեսը բոլոր զորքերով<sup>447</sup> նրա մոտ է ուղարկում իր հղբոր, սխուլերի դոմեստիկոս Կոստանդինին, խոստանալով նրա հետ ուղարկել նաև Դալասսենոսին՝ որպես պատերազմա-



կան խորհրդատու և օգնական: Բայց այդ բանը նա չարեց, դրա համար դոմեստիկոսը ձեռնունայն ետ վերադարձավ:

15. Հովհաննեսը պետք է լուծողական դեղ առներ: Թագուհի Ջոենն իմանալով այդ մասին, իր ամենամտերիմ ներքինիներից մեկի՝ Սգուրիցես կոչվածի միջոցով բազում նվերներով կաշառում է բժշկին, խոստանալով բարձր պաշտոններ ու շատ դրամ, եթե դեղի մեջ թույն խառնի: Բժշկի մոտ ծառայող երեխան Հովհաննեսին տեղյակ պահեց խարդավանքը մասին: Դավադրությունը բացահայտվեց և բժիշկը իր հայրենիքը՝ Անտիոք աքսորվեց, թույնը պատրաստող պրոտոսպաթար Կոստանդին Մուկուպելեսը քաղաքից արտաքսվեց, իսկ թագուհին իր վրա մեծ կասկածներ հարուցեց:

16. Այս միջոցին, երբ Սիկիլիա ժամանեց պատրիկ Գեորգիոս Մանիակեսը, [կղզու]. իշխանները՝ հարազատ նղբայրները միմյանց հետ դաշինք կնքելով, աշխատում էին նրան կղզուց դուրս շարժել. այդ բանի համար նրանք Աֆրիկայից հիսուն հազարանոց օգնական զորք խնդրեցին: Երբ այդ օգնությունը տեղ հասավ, Ռեմատա կոչվող տեղում ուժեղ բախում տեղի ունեցավ, Մանիակեսը կարգեղոնացիներին գլխովին պարտության մատնեց: Զարդն այնպիսի ծավալ ստացավ, որ մոտիկից հարող դետը արյամբ հորդացավ: Դրանից հետո Մանիակեսը գրավեց 13 սիկիլիական քաղաք և կամաց-կամաց տիրացավ ողջ կղզուն<sup>448</sup>:

17. 6546 թվականին, ինդիկտիոնի 6-րդ տարին, խարդավանք տեղի ունեցավ Եղեսիա քաղաքի դեմ և քիչ մնաց գրավվեր, եթե աստված այն չփրկեր: [Քաղաքի] զորավար պրոտոսպաթար Վարադվաչե իբերացու<sup>449</sup> օրոք Եղեսիա ժամանեցին արաբների 12 իշխաններ: Նրանք 500 ձիավոր և 500 ուղտ ունեին, ուղտերի վրա բարձած հազար սնդուկ, բրոնց մեջ [թաքնըված] էին հազար ղինվոր<sup>450</sup>: [Իշխաններն] ասացին, թե կայսեր նվերներ են տանում: Նրանց նպատակը սնդուկները քաղաք մտցնելն էր և գիշերը ղինվորներին դուրս հանելով, քաղաքը գրավելը: Զորավարը [արաբ] իշխաններին սիրալիր ընդունեց, սեղան տվեց, իսկ ձիավորներին ու գումակը կարգադրեց դրսում մնան: Ողորմություն խնդրող մի ոմն հայ, լինելով այն տեղում, որտեղ սարակինոսներն էին գտնվում, լսեց սնդուկի մեջ գտնվող մեկի հարցը մի ուրիշին՝ թե որտե՞ղ են գտնվում (հայը արաբերեն դիտեր) և վազելով հայտնեց զորավարին:

Վերջինս իշխաններին թողնելով շարունակել ճաշը, ղինվորներով դուրս եկավ և ջարդելով սնդուկները, դտավ նրանց մեջ թաքնված [արաբ] ղինվորներին և բոլորին սրի քաշեց՝ ձիավորներով ու ուղտապաններով հանդերձ, ապա վերադարձավ քաղաք, իշխաններից տասնմեկին սպանեց, իսկ մեկին, նրանցից ամենամեծի ձեռքերը, ականջներն ու քիթը կտրելով, տուն ուղարկեց, կատարվածի բոլոր տանելու:

- 1038/ 18. 6547 թվականին, ինդիկտիոնի 7-րդ տարին, Հովհաննես-  
 1039 սը առավել ևս խորացնելով Դալասսենոսի դեմ տածած իր թշնամությունը, աքսորում է նրա եղբայր պատրիկ Թեոփիլակտոսին էլ, նրա մյուս եղբայր պատրիկ Ռոմանոսին, եղբորորդի Ադրիանոսին և նրա մնացած ազգականներին. նա ջանք էր թափում բնաջնջել [Դալասսենոսի] տոհմը: Ամեն տեսակի վատության ընդունակ մարդ լինելով, նա ապօրինության բազում ձևեր էր հորինում: Նա յուրաքանչյուր գյուղից, ըստ նրա որակի ու կարողության, բացի պետական հարկերից, որպես աերիկոն<sup>451</sup> պահանջեց մեկից՝ շորս, մյուսից՝ վեց, մինչև քսան դահեկան: Նաև սեփական շահի համար նա այլ խայտառակ եկամուտների էլ դիմեց, որոնց թվարկելն անգամ ամոթ է: Իսկ այսահարությունից տառապող կայսրը փրկություն չգտնելով, յուրաքանչյուր բանակաթեմում և կղզում գտնվող երեցներին երկուական դահեկան ուղարկեց, վանականներին՝ մեկական: Նա սկսեց նորածիններին մկրտել, տալով մեկական դահեկան և շորսական միլիարեսիա: Բայց դրանցից ոչ մեկն էլ իրեն չօգնեց: Հիվանդությունը գնալով ծանրանում էր, դրա վրա բարդվեց և ջրգողությունը: Այդ տարի անդադար երկրաշարժներ էլ եղան, սաստիկ անձրևներ տեղացին, մի քանի բանակաթեմերում մղձուկն էլ տարածվեց, այն սաստիճան, որ կենդանի մնացած մարդիկ ի վիճակի չէին վախճանվածներին թաղել:

- 1040 19. 6548 թ. փետրվար ամսի 2-ին, ինդիկտիոնի 8-րդ տարին, սարսափելի երկրաշարժ եղավ, տուժեցին գավառներ ու քաղաքներ, Զմյուռնիան ողբալի տեսարան էր ներկայացնում, նրա ամենագեղեցիկ շենքերը փոլ եկան ու փլատակների տակ բազում բնակիչներ սպանվեցին:

20. Կարբեդոնացիների [առաջնորդը] իրեն կարգի բերելով, հավաքեց նախկինից էլ շատ զինական ուժ և Սիկիլիա եկավ Մանիակեսին այնտեղից դուրս շարտելու: Նա բանակեց ցածրադիր ու լայնարձակ մի դաշտում (դաշտը կոչվում էր Դրագինե)



և պատերազմն սկսելու հարմար պահի էր սպասում: Մանիակե-  
սը լսելով այդ մասին, վերցրեց իր զինվորներին ու դնաց նրան  
ընդառաջ, նախապես կարգադրելով կայսեր փեսա պատրիկ  
Ստեփանոսին, որն, ինչպես ասել ենք, ծովակալն էր, ուշադիր  
հսկել ծովափը, որպեսզի եթե հանկարծ պատերազմ լինի և կար-  
քեղոնացիների [իշխանը] պարտութուն կրի, չկարողանա ան-  
նըկատ փախուստի դիմել և վերադառնալ իր երկիրը: [Մանիա-  
կեսն] ահա կովի բռնվելով, [կարքեղոնացուն] գլխովին պար-  
տության է մատնում: Աֆրիկացիներից սպանվեց 50 հազար հո-  
գուց ավելի բազմութուն: Նրանց առաջնորդը վտանգից աղատ-  
վելով գալիս է ծովափ, մտնում արագընթաց մի նավի մեջ ու  
Ստեփանոսի հսկողութունից խուսափելով, փախչում իր երկիրը:  
Մանիակեսը, իմանալով այդ մասին, շատ զայրացավ, հանդի-  
պելով Ստեփանոսին նրա վրա սարսափելի լուտանքներ թափեց,  
սիրոմաստեսը բարձրացնելով գլխին բազում հարվածներ իջեց-  
րեց, նրան անվանեց անհոգ, անարի և կայսեր գործերի դավա-  
ճան: [Ստեփանոսը] չկարողանալով տանել գանահարութունն ու  
անարգանքը, շտապ նամակ է գրում Օրֆանոտոֆոսին հաղոր-  
դելով, թե Մանիակեսը կայսեր դեմ ապստամբութուն է ծրագ-  
րում: Մանիակեսն իսկույն շղթայակապ մայրաքաղաք է բեր-  
վում և պատրիկ Վասիլ Թեոդորականի հետ բանտ նետվում, իսկ  
ողջ իշխանութունը տրվում է Ստեփանոսին, որի մոտ ուղարկ-  
վեց և ոմն ներքինի պրեպոզիտոս Վասիլ Պեդիադիտես<sup>452</sup>, Ահա  
սրանք շուտով ամեն ինչ քարուքանդ արեցին, [իրենց] աղա-  
հությամբ, վախկոտությամբ ու անհոգությամբ դավաճանորեն  
լքեցին Սիկիլիան: Մանիակեսը գրավելով կղզու քաղաքները,  
նրա մեջ միջնաբերդեր էր կառուցում, կարող կայազորներ հաս-  
տատում, որպեսզի տեղացիները չկարողանան դավով վերստին  
տիրանալ քաղաքներին: Երբ նրան, ինչպես ասվեց, շղթայակապ  
Բյուզանդիոն բերեցին, տեղացիները կառավարիչների թերացու-  
մից ու անհոգութունից օգտվելով, կարքեղոնացիներից զինա-  
կան ուժ ստանալով, հարձակվեցին քաղաքների վրա, գերեցին  
պահապան զինվորներին, հիմնահատակ ավերեցին միջնաբերդերը  
և վերագրավեցին բոլոր քաղաքները՝ բացառյալ Մեսենեի, որի  
պահպանութունը վիճակված էր Արմենիականների տագմայի զո-  
րահրամանատար պրոտոսպաթար Կատակալոնին, մականունը  
Կեկավմենոս<sup>453</sup>. նա իր հետ ուներ երեքհարյուր հեծյալ ու հիսուն  
հետևակ: Կղզու բնակիչները, ջանք թափելով, որպեսզի կղզում

որչացած հոռմեական զինական ուժի հետքն անգամ չմնա, հավաքելով զենք կրելու ընդունակ ամեն մեկին, և ունենալով կարքերոնացիների մեծաթիվ դաշնակից զորք, զնացին ու պաշարեցին Մեսենե քաղաքը: [Կատակալոնը] երեք օր փակ պահեց դարբասները, ոչ ոքի չթողեց խրամից այն կողմ գնալ, ձևացրեց թե վախենում է, որի հետևանքով սարակինոսները աներկյուղ ցրիվ եկան, օր ու գիշեր գինարբուքով, սրինգ ու թմբուկով էին տարված, հավատացած լինելով, թե վաղն իսկ քաղաքը գրավվելու է: Չորեքշաբթի օրը, երբ մեր սովորույթյան համաձայն նշում ենք մեսե Պենտեկոստեն<sup>454</sup>, Կեկավմենոսը նկատելով սարակինոսների անհոգութունն ու անփութությունը, այն, որ նրանք շատ հանգիստ են իրենց զգում՝ պարսպից ներս գտնվողներին չեն վախենում, գոտեպնդեց իր զինվորներին, հրամայեց քահանաներին հաղորդություն տալ և ինքն էլ բոլորի հետ հաղորդվելով, ճաշի ժամանակ բաց արեց քաղաքի դարբասները և ուժեղ թափով հարձակվեց հարբած, ուղեղները մթազնված հակառակորդների վրա: Առաջինն ինքը՝ [Կեկավմենոսը] իր զինվորներով ձի նստած եկավ կղզու կառավարիչ Աբուլաֆարի վրանը: Աբուլաֆարը հարբած էր ու երերվում էր, նրան տեղն ու տեղը սպանում են, վրանն էլ թրատում: Սարակինոսներից ուրիշներն էլ հարբածությունից երերվող, խմբերով կոտորվում էին, հարձակման անակնկալության պատճառով նրանք չկարողացան զենքի դիմել: Ճամբարած ողջ զորքը դիմեց փախուստի, սարակինոսները տրորվելով, սպանում էին միմյանց, դաշտը, մերձակա կիրճերն ու գետերը դիակներով ծածկվեցին: Եվ այդքան բյուր մարդկանցից շատ քչերը կարողացան հասնել Պանորմոս ու փրկվել: Գրավվեց ոսկով, արծաթով, մարգարիտներով, թանկագին քարերով լի ողջ ճամբարը: Պատմում են, որ զինվորներն այդ բոլորը մեղիմներով բաժանեցին իրենց մեջ: Ահա այսպես կարճ ժամանակում ողջ Սիկիլիան գրավվեց Մանիակեսի կողմից, բայց շուտով զորավարների անփութության ու վատույթյան պատճառով դարձյալ սարակինոսների ձեռքն անցավ: Մնաց միայն Մեսենեն, թե ինչպես, մենք ասել ենք, իսկ Ստեփանոսն ու Պեդիադիտեսը փախան Լոնգիբարդիա: Այսպիսին էր վիճակը Սիկիլիայում:

21. Իսկ Միքայել կայսրը երկար ժամանակ Թեսալոնիկեում էր մնում<sup>455</sup> հիվանդությունից ապաքինում ստանալու ակնկալությամբ, պաղատելով մեծահաղթ վկա Դեմետրիոսի գերեզմանին:



Պետական գործերին նա բացարձակապես ձեռք չէր տալիս, կարծես դրա կարիքն ամենևին չկար և երկրի կառավարումն ու հասարակաց գործերը Հովհաննեսի ձեռքում էին գտնվում: Նա կանգ չառավ հպատակ ժողովրդին կեղեքելու ու վնասելու համար ոչ մի խայտառակ ու անօրեն միջոցի առաջ, որոնցից յուրաքանչյուրի մասին պատմելը հերակլյան սխրանք է: Այդ դաժան բռնակալությունից բոլոր մարդիկ երկար տառապեցին, աստծուց փրկություն աղերսելով: Իսկ աստված շարունակ երկիրն էր ցնցում, աշխարհին վախ ու սարսափ էր պատել, երկրնքում գիսավոր աստղեր էին հայտնվում, ուժեղ քամիներ փչում ու տեղատարափ անձրևներ տեղում, իսկ երկրի մեջ՝ ցնցումներ ու սասանում: Իմ կարծիքով այդ բոլորը կանխագուշակում էին բռնակալների աննախադեպ կործանումը: 6548 թ. մայիս ամսին, ինդիկտիոնի 8-րդ տարին, կայսեր քույր Մարիան՝ կեսարի մայրը, Եփեսոս գնաց երկրպագելու սիրելի [Հովհան ավետարանչին]: Ճանապարհին նա տեղեկացավ երկրում կատարվող բազում անօրինությունների մասին և, վերադառնալով Բյուզանդիոն, ամեն ինչ պատմեց իր նղբայր Հովհաննեսին, աղաչեց այդ վատառողջ վիճակի մի փոքր առաջն առնել: [Հովհաննեսը] ծածաղելով նրան ճամփու դրեց, ասելով, թե նա կնոջ պես է դատում, նա չգիտե, թե հոռմայեցիների պետությունն ինչի կարիքն է զգում: Այն պատճառով, որ, ինչպես ասացինք, կայսրը Թեսաղոնիկեում էր գտնվում, Հովհաննեսը տասը կենտինար ոսկի ուղարկեց, բայց նավը, ալեկոծության հանդիպելով, շարտվեց Իլլիրիայի ափերին ու ջարդուփշուր եղավ: Ոսկին ձեռք գցեց սերբերի իշխան Ստեփան-Վոյխսլավը<sup>456</sup>, որ մի փոքր առաջ մայրաքաղաքից փախուստի էր դիմել և տիրացել սերբերի երկրին, այնտեղից վճարելով Թեոփիլոս էրոտիկոսին<sup>457</sup>: Իսկ Հովհաննեսը պաշտոնները վաճառքի առարկա դարձնելով, բոլորի ձեռքում անօրինության սանձեր տվեց և երկիրը բյուր փորձանքներով ողողեց. դատավորները<sup>458</sup> աներկյուղ հարկադրում էին նահանգների բնակիչներին: Ոչ ոք չէր մտածում այդ վիճակին վերջ տալու մասին:

22. Կայսրը Թեսաղոնիկեում տեղեկանալով ոսկու կորըստյան մասին, Ստեփանին նամակ գրեց, կոչ անելով վերադարձնել իրեն, կայսրին, պատկանածը և պատերազմի առիթ չտալ: [Ստեփանը] ոչինչ չվերադարձրեց, դրա սլատճառով կայսրը նրա դեմ զորք ուղարկեց ներքինի Դեոդոիոս Պրովատասի գլխավորու-

1040

թյամբ: Նա տեղ հասնելով, անխոհեմաբար ընկավ վատ տեղանքների, կիրճերի ու դժվարանցանելի վայրերի մեջ, կորցրեց ողջ զորքը, իսկ ինքը մի կերպ փրկվեց:

1040

23. Այդ տարին Բուլղարիայում ապստամբություն ծագեց հետևյալ կերպ. Պետրոս անունով մի բուլղար, մականունը Դելյան<sup>459</sup>, մի բյուզանդացու ստրուկը, մայրաքաղաքից փախուստի դիմելով, թափառում էր Բուլղարիայով մեկ: Նա ի վերջո հասավ Մոբավոն և Բելգրադ (սրանք Պաննոնիայի բերդեր են, Իստրոսի այն ափին գտնվող, Թուրքիայի կրալին<sup>460</sup> հարևան): Իրեն հայտարարելով Սամուիլի որդի Ռոմանոսի որդին, նա ոտքի հանեց բուլղար ժողովրդին, որը մի փոքր առաջ ստրկութան լուծն էր դրել իր վզին, բայց ազատութան մեծ ցանկություն ուներ: Բուլղարները հավատալով նրա խոսքերին, Բուլղարիայի թագավոր հռչակեցին և այնտեղից դուրս գալով, նայսոսի և Բուլղարիայի մայրաքաղաք Սկոպլիեի վրայով, շարժվեցին առաջ, սրան [թագավոր] հայտարարելով ու ներբողելով, իսկ հանդիպած հռոմայեցուն էլ անխնա ու գազանաբար սպանելով: Դյուրախիոնի զորավար Վասիլ Սյունադենոսը, իմանալով այդ մասին, վերցրեց տեղական ուժերը և շտապեց ընդդիմակայելու Դելյանին, նախքան փորձանքի տարածվելն ու հրդեհի բռնկվելը: Հասնելով Դեբրե կոչվող [վայրը], նա ինչ որ հարցում վեճի բռնվեց Միքայել Դերմոկայիտեսի հյուպոստրատեզոսներից<sup>461</sup> մեկի հետ, դրա համար էլ առիթ տվեց զրպարտվելու կայսեր, թե խռովություն է ծրագրում: [Վասիլ Սյունադենոսը] իսկույն պաշտոնանկ է արվում և Թեսաղոնիկե բերվելով, բանտ նետվում, իսկ նրա փոխարեն զորավար է նշանակվում Դերմոկայիտեսը, որը, սակայն, իշխանությունը վարելով անփորձ ու ապաշնորհ, կարճ ժամանակամիջոցում ամեն ինչ փչացրեց, նրա զինվորները ազահուսթյան ու անօրինության զոհ էին դառնում, նրանց ձիերը, զենքերը և ինչ-որ արժեքավոր բան ունեին, խլվում էր իրենցից, որի պատճառով նրանք ապստամբեցին զորավարի դեմ: Վերջինս, զգալով, որ իր դեմ դավադրություն է նյութվում, գիշերով ծածուկ փախավ: Իսկ [զինվորները], վախենալով կայսեր հաշվեհարդարից, որոշում են ապստամբել և իրենց հետ եղած զինվորներից մեկին, անունը Տիխոմիր, քաջությամբ ու խոհեմությամբ փորձված մի մարդու, Բուլղարիայի թագավոր հռչակում: Այսպիսով բուլղարների երկու ապստամբություն ծագեց, մեկի կողմնակիցները թագավոր էին ճանաչում Դելյանին.



մյուսի՝ Տիխոմիրին: Դեկյանը բարեկամական նամակ դրեց Տիխոմիրին, կոչ արեց դաշնակցել և համոզեց իր մոտ գալ: Երբ բուլղարների երկու խմբերը միացան իրար, Դեկյանը հրավիրեց բոլորին և դիմեց նրանց հետևյալ կոչով. եթե նրանք հավատացած են, որ ինքը Սամուիլից է սերում և համամիտ են, որ ինքը լինի նրանց թագավորը, վերացնեն Տիխոմիրին, իսկ եթե համամիտ չեն այդ բանին, ապա իրեն վերացնեն և ընդունեն Տիխոմիրի իշխանությունը: Նա ասաց, թե «մի արտը շի կարող երկու թռչուն կերակրել, մի երկիր բարօրություն չի հասնի, եթե այն կառավարվի երկու առաջնորդների կողմից»: Այդ խոսքերի վրա մեծ աղմուկ բարձրացավ, բոլորն ասացին, թե միայն նրան, [Դեկյանին] են ուզում ունենալ միահեծան առաջնորդ: Այդպիսի վճիռ արձակելուն հետ միասին նրանք քարեր առանու քարկոծելով սպանեցին թշվառ Տիխոմիրին, որ երազելով իշխել, իշխանություն հետ կյանքն էլ կորցրեց: Ողջ իշխանությունն անցավ Դեկյանի ձեռքը, որը, վերցնելով համայն ուժերը, շարժվեց դեպի Թեսաղոնիկե՝ կայսեր դեմ: Վերջինս, իմանալով այդ մասին, անկազմակերպ հեռացավ դեպի Բյուզանդիոն, տեղում թողնելով ողջ գույքը, վրանը, եղած ոսկին, արծաթը, կերպասները: Կայսեր մտերիմ Մանուիլ Իվացեսը հրաման ստացավ առնել այդ բոլորը և իրեն հետևել: Բայց նա, վերցնելով դա, ոմն կիտոնիտի՝ ներքինի սենեկապաններից մեկի հետ անցավ Դեկյանի կողմը:

24. Այդ տարի երաշտ էլ եղավ, այն աստիճան, որ ցամաքեցին հորդառատ աղբյուրներն ու մշտահոս գետերը: Օգոստոս ամսի 6-ին հրդեհ էլ ծագեց էքսարտեսիսում և այնտեղ եղած բոլոր տրիերները իրենց հանդերձանքով հրո ճարակ դարձան:

25. Իսկ Դեկյանը, ինչպես ասացինք, մեջտեղից վերացնելով Տիխոմիրին, և իրերի տերը դառնալով, ամբողջ եռանդով լծվեց գործի: Նախ և առաջ նա մի զորամաս ուղարկեց Կավխան<sup>462</sup> կոչվածի գլխավորությամբ և գրավեց Դյուրախիոնը: Մի այլ զորաբանակ էլ Անթիմոսի զորավարությամբ Հելլադա<sup>463</sup> ուղարկեց: Այդ զորաբանակին ընդառաջ ելավ և Թեբեում կովի բռնվեց Ալլակասեսը, բայց պարտություն կրեց: Թեբեցիներից շատ շատերը սպանվեցին: Այն ժամանակ Նիկոպոլսի բանակաթեմն էլ<sup>464</sup>, բացառյալ Նավպակտոսի, բուլղարների կողմն անցավ, թե ինչու՞, ես կասեմ: Մի ոմն բյուզանդացի, անունը Հովհաննես, մականունը Կուցոմիտես, որպես պրակտոր<sup>465</sup> ուղարկվել էր

այնտեղ պետական հարկերը գանձելու: Բայց կեղեքելով տեղացիներին նա և՛ իր կործանման պատճառ դարձավ, և՛ նիկոպոլսեցիների ապստամբության, քանզի չկարողանալով դիմանալ նրա ագահությանը, ապստամբում են, [Կուցոմիտեսին] կտոր կտոր անում և հռոմայեցիների կայսեր վատաբանելով, անցնում բուլղարների կողմը: Նրանք հռոմեական լուծը թոթափեցին և Դելյանի կողմն անցան ոչ թե նրան սիրելու պատճառով, այլ Օրֆանոտրոֆոսի ագահության և հարկերի ծանրության: Վասիլ կայսրը, երբ հպատակեցրեց բուլղարներին, բացարձակապես չուզեց նորամուծություններ կատարել, ոչ էլ որևէ փոփոխությունների դիմել, նա հրամայեց կառավարել, ամեն ինչ թողնել այնպես, ինչպես Սամուիլն էր սահմանել՝ մեկ զույգ եղի տեր բուլղարը պետությանը պետք է վճարեր մեկ մոզ ցորեն, այդքան կորեկ և մեկ փարչ գինի, բայց Օրֆանոտրոֆոսը բնահարկի փոխարեն դրամ էր պահանջում: Տեղացիներն ահա այդ բանը չկարողանալով հանգիստ տանել, Դելյանի հանդես գալը հարմար առիթ համարեցին, թոթափեցին հռոմեական գերիշխանությունը և վերադարձան նախկին վիճակին:

26. Այս ժամանակները կայսեր դեմ խռովություն նյութվեց, որը զլխավորեցին Կերուլարիոս կոչվող Միքայելը և Հովհաննես Մակրեմբոլիտեսը, ինչպես և բազում այլ քաղաքացիներ, որոնց ունեցվածքը զրավվեց, իսկ նրանք էլ աբսորվեցին: Մի այլ խռովություն էլ տեղի ունեցավ Մեսանակտոնում՝ ընդդեմ մեծ դոմեստիկոս Կուստանդինի: Երբ այդ բանի մասին Կոստանդինն տեղյակ պահեցին, Միքայել Գուվրասը, Թեոդոսիոս Մեսանյուկտեսը և տազմանների բազում հրամանատարներ կուրացվեցին, իսկ պատրիկ Գրիգոր Տարոնացուն, որ համարվում էր խռովության կազմակերպիչն ու ղեկավարը, Կոստանդինը ամբողջությամբ խցկեց եղան մորթու մեջ, թողեց միայն շնչելու տեղ և ուղարկեց Օրֆանոտրոֆոսին:

27. 6549 թվականի սեպտեմբեր ամսին, ինդիկտիոնի 9-րդ տարին, Թեոդոսուպոլսի զորավար պատրիկ Ալուսիանը<sup>466</sup>, Ահարոնի երկրորդ որդին, հանկարծակի քաղաքից փախավ ու հարեց Դելյանին: Պատճառը հետևյալն էր. նա Թեոդոսուպոլսի զորավարն էր և ամբաստանվեց անօրինություններ գործելու մեջ, իսկ Հովհաննեսն էլ նախքան նրան ներկայացված ամբաստանություններ քննվելը, նրանից 50 լիտր ոսկի պահանջեց, նրա ձևաբից խլեց նաև իր կնոջ պատկանող և հարսիանոն [բանակաթեմում]



գտնվող շատ գեղեցիկ մի գյուղ: Այգ գյուղը ետ ստանալու համար [Ալուսիանը] բաղում անգամ դիմեց կայսեր, բայց ապարդյուն: Ահա ամեն ինչից հույսը կտրած, նա հայկական համադրեստ հագավ<sup>467</sup> և որպես Վասիլ Թեոդորականի սպասավոր, ճանապարհ ընկավ իբրև թե դեպի կայսրը՝ Թեսաղոնիկե, բայց բոլորից ծածուկ փախավ ու ապաստանեց Օստրովում, որտեղ ամբողջ զորքով բանակել էր Դելյանը: Դելյանը նրան սիրալիք ընդունեց (նա վախենում էր, որ բուլղարները նրան կհարեն, որպես թագավորական արյունի տեր մարդու) և, որպես թագավորության գործակցի, նրան քառասուն հազարանոց զորք տալով, հրամայեց գնալ, պաշարել ու գրավել Թեսաղոնիկեն: Այն ժամանակ Թեսաղոնիկե քաղաքի կառավարիչն էր կայսեր եղբորորդի պատրիկ Կոստանդինը: [Ալուսիանը] քաղաքը խրամով շրջապատեց և աշարջորեն ձեռնամուխ եղավ պաշարման: Նա վեց օր շարունակ գործի գրեց քաղաքավեր մեքենաներն ու բաբանները, բայց ամեն տեղից դիմադրության հանդիպեց և բացարձակապես հուսաբեկված, փորձեց հաջողության հասնել երկարատև պաշարմամբ: Օրերից մի օր [քաղաքի] բնակիչներն եկան մեծ վկա Դեմետրիոսի գերեզմանը, ամբողջ գիշերը հսկեցին և սուրբ գերեզմանից բխող մեռնող օծվելով, մեկ թափով բացեցին դարբասները և դուրս եկան բուլղարների դեմ: Թեսաղոնիկեցիներին հետ էր քաջաց գունդը<sup>468</sup>: Դուրս գալով, նրանք անակնկալից բուլղարներին սարսափահար արեցին և փախուստի մատնեցին: Վերջիններս շուգեցին անգամ պաշտպանվել կամ կռվել: Հռոմեական բանակին առաջնորդում էր և նրա ուղին հարթում վկա [Դեմետրիոսը], այդ բանը երդումներով հաստատեցին գերի ընկած բուլղարները: Նրանք ասում էին, թե հռոմեական զորաշարքի առջևից գնացող մի ձիավոր պատանի տեսան, որից հուր էր ցայտում և հրո ճարակ դարձնում հակառակորդներին: 15 հազար հոգուց ավելին սպանվեց, դրանցից ոչ պակասը գերի ընկավ, մնացածներն էլ խայտառակ կերպով Ալուսիանի հետ ապաստան գտան Դելյանի մոտ:

28. Այդ տարի, հունիսի 10-ին, ինդիկտիոնի 9-րդ տարին, օրվա 12-րդ ժամին երկրաշարժ եղավ:

29. Երբ պարտությունից հետո Դելյանն ու Ալուսիանը միացան իրար, սկսեցին մեկը մյուսի վրա կասկածով նայել: [Ալուսիանը] ամոթ էր զգում [իր կրած] պարտության համար, իսկ [Դելյանն] էլ կասկածում էր, որ նա դավաճանել է, որով եր-

կուսն էլ իրար նկատմամբ դավ էին նյութում և հարմար առիթի սպասում: Ալուսիանն իր մտերիմներից ոմանց հետ սեղան տրվեց և ճաշի հրավիրեց Դելյանին, որին, երբ նա արդեն խմած էր ու հարբած, բռնեց ու կուրացրեց. բուլղարները կատարվածի մասին շիմացան իսկ, որից հետո [Ալուսիանը] փախավ Մոսինուպոլիս՝ կայսեր մոտ: Կայսրը նրան Բյուզանդիոն ուղարկեց, Օրֆանոտրոֆոսի մոտ, շնորհելով մագիստրոսի բարձր պատվաստիճան, իսկ ինքն էլ դուրս գալով Մոսինուպոլիսից, գնաց Թեսաղոնիկե, այնտեղից էլ մտավ Բուլղարիա և Դելյանին բռնելով ուղարկեց Թեսաղոնիկե: Ինքն էլ ավելի խորացավ երկրում: Մանուիլ Իվացեսը Պրիլպոսում փայտյա մի պատնեշ էր պատրաստել, մտածելով կասեցնել կայսերական բանակի առաջխաղացումը և ներքին [նահանգների] գրավումը: Բայց կայսրը, լինելով տեղում, շատ հեշտությամբ քանդեց փայտե պարիսպը, ցիրուցան արեց բուլղարների զորքը, Իվացեսին էլ գերի վերցրեց: Բուլղարիայի բոլոր հարցերը կարգավորելով, նա բանակաթեմերում զորավարներ հաստատեց, որից հետո մտավ մայրաքաղաք, իր հետ տանելով Դելյանին և Իվացեսին: Երբ հիվանդությունը կայսեր կատարելապես հյուժեց և նրան փրկության հույս չմնաց, նա վանական խուզվեց վանական Կոսմաս Ճնճղուկի<sup>469</sup> կողմից, որը մշտապես իր հետ էր լինում և անհրաժեշտ խրատներ տա-

10—XII լիս: Եվ ահա 6550 թվականի դեկտեմբերի տասին, ինդիկտիոնի —1041 10-րդ տարին նա ապաշխարությամբ ու [մեղքերի] խոստովանությամբ (նա ողբում էր Ռոմանոս կայսեր հանդեպ իր գործած մեղքը) մեռավ, թագավորելով 7 տարի և 8 ամիս: Նա ընդհանուր առմամբ բարի ու լավ մարդ էր, բարեպաշտ, եթե չհաշվենք Ռոմանոս կայսեր հանդեպ գործած նրա մեղքը: Շատերը սակայն այդ մեղքն էլ Օրֆանոտրոֆոսի վրա են բարդում<sup>470</sup>

## Մ Ի Ք Ա Յ Ե Լ Կ Ա Լ Ա Փ Ա Տ Ե Ս

[10 դեկտեմբեր 1041—21 ապրիլ 1042 թթ.]

1. Միքայելն ահա այսպիսի վախճան ունեցավ, իսկ ողջ իշխանությունն անցավ Ժառանգի՝ թագուհի Զոեի ձեռքը: Նա մեծ եռանդով լծվեց գործի, որպես աջակից ունենալով հոր ներքինին, որոնց մասին նախապես բազմիցս խոսվել է: Բայց նա առաջվա պես այլևս չէր մտածում: Նա հայացք գցելով թագավո-



րուծյան հսկա շափերի վրա, հասկացավ, որ ինքը երբեք էլ չի կարողանա մենակ ինչպես որ պետքն է վարել հասարակաց գործերը, գտավ, որ օգտաբեր չէ երկրի գլխից կայսեր բացակայությունը և անհրաժեշտ համարեց կայսր առաջ քաշել մեկին, ով ի վիճակի կլինի դժվարին պայմաններում պետության գործերը վարելու, և ամբողջ երեք օր այդ մասին մտածելուց հետո [վախճանված] կայսեր համանուն եղբորորդուն, Սիկիլիայի գործերը քարուքանդ անող Ստեփանոսի որդուն, որը կեսար էր և գործունյա ու եռանդուն մարդ համարվում, որդեգրեց ու հուշակեց հոռմայեցիների կայսր, կայսերական թագը ղնելով գլխին, կանխավ նրանից սարսափելի երդումներով հավաստիացում ստանալով, թե իրեն ողջ կյանքում պետք է վերաբերվի որպես տիրուհու, թագուհու և մոր, որ ինքը, Ձոեն, պիտի գործի ինչպես որ ցանկանա: [Ձոեն] նախքան այդ հեռացրել և Մոնոբատների վանքն էր աքսորել Օրֆանոտրոֆոսին, պաշտոնանկ արել սխուլերի դոմեստիկոս Կոստանդնին և արգելափակել նրան Օպսիկիոն [բանակաթեմում] գտնվող նրա կալվածներում, նույն ձևով նաև պրոտովեստիարիոս Գեորգիոսին, որին ուղարկել էր Պափլագոնիայում գտնվող նրա կալվածները: Այն պահին, երբ Միքայելի գլխին թագ էին ղնում, նրա աչքերը սևացան, նա գլխապտույտ ունեցավ ու քիչ մնաց ընկներ. անուշահոտություններով, օծանելիքներով ու անուշաբույր այլ բաներով հագիվ ուշքի բերեցին նրան: Նրա թագավորության բոլոր շորս ամիսների ընթացքում երկիրը ցնցվում էր: Բայց և այնպես, թագադրվելով ձեռամբ պատրիարքի և կայսր դառնալով, սա սկսեց սիրաշահել սենատը՝ պատիվներ ու պաշտոններ բաժանելով, իսկ ժողովրդին էլ՝ ընծաներ: Նա իր տիրուհուն խնդրեց և աքսորից ետ կանչեց դոմեստիկոս Կոստանդնին, որին շնորհեց նոբելիսսիմոսի<sup>471</sup> պատվաստիճանը և իր մոտ էր պահում: Չնայած իրեն թվում էր, թե ամուր է կանգնած, բայց հանկարծակի ընկավ, քանզի նա ականջ դրեց Օրֆանոտրոֆոսի նամակներին ու գոմեստիկոսի հաճախակի խորհուրդներին՝ չհավատալ տիրուհուն, ավելին՝ զգուշ լինել նրանից, որպեսզի իր գլխին էլ չգա այն փորձանքը, ինչ իր հորեղբոր՝ Միքայել կայսեր, նրանից առաջ էլ՝ Ռոմանոսի: Նրանք, ինչպես ասում են, կախարդեցին նրան, խորհուրդ տվեցին, եթե հնարավոր է, [Ձոեին] հրապարակից վերացնել, շտապել կանխելու նրան: Նրանք անվերջ նույն բանն էին նրա գլուխը թխմում և կարողացան համոզել դավ նյութել նրա դեմ:

Նա նպատակահարմար համարեց նախապես փորձել մայրաքաղաքի բնակիչների տրամադրությունները, իմանալ նրանց կարծիքն իր մասին և եթե տեսնի, որ իր նկատմամբ իսկական բակամուծություն են տածում, այդ դեպքում միայն ձեռնարկել իրականացնելու ծրագիրը, հակառակ դեպքում հանգիստ մնալ: Սուրբ Զատիկին հաջորդող կիրակի օրը նա սուրբ Առաքելոց տաճարում<sup>472</sup> համաժողովրդական թափոր հայտարարեց, գտնելով, որ նրա ընթացքում հնարավոր կլինի որոշել քաղաքացիների տրամադրությունները: Նա թագը գլխին, [սենատի] անդամների հետ գնաց [սուրբ Առաքելոց տաճարը]: Քաղաքի ողջ բնակչությունը հավաքվել էր դիտելու, իսկ գլխավոր պաղոտայի բնակիչները [պատուհաններից] կախել էին ոսկե և արծաթե սպասք, սփռոցներ և այլ ոսկեհյուս կերպասներ: Նրանք այնպես բարձրաձայն կեցցեցներ էին աղաղակում, կարծես եթե զա հնարավոր լիներ, իրենց հոգին էլ կդատարկեին: Այդ ամենը թշվառականին թյուրիմացություն մեջ գցեցին, նա կարծեց, թե այդ բոլորը իր նկատմամբ տածվող սիրո արտահայտություն է և վերադառնալով մեծ պալատը, հայտնեց պատրիարքին գնալ իր Ստենոնի վանքը<sup>473</sup>, հաջորդ օրն իրեն ընդունելու համար: Նրան նա տվեց նաև չորս լիտր ոսկի իբրև թե իր ընդունելության [ծախսերի] համար: Իսկ դիշերը նա թագուհուն գահընկեց արեց և արգելափակեց Իշխանաց կղզում, հրամայելով տանողներին խուզել նրա մազերը և դրանք իրեն բերել: Գնացողներն հրամանն ի կատար ածեցին, իսկ [կայսրը] արշալույսին ուղերձ<sup>474</sup> գրեց, տվեց քաղաքի էպարքոսին, հրամայելով նրան այն ընթերցել քաղաքացի-  
 19—IV ներին Կոստանդին Մեծի հրապարակում: Դիմումի մեջ ասված  
 —1042 էր, թե «Զոեն չարամտաբար էր տրամադրված իմ թագավորությանը, դրա համար իմ կողմից նա աքսորվեց<sup>475</sup>: Քանի որ նրան համախոհ էր նաև Ալեքսիոսը, այդ իսկ պատճառով ահա նա էլ եկեղեցուց վճռվեց: Իսկ դուք, իմ ժողովուրդ, եթե իմ նկատմամբ այդպես բարյացակամ լինեք, ապա կարժանանաք մեծ պատիվների ու բարիքների, անհոգ ու անամպ կյանք կունենաք»: Երբ էպարքոսը կարդաց դիմումը ժողովրդին, մի ձայն լսվեց, բայց ձայն տվողին չգտան, թե «մենք խաչակոխ կալաֆատ<sup>476</sup> կայսր չենք ուզում, մենք ուզում ենք իսկական թագաժառանգ Զոեին, մեր մորը»: Իսկույն, ժողովուրդը միահամուռ կերպով գոչեց. «Փորփրվեն կալաֆատի ոսկորները»: Ամեն մեկը քարեր առած ու աթոռներ, պատահած փայտերը, քիչ էր մնացել էպար-



քոսին սպանեին (նա պատրիկ Անաստասիոսն էր, որ դեռ Զոեի հոր մոտ էր ծառայել)։ Նա փախուստի դիմեց և այդպես գլուխը փրկեց։ Քաղաքացիները շտապեցին ՄԼԾ եկեղեցին. պատրիարքն էլ հաջողացրել էր վերադառնալ, նա վատաբանում էր կայսեր և պահանջում թագուհուն ետ բերել։ Շտապեցին նաև [թագուհու] հոր բոլոր ներքինիները, պատրիկ Կոստանդին Կավասիլասը, սենատի մնացած ողջ բաղմուխները, որոնք միահամուռ կերպով Պետրիոնից Մեծ եկեղեցի բերեցին Թեոդորային, թագավորական ծիրանի հագցրին և իր քրոջ՝ Զոեի հետ միասին կայսրուհի հռչակեցին։ Այնուհետև հարձակվելով պալատի վրա, ջանում էին Միքայելին պալատից դուրս հանել։ [Միքայելը], ժողովրդի ցասումից ու զայրույթից սարսափած, Զոեին պալատ բերել տվեց և հանելով նրա վանականի սքեմը, թագավորական հանդերձներ հագցրեց։ Բայց երբ փորձեց ձիարշավարանի իր աթոռից խոսքով դիմել ժողովրդին, ասել, թե թագուհին բերվել է, թե ամեն ինչ լավ է՝ ըստ ժողովրդի ցանկություն, ժողովուրդը թույլ չտվեց նրան, ամեն կողմից նրա գլխին լուտանքներ էին թափվում, ցածից նրա վրա քարեր էին շարտում և նետեր արձակում։ Հուսաբեկ եղած նա որոշեց գնալ Ստուդիոնի վանքը և վանական դառնալ։ Բայց դոմեստիկոսը շթույլատրեց, ասաց, թե պետք չէ այդպես հեշտություն մը լքել իշխանությունն ու հեռանալ, այլ պետք է քաջաբար դիմադրել և հաղթանակ տանել, կամ էլ արիաբար ու արքայավայել զոհվել՝ ինչպես վայել է թագավորին։ Այդ կարծիքն ընդունվեց և նա, ինչքան որ հնարավորություն էին տալիս պայմանները, զինելով պալատում գտնվող բոլորին, նորելիսսսիմոսն էլ իր բոլոր զինվորներին իր տնից ուղարկեց (հենց այդ օրերին Սիկիլիայից ժամանել էր նաև ղորավար Կատակալոն Կեկավմենոսը, որ Մեսենեի մասին ավետիս էր բերել) քաջաբար գործի լծվեց։ Այն պատճառով, որ դեմոսը երեք մասի էր բաժանվել, մեկը հարձակման էր անցել ձիարշավարանում, մյուսը՝ էքսկուբիտայում<sup>477</sup>, իսկ երրորդն էլ՝ ցուկանիստերիոնում<sup>478</sup>, կայսեր կողմնակիցներն էլ ահա իրենց ուժերը երեք մասի բաժանելով, համառորեն պաշտպանվում էին։ Տեղի ունեցավ քաղաքացիների մեծ կոտորած, քանզի նրանք անզեն լինելով, սպառազինվածների դեմ էին փորձում կռվել փայտերով, քարերով և պատահած առարկաներով։ Պատմում են, թե այդ օրը (դա անտիպասքայի<sup>479</sup> երեքշաբթի օրն էր) կոտորվեց շուրջ երեք հազար հոգի։ Բայց ի վերջո թվական տեսակետից գերա-

կշիռ քաղաքացիները կայսեր կողմնակիցների նկատմամբ առավելության հասնելով, ջարդեցին պալատի դարբասները, ներս մտան ու հափշտակեցին սեկրետներում<sup>480</sup> գտնվող ոսկին և մնացած պատահած իրերը, պատառ-պատառ արեցին պետական հարկացուցակները, ջանացին ձերբակալել կայսեր: Վերջինս, երբ համոզվեց, որ պարտութուն է կրում, Ձոռին պալատում թողնելով, նոբելիսսիմոսի և իր շատ մտերիմներից մի քանիսի հետ շորեքշաբթի առավոտյան կայսերական դրոմոնը մտավ, փախավ դեպի Ստուդիոնի վանքը և անհապաղ իր հորեղբոր հետ միասին հագավ վանականի սքեմը<sup>481</sup>:

2. Պատերազմն ահա, որ սկսվեց անտիպաւլփայի երկուշաբթի օրվա երկրորդ ժամին, ավարտվեց երեքշաբթի օրվա գիշերը: Ձոռն վերստին ձեռք գցելով թագավորութունը, մտածում էր իր քրոջ Թեոդորային հեռացնել, բայց հանդիպեց ժողովրդի շիմադրուկները, որը պահանջում էր, որ նա էլ իր հետ թագավորի Թեոդորան Մեծ էկեղեցուց գալիս է պալատ: Երբ գումարվեց սենատը, Ձոռն ճառով դիմեց նախ սենատին, այնուհետև ինչոր նկատառումներով նաև ժողովրդին, շնորհակալություն հայտնեց նրանց և բարեմաղթություններ՝ իր հանդեպ ցուցաբերած բարյացակամության համար, ապա հարցրեց՝ կայսեր հետ ինչպե՞ս վարվել: Բուրբո միաբերան աղաղակեցին. «Սպանիր մարդասպանին, մեջտեղից վերացրու սրիկային, թող ցցահան լինի նա, խաչվի, կուրացվի»: [Կայսրուհին], սակայն, չէր շտապում նրան պատժել, նա դիմացող եղավ դժբախտի նկատմամբ: Բայց բարկութամբ ու համարձակութամբ լցված Թեոդորան հրամայեց նոր նշանակված էպարքոսին (նա Կամպանարենն էր) շտապ գնալ ու կուրացնել՝ նրան էլ, նրա հորեղբորն էլ: Էպարքոսը եկավ և ողջ դեմոսի ուղեկցութամբ գնաց Ստուդիոնի [վանքը]: Միքայելն ու նրա հորեղբայրը հենց որ իմացան ժողովրդի ներկայության մասին, ապավինեցին Կարապետի տաճարի ադիտոնում<sup>482</sup>: Բայց դեմոսը, որի զայրույթը կոտորված մարդկանց պատճառով դեռ չէր իջել, բռնութամբ մտնելով սուրբ տաճարը և նրանց հափշտակելով, քարշ տվեց ոտքերից հրապարակով և Պերիբլեպտոսի վանքից վերև Սիզմա կոչ-  
20—IV ված տեղը տանելով, երկուսին էլ կուրացրեց: Միքայելը շատ էր  
—1042 պաղատում նախ իր հորեղբորը կուրացնեն, որպես բուրբո տեղի ունեցած դժբախտությունների նախաձեռնողի ու պատճառի: Այդպես էլ արեցին: Կուրացնելուց հետո նրանց աքսորեցին,



Միքայելին էլեգմոն վանքը՝ 6550 թվականի ապրիլ ամսի քսանմեկին, ինդիկտոնի 10-րդ տարին (նա թագավորեց 4 ամիս և 5 օր): Նրա ազգականներն այստեղ, այնտեղ ցրվեցին:

## Կ Ո Ս Տ Ա Ն Գ Ի Ի Ն Մ Ո Ն Ո Մ Ա Խ

[12 հունիս 1042—11 հունվար 1055 թթ.]

1. Իշխանությունը դարձյալ Ձոեի ձեռքն անցավ, որը, ինչպես արդեն ասացինք, իր ցանկության հակառակ կայսերակից ունեք քրոջ Թեոդորային: Սենատը պատիվներ ու պաշտոններ ստացավ, իսկ ժողովուրդը՝ ընծաներ: Պետական գործերը անհրաժեշտ հոգատարության արժանացան, ամենուրեք նամակներ ու կարգադրություններ էին ուղարկվում, որոնցով խոստումներ էին տրվում, թե պաշտոնները առաջվա պես վաճառքի առարկա չեն լինելու և հրամայվում էր ամեն տեսակի ապօրինությունները վերացնել: Երբ ամեն ինչ կատարվեց իշխողների ցանկության համաձայն, աքսորից [քաղաք] բերվեց նոբելիսսիմոս Կոստանդինը, նրան պետական դրամների շուրջ հարցաքննության ենթարկեցին և նա սպառնալիքներից վախեցած, մատնացույց արեց սուրբ Առաքելոց [տաճարի մոտ] գտնվող իր տան մի ինչոր ավազանի մեջ պահած 53 կենտինար ոսկին: Այդ դումարը բերվեց թագուհուն, իսկ [Կոստանդինն] էլ դարձյալ աքսոր ուղարկվեց: Թագուհին արևելից սխուրերի գոմեստիկոս նշանակեց պրոեդրոս Նիկոլայոսին, իր հոր ներքինուն, իսկ արևմուտքի դուքս՝ պատրիկ Կոստանդին Կավասիլասին: Պատրիկ Գեորգիոս Մանիակեսին, որին դեռ Միքայելն էր կալանքից ազատել, մագիստրոսի պատվաստիճան տալով, ուղարկեց որպես Իտալիայի տագմանների գորավար-ավտոկրատոր: Այդ հարցերն ահա այսպես լուծվեցին: Երբ կայսեր մասին հարց բարձրացավ, և բոլորը որոշեցին կայսր ունենալ, որը օրինավոր կերպով պետք է ամուսնանար Ձոեի հետ, վերջինս շտապեց կատապան Կոստանդինին առնել, որին իր վարած նախկին պաշտոնից ելնելով, Արտոկլիոնես<sup>483</sup> էին անվանում: Նա գեղեցիկ էր, և ասում էին, թե գաղտնի հարաբերվում է Ձոեի հետ: Սակայն [կատապան Կոստանդինի] կինը թունավորում է ու սպանում ամուսնուն, ոչ թե

որովհետև շէր սիրում նրան, այլ որովհետև ինքը պիտի զրկվեր դեռևս կենդանի ամուսնուց: Թագուհու ծրագիրն այդպիսով ի դերև եկավ, որի վրա նա աքսորից բերել տվեց Կոստանդին Մոնոմախին, որին Օրֆանոտրոֆոսը այն պատճառով, որ բոլորի մոտ լուրեր էին տարածվում, թե իշխանությանն է տիրանալու, դատապարտել էր բնակվելու Միտիլենե կղզում: Թագուհին, երբ մտադրել էր մյուս Կոստանդին կայսերական գահին նստեցնել, սրան նշանակել էր Հելլադայի դատավոր, բայց քանի որ, ինչպես ասացինք, այդ [Կոստանդինը] թունավորվեց ու մեռավ, հիշյալ Մոնոմախը, վախճանվածի անվանակիցը, կայսրուհու կողմից հարմար համարվեց: [Մոնոմախը] բերվեց Աթիրոսին շատ մոտիկ գտնվող Դամոկրանիայի Հրեշտակապետի տաճարը, իսկ թագուհու ներքինի սենեկապաններից մեկը, Ստեփանոս Պերգամացին, այնտեղ ուղարկվեց: Նա հանեց [Կոստանդին Մոնոմախի] սովորական զգեստը, կայսերական ծիրանին հագցրեց և դրոմոն նստեցնելով, պալատ բերեց<sup>484</sup>: Երբ նա բերվեց, կայսրուհին ամուսնացավ հետը. պսակադրութունը կատարվեց ձեռամբ Նոր եկեղեցու<sup>485</sup> ավագերեց Ստյուպես կոչվածի: 6550 թվականի հունիս ամսի 11-ն էր: Իսկ հաջորդ օրն էլ նրան թագադրեց պատրիարք<sup>486</sup>:

2. Իշխանության գայիսոնն իր ձեռքը վերցնելով, նա բոլոր սենատորների աստիճանները համապատասխան ձևով բարձրացրեց<sup>487</sup>, սիրաշահեց ժողովրդին դրամ բաժանելով: Նա բոլոր բանակաթեմերը զեկուցագրեր ուղարկեց՝ իր գահ բարձրանալը տեղեկացնող, ամեն տեսակի բարիքների հոսք ու առատություն, ամեն տեսակի վատության վերացում խոստացող: Նա Հովհաննես Օրֆանոտրոֆոսին իր ողջ ունեցվածքով Մոնոբատների վանքից Լեսբոս կղզին փոխադրեց, նախկին կայսր Միքայելին՝ Քիոս, իսկ նորեկիսսիմոս Կոստանդին՝ Սամոս: Այդ բոլորը Մոնոմախն արեց իր իշխանության հենց սկզբում, ինդիկտիոնի 10-րդ տարին: Իսկ 6551 թվականի հոկտեմբեր ամսի 6-ին, ինդիկտիոնի 11-րդ տարին երկնքում՝ արևելքից արևմուտք ընթացող գիսավոր աստղ հայտնվեց, որ այդ ամսում պայծառ երևաց: Նա կանխագուշակեց աշխարհի զլխին գալիք փորձանքները: Ստեփանոս Վոյխիսլավը, ինչպես վերևում ասվեց, փախչելով Բյուզանդիոնից և հասնելով Իլլիրիայի լեռները, ասպատակել էր ու ավարտել տրիվալլոսներին<sup>488</sup>, սերբերին և հռոմայեցիներին հպատակ հարևան ժողովուրդներին: Մոնոմախը չկարողանալով տանել

1042



նրա ասպատակությունները, Դյուրախիոնի այն ժամանակվա կառավարիչ (սա պատրիկ Միքայելն էր, լոգոթետ<sup>489</sup> Անաստասիոսի որդին), նամակով կարգադրում է հավաքել Դյուրախիոնի իր զորքերը, ինչպես նաև հարևան բանակաթեմերի՝ իրեն ենթակա զորքերը<sup>490</sup> և հյուսիստրատեգոսների հետ միասին գնալ տրիվալլոսների [երկիրը]՝ Ստեփանոսի դեմ պատերազմելու: [Միքայելը], սակայն, ռազմական արվեստից շատ հեռու կանգնած, ստվերի տակ փափուկ մեծացած մարդ էր, այդ իսկ պատճառով նա ապաշնորհ ու ապիկարորեն գործի անցավ և մեծ դժբախտուկյան պատճառ դարձավ հռոմայեցիների պետության: Նա ստացած հրամանի համաձայն հավաքեց զինված ուժերը, որոնք, ինչպես ասում են, շուրջ վաթսուն հազար հոգի էին, և մրտավ տրիվալլոսների երկիրը, անցնելով զառիվեր, քարքարոտ, գահավեժ ճանաչարհներով, այն աստիճանի նեղ, որ երկու ձիավորներ չէին կարող կողք-կողքի գնալ: Ինչպես պատմում են, սերբերը դիտմամբ նահանջեցին, թույլ տվեցին հռոմայեցիներին մուտք գործել, իսկ [Միքայելն] էլ նահանջի [անվտանգության մասին] հոգ չտարավ, կիրճերում մարտունակ պահպանություն չհաստատեց, այլ մտնելով ավերում ու հրկիզում էր դաշտերը: Իսկ սերբերը վրա հասնելով, բռնեցին ճանապարհի նեղ ու գահավեժ տեղերը և սպասում էին [հռոմայեցիների] վերադարձին: Միքայելը գտավ, որ արդեն բավական ասպատակել է, ձեռք բերել բազում ավար ու գերիների, և որ վերադառնալու ժամանակն է: Բայց երբ [հռոմայեցիները] հասան ճանապարհի նեղ տեղերը, թշնամիներն ահա բարձրից սկսեցին նրանց վրա շարժվել ժայռաբեկորներ, գործի դրեցին աղեղներն ու այլ արձակող զենքերը: Հսկայական քարեր գլորելով, նրանք կոտորում էին հռոմայեցիներին, իսկ Միքայելի զինվորներն ի վիճակի չէին գործի դնել ո՛չ իրենց ձեռքերը, ո՛չ զենքերը, ո՛չ էլ որևէ առաքինություն ցուցաբերել: Հարված ստացողները տեղն ու տեղը ընկնում էին, ոմանք գահավեժ էին լինում ու եղկելիորեն սպանվում. մերձակա կիրճերն ու առվակները դիակներով լցվեցին և հալածողների համար անցանելի դարձան: Մոտ 40 հազար հոգի ըսպանվեց, այդ թվում նաև յոթ զորավար: Մնացածները, սլահվելով թիուտների, անտառների և ձորերի մեջ, խուսափեցին թշնամիներից և լեռների գազաթները մազլցելով, գիշերով փրկվեցին անձի ու անզեն: Նրանք ողորմելի ու ողբալի տեսարան էին ներ-

կայացնում: Փրկվեց նաև Միքայելը՝ նրանց դժբախտությունը կիսած:

3. Մագիստրոս Գեորգիոս Մանիակեսը, որն, ինչպես ասվեց<sup>491</sup>, թագուհի Ջոեի կողմից Իտալիա էր ուղարկվել տեղի դրուժյունը բարելավելու համար (կառավարիչների անփորձության ու ապաշնորհության պատճառով ամեն ինչ տակնուվրա էր եղել և վատ վիճակում էր գտնվում), որոշեց ապստամբություն բարձրացնել: Անհրաժեշտ է ասել և դրա պատճառների մասին, որպեսզի ընթերցողները ճշգրիտ իմանան: Երբ Միքայելի կողմից առաջին անգամ Իտալիա ուղարկվեց՝ դաշնակցելու Միկիլիաջի ամիրա Աբուլաֆար Մոհամմեդին, որի դեմ պատերազմ էին մղում հարազատ եղբայրը և աֆրիկացիները, Մանիակեսը իր ծառայության մեջ էր առել Գալլիայի Ալպերի այն կողմի մի երկրամասի անկախ իշխանի՝ Արդուինոսի գլխավորությամբ ուղարկված հինգ հարյուր ֆրանկների, որոնցով սարակինոսներին պարտության էր մատնել: Երբ իր դեմ ներկայացված ամբաստանության հիման վրա նա պաշտոնանկ արվեց և քաղաք բերվելով բանտ նետվեց, նրա փոխարեն որպես Իտալիայի կառավարիչ պրոտոսպաթար Միքայել Դոկիանոսն ուղարկվեց, անկարող, կառավարելու անընդունակ մի մարդ, որը կարճ ժամանակամիջոցում ամեն ինչ տակնուվրա արեց ու փշաքրեց: Նա ֆրանկներին չէր վճարում սահմանված ամսական ռոճիկը<sup>492</sup>, դեռ ավելին, ինչպես պատմում են, նա անարգեց ու խայտառակ կերպով մտրակահար արեց նրանց առաջնորդին, որն իր մոտ էր եկել խնդրելու՝ մեղմ վարվել զինվորների հետ, չզրկել նրանց իրենց աշխատանքի վարձից, որով և ստիպեց այդ մարդկանց ապստամբելու: Երբ նրանք գեներ բարձրացրին, նա շուզեց հավաքել հոռմեական բովանդակ ուժերը և նրանց վրա հարձակվել, այլ Օպսիկիոնի մեկ տագմա վերցնելով և Թրակեսիոնի մի մասը կաննեում<sup>493</sup>, Ամֆիս գետի մոտ, այնտեղ, որտեղ հնում Հաննիբալը կտորել էր բազմաբյուր հռոմայեցիների, նրանց մարտ տվեց, պարտություն կրեց և կորցնելով իր բանակի մեծ մասը, խայտառակ կերպով փրկվեց հենց կաննեում: Այսպիսի հարված ստանալուց հետո էլ նա առակի ձկնորսի խոհամությունը շունեցավ. նա թշնամիների վրա հարձակվեց ոչ թե իրեն ապահոված լինելով բովանդակ բանակով, այլ հանդգնությունից դրրդված: Վերցնելով պարտություն կրած զինվորներին, ինչպես և պիսիդացիներին ու լիկաոնացիներին, որոնք ֆեդերատ-



ների<sup>494</sup> տազման են կազմում, նա թշնամիների վրա հարձակվեց Հորե կոշվող վայրում, բայց դարձյալ գլխովին պարտվեց. ֆրանկները մեծաթիվ զինակցություն էին ստացել. Պաղոս դետի շուրջ և Ալպերի ստորոտներում բնակվող իտալացիներից: Երբ կատարվածի մասին իմացավ Միքայել կայսրը, նրան պաշտոնանկ արեց, [նրա փոխարեն] Բոյանին ուղարկեց, որը համարվում էր գործունյա մարդ և հաջող պատերազմող: Նա սերում էր Բոյանի այն տոհմից, որին Վասիլ կայսրը Իտալիա էր ուղարկել և որը կայսեր համար նվաճել էր ողջ Իտալիան՝ ընդհուպ մինչև Հռոմը: Բայց սա ևս այդ երկիրը գնալով և իր հետ վերցրած շլինելով ուժեղ ու թարմ զինական ուժ, ստիպված էր Մոնոպոլիսում նախկինում պարտված [հռոմայեցիներով] մարտտալ թշնամիներին, որոնք ավելի հզոր էին դարձել և պաշտպանում էին երկիրը, այն համարելով իրենց սեփականը: Բոյանն ահա պարտություն կրեց և իր զորքի հետ դերի ընկավ, իսկ ովքեր կարողացան սրից խուսափել, դեսուդեն ցրվեցին, փրկություն գտնելով դեռևս հռոմայեցիներին հավատարիմ մնացած բերդերում: Այսպիսով ահա ֆրանկները Իտալիան համարում էին զենքի ուժով նվաճված տիրույթ, տեղաբնիկները, ոմանք կամովին, ոմանք բռնությամբ կամ ստիպված, իրենց կողմն էին անցնում, բացի Բրենտեսիոնից, Հիդրոնտից, Տարանտից ու Բարիից: Այս շորս քաղաքները հավատարիմ մնացին հռոմայեցիներին: Երբ Միքայել կայսրը վախճանվեց, նրա հաջորդն էլ հեռացվեց թագավորությունից, Մանիակեսը, ինչպես վերևում ասվեց, Զոեի կողմից Իտալիա ուղարկվեց և շնայած կարգին զինական ուժ չունեց, եղած զորքով և զորավարի տաղանդով կարողացավ Իտալիայից դուրս շարտել ֆրանկներին՝ Կապուաչի, Բենեվենդոնի ու Նեապոլի շրջաններից, և որոշ չափով դադար ու անդորր հաստատել: Այս Մանիակեսը բնակվում էր Անատոլիկոն բանակաթեմում, նա հարևանն էր Ռոմանոս Սկլերոսի և նրա հետ գծոված լինելով, բազում անգամներ փորձել էր սպանել նրան [և կսպաներ], եթե նա իր փրկությունը չապահովեր փախուստի գիմելով: Երբ հռոմեական պետության գալիսոնն անցավ Կոստանդին Մոնոմախի ձեռքը և Սկլերոսը բարձր դիրքի հասավ (Սկլերոսի քույրը Մոնոմախի հոմանուհին էր), ստանալով մագիստրոսի և պրոտոստրատորի պատվաստիճանները, նա հիշեց Գեորգիոսի՝ իր վրա կատարած հարձակումները, սկսեց շարաշահել իր դիրքը, օգտագործել Մանիակեսի բացակայու-

- թյունը: Նա սկսեց կողոպտել ու ավերել Մանիակեսին պատկանող գյուղերը և անգամ առանց քաշվելու պղծեց նրա մահի-  
 1042 ճը: [Մանիակեսն] Խտալիայում իմացավ այդ մասին և զայրույթից ու բարկությունից եռում էր: Այդ բոլորի վրա, երբ Ռոմանոսի  
 հոկտ. շանքերով նա պաշտոնանկ էլ եղավ և ամեն ինչից հույսը կտրեց  
 (նա գիտեր, որ եթե Բյուզանդիոն վերադառնա, գլխին փոր-  
 ձանք կգա), Խտալիայի [հոմեական] ուժերը<sup>495</sup> ոտքի հանեց  
 ու գայթակղեցրեց (զինվորները շատ էին ուզում վերադառնալ  
 իրենց հայրենիքը) և կայսեր դեմ զենք բարձրացրեց: Նրան, ով  
 ուղարկվել էր իր պաշտոնն առնելու, նա սպանեց (սա պրոտոս-  
 պաթար Պարդոսն էր, մի բյուզանդացի<sup>496</sup> և ուղարկվել էր կա-  
 ռավարելու նման մի երկիր ոչ թե ինչ-որ իր արժանիքների  
 պատճառով, այլ պարզապես որովհետև կայսեր ծանոթն էր) և  
 1043 անցնում է Բուլղարիա: Կայսրը, իմանալով այդ մասին, ընկավ  
 փետր. անասելի ահ ու սարսափի մեջ, նա [Մանիակեսին] և նրա զին-  
 վորներին անվտանգության երաշխիքներ բովանդակող նամակ  
 գրեց՝ զենքերը ցած դնելու կոչով, ամեն տեսակի բարիքների  
 խոստումներով: Բայց քանի որ Մանիակեսը անզիջում էր և  
 իր մտադրությունից ետ չկանգնեց, նա էլ հավաքելով իր ուժերը  
 և նրանց վրա զորավար-ավտոկրատոր հաստատելով Դամոկրա-  
 նիայում իր կայսր դառնալու մասին ավետիսները բերող սևաս-  
 տոֆորոս<sup>497</sup> Ստեփանոսին ապստամբի դեմ ուղարկեց: Բա-  
 նակներն իրար հանդիպեցին Մարմարիոնի Օստրովոս կոչվող  
 տեղում, ճակատամարտում Ստեփանոսի զորքերը պարտություն  
 կրեցին: Մանիակեսը գնում էր զորքի առջևից և հատանում [հա-  
 կառակորդի] ռազմաշարքերը: Նրան կայսր էին ներբողում:  
 Բայց այդ միջոցին Մանիակեսը հանկարծակի ձիուց գլորվեց  
 ու մեռավ, ոչ ոք չտեսավ ո՞վ նրան խոցեց. նրա կրծքին մահա-  
 ցու վերք կար: Երբ հակառակորդ զորքը լսում է կատարվածի  
 մասին, կտրում են Գեորգիոսի գլուխը, գերեվարում բոլոր նրանց,  
 ովքեր [Մանիակեսի] հետ զենք էին բարձրացրել. իրենց առաջ-  
 նորդի սպանությունից հետո նրանք զենքերը ցած գցեցին ու  
 հանձնվեցին: Կայսեր հաղթանակի ավետիսները տանող սուր-  
 հանդակ ուղարկվեց, իսկ մի քանի օր անց [քաղաք] մտավ  
 Ստեփանոսը՝ բերելով Մանիակեսի գլուխը և ռազմագերիներին:  
 Ստեփանույր Մեսե պողոտայով հաղթական շքերթ կազմա-



կերպեց, որի առջևից նիզակի վրա տանում էին Մանիակեսի դուխր, իսկ ապստամբներին՝ ավանակների վրա նստեցրած: Նրանց ետևից սպիտակ ձի նստած դալիս էր [Ստեփանոսը]: Մանիակեսի [ապստամբությունն] ահա այսպիսի վախճան ունեցավ<sup>498</sup>:

4. Նույն տարին մի ապստամբություն էլ կիպրոսում բռնկվեց, որի կազմակերպիչն էր Թեոփիլոս էրոտիկոսը: Սա կղզու զորավարն էր, խառը դործեր նախաձեռնող: Երբ իմացավ Կալաֆատեսի կործանման և պետության մեջ տիրող խառը իրավիճակի մասին, նա դտավ, որ իր ծրագիրն իրականացնելու համար պահիր հնչել է, և ոտքի հանելով կիպրացի ողջ ժողովրդին, կազմակերպում է պետական հարկերի պրակտոր<sup>499</sup> պրոտոսպաթար Թեոփիլոսի սպանությունը, նրան մեղադրանք ներկայացնելով, թե բարձրացրել է հարկերի շափր: Բայց Մոնոմախի համար նա մեծ դիտացավանք չեղավ, այնտեղ ուղարկված ծովակալ պատրիկ Կոստանդին խայեին հաջողվեց կիպրացի համայն ժողովրդին սիրաշահել, ձերբակալել նրան և կայսեր մոտ բերել: Կայսրը նրան կանացի շորեր հաղցրեց, մրցումների ժամանակ ձիարշավարանում ծաղր ու ծանակի ենթարկեց և ունեցվածքը գրավելով, արձակեց:

1043

5. Ինդիկտիոնի 11-րդ տարվա փետրվար ամսի 20-ին վախճանվեց Ալեքսիոս պատրիարքը: Ավետման տոնի օրը նրա աթոռին նստեցրին Միքայել Կերուլարիոսին<sup>500</sup>, որը վանական էր. նրան իր նյութած դավերի համար վանք էր աքսորել Օրֆանոտրոֆոսը: Կայսեր հայտնեցին, թե Ալեքսիոսի վանքում դանձ է հայտնաբերվել. նա մարդ ուղարկեց և առավ այն՝ 25 կենտինարի հասնող մի դումար: Նույն ինդիկտիոնի մայիսի երկուսին կուրացվում է և Օրֆանոտրոֆոսը՝ Մարյուկատոն կոչվող գյուղում, ինչպես ասում են ոմանք, Թեոդորայի հրամանով: Կայսեր կամքին հակառակ: Բայց շատերի մոտ այն համոզմունքն է տիրում, թե հենց [կայսրն է] նրան կուրացրել, զայրացած լինելով [իրեն] աքսոր ուղարկած լինելու համար: [Օրֆանոտրոֆոսը] վախճանվում է նույն ամսի 13-ին: Ինդիկտիոնի նույն տարվա հուլիս ամսին սևաստոֆորոս Ստեփանոսը մեղադրվում է կայսեր դեմ դավադրություն նյութելու մեջ, որ նա ուզում է կայսր դարձնել Մելիտենեի զորավար Լևոն սյատրիկին, Լամպրոսի որդուն: Ստեփանոսի ունեցվածքը գրավվեց և նա վանական խուզվելով, աքսորվեց, իսկ Լամպրոսն էլ անողոքաբար



գանահարվեց, կուրացվեց և հրապարակայնորեն ծաղր ու ծանա-  
կի ենթարկվելով, փոքր անց մեռավ:

1043 6. Ինդիկտիոնի նույն տարվա հուլիս ամսին մայրաքաղաքի  
վրա ոռւս ազգի հարձակում էլ եղավ<sup>501</sup>: [Ռուսները] մինչև այգ  
համագործակցում էին հռոմայեցիների հետ, հաշտ ու խաղաղ  
ապրում, աներկյուղ հարաբերվում միմյանց և առևտրականներ  
ուղարկում ու ընգունում: Այս ժամանակները, սակայն, Բյուզան-  
դիոնում սկյութ առևտրականների հետ տեղի ունեցած ինչ-որ  
վեճի ժամանակ կռիվ առաջացավ, որի ընթացքում սպանվեց  
մի երևելի սկյութ: Նրանց ազգի այն ժամանակվա իշխան Վլա-  
դիմիրը, մի բարկացկոտ ու շատ տաքարյուն մարդ, իմանալով  
կատարվածի մասին և ազդվելով, առանց հապաղելու վերցրեց  
իր ողջ ղորքը, ինչպես և Օվկիանոսի հյուսիսում գտնվող կղզի-  
ների բնակիչներից դաշնակից ռազմիկների, դումարեց, ինչպես  
ասում են, շուրջ հարյուր հազար հոգու և տեղավորելով մոնոթե-  
սիլոն կոչվող նավերի մեջ<sup>502</sup>, արշավեց քաղաքի վրա: Կայսրը,  
իմանալով այդ մասին, դեսպաններ ուղարկեց, խնդրեց ցած  
դնել զենքերը, խոստացավ, եթե տեղի է ունեցել որևէ վատ բան,  
կարգավորել այն, կոչ արեց թույլ շտալ, որ մի աննշան դեպ-  
քի համար երկար ժամանակվա ընթացքում ամրապնդված խա-  
ղաղությունը վերանա և ժողովուրդներին իրար դեմ չհանել: Երբ  
[Վլադիմիրը] ստանալով նամակը, խայտառակ կերպով վռնդեց  
դեսպաններին, գոռոզ ու ամբարտավան պատասխան տվեց,  
կայսրը այլևս խաղաղությունն ապահովելու մասին հույսը կրտ-  
րած, ինքն էլ հնարավորին չափ պատրաստվեց ընդդիմակայե-  
լու: Նախ և առաջ նա մայրաքաղաքում գտնվող սկյութ առև-  
տրականներին, ապա և [սկյութ] դաշնակցային զորքերը ցրիվ  
տվեց բանակաթեմերում, այգ ձևով նա ապահովեց իրեն ներ-  
քին, տվյալ իրավիճակում շատ հավանական վտանգից:  
Նա հանդերձեց կայսերական տրիբերաները, ինչպես և այլ բա-  
զում թեթև ու արագընթաց [նավեր], նրանց մեջ նստեցրեց այն  
ժամանակ Բյուզանդիոնում գտնվող զինվորներին, ինքն էլ կայ-  
սերական դրոմոնը մտնելով, դուրս եկավ սկյութներին ընդա-  
ռաջ՝ Պոնտոսի մուտքում նավագնացների կողմից Փարոս կոչ-  
վող տեղում: Նրա կողքից ցամաքով առաջ էր շարժվում նաև  
մեծաթիվ հեծելազոր: Երբ հակառակորդ ուժերը կանգնեցին դեմ-  
առդեմ, ոչ ոք նախահարձակ չեղավ: Սկյութները հանգիստ  
կանգնել էին խարիսխ գցած իրենց նավահանգստում, իսկ կայ-



սըրն էլ նրանց շարժվելուն էր սպասում: Քանի որ ժամանակը գնում էր և արդեն ուշ էր, կայսրը դարձյալ դեսպաններ ուղարկեց խաղաղության մասին խոսելու, բայց բարբարոսը վերստին նրանց անարգելով ետ ուղարկեց, հայտնելով, որ եթե կայսրն ուզում է, որ ինքը զենքերը ցած գնի, թող իր յուրաքանչյուր զինվորին երեքական լիտր ոսկի վճարի: Նման պահանջը կայսրն անիրագործելի համարելով, որոշեց անցնել գործի: Քանի որ [սկյութները] անշարժ կանգնած էին, կայսրը մագիստրոս Վասիլ Թեոդորականին<sup>503</sup> հրամայեց երեք արագընթաց տրիերա վերցնել, գնալ և հեռամարտությամբ փորձել սկյութներին մարտի ներքաշել: Վասիլը, վերցնելով տրիերաները և սկյութներին մոտենալով, ոչ թե հեռամարտությամբ ուզեց նրանց ներքաշել, այլ խուժելով նրանց շարքերը, արհեստական կրակով<sup>504</sup> հրկիզեց նավերից յոթը, իսկ երեք նավ մարդկանցով հանդերձ ջրասույզ արեց: Նա տիրացավ նաև մի այլ նավի, անձամբ նրա մեջ թռնելով: Նավի մեջ եղածների մի մասին նա սրի քաշեց, մյուսները զենքերը ցած դրեցին՝ Վասիլի հանդգնության վրա զարմացած: Սկյութները նավատորմիդով առաջ շարժվող կայսրին տեսնելով և, բնական է, մտածելով, որ եթե լոկ երեք տրիերաներ իրենց այդ օրը զցեցին, ապա ի՞նչ կլինի, երբ ստիպված լինեն մարտի բռնվել ողջ նավատորմիդի հետ, որոշեցին փախուստի դիմել: Ընկնելով խուժեր ու ստորջրյա ժայռեր ունեցող վայրեր, նրանք կորցրին նավերի մեծ մասը. բացի այդ, նրանց վրա սկսեցին հարձակվել ու կոտորել նաև ցամաքով մոտիկից ընթացող զինվորները: [Պատերազմից] հետո ծովի ափերին մնաց շուրջ 15 հազար դիակ: Սկյութների պարտությունից հետո կայսրը ամբողջ երկու օր մնաց այնտեղ, իսկ երրորդ օրը պարակիմոմենոս Նիկոլայոսի և մագիստրոս Վասիլ Թեոդորականի հրամանատարության ներքո ևրկու տագմա և, այսպես կոչված, հետերիաները թողնելով ափերը հսկելու, շրջելու և պահպանելու, որպեսզի հանկարծ բարբարոսների ափհանում չլինի, բովանդակ նավատորմիդին էլ հրամայելով մնալ Փարոսում, վերադարձավ մայրաքաղաք: Կայսրն ահա այդ բանն անելուց հետո մտավ Բյուզանդիոն, իսկ պարակիմոմենոսի և Թեոդորականի զորքերը շրջում էին այն ափերով, որտեղ [թշնամու] պարտությունից հետո ալիքները ափ էին նետել բարբարոսների դիակները: Նրանք ձեռք զցեցին բազում ավար ու կապուտ: Նավատորմիդից անջատված քսանչորս տրիերաներ սկսեցին հե-

տապնդել փախուստի դիմող բարբարոսներին: Բարբարոսները մի ծոցում խարիսխ էին գցել, երբ իրենց կողքից անցան այդ հետապնդող [նավերը]: Սկյութները տեսան նրանց փոքրաթվությունը, հաստատ համոզվեցին, որ հենց այգքանն են, և թերակղղու երկու կողմից, թևերից առաջ անցնելով և արագ թիավարելով, ջանում էին հակառակորդներին՝ օղակի մեջ առնել: Թիավարությունից ու հետապնդումից ուժասպառ հոռմայեցիները բարբարոսական նավերի մեծաթվության առաջ ահ ու դողի մեջ ընկան ու դիմեցին փախուստի: Բայց բարբարոսների նավերը հասցրին փակել ծոցի բերանը և այլևս անհնարին էր դեպի բաց ծով դուրս գալը: Կիբիրեոտների [բանակաթեմի] զորավար պատրիկ Կոստանդին Կավալարիոսը իր մնացած տասը տրիերներով քաջաբար մարտի նետվեց և արիաբար մարտնչելով, սրբախողխող արվեց: [Թշնամու] ձեռքն անցան շորս տրիերա և ծովակալի նավն անձնակազմով հանդերձ, որ սրի քաշվեց: Հոռմեական մնացած նավերը շարտվելով ժայռերի, քարքարոտ ափերի և ապառաժների վրա, ջարդուփշուր եղան, նրանց անձնակազմի մի մասը ջրասույզ եղավ, մյուսն էլ՝ ընկնելով բարբարոսների ձեռքը, խողխողվեց ու ստրկության քշվեց: Վերապրողները ցամաքի վրայով անգնն ու մերկ ապաստան գտան իրենց ճամբարում: Սկյութները տեսնելով, որ իրենց ծրագրերը չեն իրականանում, որոշեցին տունդարձի ճանապարհը բռնել: Նրանք վերադառնում էին ոչ միայն ծովով, այլև ցամաքով (նրանց նավերը բոլորին չէին բավականացնում, քանզի մի մասը անցած ժամանակ ջրասույզ արվեց կամ ընկավ [հակառակորդի] ձեռքը, մյուսն էլ ալեկոծության ու փոփոքիկի ժամանակ ջարդ ու փշուր եղավ, դրա պատճառով էլ նրանցից շատերը ցամաքով էր դնում): Վառնա<sup>505</sup> կոչվածի ծովափին նրանց հանդիպեց վեստ Կատակալոն Կեկավմենոսը, Իստրոս [գետի] շրջանի քաղաքների ու շրջանների կառավարիչը և կովի բռնվելով, պարտության մատնեց, շատերին կոտորեց, իսկ ութ հարյուր հոգու գերի վերցրեց և շղթայակապ կայսեր ուղարկեց: Այս այրը, (երբ սրանից առաջ սկյութները ելնելով իրենց երկրից, շարժվում էին դեպի մայրաքաղաքը և ոտք դնելով իրեն ենթակա շրջանները, ավարառություններ էին գործում), հավաքելով իր զորքերը, նրանց հետ կովի բռնվեց և արիաբար մարտնչելով, գլխովին պարտության մատնեց թշնամուն, ստիպեց փախուստի դիմել դեպի իրենց նավերը: Տվյալ դեպքում էլ նա հսկում էր իրեն ենթակա



ծովափնյա շրջաններին, սպասում իրերի վախճանին և ընդդիմակայելով վերադարձի ճամփան բռնած [սկյուլթներին], քաջաբար մարտնչեց ու արեց այն, ինչ վերևում ասացինք<sup>506</sup>:

- 1043 7. 6552 թվականի սեպտեմբեր ամսին, ինդիկտիոնի 12-րդ տարին, սաստիկ քամի փչեց, այն աստիճան, որ փչացավ այդինների բերքը: Այդ տարվա մարտ ամսի 9-ին, 40 վկաների տոնակատարության ժամանակ, երբ կայսրը որոշել էր թափորով գնալ սրբերի երկրպագության, դեմոսը նրա դեմ խռովություն բարձրացրեց: Կայսրը մեծ շքախմբով ու փառաբանությամբ հետիոտն պալատից դուրս եկավ, հասավ Խալկեի Փրկչի տաճարը և այնտեղից պետք է ձի նստեր ու գնար մարտիրոսների սրբարանը, երբ հանկարծակի ամբոխի միջից մի ձայն լսվեց. «Մենք չենք ուղում Սկլերենային<sup>507</sup> թագուհի, ոչ էլ այն, որ նրա պատճառով մեռնեն մեր մայրեր՝ ծիրանածիններ Զոեն և Թեոգորան»: Ամեն ինչ իսկույն խառնվեց իրար, ամբոխն ընկավ խուճապի մեջ. ուզում էին կայսեր սպանել: Եթե թագուհիները շտապ կարգով պատշգամբ դուրս գալով շահնգատացնեին ամբոխին, շատերը զոհ կգնային, գուցե և հենց ինքը՝ կայսրը: Երբ կոքերը խաղաղվեցին, [կայսրը] պալատ վերադարձավ, հրատարվելով մարտիրոսների [սրբարանը] գնալու մտքից:

- 1044/ 8. Ինդիկտիոնի 13-րդ տարին սկիզբ առավ պատերազմն  
1045 ընդդեմ Անիի: Բայց նախապես պատմենք, թե ի՞նչն էր պատճառը, որ Անիի տոպարիսը<sup>508</sup> հանգիստ նստած, ոչ մի արտառոց բան չարած, Կոստանդին կայսրը դիմեց պատերազմի: Երբ իբերների<sup>509</sup> առաջնորդ Գեորգիոսը<sup>510</sup> հոռմայեցիների դեմ զենք բարձրացրեց, նրան զինակցություն ցուցաբերեց Անիի շրջանին տիրող Հովհաննեսիկը<sup>511</sup>: Բայց երբ, ինչպես նախապես ասվեց, վասիլ կայսրը բարձրանալով Իբերիա, ճակատեց Գեորգիոսի դեմ, նրան պարտության մատնեց ու ոչնչացրեց, Հովհաննեսիկը ահ ու դողի մեջ ընկավ, մտածելով, որ կայսրը Գեորգիոսին՝ իր ցուցաբերած զինակցության համար գլխին փորձանք կբերի: Դրա համար ահա, վերցնելով քաղաքի բանալիները, անձամբ գնում է կայսեր մոտ, կամավոր հանձնվում նրան և ընձեռում բանալիները: [Կայսրը] ընդառաջ գնաց նրա խելամտությանը, մագիստրոսի պատվաստիճան շնորհեց և նշանակեց Անիի ու Մեծ Հայք կոչվածի ցմահ կառավարիչ, նրանից գրավոր փաստաթուղթ պահանջելով, թե իր՝ Հովհաննեսիկի մահից հետո համայն իշխանությունը դառնում է հոռմեական պետության բաղկացուցիչ

մասը: Այդպես էլ եղավ<sup>512</sup>: Կայսրը վախճանվում է, բազում տարիներ անց վախճանվում է և Հովհաննեսիկը, որի մահից հետո նրա իշխանութունը ժառանգած որդի Գագիկը<sup>513</sup>, թեև [շարունակում էր] հռոմայեցիների հետ խաղաղութուն ու զինակցութուն պահպանել, բայց իր ձեռքում էր պահում նաև հորենական իշխանութունը և չէր ուզում այն հռոմայեցիներին զիջել, հակառակ հոր թողած փաստաթղթի: Մոնոմախը արքունիքում գտնելով այդ փաստաթուղթը, և՛ Անին էր պահանջում, և՛ բովանդակ Մեծ Հայքը<sup>514</sup> որպես Վասիլ կայսեր ժառանգորդը: Այն պատճառով, որ [Գագիկը], թեև իրեն հռոմայեցիների ծառան<sup>515</sup> էր խոստովանում, չէր ուզում հրաժարվել հորենական իշխանութունից, կայսրը վճռեց պատերազմել: Նա զորահավաք արեց, գործը հանձնեց վեստ Միքայել Իասիտեսին, որը մինչ այդ Իբերիայի<sup>516</sup> կառավարիչ էր նշանակվել, մտադիր լինելով Գագիկի դեմ պատերազմել: [Իասիտեսը] գնաց և ջանաց հնարավորության սահմաններում ի կատար ածելու հրամանը: Գագիկն իմանալով այդ, տեսնելով, որ բարեկամի և զինակցի փոխարեն թշնամի է համարվել, ինքն էլ իր զինական ուժերը հավաքելով, իր կարողությունների սահմաններում զիմադրում էր իր վրա հարձակվողներին: Այն պատճառով, որ Իասիտեսի գործերը վատ էին ընթանում, ծանր ուժով ուղարկվեց սխուրթի դոմեստիկոս պրոեգրոս Նիկողայոսը<sup>517</sup>, Կոստանդին կայսեր պարակիմոմենոսը, որպեսզի քանակական ու զորության [գերակշռությամբ] Գագիկին պարտության մատնի<sup>518</sup>: Միաժամանակ Դվինի և Արաքս գետի շուրջ ընկած Պերսարմենիայի կառավարիչ Ապլեսֆարեսին կայսեր նամակն ուղարկվեց, որով կոչ էր արվում ասպատակել Մեծ Հայքը և Գագիկին ենթակա երկիրը<sup>519</sup>: Նիկողայոսը գնաց ու գործի անցավ, նամակն էլ ուղարկեց Ապլեսֆարեսին, իր կողմից էլ գրեց ու հրահրեց, նվերներով ու խոստումներով նրան՝ դրդեց՝ կյանքի կոչեց կայսեր կամքը: [Ապլեսֆարեսը], ստանալով նամակները, պատասխանեց, թե հրամանը կկատարի, եթե իրեն կայսերական հրովարտակ ուղարկվի այն բանը հաստատող, թե ինքը որպես տեր կտիրի Գագիկին պատկանող բոլոր այն բերդերին ու շրջաններին, որոնք կկարողանա գրավել պատերազմի օրենքով: Կայսրը համաձայնվեց դրան և խրիստովուլ գրությամբ հաստատեց Ապլեսֆարեսի պահանջը, որը փաստաթուղթն ստանալուց հետո, գործի լծվեց: Նա պաշարմամբ գրավեց Գագիկին պատկանող բազմաթիվ ամրոցներ ու շրջաններ:



Գագիկը մի կողմից պատերազմ մղելով հռոմեական բանակի դեմ, մյուս կողմից ենթարկվելով Դվինի կառավարչի ասպատակություններին, կատարյալ հուսաբեկ եղած, պարակիմոմենոսի հետ հաշտություն է կնքում և նրա միջոցով հանձնվում կայսեր ու տալիս [Անի] քաղաքը: Գալով կայսեր մոտ, նա մագիստրոսի պատվաստիճան ստացավ, շատ եկամտաբեր շրջաններ կապագովկիայում, Խարսիանոնում, Լիկանդոսում, և այսուհետև խաղաղ ու անվրդով կյանք ապրեց<sup>521</sup>: Մոնոմախը սկսեց պահանջել Դվնեցու<sup>521</sup> գրաված բերդերն ու շրջանները՝ որպես Անիի բաղկացուցիչ մասեր, և քանի որ [Դվնեցին] չէր ուզում կամովին հրաժարվել դրանցից՝ ներկայացնելով խրիսովուլ փաստաթուղթը, նրան պատերազմ է հայտարարում: Մոնոմախը դարձյալ հրաման է տալիս պարակիմոմենոսին<sup>522</sup> հռոմեական զինական ուժով, իբերական զորքով<sup>523</sup>, ինչպես և Մեծ Հայքի առկա և Անեցու հրամանատարության տակ գտնվող ուժով<sup>524</sup>, պատերազմել Ապլեսֆարեսի դեմ: Պարակիմոմենոսը հավաքեց բոլոր ուժերը, և նրանց հրամանատար կարգելով վեստարիս Միքայել Իասիտեսին<sup>525</sup> և իր ծառա<sup>526</sup> մագիստրոս Կոստանդին Ալանին, Դվինի դեմ ուղարկեց: Ապլեսֆարեսը արտակարգ հմուտ, անօրինակ զորական էր, թշնամու զենքն ու միտքը հաղթահարելու ընդունակ: Գիտակցելով, որ ինքն ի վիճակի չէ ընդդիմակայելու հռոմայեցիների զինյալ ուժերին, փակվեց [քաղաքի] պարիսպների ետևում, մոտիկից հոսող գետի հունը փոխեց, ողողեց համայն դաշտը և այն տիղմի վերածելով (այն կավային էր ու ճահճոտ), սպասեց հակառակորդների գալստյան: Նա հետևակ նետաձիգներին ցրեց քաղաքի շուրջն ընկած այգիներում, հրամայեց նրանց թաքնվել ու սպասել իր շեփորի ձայնին: Հռոմայեցիների զորահրամանատարները նրանց քաղաքում փակվելը և դաշտը ողողելը վախի ու հուսալքության ապացույց համարելով, անկազմակերպ ու ցրված, ոմանք ձիուց ցած իջած, ոմանք ձի նստած, ցանկացած տեղով շտապում էին դեպի քաղաք՝ մեկ հարվածով այն գրավելու: Երբ նրանք գտնվում էին այգիների մեջ ընկած շավիղներում և ընդհուպ մոտեցել էին քաղաքին, Ապլեսֆարեսը հնչեցրեց շեփորը և հրամայեց գործի անցնել: Դարան մտած հետևակայիները դուրս դալով՝ ոմանք աղեղով, ոմանք քարերով հարվածում էին [հռոմայեցիներին], որոնք չէին կարող թշնամիներին դիմադրել, քանզի ուրիշներն էլ խոցում էին իրենց պարսպի ատամնաշարի վրայից: Հռոմայե-

ցիւները կատարյալ պարտություն կրեցին, նրանցից անհամար բազմություն սրի քաշվեց, քանզի ձիերը ընկնելով ցեխի ու ճահիճների մեջ, շէին կարողանում փախչել: Իասիտեսն ու Կոստանդինը հազիվ փախան Անի և բոթր բերեցին Նիկոլայոսին: Երբ աղետի մասին կայսրն իմացավ, Նիկոլայոսին ու Իասիտեսին պաշտոնանկ արեց. Իասիտեսի փոխարեն Իբերիայի դուքս նշանակվեց Կեկավմենոսը<sup>527</sup>, իսկ Նիկոլայոսի փոխարեն զորավար-ավտոկրատոր նշանակվեց մեծ հետերիարխ<sup>528</sup>, ներքինի Կոստանդինը, ծագումով սարակինոս: Նա կայսեր ծառայել էր նախքան նրա դահ բարձրանալը և նրան հավատարիմ էր: Սրանք ահա տեղ հասնելով և հավաքելով զինված ուժերը, դործի անցան: Նրանք շուգեցին հարձակվել Դվին քաղաքի վրա<sup>529</sup>, որը համայն ազգի մայրաքաղաքն է, այլ փորձեցին [տիրանալ] Անիի ստորանկյալ բերդերին, դրավեցին գահավեժ տեղանքում գտնվող շատ անառիկ Սուրբ Մարիամը<sup>530</sup>, Ամբերդ կոչվածը<sup>531</sup>, Սորւբ Գրիգորը<sup>532</sup>: Ապլեսֆարեսը բազմիցս անգամ փորձեց պաշարյալներին օգնության հասնել, բայց ամեն անգամ պարտություն կրեց: Նրանք եկան նաև Խելիդոնիոն կոչվող բերգը<sup>533</sup>, որը գահավեժ լեռան վրա է կառուցված և գտնվում է Դվինից ոչ հեռու: Ահա այդ բերդը խրամատներով ու ցանկապատով օշակի մեջ առնելով, ջանում էին [երկարատև] պաշարմամբ տիրանալ. պաշարյալները պարենի սլակաս էին դդում, անակնկալ հարձակման պատճառով նրանք շէին հասցրել իրենց պարենով ապահովել: [Հոռմայեցիները] այս [բերդն] էլ կգրավեին, եթե Արևմուտքում հանկարծակի շքունկվեր պատրիկ Լևոն Թոռնիկի ապստամբությունը<sup>534</sup>: Սա, երբ Իբերիայի զորավարն էր<sup>535</sup>, ամբաստանվեց ապստամբություն նախապատրաստելու մեջ, որի համար պաշտոնանկ արվեց, բռնի վանական խուզվեց և քաղաք բերվելով, տնային կալանքի դատապարտվեց իր տանը՝ Ազրիանուպոլսում<sup>536</sup>: [Թոռնիկը] իր նկատմամբ կատարված անօրինությունները հանգիստ շտարավ: Աստիճանաբար նա սիրաշահեց Ազրիանուպոլսի շնորհազրկված ու պաշտոնազուրկ զորավարներին, ապա նրանց և իր ազգականների միջոցով կամաց-կամաց գայթակղեցրեց մակեդոնական և թրակական տազմաների հրամանատարներին, զորացրված զինվորներին, հափշտակություններին ու թալանի սիրահարներին և զգալի ուժ կազմելով կայսր հռչակվեց, որից հետո իր ամբողջ զորքը վերցնելով, հանկարծակի հայտնվեց մայրաքաղաքի առջև: Կայսրը նրան ընդդիմակայե-

1047



1047 լու բավարար զորք շուններ, ոչ էլ հավատում էր, թե քաղաքացի-  
 ները իր նկատմամբ սեր ու հավատարմություն կցուցաբերեն,  
 դրա համար Իբերիա՝ Կոստանդնի մոտ պետական ձիերով սուր-  
 հանդակ է ուղարկվում՝ կայսերական նամակով, որով հրամայ-  
 սեպտ. վում էր ձեռքի գործը թողնել և [զինական] ուժերով շտապ  
 մայրաքաղաք վերադառնալ: [Կոստանդինն] նամակն ստանա-  
 լով, հակառակ այն բանի, որ համարյա գրավել էր բերդը, վե-  
 րացնում է պաշարումը, Ապլեսֆարեսի հետ հաշտություն կըն-  
 քում, ստանում նրա ուխտ ու երդումով հաստատված [հավաս-  
 տիացումը] կայսեր հանդեպ տածելիք բարյացակամության մա-  
 սին, որ երբեկից չի ծրագրելու որևէ վատություն ընդդեմ հոռ-  
 մայեցիների, որից հետո վերցնելով զորքերը շտապում է դեպի  
 մայրաքաղաք: Խելիդոնիոնն ահա այսպես խույս տվեց գրավու-  
 մից: Կոստանդինը արևելից տագմաններով և բովանդակ զորքով  
 վերադարձավ, ինքը մտավ մայրաքաղաք, իսկ ողջ բանակը, կայ-  
 սեր հրամանով տեղափոխվեց Թրակիա. մինչ այգ, հիշյալ  
 զորքի մի մասը մայրաքաղաքի, նեղուցի դիմացի ափը գտնվող  
 Խրիսուպոլսում էր մնում, մյուսը՝ Հելլենպոնտոսում գտնվող  
 Աբյուդոսում: Բայց [դրանք Թրակիա տեղափոխվեցին] հետա-  
 գայում: Նախքան զինված ուժերի տեղ հասնելը, սեպտեմբեր  
 ամսին, ինդիկտինի առաջին տարին Թոռնիկը, ինչպես ասվեց,  
 կայսր հռչակվելով, կայծակի արագությունք քաղաք է հասնում,  
 հույս ունենալով մեկ հարվածով այն գրավել, քանզի կայսրն  
 անհրաժեշտ զորք շուններ: Նա Վլախերնայի դիմաց, Սուրբ Անար-  
 ծաթից վանքին շատ մոտ խարաքս<sup>537</sup> դրեց և սկզբում փորձում  
 էր խոսք ու խոստումով քաղաքացիներին սիրաշահել, բայց երբ  
 ոչ ոք ուշադրություն չդարձրեց իր ասածին, անցավ գործի:  
 Կայսրը քաղաքացիներով և պատահաբար տեղում հայտնված  
 զինվորներով [հակառակորդի] դեմ կանգնեց. Քաղաքացիներին  
 ու դեմոսին նա պարսպի վրա դասավորեց, իսկ տեղում հայտնված  
 զինվորներին, ինչպես և նրանց, ովքեր իր հրամանով սենատի գրլ-  
 խավորները ղինեցին, հազարից ոչ ավելի մարդ, Վլախերնայի  
 դարբասի միջով պարսպից դուրս հանելով, կանգնեցրեց ապրս-  
 տամբին դեմառդեմ, նրանց առջև հակառակորդի հարձակմանը  
 խոչընդոտող խրամ փորելով, թեև անհրաժեշտ էր, որ նրանք  
 դարբասից ներս գտնվեին և պարիսպներից պաշտպանվեին: Մա-  
 գիստրոս Արգիրոս Իտալոսը աղաչում էր դուրս չգտլ, մնալ ներ-  
 սում և փոքրաթիվ զինվորներով, պատերազմելու փորձ շունե-

ցող ժողովրդով չճակատել մոլեգնած, բռնկված, պատերազմական փորձ ունեցող զորքի հետ: Բայց նա չկարողացավ նրան համոզել, քանզի իրեն հակադրվում էր Կոստանդինը, Լիխուդես մականվանյալը, որ այն ժամանակ կայսեր կողմից գլխավոր էր նշանակված և նրա վրա մեծ ազդեցություն ուներ, բացի այդ [դրսում կովելու] միտքն իրենն էր: Եվ ահա, երբ ապստամբն իմացավ, որ նրանք երեկոյան դուրս են եկել, զինեց իր զինվորներին և ուժեղ թափով հարձակվեց՝ կայծակի արագությամբ անցնելով խրամը, պարտության մատնեց նրա ետևում գտնվողներին, որոնց մի մասը գերի ընկավ, իսկ մյուսը՝ փախչելով դեպի քաղաքի խրամը, վայր ընկավ և շարաշար կոտորվեց: Փախուստի էին դիմում քաղաքացիները՝ իրենց պարսպից ցած գահավիժելով, նաև՝ վլախերնայի պարսպի դարբասպանները՝ դարբասները բացելով: Եթե բախտը ինչ որ տեղում չդավաճաներ Թոռնիկին, նա հեշտությամբ մուտք կգործեր և ամեն ինչի տերը կդառնար: Բայց նա [հակառակորդներին] հետապնդելով մինչև պարսպի մոտ գտնվող խրամը, կանգ առավ, որի ընթացքում կայսեր կողմնակիցները դարձյալ գոտեպնդվելով, տիրացան դարբասներին և զբաղվեցին պարիսպների պահպանությամբ: Այն ժամանակ կայսրն էլ քիչ էր մնացել նետահար լինելու ու սպանվելու, բայց իսկապես աստված փրկեց նրան. նետը խրվեց սպասավորներից մեկի կոնածև գլխանոցին, որը փրկեց և գլխանոցը կրողին, և կայսեր: Ընկնելու մոտ գտնվող քաղաքն ահա այսպես փրկվեց, ապստամբը ճամբարում մի քանի օր մնալուց հետո, այնտեղից վեր կացավ ու վերադարձավ Արկադիուպոլիս: Պատճառն այն էր, որ իր մարդիկ կամաց-կամաց հեռանում էին, կամովին կայսեր կողմն անցնում, նա վախեցավ, որ բոլորն իլ իրեն կլքեն, կհեռանան, գուցե անգամ կբռնեն ու կայսեր ձեռքը կհանձնեն: Թոռնիկը Հովհաննես Բատացեսի հետ բանակեց այնտեղ ու սպասողական վիճակում էր, իսկ իր արյունակից ազգականներ՝ արևմտյան տազմանների հրամանատարներ Թեոդորոսին (մականունը Ստրավոմիտես), Պոլլուս կոչվածին և Մարիանոս Բրանասին ուղարկեց պաշարելու Ռեդեստոս քաղաքը: Այնպես պատահեց, որ մակեդոնական ու թրակական քաղաքներն իր կողմն էին անցել բացի [Ռեդեստոսից], որը քաղաքի եպիսկոպոսի և տեղացի ոմն մեծատան՝ Բատացիս կոչվածի՝ Թոռնիկի ազգականի ջանքերով հավատարիմ էր մնացել կայսեր: Այն պատճառով, որ նրանք գնալով այնտեղ ժամավաճառ եղան



և ոչինչ գլուխ չբերեցին, նա էլ բովանդակ բանակով գնաց այնտեղ, քաղաքի վրա գրոհեց, գործի գրեց ամեն տեսակի մեքենաներ, բայց չորս կողմից դիմադրութեան հանդիպեց (պաշարյալները քաջաբար ետ էին մղում մեքենաները), դրա համար նա վերացնելով պաշարումը Արկադիուպոլիս վերադարձավ: Հենց այդ միջոցին արևելյան զորքերը նրիսուպոլսից ու Աբյուգոսից անցան Թրակիա: Կայսրը նրանց զորավար նշանակելով մագիստրոս Միքայել Իասիտեսին<sup>538</sup>, ապստամբի դեմ ուղարկեց: Վերջինս ուժերը մի տեղում հավաքելով, ապստամբների դեմ հանդիման, նախահարձակ շէր լինում, այլ միայն ասպատակում էր ապստամբներին պատկանող շրջանները, իր ձեռքն ընկնողների նկատմամբ մարդասիրաբար էր վարվում, [ապստամբներին] ծածուկ նամակներ էր ուղարկում՝ ներում խոստանալով և առատ պարգևատրութուն: Երբ վրա հասավ ձմեռը և իրենք ապստամբներն ու նրանց գրաստներն ու ձիերը պարենի պակաս զգացին, ի վիճակի չլինելով ընդդիմակայել և սառնամանիքին, և սովին, և հակառակորդներին, կամաց-կամաց սկսեցին անցնել մագիստրոսի կողմը: Քանի դեռ դասալքութունն անկարևոր մարդկանց շարքերում էր և ոչ անվանիների, Թոռնիկը ապստողական վիճակում էր և սնվում էր հույսերով: Բայց երբ Մարիանոս Բրանասը, Պոլյուսը, Թեոգորոս Ստավրոմիտեսը, Գլավայի ընտանիքին պատկանողները և նշանավոր այլ անձինք, իրեն լքեցին ու Իասիտեսի կողմն անցան, Թոռնիկը ապստամբների ճամբարում իրենից հետո երկրորդ մարդը համարվող Հովհաննես Բատացեսի հետ դիմեց փախուստի, բայց քանի որ հնարավոր չեղավ ճողոպրել, ապավինեց ինչ-որ եկեղեցում, իսկ ապստամբների խաժամուժը ցրվեց: Իասիտեսը մարդ ուղարկեց և ձերբակալելով նրանց, շղթայակապ կայսեր ուղարկեց, իսկ զինվորներից յուրաքանչյուրը կայսեր հրամանով իր հայրենիքը վերադարձավ: Թոռնիկն ու Բատացեսը կուրացվեցին Քրիստոսի

25—XII ծննդյան օրվա երեկոյան<sup>539</sup>, ապստամբին մինչև վերջ հավատա—  
—1047 ընդ մնացածները հրապարակայնորեն ծաղր ու ծանակի ենթարկվելով, աքսոր ուղարկվեցին, իսկ նրանց ունեցվածքն էլ բռնագրավվեց: Ապստամբութունն ահա այսպիսի վախճան ունեցավ<sup>540</sup>, որին հաջորդեցին թուրքերի փորձանքները:

9. Ովքե՞ր են թուրքերը և ի՞նչ ձևով սկսեցին պատերազմել հռոմայեցիների դեմ, ես հեռվից սկսելով, կպատմեմ: Թուրքաց ազգը հոնական է և բնակվում է Կովկասյան լեռների հյուսիսում:

Այն բազմամարդ է, ինքնավար և ոչ մի ժամանակ, ոչ մի ազգի կողմից չի հպատակվել: Երբ սարակինոսները վերացրին պարսից իշխանությունը և սարակինոսների տիրապետությունը տարածվեց ոչ միայն Պարսկաստանի, Մարաստանի, Բաբելոնի և Ասորեստանի, այլև Եգիպտոսի, Լիբիայի և Եվրոպայի ոչ փոքր մասի վրա, և այն պատճառով, որ տարբեր ժամանակներում նրանք իրար դեմ պատերազմելով այդ միասնական, մեծագույն իշխանությունը բազում մասերի տրոհվեց, Իսպանիան ունեցավ մի առաջնորդ, Լիբիան՝ մի ուրիշը, նույն ձևով առանձին առաջնորդներ ունեցան Եգիպտոսը, Բաբելոնը, Պարսկաստանը: Նրանց միջև համերաշխություն չկար, դեռ ավելին, հարևանը հարևանի դեմ էր պատերազմում: Վասիլ կայսեր ժամանակ Պարսկաստանի, խորեզմցիների, օրետանների և Մարաստանի առաջնորդ Մոհամմեդը՝ Իմբրայելի որդին, պատերազմ էր մղում հնդիկների և բաբելացիների դեմ, բայց պարտություն էր կրում, դրա համար նա որոշեց դեսպանություն ուղարկել Թուրքիայի իշխանի մոտ և նրանից ղինական օգնություն աղերսել: Նա դեսպանություն է առաքում նրա մոտ, թանկագին ընծաներ և խնդրում իրեն երեք հազար հոգուց բաղկացած ղինական օգնություն: [Թուրք իշխանը] շատ սիրալիր ընդունեց դեսպանությանը, ուրախացավ նվերների վրա, և նրան ուղարկեց երեք հազար մարդ. նրանց առաջնորդն էր Միքեէլի<sup>541</sup> որդի ճողրուլ բեկ<sup>542</sup> Մուկալետր: [Թուրք իշխանը] հույս ուներ, որ եթե այդ [երեք հազար հոգին] կարողանան ետ մղել սարակինոսների վրա հարձակվողներին, շատ հեշտությամբ մատչելի կդարձնեն Արաբս գետի կամուրջը, որը երկու կողմից աշտարակներով ու ամեն կողմից պահպաններով պաշտպանված լինելով, խոչընդոտում է թուրքերի մուտքը Պարսկաստան<sup>543</sup>, նա հույս ուներ, որ նրանք կոչնչացնեն պահպաններին և պարսից երկիրն իրեն կհպատակեցնեն: Երբ վարձկանները տեղ հասան, Մոհամմեդը նրանցով ու իր ուժերով հարձակվում է արաբների իշխան Պիսասիրիոսի<sup>544</sup> վրա և հեշտությամբ պարտության մատնում. արաբները չկարողացան դիմանալ նետաձգության: Վերադառնալով իր տեղը, նա ջանում էր [թուրքերի] օգնությամբ ընկճել նաև իր դեմ պատերազմող հնդիկներին: Բայց [թուրքերը], որոնց վստահված էր Արաբսի կամրջի պահպանությունը, նրանից խնդրեցին թույլ տալ վերադառնան իրենց երկիրը, բայց քանի որ նա չընդառաջեց նրանց և մտադիր էր իրենց նկատմամբ բռնություն բանեցնել,



նրանք երկյուղելով հնարավոր փորձանքից, ապստամբեցին: Նը-  
 րանք մուտք գործեցին Կարբոնիտես անապատը, բայց լինելով  
 փոքրաթիվ, չհամարձակվեցին այդքան բյուրավորների դեմ ճա-  
 կատել, դրա համար սկսեցին այնտեղից հարձակումներ գործել,  
 ասպատակել ու տակնուվրա անել սարակինոսների [շրջաններ]:  
 Այդ բանը Մոհամմեդին զայրացրեց և նա 20 հազարանոց զորք  
 հավաքելով, թուրքերի դեմ ուղարկեց, նրա վրա նշանակելով ամե-  
 նատոհմիկ ու խոհեմ, սարակինոսների շրջանում արիությամբ աշ-  
 քի ընկած տասը զորավարների: Ահա սրանք ճանապարհ ընկան  
 պատերազմելու, բայց մտածելով, որ ձեռնտու չէ մուտք գործել  
 անապատ, որտեղ ջրի ու պարենի պակասություն կզգային, բա-  
 նակեցին անապատի մուտքին մոտիկ, խորհելով իրենց անելիքի  
 շուրջը: Տողրուլ բեկը բանակել էր անապատի խորքում: Իմանա-  
 լով պատրաստված արշավանքի մասին, նա խորհրդակցեց իր  
 մարզկանց հետ և գտավ, որ սարակինոսների և պարսիկների  
 վրա նպատակահարմար է գիշեր ժամանակ հարձակվել: Նա  
 երկու օր արագ քայլով գնաց և երրորդ օրվա գիշերը հարձակվեց  
 վրանների տակ անհոգ նստածների և ոչ մի վտանգ չակնկալող-  
 ների վրա: Նա իսկույն նրանց պարտության մատնեց, տիրացավ  
 բազում զենքերի, ձիերի, հարստության և այսուհետև ասպա-  
 տ: չկում էր ոչ թե փախստականի կամ ավազակի նման թաքուն  
 կերպով, այլ ականհայտ ու բաց դաշտում, քանզի իր կողմն էին  
 անցնում նաև իրենց գործած ոճրի համար մահապատժից խու-  
 սափող մարդիկ, ստրուկներ, ավազակության սիրահարներ,  
 այնպես, որ կարճ ժամանակվա ընթացքում նա մեծագույն ուժ  
 կազմեց, շուրջ 50 հազար հոգի: Նրա վիճակն ահա այսպիսին էր:  
 Իսկ պարտությունից անչափ ղզացված, խոր տրտմության մեջ  
 ընկած Մոհամմեդը կուրացրեց տասը զորավարներին, փախուս-  
 տով վերապրած զինվորներին սպառնաց կանացի շորեր  
 հագցնել ու ծանակել: Եվ նախապատրաստվեց ճակատելու:  
 Պարտություն կրած ղինվորները, իմանալով սպառնալիքների  
 մասին, Տողրուլ բեկի կողմն են անցում: Ահա այդքան ու այս-  
 պիսի հսկայական ուժ ձեռք բերելով, [Տողրուլ բեկը] վերցնելով  
 իր բովանդակ զորքը, Մոհամմեդի դեմ շտապեց, ջանալով ճա-  
 կատամարտում վճռել հարցը: [Մոհամմեդն] իր հերթին զինե-  
 լով սարակինոսների, պարսիկների, կաբիրների և արաբների՝  
 մոտ հինգ հարյուր հազարանոց բանակ կազմեց: Նա ուներ նաև  
 հարյուր աշտարակակիր փղեր, ահա բոլորին վերցնելով, ընդդի-

մակայում է Ասպահան կոչվող [տեղում]: Սահմուկելի ճակատամարտ է տեղի ունենում, երկու կողմից էլ շատերն են ընկնում, այդ թվում և ինքը՝ Մոհամմեդը: Նա ձի նստած այստեղ, այնտեղ էր գնում իր զորքերին գոտեպնդելու, բայց ձիով հանդերձ դետին տապալվելով, մեռավ: Նրա անկումից հետո նրա ամբողջ զորքը հակառակորդի հետ հաշտվեց և Տողրուլ բեկը բուլոբի կողմից Պարսկաստանի թագավոր հռչակվեց: Թագավոր հռչակվելով, նա [զորք] ուղարկեց ու վերացրեց Արաքսի կամրջի պահպանությունը, որով հնարավորություն տրվեց թուրքերին հանգիստ մուտք գործել Պարսկաստան: Եվ նրանք, խոչընդոտից ազատված, զանգվածորեն ներխուժեցին (բացի նրանցից, ովքեր չէին ուղում հեռանալ իրենց հայրենիքից), տապալեցին պարսից ու սարակինոսների իշխանությունը, Պարսկաստանի տերը դարձան, իսկ Տողրուլ բեկին սուլթան կոչեցին, ասել է՝ ամենակալ և արքայից արքա: Սա բուլոբ պաշտոնները տեղացիների ձեռքից խլեց ու տվեց թուրքերին, համայն Պարսկաստանը նրանց միջև բաժանեց, տեղացիներին կատարաջապե՝ տապալեց ու ընկճեց:

10. Երբ նա որոշեց, որ իրավիճակն իր ոգտին է, նախ ըսկըսեց իր սահմանակից տիրակալների դեմ պատերազմել. ինքն անձամբ ճակատեց Բաբելոնի արխոնտ Պիսասիրիոսի դեմ և տարբեր մարտերում նրան հաղթելով և ոչնչացնելով, դարձավ բաբելացվոց երկրի տիրակալը, իսկ արաբների առաջնորդ Կարվեսեսի դեմ Կուալումուշին<sup>545</sup> ուղարկեց, իր հարազատ հորեղբորորդուն, տալով հզոր բանակ: Սա գնաց, արաբներին պատերազմ տվեց, բայց պարտվեց ու խայտառակ կերպով փախուստի դիմեց: Պարտությունից հետո ետ վերադառնալիս, նա պետք է Մեդիայի, այն է՝ Վասպուրականի միջով անցներ (այս նահանգի կառավարիչն էր կայսեր կողմից ուղարկված պատրիկ Ստեփանոսը, կայսեր պարագիհնաստևոն<sup>546</sup> Կոստանդին Լիխուդեսի որդին), դրա համար [Կուալումուշը] նրա մոտ պատվիրակներ ուղարկեց, խնդրելով թույլ տալ առանց որևէ խոչընդոտի անցնել, ամենասարսափելի երդումներով խոստանալով ձեռք չտալ, անվնաս թողնել նահանգը: [Ստեփանոսն] ընդունեց պատվիրակներին և նրա խնդրանքը երկյուղի նշան համարելով, հավաքեց տեղական զորքը, թուրքերին պատերազմով դիմավորելու համար: Այդ բանը Կուալումուշին գցեց խոր մտահոգության մեջ (իր ողջ զորքը, որ պարտությունից էր վերադառնում,



անձի էր ու անզեն), բայց կամա-ակամա ստիպված եղավ ճակատել: Մարտում Ստեփանոսի զինվորները պարտութուն են կրում, հենց ինքը [Ստեփանոսը] բազում ուրիշների հետ գերի է ընկնում: Թավրիզի վրայով անցնելիս [Կուտլումուշը] նրան երկրրի տոպարխին է ծախում<sup>547</sup>, իսկ ինքը վերադառնում սուլթանի մոտ, զեկուցում իր պարտության մասին, պարտության մեղքը ուրիշների վրա գցում և խոստանում, որ եթե ինքը դարձյալ զորք ստանա և արշավի Կարվեսեսի դեմ, Արաբիան հեշտությամբ [սուլթանին] կհպատակեցնի: Ի միջի այլոց նա պատմեց նաև Վասպուրականի մասին, թե շատ բարեբեր երկիր է, բայց գտնվում է կանանց ձեռքում, իր դեմ 'ուշված զինվորներին ակնարկելով<sup>548</sup>: Սուլթանը, սակայն, նրա կրած խայտառակ պարտությունից գազազած, ծրագրում էր բռնել ու սպանել նրան, բայց և երկյուղում էր հոռմայեցիների դեմ զենք շարժել, նա վախենում ու սարսափում էր նախորդ ևրեք կայսրերի՝ Նիկեփորի, Հովհաննեսի և Վասիլի քաջագործությունների համբավից միայն, կարծում, թե հոռմայեցիները դեռ այդ նույն արիության ու հզորության տեր են: Նա տատանողական վիճակում էր, երկմտության մեջ և իր անելիքի մասին էր մտածում: Կուտլումուշը, իմանալով սուլթանի խարդավանքի մասին, իր մարդկանց հետ փախուստի է դիմում և խորեզմցիների [երկրում] գտնվող մի ամրագույն քաղաք գրավելով, անունը Պասար, դառնում է սուլթանի հակառակորդը: [Սուլթանը] տվյալ պահին զբաղված լինելով, չփորձեց նրա դեմ պատերազմել, և հավաքելով իր բովանդակ ուժերը, դուրս եկավ ընդդեմ արաբների, բայց ճակատամարտում ինքը ևս պարտվեց: Պարտությունից վերադառնալով և շկարողանալով հաշտվել խայտառակության հետ, ինչպես և Կուտլումուշից կրած անարգանքի, վերցնելով զորքի մեծ մասը, անձամբ գնում է Պասար և երկարատև պատերազմ մղում հարազատ հորեղբորորդու դեմ, որը վստահ լինելով քաղաքի ամրությունը, հաճախ բաց էր անում դարբասներն ու դուրս գալով մեծ վնաս հասցնում սուլթանի զորքերին: Իսկ հոռմայեցիների դեմ սուլթանը շուրջ 20 հազար հոգուց բաղկացած մի այլ բանակ է ուղարկում, զորավար նշանակելով իր եղբորորդի Հասանին՝ մականունը Խուլ, կարգադրելով շատ շտապ տեղ հասնել և եթե հաջողվի, իրեն ենթարկել Մեդիան<sup>549</sup>, Ահա այս վիճակն էր տիրում Պարսկաստանում:

11. Իբերիայի<sup>550</sup> առաջնորդ Բագարատը, մի անառակ մարդ,

պղծել էր Լիպարիտի մահիճը (Լիպարիտը որդին էր Վասիլ կայսեր օրոք Գեորգիոսի դեմ մղված պատերազմում սպանված Օրատիոս Լիպարիտի, իր ողջամտությամբ ու արիությամբ հռչակված մի մարդ, որն իբերների մեջ Բագարատից հետո ամենամեծ ուժն ուներ)<sup>551</sup> և իր այդ արարքից անչափ զայրացած Լիպարիտին ստիպել իր դեմ ապստամբություն բարձրացնել: Պատերազմում հաղթելով, [Լիպարիտը] նրան շարտում է Կովկասյան լեռները և խորին Աբազգիա, իսկ մտնելով արբունիք, բռնաբարում իր տիրուհուն՝ Բադարատի մորը և Իբերիայի տերն ու տիրականը դառնում: Նա նամակ է դրում կայսեր, խընդրելով դառնալ հռոմայեցիների բարեկամն ու դաշնակիցը: [Կայսրը] ընդունեց նրա դեսպանությունը և [Լիպարիտի] հետ հասեպտ. մագործակցություն հաստատեց: Որոշ ժամանակ անց, Բագարատը Փասիս գետի վրայով, սվանների և կոլխերի երկրով ընթանալով, գալիս է Տրապիզոն, որաեղից կայսեր սուրհանդակներ է ուղարկում, հայտնելով, թե ցանկություն ունի մայրաքաղաք գալ և նրան հանդիպել: [Կայսրը] թույլ տվեց և նա գալով [մայրաքաղաք], հանդիպեց կայսեր, նախ շատ պարսավեց նրան՝ ասելով, թե նա կայսր լինելով և Աբազգիայի նման մի մեծ երկրի առաջնորդի հետ դաշինք ունենալով, դրժեց այդ և անցավ հասարակ մի մարդու, ապստամբ ստրուկի կողմը: Վերջում նա խնդրեց, որ կայսրն իրենց հաշտեցնի: Կայսեր ջանքերով նրանք համաձայնություն կնքեցին, որով Բագարատը համայն Իբերիայի և Աբազգիայի տերն ու առաջնորդն է, իսկ [Լիպարիտը]՝ Մեսիսիայի մի մասի կառավարիչը, որ ցմահ տեր և թագավոր է ճանաչելու իրեն՝ [Բագարատին]: Ահա Աբազգիայի հարցն էլ այսպես լուծվեց<sup>552</sup>:

1048

2. Սուլթանի կողմից հռոմայեցիների դեմ ուղարկված Հասանը, անցնելով Թավրիզն ու Թիֆլիս<sup>553</sup> կոչվողը, եկավ Վասպուրական, հանդիպածն ավերելով ու կրակի տալով, ձեռքն ընկնողին սպանելով, շինայելով անգամ երեխաներին: Նահանգի կառավարիչ վեստ Ահարոնը՝ Վլազիսլավի որդին և Պրուսիանի եղբայրը<sup>554</sup>, տեսնելով, որ ինքը կարող չէ պետք եղածին պես պատերազմելու և ընդդիմակայելու թուրքերի այդպիսի բազմություն, նամակ ուղարկեց Անիի և Իբերիայի կառավարիչ վեստ Կատակալոն Կեկավմենոսին, կոչ անելով հնարավոր բոլոր ուժերով օգնության հասնել: Նա, ստանալով նամակը, անհապաղ իր զորքերը հավաքեց, շտապ կարգով ճամփա ընկավ ու միացավ



Ահարոնին: Նրանք խորհրդակցեցին, ինչպե՞ս անել, գիշեր ժամանակ մարտ տալ, թե՞ ցերեկով: Կեկավմենոսը դեմ էր և մեկ, և մյուս առաջարկին, նա մտածում էր այլ ձևով հաղթահարել թշնամիներին: Նա խորհուրդ տվեց թողնել ճամբարը ինչպես որ կա՝ վրաններով, գրաստներով ու մնացած հանդերձանքով և գիշեր ժամանակ ամենակարևոր տեղերում դարանակալել: Թուրքերը տեղ հասնելով կսկսեն հափշտակությամբ զբաղվել, ահա այդ միջոցին պետք է դարաններից դուրս գալ և հարձակվել նրանց վրա: Նրա ենթադրությունը ճիշտ դուրս եկավ: Հասանն արշալույսին դուրս գալով Ստրագնա գետի<sup>555</sup> մոտ գտնվող իր ճամբարից, գնում է պատերազմելու: Երբ նրան ոչ ոք դեմ չեկավ, նա մոտեցավ հռոմայեցիների ճամբարին, որը ո՛չ պահակություն ուներ, ո՛չ էլ որևէ տեղից ձայն էր լսվում: Այնտեղ շկար և ոչ մի զինվոր: Ենթադրելով, որ հռոմայեցիները փախուստի են դիմել, նա բազում տեղերից քանդում է ցանկապատը և հրամայում ավարը հափշտակել: Հռոմայեցիները երեկոյան մոտ դարաններից դուրս գալով, կազմ ու պատրաստ հարձակվում են անկազմակերպ թուրքերի վրա և իսկույն փախուստի մատնում նրանց, որ շկարողացան ընդդիմակայել հռոմայեցիների անընկճելի թափին: Առաջինն ընկնում է Հասանը, որ առաջին շարքի վրա էր կռվում, ընկնում է նաև թուրքերի զորքի ամբողջ ծաղիկը: Շատ քչերն աղատվեցին և անզեն, լեռների վրայով ապաստան գտան Պերսարմենիայի քաղաքներում:

13. Սուլթանը աղետի մասին փախստականներից տեղեկանալով, մեծ տագնապի մեջ ընկավ և մտածում էր ինչպես դուրս գալ ծանր վիճակից: Նա թուրքերից, կաբիրներից և դայլամցիներից բաղկացած 100 հազարանոց ընտիր զորք կազմեց, այն տրվեց իր խորթ եղբայր Աբրահամ Ալիմին<sup>556</sup> և հռոմայեցիների դեմ ուղարկեց: Երբ [թուրքերի] արշավանքի մասին լուրը տեղ հասավ, զորքերի վերոհիշյալ զորահրամանատարները դարձյալ միանալով, նստեցին խորհրդակցության՝ վճռելու իրենց անելիքը: Կեկավմենոսը գտնում էր, որ առկա զորքով պետք է թուրքերին ընդդիմակայել հռոմեական սահմաններից դուրս և այնտեղ պատերազմել, քանի դեռ հակառակորդների մեծ մասը անձի է, իսկ մնացած զորքն էլ երկար ճանապարհորդությունից հոգնած: Բացի այդ, թուրքերը զգում են երկաթների պակաս, որոնցով նրանք սովորություն ունեն ծածկել իրենց անասունների սմբակները: Ինչ վերաբերում է հռոմայեցիներին, ապա նրանք

իրենց տարած հաղթանակից արիացած ու գոտեպնդված, թշնամիների հետ կռվի բռնվելու ցանկություն ունեն: Ահարոնը ընդհակառակը, ասում էր գործի շղենը զորքերը, այլ գտնում էր, որ պետք է ամրացնել քաղաքներն ու բերդերը<sup>557</sup>, ամեն ինչ ներփակել պարիսպների ետևում, վիճակի մասին հայտնել կայսեր և առանց նրա համաձայնության փոքրաթիվ ուժերով չպատերազմել բարբարոսների այդքան մեծաթիվ զորքերի դեմ: Զորավարներն այդպես ասացին և ընդունվեց Ահարոնի առաջարկը: Նրանք բանակով գնացին Իբերիա և տեղացիներից Ուրտրու կոչվող<sup>558</sup> դաշտում, բաց երկնքի տակ, հանգիստ մնացին, նախապես ամրությունների մեջ առնելով մշակ ժողովրդին, կանանց ու երեխաներին և արժեք ներկայացնող ամեն մի առարկա: Ապա սուրհանդակով կայսեր նամակ ուղարկեցին, հայտնելով նրան հակառակորդների հարձակման մասին: Կայսրը, ստանալով նամակը, հրամայեց սպասել, մինչև որ Լիււարիտը իբերական զորքով կմիանա հռոմեական զորքերին, իսկ [Լիպարիտին] էլ նամակ ուղարկեց՝ կարգադրելով, որ եթե նա իրեն հռոմայեցիների բարեկամն է համարում և դաշնակիցը, ապա անհապաղ վերցնի իր համայն զորքը, միանա հռոմայեցիների զորավարներին և նրանց հետ պատերազմի բարբարոսների դեմ: Զորավարները նամակն ստանալով, հրամանի համաձայն հանգիստ էին, սպասելով Լիպարիտի գալստյան, իսկ վերջինս, ստանալով կայսեր հրամանը, եռանդագին հավաքեց իր զորքը և սկսեց այն զինել: Քանի դեռ նա հավաքում էր իր ուժերը, ժամանակն անցնում էր, և այդ միջոցին Աբրահամը հասավ Վասպուրական: Իմանալով, որ հռոմայեցիները նախապես այնտեղ էին կենտրոնացած և իր գալստյան մասին իմանալով, նահանջեցին Իբերիա, բնական է, այդ բանը երկյուղի նշան համարեց և թալանն ու ավարառությունը մի կողմ թողած, ընկավ նրանց ետևից, ջանալով ճակատամարտ տալ նախքան նոր ուժեր կմիանային նրանց: Հռոմայեցիների զորավարները, իմանալով այդ մասին, երկյուղեցին, որ չլինի թե ստիպված լինեն պատերազմի բռնվել նախքան Լիպարիտի հասնելը: Նրանք իջան մի գահավեժ, չորս կողմից կիրճերով շրջապատված դժվարանցանելի վայր, հանգիստ մնացին, միաժամանակ նամակ գրեցին Լիպարիտին՝ առանց հապաղելու դալ: Աբրահամը, չհանդիպելով հռոմեական բանակին, եկավ Արծն կոչվող [տեղը]: Արծնը բազմաբյուր բնակչություն ունեցող շատ հարուստ մի գյուղաքաղաք է, այստեղ բնակվում էին



բնիկ վաճառականներ և ասորիների, հայերի ու այլ ազգերի մեծաթիվ ժողովուրդ: Մոտիկ էր գտնվում Թեոդոսուպոլիսը, ամուր ու անառիկ պարիսպ ունեցող մեծագույն մի քաղաք, և հակառակ որ Կեկավմենոսը նամակ գրելով սպառնաց ու հրամայեց նրանց պատսպարվել [այդ քաղաքի] պարիսպների մեջ, նրանք, հույսը դնելով իրենց բազմաթվություն վրա, շուրջին այդ անել: Թուրքերը վրա հասնելով, գործի անցան, իսկ Արծնի բնակիչները փակելով ճանապարհները և բարձրանալով տների [տանիքները], քարերով, փայտերով ու աղեղներով ընդդիմակայում էին հարձակվողներին: Նրանք ամբողջ վեց օր մարտնչեցին: Երբ այդ բանը հայտնեցին զորավարներին, Կեկավմենոսը շատ էր պնդում ու հորդորում գնալ, հարձակվել թուրքերի վրա, որոնք մտադիր էին սլաշարման անցնել, իզուր շնստել ու ժամավաճառ չլինել սպասելով Լիպարիտի փուշ օգնությունը, հարմար առիթը ձեռքից բաց չթողնել, որը դժվար կլինի դարձյալ ձեռք բերել: Նրան հակադրվեց Ահարոնը, որն ասում էր, թե չպետք է կայսեր հրամանին հակառակ որևէ բան անել, դրա վրա ահա [Կեկավմենոսն] էլ հանգիստ նստել էր: Աբրահամը, տեսնելով որ դեպքերն իր ուզածին հակառակ են ընթանում, չի կարողանում պաշարմամբ գրավել գյուղաքաղաքը, արհամարհեց հարստությունն ու ավարը և հրամայեց տները կրակի տալ: Թուրքերն անհապաղ ջահեր վերցնելով և դյուրավառ նյութեր կրակի տալով, գցում էին տների վրա: Չորս կողմից հուրը բորբոքվեց, հսկայական հրդեհ բռնկվեց: Արծնցիք, չկարողանալով դիմանալ կրակին ու նետահարության, դիմեցին փախուստի: Ասում են, թե կորավ շուրջ 150 հազար տղամարդ, որոնց մի մասը սրի, մյուսը՝ կրակի զոհ դարձավ: Նրանք, երբ համոզվեցին, որ պարտվելու են, կանանց ու երեխաներին սրի քաշելուց հետո, իրենց կրակն էին նետում: Ահա այսպես գրավվեց Արծնը, Աբրահամն այնտեղ շատ ոսկի, զենք և այլ պիտանի մետաղյա իրեր գտավ, ինչ որ կրակից չէր վնասվել, նա ձեռք բերեց նաև մեծ թվով ձիեր ու գրաստներ և իր զորքը պետք եղածին պես զինելով, հեռացավ՝ փնտրելով հոռմեական զորքը<sup>559</sup>:

1049

14. Լիպարիտը վերջը տեղ հասավ և [հռոմեական բանակը], իջնելով հիշյալ ամրությունից, բանակեց մի դաշտում, մի լեռան ստորոտին, որտեղ գտնվում է Կապետոու բերդը<sup>560</sup>: Թուրքերն անկազմակերպ առաջանում էին. Կեկավմենոսը դարձյալ խորհուրդ էր տալիս, քանի նրանք ցրված են և անկազմակերպ, հար-

1049

ձակվել նրանց վրա: Բայց Լիպարիտը չէր ուզում, որովհետև օրը շաբաթ էր, ինդիկտիոնի 2-րդ տարվա սեպտեմբեր ամսի 18-ը: Լիպարիտի համար շաբաթը շարագուշակ օր էր<sup>561</sup> և նա վախենալով դրանից, խուսափում էր պատերազմել: Հռոմայեցիների դրուժյունն ահա այսպիսին էր, իսկ Աբրահամը առաջ ուղարկվածներից իմանալով հռոմայեցիների ճամբարած վայրը և այն մասին, թե նրանք հանգիստ նստած են, հավաքեց իր ուժերը և կազմ ու պատրաստ շարժվեց պատերազմելու: Հակառակորդ բանակը այդ տեսնելով, ակամայից ինքն էլ ճակատեց: Այ թեև գլխավորում էր Կեկավմենոսը, ձախը՝ Ահարոնը, իսկ կենտրոնում կանգնեց Լիպարիտը: Երեկոյան մոտ էր: Կեկավմենոսի գիմաց կանգնած էր Աբրահամը, Ահարոնի գիմաց՝ Խորոսանտեսը<sup>562</sup> մյուս զորավարը, իսկ Լիպարիտի գիմաց՝ Ասպան Սալարիտոսը<sup>563</sup>, Աբրահամի խորթ եղբայրը: Երբ մարտն սկսվեց, Կեկավմենոսն ու Ահարոնն իրենց գիմացի [Թշնամի] թևերը պարտուժյան մատնեցին և մինչև արշալույս հետապնդում էին: Իսկ Լիպարիտը, որի քեռորդին<sup>564</sup> [մարտում] ընկած լինելու պատճառով վիշտ էր ապրում, ուժեղ թափով հարձակվեց, բայց իր ձին խոցվեց ու ընկավ, ինքն էլ գերի վերցվեց<sup>565</sup>: Այստեղ վիճակն այսպիսին էր, իսկ հռոմայեցիները դադարեցնելով [Թշնամու] հետապնդումը, իշան ձիերից և հաղթանակի առթիվ աստծուն գոհուժյուն հայտնեցին, միաբերան երգեցին «Ա՛բր աստծուց մեծ աստված շկա» հիմնը: Նրանք Լիպարիտին էին սպասում, վստահ լինելով, որ նա ևս հետապնդում է թշնամիներին: Բայց երբ նա ոչ մի տեղից չերևաց, դժվարին վիճակի մեջ ընկան, չգիտեին, ի՞նչ կարող է պատահած լինել: Նրանք այդպես շվարած մնացել էին, երբ Լիպարիտի զինվորներից մեկն եկավ ու զորավարներին հայտնեց նրա պարտվելու և գերեվարվելու մասին, թե ինչպես Աբրահամը փախուստից վերադառնալով և միանալով իր հարազատ եղբորը (մարտում Հասանն սպանվել էր), վերցրեց Լիպարիտին և գերի ընկած իբերներին ու արագ շարժվեց Կաստրոկոմե կոչված վայրը<sup>566</sup>: Զորահրամանատարներն այս լուրը լսելով ապշեցին, գիշերն անքուն անցկացրին, իսկ երբ լույսը բացվեց, նստեցին խորհրդակցուժյան: Բոլորը նպատակահարմար գտան, որ յուրաքանչյուրն իր տեղը գնա: Ահարոնն ահա վերցնելով իր զինվորներին գնաց Վան (սա Վասպուրականի մայրաքաղաքն է), իսկ Կեկավմենոսն իր [զինվորներով] բարձրացավ Անի<sup>567</sup>: Աբրահամը բավարարվեց գերի վերցրած Լիպա-



րիտով, այդ բախտավորության համար իրեն ամենաերջանիկ մարդն համարեց և առանց երկար-բարակ մտածելու, արագացրած քայլով, հինգ օրում հասավ Ռե<sup>568</sup> կոչվող [տեղը], այնտեղից էլ գնաց սուլթանի մոտ, նախապես հաղթանակի մասին ավետիս ուղարկելով և կիպարիտին գերելու մասին լուրը հայտնելով: Սուլթանը կիպարիտին գերի վերցնելու կապակցությամբ արտաքուստ ուրախացավ ու բերկրեց, բայց շար նախանձով լցվեց նման հաջողության հասած իր եղբոր դեմ, և շարունակ մտածում էր, առիթ որոնում նրան մեջտեղից վերացնելու:

15. Կայսրը, իմանալով կիպարիտի գերվելու մասին, մեծ փափագ ուներ նրան փրկելու: Նա Գեորգիոսի՝ մականունը Դրոսոս (Դրոսոսը Ահարոնի հյուպոդրամատեսն էր)<sup>569</sup>, միջոցով սուլթանին թանկագին ընծաներ ու փրկագին ուղարկեց, խնդրելով կիպարիտին ազատ արձակել և հաշտություն կնքել: Սուլթանն ընդունեց դեսպանությունը և ուզենալով ցույց տալ, որ ինքը թագավոր է փառավոր և ոչ անազատ մի փերեզակ, [կիպարիտին] նվիրում է կայսեր: [Սուլթանը] թեև վերցրեց փրկագինը, բայց այն ամբողջությամբ կիպարիտին հանձնեց, նրան խորհուրդ տալով միշտ հիշել այս օրը և այսուհետև չցանկալ թուրքերի դեմ զենք շարժել<sup>570</sup>: Կայսեր մոտ ուղարկված դեսպանությամբ մասնակցեց նաև նրանց մոտ սերիֆոս<sup>571</sup> կոչվողը: Այս պաշտոնը կրողն այն ուժն ունի նրանց խալիֆայի մոտ, ինչ ժամանակին մեղ մոտ սինկելլոսը՝ պատրիարքի: [խալիֆայի] մահվան դեպքում [սերիֆոսն է] նրա աթոռին նստում: Ահա այս սերիֆոսը մայրաքաղաք մտնելով, հանդիպելով ու խոսակցելով կայսեր հետ, մեծ ամբարտավանություն ու պոռոտախոսություն հանդես բերեց, վերջը նա նկրտեց հռոմայեցիների երկիրն իր սուլթանին հարկատու դարձնել: Երբ տեսավ, որ կայսրը հեռու է այդ մտքից, ձեռնունայն վերադարձավ իրեն ուղարկողի մոտ: Իսկ կայսրը դրա հիման վրա սուլթանի կողմից պատերազմ ականակելով, ինչքան որ դա հնարավոր էր, [զորք] ուղարկեց ու ապահովեց Պարսկաստանի սահմանակից շրջանները: Այս նույն ժամանակ տեղի ունեցավ նաև պաթինականների հարձակումը: Թե ինչպե՞ս և ի՞նչ ձևով, այժմ կասվի:

16. Պաթինականները սկյութական ցեղ է, նա սերում է արքայական կոչվող սկյութներից, այն մեծ է ու բազմամարդ, նրան իր ուժերով ի վիճակի չէ ընդդիմակայել սկյութական և ոչ մի ցեղ: Նա բաժանվում է տասներեք տոհմի, որոնք թեև բոլորն էլ

նույն [պածինակ] անունն են կրում, բայց յուրաքանչյուրն ունի նաև սեփական հաջորջում՝ իր նախահոր և առաջնորդի անունից: Նրանք տարածվում են Իստրոսից այն կողմ ընկած շրջաններում, Բորիսթենես<sup>572</sup> գետից մինչև Պաննոնիա ձգվող դաշտերում, քոչվոր են և բացարձակապես վրանաբնակ: Այդ ժամանակները հիշյալ ցեղի առաջնորդն էր Վիլտերի որդի Տյուրախը, մեծատոհմիկ, բայց թուլամորթ և անդորր սիրող մի մարդ: Այդ ցեղի մեջ, սակայն, կար և մի ուրիշը՝ անունը Կեգեն, Վալցարի որդին, որ, թեև ծագումով աննշան մեկն էր ու անհայտ, բայց պատերազմական ու ռազմավարական գործերում շտեմնված կարող: Սա ընդդիմակայեց, հաղթեց ու ետ շարտեց բազում անգամներ պածինակների վրա արշաված ուղերին<sup>573</sup> (ուղերը հոնական ցեղ են), այն ժամանակ, երբ Տյուրախը չհամարձակվեց նրանց դեմ դուրս գալ, դեռ ավելին, թաքնվեց Իստրոսի մոտ տարածվող ճահճուտներում ու լճերի շուրջ: Պածինակները Տյուրախին հարգում էին իր ազնվական ծագման համար, բայց Կեգենի նկատմամբ հատուկ սեր էին տածում՝ նրա անշարիտության և պատերազմներում ցուցաբերած կարողության համար: Այդ բանը լսում ու տեսնում էր Տյուրախը, նրա հոգին խոցվում էր, նա վախենում էր իշխանությունը կորցնել և միջոց էր որոնում Կեգենին մեջտեղից վերացնելու: Նա բազում անգամ նրա դեմ որոգայթներ լարեց, բայց ոչ մեկն էլ արդյունք չտվեց: Երբ նրա բազում ծածուկ փորձերը ի դերև ելան, նա որոշեց չձգձգել և բաշահայտ գործել: Նա բազում մարդկանց ուղարկեց նրան բռնելու և սպանելու հրամանով: [Կեգենը] կանխավ իմանալով ոտնձգության մասին, փախուստի դիմեց Բորիսթենեսի ճահճուտները և այդ ձևով խուսափեց ոչնչացումից: Թաքնված լինելով այնտեղ և իր ազգականների ու տոհմի հետ ծածուկ կապեր հաստատելով, նա կարողացավ իր ցեղն անջատել թագավորի բարյացակամությունից (ցեղը կոչվում էր Վելեմարնիս), ապա նաև Պագումանիս [ցեղը], և զինական ուժ ստանալով, այդ երկու ցեղերով դուրս եկավ Տյուրախի դեմ, որի [կողմում էին] 11 ցեղ: [Կեգենը] բազում ժամեր դիմադրեց, բայց չկարողանալով հաղթահարել [հակառակորդի] մեծաթվությունը, պարտություն կրեց: Թափառելով ճահճուտներում և փրկություն փնտրելով, նա իր և իր մարդկանց փրկության համար միայն մի ելք գտավ, ապաստանել հոռմայեցիների կայսեր մոտ: Հասնելով Դորոստոլոն, ապահովության համար իր մարդկանցով



պարփակվեց գետի կղզիներից մեկում (նրանք 20 հազար հոգի էին) և շրջանի կառավարչին լուր ուղարկեց (նա Անաստասիոսի որդի Միքայելն էր), հայտնեց նրան իր ով լինելը, թե ինչպիսի վտանգից խուսափելով է հասել, որ ուզում է կամուլին հանձնվել կայսեր, և որ իր ընդունվելը մեծապես օգտակար կլինի նրան: Միքայելը նրա ասածն անհապաղ կայսեր հաղորդեց և իսկույն հրաման ստացավ ընդունել [Կեզենին], նրա մարդկանցով հանդերձ, տալ նրանց ինչ-որ անհրաժեշտ է<sup>574</sup>, [Կեզենին] էլ առոք-փառոք Բյուղանդիոն ուղարկել: [Միքայելը] գործեց ըստ հրամանի: Կեզենն եկավ մայրաքաղաք, կայսեր կողմից սիրով ու պատվով հյուրընկալվեց, խոստացավ ընդունել սուրբ մկրտությունը և համոզել իր մարդկանց նույնն անել: Նա պատրիկի պատվաստիճան ստացավ, Իստրոսի ափերին գտնվող երեք բերդ, բազում ասպարեզ տարածությամբ հողեր և դասվեց հոռմայեցիների բարեկամների ու դաշնակիցների շարքը: Այնուհետև, ըստ իր տված խոստումի, ինքն էլ, իր մարդիկն էլ ընդունեցին սուրբ մկրտությունը. այդ գործի համար նրանց մոտ ուղարկվեց մի բարեպաշտ վանական, ոմն Եվթիմիոս, որը Իստրոս գետի ափին կատարեց սուրբ խորհուրդը, բոլորին հաղորդեց սուրբ մկրտությամբ:

17. Իրեն ապահով զգալով և հանկարծակի հարձակումներից անվտանգ, նա սկսեց թշնամուց վրեժ առնել, անցնելով Իստրոս գետը, հազար կամ երկու հազար, դրանից ավելի կամ պակաս մարդկանցով և հանկարծակի ներխուժելով, Տյուրախին ենթակա պաժինակներին սոսկալի վնաս էր հասցնում, թալանում, գերի ընկած տղամարդկանց սպանում, կանանց ու երեխաներին ստրկացնում, վաճառում հոռմայեցիներին: Տյուրախն ի վիճակի չլինելով տանել Կեզենի այս անակնկալ հարձակումները, դեսպանություն է ուղարկում կայսեր մոտ, մեղադրանք ներկայացնելով, թե կայսրը, պաժինակների ցեղի հետ սլայմանագիր ունի կնքած, որով ամենևին չպետք է ապաստան տար իրենց ապրտամբին, և եթե տվել է, ապա թող թույլ չտա նրան անցնել [գետը] և ավարառել մի [ժողովրդի], որի հետ [կայսրը] պայմանագիր ունի: Արդ, պետք է [Կեզենին] թույլ չտալ այդպես գործել, հակառակ դեպքում իրենք հրաժարվում են դաշնակցությունից: Կայսրը թող իմանա, որ իրեն էլ, իր երկիրն էլ ծանրագույն պատերազմի մեջ է ներքաշում: Ահա սրանք էին Տյուրախի մեղադրանքները: Կայսրն այդ տեղեկությունն ստանալով, ծիծա-

1048 ղեց այն բանի վրա, որ պաժինակի սպառնալիքն իրեն պետք է ստիպեր իր կողմն անցած մարդուն դավաճանել, արգելեր վնասողներին վնասելը: Նա դեսպաններին ձեռնունայն ճամփու դրեց: Նա Պարիստրիոն քաղաքների<sup>575</sup> կառավարիչ Միքայելին, ինչպես և հենց իրեն՝ Կեղենին նամակ գրեց՝ արթուն կերպով ամառ պահպանել դետի ափերը, եթե մեծ ուժով հարձակում տեղի ունենա, նամակով հայտնել, որպեսզի արևմտյան տաղամաներից մի քանիսը ուղարկի, որոնց հետ նրանք արգելակեն պաժինակների գետանցմանը: [Կայսրը] հարյուր տրիերաներ էլ ուղարկեց. կարգադրելով նավարկել Իստրոս գետով և շրողնել պաժինակներին անցնել: Երբ դեսպանները ձեռնունայն վերադարձան, Տյուրախը ղայրացավ, գազազեց ու մաղթեց, որ ժամ առաջ ձմեռ գա: Աշունը վերջանում էր և վրա հասավ ձմեռը, արեգակն Այծեղջյուրում էր, փշեց հյուսիսային ուժեղ քամի և դետը մինչև տասնհինգ կանգուն խորության սառցակալեց: [Գետին] հսկելը բացարձակապես անհնարին դարձավ և Տյուրախը ձեռք բերելով իր աղերսած առիթը, անցնում է Իստրոսը բոլոր պաժինակներով, որոնք, ինչպես ասում են, ութ հարյուր հազար հոգի էին և դիրքեր գրավելով դիմացի կողմում, հանդիպածն ավերում ու ոչնչացնում էր: Կսյսեր նամակներ ուղարկվեցին, շտապ օգնության հասնելու խնդրանքով: Նա անհապաղ Աղրիանուպոլսի դուքսին (նա մագիստրոս Կոստանդին Արիանիտեսն էր) նամակ գրեց՝ վերցնել մակեդոնական ուժերը, ինչպես և Բուլղարիայի հեգեմոն Վասիլ Մոնախոսին՝ բուլղարական զորքը, գնալ միանալ Միքայելին ու Կեղենին, և նրանց հետ կովել պաժինակների դեմ: Նրանք կայսեր հրամանի համաձայն իրար միացան: Կեղենը, վերցնելով հոռմեական փաղանգները, բացօթյա բանակեց և ամեն օր հանկարծակի հարձակումներ գործելով, մեծ վնաս էր հասցնում պաժինակներին: Սրանք գետն անցնելով, ձեռք բերեցին հսկայական քանակությամբ անասուններ, գինի, մեղրից պատրաստված խմիչքներ, որոնց առունն անգամ չէին լսել: Առատորեն օգտագործելով այդ բոլորը, նրանք որովայնային ինչ-որ ախտով հիվանդացան. ամեն օր նրանցից անհամար մարդիկ էին մեռնում: Կեղենը, մի ոմն դասալիքից այդ մասին իմանալով և գտնելով, որ սառնամանիքից ու հիվանդությունից ընկճված թշնամու վրա հարձակվելը հարմար է, համոզեց հոռմայեցիներին, որոնք ծուլանում էին ու վախենում այդքան բյուր մարդկանց դեմ դուրս գալու և հարձակվեց թշնամիների վրա:



Նրանք ուժգին հարձակումից ապշած, երկյուղեցին մարտ տալ և Տյուրախն էլ, բոլոր հրամանատարներն ու մնացած բազմությունը զենքերը ցած գցելով, գերի են հանձնվում: Կեզենը խորհուրդ էր տալիս, պնդում, բոլորին սրի քաշել: Նա թեև բարբարոսական, բայց շատ խոր իմաստ ունեցող առակ էլ ասաց, թե օձին պետք է սպանել քանի ձմեռ է, երբ նա դեռ ի վիճակի չէ պոչը շարժել, քանզի արևից տաքանալուց հետո, նա գործ ու զխացավանք կպատճառի: Հռոմայեցիների հրամանատարները դրան դեմ էին, այդ բանը նրանք բարբարոսական համարեցին ու մեղսական, հռոմեական մարդասիրությանը ոչ վայել: Նրանք գտան, որ ավելի ձեռնտու է նրանց ցրել Բուլղարիայի անմարդաբնակ դաշտերով մեկ, բնակեցնել տարբեր վայրերում և հարկատու դարձնել, համոզված լինելով, որ նրանցից գանձված հարկը հսկայական կլինի: Բացի այդ, եթե կայսրը թուրքերի և ուրիշ այլազգիների դեմ զորքի կարիք զգա, ապա կարող է նրանց զինվորագրել: Թեր ու դեմ բազում կարծիքներ արտահայտվեցին, բայց հաղթեց հռոմայեցիներին: Կեզենն իր բոլոր գերի վերցրածներին, բացի նրանցից, որոնց վաճառեց, սրի քաշեց ու տուն վերադարձավ: Բյուրավոր պաժինականերին Բուլղարիայի կառավարիչ Վասիլ Մոնախոսը բնակեցրեց Սերգիկայի, Նայսոսի և Օվցապոլսի<sup>56</sup> դաշտերում՝ ցիր ու ցան անելով և նրանց հնարավոր ոտընձգության առաջն առնելու համար ամեն տեսակի զենքերը նրանց ձեռքից վերցնելով: Ինչ վերաբերում է Տյուրախին, ապա նա և այլ հարյուր քառասուն հոգի կայսեր բերվեցին: Վերջինս նրանց սիրալիք ընդունեց, մկրտեց և ամենաբարձր պաշտոններ շնորհելով, հաճելի կյանք պարգևեց<sup>57</sup>:

18: Սուլթանը, իր դեսպանների ձեռնունայն վերադարձից վիրավորված, ի մի հավաքեց Պարսկաստանում գտնվող բովանդակ ուժերը, ինչպես և բաբելական, ու ներխուժեց հռոմայեցիների երկիրը: Մոնոմախը կանխավ իմանալով այդ մասին փութաց իր ուժերով ընդդիմակայել թշնամուն, նա 15 հազար հոգու էլ պաժինականից զինեց: Նրանց վրա հրամանատար կարգելով Կոստանդնուպոլսում գտնվող պաժինականներից չորս հոգու՝ Սուլցուին, Սելտեին, Կարամանին և Կատալիմին, և շատ մեծ նվերներ պարգևելով, տալով հոյակապ զենքեր ու փառավոր ձիեր, նրանց անցկացրեց իրիսուպոլիս, առաջնորդ կարգելով պատրիկ Կոստանդին Հադրոբալանոսին, որը պետք է նրանց Իբերիա տաներ: Նրանք անցան [իրիսուպոլիս], ձի նստան և

բռնեցին դեպի արևելք տանող ճանապարհը: Մի քանի մղոն կտրելով, նրանք մոտեցան Դամատրիս կոչվող [վայրին], կանգ առան ճանապարհին և նստեցին խորհրդակցության, որը իրենց մոտ կոմենտոն<sup>578</sup> է կոչվում: Ոմանք նպատակահարմար էին գտնում շարժվել առաջ, կայսեր տարածքի վրա չհակադրվել կայսերական հրամաններին՝ քանզի իրենց մյուս ազգակիցներից հեռու են գտնվում, սեփական ուժերով հոմեական ուժերին դիմագրելու անկարող, անհաջողության դեպքում հենարանից զուրկ: Ուրիշներն էլ գտնում էին, որ ավելի նպատակահարմար է տիրանալ Բյութանիայի մի քանի լեռներին, այնտեղ մնալ և պաշտպանվել հարձակվողներից, ոչ մի դեպքում իբերիա չբարձրանալ՝ հեռավոր ու սարսափելի մի երկիր, որտեղ իրենց թշնամի կունենան ոչ միայն հոմայեցիների թշնամիներին, այլև հենց նրանց՝ հոմայեցիներին: Միայն Կատալիմն էր, որ խորհուրդ տվեց վերադառնալ և միանալ ցեղակիցներին: Մեկի հարցին, թե «ինչպե՞ս կանցնենք ծովի վրայով», նա չպատասխանեց և հրամայեց իրեն հետևել: Նրանք փորձ արեցին հարձակվել ու սպանել Հադրոբալանոսին, բայց չկարողացան (նա փախուստի դիմելով ապաստանեց Դամատրիսի ինչ-որ եռհարկանի ապարանքներից մեկի ձեղնահարկում) և հետևելով Կատալիմին իջան ծովը, իհարկե որևէ հույս չունենալով, թե նա կարող է պատրաստի նավեր ունենալ, որոնք կհեշտացնեն իրենց ծովով անցնելը, այլ պարզապես իրենց համար հետաքրքիր էր իմանալ, թե ի՞նչ ձևով պիտի անցնեն: Երբ եղան ծովափում, Կատալիմը մի խոսք ասաց միայն. «Ով ուզում է իրեն փրկել և բոլոր պաժինակներին՝ թող հետևի»: Եվ ձին խթանելով, մտավ ծով: Նրա օրինակին մի ուրիշն էլ հետևեց, երրորդը և ապա համայն բազմությունը: Եվ այդպես լողալով, ոմանք զենքերով, ոմանք նախապես զենքերը զցելով, անցնում են Սուրբ Տարասիոս և շարունակելով ճանապարհը, կարողանում են ողջ-առողջ հասնել իրենց ցեղակիցներին՝ Տրիադիցա. ոչ ոք չհամարձակվեց ընդդիմակայել նրանց և խոչընդոտել, քանզի հարձակման հանկարծակիությունը հեշտացրեց նրանց ճանապարհը: Այսպիսով ահա միանալով Տրիադիցայի պաժինակներին, նրանք բանագնացներ են ուղարկում այլ շրջաններում հաստատված [պաժինակներին] և բոլորը միանալով միմյանց, և արտերից երկրագործական կացիներ, մանգաղներ և այլ երկաթե առարկաներ վերցնելով ու զինվելով, գալիս են Ֆիլիպպուպոլիս, ողջ բազմությամբ անցնում Հեմոսի վրայով և



վրաններ խփում Օսմոս կոչվող գետի մոտ, մերձդանուբյան դաշտում: Միայն Սելտեն էր, որ հանգիստ մնաց Լովիցոսում: Արիանիտեսը, հավաքելով մակեդոնական ուժերը, սկսեց հետապնդել նրանց: Լովիցոսում վրան խփած Սելտեի վրա նա հարձակվեց, բայց չկարողացավ բռնել (նրան հաջողվեց փախուստի դիմել), և վերցնելով նրա ողջ ճամբարը, վերադարձավ: Արևմուտքում ահա վիճակն այսպիսին էր:

19. Իսկ սուլթանը, ինչպես ասացինք, իր դեսպանների նրկատամաբ ցուցաբերված արհամարհական վերաբերմունքից, իր ցանկությունների ի դերև դուրս գալուց զայրացած, բովանդակ ուժերով արշավում է հոռմեական տիրապետությունների վրա: Իջնելով մինչև Կոմիո<sup>579</sup> կոչվող [վայրը], նա խոսքի արժանի ոչինչ անել չկարողացավ (երկրի բնակիչները հասցրեցին նախօրոք ապաստան գտնել բերդերում և այնտեղ կուտակել պետք եղած պաշարը. Իբերիան լի է ամենաանառիկ բերդերով), նա չհամարձակվեց խորանալ, քանզի իմացել էր, որ հոռմեական ուժերը կենտրոնանում են Կեսարիայում, վերադարձավ կատազությունից փրփրած, ինչ-որ մեծ բան կատարելու ցանկությամբ: Հասնելով Վասպուրական և այդ տեղում էլ ամեն ինչ նույն ձևով պարսպապատված գտնելով, որոշեց դիմել պաշարման: Նա ամենից առաջ փորձեց Մանծկերտը<sup>580</sup> [գրավել]: Մանծկերտը հարթ տարածության վրա է գտնվում, պարսպապատված է երեք շարք պարիսպներով և ներսում ունի հորդառատ աղբյուրներ: Այդ պահին քաղաքին հաջողվել էր առատ պարենով ապահովել իրեն: Ենթադրելով, որ դյուրին կլինի այն պաշարել՝ [քաղաքի] մատչելի տեղում կառուցված լինելու պատճառով, [սուլթանը պարսպին] շատ մոտիկ տեղում ցանկապատեց այն, անցավ պաշարման և երեսուն օր շարունակ օղակի մեջ պահեց, գործի դնելով ամեն տեսակի բաբաններ ու քաղաքավեր մեքենաներ: Պաշարյալները [իրենց] զորավարի (նա Վասիլ Ապուրբապն էր)<sup>581</sup> փորձառությամբ ու խոհեմությամբ հաջող կերպով ընդդիմակայում էին [թշնամու] հարձակումներին և [սուլթանը], համոզվելով, որ անհնարին բան է ձեռնարկել, որոշեց վերացնել պաշարումը և վերադառնալ: Նրան ընդունած վճռից ետ կանգնեցրեց խորեղմցիների առաջնորդ Ալկանը, որը խնդրեց մեկ օր էլ մնալ և իրեն վստահել քաղաքի դեմ մղվող պատերազմը: Սուլթանին դա դուր եկավ և նա որոշեց շհուռանալ: Ալկանն արշալույսին հավաքեց իր ողջ զորքը, սուլթանին ու

1054

Թուրքերի երևելիներին թողեց արևելյան դարբասի դիմաց գտնվող մի բլրի վրա՝ դիտելու, վերցրեց քաղաքավեր մեքենաները և գնաց հիշյալ դարբասի դեմ: Նա գտնում էր, որ այս վայրում քաղաքի պարիսպները ավելի ցածրադիր են ու թույլ, [դրսում էլ] վայրն ավելի բարձրադիր՝ պաշարմանն օժանդակող, պարիսպի ետևում գտնվողներին դրսից հարվածելու հնարավորություն չունենալու: Նա զորքը երկուսի բաժանեց, մի մասը տեղագրեց բարձունքի վրա, հրամայելով անդադար նետաձգություն մը զբաղվել, իսկ ինքը ուռիների ճյուղերից հյուսված, եզան կաշիներով պատված, իրենց սյուների տակ անիվներ ունեցող վրանները (այս մեքենաները լեսա են անվանում)<sup>582</sup>, երկատամնավոր քլունգներ, փորիչներ և երկրագործական այլ գործիքներ ունեցող զինվորներով լցրեց, որոշելով այդ վրանները կամացկամաց հրել ու հենել պարիսպներին և այդպես հանգիստ ու աներկյուղ փորել դրանց հիմքերը, համոզված լինելով, որ նետերի տարափը պաշարյալներից և ոչ մեկին թույլ չի տա պարբսպի վրա երևալ: Ահա նա այս կերպ էր ենթադրում գրավել քաղաքը: Ապուբապը պարիսպներից այդ բանը տեսնելով, հրամայում է պարսպապահներին հաստատուն մնալ և չերևալ, միայն պատրաստ ունենալ հսկայական քարաբեկորներ, աղեղներ ու այլ արձակող գործիքներ և սպասել իր ազդանշանին (դա «Քրիստոս, օգնի՛ր»-ն էր), որի տրվելուց հետո գործի անցնել: [Ապուբապն] իր մոտ ուներ նաև ծայրերը սրած հսկայական գերաններ: Ահա այսպիսի կարգադրություն արեց Ապուբապը, իսկ Ալկանը դրսի թուրքերի պաշարյալներին ետ մղելու նպատակով կարկուտի պես նետեր արձակելու ժամանակ, կամաց-կամաց լեսաները տակից հրելով, հենեց պարսպին: Երբ վրանները կպան [պատին] և արդեն թվում է այլևս հնարավոր չէ դրանք ետ քաշել, Ապուբապը հանկարծակի ազդանշան տվեց և գերանները գործի զնողները դրանք բաց թողեցին վրանների վրա, մյուսներն էլ սկսեցին նետեր ու քարեր արձակել: Այն վրանը, որի մեջ էր Ալկանը, ծածկի վրա բազմաթիվ գերաններից խոցվելով նրանց ծանրությունից շուտ եկավ, իսկ նրա մեջ գտնվողները, մնալով անծածկ, ամեն կողմից քարերի ու նետերի հարվածներ էին ստանում, որոնցից պաշտպանվելու ի վիճակի չէին: Մնացած բոլորը տեղն ու տեղը սպանվեցին, իսկ Ալկանը գերի ընկավ. նրան ճանաչեցին իր փառահեղ զենքերից<sup>583</sup>: Երկու քաջարի պատանիներ, քաղաքի դարբասից դուրս թռնելով, նրան բռնե-



ցին մազերից և քարշ տալով քաղաք բերեցին: Վասիլը նրա գլուխն իսկույն կտրեց ու թուրքերին շարտեց<sup>584</sup>: Սուլթանը փորձանքի վրա շատ վշտացած, վերացրեց պաշարումը ու ճամփա ընկավ, անհետաձգելի պատճառներ հորինելով, որոնք իրեն իբրև թե ստիպում էին անհապաղ տուն վերադառնալ, սպառնալով հաջորդ գարնան ավելի մեծ ուժերով արշավել հռոմայեցիներին դեմ<sup>585</sup>:

20. Մոնոմախը, բացի այդ, մտահոգված էր նաև Դվինի արխոնտ Ապլեսֆարեսով, որը Կոստանդնի ժամանակ կնքված պայմանագիրը խախտել էր<sup>586</sup> և հռոմայեցիներից վրեժ առնելով, տակնուվրա էր անում նրանց երկիրը: Կայծրը հավաքելով արևելից բոլոր տագմաները, նրանց հրամանատար նշանակեց մի ոմն ներքինի Նիկեփորի. սա անցյալում քահանա էր և ծառայում էր կայսեր՝ նախքան նրա գահ բարձրանալը, բայց հետագայում աշխարհիկ կյանքի ու փառքի սիրույն հրաժարվել էր հոգևոր կոչումից: Կայսրը տալով նրան ռեքտորի պատվաստիճան ու ստրատոպեդարխի կոչում, արևելք ուղարկեց<sup>587</sup> ոչ թե այն պատճառով, որ նա պատերազմական հարցերում գործունյա ու կարող մեկն էր, այլ պարզապես այն բանի համար, որ նա կայսեր հանդեպ լավ էր տրամադրված: [Նիկեփորը] զորքով բարձրացավ մինչև, այսպես կոչված, Երկաթե կամուրջը<sup>588</sup> և Գանձակ<sup>589</sup>, բայց թուրքերի չհանդիպեց, քանզի նրանք ոմն Աբիմելեք զորավարի<sup>590</sup> Կուտլումուչի եղբոր հետ բանակել էին Պերսարմենիայի ինչ-որ դաշտում և լսելով հռոմայեցիների ծանր ուժով արշավելու մասին, չհամարձակվեցին նրան ընդդիմակայել և տուն վերադարձան: Իսկ հռոմեական բանակը, Ապլեսֆարեսին [ստիպելով] ներփակվել պարիսպների ետևում, ասպատակեցին բովանդակ շրջակայքը և նրան հարկադրեցին ակամայից վերանորոգել դաշինքը՝ որպես պատանդ տալով իր եղբոր Փատլունի՝ Գանձակի շրջանի արխոնտի որդի Արտաշիրին<sup>591</sup>: Ահա Նիկեփորը նրան վերցնելով, վերադարձավ քաղաք:

21. Իսկ պաժինակաները, ինչպես ասացինք, Հեմոսն անցնելով, և հետախուղելով այդ [լեռան] ու Իստրոսի միջև՝ մինչև ծովը ձգվող դաշտավայրը, այնտեղ գտան ամեն տեսակ ծառաշատ հովիտներ, անտառներ, պուրակներ, թավուտներ, ջուր ու արոտավայրեր (տեղացիներն այդ վայրն անվանում են Հարյուր լեռ), հաստատվեցին և այնտեղից արշավանքներ կազմակերպելով, մեծ վնաս էին հասցնում հռոմայեցիների տիրապետության-

ներին: Կայսրը խորհրդակցելու համար Կեղենին մայրաքաղաք է կանչում: Նա իր համայն սեփական զորքով անհապաղ մուտք է գործում և վրաններ խփում բյուզանդացիներին՝ մրցումների համար հատկացված դաշտում (տեղը Մայտաս<sup>592</sup> է կոչվում): Սակայն նա կայսրին չհանդիպեց, ոչ էլ իմացավ իր կառչվելու նրպատակը, բայց գիշերով երեք պաթինակներ նրա դեմ մահափորձ կատարեցին. իր քնած ժամանակ նրանք սրերով հարձակվեցին և խոցեցին նրան, բայց ոչ մահացու, քանզի երբ այդ մասին իմացան Կեզենի թիկնապահները, ահաբեկիչները չկարողացան ուժգին հարվածել, փախուստի դիմեցին. Կեզենի որդի Վալցարի հետ օգնություն հասած բազմությունը բռնեց նրանց: Վալցարն առավոտյան իր հորը քառանիվ կառքի վրա դրեց, իսկ դավադիրներին շղթայակապ քարշ տալով կառքի ետևից (նա ուրիշ բան նրանց անել չհամարձակվեց, քանզի նրանք կոչ էին անում կայսեր), ամբողջ հեծելազորով, իսկ ինքը՝ իր եղբայր Գուլինոսի հետ ոտքով, երկու ձիերով քաշվող կառքի ետևից, կայսեր մոտ եկավ: Հասնելով ձիարշավարան նա կառքը թողեց այդտեղ, իսկ ինքը մտավ կայսեր մոտ. կատարվածի լուրը կանխավ տեղ էր հասել և նախապատրաստել իր մուտքը: Երբ նրան ներս բերեցին, կայսրը պարսավեց նրան, ինչու՞ անհապաղ չպատժեց իր հոր ոճրագործներին: Նա պատասխանեց, թե «նրանք անվերջ կոչ էին անում քո անվան»։ Կայսրը անտեղի կասկածների մեջ ընկավ, շտապ մարդ ուղարկեց և նրանց շղթայակապ իր մոտ բերեց ու հարցրեց՝ ինչու՞ պատրիկին սպանելու փորձ արեցին: Նրանք պատասխանեցին, թե նա դավեր էր նյութում թագավորությանը ու քաղաքի դեմ: Նա ծրագրում էր արշալույսին մուտք գործել և բոլոր բնակիչներին սրի քաշել, թալանել քաղաքը և պաթինակների մոտ վերադառնալ: Կայսրը պետք է ստուգեր նրանց ասածը և ճշմարտությունը մեջտեղ բերեր, բայց նա այդ բանը չարեց, անհիմն ու անտեղի զրպարտությունը հավատ ընծայելով, Կեղենին արքունիք բերեց՝ [բժշկական] օգնություն ցուցաբերելու և դարմանելու պատրվակով, և արգելափակեց էլեֆանտինե կոշիկով [բանտում], նրա որդիներին էլ նրանից հեռու գտնվող տարբեր տեղերում: Իսկ պաթինակների բազմությունը տալով ամեն տեսակ ուտելիքներ ու խմիչքներ՝ նրանց նկատմամբ իր ունեցած սիրահոժարությունը ընդգծելու պատրվակով, շահեց նրանց համակրանքը, բայց նպատակը, եթե հնարավոր է, նրանց զինաթափելն էր, ձիերը



խլելը, ապա նրանց բռնելն ու հսկողութեան տակ առնելը: Նա հրամայեց ոճրի մասնակիցներին, որպեսզի գնան իրենց ցանկացած տեղը և ինչպես ուզեն խաղաղ ու ազատ ապրեն: Նրան թվում էր, թե իր արածը գաղտնի է մնում, բայց այդ մասին պաժինակներն իմացան: Նրանք շարագուշակ էին համարում իրենց առաջնորդի վար դրվելը, նրա որդիների տարբեր տեղերում [արգելափակվելը], իսկ դավադիրների ազատ արձակումը նրանք համարում էին շարամտութեան բացահայտ նշան: Նրանք, թեև իրենց ուղարկվածը ընդունեցին սիրով, կայսեր ներբողեցին, ցույց տվեցին, թե հավանութուն են տալիս կատարվածին, սակայն, երբ գիշերը վրա հասավ, առանց որևէ կառկած հարուցելու, ճամբարից դուրս եկան և ամբողջ գիշերը արագ քայլելով, երեք օր հետո անցնում են Հեմոսը և իրենք ևս միանում պաժինակների բազմութեան: Բոլորն ահա մի տեղ գումարվելով և ձեռք բերելով բավարար քանակութեամբ զենք, անցնում են Հեմոսը և բանակում Ավլեում (Ավլեն Հեմոսի ստորոտին, Ադրիանուպոլսից ոչ հեռու գտնվող մի բերդ է) և սկսում ասպատակութեամբ ու ավարառութեամբ զբաղվել:

22. Երբ այդ մասին իմացավ արևմուտքի արխոնտ մագիստրոս Կոստանդին Արիանիտեսը, նա ևս պատրաստ ունենալով իր ուժերը, Ադրիանուպոլսից եկավ նրանց վրա: Ճանապարհին նրանց առանձին [ջոկատների] հանդիպելով հաջողութուն ունեցավ, բայց Դամպոլիս կոչվող բերդի մոտ հանդիպելով նրանց բազմութեան և բախվելով, պարտութուն կրեց: Մարտում բազմաթիվ մակեդոնացիներ ու թրակացիներ ընկան, այդ թվում և Թեոդորոս Ստրավոմիտիսը, Պոլյուսը՝ փառավոր տոհմերից սերող մարդիկ, որոնք բարձր աստիճանների արժանացան Թոննիկի<sup>513</sup> նկատմամբ ցուցաբերած իրենց անհավատարմութեան համար: Մագիստրոսը Ադրիանուպոլիս վերադարձավ և նամակով կայսեր հայտնեց պատահարի մասին, տեղեկացրեց նաև, որ կարիք ունի թարմ ուժերի, քանզի եղած ուժերով, այն էլ մի անգամ պարտութուն կրած, հնարավոր չէ ընդդիմակայել այդքան բազմութեան: Կայսրը կատարվածի մասին գիտեր նախքան [մագիստրոսի] նամակները, նա Տյուրախին և քաղաքում պահվող պաժինակների իշխաններին նվերներով ու շնորհատրութեամբ սիրաշահելով, (նրանք երդումներով խոստանում էին խաղաղացնել ցեղը) ճամփու դրեց, ապա նամակ գրելով արևելից բոլոր տազմաները և տ կանչեց: Նրանք եկան, Աբյուղոսի և Խրիսու-

պոլսի վրայով դիմացի ափն անցան: Կայսրը նրանց զորավար-ավտոկրատոր նշանակեց ռեքտոր Նիկեփորին և պաթինակաների դեմ ուղարկեց: Նրա հետ [կայսրն] ուղարկեց Կատակալոն Կեկավմենոսին, որին արևելից ստրատելատ էր նշանակած, ինչպես և էրվեվիոս Ֆրանկոպոլոսին<sup>594</sup> ցեղակիցների այն ժամանակվա արխոնտին, հրամայելով նրան միանալ ռեքտորին, գործել նրա վճիռների համաձայն, հետևել նրա հրամաններին ու կամքին: Նա վերցնելով ուժերը և Սիդերա կոչվող [տեղով] անցնելով Հեմոսը, շարժվեց պաթինականների վրա: Տեղ հասնելով, նա վրաններ խփեց Դիակենե կոչվող վայրում՝ Հարյուր լեռներից ոչ հեռու: Ահա այդտեղ մուր ցանկապատ կառուցելով, նպատակ ունեն հաջորդ օրը գումակն ու զորքի ավելորդ մասը այնտեղ թողնելով, ինքը մարտունակ զորքով գնալ և մարտ տալ հակառակորդներին: Նա անխոհեմաբար ենթադրում էր, որ իսկույն պարտության կմատնի նրանց: Նա նույնիսկ վախենում էր ու մտահոգված, որ չլինի հանկարծ հակառակորդներից որևէ մեկին հաջողվի թաքուն փախուստի դիմել: Եվ այդպես էր մտածում ոչ միայն ինքը, այլև համայն զորքը: Նրանք իրենց հետ վերցրին նույնիսկ պարաններ ու փոկեր, ձեռք գցածին կապելու համար: Այդպես վստահ լինելու պատճառը նախկինում, Կեգենի ժամանակ, նրանց կրած պարտությունն էր: Հասկանալի է, պաթինականներն իմացան հռոմայեցիների արշավանքի մասին (Տյուրախն ու նրա հետ քաղաքից հեռացած արխոնտներն արդեն միացել էին [պաթինականներին] և նրանց օգտին էին աշխատում, մնաս բարով ասելով Մոնոմախին տված իրենց խոստումներին) և ամենաքաջերը ելան նրանց ընդառաջ: Կեկավմենոսը պաղատագին խընդրում էր, կոչ անում թե մարտ տալու հարմար առիթը հենց հիմա է, երբ [պաթինականները] ցրված են ու սփռված, չպետք է սպասել նրանց ի մի գումարվելուն: Բայց հռոմայեցիների մնացած բազմությունը հավանություն չէր տալիս նրա խոսքերին, իսկ ռեքտորը բացահայտ ծիծաղում էր նրա վրա, ասելով. «Ով ստրատելատ, վերջ տուր, քանի ես եմ զորավարը, մի խառնվիր իմ գործերին, պետք չէ հարձակվել ցիր ու ցան եղած պաթինականների վրա, քանզի հնարավոր է, որ նրանք երկյուղելով, կթաքնըվեն թավուտների մեջ, իսկ ես, սիրելիս, հետապնդելով նրանց, չունեմ որեկան շներ, որոնք հոտ քաշելով, նրանց դուրս հանեն թաքստոցներից»: Հռոմայեցիներն ահա այսպիսի վիճակում էին, իսկ պաթինականների առաջամարտիկները, մոտենալով հոռ-



մայեցիների ճամբարին, մի փոքր հեռավորության վրա, իրենք  
ևս բանակում են և ետևից եկողներին հայտնում շտապ տեղ  
հասնել: Երբ բոլորն եկան ու միացան իրար, հաջորդ օրը ռեք-  
տորը հանեց հռոմեական ուժերը, [պաժինակաները] շարվեցին  
նրանց դեմ: Հռոմեական փաղանդի կենտրոնը գլխավորեց ինքը՝  
ռեքտորը, աջ թևը՝ Կեկավմենոսը, իսկ ձախը՝ Ֆրանկոսյուլոսը:  
Մարտի ժամանակ հռոմայեցիները փախուստի դիմեցին, ամե-  
նից առաջ ստրատելատները: Նրանք, ինչպես ասում են, շղիմա-  
ցան ձիերի սմբակների ձայնին անգամ ու փախան: Միայն Կե-  
կավմենոսն էր, որ իր սպասավորների ու փոքրաթիվ ազգական-  
ների հետ կանգնեց ու, հերոսաբար մարտնչելով, ընկավ իր բո-  
լոր մարզկանոց հետ միասին: Պաժինակաները, երկյուղելով, որ  
կաբող են թակարդի մեջ ընկնել, նրան[ց] շհետաթյնդեցին և  
ալդ պատճառով հռոմայեցիները կարողացան անվնաս փրկվել:  
[Պաժինակաները] այդ միջոցին սպանվածներին դիակապուտ  
արեցին, տիրացան բազում զենքերի, հենց հռոմեական ճամբա-  
րին՝ ողջ հանդերձանքով, վրաններ խփեցին հռոմեական խրամի  
տակ: Մի պաժինակ, անունը Կուլինոս<sup>505</sup>, որը դեմքով ճանաչում էր  
Կեկավմենոսին՝ այն ժամանակվանից, երբ վերջինս Պարիս-  
տորիոնի բերդերի կառավարիչն էր, երբ դեռ ցեղերը իրար հետ  
շփում ունեին, դիակապուտությամբ զբաղված ժամանակ դիակնե-  
րի մեջ գտավ նրան, մարմինը շուռ տալով դեմքից ճանա-  
չեց: Նա դեռ շնչում էր. մահացու վերք ստացած լինելով, ան-  
ձայն գետին էր տապալված. մի հարված գլխին էր ստացել  
(նբա սաղավարտն ընկել էր)՝ գազաթից մինչև հոնքերը, իսկ  
մյուսը՝ պարանոցին, լեզվի արմատին: Հարվածը կտրել էր պա-  
րանոցը և լեզուն, որը բերանի մեջ էր ընկել: Նա սուրյունվա էր:  
Պաժինակը Կեկավմենոսին ձիու վրա դնելով, տարավ իր  
վրանը և հոգատարություն ու խնամք ցուցաբերեց<sup>506</sup>: Պաժինակ-  
ներն ահա այսպես հեշտությամբ ոչնչացնելով իրենց դեմ ու-  
ղարկված զորքը, այսուհետև աներկյուղ ասսյատակում էին հռո-  
մայեցիներին երկիրը: Կայսրը փախստականներից իմանալով  
պատասխարի մասին, բնական է, տխրեց: Նա դարձյալ զորքեր  
հավաքեց, վերցրեց ինչ որ մնացել էր, ջանալով կրած պարտու-  
թյան տեղը հաջորդ տարի հատուցել: Երբ եկավ 6558 թվականը,  
ինդիկտիոնի երրորդ տարին, կայսրը, հետերիարխ Կոստանդի-  
նին՝ զորավար-ավտոկրատոր նշանակելով, պաժինակաների դեմ  
ուղարկեց: Սա, վերցնելով արևելքից դիմացի ափը նոր անցած

ուժերը, ապա և հավաքելով արևմուտքում ձմեռող զորքերը, հասնում է Ադրիանուպոլիս, ուր խոր խրամ փորելով, գլխավորների հետ խորհուրդ էր անում՝ որտեղից առաջ շարժվել: Երբ նա այդ բանի շուրջն էր մտածում, հանկարժակի, հունիս ամսի ութին, պաժինակներն անցնելով Հեմոսը, հայտնվում են Ադրիանուպոլսի առաջ: Նրանց հարձակման մասին ժամապահները կոստանդնին տեղյակ պահեցին և հարց դրվեց, մարտի բռնվել նրանց հետ, թե՞ ոչ: Երբ գլխավորները հետերիարխի վրանում նստած իրենց անելիքի շուրջն էին խորհրդակցում, պատրիկ Սամուիլ Բուրցեսը, մի ինքնավստահ ու հանդուգն մարդ, որն այն ժամանակ հետևակազորի հրամանատարն էր և նշանակված ճամբարի վրա հսկելու, առանց հրամանատարի ազդանշանն ստանալու, շարքերը թողնելով և ճամբարը վերացնելով, հետեվակազորով դուրս է գալիս և մարտի բռնվում պաժինակների հետ, որոնց ուժեղ ճնշման տակ հետևակներն սկսում են տեղի տալ: Ահա այդ պատճառով Սամուիլը իրար ետևից մարդ էր ուղարկում հետերիարխի մոտ՝ օգնություն խնդրելով: [Հետերիարխը] ստիպվեց ակամայից պատերազմի ազդանշան տալ: Բովանդակ զորքը դուրս եկավ Թագավորական լիվադա կոչվող տեղը: Ծակատամարտում հռոմայեցիները սարսափելի պարտություն կրեցին, քանզի մարտի դիմեցին անակնկալ ու անկազմակերպ, բացի այդ, որովհետև հետևակազորը մինչև այդ պարտություն էր կրել, դրանից պաժինակները գոտեպնդվել էին: Հռոմայեցիներից քիչ մարդ սպանվեց, նրանք խայտառակ կերպով ներփակվեցին ճամբարի մեջ: [Մարտում] ընկավ նաև պատրիկ Միքայել Դոկիանոսը, իսկ մագիստրոս կոստանդին Արիանիտեսը կրժքին մահացու հարված ստանալով, երեք օր անց մեռավ: Մարտում ընկան նաև փոքրաթիվ շարքային մարդիկ: Մնացած համայն զորքը անփառունակ կերպով ներփակվելով ճամբարի մեջ, պաժինակների կողմից օղակի մեջ առնվեց, նրանք սկսեցին խրամը լցնել քարերով ու ճյուղերով, ջանալով ճնշում գործադրելով գրավել ճամբարը: Այդ բանը շուտով կիրականանար, եթե Սուլցուն իր ձիու հետ միասին շամփուրվեր բաղիստրից արձակված նետով, մի բան, որ մեծապես շմեցրեց այդ բանին ականատես եղած պաժինակներին: Ադրիանուպոլսից օգնության դիմեց պրոտոսպաթար Նիկետաս Գլաբասը, սխուրի տազմայի տոպոտերեստը<sup>596</sup>: Պաժինակները, տեսնելով նրան, և կարծելով, որ Վասիլ սինկելլոսն է բուլղարական ուժերով տեղ հասել



(սրա գալստյանն էլ էին սպասում) և երկյուղելով, ցիրուցան եղած նահանջեցին, այլապես հռոմեակաս բանակը գլխովին կորած էր:

23. Այգ տարի խռովություն էլ նյութվեց քաղաքի արխոնտներից ոմանց կողմից, որոնց պարագլուխներն էին Եվթիմիոսի որդիներ Նիկեփորն ու Միքայելը և նրանց մի քանի այլ ազգականներ: Թեև մնացած բոլորը պրծան, բայց Նիկեփորին միայն, առանց դատ-դատաստանի, աքսորեցին, նախապես գրավելով նրա ունեցվածքը:

24. Կայսրը, մտահոգված լինելով պաժինականներին հաղթահա-1051-ի բելու, Կեզենին բանտից ազատելով, պաժինականների մոտ ուղարկվեց կեց. նա խոստանում էր նրանց մեջ սեպ խրել և կայսեր վստահելի դարձնելը: Այնուհետև [կայսրը] հավաքելով բովանդակ դաշնակից [զորքերը], ես նկատի ունեմ ֆրանկներին ու վարյագներին<sup>597</sup>, ապա և կանչելով Տլուբից, Սև լեռից և Կարկառից<sup>598</sup> շուրջ քսան հազար հեծյալ աղեղնավորների, յուրաքանչյուր ազգի վրա հայտնի մարդկանց կարգելով, իսկ ընդհանուր հրամանատարությունը տալով պատրիկ Բրիեննիոսին, որին ազգապետ<sup>599</sup> կոչեց, ուղարկեց խափանելու և կասեցնելու պաժինականների հարձակումները: Պաժինակները Ադրիանուպոլսի ճակատամարտից հետո բացարձակապես արհամարհում էին հռոմայեցիներին, աներկյուղ ավերում ու կրակի ճարակ դարձնում Մակեդոնիան ու Թրակիան, անգթաբար կոտորում անգամ ծծկեր երեխաներին: Նրանց մի զորամասը նույնիսկ Կատասիրտա հասավ (Կատասիրտան մայրաքաղաքին շատ մոտիկ է գտնվում): Սըրանց սակայն շատ շուտով ջարդ ու փշուր արեցին. կայսրը գինելով արքունիքի պահապաններից և դիպվածով տեղում գտնվողներից ոմանց, և նրանց տալով թագուհի Զոեի ներքինի սենեկապաններից մեկին՝ պատրիկ Հովհաննեսին, մականունը՝ Փիլիսոփա, հեշտությամբ ոչնչացրեց. նա գիշեր ժամանակ վրա հասավ և բոլորին գտնելով գինարբուքի մեջ կամ քնած՝ սրի քաշեց, նրանց գլուխները սայլերի վրա բարձեց ու կայսեր բերեց:

25. Ինչ վերաբերում է Կեզենին, նա գնաց ու բանակցությունների մեջ մտավ պաժինականների հետ, որոնք երդումներով խոստացան կատարել նրա ցանկությունները: [Կեզենը]. հավատաց երդումներին ու նրանց մոտ գնաց, բայց իսկույն սպանվեց, նրան կտոր-կտոր արեցին: Իսկ Բրիեննիոսը, վերցնելով իրեն վստահված ուժերը և լինելով Ադրիանուպոլսում, հոգում էր

գյուղերի պահպանութիւնը: Այնտեղ ուղարկվեց նաև գլխավոր հրամանատար պատրիկ Միքայել Ակոլութոսը<sup>600</sup>, նա ևս հրաման ստացավ ճակատամարտ շտալ, այլ փակել [պաթինականների ճանապարհը] և ետ մղել [նրանց] արշավանքները: [Միքայելը քաղաքից] դուրս գալով և միանալով Բրիեննիոսին, գործի անցավ: Նախ և առաջ նա Գոլոնեյում հանդիպեց պաթինականների մի զորամասի, պարտութեան մատնեց այն ու ոչնչացրեց, ապա պաթինականների մի անջատված զորամասի էլ հանդիպելով Տոպլիցայում (սա էվրոսի մոտ գտնվող բերդ է) կոտորեց: Պաթինականներն արդեն սկսեցին վախենալ նման ուժերից և հրաժարվելով Հեմոսի ստորոտներում ընկած գյուղերը ասպատակելուց, ամբողջ ուժով հարձակվեցին Մակեդոնիայի վրա: Նրանց ամենաուճառունակ մասը առանձնանալով, ոտնատակ էր անում Մակեդոնիայի գյուղերը և մտադիր էր, եթե գործը դրան հասնի, քաջաբար ճակատամարտ տալ: Բրիեննիոսն ու Միքայելը, իմանալով այդ մասին, գիշերով ճամփա ընկան, այնպես որ ոչ ոք չիմանա, թե ու՞ր են գնում, արագ քայլով հասան հարիուպոլիս և զորքով այնտեղ մտնելով, հարմար առիթի էին սպասում: Պաթինականները բոլոր գյուղերում ու պրոաստիոններում ասպատակ սփռելով, երեկոյան մոտ վերադարձան հարիուպոլիսին շատ մոտիկ և բանակեցին, բացարձակապես անգիտանալով, որ [քաղաքում] զորք կա: Դրա համար նրանք աներկյուղ իրենց խրախճանքի տվեցին, սրինգ թմբուկով: Երբ գիշերը վրա հասավ, Բրիեննիոսի ու Միքայելի [զինվորները] քաղաքից դուրս գալով և նրանց խուճախով քնած գտնելով, բոլորին կոտորեցին: Այս պատահարը պաթինականներին ընկճեց ու սարսափով պատեց և նրանք առաջվա նման ասպատակութիւնները խաղաղ ու հան-

1051/ գիստ չէին կատարում, այլ վախով՝ ինդիկտիոնի 4-րդ և 5-րդ  
1052 տարիներում:

26. Այդ ժամանակները հանկարծակի մեջտեղ եկավ Ռոմանոսի՝ Բոյիլաս<sup>601</sup> կոչվածի դավադրութիւնը: Սա տագմաներում էր ծառայում. ունենալով թույլ լեզու, սրամիտ ու ծաղրասեր էր համարվում: Երբ նա մի անգամ անձամբ հանդիպեց կայսեր և խոսակցեց նրա հետ, շատ դուրեկան մարդու տպավորութիւն թողեց, և այդ օրվանից կայսրից անբաժան էր, կայսրը նրան օգտագործում էր որպես խորհրդականի, սպասավորի և գործակատարի՝ ամեն տեսակի ծառայութիւններում: Կայսրը ախտիճանաբար առաջ քաշելով, նրան շատ բարձրացրեց ու վեհաց-



րեց, նա դարձավ արքունիքի ամենաբարձր պաշտոնյան: Լինելով հնարամիտ ու խորամանկ, ի սկզբանե անտի գահի վրա աչք ունեցող, փորձում էր իր կողմը քաշել բոլոր այն սենատորներին, որոնք ընդհարվել էին կայսեր հետ և նրանց բացահայտում էր իր գաղտնիքները: Ովքեր որ հարում էին դավադիր առաջարկություններին, անաղմուկ ու հեզորեն իր կողմն էր քաշում և երդումներով ապահովում նրանց հավատարմությունը, իսկ ովքեր չէին ուզում անգամ լսել այդ մասին, ձևացնում էր, թե հավանություն է տալիս նրանց և հիանում նրանց՝ դեպի կայսրն ունեցած բարյացակամության վրա, ասում, թե ինքը պարզապես փորձում է նրանց և երդվում կայսեր առաջ խոսել նրանց օգտին: Ի վերջո նա քաղաքացիներից շատերին գայթակղեցրեց և դավադրության նախապատրաստություն տեսնելիս, բացահայտվեց: Նրա բոլոր գործակիցների գլխին փորձանք եկավ՝ նրանք գանակոծվեցին, ունեցվածքից՝ զրկվեցին և աքսորվեցին, իսկ Ռոմանոսին ոչինչ էլ չեղավ: Կայսրը կարճ ժամանակով նրանից երես թեքեց, բայց նա ներում ստանալով, մնաց նախկին պաշտոնում:

27. Իսկ սուլթանը, ինչպես ասվեց, իր եղբոր Աբրահամի հանդեպ նախանձով լցված, նրա կյանքի դեմ դավեր էր նյութում և անվերջ մտածում նրան սպանելու մասին: [Աբրահամն] իմացավ այդ, փախավ իր եղբորորդի Կուտլումուչի մոտ և նրա հետ միասին պատերազմ սկսեցին սուլթանի դեմ, որը նրանց մարտովեց Պասար կոչված [վայրում], պարտության մատնեց, Աբրահամին գերի վերցնելով սպանեց: Կուտլումուչը 6 հազար հոգով փախուստի դիմելով, Աբրահամի որդի Մելեքին<sup>602</sup> կայսեր մոտ պատգամավոր ուղարկեց, խնդրելով նրան իրեն ընդունել և համարել հռոմայեցիների դաշնակիցն ու բարեկամը, իսկ ինքը եկավ Պերսարմենիա՝ Կարս կոչված [քաղաքը], սպասելով

6—1—  
1054 պատգամավորության արդյունքներին: Այդ ընթացքում նա պաշարեց Կարսը և գրավեց այն՝ բացի միջնաբերդից<sup>603</sup>, նրան հետապնդող սուլթանն իր զորքերով եկավ Իբերիա<sup>604</sup>: Կուտլումուչը իմանալով դա, փախավ Սաբա և Նրջանիկ Արաբիա: Իսկ սուլթանը, մուտք գործելով Իբերիա, հանդիպածն ասպատակում ու կրակի էր տալիս: Այդ պատճառով կայսրը շտապ կարգով արևմուտքից կանչեց և Իբերիա ուղարկեց Միքայել Ակուլոթոսին, որը տեղ հասնելով և խաղտիքում ու Իբերիայում ցրված ֆրանկներին ու վարյագներին<sup>605</sup> առաջնորդելով, հնարավորին չափ

ջանում էր խոշընդոտել սուլթանի հարձակումները: Սուլթանն, իմանալով նրա սրրնթաց հարձակման մասին, այն մասին, թե նա զորք հավաքելով շտապում է իր հետ կովի բռնվել, մտածեց, որ երկու ելքն էլ իր համար անփառունակ են՝ հաղթելու դեպքում հաղթած է լինելու կայսեր ծառային, իսկ պարտվելու դեպքում մեծապես խայտառակվելու է, ուստի և համայն զորքը վերցնելով, վերադարձավ Թավրեզ<sup>606</sup>:

1052

28. Այդ ժամանակներում Ստեփանոսի որդի Միքայելասը, իր հոր [մահից] հետո դառնալով տրիբալների ու սերբերի առաջնորդը, կայսեր հետ դաշինք է կնքում և դառնում հռոմայեցիների դաշնակիցն ու բարեկամը՝ ստանալով պրոտոսպաթարի պատվաստիճան: Եգիպտոսից, նրա առաջնորդի կողմից կայսեր [նվեր] ուղարկվեցին մի փիղ և մի ընձուղտ<sup>607</sup>: Կայսրը, ուզենալով վերջնականապես դուրս շարտել պաժինակներին, հավաքեց արևելքի և արևմուտքի առկա ուժերը, նրանք տվեց Միքայել Ակոլութոսին, ապա հրամայեց վասիլ Սինկելլոսին վերցնել բուլղարական զորքերը, և երկուսին էլ պաժինակների դեմ ուղարկեց: Նրանք, իմանալով այդ մասին, բանակեցին Մեծ Պրեսլավայում և [ճամբարը] խոր խրամով ու ցանկապատով ամրացրեցին: Երբ հռոմայեցիները տեղ հասան, նրանք փակվեցին խրամից ներս և պաշարման օղակի մեջ առնվեցին: Հռոմայեցիները իզուր ժամավաճառ էին լինում, ոչ մի խոսքի արժանի բան չէին կատարում, բացի այդ սկսեցին նաև պարենի պակաս զգալ, դրա համար նստեցին խորհրդակցելու՝ իրենց անելիքի մասին: Նրանք միահամուռ կերպով որոշեցին վերադառնալ, և ուշ գիշերով առանց աղմուկի ցանկապատի դռները բացելով, բռնեցին նահանջի ճանապարհը: Այդ բանը Տյուրախից թաքուն չմնաց: Իմանալով, որ հռոմայեցիները որոշել են գնալ, նա խարաքսից բազում զորք հանեց և ուղարկեց դեպի անցատեղիները, որոնցով պետք է հռոմայեցիներն անցնեին: Երբ հռոմայեցիները դուրս եկան, [Տյուրախն] իսկույն նրանց վրա հարձակվեց: Հռոմայեցիները դիմեցին սարսափելի փախուստի, ոմանք ընկնելով հետապնդողների ձեռքը, սրի էին քաշվում, մյուսները դժվարանցանելի ճանապարհները կանխօրոք բռնածներին հանդիպելով, կոտորվում: Հսկայական քանակությամբ զորք սպանվեց, այդ թվում և Սինկելլոսը, իսկ մնացածները Միքայել Ակոլութոսի հետ փրկվեցին Ադրիանուպոլսում: Այս աղետի վրա կայսրը մեծ ցավ զգաց, նա վերապրածներին սրտապնդեց, զինվորագրեց այլ



զորք, հավաքեց վարձկանների, դտնելով, որ կյանքն անտանելի է, քանի գլխովին չի վերացրել պաժինակների ցեղը: [Պաժինակները] ոմն դասալիքի կողմից իմանալով [կայսեր] վճռի մասին, դեսպանություն ուղարկեցին հաշտություն խնդրելով: Կայսրն ընդունեց նրանց դեսպանությունը և նրանց հետ երեսնամյա հաշտություն կնքեց:

1053

29. Կայսրը Մանգանա կոչված վայրում մեծ վկա Գեորգիոսի անվան վանք կառուցելով<sup>608</sup> և շինարարությունների վրա անխնա դրամ ծախսելով, մեկ՝ կառուցելով, մեկ՝ քանդելով, մեծ կարիքի առաջ կանգնեց, որից դուրս գալու համար ամեն տեսակ փերեզակության դիմեց, հրեշային ու խաբեբա հարկապահանջություն հորինեց: Նա պետական հոգացողների պաշտոնում նշանակեց ամբարիշտ ու մեղսագործ մարդկանց, որոնց միջոցով ապօրինի ճանապարհով դրամական միջոցներ էր հավաքում: Նա Լևոն Սերվլիասի միջոցով լուծարքի ենթարկեց շուրջ հիսուն հազարի հասնող իբերական զորքը<sup>609</sup>, և զինվորների փոխարեն այդ վայրերից բազում հարկեր էր հավաքում<sup>610</sup>: Նա բազմաթիվ այլ ստոր ու անօրեն հարկապահանջություններ հորինեց, որոնց մասին պատմելն անգամ ամոթաբեր է: Բայց մի բան պետք է ասել, այն, որ այս կայսրից սկսած, նրա շվայտության ու պոռոտախոսության պատճառով, հռոմայեցիների գործերն սկսեցին վատանալ և այդ օրից սկսած մինչև այժմ աստիճանաբար կատարյալ անզորության հասան<sup>611</sup>: Կոպիտ կերպով առատաձեռնության ձգտելը կատարյալ անառակության կհասցնի: Համենայն դեպս նա ամենևին էլ զուրկ չէր բարի գործերից, պատմության մեջ հիշատակելի են նրա որոշ գործեր, օրինակ՝ վերոհիշյալ վանքի կառուցումը, այդ վանքի ծերանոցները, հյուրանոցներն ու աղքատանոցները արժանի են գովքի, չի կարելի շներբողել նաև Մեծ եկեղեցում կատարված աշխատանքը: Մինչև նրա իշխանությունը այդ եկեղեցում սուրբ պատարագ էր մատուցվում միմիայն պաշտոնական տոներին, ինչպես և շաբաթ ու կիրակի օրերին, իսկ մնացած օրերին՝ ոչ: Դրա պատճառը եկամուտների պակասն էր: [Մոնոմախը] նրան բավարար, առատ միջոցներ հատկացրեց և հնարավորություն տվեց, որ ամեն օր մատուցվի սուրբ պատարագը: Այդ բանը մինչև օրս էլ հարատևում է: Նա այդ եկեղեցուն նվիրաբերեց ոսկուց, թանկագին մարգարիտներով ու ակներով պատրաստված սուրբ հաղորդության սպասքներ, որոնք և՛ իրենց շափերով, և՛ գեղեցկու-

թյամբ, և՛ արժեքով շատ ու շատ էին գերազանցում մնացածները: Նա զարդարեց այն բաղում այլ թանկագին առարկաներով: [Մոնոմախի] մասին ահա այսպես:

- 1054/ 30. Ինդիկտիոնի 7-րդ և 8-րդ տարիներում մայրաքաղաքում  
1055 մահ տարածամ տարածվեց, այն աստիճան սուր, որ մարդիկ չէին հասցնում մահացածներին թաղել: Ինդիկտիոնի 7-րդ տարվա ամռանը շատ խոշոր կարկուտ էլ տեղաց, որը ոչ միայն բազում անասունների, այլև մարդկանց կոտորեց: Կայսրը տառապում էր իր հիվանդությամբ՝ հոգատապով և պառկած էր իր կողմից նորոգված Մանգանայի վանքում: Երբ նա ունեցավ մի նոպա ևս և մահն արդեն շեմին էր, արքունիքի մեծավորները՝ լոգոթետ Հովհաննեսը, որին կայսրը պարագինաստեոն էր դարձրել, հեռացնելով Լիխուդեսին, դրոմոսի պրոտոնոտար Կոստանդինը, կանիկլիոնի<sup>612</sup> Վասիլը և մյուս մերձավորները, մտածում էին՝ ու՞մ նստեցնեն կայսերական գահին: Բոլորը գտան, որ ամենից հարմարը Նիկեփոր Պրոտեոնն է: Սուրհանդակ է ուղարկվում Բուլղարիա՝ նրան այնտեղից բերելու: այն ժամանակ նա Բուլղարիայի կառավարիչն էր: Երբ այդ մասին իմացան կայսրուհի Թեոդորայի սպասավորները (Զոեն արդեն վախճանված էր), այն է Նիկետաս Քսիլինիտեսը, Թեոդորոսն ու Մանուիլը, [Թեոդորային] դրոմոնի վրա նստեցնելով, բերում են մեծ պալատի  
11—I ապարանքը և հռչակում ինքնակալ: Կայսրը վախճանվեց և ար—  
—1055 ժանացավ սովորական թաղման՝ Մանգանայում, իսկ կայսրուհու կողմնակիցները մարդ ուղարկեցին և Պրոտեոնին Թեսալոնիկեում բռնելով, բերեցին Թրակեսիոն բանակաթեմը, Կուզենայի վանքը, ուր և արգելափակեցին:

## Թ Ե ՈՒ Պ ՈՐ Ա

[11 հունվար 1055—21 օգոստոս 1056 թթ.]

1. Թեոդորան, տիրանալով պապենական թագավորության<sup>613</sup>, անհապաղ հեռացրեց Պրոտեոնին կայսր հռչակելու կողմնակիցներին, գրավեց նրանց ունեցվածքն ու աքսորեց: Նա իր բոլոր ներքինիներին տվեց ամենաբարձր պաշտոնները՝ Թեոդորոսին դարձրեց արևելից սխուլերի դոմեստիկոս և ուղարկեց արեւելք՝ թուրքերի արշավանքները կասեցնելու, մագիստրոս Իսա-



հակ Կոմնենոսին հեռացնելով ստրատոպեդարխի պաշտոնից: Մոնոմախր մակեդոնական բովանդակ ուժերը արևելք էր տեղափոխել, նրանց բոլոր հրամանատարները մակեդոնացիներ էին, որոնցից մեկը Բրիեննիոսն էր: Թուրքերի մեջ լուր էր տարածվել, թե ճակատագիրն այնպես է կանխորոշել, որ թուրքերի ցեղը կործանվելու է այնպիսի ուժից, որպիսով Ալեքսանդր Մակեդոնացին կործանեց պարսիկներին<sup>614</sup>: [Թեոդորան] դրոմոսի լողոթետի պաշտոնում առաջ քաշեց Նիկետասին, իսկ վիզլայի դրունգարի՝ Մանուիլին: Իր մեծ փորձը նկատի ունենալով, հասարակաց գործերի դեկավարությունը տվեց սինկելլոս Լևոնին՝ մականունը Ստրավոսպոնդիլոս, որն անցյալում ծառայել էր Միքայել կայսեր: Քաղաքում վիճակն ահա այսպիսին էր: Իսկ Բրիեննիոսը, լսելով կայսեր մահվան մասին, վերցնելով մակեդոնացիներին, իջավ Խրիսուպոլիս: Կայսրուհին մեղադրելով նրան անկազմակերպ հեռանալու մեջ, բռնեց, ունեցվածքը գրավեց և աքսոր ուղարկեց, իսկ [նրա] զինվորներին կարգադրեց ետ վերադառնալ: Ահա 6564 թվականի, ինդիկտիոնի ամբողջ 9-րդ տարին ապրելով, նույն ինդիկտիոնի օգոստոս ամ-

21—VIII սի վերջին աղիքների ոլորումից թագուհին մեռավ:

—1056 2. Երբ նա դեռ հոգեվարքի մեջ էր, իր ներքինիները Լևոն սինկելլոսի հետ կայսերական գահին են նստեցնում պատրիկ Միքայել Ստրատիոտիկոսին, որը թեև ծագումով Բյուզանդիոնից էր, բայց պարզ ու միամիտ մի անձնավորություն էր, որ դեռ մանուկ հասակից զինվորական դաստիարակություն ստացած լինելով, այլ բաների անտեղյակ էր, բացի այդ, նա արդեն տարեց էր, ծեր հասակում, որի անգործությունն ում պիտանի լինելու մասին ասել է պոետ Արքիլոքոսը: Ներքինիներն այդպես արեցին, որպեսզի նա ձևական, անունով միայն կայսր լինի, իսկ ինքներն իրենց ցանկացածի պես տնօրինեն հասարակաց գործերը և ամեն ինչի տերը լինեն: [Միքայելը] նախօրոք երդում էր տվել, թե իրենց կամքին ու ցանկության հակառակ ոչինչ չի անի:

## Մ Ի Ք Ա Յ Ե Լ Ծ Ե Ր Ո Ւ Ն Ի

[21 օգոստոս 1056—31 օգոստոս 1057 թթ.]

1. Միքայելը ինդիկտիոնի 9-րդ տարվա օգոստոս ամսի 21-ին դարձավ ինքնակալ, իսկ պրոեղրոս Թեոդոսիոսը, Կոստանդին Մոնոմախ կայսեր հորեղբորորդին, լսելով նրա կայսր հռուչակվելու մասին և վատ զգալով, իր ձեռնարկելիք գործի դժվարութունների ու հնարավոր տապալման մասին առանց երկար մտածելու, վերցնում է իր ընդոժիններին, ստրուկներին և մյուս սպասավորներին, նաև բազմաթիվ հարևանների ու ծանոթների, ովքեր որ խելքից թեթև էին, և երեկոյան դուրս գալով տնից (այն գտնվում է Լեոմակելլիոն կոչվածի մոտ), պողոտայով զայրացած ու վրդովված շարժվում դեպի պալատ, հանդիպածին բարձրաձայն հայտնելով իր հանդեպ ցուցաբերված անսահման անարդարության մասին, ասելով, որ թագավորութունն իբրև թե իր ժառանգական իրավունքն է և իրեն է վերաբերում, քանզի ինքը վախճանված կայսեր ամենամոտիկ արյունակիցն է: Հասնելով Պրեստրիսն, նա ջարդեց բանտի դռները, բանտարկյալներին դուրս հանեց, հույս ունենալով նրանց օգնությամբ ինչ-որ մեծագործութուն ու սխրանք կատարել: Նա նույն բանն արեց նաև հասնելով Խալկե<sup>615</sup>: Ապստամբության լուրը հասավ արքունիքի՝ ներքինիներին և պալատի պահակախումբը՝ հռոմայեցիներ ու վարյազներ (վարյազները կելտական ցեղ են և վարձով ծառայում են հռոմայեցիների բանակում) շտապ կարգով զինվեցին, անհապաղ ոտքի հանվեցին նաև կայսերական տրիբերաներում ծառայողները: Հավաքվեց բավական կարող ուժ, որը պետք է Թեոդոսիոսի դեմ ուղարկվեր: Վերջինս, իմանալով այդ մասին, այլևս չուղղվեց դեպի պալատ, այլ շրջվեց դեպի աստծու Մեծ եկեղեցին: Նա հույս ուներ, որ մտնելով այնտեղ, պատրիարքի ու կղերի կողմից ընդունելության կարժանանա, որ բաղում ժողովուրդ կհավաքվի և իրեն կայսր կհռչակեն: Բայց ամեն ինչ հակառակ ընթացքն ունեցավ: Պատրիարքն ու եկեղեցու կղերը նրա առաջ փակեցին դռները, սովորաբար նրման դեպքերի սիրահարներն ու հարողները ոչ մի տեղ չէին երեկվում, իսկ մինչև այդ վայրը նրա ետևից գնացողները, իմանալով իրենց դեմ ուղարկվելիք ուժի մասին, կամաց-կամաց հեռացան, ցրվեցին: Այսպիսով, նա մնաց մեն-մենակ և եղկելի ապաստան



աղերսողի նման, իր որդու հետ նստեց եկեղեցում: Փութանակի մարդիկ ուղարկելով, նրան եկեղեցուց դուրս հանեցին և Պերգամոն աքսորեցին: Նույն կերպ վարվեցին նաև նրան հարած հայտնի մարդկանց հետ: Ահա սրանից հետո Միքայելը միահամուռ կերպով հռչակվեց ինքնակալ:

2. Կայսրության սանձերն իր ձեռքն առնելով, նա սենատի<sup>616</sup> բոլոր գլխավորների աստիճանները բարձրացրեց, իսկ դեմոսին էլ սիրաշահում էր բաղում բարիքներ խոստանալով: Լինելով զառամյալ և հիշելով հին-հին սովորույթները, նա փորձեց վերստին կյանքի կոչել նրանցից շատերը, որոնք որպես կայսրությանը կամ հասարակությանը ոչ մի օգուտ չտվող, դադարել էին գոյություն ունենալուց: Նա հրաման տվեց վերանորոգել, այսպես կոչված, Ստրատեգիոնը<sup>617</sup>, որի առթիվ քաղաքացիները ծիծաղելով ասում էին, թե նա հողն է մաղում, փնտրելով խաղալու ժամանակ այնտեղ կորցրած իր վեզը: Նա կարգադրեց, որ քաղաքացիներն իրենց գլուխները ծածկեն բարակ թելով գործած կարմիր, մեծ գծեր ունեցող ծածկոցներով և ոչ անգիծ, ինչպես այժմ: Նա հանրային հոգացողների պաշտոնին նշանակեց ոչ թե սենատորներին, այլ ամեն մի դիվանում բազմացած արագագիրներին: Եվ նման շատ բաներ, որոնցից յուրաքանչյուրի մասին եթե ուզենամ պատմել, ունկնդիրներին տաղտկալի պիտի դառնամ: Ահա այդպես միամիտ ու ապաշնորհ էր նա վարում գայիստնն ու կառավարում: Երբ հասավ կայսերական նվերներ բաժանելու ժամանակը, որոնք ամեն տարի՝ Ջատկի օրը կայսրերը սովորության համաձայն բաժանում էին սենատորներին, ներս մտան [ազնվական] ծագմամբ ու արիությանբ անուն հանած զորահրամանատարները, այն է՝ մագիստրոս Իսահակ Կոմնենոսը, մագիստրոս Կատակալոն Կեկավմենոսը (սա Անտիոքի դուքսն էր, որի պաշտոնանկ արվելուց հետո, նրա տեղը գրավեց կայսեր եղբորորդի Միքայելը, որին, պաշտոնը ստանալուց հետո, կայսրը մականվանեց Ուրանոս, իբրև թե նա, ինչպես և ինքը, սերում էր Ուրանոսների հին տոհմից, և տալով, ինչպես իր նախորդը, Անտիոքի մագիստրոսի պատվաստիճան ուղարկեց Կեկավմենոսին փոխարինելու), վեստարխ Միքայել Բուրցիսը<sup>618</sup>, արևելքի՝ Դուկասի ընտանիքից սերող Կոստանդինն ու Հովհաննեսը, և այլ մեծամեծ իշխանավորներ: Բոլորը եկան տեսնելու նոր կայսեր և նրա նվերներին արժանանալու, քանզի բոլորի մոտ տարածվել էր նրա առատաձեռնության, մեծահոգա-

բար բարեգործություններ կատարելու և ազատամտության համբավը: Կայսրը խոսակցություն ունեցավ Կոմնենոսի և Կեկավմենոսի հետ, դրվատեց նրանց, անվանեց քաջ ու առաքինի զորավարներ, հատկապես Կեկավմենոսին, ասելով, որ նման աստիճանի բարձրացավ ոչ թե իր ժագման շնորհիվ, ոչ էլ որևէ մեկի օժանդակությամբ, այլ սեփական քաջագործություններով: Նա նույնպես վարվեց նաև մնացած ազնվականների հետ, բայց ոչ ոքի խնդրանքին չընդառաջեց, նա հավանություն չտվեց Կոմնենոսի և Կեկավմենոսի աղերսին՝ իրենց պրոեգրոսի աստիճանը շնորհելու, նա ամենքի խնդրանքներն էլ անպատասխան թողնելով, ճամփու դրեց և բուլորին իր գեմ գրգռեց: Ահա այսպես նա վարվեց արևելից զորավարների հետ:

3. Աքսորից կանչելով Բրիեննիոսին, նրան Կապագովկիայի կառավարիչ նշանակեց, ապա մակեդոնական տագմանների զորավար-ավտոկրատոր և ուղարկեց թուրքերի գեմ: Մի ոմն թուրք, անունը Սամուխ, ժագմամբ աննշան, բայց պատերազմական հարցերում քաջ ու գործունյա, որ զինակցել էր սուլթանին, երբ վերջինս երկրորդ անգամ ներխուժել էր հռոմայեցիների երկիրը, սուլթանի՝ Պարսկաստան վերադառնալուց հետո երեք հազար զինվորներով մնաց տեղում և դեգերելով Մեծ Հայքի սարահարթներով ու ցածրադիր վայրերով, հանկարծակի հարձակումներ էր գործում, տակնուվրա անում ու ասպատակում հռոմայեցիների [նահանգները]<sup>619</sup>: Կայսրը չկարողացավ Բրիեննիոսին անգամ օգտակար լինել, վիրավորված ու իրենց հոգում զայրույթ թաքցրած մարդկանց պատրելու և սիրաշահելու մեջ նա շատ ապաշնորհ էր: Բրիեննիոսը պաղատագին աղերսում էր՝ վերադարձնել Թեոդորա թագուհու կողմից րրենից խլված դրամը, բայց կայսրը դրան ականջ չկախեց, այդպես քաշվելով, պաղատագին աղերսողին դիմեց ժողովրդական մաշված ասացվածքով, թե «Գործ արա, հետո վարձ պահանջիր»<sup>620</sup> ու ճամփու դրեց: Ահա Բրիեննիոսն էլ այս ձևով արհամարհանքի արժանացած հեռացավ, շատ զայրացած և վրեժ առնելու առիթի սպասելով:

4. Նա այդ կերպ վարվեց նաև էրվեվիոս Ֆրանկոպոլոսի հետ, մի մարդու, որ Մանիակեսի հետ Սիկիլիա էր արշավել, մեծ հաղթանակներ տարել և այդ օրվանրց մինչև այժմ հռոմեասիրություն ցուցաբերել: Սա ևս խնդրում, աղաչում էր արժանանալ մագիստրոսի պատվաստիճանին, բայց կայսրը ոչ միայն արժանի չգտավ նրան ընդունել, այլ շատ ծաղրուծանակի ենթար-



կելով ու անարգելով, ճամփու դրեց: Խնդրանքների հարցում նա այդպես անխոհեմ էր, և դժվարամատչելի: Էրվեվիոսը որպես բարբարոս և դայրույթը զսպելու անկարող, վիրավորանքը հեշտությամբ շտարավ, ու թեպետև հոռմայեցիների ծրագրած մեքենայություններին անտեղյակ էր, ջանաց վրիժառու լինել անարգողից: Նա խնդրեց թույլ տան իրեն գնալ տուն և թույլտրվություն ստանալով, կայսեր մնաս բարով ասաց ու [քաղաքից] իսկույն դուրս եկավ: Անցնելով արևելք, նա բարձրացավ Արմենիականների [բանակաթեմում] գտնվող իր տունը<sup>621</sup> Դագարաբե, և ձմեռելու համար այնտեղ ցրված ֆրանկներից մի քանիսի հետ համաձայնության գալով, կարողացավ նրանցից երեք հարյուր հոգու գայթակղեցնել: Այնտեղից դուրս գալով նա բարձրացավ Մարաստան<sup>622</sup> ու համագործակցություն հաստատեց այնտեղ գտնվող Սամուխի հետ՝ հոռմայեցիների դեմ պատերազմելու համար: Որոշ ժամանակ [նրանց] դաշինքը մնաց անսասան, բայց երբ մի անգամ ֆրանկների ու թուրքերի միջև ընդհարում տեղի ունեցավ, այդ երկու ցեղերը սկսեցին միմյանց նկատմամբ դավեր նյութել: Սամուխը ձևացնում էր, թե անխախտ է պահում դաշինքը, բայց էրվեվիոսը շատ էր կասկածում և հանկարծակի հարձակում ակնկալում: Նա խնդրում էր ֆրանկներին անհոգ չքնել, այլ հենց զենքերի վրա: Այդ բանը նա ծածուկ էր անում, Սամուխին բացարձակապես զգացնել շտալով դա, մինչև որ վերջինս կարծելով, որ իր [ծրագիրը] թաքուն է մնացել, այն ի հայտ չբերեց: Մի օր, զինելով իր ունեցած բոլոր թուրքերին, նա հարձակվեց ճաշի նստած ֆրանկների վրա, որոնք իրենց զորավարի կարգադրության համաձայն, ձիերին կազմ ու պատրաստ ունենալով, հենց որ զգացին թուրքերի հարձակումը, անհապաղ նստեցին ձիերի վրա և դուրս եկան նրանց ընդառաջ: Տեղի ունեցավ սաստիկ մարտ և թուրքերը, մի փոքր դիմազրելուց հետո, դիմեցին փախուստի: Նրանցից շատերը սպանվեցին, մնացածները, անձի ու անզեն փրկվեցին իլաթում: Էրվեվիոսը ֆրանկների հետ հետապնդումից վերադառնալով, խորհուրդ տրվեց վրանները խփել ցանկապատված ճամբարում, բայց ֆրանկները սյնդում էին ու ստիպում իլաթ քաղաքը մտնել՝ (նրա ամիրայի հետ իրենք երդումներով հաստատված դաշինք ունեին), որպեսզի հանգստանան, բաղնիք ընդունեն, մաքրվեն պատերազմի արյուններից: [Էրվեվիոսը] համառում էր ասածի վրա, խնդրում այդ մտքից հրաժարվել, ամենևին հավատ չընծա-

յևլ այլադէն ու այլազդի մարդկանց երդումներին, մարդկանց, որոնք համողված են, թե բարեպաշտութիւնն է բազում քրիստոնյաների սպանութիւնը: Երբ իր ասածի վրա ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց և բոլորը միահամուռ գտնում էին, որ անհրաժեշտ է քաղաք մտնել, նա էլ վեր կացավ ու նրանց հետ մտավ, նախապես հանուն աստծո շատ պաղատելով, աղաչելով ու հորդորելով նրանց լինել շատ զգույշ, զենքը [միշտ] ձեռքում բռնած ունենալ: Բայց ֆրանկները, մտնելով [քաղաք], անգոսնեցին զորավարի կարգադրութիւնները և իրենց նետեցին բաղնիքներն ու կերուխումի: Ամիրա Ապոնասարը<sup>623</sup>, Սամուխի և քաղաքի սարակինոսների հետ խորհրդակցելով, կարգադրութիւն արեց պանդոկապաններին՝ երբ ազդանշանը տրվի, բռնել հյուրընկալողներին, շղթայել նրանց, կամ, եթե դա հնարավոր չէ, սրի քաշել: Սկզբում նա հանգիստ էր մնում, բայց երբ ֆրանկները բավարար չափով զվարճացած քուն մտան, նա տալով ազդանշանը, հարձակման անցավ: Ֆրանկների մի մասն իսկույն սրի քաշվեց, մյուսը՝ բռնվեց, ումանք էլ իրենց պարսպից դուրս նետելով, կարողացան փրկվել: Բռնվեց և էրվեվիոսը, որը շղթայվեց ու հսկողութիւն տակ առնրվեց: Ամիրան այդ բանն անելուց հետո, լուր ուղարկեց կայսեր, թե իբր նրա հանդեպ բարեկամական զգացումներ տածելով, իր, կայսեր դեմ դավեր նյութողներին ոչնչացրեց և նրանց առաջնորդին բռնեց: Ահա այդ էր, ինչ տեղի ունեցավ Ֆրանկոպոլոսի հետ<sup>624</sup>:

5. Իսկ արևելից զորավարները, ինչպես վերևում ասվեց, կայսեր կողմից ճամփու դրվելուց հետո, որոշեցին մի անգամ ևս փորձել. նրանք եկան պրոտոսինկելլոս Լևոն Ստրավոսպոնդիլոսի մոտ, որն այն ժամանակ հասարակաց հոգացողն էր, նրան միջնորդ դարձրին կայսեր առջև՝ խնդրելու, որ իրենց հանդեպ խտրականութիւն հանդես չբերի, իրենց աչքաթող շանի, անարգ կերպով չմերժի: Նրանք իրենց այլ իրավունքներն էլ առաջադրեցին և վերջում ասացին, թե լավ չէ, որ կայսերական պատիվների են արժանանում քաղաքացիական անձինք, մարդիկ, որոնք [պարսպի] ատամնաշարի մոտն անգամ չեն կանգնել, թշնամիների դեմ երբևիցե չեն մարտնչել, իսկ իրենք, որ մանուկ հասակից պատերազմներում են անցկացրել, անքուն մնացել, որպեսզի նրանք հանգիստ քնեն, քամահրվեն ու զրկվեն կայսերական պատվից: Բայց կայսրը լինելով դժկամ ու ան-



մատչելի, ոչ միայն բարեհամբույր կերպով շընդառաջեց խընդ-  
րանքին, այլ խնդրարկուներին հայհոյանքներով վոնդեց, բա-  
զում անարգանքներ էլ թափեց յուրաքանչյուր այրի գլխին: Նը-  
րանք, երկրորդ անգամ վիրավորված և կատարելապես հուսա-  
բեկ եղած, գազազել, կատաղությունից եռում էին: Սկզբում ա-  
մեն մեկը ուր էլ լիներ, խոսակցությունների ժամանակ քթի  
տակից այպանում էր կայսեր, ամեն մեկին կոչ անում ան-  
պատասխան շթողնել յուրաքանչյուր վիրավորանքը, դրդում  
ոտքի կանգնել՝ արդար վրեժխնդրության: Այնուհետև, հավաք-  
վելով Մեծ եկեղեցում, երգվեցին չլոել, ոչ էլ կուլ տալ [անար-  
գանքը], այլ պատժել նշավակողներին և, ինչպես ասում են,  
աղամանդյա կապերով հաստատեցին դավադրությունը: Կեկավ-  
մենոսը նպատակահարմար էր գտնում դավադրության մասնա-  
կից դարձնել նաև Բրիեննիոսին, քանզի նա նշանակվել էր մա-  
կեդոնական տագմանների մեծաթիվ դորքի հրամանատար և նա  
ծրագրի իրականացման գործում մեծ դեր կարող էր խաղալ:  
Երբ նա էլ իսկույն համաձայնություն հայտնեց առաջարկին, այս  
անգամ սկսեցին մտածել այն մասին, թե ու՞մ հուչակեն կայսր,  
երբ իրենց ծրագիրը հաջողությամբ պսակվի: Բոլոր դավադիր-  
ների համար պարզ էր, որ այդ բանին արժանի է Կեկավմենոսը,  
որ մյուսներից ավելի շատ էր աչքի ընկնում և՛ փառքով, և՛ քա-  
ջությամբ, և՛ փորձով: Բայց Կեկավմենոսը ջանալով իր վրա-  
յից գցել այդ բեռը, մի քանի բառով վերջ տվեց շաղակրատու-  
թյանը: Նա ոտքի կանգնելով, առանց այլևայլի հռոմայեցիների  
կայսր հուչակեց մագիստրոս Իսահակ Կոմնենոսին և այնպես  
արեց, որ մյուսներն էլ դրան համաձայնություն տան: Ահա այս-  
պիսի ուխտով իրար կապվելով, և վճիռը հնարավոր շավով ա-  
պահովելով, կայսեր մնաս բարով ասելով, յուրաքանչյուրն ե-  
լավ գնաց իր տեղը՝ ուզածն անելու:

6. Արդ, քանի որ Բրիեննիոսի գործերն ընթանում էին կայսեր  
սպասածի պես, նա անցնում է արևելք, որ ՚ետ ունենալով նաև  
պատրիկ Հովհաննես Օպսարասին, որին կայսրը ոսկով ուղարկել  
էր զինվորներին ոռճիկ<sup>625</sup> բաժանելու: Լինելով Անատոլիկոն բա-  
նակաթեմի ինչ-որ ընդարձակ ու ցածրադիր վայրում [Բրիեննիո-  
սը] կապաղովկացիների մեջ բաժանեց դրամը: Նա բարձրացրեց  
ոռճիկը, հրամայեց վճարել սահմանվածից ավելի, մի բան, որին  
հակադրվեց և որը կատարել չուզեց Օպսարասը: Նա ասում էր,  
թե չպետք է հանդգնել հավելում տալ զինվորներին, քանզի կայ-

սրբն այդ մասին ոչ մի հրաման չի տվել: Բրիեննիոսն ասաց, թե չպետք է վախենալ և հավաստիացրեց, թե այդ բանը ոչ ոք չի իմանա: Օպսարասը, սակայն, դրա դեմ դուրս եկավ, հանդուդն հակաճառեց, որի վրա [Բրիեննիոսը] զայրացած, նստած տեղից վեր թռավ ու բռունցքով հարվածեց նրան, վերջում էլ բռնեց նրա մազերից ու մորուքից, դետին փոնեց, ապա շղթայեց, իր վրանի մեջ արդելափակեց և վերցնելով կայսերական ոսկին, սկսեց ուզածին պես ավելիով բաժանել: Այն ժամանակ դիպվածով նրա մոտ էր բանակած պատրիկ Լյուկանթեսը՝ պիսիդացիների ու լիկանացիների հրամանատարը: Լսելով Օպսարասի գլխին եկածի մասին, նա, ինչպես պետք էր սպասել, դա խռովության փորձ համարեց (նա անտեղյակ էր արևելքի զորավարների ծրագրերին) և զինելով արևելից երկու տագմաները, հարձակվեց Բրիեննիոսի վրանի վրա՝ կայսր փառաբանելով Միքայելին: Լյուկանթևյը բռնեց ու շղթայեց Բրիեննիոսին, կապանքներից ազատեց Օպսարասին, որի ձեռքը հանձնելով կապյալ Բրիեննիոսին, հրամայեց ուզածն անել: Կապանքներից ազատված [Օպսարասը], ստանալով ուզածն անելու հնարավորությունը, իսկույն կուրացնում է Բրիեննիոսին և շղթայակապ ուղարկում կայսեր, հայտնելով նաև, թե նա հանդգնել է ապրստամբություն բարձրացնել: Ինքը մնաց տեղում՝ իբրև թե մնացած զինվորներին ռոճիկ բաժանելու: Բրիեննիոսն ահա իր անհաշվենկատությամբ ու ինքնավստահությամբ, որպեսզի շասեմ անմտությամբ, այսպիսի պատժի արժանացավ: Անատոլիկոն բանակաթեմում բնակվող արխոնտներ պրոեդրոս Ռոմանոս Սկլերոսը (նույնիսկ սա հարել էր դավադիրներին), Բուրցեսը, Բոտանիատեսը, Վասիլ Արգիրոսի որդիները և մնացած ընկերությունը առայժմ հանգիստ էին մնում, այլուստ սպասելով ապրստամբության բռնկմանը: Իմանալով Բրիեննիոսի գլխին եկածի մասին, թե նա հիմարաբար իրեն ինչպիսի փորձանքի մեջ գցեց, խոհեմաբար դատեցին, թե նա, խոշտանգումների ենթարկվելով, կարող է բացահայտել դավադրությունը և դավադիրների վերջը վատ կլինի: Այդ պատճառով բոլորը վեր կենալով, գնացին Պափլագոնիա՝ Կաստամոն<sup>626</sup>, Կաստամոնը մագիստրոս Իսահակ Կոմնենոսի կալվածն էր: Նրան էլ գտնելով հանգիստ նստած, հակառակ իր կամքին առնում ու նրա հետ գալիս են մի բավական լայնատարած հարթավայր, որ Գունարիա է կոչվում: Ահա այստեղ, հավաքելով մերձակայքի զինվորներին, ինչպես և նը-



րանց, ովքեր լսելով ապստամբության մասին կամավոր եկան, միահամուռ կերպով [Իսահակ Կոմնենոսին] հռոմայեցիների ինքնակալ կայսր են հռչակում: 6565 թվականի հունիս ամսի 8—VI ութն էր, ինդիկտիոնի 10-րդ տարվա:

—1057 7. Կայսր հռչակվելով, նա ամուր բանակատեղի հաստատեց, մնաց տեղում, սպասելով դավադրության մնացած մասնակիցների հավաքվելուն: Նրան մնալ և տեղից շարժվել էր ստիպում Կեկավմենոսի դանդաղելը: Երբ նա մտածմունքի մեջ էր և ուզում էր իմանալ նրա հապաղելու պատճառը, արևելքից սուրհանդակ ժամանեց, որն ասաց, թե նա դրժել է երգումը, միաբան է կայսեր և ապստամբների վրա հարձակվելու համար զորք է հավաքում: Այս լուրը Կոմնենոսի կողմնակիցների շարքերում մեծ տագնապ ու իրարանցում առաջացրեց, քանզի տեսնում էին, որ իրենց թիկունքում ունենալու են նման մի թշնամի: Այդ իսկ պատճառով նրանք խարաքսում նստած սպասում էին, հետամուտ լինելով իմանալ ճշմարտությունը: Սրանք ահա այդպիսի դրություն մեջ էին, իսկ Կեկավմենոսը հավատարիմ էր մնացել, դավադիրներին տված խոստումին, բայց սպասողական դրություն մեջ էր ու հապաղում էր հետևյալ պատճառով: Երբ նա մայրաքաղաքից դուրս գալով տուն էր վերադառնում, Նիկոմեդիայում կայսերական մի սուրհանդակի հանդիպեց, որի միջոցով հայտնեց դրոմոսի լոգոթետ Նիկետաս Քսիլինիտեսին միամիտ և զինվորին վայել խոսքերով, թե «ինչպես լսել եմ, եղբայր, քո կայսրը բանի տեղ շղնելով Կոմնենոսին և ինձ, մերժեց մեր խնդրանքը, վիրավորեց ու տունն ուղարկեց: Արդ, իմացիր, մենք գնում ենք, բայց եթե դու և քո [տերը] ուրախանում եք մեր հեռանալու առթիվ, ասլա կարող եք նաև մեզ ստիպած լինել հակառակ մեր կամքին վերադառնալ, եթե [մեր ետևից] ուժ ուղարկեք»: Ահա սուրհանդակին այսպես ասելով, նա ավելի արագ ճամփան շարունակեց: Երբ նա տուն հասավ և տեսավ, որ Կոմնենոսը հանգիստ տեղում է նստած, կարծես գործին ոչ մի մասնակցություն չունի, ընկավ ահ ու վախի մեջ, երկյուղեց, թե Կոմնենոսն ու դավադրության մյուս մասնակիցները փոխել են իրենց միտքը և պետք է ջանան թաքցնել դավադրության [գաղտնիքը], ապստամբության ամբողջ պատասխանատվությունը իր վրա է ընկնելու, չէ՞ որ ինքը սուրհանդակի միջոցով հայտնածից իրեն արդեն բացահայտել էր: Նա մտածում ու խորհում էր, թե ինչպես ապահովի իր անձի անվտանգությունը, քանզի նա պատ-

րաստի զորք շուններ, եղածն էլ անբավարար էր ընդդիմակայելու հռոմայեցիների կայսեր, բայց ամենից ավելի այն պատճառով, որ համաձայնություն չէր եկել տեղական զորքերի հետ, ոչ էլ կատարյալ վստահություն ուներ, որ նրանք իրեն ընդառաջ կգնան: Ահա դրա համար նա տեղից չէր շարժվում և իրեն լավ չճանաչողների մոտ այն տպավորությունն էր թողնում, որ նա խուլս է տալիս: Այն ժամանակ այդ վայրում ձմեռում էին երկու ֆրանկական ու մեկ ռուսական տագմա, որոնք իրեն շատ էին մտահոգում, այն պատճառով, որ նրանք հանկարծ կարող է զլխի ընկնեն, բռնեն իրեն և կայսեր ուղարկեն: Ահա այդ բոլորից երկյուղ էրելով զսպում էր իրեն, մինչև որ կապահովվեր իր անձի անվտանգությունը: Երբ որոշեց գործի անցնել, նա նախապես դավադրության գաղտնիքը բացահայտեց իր սպասավորներին ու ազգականներին և հազար հոգուց բաղկացած զորամաս կազմելով, սկսեց փորձել նրանց, որոնց վրա այնքան վստահ չէր: Նա կապեր հաստատեց տեղի մեծավորների հետ, ապա աստիճանաբար փորձեց [գայթակղեցնել] ավելի քաջերին ու ռազմունակներին: Երբ իրեն հաջողվեց սիրաշահել մեծավորներին, անցավ շարքայիններին: Նա կայսերական մի նամակ հորինեց, որով իբր իրեն հրաման էր տրվում վերցնել դաշնակից երեք տագմաները, ինչպես և կոլոնիացվոց ու խաղտիացվոց երկուսը, և շարժվել Սամուխի դեմ: Նա հրամայեց այդ հինգ տագմաններին հավաքվել Նիկոպոլսի դաշտում, որից հետո անցավ գործի: Նա ամեն օր ժողով էր հրավիրում և առավոտյան, ձի նստած հեռանում էր մյուսներից և [տագմայի] հրամանատարին իր մոտ կանչելով, բացահայտում գաղտնիքը, նրան առաջարկելով երկուսից մեկը, կամ հավանություն տալ իր ասածներին, կամ զրկվել զլխից: Ապա իրար ետևից կանչում էր տաքսիսները<sup>627</sup> և նույն կերպ վարվելով, բոլորին [ստիպում] իրենց կամքին հակառակ [հավատարմության] երդումներ տալ: Սկզբում նա գայթակղեցրեց հռոմեական երկու տագմա, այնուհետև՝ իր սեփական զորքերին<sup>628</sup>, և այլազգիների օժանդակ զորքերին: Ահա առանց դժվարության շժմեցնելով ու երդումներով նրանց [մասնակցությունն] ապահովելով և այլևս ոչնչից չվախենալով, նա հավաքեց սեբաստացի, մելիտենացի, Տեֆրիկեի և մնացած հայերի հրամանատարներին ու զինվորներին և ճամփա ընկավ, նախապես Կոմանենոսի մոտ սուրհանդակ ուղարկելով՝ ասելու, թե ամեն ինչ բարեհաջող կարգավորել է և արդեն ծանր ուժով



ճանապարհ է ընկել: Այդ լուրերը Կոմնենոսին ուրախությամբ լցրին ու գոտեպնդեցին: Կոմնենոսը, որ մինչ այդ անշափ անարի էր ու երկշոտ, դարձավ ավելի համարձակ ու արի: Բոլոր դեպքերում սակայն նա Պպասում էր նրա գալստյան: Կեկավմենոսը իջնելու ժամանակ Արմենիականների տագման էլ ստիպեց իր հետ գնալ, բանակաթեմի գլխավորներին էլ՝ ոմանց կամովին, ոմանց իրենց կամքին հակառակ, և ընթացքն արագացնելով, եկավ միացավ Կոմնենոսին, որն արդեն գտնելով, որ իր գործերը ապահով վիճակում են, կնոջ<sup>629</sup> և իր ունեցած գանձերը հանձնեց հարազատ եղբորը՝ Հովհաննեսին և ուղարկեց Պեմոլիսսա բերդը (Պեմոլիսսան Հալիս գետի ափին գտնվող մի քարափ է), իսկ ինքը վերցնելով բովանդակ զորքը, անցնում է Սանգարիոս գետը, քայլով փութանակի գնում դեպի Նիկիա, կայսր ներբողվելով ու փառաբանվելով: Նա գտնում էր, որ տիրելով [Նիկիային], բախտի քմահաճույքների հանդեպ այն հենակետի կվերածի և ապա առաջ կշարժվի: Նա կայսեր հավատարիմ մնացած զինվորներին ու զորավարներին հնարավորություն տվեց հեռանալու: Սրանք, իմանալով [Կոմնենոսի] Նիկիա գալու մասին, խաղաղ նահանջում էին ու ցրվում՝ զինվորները տուն էին գնում, յուրաքանչյուրը մտահոգված կնոջ, երեխաների և այլ կարևորագույն հարցերով, իսկ զորավարներն էլ՝ դեպի կայսրը, նրան Կոմնենոսի գալուստը ազդարարելով: Նրանք էին Անատոլիկոն [բանակաթեմի] տագմաների հրամանատար Լյուկանթեսը, Թեոփիլակտոս Մանիակեսը խարսիանացվոց փաղանգի հրամանատար Պնյուեմիոս իբերացին, և շատ ուրիշներ՝ ոչ այնքան էլ հայտնի մարդիկ:

8. Կայսրը, իմանալով ապստամբություն մասին, թե հոմեական արևելից համայն զորքերը, շնչին բացառություններով, իր վրա են գալիս, չփորձեց հաշտություն բանակցություններ վարել, և երբ արդեն ապստամբությունը բռնկվել էր, և դեպքերը տենդագին զարգացման մեջ էին, ինքն էլ նախապատրաստություն տեսավ և ինչքան հնարավոր էր զինվեց ընդդիմակայելու համար: Նա կանչեց արևմտական բոլոր ուժերը, նրանց վրա հրամանատար նշանակեց մակեդոնական փառավոր ընտանիքներից սերող մարդկանց, ովքեր նախկինում աչքի էին ընկել իրենց քաջագործություններով: Նա աստիճաններ ու նվերներ շնորհեց, առատ դրամ բաժանեց և՛ հրամանատարներին, և՛ զինվորներին, նմանապես նաև Կոմնենոսին չհարած արևելյան

տազմաների, այն է՝ Անատոլիկոն և հարսիանոն [բանակաթեմերի] և նրանց վրա զորավար-ավտոկրատոր նշանակելով արեւելից դոմեստիկոս Թեոդորոսին, Թեոդորա կայսրուհու ներքինուն, նրան տալով որպէս սյունարխոն<sup>630</sup> ու խորհրդական Կոմնենոսի աներձագ մագիստրոս Ահարոն Դուկասին, բազում մարտերում կոփված մի մարդու, Կոմնենոսի դեմ ուղարկեց: Ահա այդ երկուսը, վերցնելով հիշյալ ուժերը, քաղաքի դիմաց գտնվող հրիսուպոլսի վրայով գնացին Նիկոմեդիա: Տեղ հասնելով, նրանք [զորք] ուղարկեցին ու քանդեցին Սանդարիոս գետի կամուրջը, դժվարացնելու համար Կոմնենոսի հարձակումը իրենց վրա, որպէսզի Կոմնենոսը ստիպված լինի շրջանցման դիմել, որով նրա հարձակումը թաքուն չի մնա: Այնտեղից էլ վեր կենալով, նրանք բարձրացան Սոֆոն լեռը և ամուր ճամբար դնելով, պատերազմի պատրաստութիւն էին տեսնում:

9. Կոմնենոսն ամենուր հետախույզներ ու լրտեսներ էր ուղարկում, որպէսզի ոչ մի բան իր ուշադրութիւնից չվրիպի: Իմանալով, որ գոմեստիկոսի զինվորները տիրել են Սոֆոնի գագաթին, արագ քայլով հասավ Նիկիա, գրոհով վերցրեց այն և իր ունեցած գանձերը այնտեղ թողնելով ու ապահովելով, ինչպէս նաև ավելորդ հանդերձանքը, բանակեց Նիկիայի հյուսիսային կողմում՝ մոտ տասներկու ասպարեզ հեռավորութեան վրա: Երկու ճամբարներից էլ՝ և՛ Կոմնենոսի զինվորները, և՛ հակադիր կողմի, դուրս էին գալիս խոտ հավաքելու, նրանք հանդիպում էին իրար, համացեղ, ազգական ու բարեկամի պես, միմյանց կոչ անում, կայսեր կողմնակիցները՝ լքել Կոմնենոսին, բռնակալին ու ապստամբին, կայսեր կողմն անցնել, մի մարդու քմահաճույքի ու ախորժակների պատճառով իրենց մեծ վտանգի չենթարկեն, քանզի մի փոքր անց իրենք կարող են զրկվել ոչ միայն բանակում ծառայելու իրավունքից ու ունեցվածքից, այլև աչքերի ամենաքաղցր լույսից: Հակադիր կողմի զինվորները հորդորում էին մյուսներին լքել կայսեր, որ անունով է կայսր, իսկ իրականում փտած, զառամյալ շաղակրատ ու անպետք, ներքինիների կողմից ղեկավարվող մի մարդու, և անցնել Կոմնենոսի կողմը՝ քաջ ու փառավոր, իր ռազմավարական արվեստով աչքի ընկած մի մարդու, ի դեմս որի հռոմայեցիների բովանդակ հզորութիւնը, ինչպէս շրջանակի գծերը հանդիպում են մի կետում, հավասար ու անփոփոխելի կամքի մեջ<sup>631</sup>: Բայց ոչ մի կողմին էլ չէր հաջողվում համոզել մյուսին, թեև երկու



բանականների առաջնորդներն էլ համառում էին այդ գործում և հմուտ մարդկանց ուղարկելով, զրույցի բռնվում հակառակորդ բանակի զինվորների հետ, որպեսզի ում կարողացան, իրենց կողմը քաշեն: Որոշ ժամանակ նրանք այդպես իրար էին փորձում, բայց ոչ ոք ասվածների մտքին ուշադրություն չէր դարձնում: Կոմենենոսը խորհուրդ տվեց մեծ խնայողությամբ գործածել անտառանյութն ու խոտը, ճամբարից շատ չհեռանալ: Դոմեստիկոսի զինվորները, հատկապես մակեդոնացիները, ենթադրելով, որ [հակառակորդի] տատանվելը նրա վհատության, վախկոտության մասին է վկայում, գտնում էին, որ պետք է մարտի դիմել: [Մնացածները], հակառակ իրենց կամքի, համաձայնվեցին նրանց ասածին և բանակեցին Պետրոսե կոչվող [վայրում], հակառակորդի ճամբարից ոչ շատ հեռու, մոտ տասնհինգ ասպարեզ հեռավորության վրա: Ահա զորքերը իրար շատ մոտեցան և ստիպում էին իրենց զորավարներին մարտի դուրս գալ ու շխանգարել: Կոմենենոսը, համոզվելով նրանց խոսքին, դուրս հանեց իր փաղանգները և շարքի դրեց. ձախ թևի հրամանատարությունը նա տվեց Կեկավմենոսին, աչք գտնվում էր Ռոմանոս Սկլերոսի ձեռքում, իսկ ինքը կանգնեց կենտրոնում: Իրենց զինվորների խոսքը լսեցին նաև դոմեստիկոսն ու Ահարոնը, որ դուրս հանելով իր զորքը, կանգնեցրեց հակառակորդների դեմ ճակատ առ ճակատ: Աչ թևի հրամանատարն էր Վասիլ Տարխանիտեսը<sup>632</sup>, այն ժամանակվա արևմուտքի ստրատելատոր, մակեդոնացիներից ամենաերևելին և՛ ծագմամբ, և՛ խոհեմությամբ, և՛ փորձառությամբ ամենափառավորը: Ձախ թևը վերցրեց Ահարոն մագիստրոսը, ունենալով փոխզորավարներ Լյուկանթեսին, Պնյուեմիոսին ու պատրիկ Ֆրանկ Ռանդուֆոսին: Զորքերն ահա այսպես շարքի կանգնեցին: Երբ տրվեց պատերազմի ազդանշանը, նրանք բախվեցին միմյանց՝ տեղացիների կողմից Հադես կոչվող մի ինչ-որ վայրում: Ահարոնը պարտության մատնեց [հակառակորդի] աչ թևը և հալածեց մինչև խարաքսը, գերի վերցնելով նաև Ռոմանոս Սկլերոսին: Նա շատ շուտով լրիվ հաղթանակ կտաներ, եթե ավելորդ զգուշավորություն հանդես չբերեր և հրաժարվեր ճամբարը թալանելուց, նամանավանդ, որ Կոմենենոսը ջարդ էր ստացել և մտադիր էր նիկիա փախչել: Ինչ վերաբերում է Կեկավմենոսին, ապա նա թեև պարտության մատնեց իր դիմացի [հակառակորդին], բայց մինչև վերջ նրան չհետապնդեց. հասնելով խարաքսը,

նա քանդեց այն, մտավ ներս, թալանեց վրանները և դրանք դետին տապալեց: Երբ այդ բանը տեսան հեռվում գտնվողները (բանակատեղին գտնվում էր բարձրադիր վայրում), Կոմենենոսի մարդիկ սրտապնդվեցին, իսկ Ահարոնի մարդիկ երկյուղով լըցվեցին: Խարաքսը թալանված տեսնելով, մի կողմը ուռա գոչեց, իսկ մյուսը՝ դիմեց փախուստի: Կայսեր կողմնակիցներից բաղմաթիվ զինվորներ ընկան, հատկապես մակեդոնացիներ, ոչ միայն շարքայիներ, այլև բազում զորավարներ, Մավրոկատակալոսը<sup>633</sup>, Պնյուեմիոսը, Կացամունտեսը և շատ ուրիշներ, սպանվածներից շատ ավելին էլ գերի ընկավ:

10. Պատմում են, որ այս ճակատամարտի ժամանակ կայսեր փախուստի դիմած կողմնակիցներից ֆրանկ Ռանդուլֆոսը, դեգերելով փախստականների ու նրանց հետապնդողների մեջ, ուղում էր մենամարտել անվանի զորականներից մեկի դեմ: Իմանալով, որ Նիկեփոր Բոտանիատեսն է անցնում, մյուսներին թողնելով գնաց դեպի նա, հեռվից ձայն տվեց, կոչ արեց կանգնել, հայտնելով իր ով լինելը և նրան կանչելու նպատակը: Բոտանիատեսը կանգ առավ, երբ մոտեցավ Ռանդուլֆոսը, բախվեց նրան, թրով հարվածեց ու երկու կես արեց Ռանդուլֆոսի վահանը, բայց և Ռանդուլֆոսը հարվածեց նրա սաղավարտին, բայց թուրը սահելով, վնաս չհասցրեց: Դրա վրա դեպի Բոտանիատեսը մարդիկ շտապեցին, որոնք Ռանդուլֆոսին բռնելով, Կոմենենոսի մոտ բերեցին: Կոմենենոսի կողմնակիցներից ընկավ մի զորավար՝ Լևոն Անտիոքոսը և մի քանի զինվոր:

11. Պարտությունից հետո, երբ պատերազմից փախուստով փրկվողները դոմեստիկոսի ու Ահարոնի հետ եկան կայսեր մոտ, վերջինս հուսաբեկ եղավ և արդեն մտածում էր ամեն ինչից հրաժարվելով, սակայն, թույլ չէին տալիս այդ բանն անել, այլ կոչ էին անում մնալ և եթե պետք է պատվավոր մահն ընդունել՝ թագավորության սիրույն: Դարձյալ զորք հավաքել և երկրորդ անգամ մարտ տալ նպատակահարմար ու ձեռնտու չէր համարվում, ենթադրվում էր, որ հաջողության կհասնեն, եթե շահեն քաղաքացիների բարյացակամությունը: Այդ նպատակով ահա նա նրանց հանդեպ հոգատարություն ցուցաբերեց, նվերներով ու պատիվներով զսպեց: Իսկ Կոմենենոսը, ջարդ տալով ու ցրելով հակառակորդի զորքերը, Նիկիայից վեր կացավ և երեք օր հետո հասավ Նիկոմեդիա: Նրա այնտեղ լինելու ժամանակ տեղ են



հասնում կայսեր դեսպանները՝ պրոեդրոս Կոստանդին Լիխուդե-  
սը, պրոեդրոս Թեոդորոս Ալուպոսը և փիլիսոփաների հյուպա-  
տոս<sup>634</sup> Կոստանդին Պսելլոսը<sup>635</sup>, նպատակահարմար գտնվեց հենց  
այս երեքին դեսպանության ուղարկել, նկատի ունենալով այն հան-  
գամանքը, որ այդ ժամանակներում և՛ իմաստությունամբ, և՛ ճար-  
տար լեզվով նրանք ամենակարողն էին համարվում, հատկապես  
Պսելլոսը: Կայսրը հույս ուներ սրանց ճարտարախոսությունամբ ու  
բարեմասնությունամբ կարևոր արդյունքի հասնել: Դեսպանություն-  
նը Կոմնենոսին խոստացավ կայսեր կողմից որդեգրում և կեսար  
հռչակել, եթե նա զենքերը ցած դնի, ապա և ներում շնորհել  
նրան հարած բուրդին<sup>636</sup>, Քանի որ նրանց ասածի վրա ոչ ոք  
ուշադրություն չդարձրեց, նրանք վերադառնալով կայսեր մոտ,  
նոր դեսպանությունամբ գնում են դեպի [Կոմնենոսը], որին հան-  
դիպում են Ռեաս գյուղում: Դեսպանությունը հայտնեց, թե Կոմ-  
նենոսը որդեգրյալ կայսր կհռչակվի, իսկ իր զինակիցներին՝  
Կոմնենոսի կողմից տրված աստիճանները կհաստատվեն կայսե-  
րական հրովարտակով: Երբ կայսեր խոստումների մասին հայ-  
տարարություն արվեց, Կոմնենոսը և նրա բուրդ իշխանավորնե-  
րը հավանություն տվեցին և պահանջեցին, որ այդ խոստում-  
ները հաստատվեն խրիստովու գրությունամբ: Միայն Կեկավմենոսն  
էր, որ դեմ էր ամեն ինչի, նա պնդում էր, որ զառամյալ կայսրը  
պետք է հրաժարվի թագավորությունից ու հեռանա, քանզի ար-  
դեն գահընկեց արվածին, սարսափելի երդումներով մերժվածին,  
չի կարելի թույլ տալ, որ վերստին թագավորի հռոմայեցիների  
վրա: Նա ասում էր, որ երդմնազանցությունը կզրզուի աստժո  
բարկությունը, բացի այդ զենքերը ցած դնելն էլ իրենց համար  
ձեռնտու չէ: Կոմնենոսին որդեգրելուց հետո նրան պետք է թու-  
նավորեն, նա շուտով այս աշխարհից պետք է հեռանա, իսկ նրան  
համագործակցած ամեն ոք՝ կուրացվի: Պատմում են, որ դես-  
պաններն էլ, դավաճանելով իրենց կողմանը, մի անգամ մեկը,  
մյուս անգամ՝ մյուսը, ծածուկ Կեկավմենոսի մոտ էին գալիս ու  
խնդրում համառել իր առարկության վրա և ամենևին տեղի չտալ:  
Իրերին քաջատեղյակ մարդիկ էլ նույն բանն էին ասում, մար-  
դիկ, որոնց ազնվության վրա կասկած չկար: Սրանք հենց իրեն՝  
Կոմնենոսին երդումներով վստահեցնում էին, թե քաղաքի ողջ  
բնակչությունը նրա կողմն է և հենց որ նա մոտենա քաղաքին,  
ծերունուն դուրս շարտելով, հաղթական երգերով ու փառաբանու-

Թյամբ նրան կդիմավորի: Պատմում են, թե այդ բոլորը ճամբարում տեղի ունեցան:

12. Իսկ ծերունին նվերներով, դրամով, աստիճանների բարձրացմամբ, կարճ ասած՝ ամեն բանով, ինչով կարելի է հրապուրել ու պատրել ամբոխին, սիրաշահում էր քաղաքացիների բարյացակամությունը և հավատարմությունը: Բայց ցանկանալով այդ բարյացակամության կապն ավելի ուժեղ ու անքակտելի դարձնել, նա կազմեց սարսափելի երդումներ, սոսկալի անեծքներ բովանդակող մի դրություն, թե Կոմնենոսին երբեք կայսր կամ տեր չեն անվանելու, նրա հանդեպ չեն ցուցաբերելու կայսեր վայել պատիվներ, և ստիպեց սենատորներին մեկ-մեկ ստորագրել ու բովանդակությունը հաստատել: Բոլորն էլ, հնազանդվելով իշխանության, և այն պատճառով, որ Կոմնենոսը դեռ հենու էր գտնվում, ստորագրեցին: Բայց երբ նա հասավ Ալմեսս կոչվող ինչ-որ գյուղ և հաջորդ օրը պետք է օթեաներ Դամատրիսի ապարանքներում, նրանք՝ Անաստասիոսի որդի մագիստրոս Միքայելը, պատրիկ Թեոդորոս Խրիսելիոսը, պատրիկ Խրիստոֆոր Պյուրրոսը, բոլոր հետերիարխները և ոչ նշանավոր այլ անձինք, արշալույսին եկան աստծու Մեծ եկեղեցին և ներքևից կոչ էին անում պատրիարքին՝ իրենց մոտ իջնել, քանզի նրա հետ ուզում են կարևոր հարցերի շուրջ խոսել: Պատրիարքը շուգեց իջնել և, փակելով իր դռները ու եկեղեցու վերնատունը տանող լաբիրինթոսի մուտքը, նրանց մոտ իր եղբորորդիներ Նիկեփոր և Կոստանդին եղբայրներին ուղարկեց՝ հրամայելով նրանց միջոցով հայտնել իրենց ասելիքը: Հավաքվածներն իրենց հետ վերցրին և մի այլ բազմություն (երբ լուրը տարածվեց, բազմությունն սկսեց հոսել, ոչ միայն խառնակությունների սիրահարները, այլև ոչ քիչ կարգին մարդիկ, բազում սենատորներ՝ ովքեր կայսեր կողմից բավարար ուշադրության չէին արժանացել): Ահա սըրանք, բռնելով պատրիարքի եղբորորդիներին, սպառնում էին նրանց իրենց հետ տանել<sup>637</sup>, եթե [պատրիարքը] անհասպաղ չիջնի իրենց մոտ: Պատրիարքը ակամա, գուցե և, ինչպես ասում են շատերը, ուզելով, ես չեմ կարող ճիշտն ասել, հագնելով քահանայական պատմուճանը և առնելով պատրիարքական մնացած նշանակները, կոտորվելով և իրեն զայրացած ձևացնելով ցած իջավ: Բայց, ինչպես պարզվեց, այդ բոլորը դերասանություն էր: Երբ նա ցած իջավ, ամբոխավարները նրան բռնեցին. և աթոռ բերելով նստեցրին սուրբ բեմի աջ կողմում: Ամենից



առաջ, իբրև թե որպես պատրվակ, նրանից խնդրեցին միջնորդել կայսեր առջև՝ ետ ստանալու իրենց ստորադրած փաստաթուղթը, քանի որ կայսրն արդեն համաձայնության է եկել Կոմնենոսի հետ և նրան կայսր հռչակել: Նրանք ասում էին, թե այդ փաստաթղթի առկայության դեպքում անխուսափելիորեն հետևում է երկու սարսափելի բան. եթե իրենք Կոմնենոսին կաթար փառաբանեն, ապա երդմնազանց պիտի եղած լինեն Միքայելի հանդեպ, իսկ եթե անարգեն, ապա անարգած կլինեն կայսեր անձը, որով պետք է պատժի ենթարկվեն: [Պատրիարքը] ընդառաջեց և խոստացավ կատարել նրանց խնդիրքը: Մի փոքր անց բոլորն ամեն ինչ մի կողմ թողած, Կոմնենոսին կայսր են հռչակում, իսկ նրանց, ովքեր դեմ էին, հռոմայեցիների թշնամի և ապստամբ անվանելով, փորձում են ամբոխի միջոցով թալանել նրանց տները: Ամենից առաջ հենց ինքը՝ պատրիարքն էր, որ եկեղեցու երկրորդ մարդու՝ Ստեփանոսի միջոցով համաձայնություն ու հավանություն տվեց դրան, իսկ Անտիոքի պատրիարք Թեոդորոսը բարձրագույն փառաբանեց Կոմնենոսի կայսր հռչակվելը և դրդեց ավերել ու թալանել ապարանքները այն մեծամեծների, ովքեր կատարվածին հավանություն չէին տալիս: [Պատրիարքը] դա կատարեց սուրբ և հռչակավոր տաճարի ներսում: Միաժամանակ նա Կոմնենոսի մոտ սուրհանդակ ուղարկեց, ինչպես և այլ սուրհանդակներ՝ ծերունու մոտ, [Կոմնենոսին] ասաց, որ անհապաղ գա՝ իր համագործակցության համար վարձ պահանջելով, քանզի նա հասավ իր նպատակին, իսկ Միքայելին էլ հրամայեց հեռանալ արքունիքից, քանզի այն իրեն ամենևին չի պատկանում: Սրանից բոլորին միանգամայն պարզ դարձավ, որ պատրիարքը ոչ միայն մասնակից էր ապստամբության, այլև հիմնական նախաձեռնողն էր<sup>638</sup>: [Միքայելը] իր մոտ ուղարկված մետրոպոլիտներին հարցրեց. «Պատրիարքը թագավորության դիմաց ինձ ի՞նչ է տալիս»: Երբ նրանք պատասխանեցին, թե «Երկնից թագավորությունը», նա հանեց ծիրանին ու կարմիր

31—VIII կոշիկները, հագավ սովորական զգեստներ ու հեռացավ [արքունի—1057 նիքից]<sup>639</sup>: Բոլոր դեպքերում նա կարժանանար [երկնից թագավորության], դրան նա դեմ չէր, մետրոպոլիտներն էլ էին այդ բանը խոստանում, եթե ապստամբության հենց սկզբում նա թողներ և հեռանար արքունիքից: Բայց նա մնաց այնքան, մինչև պատերազմը բռնկվեց, արժանացավ ազանատես լինելու այդքան հայրենակիցների սպանությունը, և ապա սասանվելով ու

խորտակվելով քաղաքացիների կողմից, հակառակ իր կամքին, աստիճանաբար հեռացավ իշխանությունից և որպես վոխհատուցում երկրային թագավորության հազիվ թե ստանա երկնից թագավորությունը: Իայց թող կատարվի այնպես, ինչպես աստված է կամենում: [Միքայելը] ինգիկտիոնի տասներորդ տարվա օգոստոս ամսի երեսունմեկին, շորեքշաբթի օր, գնաց ակրոպոլսում<sup>640</sup> գտնվող իր բնակարանը, իսկ Կեկավմենոսը, որ Կոմնենոսի կողմից կուրապաղատի պատվաստիճանին էր արժանացել, բաղում աղնվականների հետ հինգշաբթի առավոտյան գրոմոնով ուղարկվում է [քաղաք] և մուտք գործելով, գրավում արքունիքը, ուր երեկոյան գալիս է Կոմնենոսը: Հաջորդ օրը, 1—IX սեպտեմբեր ամսի առաջին օրն էր, համաժողովրդական շքեր—1057 թով նա գնաց Մեծ եկեղեցին, որտեղ ամբիոնի վրա, ձեռամբ պատրիարքի կայսերական թագը կապվեց և հռչակվեց հռոմայեցիների ինքնակալ կայսր:



ΙΩΑΝΝΟΥ ΣΚΥΛΙΤΖΗ  
ΧΡΟΝΟΓΡΑΦΙΑΣ ΣΥΝΕΧΕΙΑ

ՀԱՎՀԱՆՆԵԱ ՍԿԻԼԻՑԵՍԻ  
ՇԱՐՈՒՆԱԿՈՂ

## Ի Ս Ա Հ Ա Կ Կ Ո Մ Ն Ե Ն Ո Ս

[1 սեպտեմբեր 1057—25 դեկտեմբեր 1059 թթ.]

Կոմնենոսն ահա ասված ձևով տիրացավ թագավորությանը, հանդես բերելով արիություն և պատերազմական փորձառություն, դրա համար էլ կայսերական ոսկեդրամի վրա անհապաղ իր սուսերակիր պատկերը դրոշմեց. նա իր բոլոր հաղթանակները վերադրեց ոչ թե աստծուն, այլ անձնական զորությանը<sup>641</sup>, պատերազմական փորձին: Որպես միահեծան տեր նա լծվեց կայսրության վերաբերող դործերին, նախապես մեծ պատիվների արժանացնելով նրանց, ովքեր իրեն սատար կանգնեցին, ապա նաև անհրաժեշտ հոգատարություն ցուցաբերեց դեմոսի հանդեպ. հասարակաց գործերին հոգացող բազմաթիվ մարդիկ նշանակեց: Մեծ ակնածանք տածելով պատրիարքի նկատմամբ, նրան հոր պես էր պատվում, դրա համար էլ նրա զարմիկներին շնորհեց առաջին աստիճանները և նշանավոր պաշտոնների նշանակեց: Նա Մեծ եկեղեցուն թույլ տվեց իր սեփական գործերը ինքը տնօրինի, պետութունից միանգամայն անկախ դարձրեց, ոչ ոք իրավունք չուներ միջամտել նրա տնտեսության, սրբազան ըսպասքների հոգացության ու պահպանության հարցում. ամեն ինչ ենթակա է պատրիարքի կամքին՝ և՛ մարդկանց նշանակելու, և՛ գործերը տնօրինելու հարցում: Նա կնոջը Պեմոլիսսա բերդից բերեց [բաղաբ] և ավդուստա<sup>642</sup> հոշակեց: Իր եղբոր Հովհաննեսին և Կատակալոն Կեկավմենոսին շնորհեց կուրապաղատի պատու՝ աստիճան, իսկ եղբորը [նաև] մեծ դոմեստիկոս նշանակեց: Տեսնելով, որ փողի կարիք կա, առանց որի, ինչպես հռետորն է ասում, ոչինչ գլուխ չի գա<sup>643</sup>, որ փողի պակասության, կայսրությունը կատարելապես աղքատանալու պատճառով բանակը թուլացել է՝ որ ամեն ոք ամեն տեղից հոռմայեցիների վրա հարձակում է գործում, մի բան, որ նա նվաստացուցիչ էր համարում և ամենից անտանելին, նա պետությանը պարտք ունեցողների հանդեպ դաժան հարկահան դարձավ: Առաջինը նա էր,



որ կրճատեց օֆֆիկիկիաների<sup>644</sup> հատկացումները: Նա ջանաց նաև խնայող լինել, հոգ տանել թագավորության վարելահողերի ավելացման մասին: Այդ նպատակով նա բազում մասնավոր սեփականատերերի զրկեց կալվածքներից՝ անտեսելով նրանց իրավունքներն հեղատատող խրիստովուլ փաստաթղթերը, նա ձեռք դրեց նաև մի քանի վանքերի [հողերին], զրավեց նրանց կալվածներից շատերը, ասելով, թե այն, ինչ անհրաժեշտ է վանականներին, նա թողնում է, ավելորդն է նա պետականացնում: Թեև այդ քայլը անխորաթափանց մարդկանց կարող է ամբարիշտ, ապօրինի, սրբապիղծ արարք թվալ, բայց խոր ու խոհեմորեն դատողները դրա մեջ ոչ մի անպատշաճ բան չեն տեսնի, քանզի դա շի տանում դեպի սեփականազրկում, ինչպես ասում են նրանք, նա շէր զրկում նրանց անհրաժեշտ [կայքից], այլ [լուկ] փակում էր սյուբարիտական<sup>645</sup> փափկակեցության, հղփության դուռը, ազատում հարևան գյուղացիներին վանականների կեղեքումից ու ազահությունից: Երանի թե նա այդ գործը մինչև վերջ զլուխ բերեր, ոչ միայն վանքերի, այլ ընդհանրապես ողջ եկեղեցականների նկատմամբ: Ահա այսպես էր կայսրը տնօրինում գործերը, և այսպիսին էր վիճակը մայրաքաղաքում:

Պատրիարքն իր նկատմամբ կայսեր տաժած անսահման բարյացակամության վրա հույս դրած նույնիսկ նրա դեմ ամբարտավանացավ, նրան նա շէր դիմում խնդրելով ու աղերսելով՝ երբ պետք էր որևէ հարցի կամ որևէ մեկի օգտի համար նրան դիմել: Երբ իր անվերջ ու տաղտկալի դիմումները շատ հաճախ մերժվում էին, նա անցնում էր սպառնալիքներին ու կոպիտ պարսավանքներին և երբ, հակառակ այդ բոլորին, իրեն դարձյալ շէր հաջողվում նրան համոզել, սպառնում էր զահրնկեց անել, վրա բերելով ռամկական մաշված ասացվածքը. «Փուռ, ես եմ քեզ շինել, ես էլ կբանդեմ»<sup>646</sup>: Ի վերա ամենայնի նա ցանկացավ կարմիր կոշիկներ էլ հագնել, ասելով, թե հնում հոգևորականներն այդպիսի սովորություն ունեին և որ քահանայապետը պետք է վերստին այդպիսիք օգտագործի: Նա ասում էր, թե հոգևորի և թագավորականի միջև շատ շնչին, ավելի շուտ ոչ մի տարբերություն չկա, իսկ հարգության հարցերում հոգևորն ավելի բարձր է ու վեհ: Կայսրը քթի տակ ասված այդ խոսքերը լսելով, շտապեց ավելի շուտ գործել, քան փորձվել: Հրեշտակապետաց տոնին պատրիարքը գնաց քաղաքի առջև իր կողմից կառուցված վանքը, տոնակատարության հետ կապված արարո-

ղությունը ըստ արժանվույն կատարելու: Կայսրը, օգտվելով առանց աղմուկի ու իրարանցման գործելու հարմար առիթից, մի զորամաս ուղարկեց (ժողովուրդը սրանց վարյագներ է կոչում), որոնք [պատրիարքին] խայտառակ ձևով աթոռից ցած առնելով և մի ջորու վրա նստեցնելով, նրա եղբորորդիների հետ մինչև Վլախերնայի քարափը ուղեկցեցին, որտեղ մի մակույկի մեջ նստեցնելով, Պրիկոնեսոսում արգելափակեցին: Կայսրը բանակցությունների մեջ մտավ, խորհրդակցեց մի քանի մետրոպոլիտների հետ, նրան պաշտոնազրկելու շուրջ, նրանց ամենախոհեմների միջոցով դիմեց [պատրիարքին], որ հրաժարական տա, քանի այդ բանը չի արել խայտառակ ձևով՝ ժողովական որոշման և նրա դեմ հրապարակված մեղադրանքների հիման վրա: Պատրիարքը տեղի չտվեց, շխոնարհվեց և նրա հրաժարականից հույսերը կտրեցին: Կայսրը անվերջ դրա շուրջն էր մտածում, երբ այդ միջոցին պատրիարքը խաղաղությամբ հողին ավանդեց: Կայսրը, ցանկանալով ապաշխարած լինել, հանգուցյալի մարմինը առոք փառոք նրա վանքում ամփոփեց՝ կատարված հրաշքի վրա ապշելով ինքն էլ, իր հետ եղած մարդիկ էլ. պատրիարքի աջը խաչի նշանն արած մնաց, այնպես, ինչպես սովորաբար երբ օրհնում է ժողովրդին՝ «խաղաղություն ամենեցուն» ասելով. մարմնի մահացմամբ այն փոփոխություն չէր կրել:

Նրա փոխարեն պատրիարք է ձեռնադրվում պրոեդրոս և պրոտովեստիարիոս Կոստանդին Լիխուդեսը<sup>647</sup> մետրոպոլիտների, հոգևորականության և համայն ժողովրդի ընտրությամբ: Նա կայսերական ու քաղաքական գործերում մեծ անուն վաստակած մարդ էր՝ Մոնոմախի օրերից սկսած մինչև այդ ժամանակները, նա մեծ փառքի արժանացավ համայն գործերը տնօրինելու հարցում ցույց տված իր մասնակցությամբ, նա հիշյալ կայսեր կողմից Մանգանայի վանքի) հոգացությունն<sup>648</sup> ու նրա իրավունքների սլահսլանությունն էր ստացել: Նա [պատրիարք] ձեռնադրվեց, թեև քահանայապետության ու պատրիարքության նրա [իրավունքը] կասկածելի էր: Բայց կայսրը, ջանալով, որ նա այդ իրավունքը ձեռք բերի, պահը նպատակահարմար համարելով, նրան երեց ձեռնադրել տվեց, քահանայապետության լիակատար իրավունքներ չտվեց, «մինչև որ, — ասաց, — քո դեմ քթի տակ ասվող ասեկոսենները վերջ գտնեն եկեղեցական ժողովով ու կանոնական հանապարհով»: Կոստանդինը շատ լավ



գիտեր, թե ինչու է կայսրը նման արգելքներ դնում իր առաջ և որպեսզի հանկարծ անհարմար դրուիթյան մեջ չընկնի, ընդառաջ է գնում կայսեր պահանջներին, որից հետո աներկբա ու առանց պատճառանքի ձեռնադրվում ընդունված կարգի համաձայն: Նա առատաձեռն էր և հոգատար ոչ միայն եկեղեցական, այլ ընդհանրապես բոլոր հարցերում, նրա հոգացուիթյունից ոչ ոք անմասն չմնաց, բոլորն արժանացան նրա շնորհատրուիթյան:

Հունգարացիները, խախտելով հռոմայեցիների հետ կնքած հաշտուիթյունը, իսկ պաժինակներն էլ՝ դուրս սողոսկելով իրենց թաքնված որջերից, ասպատակում էին իրենց հարևան երկիրը: Կայսրը արշավանքի նախապատրաստուիթյուն տեսնելով ամբողջ ուժով շարժվեց դեպի Տրիադիցա: Այնտեղ նա ընդունեց հունգարացիների դեսպաններին և ամրապնդեց ու վերահաստատեց նախկին դաշինքը, որից հետո հարձակվեց պաժինակների վրա: Նրանք ցեղերի ու տոհմերի էին բաժանված, որոնց իշխանները, հպատակվելով կայսեր, խաղաղ ու բարեկամական հարաբերուիթյուններ էին հաստատել: Նրանցից միայն Սելտեն շուգեց հաշտվել կայսեր հետ. նա ամրացավ Իստրոսի ճահճուտներում, ուր փախել էր և այնտեղի գահավեժ ժայռում, և նրանց ապավինելով, իջավ դաշտ՝ ցանկանալով կայսեր հետ կռվի բռնվել: Բայց իր սեփական անմտուիթյան հետևանքները նա շատ շուտ զգաց: Նրա դեմ դուրս եկավ կայսերական զորքի մի փոքր մասը, որի առջև Սելտեն փախուստի դիմեց, նրա ապաւտարանը գրավվեց և հիմնահատակ կործանվեց: Կայսրը նրան պարտուիթյան մատնելուց ու ոչնչացնելուց հետո վերադարձավ ու բանակեց Լովիցոսում, [լեռան] ստորոտին: Ճամբարի վրա հորդառատ անձրև տեղաց, տարաժամ ձյուն (սեպտեմբերի քսանչորսն էր, քրիստոնյաների կողմից նշվող սուրբ նախավկա Թեկլայի տոնի օրը), որը դորքին մեծ վնաս ու կորուստ պատճառեց: Գրեթե բոլոր ձիերը սատակեցին, զինվորներից շատերը սառնամանիքին ու անձրևին անպատրաստ, թեթև հագնված, կոտորվեցին: Անսպասելի կերսյով կորավ նաև պարենը՝ [հորդացած] գետի հոսանքից ու սառնամանիքից<sup>649</sup>: Երբ եղանակը մի փոքր լավացավ և ձյունը դադարեց, կայսրը դուրս եկավ, [իր զինվորներից] շատերին գետում կորցրեց, իսկ ինքը, իր մերձավորների հետ կանգնեց ծառի ստվերում: Մի փոքր անց այդ կաղնու ծառից ինչ-որ ճարճատյուն լսվեց, կայսրը մի կողմ քաշվեց, այնքան, որ ծառի երկարուիթյունից հեռու լինի, երբ ծառը արմատա-



խիլ եղավ և գետին տապալվեց: Կայսրը պապանձվեց, պատկերացնելով, թե ինչպես քիչ էր մնացել շարաշար մահվան արժանանար: Պատահածը շարագուշակ նշան էր, այն կանխագուշակում էր կայսեր գլխին շուտով գալիք փորձանքի մասին, գարդեն գործվածների հատուցումն էր ու պատիժը: Իր [փրկության համար] նա «գոհանամ» ասաց աստծուն և Վլախերնայի պալատում նախավկա Թեկլայի անվան հոյակապ տաճար կառուցեց: Առաջնորդելով զորքը, նա փութանակի շարժվեց դեպի մայրաքաղաք, քանդի սուտ լուր էր ստացել, թե արևելքում ապստամբություն են բարձրացրել: Հասնելով [քաղաք] և համոզվելով, որ դա խաբեություն է, նա իրեն տվեց որսորդության հաճույքներին ու հանգստին՝ բարձրանալով քաղաքի դիմաց գտնվող նեղուցը: Ճաշի ժամանակ այդ վայրերում (ներանք հայտնի են նեպոլիս անունով) փայլատակող լույս սփռվեց, կայսեր ուշադրությունը գրավեց ինչ-որ տեղից դուրս պրծած մի վարաղ, որին հալածելով նա ծով հասավ: Վարազը ծով մտավ ու աներևութացավ, իսկ կայսրը հանկարծ կայծակնահար լինելով, ձիուց ցած ընկավ, գետին գլորվեց փրփուրը բերանին: Խեղված ու անզգայացած նրան նավակ մտցրեցին և պալատ հասցրին: Մի քանի օր նա հիվանդության դեմ պայքարեց և հույսը կտրած, աստծուն սիրաշահելու համար ապաշխարեց՝ կամովին հրաժարվեց ապօրինի ձեռք գցած թագավորական իշխանությունից (և դա ճիշտ էր) ու վանական դարձավ, իր կամքով նախկին փառքն ու փափկակեցությունը խեղճությամբ ու ժուժկալությամբ փոխարինեց<sup>650</sup>: Ապացուցելու համար, որ ինքն իր արարքների համար անկեղծորեն, ամբողջ հոգով է ապաշխարում, նա կայսր նշանակեց ոչ թե իր եղբոր Հովհաննեսին, ոչ էլ իր եղբորորդի Թեոդորոս Դոկիանոսին, իր դստեր էլ նա շամուսնացրեց, ոչ էլ իր որևէ մի ազգականին, այլ պրոեդրոս Կոստանդինին, որի մականունը ի սկզբանե անտի Դուկաս էր՝ որպես իր գործակցի ու զինակցի, մի մարդու, որ իր կողմից գահին տիրանալու համար իրեն առատորեն դրամ մատակարարեց<sup>551</sup>: Կոմնենոսը թեև վանականի քրձեր հագավ, կարծելով, որ հիվանդությունից կաղատվի, սակայն համոզվելով, որ դրանից փրկություն չկա, դեռ հիվանդությամբ տառապյալ, մտնում է Ստուդիոնի վանքը: Այդ բանն անելու մեջ նրան շատ հորդորեց ավդուստա էկատերինեն, ասելով, որ երկրային թագավորությունից հրաժարվելով, նա կվայելի երկնայինը: Նա թագավորեց երկու



տարի և երեք ամիս, դրանից պակաս էլ նա ապրեց վանականի սքեմն հազած՝ լիակատար հնադանդություն ցուցաբերելով վանահոր: Լինելով շատ խոնարհ ու համեստ, նա համաձայնվեց անգամ դոնապան լինել և սպասավորի այլ ծառայություններ մատուցել: Պատմում են, որ նա շափից շատ հլու հնազանդ դարձավ: Ասում են, թե երբ նա ստրատոպեդարիս էր ինչ-որ երիկամների սուր հիվանդություն ունեցավ, այն աստիճան, որ անգամ ապրելու հույսը կտրեց, քանզի կատարյալ թուլացել էր ու անշարժացել: Բժիշկները բոլոր միջոցներին դիմելուց հետո համոզվեցին, որ ոչնչի չեն հասնում, այդ պատճառով նրան խորհուրդ տվեցին կնոջ հետ հարաբերություն ունենալ, բայց նա չլսեց նրանց: Երբ բժիշկներն ասացին. «Եթե դու այդ բանին չդիմես, ապա ստիպված կլինես դադվել, որի հետևանքը դառն ամուսնությունն է ու անսերությունը», նա պատասխանեց. «Ինձ բավական են Մանուիլն ու Մարիան, աստժո ինձ պարզևած երեխաները: Առանց [երեխաների] մարդ կարժանանա երկնից թագավորության, սակայն առանց ժուժկալության Տիրոջ շիտեսնի և ոչ ոք»: Բայց կայսրուհի էկատերինեն և նրա դուստր Մարիան իրենց մազերը խուզելով, միանձնուհիների կյանք էին վարում Մյուրելեոնի պալատում<sup>652</sup>:

Կայսեր վախճանվելուց հետո նրա դագաղը թաղության մբլցվեց և շատերը ենթադրեցին, թե դա [աստժո] պատժի ու պատուհասման ապացույց է՝ նրա Չարքած եղբայրասսլան պատերազմի, կոտորածի, ինչպես և գահին տիրանալուց հետո նրա գործած արարքների համար, այն է՝ սենատին իր վաղնջական պարզկներից զրկելու, աստժո տաճարներն ու սուրբ վանքերը հարստահարելու, որի մասին արդեն ասել ենք: Մտահոգված լինելով նրանց ուռճացման առաջն առնելու և ինքնաբավ դարձնելու, պետությանը սակայն տվեց բեռի շնչին թեթևացում: Ուրիշներն էլ դագաղի մեջ հոսածը սրբության գործ համարեցին, ապացույց այն բանի, որ նա իր արարքները մաքուր սրտով ու անվարան ապաշխարեց, քանզի չկա այնպիսի մեղք, որ կարողանա հաղթել աստժո մարդասիրությունը: Ես գովում եմ ու ընդունում երկու կարծիքներն էլ, որից մեկը ապագա դանցանքների ճանապարհն է փակում, իսկ մյուսը՝ դրդում վատից հրաժարվելով, դեպի լավը գնալ:

Կայսրուհի էկատերինեն, որը, դառնալով միանձնուհի, Քսենե վերանվանվեց, ամեն տարի կատարում էր կայսեր-հոգեհան-

գիստը, որի առթիվ հրավիրում էր մի քանի վանականների, ինչպես և Ստուդիոնի վանքի բոլոր ճգնավորներին: Վերջին անգամ սովորականի պես և ընդունված կարգի համաձայն նա կատարում էր կայսեր հոգեհանգիստը, բայց զգալով իր վախճանի վերահաս լինելը, կարգադրեց, որ վանականներին սահմանվածի կրկնապատիկը տրվի: Վանահոր զարմանքին և նրա խոնարհ հարցին՝ կրկնապատիկը տրվելու պատճառի մասին, [էկատերինեն] պատասխանեց. «Դա այն պատճառով է, ով գերապատիվ, որ չգիտեմ, թե մյուս տարի ես ձեզ հետ կլինե՞մ, թե ոչ, քանզի աստված մարդկանց գործերը տնօրինում է այլ կերպ, իր ցանկության համաձայն»: Այդպես էլ եղավ, էկատերինեն այդ միջոցին վախճանվեց, կարգադրելով իրեն թաղել եղբայրներին սոտ՝ Ստուդիոնի վանքի գերեզմանոցում: Երկուսն էլ՝ և՛ [էկատերինեն], և՛ կայսրը պճնազարդել էին Կարապետի ամենասուրբ տաճարը, որի մասին մանրամասն պատմելը սխրանք է հերակլյան:

Կայսրը կայուն բարքերի տեր մարդ էր, ուներ բարի հոգի, սուր միտք, գործունյա ձեռք, նա արագ կողմնորոշվող էր, ռազմական գործի մեծ գիտակ, թշնամու համար սարսափելի, իր շրջապատի մարդկանց նկատմամբ՝ բարյացակամ, նրանց խոսքին վստահող և այդ գծերը նրա համար հատուկ էին ոչ ի սկզբանե: Նա ասում էր, թե կայսրը պետք է սարսափելի լինի դրսեցիների համար, բայց իր սեփական [ժողովրդի] համար՝ մատչելի: Բռնակալ կայսրերի վերաբերյալ նա ասում էր, թե նրանք շտապում են ստրկից ազատ դառնալ: Երբ նրան մեղադրեցին, թե՛ չէ՞ որ ինքը բռնատիրեց Միքայելի վրա, նա պատասխանեց. «Ինձ համար ցանկալի չէր ստրկություն անել ստրկության ընկերոջ և շարժանանալ դրան, ինչին արժանի էի»: Ծաղրելով [իր] կնոջ, նա ասում էր, թե նախկինում աղախին էր, իսկ այժմ ինքն է նրան ազատել, իսկ ազգականների մասին ասում էր, որ նրանք ուրիշների համար փուշ են, իսկ բռնակալի համար՝ օգուտ: Նա ասում էր նաև, որ եթե կայսրուհի էկատերինեն երկրային թագավորութունը փոխարինի երկնային թագավորությամբ, ապա նրա հետ ոչ մի զարմանալի բան կատարված չի լինի:



Կ Ո Ս Տ Ա Ն Պ Ի Կ Ն X Պ Ո Ւ Կ Ա Ս

[25 դեկտեմբեր 1059—21 մայիս 1067 թթ.]

Կոմնենոսից հետո գալիսունը առանց արյունահեղության, թոհուբոհի ու իրարանցման ստացավ պրոեղրոս Կոստանդին Դուկասը: Նա հեզությամբ լի խոսքով դիմեց սենատին, քաղաքի համայն դեմոսին ու հանրության: Իշխանությունը վերցնելու օրից նա մեղմ էր ու շափավորից այն կողմ շանցավ, ամեն կերպ հավատարիմ մնաց դրան: Նա սենատորներից ու դեմոսից շատերին պատվեց, վերականգնեց Կոմնենոսի ժամանակ շնորհազրկվածներին. [Կոմնենոսը] փառավոր մարդկանց անփառունակ էր դարձրել, պատվականներին՝ պատվազուրկ: Մեծ վկա 23—IV սուրբ Գեորգի տոնին կայսրը, ընդունված կարգի համաձայն, —1060 վկային հարգանք մատուցելու համար գնաց Մանգանա: Տոնակատարությունից հետո փշացած ու նենգավոր մարդիկ կայսեր դեմ դավ նյութեցին, բայց հաջողություն չունեցան. աստված հողմացրիվ արեց նենդ ու անաստված մեքենայություններն ու հրոսակախումբը: Նրանք նպատակ ունեին ջրահեղձ անել նրան հանդերձ ընտանյոք (նա որոշել էր պալատ վերադառնալ ծովով): Երբ այդ առթիվ հարցուփորձ ու հետաքննություն կատարվեց, մեծամեծներից շատերը, այդ թվում և էպարքոսը ձերբակալվեցին որպես դավադիրներ և դատապարտվեցին՝ զրկվեցին սեփական տիրույթներից ու ողջ ունեցվածքից<sup>653</sup>:

Կայսրը ամենից շատ մտահոգված էր, ջանք ու եռանդ թափում պետական եկամուտների ավելացման ուղղությամբ, նա սիրում էր մասնավոր անձանց դատական գործերը լսել, թեև դա կայսեր ժամանակի մեծ մասն էր խլում և նա այլ գործերով քիչ էր զբաղվում: Ես նկատի ունեմ ռազմավարությունն ու զինվորական սխրանքները: Այդ էր պատճառը, որ հոռմեական պետությունը սասանվում էր ու ցնցվում զրպարտչական բանսարկություններից, սոփեստություններից, դատավարությունների առատությունից, սեկրետական<sup>654</sup> խառնաշփոթ հարցերից, այն աստիճան, որ զինվորականներն անգամ զենքերն ու զինծառայությունը մի կողմ թողած, փաստաբաններ դարձան և իրավաբանական հարցերի ու խնդիրների սիրահարներ, մնաս բարով ասելով պատերազմական շեփորի ձայնին, ռազմապարին ու շուրջպարին: Լինելով ամենաբարևպաշտ մարդը, վանականներ-



րին սիրող, աղքատասեր, ժուժկալ, նա այլ հարցերում անկարող էր ու թուլակամ, անշափ ժլատ, բայց միջոցներ հավաքելու ընդունակ և պետական դրամները բազմապատկող: Նա դատավարությունն իր բռի մեջ էր առել և հաճախ, նայած դատվողին, փոխում էր ընդունված վճիռները. նա դինատների<sup>655</sup> նկատմամբ դաժան ու անտանելի դարձավ:

Ահա անվերջ նման դործերով զբաղված լինելով և անուշադրության ու անգոսնության մատնելով ռազմական գործերը, հոռմեական կայսրության արևելյան, հատկապես սահմանամերձ շրջանները տակնուվրա էին լինում ու թալանվում թշնամիների կողմից, թուրքերի հարձակումների ու գերակշռության, աչքաթող, սարսավահար եղած զինվորների [թշնամու] ճնշման տակ նահանջելու հետևանքով ամեն ինչ ավարի ու ավերման էր ենթարկվում: Արշավանքներն անդադրում էին, ավարառությունները՝ հաճախակի, հանդիպածը ոչնչացվում էր: Այդ պատճառով էր, որ Իբերիայի հարուստ երկիրը<sup>656</sup>, որն արդեն դրանից առաջ էլ ավերվել էր ու թուլացել, աստիճանաբար հյուժվեց ու կործանման ճամփան բռնեց, ամբողջությամբ ավերակ դարձավ ու ոչնչացավ: Նույն բախտին արժանացան նաև մերձակա շրջանները՝ Միջագետքն ու հաղտիքը, նաև Մելիտենեն ու Կոլոնիան, Եփրատ գետին մոտիկ գտնվողները, ապա նաև Արմենիակոնն ու Վասսուրականը<sup>657</sup>: Եվ եթե շատ անգամ զորքերով, երբեմն էլ սոսկ ուժերի [գալստյան] մասին լուրերով բարբարոսները չկանգնեցվեին, նրանց առաջնորդներից Խորոսալարն<sup>658</sup> ու Սամուխը բախտի բերմամբ պարտության շմատնը վեին, ապա հակառակորդը մինչև Գալատիան, Հոնորիանն ու հենց Փոյուզիան ոտքի տակ կառներ: Նրանց դեմ ուղարկված զորքը թեթև էր զինված կամ անզեն էր ու անվարժ, իսկ լավագույններին էլ շարունակ վտարում էին՝ բարձր ոռճիկներ ու բարձր աստիճաններ պահանջելու պատճառով: Դա դատապարտելի քայլ էր, քանզի դրա հետևանքով ոչ մի քաջարի ու խոսքի արժանի բան չէր արվում: Դա պատճառ էր դառնում մի կողմից հոռմայեցիների խեղճանալուն ու երկշոտ լինելուն, իսկ մյուս կողմից՝ բարբարոսների փքման ու ամբարտավանացման և ավելի վստահ կռվի նետվելուն: Ահա այն ժամանակներն էր, որ Անի է ուղարկվում Բագարատ անունով ոմն հայազգի դուքս<sup>659</sup>, որ խոստացել էր տեղի զորքերը եղածով ապահովել: Երբ սուլթանը [Անիի] մոտով էր անցնում և դեռ չէր նախաձեռնել հոռ-



մեական երկիրն ասպատակելուն, Բագարատի մարդկանցից ոմանք դուրս դալով, սուլթանի բանակի վերջապահ զինվորներին մեծ վնաս հասցրին ու կոտորած սարքեցին: Սուլթանը դրավրա զայրացած, առաջխաղացումը կանգնեցրեց, վերադարձավ Անի և մի քանի օրվա ընթացքում Անին էլ, նրա ողջ շրջակայքն 16—VIII էլ նվաճեց<sup>660</sup>, կայազոր հաստատեց այդ շրջանների վրա, հմուտ —1064 զորավարների նշանակեց և [Անիից] ու նրա շրջակա երկրի վրայից վերացրեց հռոմեական տիրապետությունը: Իրերի դուրսը լուծն ահա այդպիսին էր, հռոմայեցիների երկիրն Ասիայում և ողջ արևելքում այսպես հռչոտվում էր:

1065 Իսկ արևմուտքում, ինդիկտիոնի երրորդ տարին Մերծիստորոսյան քաղաքների կառավարիչներ մագիստրոս Վասիլ Ապոկապի<sup>661</sup> և մագիստրոս Նիկեփոր Բոտանիատեսի օրոք, ուղերի ազդր (սրանք էլ սկյութական ցեղ են, պաժինակներից ավելի քաղաքակիրթ ու բազմամարդ) տնով տեղով, սեփական ինչքով, երկար գերանների, միակտուր նավակների ու տների վրա, անցան Իստրոսը<sup>662</sup> և անակնկալ կերպով հարձակվեցին իրենց անցումը խոչընդոտելու համար նշանակված զինվորների՝ բուղարների, հռոմայեցիների և նրանց հետ եղող մյուսների վրա, գերի վերցրին ու տարան նրանց առաջնորդներ Վասիլ Ապոկապին<sup>663</sup> և Նիկեփոր Բոտանիատեսին, ողողեցին Իստրոսի շուրջ ընկած ողջ տարածությունը: Իրազեկ մարդկանց ասելով, բարբարոսները վաթսուն բյուր կովող մարդիկ էին ու մարտիկներ: Մի մեծ զորամաս անջատվելով նրանցից, խորացավ մինչև Թեսաղոնիկե ու հենց Հելլադա, ինչ որ ճանապարհին հանդիպեց թալանեց ու ոչնչացրեց, անհաշիվ ավար ձեռք բերեց: Իրենց ցեղակիցների մոտ վերադառնալիս, վրա հասավ սաստիկ ձմեռը և նրանք ոչ միայն թալանածը կորցրեցին, այլ գրեթե ողջ սեփականը և սարսափելի վիճակում վերադարձան բանակատեղի: Կայսրը, լսելով [թշնամու] բազմաթվության մասին, վրդովվեց ու անհանգստացավ, բայց զլացավ զորք հավաքել և նրանց դեմ մարտունակ ուժեր ուղարկել: Ոմանք այդ բացատրում են դրանով, որ նա չէր ուզում միջոցներ ծախսել (ինչպես ասացինք, նա դրամասեր էր և ամեն ինչից բարձր փողն էր դասում), բայց ուրիշներն էլ գտնում են, որ նա չհամարձակվեց ընդդիմակայել այդպիսի հզորության, քանզի բոլորը համոզված էին, որ հակառակորդի այդ բազմությունը անհաղթահարելի է, որ փրկություն չկա և շատերը մտածում էին գաղթելու մասին: Կայսրը նրանց

ցեղապետների մոտ դեսպանութուն ուղարկեց, փորձեց մի կերպ հեռացնել նրանց ու զսպել, բազմաթիվ նվերներ ու ընծաներ ուղարկելով, [ցեղապետներից] ոմանց նա բազում նվերներով պատվեց: Հիշյալ ցեղը անշափ բազմամարդ լինելով, օրեցօր պարենի պակաս էր զգում, դրա համար Բուղարիայի բազմաթիվ շրջանները, ապա նաև Թրակիան ու Մակեդոնիտն էր ճնշում: Կայսրը, չկարողանալով տանել իր հասցեին ասվող խոսքերը (բոլորը բացահայտ կերպով նրան ծանակում էին ու մեղադրում ժլատության ու կծծիության մեջ), մայրաքաղաքից դուրս է դալիս և բանակում Խիրովակքի կոչվող վայրում, իր հետ տանելով հարյուր հիսունից ոչ ավելի զինվորներ: Այդ քայլով նա շատերին զարմացրեց, թե ինչպես նա համարձակվեց այդքան [քիչ] մարդուկներով նման բազմության դեմ դուրս դալ: Երբ նա այդպիսի պատրաստության մեջ էր, և մտածում էր զորք հավաքել, շտապ կարգով կայսեր մոտ մարդիկ եկան և զեկուցեցին իշխանների փրկության<sup>664</sup> և [ուղերի] ողջ ազգի կորստյան մասին, ասացին, որ նրանց առաջնորդները նավ նստելով անցան Իստրոսը, իսկ մնացած բազմությունը սովից, մահ տարածամից, մոտակայքում գտնվող բուղարների ու պաժինակների հարվածներից զխուժին կոտորվեց: Ամեն ինչ աստվածն արեց. պատմում են, որ կայսրը, ամեն ինչից հույսը կտրած, կարգադրելով զինվորներին ծոմ պահել, ինքն էլ նույնն անելով, եկեղեցական թափոթ կազմակերպեց, որին ինքն էլ մասնակցեց և բոլորի հետ ոտքով գնաց, արտասովից աչքերով ու սրտաբեկ, հենց այն օրը, երբ Յուրուլոսում բանակած ուղերի վրա սլացող օղագնաց բազում զորքեր երևացին, նրանց վրա նետերի տարափ արձակելով, այն աստիճան, որ նրանցից և ոչ ոք անխոցելի չմնաց: Կայսրը աստծուն և Աստվածածնին գոհանամ ասելով, շարժվեց ուղիղ դեպի մայրաքաղաք, որի բնակիչներին գտավ ապշած, փրկության համար աստծուն գոհութուն հայտնելիս: Բոլորն անխտիր տեղի ունեցածը աստվածուստ կատարված էին համարում, ամեն ինչ վերագրում կայսեր բարեպաշտության<sup>665</sup>: Աստված արձագանքեց նրա առաքինության, աստվածավախության ու աստվածապաշտության:

Նման կոտորածից հետո նրանցից ոմանք եկան կայսեր մոտ և Մակեդոնիայում պետական հողեր ստանալով, հոռմայեցիներին հնազանդվեցին, այսուհետև նրանց դաշնակիցներն ու հպատակները դարձան, արժանացան սենատորական վեհ աստիճան-



1065

ների: Դա տեղի ունեցավ Դուկասի թագավորության վեցերորդ տարին, ինդիկտիոնի երրորդ տարին, աշխարհի արարչագործության 6573 թվականին:

Նախորդ՝ ինդիկտիոնի երկրորդ տարվա սեպտեմբեր ամսի քսաներեքին, գիշերվա երկրորդ պահին, նախընթացը շունեցող սաստիկ երկրաշարժ եղավ. նա սկիզբ առավ արևմտյան շրջաններում: Նա այնքան ուժեղ էր, որ բազում տներ, տաճարներ ու սյուններ տապալեց: Նման փորձության հանդիպեցին նաև Ռեգեստոսը, Պանիոնն ու Մյուրիոֆիտոնը, հիմնահատակ տապալվեցին պարիսպների առանձին մասեր, բազում տներ, շատ շատերը ղոհվեցին: [Տուժեց] նաև Կյուզիկոսը, որտեղ սասանվեց, բազում տեղերից փուլ եկավ հեթանոսական տաճարը, որի ամրակուռությունը, շինարարության համար օգտագործված լավագույն ու հսկայական մեծության քարը, համաշափությունը, կառուցողական արվեստը, բարձրությունն ու շփերը տեսնելու բան էր: Դրանից հետո երկու տարվա ընթացքում այստեղ այնտեղ ցնցումներ էին լինում, որոնց նմանը չէին հիշում զառամյալներն անգամ: Նույն բախտին արժանացավ նաև Նիկիան, որտեղ սաստիկ սասանվեց սուրբ Սոֆիայի անվան տաճարը, այսպես կոչված սուրբ Հարանց սրբարանը, փլվեցին պարիսպներն ու քաղաքի տները, որից հետո վերջապես ցնցումները դադարեցին: Այդ բոլորը հատուցումն է մեր մեղքերի, արտահայտությունը՝ աստվածային ցասման, [ուղերի] հիշյալ ազգի ներխուժման ու ավերման սասին ակնարկություն: Աստվածային նշանները ոչ միայն ներկան են կանխատեսում ու կանխանշում, այլև ապագան:

Ինդիկտիոնի 4-րդ տարվա մայիս ամսին գիսավոր աստղ երևաց<sup>666</sup>, որ մայր էր մտնում արեգակի ետևից: Նա լիալուսնի չափ էր: Թվում էր, թե նա սկզբում ծուխ ու մշուշ է արձակում, իսկ հաջորդ օրը սկսեց ցույց տալ մի քանի խոպոպներ, որոնք ինչքան ձգվում էին, աստղի մեծությունը փոքրանում էր: Նրա ճառագայթները ձգվեցին մինչև արևելք և դեպի այն կողմ էր շարժվում: Նա քառասուն օր երևաց:

Կոստանդին պատրիարքի մահից հետո ձեռնադրվում է վանական Հովհաննեսը, մականունը Քսիֆիլինոս<sup>667</sup>: Ծագումով նա Տրապիզոնից էր, իմաստուն, ծայր աստիճան զարգացած, քաղաքական հարցերում անուն հանած, առաքինության մասին խո-

հեմորեն հոգացող մի մարգ. հենց լավ օրի հասնելու, տարիքի ծաղկուն ժամանակ նա վանական դարձավ և երկարատև ճգնավորական կյանք վարեց Օլիմպոս<sup>668</sup> լեռան մոտ: Դրա համար էլ ահա նրանից բացի ոչ ոք արժանի չհամարվեց պատրիարքի բարձր աստիճանին, թեև նա հրաժարվում էր ու փախչում այգ պատվից: Բուլղարիայի արքեպիսկոպոս Թեոդոլոսն էլ ննջեց և նրա փոխարեն կայսրը նշանակեց ոմն վանական Հովհաննեսի, ծագումով Լամպեից, որ Քսիֆիլիենոսի ճգնակիցն էր ու սիմպոնոսը<sup>669</sup>:

Հոկտեմբեր ամսին կայսեր վրա եկած հիվանդությունը նրան շատ էր տանջում մինչև մայիս ամիսը, հյուծեց նրան և այս  
 21—V աշխարհից տարավ: Նրա աճյունը թաղեցին ոչ իր ցանկացած  
 —1067 տեղում, ծովով այն տարան ու ամփոփեցին սուրբ Նիկողայոսի վանքում, որ Մուլիբոտոս է կոչվում: Նա թագավորեց յոթ տարի և վեց ամիս: Նա Եվդոկիա թագուհուց, որի հետ ամուսնացել էր դեռ գահին շտիրած, ուներ երեք որդի՝ Միքայել, Անդրոնիկոս, Կոստանդիոս (սրանցից ծիրանածին էր<sup>670</sup> Կոստանդիոսը, բոլորին էլ նա կայսր էր հռչակել) և երեք դուստր՝ Աննա, Թեոդորա և Զոե: Նա իր եղբոր, Հովհաննեսին, կեսար էր նշանակել, գաղտնի գործերի և ծրագրերի գործակից: Մահվան անկողնում նա բոլորից գրավոր փաստաթուղթ սպահանջեց, թե իր զավակներից բացի ոչ ոքի կայսր չեն ճանաչելու: Բոլորն էլ ստորագրեցին, այդ թվում և կայսրուհի Եվդոկիան, թե երկրորդ անգամ չի ամուսնանա<sup>671</sup>: Կազմելով այդ [փաստաթուղթը] պատրիարքին ի պահ տվեցին: Նա ամեն ինչ կտակեց կնոջ՝ կայսրուհուն, քանզի ամուսինը նրան շատ խոհեմ էր համարում, երեխաների լավ դաստիարակ, պետության գործերի կառավարման համար անչափ կարող: Կայսրը վախճանվեց վաթսուն տարեկանից մի փոքր ավելի հասակում: Նա սովորություն ուներ իրեն նենգողների մասին ասել, թե նրանց պատվից ու ունեցվածքից թեև չի զրկի, բայց անազատ արծաթագին [ստրուկների] կվերածի: «Ես չեմ զրկել նրանց ազատությունից, ասում էր նա, այլ օրենքներն են նրանց իրավագուրկ դարձրել»: Լինելով սրամիտ, նա ասում էր. «Սրանք ինձ ավելի օգուտ տվեցին, քան թագավորությունը»: Նա քաջ մարդ էր, և երբ մեկը նրան ասաց, թե մարտում ինքը սիրով սեփական մարմնով կպաշտպանի կայսեր, նա պատասխանեց. «Հաճոյախոսիր, թեև երբ ես ընկնեմ, մի հար-



ված էլ դու կիջեցնես»։ Իսկ մեկին, որ շատ էր պրպտում օրենքները, նպատակ ունենալով անիրավություն գործել, ասաց. «Մեր տունը քանդողը հենց օրենքներն են»։

## Ե Վ Գ Ի Կ Ի Ա Գ Ի Ի Կ Ե Ն Ա

[21 մայիս 1067—31 դեկտեմբեր 1067 թթ.]

Կայսրության գալիստնն անցավ նրա կնոջ ու երեխաների ձեռքը։ Արևելքն ասպատակող թուրքերը դարձյալ աչքերը հանեցին Միջագետքի շուրջ գտնվողների վրա, հատկապես Մելիտենեի շուրջ բանակած հռոմեական զորքերի, որոնք ոռճիկ ստացած շլինելով, ընդունված կարգի համաձայն իրենց ստանալիք կերակուրից ղրկված, վատ ու խղճուկ դրության մեջ էին, գազազած՝ թշվառության համար, այլև այն բանի, որ տեղացի զինվորները<sup>672</sup> չէին ուզում իրենց միանալ և միասին անցնել Եփրատ գետը։ Երբ վրա եկան թուրքերը, մելիտենացիք միայնակ ընդդիմակայեցին, նրանք նետարձակ բարբարոսների կողմից հեշտությամբ ջարդ կերան ու խոցվեցին, իսկ [թուրքերն] անվնաս մնացին։ [Մելիտենացիք] ստիպված փախուստի դիմեցին դեպի գետը, ակամայից կովի բռնվեցին և ճնշման տակ թիկունք դարձրին։ Պարտություն կրելով, նրանցից շատերը սպանվեցին, ոմանք բարբարոսների ձեռքը գերի ընկան, իսկ մնացածները ապաստանեցին Մելիտենե քաղաքում։ Բարբարոսները արհամարհելով այդ ջարդվածներին ու անզորացածներին, արշավում են մինչև Կեսարիա, ամեն ինչ ավերելով ու հրկիզելով։ Նրանք խուժեցին Բարսեղ Մեծի հռչակվոր տաճարը, ամեն ինչ ջարդ ու փշուր արեցին, հափշտակեցին սուրբ սպասքը, հարձակվեցին նրա սուրբ գերեզմանի վրա, բայց նրա աճյունին չկարողացան որևէ վնաս հասցնել, քանզի գերեզմանը շատ ապահով էր կառուցված, նրա շուրջը շինված էին ամուր կառույցներ, որոնք քանդելու համար շատ ժամանակ էր պետք։ Ոսկով, մարգարիտներով և թանկագին քարերով ազուցված պատուհանները, սակայն, տեղից հանեցին և բոլոր զարդերը մի տեղ հավաքելով, թողեցին գնացին, կեսարացիներից շատերին սրի քաշելով ու տաճարը [նրանց արյամբ] ներկելով։ Այնտեղից ետ գնալով, անցան Կիլիկիա տանող կիրճերով։ Նրանց արշավաձի մասին ոչ ոք չգիտեր և հայտնվելով՝ կիլիկեցիներին սարսա-

փահար արեցին՝ հանդիպածին կոտորելով: Նրանք որոշ ժամանակ այդ երկրում մնացին, թալանեցին այն, լիացան ռազմավարով, ավարով ու գերեվարութեամբ, որից հետո հռոմայեցիների նկատմամբ թշնամաբար տրամադրված Ամերտիկի<sup>673</sup> կոչվող մի դասալիքի առաջնորդութեամբ շարժվեցին Հալեպ: Ամերտիկին հռոմայեցիների կողմն էր անցել Միքայել Մերունու ժամանակ ու արժանացել սիրալիր ընդունելութեան, բազում նվերների ու պատիվների: Հետագայում, սակայն, մեղադրվելով Կոստանդին Դուկաս կայսեր դաշունահարելու մտադրության մեջ, ցմահ աքսորի դատապարտվեց, բայց դարձյալ ետ կանչվելով, թուրքերի դեմ ուղարկվեց: Ինչ անհրաժեշտ էր շտանալով, նա միացավ թուրքերին ու սկսեց վնասներ պատճառել երկրին: Թուրքերն ու հալեպցիք միանալով և դաշինք կնքելով, սկսեցին ամայացնել Ասորիքի Անտիոքն ու նրա շրջակայքը՝ սրի քաշելով, հրկիզելով, ստրկացնելով, ասպատակ սփռելով, գերեվարելով, ամեն տեսակի վատութիւն գործելով: Նրանց դեմ [քաղաքի] դուքս Նիկեփոր Բոտանիատեսի գլխավորութեամբ խոսքի արժանի զորք հավաքվեց, բայց ժլատութիւնն ու կծծութիւնը դարձյալ ամեն ինչ անգործութեան մատնեցին: [Զինվորների] ռոճիկը լրիվ չէր տրված<sup>674</sup>, այլ փոքր մասը միայն, և դա գցեց նրանց տրամադրութիւնը: Առնելով ինչ տվեցին, նրանք ցրվեցին իրենց տները և բարբարոսները դարձյալ սկսեցին ավերել երկիրը, աներկյուղ ասպատակ սփռել: Փոքրաթիվ պատանիներ, փախչելով իրենց դպրոցներից, հավաքեցին շնչին միջոցներ, որոնք հանձնեցին Անտիոքի դքսին: Նրանք պատանեկան անխոհեմ հանդգնութիւնից դրդված, ցանկանում էին ինչ-որ բան անել, բայց շունենալով պատերազմի փորձ, ձիեր, զենք ու զրահ, օրվա հացի կարոտ, մեծ փորձութիւնների հանդիպեցին և անփառունակ իրենց տեղերը վերադարձան. դուքս Բոտանիատեսը իր թիկնապահներով և ինչ-որ օտարերկրացի զինվորներով կարողացան նրանց մի քիչ վախեցնել: Նրբ [Բոտանիատեսը] պաշտոնանկ եղավ, բարբարոսներն էլ ավելի լկտիացան, նամանավանդ որ քաղաքները տառապում էին պարենի ու անհրաժեշտ այլ միջոցների պակասից:

Պետութեան գործերը դժվարին կացութեան մեջ էին, քանի որ չկար կայսր, որը կարողանար որոշ շահով վիճակը բարելավել ու կարգավորել՝ նման վատ ժամանակներում, ամենից նպատակահարմար համարվեց Բոտանիատեսը և շատ ուրիշներ,



բայց հաղթեց աստծո կամքը. կայսր է դառնում վեստարխ Ռոմանոսը, Կոստանդին Դիոգենեսի որդին: Այժմ ես կպատմեմ նրա գահ բարձրանալու մանրամասնությունները: Դիոգենեսը Սարդիկայի դուքսն էր և լինելով պատրիկ, Կոստանդին Դուկաս կայսրից խնդրեց վեստարխի պատվաստիճան: Կայսրը մերժեց նրա խնդիրքը և ձեռնունայն ճամփու դրեց, ասելով. «Գործ արա, հետո վարձ պահանջիր»: Դիոգենեսը գնաց Սարդիկա և հանդիպելով արշավանքի դուրս եկած և երկիրն ավարառող պաժինակների, նրանց գլխովին պարտության մատնեց, բազում դերինների և սպանվածների գլուխներ կայսեր ուղարկեց, որով արժանացավ վեստարխի աստիճանին: Կայսրը այդ առթիվ նրան նամակ դրեց, թե «Դա իմ նվերը չէ, ով Դիոգենես, այլ քո անձնական առաքինության ու սխրանքի արդյունքը»: Մնալով [Սարդիկայում, նա որոշեց կայսեր դեմ ապստամբություն բարձրացնել, բայց այդ մտքից ետ կանգնեց, քանզի վախենում էր, թե ծրագրածը կբացահայտվի: Սակայն երբ կայսրը վախճանվեց և գահը մնաց թափուր, [Դիոգենեսն] իր նպատակը դրսևորեց իրեն շատ հավատարիմ մի մարդու և նրա միջոցով ծրագրերին հաղորդակից դարձրեց հարևան այլազգիներին, որոնք դեռ այն ժամանակներից, երբ ինքն այդ շրջանների կառավարիչն էր և իր արիության մասին քաջատեղյակ, իր հանդեպ լավ էին տրամադրված: Մի հայ սակայն հայտնում է այդ մասին [կայսրուհուն] և [Դիոգենեսը] ձերբակալվելով, բերվում է կայսրուհու մոտ: Քննությամբ նրա հանցանքը հաստատվեց և նա որպես դավադիր մահվան դատապարտվեց ու քաղաքից արտաքսվեց, տխրությամբ լցնելով բոլոր նրանց, ովքեր փորձով համոզվում էին նրա քաջությանն ու արիությանը: Իսկ նրանք, ովքեր անտեղյակ էին, իմացողներից էին այդ մասին տեղեկանում և նրա կողմնակից դառնում: Ուստի և բոլորը մաղթում էին, որ նա պատժի չարժանանա և նրան շնորհվի հոռմայեցիների իշխանությունը: Քանի որ նրանց մղողը եսասիրությունը չէր, այլ աստված, որ ցավում էր քիրստոնյանների մեծամասնության տառապանքների, հագարացիների<sup>675</sup> կողմից [նրանց] շարունակ ու շարաշար կոտորվելու առթիվ, այդ մաղթանքն իրականացավ: Երբ նա դարձյալ կանգնեց կայսերական ատյանի առջև, ավդուստա Եվդոկիան այդ մարդու նկատմամբ ողորմածությամբ լցվեց, քանզի նա ի վերա ամենայնի փառավոր էր, բարձրահասակ ու թիկնեղ, շատ գեղաշյա, ո՛չ սպիտակ, ո՛չ էլ թուխ դեմ-

քով, այլ կարծես այդ երկու դուշները հավասար շահով իրար խառնված: Նա կոչ էր անում ներող լինել փորձության համար: Ներկա գտնվող սենատորները կարեկցեցին նրան, և իսկույն հաջորդեց ներումը: Այսպիսով վտանգից խույս տալով, նա անակնկալ ու անսպասելի կերպով թագավորական պատիվների արժանացավ: Նա ազատ արձակվեց և բոլորի կողմից ողջունվեց: Գնալով Կապադովկիա, որտեղ որ ծնվել էր, նա վերստին կանչվեց և մուռք գործելով մայրաքաղաք, փրկիչ Քրիստոսի ծննդյան տոնին ստանում է մագիստրոսի պատվաստիճանն ու ստրատելատ նշանակվում թագուհու կողմից, որն իր զավակների հետ թագավորական հանդիսավորությամբ մեծագույն և հրուշակավոր սուրբ Սոֆիայի տաճարն էր եկել:

Կայսրուհին, վախենալով սենատից, պատրիարքից և նրանցից, ովքեր ստորագրել էին փաստաթուղթն ու երդումներով հաստատել, չէր համարձակվում ամուսնանալ երևելի մարդկանցից մեկի հետ և նրան կայսր հռչակել, դրա համար գտավ, որ անհրաժեշտ է կնոջ նման շղատել, պետք է խորամանկության դիմել և նենգությամբ ու խարդախությամբ պատրիարքին սիրաշահել, այդ ձևով և՛ իր ցանկությունը կատարել, և՛ այլազգիների թափը որոշ շահով սանձել: Նա այդ մասին տեղյակ պահեց պալատի՝ կանանց բաժնի՝ այդ գործի համար հարմար մի աշխատողի, որը խոստացավ ամեն կերպ օժանդակել նրան, նման գործերի մեջ, ինչպես ասում են, շանորդի լինելով<sup>676</sup>: Պատրիարքը մի եղբայր ուներ, անունը Վարդապ<sup>677</sup>, շատ բարոյազուրկ, խելքը միտքը հաճույքների տված, կատարյալ ապաշնորհ մի մարդ: Ներքինին գալիս է պատրիարքի մոտ, ծածուկ տեղեկացնում հարցի մասին, ասում, որ եթե նա ցանկանա, ավելի ճիշտ համաձայնվի գործին ընթացք տալ, ապա ոչ մի վտանգ չի գա այդ սարսափելի փաստաթղթից. [պատրիարքի] եղբայրը պետք է ամուսնանա կայսրուհու հետ և իսկույն կայսր հռչակվի: Երբ նրան հաջողվեց պատրիարքին կատարելապես հիմարացնել, այնպես անել, որ նա այլ բանի մասին չմտածի, այլ միայն ամուսնության արագացման, որոշում է ձեռք գցել նաև սենատի համաձայնությունը: Պատրիարքը առանձին-առանձին իր մոտ է հրավիրում սենատորներին, իբրև թե գործի անհրաժեշտությունը ընդգծում, ծանակում փաստաթուղթը որպես ապօրինի ու անօրինական, մեկ այրի խանդի հիման վրա, ի անտեսումն հասարակաց օգուտի կազմված, որ այդ օգուտը



կլինի, եթե կայսրուհին ամուսնանա քաջարի ու խիզախ մեկի հետ, որով իսկույն դարձյալ կփթթեն հոռմայեցիների գործերը, որոնք արդեն թառամելու և հանգելու վրա են: Երբ ստացավ բուլորի համաձայնությունը՝ մի մասին քաղցր խոսքով ու շողոքորթությամբ, մյուս մասին՝ կաշառքով ու առատ խոստումներով, և այլևս լինելիքի շուրջ որևէ վախ չկար, գիշեր ժամանակ զենքերը

1—1— 1068 հուսիսիս և իսկույն կայսր հուշակվում՝ 6576 թվականի հունվար ամսի մեկին, ինդիկտինի վեցերորդ տարին, շրջանցելով կայսրուհու բուլոր որդիներին: Իսկույն մեծ խռովություն են բարձրացնում վարչագնները, որոնք շեն ուզում ընդունված կարգին հակառակ նրան կայսր հուշակել: Բայց երբ հանդես եկավ կայսրուհու որդի Միքայելն իր եղբայրներով և ասաց, որ իրենց գիտությունը է փաստը կատարվել, նրանք տեղի տալով բարձրաձայն ու մեծագոչ նրան կայսր հուշակեցին: Դրանից պարզ դարձավ, որ իզուր են շատերը նրա հետ հույսեր կապել: Կայսրուհին իր որդիներով իշխեց յոթ ամսից մի քիչ ավելի:

## Ռ Ո Մ Ա Ն Ո Ս IV Գ Ի Ո Գ Ե Ն Ե Ս

[1 հունվար 1068—19 օգոստոս 1071 թթ.]

Ռոմանոս Դիոգենեսն ահա այդ ձևով գայիտոնին տիրանալով, առօրյա հարցերից ոչ պակաս մեծ հոգ տարավ նաև զինվորական գործերը կարգի բերելու և ոտքի կանգնեցնելու մասին, հակառակ որ իր գործակիցները, որոնց ավելի ճիշտ կլիներ հակառակորդներ անվանել, կնոջ որդիներն էին, ինչպես և նախկին կայսեր եղբայր կեսար Հովհաննեսը: Սրանք առաջին օրից մինչև վերջը իր համար խոչընդոտներ էին, հոռմեական պետության գործերը վատթարացրին և հասցրին այսօրվա վիճակին: Նա սկսեց աջակցել երևելի [զինվորականներին], շփվել խոհեմ ու փորձառու զինվորների հետ, ուշադրություն դարձնել պատերազմական գործերին, դեսպաններ պատրաստել և ամեն կողմից փակել հակառակորդների ճանապարհը: Այդ էր պատճառը, որ երկու ամիս անց նա գնաց արևելքի Պրոպոնտիս. վրիժառության զգացումը հաղթեց մայրաքաղաքի փափկակեցությունն ու վայելքը: Բոլորն ապշել էին պետությունը դժվարին վիճակից դուրս

բերելու համար նրա արագ պատրաստություն տեսնելու և ամեն ինչ կարգի բերելու ջանքերի վրա:

Անտիոքն ու Կիլիկիան վերոհիշյալ ասպատակությունների ժամանակ թուլացել և սարսափելի վտանգի առաջ էին կանգնել, իսկ հյուսիսում սուլթանը<sup>678</sup> համայն զորքով՝ հզոր ու ծանր ուժերով աշնան ժամանակ եկավ հոռմեական սահմանները, մտադիր լինելով ձմեռել այնտեղ և գարնան -կղբին շարունակ հարձակվել և գլխովին տապալել ու վերացնել հոռմայեցիների [պետությունը]: Կայսրը հոռմայեցիների կայսեր համար ոչ ավանդական, այլ տվյալ իրավիճակում ինչպես որ հնարավոր էր՝ մակեդոնացիներից, բուլղարներից, կապադովկացիներից, ուղերից, պատահած այլազգիներից, ապա նաև ֆրանկներից ու վարյագներից հավաքագրված զորքերով փութանակի ճանապարհ ընկավ<sup>679</sup>, Կայսերական հրամանով բոլորն էլ հավաքվեցին Փոյուզիայում, այսինքն Անատոլիկոն բանակաթեմում<sup>680</sup>: Այստեղ կարելի էր տեսնել մի ապշեցուցիչ բան. հոռմայեցիների՝ ողջ արևելքն ու արևմուտքը հպատակեցնող հռչակավոր մարտիկները շատ փոքրաթիվ էին, այն էլ թշվառությունից ու տառապանքներից գլխիկոր, անզրահ, սուրբ գրքի ասածի պես նըրանք թրերի և այլ զենքերի տեղ, պատերազմի ժամանակ կրում էին խոփեր ու մանգաղներ<sup>681</sup>, շունեին պատերազմական ձիեր և և այլ անհրաժեշտ հանդերձանք: Դրա պատճառն այն էր, որ վաղուց է ինչ կայսրը պատերազմի չէր գնացել, նրանք որպես ոչ պետքական ու ոչ զինապարտ ռոճիկ էլ չէին ստանում, ինչպես և սովորական ուտեստը: Նրանք անարի էին ու վախկոտ, ոչ մի սխրանքի ընդունակ, այդ բանի լուռ վկան անգամ նրանց կեղտոտ, կարծես ծխից մրոտված դրոշներն էին, որոնց հետևում էին փոքրաթիվ ու խղճուկ զինվորներ: Այդ բանին ականատես եղողները շատ էին ընկճվում, տեսնում, թե ինչպիսի վեհությունից ինչ օրի են ընկել հոռմեական զորքերը, մտածում, թե ինչ ձևով, ինչքան դրամով և ինչքան ժամանակվա ընթացքում հնարավոր կլինի վերականգնել վաղեմին, չէ՞ որ ավելի տարեցներն ու պատերազմի փորձն ունեցողները անձի էին ու անզեն, իսկ երիտասարդ զինվորները՝ պատերազմի փորձից զուրկ ու մարտերում չկոփված, և այդ բոլորն այն ժամանակ, երբ հակադիր կողմում կանգնած են վտանգներն արհամարհող, պատերազմներում համառ, փորձառու ու կարող [զորքեր]: Կայսրը թեև ամեն ինչի կարիքն էր զգում, հասարակաց օգուտի համար չուզեց



հանգիստ մնալ, վճռեց, որ անհրաժեշտ է եղածով թշնամու գեմ մարտի դուրս գալ և նրա թափը մասամբ սանձել ու ղսպել: Հակառակորդները անտեղյակ լինելով կայսրին ճնշող ու տրտմեցնող ներքին դրուժյան մասին, նրա թափն ու արշավանքի դուրս գալը շատ զարմացրեց, նրանք, ինչպես հետո իմացանք, կարծեցին, որ այդ մարդը վտանգներից ամենևին չի վախենում, և լինելով Արեսի<sup>682</sup> աշակերտը, պետք է բարելավի ու երիտասարդացնի հռոմեական կայսրության վիճակը, փոխհատուցի թշնամիներին իրենց կատարածների համար: Այդ պատճառով է, որ սուլթանը նահանջեց՝ մի մեծ զորամաս առանձնացնելով և այն երկու մասի բաժանելով, մեկն ուղարկեց դեպի վերին՝ հարավային Ասիա, իսկ մյուսին հրամայեց լինել հյուսիսային [Ասիայում]: Կայսրը, ինչպես որ կար, իր զինվորներին արագ շարժման մեջ դրեց, նրանց ոգևորեց աստիճաններ ու նվերներ բաշխելով, յուրաքանչյուր տազմայի վրա փութով կարող լոխագոսներ ու տաքսիարիսներ նշանակեց, և կարճ ժամանակամիջոցում ուժեղ բանակ ստեղծեց, որի գլուխն անցնելով, ավելի եռանդագին շարժվեց պարսիկների դեմ: Ծրբ պարսիկների հյուսիսային բանակը (որ նախապես ասպատակ էր սփռել) ձևացրեց, թե նահանջում է՝ կայսեր առաջխաղացման պատճառով, Դիոգենեսը որոշեց հարձակվել հարավայինների՝ Կյուլե Ասորիքը, Կիլիկիան և հենց Անտիոքը ավարառողների վրա: Հրաժարվելով ուղիղ Կոլոնիայի և Սեբաստիայի վրա գնալուց, նա ամառ ժամանակ մտավ Լիկանդոս բանակաթեմր, քանզի մտադիր էր դեպի Ասորիքի շրջանները ուղղվել աշնանը, որպեսզի զորքը շոգից չտառապի և այդ պատճառով անհաջողության չմատնվի ու չվնասվի: Այդ միջոցին թուրքերն անսպասելիորեն հարձակվում են նեոկեսարիայի վրա և ավերում այն, ձեռք բերում բաղում դրամ ու գերիներ, տանում հսկայական ավար: Այգ բանի լուրը հասավ կայսեր և նրան շատ տխրեցրեց, որովհետև ինքը թեև անձամբ է արշավանքի դուրս եկել, հակառակ դրան թշնամիները իր ներկայության լափում են իր երկիրը: Համենայն դեպս, վերցնելով իր զորքերը, նա դժվարանցանելի կածաններով, երասանակները թողած գնաց նրանց ետևից: Մոտենալով Սեբաստիային, ռազմական հանդերձանքն ու ողջ հետևակը թողեց այնտեղ՝ իր հետ եղող կնոջ որդի Անդրոնիկոսին, որին նա կայսր նշանակելով, իր մոտ էր պահում որպես պատանդ կամ համազորավար, որպեսզի բազում արշավանքների ժամանակ, եթե հանկարծ իրեն

բան պատահի, նա իր վրա վերցնի ղեկավարութիւնը: Ինքը ավելի ռազմունակ զինվորներով Տեֆրիկեի և Արգաուսի<sup>683</sup> բազում ու շատ բարձր լեռների վրայով սկսեց հետապնդել Թշնամիներին, ջանալով հարձակվել կողքից, անսպասելի կերպով նրանց վրա խուժեց, իր ներկայութեան մասին համբավով բոլորի մեջ սարսափ տարածեց և ստիպեց նրանց իսկույն թիկունքը շրջել ու փախուստի դիմել: Սակայն նրանցից քչերը սպանվեցին, քանզի կայսեր զինվորները ճանապարհազուրկ վայրերով գնալիս հոգնել էին, բայց բազում գերիներ վերցրին, որոնք սրի չբաշվեցին, կենդանի մնացին: Ողջ ավարը՝ լինի այն մարդ, թե անասուն, աղատ արձակվեց. [գերիները] հրաշքի առթիվ փառաբանեցին կայսեր: Տեղի ունեցածը հակառակորդների համար ապշեցուցիչ էր, այն, թե ինչպես հռոմայեցիների կայսրը անզսպելիորեն իրենց վրա արշավեց թեթևագէն ռազմիկի նման: Կայսրը իր զորքին Սեբաստիայում լոկ երեք օր հանգիստ տալով, շարժվեց դեպի Ասորիք, Կուկուսոսի<sup>684</sup> կիրճերով նա հասավ Գերմանիկի<sup>685</sup> և ներխուժեց Տլուք կոչվող բանակաթեմը<sup>686</sup>, նախօրոք մի մեծ զորամաս առանձնացնելով սինտագմատարխի<sup>687</sup> գլխավորութեամբ Մելիտենն ուղարկեց՝ ի պաշտպանութիւն արևելքի և [քաղաքը] պաշարող նենգ ու պատերազմող Ապսինալիոս անունով մեկի<sup>688</sup> հրամանատարութեան տակ գտնվող Թշնամիներին ընդդիմակայելու: Այդ էր պատճառը, որ կայսրը, իր լավագույն ռազմիկներին, այդ թվում հենց Ֆրանկներին՝ արյունոտ և պատերազմասեր մարդկանց [սինտագմատարխին] հանձնեց: Բայց հրամանատարը երկյուղ կրելով անհաջողութեան մատնվելուց (նա տատանվում էր և ապագայից վախենում) բարեխղճորեն գործի չլծվեց և քիչ էր մնացել, որ կայսրը կրկնակի պատերազմի մեջ ընկներ, ղրկված լինելով նման ուժից: Թշնամիներին նրանք բազմիցս կոչ էին անում՝ հեռանալ Մելիտենն քաղաքից, բայց երբ վերջիններս տեսան, որ [հռոմայեցիները] անգործութեան են մատնված, հանգիստ նստած, կարծես նիրհած, թաքուն վայրերով աննկատելիորեն հանդգնեցին հարձակվել կայսերական զորաբանակի վրա: Նրանք պարեն գնելու դուրս եկած մի փոքր զորամասի հանդիպեցին, և նրա վրա հարձակվեցին: Հռոմայեցիներն առանց դիմադրութիւն ցուցաբերելու փախուստի դիմեցին: Այդ զինվորներից շատերը կկոտորվեին, եթե շտապ կարգով օգնութեան չհասներ կայսրը, որը նրանց հարձակումից փրկեց: Եթե որևէ մեկը, ընդհանրապես ա-



սած, զորավարներին վերագրի փրկության փաստը, ասի, թե նրանք լավ են արել, կամ վատ են արել, որ մի տեղ են հավաքվել, նա սխալած չի լինի: Հնեքը լավ են ասել, թե գերադասելի է, որ առյուծը իշխի եղնիկների վրա, քան թե եղնիկը՝ առյուծներին: Կայսրն ահա այսպես փրկվելով ու զորքը փրկելով, համայն զորքով բանակեց Հալեպի առաջ ընկած տարածության վրա: Նախքան ձիուց ցած իջնելը նա սկյութներին<sup>689</sup> ու բազում հռոմայեցիների ուղարկեց երկիրն ասպատակելու: Նրանք այդպես էլ արեցին ու քշեցին, բերեցին տղամարդկանց, կանանց բազմություն և բազում անասունների: Այնտեղից կայսրը թշնամական երկրի վրայով երեք օր անց հասնում է Հիերապոլիս<sup>690</sup>: Այնտեղ գտնվող զորքը՝ արաբներն ու թուրքերը և նրանց գլխավորող Ամերտիկիսը, որն իրեն Պարսկաստանի թագավորներից սերող էր համարում<sup>691</sup>, ձևացնելով որ ուզում են հարձակման անցնել, այնուամենայնիվ չհամարձակվեցին հռոմայեցիների հետ մոտիկից մարտի բռնվել, այլ հեռամարտությամբ ու մեկմեկ առաջ անցնելով: [Կայսրը] հողաթմբերի օգնությամբ, պարսպամարտով ու գրոհներով գրավեց Հիերապոլիսը, օտարազգի զորքը, պայմանի համաձայն, առանց զենքի ու զրահի արձակեց: Այդ բոլոր գործերում միջնորդի դեր էր խաղում մագիստրոս Պետրոս Լիբելլիոսը, հունական ու ասորական փայլուն կրթություն ստացած մի մարդ, որ ծնվել ու մեծացել էր Անտիոք քաղաքում, այդ քաղաքի առաջին մարդկանցից մեկի որդին: Հալեպի, այն է Բերիայի ամիրան, միանալով արաբներին ու թուրքերին և հզոր բանակ ստեղծելով, մտածում էր կայսեր հետ մարտի բռնվել ու պատերազմել: Կայսրը գրավված քաղաքում էր գտնվում և մարտնչում էր դեռևս դիմադրություն ցուցաբերող մի աշտարակի պաշտպանների դեմ. երկու մարտական զորամասեր էին առանձնացվել հակառակորդներին հսկելու և նրանց առջև ճամփան փակելու: Հիերապոլիսի շուրջ կան լայնատարած դաշտեր, որտեղ երևացին մի քանի ձիավոր սարակինոսներ, կան բլուրներ, բայց և ոչ մի բարձր լեռ: Վայրը տոթակեզ է, ջուրը՝ օդի ջերմության ու շոգի պատճառով՝ գուլ: Թշնամիները ստեպստեպ մոտենալով մարտաշարքերին, վերստին ետ էին վերադառնում, քանզի դեռևս բացակայում էր Մահմուդ ամիրան, և հեռվից նետեր արձակելով հռոմայեցիներից ոմանց ստիպեցին հեռանալ: Այդ բանը նրանք երկու, երեք անգամ արեցին: Մի այլ ընդհարման ժամանակ նրանք չբավարարվեցին հռոմայեցիներին մի

փոքր հետապնդելով ու կանգնելով, այլ քշելով նրանց, մարտի բռնվեցին ստրատելատների տազմայի հետ, թևանցելով սխուլերի տազման, շատերին կոտորեցին, իսկ մնացածներին ստիպեցին խայտառակ փախուստի դիմել՝ աչ կողմում թողնելով սխուլերի սինտագման, որը հակառակ որ ականատես էր լինում հռոմայեցիների պարտության, տեղից շարժվեց և կարծես բան չէր պատահել, հանգիստ կանգնել էր, թվում է մտահոգված լինելով, որ շնկատվի թշնամու կողմից, ջանում ամեն կերպ խուսափել նրա ուշադրությունից: Բայց թշնամիները փութանակի վերադառնալով, այն էլ պարտության մատնեցին, շատերին կոտորեցին, մնացածներին [ստիպեցին] ճամբարում փակվել, խորամանկությամբ տիրանալով նրանց դրոշներին: Նրանք բազում զինվորների գլուխները կտրեցին և հալեպցիներին՝ ուղարկեցին: Ապշել կարելի էր, տեսնելով, թե ինչպես, երբ հռոմայեցիները այդպիսի հարվածներ էին ստանում ու պարտություն կրում, մնացած լոխոսներից ու լոխագոսներից և ոչ ոք օգնության չդիմեց, բոլորը ներսում նստած, կարծես բարեկամական երկրում վրաններ խփած, լոկ իրենց մասին էին մտածում, նրանց մոտ բացարձակապես բացակայում էր հոգու բռնկումը, հոգատարությունն ու խռովահուզությունը: Կայսրը, որ քաղաքի ներսում էր գտնվում, իմանալով այդ մասին, շատ տխրեց և փութանակի իր հետ եղող կապաղովկացիների հետ վերադարձավ, խորհելով պատահածի համար դարման գտնել: Այդ զիշերը բոլորի համար շարագուշակ էր, նամանավանդ որ հայկական հետևակն էլ, որին հրաման էր տրվել խրամի մոտ գիշերել, որոշեց ապստամբել<sup>692</sup>: Դեռ լույսը չծագած, թշնամիները օղակեցին խարաքսը: Հալեպի ամիրան, իմանալով կատարվածի մասին, իր ողջ զինական ուժով եկավ, մեկ հարվածով կայսեր բռնելու: Կայսրը, որ վրանի ներսում մարտի պլանն էր կազմում, երրորդ ժամին հանկարծ

20—XI ձի նստած դուրս եկավ: Նոյեմբեր ամսի քսանն էր, ինդիկտիոնի —1069 7-րդ տարին: Երբ դեռ բացահայտ կերպով ո՛չ փողերը, ո՛չ էլ շեփորներն էին հնչել, ո՛չ էլ որևէ ազդանշան տրվել, բայց զորքի դրոշները բարձրացված բանակը շարք կազմած դուրս եկավ, թշնամիներն սկսեցին մի տեղ կենտրոնանալ, այն կողմում, որտեղից հռոմայեցիներն էին շարժվում: Բոլորի հոգին խռովված էր, պատկերացնում էին, թե ինչպիսին կլինի ճակատամարտը, ինչպիսի ելք կունենա այն: Ճակատողները պատերազմական կոչերով հարձակման անցան և հռոմայեցիները հակառակորդներից



շատերին հաղթեցին ու կոտորեցին: Երբ մնացած զորքն էլ հարձակման անցավ, [թշնամին] գլխովին փախուստի դիմեց: Նրանց հետապնդողները շատերին կոտորեցին ու գերի վերցրին<sup>693</sup>: Սակայն հակառակորդի հետապնդումը շարունակվելու պատճառով, հոռմայեցիները խոշոր հաջողություն, փառավոր հաղթանակ ձեռքից բաց թողեցին, մեծագույն պարծանքից զրկվեցին: Արաբական ձիերը, թեև արագավազ են, բայց անվեհեր չեն, ոչ էլ վազքում տոկուն, իսկ հոռմայեցիները շուգեցին նրանց թուլությունից օգտվել: Կայսերական հրամանով շրջելով իրենց ձիերին, նրանք անավարտ թողեցին իրենց հաղթանակը, բավարարվեցին հակառակորդին լուկ փախուստի մատնելով: Կայսրը գտնում էր, որ դա էլ մեծ բարեբախտություն է, որ վեհերոտները սրտապնդվեցին և մեռածները, այսպես ասած, վերակենդանացան: Կայսրը թշնամիների փախուստից հետո վերադառնալով խարաբս, որոշեց բնակեցնել Հիերապոլսի միջնաբերդը<sup>694</sup>: Այնտեղ հաստատելով ծագումով իբերացի այն վեստ Փարեսման Ապոկապին<sup>695</sup>, [կայսրը] հենակետ ստեղծեց շարունակելու հակառակորդներին պարտության մատնելը և նրանց ընդդիմակայելը: Քանի դեռ հոռմեական զորքը բանակած մնում էր, թվում էր, թե արաբները տեղում անշարժ են, բայց երբ կայսրը զորքն առնելով շարժվեց ուղիղ Ազազ բերդի վրա, նրանք սկսեցին իրենց սովորության համաձայն որոշ հեռավորության վրա տեղ-տեղ երևալ և հաճախակի գրոհելով վերջապահ զորքի վրա, վնասել պարենը փոխադրողներին, նեղել հոռմայեցիներին, քանզի հարձակվում էին հանկարծակի, դարան մտած ու թաքուն: Կայսրը ճամբարը առնելով նետաձիգների ու վահանակիրների պաշտպանության մեջ, ողջ զորքով, ղրահը հագած հարձակվում է Աղաս բերդի վրա, նախօրոք իմանալով, որ վայրը հարմար է օթեանելու: Սակայն, երբ մոտեցավ ու տեսավ, որ այն շատ ամուր է և անմատչելի, գտնվում է բլրի գագաթին՝ երկու շարք պարիսպներով պատսպարված, կարծես ժայռերով ամրացված դարբասը տանող քարե ճանապարհով, հոսող ջուրն էլ՝ սակավիկ, այդքան զորքի համար ոչ բավարար, հեռացավ գնաց ու բռնակեց մի տեղում, որտեղ ավելի առատ էր հոսում ջուրը: Այնտեղից էլ շարժվեց դեպի Ավսոնիտիսի սահմանները, հրկիզեց հնուց Հալեպի ամիրային հատկացված Կատմա կոչվող մի մեծ գյուղ և կանգ առավ Տերխուլա կոչվող մի այլ գյուղում: Ցանկապատը շինելու ժամանակ, երբ կայսրը աջ կողմում էր

կանգնած, երկու արաբներ աննկատ բարձունքի ետևից ձիերով քառատրոփ եկան ու երկու հետևակայիներին նիզակահար արեցին: Կայսրը առաջինը տեսնելով նրանց, զինվորներին ոտքի հանեց նրանց հետապնդելու: Բայց արաբները իրենց արագավազ ձիերով փրկվեցին ճամբարում: Այնտեղից էլ վեր կենալով, գնացին ուղիղ դեպի Արտախ, որը գտնվում էր իրենց զորավարին քշած արաբների ձեռքում: Բայց դրա պահապանները դարձյալ փախուստի դիմեցին, որով կայսրը վերագրավեց սեփական ավանը, որտեղ կայազոր հաստատելով և թողնելով բավարար պարեն, ամեն ինչ կարգավորեց իրադրություն համեմատ: Հոռմայեցիները հենց այս կայսեր օրոք սկսեցին թշնամիներին դիմադրություն ցուցաբերել, արիություն հանդես բերել, հավաքվել դիմադրելու համար, իսկ մի փոքր անց թագավորող կայսրերը իրենց ցույց տալուց ու զորքեր կուտակելուց բացի, ոչ մի տեղ հանդուգն մարտ չտվեցին, որից որոշ է, որ ընդհանրապես ասած, ամեն ինչում հաջողության գրավականը հենց վեհապետն է: Կայսրն այնտեղից շկարողացավ Անտիոք գնալ, քանզի սովից ու բազում պատահարներից արդեն կոտորվել էր, և դաշտերի վրայով ու մի քանի դժվարանցանքների կիրճերի միջով հասնում է Կիլիկիայի Ալեքսանդրոս<sup>696</sup> կոչվող քաղաքը և այնտեղ բանակում, ապա Տավրոս լեռան վրայով ամբողջ զորքով մուտք է գործում հոռմայեցիների երկիրը: Նրանք անսպասելիորեն եղան ցուրտ վայրերում և եկած լինելով տոթակեզ ու շոգ տեղերից, զգացին ջերմաստիճանի զգալի տարբերությունը: Դրա պատճառով բազում մարդիկ մեռան և բազում անասուններ սատակեցին: Պողանդոս կլեյսուրի Գյուտարիոն կոչվող մի գյուղ դուրս գալով, կայսրը լսեց Ամորիոն քաղաքում տեղի ունեցած ավարառության և անթիվ անհամար մարդկանց կոտորածի մասին: [Թշնամու] ճամբարը գտնվում էր հալկես կայանում, բայց Մելիտենեի զորահրամանատարը ամենևին չցանկացավ նրա վրա հարձակվել, այն էլ այն ժամանակ, երբ իր զորքը կենտրոնացած էր Ծամնդավ քաղաքում: [Կայսրը] այդ բոլորի վրա շատ տխրեց, բայց շկարողանալով որևէ օգնություն ցույց տալ, զորքի գործը հնարավորության սահմաններում լավ կարգավորելով, նրա մեծ մասը ուղարկեց ձմեռելու, իսկ ինքն էլ գնաց Բյուզանդիոն, տեղ հասնելով հունվար ամսի վերջերին:

1070

Որոշ ժամանակ մնալով այնտեղ և հնարավորության սահմաններում կարգավորելով քաղաքական գործերը, սենատորնե-



րից ոմանց պատիվների ու ընդունելութեան արժանացնելով, տարեկան նվերները բաժանելով և շսպասելով անդամ Զատկի տոներին, նավեց քաղաքի դիմաց դտնվող էրիոն ապարանքը: Մի այլ դեպք էլ պատահեց, որն ստիպեց իրեն շտապել արշավանքի գնալու: Մի ոմն լատին, անունը Կրիսպինոս, որը կայսեր մոտ էր ժամանել Իտալիայից, Արևելք ուղարկվեց այնտեղ ձմեռելու: Իր սպասած փառք ու պատվին շարժանանալով, նա ապստամբութուն ծրագրեց և առանց այլևայլի հանդիպած հարկահավաքներին և այլ մարդկանց սկսեց կողոպտել ու թալանել: Սակայն ոչ մի հռոմայեցու շսպանեց: Շատերը նրա դեմ մարտի գնացին, բայց պարտվեցին: Այդ միջոցին Արմենիականների բանակաթեմում ձմեռող վեստարիս Սամուիլ Ալուսիան բուլղարը, եղբայրը կայսեր կնոջ, որին կայսրը կնութեան էր առել դեռ նախքան գահին տիրանալը, արևմտական հինգ տագմաներով

4—IV Հարութեան մեծ օրը, այն է Զատկի, ընթացքից Կրիսպինոսի վրա —1070 է հարձակվում: Ֆրանկները համախմբվեցին, հռոմայեցիները փախուստի դիմեցին, նրանցից շատերը սպանվեցին ու անթիվ, անհամար մարդիկ էլ գերի ընկան: [Կրիսպինոսը], սակայն, նրանց հանդեպ մարդասիրաբար վարվեց, բոլորին ազատ արձակեց, դեռ ավելին, վիրավորներին ուղարկեց դարմանվելու: Կայսրը, ժամանելով Դորիլեոն<sup>697</sup>, ընդունեց Կրիսպինոսի պատվիրակութունը, որի միջոցով նա խոստովանում էր իր հնազանդութունը, պարզում ապստամբութուն բարձրացնելու պատճառները և խնդրում ներում՝ կամա կամ ակամա գործած վատ արարքների համար: Կայսրը նրան ընդառաջ գնաց, բոլոր խնդրածը կատարեց, գնահատելով մարդու քաջութունն ու պատերազմական հմտությունը. ապստամբութուն բարձրացրած միջոցին մեծաթիվ թուրքերի հանդիպելով, մարտում նա մեծ սխրանքներ էր գործել: Նա կայսեր դիմավորեց ծառայի պես, բարեկամաբար հետևեց նրան, իր հետ տանելով վոքրաթիվ զինվորների. մնացածներին նա թողել էր Արմենիականների [բանակաթեմում] մի բարձր բլրի վրա գտնվող և իր կողմից գրավված Մավրոկաստրոն քաղաքում<sup>698</sup>: Բայց շատ շանցած կասկածվելով իր ծրագրերին մասնակցություն ունենալուց հրաժարվող ցեղակիցների հանդեպ ինչ-որ դաժանություն գործելու մեջ (ֆրանկների ազգը անհավատ է ու ազահ, դեռ ավելին՝ ապերախտ, չնչին առիթով մեծ ոճիրներ գործող՝ խռովություններ ու ապստամբություններ բարձրացնող և դրանից հաճույք ստացող), հեռացվեց

բանակից: Նրան բացեիբաց որևէ մեղադրանք չներկայացվեց, այլ պարզապես երևելի ոմն նեմիցի<sup>699</sup> ամբաստանության հիման վրա: Կրիսպինոսի ընկերները կատարվածից դժգոհ, թողնելով բերդը եկան Միջագետք և բնակիչների գլխին բազում փորձանք բերեցին: Երբ կայսրը, իմանալով, որ թուրքերի մեծաթիվ բազմութունն ավարառում է երկիրը, զորքով եկավ Կեսարիա<sup>700</sup> և նրա մի մասը նրանց դեմ ուղարկեց: Ոչինչ գլուխ չբերած և ենթագրելով, որ [թշնամին] փախուստի է դիմում, կարգու կանոնով շտապեց առաջ, բայց դեռ ոչ մի խրամ չփորած, ոչ էլ վրան խփած, թշնամիներն երևացին՝ վայրերի ամենաամուր տեղերը և բլուրների գագաթները բռնած: Աղմուկ բարձրացավ, կայսրը դեռ չհանգստացած, մարտի շեփորը հնչեցրեց և փաղանգները դրոշները բարձրացրած շարքով առաջ շարժվեցին: Հակառակորդներից շատերը դուրս եկան, բայց վրա հասած տագմաները՝ մեկը լիկառնացիների կոչվածը, մյուսը՝ արևմտյան արիթմոսների, սովորականից ավելի հանդուգն հարձակվեցին և ստիպեցին նրանց անհապաղ փախուստի դիմել: Կայսրը [մարտի մտքեց] նաև մնացած զորքերը և թշնամիների մյուս զինվորներն էլ փախստականների հետ թիկունք դարձրին: Երբ անցնում էին զինվորները և վարձկան սկյութները, ես նկատի ունեմ ուղերին, թուրքական մի մեծ զորամաս հարձակվեց հոռմայեցիների վրա: Նրանց ընդդիմակայեցին պահակության համար առանձնացված զինվորները, հատկապես ֆրանկները, որոնք ձեռնամարտի բռնվելով և համառորեն մարտնչելով, փախուստի մատնեցին. այնտեղ կանգնած հոռմեական տագմաներից և ոչ մեկը ֆրանկներին ամենափոքր օգնությունն անգամ ցույց չտվեց: Այդ միջոցին, երեկոյան մոտ [թշնամուն] հետապնդելուց վերադարձավ և կայսրը. պատերազմը երեկոյան մոտ տեղի ունեցավ: Հաջորդ օրը կայսրը հրապարակային դատաստան տեսավ թշնամի ռազմագերիների հետ, նրանց մահվան դատապարտեց, նա այլևս ոչ ոքի չիւնայեց. նույնիսկ նրանց հրամանատարին, հակառակ, որ նա իր կյանքի համար հսկայական փրկագին էր խոստանում: Կայսրը բանակատեղիում մնաց երեք օր և ունեցած հաջողությունից կշտացած, հնարավորութուն տվեց բազում հակառակորդների փախուստի դիմելու և իրենց հետ տանելու անգամ ավարը: Նա Մելիտենեից երկու օրվա ճանապարհ հեռավորության վրա բանակեց, մտածեց իր զորքի մի մասը առանձնացնել, թողնել որպես հակառակորդների



դեմ պատվար, իսկ ինքը՝ մնացած ողջ զորքով վերադառնալ արքունիք: Բայց այդ որոշումն անարի համարվեց, ոչ ձեռնտու, դրա համար փոխելով իր միտքը, շարժվեց դեպի Եփրատ, քանզի թշնամիները նրա ափերին էին վրաններ խփել, բայց իմանալով կայսեր իրենց վրա դիմելու մասին, իսկույն հեռացան: Կայսրը շարժվեց դեպի Ռոմանոպոլիս<sup>701</sup> և մտադիր լինելով այնտեղից գնալ դեպի խլաթ<sup>702</sup>, մի վայրում բանակեց, իսկ Ֆիլարետոսին<sup>703</sup> (նա Վահրամյանների տոհմից էր) զորավար-ավտոկրատոր նշանակեց: Կայսրը ղորքը երկու մասի բաժանեց, ավելի հզոր մասը տվեց [Ֆիլարետոսին], մի մարդու, որ պարծենում էր իր զորավարական տաղանդով, բայց խայտառակ ու ամոթալի բարքերի տեր էր, վարում էր ամենաանառակ կյանք: Թեև նա արտակարգ կովեց թուրքերի դեմ, բայց ամենակարևոր մարտում պարտություն կրեց, որի պատճառով էլ արհամարհվեց, բայց հակառակ դրան նա չփոխեց իր կենցաղավարությունը և լինելով շահամուլ ու փառասեր, ձգտում էր իշխանության: Իսկ կայսրը գնաց ավելի հյուսիսային շրջանները՝ ձյուն ու սառը աղբյուրներ գտնելու. նա շատ էր շոգում, նրա մարմինը մեծապես դրանց պահանջն էր զգում: Անցնելով քարքարոտ ու դժվարանցանելի վայրերով, նա հասավ Անթիաս կոչված մի վայր. այն խոտառատ է ու հացառատ, այստեղ եկողներին մեծ բավականություն պատճառող, կարծես երկրի պորտը լինի: Այնտեղից նա Տավրոս լեռան վրայով, որին տեղացիները Մունզարոս են կոչում<sup>704</sup>, հասնում է Կելցենե<sup>705</sup> կոչված երկիրը՝ երկրորդ անգամ անցնելով Եփրատ գետը, որը մոտիկից է հոսում և ջրբաժան է լեռան ու Կելցենեի միջև: Ֆիլարետոսի մոտ մնացած զինվորները, հակառակորդների հայտնվելուց վեհերոտած ու սրտաճաք. եղած, շարժվեցին կայսեր ետևից, լքելով այն վայրերը, որոնց պահապանության համար էին թողնված, և հասան վերոհիշյալ Անթիաս վայրը: Այստեղ, երբ թշնամիներն երևացին վերջապահ զինվորներին, նրանք առանց մարտ տալու, խայտառակ կերպով փախուստի դիմեցին և ոտքով հասան Կելցենեում գտնվող կայսեր: Հակառակորդները տիրացան սրանց հանդերձանքին: Երբ այդ բոլորի մասին հայտնեցին կայսեր, նա մեծ իրարանցման մեջ ընկավ, մեծապես տխրեց և՛ իր զինվորների կրած պարտության, և՛ հակառակորդների ձեռք բերած հաղթանակի առթիվ: Եվ եթե չլինեք նրանց սարսափեցնող և մասամբ սթափեցնող կայսեր համբավը, առանց որևէ խոչընդոտի կավարա-

ունին և հիմնովին կավերևին այդ շրջանը: Նահանջելով նրանք  
 ուղիղ, ըստ իրենց սովորության, մեծ թափով կապաղովկացիներ  
 ըրի բանակաթեմի վրա արշավեցին<sup>706</sup>, երթից հանդիպածը ավար  
 առեցին, ապա ամբողջ բանակով գրոհեցին մարդաշատ ու  
 բազմատուն, պիտանի ու ցանկալի ամեն ինչով հարուստ Իկո-  
 նիոն քաղաքի վրա: Կայսրը Կելցենեում ընդունեց փախուստի  
 դիմած ու ցիր ու ցան եղած զինվորներին և որպեսզի նրանք  
 հանկարծ մենակ մնալով հայերի զոհը չդառնան<sup>707</sup>, շրջվեց ու  
 շարժվեց հակառակորդների ետևից: Վեհապետի և նրա [հրամա-  
 նատարների] խորհրդակցությունը ոչ մի արդյունք չունեցավ,  
 միայն մեկ բան պարզ դարձավ, որ կայսրից բացի հռոմայեցի-  
 ներից ոչ ոք պատերազմի մասին չի մտածում, քանզի զորքի  
 մեծ մասը արդեն շարքից դուրս էր եկել, իսկ հրամանատարներն  
 էլ ջանք էին թափում մի փոքր ու պատահական հաջողության  
 դիմաց իրենց և իրենց ազգականների համար ամենաբարձրա-  
 գույն աստիճաններն ու պատիվները կորզել, որի պատճառով էլ  
 մյուսները ոչ մի ցանկություն չէին ցուցաբերում սխրալի, տղա-  
 մարդուն վայել որևէ արարք գործել: Բայց քանի որ ներկա էր  
 կայսրը, նման բան չէր էլ լինի, քանզի ինքն անձամբ էր տնօ-  
 թրինում ամեն ինչ, հանապազ հետևում իրերին և հատուցում  
 մարդկանց ըստ իրենց գործադրած ջանքերի: Կայսրը զորքով  
 Կոլոնիայի և Արմենիական բանակաթեմերի<sup>708</sup> վրայով հասավ  
 Սեբաստիա: Այստեղ իմանալով, որ թուրքերը Պիսիդիայի և Լի-  
 կանիայի վրա արշավելով ծրագրում են [գրավել] Իկոնիոնը,  
 հետապնդեց նրանց՝ մինչև Հերակլեսի կոչված գյուղաքաղաքը<sup>709</sup>,  
 որտեղ իմացավ, որ թուրքերը արդեն ավերակ են դարձրել  
 Իկոնիոնը և, վախենալով իր հետապնդումից, թողել հեռացել  
 են: Դրա վրա կայսրը տագմաճերից մի զորամաս Կիլիկիա ու-  
 ղարկեց՝ միանալու Անտիոքի դուքս Խաչատուրին<sup>710</sup>, մի քա-  
 ջարի մարդու, որ դեռ անցյալում ցույց էր տվել իր բազում աչ-  
 քի ընկնող առաքինությունները, հրաման տալով նրան փութա-  
 նակի Մոպսուեստիայում ընդդիմակայել [հակառակորդին], քան-  
 ղի սպասվում էր, որ թուրքերն այնտեղից պետք է անցնեն, այն-  
 տեղ սպասել նրանց և ամեն գնով ջարդ տալ: Նրանք Սելևկիայի  
 լեռների վրայով անցնելով, Տարսոնի դաշտում ջարդ կերան,  
 հենց այդտեղ պատահամբ հայերին հասդիպելու<sup>711</sup>, գրեթե ողջ  
 ավարը կորցրին: Թշնամիները իմանալով հռոմայեցիների Մոպ-



սուեստիայում բանակելու մասին, առանց ժամանակ կորցնելու, ինչքան հնարավոր էր հանգստանալով Վալտոլիվադիում, գիշերով ճանապարհ ընկան և անցնելով Սարվանդիկոն լեռը<sup>712</sup>, ինչպես և շուտափույթ Հալեպի սահմանները, մի կերպ վտանգից պրծան։ Մոպսուեստիայում գտնվող զորքի անգործությունը տրխորեցրեց կայսեր, նա ուղիղ գնաց Սելևկիայի Կլավդիուպոլիսը և իմանալով նրանց փախուստի մասին, հուլյսը կտրած, Բյուզանդիոն վերադառնալու ճանապարհը բռնեց։ Նա շտապում էր, աշունը արդեն վրա էր հասել, ետևում թողնելով զորքեր, քանզի ավազակախմբերի ու հրոսակների բաժանված ուրիշ թուրքեր էլ ավարառում էին հռոմեական երկիրը, գողերի ու ավազակների նման ասպատակում, հանդիպածը ավերում ու թալանում։ Այդ իսկ պատճառով դժվար էր նրանց արգելք կանգնելը՝ նրանք դարան էին դրել բոլոր ճանապարհներին, հռոմեական զորքերը մեկուսացած վիճակում էին և չէին կարող նրանց դիմադրել, իսկ կայսրն էլ չէր կարող մի քանի կտոր լինել, նա մի տեղում միայն կարող էր հայտնվել։ Երբ նա մայրաքաղաք մտավ, մնացած զորքն էլ տուն վերադարձավ։ 6578 թ. էր, ինդիկտիոնի ութերորդ տարին, երբ Վախերնայի մեծագույն տաճարը հրդեհվեց և հիմնահատակ կործանվեց։

1071 Գարնան սկզբին կայսրը որոշեց մայրաքաղաքում մնալ։ Առաջ քաշելով պրոտոպրոնեդրոս Մանուիլ Կոմնենոսին, նրան կուրապաղատի աստիճան շնորհեց և նշանակեց զորավար ու սպարապետ։ Ահա սրանից հետո է, որ սկսեցին հռոմայեցիների կայսրությունյան զլխին թափվել փորձանքները, դժվարություններն ու դառնությունները։ Սպարապետը թեև երիտասարդ էր, այդուհանդերձ ոչ մի սխալ ու մանկամիտ բան չարեց, ընդհակառակը, անում էր, ինչ պետք էր. հավաքելով զորքերը նա ամբողջ զինական ուժով հաստատվեց Կեսարիայում, հոգ տանելով ոչ միայն օրինականության մասին, այլև անհրաժեշտ չափով նաև զորքի, պատժում էր զանցագործ զինվորներին։ Մի քանի մարտերում նա հաղթող էլ եղավ և ջանաց իր բարի հռչակը է՛լ ավելի ծավալել ու մեծացնել։ Ինքնակալը, իմանալով այդ մասին, թեև արտաքուստ ցույց էր տալիս, որ գոհ է, բայց թաքուն նախանձում էր։ Իբրև թե Հիերապոլսի պաշարումը վերացնելու և [քաղաքը] պարենով ապահովելու նպատակով, նա բանակից մի մեծ զորամաս առանձնացրեց և կարգադրեց Ասորիքի դեմ գնալ, որով զորավարին զրկեց այդ ուժից։ Երբ զորավարը մնացած

զինական ուժով եկավ Սեբաստիա ու բանակեց քաղաքի շուրջ, վրա հասավ թուրքական մի մեծաթիվ [զորք]: Կուրապաղատը նրանց դեմ դուրս եկավ: Թշնամիները պայմանավորված ազդանշանով փախուստ ձևացրին և երբ հռոմայեցիները ցրիվ եկած իրենց էին հետապնդում, նրանք հանկարծակի շուռ եկան և պարտվածի փոխարեն հաղթող դարձան: Հռոմայեցիներից շատերը դերի ընկան, մեծ մասը սրի քաշվեց: Ի միջի այլոց գերի ընկավ նաև հենց ինքը կուրապաղատը<sup>713</sup>, ճամբարում եղողները փախուստի դիմեցին, իսկ ճամբարն էլ հափշտակվեց ու թալանվեց: Եվ եթե կողքին չլիներ քաղաքը, որտեղ պաաստանելով շատերը փրկվեցին, ապա հիշյալ արշավանքին մասնակցած հռոմեական ողջ զորքը վտանգի էր ենթարկվելու: Երբ այդ բանի լուրը հասավ կայսեր, նա մեծ տրտմության մեջ ընկավ: Այդ պատուհասի բոթը դեռ շտարածված, շատ ավելի սարսափելին ու ազդուն հասավ. թե թուրքերը զենքի ուժով խուժել են խոնե<sup>714</sup> քաղաքի, իր հրաշագործությամբ ու հարստությամբ հռչակավոր Հրեշտակապետի տաճարը, որ ամեն ինչ ողողվել է սպանվածների դիակներով ու արյան ճապաղիքով, որ ամենասուրբ տաճարը սրբապղծվել է [թուրքերի] կողմից՝ վերածվել ախոռի: Բայց ամենասարսափելին այն էր, որ ծերպերն էլ շկարողացան այդտեղ ապաստանածներին պաշտպանել և վտանգից փրկել: Ծերպերի կողքով հոսող գետերը թափվում են մի փոսի մեջ: Նրանց հոսանքը հնում այստեղ այցելած Հրեշտակապետի հրաշքով կարծես կանգնած է, հոսում է սահուն: Բայց այս անգամ աննախադեպ մի բան պատահեց, ջուրը հորդացավ, ծովացավ, ժխորով իր մեջ քաշեց, ողողեց ու ջրատակ արեց բոլոր ապաստանածներին: Երբ այդ մասին պատմեցին, մենք մեծ մտորումների մեջ ընկանք, մտածելով, որ տեղի ունեցածը աստվածային նշան է, աստծո ցասման ու բարկության հետևանք, որ մեր դեմ մաքառում են ոչ միայն թշնամիները, այլև բնության տարերքը: Սրանից առաջ այլազգիների այսքան մեծ ուժն ու փրվածությունը, հռոմեական հպատակների կոտորածը համարվում էր Իբերիայում, Միջադեպում, մինչև Լիկանոս ու Մելիտենե և կից Հայաստանում ապրող հերետիկոս բնակիչների<sup>715</sup>, նեստորի հրեադավան և Ակեֆալների<sup>716</sup> հերձվածը պաշտողների դեմ ուղղված աստծո ցասման հետևանք, քանզի այդ շրջանները վխտում են նման շարափառությամբ: Բայց երբ փորձանքն սկսեց թափվել նաև ուղղափառների զխին, բոլոր հունադավաններն ընկան տա-



րակուսանքի մեջ, նրանք ենթադրում էին ու հավատացած, որ Ամոզրացիների<sup>717</sup> նման իրենց էլ գործած [մեղքերի] բաժակը լցվել է, որ ուղղափառ հավատքը դավանելը դեռ բավական չէ, անհրաժեշտ է նաև այդ հավատքին շահասող ապրելակերպ: Այդ պատճառով երկուսն էլ, այսինքն և հավատքի հարցում սրխալ:լողը, և կյանքում կաղացողն ու թերացողը, նույն պատժին են արժանանում: Իսկ արարողն ու վարդապետողը ներբողվում ու փառավորվում: Կայսրը, լսելով այդ մասին, անհապաղ արշավելու և իր երկրին սատար կանգնելու պատրաստակամություն ցուցաբերեց, բայց հակառակորդի քանակը շիմանալու պատճառով, ինչպես և խորհրդականների հորդորով, հրաժարվեց: Նրանք էին. Նիկեփոր Պալեոլոգոսը, գերապատիվ, փիլիսոփաների հյուպատոս Կոստանդին Պսելլոսը<sup>718</sup> և ի վերա ամենայնի կեսար [Հովհաննեսը], նախորդ կայսեր եղբայրը: Եթե նրանց մնար, ապա կհամոզեին շասլրել անգամ: [Կայսեր] շատ աչքի ընկնելը իրենց համար անտանելի էր, նրանք շատ էին ատում նրան, քանզի նա քաջ էր ու հանդուգն, իր ափի մեջ էր առել ախոյաններին, ես նկատի ունեմ Դուկասի զավակներին: Բայց չէին էլ համարձակվում բացահայտ կերպով նրան վնասաբեր խուրհուրդ տալ: Մի քանի օր անց ժամանեց և Մանուիլ կուրալպաղատը, հետը բերելով իրեն բռնող թուրքին<sup>719</sup>, որը կամովին նախընտրել էր կայսեր ծառայել. սուլթանը թշնամաբար էր տրամադրված իր նկատմամբ՝ ինչ-որ զանցանքի մեջ էր մեղադրում և նրա դեմ զորահրամանատարի գլխալորությամբ զորք էր ուղարկել բոլոր միջոցներով նրան բռնելու: Ահա դրանից սարսափած թուրքը ապաստանեց կայսեր մոտ և ինչույն պրոեգրոսի աստիճանին արժանացավ: Նա երիտասարդ էր, գաճաճ հասակով, սկյութական տգեղ դեմքով: Կայսրը հույս ուներ, որ իր առաջիկա արշավանքի ժամանակ նա իրեն կհամադործակցի ընդդեմ թուրքերի:

1071 Կայսրը զորահավաք անելով, գարնան սկզբին նավեց էրիոն ապարանքը, ուր հասավ հենց Ուղղափառության [տոնի] օրը<sup>720</sup>. Նախորդ օրը նա զորքին ու սենատին բաժանել էր նրանց տարեկան ոռճիկը, բայց ոչ ամբողջությամբ ոսկով, պակասող մասը նա համալրեց մետաքսե գործվածքներով: Նավելիս ոչ սսլիտակ, ավելի սև գույնի մի աղավնի ինչ-որ տեղից թռչելով ճախրում էր կայսեր տրիերայի շուրջ մինչև որ իջավ ու կանգնեց նրա ձեռքերին: Կայսրը աղավնուն կայսրուհուն ուղարկեց,



որ հակառակ սովորության պալատում էր մնացել՝ կանացի ինչ-որ թուլության, կամ նազուտուզի պատճառով: Աղավնին շարագուշակ համարվեց և՛ ուղարկողի, և՛ ստացողի համար: Կայսրուհին, որի թուլությունը շինծու էր, զղջացած գնաց կայսեր մոտ նրան բարի ճանապարհ մաղթելու և ճանապարհելու: Կայսրը այնտեղից դուրս գալով, խարիսխ գցեց ո՛չ նեակոմեում, ո՛չ էլ ինչ-որ կոնսուլար կամ կայսերական վայրերում, այլ Հելենուպոլսում, որին տեղացիները ռամկորեն էլեյնուպոլիս<sup>721</sup> են անվանում: Սա էլ վատ նշան համարվեց: Մի ուրիշ բան էլ պատահեց. կայսերական վրանը պահող հսկա գերանը ջարդվեց և վրանը հանկարծակի գետին տապալվեց: Բայց մարդկանց տրիմարությունն ու վատությունը թույլ չտվեցին, որ այդ նշանների մեջ տեսնեն իրենց ծայրահեղ անհավատությունը, նրանց թվում էր, թե ջերմեռանդ են հավատքի հարցերում, ճակատագիրն էր ամենուր խոչընդոտ կանգնում, թույլ չէր տալիս կռահել անգամ, թե ինչ օրի են ընկնելու: Կայսրը շարժվեց առաջ, դեպի արևելք և հասավ Անատոլիկոն նահանգը, բոլորի հանդեպ ցուցաբերելով անտեղի ժլատություն: Նկատելով, որ անդադրում նախանշաններն իրեն են վերաբերում, նա տեղավորվեց ո՛չ վրանում, ո՛չ էլ բաց դաշտում, այլ բլուրների վրա և տնակներում: Բայց այնտեղ էլ պակաս վատ նշաններ չեղան: Զգիտես ինչպես այն տների մեջ, որտեղ կայսրը ապավինեց, հրդեհ բռնկվեց ու ավերակ դարձրեց. նրանց հետ կրակի զոհ դարձան նաև այնտեղ գտնվող ձիերը, կայսերական էֆեստրիսները<sup>722</sup>, արտասովոր սանձերը: Բոլորը կարճ ժամանակում հրո ճարակ դարձան: Բանակած զինվորները ականատես եղան կիսակեզ եղած ձիերի սարսափելի տեսարանին: Ցումպոս կոչվող կամրջի վրայով անցնելով Սանգարիոս գետը, որի մոտիկ վայրում տեղի ունեցավ վերոհիշյալ դեպքը, կայսրը սկսեց հավաքել թշնամիների հարձակման պատճառով ցիրուցան եղած իր զորքերը: Նրանցից ընտրելով ինչքան որ ցանկացավ, մնացածներին՝ զինվորներին ու լոխագոսներին ճամփու դրեց, զինվորներին որպես անցյալում կրած պարտություններից ջախջախված, իսկ լոխագոսներին էլ, որովհետև վախենում էր նրանց իր հետ տանել, որպես ախոյանների<sup>723</sup> կողմնակիցների: Նրանի թե այդ բանը բոլորի նկատմամբ կատարվեր: Ճիշտ է, անհնարին է փախչել աստծո սահմանածից, խուսափել պատրաստված բաժակից, բայց այնուամենայնիվ նա ճիշտ արած կլիներ: Թեև նիկեփոր Բոտանիատե-



սին<sup>724</sup> և մի քանի նրա նմանների, որպես կասկածելիների, հեռացրեց, բայց նենգությամբ ու վատաբարոյությամբ լի մարդկանց իր հետ տարավ, սրանց մասին դեռ ասվելու է: Իսկ նա, իր գլխին գալիք փորձանքին անտեղյակ, այդպես շարժվեց առաջ, զորքն անցկացրեց Ալիս կոչված գետը, իսկ ինքը մնաց ու օթևանեց իր կողմից կառուցված մի նորաշեն բերդում: Այնուհետև ինքն էլ անցավ բաժանող գետը և մյուս զինվորների հետ դասավորվեց սեփական տիրույթներում: Անցնելով կեսարացվոց [բաղաբը], նա հասավ Պաղ Աղբյուր<sup>725</sup> կոչվող վայրը, որը զորք ընդունելու համար շատ հարմար էր, այնտեղ առատորեն կային ամեն տեսակի մթերքներ և իր բազմազան կարողությունների շնորհիվ հայտնի է և՛ որպես քաղաքագյուղ, և՛ գյուղաքաղաք: Զինվորները թալանում ու ավերում էին շրջանը, որի համար ավելի անողոքբար պատժեցին նեմիցների տաղմայից ոմանց: Դրանից վրդովված, նրանք խռովություն բարձրացրին: Երբ այդ բանն իմացվեց, կայսրը ձի նստեց և զորք հավաքելով, օտարերկրացիներին ճնշեց ու վերստին դաշնակից դարձրեց: Նրանց կրած միակ պատիժն այն էր, որ նրանց, ովքեր մինչ այդ իրեն մոտիկ էին կանգնած և թիկնապահների թվում, այժմ [զորաշարքում] ամենից վերջում կանգնեցրեց: Այնտեղից նա շտապելով Իբերիա հասնել, գնաց Սեբաստիա, որտեղ ականատես եղավ կուրապաղատ Մանուիլ Կոմնենոսի ընկած զինվորների դիակներին: Այնտեղից ոտքով, առանց շտապելու նա հասավ Թեոդոսուպոլիս<sup>726</sup>, որն անցյալում երեսի վրա էր թողնված, բայց այն ժամանակվանից, երբ պաշարման ենթարկվեց Արծնը, վերակառուցվել էր ու ամրացվել: Այստեղ կայսրը նկատի ունենալով, որ գնալու են անմարդաբնակ ու ավերակ դարձած երկրի միջով, կարգադրեց վերցնել յուրաքանչյուր զինվորի համար երկու ամսվա պարեն: Երբ բոլորը կատարեցին կարգադրությունը, վարձկան ուղերին ու ֆրանկներին քաջ ու պատերազմող Ռուսելիոսի<sup>727</sup> զխավորությամբ նա ուղարկեց դեպի իլաթ՝ անասունների համար կեր հայթայթելու: Այդ բանը նա դրանից առաջ էլ էր արել: Կայսրը նրա ետևից գնալով, հասավ Մանծկերտ<sup>728</sup>, հռոմեական մի քաղաք, որը, սակայն, նախապես գրավվել էր սուլթանի կողմից<sup>729</sup>, այնտեղ թուրքեր էին հաստատվել<sup>730</sup>: [Կայսրը] արհամարհեց նրանց՝ վերջիններիս փոքրաթվությունը նկատի ունենալով, և բանակից մի ուրիշ, բավականին մեծ զորամաս առանձնացնելով, հանձնեց մա-

գիստրոս Հովսեփ Տարխանիոտեսին, ինչպես և զգալի քանակությամբ հետևակայինների մի զորաբաժին և հեծյալների լավագույն ու մարտունակ մասը, որ պատերազմներում միշտ առաջինն էր իրեն կրակի մեջ գցում ու առաջամարտիկ լինում: Տարխանիոտեսը ելավ գնաց Խլաթ<sup>731</sup> ուղերին, ֆրանկներին և ողջ վարձկան զորքին օգնության, քանզի կայսրը լսել էր, որ նրանց դեմ [թուրքերի] բյուրավոր զորք է շարժվում: Կայսրը զորքը մաս-մաս արեց, հուսալով շտապ Մանձկերտ հասնել (ինչ որ եղավ), և օգնել Խլաթում գտնվողներին, եթե անհրաժեշտություն զգացվի, անհապաղ նրանց կանչել (զորքերը մոտիկ տեղում էին վրաններ խփել), քանզի լսել էր, որ սուլթանը շտապում է իր դեմ: Թեև զորքի մասնատումը անխոհեմ քայլ չէր, ռազմագիտական առումով էլ ոչ անիմաստ<sup>732</sup>, բայց ճակատագիրը, ավելի ճիշտ՝ աստծո ցասումը, կամ էլ մեզ համար անիմանալի ինչ-որ պատճառ հակառակ արդյունքի բերեց և՛ զործի ելքի առումով, և՛ զորքերի անհապաղ միացման հարցում, և այն բանում, որ նրան թուրքերի սուլթան կարգեց և արգելք հանդիսացավ, որ իրականություն դառնա այն, ինչ ակընկալվում էր: Կայսրը առավ Մանձկերտը<sup>733</sup>. Թուրքերն ապշել ու սարսափել էին նրա գալստյան առթիվ: Նրանք երաշխիքներ խնդրեցին և ստանալով [տվեցին քաղաքը]<sup>734</sup>: Այստեղ մի հոռմայեցու քիթը կտրեցին այն պատճառով, որ նա թուրքի քուռակ էր խլել, իսկ կայսրը ուզեց իր տված երդման տեր կանգնած լինել (նա երդվել էր աստվածածնի և Քրիստոսի անվամբ, բոլոր սրբերի միջնորդությամբ): Այն միջոցին, երբ կայսրն այստեղ զորքը շարք էր կանգնեցնում, թուրքական մի մեծաթիվ զորամաս հարձակվեց ավարի գուրս եկած հոռմայեցի զինվորների վրա: Կայսրը ենթադրելով, որ [զինական] ուժով սուլթանի ինչ-որ հրամանատար է հասել և նեղում է դեսուդեն ցրված կայսերական զինվորներին, նրանց դեմ բավարար զորքով մագիստրոս Նիկեփոր Բրիեննիոսին ուղարկեց, որը բախվելով նրանց, թեև տեղի չտվեց, բայց իր զինվորներից շատերը վիրավորվեցին, դրանցից ոչ պակասն էլ սպանվեց: Այս [թուրքերը] մեր իմացածներից ավելի հզոր երևացին, սրանք ավելի հանդուգն էին բախվում՝ մոտիկ մարտ մղելու զենքերով: Ահա սարսափահար եղած Բրիեննիոսը կայսրից օգնություն էր խնդրում: Կայսրը պարսավեց նրան վախկոտության համար (իրականությունը նա տեղյակ չէր) և ժողով գումարելով ճառագիտեց պատերազմի



շուրջ, ի միջի այլոց, ավելի խիստ խոսքեր էլ ասաց: Այդ միջոցին քահանան էլ արտասանեց ավետարանի ընթերցվածը: Մանրամասնությունները մի կողմ թողած, ավետարանում հետևյալն էր ասված. «Եթէ զիս հալածեցին, ապա և զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա և զձերն պահեսցեն» մինչև «համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ» խոսքը: Ավելի խոհեմները հենց սրա վրա կանգ առնելով, գտան, որ գա ճշմարիտ է և աստվածահաճո: Մարտի թեժ պահին կայսրը ուղարկեց նաև Թեոդոսուպոլսի դուքս մագիստրոս Նիկեփոր Վասիլակին, բնիկ զորքերով<sup>735</sup>: Բրիեհնիոսը օգնություն ստանալուց հետո որոշ ժամանակ կռիվը հեռամարտության բնույթ էր կրում և հավասար էր, իսկ ելքը՝ անորոշ: Երբ զինվորները համաձայնվեցին զորավարների ետևից գնալ, նա խոստացավ նախամարտիկ լինել և սկսեց հետապնդել փախուստի դիմող հակառակորդներին: Երբ Բրիեհնիոսը իր զինվորներին հրաման տվեց քաշել սանձերը, Վասիլակը այդ բանին անտեղյակ, շարունակում էր միայնակ հալածել: Երբ նա մոտեցավ հակառակորդների խարաքսին, ձին գետին տապալվեց իր հետ գլորելով նաև ծանր զենքեր կրող [Վասիլակին]: Թշնամիները վրան թափվեցին, գերի վերցրին և կապելով սուլթանի մոտ տարան<sup>736</sup>: Նա նրան ներկայացավ ո՛չ որպես արդեն ստրուկ դարձած, ո՛չ էլ որպես ռազմագերի տարված: Նա սուլթանին հնազանդություն հայտնեց, սուլթանն էլ իր հերթին նրան շվերաբերվեց ինչպես ստրկի կամ ռազմագերու, այլ շարունակ իր մոտ կանչելով, կայսեր մասին հարցեր էր տալիս, ցուցադրում սեփական հզորությունը և ահ ու սարսափ սփռում: Վասիլակը թեև դրվատում էր ու գովաբանում նրա ամեն ինչը, բայց խորհուրդ չէր տալիս հռոմայեցիների կայսեր դեմ մարտի դուրս գալ, համարելով դա ոչ ձեռնտու: [Վասիլակի] մասին ահա այսքան: Իսկ կայսրն ստիպված մնացած զորքով դուրս եկավ անձամբ տեսնելու տեղի ունեցածը: Նա մինչև երեկո ինչ-որ բլուրների վրա կանգնած մնաց, և տեսնելով, որ ընդդիմակայող չկա, վերադարձավ ճամբարը: Թուրքերն իսկույն խուժեցին և նետաձգություն մեծապես ահաբեկեցին, եռանդ թափեցին մուտք գործել խարաքսի մեջ: Այս բոլորը տեղի էր ունենում անլուսին գիշերը և հնարավոր չէր զանազանել օտարին ծանոթից, փախուստի դիմողներին՝ հալածողներից: Թուրքերն ամբողջ գիշեր հռոմայեցիների

Ճամբարը պատեցին խառնափնթոր հաշոցներով, այնպես որ բուրն էլ ստիպված եղան արթուն մնալ ու աչք շփակել: Առավոտյան ուղական մի զորամաս, որի հրամանատարն էր Թոռնիկ Կոտերղին ստորադաս Տամես անունով մի սկյուիթ, հակառակորդների կողմն անցավ<sup>737</sup>: Դա սարսափի մեջ դրեց հռոմայեցիներին, քանզի նրանք կասկածեցին, որ մնացած այլազգիներն էլ թշնամաբար են տրամադրված: Հետևակայիներից ոմանք դուրս գալով նետ ու աղեղով և մոտիկից մարտնչելու զենքերով թուրքերից շատերին սպանեցին և ստիպեցին հեռա՛յալ ճամբարից: Կայսրը հլաթ սուրհանդակներ ուղարկեց և այնտեղի հրամանատարներին կանչեց ժամանեն իրենց ուժերով: Նա ցանկանում էր հենց այստեղ՝ ճակատամարտում վճռել հարցը: Նրանց օգնությանն սպասելով (նրանք պատերազմի փորձ ունեցող ռազմիկներ էին) նա իզուր ժամավաճառ էր լինում: Երբ նրանցից օգնություն սաանալու հույսը կտրեց, ելթադրելով, որ ինչ-որ բան խոչընդոտում է դրան, որոշեց իր առկա ուժերով մահու և կենաց ճակատամարտ տալ<sup>738</sup>: [Կայսրը] տեղյակ չէր, որ Տարխանիոտեսը, իմանալով սուլթանի ժամանման և նրա՝ կայսեր դեմ շարժվելու մասին, իր ողջ զորքերը վերցնելով, Միջագետքի վրայով հռոմայեցիների երկիրն է մտել, համոզել [նույն բանն անել] նաև կայսեր միանալու ցանկությունն ունեցող Ռուսելիոսին. կայսեր և ոչ մի հրամանը այդ խայտառակը բանի տեղ չգրեց: Կայսրն իր վճռի համաձայն վաղվա ճակատամարտի համար պատրաստություն տեսավ, դեռևս գտնվելով կայսերական վրանում, [ճակատամարտի] մասին կարգադրություններ արեց: Նա իր մոտ ծառայող սկյուիթներին, այն է՝ ուզերին, իրենց կրոնին հատուկ երդումներով երդվեցնելով, նրանցից սպասված վտանգից ձերբազատվեց<sup>739</sup> և նրանց [հավատարմությունն] ապահովեց: Այդ ընթացքում, երբ զինվորները զենքերն առած ձի էին նստում ու շարվում ըստ տաքսիսների ու լոխոսների, սուլթանի դեսպանները ժամանեցին՝ երկու կողմերի միջև խաղաղություն հաստատելու կոչով<sup>740</sup>: Կայսրն ընդունեց նրանց ոչ շատ մարդասիրաբար, թեև դիմեց այն խոսքերով, ինչ ընդունված է ասել դեսպաններին: Նա հավանություն տվեց [սուլթանի կոչին], դեսպաններին մի խաչ տվեց, որպեսզի հռոմայեցիներին այն ցույց տալով, անվտանգ վերադառնան իր՝ կայսեր մոտ, բերելով սուլթանի պատասխանը: Կայսրը սուլթանի ահապասելի առաջարկն ստանալով, փքվեց, նրանից արդեն պահանջում



էր հեռանալ իր ճամբարից, ավելի հեռու տեղում բանակել, իսկ կայսրը իր խարաքսը հաստատի այն տեղում, որտեղ նախապես սուլթանն էր բանակել, որից հետո նա համաձայնվում էր նրա հետ բանակցութիւններ վարել: Բայց հակառակորդների նկատմամբ ցուցաբերած իր մեծամտությամբ, ինչպես ասում են այդ հարցերում գիտակ մարդիկ, նա ձեռքից բաց թողեց հաղթանակը, քանզի [սուլթանին] ուղարկեց ամենահաղթ խաչի նշանը: Դեռ հարցը չլուծված և դեսպանները չվերադարձած, կայսեր ամենամտերիմ մարդիկ նրան խորհուրդ տվեցին ձեռք քաշել խաղաղութիւնից՝ որպես անիրական ու ավելի մոլորութեան մեջ գցող, քան օգուտ բերող: Նրանք կասկածում էին, որ սուլթանը, ըստ երևույթին բավարար դորքեր չունի և սպասելով օժանդակ ուժերի, ժամանակ է ուզում շահել՝ խաղաղութեան պատրվակի տակ: Երբ դեսպանները վերադարձան իրենց տեղը և սուլթանի մարդիկ խորհրդակցում էին խաղաղութեան շուրջը, ամբողջութեամբ այդ հարցով էին կլանված, կայսրը առանց պատերազմ հայտարարելու, պատերազմական փողերը հնչեցրեց և անսպասելիորեն մարտ տվեց: Այդ լուրը ապշեցրեց հակառակորդներին, որոնք էլ իրենց հերթին զինվելով, անմարտունակ ամբոխը ետ ուղարկեցին, իրենք էլ նրանց ետևից՝ կազմակերպված ռազմաշարքի տպավորութիւն ստեղծելով: Բայց իրականում նրանք փախուստի էին դիմում՝ տեսնելով հռոմեական փաղանգների կարգն ու կանոնը, ռազմական հոյակապ զորաշարքերը: [Թուրքերն ահա] նահանջի ճամփան բռնեցին, իսկ կայսրն ամբողջ զորքով սկսեց նրանց հետապնդել, մինչև վրա հասավ ուշ երեկոն: Երբ կայսրը տեսավ, որ իր դեմ շարված ու մարտնչող զորք չկա, ապա և գիտենալով, որ իր բանակած տեղում շատ քիչ զինվորներ են մնացել ու սլահապան հեռուակայիններ, ինքն էլ բավարար քանակութեամբ զորք չունեի, որ ճամբարում թողներ, տազմաներն արդեն նոսրացել էին, որոշեց այլևս շարունակել հետապնդումը, որպեսզի թուրքերը հարձակում չգործեն անպաշտպան մնացած [ճամբարի] վրա: Բացի այդ, նա մտածում էր, որ եթե ավելի շատ հեռանա, վրա կհասնի գիշերը և այս անգամ թուրքերը կանցնեն հարձակման՝ լինելով հմուտ նետածիգներ: Այդ նկատառումներով ահա նա ետ բերել տվեց կայսերական դրոշը, կարգադրելով հիշել վերադարձի մասին: Առաջ ընկած զինվորների փաղանգները տեսնելով ետ տարվող դրոշները, ենթադրեցին, որ կայսրը պարտութիւն է կրել: Բայց ա-

վելի շուտ իր ախոյաններին մեկը՝ կեսարի որդի Անդրոնիկոսը՝ կայսրերի<sup>741</sup> հորեղբորորդին, դավադրություն նյութած լինելով, ինքը տարածեց այդ լուրը և իր ղինվորներին առնելով, շտապ կարդով վերադարձավ ճամբար: Մնացածներն էլ նրա օրինակին հետևելով, մեկ առ մեկ առանց մարտի բռնվելու, փախուստի դիմեցին: Կայսրը այդ տարօրինակ դեպքերին ականատես լինելով, բնական է, հրաման տվեց իր ղինվորներին կանգնել, բայց իրեն լսող չկար: Բլրի վրա կանգնած հակառակորդները, հանկարծ տեսնելով արտասովոր դեպքը, հոռմայեցիների գլխին եկած անսպասելի փորձանքը, իրենց տեսածը շուտափույթ հաղորդում են սուլթանին և շտապեցնում նրան վերադառնալ: Նա ևս փախուստի էր դիմել և սեփական բանակատեղից հեռու էր

19—VIII գտնվում: Նա իսկույն վերադարձավ և կայսրը ճակատամարտի —1071 բռնվեց: Նա կոչ արեց իր ղինվորներին շընկրկել, թուլամորթություն հանդես չբերել, իսկական տղամարդու պես կռվել: Նա էրկար քաջաբար մաբտնչեց: Այդ ընթացքում ուրիշներն էլ փախան, ողողեցին խարաքսից դուրս ընկած տարածությունը: ոչ մի խելքը գլխին բան չէր լսվում, ամեն մեկը մի բան էր ասում, ոմանք պարտության մասին էին խոսում, ուրիշները՝ հաղթանակի, անկապ ու խառնափնթոր բաներ պատմում, մինչև որ կասյագովկացիներից էլ ոմանք սկսեցին այստեղ վերադառնալ իրենց խմբերով ու ջոկատներով: [Ճամբար] էին վերադառնում նաև կայսերական ձիապաններից շատերը՝ ձիերով հանդերձ, պատճառաբանելով, թե կայսեր չեն տեսել: Կարծես երկրաշարժ լիներ, աննկարագրելի ողբ ու սարսափ, թուրքերն էլ ամեն կողմից վրա էին թափվում: Եվ [հոռմայեցիներից] յուրաքանչյուրն իր կարողության շափ սեփական անձի փրկության մասին էր մտածում: Հակառակորդները, հետապնդելով նրանց, ոմանց կոտորում էին, ոմանց՝ գերեվարում, ուրիշներին էլ ոտնատակ անում: Վիճակը շատ էր եղեռական, գերողբալի ու գերկոծելի: Շրջապատելով կայսեր, թշնամիները նրան հեշտությամբ և իսկույն շըռնեցին: Լինելով ռազմական ու պատերազմական գործերին գիտակ, նա համառորեն երկար մարտնչեց, քաջաբար պաշտպանվեց, շատերին սպանեց, բայց վերջիվերջո ձեռքին թրի հարված ստացավ, բացի այդ ձին էլ նիզակահար էր եղել և նա ստիպված հետիոտն էր կռվում: Նա ուժասպառ եղավ և երկույան մոտ արդեն դժվար չէր նրան գերել: Ավա՛ղ դժբախտություն, հոռմայեցիների հռչակավոր կայսրը գերվեց<sup>742</sup>: Այդ զի-



շերը նա շատերի նման անարգորեն ու ցավատանջ գետնին պառկած անցկացրեց, կսկծալի բյուրավոր կոհակներով ողողված: Հաջորդ օրը, երբ սուլթանին հայտնեցին, որ ի միջի այլոց կայսեր էլ են գերի վերցրել, նրան անհատնում ուրախություն ու կասկած պատեց, մտածելով, որ գա իսկպպես շատ մեծ, հսկայական բան է, գա այգպես էլ էր, նա չէր հավատում, որ այդքան մեծ ու այդպիսի [հզոր] բանակ պարտության մատնելուց բացի, հենց իրեն կայսրին է գերի վերցրել ու ենթարկել: Բայց եղելությանը նա մարդկայնորեն վերաբերվեց, հաղթանակով չգոռոզացավ, հաջողության առթիվ նա ավելի շուտ իրեն ճնշված զգաց և բարեհոգություն, բարությամբ լի բարբեր ցույց տված լինելու համար, ամեն ինչ վերադրեց աստծուն, քանզի իր կարողություններից վեր եղող հաղթանակ է ձեռք բերել: Այդ էլ պատճառը, որ երբ հոռմայեցիների կայսրը հասարակ, զինվորական զգեստներ հագած բերվեց սուլթան Արսլանի մոտ, նա չհավատաց և նրա [իսկության] մասին վկայություն էր պահանջում: Երբ այդ բանը հաստատեցին և՛ դեսպանները, և՛ Վասիլակը, որը կայսեր ոտքերին ընկնելով եղկելիորեն կոծեց, խոսքանը մոլեգնորեն գահից ելավ ու կանգնեց: Երբ [կայսրին] նրա ոտքերին բերեցին, [սուլթանը], սովորության համաձայն ոտքը դրեց նրա վրա, ապա կանգնեցնելով, նրան ողջագուրեց ու ասաց. «Ո՛վ կայսր, մի՛ վախեցիր, վստահ եղի՛ր, որ մարմնական և ոչ մի վնաս չես կրի, քո բարձր դիրքի համեմատ պատիվների կարժանանաս: Ես տխմար եմ համարում նրան, ով հաշվի չի նստում բախտի փոփոխականության հետ և չի երկյուղում դրանից»: Նա կարգադրեց կայսեր համար վրան հատկացնեն, նրան վայել սպասավորություն անեն և այսուհետև իր սեղանակիցն ու համակիցը դարձրեց, նստեցնելով ոչ թե ինչ-որ տեղում, այլ հենց իր գահին կից, ընտրանիի շարքին և այդ ընտրանիին հավասար պատիվների արժանացրեց: Նա օրը երկու անգամ նրա հետ էր լինում, նրա հետ զրուցում ու մխիթարող խոսքերով սրտապնդում: Նա ութ օր այգպես զրուցեց նրա հետ ու սեղանակիցը դարձավ, մինչև անգամ հարբած վիճակում մի քանի խոսքով հիշեցրեց իր կարծիքով մի քանի սխալների մասին, որ [կայսրը] թույլ էր տվել զորքը արշավանքի առաջնորդելիս: Օրերից մի օր սուլթանը հարց տվեց կայսեր, թե՛ «Դու ի՞նչ կանեիր, եթե ինձ գերի վերցնեիր»: Նրան կայսրը միանգամայն անկեղծ, առանց հաճոյախոսելու ասաց. «Իմացի՛ր,

բաղում հարվածներով կանշնչացնեի մարմինդ»: «Ես սակայն, — ասաց սուլթանը, — չեմ լինի քեզ պես խիստ ու դաժան: Բայց լսել եմ, որ ձեր Քրիստոսը խաղաղություն է ձեզ քարոզել, անհիշաչարություն, որ նա հակառակ է ամբարտավաններին, խոնարհներին շնորհ պարգևող»<sup>743</sup>: Այնուհետև նրանք հաշտություն կնքեցին, երկարատև խաղաղություն և խնամիական կապեր հաստատեցին, ի սկզբանե անտի որոշված յուրաքանչյուր տերության իրավունքները, բարիդրացիական հարաբերություններ, որ այսուհետև թուրքերը հռոմեական տերության սահմաններում ոչ մի ասպատակություն չեն կատարելու, ետ են վերադառնալու բոլոր նրանք, ովքեր երբևիցե հռոմայեցիների երկիր էին ուղարկվել, պիտի վերադարձվեն բոլոր դերինները, հատկապես զերի ընկած հռոմայեցիների մեծամեծներն ու ընտրանին: Կայսրը սուլթանին առատ նվերներ խոստացավ: Այն ժամանակները [պատերազմում] սպանվեցին լևոն էպի տոն դեխեոնը<sup>744</sup>, մագիստրոս Եվստատիոսը և պրոտասեկրետ Նիրոսֆակտեսը, իսկ պրոտովեստիարիոս Վասիլ Մալեսիսը գերվեց<sup>745</sup>:

Ամեն ինչ ահա այդպես կատարվելուց և համաձայնություն կնքվելուց հետո, սուլթանը ողջագուրվելով կայսեր, ճամփու դրեց և որպես պատվի նշան, իր դեսպաններին տվեց նրան ուղեկցելու: Մանծկերտը հռոմայեցիների ձեռքում էր գտնվում: Երբ կայսրը այլ ճանապարհով վերադարձավ [Մանծկերտ], այնտեղի հռոմայեցիները գիշեր ժամանակ թողեցին հեռացան, բայց հանդիպելով թշնամիների, վտանգի ենթարկվեցին: Կայսրը թուրքական հանդերձ հագած հասավ Թեոդոսուպոլիս և ջերմ ընդունելության արժանացավ: Նա մի քանի օր այնտեղ մնաց, հոգ տարավ ձեռքը բուժել և իրեն կարգի բերել, ինչքան հնարավոր էր ավելի հռոմեական տեսք ընդունել: Այնտեղից նա գնաց իբերական գյուղերը, իր հետ էին նաև սուլթանի դեսպանները<sup>746</sup>, այնտեղից էլ հենց Կոլոնիա: Երբ հասավ Մելիսսոպետրիոն<sup>747</sup>, Եղեսիայի կատապան պրոեդրոս Պետրոսը<sup>748</sup>, գիշերով լքեց նրան ու փախավ Կոստանդնուպոլիս, քանզի արդեն տեղյակ էր այնտեղ կատարված խարդավանքների մասին: Կեսար Հովհաննեսն ու նրա որդիները, ինչպես և համախոհ սենատորները կայսրուհուն բռնի խուզել և աքսոր էին ուղարկել, իր՝ կայսրուհուն հիմնադրած Պիպերուդիոն կոչվող վանքը, իսկ Միքայելին միահեծան ինքնակալ հռչակելով, ամենուրեք կարգադրություններ էին ուղարկել՝ շընդունել վերադարձող [Դիոգենես]



կայսեր, ոչ էլ որպես կայսր պատվել: [Դիոգենեսին] առաջինը գահընկեց հայտարարեց փիլիսոփաների հյուպատոս Պսելլոսը, այգ մասին նա հոխորտում է իր գրվածքներից մեկում: Պատմում են, որ հենց ինքը՝ կայսրուհին էլ նույն նպատակն ուներ՝ շնորհունել վերադարձող Դիոգենեսին: Այդ լուրը կայծակի արագությամբ հասավ Դիոգենեսին, նա իմացավ. որ ինքը բոլորի կողմից գահընկեց է հայտարարված, որի վրա տիրացավ Դոկիա կոչվող բերդին<sup>49</sup> և բանակեց այնտեղ:

Կեսարը թագավորության գործերն իր կարծիքով լավագույն ձևով ամրապնդելով, [իր] որդիներից ամենակրտսերին՝ պրոեդրոս Կոստանդին հզոր զինական ուժով Դիոգենեսի դեմ ուղարկեց, որը, սակայն, հանդիպելով Դիոգենեսին Դոկիայում, վախենում էր պատերազմ սկսել: Դիոգենեսը, տեսնելով, որ Կոստանդինն իրենից հզոր է, այնտեղից ելավ եկավ Կապադովկիա: Այդ միջոցին Կոստանդինն միացավ ֆրանկների մի բազմություն<sup>50</sup>, ապա և հենց ինքը՝ Կրիսպինոսը՝ իր ազգակիցների հետ. սրան անցյալում Դիոգենեսը Աբյուղոս էր աքսորել: [Դիոգենեսը] նրանց դեմ ուղարկեց Թեոդորոս Ալիատեսին, քաջ ու նշանավոր, զարմանալի հասակ ու արտաքին ունեցող մի մարդու: Կոստանդինի զինվորները քաջաբար կռվելով, պարտության մատնեցին Ալիատեսի զինվորներին, ինքը Ալիատեսն էլ գերի ընկնելով՝ կուրացվեց վրանի երկաթե ցցերով: Դիոգենեսը կատարվածից վշտահար մտավ Կապադովկիա, ամեն տեղից կանչելով իր զինվորներին: Ինքը մնում էր Տիրոպիոսում<sup>51</sup>. սա գառիթափ տեղում կառուցված մի շատ ամուր բերդ է: Կոստանդինը Դիոգենեսի դեմ դաշնակցելու կոչ արեց նաև Անտիոքի դուքս հաշատուրին<sup>52</sup>, բայց նա մերժեց, քանզի Դիոգենեսի կողմն էր անցել: Դիոգենեսը վերցնելով հաշատուրին, գալիս է Կիլիկիա, որտեղ սպասում էր սուլթանի օգնության, միաժամանակ մտադիր լինելով այնտեղ ձմեռել՝ Կիլիկիայում ավելի տաք լինելու պատճառով: Այստեղ նա դարձյալ զբաղվեց գորք հավաքելու գործով: Իսկ Կոստանդինը Դիոգենեսի հեռանալուց հետո Բյուզանդիոն վերադարձավ: Նրա փոխարեն Դիոգենեսի դեմ ուղարկվեց կեսարի որդի պրոեդրոս Անդրոնիկոսը: Նա զինվորներին ոռճիկ բաժանելուց հետո, Պողանդոսի կլեյսուրով հասնում է Կիլիկիա, որտեղ նրան ընդդիմակայում է հաշատուրը, բայց մի փոքր մարտնչելուց հետո գերվում<sup>53</sup> է Անդրոնիկոսի զինվորների կողմից: Մնացածները վախշում են Ադանա, Դիոգենեսն

այնտեղ էր գտնվում: Անդրոնիկոսը պաշարման է ենթարկում քաղաքը: Համաձայնություն է կնքվում, որով Դիոգենեսը հրաժարվում է թագավորությունից և մազերը խուզելով մասնավոր կյանք է վարելու, որից հետո նա սևեր հագած, իր բախտը ողբալով, բերգից գուրս է գալիս<sup>754</sup>, Անդրոնիկոսն իսկույն որոշում է վերագառնալ և սևազգեստ Դիոգենեսին հասարակ կառքով տանում էր այն գյուղերով ու քաղաքներով, որտեղ նրան անցյալում աստվածացնում էին: Մինչև Կոտիեոն<sup>755</sup> նա ցավատանջ ճամփա անցավ (նա աղիքային հիվանդությունից էր տառապում, նրան շարանենգորեն թույն էին խմացրել), ուր կանգ առան, սպասելով նրա նկատմամբ կայսեր վճռին: Օրեր անց տեղ հասավ իր կամքից անկախ դժբախտացածին կուրացնելու վճիռը: Տեղն ու տեղը կուրացվում է նա, իսկ այն [միջնորդ] եպիսկոպոսները, որոնք ուղարկվել էին [Դիոգենեսին] ներման համար միջնորդելու, ոչ մի օգնություն չցուցաբերեցին: Նրանք էին՝ Քաղկեզոնի եպիսկոպոսը, Հերակլիայի եպիսկոպոսը և Կոլոնիայի [եպիսկոպոս] Թեոփիլոսը: Դիոգենեսը հիշեցնում էր նրանց՝ տված երգումների մասին, աստժո հատուցումը: [Եպիսկոպոսներն] ուզում էին օգնած լինել, բայց թույլ էին ու անկարող Դիոգենեսին կալանավորած արյունուշտ և դաժան մարգկանց նկատմամբ, որոնք անգթորեն ու տմարգորեն կուրացրին նրան: [Դիոգենեսը] այդ հասարակ կառքով բերվեց մինչև Պրոպոնտիս. նա նեխել էր, կարծես դիակ լիներ, փորած աչքերով ուռած գլխով ու երեսով՝ որդերով վխտացող ու զարշահոտ: Նա մի քանի օր ցավատանջ ապրեց, վախճանվելուց առաջ հոտեց և կյանքին հրաժեշտ տալով հողին հանձնվեց Պրոտե կղզում, որտեղ նա նոր վանք էր կառուցել: Նա թաղվեց շուքով իր կողակցի՝ կայսրուհի Եվգոկիայի կողմից, չլսված փորձությունների ու դժբախտությունների մասին հիշատակ թողնելով: Թեև նա մեծ դժբախտությունների հանդիպեց, սակայն շասաց ոչ մի ամբարիշտ ու վատ խոսք, նա գոհություն էր հայտնում [աստծուն] և իր գլխին եկածը հեղաբար տանում: Խոսք է տարածված, թե իր դեմ կատարվածը Միքայել կայսեր կամքին հակառակ էր, հետագայում նա այդ բանը երդումներով էր հաստատում, որ կեսարն է այդ մասին կարգադրություն տվել և ի կատար ածել՝ թաքուն ու գաղտնի: Այդ կայսրը մետրոպոլիտության իրավունք շնորհեց նազիանզոսի եպիսկոպոսության: Նա թագավորեց (մինչև իր գերվելը) երեք տարի և ութ ամիս:



## ՄԻՔԱՅԵԼ VII ԴՈՒԿԱՍ ՊԱՐԱՊԻՆԱԿԵՍ

[26 օգոստոս 1071—7 հունվար 1078 թթ.]

Միքայելն ահա այս կերպ ժառանգեց թագավորությունը: Նա բարեհամբույր էր երևում, իսկ երիտասարդների մեջ՝ ծեր՝ իր թուլամարմնությամբ, նստակեցությամբ ու փափկակեցությամբ: Այդ իսկ պատճառով հասարակաց գործերը տնօրինելու համար առաջ քաշեց Միդեի մետրոպոլիտ Հովհաննեսին, ներքինի, բայց գործունյա ու շատ հմուտ մի մարդու: Նա պրոտոսիինկելլոսների պրոտոպրոեդրոսն<sup>756</sup> էր, ամեն տեսակ առաքինություններով օժտված: Կայսեր արկղատությունը, հասարակաց գործերը վարելու նրա անկարողությունը, անշարժությունն ու անհմտությունն այս մարդու ընդունակությունը, փորձառությունն ու եռանդը ծածկում, պակասը լրացնում էր: Բայց՝ այս ցորենին էլ որոմ խառնվեց, Նիկեփոր անունով մի ներքինի, որին փաղաքշորեն Նիկեփորիցես էին անվանում, ծագումով Բուկելլարների [բանակաթեմից], խռովություն, մեքենայություններ նյութելու, խաղաղ ու անդորր ժամանակ փոթորիկ բարձրացնելու, անկւրգություններ ստեղծելու վարպետ մի մարդ: Նա Միքայելի մոտ սեկրետիկոսի պաշտոն էր վարել, աչքի ընկել իր վատթարությամբ ու խառնակչությամբ, վատություն հորինելու իր աղվեսությամբ: Նա նախանձով լցված լինելով իր պաշտոնակից [Միքայել Նիկոմեդացու] դեմ, կայսեր հուշեց, թե կայսրուհին շնության մեղք է գործել, և երկու անգամ Անտիոքի դուքս նշանակվելով, պատճառ դարձավ Ասորիքի բյուր տակնուվրայությունների ու անկարգությունների: Ամբաստանվելով, նա այնտեղ ձերբակալվեց ու մահվան դատապարտվեց: Որոշ ժամանակ նա, նախկինում երևելի այդ մարդը արգելափակված մնաց: Երբ Դիոգենեսը գահ բարձրացավ, նա մահից փրկվեց և մի ինչ-որ կղզի աքսորվեց, բայց դրամ խոստանալով, Հելլադայի և Հելլեսպոնտոսի դատավոր նշանակվեց և այնտեղ էր պաշտոնավարում: Միքայել կայսրը սրան հռոմայեցիների պետության գլխին փորձանք դառնալու համար կանչեց և լոգոթեմ<sup>757</sup> դարձրեց՝ հասարակաց գործերը տնօրինելու: Կայսրը, լինելով թույլ ու տատանվող, ընկնում էր նրա զառանցանքների ու կախարգանքների ցանցը, Միդեի մետրոպոլիտը հեռացվում է պաշտոնից, ամեն ինչ անցնում է [Նիկեփորիցեսի] ձեռքը, քանզի Միքայելը

երեխայական խաղ ու զվարճություններով էր տարված. փիլիսոփաների հյուպատոս Կոստանդին Պսելլոսը նրան դարձրել էր բոլոր գործերի համար անընդունակ ու անճարակ: [Նիկեփորիցեսը] հեռացրեց նաև կայսեր հորեղորը՝ կեսար Հովհաննեսին, այնպես արեց, որ նրա վրա զարմիկ-կայսրը կասկածանքով նայի: Մի խնայքով կայսեր ամենամոտիկ մարդկանց նա զրուպարտեց՝ համարեց իր [կայսեր] հանդեպ ծայրահեղ թշնամաբար տրամադրված, բոլորին օտարացրեց նրա համակրանքից և էրեխա ինքնակալին իր ձեռքում խաղալիք դարձրեց: Իսկական կայսերական էր համարվում այն հրամանը, որին հավանություն էր տվել այդ խարդավանողը: Սրանից էլ ահա սկիզբ առան ամենի ու արդար մարդկանց դեմ ամբաստանություններ ու նրանցից պահանջներ, անպարտավորներից՝ գանձումներ, վճիռներ, որոնք հօգուտ արդարության չէին, այլ ավելի շուտ պետության, ամբողջական ու մասնակի բռնագրավումներ, հաճախակի մեղադրանքներ, փաստաբանություններ պետական գանձարանի օգտին<sup>758</sup>, տուժողների ողբ ու կոծ, ունեցվածքից մերկացվողների անտանելի ու արտասովաշատ կական:

Դրությունն այսպիսին էր, երբ արևելքի գլխին աստվածասաստ բարկությունը թափվեց: Թուրքերը, տեսնելով, որ Դիոգենեսի հետ կնքված հաշտության պայմանները չիրագործվեցին և թղթի վրա մնացին, ապա նաև գազազած այն պատճառով, որ իրենք՝ թեև Դիոգենեսին որպես թշնամի, դերի վերցրին, բայց արժանացրին ամեն մի հոգատարության ու պատվի և սեփական պետության վրա վերստին հաստատեցին, իսկ իր հարազատները նրան վայրագորեն, որպես ռիսերիմ թշնամու վերաբերվեցին, այն ինչ իրենց՝ [թուրքերի] կողմից պետք էր նա կրեր նրա մտերիմներն ու ազգականները, խաղաղության օրենքները պաշտողները կատարեցին<sup>759</sup> ամենասարսափելի ու ցավատանջ մահվան ենթարկեցին (օտարներն էլ ծայր աստիճան տիրեցին [Դիոգենեսի] կրած բազում պատուհասների, անմխիթարելի փորձանքի համար) ամբողջ բազմությունը Պարսկաստանից դուրս գալով և ընդդիմակայողի բացակայությունից օգտվելով, արշավեցին հռոմեական բանակաթեմերի վրա և գլխովին ավարտեցին: Նրանք արդեն առաջվա պես չէին գործում, այստեղ ու այնտեղ ցրվելով իսկույն փախուստի դիմում, այլ նվաճածի վրա տիրություն անում: Կայսրը, լսելով այդ մասին, բավական մեծ զորք ոտքի հանեց, դրա զորավար նշանակեց Իսա-



հակ Կոմնեննոսին, որին որպես օգնություն տվեց նաև լատին Ռուսելիոսին՝ չորս հարյուր ֆրանկներից բաղկացած ֆրանկական սինտագմայով: Ամբողջ զորքը կենտրոնացավ Իկոնիոնում, բայց մի վեճի առնչությամբ, Ռուսելիոսը բացեիբաց ապստամբում է և ֆրանկներին առնելով, գնում այլ ճանապարհով, իր ենթականերին ցանկացածը կարգադրելով: Բարձրանալով Մելիտենե<sup>760</sup>, նա հանդիպում է թուրքերի և ընթացքից նրանց վրա հարձակվելով, հաղթանակ տանում: Մնացած զորքը շարժվում է դեպի Կեսարիա: Կոմնեննոսը որոշում է հակառակորդների վրա հարձակվել ընթացքից և գիշերով առաջ շարժվում, նպատակ ունենալով նրանց վրա խոյանալ, երբ նրանք դեռ անպատրաստ վիճակում են գտնվում, բայց իր հաշիվները ի դերև են դալիս, քանզի նրանք կազմ ու պատրաստ վիճակում էին գտնվում: Նըրանց հետ ակամայից մարտի բռնվելով, իսկույն պարտություն է կրում և դերի ընկնում: Թշնամու ձեռքն է ընկնում նաև խարաբսի ողջ հանդերձանքը, հոռոմայեցիներից շատերը սպանվում են, ոմանք գերի ընկնում, իսկ մի մասն էլ փրկվում է փախուստի գիմելով: Երբ եղելության լուրը հասավ կայսեր, նա կարծես տխրեց, բայց այնուամենայնիվ Նիկեփորի խրատով ձեռք չբաշեց քաղաքական անարդարություններից ու անօրեն բարքերից. զուրկ լինելով սեփական նկարագրից, կշռադատելու կարողությունից, հստակ մտքից, ստրկի նման կատարում էր այն, ինչ Նիփեփորն էր կարգադրում: Այդ ժամանակվանից սկսած ահա արևելքը ոտնատակ անող հագարացիներն առանց դադարի ամեն օր այն ավերում ու ասպատակում էին: Իսահակը մեծ փրկագնով գերությունից ազատվեց, իսկ կեսար Հովհաննեսը վերստին զորավար-ավտոկրատոր նշանակվելով, անցավ դիմացի ափը, գնաց մինչև Դորիլեոն, այնտեղից էլ դուրս դալով ավելի առաջ անցավ ու հասավ Յուսպոսի կամուրջը: Նախքան Սանգարիոս գետն անցնելը, շտապ կարգով Արմենիակների բանակաթեմից վրա է հասնում Ռուսելիոսը և այնտեղ բանակում: Կեսարը նրա մոտ մարդ ուղարկեց, իր անհնազանդությունն ու զանցանքի համար ներումն ու մեղքերի քավություն խոստացավ, եթե ձեռք քաշի իր նախկին մտադրություններից և ճանաչի սեփական տիրոջ: Բարբարոսը ապավինելով իր բազկի և իր [զինվորների] մեծաթվության վրա, ամբարտավանացավ, որով դեսպանությունը ձեռնունայն ետ վերադարձավ: Ամեն ինչ պատերազմի դաշտում պետք է լուծվեր: Կեսարը և նրա համադորավար Նիկեփոր Բո-

տանհատեսը մնացած բազմությամբ անցնելով զետր, տեղն ու տեղը Ռուսելիոսի հետ կովի են բռնվում: Հոռմայեցիները, շկարողանալով ընդդիմակայել ֆրանկների հարձակումը, դիտուվին փախուստի են դիմում: Կեսարը և այլ բազմաթիվ մարդիկ ընկան Ռուսելիոսի ձեռքը, միայն Բոտանհատեսին հաջողվեց փոքրաթիվ մարդկանցով փախուստի դիմել: Այս մեծ հաղթանակի առթիվ Ռուսելիոսի համբավը տարածվեց ու ծովացավ: Ռուսելիոսը բազում տառապանքներից ու անվերջ տանջանքների կոհակների հարվածներից հյուժված, շղթայակապ կեսարով շարժվեց ուղիղ Բյուզանդիոնի վրա: Այս անձնական դժբախտության և ֆրանկի ժամանման մասին կայսեր հայտնված լուրը բոլորին ապշեցրեց, [կայսեր] և մյուս բոլորին մեծ վհատություն ու տագնապ համակեց: Ռուսելիոսը իր հետ տանելով կեսարին և Դիոդենեսի հետ գերությունից հենց նոր ազատ արձակված Վասիլ Մալեսեսին, շարունակեց ճանապարհը և վրան խփեց Խրիսուպոլսում, կրակի տալով այնտեղի տները, բնակիչների մեծ լաց ու կոծի պատճառ դառնալով: Կայսրը, ջանալով մեղմել բարբարոսի հանդգնությունը, նրան կուրապաղատի աստիճան է խոստանում, ուղարկում նրա կնոջն ու երեխաներին: Բայց ծածուկ դիմում է նաև թուրքերին<sup>761</sup>, բազում խոստումներով համոզելով նրանց մարտնչել Ռուսելիոսի դեմ: Վերջինս, տեսնելով, որ ինքն ի վիճակի չէ ընդդիմակայելու այդպիսի բազմությանը, կեսարին կապանքներից ազատելով, կայսր է հռչակում, մեծագոչ ու ուժգնաձայն փառաբանություններով իշխանության կոչում: Երբ դեռ կեսարի կայսր հռչակելու համբավը չէր տարածվել, որի պատճառով զինվորներ էլ դեռ չէին անցել [նրա կողմը], հանկարծ Սոֆոն լեռան մոտից թուրքերի բազմություն երևաց՝ մոտավորապես հինգ, կամ վեց հազար հոգի: Ռուսելիոսը տեղն ու տեղը պատերազմի պատրաստություն տեսավ: Կեսարը և երևելիներից ոմանք ջանում էին զսպել նրան՝ նախապես իմանալու համար հարձակվողների թիվը: Ռուսելիոսը շհամաձայնվեց նրանց, նա մեծ փոքրություն համարեց այն, թե՛ վեց, թե՛ տասը հազարի դեմ է [կովելու] և ֆրանկների հետ մեծ թափով հարձակվեց հակառակորդների վրա: Թուրքերից շատերն ընկան, ֆրանկներից և ոչ մեկի նիզակն անգործ չմնաց, իսկ մնացածները դիմեցին փախուստի: Ռուսելիոսը հակառակ ֆրանկների ջոկորության, երկար տարածության վրա հետապնդեց [թշնամիներին], այն էլ անանցանելի ու դժվարամատչելի լեռներով, ա-



ոանց իմանալու իր զինվորներից շատերին ետևում թողեց, որով կեսարի ու փոքրաթիվ մարդկանց հետ մնաց մենակ, այն էլ անդադար ու երկարատև հետապնդումից հոգնած ձիերի վրա: Այդպիսին էր դրությունը, երբ թուրքերի մի ուրիշ, անհամար բազմություն երևաց, հավանաբար հարյուր հազարի հասնող: Օղակի մեջ ընկնելով, նա ակամայից բախվեց նրանց՝ իր շափազանց փոքրաթիվ մարդկանցով: Թուրքերը, տեղի չտվեցին, թեև այդ ընթացքում շատերն ընկան: Այդպիսի բազմությամբ շրջապատվելով և հեռարձակ նետերից [խոցվելով], նրանք կորցրին իրենց ձիերին, բայց այդ վիճակում էլ շրնկրկեցին: Շատերն սպանվեցին, իսկ թուրքերից՝ տասնապատիկ անգամ ավելի: Կեսարը, Ռուսելիոսը և նրա մերձավորները գերի ընկան, իսկ փրկված ֆրանկները Ռուսելիոսի կնոջ հետ ապաստանեցին Մետաբոլե բերդում և ջանում էին պահել ու պահպանել այն: Թուրքերը Ռուսելիոսի ոտքերը կալանդների մեջ առան, իսկ կեսարին՝ ոչ, նրա անձին վայել պատիվներ ցուցաբերեցին: Թշնամիները գերվածների համար փրկագին պահանջեցին, և կայսրը շտապեց նրանց գնել: Տեղ հասավ և Մալեսեսը, որ նոր էր արձակվել կեսարի կողմից, որին իսկույն աքսորեցին, իսկ ունեցվածքը բռնագրավեցին: Դիոգենեսի հետ այժմ գերությունը փոխելով Ռուսելիոսի հետ, ունեցվածքի բռնագրավմամբ ու աքսորով: Բայց Ռուսելիոսի կինը մեծ ջանք թափեց ու փրկեց իր ամուսնուն: Այդ իսկ պատճառով կայսեր կողմից ուղարկված մարդիկ միայն կեսարին փրկագնելով վերադարձան: Երբ [կեսարը] հասավ Պրոպոնտիս, երկյուղ զգալով, որ համարվելով ապստամբ ու կասկածելի մարդ, կարող է փորձանքի հանդիպել, աշխարհիկ հանդերձները փոխելով, վանականի սքեմ է հագնում, մազերը խուզում և այդպիսի խղճուկ արտաքինով ժամանում արքունիք: Այս բոլորից ելնելով խոհեմ մարդիկ դա աստժո պատիժ էին համարում, որ աստված է իրենց դեմ մաքառում, քանզի աչքաթող են արել, շեն պահպանել աստժո պատվիրաններն ու պատգամները, որոնք թեև մեծ պատերազմների ու վտանգների ժամանակ շատ լավ մտաբերում են, բայց հոռմեական զորքերը [մարտի են նետում] առանց նախապես շարժելու [աստժո] գթասրտությունը, և փորձանքի հանդիպելով կամ շարաշար պարտության մատնվելով, շեն հասկանում, որ դա աստժո պատիժն է: Հնում հոռմայեցիները այդպես շէին վարվում, դրա համար էլ գլուխ էին բերում այդ ահեղ, երգ դարձած ուղմավարությունները, նրանք սատար

էին կանգնում առաքինության. արդարության, սիրո ու ճշմարտության, մի խոսքով նրանք, ինչքան հնարավոր էր, լավն ու բարին էին գործում, դրա համար էլ աստված նրանց հետ էր և նրանք ամեն կերպ հակառակորդներին պարտության էին մատնում:

Սրբ կեսարը մտավ [քաղաք], կայսրը որոշեց, որ ամեն ինչ եղել, վերջացել է: Նա միայն վշտացել էր Ռուսելիոսի հարցում եղած անհաջողության առնչությամբ: Նրա համար ազգակիցների կործանումը, կայսրության [հողերի] կորուստը, քրիստոնյաների սրի քաշվելը, գյուղերի ու շրջանների ավերումը, խորտակումն ու քարուքանդ լինելը երկրորդական բան էր: Ռուսելիոսը մնացած ֆրանկ զինվորների, կնոջ ու երեխաների հետ և իր ունեցվածքով դուրս գալով Մետաբուլե բերդից, երկրի միջով աներկյուղ շարժվեց առաջ և հասնելով Արմենիականների բանակաթեմը, հաստատվեց իր նախկին բերդերում, որտեղից հարձակումներ գործելով թուրքերի դեմ, կանգնեցրեց նրանց ասպատակություններն այդ բանակաթեմի վրա: Կայսրը, լսելով այդ մասին, գտնում էր, որ ավելի ձեռնտու է թուրքերը տիրեն հոռմայեցիների շրջաններին, քան թե Ռուսելիոսը հաստատվի մի վայրում. այդ միտքը նիկեփորն էր նրա գլուխը մտցրել: [Կայսրը] ահա, թեև երիտասարդ, բայց գործունյա ու խելամիտ մի ազնվականի՝ պրոեդրոս Ալեքսիոս Կոմնենոսին<sup>762</sup> ուղարկեց, որն Ամասիա քաղաքը գալով, սպասողական վիճակի մեջ էր: Ռուսելիոսը թուրքերի առաջնորդի<sup>763</sup> հետ բարեկամական դաշինք կնքած լինելով, որպես արդեն նրա ծանոթ ու մտերիմ, առանց զինվորների նրա մոտ գնաց: Մի օր նրանց հետ ընթրելիս, նա ձերբակալվեց և կապանքների մեջ առնվեց: Թուրքերի համար հոռմայեցիներին երդվել և երդումը դրժելով խաբելը սովորական բան է: Պրոեդրոս Ալեքսիոսը [Ռուսելիոսին] մեծ գումարով գնելով, կապյալ վիճակում բերեց կայսեր<sup>764</sup>, որը կարծես Ռուսելիոսը փախստական ստրուկ լինելու, հանձնեց դահիճներին, որոնք արջառաջիլերով սարսափելի խոշտանգումների ենթարկեցին, ապա ամենախավարշտին մի աշտարակում բանտարկեցին, շղթայակապ, առանց որևէ հոգածության:

Իսկ լոգոթետը, որ, ինչպես ասվեց, կայսեր մոտ հսկայական ազդեցություն ուներ, ուզածին պես ամեն ինչ թալանում էր: Նա խնդրեց և կաթսրից որպես նվեր ստացավ Հեբզոմոնի վանքը, ապա ջանաց բոլոր կալվածները, արևի տակ եղած բոլոր



հողերը այդ վանքին ամրացնել, ապահովել այն հսկայական եկամուտներով, նենգաբար մտադիր լինելով սեփականացնել և հսկայական շահույթ ձեռք բերել, օգտվելով կայսեր տխմարությունից, վանքի պատրվակի տակ մեծ հարստություն դիզել: Վատություն գործելու մեջ արտակարգ ընդունակ մարդ լինելով, ինչպես ոչ ոք, և շահի համար ոչնչից չխրտչելով, նա Ռեդեստոսում ֆունդաքս և մոնոպոլիոն հաստատեց<sup>765</sup>, արգելեց բոլոր վաճառականներին առևտրով զբաղվել, կյանքի կոչեց լոկ կայսերական վաճառանոցը, որի պատճառով աննախընթաց, սարսափելի սով առաջացավ և [Պարապինակեսը] կայսեր համար մականուն դարձավ. հետագա մարդիկ ավելի շուտ այդ մականվամբ էին նրան ճանաչում, քան թե տոհմանունով կամ ազգանունով: Եթե մեկը Միքայելի անվան կողքին չավելացնի Պարապինակեսը, հայտնի չի լինի թե ում մասին է խոսքը: Նա Պարապինակես կոչվեց, քանզի այն ժամանակ հացի մոդը՝ մեկ պնակ պակաս, մեկ ոսկեդրամ արժեք<sup>766</sup>:

- 1073 Նրա թագավորության երրորդ՝ ինդիկտիոնի տասնմեկերորդ օգոստ. տարին սերբերի ազդը, որոնց նաև խրվաթներ են կոչում, դուրս եկավ Բուղարիայի դեմ՝ այն ստրկացնելու համար: Թե ի՞նչ ձևով, ես մի փոքր հեռվից կպատմեմ: Երբ Վասիլ կայսրը Բուլղարիան հպատակեցրեց, շուզեց այնտեղ որևէ նորամուծություն անել, այլ կարգադրեց, որ կառավարվեն սեփական իշխանավորների կողմից, իրենց սովորության համաձայն, այնպես, ինչպես իրենց առաջնորդ Սամուիլի օրոք էր: [Բուլղարների] ազգը սակայն, սրանից առաջ հուզումների մեջ էր, չէր կարող տանել Օրֆանտրոֆոսի ընչաքաղցությունը, դրա համար թագավոր հռչակեց Դելյանին: Այդ մասին իր տեղում ասվել է: Իսկ այժմ էլ որոշեց ապստամբել: [Բուլղարները] չէին կարողանում տանել նիկեփորի ընչաքաղցությունը, նրա՝ բոլորի դեմ ուղղված մեքենայությունները, որոնց և ոչ մեկի առաջը կայսրը չէր առնում, տարված լինելով երեխայական խաղերով միայն: Բուլղարիայի մեծամեծներն ահա Միքայելասից, վերոհիշյալ խրվաթների առաջնորդից, որ բնակվում էր Դեկատերոնում ու Պարապրատոնում և իր [տիրապետության] տակ ուներ ոչ փոքր երկիր, խնդրում էին օգնել իրենց ու գործակցել, տալ իր որդուն, որպեսզի Բուլղարիայի թագավոր հռչակեն և ազատագրվեն հոռմայեցիների լծից ու ստրկությունից: [Միքայելասը] ուրախությամբ ընդունում է նրանց առաջարկը և իր մարդկանցից երեք

հարյուր հոգու ընտրելով, հանձնում է իր հարազատ որդի Կոստանզինին, որին նաև Վոզգինոս էին կոչում, և Բուլղարիա ուղարկում: Նրանք հասնում են Պրիսդորիանա, այնտեղ են հավաքվում նաև Սկոպիեի մեծամեծները՝ Կոպխանների<sup>767</sup> տոհմին պատկանող Կեորգ Վոյթախի գլխավորությամբ և նրան Բուլղարիայի թագավոր հռչակում, Կոստանզինի փոխարեն Պետրոս վերանվանելով: Սկոպիեում գուբսի իշխանությունն ունեցող Նիկեփոր Կարանտենոսը, իմանալով այդ մասին, վերցրեց իրեն ենթակա զորավարներին և բուլղարական ուժերով գնաց Պրիսդորիանա: Երբ նա պատերազմի նախապատրաստություն էր տեսնում, ժամանեց նրան փոխարինող Դամիանոս Դալասսենոսը: Նա հանդիպելով Կարանտենոսին, նրան ծաղր ու ծանակի ենթարկեց, նրա զորավարներից յուրաքանչյուրին բազում վիրավորանքներ հասցրեց, խայտառակ արեց որպես վախկոտների, որից հետո զորքը կարգի բերելով, անմիջապես կռվի բռնվեց սերբերի հետ: Տեղի ունեցավ սարսափելի ճակատամարտ և առավել սարսափելի՝ հռոմայեցիների փախուստ: Հռոմայեցիներից ու բուլղարներից բազում մարդիկ սպանվեցին, շատերն էլ գերի ընկան, այդ թվում և Դամիանոս Դալասսենոսը, նաև Պրովատաս կոչեցյալը, Լոնգիբարդոպոլոսը և նրանց հետ ուրիշ շատ շատերը: Ողջ ճամբարը [թշնամու] ձեռքն ընկավ ու ամբողջովին թալանվեց: Դրանից հետո ահա բուլղարները Վոզգինոսին բացեիբաց թագավոր հռչակեցին, ինչպես ասվեց, վերանվանելով Պետրոս: Երկու մասի բաժանվելով, մի մասը Վոզգինոսի հետ Նիշ գնաց, մյուսը՝ ոմն Պետրիլոսի, Վոզգինոսի առաջին մարդու հետ շարժվեցին Կաստորիայում գտնվող հռոմայեցիների դեմ: Հռոմեասերները, նկատի ունենալով քաղաքի պարսպապատ լինելը, այնտեղ էին հավաքվել: Պետրիլոսը մտեցավ Ախրիդային և գրոհով վերցրեց այն (նա ամբողջովին անպարիսպ էր, այդպես ավերակ էլ մնացել էր այն ժամանակվանից, երբ Վասիլ կայսրը քարուքանդ էր արել՝ վախենալով, որ այնտեղ գտնվող բուլղարների [թագավորների] պալատները կարող են ապստամբության պատճառ լինել): այնտեղ նրան սիրալիր ընդունեցին և նա տեղացիներին նախապատրաստեց, որ իր տիրոջը [թագավոր] հռչակեն: Նա նույն բանն արեց նաև Դիաբոլիսում, որից հետո փութանակի գնաց Կաստորիա: Ինչպես ասվեց, հռոմեասերները այնտեղ էին հավաքվում (Ախրիդայի զորավար Մարիանոսը, Դիաբոլիսի անթիպատ պատրիկ Թեոդոստոս Բուրցեսը<sup>768</sup>, նաև Կաստորիայի զո-



րավարը): Նրանց հետ էին նաև Բորիս-Դավիթը և շատ ուրիշներ, որոնք ցեղակից բուլղարների երկյուղից որպես ապաստարան Կաստորիան էին ընտրել: Պետրիլոսը բուլղարների անհամար զինվորներով հասնելով Կաստորիա, պատերազմի նախապատրաստություն էր տեսնում: Հռոմայեցիները ևս ռազմաշարք կազմած նրանց դեմ դուրս եկան և ուժգին բախվելով, ստիպեցին Պետրիլոսին փախուստի դիմել. անանցանելի լեռներով նա գնաց, հասավ իր տեր Միքայելասի մոտ: [Հռոմայեցիները] սպանեցին բազում բուլղարների, գերի վերցրին նաև խրվածքների մոտ Պետրիլոսից հետո առաջին մարդուն և շղթայակապ կայսեր մոտ բերեցին: Իսկ Վոդինոսը հասնելով Նիշ, արդեն որպես բուլղարական պետության թագավոր էր գործում, նա հանդիպածը ավարանեց, իրեն շճանաչողներին ու շհնազանդվողներին կոտորեց ու թալանեց: Կայսրը, լսելով դուքսի պարտության և Վոդինոսի թագավոր հռչակվելու մասին, ջանաց, քանի փորձանքը չի տարածվել և բոցը չի բորբոքվել, այն հանգցնել՝ նրա դեմ Սարոնիտեսին ուղարկեց՝ մակեդոնացիներից ու ֆրանկներից բաղկացած հզոր զորքով: [Սարոնիտեսը] սակայն, ամբողջ ուշադրությունը բեռնելով Սկոպիե քաղաքի վրա, անուշադրության մատնեց Նիշում գտնվողներին: Հասնելով [Սկոպիե] և նրա հրամանատար Գեորգ Վոյթախին երաշխիքներ տալով, նա գրավեց Սկոպիեն, այնտեղ էլ բանակեց ու սկսեց մտածել ու ծրագրել Նիշի վերաբերյալ իր անելիքի մասին: Բայց Վոյթախը գղջալով այն բանի համար, որ ինչ-որ չափով լավություն արեց և հռոմայեցիներին ենթարկվեց, Նիշում գտնվողներին ծածուկ կերպով հայտնեց. որ անհապաղ իր մոտ ժամանեն և Սարոնիտեսի անհոգ ու անզգույշ [զինվորներին] անխնա ու գլխովին կոտորեն: Նրանք ստանալով այդ լուրը, Նիշից դուրս եկան և ձյունապատ ճանապարհով շարժվեցին դեպի Սկոպիե. ձմեռ էր, դեկտեմբեր ամիսը: Երբ այդ բանն իմացան Սարոնիտեսի մարդիկ, վերջինս ամբողջ զորքով նրանց դեմ դուրս եկավ և ճանապարհին վրա հասնելով, Տաոնիոս կոչվող վայրում գրեթե բոլորին կոտորեց, իսկ Վոդինոսը գերվեց: Այստեղ և՛ բազկի զորութեամբ, և՛ համարձակութեամբ բոլորից շատ աչքի ընկավ Բալանեսը: Լոնդիբարդոպոլոսը, ինչպես ասվեց, տարվեց Միքայելասի մոտ, զեկուցեց, ապա կնության առավ [Միքայելասի] դստեր, և Միքայելասից, լոնգոբարդներից ու սերբերից բաղկացած բազում զինվորներ ստանալով, Վոդինոսի օգնությանը դիմեց, բայց նա

վերստին հռոմայեցիների մոտ վերադարձավ: Իսկ Սարոնիտեսը վողդինոսին շղթայակապ կայսեր ուղարկեց: Նա արգելափակվեց սուրբ Սերդիոսի վանքում<sup>769</sup>, իսկ քիչ ժամանակ անց, հանձնվելով նորերս Անտիոքի դուքս նշանակված Իսահակ Կոմնենոսին, տարվեց Անտիոք: Նրա հայր Միքայելասը լսելով այդ մասին, մի քանի վենետիկցի ծովագնացների առատ դրամ տալով, [վողդինոսին] փախցրեց այնտեղից և վերականգնեց նրա իշխանությունը: Նա իր հոր մահվանից հետո էլ, մինչև մեր օրերն իշխեց: Վոյթախը կայսեր մոտ տարվելու ճանապարհին, բաղում լլկանքների ենթարկվելով և չկարողանալով տոկալ ստացած վերքերից ավերին, վախճանվեց: Իսկ ալամաններն ու վարյագները (սրանք արևմտյան ցեղեր են) բաց թողնվելով երկիր, քարուքանդ են անում Պրեսպայի բուլղարական մնացած ապարանքները, կողպտում այնտեղի սուրբ Աքիլիոսի տաճարը, շխնայելով նրա և ոչ մի սուրբ [սպասք], որոնցից մի քանիսը թեև փրկվեցին, բայց մնացածները զինվորները բաժանեցին՝ իրենց օգտագործման համար ձեռափոխելով: Մակեդոնական փաղանգից մի զինվորի ուսերն ածխացան և նա վախճանվեց. նրանից պահանջում էին վերադարձնել իր վերցրած սուրբ [սպասքը], բայց նա չէր տալիս: Արդարությունն այդ բանը, բնականաբար, շտանելով, նրան պատժեց, որպեսզի նա օրինակ ծառայի ապագա սերունդներին:

Իստրոս գետի ափին գտնվող քաղաքների զինվորներն անուշադրություն էին մատնված, նրանք որպես ոռճիկ ոչինչ չէին ստանում, դրա համար այնտեղ ուղարկվեց վեստարիս Նեստորը, որը ժամանակին կայսեր հոր սպասավորն էր եղել. նա նշանակվեց Պարիստրիոնի դուքս: Նա որպես համախոհի, համաձայնություն եկավ Թաթուշի հետ և բազում զինյալ պածինականերով եկան մայրաքաղաք: Երբ նրան հրամայեցին ցած դնել զենքերը, նա պատասխանեց, որ այդ բանը կանի միայն այն դեպքում, եթե լոգոթետ Նիկեփորին, որպես ընդհանուրի թշնամու և հանրության ոստիխի, իրեն անչափ վնաս հասցնողի, իր սեփականությունը գրավողի, հրապարակից վերացնեն: Կայսրը չէր ընդառաջում, քանզի մեկընդմիջտ ընկել էր [Նիկեփորի] կախարհությունների ու խաբեության ցանցը: Իսկ Նեստորը սեփական մարդկանց կողմից նենգվելու պատճառով հեռանում է այդտեղից, ավարառում Մակեդոնիան ու Թրակիան, Բուլղարիա-



լի մերձակա շրջանները, որից հետո նահանջում է պաժինակների երկիրը:

Մակեդոնական մի կեղեքված զորամաս կայսեր մոտ եկավ՝ ողբալով իր վիճակը: Նրանք կայսեր հրամանի համաձայն գանակոծվելով ու անարգվելով վռնդվեցին, նրանց վրա ոչ մի ուշադրություն չգարձրեցին և նրանք անշափ վշտացած վերադարձան իրենց տները, այլևս չէին ուզում հավատարիմ ծառայել, մտածում էին ամեն կերպ պաշտպանել թշնամիներին:

[Կայսրը] Լանգոբարդիայի ֆրանկ տիրակալի մոտ, անունը Ռոբերտ<sup>710</sup>, դեսպանություն ուղարկեց և նրա դստեր կնություն առավ իր որդի Կոստանզանին: Նա Հելենե վերանվանվեց: Ռոբերտը Լանգոբարդիային տիրացավ հետևյալ կերպ: Իտալիան խաղաղեցնելու համար ուղարկված Գեորգիոս Մանիակեսը, որ ավգուստա Զոեի կողմից մագիստրոսի պատվաստիճանն ստացավ, բազում ֆրանկների իր կողմը թեքեց, ինչպես նաև հաշտեցրեց Դոկիանոսի կողմից տուժածներին և Իտալիայի մի քանի բանակաթեմեր խաղաղեցրեց: Նրանից վախենում էին, քանզի պատերազմներում նրա ունեցած քաջությունն իրենց կաշվի վրա էին զգացել: Երբ Մանիակեսը Մոնոմախի դեմ ապստամբություն բարձրացրեց և պարտվեց, նրա հետ գնացողները կայսեր հպատակություն հայտնելով, կոշվեցին մանիակցիներ: Նրանցից շատերը մնացին հռոմայեցիների երկրում, իսկ մյուսները՝ Իտալիայում: Նրանց թվում էր և ոմն Ռոբերտ, Դոկիանոսի կողմից մտրակահար եղած Արդուինոսի զարմիկը, ահեղ ու տաքարյուն, բռնատիրելու մտադրություններ ունեցող մի մարդ: Նա բացեիբաց ծրագրում էր Իտալիայից քշել հռոմայեցիներին, բայց վճռականություն հանդես չէր բերում, ձգձգում էր, տեսնելով, որ թույլ է, նա երկյուղում էր կայսեր հզորությանը հակադրվել: Երբ Ֆրանկիայից բերած իր կինը վախճանվեց, նա մի ուրիշին կնություն առավ, անունը Գայիտա, լայնատարած մի շրջանի պրինցեպսի դստեր: Նրա հետ ամուսնանալուց հետո նա հաստատվեց իր կնոջը պատկանող քաղաքներում, որոնցից առաջինն ու խոշորագույնը Սալերնոն է: Այնտեղից գողի նման դուրս գալով նա ասպատակում էր Ռոմանիային ենթակա շրջանները, մեկ գերեվարում էր Կալաբրիան, մեկ ստրկացնում Իտալիան: Նա գերվածներից ոմանց ձեռքերն էր կտրում, ուրիշների ոտքերը, ոմանց ձեռքերն ու ոտքերը միասին, ոմանց էլ մեծ փրկագրնով ազատ արձակում, սպառնալով, որ եթե քաղաքները իրեն

չհանձնեն և հպատակութիւն չհայտնեն, ավելի մեծ փորձանքների կհանդիպեն: Արքունիքում տիրող խառը վիճակի պատճառով Իտալիայում տեղի ունեցած փորձութիւններից և ոչ մեկը չըկանխվեց: Մոնոմախը մի փոքր անց վախճանվեց, ավզուտա Թեոդորան ընդամենը մեկ տարի իշխեց, իսկ երբ Միքայելը գահ բարձրացավ, ապստամբեց Կոմնենոսը, զորքերը քաղաքացիական կռիվներին մասնակից դարձան: Եվ քանի չկար մեկը, որ կոտրեր Ռոբերտի թափը, նա հզորացավ և անուն հանեց: Նա ուժեղ բանակ կազմակերպեց, տեր դարձավ ձիերի, դրամի ու զենքերի, իսկ քաղաքներում կայսեր կողմից նշանակված զորավարները, իրենց զորքերի սակավաթվութիւն ու վախկոտութիւն պատճառով, կարողութիւն չունեին նրա դեմ հանդես գալու: Երբ Կոմնենոսը տիրացավ իշխանութիւն, մի կողմից թուրքերն էին արևելքի վրա ճնշում գործադրում, մյուս կողմից էլ պաժինակները՝ արևմուտքի: Կալաբրիայի զորավար Թրյումբոսը՝ սկրիբոնների<sup>771</sup> նկատմամբ ոճիրն առանց քաշվելու հանդգնողը, հեռացավ Կալաբրիայից: Նա տեսավ, որ արածը տեղացիներին դուր չեկավ, դրա համար փախավ կայսեր մոտ: Իտալիայի դուքս է ուղարկվում Աբուլխարեն: Ռոբերտը, տեսնելով, որ Կալաբրիայի ժողովուրդը ծանր տարավ սկրիբոնների կոտորածը և այդ իսկ պատճառով մտադրութիւն ունի ապստամբել, դուքս է գալիս այլևս չվերադառնալու համար և փութանակի արշավելով, գրավում մեծ ու երևելի Հոնզիոն քաղաքը, որտեղ սովորաբար Իտալիայի դուքսն էր նստում: Այդ [քաղաքում] կային հոյակապ ապարանքներ և պարենի մեծ առատութիւն: Աբուլխարեն հասավ Դյուրախիոն, այնտեղից նավեց Բարի և իմանալով, որ Հոնզիոնը գրավվել է, մնաց Բարիում, որտեղից հնարավորութիւն սահմաններում օգնում էր դեռևս հռոմայեցիներին հավատարիմ մնացած քաղաքներին՝ զորավարներ նշանակելով և զորք ուղարկելով պահպանութիւն համար: Հռոմայեցիներին հավատարիմ էին մնացել Բարին, Հիդրունտը, Կալլիպոլիսը, Տարանտը, Բրենդեսիոնը, Հորեն և բազում այլ ավաններ ու բոլոր գյուղերը: Այդ միջոցին Իտալիայի դուքս նշանակվեց Պերենոսը, իսկ Բրենդեսիոնի զորավար՝ Նիկեփոր Կարանտենոսը: Պերենոսը չկարողանալով անցնել Լանզոբարդիա՝ Ռոբերտի ճնշման պատճառով, մնաց Դյուրախիոնում և վերջինիս դուքսը նշանակվեց: Իսկ Նիկեփոր Կարանտենոսն էլ, [տեսնելով] Ռոբերտի ասպատակութիւնները և իտալացիների կրած բյուր փորձութիւնները, թեև



վախենում էր, այնուամենայնիվ մնաց տեղում, սպասելով կայսրրից ուղարկվելիք օգնությանը: Իտալական բոլոր քաղաքները հռոմայեցիների կողմն անցան և ընդունեցին կայազոր: Որոշ քաղաքներ էլ, թեև հրաժարվեցին կայազոր ընդունել, այնուամենայնիվ, հարկատու դարձան: Վիճակն այդպիսին էր, Կաբանտենոսն էլ, տեսնելով, թե ինչպես են ֆրանկները օրեցօր հզորանում, որոշեց փախչել: Բայց գիտակցելով այդ ամոթաբեր քայլի անփառունակությունը, մնաց տեղում, Բրենդեսիոնը հավատարիմ ու հնազանդ պահելով կայսեր: Նա խաբեությամբ ու նենգությամբ կարողացավ շահել մերձակա ֆրանկների վստահությունը. ծածուկ հանդիպելով նրանց և քաղաքը հանձնելու շուրջ բանակցությունների մեջ մտնելով, նա ընդունում է եկած և աստիճաններով բարձրացող ֆրանկներին: Բայց [Կարանտենոսը] աստիճաններով բարձրացողներին մեկ առ մեկ, մոտ հարյուր հոգու, սրի քաշեց և նրանց գլուխները նավ բարձելով անցավ Դյուրախիոն, այնտեղից էլ՝ կայսեր մոտ, տեղի ունեցած դեպքերի ավետաբերը լինելով: Պերենոսը Դյուրախիոնում էր, երբ թագավորութունը բզկտվում էր ներքին տագնապներով, արևելքը՝ թուրքերի արհավիրքներով, որոնք օրեցօր սաստկանում էին ու շէին գտնում ո՛չ վերջ, ո՛չ էլ դադար: Կոստանդին Դուկաս կայսեր մահից հետո թագավորութունը կարճ ժամանակով անցավ Եվդոկիա կայսրուհու ձեռքը, իսկ երբ թագավորության գայիստնն ստացավ Դիոգենեսը, երկյուղը դեպի Ռոբերտը և նրա մարդիկ հասավ գագաթնակետին, նրա խիզախությանը քաջատեղյակ եղողները վախենում էին նաև, որ կարող են իրենց ունեցվածքից էլ զրկվել: Ուրիշներն էլ ամեն կերպ ջանում էին հեռանալ, գնալ Ռոմանիային պատկանող գյուղերն ու քաղաքները: [Դիոգենեսն] էլ իր հիմնական ուշադրությունը թուրքերի դեմ մղվող պատերազմի վրա էր բեռել, ամբողջ ջանքը թափում էր ավելի մեծ վտանգի առաջն առնելու, [որից օգտվելով ֆրանկները], այլևս ոչ թե տիրոջ նման, այլ գող ու ավազակի պես խուժելով, իրենց հարկատու դարձրին Իտալիայի շրջանները: Երբ, ինչպես վերևում ասվեց, Դիոգենեսի հարցը փակվեց, իսկ Միքայելն էլ թագավորության նավը վարում էր անփույթ ու երեխայավայել, նրանք իսկական տերերի նման լանգոբարդիային ու Կալաբրիային ծովից ծով տիրեցին, երկիրն ու բերդերն իրենց մեջ բաժանեցին, իրենց կոմս, իսկ Ռոբերտին էլ դուքս անվանեցին: Միքայելն, ինչպես ասվեց, ոչ միայն շփորձեց վերանվաճել

իրեն պատկանող երկիրը, այլ թուրքերին արևելքից դուրս շարտելու նպատակով անհրաժեշտ համարեց նրանց հետ դաշինք կնքել և նրանց միջոցով կամ նրանց օգնությամբ [թուրքերի] Ռոմանիա հանդուգն ներխուժելու առաջն առնել: Այդ նպատակով նա մինչև անգամ խնամիացավ Ռոբերտի հետ, նրա դուստր Հելենեին նշանեց իր որդի Կոստանդնի հետ: Կայսրը այդպես էր մտածում, բայց աստված շիտղեց, որ դա կատարվի, քանզի նա վաղուց էր վճռել արևելքի կործանումն ու ոչնչացումը:

Այդ ժամանակները Կոստանդնուպոլսում երեքոտանի հավ ծնվեց և ճակատին մեկ աչք ունեցող այծի ոտքերով երեխա: Անմահ զինվորներից<sup>772</sup> երկուսը շանթահար եղան, իսկ հրեշ-երեխան, որ նետել էին Դիակոնիսսայի փողոցում, երեխայի նման լաց էր լինում: Այդ բոլորից բացի բազմաթիվ և հաճախակի գիսավոր աստղեր էլ երևացին:

Բայց որովհետև բարբարոսները ասպատակում էին արևելքը, իսկ ժողովրդի մի մասը կոտորվում, մյուս մասն էլ ապաստան էր որոնում Կոստանդնուպոլսում, ծանր ժամանակները սըրտացավ, հասուն ու արիասիրտ մտքի տեր մարդու կարիքն էին զգում, իսկ [Միքայելն] այնքան ժլատ էր ու մանր, որ չէր ուզում մի օբոլոս<sup>773</sup> անգամ ծախսել, մեկին որևէ բան տալ, ցորենակիր նավերով հացահատիկ բերելով սննդի մասին հոգ տանել: Նա զբաղված էր գրական դատարկ ու աննպատակ վարժություններով, խելքը միտքը յամբեր ու անապետներ կազմելն էր, թեև նա այդ արվեստի հոտն անգամ չէր առել, պարզապես խաբվելով ու մոլորվելով փիլիսոփաների հյուպատոսի կողմից<sup>774</sup>, այսպես ասած, ողջ երկիրը ավերակ դարձրեց: Սոսկալի սով եղավ, որին հաջորդեց համաճարակն ու մահացությունը, այդ համանուն<sup>775</sup> [երևույթները], որոնք մարդկանց ոչնչացման գործում եղբայր են ու համարժեք: Ամեն օր բազում մարդիկ էին մեռնում, այն աստիճան, որ կենդանի մնացածները չէին հասցնում վախճանվածներին թաղել: Դիակները խառնիխուռն փռված էին, այսպես կոչված, էմբոլոններում<sup>776</sup>, շատերը թափունթաց՝ հաճախ մի պատգարակի վրա հինգ կամ վեց դիակ դարսած էին տանում: Ամեն տեղից տխուր լուրեր էին գալիս, մայրաքաղաքը լցվեց ամենայն տրտմությամբ: Իշխանությունները ոչինչ չէին մտածում հանապազօրյա անարդարությունների, անօրեն դատավճիռների ու գանձումների առաջն առնելու



ուղղությամբ և կարծես գոյություն շունենային հոռմայեցիներին նեղող այլազգիների պատերազմը կամ աստծո բարկությունը, կամ էլ մարդկանց տանջող չբավորությունն ու ապրուստ ճարելու շարշարանքները, այդպես աներկյուղ աստծուն ատելի արարքներ էին գործում ու մարդկանց շարշարում: Կայսերական ամեն մի որոշում ու խոհ մի նպատակ ուներ՝ սեփական ժողովրդին վնասել ու նենգել, նրա ունեցվածքն ու կյանքի միջոցները հափշտակել: Նրանց ազահ՝ ձեռքը երկարեց մինչև անգամ սուրբ տաճարների վրա՝ խլեց նրանց սրբազան գանձերն ու սպասքը:

Այսպես էին պետության գործերը վարվում, իշխողների տխմարության ու վատության պատճառով կողոպտվում ու ավերվում և՛ դրսեցիները, և՛ ներսեցիները, երբ արևելքի մեծամեծները՝ Ալեքսանդրոս Կավասիլասը, Ստրավոռոմանոսը, Սինադենոսները, Գուղելիոսը և սենատորների մնացած ընտրանին, վաղուց նախապատրաստած ապստամբությունն այժմ լույս աշխարհ հանեցին և համաձայնության գալով կուրապաղատ Նի-  
 10-X կեփոր Բոտանիատեսին կայսր հռչակեցին: Հոկտեմբեր ամսին էր,  
 -1077 ինդիկտիոնի առաջին տարվա: Երբ այդ լուրը հասավ կայսեր ականջը, նրան անչափ մեծ իրարանցման մեջ գցեց, քանզի դեռ անցյալում շատերը գուշակում էին, թե կգա ժամանակ, երբ Ն-ն կգերազանցի Մ-ն<sup>777</sup>: Նա տեղնուտեղը թուրքերին, կարծես ընտանի ու հարազատ լինեին, նամակ գրեց, խոստանալով նվերներ էլ տալ, եթե նրանք ձերբակալեն [Բոտանիատեսին] ու նրա մերձավորներին և իրեն ուղարկեն: Բոտանիատեսը ազնվական ծագում ուներ, նա սերում էր Փոկասների տոհմից և ճիշտ է ոչ ուղղակի, նաև անվանի Փլավիոսներից<sup>778</sup>, որոնց տոհմը գալիս է փառավոր ավագ Հոռմից: Այդպես է վկայում նրա մասին ավանդությունն ի սկզբանե անտի: Հոկտեմբեր ամսի երեքին, երբ [Բոտանիատեսը] պետք է կայսերական վրանը խփեր, գիշերվա առաջին պահին օդում հանկարծ լույս երևաց՝ մինչև Քաղկեդոն, Խրիսուպոլիս և Վլախերնայի պալատը: Բոլորն այդ երևույթը բարի նշան համարեցին, ոմանք նույնիսկ կանխագուշակեցին, որ կամպեից պալատում լուսատու ջահ է եկել:

Երբ Բոտանիատեսը շարժվեց դեպի Բյուզանդիոն, արևմուտքը սասանեց մի այլ ապստամբական շարամտություն: Դյուրախիոնի պաշտոնանկ արված դուքս պրոեդրոս Նիկեիոր Բրիեն-  
 3-X- ն իրոսը իրեն կայսր հռչակեց և տեղի զինվորներին իր ետևից

1077 տանելով ու օգտվելով նրանց համագործակցությունից, այնտեղից դուրս եկավ, փութալով դեպի Ազրիանուպոլիս, քանդի Հովհաննեսը, իր հարազատ եղբայրը, ծրագրվող խռովության համար արևմտյան զորքերից ոմանց կարգի էր բերել և մեծաթիվ վարյազների ու ֆրանկների նախապատրաստել միանալու եղբորը, ինչպես և այդ քաղաքի կատապանին, որ իր ազգականն էր: Սրանք նախքան [Բրիեննիոսի] Ազրիանուպոլիս հասնելը, նրան կայսր հուլակեցին և հայտարարեցին: Կայսրը պետական գործերը թույլ էր վարում, թե չէ նա շատ հեշտությամբ պարտության կմատներ Բրիեննիոսին, քանի որ անմահներ կոչվող հատուկ զորք ուներ, ինչպես և ամբոխից հավաքագրված մի ուրիշ կարգին զորք: Նրա համար ամենից դյուրինը նախ և առաջ Ազրիանուպոլսում գտնվողների վրա հարձակվելն էր, ապա նաև հենց Բրիեննիոսի: Բայց, ինչպես ասվեց, հարցին մատնների արանքով նայելով, նա [Բրիեննիոսին] բարձրացրեց, փոքրից մեծ դարձրեց և իր համար գործ բացեց: Նրան փոխարինելու ուղարկված պրոնոբրոս Նիկեփոր Վասիլակիոսը Թեսալոնիկեում հանդիպեց Բրիեննիոսին և եթե նա խելամիտ գործեր, հենց ապրստամբության սկզբում նրան հեշտությամբ կհաղթահարեր: Բրիեննիոսը հասնելով Տրայանուպոլիս<sup>779</sup>, այնտեղ հանդիպեց իր եղբոր՝ Հովհաննեսին և Ազրիանուպոլսից եկած ֆրանկներին ու մակեդոնացիներին, համակիր մյուս զորքին: Հենց այնտեղ նա հազավ կայսերական նշանակները: Ամեն ինչ սարսափելի երդումներով ու դաշնագրությամբ ապահովելով, նա կայսր հուլակվեց ու մեծաթիվ թիկնապահներով որպես կայսր գործի լծվեց, փառք ու պատվով մուտք գործեց Ազրիանուպոլիս, որտեղ նա իր նկատմամբ սիրալիր ու հնազանդորեն տրամադրված քաղաքացիների կողմից փառավոր ընդունելության արժանացավ: Պրոնոբրոս Կոստանդին Թեոդորականը փոքրաթիվ մարդկանցով հարձակման անցնելով, Բրիեննիոսի համակիրների կողմից ձերբակալվեց ու նրա մոտ գերի բերվեց: Նա փառավորված մարդ էր, նշանավոր տոհմից սերող, նա անուն էր հանել իր անբիծ կենցաղավարությամբ, բայց կարծես հասարակ ու սովորական ծագում ունեցող մարդ լիներ, անուշադրության էր մատնվել: Բայց նա խոշտանգումների չենթարկվեց, թեև, նկատի ունենալով [Բրիեննիոսի] և իր միջև եղած նախկին թշնամությունն ու արյունահեղ հակամարտությունը, սպասում էր այդ բանին: Նրան աքսոր ուղարկեցին Մակեդոնիայի ինչ-որ



քաղաք, ուր նա շուտով կնքեց իր մահկանացուն<sup>780</sup>։ Ավելի խելամիտ ու խոհեմ մարդիկ Բրիեննիոսի՝ կայսերական նշանակները Տրայանուպոլսում հագնելը և այնտեղ կայսր հռչակվելը շարագուշակ համարեցին, քանզի Տրայանուպոլիսը կրում է ոչ թե Տրայանոս կայսեր անունը, (Տրայանոս կայսրը այն ի նորուստ կառուցեց), այլ Տրայանոս անունով մի մեծամեծ գոթի, ֆիզիկական ու մտավոր ընդունակություններով օժտված մի մարդու, որին Տրայանոս կայսրը ինչ-որ զանցանքի համար կուրացրեց։ Երբ [կայսր Տրայանոսը] Պարսկաստան էր արշավում, առաջին անգամ լինելով, նրան տեսավ այնտեղ և տեսքից մեծ ցավ զգալով, վերհիշելով նրա ռազմավարական արվեստն ու քաջությունը, հրամայեց այդտեղ քաղաք կառուցել՝ այդ մարդու հիշատակի հավերժացման համար։ Ահա դրա համար էր, որ խելամիտ մարդիկ այդ դեպքը շարագուշակ համարեցին։ Բրիեննիոսը լինելիքին անտեղյակ (մարդը ապագայի հանդեպ կույր է) գործի լծվեց։ Իր ազգականուհի Բատացինայի<sup>781</sup> գործակցությամբ Ռեդեստոսն էլ իր կողմն անցավ։ Ռեդեստոսցիք նույնիսկ Պանիոնի<sup>782</sup> վրա հարձակվելով, նրա բնակիչներին ստիպեցին Բրիեննիոսին կայսր հռչակել։ Նա իր եղբորը կուրապաղատի պատվաստիճանը տալով, իսկ մյուսներին էլ՝ իրենց դիրքի համեմատ, որոշեց մայրաքաղաքը սարսափահար անել իր եղբորը ուղարկելով։ Նա նրան տվեց մեծաթիվ զորք և հույս ուներ, որ քաղաքացիներն անչափ գայրույթով ու ատելությամբ լցված լինելով կայսեր ու լոգոթետի դեմ, իր կողմը կանցնեն և որոշ պայմաններով իրեն [քաղաք] կընդունեն, որով ինքն էլ առանց որևէ երկյուղի թագավորական արդուզարդով մուտք կգործի։ Բայց նա իր հաշիվների մեջ շարաշար սխալվեց։ Թեև նա ավերեց Հերակլիան<sup>783</sup>, նրա բազում բնակիչների կոտորեց, (մի փոքր առաջ Սիլիվրիայում նստող պրոնզորոս Ալեքսիոս Կոմնենոսը նահանջել էր), բայց մայրաքաղաքի բնակիչներն ամենևին էլ իրար շանցան Բրիեննիոսի զորքի ներկայութունից։ Այդ [զորքը] դիրքեր գրավեց Վլախերնայի պարսպի երկարությամբ և դիմադրության հանդիպելով, անցավ սուրբ Պանտելիմոնի կամուրջի<sup>784</sup> վրայով և այն կողմում գտնված ամեն ինչը կրակի տալով, բայց խոսքի արժանի ոչինչ չանելով, վերադարձավ։ Ինքը՝ [Բրիեննիոսը] երկու տագմա վերցնելով, հասավ Աթյուրա<sup>785</sup>, իսկ մնացած զորքն ուղարկեց ձմեռելու։ Կայսրն իր զլխին եկած փորձություններից հետո հազիվ մտաբերեց դեռևս բանտում շղթայա-

կապ գտնվող Ռուսելիոսին, որ փորձ էր արել Բոտանիատեսի մոտ փախչել: Ահա նրան բանտից հանելով և ամեն տեսակի պատվի ու հանգստի արժանացնելով, գիմեց նրան բազում հրապուրիչ ու քաղցր խոսքերով և գրգեց Բրիեննիոսի զորքի գեմ դուրս գալ, համոզեց պարիսպների վրայից Բրիեննիոսի հետ եղող ֆրանկների հետ լեզու գտնել: Երբ նրան շահաշողվեց [ֆրանկներին] համոզել, Ռուսելիոսը արշավեց Աթյուրայում գտնվող Բրիեննիոսի եղբոր դեմ, նախապես ամուր երդումներով հաստատելով կայսեր հանդեպ ունեցած իր հավատարմությունը: Իր հետ ծովով [Բրիեննիոսի եղբոր] դեմ ուղարկվեցին նաև ուսական նավեր, իսկ իրենք հետիոտն շտապեցին դեպի Աթյուրա: Գլխավոր հրամանատարությունը գտնվում էր պրոնոբրոս Ալեքսիոս Կոմնենոսի ձեռքում, որ եկել էր մայրաքաղաքի զինվորներով: Բայց նրանք այդ մասին նախօրոք իմանալով, կարողացան փախչել: Ռուսելիոսի և Կոմնենոսի մերձավորները ուզում էին հետապնդել նրանց և հակառակորդներից շատերին ջարդ տալ, բայց զինվորներն ապագայի նկատմամբ երկյուղ կրելով, շահամաձայնվեցին: Բազում մակեդոնացիներ սպանվեցին, ոչ քչերն էլ գերի ընկան: Ձեռք բերվեց հսկայական ավար, ի միջի այլոց նաև կուրապաղատի կանաչ կառքերը: Նա փախավ եկավ Ռեդեստոս: Իսկ պաժինականները մեծ բազմությամբ երևացին. Ադրիանուպոլսում, պաշարեցին այն և նրա շրջակայքը մարդիկ ուղարկելով ջարդ ու փշուր արեցին նրա գեղեցկագույն շինությունները, տղամարդկանց կոտորեցին, քչեցին տարան անասունների անհամար հոտեր, ինչ վատությունն որ հնարավոր էր անել, արեցին: Բրիեննիոսը ոսկի<sup>786</sup>, կերպասներ տալով, գլուխ բերեց նրանց հեռանալը, որից հետո սկսեց յուրայիններից դրամ հավաքել, ջանալով ամեն գնով հասնել իր նպատակին: Նրա եղբայր Հովհաննեսը ուղարկվեց Կյուզիկոսի թերակղզին՝ փորձելու տեղացիներին իր ետևից տանել: Նրան հանդիպեց Ռուսելիոսը և զխովին փախուստի մատնեց: Դա տեղի ունեցավ ինդիկտիոնի առաջին տարվա մարտ ամսին:

Պատրիարքի՝ Հովհաննես Քսիֆիլինոսի ննջման և մյուս աշխարհը գնալու առնչությամբ կայսրը [պատրիարք] նշանակեց մի ուրիշի, որ ո՛չ սենատորներից էր, ո՛չ եկեղեցականներից, բյուզանդացիների մեջ ո՛չ խոսքով, ո՛չ գործով աչքի ընկած կամ անուն հանած մեկը, այլ սուրբ քաղաքից<sup>787</sup> եկած Կոսմաս անունով մի վանականի<sup>788</sup>: Կայսրն արտակարգ հարգանք էր տածում



նրա նկատմամբ՝ նրա հանդես բերած առաքինության համար, թեպետև նա արտաքին իմաստությանը տեղյակ չէր, հաղորդակից չէր դարձել նրան, բայց օժտված էր բազմապիսի առաքինություններով: Ահա դրա պատճառով [կայսրը] նրան նախապատվություն տվեց և ընձեռեց եկեղեցու դեկր:

Իսկ Բոտանիատեսը կարդավորելով իր գործերը և նախապատրաստվելով իրականացնել իր խիզախած ծրագիրը, հրավիրեց բոլոր նրանց, ովքեր երբևիցե ծառայել էին բանակում, նրանցից տագմաներ կազմեց, նրանց դրամ բաժանեց ու աստիճաններ շնորհեց և ձեռք բերեց նրանց հավատարմությունը, գոտեպնդեց առաջիկա գործը գլուխ բերելու հարցում: Կայսեր կողմից Նիկիան պահպանելու համար ուղարկվածները, լսելով այդ մասին, ամբողջ բազմությամբ կամովին նրա կողմն անցան և քաղաքը առանց կովի նրան հանձնեցին: [Բոտանիատեսը] թուրքական մի հուժկու զորամաս էլ կազմավորեց, որին գլխավորում էր իրենն դաշնակցած անուն հանած Կուտլումուչն՝ իր հինգ որդիներով: Սրանք սուլթանի ազգականներն էին և հակադրվելով պարսկական կենտրոնական պետության, բայց և միաժամանակ անկարող լինելով [սուլթանի] դեմ մարտնչել, հաստատվեցին Լիոմանիայում<sup>789</sup>, որպեսզի առանձին պետություն ստեղծեն, բայց ավելի ճիշտ՝ որպեսզի Ռեյ կոչվող վայրում սուլթանին մարտ տան, պայքարեն տիրանալու կենտրոնական իշխանության: Երբ զորքերն արդեն բախվելու էին միմյանց, այդ մասին իմացավ խալիֆան<sup>790</sup>. սա նրանց մոտ աստժուն հավասար հարգանք ունի: Նա անհապաղ, արհամարհելով դժվարություններն ու կարգը (նա իրավունք չունի հեռանալ իր նստավայրից), փութանակի հասավ Ռեյ, ուր գտավ իրար դեմ կանգնած, բախվելու պատրաստ զորքերը: Նրանց մեջտեղում կանգնելով, նա պահանջեց հաշտվել՝ հօգուտ պարսիկների և նրանց իշխանության և ի վնաս հռոմայեցիների պետության ու իշխանության: Այնտեղ թեր ու դեմ շատ բան ասվեց և վերջիվերջո ընդունվեց [խալիֆայի] կարծիքով ընդհանուրին օգտակար [որոշումը], որի համաձայն սուլթանը, ինչպես իր հայրը, իշխի Պարսկաստանի վրա, իսկ Կուտլումուչն ու նրա կողմնակիցները սուլթանից զորք ու օժանդակություն ստանալով, ձեռք գցեն հռոմայեցիների երկիրը, դարձնեն այն իրենց սեփական իշխանությունն ու թաղավորությունը, որպեսզի այսուհետև ոչ մի կերպ չվնասեն միմյանց: Ահա խալիֆայի նման հորդորով ու միջնորդությամբ կռվին վերջ

է տրվում, զորքը նահանջում է, վեճը վերանում: Եվ սկսում են նրանք հռոմայեցիների երկիրը նվաճել: [Բոտանիատեսը] սրբանց հետ ընկերանալով, հզոր զորքով, որոշակի պայմաններով իր հետ տարավ, ճամփա ընկնելով դեպի Նիկիա: Մեծաքաղաքի հոծ բազմություններ շարունակ նրա կողմն էին անցնում: Տարօրինակն այն է, որ թուրքերն անգամ Բոտանիատեսին խոչընգոտ չէին դառնում, ընդհակառակը, ուղեկցում էին նրան հարգանքով ու ակնածանքով: Նույնիսկ մայրաքաղաքը և նրա երեվելիները, լինեն նրանք իշխանավորներ, քաղաքացիներ, թե դեմոսից, բացի այդ նաև եկեղեցու մեծամեծները, սուրբ Բանի իմաստության հռչակավոր տաճարում ժողովի հավաքվելով աստվածամոր ավետման քարոզի ժամանակ, Բոտանիատեսին կայսր են հռչակում. [ժողովը] գլխավորեցին Թեուպոլսի՝ մեծ Անտիոքի պատրիարքը, որ էմիլիանոս էր կոչվում և Իկոնիոնի մետրոպոլիտը: Նրանց վճռին ողջ կղերը, Գսենատը և գրեթե համայն քաղաքը հավանություն տվեց: Պետության ղեկավարները խմբերի բաժանվելով, նշանակում են սինտագմատարխների, կազմում լոխոսներ և հարձակում գործելով, տիրանում պալատին, այնտեղ զինվորներ հաստատում, դուրս շարտելով Միքայել կայսեր կողմնակիցներին, իսկ վարձկան զորքերին մարտում պարտության մատնում: Նրանք գահընկեց են հայտարարում Միքայել կայսեր, որ կայսրուհի Մարիամ ալանուհու<sup>791</sup> և [Միքայելի] որդի Կոստանդին Միրանաժինի հետ վլախերնալի պալատում էր ապաստանել: Նրանք [Միքայելին] վանական են դարձնում և մի խղճուկ անասունի վրա նստեցնելով, Ստուդիոնի վանքն են ուղարկում՝ հավատացյալների կողմից տոնվող Ղազարոսի վրա կատարված հրաշագործության շաբաթօրը (նա վեց տարի թագավորեց), ապա ցամաքային զորքերի հրամանատարներ նշանակում, նաև ծովային ուժերի՝ նավատորմի ղեկավարներին:

## ՆԻԿԵՓՈՐ III ԲՈՏԱՆԻԱՏԵՍ

[7 հունվար 1078—1 ապրիլ 1081 թթ.]

Ահա քաղաքում իրերի դրությունն այսպիսին էր, որ կայսրը միանգամայն անսպասելի գահընկեց եղավ, իսկ Բոտանիատեսն էլ վստահ շարժվեց դեպի Բյուզանդիոն ու կայսերական իշխա-



նութիունն ստացավ առանց արյունահեղության, թեև մարտերի ու պատերազմների համար նախապատրաստություն էր տեսել և կարգի բերել իր զինական ուժերը: Իսկ նիկեփոր լոգոթետը և նրա նմանատիպ Դավիթը սրընթաց շարժվեցին դեպի արևմուտք, ուր գտան Հերակլիայում բանակած Ռուսելիոսին՝ հակառակորդների դեմ տարած հաղթանակի առթիվ՝ աստծուն գոհություն հայտնելու պահին: [Կոստանդնուպոլսի] քաղաքացիները պալատը առանց կայսեր երեք օր պահելուց հետո, Բոտանիատեսին նամակ գրեցին, շտապեցնելով վեր կենալ և ժամ առաջ գալ: Նա փութանակի հասնելով Պրենետոս<sup>792</sup>, ուղարկեց իր ծառա Բորիլոսին<sup>793</sup>. մի քաջ ու գործունյա մարդու և աիրեց պալատին: Փոքր անց ինքն էլ, ավագ երեքշաբթի օրը, մուտք գործեց և ձեռամբ պատրիարքի հագավ կայսերական թագը: Իր բոլոր մարդկանց նվերներով, կալվածներով ու աստիճաններով պատվելուց հետո, ապա նաև Խրիսուպոլսում բանակած թուրքերին գոհացնելով, լծվեց կայսրության մյուս գործերին: Նա ամբողջությամբ դիջեց բնակչության պետությանն ունեցած բոլոր պարտքերը, այն էլ ոչ թե որոշակի, այլ բոլոր տարիների, այնպես արեց, որպեսզի այդ պարտքերի ոչ անունը մնա, ոչ էլ նրանց մասին հիշողությունը:

Որովհետև Բրիեննիոսը գտնվելով դրսում, տակնուվրա էր անում ու սասանում արևմուտքը, նրա մոտ կայսերական դեսպանություն է ուղարկվում, կոչ անելով հրաժարվել իր անհիմաստ ախորժակներից և ստանալով կեսարի աստիճանը, վերջ տալ իր ձգտումներին: [Դեսպանությունը] հաստատում էր նաև այն պատիվները, որոնց արժանանալու են նրանք, ովքեր մասնակցել են [Բրիեննիոսի] ապստամբության: Բայց Բրիեննիոսն անդրդվելի էր, աներեր ու ամբարտավան, չէր հրաժարվում թագավորությունից, ոչ էլ ուզում էր զիջել առաջնությունը, որի տերը չէր: Այդ պատճառով ուղարկվում է մի երկրորդ դեսպանություն, որը նույնպես հաջողություն չի ունենում: Ապա երրորդ դեսպանությամբ է նրա մոտ գնում պրոտոպրոեդրոս և մեծ հետերիարխ Ստրավոռոմանոսը, որին նա դարձյալ մերժում է: Դեռ ավելին, հակառակ այն բանի, որ դեսպանը սրբազան մարմին է համարվում անգամ անհավատների մոտ՝ որսյես խաղաղության միջնորդ, պատերազմողների հաշտարար ու պատերազմը կանխող, այդ մարդու հանդեպ անարգաբար վարվեց, կարծես նրան ուզարկողը կայսր չլիներ, այլ ինչ-որ հյուպոստրատեզոս: Այն ժա-

մանակ Բրիեննիոսի վրանը ինքնիրեն փուլ եկավ՝ նրա ծածկը անտեսանելի ձեռքերի կողմից քակտվելով: Լուսնի խավարում էլ եղավ, որի [չարագուշակությունը] նրա վրա տարածվեց, թեև որպես կանոն նման երևույթները թագավորների տապալման մասին են վկայում, այգպես են ուղում հավատացնել սնոտի աստղաբանությամբ պարապողները: Երբ Ստրավոնոմանոսը վերադարձավ, նրա բանագնացությունը մնաց ապարդյուն, կայսրը պատերազմի նախապատրաստություն տեսավ, նրա դեմ զորահավաք արեց և վստահաբար [Բրիեննիոսի] պարտությունն էր կանխավ հայտարարում. քանզի գուշակները գտնում էին, որ Ն տառի մասին երգերը մեկ և ոչ զույգ Ն-ն նկատի ունեն<sup>794</sup>: Բոտանիատեսը զորավար և մեծ գոմեստիկոս նշանակելով մի ազնվականի՝ նոբելիսսիմոս Ալեքսիոս Կոմնենոսին, ողջամիտ ու կայուն խելքի տեր, պատերազմի վտանգների նկատմամբ հաստատուն ու անսասան մի մարդու, որ անցյալում վարպետորեն իր ձեռքն էր գցել Ռուսելիոսին, Բրիեննիոսի դեմ ուղարկեց: [Կոմնենոսը] զորքերի գլուխն անցած շարժվեց Բրիեննիոսի դեմ: Երբ զորքին նա հանգիստ էր տվել Կալաբրյուե կոչվող վայրում, հետախույզներից իմացավ, որ Բրիեննիոսը ամբողջ զորքով Մեսենեից դուրս գալով, մոտենում է: Նոբելիսսիմոսը իր հետ եղած թուրքերին<sup>795</sup> տեղնուտեղը առանձնացնելով, հրամայեց մոտենան Բրիեննիոսին և նրան սոսկ ձևական մարտ տալով, իր մոտ վերադառնան: Իսկ ինքն էլ հարմար վայրերում դարաններ գնելով, և զորքն էլ, իր կարծիքով, լավագույն ձևով դասավորելով, սպասում էր Բրիեննիոսի գալստյան: Երբ երևացին երկու բանակների դրոշները, և երկու կողմերն էլ պատերազմական շեփորներ հնչեցրին, տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ<sup>796</sup>: Երբ Բրիեննիոսը տեսավ իր տագմանների պարտությունը, նրանց տագնապն ու երերումը, վերցնելով իր լավագույն ուժերը, դիմեց վճռական մարտի: Կայսեր զորքերը նրա թափը կտրեցին: Քանի որ երկու կողմերի համար էլ հաղթանակը պատվի հարց էր, մարտը սարսափելի ու զարհուրելի բնույթ ստացավ: Կոմնենոսը դարան մտածներին դուրս գալու ազդանը՝ շան տվեց և ուժեղ թափով խուժեց հակառակորդների վրա. նրանք Բրիեննիոսին գլխովին փախուստի մասնեցին: Բրիեննիոսը գերի վերցվեց<sup>797</sup>, նրա զինվորներից շատերն սպանվեցին, ոչ քչերն էլ գերի ընկան, հատկապես հրամանատարական կազմից: Գերված Բրիեննիոսը իր ցնորամտության համար դատապարտ-



վեց կուրացման, նա ուշացած ողբաց իր անխոհեմությունը: Իսկ կայսրը [հաղթանակի] ավետիսներն ստանալով, գոհություն հայտնեց աստծուն և նրա մոր:

Իսկ Բյուզանդիոնում վարյազները սպանեցին [Բրիեննիոսի] եղբորը. երբ Բրիեննիոսը ապստամբություն էր բարձրացրել և նրա կողմն էին անցել դրսեցի վարյազները, պալատի վարյազները<sup>798</sup> իրենցից մեկին՝ ընտրելով ցեղակիցների մոտ ուղարկեցին՝ պահանջելով լքեն ապստամբին և կայսեր կողմն անցնեն: Երբ սակայն, նրա ով լինելը բացահայտվեց, ձերբակալվեց և սարսափելի տանջանքների ենթարկվելով, հաղորդեց իր ստացած առաջադրանքի մասին: Նա քթից զրկվեց: Նրան խնդողը Հովհաննեսն էր: Բարբարոսն իր կրած անարգանքը հանգիստ շտարավ և երբ Հովհաննեսը պալատից դուրս էր գալիս, սպանեց նրան՝ այլազգի դաշույններով խողխողելով: Վարյազները կայսեր դեմ ապստամբություն բարձրացրին և ջանում էին սպանել նրան: Երբ նրանց դեմ ելան կայսեր [զինվորները], նրանք այս անգամ անցան աղաչանք-պաղատանքի և մեղմելով կայսեր սիրտը, նրա ներողամտությանն արժանացան:

Կայսրը իր վախճանված կնոջ՝ Բեբզենեի փոխարեն (որ իր կայսր հռչակվելու հետ միասին կայսրուհի էր հռչակվել), ուրիշ կին առավ: Շատերն էին ուզում նրա հետ ամուսնանալ, այդ թվում և Ձոեն, Դուկաս կայսեր դուստրը, որ կույս էր և գեղեցիկ, ինչպես և սենատորների՝ ամուսնանալու տարիքի հասած բազում դուստրեր: Բոտանիատեսը ուզում էր կնության առնել կամ Դուկասի կին Եվդոկիային, որ և Դիոգենեսի կինն էր եղել, կամ վերջերս թագավորած Միքայելի՝ Մարիամ ալանուհուն: Նա մարդիկ ուղարկեց Եվդոկիային բերելու, և վերջինս ուրախությամբ գնաց նրանց հետ: Այդ մասին իմացավ այն ժամանակները իր առաքինությամբ համբավ հանած մի վանական, որին այլ անուն չէին տալիս, այլ սլաբգապես Պանարետոս էին կոչում: Նա ամեն ջանք թափեց խոչընդոտելու այդ տխմարությունը, պաշտոնավոր անձանցից շատերին հորդորեց համոզելու [Եվդոկիային] հրաժարվելու այդ ցանկությունից: Այդ պատճառով կայսրն անամոթաբար Մարիամին է առնում, պսակվում հետը<sup>799</sup>, որից հետո [պսակող] քահանան իսկույն կարգալույծ է լինում, քանզի կատարվածը բացահայտ շնություն էր: Միքայելը մազերը խուզելով, պատրիարքի և մետրոպոլիտների որոշմամբ Եփեսոսի արքեպիսկոպոս ձեռնադրվեց: Բայց նա սոսկ մի

անգամ եղավ Եփեսոսում: Վերադառնալով հաստատվեց Մանուիլի վանքում, իր կարիքները հոգալով սեփական աշխատանքով: Նա հաջորդ կայսեր՝ Ալեքսիոս Կոմնենոսի կողմից մեծ պատիվների արժանացավ, նրա օրոք էլ վախճանվեց: Բոտանիատեսի տապալումից հետո նա մահվան անկողնում ներեց միանձնուհի դարձած նրա կնոջ՝ Մարիամի մեղքերը:

Իսկ պրոտոպրոեղրոս Նիկեփոր Վասիլակիոսը հասնելով Գյուրախիոն, այդ բոլոր շրջաններից զորք էր հավաքագրում, նա Գիաբուլիսի եպիսկոպոս Թեոդոսիոսի միջնոցով նվերներ տալով, Իտալիայից Ֆրանկների էլ բերեց, պատրաստվելով Բրիենիոսի դեմ զուրս գալու: Նա Ֆրանկներից, բուլղարներից, հուճայեցիներից ու արվանիտներից<sup>800</sup> բաղկացած բավականին ուժեղ զորք հավաքեց և այնտեղից զուրս գալով, փութաց դեպի Թեսաղոնիկե: Հասնելով Ախրիդա, որոշեց հենց այնտեղ իրեն կայսր հռչակել, բայց տեղի արքեպիսկոպոսը շիջեց այդ բանն անել: Լինելով Թեսաղոնիկեում, նա իմացավ Բոտանիատեսի գահ բարձրանալու մասին և հպատակութուն խոստովանող մի նամակ գրեց, բայց ծածկաբար խոռվութուն էր սերմանում, գործակից ունենալով Գյումնոս կոչվածին, Գրիգոր Մեսեմերիոսին և Տեսուարակոնտաբլխյուսին: Նա պաժինակներին էլ հրավիրեց զինակցելու: Կայսրը, երբ իմացավ նրա նպատակների ու դիտավորութունները մասին, իր մարդկանցից մեկին նրա մոտ ուղարկեց՝ ապահովության մասին վկայող խրիստովուլ երաշխավորագրով, որով նրան խոստանում էր կատարյալ անվտանգութուն, խնչպես և Նոբելիսսիմոսի աստիճան: Բայց նա առձեռն բարեգործություններն աքհամարհելով, այնուհետև իզուր տեղը ողբաց: Հզոր, մեծախիժ զորքով նրա դեմ ուղարկվեց նոբելիսսիմոս Ալեքսիոսը, որ ստացել էր սևաստոսի պատիվը<sup>801</sup>: Նա հարձակվեց Պերիթեոբիոնում գտնվող և Գյումնոսի հրամանատարության տակ ծառայող Վասիլակիոսի պահակախմբի վրա, մարտ տվեց ու ունչացրեց: Նրա բանակն առաջ անցավ և առանց կորուստների հասավ մինչև Թեսաղոնիկե, որից որոշ հեռավորության վրա բանակեց Վարդար կոչվող գետի դիմացի ափին, որոշելով զորքին հենց այդտեղ հանգիստ տալ: Իսկ Վասիլակիոսը, ջանալով նենգարար հաղթանակի հասնել, մտածեց գիշերով ծածուկ հարձակվել նրանց վրա և գլխովին ջախջախել: Գեմիստոսը, սակայն, նախօրոք սևաստոսին տեղեկացրեց նեղության մասին, և վերջինս ու նրա մարդիկ նախազգուշացան վտանգից: Վասի-



լակիոսն ամբողջ գիշերը սրընթաց շարժվելով, անսպասելի ներքաշվեց դժվարին պատերազմի մեջ: Նա գլխովին պարտվեց, իր մարդկանցից շատերին կորցրեց, հատկապես ֆրանկներից, իսկ ինքն էլ դոմեստիկոսի հետ կովի բռնվելով և նրա կողմից ուժասպառ լինելով, ապաստանեց Թեսաղոնիկեի միջնաբերդում. մտածելով ամրութիան [օգնությամբ] սևաստոսի հարձակումը ետ մղել: Սևաստոսը առանց հապաղելու իր մարդկանց հանձնարարեց շուտափույթ գրավել բերդը: Նրանք փութաջանորեն հարձակման անցնելով, Թեսաղոնիկեցիների համաձայնությամբ շուտով հաղթահարում են այն ու գրավում միջնաբերդը: Գերի է վերցվում նաև ինքը [Վասիլակիոսը], շղթայվում և կապյալ կայսեր ուղարկվում: Երբ այդ լուրը հասնում է կայսեր, վերջինիս հրամանով երիստուպոլսին<sup>802</sup> շատ մոտիկ տեղում նրան կուրացնում են: Դրանից հետո ահա այդ վայրը սկսեց կոչվել Վասիլակիոսի աղբյուր: Իսկ նա կառքի վրա [քաղաք] բերվեց ինչպես մի ողորմելի բեռ ու դժբախտ նահատակ<sup>803</sup>:

Այն միջոցին, երբ զորքերն զբաղված էին արշավանքով՝ ընդդեմ Վասիլակիոսի, պաժինակները գաղազած այն բանի համար, որ իրենցից ոմանք սպանվել էին Բրիեննիոսի կողմից, կոմմանների<sup>804</sup> հետ միասին հարձակվեցին Ադրիանուպոլսի վրա և կրակ գցելով հրկիզեցին այդտեղի տներից շատերը, բայց խոսքի արժանի ոչինչ չկատարած, վերադարձան:

Այդ տարի կուրապաղատ Ֆիլարետոս Վրախամիոսն էլ կայսեր տիրասիրություն ու հպատակություն հայտնեց: Նա հաստատվեց ամուր, պարիսպներով ու կիրճերով շրջապատված վայրերում, հավաքեց հայերի ու փախստական տղամարդկանց մի հոծ բազմություն, նախորդ կայսր Միրայելին հպատակություն շահայտնեց, ընդհակառակը սկսեց սեփականացնել կայսեր տիրույթները: Սակայն երբ կայսերական իշխանությունը Բոտանիատեսն ստացավ, ինքնաբերաբար նրա ծառան դարձավ<sup>805</sup>:

Իսկ Ֆիլիպպուպոլսի սլավիկյաններից<sup>806</sup> ոմն Լեկաս, խնամիանալով սլաժինակների հետ, դասալիք եղավ նրանց մոտ և նրանց հավանությամբ հոռմայեցիների [երկրի] համար ամենասարսափելի սպառնալիքը ստեղծեց: Մի ոմն Դոբրոմիր էլ Մեսեմբրիայում<sup>807</sup> էր տակնուվրայություններ գործում: Նրանք ծրագրել էին կայսեր դեմ խռովություն բարձրացնել, բայց վախեցան, նրանց խելքի բերեցին ուրիշների գլխին եկած փորձու-



թյունները, և նախքան գործի անցնելը, խոնարհեցին կրելու համար ծառայութեան լուծը, ինքնաբերաբար եկան, հնազանդություն հայտնեցին: Հենց այդ ժամանակները Հեկասը սպանեց Սարգիկայի եպիսկոպոս Միքայելին՝ հոգևորականի սրբազան հանդերձները հագին, այն բանի համար, որ կայսերասեր էր և հորդորում էր քաղաքի բնակչութեանը այդպիսին լինել:

Կայսրը մեծ հոգատարություն ու պատիվ ցուցաբերեց նախկին ավգուստա Եվդոկիայի և նրա որդիների նկատմամբ, նա [Եվդոկիային] երեք սեկրետի<sup>808</sup> տիրուհի արեց: Նա պետք եղած հոգատարությունը ցուցաբերեց նաև Բրիեննիոսի և Վասիլակիոսի նկատմամբ:

Իսկ որովհետև թուրքերն արևելքը ոտնատակ էին անում, հավաքելով մեծաթիվ զորք, զորավար նշանակեց Կոստանդին Դուկասի որդի Կոստանդիոսին: Բայց հենց որ նա անցավ դիմացի [ափը] կայսեր դեմ ապստամբություն բարձրացրեց և իր հետ խրիսուսոլոսում գտնվող զորքի կողմից կայսր հռչակվեց: Կայսրը նրանից պահանջեց վերջ տալ ապստամբութեան, բայց երբ նա իր կոչին ընդառաջ չգնաց, ոմանց նվերներով, ոմանց աստիճաններով, ուրիշներին էլ այլ կերպ սիրաշահելով, առանց արյունահեղութեան [Կոստանդիոսին] բռնեց: Հենց իրեն [կայսրը] հռչակողներն էին նրան հանձնողները: Կայսրը նրան վանական խուզեց և աքսորեց ինչ-որ կղզի: Ասում են, թե [Կոստանդիոսը] բարձրացավ մինչև երեցի աստիճանին:

1080

Ինդիկտիոնի երրորդ տարվա հոկտեմբեր ամսին կայծակ ընկավ Կոստանդին Մեծի սյան վրա, որը կրում էր Կոստանդին արձանը: Նախապես դրա վրա Ապոլլոնի արձանն էր կանգնած. սյունը հետագայում [Կոստանդինի] անունն ստացավ: Կայծակն ահա նրա մի մասը ջարդեց, նաև ներսից երկաթե, իսկ դրսից պղնձե երեք գոտիներ:

Բուլղարիայի արքեպիսկոպոս Հովհաննեսի՝ Վասիլակիոսի այդ տեղերից անցնելու ժամանակ վախճանվելու առթիվ, կայսրը նրա փոխարեն մի ուրիշի նշանակեց, որ նույնպես Հովհաննես էր կոչվում, իսկ մականունը Աինոս<sup>809</sup> էր, քանզի գինի ամենևին չէր դործածում: Նմանապես Անտիոքի պատրիարքի նեջման պատճառով, կայսրը պատրիարք նշանակեց ոմն Նիկեփորի, մականունը Մավրոս: Սկոպիեի դուքս նշանակվեց Ալեքսանդրոս Կավասիլասը, իսկ Լևոն Դիավատինոսը<sup>810</sup> Մեսեմբրիա ուղարկվեց և այդ շրջանն էր կառավարում: Նա պաժինականների ու



կոմանաների հետ համաձայնության գալով հաշտություն կնքեց: Կայսրը իր զարմուհի Սինադենեին, Թեոդուլոս Սինադենոսի դստեր, կնության տվեց Հունգարիայի կրալին, որի մահից հետո նա Բյուզանդիոն վերադարձավ: Նրա թագավորության օրոք մետրոպոլիտների և այլ հոգևորականների բազմաթիվ ձեռնադրություններ եղան, բայց ոչ օրինական կարգով:

Կայսրը, որ սովոր էր պարզության ու հասարակության, կայսր դառնալուց հետո էլ չփոխվեց: Նա անչափ առատաձեռն էր ու ձեռնաբաց, բոլորին ընդառաջելու պատրաստ: Նա երկու ծառա<sup>811</sup> ուներ՝ Բորիլոսին ու Գերմանոսին, որոնք, սակայն, ծառայի նման չէին ենթարկվում իրեն, ևլ առանց քաշվելու իրենց խելքին փշածն էին անում: Նրանց պատճառով [կայսրը] սենատի գլխավորները համար տաղտկալի էր. նրանք վրդռվում էին Բորիլոսի ու Գերմանոսի բոլորի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի պատճառով:

Ինչպես վերևում ասվեց, լոզոթետր փախաւ՝ Ռուսելիոսի մոտ: Այնուհետև ձերբակալվելով նրա կողմից, հսկողության տակ էր պահվում: Բայց նա թունավորում, սպանում է Ռուսելիոսին: Ռուսելիոսի մերձավորները [լոզոթետին] բերում հանձնում են Բոտանիատեսին: Նրան արգելափակում են Պրոտե կղզում: [Բոտանիատեսի] շրջանակի մարդիկ, քաջ գիտեՆալով, որ եթե կայսրը սոսկ տեսնի նրան, կնհրի և, որպես շատ փորձառու մարդու, պետական գործերը վարելու համար ծառայության կրնդունի (կայսրը նման հարցերում անընդունակ էր), մի բան, որ իրենց համար ձեռնտու չէր (ենթադրում էին, որ նա իրենց համար կարող է փուշ դառնալ), մեծ հետերիարխ Ստրավոռոմանոսի միջոցով սպանեցին նրան, թեև կայսեր կողմից [Ստրավոռոմանոսը] հրաման էր ստացել նրանից իմանալ միայն կայսրության վերաբերող դրամների մասին և ուրիշ նեղություն չպատճառել: Բայց [Ստրավոռոմանոսը] տեղ հասնելուն պես, շղթայում է նրան և սաստիկ խոշտանգում: Այդ խոշտանգումների ժամանակ էլ նա հոգին փչեց, թեև խոստանում էր, եթե իրեն շտանջեն, ցույց կտա [դրամների տեղը] և կհանձնի դրանք: Բայց, ինչպես ասացի, նրանց մտահոգողը ոչ այնքան կայսերական գործերն էին, ինչքան նրան մեջտեղից վերացնելը՝ նախքան նա անձամբ կհանդիպեր ու խոսակցություն կունենար կայսեր հետ: Լոզոթետի սպանության գործն ահա այսպես վերջացավ<sup>812</sup>:

Ծ Ա Ն Ո թ Ա Ք Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր



1. 'Απὸ γενητων: ἡτοιμασθαι ὑπομνηστικὰς ἀναγραφὰς' գենիկոնի լոգոթետի մասին է պետական ֆինանսների վերահսկիչ սակելլարիոսին ենթակա պաշտոնյայի: Նրա իրավասութիւնները տարածվում էին կայսրութեան ողջ տարածքի վրա: Տե՛ս «Կոստանդին Միրանածին» էջ 290: նաև Bury, IAS, p. 86—90: Guillard, Les logothetes, p. 5—115: Oikonomides, Les lists, p. 313—314:

2. Նիկեիոս 1 (802—811): Սպանվեց բուլղարների խան Կրումի դեմ մղած պատերազմում:

3. Իսահակ I Կոմնենոս (1057—1059):

4. Կոչվում էր նաև արիթմոսների ղրունդար: Տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 282—283: XI դ. նրա ուղղմական պարտականութիւնները վերանում են և նա դառնում է կայսերական տրիբունալի նախագահ: Իր ենթակայութեանն ունենալով ընդարձակ պաշտոններ: Տե՛ս Bury, IAS, p. 60—62: Guillard, Le Drongaire, p. 563—587: Oikonomides, Les lists, p. 331—332: Գրունդարին, (բայց ոչ վիզայի ղրունդարին, որ բյուզանդական աղբյուրներում առաջին անգամ հիշվում է 791 թ. դեպքերի առնչությամբ), հիշում է Սերեոսը: Հմմտ. Ն. Բլուզանդացի, Հայկական բառաբանութիւն, Կոստանդնուպոլիս, 1880, էջ 10:

5. Ապրել է IX դ. և հայտնի է նաև որպես Գեորգիոս Համարտոլոս (Մեղապարտ): Գրել է շորս գրքից բաղկացած ժամանակագրութիւն:

6. Պատրիարք Կոստանդնուպոլիսի (784—806):

7. Սինկելլոսի մասին տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 315: Հիշատակվում է և հայկական աղբյուրներում: Մատթ. Ուոհալեցու ասելով Կոստանդին Մոնոմախը Պետրոս Գետադարձի քննորդի տեր Անանին իբրև թե «արար Սինդելոս» (Մատթ. Ուոհ., էջ 106):

8. Նշանավոր պատմիչ, որի «Ժամանակագրութիւնը» որպես հայոց պատմութեան ուսումնասիրութեան համար կարևոր աղբյուր, կազմելու է սույն՝ «Բյուզանդական աղբյուրները Հալաստանի և հայերի մասին» մատենաշարի շորորդ գիրքը:

9. Մաքսիմիանոսն իշխել է իր որդի Մաքսենտիոսի հետ 306 թվականից:

10. Բնագրում՝ οὐσασαλος Σιχαλιωτης: Նրա երկը չի պահպանվել:

11. Նշանավոր բյուզանդական փիլիսոփա, մատենագիր: Նրա մասին տե՛ս ծանոթ. 635, 718:

12. Սկիիցեսի թվարկած հեղինակներից շատերը անունով են հայտնի: Թեոդորոս Դափնոպատեսն ապրել է Ռոմանոս I-ի ժամանակ: Գրել է նամակներ և պատմութիւն, որ չի պահպանվել: Նիկեոսա Պատրիարքոնացին IX դ. վերջին և X դ. սկզբում է ապրել, գրել պարսավագիր Փոտ պատրիարքի դեմ: Հովսեփ Գենեսիոսին է վերագրվում «Գիրք թագավորութեանց» երկը: Այն պահպանվել է, բայց այժմ ուսումնասիրողները կասկածում են, որ այդ գիրքը Հովսեփ Գենեսիոսի հեղինակութիւնն է: Մանուիլը ութ գրքից բաղկացած երկ է գրել և ձոնել Հովհաննես Կուրկուասին: Ասիացի Հեղին նույնացնում են Հեղին Սարկավագի հետ, պահպանվել է նրա անունը կրող պատմական երկը: Թեոդորոս Սերաստացին Վասիլ II-ի ժամանակակից էր, նրա երկից պահպանվել է երեք հատված՝ Վասիլ II-ի թագավորութեան վերաբերյալ:

13. Նկատի ունի Գեորգիոս Վանականին և Թեոփանես Խոստովանողին:

14. Ինչպէս Առաջաբանում ասվեց, մենք կրճատել ենք Հովհաննես Սկիլիցեսի ժամանակագրութեան առաջին բաժինը, Նիկեփոր I-ից Կոստանդին Միրանաժինն ընկած ժամանակաշրջանի պատմութիւնը, քանզի գրված լինելով Թեոփանեսի Շարունակողի ժամանակագրութեան հիման վրա, բանաբաղային բնույթ ունի: Թեոփանեսի Շարունակողի երկը կազմելու է սույն՝ «Բյուզանդական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի հինգերորդ գիրքը:

15. Փակագծերի մեջ տրվում են կայսեր (կայսրուհու) թագավորութեան տարեթվերն ըստ հետևյալ աշխատութեան. Grumel, La Chronologie: Այդ տվյալները, որոնք ստուգված են բազմաթիվ այլ աղբյուրներով, հնարավոր է, որ առանձին դեպքերում չհամընկնեն Հովհաննես Սկիլիցեսի թվական տվյալներին:

16. Կոստանդին VII Միրանաժինը: Նրա առաջին մենիշխանութիւնը տևեց 913 թ. հունիսի 7-ից մինչև 920 թ. դեկտեմբերի 17-ը, երբ երկրի փաստական կառավարումն իր ձեռքը վերցրեց Ռոմանոս I Լակապենոսը: Կոստանդին երկրորդ մենիշխանութիւնն սկսվեց 945 թ. հունվարի 27-ին և տևեց մինչև մահը՝ 959 թ. նոյեմբերի 9-ը:

17. Ինդիկտիոնի մասին տե՛ս «Կոստանդին Միրանաժին», էջ 230: Այն կոչվում է «բյուզանդական», «Կոստանդնուպոլսի» կամ, վերականգնողի անունով՝ Կոստանդինյան (Կոստանդին I կայսեր անունով): Առաջին ինդիկտիոնն հաշվվում է 312 թ. սեպտեմբերի 1-ից: Արևելքում (բացի Ծգիպտոսից) ինդիկտիոնն սկսվում էր սեպտեմբերի 23-ին, սեպտեմբերի 23-ն էր բյուզանդական եկեղեցական Նոր տարին: Քաղաքացիական Նոր տարին սկսվում էր սեպտեմբերի 1-ին: Ինդիկտիոնի մասին տե՛ս Grumel, Indiction, p. 128—143: Հայկական աղբյուրներում հանդիպում է ընդիկտիոն, դեքտիոն, ընդիքտիոն, ինդիկտիոն և ինդիքտիոն ձևով: Խնդրո առարկա ինդիկտիոնի 3-րդ տարվա Զատկի օրը ընկնում է 960 թ. ապրիլի 22-ին:

18. Սբ. Սոֆիայի առաջին անունը «Մեծ եկեղեցի» էր, քանզի նա իր շափերով գերազանցում էր Կոստանդնուպոլսի իր ժամանակակից բոլոր եկեղեցիները: Սբ. Սոֆիա անունը նա ստացավ ավելի ուշ: Պատմիչ Սոկրատեսը գրում է, թե Կոստանդ կայսրը կառուցում էր Մեծ եկեղեցին, որն այժմ Սոֆիա (Իմաստութիւն) է կոչվում: Հավանական է, որ նրա կառուցումն սկսել է Կոստանդին կայսրը (մեռ. 337 թ.): Սոֆիա անունը դեռևս առանց «սրբի» սովորական էր V դ. առաջին կեսին: Եկեղեցին նվիրված չէր Սոֆիա անունով որևէ սրբուհու: Դա Աստվածային Իմաստութեան (Ἥεῖα Σοφία). Բանի՛ սուրբ Ծրրորդութեան երկրորդ անձի եկեղեցին էր, որ 532 թ. հունվարի 15-ին, «Նիկա» նշանավոր ապստամբութեան ժամանակ կործանվեց հրդեհից: Հուստինիանոս I կայսրը միանգամայն նոր նախագծով վերակառուցեց այն՝ նշանավոր ճարտարապետներ Անթեմիոսի և Իսիդորոսի ջանքերով: 537 թ. դեկտեմբերի 27-ին տեղի ունեցավ նրա օծումը: Սբ. Սոֆիան շատ տուժեց լատինական գրավման ժամանակ և աստիճանաբար անկում ապրեց՝ կայսրութեան անկման հետ միասին: 1453 թ. Մեհմեդ II-ը սբ. Սոֆիան վերածեց մզկիթի: 1934 թ. թուրքական կառավարութիւնը եկեղեցին վերածեց բյուզանդագիտական թանգարանի: Սբ. Սոֆիան ունեցել է հարուստ գրադարան, նա գրչութեան արվեստի մեծ կենտրոն էր: Տե՛ս Janin, La geographie, p. 471—485:

19. Խոսքը ապագա կայսր Վասիլ II Բուլղարասպանի մասին է (976—1025):

20. Աթոռակալել է 956 թ. ապրիլի 3-ից 970 թ. փետրվարի 5-ը:

21. Կայսրերը Կոստանդնուպոլսում ունեին մի քանի պալատ-ասպարաններ: Պեգեի պալատը գտնվում էր նույնանուն թաղամասում (թաղամասն այժմ կոչվում է Քասրմփաշա):



22. Կոստանդին VIII-ը, որն իշխեց որպես կայսերակից իր եղբոր Վասիլ II-ի ամբողջ թագավորության ընթացքում, նրա մահից հետո՝ միահեծան 1025 թ. դեկտեմբերի 16-ից մինչև 1028 թ. նոյեմբերի 11-ը:

23. Պրեպոզիտոսը (praepositus sacri cubiculi) կայսեր ներքինապետը և սենեկապետը: Հիմնականում հիշվում է VI դ.: Արքունիքում շատ մեծ դեր էր: Մանրամասն տե՛ս Bury, IAS, p. 123—124; Guillard, Le Preposite, p. 333—380:

24. Պարակիմոմենոսի, կայսեր սենեկապետի մասին տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 260: Որպես կանոն ներքինի էր լինում: Ներքինիներին տրվող հատուկ պաշտոններն արքունիքում հետևյալներն էին. պարակիմոմենոս, կայսեր պրոտովեստիարիոս, կայսեր սեղանապետ, կայսրուհու սեղանապետ, Մեծ պալատի պապիաս, Մեծ պալատի պապեասի տեղակալ (դեպերոս), կայսեր մատովակր (պինկերենես), կայսրուհու մատովակր, Մագնավրայի պապիաս և Դափնեի պապիաս: Պարակիմոմենոսները որպես կանոն պատրիկի պատվաստիճան ունեին, կամ էլ պրոեդրոսի (տե՛ս Guillard, Le Parakimomene, p. 202—215):

25. Բարձր պատվաստիճան Բյուզանդիայում: Մանրամասն տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 217:

26. Սխուլերը «տագմա» կոչվող զորագնդերից մեկն էր: Այդ զորագնդերն էին՝ սխուլեր, էքսկուբիտներ, հիկանատներ, նումերոսներ և արիթմոսներ: Տաղմաներում (ի տարբերություն բանակաթեմային-թեմատիկի զորքերի) ծառայում էին պրոֆեսիոնալ ռազմիկներ, որոնք գտնվում էին կայսեր տրամադրության տակ և կոչվում էին βασιλικά ταγματα: Նրանք կայսերական գանձատնից ռոճիկ էին ստանում և գինվում պետության հաշվին: X դ. սկսած սխուլերի ղոմեստիկոսը դառնում է համայն զորքերի հրամանատար, սպարապետ, Արևելից սխուլերի սպարապետ (δομestικός σχολῶν Ἀνατολῆς), որի հետ միաժամանակ հանդես է դալիս Արևմուտքի զորքերի ղոմեստիկոսը (δομestικός τῆς ὀύσεως): Տե՛ս Ahrweiler, Recherches, pp. 24—26; Սխուլերի ղոմեստիկոսի մասին ընդհանրապես տե՛ս Guillard, Le domestique des scholes, p. 5—63: Մյուս տագմաների հրամանատարները կոչվում էին κατεπανω (կատապան) կամ δούξ (դուքս): Տե՛ս վերը, էջ 55: Տագմաները XI դ. սկզբից աստիճանաբար փոխարինեցին նահանգների բանակաթեմային զորքերը և դարձան կայսրության միակ ռազմական ուժը. Ahrweiler, Recherches, p. 36:

Ղոմեստիկոս տերմինը հանդիպում է նաև հայկական աղբյուրներում՝ աղավաղված ձևով և հաճախ իբրև անձնանուն. «դեմեստիկոս» (Արխտ. Լաստ., էջ 47, Հովհան Մամիկ., էջ 283, Ասողիկ, էջ 170, 179, 186, Մատթ. Ոսկև., էջ 14, Սմբատ Սպար., էջ 8): Այդ մասին տե՛ս Հյուբշման. Հայկականք, «Բաղմավեպ», 1902, էջ 213: Նիկեփոր Փայասը ասլագա կայսր Նիկեփոր II Փոկասն է, Վարդաս Փոկասի (ավագ) որդին և Լևոն Փոկասի եղբայրը: Նա ազգությամբ հայ էր: Տե՛ս Charanis, On the ethnic origin, p. 42—45: Նույնի՝ The Armenians, p. 39: Adontz, L'âge et l'origine, p. 108: Տե՛ս նաև Каздан, Армяне, стр. 72 և հտ.:

Յահյա Անտիոքացու ասելով, Ռոմանոս II կայսրը Նիկեփոր Փոկասին նշանակել էր Արևմուտքի ղոմեստիկոս և նա Կրետե կղզին գրավեց որպես Արևմուտքի ղոմեստիկոս: Նույն այդ ժամանակ կայսրը Արևելքի ղոմեստիկոս էր նշանակել Նիկեփորի եղբայր Լևոն Փոկասին: Նույն պատմիչը ցույց է տալիս, որ Նիկեփոր Փոկասը Կրետեն գրավելուց հետո նշանակվեց Արևելքի ղոմեստիկոս: Տե՛ս "Histoire de Yahya", p. 778, 782—783: Սիլիլիցեսի ասելով Նիկեփորին Արևելքի



դոմեստիկոս նշանակել էր Կոստանդին Ծիրանածինը: Նիկեփոր II Փոկասի մասին տե՛ս «История Византии». том II, стр. 208—215: Schlumberger. Nicephore Phocas.

27. «Սարակինոս» բառի արմատը արաբերեն «շարք»-ն է, որ «Արևելք» է նշանակում: Տե՛ս David-beg, Le mot Tervagan, pp. 71—73: Զոնարասը գրում է, որ Ռոմանոս II-ն իր թագավորության հենց սկզբում, տեսնելով, որ ինչպես արաբները տակնուվրա են անում, ասպատակում կայսրության տարածքը, իր մոտ կանչեց Նիկեփոր Փոկասին և հարցրեց նման վիճակի պատճառը: Փոկասն առանց քաշվելու պատասխանեց, թե պատճառն այն է, որ «դու ես թագավորը, իսկ ստրատարխը (սպարապետը) իմ հայրը, դու պետք եղածի պես շես վարում իշխանությունը, իսկ իմ հայրն էլ արծաթասեր է: Եթե ուզում ես, հոռմայեցիների վիճակը կբարելավվի, բայց դա ինքնաբերաբար չի լինի»: Դրա վրա է, որ կայսրը թույլ տվեց Փոկասին վարվել ըստ իր հայեցողության: Նա անհապաղ հոգ տարավ բանակի կազմակերպման ու մարզման աշխատանքներին: Zon., t. IV, p. 74:

28. Ամիրաների մասին տե՛ս Menager, Amiratus: Հալեպի ամիրա Համդունի տակ ենթադրվում է Սեյֆ ադ-Դաուլա Աբու-լ-Հասան Ալին (944—967): Նիկեփոր Փոկասի՝ արաբների դեմ ունեցած հաջողությունների մասին մանրամասն խոսում են հայկական աղբյուրները: Ստեփանոս Ասողիկը գրում է. «Այս լաուրդ Ռոմանոսի Յունաց թագաւորի էր մաժիստրոս նիկիփոս և պատրիկ Կիւո-ժան, որք զարհուրեցուցանէին զամենայն Տաճկաստանեայս զօրութեամբ իւրեանց» (Ասողիկ, էջ 182):

29. Լևոն Սարկավազը ցույց է տալիս, որ բյուզանդական բանակում կար նաև հայկական զորամաս (το των Ἀρμενίων τεύχος), որն աչօի ընկավ մարտերում: Leo Diac., p. 14:

30. Ժամանակակից Խանիա քաղաքը կղզու հյուսիսային ափին:

31. Կրետեն Իսպանիայի արաբները գրավել էին 823 թ., օգտվելով Բյուզանդիայում բռնկված թովմա Գազիրացու ապստամբությունից: Դրանից հետո բյուզանդացիները բազում ապարդյուն փորձեր արեցին կղզին գրավելու համար: Կրետեի գրավումը մեծ տպավորություն գործեց ժամանակակիցների վրա: Թեոդոսիոս Սարկավազը դրան մի սյոնեմ գրեց և ձոնեց Նիկեփորին՝ «մագիստրոսների արեգակին»: Theodosii Diaconi de Cretae expugnatione, p. 259—306: Παπαγεωργίου, Θεοδοσιος ο διάκονος:

Այլ աղբյուրներից հայտնի է, որ Նիկեփոր Փոկասը, գրավելով Կրետեն և ցանկանալով ստվարացնել արարական տիրապետության ժամանակ շատ նվազած քրիստոնյա բնակչությունը, քրիստոնյաների հոծ զանգվածներ բնակեցրեց այնտեղ, այդ թվում և բաղձա՝ աղար հայերի (Ἀρμενίων... φατοίας ἐνοικιστάμενος. Leo Diac., p. 28): Մինչև օրս Կրետեում բազմաթիվ են Ἀρμενοί (հայեր) նաև Ἀρμενοπετρα (հայկական քար), անուշով գյուղեր, որոնց առկայությունը բացատրվում է Նիկեփոր Փոկասի գաղթեցումներով: Մանրամասն տե՛ս Παπαρηγοπούλου, Ἱστορία, հատ. Դ, էջ 96, II. N. Παπαγεωργίου, Περί των σημασιών του ρήματος αρμενίζω. «Ἀθηναϊκόν» τριμ. ΚΔ, Ἀθήναι, 1912, σελ. 467:

31ա. Այսինքն բյուզանդացիների (հույն-հոռոմների), Միջնադարում «Հելլեն» բառը հեթանոս էր նշանակում, այդպես էր հասկանում դեռևս Եզնիկ Կողբացին: Եպիփան Կիպրացու «Ἑλληνογενὲς ἀπὸ τῶν γρονων τοῦ Σερουχ ἐναρξάμενος»-ը Եզնիկը թարգմանել է. «...հեթանոսութեան սկիզբն ի Սերուբայ ժամանակաց անտի եղև»: Տե՛ս Տ(աշլան), Խոսրովիկ, էջ 294: Իսկ Գեորգ Պիսիդացու «Ἑλληνογενὲς Ἑλληνας εἰξάντες λόγοις» — թարգմանել են «հեթանոսական բանիք հեթանոսաց հետևողը» (տող 1121—1122):

32. Լևոն Սարկավազը Լևոն Փոկասի մասին մեծ գովեստով է խոսում, նրան ան-



վանում է երիտասարդ, բաջ տղամարդ, արտակարգ խոհեմ, ամեն մի իրավիճակում ամենաճիշտ որոշումն ընդունող: *Leo Diac.*, p. 18: Համդունի դեմ Հևոն Փոկասի մղած պատերազմների մասին Հևոն Սարկավազը շատ ավելի մանրամասն է խոսում (*Leo Diac.*, p. 19—24):

33. Ադրասոս (ալլ դրչագրերում՝ Անդրասոս): Ըստ Ռամզեյի գտնվում էր Իսավրիայում:

34. Բյուզանդիայում ստրկական աշխատանքն օդտագործվում էր և՛ արհեստագործության, և՛ գյուղատնտեսության մեջ: Ստրուկներ ձեռք բերելու գլխավոր աղբյուրը պատերազմներն էին, բայց հազվադեպ չէին այն դեպքերը, երբ կարիքը ստիպում էր մարդկանց վաճառելու իրենց երեխաներին: Նիկիայի մետրոպոլիտ Քեոդորոսի մի նամակում խոսվում է շորս տարեկան հասակում գնված մի ստրկի մասին (*Darrouzes, Epistoliers* p. 290): X դ. կար աշխույժ ստրկավաճառություն: Հովհաննես Չմշկիկի մի օրենքում ասված է, որ ստրատիոտները ռազմագերիներին վաճառում են հենց մարտի դաշտում, բայց և տանում բյուզանդական շուկաները: Մեծահարուստները, ցանկանալով էժան գնով ստրուկ գնել, իրենց մարդկանց ուղարկում էին հենց պատերազմական գործողությունների շրջանները: Ստրուկների՝ Հուստինիանոս I-ի կողմից հաստատված սակագինը (*Cod. Just.* 6,43,3, 531 թ.) ամբողջ ստրկավաճառության ընթացքում մնաց անփոփոխ: Սովորական ստրուկն արժեք 20 դահեկան, արհեստավոր ստրուկը՝ 30, նոտարը՝ 50, բժիշկը՝ 60, ներքինի արհեստավորը՝ 70 դահեկան: Գների տատանումը ժամանակավոր բնույթ էր կրում: Հովհաննես Չմշկիկի 972—975 թթ. միջև հրապարակված մի օրենք արգելում էր զինվորականների կողմից որպես ստրուկ վաճառվելիք, սեփական կալվածներում աշխատելու որոշված կամ ազգականներին նվիրաբերվելիք գերիների համար մաքս (*χομμερχιον*) վերցնել (տե՛ս *Imp. Joannis Tzimischis Nov. XXV, 257—258*): XI դ. Բյուզանդիայում առկա ստրկության մասին վկայող կարևոր աղբյուրներից է Եվստաթիոս Բոյլիասի կտակը (1059), որի ամբողջական թարգմանությունը տե՛ս Հ. Բարթիկյան, Եվստաթիոս Բոյլիասի կտակը, էջ 393—430: Բյուզանդիայում ստրկության մասին հիշատակություն ունի նաև Արիստակես Լաստիվերցին: Վասիլ II-ի վրաց թագավոր Գիորգի դեմ մղած պատերազմում (1023) ձեռք բերած «մարդագերին վաճառակուտ արարին ի հեռուոր ազգս» (*Արիստ. Լաստ.*, էջ 32): Ուսումնասիրություններից տե՛ս *Zachariae von Lingenthal, Jus Gr. Rom.: Каждан, „Великое восстание“, стр. 77. Егз же, Рабы и мистни, стр. 63—84: Сюсюмов, О правовом положении рабов: Браунинг, Рабство: Hadjinikolaou—Marava, Recherches; Ostrogorskij, Quelques problemes, p. 72 sqq. Kopstein, Zur Sklaverei. Նույնի Einige Aspekte, S. 237—247: Հակոբյան, Վարձկանները, էջ 70—90, Նույնի, Ծառասողախին-ստրուկները, էջ 124—138:*

35. Եթե չի բացատրված, թե ո՞ր քաղաքի մասին է խոսքը, նշանակում է, որ նկատի ունի Կոստանդնուպոլիսը: Միջին դարերում բյուզանդացիները Կոստանդնուպոլիսի արտարեն ավելի հաճախ օգտագործում էին «քաղաք» բառը (*-ολις*): Նրանք ասում էին, թե «գնում են քաղաք» (*հուն. στην πολιον*— «ստին պոլին»), այդտեղից էլ թուրքերի Ստամբուլը (Իստամբուլը), որը սակայն թուրքերը չեն տվել առաջին անգամ, ինչպես կարծում է Գ. Մորավսիկը (*G. Moravcsik, Το Βυζαντιον εις το χατοπετρον των ονοματων του. Ἐπετηρίς Ἐταιρείας Βυζαντινῶν Σπουδῶν, τομ. ΑΘ'-Μ, Ἀθήναι, 1972—73, σελ. 10*), քանզի քաղաքի թուրքական գրավումից (1453) առաջ էլ հայերն այն Ստամբուլ կամ Ստամբուլ էին անվանում: 1398 թ. մի հիշատակարանում գրիչ Պավղոսը ասում է, թե ձեռագիրը գրվել է «ի քաղաքս Խալատան (իմա Ղալաթա), հանդէպ Կոստանդնուպոլիսի,

ի նեղ և նուրբ ժամանակիս, որ թուրքն խսարել է զմեզ և զՍտամբուլս...»: Լ. Խաչիկյան. ԺԴ դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, № 779: Ինձ անմատ-  
չելի է Հ. Պերպերյանի հետևյալ հոդվածը. «Stanbol (Istambul) kelimesinin etimolojü-  
sine dair bir deneme. Istanbul Üniversitesi Edebiyat Fakültesi Tarih Dergisi 9,  
1954, էջ 187—192»:

36. Այդ շքերթը *ἄστραξις* (տրիումֆ) էր կոչվում և մեծ հանդիսավորությամբ կազ-  
մակերպվում հաղթանակների ու այլ կարևոր դեպքերի առնչությամբ:

37. Զիարշավարանն ու ձիարշավական մրցումները Կոստանդնուպոլիս բերվեցին  
հին Հռոմից: Կոստանդնուպոլսի ձիարշավարանն սկսեց կառուցել Սեպտիմիոս Սևերոսը,  
ավարտեց՝ Կոստանդին Մեծը: Բացի գլխավոր ձիարշավարանից կային մի շարք այլ  
ձիարշավարաններ (Յուկանիստերիոն, սբ. Մամասի և այլն):

38. Բռնի վանական իուզելի Բյուղանդիայում պատիժ էր, քաղաքական հակառա-  
կորդներին հրապարակից վերացնելու միջոց:

39. Կղզի Պրոպոնտիսում (Սարմարայի ծովում):

40. Այս Ստեփանոսի մասին Սկիլիցեսը խոսում է իր աշխատության առաջին  
բաժնում: Ստեփանոսը Ռոմանոս I Լակապենոսի որդին էր: Վասիլ Պետինոսի ղրղ-  
մամբ նա տապալեց իր հոր, հույս ունենալով, որ Պետինոսի օգնությամբ կայսր կդառ-  
նա: Բայց վերջինս դավաճանեց և Կոստանդին Միրանաթինի ղրղմամբ նրան ձերբա-  
կալեց ու աքսորեց: Պետինոսին այս գործում աջակցեցին Սարիանոսը, Վարդ Փոկասի  
որդիներ Նիկեփորը և Լևոնը, Նիկոլայոս ու Լևոն Թունիկյանները և ուրիշներ (Ioan.  
Synopsis, p. 236).

41. Վանք Բյութանիայում: 842 թ. այստեղ աքսորվեց ապագա պատրիարք Մեթո-  
դիոսը, իսկ հետագայում նաև կայսր Միքայել Կալաֆատեսը:

42. Բյուզանդական աղբյուրներում՝ Մոսելև (*Μωσαλέε*) կամ Մուսելե (*Μουσελέε*) ձևով  
տառադարձվում է հայկական Մուշեղ անունը, որ արդեն աղգանուն է դարձել: Նրանց  
մասին տե՛ս *Бармукия*, *Византийский эпос*, стр. 34: նաև՝ *Каждан*, *Армяне*,  
стр. 10—11: «Մերունի Ռոմանոսը» Ռոմանոս I Լակապենոսն է, որ «ծերունի» է անվան-  
վում տարբերվելու համար Ռոմանոս II-ից:

43. Բոնոսի ջրամբարը (ցիստերնան—*κυστερναι*) ծածկված էր և կրում է 627 թ.  
վախճանված սլատրիկ Բոնոսի անունը:

44. Անտիոքոսի սլալատը գտնվում էր գլխավոր ձիարշավարանից հյուսիս-արև-  
մուտք:

45. Բյուզանդիայում մոր անեծքը սարսափելի էր համարվում: «Դիդենիս Ակրի-  
տաս» էսլոսում գրված է. «մահից մի վախեցիր, վսիւեցիր մոր անեծքից, ուր անեծ-  
քից զգուշացիր...» (Անդրոսի տարբերակ, Ի, 325—326):

46. Ստուդիոնի վանքը նվիրված էր Հովհաննես Կարապետին, գտնվում էր Կոս-  
տանդնուպոլսի Պսամաթիա (այժմ՝ Սամաթիա) թաղամասում և բյուզանդական ամե-  
նանշանավոր սրբատեղիներից էր: Կառուցել էր 463 թ. պատրիկ Ալ. Ստուդիոսը, Արև-  
վելից կոնսուլը: Վանքը մինչև VII դ. կարևոր դեր չէր խաղում Կոստանդնուպոլսի եկե-  
ղեցական կյանքում: Նրա վանականները դաժան հալածանքների ենթարկվեցին VIII դ.  
կեսերից պատկերամարտների կողմից: Վանքը ծաղկեց վանահայր սբ. Թեոդորոս Ստու-  
դիտեսի օրոք: Վանքին կից գործում էր դպրոց, կար հյուրանոց: Վանքում մեծ զար-  
գացում ապրեց զրչության արվեստն ու պատկերագրությունը, նա մեծապես նպաստեց  
IX դ. սկիզբ առած գրականության ու արվեստի վերածնությանը: Վանականները հա-  
լածանքի ենթարկվեցին նաև Լևոն V Հայկազնի, Միքայել Թվատի ու Թեոփիլոսի օրոք:



Վանքի Կանոնադրութիւնը բաղում վանքերի կանոնադրութիւնների հիմք է ծառայել: Իվթիմիոս Ստուդիտեսն էր, որ Չմշկիկ կայսեր օրոք կազմեց Աթոնի առաջին կանոնադրութիւնը: Վանքն իր գոյութիւնը պահպանեց շատ երկար և միայն Բայազետ I սուլթանի օրոք (1481—1512) վերածվեց մզկիթի, որ կա մինչև այսօր և կոչվում է Միրահոր կամ Իմրահոր ջամի: Տե՛ս Janin, La geographie, 444—445: Ստուդիոնի վանականներին հիշում է և Մխիթար Գոշը. «Սպուդէթ՝ կրանաւորք քաղաքին, որոց դործ է նոցա զգորովայսն, եւ զպաշտան. եւ զկանոնսն երգել» (Գիրք դատաստանի, էջ 139): Տե՛ս նույն տեղում, «Եւ սպուդէս Մոնաքոսքն՝ որք են միաւորք»: Հմմտ. էջ 402: Նման անվանում հանդիպում է և Մովսէս Խորենացու Պատմութեան մեջ. «Եւ ցրուեալ աշակերտաց նորա (Սահակի) կրօնաւորաց սպուդէից ի դաւառս իւրաքանչիւր, վանորայս շինեցին՝ օղղովեալ եղբարս» (Գ, 67):

47. Սկիւիցեսը ճիշտ չէ: Դեպքերին մոտիկ կանգնած Լևոն Սարկավագը գրում է, որ Ռոմանոս կայսրը նրան փառավոր ընդունելութիւն կազմակերպեց, նիկեիորը ձիարշավարանում տրիումֆ արեց, քաղաքի համայն դեմոսի ներկայութեան, որն ապշել էր բերված ավարի վրա: Պատմիչի ասելով թվում էր, թե բարբարոսների ողջ երկրի հարստութիւնը այդտեղ էր կուտակվել: Ավարին հետևում էին ռազմագերիները: Այդ տրիումֆի կազմակերպումից հետո է, որ Ռոմանոս կայսրը նիկեիորին նշանակեց Արեւելից գործերի ղոմեստիկոս (Leo Diac., p. 28—29):

48. Հայեսլ քաղաքը: Կոչվում էր նաև Արևելքի Բերիա, տարբերվելու համար Մակեդոնիայի նույնանուն քաղաքից:

49. Սկիւիցեսի սոտ սխալ կա: Ռոմանոսն այդքան չթագավորեց: Լևոն Սարկավագի ասելով նա թագավորեց երեք տարի և հինգ ամիս (Leo Diac., p. 31):

50. Բյուզանդական պատմիչներ Լևոն Սարկավագը և Չոնարասը գտնում են, որ Ռոմանոս II-ին թունավորեցին: Zon., XVI, 23. 22, Leo Diac., p. 33: Ենթադրվում է, որ այդ ոճրի կազմակերպիչը Թեոփանոն էր:

51. Վասիլ II (976—1025) և Կոստանդին VIII (976—1028): Ասողիկը, հայտնի չէ ինչ աղբյուրից քաղելով, գրում է, որ Ռոմանոս կայսեր մահից հետո «թագաւորեաց ի Կոստանդնուպոլիս Մարինոս ոմն», որին Հովհաննես Չմշկիկը «ընկենու ...և թագաւորեցուցանէ զնիկիփոռ» (Ասողիկ, էջ 183): Այդ հարցի վրա լույս է սփռում Լևոն Սարկավագը: Պարակիմոմենոս Հովսեփը, երկյուղելով նիկեիորից, դիմում է իտալական զորքերի նախկին հրամանատար պատրիկ Մարիանոսին. խոստանալով նրան կայսր հռչակել, եթե համաձայնվի հանդես դալ նիկեիորի դեմ: Մարիանոսը նրան պատասխանում է. «Չայնդ կորիր, դու ուղում ես դրդել, գրգռել մի կապիկի՝ մարտնչելու զինյալ հսկայի դեմ, որից սարսափում են ոչ միայն հարևան այլազգիները, այլ ողջ արևելքըն ու արևմուտքը» (Leo Diac., p. 37): Մարիանոսը խորհուրդ է տալիս, Հովսեփին նման հարցով դիմել Հովհաննես Չմշկիկին, քանզի բանակը նիկեիորից հետո նրան է պատվում. «այլ կերպ մի փորձիր սասանել անսասան ու աներեր աշտարակը» վերջում ասաց նրան Մարիանոսը:

52. Կայսրուհի Թեոփանոյի: Բյուզանդիայում կայսրուհուն անվանում էին նաև *θεσποινα* (տիրուհի), ինչպես և կայսեր՝ *θεσπότης* (տեր):

53. Լևոն Սարկավագի ասելով, ներքինի Հովսեփ պարակիմոմենոսը թշնամարար էր տրամադրված նիկեիորի նկատմամբ: Տեսնելով, որ բանակի և դեմոսի կուռքն է դարձել, վախենում էր, որ նա կարող է ապստամբել, դրա համար ջանում էր նրան խարեութեամբ աշխատ մտցնել, կուրացնել ու աքսորել (Leo Diac., p. 31—32):



54. Խոսքը Կոստանդին Ծիրանածինի և նրա աներոջ Ռոմանոս I Հակապենոսի մասին է:

55. Ռոմանոս I-ի որդի Ստեփանոսը, որին Կոստանդին Ծիրանածինի դրդամամբ ապալել էր Վասիլ Պետինոսը:

56. Քաղաք Հեսբոս (Միտիլենե) կղզում:

57. Բուլղարների ցար Սիմեոնի որդին (927—969): Ամուսնացել էր Ռոմանոս I կայսեր թոռ Մարիայի հետ, որը վերանվանվեց Իրենե:

58. Իորիսն ու Ռոմանոսը պատանդ տարվեցին 963 թ. (Adontz. Samuel, p. 349): Նրանք աղատ արձակվեցին 966 թ., Նիկեփորի՝ Ասորիք կատարած արշավանքից հետո: Նրանց վերադարձը Բուլղարիա Ն. Ադոնցի կարծիքով կապ շունի կոմսաձագերի ապստամբության հետ (նույն տեղում, էջ 350):

59. Դավիթ, Մովսես, Ահարոն և Սամուիլ եղբայրները բյուզանդական աղբյուրներում կոչվում են կոմիտոպուլներ (հայերեն՝ կոմսաձագեր): Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ նրանց հիշատակումն այստեղ ընդմիջարկություն է: Ն. Ադոնցի կարծիքով, կոմսաձագերն առաջին անգամ հանդես եկան այն ժամանակ, երբ Կեկավմենոսը չարիսայի և Հելլադայի գորավարն էր (980—983): Այս ենթադրությունը չեն ընդունում ժամանակակից ուսումնասիրողները, որոնք կոմսաձագերի ապստամբությունը ֆիվագրում են 969 թ.: Այդ մասին մանրամասն տե՛ս ծանոթ. 286:

60. Զոնարասի ասելով Նիկեփոր Փոկասի տունը գտնվում էր Կապադովկիայում (Zon., IV p., 75):

61. Նշանավոր հայազգի ղորավար Հովհաննես Չմշկիկը (հետագայում՝ Հովհաննես I կայսր): Ծագում էր Կուրկուասների (Գուրգեն) հայտնի աղնվական ընտանիքից: Կոն էր Թեոփիլոս Կուրկուասի, նշանավոր Հովհաննես Կուրկուասի եղբոր: Լևոն Սարավազի ասելով «Հովհաննեսը փառավոր ընտանիքից էր սերում, հայրը աղնվական էր արևելքից, իսկ մոր կողմից՝ Նիկեփոր կայսեր զարմիկն էր» (Leo Diac., p. 99): Նա խնամիական կապեր էր հաստատել Բյուզանդիայի հայազգի հայտնի գործիչների հետ, առաջին անգամ ամուսնացել Վարդաս Ոկլերոսի քույր Մարիայի հետ, երկրորդ անգամ՝ Կոստանդին Ծիրանածինի դուստր Թեոդորայի: Լևոն Սարկավազը նրան բնութագրում է որպես արտակարգ հանդուգն մարդ, որ թեպետև շատ կարճահասակ էր, բայց այդ փոքրիկ մարմնի մեջ հերոսական քաջություն ու կիրք կար (Leo Diac., p. 59):

Չմշկիկի մասին հիշատակում են հայկական, ասորական և արաբական աղբյուրները: Ըստ Ասողիկի, նա դեռևս Կոստանդին Ծիրանածինի օրոք մասնակցել է Կարինի գրավմանը (949) և այն ժամանակ ունեցել է ղոմեստիկոսի աստիճանը. «յՅՂԸ թուականին առաքել կայսրն Կոստանդին զգեմեսլիկոսն զՉմշկիկ զօրո: ծանու ի կողմանս Կարնոյ: Որ եկեալ պաշարեաց զԹէոդուպոլիս... և էառ զքաղաքն: Ուր բազում գործս արո:թեան ցուցեալ Կիւռ-ժան թոռն Չմշկայ, ի մանկութեան տիս գոլով յայնժամ» (Ասողիկ, էջ 179): Պետք է ասել, որ Կարինի գրավողը Թեոփիլոս Կուրկուասն էր, Հովհաննես Կուրկուասի հարազատ եղբայրը: Բացառված չէ. հարկավ, որ Չմշկիկը մասնակցած լինի Կարինի գրավմանը: Մատթեոս Ուոհայեցու համաձայն, «Չմշկիկն էր ի գաւառէն Խոզնայ, ի տնդւոյն, որ այժմ կոչի Չմշկածակք, (Մատթ. Ուոհ., էջ 19): Միքայել Ասորու ասելով, Չմշկիկը (Շումուշկայ) շատ ուժեղ էր ռազմական արվեստի մեջ, ֆիզիկապես հզոր, պատերազմներում քաջարի ու հաղթող: Նախքան կայսր դառնալը նա հաստատվել էր Մելիտենեի և Անձիտի շրջաններում և բազում վայրեր, որոնք իրեն էին պատկանում, «կան մինչև այսօր»: Նա հոռոմոց զորքերի սիրելին էր, քանզի նա միշտ հաղթող էր մարտերում և նրանց էր ենթարկում քաղաքներ ու գավառներ



(*Michel le Syrien, Chronique, t. III, p. 132: Հմմտ. Միխ. Ասորի, Ժամանակագրութիւն, 1871, էջ 383*): Միքայել Ասորու ժամանակագրութեան հայ թարգմանիչն ավելացնում է նաև, թե «ասեն զնմանէ թէ Հայ էր ազգաւ: Նույն տեղում: Հմմտ. նաև Միխ. Ասորի, Ժամանակագրութիւն, 1870, էջ 390—391: Արաբական աղբյուրները նրան կոչում են Յանիս իրն ալ Շմշկիկ կամ իրն ալ Շմշկիկ կամ պարզապես ալ-Շմշկիկ: Տե՛ս *Розен, Василий, стр. 74—75, նաև „Histoire de Yahya“, p. 775*:

Դեռևս միջնադարյան հեղինակները ցանկացել են բացատրել Չմշկիկ մականունը: Լևոն Սարկավազի ասելով «Չմշկիկ» հայերեն ածական է, որ հունարեն թարգմանվում է *μωσαχλιτης* բանգի շատ կարճահասակ լինելով, նման մականուն ստացավ» (*Leo Diac., p. 92*): *Μωσαχλιτης* բառը հունարեն լեզվի բառարաններում բացակայում է: Սոփոկլեսը բացատրում է *ανθρωπισμος, ανθρωπιον* (մարդուկ) և գտնում, որ դա հունականացված ձևն է բուսերին բառի հունարեն — *ως* վերջավորութեամբ՝ «մուծոս», որից և փաղաքշահան *μωσαχλιτης* և կրկնակի փաղաքշահան՝ *μωσαχλιτης* (*Sophocles, հտ. II, էջ 770*): Բրոսեի համաձայն, Չմշկիկը ծագում է պարսկերեն «չէմշ» բառից, որ «վայելուչ չափակ» է նշանակում՝ «իկ փոքրացնող ածանցով» (*Հմմտ. Տեր Սահակյան, Հայ կասերք, հտ. Բ, էջ 123*): Արտահայտվել են կարծիքներ, որ չայերեն, «չմուշկ» (հողաթափ) բառից է, որ *μωσαχλιτης*-ը ծագում է «մուծակ»-ից: Տե՛ս Լ. Անաույան, Արմատական բառարան, հտ. Ե, էջ 746—747: Միքայել Ասորին (ավելի ճիշտ՝ նրա երկի հայ թարգմանիչը, բանգի ասորերեն բնագրում այդ մասին խոսք չկա) Չմշկիկը հետևյալ կերպ է ստուգաբանում. «Իսկ թագուհին յ՛կոփանէս սպան զնիկիփոռ՝ զի շէր ամուսնացեալ ընդ նմա. և առ զՅովհաննէս ոմն այր ինքեան և եղիր նմա թագ, որ և յառաջագոյն կրէր զմուշկ թագաւորին» (*Միխ. Ասորի, Ժամանակագրութիւն, 1870, էջ 389*): *Լ'ստ 182*: Թ. հրատարակութեան՝ «...որ յառաջագոյն բառնայր և դնէր զչմուշկ թագաւորին... և կոչեցաւ վասն այսորիկ Չմշկիկ» (*էջ 382*): Հրատարակիչները ցույց են տալիս, որ սրբագրում «զմուշկ» էր և «յետոյ յաւելեալ էր... տառս «չ»: Նույն տեղում, ծանոթ. 1:

62. Անատոլիկոն բանակաթեմի (Չոնարասը նրան անվանում է Արևելից ստրատելատ: *Zon. t., IV, p. 76*): Չորավարի մասին տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 218: IX. դ. վերջում և X. դ. առաջին կիսում արաբների ձեռքից նվաճված հայկական հողերից երկամակերպվեցին մի շարք «հայկական» կոչված բանակաթեմեր (*αρχιεπισκοπή Μοσαχλι*), որոնք գլխավորում էին հայազգի զորավարներ-ստրատեգոսներ: Այս հանգամանքը պատճառ դարձավ, որ արաբական աղբյուրներում բյուզանդական ստրատեգոսները կոչվեն իրենց հայերեն համապատասխան տերմինով՝ «զորավար»: Արաբական աղբյուրներում հիշվում է Խոզանի *zicwar*-ը: Տե՛ս *Oikonomides, L'organisation, p. 87*: նաև նույնի, *Les lists, p. 346*. նաև՝ ծանոթ. 330, 359: Այդ երևույթին մենք հանդիպում ենք նաև վրացական աղբյուրներում: Վրացիները Գեորգ զորավարի վկայաբանությունը հայերենից թարգմանելով, վրացերեն թարգմանության մեջ պահպանել են «զորավար» տիտղոսը: Այդ մասին տե՛ս *Март, Из поездки на Афон, стр. 16*: Իսկ «Հայաստանի և Իբերիայի» կառավարիչ Գրիգոր Բակուրյանը XII. դ. վրաց Անանուծի «Դավիթ արքայից, արքայի պատմության» մեջ կոչված է «զորավար»: Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, հտ. Ա, էջ 216:

63. Պատկանում էր Կուրկուասների հայազգի նշանավոր ընտանիքին, որից սերել են այնպիսի անվանի գործիչներ, ինչպիսիք են Հովհաննես և Լևոն եղբայրները և շատ ուրիշներ: Նրանց հետ ազգակցական կապ ունեն Հովհաննես Չմշկիկը: Տե՛ս *Charanis,*



The Armenians, p. 40. Guiland, Le domestique, p. 446: Κάждан, Армяне, стр. 13—14.

64. Ստրատելաս: (στρατηλάτης) զինվորական բարձր աստիճան էր Բյուզանդիայում, սպարապետ: Կոչվում էր նաև στρατηγος, στρατηγος αυτοκρατορ, υονοστρατηγος: Այդ մասին տե՛ս Guiland, Le commandant en chef, p. 380—404:

65. Լևոն Սարկազազի ասելով, հենց սրանից հետո նիկեփորը Չմշկիկին շնորհեց մագիստրոսի սլատվաստիճանը և նշանակեց Արևելից գորքերի դոմեստիկոս (Leo Diac., p. 44):

66. Ամենայն հավանականությամբ, նույնանում է նիկեփոր II Փոկասի ժամանակ հանդես եկած և այլ աղբյուրներում հիշատակված պրոտովեստիարիոս Միքայելի հետ, որ հիշվում է նաև որպես պատրիկ-պրեսյոզիտոս վեստ: Դեռևս Կոստանդին Միրանածինի օրոք պրոտովեստիարիոս էր: Տե՛ս Guiland, Les eunuques, p. 184:

66ա. Բյուզանդական հեղինակները օգտագործում են որոշակի տերմին՝ կայսեր հռչակման առնչությամբ՝ ἐπισημαίζω, ἰνευσημαίζω կամ εὐσημαίζω: Վերջինս բյուզանդիական նշանակում է փառաբանել, ներբողել, բայց ունի որոշակի տեխնիկական նշանակություն՝ կայսր հռչակել, հայտարարել, ընդունել: Այդ բանն ունեւ իրավական նշանակություն: Տե՛ս Brehier, Les Institutions, p. 76—81:

67. Կոստանդնուպոլսի արվարձան, ժամանակակից Սկյուդարը քաղաքի ասիական ափին:

68. Այլ աղբյուրներից գիտենք, որ նա սլատրիկ Մարիանոսն էր (տե՛ս վերը, ծանոթ. 51): Հովսեփը դիմեց նաև պատրիկներ Պասքալիոսի և Թոռնիկյանների օգնության, տալով նրանց մակեդոնական զորքերը, բայց մայրաքաղաքի բնակչությունը շօժանդակեց նրանց (Leo Diac., p. 45—46):

69. Ունեւ մագիստրոսի բարձր պատվաստիճանը: Երա մասին տե՛ս նաև «Կոստանդին Միրանածին», էջ 132: Վախճանվեց 969 թ. խնսունն անց տարիքում: Նա պատանի հասակից զինվորական էր և բազում հաղթանակներ էր տարել պատերազմներում ու սխրանքներ զործել (Leo Diac., p. 83):

70. Զոնարասը ավելի սլարգ է գրում. οἰχονομήσας ὠνομαένους αὐτοῦς σίτον εἰς τὸν ἑαυτοῦ κόλπον φέρειν τὸν τῷ νομίσματός ἕκαστον (Zon. IV, pp. 76—77). որ կարելի է այսպես հասկանալ. հացի դինն այնքան կբարձրացնի, որ մի դահեկանի հացը գնողի ծոցում կտեղավորվի, այսինքն շատ կթանկանա:

71. Լևոն Սարկավազը նրան անվանում է Վասիլ Նոթոս (ապօրինածին), քանզի նա Ռոմանոս կայսեր ապօրինածին որդին էր, սկյուֆ (հավանաբար՝ սլավոն) կնոջից ծնված (Leo Diac., p. 94):

72. Այս ժամանակաշրջանում բյուզանդական մայրաքաղաքի բնակչության սոցիալական կազմի մասին տե՛ս Κάждан, Социальный состав, стр. 85—96:

73. Երեք շարք թիւեր ունեցող խոշոր նավ: Բյուզանդական շրջանում երջվում էր նաև գրոմոն:

74. Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

75. Կոստանդնուպոլսի թաղամաս է: Ավելի մանրամասն տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 289, ծանոթ. 251:

76. Ոսկե դուռը (Χρυσή πύρρα կամ πύλη), կայսրերի՝ արշավանքներից վերադառնալիս քաղաք մուտք գործելու պաշտոնական դարբասը:

77. Սկիլիցեսն օգտագործում է ταινίωσα: տերմինը, որ «թագ կասել» է նշանակում և ոչ «թագ դնել»: Արշակունյաց թագերի մաս էր կազմում նաև մաչերի համար:



կապիչը, որ կոչվում էր «գարգամանակ»: Այդ իսկ պատճառով հայերը թագազրման վերարերյալ երկու տերմին էին գործածում՝ «թագ դնել» և «թագ կապել»: Այդ արարողությունը կատարողը կոչվում էր «թագադիր» և «թագակապ»: *Տե՛ս Mapp, O pascokax v Ani, ctp. 23: Նույնի, Ани, ctp. 61: Բագրատունիները սլահականեցին Արշակունիների թագի ձևը և եթե հավատանք պատմիչ Վարդանին, «ի նոյն կայսերէ վասլէ եկն ներքինի մի՝ Նիկիտ կոչեցեալ, յերեք հարիւր քսան և հինգ թուին խնդրել յԱշոտոյ թագ... և կամէր պսակիլ ի Բագրատունոյն, գոր կատարէ Աշոտ» (Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն, էջ 116): Ասածս, հարկավ, շի նշանակում, որ բյուզանդական թագը Արշակունյաց ծագում ունի, այլ պարզապես ուղում եմ ցույց տալ, որ այն նման մասերից էր բաղկացած: Բյուզանդական կայսրերի թագազրման արարողության մասին տե՛ս Ebersolt, Etudes, p. 18—27. Острогорский, Эволюция, ctp. 33—42: Կայսրուհիների թագազրման պսակի արարողության մասին նույն տեղում, էջ 27—33:*

78. Բնագրում *αἰθων*, որտեղից սարկավագն ավետարանն էր ընթերցում և քարոզ կարգում: Հանդիպում է հայկական աղբյուրներում և՛ ամբոն, և՛ ամբիոն ձևով: Հմմտ. Մատթ. Ուտն. «ի սուրբ Սուփի ի յամբիոնն նստէր ընդ ամենայն վարդապետսն հոռոմոց»: Այդ ամբիոնից բանավիճել են հոռոմ վարդապետների հետ Գագիկ 11-ը, Գագիկ Աբասյանը, Կրիդոր Մագիստրոսը և ուրիշներ: Մխիթար Գոշի մի տվյալից պարզվում է, որ այն շէր նույնանում բեմի հետ. «Այսոքիւք ամենեքեան ոչ են ի յինն դասուէն եկեղեցւոյ և ոչ եթէ ի սպասաւորութիւն ինչ հպին, ոչ ի յամբոն ելանեն և ոչ ի բեմն մտեն, այլ են ամենեքեան փառաբանիչք կարգեալք ի տանն Տեառն Աստուծոյ»: (Գոշ. Գիրք Գատաստանի, էջ 139, 402):

79. Լևոն Սարկավագի ասելով, Նիկեիոյ Փոկասը իր թագադրության ժամանակ 51 տարեկան էր: Նա՞ թխադեմ էր, ունե՞ր խիտ ու կապտավուն-սև մազեր, սև մտախոհ աչքեր, թավ հոնքեր, միջակ աբծվային քիթ, կոր, հզոր մարմին, շատ լայն կուրծք և ուսեր (*Leo Diac., p. 48*):

80. Ըստ Պսևդո-Կոդինոսի իր անունը սլարտական է Հուստինիանոս 1-ի ժամանակ գործած պատրիկ Պետրոսին (Բարսինիանոս ասորու), որ համարվում է պալատի կառուցողը, թեև պալատը առաջին անգամ հիշվում է 518 թ.: Պետրիոն էր կոչվում նաև Ոսկեղջյուրում գտնվող թաղամասը, ժամանակակից Ֆանարը:

81. Նահանգ, ապա բանակաթեմ Փոքր Ասիայի հյուսիսում՝ Պոնտոսի, Բյութանիայի և Գալատիայի միջև:

82. Նշանավոր ջերմուկ Փոքր Ասիայում, Նիկոմեդիայի ծոցին մոտիկ: Կոստանդին Միրանաժին ժամանակ վերանվանվել է Սոտերիոպոլիս:

83. Կեսարի մասին տե՛ս «Կոստանդին Միրանաժին», էջ 256, ծանոթ. 29: Կայսերական հին տիտղոս է: IV դարից սկսած շնորհվում էր կայսերական ընտանիքի անդամներին (մեկ կամ մի քանի հոգու միաժամանակ): Մինչև Ալեքսիոս I կայսեր թագավորության ժամանակաշրջանը կեսարը կայսրության առաջին աստիճանն էր: Նրա կրողը շատ լայն իրավասություններ ուներ, եղել են դեպքեր, երբ կեսարը համարվել է ժառանգական իշխան (տե՛ս *Oikonomides, Les lists, p. 293*):

84. Նոր (*Νέα*), Վասիլ I-ի կողմից կառուցված սբ. Աստվածածնի եկեղեցին: Նրա մասին մանրամասն տե՛ս «Կոստանդին Միրանաժին», էջ 104—106, 287, ծանոթ. 231, 232:

85. Նիկեփորը, դառնալով Թեոփանոյի զավակի կնքահայրը, իրավունք չունե՞ր ամուսնանալ երեխայի մոր հետ, քանզի նա գործած էր լինում *συγγενία*-յի դանցանքը



(տե՛ս վերը, էջ 14: Հմմտ. նաև Leo Diac., p. 50): Արգելքը դրել էր Տրուլտսի եկեղեցական ժողովի (691 թ.) 53-րդ կանոնը: Տե՛ս Guiland, Les noces, p. 255, n. 2:

86. Τῆς συγχαλῆτος λογαρίας: Սենատը հունարեն կոչվում է սինկլիտոս, սենատորը՝ սինկլիտիկոս (բառը հանդիպում է և հայկական աղբյուրներում. «Քէոզոս հարցանէր զամենայն սինկլիտոսն», Սդիշե, էջ 72), «Ոմն ի կարդէ սինկլիտոսաց՝ այսինքն ծերակուտի» (Եվս. Քր., Բ): Սինկլիտիկոսները շատ էին, բայց նրանցից քչերը կարևոր դեր էին խաղում պետութեան մեջ: Հենց սրանք էլ «գլխավոր» սենատորներն էին: Հետո VI կայսրը մի օրենք է հրապարակել, որով նա դրկել էր սենատը (սինկլիտոսը) ամեն մի նշանակութունից: Կոստանդին Միրանաժինի «Արարողութիւնների մասին» գրքում այդ տերմինը շատ հաճախ է հիշատակվում: Դ. Բելլակի կարծիքով, X դ. «սինկլիտոս» նշանակում է. 1. Բոլոր աստիճանավորների՝ ցածր ու բարձր ամբողջութիւնը: 2. Բոլոր աստիճանավորների ամբողջութիւնը, բացառյալ բարձրագույնները: 3. Միայն սինկլիտոսի աստիճանավորութիւնը ամենանեղ իմաստով, այսինքն՝ ապոկալիպսոսները, սիլենտիարիոսները, վեստիտորները, հյուպատոսները, դիսհյուպատոսները և այլն: (Беляев. Вузънънѣ, том I, стр. 170 և այլուր): Սենատի կազմում մտնում էին բարձրագույն պաշտոնեությունը, ռազմական և մասամբ հոգևոր ավագանին: Մակեդոնական հարստութեան ժամանակաշրջանում սենատի դերն ընկավ, բայց դարձյալ բարձրացավ XI դ. կեսից: Միքայել Ատտալիատեսը գտնում է, որ ամբողջ սենատը մի բյուր մարդուց ավելի էր (Attal., p. 275) և հավանաբար այդ խոսքերը շպիտի բառացի հասկանալ, ինչպես անում է Գ. Լիտավրինը («Советы и рассказы», стр. 601), պատմիչը նրանց մեծաթվությունն է ուզում ընդգծել: Կայսերական խորհրդին, հասկանալի է, մասնակցում էին փոքր թվով երևելիները: Սենատի մասին մասնավորապես տե՛ս Diehl, Le Senat:

87. Կոստանդին V Իսավրացու (741—775) պատկերամարտ կայսեր, որի սահմանումներից բյուզանդական եկեղեցին ջանում էր ազատվել:

88. Բնագրում λιβέλλος (լատ. libellus): Բառացի նշանակում է գրքույկ, բայց պանֆլետի իսաստ ունեեր, մեկին ծաղրելու կամ անվանարկելու համար կազմված գրութիւն:

89. Խոսքը նիկեփորի հոր՝ Վարդասի մասին է: Հետո Սարկավազը գրում է, որ նիկեփորը պատրիարքին զիջել տվեց ասելով, որ կնքահայրն իր հայր Վարդասն է եղել (Leo Diac., p. 50):

90. Բնագրում πρὸς τὸ παλαιόν. որին մի այլ տեղում հեղինակն անվանում է պալատի եկեղեցու ավագերէցը (տե՛ս էջ 93):

91. Սկիլիցեսը «Թոմանոս ծերունի» է անվանում Թոմանոս I Հակապենոսին, այնինչ հայկական աղբյուրներում (տե՛ս Մատթ. Ուոն., էջ 5) Թոմանոս ծերունի է կոչվում Կոստանդին Միրանաժինի որդի Թոմանոս II-ը. «Վասիլն և Կոստանդին՝ որդիք Թոմանոսի ծերոյն»:

92. Սրկիլիայի գլխավոր քաղաքը:

93. Վասիլ I-ի (867—886):

94. Խոսքը Պալերմոյի մասին է:

95. Նիկեփոր II Փոկասի պապը, նշանավոր զորավար: Նրա մասին մանրամասն տե՛ս Gregoire, La carriere.

96. Ժամանակակից Բրինդիզին:

97. Իլլիրիան ընդգրկում էր ժամանակակից Ալբանիայի տարածքը և հասնում էր մինչև Իանուր դեսը:



98. Բնագրում՝ *Ἡλιαρχολογία*: Խոսքը կուրիկուլյարիոսի մասին է: Բյուզանդիայում ներքինիների համար նախատեսված էր ութ աստիճան: Դրանք են. նիպսիստիարիոս (հիշատակում է և Մխիթար Գոշր՝ «Ոպսիստարք» ձեռվ և բացատրում հետևյալ կերպ. «որք արկանեն ձեռաց ջուր արքային» (Մխ. Գոշ, Գիրք դատաստանի, էջ 139), կուրիկուլյարիոս, սպաթարոկուրիկուլյարիոս, օստիարիոս, պրիմիկերիոս, պրոտոսպաթար, պրեպոպիտոս և պատրիկ: X դ. սրանց ավելացան վեստր, պրոտովեստր, վեստարխր և պրոեդրոսր, աստիճաններ, որոնք, ի միջի այլոց, ստանում էին ոչ միայն ներքինիները (տե՛ս *Guilland, Les titres auliques, հտ. 13, pp. 50—85, հտ. 14, էջ 122—157*): Մխիթար Գոշն իր Դատաստանագրքի ՄԻՆ գլխում խոսում է «դաս պալատան» մասին, որի մեջ հանդես են գալիս վերոհիշյալ աստիճանները: Անվիճելի է, որ նրա ձեռքում եղել է հունարեն բնագիր (տե՛ս «Գիրք դատաստանի», էջ 138—139):

99. Տարածվում էր իտալական թերակղզու հարավում: Նվաճեցին նորմանները XI դ. կեսերին:

100. Ենթադրվում է Կապուա-Բենեվենտի իշխան Լանդուֆր:

101. Սկիլիցեսը առաջնորդ է անվանում բուլղարների ցար Սիմեոնին (893—927):

102. Բնագրում՝ *Φατλοῦν*: Աֆրիկայի արաբների առաջնորդի մասին է խոսքը:

103. Պարզության համար «մայրաքաղաք» ենթ թարգմանում բնագրի *basilis* («քաղաքների թագուհի»-ն), որ օգտագործում էին բյուզանդացիները Կոստանդնուպոլսի վերաբերյալ:

104. Բյուզանդական կայսրությունն ամեն տարի որոշակի հարկ էր վճարում Աֆրիկայի արաբներին՝ նրանց հարձակումները կանխելու նպատակով:

105. Կոստանդին Միրանաժինը:

106. Մանրամասն տե՛ս «Կոստանդին Միրանաժին», էջ 222—223, ծանոթ. 44: Ն. Աղոնցի կարծիքով Կրինիտեսների ընտանիքից ամենավաղ հիշատակված անձնավորությունը Ալեքսիոս-Մուսելյան է (Մուշեղ), Թեոփիլոս կայսեր (829—842) փեսան (Les Taronites, p. 225), որ այդ ընտանիքը Տարոնի Բագրատունիների մի ճյուղն է (նույն տեղում, էջ 228): Նաև՝ *Каждан, Армяне, стр. 11*: Սկիլիցեսի հիշյալ Կրինիտեսը նույնանում է Պասքալիոս Կրինիտեսի հետ, որին պատմիչը հիշատակում է իր աշխատության 18-րդ էջում:

107. Աֆրիկայի հյուսիսում գտնվող թերակղզու (Կյուրենաիկայի) կենտրոնը:

108. Կոստանդին Միրանաժինի:

109. Աֆրիկայի հյուսիսային ափում գտնվող Կարթագենի (հուն. Կարթեդոն) արաբներին:

110. Ռոմանոս I Լակապենոսը:

111. Կայսերական վարչության ծառայող: Վարչությունը կազմված էր գրասենյակներից, որոնք սեկրետա էին կոչվում: Հնում՝ կայսերական նոտար կոչվածները X դ. սկսեցին ասեկրետես կոչվել և ենթարկվում էին պրոտոասեկրետեսին (տե՛ս *Bréhier, Les Institutions, p. 166* և հտ.): Տիտղոսը աղավաղված ձևով հանդիպում է և Մխիթար Գոշի Դատաստանագրքում. «երրորդ՝ ասին՝ կրիտքն (կարդա՝ ասիկրիտք), որք են թղթագիրք արքային» (Մխ. Գոշ, Գիրք դատաստանի, էջ 139, 603—604):

112. Քաղաք հարավային Իտալիայում, Ադրիատիկ ծովի ափին, այժմ՝ Օտրանտո: Մտնում էր Իտալիա կատապանության մեջ: 1055 թ. առաջին անգամ գրավեցին նորմանները, բայց վերանվաճվեց կայսրության կողմից 1060 թ.: նորմանները քաղաքը վերջնականապես գրավեցին 1068 թ.:

113. Reggio di Calabria քաղաքը:



114. Τοῦ πτολμοῦ (նաև πτοῦ πλωμοῦ) ὑποναγάρως: Մովակայր:

115. Հայաստանի և Վրաստանի՝ Բյուզանդիային տրված օգնական զորքը: Սկիլիցեսի πτομαχο: (դաշնակից) բառը այդ մասին է վկայում: Մի քանի տարի անց հայոց թագավոր Աշոտ III Բագրատունին օգնական զորք տվեց Չմշկիկին. «տուեալ Աշոտ զօրս ի տանէ Հայոց վառելոց և այր պատերազմողս իբրև տասն հազար» (Մատթ. Սուհ., էջ 18): Այդ իմաստով ճիշտ չէ Հ. Արվայրըրը, որ Սկիլիցեսի հիշատակած այս զորքերին համարում է բյուզանդական բանակում ծառայող վարձկանների (*Ahrweiler, Recherches*, p. 33, n. 11): Որ Հայաստանը Բյուզանդական կայսրության «դաշնակից» էր, վկայում է նույն Սկիլիցեսը, որ, խոսելով Գագիկ II-ի թագավորության առաջին տարիների մասին, գրում է, թե նա հռոմայեցիների հետ պահպանում էր օլալաչլա զինակցություն (տե՛ս վերը, էջ 147): Հաջորդ էջում նույն Սկիլիցեսը ցույց է տալիս, որ Գագիկը Բյուզանդական կայսրության ֆիլոս և πτομαχο էր (բարեկամ և դաշնակից), հետևաբար նա պարտավոր էր պահանջի դեպքում օգնական զորք տրամադրել կայսրության: Սա, հարկավ, չի նշանակում, որ բյուզանդական բանակում չէին կարող լինել վարձկան հայեր: Նրանք կային և ծառայում էին իրենց հայ հրամանատարի գլխավորությամբ: Անիի թագավորության անկումից հետո հայկական զորքերն անցան Բյուզանդական կայսրության ծառայությանը՝ մինչև որ լուծարքի ենթարկվեցին Կոստանդին Մոնոմախի կողմից (տե՛ս ծանոթ. 609):

116. Նաև Մամեստիա (Մսիս):

117. Այժմ Սիհուն:

118. Հայտնի չէ, այս Մոնաստիրիոտեսը ինչ ազդակցական կապ ունի Անիի պեղումների ժամանակ հայտնաբերված 1059 թվականը կրող հունարեն մի արձանագրության մեջ հիշված Հովհաննես Մոնաստիրիոտեսի հետ, որն իրեն անվանում է «Հայաստանի և Իբերիայի» կատապան:

119. Կոստանդնուպոլսի ակրոպոլսի, քաղաքի եվրոսլավան մասի արևելյան ծայրամասում:

120. Սբ. Սոֆիայի (տե՛ս վերը, ծանոթ. 18):

121. Կիպրոսը արաբական տիրապետության տակ մնաց 647/648-ից մինչև 965 թ., բայց այդ տիրապետությունը շարունակական չէր, այն մի քանի անգամ ընդհատվեց: Կղզին մի քանի անգամ անցավ կայսրության ձեռքը: 688 թ. Հուստինիանոս II կայսեր և արաբ խալիֆա Աբդ-ալ-Մելիքի միջև կնքված պայմանագրի համաձայն կայսրությունն ու խալիֆայությունը իրար միջև չէին բաժանում «Կիպրոսի, Հայաստանի և Իբերիայի (Վրաստանի) հարկերը» (*Theophanis Chronographia*, p. 363): Կոստանդին Միրանաժինի տվյալներով Վասիլ I-ի ժամանակ յոթ տարի կղզու կառավարիչն էր «ազգությամբ հայ, անուն հանած Ալեքսիոսը («Կոստանդին Միրանաժին», էջ 173): Տե՛ս նաև *Pertusi, De Thematibus*, p. 26—27:

122. Արաբերեն՝ Մեմրիչ: Քաղաք Ասորիքի հյուսիս-արևելքում:

123. Քրիստոսի անձեռագործ պատկերը կրող աղյուսի մասին մանրամասն տե՛ս «Կոստանդին Միրանաժին», էջ 181—182: Հարցն այն է, որ այդ աղյուսը Եղեսիայում էր գտնվում և ոչ Հիբրապոլսում: Լևոն Սարկավազը գրում է, որ Նիկեիոսը գրավեց Եղեսիան և այնտեղից առավ բերեց հիշյալ աղյուսը: Այդ դեպքից հետո նա խոսում է Հիբրապոլսի (Μεμπρετσε) գրավման մասին (*Leo Diac.*, p. 70—71): Պետք է ասել, որ Եղեսիան կայսրությունը գրավեց 1032 թ. միայն, Գեորգիոս Մանիակեսի ջանքերով:

124. Բերդ Ամանոսում, ենթադրաբար արաբական աղբյուրների Sunyāb-ը (*Honigsmann, Die Ostgrenze*, S. 96. An. 7: Պագրասի մասին տե՛ս նույն տեղում, էջ 94):



Պագրասը հիշատակում է նաև Սամվել Անեցու Շարունակողը (էջ 144) «Պաղրասայ դղեկին» ձևով:

125. Μαυρον οσοσ: Ենթադրվում է Ամանոսը:

126. Պ. Խարանիսը Բուրցիսներին հայկական ընտանիք է համարում (*Charanis, The Armenians*, p. 45), Կաթղանը՝ Էնթադրաբար հայկական (*Каждан, Армяне*, стр. 85): Այս Միքայել Բուրցիսին հիշատակում է և Ասողիկը («Բուռն մաժիստոսն», էջ 262): XI դ. քրիստոնյա արար պատմիչ Յահյա Անտիոքացին (ալ-Անտաբի) նրան կոչում է Միքայել ալ-Բուրջի: Բերդը, որի կառավարիչ նշանակվեց Միքայել Բուրցիսը, արարական աղբյուրներում կոչվում է Բագրաս:

Կարինի «Վրաց» (Գյուրջի) դարբասների վրա փորագրված հունարեն 992 թ. մի արձանագրության մեջ (Սաղսյան, *Տեղագրութիւնք*, էջ 74, նաև *Adontz, Notes arméno-byzantines*, p. 163) ի միջի այլոց գրված է. *το βουρ...*, որ մենք վերականգնում ենք *τω Βούρτζη* (Բուրցիսին): Դժվար է ասել, այս արձանագրությունը պատկանում է Միքայել Բուրցիսին, թե չէ (արձանագրությունը պակասավոր է):

127. Հմմտ. ծանոթ. 490: Ինչպես տեսնում ենք, խոսքը ոչ թե ընդարձակ մի շրջանի վրա ղորավար նշանակելու մասին է, այլ պարզապես Սև լեռան մի ամրոցի (տե՛ս *Ahrweiler, Recherches*, p. 46), որ հին ձևով շարունակում էր բանակաթեմ կոչվել: Դեռևս X դ. առաջին կեսին հայկական հողերի վրա ստեղծվել էին խարայեզիկիոն բանակաթեմը, լեոնտոկոմեն, Ասմոսատոնը, հոգանը (տե՛ս «Կոստանդին Միրանաժին», էջ 25): Այսպիսի փոքր բանակաթեմերի ստեղծումը շարունակվեց նաև նիկեփոր Փոկասի հաջորդների օրով (տե՛ս Սկիլիցեսի մոտ, էջ 43): Դրանց զորավարները ենթարկվում էին դուքսերի կամ կատապանների հրամաններին (*Ahrweiler, Recherches*, pp. 49. 51):

128. Պետրոս ստրատոպետարխին Յահյա Անտիոքացին հիշում է նաև ալ-Ատրաբազի մականունով (*Розен, Василий*, стр. 2): Ռոզենը հիշյալ մականվան մեջ տեսնում է հունարեն *τραπέζα* (սեղան) բառը և ենթադրում, որ այդ տիտղոսը կրողը կապ ունի կայսերական սեղանին և հավանաբար նշանակում է կայսերական սեղանապետ (նույն տեղում, էջ 90—92): Հմմտ. «*Histoire de Yahya*», p. 814: Բայց գուցե «ալ-Ատրաբազի»-ն նիկեփոր Փոկասի «Ստրատեպիկոն»-ում հանդիպող *τραπέζης*-ն է, որի տակ մենք «դարպասպան» պարսկերեն բառն ենք տեսնում (տե՛ս «Կոստանդին Միրանաժին», էջ 202, 335: նաև՝ *Бартикян, О двух терминах*, стр. 76—77: Բացառված չէ, հարկավ, որ «ալ-Ատրաբազի»-ն հենց *στρατοπεδαρχης*-ի աղավաղումը լինի: Ստրատոպետարխը զինվորական աստիճան էր Բյուզանդիայում: Բառացի նշանակում է արշավանքի դուրս եկած ղորքի հրամանատար: Այս ժամանակաշրջանում բառը սուլթանապետ է նշանակում: Մանրամասն տե՛ս *Guilland, Le Stratopédarque*, pp. 498—521: *Oikonomidès, Les lists*, pp. 334—335:

129. Արաբերեն կալա բառն է, որ ամրոց, բերդ, աշտարակ է նշանակում: Հանդիպում է և հայկական աղբյուրներում «կլա» ձևով (Հմմտ. Հոմակլա, այն է՝ հոռոմոց կլա: Տե՛ս նաև Մատթ. Ուռնի., էջ 58. «կայր ի քաղաքն Ուրհայոյ երեք կլայ»): Կենդամենոսը օգտագործում է բառը *χουλα* ձևով և դրա տակ հասկանում աշտարակ, ներքին բերդ: «*Советы и рассказы*», стр. 248, 250, 270):

130. Անտիոքը բյուզանդացիների ձեռքն անցավ 969 թ. հոկտեմբերի 29-ին: Արաբները քաղաքին տիրացել էին 637 թ.: Ասողիկի ասելով, Անտիոքը գրավողը Վարդաս Փոկասն էր (սեւ ապա ի նժԸ (=969) թուականին առնու (Վարդաս Փոկասը) ՂԱնտիոք Մեծ քաղաք Ասորոց» (Ասողիկ, էջ 183):

Հետաքրքրական են Յահյա Անտիոքացու տվյալները, որոնց համաձայն Անտիոքը

գրավեցին Միքայել Բուրցիսը և Իսխակ իբն Բահրամը (Розен, Василий, стр. 78), որր ոչ ալ ոք է, քան Սկիլիցեսի հիշատակած գորավար Սահակ Վահրամը (Σαχάκιος Βραχάμιος): Ի տարբերություն Սկիլիցեսի, որր գրում է, թե Անտիոքի գրավումը Նիկեփորի համար ցանկալի չէր, ինչ-որ սնոտիապաշտական նկատառումներով, Յահյա Անտիոքացին ցույց է աւալիս, որ Նիկեփորը դժգոհ էր Անտիոքի գրավման համար հիշալ գորավարների գործի դրած միջոցներից, որոնց հետևանքով քաղաքի մի մասը մոխրի վերածվեց (Розен, Василий, стр. 78: Հմմտ. Histoire de Yahya, p. 825):

130ա. Բնագրում չրդաαα. պետք է նշել սակայն, որ Բյուզանդիայում չօղաαα աւելով հասկանում էին ոչ միայն գրամը (փողը, ստակը): Մակեդոնացիների Βασιλικα օրենսգրքում գրված է. «չրդααα ααելով ոչ միայն դրամն ենք հասկանում, այլև շարժական և անշարժ գույքը, ստրուկներին...» („Basilicorum lib.“, II, tit. 2, 214):

131. Պահպանվել է Նիկեփոր Փոկասի օրենքը՝ վանքերի ու ծերանոցների կառուցումն ու եկեղեցական կալվածների հետագա ընդլայնումն արգելող: Նիկեփորը «ախտ» էր համարում վանքերի կալվածներն ընդարձակելու, մեծամեծ շենքեր կառուցելու, ձիերի, եզների, ուղտերի անհամար հոտեր ունենալու մարմաջը, մի բան, որ վանականներին ոչնչով չի տարբերում աշխարհականներից (տե՛ս „Nov. XIX Imp. Nicephori Phocae de monasteriis“, p. 249—252): Նիկեփորի այս օրենքը շեղյալ հայտարարեց Վասիլ II-ը՝ իր XXVI նովեմբրյով (988): Նույն տեղում, էջ 259:

132. Խոսքն այն մասին է, որ զինվորականի ընտանիքն ի վիճակի չլինելով հարկերը վճարել, կորցնում էր իր սոցիալական դիրքը, նրա անդամները փախչում ու ապավինում էին հոգևոր կամ աշխարհիկ հզորների՝ «դինատոս»-ների մոտ (տե՛ս Ahrweiler, Recherches, p. 15):

133. Հմմտ. «Կանոնագիրք Հալոց», հտ. Ա, էջ 341. «Իսկ որ ի պատերազմունս մահք գործին... վասն զձեռս սրբելոյ բարութ է ալնպիսեացն Գ ամս արտաքոյ հաղորդունեան լինել»:

134. Տեսարտերոն բառը ծագում է τεταρτων-ից, որ «քառորդ» է նշանակում: Իրամանան ալ դ միավորի սլարիակած արժեքի շուրջ բավականին ստվար գրականություն էա: Հ. Արվալլըրը գտնում է, որ տեսարտերոնը լիարժեք դահեկանից՝ հիստամենոնից պակաս էր 1/12-ով և ոչ թե մեկ քառորդով (τεταρτων), ամբողջի 1/3 մասի քառորդով՝ τεταρτηρον: Լիարժեք դահեկանը բովանդակում էր 24 կերատիա, իսկ քառորդակը՝ 22 (տե՛ս Ahrweiler, Nouvelle hypothese, p. 1—9: Տե՛ս նաև՝ Hendy, Light weight olidi, p. 57—80):

135. Հմմտ. Սաղմոս ՃԻԶ, 1. «Եթէ ոչ տէր պահէ զքաղաք, ընդունայն տքնին պահպանք նորա»:

136. Ավելի տեղյակ է լևոն Սարկավազը՝ նրա ասելով, 967 թ. Փրկչի Համբարձման տոնի օրը (հունիսի 10) Նիկեփորը, ընդունված կարգի համաձայն, քաղաքի պարիսպներից դուրս՝ Պեգե կոչվող արվարձանում պրոկենսոն (շքերթ) կազմակերպեց, որի ժամանակ բյուզանդացիների և հայերի միջև կոիվ ծագեց, հայերի ձեռքով բաղում քաղաքացիներ սուլանվեցին: Երբ կայսրը երեկոյան վերադառնում էր սլալատ, բյուզանդացիները նրա վրա սկսեցին լուտանքներ ու քարեր շարտել (Leo Diac., pp. 64—65): Այս փաստը կարևոր է այն տեսակետից, որ հայերի անկարգությունների համար ժողովուրդը գազազում է կայսեր դեմ, հարկավ, նրա հայկական ծագումը նկատի ունենալով: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ «հայերի» տակ ենթադրվում են հալազի դինվորները, որոնցից էր բաղկացած կայսեր պահակախումբը: Զոնարասը գրում է, որ երբ նավաստիների և հայերի կովի մասին իմացան կոստանդնուպոլսի անկարգ քաղաքացիները,



խմբեր կազմելով կայսեր վերադարձին դուրս եկան և փայտերով սկսեցին հարվածել հայերին (Zon., IV, p. 86):

137. Քաղաքապետ, մասնավորապես Կոստանդնուպոլսի քաղաքապետը Պաշտոնն առաջին անգամ հանդես է դալիս IV դ. կեսերին, հատուկ նշանակություն ստացավ V դ.: էպարքոսը համարվում էր «քաղաքի հայրը», նրան նշանակում էր անձամբ կայսրը: Կայսեր մայրաքաղաքից բացակայելու դեպքում կարևորագույն հարցերը վճռում էին պրեպոզիտոսը, մագիստրոսը և էպարքոսը: Վերջինս կարգավորում էր մայրաքաղաքի տնտեսական կյանքը, քննության ենթարկում քաղաքի արհեստավորների ու առևտրականների դատական գործերը: Քաղաքի առևտրաառաջատարական կորպորացիաները էպարքոսին էին ենթարկվում: Քաղաքային ինքնավարության անկման հետ միասին բարձրացավ էպարքոսի դերը: էպարքոսի դերը արաբական արևելքում կատարում էր մուհիթասիբը, որ XI դ. կեսերին հիշատակված է նաև Անիում: էպարքոսի մասին տե՛ս «Византийская книга эпарха».

138. Պեգեն Ողղի (չջփոթել Ողղալ-ի հետ) Կոստանդնուպոլսի մի թաղամաս էր ժամանակակից Բալրկլըն: Խոսքը Պեգեի սր. Աստվածածնի վանքի մասին է, Կոստանդնուպոլսի ամենանշանավոր սրբարաններից մեկի, որ հիշատակում է դեռևս Պրոկոպիոս Կեսարացին («Կառուցումների մասին», Ա, 3):

139. Հենց այդպես մռայլ գծերով է նիկեփոր կայսրը հանդես գալիս և ասորական աղբյուրներում. «Թագաւորեաց նիկիփոռ,— գրում է Միքայել Ասորին,— այր տգէտ և ատեցող ուղղափառութեան». «անօրէն թագաւորն խոստանայր աթոռս և պատիւս ուղղադաւանիցն (նկատի ունի միաբնակներին), թէ ասեն միայն ղերկու բնութիւն. և սպանայր, թէ ոչ լսեն նմա» (Միխ. Ասորի, 1870, էջ 388, 389: նաև՝ 1871, էջ 380): Ասորի պատմիչի նման գնահատականի պատճառը նիկեփորի թունդ քաղկեդոնականությունն էր: Բայց զարմանալին այն է, որ կայսրը բոլորովին այլ լույսի տակ է հանդես գալիս հայկական աղբյուրներում. «այր բարի, սուրբ և աստուածասէր, լցեալ ամենայն առաքինութեամբ և արդարութեամբ, յաղթող և քաջ ի վերայ ամենայն պատերազմաց. ողորմած ի վերայ ամենայն հաւատացելոց Քրիստոսի, այցելու այրեաց և գերեաց, դարմանիչ որբոց և տնանկաց» (Մատթ. Ուռն., էջ 5), «ամենաբարի արքա» (նույն տեղում, էջ 6—7), «սուրբ թագաւոր» (նույն տեղում, էջ 7) և այլն: Պահպանվել է Պանդալեոն քահանայի մի խոսքը. որը սեղմ գծերով բնորոշում է նիկեփոր Փոկասին: Հիշյալ Պանդալեոնը, ամենայն հավանականութեամբ, նույնանում է Հովհաննես Զմշկիկի՝ հայոց Աշոտ III Ողորմածին ուղարկած նամակի մեջ հիշվող հայոց վարդապետ Ղևոնդի հետ՝ «մեծ իմաստասէր Պանդալեոնի» (Մատթ. Ուռն., էջ 28): Պանդալեոնը գրում է. «Յամս նիկիփորա: տիեզերակալի կայսեր Յունաց, քաջի և առաքինոյ, յաղթող ի պատերազմունս հեթանոսաց, որ ջարդեաց զլուծ իսմայելական՝ որ ի վերայ պարանոցի քրիստոնէից, և խորտակեաց զկգակս նոցա, և առ զանառիկ ամուրս նոցա, մանաւանդ զմեծն և զականաւորն և զհոշակաւորն նոցա զՏարսոն Կիլիկեցոց, և զԿրետէ... թագաւորն այն՝ երչորոզ զկնի թագաւորութեան վերնոյն... եհաս ինձ տառապեալ Պանդալէոնի... գնալ ...ի թագաւորեալ քաղաքն Բիւղանդիոն...ի նժԴ (965) թուականութեանս Հայոց»: Ալիշան, Հայապատում, էջ 295—296: Յահյա Անտիոքացին էլ գրում է, որ նիկեփորը «կառավարում էր հոյակապ և շատ արդար, գործերը վարում էր գերազանց ու բացառձակապէս անթերի» («Histoire de Yahya», p. 826):

140. Բուլղարիայի իշխան Պետրոսը ցար Պետրոսն է (927—969):

141. Բյուզանդական հեղինակները, երբ խոսքը արևմուտքի մասին է, թուրքերի տանկատի ունեն հունգարացիներին: Զոնարասը պարզ գրում է. «Թուրքերը, այսինքն հուն-



գարացիները» (Zon., IV, p. 87): Սկիզբներ մի քիչ հետո (էջ 34) գրում է «արևմուտքում՝ Պաննոնիայում հաստատված թուրքեր»-ի մասին: Բյուզանդացիները տվյալ ժողովրդին անվանում են «հունգար»-ներ (ουγγροι), հոներ, մաջարներ (ματζαροι), սաբարտիասֆալի (սևորդիք), անտիկ շրջանի տերմինով՝ պեոններ և այլն (տե՛ս Moravcsik, Byzantium and the Magyars, Budapest, 1970): Մատթեոս *ունհայեցու մոտ հիշվում է «աշխարհն Ունգրաց» (Հունգարիա) (Մատթ. Ունհ., էջ 254), իսկ նույն հեղինակի հիշատակած «խարտյաշներին» (էջ 109) Դյուլորիեն նույնացնում է հունգարացիների հետ „Chronique de Matthieu d'Edesse“, p. 404—405.*

142. Իմա Դանուբը:

143. Խոսքը Կիևյան Ռուսիայի մեծ իշխան Սվյատոսլավ Իգորովիչի մասին է (945—972): «Ռուս» ցեղանունը (Hros կամ Hrus) առաջին անգամ հիշում են ասորական աղբյուրները (Զաքարիա Հոնտոր, VI գար): Ն. Վ. Պիգուլևսկայայի կարծիքով, այդ ցեղանունը պատմիչին հայտնի է հոների մոտ գերի ընկած Ամիդի հայերից: Բյուզանդիայում այդ ցեղանունն առաջին անգամ վկայված է 838 թ., իսկ «Ռուսիան» առաջին անգամ հիշատակում է Կոստանդին Միրանածինը (X դ. կեսերը): Մանրամասն տե՛ս Соловьев, Византийское имя России, стр. 134—155.

144. Լևոն Սարկավազը նշում է վճարված գումարը, 15 կենտինար ոսկի (108 հազար դահեկան): Leo Diac., p. 63:

145. Հոնորիասը առանձին նահանգ էր, Հուստինիանոս I-ը միացրեց նրա արևելքում ընկած Պափլագոնիային: Հետագայում Բուկելլարների բանակաթեմի մաս կազմեց:

146. Դոյություն ուներ մի քանի տեսակի մոդ: Տվյալ դեպքում հավանաբար նկատի ունի հոմեական մեծ մոդը, որի կշռորդը 9 կգ. 792 գ. էր:

147. Կշռում էր 39 կգ. 168 գ.:

148. Բնագրում *φρόντισε*: Այս բառը շատ ճիշտ կերպով «հոգ» են հասկանում հայ հեղինակները: Արիստակես Հաստիվերցին, օրինակ, գրում է Միքայել IV Պափլագոնացի կայսեր գործունեության մասին, թե նա իր եղբայրներից մեկին «տայ չգթէսաղոնիկն ... և հաւատայ ի նա զհոգս Բուլղարացն և արևմտական կողմանցն, և զմինն անուանէ զեմեսլիկոս, և առաքէ ի Մեծն Անտիոք զՏաճկաստանի և զհարաւային կողման զճագս յանձն առնելով նմա... իսկ զերրորդն յեղբարցն... զամենայն հոգս ն զիրաւունս պալատին տալով ի ձեռս նորա» (Արիստ. Հաստ., էջ 47):

Կ. Յուզբաշյանը գտնում է, որ վերոհիշյալ բոլոր դեպքերում հայերեն «հոգ»-ը համապատասխանում է բյուզանդական *πρόνοια* տերմինին (Αρσι.πακ.ε.с, стр. 24, 151), որ «հոգ»-ը *πρόνοια*-յի պատճենահանումն է, այնինչ Հաստիվերցին այդ բառի մեջ ամենևին էլ տեխնիկական իմաստ չի դնում և նրա հոգը ավելի *φρόντισ*-ն է, քան *πρόνοια*-ն: Հաստիվերցու հենց իր (և մեր) օգտագործած հատվածում հոգը օգտագործված է ոչ միայն երկրի, նահանգի վերաբերյալ հոգացուցչուն ունենալու, կառավարելու իմաստով, այլև պալատի:

149. Լևոն Սարկավազը գրում է, որ Նիկեփոր Փոկասի եղբայր Լևոն կուրապաղատը հրաժարվեց տղամարդուն վայել զինվորականի կյանքից, նա սկսեց էժան գնով հացահատիկ գնել և ապա թանկ ծախել: Նրա ասելով քաղաքացիները բողոքում էին, որովհետև երկու եղբայրները հասարակաց դժբախտությունն իրենց համար շահույթի աղբյուր են դարձրել (Leo Diac., p. 64):

150. Հովհաննես VII-ը աթոռակալել է 964—966 թ. մայիսի 28-ը:

151. Անտիոքի մելքիտ պատրիարք Քրիստափոր (960—969):

152. Գրիգորն ու Բազարատը Տարոնյի իշխան Աշոտի որդիներն էին: Նրանք Տարո-



նր դիջեցին Բյուզանդիային 966 թ. «ի նժծ թուականին,— դրում է նա,— խաւարեցաւ արեգակն. և վախճանեցաւ Տարօնոյ իշխանն Աշոտ: Եւ Տարօնոյ Հոռոմք տիրեցին» (Ասողիկ, էջ 183): Տարոնի Բագրատունիները, հաստատվելով Բյուզանդիայում, ծնունդ տվեցին Թոռնիկյանների և Տարոնացիների նշանավոր ընտանիքներին, որոնք կարևոր դեր խաղացին կայսրության մեջ դարեր շարունակ: Թոռնիկյանների նախահայր է համարվում Տարոնի իշխան Ապոդանեմի (մեռ. 900) որդի Թոռնիկի որդին (նիկոլայոսը կամ Լևոնը, որն իր մոր հետ եկավ Կոստանդնուպոլիս), իսկ Տարոնացիների՝ վերջին իշխաններ Գրիգորն ու Բագարատը (ըստ Ադոնցի՝ ավելի շուտ Գրիգորը, քան Բագարատը): Տե՛ս Adontz, Les Taronites. p. 242—243, 251—263: Ավելի մանրամասն տե՛ս Каждан, Армяне, стр. 17—25:

153. Վարդաս Ակլերոսի ապստամբության ճնշումից հետո Գրիգորը ստաջավ մագիստրոսի պատվաստիճան (տե՛ս վերը, էջ 75), ըստ Ադոնցի՝ 991 թ. (տե՛ս Adontz, Les Taronites, p. 243, հմմտ. նաև 233, Բայց Ասողիկը գրելով նն (991) թվականի դեպքերի մասին, Գրիգորին արգեն մագիստրոս է անվանում (Ասողիկ, էջ 260):

154. Արեգակի այս խավարման մասին հիշատակում է և Ասողիկը. «և ապա ի նժծ թուականին խաւարեցաւ արեգակն. և վախճանեցաւ Տարօնոյ իշխանն Աշոտ: Եւ Տարօնոյ Հոռոմք տիրեցին» (Ասողիկ, էջ 183): Տե՛ս Dulaurier, Recherches. p. 278: Բայց գիտական հաշվումներով դեկտեմբերի 22-ին խավարում տեղի ունեցավ 968 թ. (Gruzel, La chronologie, p. 464), մի բան, որ չի համապատասխանում Տարոնի իշխան Աշոտի մահվան ընդունված թվականի հետ (966): Կաժդանը վերջինիս մահը համարում է 968 թ. (Каждан, Армяне, стр. 18):

155. Մատթեոս Ուռնայեցին գրում է, որ իբր Չմշկիկը «մահապարտ» էր և բանտարկված ինչ-որ կղզում (Մատթ. Ուռն., էջ 6):

156. Զինվորական աստիճան, հրամանատարը մեկ տաքսիսի (128 հոգուց բաղկացած զորամասի):

157. Ն. Առոնցը գրում է, որ այդ երկուսից մեկը, անկասկած, Սահակ-Վահրամն է (տե՛ս ծանոթ. 259):

158. Հասկանալի է, ներքինու:

159. Միքայել Մալեյինոսը X դ. առաջին կեսի նշանավոր վանական գործիչ էր, Կյուսիքի մեծ վանքի վանահայրը: Նրա հոգևոր որդին էր սբ. Աթանասիոսը, Աթոնի հիմնադիրը («Vie de Saint Athanase», p. 18): Միքայել Մալեյինոսի վաղըր պահպանվել է (տե՛ս Petit, Vie et office de Michel Maleinos):

160. Հետաքրքիր մանրամասնություններ է հաղորդում Մատթեոս Ուռնայեցին. «ներստեալ այսը ի դահոյսն իւր ի ժամ երեկոյին և վառեալ մոմեղինօք ընթեռնոյր զաստուածային կտակագիրսն» (էջ 6), թագուհին եկավ իր մոտ և «շաղապատէր զթագաւորան և զթուրն, որ կայր մօտ առ նա, փոկակապս արարեալ պնդագոյն» (էջ 6): Նա հիշում է նաև անխոսակցութիւնը, որ կայսրն ունեցավ Չմշկիկի հետ. նախքան սրախողխող լինելը: Ուռնայեցին հավատացած է, որ հենց Չմշկիկն է կայսրին սպանել, այնինչ ըստ Ակիլիցեսի՝ Լևոն Արալանտեսը: Ավելորդ չէ նշել, որ Անանուն «թուրքական» ձեռագրի (այդ բնագրի մասին տե՛ս Розен, Василий, стр. 76, прим. 6), լուսանցքում գրված է. «այդ թվին իր հոգին գեհենին հանձնեց հայոց թագավորը, նգովյալ դոմեստիկոս նիկեփորը» (Розен, Василий, стр. 119):

Նպիսիւպոս Հովհաննես Գեոմետրես Կիրիոտեսը նիկեփորի հիշատակին «դամբանական» գրեց, ընդգծելով, որ այնքան թշնամիներին հաղթողը, պարտվեց իր կնոջ անհավատարմութիւնից: Բանաստեղծը, նկատի ունենալով ուսուների սպառնալիքը, կոչ է

անում նիկեփորին՝ գերեզմանից բոլոր հոռայեցիների փրկութեան հասնել, «բացի Կնոջ»: Դամբանականը հրատարակել է «Bessarione» հանդեսում S. Mercati-ն, հտ. 37. 1921, էջ 160:

Նիկեփոր Փոկասին հունական եկեղեցին սրբացրել է: Պահպանվել է սրբագործված նիկեփորի պաշտոնը, որը հրատարակվել է Լ. Պտիի կողմից (*Petit, Office inedit*, pp. 398—420):

161. Կայսեր հանդերձարանապետը, որ աստիճանաբար սկսում է վարել նաև կայսեր անձնական գանձարանը: IX և X դարերում պրոտովեստիարիոսը բացարձակապես ներքինի էր լինում: XI դ. կան և ոչ ներքինի պրոտովեստիարիոսներ: Նրանք մտնում էին Լալսեր «մտերիմների» շքախմբի մեջ: Մեր պատմիչ Հովհաննես Սկիլիցեսը շենց պրոտովեստիարիոս էր: Մանրամասն տե՛ս *Guilland, Le Protovestiaire*, p. 216—236: Նաև «Կոստանդին Միրանաժին», էջ 283, ծանոթ. 197:

162. Սֆենդոնեն ձիարշավարանի հարավ-արևելյան մասում գտնվող շենք էր:

163. Լևոն Սարկավագի ասելով նիկեփորն ապրեց 57 տարի, թագավորեց 6 տարի և 4 ամիս: Նրա դին դեկտեմբերի 11-ի (շաբաթ) օրը մնաց բաց երկնքի տակ, ձյան վրա, իսկ ուշ գիշերը մի փայտյա դագաղի մեջ դնելով տարան սբ. Առաքելոց եկեղեցին ու թաղեցին կայսերական գերեզմանում (*Leo Diac.*, p. 91): Հակառակ, որ պատմիչը նշում է նիկեփորի անժողովրդականության մասին, այնուամենայնիվ, ընդգծում է և նրա դրական կողմերը: Նա քաջ էր ու հզոր, պատերազմական հարցերում ամենափորձված, ծալր աստիճան տոկուն, ժուժկալ, մեծախոհ ու հանճարեղ՝ քաղաքական հարցերում, միանգամայն արդար դատավոր, ճշգրիտ օրենսդիր, շատ հավատացյալ: Պատմիչը գրում է, որ շատերը նրան մեղադրում էին այն բանում, որ անսասան առաքինություն և արդարություն էր պահանջում բոլորից: Այդ պատճառով օրինազանցների համար նա անտանելի էր: Եթե և՛ ոտան շսպանեին, — գրում է նա, — ապա նա հոռմեական պետությունը աննախընթաց փառքի կհասցնեի (*Leo Diac.*, p. 89—90): Սկիլիցեսի երկը բովանդակող *Vindobonensis Hist. gr.* 35, *Coisl.* 136 և *Matritensis II* Pgt. 247 ձեռագրերը ունեն հետևյալ ընդմիջարկությունը. «Նրա շիրմի վրա Մելիտենեի մետրոպոլիտ Հովհաննեսը գրեց հետևյալը.

Այրերի մեջ ամենահատու սուրը

Կնոջ ու սրի դոհր դարձավ,

ով պետության համայն հողին էր տիրում,

որպես փոքրիկ բնակվեց մի թիղ հողում,

նրան, ումից, գիտեմ անգամ գազանները սարսափում էին,

սպանեց կողակիցը՝ մեկ անդամի սիրույն:

Նա, ով գիշերն անգամ շէր ուզում մի փոքր քնել,

ճավերժ ննջում է գերեզմանում:

‘Իսոն տեսարան: Արդ, վե՛ր կաց, արքա՛,

շարքի՛ դիր հետևակին, հեծյալներին ու նետաձիգներին,

զորքը քո, փաղանգներն ու գնդերը:

Մեր վրա է հարձակվում ոռուների բանակը,

սկյութների ցեղերը ձգտում են կոտորածի,

ավարառում են քո քաղաքը ցեղերը համայն,

որոնք նախկինում թյուզանդիոն քաղաքի

դարբասների առջև զրված քո գրությունից անգամ սարսափում էին»



Այո, մի՛ անտեսիր դա: Դեն նետիր քեզ ծածկող  
 քարր և քարերով հալածական արա օտար  
 գազաններին, իսկ մեզ տո՛ւր հենարան  
 վեմյա, հիմք հաստատուն:  
 Իսկ եթե շես ուզում գերեզմանից մի փոքր երևալ,  
 հողի միջից ցեղերի վրա գոռա լոկ,  
 գուցե դրանով միայն նրանց ցրիվ տաս ու հալածես:  
 Իսկ թե այդ էլ շես ուզում անել, քո գերեզմանում ընդունիր  
 սօգ բոլորիս: Դու մեռած անգամ կարող ես  
 բոլոր քրիստոնյաներին փրկել,  
 դու, ով բոլորին, բացի կնոջից, հաղթեցիր»:

Իսկ Octob. 309 և Octob. 361 ձեռագրերում (XVI դ.) նշում կա այն մասին, որ  
 Հովհաննէս Մելիտենացու դամբանականը գրված էր Պերիբլեպտոսի աստվածածնի վան-  
 քում գտնվող կայսեր շիրմի վրա, վանքի, «որին այժմ տիրում են հայերը և այն կո-  
 շում Սուլու մոնաստիր» (տե՛ս Ioan. Scyl. Synopsis, p. 282—283): Գեորգ Վանականի  
 նարունանոցը գրում է, որ Նիկեփորից «վախեցան արաբները, սարսափեցին հայերն ու  
 ասորիները, երկյուղեցին սարակինոսները, փախուստի դիմեցին թուրքերը, և հոռմա-  
 չեցինները վերագրավեցին իրենց հողերն ու շրջանները» (Georgii Monachi Chronicon,  
 p. 861):

164. Չմշկիկի մասին մանրամասնությունները տե՛ս վերը, ծանոթ, 61: Այստեղ ա-  
 վելացնենք, որ ըստ Լևոն Սարկավագի նա ծագում էր Արմենիականների բանակաթեմից և  
 այդ է պատճառը, որ երբ նա գահ բարձրացավ, այդ բանակաթեմը ազատեց հարկերից  
 (φόρων τε ἀτελείαν τῶ τῶν Ἀρμενιᾶκῶν θεματι παρέχεν ἐξειθεὶν γὰρ ὠματῶ. Leo  
 Diac., p. 100):

165. Մատթեոս Ուռնայեցին, հայտնի չէ ինչ աղբյուրից քաղելով, գրում է, որ Չմրշ-  
 կիկը «զորդիս օրոմանոսի թագաւորին (խոսքը Կոստանդնի և Վասիլի մասին է) փախոց  
 ի յանօրէն թագուհւոյն ի Վասակաւան ի Յանձիթ գաւառին. տարան զՎասիլն և զԿոս-  
 տանդինն առ Սպրամիկն՝ մեծ Մխիթարայ մայրն, զի մի գեղ մահու տացէ նոցա թա-  
 գուհին և սպանանիցէ զնոսա» (էջ 7): Ն. Ադոնցը գրում է, որ Մխիթարը իրական անձ-  
 նավորութիւն է՝ բյուզանդական արքունիքին հայտնի, որ նրան Չմշկիկը ծանոթ պիտի  
 լիներ անձամբ, քանի որ ինքն էլ այդ շրջաններից էր: Ինչ վերաբերում է լեգենդին, ա-  
 պա դժվար է նրա իսկությունը որոշել: Այդ մասն տե՛ս Adontz, Notes Armeno-by-  
 zantines, p. 138: Հմմտ. նաև Καρχαδαν, Армяне, стр. 100.

166. Լևոն Սարկավագը գրում է, որ Չմշկիկը Վասիլին դարձրեց իր պարակիմոմենո-  
 սը (Leo Diac., p. 94):

167. Թարգմանաբար նշանակում է «նախագահ»: Աստիճանը հիմնադրեց հենց Նի-  
 կեփոր Փոկասը՝ իր թագավորության սկզբում: Կրողները գլխավորապես ներքինիներ  
 էին: Բրեյեն գտնում է, որ այդ աստիճանի կրողը սենատի նախագահը չէր, այն ծերա-  
 յուտական բարձրագույն աստիճան էր: Brehier, Les Institutions, p. 123—124: Իկո-  
 նոմիդիսը գտնում է, որ պրոնդրոս սենատի նախագահ է նշանակում (Oikonomiades  
 Les lists, p. 299, տե՛ս նաև Diehl, La signification, p. 105—117):

168. Կուրապաղատի աստիճանը ծագում է նախկին cura palatii-ից, որ վաղ շր-  
 ջանում (IV դ.) պալատական պաշտոն էր՝ անմիջականորեն կապված կայսերական պա-  
 լատի հետ: Այս կուրապաղատը մեծ պալատի նվիրապետության մեջ ամենից բարձր էր



կանգնած, նա կայսերական գվարդիայի հրամանատարն էր: Բայց V դ. բնթացքում հանդես է գալիս նույն անվամբ մի նոր պաշտոն, որ երկրորդական տեղ է գրավում պաշտոնեություն մեջ և նախատեսված էր կայսերական պալատում տարբեր սպասավորության համար: Այդպիսով *cura palatii*-ի և կուրապաղատի միջև արդեն ոչ մի ընդհանուր բան չէր: VI դ. կուրապաղատը արքունիքի ամենաբարձր աստիճանավորներից էր: Նա կայսրից, կեսարից և նոբելիսսիմոսից հետո շորրորդ մարդն էր: Կուրապաղատը կարևոր դեր էր խաղում հատկապես Հուստինիանոս I-ի ժամանակ: IX դ. վերջից կուրապաղատի տիտղոսը հասարականում է, մասամբ այն պատճառով, որ սկսվեց շնորհվել օտարերկրացի իշխաններին: Առաջին հայտնի հայազգի կուրապաղատը նշանավոր ռազմական գործիչ, Արմենիականների բանակաթեմի զորավար Արտավազդն էր (VIII դ.), որ օժանդակեց Հենո III-ին գահ բարձրանալու: Հայաստանի հայերն առաջին անգամ կուրապաղատի տիտղոսին են արժանանում VI դ. սկսած: 642 թ. այդ տիտղոսն ստացավ հայոց իշխան Սմբատը: Կուրապաղատի մասին ընդհանրապես, և հայազգի կուրապաղատների մասին մասնավորապես տե՛ս *Guilland, Le curpalate*: Նաև *Oikonomidès, Les lists*, p. 293: *Bury, IAS*, p. 33—35:

Գոյություն ուներ նաև սյրոտոկուրապաղատ (կուրապաղատների առաջինը) տիտղոսը: Հայոց մեջ այն կրում էր Սենեքերիմ Արծրունու տոհմակից Աբղյմսեհը, որդին Եմեժ իշխանին և սուրբ մարտիրոսին Թոռնկայ: Թովմա Արծրունու Շարունակոյը նրան անվանում է «սյրոտոկուրապաղատ» (Թովմա Արծրունի, էջ 502, 504):

169. Պատվաստիճանը հանդես եկավ նիկեիոր Փոկասի օրոք: Հաճախ է հանդիպում և հայկական աղբյուրներում: XI դ. առաջին կեսին գործած իշխան Սարգիսը (Սյունեցին) վեստ էր, որի մասին նա հիշատակում է իր 1033 թ. արձանագրության մեջ. «վեստ և դուկ արևելից» (Կաստանյան, Վիմական տարեգիր, էջ 17): Վեստ էր նաև Գրիգոր Մազիստրոսը՝ «Մօնումախին մագիստրոս, վէստ և տուկ» (Իբրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 213): Գրիգոր Մագիստրոսը հետագայում դարձավ նաև վեստարխ (հմմտ. Մաշտոցի անվան Մատենադարանի № 4669 ձեռագիրը, էջ 113ա, 117բ): Պասյաղոպոսլո—Կերամևսի կարծիքով նիկեիոր վեստը նույնանում է նիկեիոր Ուրանոսի հետ, Հենո կուրապաղատի օրոք: (Παπαδόπουλος-Κεραμέυς, Βυζαντινά ανάλεκτα, 66—70): Դարրուզեսը մերժում այդ նույնացումը (տե՛ս *Dargrouzès, Epistoliers*, p. 45, n. 45):

Վեստ աստիճանը կրողը սկզբում պետք է առնչություն ունենար կայսեր հանդերձարանի հետ: Հետագայում, XI դ. հանդես եկավ նաև սյրոտովեստ տիտղոսը (տե՛ս *Oikonomidès, Les lists*, p. 294):

170. Բնագրում՝ Βίρραν τον νεώτερον: Այդպես է անվանված, շշիոթվելու համար նիկեիոր II Փոկասի հայր Վարդասի հետ: Այս Վարդասը նիկեիոր II Փոկասի եղբայր Հենոն որդին էր: Խոսքը հետագայում ապստամբություն բարձրացրած Վարդաս Փոկասի մասին է: Վարդասը Խալդիայի և Կոլոնիայի դուքսը չէր, այլ Արևելից զորքերի սպարապետը. Արևելից սխուլերի դոմեստիկոսը, բայց քանի որ նրա զորքերը կենտրոնացած էին վերոհիշյալ նահանգներում, Սկիլիցեսը նրան անվանում է Խալդիայի և Կոլոնիայի դուքս (տե՛ս *Ahrweiler, Recherches*, p. 59): Հենո Սարկավազը նույն անձնավորության մասին գրելիս ցույց է տալիս, որ նա աստացել էր դուքսի պատվաստիճանը և մնում էր Խալդիայի սահմաններում» (*Leo Diac*, p. 96, 112—113): Ըստ Ասողիկի Վարդաս Փոկասը մասնակցել է 968 թ. Մանազկերտի դեմ մղված կռիվներին. «Եւ ի նժէ թուականին Վարդ եղբորորդի նիկիփոռայ զօրու ծանու գայ յԱսյահունիս, պաշարէ զՄանազկերտ քաղաք. և առեալ զնա՝ ի հիմանց րրեալ խրամատեաց զպարխապ նորա» (Ասողիկ, էջ 183), հետևաբար նա պաշտոնանկ կարող էր լինել այդ թվականից հետո:



171. Տե՛ս վերը, էջ 24—25:

172. Նիկեփոր II Փոկասն ու Չմշկիկը ազգականներ էին. Չմշկիկը Նիկեփորի զարմիկն էր (ανεψιός γαρ πρὸς μητρὸς ὁ Ἰωάννης τῷ Νικηφόρῳ ἐγρημάτιζε, 38): Այս մեղադրանքը երկու տարի անց Չմշկիկին ներկայացրեց Վարդաս Փոկասը— τοῦ γένους ἀποχαιέσας παλαμναίου αὐτοχειρα (Leo Diac., p. 116), որ նա սպանեց իր մորեղորրու, «քնած առյուծին» (նույն տեղում) p. 119:

173. Արմենիականների բանակաթեմի մասին տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 167—169, 318—319: Բացի բյուզանդական հեղինակներից նրա մասին խոսում են նաև արաբ պատմիչները, այդ թվում և Ահմադ իբն Յահյա ալ-Բալազուրին: Նա ի միջի այլոց գրում է, թե Զուրջանն (Վրաստան) ու Առանը (Աղվանք) գրավվեցին խազարների կողմից, իսկ Հայաստանի մնացած մասին տիրեցին հույները: Այն գտնվում է «Արմանիյակուսի տիրոջ» («սահիբ Արմանիյակուս») իշխանության ներքո: Նույն հեղինակը ցույց է տալիս, որ երբ Հաբլու իբն Մասլամա-լ Ֆիհրին ներխուժեց Հայաստան (դա տեղի ունեցավ 645/646—653/654 թթ. միջև), արաբ զորավարը Կալիկալան (Կարինը) գրավելուց հետո վտանգի ենթարկվեց բյուզանդական մի մեծ զորաբանակի կողմից, որը զրլխավորում էր «բատրիկ Արմանիյակուսը»: Այս փաստը ցույց է տալիս, որ այդ ժամանակամիջոցում Արմենիականների հրամանատարը այլևս տուրմարխ չէր, այլ, անկասկած, զորաւար, հետևաբար այն ժամանակ Արմենիականների բանակաթեմ որպես այդպիսին գոյութուն ունէր, և դա բյուզանդական աղբյուրներում հիշատակված Արմենիականների բանակաթեմի զորաւար Սաբորիոսից (667) տասնչորս տարի առաջ (տե՛ս Kaegi, The Armeniac Theme, pp. 273—277):

174. Հավանաբար հայտնի Մանտինիան Պելոսյոնեսում:

175. Նիկեփոր կայսրը փորձել էր իր վերահսկողության տակ վերցնել եպիսկոպոսների ձեռնադրության գործը: Չմշկիկը 959 թ. Պոլիսկտոս պատրիարքի թախանձագին խնդրանքով վերացրեց նախորդ կայսեր կարգադրությունը: Մանրամասն տե՛ս Huillier, Quelques remarques, pp. 101—105:

176. Κεϊλη Συρια: Իրա տակ ները ենթադրում էին Լիրանանի և Անտիլիրանոսի միջև ընկած Ասորիքի մեծ հովիտը: Հետազայում այդ հասկացության մեջ մտան հարևան այլ շրջաններ ևս, այդ թվում և Դամասկոսի և էմեսայի (Հոմս), ապա ընդհանրապես ողջ հարավային Ասորիքը և Պաղեստինը:

177. Ռուսները մուտք գործեցին Բուլղարիա որպես Բյուզանդիայի դաշնակիցներ: Կայսրը թյոնն ուզում էր նրանց օգնությամբ ճնշել բուլղարներին: Բայց մուտք գործելով Բուլղարիա, ռուսներն այլևս չուզեցին հեռանալ այդտեղից, դեռ ավելին, դաշնակցեցին բուլղարների հետ ընդդեմ կայսրության: Այդ բանը Բյուզանդիային դժվարին դրության առաջ կանգնեցրեց և ստիպեց երկարատև ու դժվարին պատերազմ մղել նրանց դեմ:

178. Անտիոքի մելքիտ պատրիարք Թեոդորոս II-ը (23 հունվար 970—9 մայիս 976 թթ.): Նրանից առաջ մի քանի ամիս աթոռակալել էր Եվտրատիոսը: Լևոն Մարկավազը ավելացնում է, որ այս Թեոդորոսը Կոլոնիայից էր և կանխագուշակել էր Նիկեփորի և Չմշկիկի գահին տիրանալը (Leo Diac., p. 100—101):

179. Բյուզանդական հեղինակները որպես կանոն մանիքեցի են անվանում պավլիկյաններին: Ֆիլիպուպուիսը (այժմ՝ Պլովդիվ) Կոստանդին V Կոպրոնիմոսի ժամանակներից ի վեր պավլիկյանների գաղթեցման վայր էր: Հիշյալ կայսրը գեոևս 756 թ. այնտեղ բռնագաղթեցրեց Կարինի և Մելիտենեի պավլիկյաններին: Չմշկիկի բռնագաղթեցման մասին կարևոր հիշատակություն կա Աննա Կոմնենայի «Ալեքսիականում»: «Պավլիկյան-



ները,— գրում է նա,— ամենավայրենի են, բիրտ ու վտանդներից չվախեցող: Նրանց Հովհաննես Չմշկիկը, այն հրաշալի կայսրը, պատերազմներում հազթելուց հետո, դերեվարելով Ասիայից, այն է հալյուրներից (Պոնտոսից) և հայկական վայրերից (ἀπό τῶν Χαλύβων καὶ τῶν Ἀρμενιακῶν τόπων) Թրակիա տեղափոխեց և ստիպեց բնակվեն Ֆիլիպուպուսի շրջակայքում: Այդպիսով նա մի կողմից նրանց հեռացրեց այն ամենաանառիկ ամրոցներից ու բերդերից, որոնց նրանք տիրում էին բռնությունով, իսկ մյուս կողմից նա ասպնոզագույն պահապաններ դարձրեց նրանց սկյութական (իմա՝ ոռուս-սլավոնական) այն արավանքների դեմ, որոնք հաճախ տեղի էին ունենում բարբարոսների կողմից Թրակիայի շրջանների վրա... Հովհաննես Չմշկիկը մեղ թշնամի մանիքեցի ազանդավորներին դարձնելով դաշնակից, կովող ուժ ստեղծեց ընդդեմ քոչվոր սկյութների, որից հետո քաղաքների բնակչությունը շունչ քաշեց բաղամթիվ ասպատակություններից»: Հայտնի է սակայն, որ պավլիկյանները վերջնականապես ջախջախվեցին 879 թ. գեո Վասիլ I-ի ժամանակ և հարյուր տարի անց հաղիվ թե նրանք այդպիսի ուժ ներկայացնեին, տիրեին ամենաանառիկ ամրոցների ու բերդերի, զինված դիմադրություն ցուցաբերեին Լայսրոսի: Ըստ երևույթին խոսքը թոնդրակեցիների մասին է, որոնք իսկապես այդ ժամանակ զգալի ուժ էին ներկայացնում և դիմադրում Բյուզանդիայի առաջնադասմանը Հայաստան: Թոնդրակեցիները բյուզանդական աղբյուրներում չեն հիշատակվում և դա բացատրվում է միայն ու միայն այն հանգամանքով, որ նրանք թոնդրակեցիներին համարում էին պավլիկյան: Այդ մասին հստակ վկայություն ունի Պողոս Տարոնացին. «զայս արարին թոնդրակեցիքն... գոր դուք (իմա հոռոմները— շ. Բ.) պավլիկյանոսք (պավլիկյան—Շ. Բ.) ասեք, սոքա էին աշակերտք պղծոյն Սմբատայ, այն որ դեղեցաւ յաղանդոյն պավլիկեան ազգէն» (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր N° 1154, էջ 240 բ և 671, էջ 74 բ.: Ուսումնասիրված են Շ. Մանուչարյանի կողմից: Տե՛ս նրա «Պողոս Տարոնացին», էջ 118: Նույնի, Руконисная школа, стр. 30): Չմշկիկի այս բռնազավթեցման արձագանքներին ենք հանդիպում նաև պավլիկյանների ծաղման և Բուլղարիայում տարածվելու մասին բուլղարական մի լեզենդում: Ավելի մանրամասն տե՛ս Շ. Բարբիկյան, Պավլիկյանների առասպելական ծագումը, էջ 86—89: Նշենք նաև, որ սուրբ Պողոս Կրտսերի (մեռ. 955 թ.) վարքում կա իշատակություն Միլետոսում և Կիրիբոտոնների բանակաթեմում գտնվող «մանիքեցիների» վերաբերյալ, խոսվում է նրանց գեմ առնված միջոցների մասին (Vita sancti Pauli, p. 156: Այդ մասին տե՛ս նաև՝ Delehaye, La Vie de saint Paul, p. 91): Վարքում ասված է, որ սուրբ Պողոսը ջանքեր է թափել մանիքեցիների դեմ, նա աղանդավորների պարագուսներին ու ամենից վտանգավորներին արտաքսել Կիրիբոտոնների բանակաթեմի և Միլետոսի սահմաններից: H. Delehaye-ի կարծիքով խոսքը Աննա Կոմնենայի հիշատակած «մանիքեցիների» մասին է (էջ 156, ծանոթ. 4): Տեղագրությունը չի համընկնում: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ սուրբ Պողոսի ծննդավայրը շատ մոտ էր Պերգամոս քաղաքին, որտեղ կար բաղամարդ հայկական գաղութ (այդ մասին տե՛ս Գեյցեր, Հայ հասարակությունն ի Պերգամոն, էջ 225—228), ապա բացառված չէ, որ հիշյալ «մանիքեցիները» հայեր լինեն: Ավելորդ չէ ասել, որ հիշյալ վարքում հիշվում է վահան անունով մի ասեկրետ (նույն տեղում, էջ 147): Բացառված չէ, անշուշտ, որ տվյալ վարքի «մանիքեցիները» իսկապես պավլիկյաններ լինեն, քանզի թոնդրակյան աղանդը այդքան հեռուները չէր տարածվել:

180. Աթոռակալել է 970 թ. փետրվարի 13-ից ընդամենը երեք տարի և 8—9 ամիս, որից հետո եկեղեցական ժողովի որոշմամբ դատապարտվել է ու աքսորվել (Grumel el Chronologie patriarchale, p. 70):



181. էլամացի արարների տակ նկատի ունի հավանաբար Տիգրիսից արևելք ընկած պատմական էլամ երկրի բնակիչներին: Նրանց հիշատակում է նաև Մատթեոս Ուտհայեցին («պիղծ եղիմնացւոց ազգ» էջ 113), բայց այդ ցեղանվան մեջ վատ իմաստ է դնում: Աստվածաշնչում էլամացիք հայտնի են որպես մեղսաշատ մարդիկ:

182. Երջանիկ Արարիա էր կոչվում Արաբական թերակղզու հարավարևմտյան շրջանը, ժամանակակից Եմենը:

183. Երջանիկ Արարիայի հարավ-արևմտյան մասը:

184. Խոսքը Միջագետք (Մեսոպոտամիա) բանակաթեմի մասին է, որի տարածությունը չի համընկնում Եփրատի և Տիգրիսի միջև ընկած տարածքի հետ: Հյուսիսից սահմանակից էր Կոլոնիայի և Խալդիայի (Խաղտիթի) բանակաթեմերին, հարավում՝ Լիկանդոսի, իսկ Արևմուտքում՝ Սեբաստիայի: Նահանգի բնակիչները հիմնականում հայեր էին:

185. Թեև բյուզանդաուսական այս պատերազմի մասին բացի Սկիլիցեսից խոսում են բազմաթիվ այլ բյուզանդական հեղինակներ, այնուամենայնիվ, գլխավորը մնում են Սկիլիցեսն ու Լևոն Սարկավազը: Այս երկու հեղինակների տվյալների համադրումից է, որ հնարավոր է ճիշտ պատկերացում կաղմել տեղի ունեցած դեպքերի մասին (Карышковский, Балканские войны стр. 70—71):

186. Սկիբրոսների ընտանիքը հիշվում է դեռևս IX դ. Scriptor incertus de Leone Armenio (Բոնն, էջ 336) երկում հիշվում է Միքայել I Ռանգաբեի (811—813 թթ.) ժամանակ գործած Լևոն Սկիբրոսը: «Մոնեմվասիայի ժամանակագրության» մեջ ցույց է տրված, որ Սկիբրոսների ընտանիքը Փոքր Հայքից է ծագում (տե՛ս Lemerle, La Chronique, p. 17): Խարանիսը Սկիբրոսների ընտանիքի հայկական ծագումը անվիճելի է համարում (Charanis, The Armenians, p. 22 հմմտ. նաև Seibt, Die Skleroi, S. 15): Կաթողանը ավելի ղգույշ է, ելնելով «Սկիբրոս» բառի ղուտ հունական ստուգաբանությունից (նշանակում է «կարծր», «դաժան»: Каждан, Армяне, стр. 75): Այդ նանգամանքը ոչ մի վճռական նշանակություն չունի: Բառը կարող է հունարեն իմաստավորված այլ ածական լինել): Վարդաս Սկիբրոսը աղգակցական կապ ուներ Կուրկուասների և Փոկասների հետ: Իր քույր Մարիան Հովհաննես Չմշկիկի կինն էր: Վարգ Սկիբրոսին հայկական աղբյուրներն անվանում են Վարգ Սիկլաոոս (Արիստ. Լաստ., էջ 33) կամ սլարգապես Սկելաոոս (Մատր. Ուտհ., էջ 33), որ չպետք է աղավաղում համարել, քանզի արաբական աղբյուրներում էլ նման ձևով է հանդես գալիս: Յահյան նրան կոչում է Բ-ր-դ-ս (Բարդաս) ալ—Ս-կ-լար-ս (Розен, Василий, стр. 78—79): Յահյա Անտիոքացու երկը բովանդակող փարիղյան ձեռագրում գրիչը, հավանաբար ենթադրելով, որ Վարդասի մականունը բյուզանդական հայտնի սխոլարիոս աստիճանն է, գրում է Ս-կու-(ո) յարուս: Արաբական այլ հեղինակներ Բարդասի փոխարեն գրում են Վարգ (Розен, Василий, стр. 79): Պսելլոսը այսպես բնութագրում նրան. «Սկիբրոսը մտավոր ընդունակությունների տեր մարդ էր, մտադրածը գլուխ հանելու շատ ընդունակ, նա ունեւր նսկայական, կայսեր վայել հարստություն, իշխելու կարողություն, նա մեծ նաղթանակներ էր տարել և ողջ գորքը իրեն հյու հնազանգ էր» (Psellos, Chronographie t. i, p. 3—5):

187. Ստրատելատի մասին տե՛ս վերը, ծանոթ. 64

188. Պաժինակները (պեչենեգները) թուրքական ցեղ են: Նախկինում բնակվում էին Կենտրոնական Ասիայում և մ. թ. առաջին դարերում հոների հետ ողողեցին Արևմտյան Ասիան և հարավային Ռուսաստանը: Ատտիլայի պետության կործանումից հետո նրանք, որպես քոչվորներ, մնացին հարավ-արևելյան Ռուսաստանում, որտեղից գուրս



բշլեցին IX դ. կեսերին թուրքական այլ ցեղերի՝ իաղարների և ուղերի կողմից և հաստատվեցին Ազովի ծովի ու Դանուբի ձախ ափի միջև, այնտեղից ղուրս հանելով այլ թուրքական ցեղերի, ամենից առաջ հունգարացիներին, որոնք հաստատվեցին Պաննոնիայում: Կոստանդին Ծիրանածինն իր որդուն խորհուրդ է տալիս բարեկամական հարաբերություններ հաստատել պաթինականների հետ, նրանց օգտագործելու համար ոռոսների, հունգարացիների և բուլղարների դեմ: Պաթինականներն առաջին անգամ Բյուզանդիայի դեմ արշավեցին 941 թ.: Դրանից հետո նրանք բաղում անգամ հարձակվեցին կայսրության տարածքի վրա, բայց 1091 թ. Լիվոնիոնի ճակատամարտում այնպիսի ջարդ ստացան, որ անհետացան պալատիկյան ասպարնզից:

Հայկական աղբյուրներում նրանք կոչված են «պաթինականներ», այդ ձևը պահպանել ենք և մենք, այն հունարենն *πατιναίται* — ի հարազատ տառադարձությունն է: Պաթինականների մասին տե՛ս *Васильевский, Византия и печенеги: Кавказ, Иоанн Мавропод: Հնդարձակ մատենագիտությունը՝ Мѡтаѡcsik, Byzantinoturcica, I, S. 87—90:*

189. Խոսքը հունգարացիների մասին է: Պաննոնիան համապատասխանում է արևմտյան Հունգարիային:

190. Բալկան լեռը, բուլղ. Ստարա Պլանինա: Այս լեռան անունից է թերակղզին կոչվում Բալկանյան:

191. Լուլե Բուրգազը թուրքիայում:

192. Ռուսներն ու բուլղարները միշտ մի թևում էին կանգնում, քանզի միմյանց լեզուն հասկանում էին (տե՛ս *Левченко, Произведения Константина Багрянородного, стр. 23*):

193. Լևոն Սարկավագի ասելով, 55 հոգի: Բաղում մարդիկ վիրավորվեցին, իսկ ձիերի մեծ մասը նիզակահար եղավ (*Leo Diac., p. 111*): Նրա համաձայն սպանվեց չսան հաղար ոռոս:

194. Եբբ Վարդաս Սկլերոսը արևմուտքից անցավ Ասիա, արևմտյան բանակը ղլխավորեց մագիստրոս Հովհաննես Կուրկուասը (երկրորդը), որը սակայն իրեն հարբեցողության տալով և լինելով անփորձ ու անկարող, պատճառ դարձավ, որ ոռուսներն էլ ավելի տա՛նուվրա անեն Մակեդոնիան (տե՛ս *Leo Diac., p. 126*): Լևոն Սարկավագը այս Հովհաննես Կուրկուասին համարում է կայսեր (Հովհաննես Չմշկիկի) ազգական (*ἐξ ἑνεσὺς πατρῴων τοῦ βασιλέως* — *Leo Diac., p. 148*): Մի փոքր անց, Դորոստոլոնի մարտերից մեկում այս Հովհաննես Կուրկուասը սպանվեց: Նրա ոսկեզօծ դրահը տեսնելով, ոռոսները ենթադրեցին, թե կայսրն է նա, և վրա տալով խողխողեցին (*Leo Diac., p. 148*):

195. Սրանց հետ միասին Լևոն Սարկավագը հիշում է Պարսակուտենոսի մի որդուն ևս, որին անվանում է Վարդաս, իսկ երեքին էլ համարում պատրիկ: Նրանք Պարսակուտենոս կոչվեցին իրենց ծննդավայրի՝ Պարսակուտեի անունից: Վարդաս Փոկասի հորեղբորորդիներն էին (*ἐξ ἀδελφοῦ*), սուցն՝ մորեղբորորդիներ (*Leo Diac., p. 112*): Ապրստամբուսյանն օժանդակում էր նաև Վարդաս Փոկասի հայր կուրապագատ Լևոնը, որը թեև Լեսբոսում էր արգելափակված, բայց Աբիդոսի եպիսկոպոս Ստեփանոսի միջոցով մակեդոնացիներին դրամ ու պատիվներ էր խոստանում՝ եթե մասնակցեն Չմշկիկի տապալմանը (*Leo Diac., p. 113—114*):

196. Դեպքերը տեղի ունեցան 970 թ.: Բւսումնասիրողների կողմից ընդունված է այս շարժումը որակել որպես ֆեոդալական խռովություն, որը գլխավորում էր Վարդաս Փոկասը: Շարժման մասին հիսնականում վկայում են երկու աղբյուր՝ Սկիլիցեսի ժամանակագրությունը և Լևոն Սարկավագի պատմական երկը, որոնց տվյալների միջև եղած տարբերությունները վկայում են երկու տարբերակների առկայության մասին: Շարժ-



մանը մասնակից դարձած Սիմեոն Ամպելասի մականունը «այգեգործ» է նշանակում: Սկիլիցեսը գրում է, որ նա պատրիկ էր, իսկ Լևոն Սարկավազը՝ «երկրագործ» (γεωργός), զբաղվում էր այգեգործությամբ, դրա համար էլ կոչվեց Ամպելաս: 970 թ. շարժման վրա մանրամասն կանգ առավ Ա. Պ. Կաթղանը, որը Սկիլիցեսի փաստը Ամպելասի պատրիկ լինելու մասին պատմական իրականության կեղծում համարեց, հենց Սկիլիցեսի կողմից կատարված, քանզի նա ուներ արիստոկրատական տենդենցներ և ուզում էր 970 թ. դեպքերին ժողովրդական մասսաների դերը սքողել: Կաթղանն ընդունում է Լևոն Սարկավազի մեկնությունը և Սիմեոնին համարելով ժողովրդական զանգվածների ներկայացուցիչ, 970 թ. դեպքերը համարում է նաև ժողովրդական, գյուղացիական շարժում: Ավելի հեռուն գնալով, Կաթղանը գրում է, որ Փոկասը ինչ-որ գյուղացու այգեգործի հրամանատար նշանակեց, որովհետև, հավանաբար, նրա ետևում կար ուժեղ հակակառավարական ժողովրդական շարժում (տե՛ս *Каждан, Крестьянские движения*, стр. 90—93): Մեր կարծիքով նման եզրակացությունների հանգելու լուրջ տվյալներ չկան: Պարտադիր չէ, որ «այգեգործ» մականունը կրողը իսկապես այգեգործ լինի: Լևոն Սարկավազը պարզապես մականունն է մեկնաբանում, իմաստավորում, իսկ Սկիլիցեսին մեղադրել տվյալ դեպքում իրականության կեղծման մեջ՝ կարիք չկա: 970 թ. շարժումը համարել գյուղացիական ու ժողովրդական, Փոկասի հրամանատարներից մեկի՝ պատրիկ Սիմեոնի մականվան հիման վրա միայն, ճիշտ չէ:

Վարդաս Փոկասի Չմշկիկի դեմ բարձրացրած այս ապստամբության մասին հիշատակում է և Ասողիկը. «Իսկ Վարդ դուքսն մեծ,— գրում է նա,— եղբորորդին նիկեփոնոսյ, ապստամբեալ թագաւորեաց ի ժոռնգն» (էջ 183): Հայտնի չէ, թե հայ պատմիչը ժռոնգի տակ ի՞նչ նկատի ունի: Սկիլիցեսն այս դեպքը Կեսարիայում կատարված է ցույց տալիս, բայց և այնուհետև գրում, որ Փոկասը Կեսարիայից փախավ Տյուրոպիոս բերդը:

197. Լևոն Սարկավազը գրում է, որ Չմշկիկը երկուսին էլ կուրացրեց (*Leo Diac.*, p. 114): Նույն պատմիչը մի քիչ հետո ցույց է տալիս, որ Վարդաս Փոկասը ամբաստանում էր Չմշկիկին այն բանի համար, որ առանց որևէ ծանրակշիռ փաստի նա կուրացնել տվեց իր, Փոկասի. հոր (Լևոն կուրապաղատին) և եղբոր (նիկեփոնին), *Leo Diac.*, p. 116 և 119: Սակայն մի փոքր անց գրում է, որ նրանց աչքի լույսը խնայել էին և պատմում այն, ինչ Սկիլիցեսը (*Leo Diac.*, p. 145):

198. Ժամանակակից էսքի Շեհիրը Թուրքիայում:

199. *Τυροποιον* (թարգմանաբար նշանակում է պանիր պատրաստելու տեղ): Լևոն Սարկավազի մոտ բերդը կոչվում է *Τυραννων φρουριον...δ Αντιγους*: *καχληται* (*Leo Diac.*, p. 122): Այսինքն Տիրաննոն բերդ (կամ բռնակալների բերդ), որ կոչվում է Անտիգուս: Ա. Գրեգուարը Լևոն Սարկավազի *Τυραννων*-ը ուղղում է *Τυανων* (*Honigmann, Die Ostgrenze*, S. 46, ծանոթ. 1): Ավելորդ չէ նշել, որ Տիրոպիոս բերդը հիշում է և Ասողիկը՝ *Տեոոպս ձևով* (Ասողիկ, էջ 247):

200. Փոկասի կուրապաղատ հայրը զորավար Լևոն Փոկասն էր, կայսր հորեղբայրը՝ նիկեփոն II Փոկասը, կեսար պապը՝ նիկեփոն Փոկասի հայր Վարդասը:

201. Մի տեսակ վերարկու:

202. Վարդաս Սկլերոսի և Վարդաս Փոկասի նամակագրության մասին տե՛ս Լևոն Սարկավազի մոտ (*Leo Diac.*, p. 118—119):

203. Լևոն Սարկավազի համաձայն պատրիկ Կոստանդինը ոչ թե Սկլերոսի որդին էր, այլ եղբայրը (*Leo Diac.*, p. 118):

204. Տագմաների մասին մանրամասն տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 299—300:
205. Ալսինքն՝ Վասիլ I-ի հիմնադրած Մակեդոնական հարստության: Ամուսնությունը տեղի ունեցավ Չմշկիկի թագավորության երկրորդ տարին, նույնմբեր ամսին:
206. Դրանք 300-ից ավելի տրիբերաներ էին, չհաշված փոքր նավերը: Չմշկիկը նավատորմիղը Դանուբ ուղարկեց՝ Սվյատոսլավի նահանջի ճանապարհը փակելու համար (*Leo Diac.*, p. 129):
207. Քաղաք Թրակիայում, այժմ Թեթիրդաղ:
208. Չմշկիկի առջևից դնում էր «անմահների» զրահակիր փաղանգը, իսկ ետևից՝ 15 հազար ծանրազեն հետևակային և 13 հազար հեծյալ: Պարակիմոմենոսի հետ էր մնացած զորքը սպասարկող անձնակազմը, որ բաբաններն ու այլ մեքենաներն էին տանում (*Leo Diac.*, p. 132):
209. Մեծ Պրեսլավան 822 թ. հիմնադրված բուլղարական երկրորդ մայրաքաղաքն էր: Առաջինը Պլիսկան էր: Այդ երկու մայրաքաղաքներում IX դարի ընթացքում, սկզբում խան Կրումը, ապա Օմուրտագը մոնոմենտալ շենքերի մեծ շինարարություն ծավալեցին, որոնցից պահպանվել են Մեծ պալատի և Փոքր պալատի ավերակները Պլիսկայում և պալատի ու պարիսպների ավերակները Պրեսլավայում: Այդ շենքերի ճարտարապետությունը շատ է հիշեցնում հայկական մոնոմենտալ շենքերի ճարտարապետությունը (Ներսես III կաթողիկոսի պալատական շենքը Զվարթնոցում, Դվինի և Արուճի պալատները, Նրերուլթի բազիլիկան և այլն), և Ա. Լ. Յակոբսոնի՝ կարծիքով կրում են հայկական ճարտարապետության ազդեցությունը և, հավանաբար, բուլղարական այդ շենքերի շինարարության վրա աշխատել են հայ և ասորի ճարտարապետներ (*Якобсон, К изучению болгарской архитектуры, стр. 195—206*).
210. Սվյատոսլավի ճամբարը գտնվում էր Դորոստոլոն (*Դրիստրա*, այժմ՝ Սիլիստրա) քաղաքում (*Leo Diac.*, p. 134):
211. Ըստ Լևոն Սարկավագի, նա «սկյուլթների» մոտ Սվյատոսլավից հետո երրորդ պատիվն ունեցրեց (*Leo Diac.*, p. 135):
212. Այս պրոեգրոս Վասիլը մի փոքր առաջ հիշվեց որպես պարակիմոմենոս Վասիլ:
213. Լևոն Սարկավագը տալիս է այդ երիտասարդի անունը՝ Խեոգոսիոս, մականունը Մեսանիկտես, ծագումով Անատոլիկոն բանակաթեմից (*Leo Diac.*, p. 135):
214. Զորքը գլխավորում էր մագիստրոս Վարդաս Սկլերոսը: Նա էր, որ հաղթեց ոուսներին և ոչ կայսրք, ինչպես գրում է Սկլիիցեսը (*Leo Diac.*, p. 137—138):
215. 972 թ. ապրիլի 7-ին:
216. Լևոն Սարկավագը հանվանեց հիշում է երկու քաղաք՝ Պլիսկովա (*Պլիսկա*, բուլղարական պետության առաջին մայրաքաղաքը), և Դինիան (*Leo Diac.*, p. 138—139):
217. Սբ. Գեորգի տունը արևելյան ուղղափառ եկեղեցին նշում է ապրիլի 23-ին:
218. Խստրոս (Դանուբ) գետի: Դորոստոլոնը այս գետի ափին է գտնվում:
219. Տե՛ս ծանոթ. 128:
220. Ռուսներն առաջին անգամ այստեղ հեծելազոր դուրս բերեցին, մինչ այդ նրանք միշտ հետևակ էին մարտնչում և ձիավոր կովելու փորձ չունեին (*Leo Diac.*, p. 134, 143):
221. Ժամանակակից Կոստանցան Ռումինիայում: Նախկինում կոչվում էր Տոմիս: Նրան առաջին անգամ Կոստանտին է անվանում Կոստանդին Միրանածինը:
222. Հունարեն՝ *μολογία*: Այդպես էին կոչվում Բյուզանդիայում հյուսիսային ժողովուրդների միակտուր փայտից պատրաստված նավերը:



223. Ռեքտորի մասին տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 314:

224. Կղզի Պրոպոնտիսում, Իշխանաց կղզիների կազմում:

225. Հովհաննես Չմշկիկին և Թեոդորա կայսրուհուն:

226. Ռոմանոս Կուրկուասի որդի մագիստրոս Հովհաննեսը, Ռոմանոս I Լակապենոսի օրոք անուն հանած հայազգի նշանավոր զորավար Հովհաննես Կուրկուասի թողը և Չմշկիկի ազգականը:

227. Լևոն Սարկավազն այս առթիվ տալիս է ազգագրական որոշակի հետաքրքրություն ներկայացնող մանրամասնություններ: Երբ վրա հասավ գիշերը, գրում է նա, և լիալուսին էր, ուսաները դաշտ դուրս գալով հավաքեցին իրենց զոհվածների դիակները, բերեցին պարսպի տակ բազմաթիվ գերիների՝ տղամարդկանց և կանանց սրի քաշեցին՝ իրենց պապենական սովորության համաձայն: Նրանք Իստրոս գետում զոհաբերություններ էլ կատարեցին՝ ջրահեղձ անելով ծծկեր մանուկներ ու աքաղաղներ (Leo Diac., p. 149): Լևոն Սարկավազը գրում է նաև, որ ուսաները երբեք գերի չեն հանձնվում թշնամուն, երբ տեսնում են, թե փրկություն չկա, սուրը խրում են իրենց կուրծքը և ինքնասպան լինում, քանզի հավատացած են, որ պատերազմի ժամանակ թշնամու կողմից սպանվողները հանդերձյալ աշխարհում տերերին են ծառայելու և շցանկանալով իրենց սպանողներին ծառայել, ինքնասպան են լինում (Leo Diac., p. 151—152):

228. Լևոն Սարկավազի ասելով, ուսաները այս ճակատամարտում ունեցան 15500 սպանված, իսկ բյուզանդացիները... 350 հոգի: Բյուզանդացիները վերցրին 20 հազար վահան և բազում սրեր որպես ավար (Leo Diac., p. 155):

229. Սր. Թեոդորոս Ստրատելատի, որի հիշատակը արևելյան ուղղափառ եկեղեցին նշում է փետրվարի 8-ին:

230. Լևոն Սարկավազը գրում է, որ Չմշկիկը Թեոդորուպոլիս վերանվանեց հենց 'Իորոստոլոնը՝ վկա Թեոդորոս Ստրատելատի անունով: Նա Եվխանիայի մասին ոչինչ գիտե (Leo Diac., p. 158): Հնագիտական պեղումների ժամանակ ժամանակակից Dinogetia-Garvan-ում գտնվել են Չմշկիկի կառուցած եկեղեցու հիմքերը (տե՛ս *Diaconu, Une information*, p. 43—49):

231. Լևոն Սարկավազը տալիս է մանրամասնություններ: Չմշկիկը, գրում է նա, Սվյատոսլավի հետ հաշտություն կնքելով, վերջինիս 22 հազար զինվորներից յուրաքանչյուրին երկոսական մեդիմն ցորեն տվեց: Պատերազմից առաջ ուսական զորքը բաղկացած էր 60 հազար հոգուց, որոնցից 38 հազարը զոհվեց (Leo Diac., p. 156): Հովհաննես Չմշկիկի և Սվյատոսլավի միջև 971 թ. կնքված հաշտության պայմանագրի հունարեն բնագիրը չի պահպանվել, բայց դրա մասին մենք գիտենք նրա հին ուսերեն թարգմանությունից, որ պահպանվել է «Повесть временных лет» կոչված ժողովածուում (տե՛ս *Зумин, Памятники права*, стр. 58—60, չին ուսերեն բնագիրը և նոր ուսերեն թարգմանությունը տե՛ս «Повесть временных лет», стр. 52, 249—250): Այդ պայմանագրի մասին տե՛ս նաև *Dujčev, Pinax Rhds*, 59—68:

232. Հետաքրքիր մանրամասնություններ է տալիս Լևոն Սարկավազը: Չմշկիկը ոսկեզօծ զրահներ հագած, ձի նստած գնաց Իստրոս գետի ափը՝ նույնպես ոսկեզօծ զենքեր կրող բյուրավոր հեծյալների ուղեկցությամբ: Սվյատոսլավը եկավ մինավակով, ուրիշների հետ թիավարելով: Նա միջահասակ էր, ուներ խիտ հոնքեր, կապույտ աչքեր, կճատ քիթ, ածիլած երես ու գլուխ, որից մի խոպոպ էր կախված՝ ազնրվականության ապացույց: Նա թիկնեղ էր, ականջներից կախված էին օղեր՝ երկու մարգարիտներով ազուցված: Նա սպիտակ շապիկ էր հագած (Leo Diac., p. 156—157):

233. Հրապարակ Կոստանգնուպոլսում:

234. Պաժինակաները Սվյատոսլավի ճանապարհը կտրեցին և նրան սպանեցին հավանաբար Բյուզանդիայի դրոմամբ: Բյուզանդառուսական այս պատերազմը մանրամասն ուսումնասիրված է հատկապես ուս պատմաբանների կողմից: Ամենակարևոր աշխատություններից կարելի է հիշատակել. *Белов, Борьба Святослава с Иоанном Цимисхием; Тухомиров, Исторические связи; Карышковский, Балканские войны Святослава*, 36—71: Նույնի, К истории Балканских войн Святослава, стр. 224—243: Նաև՝ *Левченко, Очерки: Հիշյալ պատերազմների ժամանակագրությունը տե՛ս Карышковский, О хронологии*, стр. 127—138):

235. Կապնիկոնը մտցրել էր նիկեփոր Փոկասը, այդ մասին արժեքավոր տեղեկություններ են պահպանել արարական աղբյուրները: Իրն Հաուկալը դրում է, թե նիկեփորը միջին կարողության յուրաքանչյուր ծխից գանձում էր տասը ոսկե դինար: Նրանից բարձր եկամուտ ունեցողը պարտավոր էր տալ մեկ զինվոր ձիով, զենքով, պարենով ու անասնակերով. նրա ծախսը կազմում էր երեսուն դինար: Ըստ Վասիլևսկու իրն Հաուկալի ծխահարկը նույնանում է կապնիկոնի հետ (տե՛ս *Розен, Василии*, стр. 279—280):

236. Իմա հունական տառեր: Մինչ այդ բյուզանդական դրամների վրայի մակագրությունները լատիներեն էին արվում:

237. Անտոնիոս III Սկանդալիոս Ստողիտեսը աթոռակալել է 973 թ. դեկտեմբերից և հրաժարվել պաշտոնից 976 թ. հունվարին (*Grumel, Chronologie patriarcale*, p. 70): Դրանից հետո աթոռը թափուր մնաց շորս և կես տարի՝ 976-ի հունվարից մինչև 980 թ. մայիսը:

238. Բնագրում  $\pi\omega\chi\omega\nu\iota\varsigma$ ,  $\pi\omega\chi\omega\nu$  բառից, որ մորուք է նշանակում: Այս գիսավոր աստղը հիշատակում է և Ասողիկը (էջ 186), անվանելով «նիզակաւոր աստղ»: «Նա պա ի միւս ամին ի նիԳ (28 մարտ 974—27 մարտ 975 թ.) թուականին նիզակաւոր աստղն երևեցաւ յաւուրս հնձոցն, ի մուտս ամառնային եղանակին, ինքն յարևելս կալով և զնշոյլս լուսոյն նիզակաձև լարևմուտս ձգեալ ի վերայ աշխարհին Յունաց. և տևեաց մինև յաշնանային եղանակն» (Ասողիկ, էջ 186—187): Տե՛ս նաև *Dulaurier, Recherches*, pp. 278—279:

239. Հովհաննես Չմշկիկն իր այս մեծ արշավանքի ժամանակ, ամենայն հավանականությամբ, նպատակ ուներ նաև Հայաստանի որոշ շրջաններին տիրանալ, արարների դեմ արշավելիս նա ցանկացավ «զմուտն յաշխարհն Հայոց առնել» (Մատթ. Ուռն., էջ 17): Այդ բանին ընդդիսակայեցին հայոց մեծամեծները Աշոտ III թագավորի գլխավորությամբ, «բանակ հարևալ ի Հարթայ գաւառին արք իրրև ութսուն հազար» (նույն տեղում): «Նւ յառաջին գիշերն,— գրում է Ուռհայեցին,—բազում նեղութիւն կրեաց զօրքն Հոռոմոց ի հետևակ զօրացն Սասանու» (Իմա Սասունի. Մատթ. Ուռն., էջ 18):

240. Լևոն Սարկավազը նշում է Չմշկիկի 974 թ. վերագրված քաղաքների անունները՝ տալով նրա երթուղին: Մտնելով Ասորիք, նա նախ և առաջ գրավեց էմեսո (Ամիդ) «նշանավոր ու ամուր քաղաքը, այնտեղից գնաց Իփոսավոր, հարստությամբ ու անասուններով շրջանի բոլոր քաղաքները գերազանցող Միաֆարիկին քաղաքը», իրեն ենթարկեց այն, նրա բնակիչներից ստացավ բազում ու գեղեցկագույն նվերներ՝ ոսկի, արծաթ, ոսկեթել կերպասներ և շարժվեց դեպի Մծրին, որը կայսրը գտավ անմարդարնակ: Բյուզանդացիների վախից բնակիչները թողել, Իփսոս էին: Կայսրն այնուհետև շարժվեց դեպի էկրատան քաղաքը, բայց չրի սլակասություն զգալով, Իփոս շարեց այն գրավել և տեղի սարակինոսներից մեծարժեք նվերներ ստանալով, վերադարձավ Կոստանդնուպոլիս: 975 թ. Չմշկիկը դարձյալ արշավեց արարների դեմ: Սկիւիցեսը 974 և 975 թթ. արշավանքները, հավանաբար, միասին է հիշատակում: 975 թ. Չմշկիկը Պա-



ղեստինի վրայով գնաց գրավեց Մեմփիչը (Հիերապոլիս), գտավ Քրիստոսի հողաթափերը, Կարապետի մաղերը, որոնք ամփոփեց Կոստանդնուպոլսի Աստվածածնի եկեղեցում և Փրկչի տաճարում: Մեմփիչից Չմշկիկը գնաց ավերեց Ապամիա բերդը, որից հետո շարժվեց դեպի Դամասկոս, որի բնակիչները հպատակություն հայտնեցին և հարկատու դարձան: Դամասկոսից կայսրը Լիբանան լեռան վրայով գնաց, գրավեց շատ ամուր Բորդո քաղաքը, անցավ Փյունիկե, գրավեց Բալանիա բերդը և պաշարեց ու տիրացավ Բեյրութ քաղաքին, անհաջող հարձակում գործեց Տրիպոլսի վրա, որից հետո ճանապարհ ընկավ դեպի Կոստանդնուպոլիս (*Leo Diac.*, p. 161—166, 169):

Չմշկիկի խնդրո առարկա արշավանքի մասին ամենամանրամասն ու ճշգրիտ շարդարանքին մենք հանդիպում ենք Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ: Պատմիչը (Հակոբ Սանահնեցու միջոցով) իր պատմական երկում բերում է Հովհաննես Չմշկիկի՝ հայոց Աշոտ III թագավորին գրած նամակի հայերեն թարգմանությունը, որի մեջ նա ամենայն մանրամասնությամբ գրում է 975 թ. իր արարական արշավանքի մասին: Այդ նամակում կան և արժեքավոր տեղեկություններ տվյալ շրջանում հայրուգանդական հարաբերությունների մասին (տե՛ս Մատթ. Ուռհ. էջ 19—28): Չմշկիկի այս նամակի մասին տե՛ս *Кучук-Иоаннесов. Письмо Иоанна Цимисхия*, стр. 91—101, *Adontz. La lettre de Tzimiscès*, p. 141—147: Լ. Խաչիկյան, *Հակոբ Սանահնեցի*, էջ 36—37: Եւաև՝ *Canard, Les sources arabes*, p. 293—295:

241. Արար. ալ-Բադանդուն, այժմ՝ Բոզանտր Կիլիկիայում:

242. Լևոն Սարկավագր Անագարվայի և Պողանդոսի փոխարեն հիշում է Լոնգիադան և Դրիդինը (*Leo Diac.*, p. 176):

243. Լևոն Սարկավագր գրում է, որ Չմշկիկին հյուրընկալեց ու թունավորեց Օլիմպոս (Փոքրասիական) լեռան մոտ գտնվող Ատրոա դաշտում պատրիկ Ռոմանոս սևաստոֆորոսը (*Leo Diac.*, p. 177), որը Ռ. Գիլյանի կարծիքով, Ռոմանոս I Լակապենոսի թոռն էր (*Guilland, Le Sebastophore*, p. 201): Չմշկիկի թունավորման վարկածն ընդունված է գիտության մեջ (տե՛ս հատկապես *Guilland, La destinée*, p. 25—26): Սակայն Օստրոգորսկին գտնում է, որ նա պարզապես տիֆից մեռավ (*Ostrogorsky, Histoire*, p. 322): Չմշկիկը վախճանվեց Կոստանդնուպոլսում աշխարհի արարչագործության 6485 թ. հունվարի 10-ին, ինդիկտիոնի 4-րդ տարին (976): Գրեթե նույն թվականն է հիշում և Յահյա Անտիոքացին (11-ր հունվարի): Նրա ասելով Չմշկիկը թագավորեց վեց տարի և մեկ ամիս (*Розен, Василий*, стр. 75):

Միանգամայն տարբեր ձևով են նկարագրված այս դեպքերը Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ: Նրա ասելով, Չմշկիկը, իբր խղճի խայթ զգալով նիկեփորին սպանելու համար, «խորհեցաւ բարի խորհուրդս... և յուղարկեալ ի Վասակաւանն ի գաւառն Յանձթայ և բերել տայր զՎասիլ և զԿոստանդին զորդիսն Ռոմանոսի թագաւորին, զոր փախոյց առ Սպրամիկն ի յահէ անօրէն թագուհւոյն ...և առեալ զթագն ձեռօք իւրովք ի գլխոյ իւրմէ և եղեալ ի գլուխն Վասիլ և նստեցուցանէր զնա յաթոռ թագաւորութեանն իւրոյ... և ինքն դիմեալ յանապատ, և յանձն իւր առեալ զկարգս կրօնաւորութեան՝ ի վանս ընթացեալ ընակէր» (Մատթ. Ուռհ., էջ 29—30): Չմշկիկի համառոտ, բայց դիպուկ բնութագիրը տվել է Պսելլոսը. «Կայսր Հովհաննես Չմշկիկը հոռմայեցիների պետության մեծ հաջողությունների պատճառ դարձավ, նա մեծացրեց նրա հզորությունը» (*Psellos, Chronographie*, I, p. 2):

244. Պրոհիրոս (պարակիմոմենոս) Վասիլը Կոստանդին Միրանաթինի ապօրինի որդին էր և դեռ մանուկ հասակում ներքինացվել էր գահի նկատմամբ ակնկալություններ չունենալու համար (*Psellos, Chronographie*, I, p. 3): Հետագայում, Վարդաս Փոկասի

ապստամբության ճնշումից հետո Վասիլ II-ը Վասիլ պարակիմոմենոսին պաշտոնանկ անելով, կղզի արքայաց (նույն տեղում, էջ 12):

245. Մեսոպոտամիա բանակաթեմի վարձկաններից բաղկացած զինված ուժերի: Այս բանակաթեմի կազմում կային բազմաթիվ հայկական գավառներ:

246. Վարդաս Սկլերոսը վիրավորվեց՝ Մեսոպոտամիայի տազմաների դուքսի աստիճանը ստանալով (աստիճանի մասին տե՛ս վերը, ծանոթ. 26) այն պատճառով, որ դուքսի աստիճանն այս ժամանակ ավելի ցածր էր, քան զորավարինը և նույն բանակաթեմում կարող էին լինել և՛ զորավարը, և՛ դուքսը, ընդ որում առաջինն ավելի բարձր էր կանգնած (տե՛ս Lemerle, Prolegomenes, p. 88—89): X դ. վերջից է, որ բանակաթեմային զորքերի նշանակության անկման հետևանքով ընկավ նաև զորավարի նշանակությունը, որի տեղը զրավեց կատապանը կամ դուքսը, կայսեր լիիրավ տեղակալը նահանգում, իր գերիշխանության տակ ունենալով մի քանի բանակաթեմեր իրենց զորավարներով հանդերձ («Советы и рассказы», стр. 430—431):

Յահյա Անտիոքացին գրում է, որ Վասիլ կայսրը Վարդ Սկլերոսին նշանակեց Անձիտի և ալ-հալիդիյատի կառավարիչ (Розен, Василий, стр. 1): Ալ-Մակինի մոտ Անձիտի փոխարեն գրված է Հարբոտ, որն ուսումնասիրողները նույնացնում են հարբերդի հետ (արաբ. Հիսն-Ջիադ, հետագայում՝ հարտաբիրտ): Ինչպես ստորև պիտի տեսնենք, Վարդ Սկլերոսը ապստամբություն բարձրացնելով, գրավեց Хартεε-ն (հարբերդը): Բոլոր դեպքերում Անձիտը մտնում էր Մեսոպոտամիա (Միջագետք) բանակաթեմի մեջ (տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 26): Ինչ վերաբերում է Յահյա Անտիոքացու ալ-հալիդիյատին, Ռոզենի կարծիքով այն մտնում էր Տարոնի մեջ, կազմելով նրա մասը: Այն սահմանամերձ էր Մեսոպոտամիա բանակաթեմին և Անձիտ գավառին (Розен, Василий, стр. 80):

247. Հայ հեղինակները թեև Սկլերոսին անվանում են «բռնակալ», բայց ոչ հազվադեպ նաև «թագաւոր» (Ասողիկ, էջ 193, 194): 986 թ. վերջին արաբների հետ կնքած իր պայմանագրում արաբները ևս Վարդաս Սկլերոսին անվանում են «Ռումերի (հոռոմների) թագավոր» (Canard, Deux documents arabes, p. 63):

248. Ասողիկը գրում է, որ Վարդաս Սկլերոսը «ապստամբեալ թագաւորեաց ի կողմանս Զահանայ և Մելտենոյ, որ էր այր քաջ և կորովի ի գործ պատերազմաց»: Պատմիչը խոսում է նաև նրա զորքի ազգային պատկանելիության մասին. «եւ միաբանեալ ընդ ինքեան գհեծելագուևդ զօրն Հայոց, որ ընդ Յունաց թագաւորութեամբն», ինչպես և նրան հարած հայ իշխանների՝ այդ թվում Տարոնի իշխանի որդիներ Գրիգորին և Բագարատին և Մոկբի իշխան Զափրանիկին (Ասողիկ, էջ 190—191):

249. Խոսքը 'Իեմոսթենեսի մասին է: Տե՛ս նրա Առաջին Օլիմպիականը:

250. Բնագրում՝ τῶν ὀηλιζουῶν παρατορας φόρων: Յահյա Անտիոքացին հաստատում է Սկլիդիցեսին: Նա ցույց է տալիս, որ Վարդաս Սկլերոսը գալով այն շրջանը, որն իրեն էին հատկացրել կառավարելու, հանկարծակի հարձակվեց Մալաթիայի վրա և ձերբակալեց այնտեղ գտնվող «վասիլիկոսին» (կայսերական մարդուն), որից խլեց նրա մոտ գտնվող դրամները՝ վեց կենտինար (43.200 ոսկեդրամ): (Розен, Василий, стр. 1): Ինչպես տեսնում ենք, ըստ Յահյայի «վասիլիկոսը» (βασιλικός) հարկային պաշտոնյա էր, բայց և կառավարիչ, քանզի Վարդաս Սկլերոսը, գրավելով Անտիոքն ու Մալաթիան, նրանց վրա «վասիլիկոս» (կառավարիչ) նշանակեց իր մարդկանց (Розен, Василий, стр. 2, 3): Բայց բոլոր դեպքերում, վասիլիկոսը կայսեր մարդու, ներկայացուցչի, պատվիրակի նշանակություն ունի: Հենց նույն Յահյան ցույց է տալիս, որ 1018 թ. Բուլղարիան նվաճելուց հետո Վասիլ II-ը այնտեղ նշանակեց վասիլիկոս-



ների՝ «ամեն տեսակի գործերն ու ունեցվածք վարողների» (Розен, Василий, стр. 59): Հիշյալ տերմինը հանգիպում է և հայկական աղբյուրներում: Բյուզանդական կայսրը Հովհաննես Դրասխանակերտցու և Աշոտ Երկաթի մոտ ուղարկեց «զոմն Թէոդորոս վասիլիոս բաղմահարկի պատուասիրութեամբ և ընտանեբար սիրոյ հարազատութեամբ՝ ընդ ուշի ևս կապեալ զսէր կատարման հօր իւրոյ Բասլի, որ ընդ հօր նորա Սմբատայ էր» (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 284):

251. Բնագրում Χάρτετε (հետաքրքրական է նշել, որ Կարսն էլ Սկիլիցեսը կոչում է Καρσε, Արծնը՝ Ἄρτζε, Բաբերդը Παίπερτε: Հայկական այս տեղանունների վերջին ε - ն ինձ համար անբացատրելի է): Սկիլիցեսը Խարբերդը տեղադրում է Մեսոպոտամիա բանակաթեմում: Խարբերդը գտնվում էր բյուզանդական Չորրորդ Հայքի վեցերորդ՝ Անձիտ գավառում և հնում կոչվում էր Հոռեբերդ, անտիկ շրջանում՝ Ջիատա, արաբ. Հիսն Ջիադ (տե՛ս Երեմյան, Հայաստանը..., էջ 36, 63): Յակուտ ալ-Համավին գրում է, թէ «հայերեն անունն է ծանոթ այն բերդի, որը Հիսն Ջիադ անվամբ է ճանաչված» (Նալբանդյան, Արաբական աղբյուրները..., էջ 55):

252. Սկիլիցեսի Ապոտագլեն (կարդացվում է՝ Ապոտաղլե) նույնանում է Աբու Տաղլիբ իբն Համդանի հետ: Հետագայում, երբ նրան ծանր դրություն մեջ գցեց Աղուղ Ալ Դաուլայի քարտուղար Աբու-լ-Վաֆան, նա օգնություն խնդրեց հենց Վարդաս Սկլերոսից (Розен, Василий, стр. 12):

253. Վարդաս Սկլերոսի դորքի էթնիկական խայտաբղետության մասին վկայում է և Յահյա Անտիոքացին: «Նրա մոտ հավաքվեցին,—գրում է նա,— բազում ժողովուրդ՝ հույներ, հայեր և մուսուլմաններ» (Розен, Василий, стр. 2):

254. Այստեղ «պրոեկորոս» եկեղեցական աստիճան է:

255. Կայսերական նշանակ էին համարվում նաև կարմիր կոշիկները, որոնք υποδύματα, πεδύλα, τρυφια էին կոչվում: Այսպես էր և սասանյանների արքունիքում (հմմտ. Պրոկոպիոս Կեսարացի, էջ 191, նաև՝ Malalae, Chronographia, p. 413, Theophanis Chronographia, I, p. 168): Կայսերական նշանակների մասին տե՛ս Ebersolt, Etudes, p. 63—69:

256. Վասիլ II-ին, Կոստանդին VIII-ին և Վասիլ պարակիմոմենոսին:

257. Մագիստրոս Եվստաթիոս Մալայինոսն այն ժամանակ Տարսոնի կառավարիչն էր: Յահյան նրան հիշում է որպես պատրիկ Իբն ալ Մալային (Розен, Василий, стр. 2):

258. էտերիարխ (հետերիարխ) հետերիայի (օտարերկրացի վարձկաններից կազմված) զորագնդի հրամանատար: Ավելի մանրամասն տե՛ս ծանոթ. 528:

259. Այս Սահակ Վահրամյանը (Σαχχαίος τσουνομα Βραχχαίος την προσηγορίαν) պատկանում էր մի ընտանիքի, որից մի դար հետո, ըստ Ադոնցի, սերեց նշանավոր Փիլարոս Վարաժնունին (տե՛ս ծանոթ. 703): Նաև՝ Adontz, La famille de Philarete, p. 149—150: Ընտանիքը հայտնի է X դարի կեսերից: Արաբ բանաստեղծ Աբու Ֆիրասը հիշատակում է «Վահրամի ընտանիքը» որպես իր ժամանակվա ամենանշանավոր բյուզանդական ընտանիքներից մեկը (Adontz—Canard, Quelques noms, p. 451, 11): Այս Սահակ-Վահրամի մասին,—ըստ Ադոնցի, հիշատակություն կա Միլետոսի եպիսկոպոս սբ. Նիկեփորի վարքում, որի համաձայն Սահակը Չմշկիկի օրոք ուներ օ ετι τών δεσησων բավականին բարձր պաշտոնը: Նա այնտեղ բնորոշվում է որպես «չարություն անշանավոր Սախակիոս» („Vita sancti Nicephori», p. 144): Կաժդանը մերժում է այդ նույնացումը (Каждан, Армяне..., стр. 25): Յահյա Անտիոքացին Սահակ-Վահրամին կոչում է Իսխակ իբն Բահրամ (տե՛ս Розен, Василий, стр. 78: հմմտ. „Histoire de Yahya», p. 822): Հենց այս Սահակ Վահրամն էր, որ երբ 978 թ. հունվարին անտիոքացիք հրաժար-

վելով Վարդաս Սկլերոսից, կայսր հռչակեցին Վասիլ II-ին, Սկլերոսի կողմից Անտիոք ուղարկվեց, որպեսզի համոզի նրանց հրաժարվել իրենց վճռից (Розен, Василий, стр. 4): Անտիոքացիք, սակայն, թույլ չտվեցին նրան քաղաք մտնել և նա ձեռնունայն վերադարձավ: Անտիոք գնաց Սկլերոսի կողմն անցած ոմն Մախֆուլ-իբն-խաբիբ-իբն-ալ-Բագիլ, բայց անհաջողության հանդիպեց: Դրա վրա Անտիոքում և նրա շրջակայքում ապրող հայերը խռովություն բարձրացրին իրենց ազգակից Սամուիլի գլխավորությամբ, որը, սակայն, ճնշվեց (Розен, Василий, стр. 4—5): Պահպանվել է մի կնիք՝ Βαχραμης ο αρχων մակագրությամբ (տե՛ս՝ Schlumberger, Sigillographie, p. 311—312), որին Ադոնցը համարում է Վահրամյանների ընտանիքի նախահավը (անունը տվողը): Adontz, La famille de Philarète, p. 151: Հմմտ. Каждан, Армяне, стр. 25:

260. Սկիլիցեսը Լապարան նույնացնում է Լիկանդոսի հետ և այն համարում Կապադովկիայի մի մասը: Լևոն Սարկավազը գտնում է, որ Լապարայի դաշտը հայոց երկրի սահմանն է (μεθόριον... τῆς χώρας τῶν Ἀρμενίων—Leo Diac., p. 169): Զոնարան այն անվանում է Լիպարա (Zon., IV p. 106): Լիկանդոսը հիշում է Ասողիկը «Լիկանդիոն աշխարհ» ձևով (Ասողիկ, էջ 175): Կամրջածորի հայտնի մենաստանը գտնվում էր «Յաշխարհին Լիկանտոնացոց»։ Տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, հատ, Ա, Անթիլիաս, 1951, էջ 171: Լիկանդոսի ազգաբնակչության էթնիկական կազմի մասին տե՛ս Oikonomides, L'organisation, p. 83—85:

261. Ըստ Սկիլիցեսի, ճակատամարտը տեղի ունեցավ Լիկանդոսում, այնինչ Յահյայի համաձայն՝ Ջեյխանում, որ համապատասխանում է Մելիտենեին սահմանակից Զահան գավառին (հմմտ. Ասողիկ, էջ 191, Розен, Василий, стр. 2, 85):

262. Բնագրում՝ Τζαυανδός, հայոց Սամնդավը, Յահյա Անտիոքացու՝ Սամանդուն (Histoire de Yahya, p. 774): Ցամանդոսի ամրոցը կառուցեց Մելիաս-Մլեհը X դ. սկզբում («Կոստանդին Ծիրանածին», էջ 27): Դրանից առաջ նա «ամայի և անմարդաբնակ» վայր էր՝ Լիկանդոսին սահմանակից (նույն տեղում, էջ 171, 172): 1066 թ. կարևոր քաղաք էր, այնտեղ գումարվեց եկեղեցական ժողով, որ կաթողիկոս ընտրեց Վահրամ-Գրիգորիսին:

Ցրանսիացի արվեստագետ Գ. Ժերֆանիոնն իր՝ Կապադովկիայի վիմափոր եկեղեցիներին նվիրված աշխատության մեջ, խոսելով Լիկանդոսի և Սամնդավի եկեղեցիների մասին, նկատում է հայկական ազդեցություններ և այդ առթիվ հիշում Լևոն VI-ի օրոք այդ շրջաններում Բարձր Հայքից եկած և հաստատված հայության մասին (տե՛ս Terphanion, Une nouvelle province, p. 398):

263. Կուրտիկների (Քուրդիկ) հայկական ընտանիքը գաղթել է Բյուզանդիա Վասիլ I-ի օրոք (Marquart, Sudarmenien, S. 295, An. 1) և, ըստ Ս. Երեմյանի, Մամիկոնյան ծագում ունի (Каждан, Армяне, стр. 14—15):

264. Այս Ռոմանոս Տարոնացին Ադոնցի ենթադրությամբ Տարոնի վերջին իշխան Աշոտի որդի Բագարատի որդին էր, Բագարատի, որ ամուսնացել էր մագիստրոս Թեոփիլակտոսի, Ռոմանոս Լակապենոս կայսեր ազգականի դստեր հետ և այդ կայսեր պատվին իր որդուն տվել Ռոմանոս անունը (Adontz, Les Taronites, p. 243). Ոչնչով չհաստատվող ենթադրություններ:

265. Հալեպի:

266. Թարգմանաբար նշանակում է Սուր քար:

267. Շատ հնից եկող առած է:

268. Ա. Վասիլեր Գավրասների ընտանիքը հայկական է համարում, եյնելով տարոնացիների հետ նրանց ունեցած ենթադրյալ ազգակցությունից Ըստ Ս. Երեմյանի, ա-



նունը ծագում է հայկական Գավրեք տեղանունից: Այդ ընտանիքին հատուկ ուսումնասիրություն նվիրած Ա. Բրայերը ցույց է տալիս, որ որոշակի որևէ փաստ չկա այդ ընտանիքը հայկական համարելու (*Bryer, The Gabrades, p. 165: Каждан, Армяне, стр. 89—92*),

269. Յահյա Անտիոքացին նշում է, որ Վարդաս Փոկասը, նիկեփոր կայսեր եղբայր և Լոնի որդին, յոթ տարի է ինչ աքսորական էր կղզում: Վասիլ կայսրը նրան նշանակեց ղոմեստիկ ալ-աս-խ-յուն (սխուլերի ղոմեստիկոս) և ուղարկեց Սկլերոսի դեմ (*Розек. Василий, стр. 3*):

270. Լևոն Սարկավազը Աբիդոսի ճակատամարտի մասին խոսում է ավելի մանրամասն: Նա ցույց է տալիս, որ Վարդաս Սկլերոսը, գրավելով Նիկիան, Աբիդոսն ու Ատտալիան, ձեռք բերեց բազում տրիբրաններ, որոնց օգնությամբ շէր թողնում, որ առևտրանավերը կոստանդնուպոլիս ցորեն տանեն: Դրա վրա մայրաքաղաքից «հունական հրով» նավեր ուղարկվեցին՝ մագիստրոս Վարդաս Պարսակուտենոսի գլխավորությամբ, որոնք Աբիդոսում կրակի տվեցին ապստամբների նավերը, նրանց զորքերը գուրջպրտեցին և գրավեցին Աբիդոսի բերդը: Դրանից հետո է, որ Փոկասը հարձակվեց Սկլերոսի վրա և պարտության մատնեց (*Leo Diac., p. 170*):

271. Խարսիանոն բանակաթեմի մասին մանրամասն տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 25—27, 321—322:

272. Բնագրում՝ Βασιλικα θερμα: Ռամզեյը գտնում է, որ թագավորական ջերմուկները պետք է տեղադրել ժամանակակից Գյոնեում կամ էլ Տերգիլի Համամում (*Ramsey, HGAM, p. 265*):

273. Իմա՝ Տայբ: Բյուզանդական աղբյուրներում Իբերիա է կոչվում (բացի բուն Վրաստանից) նաև բանակաթեմը, որ ստեղծվեց XI դ. 20-ական թվականներին, որի մեջ, բացի՝ Տայբից, մտնում էին նաև այլ հայկական հողեր, ինչպիսիք են՝ Կաբինը, Հաբըրը, Ապահունիքը, Բասյանը և այլն:

274. Խոսքը Դավիթ կուրապաղատի մասին է, որ հորջորվում էր նաև «Մեծ»: Նա Տայբի իշխան Ատրնեբսե՛ III-ի կրտսեր որդին էր (*Toumanoff, The Bagratids of Iberia, p. 39—40: Վերջին գործերից՝ Βαθρυτζε, К вопросу, стр. 79—89 (վրացերեն, ռուսերեն ամփոփմամբ: Նուլյնի, Таицское царство, նաև՝ ձանաշյան, Դավիթ Կյուրապաղատ: Շլյուսերթեի ասելով՝ „Prince d'origine arménienne“ (հայագրի): Տես՝ Schlumberger, L' eropée, t. I, p. 415—416*):

Մատթեոս Ուոհայեցին ցույց է տալիս, որ Վարդաս Սկլերոսին պարտության մատնեց «զորքն Հայոց» (էջ 34): Սակայն, քանի որ Սկլերոսին հաղթեցին Տայբի կուրապաղատի ուժերով, Ուոհայեցու «զորքն Հայոց»-ը պետք է կարդալ «զորքն Տայոց», (հմմտ. Արիստ. Լաստ. «զորքն Տայոց» (էջ 23), «ընդդէմ եկեալ քաջացն Տայոց» (էջ 25): Հայերեն գրչագրերում «Տայոց»-ը «Հայոց»-ի հետ շփոթված գտնում ենք Ասողիկի երկում: Նա երեք անգամ գրում է «կուրապաղատն Տայոց Դաւիթ» (էջ 188, 252), բայց մեկ անգամ սխալմամբ՝ «Հայոց» (էջ 266): Հանդիպում է և հակառակը: Ասողիկի մի ձեռագրում «արքայն Հայոց Գագիկ»-ի փոխարեն գրված է՝ «արքայն Տայոց Գագիկ» (Ասողիկ, էջ 267): Մեր միտքը հաստատում է Արիստակես Լաստիվերցին. «մինչ զի թագաւորին խնդրել զօր յօգնականութիւն ի վրաց կիւրապաղատէն: Որովք հարեալ զբռնակալն՝ փախստական հանեն յաշխարհէն, որ երթեալ անկանի ի Բաբելովն» (էջ 33): Ասողիկի ասելով, Դավիթ կուրապաղատից զորք խնդրողը ոչ թէ Փոկասն էր, այլ Թոռնիկ զորավարը. «Վասիլ թագաւորն Յունաց,— գրում է նա,— զթոռնիկ զորավարն, որ էր յաղդէն վրաց (այսինքն՝ վրացադավան հայ—Ղ. Բ.), արեղայ ի սուրբ լերինն՝

(իմա՝ Աթոնում—Ն. Բ.) հանեալ առաքէ առ կիրապաղատն Տալոց Դաւիթ... որպէս զի զօր առաքեսցէ յօգնականութիւն նմա» (էջ 192): Այս Թոռնիկը ծագումով Սոմխեթից էր (Հայաստանից): Պ. Պետերսի ենթադրությամբ՝ Թորթումից, և տարեց հասակում դարձավ վանական Աթոս լեռան վրտ՝ Հովհաննես սինկելլոս անունով (տե՛ս Peeters, Un colophon, p. 358—371, Նույնի, Orient et Byzance, p. 163—164): Թոռնիկ գորավարն էր, որ նախքան Փոկասի հանգես գալը, Դավիթ կուրապաղատից ստացած զորքով, որին գլխավորում էր իշխանաց իշխան Զոչիկը, պատերազմում է Սկլերոսի դեմ: Սրանք «սկսեալ ի Տալոց աշխարհէն՝ քանդեալ աւերեցին զամենայն աշխարհն Յունաց, որ ընդ ձեռամբ բռնակալին էր» (Ասողիկ, էջ 193): Սրանից հետո, Ասողիկի համաձայն, Վասիլ կայսրը Փոկասին բանտից հանելով, ուղարկեց Սկլերոսի դեմ՝ հունաց արևմտական զորքով. «հանդերձ Վրաց (իմա՝ Դավիթ կուրապաղատի—Ն. Բ.) զօրուն առաքէ ի վերայ բռնակալին Վարդայ երկուս բանակս»: Սբ. Հովհաննեսի և Նվթիմիոսի վարքում նուրբացս ասված է, որ բյուզանդական արքունիքը Դավիթ կուրապաղատի մոտ ուղարկեց հենց Թոռնիկին, որին Տալքի իշխանը տվեց 12 հազար հեծյալ զորք և նրա գլխավորությամբ ուղարկեց ապստամբի դեմ, պարտության մատնեց նրան: Հաղթանակով վերադառնալով մայրաքաղաք, նա կայսրերի կողմից պատվով ընդունվեց, որից հետո գնաց Աթոն:

Ասողիկը հիշում է նաև, թե ինչպիսի պայմաններով է Դավիթ կուրապաղատը Վասիլին օգնություն տվել: Կայսրը խոստանայ տալ նմա գեղատոյառիճ Կղէսուրան, զԶորմայրի և զԿարին, զԲասեան և զՍևուկ բերդակ, որ է Մարդաղի. զՀարբ և Ապահունիս» (էջ 192): Այդ մասին տե՛ս Бармукия, О феме Иверия, стр. 73: Խոսքը այդ հողերին տիրանալու՝ կայսեր տված իրավունքին է վերաբերում: Խաղտոյառիճի մասին լատիվերցիին գրում է, թե այս և այլ հողեր այսուհի ժամանակաւ կալեալ էր... Դաւիթ կուրապաղատի, բայց ոչ իբրև զիր հայրենի ժառանգութիւն, այլ պարգևք էին այսոքիկ ի թագաւորէն վասն նորա միամիտ հնազանդութեանն, (էջ 35):

275. Խաղտոյառի (Խաղտիքի) բանակաթեմի: Տե՛ս «Կոստանդին Միրանաձին», էջ 325—326:

276. Սկիլիցեսը Պանկալիան տեղադրում է Հալիս գետին մոտիկ, այնինչ ըստ Լևոն Սարկավագի գտնվում էր Ամորիոնի մոտ (Leo Diac., p. 170): Պանկալիայի ճակատամարտը ըստ Յահյա Անտիոքացու տեղի ունեցավ հիշրի 367 թվականի Զուլ-կադ ամսի 10-ին, շրեքշաբթի օր (978 թ. հունիսի 19-ին), որտեղ Վարդաս Փոկասը, ըստ արաբ պատմիչի, պարտություն կրեց և փախուստի դիմեց (Розен, Василий, стр. 3): Սկիլիցեսը Պանկալիայի ճակատամարտը վերջինն է համարում, որում Սկլերոսը պարտություն կրելով, փախավ արաբների մոտ: Յահյան ցույց է տալիս, որ Վարդաս Սկլերոսն ու Վարդաս Փոկասը «երկրորդ անգամ» բախվեցին հիշրայի 368 թ. Շարան ամսի 21-ին (979 թ. մարտի 24-ին), որից հետո ապստամբը փախավ (Розен, Василий, стр. 12): Թվականի մասին տե՛ս նաև Canard, Deux documents arabes, p. 55:

277. Ասողիկը նրան անվանում է «Իբն Խոսրով, ամիրան Բաղդադի, որ է Բաբելոն» (էջ 193, 194): Սկիլիցեսը, թեև այստեղ նրան անվանում է «արխոնտ», մի փոքր հետո կոչում «ամերմունի» (ամիրապետ): Խոսքը Բուլդի խալիֆա Աղուդ-ադ-Դաուլա-ֆանա Խոսրովի մասին է (Ազուդ-ադ-Դաուլա Աբու-Շուլա Խուսրաու, 949—983 թթ.):

278. Յահյայի համաձայն Սկլերոսն իր պարտությունից հետո, վերցնելով եղբորը՝ Կոստանդին և որդուն՝ Ռոմանոսին, երեք հարյուր հոգով գնաց Դիարբաքը, որտեղից եղբորը՝ Կոստանդինն ուղարկեց սուլթան Աղուդ-ադ-Դաուլայի մոտ՝ օգնություն խնդրելու:



Վասիլ կայսրը, իմանալով այդ մասին, Ադուղ-աղ-Պաուլայի մոտ ուղարկեց իր քարտուղարին, Նիկեփոր-ալ-Ուրանունին (Ուրանոսին), որն հետագայում դարձավ մագիստրոս և Անտիոքի կառավարիչ, համոզելու սուլթանին ձերբակալել և կայսեր հանձնել Սկլերոսին: Խալիֆան դրա համար Վասիլից մի շարք բերդեր պահանջեց, որոնք բյուզանդացիք խլել էին արաբներից, բայց մերժում ստացավ: Սկլերոսը բանտարկված մնաց Բաղդատում ութ տարի (Розен, Василий, стр. 13—14): Սկիլիցեսը Դիարբաքրի փոխարեն դրում է Մարտիրոսապոլիս, որ կենտրոնն էր տվյալ նահանգի: Այդ շրջանը պատկանում էր Համդանյան Աբու Տաղիբին: Վասիլ II-ի և սուլթան Ադուղ-ալ-Պաուլայի միջև բանակցությունները տևեցին մի քանի տարի: Այդ բանակցությունների մասին ամենից հանգամանորեն գրում է Աբու Շուջան: Նիկեփոր Ուրանոսը Բաղդադ ուղարկվեց 980 թ., որտեղից վերադարձավ Կոստանդնուպոլիս մի մուսուլման դեսպանի՝ «ղազի» Իբն ալ-Բաքիլանիի հետ՝ հաշտության պայմանագրի մի նախագծով: Վերջինս Բաղդադ վերադարձավ մի հուլյնի՝ Իբն Քունուսի (հավանաբար՝ Իբն Յունուս) ուղեկցությամբ: Հիշրայի 372 թ. (982 թ. հունիս—983 թ. հունիս) Բուլդո սուլթանը Կոստանդնուպոլիս ուղարկեց Իբն Շահրամին, որը երկար բանակցություններ վարելուց հետո Բաղդադ վերադարձավ Նիկեփոր Ուրանոսի հետ՝ բանակցություններն ավարտելու համար: Կայսրը պահանջում էր ոչ միայն Սկլերոսին, այլև մի շարք ամրություններ, որ կայսրությունը կորցրեց Սկլերոսի ապստամբության ժամանակ: Բուլդո սուլթանը ոչ միայն չգիջեց, ընդհակառակը պահանջեց անցյալում բյուզանդացիների կողմից Դիարբաքրում գրավված համդանյան հողերը, ոչ միայն Միջագետքում, այլև Ասորիքում: Ադուղ ալ-Պաուլայի օրոք այդ բանակցությունները ոչ մի արդյունք չտվեցին: Նրա հաջորդ Սամսամ աղ-Պաուլայի օրոք 983 թ. մարտի 26-ին հաշտության պայմանագիրը կնքվեց, օրը հաստատեց երկու տիրակալների հողային տիրույթները: Ինչ վերաբերում է Սկլերոսի հարցին, սուլթանը համաձայնվեց վերադարձնել նրան երեք տարի անց (տե՛ս *Ἐπιτομή, Deux documents arabes*, p. 56—57): Նրան վերադարձրեց, բայց բոլորովին այլ պայմաններում:

Վարդաս Սկլերոսի ապստամբության մասին տե՛ս *Λομοური*, К истории, стр. 29—44: Tarnichvili, Le soulèvement de Bardas Skleros: Բարթիկյան, Հայաստանի նվաճումը, էջ 90—91; *Λυταβριν*, Кекавмен и Михаил Пселл о Варде Склире, стр. 157—164: *Βαδριδζε*, К истории восстания Варды Склира, стр. 206—243: *Seibt*, Die Skleroi, S. 29—58:

279. 'Επειτα της որպես գոյական նշանակում է «գործավար», այլ բառով՝ ἐργοδοτης: Սակայն, ինչպես տեսնում ենք, վերածվել է ազգանվան: Հետաքրքրական է նշել, որ Մատթեոս Ուոհայեցին հիշում է Անտիոքի մի հայ կառավարիչ՝ Եպիխտ անունով. «Եպիխտ իշխանն Հայոց, այր քաջ և պատերազմող, ի տանէն Շիրակայ» (էջ 214): «Ի Հայոց քաջ զօրականացն... Պեխտ անուն, և էր տուկ Անտիոքայ քաղաքին» (էջ 157): Դժվար է ասել, Քրիստափոր էպիխտը վերոհիշյալ Եպիխտի հետ ինչ ազգակցական կապ ունի:

280. Բնագրում՝ Πλατεια πετρα.

281. Նիկոլայոս II Խրիսովերդեսը աթոռակալել է 980 թ. մայիսից 12 տարի և ութ ամիս: Նա վախճանվեց 992 թ. դեկտեմբերի 16-ին (ճշտված ժամանակագրությունը տե՛ս *Grumel*, Chronologie patriarcale, p. 70):

282. Արեգակի խավարումը տեղի ունեցավ 981 թ. ապրիլի 7-ին: Դրան նախորդող արեգակի լրիվ խավարումը՝ 979 թ. մայիսի 29-ին, իսկ հաջորդը՝ 985 թ. հուլիսի 20-ին:

283. Քաղաք արևելյան Մակեդոնիայում:

284. Կոմսաձագերի պայքարը Բյուզանդիայի դեմ ոչ միայն ժողովրդա-ազատագրական բնույթ ունեւր, այլև քաղաքացիական պատերազմի: Եթե կոմսաձագերի կողմն էին անցնում Վասիլից դժգոհ առանձին բյուզանդական մեծամեծեր, ինչպես Բատացեսը, Վասիլ Գլավասը, Նիկոլիցան, ապա Սամուիլն էլ ստիպված էր մահապատժի ենթարկել իր հարազատ եղբայր Ահարոնին՝ Բյուզանդիայի հետ դավաճան կապեր հաստատած լինելու պատճառով (տե՛ս *Левченко, Записки греческого топарха*, стр. 68):

285. Քննական բնագրում՝ *Σφενδοσλάβον* (Սվյատոսլավ): Կաթղանն ուղղում է *Βλαδισδσλάβον* (Վլադիսլավ): *Каждан, Рец. на Скил.*, стр. 212:

286. Երկար ժամանակ Սամուիլի ծագման մասին տիրապետող էր Երկու փաստաթղթերի վրա հիմնված այն ենթադրությունը, թե նա ոմն Շիշմանի որդին էր: Բայց ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ փաստաթղթերից առաջինը XVI դ. կեղծիք է, իսկ մյուսը՝ գրված է 1502 թ. հետո (տե՛ս *Adoniz, Samuel*, p. 308): 1888 թ. Մակեդոնիայի Գերման գյուղում, Պրեսպա լճի մոտ եկեղեցու հիմքեր փորելիս գտնվեց Սամուիլի մի վիճագիր արձանագրությունը, գրված հին բուլղարերեն (տե՛ս *Известия Русского Археологического института в Константинополе*, т. IV, 1899, стр. 1—20: նաև՝ *Archiv für slavische Philologie*, XXI, p. 543—557): Հետագայում այդ արձանագրությունը հրատարակվել է բազմիցս, քանզի համարվում է թվական կրող կիրիլիցայով գրված հնագույն բնագիրը: Ահա այս արձանագրության մեջ Սամուիլի հայրը կոչված է Նիկոլայ: Արձանագրության պակասավոր լինելու պատճառով Սամուիլի մոր անունը չի կարողացվում: Այն վերականգնվում է Հովհաննես Սկիլիցեսի պատմական երկի Վիեննայի գրչագրում եպիսկոպոս Միքայել Դեուցու 1118 թ. թողած նշումների հիման վրա, որոնցից պարզվում է, որ ցար Սամուիլն ու նրա եղբայրները հզոր կոմս Նիկոլայի և Հոփսիմեի որդիներն են (*Χορητος οντες παυτες Νικολαος ονομαζόμενος μητρος 'Ριψιλης*. տե՛ս *Prokić, Die Zusätze*, S. 28: Այժմ նա *Ferluga, John Skylitzes*, p. 168 և հտ. նաև Կաթղանի գրախոսությունը Սկիլիցեսի քննական բնագրի վերաբերյալ, էջ 207): Ելնելով Սամուիլի մոր տիպիկ հայկական անունից, բուլղար հայտնի գիտնական Յորդան Իվանովը ցույց է տալիս, որ Սամուիլը սերում էր Բուլղարիա վերաբնակված հին հայկական ընտանիքից (տե՛ս նրա *„Произход на цар Самуиловия род“*, стр. 55 և հտ.: նաև նույնի, *Български старини из Македония*, стр. 24 - 25) և որպես իր եզրակացություն հաստատում, բերում է Ստեփանոս Տարոնացու տվյալները կոմսաձագերի մասին: Հայ պատմիչը գրում է. «Զի էին նոքա երկու եղբարք, որք Կոմսաձագքն կոչէին, անուն երիցուն մամուէլ, յազգէս Հայոց, ի գաւառէն Դերջանայ, զոր ընդ գունդս սաղարացն տարեալ էր զնոսա թագաւորն Վասիլ ի Մակեդոնիա պատերազմել ընդ Բուլղարացն. որոց ի դիպող ժամու ասլստամբեալ ի թագաւորէն Յունաց՝ գնացին առ թագաւորն Բուլղարաց, որ էր կուրտ, և ըստ քաջութեան իւրեանց մեծացան յաշս նորա» (Աստղիկ, էջ 244): «Կուրտ» թագավորի տակ Ասողիկը, հավանաբար, նկատի ունի Թոմանոսին, ցար Պետրոսի որդուն, որ ներքինացվեց Կոստանդնուպոլսում պարակիմոմենոս Հովսեփի կողմից՝ Չմշկիկի թագավորության ժամանակ: Չմշկիկի մահից հետո Թոմանոսը փախավ Բուլղարիա և Սամուիլի կողմից նշանակվեց Սկոպլյե քաղաքի կառավարիչ: Ավելի մանրամասն տե՛ս Սկիլիցեսի մոտ, էջ 80: Յորդան Իվանովի եզրակացությունը պաշտպանեց Ն. Ադոնցը (տե՛ս *Adontz, Samuel*, p. 382): Զլատարսկին, թեև բերում է Միքայել Դեուցու գրածը՝ Սամուիլի մոր Հոփսիմեի մասին, բայց թողնում առանց մեկնաբանության: Նա ծանոթ է Ասողիկի տվյալներին, բայց առանց որևէ բացատրության կրճատում է «յազգէս Հայոց, ի գաւառէն Դերջանայ...» բառերը (տե՛ս



Златарски, История, стр. 607, ծանոթ. 46): Յ. Իվանովի թեղի դեմ հանդես եկան ռադում բուլղար սլավոսլավաբաններ (տե՛ս Благоева, За произхода на цар Самуил, стр. 79—96):

Հայ ուսումնասիրողներից Սամուիլի մասին գրել է Ն. Ակինյանը (տե՛ս «Ստեփանոս Ասողիկ և կոմսաձագը», սյունակ 115—136): Նրա կարծիքով կոմսաձագերը պետք է ծնված լինեն շուրջ 945—952 թթ.: Նրանց հայր Նիկողայոսը 945 թ. քիչ առաջ սկսել է պաշտոնավարել Դերջանում: Կոմսաձագերը Դերջանից եկան Բուլղարիա 970 թ., երբ Բուլղարիայի ցարն էր Բորիսը:

1956 թ. հարավային Սակեդոնիայի Բիտոլյա քաղաքում 1522 թ. կառուցված Չաուշ մղկիթի քանդման ժամանակ գտնվեց ատենոք թուրքերի կողմից օգտագործված մարմարյա մի տախտակ, որի վրա փորագրված էր բուլղարական ցար Իվան-Վլադիսլավի (1015—1016) բուլղարներեն արձանագրությունը, ուր, ի միջի այլոց, ասված է, թե Իվանը «ծագումով բուլղար է, Նիկոլա և ...թողը, Առոնի՝ ցար Սամուիլի եղբոր որդին»: Արձանագրության հրատարակիչը գրում է, որ կարդացվում է միայն Նիկոլայի անունը, Հռիփսիմեիներ եղծված է (Займов, Биюлски надпис, стр. 24): Յորդան Չալմուզը Սամուիլի հայկական ծագումը անհավանական է համարում: Իրավացիորեն քննադատելով Սամուիլի ընտանիքին պատկանող մի շարք անձնավորությունների անունների (Դելյան, Պրուսիան և այլն) հայկական լինելու մասին Իվանովի տված բացատրությունները, Ջախմովը, սակայն, դարձանալիորեն մոռացության է տալիս Սամուիլի մոր՝ Հռիփսիմեի անունը, կարծես այն գոյություն էլ չունենար, երբ Իվանովի տեսության անկյունաքարը հայկական հենց այդ անունն է: Բրտոլյայր արձանագրության մասին տե՛ս նաև «Витольская надпись болгарского самодержца», стр. 123—133:

Մեզ հետաքրքրող հարցի մասին ի՞նչ կարծիք են հայտնել այլ ուսումնասիրողներ: Հույն բյուզանդագետ ակադեմիկոս Ամանտոսը ենթադրում է, որ կոմսաձագերի հայր կոմս Նիկոլայոսը նախապես բյուզանդական ծառայության մեջ էր և նրա ընտանիքը, հավանաբար, Հայաստանից էր (տե՛ս "Α μ α ν τ ο ς, 'Ι σ τ ο ρ ι α, σελ. 150, ծանոթ. 1): Հարավսլավացի սլավոսլավաբան Ս. Անտոլյակը ցույց է տալիս, որ կոմսաձագերի ծնողները կոչվել են Նիկոլայ և Հռիփսիմե և այս առթիվ գրում է. եթե նրանց մոր հայկական ծագման հարցում ուսումնասիրողները համամիտ են միմյանց, ապա հոր ծագման վերաբերյալ առաջ էն քաշվում մի քանի վարկած՝ թե նա նախաբուլղար էր, հայ կամ էլ պարսիկ (Antoljak, Samuilovata država, Skopje, 1969, ինչ անմատչելի չղում եմ Revue des Etudes Byzantines, t. XXIX, 1971, էջ 353-ում Gautier-ի տպած մատենագիտական նոթին): Ավստրիացի բյուզանդագետ Վ. Չայրոնը կոմսաձագերին Դերջանից սերելն է հաստատում (Untersuchungen, SS. 66—99): Կոմսաձագերի ծագման հարցը, ինչպես նաև նրանց շարժումը քննության նյութ դարձան Մակեդոնիայի Պրեսպլա քաղաքում 1969 թ. հոկտեմբերի 10—15-ը տևած հատուկ միջազգային սիմպոզիումում, նվիրված կոմսաձագերի շարժման 1090-ամյակին (L'insurrection des Comitopoules et la création de l'Etat de Samuel), որի գեկուցումները լույս են տեսել առանձին գրքով. «Хилияда години од востанието на комитопулите и созданието на Самоиловата държава», Скопье, 1971: Շարժման մասին տե՛ս նաև Н. П. Благоев, Братята Давид, Мэнсей, Аарон и Самуил. Годешник на Софийския университет, Юридически факултет, т. 37, 14, София, 1941—1942; Д. Ташковски, Самуилово царство, Скопье, 1961; П. Петров, Восстание Петра и Бояна в 976 г. и борьба комитопулов с Византией, «Byzantinobulgarica» том I, 1962, стр. 121—144; J. Ferluga, Le soulèvement des

Comitropoules, „Зборник Радова, Византолошки институт“, том IX, 1966, стр. 75—84; P. Tivchev, Nouvelles données sur les guerres des Bulgares contre Byzance au temps du tsar Samuel, Byzantino-Bulgarica 3, Sofia, 1969, p. 37—48; Հայկական աղբյուրների տվյալները բյուզանդաբուլղարական այս շրջանի պատմության մասին ուսումնասիրել են բուլղար պատմաբաններ Դ. Անգելովն ու Վ. Գյուզելեր: Տե՛ս նրանց հոդվածը՝ «Հայկական աղբյուրները», էջ 45 և հտ.:

287. Քաղաք Թեսալիաում (չչփոթել Փոքր Հայքի Լարիսայի հետ), Հելլադա բանակաթեմի կենտրոնը: XI դ. Հելլադա և Պելոպոննես բանակաթեմերը միացան իրար, որից հետո կենտրոնը դարձավ Թեբե քաղաքը: Լարիսայի գրավման մասին հիշատակում է և Կեկավմենոսը («Советы и рассказы», стр. 252):

288. Բուլղանդացիները Տրիագիցա էին անվանում Սոֆիան, Բուլղարիայի այժմյան մայրաքաղաքը:

289. Այժմ՝ Պլովդիվ (Բուլղարիայում):

290. Այս ամբողջ պատմությունը համարվում է կեղծիք, Վասիլ II-ի պարտությունը (986 թ. օգոստոսի 17) սքողելու փորձ:

291. Այս երկրաշարժի ժամանակ տեղի ունեցած ավերածությունների, այդ թվում և սբ. Սոֆիայի գմբեթի քանդման մասին, վկայում է և Լևոն Սարկավազը, որի ասելով Վասիլ II-ը այն վերականգնեց վեց տարի անց (Leo Diac., p. 176): Գիտության մեջ հալանվել են տարբեր կարծիքներ երկրաշարժի ժամանակի վերաբերյալ (986 թ. հոկտեմբերի 29, 989 թ., հետևաբար գմբեթի վերանորոգումը տեղի ունեցավ 995 թ., ըստ Պապադոպուլո-Կերամեսի՝ 994 թ. մայիսի 13-ին): Այդ մասին տե՛ս Καждан, Из истории, 2, стр. 117: Երկրաշարժն ավելի մանրամասն նկարագրում է Ասողիկը. «Շարժեցաւ (նլ՛՛=989 թ.) աշխարհն Յունաց ահաւոր դրդամաբ, մինչև կործանել բազում քաղաքաց և գիւղից և գաւառաց, ևս առաւել ի թրակացւոց և բիւղանդացւոց աշխարհին... և նոյն ինքն Սոփիայն, որ կաթողիկէն է՝ հերձանիւր պատառամաբ վերուստ ի վայր» (Ասողիկ, էջ 250): Պատմիչը տալիս է արժեքավոր այլ մանրամասնություններ ևս, հատկապես սբ. Սոֆիայի տաճարի վերակառուցման վերաբերյալ: «Վասն որոյ,— գրում է նա,— բազում ջան եղև արհեստաւոր ճարտարացն Յունաց առ ի վերստին նորոգել: Այլ անդ դիպեալ ճարտարապետին Հայոց Տրդատայ քարագործի՝ տայ զօրինակ շինուածոյն, իմաստուն հանճարով պատրաստեալ զկաղապարս կաղմածոյն և սկզբնաւորեալ զշինելն. որ և գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն» (Ասողիկ, էջ 251): Տրդատի մասին տե՛ս К. Л. Оганесян, Зодчий Трдат, Ереван, 1951: նաև՝ Ս. Գ. Իարխուղարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 35—38:

292. Կոնկրետացնում է, որպեսզի չչփոթվեն արևմուտքի թուրքերի (հունդարացիների) հետ:

293. Այսինքն՝ Բյուզանդական կայսրության:

294. Խոսրովի (Աղուղ-աղ-Դաուլայի) որդին էր, ըստ Յահյայի Սամամ-աղ-Դաուլան: նա Սկլերոսին, վերջինիս որդուն և եղբայրներին ազատ արձակեց հիշրայի 376 թ. Շաբան ամսին (6 դեկտ. 986—3 հունվար 987 թ.), նրանց հետ նաև ավելի քան 300 հոռոմների, որոնց, արաբների ուղեկցությամբ, հասցրեց մինչև ալ-Ջադիրա, որտեղից Սկլերոսն անցավ Եփրատն ու նույն տարվա փետրվարին հասավ Մելիտենե (Розен, Василий, стр. 21—22): Յահյան ցույց է տալիս, որ Վարդաս Սկլերոսին միացան իր հետ եկած արաբ օկայիտներ և նումեյրիտներ, ինչպես նաև հայեր, որ ապստամբը



օգնութիւնն հայցեց Դիարբաքրի քուրգ ամիրա Բադից, որից ստացավ ուժեղ զորք, Բադի եղբայր Աբու-Ալիի գլխաւորութեամբ (Розен, Василий, стр. 22):

Հէշյալ դեպքերին քաջատեղյակ է և Ասողիկը, որ 435 թ. (986) տակ գրում է. «Վարդ ելևալ ի Բաղդատայ ի Մելտենի մտանէ... և ամենայն զօրք աշխարհին առ հաւարակ ի հնազանդութիւն գային, և Բատն Ապահունեաց, և նփրկերտոյ ամիրայն, և վայրաբնակ Արապիկքն որ ընդ նմա» (Ասողիկ, էջ 246—247):

295. Վարդաս Սկլերոսն արաբների ձեռքից աղատվեց 986 թ. վերջին: Այդ առթիվ նա արաբների հետ փոխօգնութեան մի պայմանագիր կնքեց, որի պայմանները հայտնի են Իբն ալ-Աթիրին՝ Աբու Սուլայի միջոցով, որը, հավանաբար, ձեռքի տակ ունեւ պայմանագրի պաշտոնական բնագիրը: Հենց այս բնագիրն ամբողջութեամբ մեզ է հասցրել Քալբաշանդին: Սկլերոսը պարտավորվում էր ունենալ նույն բարեկամներին ու թշնամիներին, ինչ սուլթանը, չգործել և ոչ մի արշավանք սուլթանի տիրույթների վրա, ազատել բյուզանդական զնդաններում նետված մուսուլմաններին և վերջիններես կողմնակիցներին, հանձնել յոթ բերդ, կատարել իր բոլոր խոստումները, պայքարել բոլոր նըրանց դեմ, ովքեր կփորձեն հակառակվել լինեն նրանք հույներ, հայեր, թե ուրիշներ: Սուլթանը խոստանում էր Սկլերոսին և նրա մերձավորներին աղատ անցում տալ դեպի Բյուզանդիա, չկնքել որևէ համաձայնութիւն՝ Սկլերոսի հույն, հայ, վրացի և այլ թշնամիների հետ և առատաձեռն լինել Սկլերոսի կողմից վերագործվող բերդերի բնակիչների հանդեպ: Պայմանագիրը կնքվել է հիշրայի 476 թ. Շարան ամսին (986 թ. դեկտեմբերի 6—987 թ. հունվարի 3): Նույն պարտավորութիւններն ստանձնեցին նաև Սկլերոսի եղբայր Կոստանդինը և որդին Ռոմանոսը: Քալբաշանդին հիշում է և վերոհիշյալ յոթ բերդերի անունները: Նրանք գտնվում էին Դիարբաքրի ծայրագույն հյուսիսում, վերին Տիգրիսի և նրա վտակ Բատման-սուի, հայկական Միջագետքի շրջանում: Արևելքում Բատման-սուի ակունքների մոտ Հովիտն ու Սանասունայի (Սասունի) բերդը, արևմուտքում, վերին Տիգրիսի շրջանում էգիլը (Անգեղ), Անձիտը, Թելլ հումը և Խանին: Յոթերորդ բերդը կրում է կրկնակի, բայց աղավաղված անուն: Հովիտը գտնվում էր Տարոնի հարավում, Սանասունան Սասուն կալեն է Արզանա-սուի հյուսիսային ծայրում, այլ կերպ ասած Նահր Սարբաթ, էգիլը գտնվում է Արզանա-սուի վրա, Ամիդից ութ ժամ հեռավորութեան վրա, Արզանա-սուի և Զիրենե-սուի միացման տեղում: Թելլ հումը գտնվում է Արզանա-սուից հարավ-արևելք, Դիարբաքր տանող ճանապարհի վրա, Խանին գտնվում է հիշյալ տեղերից հյուսիս-արևելք, ժամանակակից Անբար շայի ակունքների մոտ, իբն ալ-Ազրաթի Նահր Հարուն: Ինչ վերաբերում է վերջին՝ յոթերորդ բերդին, ապա բնագրում դրված է Արխակահի բերդ, որ հայտնի է ալ-Հ.ն.դ.ր.ս. բերդ անվամբ: Կանարը գտնում է, որ Արխակահը, եթե ընթերցվի Արջակահ, կարող է Արժկեի տարրնփերվածքը լինել, բայց նույն ուսումնասիրողի կարծիքով, այդ դեպքում վայրը բավական հեռանում է նախորդներից: Եթե ալ-Հ. ն. դ. ր. ս տառադարձնել (ալ-)Հալուրաս, ապա դա կարող է լինել Տիգրիսի (Զեբենե-սուի) ակունքների վրա գտնվող հայտնի բնակատեղին (տե՛ս Canard, Deux documents arabes, p. 59—61: Պայմանագրի բնագրի թարգմանութիւնը նույն տեղում, էջ 65—68): Ալ-Հալուրասի վերաբերյալ կարելի է ավելացնել, որ կղեսուրները, ամրացված լեռնանցքները, հայկական աղբյուրներում կոչվում են Օլոր, ասոր. Հալուրաս, հունարեն՝ Իլլիրիսոս: Տե՛ս նաև АДОУ, Армения..., стр. 11: Դանիելյան, Վասիլ Բ-ի 1000 թ. արևելյան արշավանքը..., էջ 66—67:

296. Վարդաս Սկլերոսը Մելիտենե հասավ 987 թ. փետրվարին: Եթե հավատանք Ակիլիցեսի պատմածին, ապա ստացվում է, որ հենց այս ժամանակ Վարդաս Փոկասն

իրեն կայսր էր հռչակել, ինչ որ ճիշտ չէ: Փոկասն այդ ժամանակ դեռևս Վասիլ II-ի դեմ ապստամբություն չէր բարձրացրել: Ասողիկի և Յահյա Անտիոքացու տվյալներով, Վասիլ II-ը, իմանալով Վարդաս Սկլերոսի վերադարձի մասին, նրա դեմ ուղարկեց հենց Վարդաս Փոկասին. «Իսկ Վարդ. որ և Փոկաս,— գրում է հայ պատմիչը,— հրամանաւ Վասիլի գաւ ընդդէմ նորա (Սկլերոսի—Ն. Բ.) ի պատերազմ ամենայն դօրօքն Յունաց և Վրաց» (էջ 247): Յահյան ավելի հանգամանորեն է խոսում: Վասիլ կայսրը, գրում է նա, ստիպված եղաւ Հիջրայի 376 թ. Զու-լ-Հիջա մասին (3 ապրիլ-2 մայիս 987 թ.) վերադարձնել Վարդաս Փոկասին ղոմեստիկոսի աստիճանը և կարգադրել նրան շարժվել Սկլերոսի դեմ: Բայց երկու ապստամբների միջև գործարք է կնքվում, որից հետո Վարդաս Փոկասը նույն տարվա սեպտեմբերի 14-ին ապստամբություն բարձրացնելով, իրեն կայսր հռչակեց (Розен, Василий, стр. 22—23): Պսելլոսը գրում է, որ Փոկասը «իբերական» զորք (στρατευμα Ἰβηρικόν) հավաքելուց հետո ապստամբություն բարձրացրեց (Psellus, Chronographie. I. p. 7. նաև 10): Սա հաստատում է Ասողիկի տվյալներն այն մասին, որ Փոկասը «գօրօքն Յունաց և Վրաց» գնաց պատերազմի: Հավանաբար Տալոց զորքերի մասին է խոսքը:

297. Այս բերդը մի անգամ ևս է հիշված: Այստեղ այն տեղադրվում է Կապադովկիայում:

298. Յահյան ցույց է տալիս, որ երկու Վարդասները հանդիպում ունեցան երկու անգամ: Առաջին անգամ Զելխանում: Երկրորդ հանդիպման ժամանակ է, որ Փոկասը ձերբակալեց Սկլերոսին (Розен, Василий, стр. 23):

299. Բյուզանդական դեսպանությունը օգնության խնդրով Կիև ժամանեց 986 թ.: Ինչպես հայտնի է, Զմշկիկի և Սվլատոսլավի միջև 971 թ. կնքված հաշտության պայմանագրի մի կետի համաձայն ոուս իշխանը պարտավորվում էր օգնություն ուղարկել բյուզանդական կայսեր, եթե վերջինիս տերության վրա թշնամու հարձակում տեղի ունենա: Սկիիցեսը չի խոսում այդ մասին, բայց այլ աղբյուրներից հայտնի է, որ Վլադիմիրն օգնության դիմաց Վասիլի քրոջը կնություն պահանջեց: Այդ մասին վկայում է Աբու-Շոջան, XI դ. արաբ պատմիչը (Кезма, Оповдання арабського історика): Վասիլը համաձայնվեց իր քրոջը՝ Աննային, կնության տալ այն պայմանով, որ Վլադիմիրն ու նրա ժողովուրդը քրիստոնեություն ընդունեն Բյուզանդիայից և մկրտվեն: Վլադիմիրն համաձայնվեց այդ պայմանին: Ռուսիայում քրիստոնեությունը պետական կրոն հայտարարելու համար արդեն վաղուց հասունացել էին պայմանները և Վլադիմիրը կողմից քրիստոնեությունն ընդունելը, իհարկե, Վասիլ II-ի քրոջ հետ ամուսնանալու ցանկությունը չէր միայն: Վլադիմիրը Վասիլին ուղարկեց վարյազներից ու ռուսներից բաղկացած վեց հազարանոց զորք, որը Կոստանդնուպոլիս հասավ 988 թ. ապրիլից հետո: Ռուսական զորքերի Բյուզանդիա գալու մասին վկայում է և Ասողիկը. «զորս էր խընդրեալ թագաւորին Վասիլի ի թագաւորէն Ռուղաց, յորժամ ետ զքոյրն իւր կնութեան նմա, յորում ժամանակի և հաւատացին նորա ի Քրիստոս» (Ասողիկ, էջ 277): Այս ռուսները 1000 թ. մասնակցեցին Տալքի նվաճմանը:

Վասիլ II-ը օգնության համար դիմեց ոչ միայն ռուսներին: Արաբ պատմիչներ Աբու-լ-Մախասինից և ալ-Ալյնիից հայտնի է, որ 988 թ. սկզբում. այսինքն հենց նույն ժամանակ, կայսրը դիմեց նաև Եգիպտոսի ֆաթեմյանների ամիրապետ ալ-Ալիլին և նրա հետ բավական ծանր պայմաններով դաշինք կնքեց՝ Եանխելու համար եգիպտացիների նավատորմի դի հարձակումները, ինչպես և նրանց հալանակյան դաշինքը ապրստաբ Փոկասի հետ (Розен, Василий, стр. 202—205):



300. Հմմտ. Ասողիկ, էջ 248. «Ծովընկէց առնելով (Վասիլ II-ը) զգօրսն Տլփինասայ՝ ձերբակալ արարին և ՂՏլփինաս գլուխ գօրուն, զոր յանդիման արարին Վասիլ թագաւորին. և գատապարտեցաւ ի փայտ էլանել: Այս եղև ի նլէ (988) թուականին»:

301. Երբ սուլստամբը մայրաքաղաքի պարիսպներին մոտեցավ, Վասիլ II-ը ծովով Տրապիզոն ուղարկեց Տարոնացուն՝ Փոկասի թիկունքում զորք կազմակերպելու: Արժեքավոր տեղեկութիւններ է պահպանել Յահյա Անտիոքացին: Նրա ասելով Վարդաս Փոկասն իր որդի Նիկեփոր Մովիզին վրաց թագավոր Դավթի՝ «Տայք քաղաքի» տիրակալի մոտ ուղարկեց՝ Տարոնացու դեմ օգնութիւն ստանալու համար: Դավիթը ուղարկեց իր ծառաներից մեկին հազար ձիավորով: Նրա ետևից գնացին նաև «Բագարատի երկու պատրիկ որդիները՝ ալ-խալիդիատի տիրակալները» հազար ձիավորով, որոնք Տարոնացուն շարժ տվեցին (Розен, Василий, стр. 24): Տարոնացին հավանաբար Գրիգոր Տարոնացին է, որ հետագայում մասնակցեց բուլղարների դեմ մղվող պատերազմներին: Ալ-խալիդիատի տեղադրութիւնը Ռոզենը վիճելի է համարում և ենթադրաբար տեղագրում է Տարոնում (Розен, Василий, стр. 80): Ադոնցը նույնացնում է խալիդիատի հետ, բայց հավանական չէ, քանզի ըստ Յահյայի մի փոքր առաջ Վասիլը Վարդաս Սկլերոսին նշանակել էր Անձիտի և ալ-խալիդիատի կառավարիչ (Розен, Василий, стр. 1): խալիդիատ (խալտիքը) Անձիտից շատ հեռու է, այն վերջինիս մոտակայքում պետք է փնտրել: Ադոնցը գտնում է, որ Բագարատի պատրիկ որդիների անունները հիշում է Տրապիզոնի ուշ շրջանի մետրոպոլիտ Հովհաննես Լաղարոպոլոսը, անվանելով Բագարատ և Չորսվանել (Панадопуло-Керамевс. Сборник источников по истории Трапезундской империи, 1897, стр. 82): Չորսվանելին հիշում է Ասողիկը: Նրա ասելով Չորսվանելը Վարդաս Փոկասի մահից հետո էլ շարունակեց պայքարը. «Այլ դեռ ևս մնացեալ էր յապստամբացն, որ ընդ Փոկասուն Վարդայ՝ Չորսուանէլ մաժիստոռոսն եղբորորդի թոռնկալ արեղալի, որ բռնացեալ էր ի կողմանս Դերջանայ և Տարօնոյ»: Նա սպանվեց «ի դաշտին Բագառճոյ, ի Դերջան գաւառի, ի նլթ թուականին (990 թ.), Ասողիկ, էջ 251): Ռոզենը, սակայն՝ «Բագարատի պատրիկ որդիներին» նույնացնում է Տարոնի վերջին իշխան Աշոտի որդիներ Գրիգորի և Բագարատի հետ (Розен, Василий, стр. 80), ուշադրութիւն չդարձնելով, որ Յահյայի՝ Վարդաս Փոկասի և «Բագարատի որդիներին» դեմ կռվի գնացող Տարոնացին հենց Գրիգոր Տարոնացին է, որ արդեն ծառայութեան է մտել կայսեր մոտ: Նույն Յահյան ցույց է տալիս, որ Փոկասի ապստամբութիւնը ճնշելուց հետո, Վասիլը զորք ուղարկեց «Բագարատի երկու որդիների դեմ և սպանեց նրանցից ավագին» (Розен, Василий, стр. 27): Պարզ է ուրեմն, որ նա չէր կարող Տարոնի իշխանի որդին լինել, քանզի իշխան Աշոտի ավագ որդի Գրիգորը ավելի ուշ սպանվեց բուլղարների դեմ մղվող պատերազմում:

302. Յահյան գրում է, որ Փոկասն սպանվեց և նշում ճիշտ ժամանակը՝ Նիսան (ապրիլ) ամսի 13-ին (989): Розен, Василий, стр. 25:

303. Վարդաս Փոկասի ապստամբութեան վերաբերյալ տե՛ս նաև Ասողիկ, էջ 248—249. Մատթ. Ուոն., էջ 39: Պատմիչը նրան անվանում է Մօրավարդ: Եվ Արխտ. Լաստ., էջ 33—34:

304. Վարդաս Սկլերոսին Փոկասն արգելափակել էր այն բերդում, որտեղ էր նրա՝ Փոկասի կինը: Երբ վերջինս իմացավ ամուսնու սպանութեան մասին, Սկլերոսին ազատ արձակեց, որին միացավ Փոկասի որդի Նիկեփոր Մովիզը: Յահյայի ասելով հաշտութեան կողմ Սկլերոսին դիմեց ոչ թե Վասիլ II-ը, այլ նրա եղբայր Կոստանդինը (Розен, Василий, стр. 25, 210—211): Վերոհիշյալ բերդի անունը հիշում է Ասողիկը՝ Ժնուա («Վարդ, որ և Փոկաս՝ ստեալ երգմանն իւրոյ, յետ աւուրց եօթանց կալանա-

ւոր արարեալ զՍիկլաոոսն Վարդ՝ զինակիր պատրաստութեամբ հրամայէ տանել ի բերդն ժեռուաւ» (Ասողիկ, էջ 247): Հաջորդ էջում հայ պատմիչը ժեռուար քաղաք է անվանում: Պարզ չէ, ո՞ր քաղաքի մասին է խոսքը: Սկիլիցեան այն Տյուրոպիոս էր կոչել և տեղագրել Կապադովկիայում:

305. Յահյան ևս վկայում է, որ Սկլերոսն ստացավ կուրապաղատի տիտղոսը, բայց միաժամանակ չիշում, որ նա պաշտոններ էլ տվեց նրան, նրա եղբոր և մերձավորներին: Նա Սկլերոսին տվեց ալ-Ամ-նիա.ու.ն և Ռ.գ.ան. նահանգները՝ ողջ գլխահարկով ու հողահարկով, վերադարձրեց նրա վաղեմի կալվածները, ներում և մի հոյակապ կալված շնորհեց Փոկասի որդի Նիկեփոր Մովիզին (Розен, Василий, стр. 26): Պսելլոսը նշում է Վասիլի և Սկլերոսի միջև կնքված համաձայնության սլայմանները. Սկլերոսը դառնալու էր կայսրության երկրորդ մարզը, ապստամբության մասնակցած իր զինվորականները պետք է պահպանեին իրենց աստիճաններն ու պաշտոնները, որոնք ինքը Սկլերոսն էր նրանց շնորհել, նրանք չպետք է ղրկվեին իրենց կալվածներից, լինեն դրանք նախկինում տիրացած, կամ Սկլերոսից ստացած (Psellos, Chronographie, I, p. 16):

306. Պսելլոսն ու Ջոնարասը տալիս են հետաքրքիր մանրամասնություններ: Նրանց ասելով, երբ Սկլերոսը հանդիպեց Վասիլին վերջինիս վրանում, դեռ հագած ուներ կուրմիր կոշիկներ, որ կայսրերի իրավունքն էր (կայսերական մյուս նշանակները Սկլերոսը հանել էր): Կայսրը համաձայնվեց նրան ընդունել միայն սովորական քաղաքացու հանդերձներով: Սկլերոսը վրանի առջև հանեց կարմիր կոշիկները, որից հետո կայսրն ընդունեց նրան, խոսակցություն ունեցավ, նույն սեղանին ճաշեցին և նույն բաժակից գինի խմեցին: Կայսեր հարցին, ինչպե՞ս անել, որ իր դեմ ապստամբություններ չծագեն, Սկլերոսը պատասխանեց. վերացնել չափից մեծ իշխանությունները, զինվորականների ծայր աստիճան բարեկեցությունը, անօրեն գանձումներն ու հարկատվությունը: Սկլերոսի կուրացման մասին Պսելլոսը ոչինչ չգիտե (Psellos, Chronographie, I. p. 17: Zonar., IV, p. 116—117):

307. «Մնացած տոպարիսների» մեջ, անկասկած, մտնում էր նաև Տայքի կուրապաղատ Դավիթը, որ աջակցություն էր ցուցաբերել Վարդաս Փոկասին՝ վերջինիս ասպտամբության ժամանակ: Սկիլիցեսը ոչինչ չի ասում, թե ինչպես վարվեց կայսրը նրա նկատմամբ, Փոկասին հաղթելուց հետո: Այդ մասին խոսում է Յահյա Անտիոքացին. «Վասիլ կայսրը,—գրում է նա,—զայրացել էր վրաց թագավոր Դավթի, Տայքի տիրակալի դեմ, ինչպես նաև Բագարատի երկու որդիների՝ ալ-հալիգիյատի տիրակալների, այն բանի համար, որ նրանք օգնում էին Փոկասին, դրա համար նրանց դեմ զորք ուղարկեց Ջակրուս կոչվող մի պատրիկի գլխավորությամբ: Նա դնաց Բագարատի որդիների դեմ և սպանեց նրանցից ավազին, իոկ կրտսերին աքսորեց: Դավիթը, վրաց թագավորը, Վասիլ կայսրից ներողություն ու ողորմածություն աղերսեց՝ խոստանալով հնազանդություն ու հպատակություն, ասաց, որ իր տիրույթները՝ իր մահից հետո կմիացվեն [Վասիլի] պետության, քանզի ինքը զառամյալ ծերունի է և շունի ո՛չ որդի, ո՛չ այլ ժառանգներ...: Կայսեր դա դուր եկավ և նա [Դավթին] շնորհեց կուրապաղատի աստիճանը...» (Розен, Василий, стр. 27, Histoire de Yahya, p. 429): Հմմտ. Ասողիկ, էջ 275. «զի ոչ գոյր նորա որդի կամ եղբայր, որ ժառանգէր զաթոռ թագաւորութեան նորա»:

308. Թեսաղոնիկե քաղաքի սլահապան սրբին:

309. Տարոնի իշխան Աշոտի որդին, Բագարատի եղբայրը: Նախկինում միացել էր Վարդաս Սկլերոսի ապստամբության:



310. Ըստ Սկիլիցեսի, Վասիլը Կոստանդնուպոլսից եկավ Տայք: Ասողիկը գրում է, որ Դավիթ Կուրապաղատի մահվան լուրը Վասիլն ստացավ «ի Տարսոն Կիլիկեցոց» (էջ 275), որտեղից «փութանակի յառաջեաց գալ յաշխարհս մեր» (այսինքն՝ Տայք): Նրա երթուղու մասին մանրամասն տե՛ս է. Իանիելյան, Վասիլ 11-ի 1000 թ. արևելյան արշավանքի նպատակը և երթուղին: Դավիթ Կուրապաղատը մեռավ 1000 թ. մարտի 31-ին (տե՛ս *Toutanoff, Armenia and Georgia*, p. 618): Նրան անհաջող թունավորեց, ապա ստիպված խեղդամահ արեց Իլարիոնը, «եպիսկոպոսն Վրաց աշխարհին» (Մատթ. Ստն., էջ 37—38), ամենայն հավանականությամբ Բյուզանդիայի պատվերով: Դավթի մահը միայն կայսրության էր ձեռնտու, քանզի նա դրանով ժառանգում էր Տայքը: Ու մի նշանակություն չունի այն հանգամանքը, որ Իլարիոնին դրանից հետո Վասիլը որպես մարդասպանի ջրահեղձ արեց: Նա պարզապես ոճրագործության հետքերն ուղեց թաքցնել: Բացի Իլարիոնից, Դավթի սպանության գործում մասնակցություն ունեցան և այլ «աղատներ»՝ Դավթի «շար իշխանները», որոնք հազիվ թե այդ քայլով ուզում էին վրեժ առնել Դավթից՝ Տայքը Բյուզանդիային կտակելու համար, չէ՞ որ դրանով նրանք արագացնում էին Տայքի իշխանության վերացումը: Դավթի եգերական վախճանի մասին անտեղյակ է Ասողիկը, թեև դեպքերին ժամանակակից է: Նա գրում է, որ Դավիթը «լցեալ աւուրքք, ծերացեալ ժամանակօք՝ վախճանեցաւ յաւուր մեծի փրկական Զատկին, ի նսթ՝ (1000) թուականին»: Նա Տայքի կտակումը կայսեր բացատրում է դրանով, որ «ոչ գոյր նորա որդի կամ եղբայր, որ ժառանգէր զաթոռ թագաւորութեանն նորայանձն արարեալ էր զազատագունդ և զաշխարհ իւր թագաւորին Յունաց Վասիլ» (Ասողիկ, էջ 275): Արիստակես Լաստիվերցին գիտե նրա սպանության և այդ գործում դեր խաղացած բյուզանդական կայսեր մասին. «Նոքա,— գրում է նա, նկատի ունենալով Տայքի իշխանավորներին,— աւուր մեծի հինգաբաթին դեղ մահու խառնեալ ի խորհուրդ պատարագին արբուցին նմա, և հեղձամահ արարեալ զերանելի անձն՝ բարձին ի կենացս» (էջ 23): Եվ պատճառն այն էր, որ այդ իշխանավորները «ձանձրացեալ կենօք նորա» (այսինքն նրա երկարակեցությունից զզվել էին, քանզի տեսնում էին, որ Դավիթը ժամ առաջ չի մեռնում): 4. Յուզբաշյանը Արիստակես Լաստիվերցու այս նախադասությունը թարգմանելով «Ибо были недовольны его действиями» (*Аристакэс*, стр. 56) դուռ է բացում սխալ մեկնաբանության: Դավիթ Կուրապաղատի գործունեությունը (действія) այն ժամանակ վերաբերում էր Տայքի կտակմանը կայսրությանը: Յուզբաշյանի թարգմանությունից ստացվում է, որ նրան սպանողները դժգոհ էին դրանից, հետևաբար կողմնակից էին Տայքի ինքնուրույնության պահպանմանը, ինչ որ հաջորդ շարադրանքից չի հաստատվում: Այդ իշխանավորները շտապում էին ձերբազատվել նրանից, քանզի դրա համար կայսրից ակնկալիքներ ունեին. «վասն առաջիկայ խոստմանցն՝ որ ի թագաւորէն ակն ունէին» (Արիստ. Լաստ., էջ 23): Եվ նրանք ստացան իրենց «գործի» վարձը, Դավթի մահից հետո նրա ազատագնդից մի շարք մարդիկ «առատատուր պարգևօք մեծարեալ ի նմանէ (ի Վասիլ) իւրաքանչիւր ոք ըստ արժանեաց յիշխանութին, ի պատիւ, ի դահճ ժամանեալ» (նույն տեղում): Բայց միաժամանակ պետք է ընդգծել, որ Տայքի նվաճումն, ամենայն հավանականությամբ, խաղաղ շիրականացով: Վասիլն եկավ Տայք իր «ժառանգության» տիրանալու «ծանր զինու» (Արիստ. Լաստ., էջ 23), նա Տայքի բոլոր բերդերն ու ամրոցները «նուաճեաց ընդ ձեռամբ իւրով» (Ասողիկ, էջ 278), երբ կայսրը գտնվում էր Հավճիչում, նրա դիմաց եկան բանակեցին «իշխանք և ազատք կիւրապաղատին Դաւթի» (նույն տեղում, էջ 276), Տայքի ազատագնդի ու Վասիլի գորքերի միջև զինյալ ընդհարում տեղի ունեցավ Աղորի գավառի Հավճիչ վայրում, որի պատճառը Լաստիվերցին չի նշում. «Եւ ոչ գիտեմ յորպիսի

պատճառանաց, — գրում է նա, — ընդ միմեանս անկեալ արևմտական ղօրն, որ կոչի Ղուզք, և ազատագունդն [Տայոց] և ի նմին տեղոջ մեռան յազատացն երեսուն այր ի յոթ պատուաւորացն» (Արխտ. Լաստ., էջ 23): Ասողիկը այդ դեպքերին միամիտ բացատրութիւն է տալիս, թե իբր ամբողջ կռիվն սկսվեց մի խուրձ խոտի պատճառով՝ մի ուս գինվորի և մի վրացու միջև առաջացած վեճից, բայց նա հիշատակում է, թե այդ ընդհարման ժամանակ ովքեր զոհվեցին. «մեռաւ մեծ իշխանն, որում Պատրիարքն կոչիր, և երկու որդիքն Ոչոպընտրեայ Գաբրիէլ և Յովհաննէս, և Չորտուանէլ թոռն Ապուհարսայ և այլք բազումք» (էջ 277): Անհավանական չէ, որ Վասիլը հենց սկզբից ջանաց գլխատել Տայոց ազատագունդը, մի մասին ֆիզիկապէս ոչնչացնելով, մյուսին՝ երկրից հեռացնելով: Սկիւիցեսն, օրինակ, գրում է, որ կայսրը Տայքից գնաց Փյունիկե, իր հետ տանելով Տայքի տոհմիկ ազնվականութեան զխավորներին, մի բան, որ հաստատվում է և Ասողիկի տվյալներով. «Իսկ թագաւորն Վասիլ շու արարեալ գնաց ի քաղաքն Ուխթեաց (այսինքն՝ Օլթի, Տայքի կենտրոնը—Ղ. Բ.) և զամենայն բերդս և զամրոցս Տայոց նուաճեաց ընդ ձեռամբ իւրով, զհաւատարիմս կարգեալ ի նոսա (հավանաբար՝ Դավիթ կուրապաղատին սպանողներին և իրենց այդ արարքի համար կայսրից պարգևներ ու պաշտոններ ստացողներին), և զմնացեալ ազատսն Տայոց առեալ տարաւ ընդ ինքեան՝ բնակեցուցանել յաշխարհն Յունաց» (Ասողիկ, էջ 278):

Պահպանվել է Անտիոքի ղուքս Նիկեփոր Ուրանոսի մի նամակը՝ ուղղված անթիպատ պատրիկ Լեոնին, որտեղ խոսվում է Տայքի նվաճման մասին: «Գնում ենք Անտիոք, — գրում է նա, — երբ համայն Իբերիան, այն, որ գտնվում էր Դավիթ կուրապաղատի իշխանութեան ներքո, աստժո օգնութեամբ ենթարկվեց մեր տիրոջ ու կայսեր» ( *ἡ ἐπι τῆν Ἀντιόχειαν ἱερέθια, τῆς Ἰβερίας (sic!) παντός, ὅσων ὑπὸ τῆν τοῦ κουροπαλάτου Δαβὶδ ἀρχῆν εἰχετο, ὑπὸ τῶν ἡμετέρων σὺν Θεῶ θεσπόμενῃ καὶ βασιλείᾳ γεγενημένου. Sb'u Darrouzes, Epistoliers, p. 226.*

Այս փաստը վկայում է այն մասին, որ Նիկեփոր Ուրանոսը մասնակցել է Տայքի նվաճմանը: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Նիկեփոր Ուրանոսը նշանակվել էր Անտիոքի կառավարիչ 999 թ. վերջին (նույն տեղում, էջ 46), ապա նշանակում է, որ նա ուղևորվել է Վասիլ II-ին դեպի Տայք նրա արշավանքին (նույն տեղում): Տայքի գրավումից հետո նա վերադարձավ Անտիոք: Ինչպես հայտնի է, Վասիլը Դավիթ կուրապաղատի մահվան յուրն ստացավ Կիլիկիայի Տարսոն քաղաքում, այսինքն Նիկեփոր Ուրանոսի վարչութեան ենթակա շրջանում:

311. Գիորգին ամենևին էլ Դավիթ կուրապաղատի եղբայրը չէր: Մենք գիտենք, որ «ոչ գուր նորա... եղբայր» (Ասողիկ):

312. «Ներքնագույն Իբերիան» վրացական պետությունն է: Պատմիչը ավելացնում է «Ներքնագույն» բառը, որպեսզի ընթերցողը այն շփոթի կայսրության ձեռքն անցած Տայքի հետ, որ բյուզանդական աղբյուրներում նույնպես Իբերիա է կոչվում: Սկիւիցեսը մի քիչ հետո Տայքը հիշատակում է թիւ (այսինքն՝ Վասիլի) Իբերիա» ( *γὰρ αὐτὸν Ἰβερία* ) ձևով: Ահա խոսելով 1000—1001 թթ. դեպքերի մասին, Սկիւիցեսը ցույց է տալիս, որ ներքնագույն Իբերիայի արքան Գեորգիոսն էր, որ սխալ է: Բյուզանդական պատմիչը հավանաբար XI դ. 10-ական թվականների կեսերին սկիւզք առած դեպքերի հետ է շփոթում: Հարցն այն է, որ Դավիթ կուրապաղատի մահվան ժամանակ վրաց թագավոր էին Բագրատ III-ը (978—1014) և նրա հայր Գուրգենը: Գեորգիոսը, որ Բագրատի որդին էր (ափսաղների և վրաց թագավոր Գիորգի I-ը) թագավորեց 1014-ից 1027 թթ.: Կարելի է ենթադրել նաև, որ Սկիւիցեսը շփոթել է թագավորակից Գուրգենին Բագրատ թագավորի որդու՝ Գեորգիոսի հետ: Ասողիկը ցույց է տալիս, որ Վասիլը Հավճիում



## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

եղած ժամանակ նրան ընդառաջ գնացին «Բագարատ Թագաւորն Ափսազաց, և հայր նորա Գուրգէն Թագաւոր Վրաց» (Ասողիկ, էջ 276):

313. Յահյա Անտիոքացուց հայտնի է, որ վրաց Թագավոր Գիորգին իր որդի Բագրատին պատանդ տվեց Վասիլ II-ին 1023 թ. (Розен, Василий, стр. 66), հետևաբար Սկիլիցեսի տեղեկութիւնները վերաբերում են ոչ թե Դավիթ կուրապաղատի մահվան կամ հաջորդ տարվա դեպքերին, այլ 1022 թ.: Այդ դեպքերի մասին տե՛ս Սկիլիցեսի աշխատութեան 94—95-րդ էջերում, որտեղ կրկին անգամ խոսք է լինում Վասիլ II-ի և Գիորգի I-ի միջև կնքված հաշտութեան և վերջինիս որդու՝ Պանգրատիոսի Կոստանդնուպոլիս պատանդ գնալու մասին: Յահյայի ասելով, Գիորգիի որդի Բագրատը կնքված համաձայնութեամբ պարտավոր էր Կոստանդնուպոլսում պատանդ մնալ երկու տարի, որից հետո կայսրը նրան պետք է վերադարձներ (Розен, Василий, стр. 65—66):

314. Հմմտ. ծանոթ. 310:

315. Հայկական աղբյուրներում՝ «իշխանաց իշխան» Բակուրան (Ասողիկ, էջ 269): Նա հետագայում աչքի ընկած Գրիգոր Բակուրյանի հայրն էր: Սկիլիցեսը Պակուրիանին, Տեղատին (Թեղատ) և Տերսին եղբայրներ է համարում, բայց հարցական է: Ավելի մանրամասն տե՛ս *Каждан*, Армяне, стр. 58 և հտ.: Բակուրյանի ազգային պատկանելիութեան մասին՝ *Март*, Аркаун, стр. 24: *В. Арутюнова*, Типик Григория Пакуриана, стр. 11 և հտ.: Տերսին հիշում է և Դավիթ որդի Սմբատի վրացական ժամանակագրութիւնը, տալով նրա հոր անունը՝ Ջոշիկ:

316. Յահյա Անտիոքացուց հայտնի է, որ 995 թ. Անտիոքի դուքս նշանակված Դամիանոսը սլատկանում է Դալասսենոսների ընտանիքին: Նա ըստ Ադոնցի, այդ ընտանիքի նախահայրն էր՝ (*Adontz, Les Dalassènes, p. 163*): Դամիանոսը 998 թ. հուլիսի 19-ին Ապամեայի մոտ ճակատամարտ տվեց Դամասկոսի ամիրա Ջայիս իրն Շամշամին և սպանվեց: Նրա երկու որդիները գերի տարվեցին Կահիրե, որտեղ մնացին տասը տարի (Розен, Василий, стр. 39). Հստ Ասողիկի, գերի տարվածների մեջ էր նաև «Չորտուանէլ պատրիկն՝ եղբորորդին Թոռնէյայ արեղայի» (Ասողիկ, էջ 265): Հայ պատմիչը Դամիանոսին հիշում է Դալասանոս անվամբ, ճակատամարտը թվագրում է հայոց Ննէ (998) թվականով, ցույց տալիս, որ Դալասանոսի դեմ կռվի էր եկել «նոյն եգիպտացուց ամիրայն որդի Ազազին» և որ այդ ճակատամարտում «մեռաւ մաժխատոսն Դալասանոս եղբարբն և որդուվն» (նույն տեղում, էջ 264—265): Դամիանոս Դալասենոսի որդու սպանութեան մասին տեղեկութիւնը, հավանաբար, սխալ է: Բյուզանդական աղբյուրներից հայտնի է, որ նրա որդիներ Կոստանդինը, Թեոփիլակտոսը և Ռոմանոսը 1038—1039 թթ. դեռևս կենդանի էին:

Դալասենոսների ընտանիքը Ն. Ադոնցը հայկական է համարում, ազգանունը ծագում է բյուզանդական աղբյուրներում *Δαλασσα* (Դալասսա) կոչվող տեղանունից, որը նույնանում է Եփրատի ափին գտնվող Տալաս կամ Թալասայի հետ և սկզբնական շրջանում կոչվում էր Մուտալասկա-Մուտալասսա, որից Տալասսա կամ Տալաս: XI դ. վայրը հիշվում է նաև որպես Մուտաոասուն (տե՛ս Մատթ. Ուտհ., էջ 206): Ադոնցն այդ առթիվ բերում է 1018 թ. արտագրված մի հայերեն ավետարանի հիշատակարանը, որտեղ ի միջի այլոց գրված է. «Գրեցաւ սուրբ աւետարանս ի գաւառի Կղատոյ, ի վանս Տալաշայ...» (*Adontz, Les Dalassènes, p. 173—174*: Հիշատակարանն ամբողջութեամբ՝ Ե. Լալայան, Ցուցակ հայերեն ձեռագրաց վասպուրականի, պրակ Ա, Թիֆլիս, 1915, սյունակ 76), ցույց տալով, որ Կղատոյ-Կլավդիայի շրջանի տեղադրութիւնը հայտնի է (Անձիտի դիմաց, Մելիտենեից արևելք), հետևաբար Տալաշն էլ նրա մեջ էր (նույն տեղում, էջ 173—174): Դալասենոսների ընտանիքի հայտնի մյուս անդամների մասին

տե՛ս Ադոնցի նույն հոդվածում, էջ 163—177: Տե՛ս նաև Charanis, The Armenians, p. 45 և հտ., 'Каждан, Армяне, стр. 92—93:

317. Բյուզանդիայում դինատ (հզոր) էին կոչվում խոշոր ֆեոդալ-կալվածատերերը:

318. Միսինիոս II-ը աթոռակալել է 996 թ. Զատկից: Ճիշտ ժամանակը նշում է Յահյա Անտիոքացին (Grumel, Chronologie patriarcale, p. 70):

319. Սերգիոս II (1001—1019):

320. Գրիգոր Տարոնացին, Տարոնի վերջին իշխան Աշոտի որդին և Բագարատի եղբայրը:

321. Գրիգոր Տարոնացու սպանության և նրա որդու Աշոտի գերման մասին տե՛ս Ասողիկի մոտ. «որոց (բուլղարաց) ընդդէմ ելեալ որդին Գրիգորոյ պատանեակն Աշոտ, զոր ձերբակալ առնէին: Եւ ապա հօրն զկեանս ի վերայ եղեալ պատերազմաւ, մինչև ի նմին մեռաւ ամենայն զօրօքն» (էջ 261): Այս մարտում դերի ընկած նաև Անձիտի իշխան Հաբելի որդի Սահակը, որին բյուզանդական աղբյուրները չեն հիշատակում:

322. Բաղդադից:

323. Միքայել Դեկուզուց հայտնի է, որ Սամուիլի դստեր անունը Միրոսլավա էր (տե՛ս Prokič, Die Zusätze, S. 29): Աշոտի և Սամուիլի դստեր սիրավեպի մասին մանրամասն տե՛ս Adontz, Samuel, p. 395:

324. Այժմ Դուրոս: Քաղաք ժամանակակից Ալբանիայում. Ադրիատիկ ծովի ափին, հին հունական էպիդամնոսը: Ինչպես կարելի է եզրակացնել Կիտրոսի եպիսկոպոս Հովհաննեսի՝ Դյուրախիոնի արքեպիսկոպոս Կոստանդին տված պատասխանից, քաղաքում XII դարի վերջում եղել է հայկական գաղութ, որը իշխանություններին է դիմել՝ եկեղեցի կառուցելու թույլտվություն ստանալու համար: Քանի որ այդ հայերը համարվում են «այլադավան» (ἑτεροδοτες), հավանաբար հայադավան են եղել (Ῥαλλη καὶ Ποτλη, Συναγμα, τομ. Ε', σελ. 415):

325. Այսինքն՝ Հωστη πατρια: Այդ տիտղոսի մասին մանրամասն տե՛ս Guiland, La patricienne à ceinture, pp. 269—275:

Այդ տիտղոսը կրող առաջին հայտնի տիկինը Թեոփիլոս կալսեր զոքանչն էր, հայազգի Թեոդորա կայսրուհու մայրը: Չոստե պատրիկիան (գոտավորյալ պատրիկուհին) միակ տիկինն էր, որ պատրիկուհի էր իր բոլոր իրավունքներով: Տե՛ս նաև Burç, IAS, p. 33: Oikonomides, Les lists, p. 293:

326. Այս խրիսելիոսի որդիներից մեկը հավանաբար հետագայում Վասպուրականի կատապան դարձած Նիկոլայոս խրիսելիոս Բուլզարն է, որին Սկիլիցեսն հիշատակում է Բերկրիի դեպքերի առնչությամբ:

327. Աստիճանի մասին տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 212—213:

328. Հայոց ՆՄՁ (1007) թ. «ի գաւառին Մակեդոնոյ ի քաղաքին որ կոչի Անդոնապոլիս» գրված հայերեն մի Ավետարանի հիշատակարաններից մեկում գրված է. «Եւ ես Յովհաննէս՝ Պոստոսպաթար Թագաւորի և Պոռքսիմոսս Դուկիս Խորթակնիս ճորտս որ գրել ետու զսուրբ աւետարանս...» (տե՛ս Բարսեղ Սարգիսյան. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Ա, Վենետիկ, 1914, սյունակ 517: նաև Armenian miniature paintings, p. 28): Այս Թոթորականին (Թեոդորականին) Ադոնցը նույնացնում է Սկիլիցեսի հիշատակած պատրիկ Թեոդորականի հետ: Նա հայկական ծագում ուներ և այդ բանը հաստատվում է Սկիլիցեսի մի այլ տվյալից, Թեոդորականների ընտանիքին պատկանող զորավար Վասիլ Թեոդորականի մասին գրածից (տե՛ս էջ 130), ինչպես և մականվան հայերեն-ական



ածանցից (Թեոդորական, հմմտ. Կամսարական և այլն. Adontz, La famille de Theodorakan, p. 160. նաև Charanis, The Armenians, p. 45): Սկիլիցեսը հիշատակում է Թեոդորականների ընտանիքին պատկանող այլ գործիչների ևս, Սամոսի գորավար Գեորգ Թեոդորականին, պատրիկ և մագիստրոս Վասիլ Թեոդորականին, որոնց Ագոնցը համարում է առաջին Թեոդորականի որդիները (նույն տեղում, էջ 158): Հայտնի է և Կոստանդին Թեոդորականը, որին Ադոնցը համարում է մագիստրոս Վասիլ Թեոդորականի որդին: XI դ. հայտնի Թեոդորականների մասին տե՛ս Καждан, Армяне, стр. 26—28:

329. Տե՛ս վերը, ծանոթ. 209:

330. Սկիլիցեսի համաձայն Վասիլը Բերիա քաղաքը (իմա՝ Βεροη, շփոթելի Մակեդոնիայի Բերիայի հետ, Ֆիլիպուպոլսից Անքիալոս և Ադրիանուպոլսից Դանուբի Լիկոպոլիսը տանող ճանապարհի վրա, Շիպկայի մոտ, այժմ՝ Ստարա Զագորա) գրավեց 1000 թ., այսինքն Գրիգոր Տարոնացու սպանությունից հետո: Ասողիկը սակայն ցույց է տալիս, որ կայսրը Նն (991) թվականին «երթեալ պաշարէ զքաղաքն Վէոայ և առնու զնա, և զմաժիստոսն զԳրիգոր զորդի իշխանին Տարոնոյ զօրօքն թողու անդէն ընդդէմ Բուլղարին» (էջ 260): Ասողիկը գուցե Մակեդոնիայի Բերիան (Վերիան) նուրբ կատի ունի:

331. Անթիպատոսների մասին տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 215: Նրանք համապատասխանում են հռոմեական շրջանի պրոկոնսուլներին: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում անթիպատոսները նահանգների ընդհանուր կառավարիչներն էին: Լինելով բարձրաստիճան պաշտոնյաներ, նրանք կրում էին պատրիկի տիտղոսը և հաճախ հիշվում անթիպատ պատրիկ ձևով, որից առաջինն իրենց կրած ֆունկցիան է բովանդակում, իսկ երկրորդը՝ նրանց ազնվականական տիտղոսը: Մանրամասն տե՛ս Gulland, Proconsul, p. 5—41:

332. Հունաստանի Կոզանի գավառում: Սամուիլի դեմ մղվող պատերազմների ժամանակ ստեղծվեց հատուկ Սերվիա բանակաթեմ:

333. Վոլերոսը ոմանց համաձայն գտնվում էր Թրակիայում, ուրիշները Մակեդոնիայում են տեղագրում:

334. Կամ Վոդենա: Միջնադարում այդպես էր կոչվում Մակեդոնիայի Եդեսսա քաղաքը:

335. Նումերիտներն ու ատաֆիտները արաբական ցեղեր են: Նումերիտները՝ «նումեյրի որդիներ», իսկ ատաֆիտները, հավանաբար, Բենի-Կիլարն է (տե՛ս Розен, Василий, стр. 191, ծանոթ. 2):

336. Դանուբի աջ ափին: 1002 թ. այստեղ հաստատվեց բուլղարական պատրիարքարանը, որտեղից տեղափոխվեց Մոզլեն, ապա Օխրիգա:

337. Սկիլիցեսի Vindob. Hist. gr. 74 ձեռագրում կա Միքայել Դեուցու ընդմիջարկությունը, որի ասելով Վարդար գետն իր անունը ստացել է Վարդաս Սկլերոսից, քանզի նա գետի հունը փոխել է: Ժողովրդական ստուգաբանություն պետք է համարել:

338. Սոֆիայի մոտ, այժմ էլ այդպես է կոչվում:

339. Վաղ Բյուզանդիայում գոյություն ունեցող, այսպես կոչված, էպիբոլեի (επιβολη) ինստիտուտը, որի էությունը նրանումն էր, որ պետությունը ստիպում էր գյուղացիներին անմարդաբնակ դարձած իրենց հարևան հողերը վերցնել և դրանց համար հարկ վճարել: էպիբոլեին, ըստ Գ. Օստրոգորսկու, VII—VIII դարերում փոխարինելու եկավ ալիլենգիոնը (αλληλεγγυον), որի համաձայն պետությունը պարտադիր կարգով գյուղացիներից հարկ էր գանձում հարևանների ամայացած հողերի համար, իրավունք տալով

մշակել դրանք (*Ostrogorsky, Das Steuersystem, S. 235*); Ա. Պ. Կաժգանը, ի տարրերու թիւն Օստրոգորսկուց, գտնում է, որ Բյուզանդիայում VII—IX դդ. գոյութիւն չունէր հարկային կոլեկտիվ պատասխանատւութեան ինստիտուտ, որ արիլիենգիոնը հանդես եկավ միայն X դարում, Ռոմանոս I Լակապենոսի ժամանակ (*Καρχαδαν, К вопросу об особенностях феодальной собственности, стр. 63—64. Ավելի մանրամասն տե՛ս Осинова, Аллиленгий в Византии, стр. 28—38*):

340. Խոսքը Երուսաղեմի Հարութեան տաճարի մասին է, որը 1009 թ. ավերակ դարձրեց ոչ թե Ազիզը, ինչպես գրում է Սկիլիցեսը, այլ նրա որդի ար-Հաբիմը (996—1020); Ալ-Ազիզը (976—996) և ար-Հաբիմը պատկանում էին ֆաթեմյանների հարստութեան: Ալ-Ազիզի օրոք ֆաթեմյանների խալիֆայութիւնը մուսուլմանական ամենազորեղ իշխանութիւնն էր Արևելքում: Այս դեպքը Սկիլիցեսը թվագրում է 1010 թ., արաբ հեղինակները՝ 1008 կամ 1009 թ.: Մանրամասն տե՛ս *Canard, La destruction de l'église, p. 16—43*):

341. Բնագրում *Κλειθρον*, որ բանալի է նշանակում: Սլավոնական աղբյուրներում վայրը Կլյուշ է կոչվում:

342. Ճակատամարտը տեղի ունեցավ 1014 թ. հուլիսի 29-ին: Բելասիցա վայրի տեղագրութիւնը վիճելի է: Ճակատամարտի վերաբերյալ կա անտուկ ուսումնասիրութիւն. (*Иванов, Беласицка битка, стр. 1—15*):

343. Կեկավմենոսի ասելով՝ 14 հազար հոգի („Советы и рассказы“, стр. 152):

344. Ժամանակակից Մելնիկը: Ավելի մանրամասն տե՛ս *Dujčev, Melnik, 28—41*:

345. Մոզլեն՝ քաղաք Մակեդոնիայում:

346. Բառացի նշանակում է նախագահակից: Կավխանը գերագույն թագավորական իշխանութեան տեղակալն էր, որին էր վստահված բուլղարական բանակի հրամանատարութիւնը (տե՛ս *Гюзелев, Функциите и ролята на кавхана, стр. 33—57*):

347. Սկիլիցեսի մոտ Վասպուրականը հանդես է դալիս *Βασπραχανία* և *Ἀσπραχανία* ձևով: Այն կոչվում է նաև Վերին Մարաստան (*Ἄνω Μέρη*) և պարզապես Մարաստան: Վասպուրականը բյուզանդական աղբյուրներում Ասպրականիա և Ասպուրական կոչվել է շատ վաղ: Դեռևս Կոմսեֆիսի հրատարակած „*Historia Monothelitarum*“-ի մեջ 695 թ. տակ հիշվում է *Ἀσπουραχάν*-ը (հմմտ. և *Βαυρβիլյան, Narratio de rebus Armeniae, էջ 467*): Վրացական աղբյուրներում (Սմբատի ժամանակագրութեան մեջ) Ասպորանց (ավելի մանրամասն տե՛ս *Март, Аспургяны*): Մոզլենում գերված բուլղար ռազմիկները Վասպուրական ուղարկվեցին հաջորդ՝ 1016 թ.: Այդ տարին Վասպուրականի թագավոր Սենեքերիմն իր որդի Դավթին Բյուզանդիա էր ուղարկել կայսրութեանից սելջուկ թուրքերի դեմ օգնութիւն խնդրելու: Վասիլ կայսրն արդ օգնութիւնը տվեց ի դեմս Մոզլենում գերված բուլղարների, որոնք, սակայն, Վասպուրականում տրոյական ձիու դեր խաղացին, նախասլատրաստեցին Սենեքերիմի թագավորութեան կազմալուծումն ու կայսրութեան կողմից նվաճումը: Բուլղարական սորքի Հայաստան գալու մասին վկայութիւն ունի նաև Լաստիվերցին: Վասիլ կայսրը լողորսն աշխարհին [բուլղարաց],—գրում է նա,— խաբանօք ի մի վայր ժողովէ, որպէս թէ պարգև տալ նոցա, և գրով զհամար նոցա կարեալ՝ առաքէ զնոսա յարևելս անդառնալի եկիք. որք եկեալ դաշխարհս յաւեր դարձուցին» (էջ 24—25): Արիստակես Լաստիվերցու այս տվյալը նյութ դարձավ բյուզանդակտ Լիտավրինի մի ուսումնասիրութեան համար (տե՛ս *Литаврин, Армянский автор XI столетия, стр. 27—31*), Հարցի մասին ավելի մանրամասն տե՛ս *Бартикаян, О болгарском войске*:

348. Վերևում (տե՛ս ծանոթ. 346) նա հիշել էր Դոմետիանոս Կավխանին: Այստեղ



Կավխանը հատուկ անուն է դարձել և նրա կրողը համարվում է Գոմետիանոսի եղբայրը:

349. Խոսքը Գիոկլեայի իշխան Վլադիմիրի մասին է (998-ից առաջ մինչև 1016 թ. մայիսի 22-ը): Ամուսնացել էր Սամուիլի դուստր Կոսսարայի հետ: Պահպանվել է Վլադիմիրին ներբողող մի էպիկական պոեմ. *Radojicel*, Un poème épique, p. 528—535:

350. Ծիշտը՝ Բոյանա, Սոֆիայի մոտ գտնվող բերդ, այժմ՝ քաղաքի արվարձանը Վիտոշա լեռան ստորոտում:

351. Ինչպես գիտենք, Վլադիմիրը կնության էր առել Վասիլ II-ի քրոջը՝ Աննային (տե՛ս և ծանոթ. 299):

351 ա. Մ. Վ. Հեյնկոն կարծում էր, որ Բյուզանդիան տվյալ դեպքում ղանկանում էր վերջնականապես վերացնել խազարների խաբանությունը Ղրիմում, որ Գեորգիոս Յուլեսը խազարների իշխան էր: Մ. Ի. Արտամոնովը, որն իր տրամադրության տակ ուներ նաև հիշյալ Յուլեսի արձձե մի կնիքը, որտեղ նա հիշվում է որպես կայսերական պրոտոսպար և ներսոնի զորավար, գրում է, որ Յուլեսի դեպքը կապ չունի խազարական պետության հետ, որ խոսքը բյուզանդական կառավարիչ-զորավարի ապստամբության մասին է կայսրության դեմ: Այժմ հայտնի են Յուլեսի մի քանի կնիքներ: Մանրամասն տե՛ս *Соклоба*, Печати Георгия Цулы, стр. 68—74:

352. „Συναχθραία ο τῆς ἄνω Μηθίας ἀρχών, ἦν Ἀσπραχανίαν ὀνομαζοῦσι σήμερον: Եվ մի քիչ հետո. շնրան (Գեորգիոս Մանիակեսին) նշանակում վերին Մարաստանի՝ այն է Վասպուրականի կառավարիչ» (τοῦτον ἀρχεῖν ἐχπέλασε τῆς ἄνω Μηθίας τῆς καὶ Βιασπραχανίας, Կասկած չկա, որ վերին Մարաստանի տակ ենթադրվում է ողջ Վասպուրականը: Կ. Յուզբաշյանը (*L'administration*, p. 149) նույն Սկիլիցեսի մոտ հանդիպելով նաև *χατῶ* Μηθία (Ստորին Մարաստան), եկել է այն եղրակայացության, որ բյուզանդական Վասպուրական պրովինցիան բաժանված էր երկուսի՝ վերին և Ստորին Մարաստանների, ընդ որում վերին Մարաստանը Սենեբերիմ Արծրունու տիրույթն էր, իսկ Ստորին Վասպուրականը, հետևելով Հոնիգմանի անցյալում արտահայտած մի ենթադրության, տեղադրում է Անձևացիքում և Մանաղկերտում: Յուզբաշյանը Վասպուրականի կատապանների ցուցակում (նույն տեղում, էջ 182) հիշում է *χατῶ* Μηθία-ի կառավարիչ Մանիակեսին, որն այս դեպքում ոչ մի առնչություն չունի Վասպուրականի հետ: Նման տեղադրությունը հակասում է տրամաբանության: Պատմական Մարաստանի տեղը հանրահայտ է: Արդ, եթե վերին (օճ) Մարաստանը Վասպուրականն է, ապա «վերին» հասկացությունը ենթադրում է «հյուսիս», քանզի Վասպուրականը Մարաստանից հյուսիս է գտնվում: Եթե դա աղպես է, ապա ինչպե՞ս կարող է «Ստորին» Մարաստանը գտնվել վերին Մարաստանից հյուսիս, չէ՞ որ Մանաղկերտը (Ապահունիքը) Վասպուրականից հյուսիս է գտնվում:

Ստորին Մարաստանը Վասպուրականի հետ ոչ մի ընդհանուր բան չունի: Հոնիգմանն հետագայում մի այլ կարծիք հայտնեց, համաձայն որի Ստորին Մարաստանը գտնվում էր Ամիդի շրջանում (տե՛ս ծանոթ. 400), Ասենք նաև, որ Կաթանը այն տեղադրում է Եղեսիայում (*Каждан, Армяне...*, стр. 50, 157): Կ. Յուզբաշյանի ենթադրությունը եթե ճիշտ չիներ, ապա Վասպուրականում միաժամանակ պետք է երկու բյուզանդական կառավարիչ փնտրենք՝ վերին Մարաստանի և Ստորին Մարաստանի, այնինչ Վասպուրականում միայն մեկ կառավարիչ է հիշատակվում, վերին Մարաստանի:

Ինչպես տեսնում ենք, Սկիլիցեսը 6524 (1016) թ. դեպքերի առթիվ է հիշում, որ «այն ժամանակ» (τοτε) Սենեքերիմն իր երկիրը զիջեց Վասիլին: Ուռայեցին խոսելով 465 (1016) թ. դեպքերի մասին, գրում է, թե «Յայնժամ» Վասպուրականի թագավորն իր տիրույթները զիջեց Վասիլին (էջ 48): Այս ամենը ուսումնասիրողների մի մասին բերեցին այն եզրակացության, որ Սենեքերիմ Արծրունին Սեբաստիա գնաց 1016 թ., որ ի հաստատվում, քանզի Սենեքերիմը դեռևս 1020 թ. տեղում էր և անգամ զինական օգնություն էր տալիս Աշոտ Բագրատունուն՝ Հովհաննես-Սմբատի դեմ նրա մղած պայքարում (տե՛ս Մատթ. Ուռն., էջ 8): Այս հարցի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Վ. Վաղանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, էջ 210 և հտ.: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1016 թ. հողերի փոխանակության մասին խոսք չէր կարող լինել, այդ թվականին Սենեքերիմը իր որդի Դավթի միջոցով Վասիլից զինական օգնություն խնդրեց լուկ, իսկ տիրույթները զիջեց միայն 1021 թ. (տե՛ս Бартикан, О болгарском войске, стр. 91—93: (Վ. Կ. Իսկանյանը գտնում է, որ Վասպուրականի մասին բանակցությունները տեղի ունեցան Կոստանդնուպոլսում 1021 թ., իսկ բնակչության տեղափոխությունը կատարվեց 1022 թ. տե՛ս Իսկանյան, Արծրունյաց արտագաղթի մասին, էջ 67—82):

Միքայել Ասորին հայոց գաղթը դնում է Սելևկյան տոմարի 1300 թ. (989): Նա գրում է. «1300 թ. սկիզբ առավ հայոց գաղթը Մեծ Հայքից, սկզբում դեպի Կապադոկիայի շրջանները: Եվ իրոք, Վասիլ կայսրը հայերից վերցրեց Սենախերիբ թագավորի շրջանները և փոխարենը նրան տվեց Կապադոկիայի Սեբաստիան: Նրանք (հայերը) այս վայրում բազմացան և այդտեղից տարածվեցին ողջ Կապադոկիայում, Կիլիկիայում և Ասորիքում» (Michel le Syrien, Chronique, t. III, p. 133): Միքայել Ասորին այնուհետև գրում է. «Հայերը գաղթեցին Վասիլ կայսեր օրոք և երբ թուրքերը զավթում էին երկիրը, Միքայել կայսեր ժամանակ, նրանք (հայերը) Կիլիկիայի իշխանությունը տվեցին Փիլարտոսին...» (նույն տեղում, էջ 188: Հմմտ. Միխայել Ասորի, Ժամանակագրություն, 1870, էջ 417. «ընդ այն ժամանակս արքայազունքն Հայոց որ յաւուրս Վասիլ կայսերն եկեալ էին ի Վասպուրականս: և առեալ զՍևաստ և զԿեսարիա և զնաւատանէքն փոխելով զերկիրն իւրեանց...»: Նաև՝ Միխայել Ասորի, 1871, էջ 411):

Սենեքերիմը Վասիլ կայսեր թողեց «թեմաբերդս ՀԲ (7Հ) և գելդս ՏՆ (4400)» (Մատթ. Ուռն., էջ 49): Հայ պատմիչը Սեբաստիայից բացի այլ քաղաքներ կամ կալվածներ չի հիշում: Արիստակես Լաստիվերցին նմանապես շատ համառոտ է գրում այս գործարքի մասին. «քանզի Դաւիթ որ Սենեքերիմ կոչիր,—գրում է նա,— որ նեղեալ ի Պարսից՝ տայ զհայրենի ժառանգութիւն իւր զտունն Վասպուրականի յինքնակալն Վասիլ, և առնու փոխարէն զքաղաքն Սեբաստիա և որ շուրջ ղնովաւ գաւառք» (էջ 34): Այս գործարքի մասին խոսում է նաև Կեկավմենոսը. «Սենեքերիմը,—գրում է նա,— ղու գիտես, նա հին թագավորական ընտանիքից էր սերում, ցանկացավ իր երկիրը տալ Վասիլ Ծիրանածին կայսեր և դառնալ նրա ծառան: Վասիլն ընդունեց նրա շնորհը և նրան մագիստրոսի պատվաստիճանը տվեց, ոչ ավելի, թեև նա, Սենեքերիմը, թագավոր էր և հին թագավորներից սերած» («Советы и рассказы», стр. 282): Իսկ Յահյա Անտիոքացին գրում է, որ 1021 թ. վերջին, երբ Վասիլ II-ը ափսազաց թագավոր Գիորգիի դեմ մղած պատերազմից վերադարձավ Տրապիզոն, հենց այն ժամանակ Սենախարիբը Ասֆարագանի թագավորը իր Ասֆարագան երկիրը բերդերով, հողերով հանդերձ զիջեց Վասիլին (Розен, Василий, стр. 62): Թովմա Արծրունու Պատմության Շարունակողի տվյալներով «փոխեցին զհայրենի տունսն իւրեանց Հայկազունքն Արծրունիքն Սենեքերիմ ի թուին հայկազնեան տումարին ՆՀ (1021) և ղէմ եղեալ գնաղին



յաշխարհն Յունաց ԺՅԹ (14.000) արամբք, թող զկանայս և զմանկտիս և արկան ընդ լծով ծառայութեանն Հոռոմոց» (Թովմա Արժունի, էջ 500):

Սերաստիան XI դ. սկզբում նույնանուն բանակաթեմի կենտրոնն էր: Արվալլըրը նշում է, որ XI դ. դատավոր-պրետորների ցուցակում տարօրինակ կերպով բացակայում է Սերաստիայի պրետորը և այդ բանը նա բացատրում է աղբյուրների անբավարարությամբ (Ahrweiler, Recherches, pp. 83—85): Այդ բանը հետաքրքիր ձեւով է բացատրում Գ. Հիտավրինը: Նա գրում է, որ Սերաստիան Սենեքերիմին տրվելու առնչությամբ, Սերաստիա բանակաթեմի ժամանակավորապես միացվեց Կապազովկիա բանակաթեմին և դադարեց որպես այդպիսին գոյություն ունենալուց (տե՛ս «Советы и рассказы», стр. 590):

Սենեքերիմի հաջորդները (սկզբում նրա որդիներ Դավիթը, Ատոմն ու Աբուսահլը) մտան բյուզանդական ծառայության մեջ իրենց հոր անունը դարձնելով ազգանուն: Աղբյուրներում հիշվում են Սենեքերիմյաններ, որոնք Սերաստիայի Արժուրեններից են սերում: Այդ բնտանիքի մասին տե՛ս խաջժան, Армяне, стр. 33—36: Ավելորդ չէ ասել, որ այս ժամանակներում հիշվում են նաև «Վասպուրականցի» ազգանունով (Βασπραχανίτης) բյուզանդական գործիչներ (Վախժան, Армяне, стр. 106—107):

353. Ինչպես գիտենք, Վարդաս Փոկասի ապստամբությունը ճնշելու համար Վասիլ II-ր ստացել էր Կիլիկյան Ռուսիայի իշխան Վլադիմիրի զինական օգնությունը, դրա դիմաց իր քրոջ Աննային կնություն տալով (տե՛ս և ծանոթ. 299):

354. Քաղաք արևմտյան Մակեդոնիայում:

355. Բնագրում՝ Τζοτζιανος: Դորոստոլի զորավար Զոչիկը, իբրացի (այսինքն՝ վրացադավան հայ) Թեղատի (Ֆեղատի) որդին, հավանաբար, Բակուրյանների ընտանիքին էր պատկանում (տե՛ս Վախժան, Армяне, стр. 59—60): Սկիլիցեսն այստեղ գրում է Θεοδατος, նախապես (տե՛ս էջ 75) այդ անունը նա բերել էր Φευδατος ձևով:

356. Սկիլիցեսը հունարին տառերով գրում է՝ «βεζιτε, ο τζεζαρ» («бежите, Цезарь»-ը (իմա՝ արք-ը), այսինքն՝ «փախեք, կայսրն է գալիս»):

357. 6526 թվականը չի համընկնում ինդիկտիոնի 15-րդ տարվա հետ, պետք է ուղղել ինդիկտիոնի 1-ին տարվա: Մի փոքր անց, խոսելով ինդիկտիոնի երկրորդ տարվա մասին, Սկիլիցեսը ցույց է տալիս, որ դա համընկնում է 6527 թ.:

358. Հովհաննես-Վլադիսլավի մահվան մասին գիտե նաև Ուոհայցին. նրան նա անվանում է Ալուսիան և գտնում, որ նրան Վասիլ կայսրը թունավորեց (Մատթ. Ուոհ., էջ 46):

359. Այս նիկետաս Պեգոնիտեսը հետագայում նշանակվեց Վասպուրականի կառավարիչ և այդ սլաշտոնում փոխարինեց նույնպես Դյուրախիոնից եկած նիկոլայոս Խրիսելիոսին: Վերջինիս հայրը Դյուրախիոնի մեծամեծներից էր:

360. Բնագրում՝ στρατηγός-αυτοκρατωρ: Աստիճանը հանդես է գալիս VI դարից և սպարապետ է նշանակում (του παντος στρατου ηγεμων), որ, ինչպես վկայում է αυτοκρατωρ— ինքնակալ բառը, որոշ հանգամանքներում ուներ կայսեր հավասար իրավասություններ: Աստիճանն առաջին անգամ հիշատակում է Պրոկոպիոս Կեսարացին: Այդպես է նա կոչում Բելիսարիոսին: Նիկեփոր Փոկասը, ըստ Լեոն Սարկավազի տվյալների, Կրետեի արշավանքի ժամանակ կրում էր վերոհիշյալ աստիճանը: Հետագայում նա դարձավ Ասիայի զորավար-ավտոկրատոր, որ, հավանաբար, նույնանուն է Արևելից սխոլերի դոմեստիկոսի աստիճանին: Բուլղարիայի նվաճումից հետո Վասիլ II-ր Թեսաղոնիկեի, Բուլղարիայի և Սերբիայի բոլոր զինված ուժերը ենթարկեց մեկ մարդու, որոնցից առաջինը հիշյալ Դավիթ Արիանիտեսն էր: Նա 1018 թ. ստացավ այդ աստիճանը: Հետագայում այդ աստիճանն ստացան Գեորգիոս Մանիակեսը, Նիկեիոր

ոքքտորը, Կատակալոն Կեկավմենոսը, Բրիեննիոսը և ուրիշներ: Աստիճանի վերաբերյալ տե՛ս *Guilland, Le commandante en chef*, pp. 380—404:

361. Այժմ՝ Դեոլ:

362. Զլփոթել Փոքր Ասիայի Կոլոնիայի հետ: Գտնվում էր հյուսիսային էպիրոսում: Այժմ՝ Ալբանիայի տարածքում:

363. Սկիլիցեսի *Vindob. Hist. gr. 74* ձեռագրում կա Միքայել Դեոլցու շատ կարեվոր մի ընդմիջարկություն՝ բուլղարների ձեռքում ընկած և ազատված այդ հոռմայեցի ռազմագերիների վերաբերյալ. «Պելագոնիայում, Պրեսպայում և Ախրիդայում Սամուիլի կողմից բնակեցված էին բազմաթիվ հոռմայեցիներ և հայեր, որոնցից ամենանշանավորներն էին Վասիլ Ապուբապի որդիներ Գրիգորասը և...» (մի անուն ձեռագրում եղծված է): *Տե՛ս Ioan. Scyl. Synopsis*, p. 363:

364. Նկատի ունի ոչ թե ժամանակակից Սերբիա երկրամասը, այլ Հունաստանի Մակեդոնիա նահանգի քաղաքը: Հիմնադրել էր դեռևս Հերակլիոս կայսրը և սերբեր բնակեցրել: Հետագայում գրավվել էր բուլղարների կողմից և վերագրավվել Վասիլ II-ի:

365. Բնագրում՝ Ρουβενι: Դեռևս Վասիլևսկին ցույց էր տվել, որ այս անձնավորության անունը հիշեցնում է Կիլիկյան իշխանության հիմնադրի անունը և որ Թերպոպիլեի Ռուբենը հայ է (տե՛ս ЖМНП, июль 1881, стр. 116—117): Ադոնցը գտնում է, որ այս Ռուբենը Հելլադայի զորավարն էր և այդ պաշտոնում փոխարինել էր Թորթուսի էգրեկ (Ագարակ) վայրում գտնվող եկեղեցու պատի վրա 1006/1007 թթ. փորագրված հունարեն արձանագրության մեջ հիշվող «Լարիսալի և Մակեդոնիայի զորավար պատրիկ Գրիգորին, պատրիկ Սմբատի որդուն, (*Adontz, L'aieul des Roubeniens*, p. 186): Ադոնցի ենթադրությամբ Ռուբենը 1018 թ. 23—25 տարեկան պետք է լիներ, հետևաբար նա կարող էր ապրած լիներ մինչև 1071—1076 թվականները և նույնանալ Կիլիկիայի իշխանության հիմնադիր Կոստանդին հոր՝ Ռուբենի հետ (նույն տեղում, էջ 191): Ադոնցի ենթադրությունը շատ համարձակ է, քանզի այդ անձնավորությունները նույնացնելու համար անվան նույնությունը դեռ բավական չէ, այդ բանը բացասում են թվական տրվյալները, քանզի պետք է ընդունենք, որ Ռուբենը հարյուր տարուց ավելի է ապրել (այդ մասին այժմ տե՛ս և *Микаелян, История...*, стр. 87—88: *Der Nersessian, The Kingdom of Cilician Armenia*, p. 633: Քասունի, Ռուբեն Ա..., էջ 40 և հտ.: Նույնի, Կիլիկիո հայկական իշխանապետությունը, էջ 29): Ավելորդ չէ այստեղ հիշել նաև Ադոնցի ենթադրությունը Թերմոպիլեում գտնվող վայրի՝ Ζητούσιον (Ջետունիոն) անվան մասին: Նա գտնում է, որ տեղանունը, որ ընդհանուր ոչինչ չունի «գեյթուն» (ձիթապտուղ) լատի հետ, հիշեցնում է մեր Ջեյթունը, և հարց է տալիս. դա Ռուբենի ստեղծագործությունը չէ՞ արդյոք՝ քաղաքը կոչել Թեսալիայի Ջետունիոնի անունով (նույն տեղում, էջ 193, ծանոթ. 5): Ոչնչով չհաստատվող ենթադրություններ:

Մի Ռուբենի էլ հիշատակում է Ծվատաթիոս Հոռմայեցին իր «Դատաստանագրքում» ինչ-որ օժիտի հարցերի առնչությամբ: Նրան նա անվանում է Դουβενιγ, բայց հրատարակիչները կարդում են Ρουβενιγ: *Πετρα, LXV, 5*: Պիրայի Ռուբենին Կադանը նույնացնում է Թերմոպիլեի Ռուբենի հետ և նրան համարում Ռուբինյանների շարստության նախահայր (տե՛ս *Каждан, Рец. на Скил.*, стр. 207, նաև նույնի, *Армяне...*, стр. 39), որտեղ նա Ադոնցի նույնացումը անհիմն է համարում:

366. Միջնադարում Պարթենոնը վերածվել էր Սբ. Աստվածածնին նվիրված եկեղեցու:

367. Բուլղարիան նվաճվեց Վասիլ II-ի կողմից 1018 թ., բուլղարական թագավորությունն ու պետությունը դադարեց գոյություն ունենալուց, երկիրը վերածվեց բյուզանդական սովորական նահանգի՝ բյուզանդական կառավարչի գլխավորությամբ: Վասիլ II-ը ստացավ Բուլղարասպան մականունը: Հայկական աղբյուրները բավական հանգամանո-



րեն են խոսում բյուզանդարուղարական պատերազմի մասին և, պատճառը, նախ և առաջ, այն է, որ այդ պատերազմին գործուն մասնակցություն ունեցան նաև հայերը: Ասողիկը ցույց է տալիս, որ Վասիլը դեռևս այն ժամանակ, երբ Վարդ Սկլերոսը Բաղդադում էր, հայեր տարավ Մակեդոնիա՝ ընդդեմ բուլղարների (էջ 201): Նա գրում է նաև, որ Բյուզանդիայի դեմ պայքարող կոմսաձագերը Վասիլի կողմից Հայաստանից Բուլղարիա տարված հայեր էին (էջ 244), որոնք, լքելով կայսեր, անցան բուլղարների թագավորի կողմը: Հաստիվերցին ավելի համառոտ է: Վասիլը, գրում է պատմիչը, «տիրէ Բուլղարաց աշխարհին, գաւառաց և քաղաքաց նոցա... քանզի որ ունէր զաշխարհն՝ յաղթողն ի պատերազմունս, վախճանեցաւ իւրային մահուամբ. իսկ որդիք նորա՝ քանզի ոչ հնազանդեցան միմեանց, անձնատուր եղևալ էլին առ թագաւորն... Այս է Բուլղարաց երկրի առնլոյն օրինակ: Իսկ թագաւորն զորգիս Բուլղարաց բռնակալին հանեալ ի ժառանգութենէ իւրեանց ղարմօք և ազգաւ, և տայ նոցա տեղիս յաշխարհն Հոռոմոց» (էջ 24): Այդ մասին ավելի հանգամանորեն գրում է Մատթեոս Ուռհայեցին: Նա Վասիլի վերջին արշավանքը Բուլղարիայի դեմ թվագրում է 1011 թ., որի ժամանակ նրա ասելով կայսրը «յաղթեաց թագաւորութեան նոցա և մաշեաց ի սուր սուսերի զբազում գաւառրա մեծաւ բարկութեամբ. և յաւեր և ի գերութիւն մատնեաց զամենայն արևմուտք և բնաջինջ երարձ զամենայն թագաւորութիւնս Բուլղարաց և դեղ մահու արբուցանէր Ալիօսխանին (կարգա՝ Ալուսխանին) առն քաջի՝ Բուլղարաց թագաւորին. և այսպիսի օրինակաւ հանէր զնա ի կենաց, առնալ զկին նորա և զորդիս արկանէր ի Կոստանդնուպօլիս» (էջ 46):

368. Ալիլիենգիոնի մասին տե՛ս վերը, ծանոթ. 339:

369. Այսինքն՝ պրոտոպապաս: Պալատի եկեղեցու ավագերեցին Սկլիցեան մի այլ տեղում անվանում է պալատի պրոտոպապաս (տե՛ս և ծանոթ. 90):

370. Բյուզանդիայի կողմից նվաճված Բուլղարիայում և Սերբիայում ստեղծվեց բյուզանդական վարչություն, ըստ Սնարալանովիչի՝ Պարիստրիոն բանակաթեմը Դրիստրա կենտրոնով, Սերբիա-Ջախլումլյե բանակաթեմը և Սիրմիոնի բանակաթեմը, որը կոչվում էր և Արևմտյան Պարիստրիոն (Скабаланович, Византийское государство срт. 219, 220, 227—230): Հետագայում ուսումնասիրողների, հատկապես Վ. Ջլատարսկու և Ն. Բրնեսկուի միջև Բուլղարիայի և Սերբիայի վարչական բաժանման հարցի շուրջը կրթոտ բանավեճ սկսվեց, որի մասին տե՛ս Златарски, История, т. II, Banescu, Les duchés:

371. Ի. Դուլչեր քննա՛ան վերութնության է ենթարկել Սկլիցեանի այս էջը և ցույց տվել, որ Νεστοργγου Σέρμαν-ի մեջ վերջին բառը, որ բերված է որպես անձնանուն, իրականում Սիրմիոն տեղանվան կրկնված ձևն է (Дуйчев, Последният защитник, стр. 309—321):

372. Կոստանդնուպոլսի քաղաքացիներին:

373. Արազգիայի արքա Գեորգիոսի տակ ենթադրվում է վրաց թագավոր Գիորգի I-ը (1014—1027): Սկլիցեանը նրան հիշատակում է որպես «ներքնագույն Իբերիայի արքա»: Ոչ միայն բյուզանդական, այլև վրացական, հայկական և արաբական աղբյուրներում, այս ժամանակաշրջանում Վրաստանի և վրացու փոխարեն օգտագործվում են նաև Ափխազիա և ափխազ տերմինները: VIII դ. 70-ական թթ. Ափխազական պետության հիմնադրամբ, և Արևմտյան Վրաստանի (էգրիսիի) կցմամբ ափխազաց պետությանը, Արևմտյան Վրաստանն սկսեց կոչվել Ափխազիա, իսկ նրա բնակչությունն էլ ափխազներ: XI դ. սկզբում վրացական միացյալ պետության հիմնադրումից հետո վերոհիշյալ բառերի իմաստը ընդարձակվում է, դրանց տակ ենթադրվում են Վրաստանն

(Սաքարթվելո) և վրացիները (քարթվելի): Սկզբում Ափխազիա էին կոչում միացյալ վրացական թագավորությունն առանց Կախեթի և էրեթի, հետագայում այդ հասկացությունը տարածվում է համայն Վրաստանի վրա: Այդ երկրի թագավորները կոչվում էին «ափխազաց թագավորներ», հետագայում՝ «ափխազաց և վրաց»: Հասկանալի է, Ափխազիա և ափխազ կոնկրետ գեպքում նշանակում էր նաև բուն Ափխազիան և նրա ժողովուրդը (մանրամասն տե՛ս *Анчабадзе, Из истории, стр. 117—121, 171—177*):

Բուլղանգավրացական պատերազմների մասին՝ Տայքի համար 1015-ից հետո (ըստ հայկական աղբյուրների տվյալների) տե՛ս *Хонелия, Некоторые вопросы, стр. 103—104*:

374. Վարդաս Փոկասի որդի Նիկեփորին Հաստիվերցին հիշատակում է «Մովիզ» մականվամբ (էջ 33): Նրա մասին մանրամասն գրում է Մատթեոս Ուռհայեցին. «Ի սոյն ամի (1022) իշխան ոմն յաղթանդամ ի տանէն Յունաց Նիկիփոս անուն Մովիզ յարեալ ի վերայ Վասիլին և կոչեաց ի միաբանութիւն իւր գթագաւորն Վրաց Գորգի և զորդիսն Գագկայ. գնաց յաճէ նորա Դաւիթ (Սենեքերիմ Արծրունու որդին—Ղ. Բ.) առ նա ղօրօքն Հալոց, և աճ մեծ եղև ի վերայ Վասիլին» (էջ 51): Ըստ Ուռհայեցու և Հաստիվերցու Վասիլ կայսեր հաջողվում է Դավիթ Արծրունուն համոզել ու նրա միջոցով սպանել ապստամբին, որից Վասիլ կայսրը «ուրախ եղև յոյժ և տայր պարգևս Դաւիթ ղԿեսարիա և զՄամնդաւ և Խաւաղանէքն հանդերձ սահմանօքն» (էջ 51): Ինչպես տեսնում ենք, Նիկեփոր Մովիզի սպանությունը ըստ հայկական աղբյուրների, վերագրվում է հայերին (համտ. նաև Արևստ. Հաստ., էջ 34), այնինչ Սկիլիցեսը անվանում է պատրիկ Նիկեփոր Քսիֆիասին: Բանասեր Հայկ Պերպերյանը հանգել է այն եզրակացության, որ հայ հեղինակների տվյալներն, ամենայն հավանականությամբ, իրենց հիմքում ունեն բանավոր աղբյուրներ, որ Նիկեփոր Մովիզին սպանողը չէր կարող Դավիթ Արծրունին լինել, որ դեպքերին ժամանակակից հեղինակները ճիշտ են, մատնացույց անելով Նիկեփոր Քսիֆիասին (տե՛ս Պերպերյան, Նիկեփոր Փոկասի ապստամբությունը, էջ 515):

Մովիզի սպանությունը Նիկեփոր Քսիֆիասին են վերագրում նաև վրացական աղբյուրները: «Մատիանն Քարթլիսա»-յի համաձայն «սւլարապետն (Քսիֆիասը) ու ասյրստամբ Փոկասի որդի Մովիզը (վրացերենում՝ Մարվիզի, հետևաբար վրաց հեղինակը ձեռքի տակ է ունեցել հայկական աղբյուր՝ բանավոր կամ գրավոր) միացան ու Արևելից երկրին տիրացան»: Վրացական աղբյուրի ասելով, Մովիզին սպանեց Քսիֆը, որին սակայն խաբեությամբ ձերբակալեցին Դալասանի (Դալասսենոսի) ներկայացուցիչները, որոնք ուզում էին Փոկասի որդու արյան վրեժն առնել: Հակասելով իրեն, վրաց հեղինակը ցույց է տալիս, որ նրանք ձերբակալելով Քսիֆիասին, բերեցին Վասիլ կայսեր, որը նրան աքսորեց մի կղզի, իսկ նրա բազմաթիվ կողմնակիցներին հրամայեց գլխատել: Նրանց մեջ էին Ջոջիկի որդի Ֆերիսը (Ֆերս), ծագումով Տայքից, իսկ մնացածները հույներ էին (տե՛ս *Качуцишвили, Грузинские источники, стр. 82: Տե՛ս նաև նույն տեղում, էջ 94—96, Սմբատի ժամանակագրության տվյալները սույն հարցի վերաբերյալ*):

Յահյա Անտիոքացին գրում է, որ պատրիկ Նիկեփոր Քսիֆիասը Անատոլիկոն բանակաթեմի կառավարիչն էր, որ պայմանավորվեց Նիկեփոր Մովիզի հետ Վասիլի դեմ ապստամբություն բարձրացնել, որի ղրղապատճառը Նիկեփոր Քսիֆիասի կայսր դառնալու ցանկությունն էր և Վասիլի՝ ափխազների դեմ մղվող պայքարում ղրղաված լինելը, միաժամանակ նշելով, որ Մովիզը ևս դեմ չէր հաջողության դեպքում իրեն կայսր հռչակել: Երկու ապստամբների միջև ծածուկ թշնամություն առաջացավ, Նիկեփոր Քսի-



Ֆիասին հաջողվեց իր ծառաներից մեկի օգնությամբ սպանել Մովիդին: Յահյան այդ դեպքերը թվագրում է 1022 թ. օգոստոսով (*Розен, Василий, стр. 63—64*):

Հունական բանահյուսությունը պահպանել է մի դարձվածք. «Ես շեմ վախենում ո՛չ Վարդասից, ո՛չ Նիկեփորից և ո՛չ Մանրավղից», որոնց տակ հայտնի ապստամբներն են ենթադրվում: Ադոնցն սկզբում Մանրավղին նույնացնում էր Վարդաս Սկլերոսի հետ (*Adontz, L'epoque, p. 21*), բայց հետագայում նույնացրեց հայկական աղբյուրների Մովիդի հետ և վերոհիշյալ դարձվածքի հիման վրա փորձեց սրբագրել հայկական աղբյուրների «Մոավիդը»՝ «Մանրավղի» (տե՛ս *Adontz-Grégoire, Nicephore au col roide*): Հ. Պերպերյանը գրում է, թե կարիք չկա Βαρσαρχηλος (Մանրավղի) գրական էկվիվալենտը փնտրել (տե՛ս *Berberian, Nicephore au cou tors, p. 554*): Վարդաս Փոկասի, Նիկեփորի և Մովիդի վերաբերյալ ժամանակակից հունական ժողովրդական երգերի մասին տե՛ս Ρωαχιος, Τρεῖς Βυ'αντινοι αρχοντες, σελ. 25—45:

375. Լիպարիտյանների մասին տե՛ս ստորև, ծանոթ. 551:

376. Յահյա Անտիոքացուց իմանում ենք, որ «Ափխաղաց թագավոր» Գիորգին Վասիլի դեմ պայքարելու համար բանակցությունների մեջ էր մտել ֆաթեմյան ամիրապետ ալ-Հաբիմի հետ, որպեսզի ամեն մեկն իր երկրից Վասիլին պատերազմ հայտարարի: Երբ ալ-Հաբիմի անհետացման մասին լուր ստացվեց, Վասիլը գնաց ափխաղների դեմ, սարսափելի ավերածություններ գործեց, ապա վերադարձավ Տրապիզոն (*Розен, Василий, стр. 62 - 63*): Հայտնի է, որ Վասիլը Տրապիզոն գնաց 1021 թ. վերջին: Սկիլիցեսը այս դեպքերը թվագրում է 6531 (1023) թ., որ սխալ պետք է համարել: Եթե Վասիլը ափխաղների դեմ գնաց ֆաթեմյան Հաբիմ Աբու-Ալի Մանսուրի անհետացման տարին (1021), ապա ճիշտը հենց 1021-ն է: Հենց այստեղ, Տրապիզոն եկավ Գիորգիի դեսպանը, որի միջոցով ափխաղաց թագավորը խոստացավ Վասիլին զիջել Դավիթ կուրապաղատի բոլոր տիրույթները և պատանդ տալ իր որդուն՝ Բագրատին: Հենց այդ միջոցին բռնկվեց Նիկեփոր Քսիֆիասի և Նիկեփոր Մովիդի ապստամբությունը, որից ուզեց օգտուր վել Գիորգին: Երբ կայսրը գնաց ստանալու այդ տիրույթները, Գիորգին հարձակվեց Վասիլի վրա, բայց դարձյալ պարտվեց և դիմեց կայսեր ողորմածությանը: Վասիլը ստացավ Գիորգիի խոստացած բերդերը, նրա որդուն որպես պատանդ և վերադարձավ: Նրա վերադարձը Յահյան թվագրում է Վասիլի թագավորության 48-րդ տարով (1024), հիշրայի 414 (26 մարտ 1023—14 մարտ 1024) թթ. (տե՛ս *Розен, Василий, стр. 66*):

Հայկական աղբյուրները այս դեպքերը հիշատակում է Մատթեոս Ուռնայեցին, որ նշում է ճակատամարտի վայրը՝ Դա Ջիոնից բերդի առաջ ընկած դաշտն էր. «և արարին Ջիօնից բերդին առաջի մեծ պատերազմ. և Գորգի փախստական լեալ անկանէր յամուր բերդս և գրէր զանձն իւր ծառայ Վասիլն և տալր պատանդ զորդին իւր» (էջ 51):

1022 թ. կնքված հաշտության մասին հիշատակում է «Մատիանե Քարթլիսայի» հեղինակը, որի ասելով Գիորգին իր երեքամյա որդի Բագրատին պատանդ տվեց, հանձնեց իր ազնվականներին տրված բերդերը, ինչպես և տասնչորս այլ բերդեր, որոնք անցյալում Վասիլին էին տրված, Դավիթ կուրապաղատին պատկանող հողերը Տայբում, Բասյանում, Կողում, Արտահանում և Զավախքում (տե՛ս *Каучуаибули, Грузинские источники, стр. 82—84*):

377. Հմմտ. «Իսկ առաքելալքն ի թագաւորէն կալեալ զՓերսն և զԱնդրոնիկէ զնորուն փեսայն, որ էր համախոհ նորին, և ածեալ մինչև յամուրն որ կոչի Խաղտոյ Առիճ ի սպառուածն Կարնոյ, ...և յառաջ ածեալ զՓերսն և Անդրոնիկոսն՝ հատին զզլուխս նոցա: Քանզի զայն պատուէր տուեալ էր նոցա թագաւորին. վասն զի նոքա յապստամ-

բելն իւրեանց դաշնաւորք եղեն Ափիւազին (Գիորգի թագավորին—Հ. Բ.) և խոստացան մինչև յայն տեղի տալ նմա ի բաժին» (Արիստ. Լաստ., էջ 35):

378. Եվստաթիոս (Տուլիս 1019—նոյ. դեկտ. 1025 թթ.):

379. Ալեքսիոս Ստուդիտես (25 մարտ 1025—20 փետրվար 1043 թթ.):

380. Կայսրերին որպես կանոն թաղում էին սբ. Առաքելոց տաճարում: Հերդոմոնի վանքը գտնվում էր քաղաքի պարիսպներից դուրս, որտեղ սովորաբար ուղղափառ հանդեսներ էին կազմակերպվում: Երբ 1204 թ. Կոստանդնուպոլիսը գրավվեց ֆրանկների կողմից և Հերդոմոնի վանքը ավերակ դարձավ, կայսեր աճյունը տեղափոխվեց Սիլվրիա: Մի անծանոթ բանաստեղծ Վասիլ II-ի դամբանականը գրեց, որ հետևյալ բովանդակութունն ունի.

«Կայսրերն անցյալում

իրենց թաղման համար տարբեր տեղեր առաջադրեցին:

Բայց ես, Միրանաժին Վասիլս,

դամբարան եմ կառուցել Հերդոմոնի հողի վրա

և հանգստանում եմ անթիվ շարշարանքներից,

որ կրեցի ու տարա մարտերում:

Ոչ ոք չտեսավ իմ նիզակը հանգիստ վիճակում՝

մինչև այն օրը, երբ երկնից թագավորը կանչեց ինձ,

երկրի ինքնակալիս, մեծ թագավորիս:

Իմ ողջ կյանքում ես մշտարթուն

փրկութուն էի տալիս նոր Հոռոմի զավակներին,

երբ արիաբար արշավում էի Արևմուտք,

կամ էլ Արևելքի սահմանները:

Այդ մասին ես վկայում պարսիկներն ու սկյութները,

նրանց հետ՝ ափսազները, իսմայիլն, արաբն ու իբերը:

Ով դու, այս դամբարանին նայողս,

աղոթքով փոխհատույց եղիր իմ ռազմավարական տաղանդին» (տե՛ս

Mercati, Sull'epitafio, p. 141):

381. Արիստալես Լաստիվերցին գտնում է, որ կայսեր սլարակիմոմենոսը Սիմեոնն էր. «Սիմոնն ներքինի... որ ունէր ղիլիսանութին կէս թագաւորութեանն, զոր ըստ յունական լեզուին պառեկիմանոս անուանեն» (էջ 41):

382. Հիշատակում է և Լաստիվերցին. «առաքէ... յարևելս վերակացու աշխարհին զնիկիտ ոմն ներքինի, որ եկեալ անցանէ ի գաւառն Վրաց» այսինքն՝ Իրերիա (Տաւք): Սրա հիմնական գործունեությունը եղավ այն, որ նա «պատիր բանիւք զյաղումս յաստաց աշխարհին հանեալ ի հայրենեաց՝ առաքէ ի դուռն թագաւորին: Զոր տեսեալ և ուրախացեալ՝ մեծամեծ պարգևօք և իշխանական գահու պատուէ զնոսա, և տայ նոցա ըստ արժանեաց գիւղս և աւանս գրով և մատանեալ ժառանգութին յաւիտենից» (էջ 41): Այստեղ հստակ կերպով արտահայտվում է Բյուզանդիայի քաղաքականությունը, որի հիմքում ընկած էր Հայաստանն ավագանուց զրկելը:

383. Արժեքավոր մանրամասնություններ է տալիս Լաստիվերցին: Կոմենենոսն էր «սէր գաւառին Վասպուրականի, սա մեծամեծ գործս արութեան ցոյցեալ ի դուռն Պարսից, և եղև անուանի յամենայն արևելս» (էջ 40—41): Նրա կուրացման վերաբերյալ Լաստիվերցին ավելի լուրջ պատճառներ է մատնացույց անում, քան Սկիլիցեսը: Հայ



պատմիչը գրում է, որ Կոմնենոսը Վասիլ կայսեր մահից հետո «խորհուրդ վատ ի մտի արկեալ, դաշնակից լինի Գէորգեայ (վրաց թագավորի—Ն. Բ.) թագաւորել յարեւելս: Զոր ծանուցեալ կապադովկացի զօրուն, միարանեալ յանկարծակի ի վերայ հասին. և զլարս վրանին հատեալ ի վերայ ընկեցին. և կալեալ զնա և զնորին խորհրդակիցսն՝ եղին ի բերդի միոջ ի բանտի, և ծանուցին թագաւորին» (էջ 41): Կոստանդին կայսեր հրամանով Կոմնենոսն ու նրա ութ համախոհները կուրացվեցին: Լաստիվբրցին այդ բանի համար շատ է ափսոսում. «յոյժ ապաշաւանաց արժանի է,— գրում է նա,—թէ զիւրդ զառածեալ անկաւ ի մտաց այնպիսի պատուական այր և բարեաց յիշատակաց արժանի. քանզի զԱրճէշ իւրով դաստակերտօքն նա ած ընդ ձեռամբ Հոռոմոց» (էջ 41):

Թեև Սկիլիցեսը չի խոսում Կոմնենոսի և Գիորգիի բանակցությունների մասին, իր զինվորներից պահանջած երդմնագիրը՝ պայքարել իրենց զորավարով մինչև մահ, այնուամենայնիվ, ապստամբության նախապատրաստության մասին է վկայում:

384. Նիկեփոր Մովիզի որդին էր:

385. «Մորոս» հունարեն նշանակում է «մանուկ», «հիմար»:

386. Վասիլ Սկլերոսը Անատոլիկոն բանակաթեմի զորավարն էր:

387. Զարմանալիորեն դրական է Կոստանդին կայսեր կերպարը հայկական աղբյուրներում. «Եղև Կոստանդ այր բարի և աստուածասէր, ողորմած այրեաց և գերեաց, անյիշաշար ի վերայ ամենայն յանցաւորաց, վասն զի սա արձակեաց զամենայն բանտարկեալսն ի կապանաց և զկորստական տունն, զոր արարեալ էր Վասիլն, հրամայեաց այրել հրով... և ինքն Կոստանդին խաղաղութեամբ կացեալ յաթոռ թագավորութեան Հոռոմոց՝ քաղցրութեամբ հովուեաց զամենայն հաւատացեալս Աստուծոյ և կացեալ յաթոռ թագաւորութեանն զամս շորս, և մեռանէր բարի խոստովանութեամբ ի Քրիստոս Յիսուս և բարի յիշատակաւ գնաց առ հարս իւր. և սուգ մեծ լինէր աշխարհին՝ զրկեալ յայնպիսի թագաւորէն» (Մատթ. Ուռն., էջ 56—57): «Այր խաղաղասէր էր և առատ» (Արիստ. Լաստ., էջ 40): Պատճառն, ամենայն հավանականութեամբ, այն էր, որ Կոստանդինը, ինչպես և իր եղբայր Վասիլ II-ը, ավելի համբերատար կրօնական քաղաքականություն էր վարում: Միքայել Ասորին էլ Վասիլին և Կոստանդին համարում է «արդար» կայսրեր (Michel le Syrien, Chronique t. III, p. 140), ի հակադրություն Ռոմանոս III-ի, որ միաբնակների նկատմամբ անհանդուրժող էր (նույն տեղում, էջ 146):

388. Թարգմանաբար նշանակում է «աշխատանք, գործ տվող» և իմաստով նույնանում է ἐπιεχτης (եպիխտ) բառին, որից ունենք աղգանուն, որ հանդիպում է և հայկական աղբյուրներում:

389. 5760 ոսկեդրամ:

390. Բյուզանդիայում եկեղեցականների համար կային որոշակի պատվաստիճաններ: Դրանցից էին՝ սինկելլոսս մետրոպոլիտներ և «հիպերտիմոսս» մետրոպոլիտներ: Սինկելլոսը, բացի իր սովորական եկեղեցական ֆունկցիաներից և աստիճանից, ստացավ նաև քաղաքական ֆունկցիաներ: Սինկելլոսը պատրիարքի օգնականն էր և մշտական խորհրդատուն: Նրան նշանակում էր կայսրը: Մակեդոնական հարստության ժամանակ սինկելլոսը ազնվականական հիերարխիայի ամենաբարձր աստիճաններից էր և գալիս էր մագիստրոսից և ռեքտորից անմիջապես հետո: Սինկելլոսների ամենավաղ հիշատակությունը վերաբերում է X դարի երկրորդ կեսին: XI դ. կեսերից հիշվում են նաև պրոտոսինկելլոս մետրոպոլիտներ, դարի վերջին՝ պրոտոսինկելլոսների պրոեդրոսներ և պրոտոսինկելլոսների պրոտոպրոեդրոսներ (մանրամասն տե՛ս Grumel, Les métropolitains syncellus. p. 92—114):

391. Մանուիլի վանքը կառուցել է հայազգի մագիստրոս Մանուիլը, որ Թեոփիլոս կայսեր օրոք Անատոլիկոն րանակաթեմի զորավարն էր (*Janin, La géographie ecclesiastique*, p. 331—333):

392. Ապագա կայսր Ռոմանոս IV Դիոգենեսի հայրը:

393. Բնագիրն այդքան էլ հստակ չէ. Γεωργιος τε και Βαραζβατ, ε ο εν ορει τω "Αθω την των 'Ιβηρων μονην συστησάμενος, οι του πατρι:χιου Θεουδату ανεψιοι. Եթե բառացի հասկանանք, ապա գեորգը և Վարազվաչեն տարբեր մարդիկ են, պատրիկ Թեոփիլոսի եզրորդդիները, բայց վանքը հիմնադրողը մեկն է՝ Վարազվաչն: Պ. Պետերսը, ցույց տալով, որ Վարազվաչն անունով մարդ հայտնի չէ Աթոնի Իվիրոն վանքի պատմության մեջ, իսկ հիշյալ վանքի հիմնադիր Եվթիմիոսին հաջորդողն այդ տարիներին Գեորգն էր, ուղղում է մտցնում Սկիլիցեսի բնագրում. Γεωργιος τε (ὁ) και Βαραζβατζε (Գեորգը, որ և Վարազվաչն): Տե՛ս Peeters, Un colophon georgien, pp. 365—366: Կաթողանը համամիտ է Պետերսին (*Каждак, Армяне*, стр. 50), և οι του πατρι:χιου Θεουδату ανεψιοι բառերը գտնում է, որ շեն վերաբերում Գեորգին և Վարազվաչեին ալլ ուրիշ անձնավորություններ են (նույն տեղում, էջ 60, քանզի Գեորգ-Վարազվաչեն Պետերսի ընթերցմամբ դառնում է մեկ մարդ, իսկ անեψιοι բառը հոգնակի է):

Վ. Շանդրովսկայան էրմիտաժի մի արձճն կնիքի հիման վրա ցույց է տալիս, որ Վարազվաչն անուն չէ, այլ ազգանուն, որ տվյալ դեպքում Սկիլիցեսը նկատի ունի երկու տարբեր անձնավորությունների (*Шандровская, Одно уточнение*, стр. 46):

394. Ինչպես գրում է Ժ. Լորանը՝ le couvent d'Iviron ou des Ibères (comprenez des Arméniens de rite orthodox), au mont Athos (Եվիրոն, այն է իբերների, այսինքն՝ ուղղափառ (քաղկեդոնիկ—Հ. Բ.) հայերի) վանքը Աթոս լեռան վրա: Տե՛ս նրա հոդվածը՝ Les origines médiévales, p. 45: Վերահրատարակված է հեղինակի հայագիտական հոդվածների վերջերս լույս տեսած ժողովածուում. *Joseph Laurent, Etudes d'Histoire Arménienne*, Louvain, 1971, p. 11: Որ էթնոնիմի տակ նկատի է առնվում դավանանք, պարզվում է և IX դարի նշանավոր մի վրացի գրողի ասույթով, թե «Վրաստան է համարվում այն լայնարձակ երկիրը, որտեղ եկեղեցական պաշտոնը և բոլոր աղոթքները կատարվում են վրացերեն լեզվով» (տե՛ս *Март, Кавказский культурный мир*, стр. 21):

Աթոնի վանական կազմակերպության հիմնադրումը կապվում է Նիկեփոր II Փոկասի անվան հետ: Նա իր մորեղբայր Միքայել Մալեխինոսի՝ Թեսալիայի Կյումենա կոչված վանքի վանահոր մտերիմ սբ. Աթանասիոսի միջոցով և ջանքերով 963 թ. հիմնադրում է Մեծ լավրա վանքը: Հովհաննես Զմշկիկ կայսեր կարգադրությամբ կազմվում է Սուրբ Լեռան առաջին կանոնադրությունը (*Տիպիկոն*): X դ. վերջում, դեռևս սբ. Աթանասիոսի կենդանության օրոք հիմնադրվում է իբերների (Իվիրոն) մանքը: Աթոնում հայ վանականների գոյության մասին վկայում է սբ. Աթանասիոսի վարքը: Նրա տվյալների համաձայն, սբ. Աթանասիոսի մոտ վանական դառնալու էին գալիս բազմաթիվ ժողովուրդների ներկայացուցիչներ «հենց Հռոմից, Իտալիայից, Կալարիայից, Ամալֆեից, Իբերիայից և Հայաստանից (*Միքայիլիս և Արսենիս*), այն էլ ոչ միայն անտոնիկ, հասարակ մարդիկ, այլև ազնվական ու հարուստ» (տե՛ս *Vie de Saint Athanase*, p. 56): Բացառված չէ, որ Աթոնում բացի քաղկեդոնիկ հայերից, եղած լինեն և հայադավաններ, համենայն դեպս սկզբնական շրջանում: Այդ մասին է վկայում վերոհիշյալ վարքը, որտեղ խոսվում է Աթոնում մեծ աղմուկ հանած հաղորդության համար բաղարջ հացի (αζυαον) թխման մասին (տե՛ս *Vie de Saint Athanase*, p. 62): Նիկոլայոս Միստիկոս պատրիարքը (901—907, 912—925) վկայում



է, որ Աթոնում կային հայոց ցեղից ծագող (φυλῆς κατάγονται ex τῆς τῶν Ἀρμενίων) վանականներ, որոնք պահուում էին հայերի մոտ ընդունված առաջավորաց պահքը (Ἀρτσιβουρίον), ապա և «ուղղափառ» (πιστοὶ ὀρθόδοξοι, հավանաբար՝ քաղկեդոնիկ) հայեր (տե՛ս Nicolai patriarchae Opus, col. 404):

Վրացադավան (քաղկեդոնիկ) հայերի հարցը հանգամանորեն ուսումնասիրվել է դեռ ն. Մառի մի աշխատության մեջ, որը Պ. Պետերսը դասական է համարում: Խոսքը Մառի «Аркауи» ծավալուն հոդվածի մասին է: Ն. Մառի ծանրակշիռ փաստարկումների վրա կարելի է ավելացնել և հետևյալները: Այսպես. 1. Սև լեռան (Մուսա լեռան) հարավարևելյան մասում, այժմ Սուրուբմե (Սուրբ Թովմաս) կոչվող գյուղում վրացական եկեղեցու ավերակների մեջ 1935 թ. գտնվել է վրացերեն խուցուրի գրով մի վիճագիր արձանագրություն, որը Բլեյկն ընթերցել է. „eklesiay ars somekht'oy“ և թարգմանել. „L'eglise est aux Armeniens“: Հենց այդպես է թարգմանել նաև Պ. Պետերսը, այսինքն՝ «եկեղեցին հայերինն է»: Պետերսը տվել է նաև բացատրություն. „c'est-à-dire aux chalcédoniens ibero-armeniens (այսինքն՝ քաղկեդոնիկ վիրահայերի)», տե՛ս *Mécérian*, Expedition archéologique, p. 111—112: Այդ մասին աե՛ս նաև՝ *Peeters*, Orient et Byzance, pp. 162—163: Նույնի, Un témoignage autographe, p. 179—180: Բացաված չէ, որ հենց այս վանքում է եղել Վասիլ II կայսրը: Մատթեոս Ուոհայեցու տվյալներով «Վասիլն յետ ժամանակաց զայ յԱնտիոք ի ծածուկ Գ արամբբ հաւատարմօք և եկեալ ի Սեաւ լեառն ի տեղին, որ կոչի Պաղակ-ձիակ, և ի հօրէ և յառաջնորդէ տեղւոյն առնու զքրիստոսական կնիքն և յայնմ հետէ եղև որպէս զհայր աշխարհիս Հայոց...» (Մատթ. Ուոհ., էջ 50):

2. Սուրբ Մարիամ Նորավկայի (մեռ. 902—903) հունարեն վարքը, որից իմանում ենք, որ Վասիլ I-ի թագավորության ժամանակ (867—886) «Մեծ Հայքի մեծամեծներից ոմանք», ալդ թվում և սբ. Մարիամի հայրը, զալիս են Կոստանդնուպոլիս կայսեր մոտ, սիրալիր ընդունելություն գտնում վերջինիս կողմից, ստանում նրանից թանկարժեք նվերներ և արժանանում բարձր աստիճանների ու պաշտոնների: Ըստ Պետերսի ենթադրության, Մարիամը ծնվել է Տայթ-Կղարջքում, քաղկեդոնիկ հայերի ընտանիքում: Մարիամի քույրերից մեկը ամուսնացավ Թրակիայի Մեսենե ավանի արվարձանում մի փոքրիկ կալված ունեցող գաղթականի հետ, որ կոչվում էր Βαρθας ο Βρατζῆς (Վարդ Վրացի): «Վրացի» հայերեն բառը հունարեն տառերով է գրված: Այդ Վարդի կալվածք վարքում կոչվում է τὸυ Βρατζῆ (Վրացու): Եզրակացություն. եթե նա Վարդ է, ապա հայ է, եթե Վարդ է, բայց «Վրացի» վրացադավան հայ էր, իսկ նրան այդպես անվանող բնակչությունը հայ, հայադավան ու հայախոս (Մարիամ Նորավկայի վարքի ամբողջական թարգմանությունը հայերեն և նրա մասին ուսումնասիրությունը տե՛ս Բարթիկյան, Մամիկոնյան (՝) սուրբ Մարիամ Նորավկայի բյուզանդական վարքը, էջմիածին, ԺԲ, 1975, Ա, Բ, 1976):

3. Թորթումի շրջանի էգրեկ (Ագարակ) գյուղում վրացական եկեղեցու պատերի վրա 1006/1007 թթ. փորագրված լարիսայի և Մակեդոնիայի զորավար Գրիգոր պատրիկի՝ Սմբատ պատրիկի որդու հունարեն արձանագրությունը: Թեև նա արձանագրության մեջ իրեն վրացի է համարում (Ἰβηρ), բայց իր մեկանունը հիշում է որպես՝ Վիկացի (ΒΗΧΚΑΤΖΙ), Հունարեն արձանագրության մեջ հայերեն-ացի ածանցի գոյությունը կասկած չի թողնում, որ տվյալ «վրացին» հայ է: Հայտնի է, որ Անիի կառավարիչ Բագարատը նույնպես Վիկացի էր, իսկ նրա մասին աղբյուրներն, այդ թվում և Սկիլիցեսը, վկայում են, որ նա հայ էր (δοῦς Ἀρμενίος τῆς Ἰαγχαρτίας τοῦνομα): Այդ

մասին տե՛ս *Bartikian*, La généalogie, p. 261—262; նաև *Lemerle*, Nouvelles remarques, p. 177—181.

4. Աշխարհի արարչագործության 6543 (1035) թ. կրող մի հունարեն փաստաթուղթ, գրված Աթոնի Մեծ լավրայում, ստորագրել են 24 վանական: Առաջին ստորագրությունը պատկանում է առաջնորդ Թեոկտիստոսին, որ ստորագրել է, ինչպես բոլորը՝ հունարեն, բայց իր ստորագրության տակ նույնպես հարմար է գտել ստորագրել նաև հայերեն. «Իմ ձեռքս գրեցի, Թեոկտիստոս»: Թեոկտիստոսը, հավանաբար քաղկեդոնիկ հայ էր, «իբնը» (վրացի) ինչպես կոչում էին Աթոնում երկարնակ հայերին (տե՛ս Բարթիկյան. Թեոկտիստոսի հայերեն ստորագրությունը... էջ 68—71):

394ա. Սկիլիցեսը Գիորգիի մահը դնում է 1030-ի տակ՝ Ռոմանոս Արգիրոսի թագավորության օրոք: Իրականում նա վախճանվեց 1027 թ.:

395. Նասր իբն Մուսարաֆ առ-Ռավադիֆին:

396. Բերդի անունը տալիս է Սկիլիցեսը մի փոքր հետո՝ Մենիկոս (արաբ. ալ-Մանիբա, այժմ՝ Քալատ Մանիբա):

397. Ծագումով թուրք Անուշտեբին ալ-Դուգբերին, որ երկար ժամանակ եգիպտական զորքերի սպարապետն էր: Յահյա Անտիոքացու (նա նրան դայլամցի է համարում) և իբն ալ-Աթիրի գրչագրերում նրա անունը գրվում է ալ-Բերբերի, բայց Քեմալեղդինը միշտ գրում է ալ-Դոգբ-րի (տե՛ս Розен, Василий, стр. 379):

398. Մատթեոս Ուահայեցու համաձայն, Ռոմանոսը 479 թ. (1030) հարձակվեց Հալեպի մոտ գտնվող Ազազ բերդի վրա: Իր բանակում բացի հույներից, ամենայն հավանականությամբ, կային նաև հայկական զորամասեր, քանզի հրամանատարների թվում պատմիչը հիշում է Դավիթ կուրապաղատի վրանապահ Ապուբապին: Ե՛վ Հաստիվերցին, և՛ Ուահայեցին ընդգծում են Ռոմանոս կայսեր անդիջում քաղաքականությունը հայադավանների նկատմամբ, նրան համարում «խակամիտ», «յոյժ շարաբարոյ և կարի հայհոյիչ ուղղափառ (այսինքն՝ միաբնակ) հաւատոյ» (Արիստ. լատ., էջ 43, Մատթ. Ուտն., էջ 57): Սև լեռան շրջանում կայսրը հրաման տվեց գերել բոլոր միաբնակ վանականներին և զինվորագրել, որից հետո նրանց իր հետ վերցրեց՝ ընդդեմ արաբների: Միաբնակներից (հայերից և ասորիներից) բաղկացած զորամասերը «ոչ էին ընդ նմա միաբան և խորհէին զի ի ժամ սլատերազմին թողցեն զնա ի մէջ զօրացն Տաճկաց և ինքեանք զերեսս դարձուցանիցեն ի պատերազմէն, դի սատակեսցի անօրէն թագաւորն» (Մատթ. Ուտն., էջ 57): Նրանք այդպես էլ արեցին և պատճառ դարձան Ռոմանոսի պարտության: Ռոմանոսի բանակում եղած հայկական (ու վրացական) զորամասերի մասին կա Քեմալեղդինի ուղղակի հիշատակությունը (Розен, Василий, стр. 317—318):

Այս ճակատամարտի մասին տե՛ս *Canard*, Les sources arabes, p. 291:

399. Մանիակեսների ընտանիքը շատ հին է և, բացառված չէ, ունի հայկական ծագում: Դեռևս Միքայել III կայսեր ժամանակ (842—867) հիշատակվում է Կոստանդին պատրիկ էջ 'Αρμενίων (ի հայոց. տե՛ս Կոստանդին Միրանածին, էջ 44), որին լեռն քերականը (Գրամմատիկոս) Մանիակես է անվանում (*Leo Grammaticus*, *Chronographi a*, Bonnae, 1842 p. 236): Սկիլիցեսը Գեորգիոս Մանիակեսին անվանում է Տլուր բանակաթեմի զորավար, մի փոքր անց՝ Մերձեփրատյան քաղաքների զորավար, ինչպես և Ջոնարասը (*Zonar*. IV, p. 132):

400. Բնագրում՝ χάτω Μηδία: Հոնիգմանն սկզբում կարծում էր, որ Ստորին Մարաստանը նույնանում է Անձեացիքի և Մանազկերտի հետ (*Honigmann*, *Die Ostgrenze*, S. 10, An. 5), հետագայում հրաժարվելով այդ մտքից, մտադիր էր այն նույնացնել Ամիդի



հետ, քանզի Հովհաննես Մալալասը Ամիրը ('Λυβία) կոչում է նաև Ամիրիա (Αμυρδεια): Sk' u Honigmann, Une „Scala „geographique, p. 101: Կաթղանը Ստորին Մարաստանը նույնացնում է Եղեսիայի հետ (տե՛ս Καждан, Армяне, стр, 50, 157: Ավելի մանրամասն ծանոթ. 352):

401. Կատապան (κατεπανω) տիտղոսը հանդիպում է ըյուզանդական աղբյուրներում IX—XI դդ. և սկզբում նշանակում էր մի որոշակի ծառայության վերակացու: Կոստանդին Միրանաթինը (էջ 235) այդ տերմինը նույնացնում է վաղ շրջանի magister militum-ի հետ: Դուքսի նման կատապանը զորահրամանատար է և գլխավորում է բանակաթեմում տեղակայված մի զորամաս՝ զորավարի հրամաններին ենթակա: X դարից կատապանը սահմանամերձ մեծ բանակաթեմի կառավարիչն է: X դարի երկրորդ կեսից կատապան տերմինն ստանում է նոր բովանդակություն՝ դուքսին համանման, ձևականորեն նրանցից ցածր, բայց իրականում այդ տարբերությունն էական նշանակություն չունենր կյանքում. նույն դիրքերը սովորաբար տրվում էին և՛ դուքսերին, և՛ կատապաններին: XI դ. կատապան և դուքս տիտղոսները կրողները նույն ֆունկցիաներն ունեին և անգամ միևնույն անձնավորությունը հիշվում է ալդ երկու տիտղոսներով: Անտիոքի կառավարիչ հաչատուրին Սկիլիցեսն անվանում է դուքս, իսկ Ատտալիատեսը՝ կատապան: Դուքսն ու կատապանը ենթարկվում էին սխոլերի դոմեստիկոսին: Կատապան տիտղոսը XI դ. վերջից անհետանում է: Կարծիք է հայտնվել, որ արևմտաեվրոպական «կապիտան»-ը (capitano, capitain, captain) ծագում է ըյուզանդական կատապանից:

Հայկական վիճական արձանագրություններում ևս կատապանն ու դուքսը օգտագործվում են միևնույն իմաստով: Բագարատ Վիկացին իրեն անվանում է «արևելից կատապան» («Դիվան հայ վիճագրության», պր. Ա, Երևան, 1966, էջ 37), իսկ Վեստ Սարգիսը՝ «արևելից կատապան»-ի փոխարեն օգտագործում է «դուկ արևելից»-ը (Կոստանյան, Վիճական տարեգիր, էջ 17):

402. Միսթիան քաղաք էր Արմենիականների բանակաթեմում:

403. Ասորիքի Տրիպոլիս քաղաքի ամիրա Հասան իրն ալ Մուֆարրիգ իրն ալ Ջարրախ, որին Կեկավմենոսն անվանում է Ապելգարախ: Նա, հավանաբար, շորս անգամ եղավ Կոստանդնուպոլսում: Նրա երրորդ այցելությունն, ըստ Հոնիգմանի, տեղի ունեցավ 1032 թ., շորրորդը՝ 1033—1034 թթ. (Die Ostgrenze, SS. 109, 113—116): Կեկավմենոսը դրում է, որ նա հաճախակի գալով Կոստանդնուպոլիս, դարձավ արհամարհանքի առարկա, քաղաքում պահվեց երկու տարի՝ աքսորի և մահապատժի սպառնալիքի մեջ և հազիվ ազատ արձակվելով, վերադարձավ իր երկիրը („Советы и рассказы“, стр. 312):

404. Շվայտ կյանքից որովայնային հիվանդություն չի առաջանա: Բնագրում տրոփ է, որ պետք է ուղղել՝ տրոփ (սնունդ, կերակուր):

405. Բնագրում՝ οίκον, որ բառացի տուն է նշանակում, բայց հաճախ ունի προάστειον-պոաստինի, ագարակի նշանակություն: «Տունը» ֆեոդալի ագարակի հենց կենտրոնն էր (տե՛ս Καждан, Византийское сельское поселение, стр. 233: Նույնի՝ Формирование феодального поместья, стр. 102):

406. Կոստանդին V պատկերամարտ կայսր (741—775):

407. Պետրիոնի Սբ. Եվփեմիայի վանքը: Այստեղ են թաղված հայազգի շատ գործիչներ, Վասիլ 1-ի ընտանիքի անդամները, այդ թվում և Վասիլ 1-ի մայր Պանկալոն, Վասիլի երկու եղբայրները՝ Մարիանոսն ու Սմբատը, դստերը Անաստասիան, Աննան և Հելենեն, ինչպես և Կոստանդին Միրանաթինի մայր Զոե Կարբոնոպսինան:

408. Բյուզանդացիներն այդպես էին անվանում Շիրակի Բագրատունի թագավորներին: Բայց այստեղ պարզ չէ ո՞ւմ նկատի ունի, Հովհաննես-Սմբատին, թե՛ Աշոտին: Այդ ժամանակ Հայաստանում իշխում էին երկուսն էլ: Քանի որ տվյալ ժամանակաշրջանում Բյուզանդիան օգնում էր Աշոտին՝ ընդդեմ Հովհաննեսի, հավանական է, որ Ռոմանոս կայսրը խնամհացել էր Աշոտի հետ:

409. Բյուզանդիայում որբանոցներ կային շատ վաղ ժամանակներից: Նրանք հիշվում են դեռևս Կոստանդ II (337—361) կայսեր ժամանակներից: Որբանոցների գլուխը կանգնած անձնավորությունը կոչվում էր օրֆանոտրոֆոս, որ բառացի նշանակում է որբերին խնամող՝ սնող: X դ. օրֆանոտրոֆոսը գտնվում էր արքունիքի 60 բարձրաստիճան պաշտոնյաների թվում: Ֆիլոթեոսի «Կլետորոլոգիոնում» (899) նա գրավում էր 56-րդ տեղը: Նա ուներ անթիպատ-պատրիկի, պատրիկի կամ պրոտոսպաթարի պատվաստիճանը: Օրֆանոտրոֆոսը քաղաքացիական պաշտոնյա էր և ոչ եկեղեցական աստիճանավոր: Նա իր ենթակայության մեջ ուներ մի շարք այլ պաշտոնյաներ: Բյուզանդիայի պատմության մեջ ամենանշանավոր օրֆանոտրոֆոսը Ռոմանոս III Արգիրոսի ժամանակ հանդես եկած և այդ կայսեր հաջորդած վեհապետների ժամանակ ևս գործած այս Հովհաննես Օրֆանոտրոֆոսն էր, որին հիշատակում է անգամ լատիվերցին «Որթանոտոս» ձևով: Օրֆանոտրոֆոսների մասին տե՛ս. Guiland, L'Orphanotrophe, pp. 205—221: Հատկապես Հովհաննես Օրֆանոտրոֆոսի մասին՝ Janin, Un ministre byzantin.

410. Ինքնասպանների գերեզմանոցում թաղվելն անպատվաբեր էր համարվում:

411. Ռագուզայի (սլավ. Դուբրավայի) բնակիչների մասին է խոսքը:

412. Բնագրում՝ Ἀπομαρξάνης: Նույնանում է Մատթեոս Ուռհայեցու նսրտոլի (Նսար էդ-դին Դաուլայի) հետ:

413. Մեծ եկեղեցին Ուռհայեցին անվանում է «սուրբ Սոփի» (էջ 61):

414. Եղեսիայի առումը բյուզանդացիների կողմից մանրամասն նկարագրված է Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ: Եղեսիան այն ժամանակ երկու ամիրանների ձեռքում էր գտնվում՝ իրար թշնամի Շեպլի և Ուտայրի: Ուտայրին հաջողվում է սպանել Շեպլին, սակայն վերջինիս բերդապահներից մեկը՝ Սալման անունով (Սկիլիցեսի Սալմանը և Յահյա Անտիոքացու Սուլեյման իբն-ալ-Կուրջին (ալ-Թուրքին), նրան ընդդիմակայեց, բայց հաջողության չհասնելով, բերդը հանձնեց Նփրկերտի ամիրա Նսրտոլին: Վերջինս ոմն ռայիս Պայելի ուղարկում է տիրանալու Սալմանի հանձնած բերդին: Պայելը սպանում է Ուտայրին և տիրանում ողջ Եղեսիային: Ուտայրի կինը Նսրտոլի դեմ է հանում ողջ արաբական աշխարհը և ստիպում է նրան Ուռհայի բերդը հանձնել Սալմանին և հեռացնել այնտեղից Պայելին: Բայց Ուտայրի կինն ընդարվում է և Սալմանի հետ, որի վրա վերջինս «առաքեացի Սամուսաթ առ Մանիակ իշխանն Հոռոմոց, որ անուանեալ կոչէին Գէորգ. գրեաց առ նա Սալման և ասէր. «Եթէ առցես ի Հոռոմոց թագաւորէն ինձ իշխանութիւն և գաւառս, ես տաց զՈւռհա ի ձեռս քո»: Նրանք համաձայնության են դալիս և Մանիակներ ոտք է դնում Եղեսիա (Մատթ. Ուռհ., էջ 60—64: Հմմտ. Արիստ. Լաստ., էջ 44—45), ու դառնում քաղաքի առաջին բյուզանդացի կառավարիչը: Եղեսիան արաբների ձեռքում էր 641 թվականից: Եղեսիայի առման մասին տե՛ս նաև Michel le Syrien, Chronique, t. III, p. 147: Նորագույն մենագրական ուսումնասիրությունը Եղեսիայի վերաբերյալ՝ Սելեկյանների կողմից քաղաքի հիմնադրումից մինչև 1146 թ. հետևյալն է. Segal, Edessa:

415. Ըստ Յահյայի, Քրիստոսի նամակը քաղաքի կառավարիչ Սուլեյմանը բերեց Կոստանդնուպոլիս՝ Ռոմանոս կայսեր: Պատմիչը գրում է երկու նամակի մասին՝ Աբգա-



րի, ուղղված Քրիստոսին, և Քրիստոսի պատասխանի՝ Արդարին: Նրա ասելով այդ նամակներն ասորերեն էին, գրված մագաղաթի վրա և թարգմանվեցին հունարեն, իսկ հունարեն թարգմանողը միաժամանակ Յահյայի խնդրանքով թարգմանեց նաև արաբերեն: Յահյան իր գրքում բերում է Արդարի նամակի թարգմանությունը (տե՛ս *Розен, Василий*, стр. 72—73):

416. Ագիդի մասին տե՛ս վերը, էջ 80:

417. 3600 դահեկան:

418. Հայտնի չէ Բաբելոնի տակ ի՞նչը նկատի ունի:

419. Ամենայն հավանականությամբ, նույնանում է Դյուրախիոնի բուլղար կառավարիչ Խրիսելիոսի հետ: Հայր Խրիսելիոսը Վասիլից խնդրել էր իր երկու որդիների համար պատրիկի պատվաստիճան: Գրիգոր Մագիստրոսն այս նիկողայոսին նկատի ունի իր մի տաղի մեջ, որտեղ խոսք է լինում Հայաստան եկած «ավարարող, ավերող նիկողասի» մասին, որին նա «գիշերաբուն բուլղարաց» է անվանում (մանրամասն տե՛ս Բաղրիկյան, Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման շուրջը, էջ 67—72: Նույնի՝ *О болгарском войске*, стр. 95):

420. Սկիլիցեսը այս դեպքը վերագրում է Լեոսանոս կայսեր թագավորության ժամանակաշրջանին և հիշատակում Մանիակեսի կողմից Նդեսիայի գրավման տարում (1032): Բյուզանդացիների կոտորածը Բերկրիում, սակայն, Արիստակես Լաստիվերցին հիշատակում է Միքայել IV Պափլագոնացի կայսեր ժամանակ. «Ի սորա թագաւորութեանն,— գրում է նա,— եղև մեծ կոտորած գորացն Հոռոմոց՝ ի բերդաքաղաքն որ կոչի Բերկրի» (էջ 48): Ինչպես երևում է հայ մատենագրի պատմածից, Բերկրին գրավել էր Վասպուրականի գավառապետ (կատապան) Կավասիլասը: Այգբանը հաստատում են և արաբական աղբյուրները, տվյալ դեպքը թվագրելով հիջրի 425 (1033—1034) թվականով (տե՛ս Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները, էջ 201), և ոչ թե պատրիկ Նիկոլայոս Խրիսելիոսը, ինչպես գրում է Սկիլիցեսը և ոչ սարակինոս Ալիմից, այլ ամիրա Խտրիկից, որը, հավանաբար, նույնանում է արաբական աղբյուրների հիշատակած Աբու-լ-Հայջա իբն Ռաբիբ ալ-Դաուլայի հետ (Տեր-Ղևոնդյան, նույն տեղում, էջ 201), որ հոռոմոց զորքերի կոտորածը (24 հազար հոգու) տեղի ունեցավ Վասպուրականի կատապան Կավասիլասի հաջորդի օրոք (Արիստ. Լաստ., էջ 48): Նրա անունը հայ պատմիչը չի տալիս: Լաստիվերցին վկայում է նաև, որ բերդաքաղաքը վերագրավելու գործում Բերկրիի ամիրային օգնեցին «պարսիկները»․ «ազդ առնէ,— գրում է նա,— առ գլխաւորս Պարսից աշխարհին: Որք յանկարծակի ձայն տուեալ միմեանց՝ ի մի վայր ժողովեցան, և հասեալ ի վերայ քաղաքին պաշարեցին զնա պատնիշաւ... (և) սուր եղեալ կոտորեցին արս իբրև քսան և շորս հազար» (էջ 48): Ինչ վերաբերում է քաղաքի ամիրային, ապա, ի տարբերություն Սկիլիցեսի, որի համաձայն նրա իր որդով հանդերձ հոռոմայեցիները մահապատժի ենթարկեցին, Լաստիվերցու ասելով նա պարսից զորքերով, գերությամբ ու թալանով ողջ առողջ «չոգան յաշխարհն իւրեանց» (նույն տեղում):

Մատթեոս Ուռհայեցու ասելով քաղաքը գրավեց ոչ թե Կավասիլասը, ինչպես գրում է Լաստիվերցին, այլ «իշխանն հալոց Գանձի» (էջ 74) և նրա գլխավորած «զօրքն Հայոց» (էջ 75): Փաստերի համադրումը ցույց է տալիս, որ հայերն, անկասկած, մասնակցել են Բերկրիի գրավմանը իրենց իշխան Գանձիի գլխավորությամբ: Կ. Յուզբաշյայանը անդրադառնալով հալոց իշխան Գանձիի անձնավորությանը, վստահորեն պնդում է, որ նա նույնանում է Նիկոլայոս Խրիսելիոս բուլղարի հետ, և որ Գանձին բուլղարահայ էր

(տե՛ս «Повествование», стр. 153), ուշադրություն չդարձնելով, որ հրիսեյիտոսները բուլղարական հայտնի ընտանիք էին, իշխում էին Դյուրախիոնում և պատմության մեջ հայտնի են այդ ընտանիքի բազմաթիվ ներկայացուցիչներ (հմմտ. Каздан, Армяне, стр. 123), որոնցից մեկը, Նիկոլայոսը, Մոզլենում գերի ընկած բուլղարների գլխավորությամբ եկավ Վասպուրական (Бартикян, О болгарском войске, стр. 95): Իր միտքը Յուզբաշյանն ուզու է հաստատել նաև գանձ և չքսո՛ճ բառերի, իր կարծիքով, ունեցած իմաստային նույնությամբ (բայց չքսո՛ճ գանձ չի նշանակում, այլ ոսկի, գանձը կլինի *θησαυρός*) բացի այդ, Նիկոլայոսի մականունը *Χρυσός* չէ, այլ *Χρυσήλιος*, որը թարգմանվում է «ոսկե արև»: Մի կողմ թողած լեզվաբանական անհաջող մեկնաբանությունները, պետք է նաև նկատի ունենալ այն հանգամանքը, որ Գանձին սպանվեց մարտի դաշտում, այնինչ հրիսեյիտոսը պարզապես պաշտոնանկ արվեց: Գևորգ Աբգարյանը Գանձի-հրիսեյիտոս նույնացումը, «հիացմունքի արժանի» (!) է համարում (տե՛ս Գ. Աբգարյան, Ո՞վ է Գրիգոր Մագիստրոսի հիշատակած Նիկողոս զորավարը, «Լրաբեր», № 9, 1971, էջ 46, ծանոթ. 21):

421. Լաստիվերցին այդ դեպքը դնում է Միքայել IV-ի թագավորության երկրորդ տարում (էջ 49): Նիկետաս Պեգոնիտեսին Ադոնցը նույնացնում է Ուոհայի դուքս Փիլոնիտի հետ (Մատթ. Ուոհ., էջ 157), որ հիշվում է 1065 թ. դեպքերի առնչությամբ (Adontz, Notes, p 154), այսինքն Բերկրին գրավող Պեգոնիտեսից առնվազն 30 տարի հետո: Ուոհայեցին 1056 թ. դեպքերի առնչությամբ հիշում է մի «իշխան Հոռոմոց», որին անվանում է «Պիզզոնիտ», որ Փիլոնիտի (Պիլոնիտի) աղավաղումը պետք է համարել:

422. Վրաց թագավոր Գիորգի I-ի (1014—1027):

423. Տե՛ս ստորև, ծանոթ. 425:

424. Խոսքը Ափխազիայի գլխավոր բերդաքաղաքի Անակոպիայի մասին է, որտեղ դեռևս VI դարում ափսազ պատմաբան Անչաբաձեի կարծիքով, Հուստինիանոս I-ը տաճար կառուցեց (տե՛ս *Анчабадзе*, Из истории, стр. 27): Գտնվում է ժամանակակից Նոր Աթոնի մոտ: Եղել է Ափխազիայի մայրաքաղաքը և երկրի կրոնական կենտրոններից մեկը: «Մատիանե Քարթլիսան» Անակոպիան համարում է Ափխազիայի գլխավոր բերդը (տե՛ս *Каухчишвили*, Грузинские источники, стр. 94) և այդ աղբյուրի համաձայն Գեմետրեն էր, որ գնաց «հունաց կայսեր մոտ» և նրան տվեց Անակոպիան (*Анчабадзе*, նույն տեղում, էջ 179): Բերդը հիշում է Մխիթար Այրիվանեցին (էջ 51)՝ «Անակոր բերդ» ձևով:

425. Գեմետրիոսը Գեորգիոսի որդին էր նրա երկրորդ ամուսնությունից ծնված: Սկիզբնս նրա (երկրորդ) կնոջ՝ Ալդեին ալան է համարում, բայց գտնում են, որ նա օսեթ էր (*Анчабадзе*, Из истории, стр. 179):

426. Բոննի հրատարակությունը տալիս է 6542 (1034) թ., որ ճիշտ է: Թուրնի քննական բնագիրը տալիս է 6547 (1039) թ., որ տպագրական սխալ պետք է համարել, քանզի հրատարակիչը աշխարհի այդ թվականի դիմաց տալիս է մ. թ. 1034 թ.:

427. «Պանթեոններ» անունով զորամաս հիշատակված է բյուզանդական աղբյուրներում (տե՛ս *Кулаковский*, Византийский лагерь, стр. 70): Կեկավմենոսը հիշատակում է ոմն *πανθεῶτην* Ζεπέ («Советы и рассказы», стр. 174): Աղբյուրներում հանդիպում է *Πάνθεα* անունով վայր և ենթադրվում է, որ հիշյալ զորամասը համարված էր այդ վայրի բնակիչներից («Советы и рассказы», стр. 432):

428. Հոռոգի մասին «տե՛ս Կոստանդին Միրանաթին», էջ 219: Սենատորներին տրվող *ρόγα*-ն Լաստիվերցին անվանում է «արքունատուր պարգև» (էջ 45), իսկ Ասողիկը՝



«արքունատուր պատարագ» (էջ 101): Հոռոգի վերաբերյալ վերջին կարևոր ուսումնասիրությունն է. *Lemerle, „Roga“, p. 77—100*. Սենատոր և սենատ հասկացությունները Սկիլիցեսի մոտ բավական ընդհանուր են, նրանց տակ նա հասկանում է աստիճանավորներին ու բարձր պաշտոնյաներին ընդհանրապես (տե՛ս *Guilland, Le Preposite, p. 349*):

429. Ռոմանոսի սպանությունից մասին հիշատակում է և Հաստիվերցին. «հրաման տայ (Ռոմանոսը) ոսկի լականաւ ջուր պատրաստել առ ի լոգանալ նմա: Եւ իրրև եմուտ յոսկի ծովակն յցեալ շերմ ջրով, սպասաւորքն բուռն հարեալ զգիտոյ զլիտոյ նորա ծածկեցին ընդ ջրովն մինչև վճարեցաւ ի կենաց՝ թագուհւոյն կամակից լինելով առնելեացն» (էջ 45—46): Մի քիչ հետո պատմիչը ցույց է տալիս, որ Միքայելը ևս մասնակցել է կայսեր սպանության. «ի սպանողաց մի գսա ասեն լինել» (էջ 46): Մատթեոս Ուռհայեցին գտնում է, որ Ռոմանոսին թագուհին թունավորեց (էջ 64—65):

430. Խոսքը Պերիրելպտոսի սր. Աստվածածնի վանքի մասին է: Կոստանդնուպոլսի ժամանակակից Սամաթիա թաղամասի հայկական սր. Գեորգ եկեղեցին հենց բյուզանդական Պերիրելպտոս վանքն է (*Janin, La géographie ecclesiastique, p. 227—231*): Թուրքերեն անվանում են Սուլու Մանաստրո Մինչև 1641 թ. այնտեղ էր գտնվում հայոց պատրիարքարանը, զրանից հետո այն տեղափոխվեց Քում-Քափու, որտեղ և գտնվում է մինչև օրս: Վանքը հայերին տրամադրվեց ըստ ոմանց՝ 1543 թ., սուլթան Սուլեյման Մեծի կողմից (1520—1566): Բանասեր Հ. Պերպերյանը բազմաթիվ աղբյուրների հիման վրա եկել է այն եզրակացության, որ Պերիրելպտոսի վանքը հայոց պատրիարքության աթոռանիստն էր շուրջ 1461-ից և նրանց էր տրամադրվել սուլթան Մեհմեդ II-ի կողմից (տե՛ս Պերպերյան, Օսմանյան քանի մր վավերագիր, սյունակ 723—728: Նաև նույնի՝ *Peribleptos, p. 145—149*):

431. Բառացի ենք թարգմանում: Հունարեն *οἰκος*-տուն ունի շատ ավելի ընդարձակ նշանակություն: Տե՛ս ծանոթ. 405:

432. Միքայելի դիվահարությունից մասին գիտե նաև Հաստիվերցին. «արաւ ի դիւէ», «մինչ ի վախճանն ոչ հեռացաւ ի նմանէ այսն որ լլկէր զնա» (էջ 47):

433. Տե՛ս ծանոթ. 431:

434. Բնագրում՝ *οὗκ ὡσαο ἀλλ' ὕπαρ*: Հմմտ. «Ողիսական», ԺԹ, 549:

435. Խոսքը Փոքրասիական Օլիմպոսի մասին է և ոչ Թեսալիայի:

436. Քննական բնագրում՝ *σεβαστος*, մեր համոզմամբ ճիշտ է Բոննի հրատարակությունը՝ *Ἀβασγός* (արասգոս-ափխագ): Մի շարք ձեռագրեր տալիս են, *Ἀβασγός* ընթերցումը, Ջոնարսն էլ, որ Սկիլիցեսին է օգտագործել, գրում է *Παρχρατικός ἄρχων Ἀβασγίας* (*Zon., IV, p. 139*): Սկիլիցեսի բնագրում ոչ մի տեղ (բացի նշվածից) *σεβαστος* բառը չի հանդիպում, և այս մեկն էլ պետք է գրչի սխալ համարել:

437. Սկիլիցեսը Եղեսիայի կառավարչի պաշտոնում Մանիակեսին փոխարինողին անվանում է Լեոն Լեպենդրինոս, այնինչ Մատթեոս Ուռհայեցին գտնում է, որ նրան փոխարինողը Ապուբապն էր, Դավիթ կուրապաղատի վրանապահը (էջ 64):

438. Հաստիվերցին գիտե, որ Անտիոքի կառավարչի պաշտոնին Միքայելը նշանակել էր իր եղբոր, բայց չի տալիս անունը: «Եւ զմինն,—գրում է նա,— անուանէ դեմեսլիկոս, և առաքէ ի մեծն Անտիոք զՏաճկաստանի և զհարաւային կողման զհոգան յանձն առնելով նմա» (էջ 47): Սկիլիցեսը չի ասում, որ Անտիոքի զորավար Նիկետասը դոմեստիկոս էր, նա դոմեստիկոս է անվանում նրա եղբայր Կոստանդինին և հնարավոր է, որ Հաստիվերցին նկատի ունի ոչ թե Նիկետասին, այլ Կոստանդինին, որը փոխարինեց Նիկետասին՝ Անտիոքի կառավարչի պաշտոնում:

439. Մի փոքր առաջ Գեորգիոս Պրովատասին հիշատակել էր միայն մականվամբ:

440. Բնագրում՝ Χαγε: Հունարեն ոչինչ չի նշանակում, գուցե «Հայ» է:

441. Եթե անունը Վարգաս է, ապա հայ է: Մականունը՝ Πιτζης ոչինչ չի նշանակում հունարեն: Գուցե հայերեն «բիճ»-ն է (ապօրինածին):

442. Բնագրում Νεσιθαλαβος και 'Ιεροσθλαβος, այսինքն՝ Մստիսլավ և Յարոսլավ: Զենիսլավի տակ ենթադրվում է Իզյասլավը (տե՛ս Καждан, Экспедиции Скилицы, стр. 544: Տե՛ս և Shepard, Byzantinorussica, p. 219 sq.):

443. Սկիլիցեսը այս վարչամակը (ինչպես և Քրիստոսի նամակը Աբգարին) մի փոքր առաջ էլ հիշեց, ի թիվս այն սրբությունների, որոնք տարվեցին Դալասսենոսի մոտ: Խոսքը ըստ պանդոլոթյան Քրիստոսի կողմից Եղեսիայի Աբգար թագավորին ուղարկված վարչամակի մասին է, որի վրա կար Տիրոջ անձնագործ պատկերը: 944 թ. նվիրվեց Ռոմանոս Լակապենոս կայսեր (մանրամասն տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 177—194: նաև Weitzman, The Mandyliion.

444. Վրաց թագավոր Բագարատը «էքսուսիսատես»-ը վրաց թագավորի բյուզանդական պաշտոնական անվանումն էր: Տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 152:

445. Խոսքը Տայքի կուրապաղատ Դավթի հողերից XI դ. 20-ական թթ. կազմակերպված Իբերիա բանակաթեմի մասին է:

446. Միքայել Իասիտեսը, հայկական աղբյուրների Ասիտը:

447. Բոննի հրատարակության մեջ՝ «արևելից բոլոր տազմաններով»:

448. Այս մարտերում Սիկիլիայի սարակինոսների՝ դեմ բյուզանդական բանակում ծառայում էին ի միջի այլոց և «պավլիկյաններ» (տե՛ս Annales Barennes, In Monumenta Germaniae Historica, Scriptores. t. V. p. 55):

449. Այսինքն՝ վրացադավան հայ: Ըստ Ուոհայեցու, Գեորգիոս Մանիակեսին Եղեսիայի կառավարչի պաշտոնում փոխարինեց Դավիթ կուրապաղատի վրանապահ Ապուբապը (էջ 64), բայց ըստ Սկիլիցեսի նա Լեոն Լեպենգրինոսն էր, որն այդ պաշտոնում էր դեռևս 1037 թ.: Սկիլիցեսը 1038 թ. որպես Եղեսիայի կառավարիչ հիշում է վերոհիշյալ Վարազվաչին: Լորանը հարց է տալիս. Ապուբապն ու Վարազվաչեն նույն մարդը չե՞ն (տե՛ս Laurent, Des Grecs aux Croisés, p. 82—83): Վերջերս Վ. Շանդրոսկայան էրմիտաժի բյուզանդական արձճե կնիքների հավաքածուում հայտնաբերեց այս Վարազվաչի մի կնիքը, որով պարզվում է, որ Վարազվաչեն անուն չէ, այլ ազգանուն, որ հիշյալ անձնավորության անունը Թոննիկ է: Կնիքի վրա գրված է. Κυριε βοθηει τω σω δουλω Τορνικιω πρωτοσταθαριω και στρατηγω τω Βαραζβατζε (Տե՛րօգնյա՛ քո ծառային պրոտոսպաթար և զորավար Թոննիկ Վարազվաչին): Տե՛ս Шандровская, Одно уточнение, стр. 46.

450. Բոննի հրատարակության մեջ՝ երկու հազար:

451. Աերիկոնը (օդի հարկ) Բյուզանդիայում գանձում էին Հուստինիանոս I-ի ժամանակներից: Սկզբնական շրջանում վճարում էր համայնքի բնակչությունն իր տարածքի վրա կատարված հանցագործությունների համար: XI դ. վերածվել էր բնակչությանից կանոնավոր կերպով դանձվող հարկի: Նրա մասին մանրամասն տե՛ս Dölger, Das αεριχον: Հովհաննես Օրֆանտրոֆոսի հարկային քաղաքականության մասին. Литаврик, Налоговая политика, стр. 85:

452. Պեդիադիտեսի մասին հետաքրքիր մի պատմվածք ունի Կեկավմենոսը: «Սիկիլիայի կատապան Վասիլ Պեդիադիտեսը,— գրում է նա,— մի քանի օր ազատ ժամանակ ձեռք գցելով, նարդի (ταϋλαν) էր խաղում, մի բան, որ չվրիպեց կայսեր (Միքայել IV Պափլագոնացու) ուշադրությունից: Վերջինս նրան գրեց, թե «ինչպես տեղեկացավ իմ թագավորությունը, նարդիում հաջողությունների ես հասել» («Советы и



рассказы» стр. 158):

453. Կատակալուն Կեկավմենոսը, ծագումով կոլոնիացի հայ (Կաթղանը գրում է, որ նրա հայկական ծագումն անվիճելի է), որ փոքր անց գարձավ զորավար: Նա Հայաստանի և Իբերիայի միացյալ կատապանությունից ղեկավարն էր: Միքայել Իասիտեսից հետո շուրջ 1050 թ., գարձավ Արևելից ստրատելատ, 1056-ին՝ Անտիոքի գուբս, 1057-ին ստացավ կուրապաղատի տիղոսը: Հայկական աղբյուրներում կոչվում է Կամենաս (Արիստ. Լաստ., էջ 63, Մատթ. Ուտհ., էջ 104, 107): 1169 թվակիր հայկական Ավետարանի մի հիշատակարանի մեջ հիշվում է այս Կամենասի տոհմածառը: Այնտեղ ասված է, որ Սասունի իշխան Վիգենի գուստր Կատային կնություն տվեցին «Շահինշահի որդույ Դրիգորի, թոռին Կատակալոսի, որգոյ Կամենի մեծի. ի Դեգեաց գաւառ, ի մեծ ամրոցն որ կոչի Սագուկ» (Ալիշան, Հայապատում, էջ 394): Մի ժամանակ Կատակալուն Կեկավմենոսին էր վերագրվում «Ստրատելիտն» («Պատմություններ և խորհուրդներ») նշանավոր երկի հեղինակությունը, որ այժմ մերժված է գիտության մեջ: Մանրամասն տե՛ս „Советы и рассказы“, стр. 36—39:

454. Զատկից Պենտեկոստե (Հոգեգալուստ) ընկած ժամանակամիջոցի մեջտեղում նշվող տոներ, Զատկից 25 օր հետո:

455. Միքայել կայսեր՝ Թեսաղոնիկե գնալու մասին գիտե և Լաստիվերցին, որք ձեռքում, հավանաբար, եղել է կայսեր հակառակորդ գիրքերում կանգնած հեղինակի աղբյուր, քանզի Միքայելի Թեսաղոնիկե գնալը նա կապում է ոչ թե նրա՝ սբ. Դեմետրիոսից բուժում ստանալու հետ. «բայց ասեն,—գրում է նա,—և այլ պատճառս, եթէ վասն զի շէր անգ նմա թագաւորութիւնն, վասն որոյ երթեալ ի քաղաքն թեսաղոնիկեցւոց առ կին մի կախարդ... տուեալ գինքն ի ծառայութիւն հօրն ամենայն շարեաց», «զի յաճախ թագաւորն ի Թեսաղոնիկն կայր, զոր կարծէին առ կախարդին լինել» (էջ 47):

456. Ստեփան-Վոյխսլավը (Կեկավմենոսի «սերբ Տրիբունիոսը» «Советы и рассказы», стр. 168) Դուկլայի (Դիոկլիա) իշխանը (1040—1052): Բուլղարիայի նվաճումից հետո հարևան սերբական շրջանները կայսրությունից վասալական կախման մեջ ընկան: Նրանց իշխաններից Ստեփան-Վոյխսլավը 1034 թ. ապստամբություն բարձրացրեց, բայց պարտվեց: Ստեփանը գերի ընկավ և տարվեց Կոստանդնուպոլիս: Նրա տիրույթները տրվեցին Թեոփիլոս էրոտիկոսին, բյուզանդական կառավարչին: Ստեփանը մայրաքաղաքից փախավ 1040 թ., եկավ իր հայրենիքը և քեց բյուզանդական կառավարչին: Նրա մասին հանգամանորեն խոսում է Կեկավմենոսը (նույն տեղում, էջ 168, 406—407):

457. Յիրեչեկը այս Թեոփիլոս էրոտիկոսին համարում է Դյուրախիոնի դուբս, իսկ Շլյումբերժեն՝ Դալմատիայի զորավար, այնինչ Վ. Լորանը նրան Սերբիայի կառավարիչ է համարում (տե՛ս Laurent, Le thème byzantin de Serbie, p. 191):

458. Բնագրում՝ χριτής (διδαστης): Բյուզանդիայում կար մի քանի կարգի դատավոր՝ բանակաթեմային, զինվորական, մայրաքաղաքի և այլն: Սկիլիցեսի մոտ խոսքը, հավանաբար, բանակաթեմային դատավորի մասին է, որպիսիք կային յուրաքանչյուր մեծ ու փոքր բանակաթեմերում: Նա բանակաթեմի զորավարի հետ բարձրագույն նահանգային վարչության ներկայացուցիչն էր, սկզբում զորավարին ենթակա, X դարի վերջից՝ նրանից անկախ: «Բասիլիկաների» (Մակեդոնական հարստության դատաստանագրքի) մի մեկնիչ գրել է, նկատի ունենալով XI դարը, թե «հնում յուրաքանչյուր բանակաթեմ երկու մարդ էր ուղարկվում, մեկը քաղաքացիական, այսինքն՝ մասնավոր հարցերը քննելու (αριστεν), որը կրիտես էր կոչվում, մյուսը՝ դուբսը, որն իր ենթակա-

յությանն ուներ զինվորներին» (տե՛ս *Ahrweiler, Recherches*, p. 69): Այս շրջանում բանակաթեմային դատավորի իրավասությունների մեջ էին գտնվում, նախ և առաջ, ինչպես անունն է վկայում, շրջանի դատավարութունը, նա վարում էր գույքային, մասնավոր ու քրեական գործերը: Նա իր դատավարական գործունեության համար պարտավոր էր տեղյակ պահել Կոստանդնուպոլսի կենտրոնական արդարադատական մարմինը, որը գլխավորում էր Մոնոմախի ժամանակներից սկիզբ առնող բարձրաստիճան պաշտոնյան՝ ἐπὶ τῶν χριστιανῶν անվան տակ: Կրիտես-դատավորի ենթակայության մեջ էին գտնվում պրոտոնոտարը, χρονοτελετής-ը, պրակտորը, դիեկետեսը, լոգարիաստեսը՝ հարկահավաքման պաշտոնյաները, ինչպես նաև քարտուղարներ ու տաքսետոսներ (ոստիկանության գործակալներ): Դատավորն իր պարտականությունները կատարելիս գործակցում էր տվյալ նահանգի զինվորական պաշտոնեության հետ, բայց նրանից անկախ էր: Բանակաթեմային դատավորի մասին տե՛ս *Скабаланович, Византийское государство, стр. 187—190; Литаврин, Болгария и Византия, стр. 303—304; Ahrweiler, Recherches*, p. 67—78:

XI դ. հայկական աղբյուրները հիշատակում են Բյուզանդիայի կողմից նվաճված Հայաստանում գործող դատավորների մասին: «Տիրէ (Վասիլ II-ը 1000—1001 թթ.) բազում դաւառաց և բերդից և քաղաքաց: Եւ կացուցանէ ի վերայ նոցա գործակալս և դատաւորս և վերակացուս» (Արխտ. Լաստ., էջ 24): Թոնդրակեցիների շարժման առնչությամբ նույն պատմիչը հիշում է կայսեր կողմից ուղարկված մի դատավորի մասին. «առաքի ի թագաւորէն դատաւոր իրաւանց աշխարհին, որում անուն էր Եղիա» (էջ 130): Սրա մոտ է գնում իշխան Վրվեոր բողոքելու, որ եպիսկոպոս Սամուելը 1011 թ. և այլ եպիսկոպոսներ «զիմ տունն յաւարի տարան, և զգիւղն աւերեալ հրդեհ արարին» (նույն տեղում):

459. Մինչև վերջերս ապստամբ Պետրոսի մականվան ընդունված ձևը Դելյան էր: Այժմ գտնում են, որ Օդելյան է, որ բյուզանդական աղբյուրների ο Δελιανος-ի օ-ն հոդ չէ, այլ արմատական: Օդելյան-Դելյանը նախկին արևմտա-բուլղարական թագավորության բնակչության 1040—1041 թթ. բարձրացրած ապստամբության ղեկավարն էր: Այդ ապստամբության, բացի բուլղարներից, մասնակցել են նաև սլավոններ, վալախներ, ալբանացիներ և Բյուզանդական կայսրության արևմտյան նահանգների հունական բնակչության մի մասը: Ապստամբությունը տարածվեց Դյուրախիոնից Սոֆիա և Դանուբ գետից մինչև Ատտիկա: Առիթը սլետական հարկերի բարձրացումն էր և նրանց բնամթերայինից դրամականի վերածվելը: Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ դա ապացույց է Բուլղարիայում դրամական հարաբերությունների թույլ զարգացման, ուրիշներ գտնում են, որ դրամահարկը պարզապես հարկերի չափի բարձրացում էր նշանակում: (Երբ 1043 թ. ապստամբ Դեորգիոս Մանիակեսը անցավ Բուլղարիա, բնակչությանն իր կողմը գրավելու համար կարգադրեց թեթևացնել հարկերի բեռը): Ասլըստամբները Դելյանին Բուլղարիայի թագավոր հռչակեցին, որը, հակառակ իր հասարակ շահման, իրեն ցար Սամուիլի թոռ էր համարում և Գաբրիել-Ռադոմիրի (1014—1015) որդին: Դելյանի ապստամբության մասին ավելի մանրամասն տե՛ս *Благоев, Делян; Литаврин, Болгария, стр. 376—396*:

Պետրոս Դելյանի ապստամբության մասին գիտե և Մատթեոս Ուոհայեցին, որի համակրանքը ապստամբների կողմն է. «յաղթեցին զօրքն Բուլղարաց զօրացն Հոռոմոց և փախստական արարին զնոսա առաջի իւրեանց և սրով յարձակեցան զհետ նոցա... և թագաւորն Միխայլ փախստական անկանէր ի Կոստանդնուպօլիս: Եւ զօրացան Բուլղարք ի վերայ Յունաց և առին զամենայն աշխարհն իւրեանց և զերծան ի ծառայութենէ Հո-



բաժնոց. և եղև խաղաղութիւն մեծ ի վերայ ազգին Բուլղարաց» (էջ 73—79): Բուլղարներն իրենց պետականութիւնը վերականգնեցին միայն 1187 թ. Ասենովների հարստութեան հաստատումով: Ուռհայեցին, հավանաբար, բուլղարների սկզբնական հաջողութիւնը ընդհանրացնում է: Բյուզանդական կայսրը, ինչպես մի քիչ հետո ցույց է տալիս Սկիլիցեսը, իսկապես փախուստի դիմեց դեպի Բյուզանդիոն, և բուլղարները սկզբում իսկապես թոթափեցին բյուզանդական լուծը:

460. Թուրքիայի կրալը հունդարացիների թագավորն է:

461. Փոխզորավար:

462. Կավխանը անուն չէ, այլ աստիճան, նշանակում է սպարապետ: Ավելի մանրամասն տե՛ս ծանոթ. 346:

463. Հելլագայի տակ ենթադրվում է ոչ ողջ Հունաստանը, այլ կենտրոնական Հունաստանի արևելյան կեսը:

464. Զշփոթելի Փոքր Ասիայի նիկոպոլսի հետ: Այստեղ նկատի ունի էպիրոսի նիկոպոլիսը:

465. Հարկահավար:

466. «Ալուսիան» անվան շուրջ բազում վեճեր են եղել: Բուլղար պատմաբան Իվանովը այն հայնական է համարում *Иванов*, (Произход на цар Самуиловия род, стр. 59): ն. Ադոնցն այդ միտքն անհիմն համարեց (*Adontz, Samuel*, p. 381, n. 3): Արտաշայտվել են կարծիքներ, որ Ալուսիան անունը լատինական կամ հրեական ծագում ունի: Վերջին ենթադրության համաձայն ծագում է եբրայերեն *alluf-ից*, որ «առաջնորդ», «գլուխ», «տեր» է նշանակում (*Gičev, Essay*, p. 165—178): Կոնստանդինոպոլսի մեջ այս տիտղոսը տրվում էր երկրորդ որդուն: Մինչև վերջերս տիրում էր այն կարծիքը, որ հիշյալ Ալուսիանը Սամուիլի եղբայր Ահարոնի թոռն էր, Ահարոնի որդի Հովհաննես-Վլադիսլավի (բուլղարների թագավորի—1015—1016 թթ.) որդին: Բուլղար պատմաբան ժիլևը ցույց է տալիս, որ նա Ահարոնի որդին էր, Հովհաննես-Վլադիսլավի եղբայրը: Բուլղարիայի նվաճումից հետո 1018 թ. Վասիլ II-ր բուլղարական թագավորական ընտանիքի անդամներին բնակեցրեց Փոքր Ասիայում: Ալուսիանը դարձավ Կարինի (Թեոդոսուպոլիս) բանակաթեմի զորավար: Ավելի մանրամասն տե՛ս «Советы и рассказы», стр. 391—392: Նաև՝ *Литаврин*, Болгария и Византия, стр. 389—390:

467. Բնագրում՝ *στολην λαβών Ἀργεονων*: Սա շատ կարևոր վկայություն է, որ ցույց է տալիս, որ բյուզանդական բանակում ծառայող հայկական զորամասերը կրում էին իրենց ազգային համազգեստը, որ, անկասկած, տարբերվում էր բուն բյուզանդական (հունական) զինվորների համազգեստից: Այս դեպքի մասին խոսում է և Պսելլոսը (*Psellos, Chronographie*, I, p. 83): շնչելով, սակայն, որ Ալուսիանը հայ զինվորի զգեստ հագավ, այլ պարզապես վարձկան (*χαττα τον μεσιθοφόρων τρόπον*) զինվորի: Համադրելով նրկո: աղբյուրների տվյալները, կարելի է հանգել այն եզրակացության, որ բյուզանդական ծառայության մեջ գտնվող հայկական հիշյալ զորամասը վարձկաններից էր բաղկացած:

Ալուսիանը, ինչպես ցույց է տալիս նրա հետագա գործունեությունը Բուլղարիայում, սլարղապես գնացել էր բյուզանդական իշխանությունների առաջադրանքը կատարելու, բուլղարական ապստամբությունը չեզոքացնելու: Կեկավմենոս-հեղինակը կարծես սրան նկատի ունի, երբ խորհուրդ է տալիս դասալիքների հանդեպ զգույշ լինել, քանզի «ներանք նենգությամբ են գալիս քո մոտ, նպատակ ունենալով քեզ քո թշնամու ձեռքը հանձնել, իսկ վերջում իրենք էլ փախուստի են դիմում» («Советы и рассказы», стр. 138):

468. Բնագրում՝ *το τὰ γὰρ τῶν μεγαθύλων*: Բացի հայտնի տագմաններից (տե՛ս ծանոթ. 26 և 528) բյուզանդական բանակում X—XI դդ. ստեղծվել էին և այլ տագմաներ

(գնդեր), Դրանցից էին Հովհաննես Չմշկիկի հիմնադրած «Անձահների» տաղման, որ գոյութիւն ունեցած մինչև XI դ. վերջը, *μεγαλλομοι-ների տաղման*, որ կարճ կյանք ունեցած, ինչպես և *ομοσεινοις* (սցեղակիցների) տաղման, որոնց մասին հիշատակութիւն ունի Սկիլիցեսը (էջ 173): Բնագրից ելնելով պարզվում է, որ այդ գնդում օտարերկրացիներ էին ծառայում (տե՛ս *Ahrweiler, Recherches, p. 27—28*):

469. Քննական ընագրում՝ *Τριανταετούσις*, մի շարք ձեռագրերում՝ *Τριανταετούσιος* նաև *Τξουντζεσλζούσιος*: Հայկական անուն է, որ Բյուզանդիայում վերածվեց ազգանվան: Ընտանիքի մասին տե՛ս *Καρχακ, Армяне, стр. 107—108*:

470. Միքայել Պափլագոնացին, ինչպես երևում է Սկիլիցեսից, անձնապես չի մասնակցել արևմուտքում տեղի ունեցած պատերազմներին: Այնտեղ հիմնականում մասնակցել են զորավարներ Գեորգիոս Մանիակեսը, Միքայել Դոկիանոսը, Բոյանը, ապա դարձյալ Մանիակեսը: Սկիլիցեսը ցույց է տալիս նաև, որ կռիվներին մասնակցել են Օպսիկիոն և Թրակեսիոն ընկալաբեմերի, Պիսիդիայի և Լիկանոնիայի զորքերը: Մատթեոս Ուո՛ւայցին գտնում է, որ Միքայելը մասնակցել է (էջ 88—89): Կարևորը, հարկավ, նրա մասնակցելու կամ չմասնակցելու հարցը չէ, այլ այն, որ արևմուտքում մղված պատերազմներում դործոն մասնակցութիւն են ունեցել հայերը: Ուոհայցու տվյալներով 1041 թ. սգորածողով արար թագաւորն Հոռոմոց Միխայլն գամենայն աշխարհն Յունաց և այլ ի Հալոց զօրացն, որք ընդ Հոռոմոց իշխանութեամբն էին՝ Սերաստիա և Տարօն և ամենայն Վասսուրական. և անթիւ ըաղմութեամբ հասանէր թագաւորն Միխայլ յարևմուտք և դերի առեալ գամենայն աշխարհն Գթաց (դոթերի—Հ. Բ.) և զապրատամբսն ածէր ի հնազանդութիւն և արար իւր հնազանդ գամենայն աշխարհն և դարձաւ ի Կոստանդնուպօլիս» (էջ 88—89): Սա պարզ ցույց է տալիս, որ դեռևս 966 թ. դրաված Տարոնը, 1021 թ. նվաճված Վասսուրականը, ապա և Սերաստիայի հայութիւնը Բյուզանդական կայսրութեանը գորք էին մատակարարում, նրանք զինապարտ էին:

471. Նորբլիսսիմոսը կեսարի հին մակդիրն է, որ Կոստանդին Մեծի ժամանակ վերածվեց պատվաստիճանի: Հազվագյուտ էր տրվում և վերարերում էր կայսերական ընտանիքի անդամներին: XI դ. հանդես է գալիս սլրոտոնորբլիսսիմոս պատվաստիճանը, որը XII դ. կեսերին կրում էր Սասունի իշխան Վիգենը:

472. Ս. Առաքելոց նշանավոր եկեղեցին Կոստանդնուպօլսում, որն սկսվել է կառուցվել IV դարում՝ Կոստանդին Մեծի կողմից և ավարտվել՝ Կոստանդին Այնտեղ էին ամփոփված Անդրեաս, Ղուկաս և Տիմոթեոս առաքյալների մասունքները: Հուստինիանոս I-ը քանդեց եկեղեցին և ի նորո կառուցեց: Հետագայում այդ եկեղեցում շինարարական աշխատանքներ կատարեցին Հուստինիանոս II-ը, Վասիլ I-ը և Անդրոնիկոս II Պալեոլոգոսը: Կոստանդնուպօլսի զրավումից հետո Մեհմեդ II-ը եկեղեցին թողեց նոր պատրիարքի՝ Գեննադիոս Սիդլարիոսի տրամադրութեան տակ, որը և այստեղ հաստատեց իր աթոռը, բայց կարճ ժամանակով: Մի քանի տարի անց այն տեղափոխվեց Պամմակարիստոսի եկեղեցի: Մեհմեդ II-ը 1461 թ. սր. Առաքելոց եկեղեցին քանդեց և նրա տեղում իր անունը կրող մղկիթը կառուցեց: Մինչև XI դարը բյուզանդական կայսրերից շատերը սր. Առաքելոց եկեղեցում էին թաղվում (տե՛ս *Janin, La geographie ecclesiastique, pp. 46—55*):

473. Խոսքը Ալեքսիոսի վանքի մասին է, որը հիմնադրել է Ալեքսիոս Ստուդիտես պատրիարքը: Կոստանդին Մոնոմախի կողմից այդ վանքում արդելափակված սլատրիարքը վախճանվեց 1043 թ. փետրվարի 20-ին:

474. Բնագրում՝ *σναφορα*: Բառը հանդիպում է նաև հայկական աղբյուրներում՝ սկսած VII դարից (տե՛ս Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը,



լ. 398): Ուոհայեցու «ժամանակագրության» մեջ աղավաղված ձևով՝ «յանափորտէն» (բայառական հոլով): Դյուլորիեն սխալմամբ այդ բառը համարել է հատուկ անուն՝ Անափոռտեն: Ազոնցը սրամիտ կերպով ուղղել է «յանափոռաէն» (տե՛ս Adontz, La lettre de Tzimisces, pp. 143—144):

475. Ուոհայեցին գրում է, որ Միքայել Պափլագոնացուց հետո թագավորեց նրա ռոներ որդին... որ Կեսաոոսն էր, և զամիսս շորս կալեալ զթագաւորութիւնն»: Նա «ՂԿիւա Զոյի գղուստրն Կոստանդեայ կայսերն իրրև գրոգ խուզել համարձակեցաւ և կապանօք աքսորեաց գնա ի կղզւոջ» (էջ 89):

476. «Կալաֆատր» արհեստ է: Այդպես էին կոչվում նավերի վերանորոգողները, նավի փայտերի միջև եղած անցքերը խցանողները:

477. Կայսեր ննջասենյակին կից սրահ, որտեղ, որպես կանոն, կանգնած էր կայսեր սլաֆակախումբը:

478. Ցուկանիստերիոնը պալատի դիմաց գտնվող ձիարշավարան էր:

479. Զատկին հաջորդող կիրակին կոչվում է անտիպասքա: Այդ կիրակիից հետո եկող շարաթի երեքշաբթի օրը:

480. Սեկրետներ էին կոչվում դրասենյակները, բյուրոները:

481. Այս խոսվությունն ուներ խոր սոցիալական բովանդակություն: Դրա ապացույցը ապստամբների կողմից հարկացուցակների ոչնչացումն է: Ատտալիատեսի ասելով, խոսվարարները բանտերից ազատ արձակեցին բանտարկյալներին, հարձակում գործեցին մեծահարուստների ապարանքների վրա և թալանեցին նրանց հարստությունը, որ «դիզվել էր բազում ապօրինություններից և շքավորների կեղեքումներից» (Attal. p. 15): Ապստամբությունը բռնկվեց Կոստանդնուպոլսում 1042 թ. ապրիլի 19-ին և մայրաքաղաքի ժողովրդական մասսաների մասնակցությունը պատճառարանվում է հարկային ծանր բեռով, պաշտոննության կամայականություններով, վաճառականների ու վաշխառուների ճնշումներով: Զոնի աքսորվելը ժողովրդական մասսաների հրապուրակ գալուստակ առիթ հանդիսացավ, որը վարսյետորեն օգտագործեց կայսեր հակադիր ավագանին (տե՛ս *Илутаврин, Восстание в Константинополе*, стр. 33—46):

482. Սուրբ խորանը:

483. Ծիշտր՝ Ատրիկլին (a triclinus): Նրանց պարտականությունն էր կայսերական ընդունելությունների կարգ ու կանոնին հետևելը:

484. Հաստիվերցին հիշատակում է Կոստանդին Մոնոմախի հոր անունը՝ Թեոդոս (Պսելլոսը Թեոդորոս է անվանում), ինչպես և նրա պաշտոնը: Նա «ի պալատին զգայիոսութեան ունէր գպատիւ, յորմէ ամենայն դատաւորք աշխարհին առաքին» (էջ 51—52): Տարածված (և ընդունված) է Պրուդոմի կարծիքը, որ «գայիոսություն» իրրև թե առնչություն ունի հունարեն *θεωσιμασύνη* բառի հետ, որը նա խարգմանում է «արդարագատություն» (տե՛ս „Повествование“, стр. 154): Բայց *θεωσιμασύνη* նշանակում է «արդարություն» և ոչ «արդարագատություն», իսկ Բյուզանդիայում չկար ո՛չ արդարության և ո՛չ էլ արդարագատության պաշտոն: Կոստանդին Մոնոմախի հայրը հավանարար *ἐπι τῶν χρισθεων* էր, որ իսկապես ժամանակակից տերմինով ասած արդարագատության նախարարն էր: Հենց այս *ἐπι τῶν χρισθεων*-ին էին ենթակա քանակաթեմերի բոլոր դատավորները (պաշտոնի վերաբերյալ տե՛ս *Ahrweiler, Recherches*, p. 70): Հաստիվերցին տալիս է և նրա ծագման մանրամասնությունները: Խոսելով Միքայել Պափլագոնացու մասին, նա դրում է (օգտագործելով Դանիել մարգարեի մի դարձվածքը), թե հոռոմոց թագավորությունը նման է սերկաթով ու խեցիով խառը սրունքի ու ոտքի» և բացատրում. «Որ ի հարց և ի հաւուց ունի դիշխանութիւնն՝ այն երկաթ է. իսկ եկամուտն՝ որ չէ ի թագաւորական



տոհմէ՝ այն խեցին է» (էջ 46): Միքայել Պափլագոնացին «ոչ ի թագաւորական տոհմէ, և ոչ որդի թագաւորի, և ոչ իշխանութեամբ յերևելի սպայից» էր, հետևաբար նա «խեցի» էր: Երբ արդեն խոսք է լինում Կոստանդին Մոնոմախի մասին, Լաստիվերցին (էջ 51), օգտագործելով վերոհիշյալ ասացվածքը, գրում է, թե «եւ սա ըստ մարգարէին տեսողութեան՝ ի խեցի մասնէ», այսինքն թագավորական տոհմից չէր ծագում: Կ. Յուզբաշլանը, դժբախտաբար, չի նկատել Լաստիվերցու այս երկու նախադասութիւնները կապը և պատմիչի վերջին նախադասութիւնը թարգմանել: «Согласно видению пророка, Константин был сотворен из глины» (!). «Повествование», стр. 78: Կարծես Դանիել մարգարեն Կոստանդին Մոնոմախի վերաբերյալ է տեսիլք տեսել:

485. Խոսքը 876/877 թթ. Վասիլ I-ի հիմնադրած նշանավոր Նեա (Նոր) եկեղեցու մասին է, նվիրված Քրիստոսին, Աստվածածնին, Միքայել և Գաբրիել հրեշտակապետերին, սուրբ Եղիային և սուրբ Նիկողայոսին: Կոչվում էր Նեա, տարբերվելու համար նույն պայտտում գտնվող և Քրիստոսին նվիրված մյուս եկեղեցուց (տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 104 և հտ., 287: Նաև *Janin, La geographie ecclesiastique*, p. 374—378):

486. Ինչպես տեսնում ենք, Կոստանդին Մոնոմախի և Զոեի ամուսնութիւնը առանց որևէ արգելքի կատարվեց, այնինչ Լաստիվերցին գրում է, որ Զոեն «ելանէ արսաքոյ կանոնական կարգաց, և կոչէ զայրս զայս յառաջ և առնէ այր իւր. և նստուցանէ զնա յաթոռ թագաւորութեան» (էջ 52): Լաստիվերցին, հարկավ, ճիշտ է, որ կանոնական խախտում է տեսնում, քանզի օրենքը չէր ընդունում երրորդ ամուսնութիւն, իսկ սա Զոեի չորրորդ ամուսնութիւնն էր:

487. Բյուզանդիայում սովորութիւն կար նոր կայսեր իշխանութեան գլուխ անցնելու առթիվ քաղաքական ու ռազմական աստիճաններ շնորհել:

488. Անտիկ շրջանում տրիվալլոս էին կոչվում Դանուբի ափին ապրող մի ժողովուրդ: Պատմիչը հին ցեղանունն է օգտագործում՝ տեղաբնիկներին անվանելու:

489. Լոգոթետների մասին տե՛ս «Կոստանդին Միրանածին», էջ 291—292: Նրանք ընդհանուր առմամբ հարկային պաշտոնյաներ էին, որոնց հիմնական պարտականութիւնն էր հարկերի հավաքումը, տարրեր վարչութիւնների հաշիվների վերահսկողութիւնը: Լոգոթետներ կային ոչ միայն նահանգներում, այլև բանակում: Եկեղեցին իր հերթին նույնպես ուներ լոգոթետներ (նրանց մասին տե՛ս *Miller, The Logothete of the Drome*, p. 438—470. *Gullant, Les Logothetes*, p. 5—115):

490. Կայսրութիւնը X—XI դդ. նվաճած նահանգները վարչականորեն տրոհեց մի շարք փոքր միավորների՝ զորավարին ենթակա: Սրանք կայսրութեան նահանգների օրինակով կոչվեցին բանակաթեմեր և ենթարկվեցին դուքսին, այդ թվում և նոր բանակաթեմերի զորավարները: Այստեղ Դյուրախիոնի դուքսն (արխոնտ) իր ենթակայութեան ունեւր շրջակա «բանակաթեմերի» գործերը (տե՛ս *Ahrweiler, Recherches*, p. 46):

491. Տե՛ս վերը, էջ 136:

492. Բնագրում՝ *συνταγμα*. կերակուր, որ ինչպես սլարգ երևում է վերոբերյալ փաստից, տագմաների զինվորներին վճարվում էր ամիսը մեկ անգամ (հմմտ. նաև՝ «Советы и рассказы», стр. 276: Տե՛ս և ստորև, ծանոթ. 625): Ի տարբերութիւն տագմաների զինվորներից, բանակաթեմերի ղինվորները և նրանց ընտանիքները, որոնք հիմնականում աղատված էին հարկերից (նրանք միայն հողային հարկ էին վճարում և, նայած պայմաններին, անբիկոն), ստանում էին նվերներ (ὄμορται, εὐεργεσία, φιλοφροσύνη) և ռոճիկ (ῥόγα): Աղբյուրներում, դժբախտաբար, տվյալներ չկան բանակաթեմային զինվորների ստացած ռոճիկի չափի և վճարման պարբերացման մասին:



Կոստանդին Միրանաժինի մի տվյալի համաձայն ոոճիկը վճարվում էր յոթ տարին մեկ անգամ, բայց նույն հեղինակի ասելով, դա հնում էր կատարվում և հնարավոր է, որ այդ ժամանակ ոոճիկը տարին մեկ անգամ էր վճարվում (տե՛ս *Ahrweiler, Recherches*, p. 7—8):

493. Չլփոթել Ֆրանսիայի հարավում գտնվող համանուն քաղաքի հետ: Այստեղ խոսքը Ապուլիայի Աուֆիգուս (այժմ՝ Օֆանտո) գետի աջ ափին գտնվող քաղաքի մասին է:

494. Դաշնակից զորքերի:

495. Ատտալիատեսի ասելով, Մանիակեսի զորքերը բաղկացած էին հռոմայեցիներից (իմա՝ հույներից), և ալբանացիներից (*Attal.*, p. 18): Որ հռոմայեցիներ ասելով նա հույներ է հասկանում և ոչ իտալացիներ, վկայում է այն, որ այդ զինվորներն ուզում էին իտալիայից իրենց հայրենիքը վերադառնալ:

496. Այսինքն՝ Բյուզանդիոնի, Կոստանդնուպոլսի բնակիչ:

497. Բնագրում *σεβαστοφορος*: Տիտղոսը հիմնադրվել է 963—975 թթ. միջև: Այդ աստիճանը բյուզանդական արքունիքի հիերարխիայում գտնվում էր մագիստրոսի և պրոեդրոսի միջև: Տրվում էր գլխավորապես ներքինիներին և սոսկ պատվաստիճան էր: Եատ քիչ թվով սեաստֆորոսներ են հայտնի: Առաջինը Ստեփանոս Լակապենոսի որդի Ռոմանոս Լակապենոսն էր, Ռոմանոս I-ի թոռը: Մյուսը՝ այս Ստեփանոսն է (տիտղոսի մասին տե՛ս. *Guiland, Le sebastophore*, p. 199—207):

498. Մանիակեսի ապստամբության մասին խոսում են Արիստակես Լաստիվերցին և Մատթեոս Ուոհայեցին: Վերջինս հաղորդում է մի կարևոր մանրամասնություն: Հիշելով Մոնոմախի կողմից ապստամբի դեմ ուղարկված զորքերի մասին, նա գրում է. «Յայնժամ թագաւորն Մոնոմախն արար ժողով զամենայն ազգն Յունաց և զայս ի զօրաց Հայոց աշխարհին և յարուցեալ զնաց յաշխարհն արևմտից ընդդէմ Մանիակայ՝ որ ի ձեռն քաջութեան իւրոյ խնդրէր զաթոռ թագաւորութեանն» (էջ 93):

499. Բյուզանդիայում պրակտոր (*πρακτωρ*) էին կոչվում հարկահավաքները, որ իրենց կամայականությունների, ընչաքաղցության պատճառով ժողովրդին ատելի էին: Պրակտորների մոայլ պատկերը տալիս է Կեկավմենոսը, անվերջ խոսելով նրանց ապօրինությունների մասին: Պատմիչի ասելով նրանք բաղում նահանգների կորստյան պատճառը դարձան, քանզի ստիպեցին բնակիչներին անցնելու այլազգիների կողմը և վերջիններիս ուղղել հռոմայեցիների դեմ (տե՛ս «*Советы и рассказы*», стр. 152, 296: Տե՛ս նաև՝ ծանոթ. 609): Տվյալ ժամանակաշրջանում հարկերի հավաքումը Բյուզանդիայում սովորաբար կապալով էր տրվում, պաշտոնները դարձել էին առուժախի առարկա (տե՛ս «*Советы и рассказы*», стр. 236—238: Պաշտոնների վաճառքի վերաբերյալ տե՛ս *Kollas, Amter—und Würden kauf im früh—und mittelbyzantinischen Reich*, Athen, 1939): Հարկահավաքների մասին տե՛ս *Скабаланович, Византийское государство*, стр. 352 и сл.; *Литаврин, Налоговая политика Византии*, стр. 105—106; *Бартикян, Эникион*, стр. 127—128):

500. Միքայել I Կերուլարիոս (25 մարտ 1043—2 նոյեմբեր 1058 թթ.):

501. Բնագրում՝ Ρώξ: Ռուսների այս արշավանքը, որ վերջինն էր ընդդեմ Բյուզանդիայի, տեղի ունեցավ 1043 թ. հուլիսին և միակն է, որ քրիստոնյա Ռուսիան կատարեց կայսրության դեմ: Արշավանքին մասնակցություն ունեցան հին Ռուսիայի երկու խոշորագույն կենտրոններ՝ Կիևը և Նովգորոդը: Բյուզանդա-ռուսական այս պատերազմի դրդապատճառները դեռևս մինչև վերջ պարզված չեն, բայց բավական խորն էին ու յուրջ, քանզի հուզում էին հին ռուսական պետության իշխող դասակարգերի լայն

չրջաններին: Ուսումնասիրողները գտնում են, որ նրանց բախումը Ռուսիայի՝ Բյուզանդիայի եկեղեցական կախումից ձեռքազատվելու փորձ էր, կամ Ռուսիայի և Բյուզանդիայի պետական-քաղաքական շահերի հակադրությունը, և կամ, վերջապես Կիևի և Կոստանդնուպոլսի փոխհարաբերությունների ողջ կոմպլեքսը՝ տնտեսական, քաղաքական, եկեղեցական:

1043 թ. պատերազմի մասին բացի բյուզանդական աղբյուրներից (Միքայել Պսելլոս, Միքայել Ատտալիատես, Հովհաննես Զոնարաս և Միքայել Գլիկաս), խոսում են ռուսական և արևելյան աղբյուրները: Ռուսական աղբյուրներն են երկու տարեգրություններ, համառոտ տարբերակը («Կիևյան» կոչվածը) և ընդարձակը («Նովգորոզյան»): Ռուսական աղբյուրներում ցույց է տրված, որ նովգորոզյան իշխան Վլադիմիրը հանդես է գալիս որպես իր հոր՝ Յարոսլավ Իմաստունի կամակատարը, այնինչ բյուզանդական աղբյուրները Վլադիմիրին համարում են ռուսների միակ իշխանը և չեն հիշում Յարոսլավին: Արևելյան աղբյուրներից կարելի է հիշատակել Իբն ալ-Աթիրին, Աբուլ Ֆարաջին: 1043 թ. ռուս-բյուզանդական պատերազմի մասին տե՛ս Poppé, La dernière expédition russe, p. 1—29, 233—268;

502. Ըստ Ատտալիատեսի 400 նավ (Attal., p. 20): Մոնոքսիոն նշանակում է միակտուր փայտից պատրաստված նավ:

503. Ատտալիատեսի ասելով Թեոդորականը պատերազմական գործերում շատ հմուտ էր, ոչ միայն ծովում, այլև ցամաքում, և այդ պատերազմի ժամանակ նա բոլորից շատ աչքի ընկավ (Attal., p. 21):

504. Խոսքը «հունական» կամ «հեղուկ» կրակի մասին է: (Նորագույն գործերից. Ellis Davidson, The secret weapon, pp. 61—74)

505. Ժամանակակից Վառնա նավահանգիստը Բուլղարիայում: Հայագիտության համար հետաքրքրական է նշել, որ դեռևս XI դ. հիշյալ քաղաքում հայություն կար: Այդ մասին տե՛ս Բարթիկյան, Վառնա:

506. 1043 թ. ռուս-բյուզանդական պատերազմի ավարտից երեք տարի անց երկու երկրների միջև վերականգնվում են բարեկամական հարաբերությունները: Կոստանդին Մոնոմախի դուստրը կնության տրվեց Յարոսլավի որդի Վսեվոլոդին: 1051 թ. խաղաղ ավարտ ունեցան նաև եկեղեցական հակասությունները:

507. Սկլերենան թագուհի չէր, այլ Կոստանդին Մոնոմախի հոմանուհին: Կա երկու Սկլերենա, առաջինը պատրիկ Վասիլ Սկլերոսի, Անատոլիկոն բանակաթեմի զորավարի դուստրն էր և Կոստանդին Մոնոմախի երկրորդ կինը, որ վախճանվեց նախքան ամուսնու կայսր դառնալը: Երկրորդ՝ Մարիա Սկլերենան, որի մասին խոսք է լինում այստեղ, Կոստանդին Մոնոմախի կին Սկլերենայի զարմուհին (ανεψία) էր: Selbst, Die Skleroi, S. 70—76:

508. Բյուզանդացիները Անի ասելով ենթադրում են ոչ միայն Բագրատունիների մայրաքաղաքը, այլև նրանց թագավորությունն ընդհանրապես (տե՛ս Βαρμικακη, Ο φεμε Νεβερια, στρ. 74): Սկիլիցեսը Բագրատունի թագավորին անվանում է τοπαρχτης (այս բառը խորենացին թարգմանում է «իշխան աշխարհի», Բ, 31), քանզի բյուզանդացիները հայոց թագավորին երբեք βασιλεύς չեն անվանել: Կոստանդին Միրանաթինի մոտ պահպանված՝ օտարերկրյա տիրակալներին դիմելու ֆորմուլաներում Բագրատունի թագավորի պաշտոնական անվանումն է αρχων τῶν αρχόντων της Μεγάλης Ἀρμενίας («իշխանաց իշխան Հայոց Մեծաց»): Կոստանդին Միրանաթինն այդպես է անվանում նաև Վասպուրականի Արծրունի թագավորին («Կոստանդին Միրանաթին, էջ 151): Մեր կարծիքով Կ. Յուզբաշյանը ճիշտ չէ, երբ գտնում է, թե ἀρχῶν τῶν αρχόντων բյուզանդական



դական պատվաստիճան է, որ տրվում է կայսրության կողմից հայոց մեկ իշխանի և ցանկության դեպքում, ետ է վերցվում և տրվում մի ուրիշի, որ տվյալ պահին Հայաստանում կարող է լինել միայն մեկ «արքունների արքուն» (տե՛ս Յուզբաշյան, Ռոմանոս Լեկապենոս կայսեր անհայտ հասցեատերը, էջ 41—42; Նույնի, Зака́т Баграти́дов, стр. 10): Բայց ըստ Ասողիկի (էջ 170) Աշոտ II-ը «զինեմ անուանեաց Շահանշահ, այսինքն թագաւորաց թագաւոր»: «Շահանշահ» հենց բյուզանդական «արքունների արքուն» է, Աշոտն է իրեն այդպես անվանել: Յուզբաշյանն առաջ գնալով գրում է, որ Բյուզանդիայի համար վերջին արքայ տօն արժանացած Աշոտ II Երկաթն էր, որի մահից հետո տիտղոսն անցավ Գագիկ I Արծրունուն (տե՛ս «Зака́т Баграти́дов», стр. 10): Այդ ենթադրությունն էլ է մերժվում հետևյալ պատճառաբանությամբ: Նույն Միրանաժինի «Արարողությունների մասին» աշխատության Բ գրքի 48-րդ գլուխը, որ կրում է «Այլագահներին ուղարկվող նամակների վերնագրերը» խորագիրը, կողք կողքի նշում է երկու «իշխանաց իշխան»՝ Բագրատունի և Արծրունի. «Մեծ Հայքի իշխանաց իշխանին» և «Ասպուրականի, այն է Վասպուրականի իշխանին, որ այժմ իշխանաց իշխանի պատիվն է ստացել» («Կոստանդին Միրանաժին», էջ 151): Արդ, եթե խոսքը մեկի մասին է, ինչո՞ւ է նշվում մյուսը, եթե տվյալ պահին «իշխանաց իշխանի» պատիվը տրված է Գագիկ Արծրունուն, ապա ինչո՞ւ է ցուցակում նշվում Բագրատունի գահակալը: Ավելորդ չէ ասել, որ Ուոհայեցու «Ժամանակագրության» մեջ պահպանված է Չմշկիկ կալսեր՝ Աշոտ III Բագրատունուն (953—977) ուղղված նամակի հայերեն թարգմանությունը, որի հասցեատերը կոչված է «Աշոտ Շահանշահ Հայոց Մեծաց»: Դարձվածքը, անկասկած, մեզ հայտնի արքայ տօն արժանացած Մեթալիս Արմենիայի պաշտոնական տիտղոսի թարգմանությունն է, և բառացիորեն համընկնում է Կոստանդին Միրանաժինի մոտ պահպանված պաշտոնական ձևին. εις τον ἀρχόντα τῶν ἀρχόντων τῆς Μεγαλῆς Ἀρμενίας: Հետևաբար միանգամայն սխալ է Յուզբաշյանը, որ գտնում է, թե Բյուզանդիայի համար վերջին Բագրատունի թագավորը, որ ստացել էր արքայ տօն արժանացած տիտղոսը Աշոտ II Երկաթն էր:

Ավելորդ չէ ասել, որ իշխանաց իշխան էին անվանում բյուզանդացիները ոչ միայն հայոց թագավորներին, ինչպես կարծում է Յուզբաշյանը գրելով. «սույն տիտղոսի մեզ հայտնի բոլոր կողմերը հայաստանցի թագավորներ են, ...հիմք չկա ենթադրելու, որ բյուզանդական արքունիքը խախտելով ավանդույթը... այդ տիտղոսը շնորհեր ոչ հայաստանցուն» (Յուզբաշյան, Ռոմանոս Լեկապենոս կայսեր անհայտ հասցեատերը, էջ 39), այլ և արաբ ամիրաներին. *Ménager, Amiratus* (apud «Byzantinische Zeitschrift», Bd. 54 (1961), p. 200):

509. Բոննի հրատարակությունը 'Ιβήρων-ի փոխարեն ունի 'Αβασγών (ափսազների):

510. Վրաց թագավոր Գիորգի I-ը (1014—1027): Նա ուզեց օգտվել Վասիլ II-ի բուլղարական պատերազմով զբաղված լինելու հանգամանքից և նվաճել Դավիթ կուրապաղատի՝ Բյուզանդիային անցած հողերը:

511. Հովհաննես-Սմբատ Բագրատունին:

512. Այս բանակցությունները Վասիլ II-ի և հայոց թագավոր Հովհաննես-Սմբատի միջև կայացան 1021 թ. վերջին Տրապիզոն քաղաքում: Հայոց թագավորի բանազնաներն էին Պետրոս կաթողիկոսը և վարդապետ Հովհաննես Կողեռը (Մատթ. Ուոհ., էջ 50): Հաստիվերցու ասելով հենց այստեղ «եղև Հայոց կորստեան գիր և նամակ. քանզի Յովհաննէս պատուէր տուեալ էր հայրապետին, եթէ՛ Գրէ գիր և տուր կտակ թագաւորին, գի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս և զերկիրս նմա տաց ի ժառանգութիւն» (Արիստ. Լաստ., էջ 32):

513. Գագիկ II Բագրատունին (1043—1045), որը, սակայն, Հովհաննեսի որդին չէր, այլ վերջինիս եղբոր՝ Աշոտի Հովհաննեսին առ զոյր որդի թագակալ թագաւորութեանն. վասն գի որդին նորա Երկաթ վաղ վախճանեցաւ, և շամանեաց ի պատիւ հօրն» (Արիստ. Լաստ., էջ 32):

514. Ուռհայեցու տվյալներով հայոց թագավոր Հովհաննեսը վախճանվեց Միքայել (IV Պափլագոնացու) օրոք և Բագրատունյաց թագավորութունը պահանջողը ոչ թե Կոստանդին Մոնոմախն էր, այլ նրանից առաջ Միքայելը: Հիշելով Հովհաննեսի վախճանը, Ուռհայեցին շարունակում է. «Եւ եղև իբրև լուան զայս ազգն Հոռոմոց, ժողով արարեալ թագաւորն Հոռոմոց Միխայլն և հասանէր յաշխարհն Հայոց և աւար հարկանէր զտունն Հայոց սրով և գերութեամբ: Վասն զի Յովհաննէս ի կենդանութեան իւրում գիր էր տուեալ Հոռոմոց՝ եթէ զկնի մահուան իմոյ Անի Հոռոմոց լիցի» (էջ 84): Ուռհայեցին այնուհետև հիշում է հոռոմոց զորքերի երկրորդ հարձակման մասին Բագրատունյաց տիրույթների վրա, որի ժամանակ «բազում տեղիք հաւանեցան Հոռոմոց», որից հետո «ժողովեցան զօրքն Հոռոմոց ի վերայ թագաւորարնակ քաղաքին Անոյ» (էջ 85): Հայերը Վահրամ Պահլավունու զլխավորությամբ սոսկալի ջարդ տվեցին բյուզանդացիներին, որից հետո առ ևս խնդրեցին զօրքն Հոռոմոց զքաղաքն Անի, այլ դարձան ամօթով և գնացին ի Կոստանդնուպօլիս առ Միխայլն» (էջ 86): Ուռհայեցին չգիտե հոռոմոց զորքերի հարձակման մասին Անիի վրա՝ Մոնոմախի ժամանակ:

Հովհաննես-Սմբատը վախճանվեց նՂ (1041) թ., այսինքն Միքայել IV Պափլագոնացու օրոք: Կոստանդին Մոնոմախը սկսեց իշխել 1042 թ. հունիսից: Հետևաբար Բագրատունյաց թագավորութունը կարող էր պահանջած լինել Միքայել Պափլագոնացին: Կոստանդին Մոնոմախը պետք է կրկնած լինի Միքայելի կիսատ թողած գործը: Այդ բանը հաստատվում է Լաստիվերցու տվյալներով: Պատմիչը հիշում է մի ավանդություն, որի համաձայն Վասիլ II-ի եղբայր Կոստանդին կայսրը հայոց թագավորին նամակ է ուղարկել «Վասն Հայոց աշխարհին», որով հաստատում էր հայոց թագավորության գոյությունը «մինչև յաւիտեան»: Այս դիրն ահա նամակաբերն իր մոտ պահեց «մինչև ի ժամանակս Միխայլի թագաւորութեանն, և վաճառեալ նմա՝ առ գանձ բազում» (էջ 57): Հայոց թագավորի մահից հետո հոռոմոց կայսրը «գտեալ զգիր նամակին Հայոց, իբրև իւրեան սեպհական ժառանգութիւն՝ հոգ տարաւ առնուլ զքաղաքն Անի և զաշխարհն»: Ինչպես տեսնում ենք, Լաստիվերցին էլ Բագրատունյաց թագավորության պահանջող է համարում Միքայել կայսեր:

515. Այսինքն՝ վասալը:

516. Իմա՝ Իբերիա բանակաթեմի, որ ստեղծվել էր XI դ. քսանական թվականներին՝ Դավիթ կուրապաղատի 1000 թ. նվաճված հողերից:

517. Հիշատակվում է և Ուռհայեցու կողմից. «Կացուցանէր (Մոնոմախը) զօրագլուխ զՊառակամանոսն՝ զայր ներքինի կուրտ գոլով, և դայր զօրօք բազմօք հասանէր ի դուն Անոյ» (էջ 96): Նա ազգությամբ հույն էր: Գևորգ Արգարյանը գտնում է, որ նա նույնանում է Գրիգոր Մագիստրոսի մի տաղի մեջ հիշատակված «գիշերարուն Բուլղարաց» նիկողայոսի հետ, մոռանալով, որ վերջինս, հարկավ, բուլղար է (տե՛ս նաև վերը, ծանոթ. 419):

518. Սկիլիցեսը չի խոսում պարակիմոմենոսի ստացած ջարդի վերաբերյալ, այդ մասին խոսում է Ուռհայեցին, որը միաժամանակ նշում է, որ պարտություն կրած պառակամանոսը «ձմեռեաց յԱղթիքն», որը Տայքի (այսինքն՝ բյուզանդական Իբերիա բանակաթեմի) կենտրոնն էր: Պառակամանոսի պարտությունը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Գագիկ II թագավորն արդեն խաբուսթյամբ Բյուզանդիայում էր գտնվում: Երբ



հայերը համոզվեցին, որ Գագիկին չեն թողնելու այլևս զա Անի, «գրեցին առ զօրապետն Հոռոմոց ի Պառակամանոսն և երդամար կոչեցին զնա ի քաղաքն Անի և ետուն զքաղաքն Անի ի ձեռս Հոռոմոց» (Մատթ. Ուռն., էջ 97): Սկիւիցեսի ասելով, այս դեպքերի ժամանակ Գագիկը Անիում էր:

519. Սկիւիցեսի մոտ՝ *Ἀπλεσφάρης:ισουερ* Դվինի (1022—1049) և Դվինի ու Գանձակի (1049—1067) ամիրա Աբու-լ-Ասվար Շավուր իրն Ֆաղլ իրն Մուհամմեդ իրն Շաղաղաղի մասին է: Նա ըստ Մունեջիմ Բաշիի աղբյուրի (Թարիխ ալ-բար վա Շարվան) ամիրայեց 46 տարի: Ունեւ հինգ որդի՝ Ֆաղլ, Աշոտ, Իսկանդար, Մինուճիհր և Մարզուբան: Աբու-լ-Ասվարը վախճանվեց 1067 թ. նոյեմբերի 10-ին: Նա, ինչպես ազգանունից է երևում, Շաղաղայանների քրդական տոհմին էր պատկանում և սերտ հարաբերությունների մեջ էր հայերի հետ: Նա աէր փեսայ թագաւորին Հայոց Աշոտոյ» (Արխստ. Լաստ., էջ 96), իսկ նրա որդի Մինուճիհրը (հայկական աղբյուրների Մանուչեն) ամուսնացել էր Բագրատունի Կատայի հետ: Նրանց մասին մանրամասն տե՛ս *Minorisky, Studies*, p. 50—64, 80—81: Դվինի ամիրայի և Շիրակի Բագրատունիների փոխհարաբերությունները սրված էին նախքան Մոնոմախը և բյուզանդական կայսրը վարպետորեն օգտագործեց այդ հանգամանքը:

520. Ատտալիատեսը գրում է ավելի պարզ ու հստակ: Մանրամասն նկարագրելով Անի քաղաքի անառիկությունը, նա ցույց է տալիս, որ Մոնոմախն ուժեղ բանակ ուղարկեց, բայց չկարողացավ գրավել քաղաքը և նրան տիրացավ միայն Գաղիկի հետ վարած հաջող բանակցություններից հետո: Նույն պատմիչի ասելով, Անին, որ շատ ընդարձակ տարածություն ունի, նրա շրջապատում կան բազմաթիվ ավաններ, դքսության (կատապանության) կենտրոն դարձավ (*δουκική κατεχουμένη αρχή*), և Բյուզանդիայի համար մի հսկայական պատվար՝ արևելքից Իբերիա ներխուժող բարբարոսների համար (*Attal.*, p. 79—80): Այս փաստը մի անգամ ևս ցույց է տալիս, որ Բագրատունյաց թագավորությունը շարժավ Իբերիա բանակաթեմի կցորդը: Հայկական աղբյուրների տվյալներով Գագիկն ակամա ու խաբեություն մը հրաժարվեց իր տիրույթներից ու գահից, բյուզանդացիներին հաջողվեց Գագիկին Կոստանդնուպոլիս հրավիրել և այլևս թույլ չտալ նրան վերադառնալ Հայաստան: Այդ ընթացքում կաթողիկոս Պետրոս Գետադարձը և վեստ Սարգիսը Անիի բանալիները տվեցին հոռոմներին (տե՛ս Արխստ. Լաստ., էջ 61—62: Մատթ. Ուռն., էջ 93—95): Ըստ Լաստիվեցու, Մոնոմախը Գագիկ թագավորին Անիի փոխարեն խոստանում էր տալ զգՄելիտինէ և զգաւաուն որ շուրջ գնովաւ» (էջ 62), բայց Գագիկը չէր համաձայնվում: Ի վերջո նրան տվեցին Սենեքերիմ Արծրունու որդի Դավթի տիրույթները (այսինքն՝ Սեբաստիան), քանզի Դավիթը վախճանվել էր անգավակ, իսկ Դավթի դուստրն էլ դարձել էր Գագիկի կինը (Արխստ. Լաստ., էջ 63): Ուռհայեցու ասելով, Մոնոմախը Գագիկին տվեց զգՎալօն-Պեղատն և զՊիզու» (Մատթ. Ուռն., էջ 95):

521. Դվինի Շաղաղայան Աբու-լ-Ասվար ամիրան:

522. Այսինքն՝ պրոեգրոս Նիկոլայոսին:

523. Ենթադրվում են Տայթի (Իբերիայի) զորքերը:

524. Թե ո՞վ է Անեցին, Սկիւիցեսը չի հայտնում: Եղել են ուսումնասիրողներ, որոնք նրա տակ ենթադրել են Բաղարատ Վիկացուն (*Ahrweiler, Recherches*, p. 59 n. 12): 1046 թ. Անիի դուքսը ամենևին էլ Բագրատը չէր, այլ Միքայել Իասիտեսը (Ասիտը): Բագրատը Անիի կառավարիչ դարձավ 15 տարի անց, շուրջ 1060 թ.: Հայկական աղբյուրները հնարավորություն են տալիս պարզելու Անեցու ո՞վ լինելը: Հարցն այն է, որ Դվինի դեմ ուղղված այդ արշավանքի ժամանակ բյուզանդական զորքերի և հենց Իա-

սիտեսի հետ միասին կոչում էր «մեծ իշխանն Հայոց Վահրամ», այսինքն հայոց սպարապետ Վահրամ Պահլավունին, որն սպանվեց այնտեղ իր որդու՝ Գրիգորի հետ (տե՛ս Արխտ. Լաստ., էջ 63; Մատթ. Ուռհ., էջ 98): Այդ մասին դրում է և Գրիգոր Մագիստրոսը (Թուղթ ԺԱ): Տե՛ս նաև՝ Ն. Ալիևյան, Պահլավունի և Լամբրոնի Հեթմյանց ազգաբանությունը. «Հանդես ամսօրյա», 1954, թիվ 1—6, սյունակ 23—24: Սկիզբիցսի հիշատակությունն այն մասին, թե «Մեծ Հայքի զինյալ ուժերը գլխավորում էր Անեցին» (Վահրամ Պահլավունին) կարևոր է այն տեսակետից, որ ցույց է տալիս Բյուզանդական կայսրության ռազմական քաղաքականությունը նվաճված Հայաստանում: Նա հայկական զորքերը լուծարքի չէր ենթարկում, այլ օգտագործում էր իր նպատակների համար: Եվ միանգամայն իրավացի է Լաստիվերցին, երբ գրում է, որ Շիրակի գրավումից հետո հայոց «հեծելազորն անտէրունչ շրջեալ ոմն ի Պարսս, ոմն ի Յոյնս, ոմն ի Վիրս» (էջ 60):

525. Մի փոքր հետո նրան անվանում է «Իբերիայի դուքս» որպիսին նա էր մինչև Շիրակի Բագրատունյաց թագավորության վերացումը: 1045 թվականից, երբ Շիրակը կազմեց բյուզանդական մի սովորական նահանգ, ապա նրան միացվեց նաև «Իբերիան» և նոր կառավարիչն արդեն կոչվում էր ոչ թե Իբերիայի դուքս (կամ կատապան), այլ Հայաստանի և Իբերիայի կատապան: Անիում գտնված 6567 (1059) թվակիր հունարեն արձանագրության մեջ Հովհաննես Մոնաստիրիտեսը իրեն անվանում է «Κατεπανω' Αρμενίας και 'Ιβηρίας» (տե՛ս Βενεσевич, Три Анийские надписи, стр. 19): Նա կոչվում էր նաև Անիի և Իբերիայի կատապան: Արխտակես Լաստիվերցին ցույց է տալիս, որ մինչև Շիրակի գրավումը Իասիտեսը «կալեալ էր զտէրութիւնն արևելից» (տերմինը Բագրատ Վիկացու արձանագրության մեջ հանդես է գալիս «արևելից կատապան» ձևով (տե՛ս «Դիվան հայ վիճագրության», պր. Ա, էջ 37): Բագրատունյաց թագավորության վերացումից հետո Իասիտեսին «առաքէ թագաւորն տեղակալ քաղաքին Անույ» (էջ 63): Հայաստանի և Իբերիայի կատապանության կենտրոնը Անի քաղաքն էր:

526. Բնագրում՝ ὄσουλός, որ ստրուկ, ծառա է նշանակում, բայց շպետք է բառացի հասկանալ: Դա գործածվում էր որպես οἰκέτιος (մտերիմ) բառի հոմանիշ (տե՛ս Verpeaux, Les Οἰκεῖτοι, p. 96):

527. Կատակալոն կեկավմենոսը, որ մի քանի տարի առաջ Պարիստրիոնի կառավարիչն էր:

528. Բյուզանդական բանակում բացի տազմաներից (տե՛ս ծանոթ. 26) ծառայում էին այլ զորամասեր, որոնք թեև հազվագույն էին կրում «տազմա» անվանումը, բայց կազմվում էին այն սկզբունքով, ինչ տազմաները: Նրանցից էին կայսերական զվարդիայի մաս կազմող հետերիաները (εταίρηται). որոնց գլխավորում էր հետերիարխը (և ոչ գոմեստիկոսը): Աղբյուրների տվյալներից հայտնի է, որ կային երեք կարգի հետերիաներ՝ մեծ, միջին և փոքր (տե՛ս Ahrweiler, Recherches, p. 27: «Կոստանդին Միրանաթին», էջ 307): Սկիզբիցսի հիշատակած «մեծ հետերիարխ ներքինի Կոստանդին» նույնանուն է Ուոհայեցու հիշած մեծ իշխան Տելիարխին (Տերիարխ-(է)տերիարխ), որ հայ պատմիչի ասելով «կուրտ էր և ներքինի»: Այդ մասին տե՛ս Բաբրիկյան, Մի քանի բյուզանդական տերմինների մասին:

Ըստ Մատթեոս Ուոհայեցու, Բյուզանդական կայսրությունը Դվինի ամիրայի վրա երեք արշավանք կատարեց. առաջինը 494 (1045) թ. աշնանը, որտեղ բյուզանդացիները պարտվեցին (էջ 98): Երկրորդ արշավանքը տեղի ունեցավ 495 (1046) թ.՝ Տելիարխի գլխավորությամբ «ի ձմերալին ժամանակն», որը դարձյալ վերջացավ ապարդյուն: Երրորդ արշավանքը նույն Տելիարխի գլխավորությամբ կատարվեց 496 (1047) թ., որի



ժամանակ «բազում շարշարանս և տագնապս գործեաց այնմ զա.առին (այսինքն՝ Դվինի) և սրով և գերութեամբ ապականեաց զամենայն ազգն Տաճկաց և դարձաւ լաշխարհն Յունաց իադազութեամբ» (էջ 100): Այս վերջին արշավանքի տարին, Ուոհայեցու ասելով, տեղի ունեցավ Թոռնիկի ապստամբությունը և քանի որ ստույգ է, որ այն բռնկվեց 1047 թ. սեպտեմբեր ամսին, ապա Ուոհայեցու մոտ հիշված բյուզանդական երրորդ արշավանքը դեպի Դվին տեղի ունեցավ 1047 թ. սեպտեմբեր ամսից առաջ: Բյուզանդական աղբյուրներում Տելիարիսի առաջին արշավանքի վերաբերյալ հիշատակություն չկա:

529. Սկիլիցեսն ասում է, որ այս արշավանքի ժամանակ բյուզանդացիները շուգեցին հարձակվել Դվինի վրա, այնինչ Ուոհայեցու ասելով Տելիարիսն «իջանէր ի վերայ քաղաքին Դվնայ» (էջ 100): Ամենայն հավանականությամբ հակասություն չկա այստեղ, հայ պատմիչը նկատի ունի Աբու-լ-Ասվարի տիրապետությունն ընդհանրապես և ոչ կանկրեստ Դվին քաղաքը, քանզի մի քիչ հետո ցույց է տալիս, որ Տելիարիսը ավերածութուններ գործեց «այնմ գաւառին»:

530. «Սուրբ Մարիամը» նույնանում է Սուրմառիի (Սուրբ Մարի, այժմ Սուրմալու) հետ (տե՛ս Peeters, Quelques noms géographiques, p. 436): Պետերսի այս հոդվածը վերահրատարակվել է նույն հեղինակի Recherches d'Histoire et de Philologie Orientales, t. 1, Bruxelles, 1951, գրքում, էջ 261—266: Գտնվում էր Մասյացոտն գավառում (Երևմյան, Հայաստանը..., էջ 65): Սուրմառին առաջին անգամ հիշվում է XI դ. սկզբին: Վեստ Սարգիսը 1042 թ. «երթայ ի բերդաքաղաքն որ կոչի Սուրմառի» (Արխտ. Լաստ., էջ 58): Սրանից երևում է, որ Աբու-լ-Ասվարը վերջերս էր այն Գագիկից գրավել և Բյուզանդիան որպես Անիի թագավորության ժառանգության պահանջում էր այն:

Ալիշանը («Այրարատ», էջ 121—122) գտնում է, որ Սուրբ Մարի ձևը հետագա հայ պատմիչների (սկսած XIII դ.) ստուգաբանությունն է, այնինչ, ինչպես տեսնում ենք բյուզանդական աղբյուրները դեռ XI դարում այն կոչում են Սուրբ Մարիամ (αγία Μαρία): Բերդը ծանոթ էր արաբներին և արևմտյան ճանապարհորդներին (հմմտ. Analecta Bollandiana, t. 38 (1920) p. 324; Marquart, Das Itinerar von Artaxata nach Ar-mastica, սյունակ 852):

531. Բնագրում՝ Απιεσ(Ամպիեր, կարդացվում է Ամբիեր): Բերդ Արագածոտն գավառում, Բյուրականի մոտ: Առաջին անգամ հիշատակում է Վարդան պատմիչը Գագիկ I թագավորի կողմից այն իր հաջորդ՝ Հովհաննես-Սմբատին կտակելու առնչությամբ. «Զթագն տայ Յովհաննիսի, գԱնի և գՇիրակ, Սուրբ Գրիգոր ձորովն Աշոցաց, գԱնբերդ և գղաշտն Այրարատեան, զԿայան և զԿածոն և զՏաւուշ՝ գաւառն Սևորդեաց» (Վարդան, էջ 125): Մինչև օրս պահպանված են բերդի պարիսպների ավերակները, ինչպես և եկեղեցին՝ բերդի ներսում: 1936 թ. այստեղ պեղումներ կատարեց ակադ. Հ. Օրբելին, որն, ինչպես և Թ. Թորամանյանը, եկել է այն եզրակացության, որ բերդի տեղում հնում եղել է կիկլոպյան ամրոց: Սկզբնական շրջանում Անբերդը պատկանել է Կամսարականներին, ապա IX—X դդ. Բագրատունիներին, իսկ XI դ. անցել է Պահլավունիներին, որոնց ժառանգական կալվածն էր: Ն. Տոկարսկին գտնում է, որ Անբերդը կառուցվել է XVI դ.: Ս. Հարությունյանը, որ վերջերս պեղումներ է կատարել Անբերդում, հանգել է այն եզրակացության, որ Անբերդը կառուցվել է Աշոտ Երկաթի օրոք (913—929) և որ միջնադարյան շերտի տակ կիկլոպյան որևէ հետք չկա: Անբերդի վերաբերյալ տե՛ս Орбели, Баня и скоморох, стр. 316—322; Токарский, Архитектура Арменин, стр. 40—48; Հառուրյունյան, Անբերդ, էջ 89—95; Նույնի, Անբերդի պաշտպա-

նական սիստեմը, էջ 138—146: Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, էջ 766—781:

Սկիլիցեսի Ամպիերր Անբերդի հետ նույնացրեց առաջին անգամ նույն Պ. Պետերսը (տե՛ս նրա *Quelques nomes géographiques*, p. 437—438):

532. «Սուրբ Գրիգոր» բերդի տեղը դեռևս հաստատ որոշված չէ: Արտահայտվել են կարծիքներ, որ դա հոր Վիրապն է՝ Դվինից հարավ, կամ Սուրբ Գրիգորը Արագածոտնում (տե՛ս *Peeters*, *Quelques noms géographiques*, p. 437: *Honigmann*, *Die Ostgrenze*, SS. 176—177): Արագածոտնի սբ. Գրիգորը հիշատակում է Հովհաննես Դրասխանակերտցին. «ի գաւառէ Արագածոտան, ի բնակչաց Սրբոյն Գրիգորի»: Ավելի մանրամասն տե՛ս Ալիշան, Այրարատ, էջ 159: Ելնելով Վարդան պատմիչի նախորդ ծանոթագրության մեջ հիշված վկայությունից («Սուրբ Գրիգոր ձորովն Աշոցաց») հավանաբար Աշոցքում պետք է այն փնտրել: Վարդանը, Սկիլիցեսի նման, սուրբ Գրիգորը Անբերդի շարքում է հիշատակում:

533. Թարգմանաբար նշանակում է Միծեռնակաբերդ, որի տեղագրությունը ևս հաստատված չէ: Սկիլիցեսի ասելով, այն գտնվում էր Դվինի մոտ: Սկիլիցեսի Միծեռնակաբերդը գուցե նույնանա Երևանի Միծեռնակաբերդի հետ, թեև այնքան էլ Դվինին մոտիկ չէ: Պետերսը և նրան հետևող Գրուսեն ենթադրում են, որ այն նույնանում է Երևանի Միծեռնակաբերդի հետ (*Peeters*, *Quelques noms géographiques*, pp. 438—440. *Grousset*, *Histoire de l'Arménie*, p. 584): Հայկական միջնադարյան աղբյուրներում Միծեռնակաբերդը որքան ինձ հայտնի է, չի վկայված: Ղ. Ալիշանն այդ առթիվ գրում է. «...իշէ նոր ոմն տեղագրող զՄիծեռնակ բերդ, ինձ անծանոթ այլ ուստ» («Այրարատ», էջ 311):

534. Լևոն Թոռնիկի ապստամբությունը ծագեց 1047 թ. սեպտեմբերին: Այդ ելույթի մասին գիտեմ և Ուռհայեցին, բայց չի նշում, որ Աբու-լ-Ասվարի դեմ ուղարկված զորքը ետ կանչվեց Բուղանդին՝ ալղ ապստամբության բռնկման առնչությամբ: Ատտալիատեսը ցույց է տալիս, որ Լևոն (Թոռնիկը) Կոստանդին Մոնոմախի ազգականն էր (ՏԱՂԵՆԻԱ ՔԵՃՇԴԱՅՆՈՑ, ՏԱՂԵՆԻՅԵ): որին կայսրը տվել էր ոչ միայն պատրիկի, այլև վեստի պատվաստիճանը, և որ նա 1047 թ. գարնանից մինչև ապստամբության ժամանակ Մելիտենեի (և ոչ Իբերիայի, ինչպես գրում է Սկիլիցեսը) զորավարն էր: Ն. Ադոնցը գրում է, որ Իբերիայի զորավարը 1045—1047 թթ. Միքայել Իասիտեն էր (*Les Taronites*, p. 255): Իսալու Իասիտեսը, ինչպես երևում է Սկիլիցեսի տվյալներից, պաշտոնանկ եղավ Դվինյան արշավանքի (1046) ժամանակ: 1047 թ. Իբերիայի զորավարն էր Կեկավմենոսը: Բոլոր դեպքերում 1047 թ. Թոռնիկը չէր կարող Իբերիայի զորավարը լինել: Ադոնցը, հետևելով Ատտալիատեսին, գտնում է, որ Թոռնիկը տվյալ ժամանակաշրջանում Մելիտենեի զորավարն էր (*Adontz*, *Les Taronites*, p. 255): Այս հարցի վրա կանգ է առել նաև Հ. Գլիկացի-Արվայրրը, որի ասելով, Մելիտենեն Կոստանդին Մոնոմախի ժամանակ Իբերիա բանակաթեմի մեջ էր մտնում (*Ahrweiler*, *Recherches*, p. 58): Վ. Հարությունովայի ենթադրությամբ Լևոն Թոռնիկն Իբերիա բանակաթեմի ինչ-որ մասի կառավարիչն էր և նա ենթակա էր բանակաթեմի զորավարին (*Арутюнова*, *Византийские правители*, стр. 71—72):

Մելիտենեում եղած ժամանակ Թոռնիկը, ըստ Ատտալիատեսի, մեղադրվում է ապստամբություն ծրագրելու մեջ և մայրաքաղաք կանչվելով, վանական է խուզվում: Լեհ Կոստանդնուպոլսից նա սեպտեմբեր ամսի 14-ին փախչում է Ադրիանուպոլիս և ապստամբություն բարձրացնում (*Attal.*, pp. 22—23): Լևոն Թոռնիկի՝ Մոնոմախի ազգականը լինելու մասին գիտեմ նաև Պսելլոսը (*ἐξ ἀνάψιος τις ἐκ μητροπλιχῆς ἐγγεγονει ριζης*):



τὸ μὲν ὄνομα Λέων. τὸ δὲ γένος Τορνικίος—Psellos, Chronographie, I, p. 14).  
 Каждан, Армяне, ... стр. 52:

535. Այսինքն՝ Իբերիա բանակաթեմի: Հստ Պսելլոսի, Կոստանդին կայսրը, իմանալով Թոռնիկի՝ իբ քրոջ հետ ունեցած սիրային կապերի մասին և ցանկանալով նրանց իրարից հեռու պահել, նրան պատվավոր աքսոր ուղարկեց, նշանակելով Իբերիայի կառավարիչ (Psellos, Chronographie II, p. 15: Zon., IV, p. 163—164):

536. Պսելլոսի ասելով Թոռնիկը Կոստանդնուպոլսում էր արգելափակված, բայց իր մակեդոնացի բարեկամները գիշերով նրան փախցրին Ադրիանուպոլիս (Psellos, Chronographie, II, p. 17: Zon., IV, p. 164):

537. Խարաքս բառը մի քանի նշանակություն ունի. ցանկապատ, խրամ, նաև ճամբար:

538. Հայկական աղբյուրներում՝ Ասիտ: Սա 1046 թ. դեռ «Իբերիայի» կատապանն էր և Դվինի ամիրայի դեմ մղած պատերազմում պարտություն կրելու պատճառով պաշտոնանկ էր արվել:

539. 1047 թ. դեկտեմբերի 25-ին: Մատթեոս Ուոհայեցին բավական հանգամանալիչ է խոսում Թոռնիկի ապստամբության մասին, միայն նա ապստամբի գերվելն ու կուրացվելը այլ կերպ է նկարագրում: Եթե ըստ Սկիլիցեսի նա պարտություն կրելով ապաստանեց եկեղեցում և այնտեղ բռնվելով կուրացվեց, հայ պատմիչը գտնում է, որ կայսրը, պատրիարքն ու բոլոր իշխանները, ընկնելով անելանելի դրություն մեջ, «խորհեցան շար խորհուրդ վասն Թոռնկայ և գրեցին երզմունս ահաւորս և սուտ և խաբանօք երդուան Թոռնկայ դնել զնա Կեսառ և թէ զկնի մահու Մոնոմախին Թոռնիկ լիցի թագաւոր» (էջ 101) և որ իբր նա հավատաց նրանց, մտավ Կոստանդնուպոլիս, բայց երդմնագանց հոռոմները «խաւարեցուցին զաշսն Թոռնկայ զառն քաջի» (էջ 101—102): Ուոհայեցու ողջ համակրանքը ապստամբ Թոռնիկի կողմն է:

540. Այլ աղբյուրներից հայտնի է, որ Մոնոմախը Թոռնիկի ապստամբությունը ճնշելու համար օգնություն խնդրեց նաև ռուսներից: Նրանց զորքերը, սակայն ամենայն հավանականութամբ, տեղ հասան ապստամբության ճնշումից հետո (տե՛ս Казюжа и Иоанн Мавропол, стр. 182—184):

541. Խոսքը Միքայիլ իբն Սելջուքի մասին է, Չաղրի բեկի և Տուղրիլ բեկի հոր:

542. Բնագրում՝ Τραγγρολιπηξ: Ուոհայեցու մոտ՝ «Տուղրէլ սուլտան» (էջ 102):

543. Հիշյալ Արաքսն, ամենայն հավանականութամբ, չի նույնանում Հայաստանի Արաքս (Երասխ) գետին, քանզի այդ Արաքսն անցնելով թուրքերը մուտք էին գործում Պարսկաստան և ոչ Հայաստան: Արաքս անունով այլ գետեր էլ կան Պարսկաստանում:

544. Բնագրում՝ Πισσαριος:

545. Բնագրում Κουτλουμουξ: Ուոհայեցու Գթլմուչը (էջ 102): Կարվեսիսը Ուոհայեցու մոտ կոչված է «զօրապետն Մօսլայ, որ ասէն Խուրէշ, տէրն Մօսլայ», «ամիրայն Տաճկաց» (էջ 99):

546. Պարադինաստեոն նշանակում է կայսերակից: Համապատասխանում է ժամանակակից պրեմիեր մինիստրի պաշտոնին (տե՛ս Beck, Der byzantinische „Ministerpräsident“, S. 309—338):

547. Դեպքերը տեղի ունեցան Արճեշում: Ուոհայեցին այստեղ Գթլմուչին չի հիշում, այլ Պօղի, Պուկի և Անազուղի ամիրաներին, որոնք ավարի առնելով Պաղինն ու Թլմուխ գավառը, ընկել էին վերադարձի ճանապարհը: Նրանց զորքը «հասանէր մինչև

Արճէշ քաղաքն Հայոց: Եւ էր անդ զօրավար մի Հոռոմոց՝ որում անուն ասէին Ստեփան կատապան. և ամիրայքն Պարսից յուղարկեցին բազում աւարս Հոռոմոց զօրավարին՝ զի տացէ նոցա անց, զի գնասցեն յաշխարհն իւրեանց: Իսկ նորա հպարտացեալ էլանէր ի պատերազմ ի վերայ զօրացն թուրքաց. և յայնժամ յաղթեցին զօրացն Հոռոմոց թուրքն և արին սաստիկ կոտորածս և կալան զՍտեփան կատապանն և տարան ի Հեր քաղաք» (Մատթ. Ուռհ., էջ 99):

548. Մոտավորապես նույն ձևով է բնութագրում հոռոմոց զինվորներին Ուոհայեցին: Թուրքերը, ասում է նա, 498 (1049) թ. եկան հայոց աշխարհը «վասն զի ի ձեռացն Հոռոմոց գիտացին անտէր և անպահապան զամենայն աշխարհն Հայոց. զի զարսբաջս և զհօրս քակեալ հանին յարևելից Հոռոմք և կուրտ զօրապետօք ջանային պահել զաշխարհն Հայոց և զամենայն տունն արևելից» (էջ 102):

549. Վասպուրականը:

550. Այստեղ նկատի ունի Վրաստանը և նրա թագավորին, և ոչ Իբերիա բնակաթեմը:

551. Մատթեոս Ուոհայեցին Լիպարիտի մասին գրում է, թե նա «եղբայր էր Ռատին (Սկիլիցեսի Օրատիոսը) և Զոյատին՝ վրացի ազգաւ՝ ի հօր ջոկէ» (Մատթ. Ուռհ., էջ 109):

4. Թումանովի կարծիքով Լիպարիտյանները հանդես եկան Վրաստանում 876 թ. որպես Թրիալեթիի (Թուրք) տերեր և, հավանաբար, սերում են Արտավազդ Մամիկոնյանից (VIII դ.), կամ նրա ազգականներից: Նրանք կրում էին Ռատ մականունը, որ ծագում է հայկական Հրահատից: Ինչպես Մամիկոնյանները Հայաստանում, այդպես էլ Լիպարիտյանները Վրաստանում (XI—XII դդ.) ունեին սպարապետի աստիճանը (տե՛ս Toumanoff, The Mamikonids, p. 125—138):

552. Այս դեպքերն իրենց արտացոլումն են գտել նաև Վարդան Արևելցու պատմական երկում: «Յայն ժամանակի,—գրում է նա,—փոխէ զԳէորգ՝ Վրաց թագաւոր, որդի իւր Բագարատ. և իշխանն Վրաց Լիպարիտ ապստամբեալ փախուցանէ զնա ի խորին Ափխազք և ունի ինքն զաշխարհն իմաստութեամբ՝ ձեռն տուեալ ի Միքայէլ կայսրն» (էջ 132):

553. Բնագրում՝ Τεφλις:

554. Խոսքը նշանավոր Ահարոն Բուլղարի մասին է, Վասպուրականի բյուզանդական Էտոավարչի, որ հետագայում դարձավ «Հայաստանի և Իբերիայի» կատապան: Ղ. Ալիշանը այս Առոն Մագիստրոսին չգիտես ինչու համարում է Պահլավունի (հետևաբար՝ հայ): Տե՛ս Ալիշան, Շիրակ, էջ 39: Գրքի ցանկում Ալիշանը նույն մարդուն երկու անգամ է հիշատակում, մեկ անգամ որպես «Առոն մագիստրոս Պահլաունի» (էջ 182) և «Առոն մագիստրոս կատապան»: Սակայն աշխատության 97-րդ էջում Առոնն իրավացիորեն համարվում է «ազգաւ բուլղար»: Ահարոնը բուլղարների թագավոր Հովհաննես-Վյազիսլավի որդին էր, որ բուլղարական թագավորության վերացումից հետո իր եղբայրների հետ բերվեց Բյուզանդիա և անցավ ծառայության:

555. Խոսքը Մեծ Զաբ գետի մասին է, որ Վասպուրականի սահմանն էր կազմում (Honigmann, Die Ostgrenze, S. 179):

556. Իբրահիմ Ինալը, Ուոհայեցու Աբրեիմը (էջ 102): Սելջուկների այս արշավանքի մասին տե՛ս Успенский, Движение народов, стр. 15 и сл.:

557. Լաստիվեցին հիշում է այդ բերդերից մեկը, Մանանադի գավառի Սմբատաբերդը, որտեղ ապաստան էր գտել անգնն բնակչությունը. «քանզի անդ ժողովեալ



էին ռազմութիւն անթիւ փախստէիցն, և անասնոցն որ ոչ գոյր թիւ» (էջ 71): Սակայն այն շփրկեց իրենց, «հասեալ անօրինացն ապականեցին զամուրս նորա, և մտեալ ի ներքս՝ սուր վերայ եղեալ կոտորեցին զամենեսին» (էջ 71):

558. Հայ. Օրդորու, Օրդրու, վրաց. Օրդրու: Գտնվում էր Բասենում (Honigmann, Die Ostgrenze, S. 180):

559. Արծնի առումն ու կործանումը շատ մեծ տպավորութիւն գործեց ժամանակակիցների վրա: Հաստիվերցին մի ամբողջ գլուխ (ժԲ) է նվիրել դրան՝ «Վասն Արծինն անողորմ կոտորածին» վերնագրով: Հաստիվերցին Արծնը համարում է հոյակապ և ականաւոր ...ամենայն աշխարհաց... և իրրև ակն մի պատուական լուսագեղ պայծառութեամբ փայլէր քաղաքս մեր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենեկին գեղեցիկ, բոլորովին զարդարուն» (էջ 74—75): Ուղհայեցու ասելով Արծնն էր «անթիւ բազմութեամբ լցեալ զարանց և զկանանց և անհամար շափս ոսկւոյ և արծաթոյ» (էջ 102): Սկիւիցեսը նման նա էլ կոտորված բնակչութիւնը հաշվում է «իբրև զբիրս հնգետասան»: Մատթեոս Ուղհայեցին Արծնի առումը համարում է «սկիզբն ...Հայոց կորստեանս... վասն գի այս է առաջին քաղաք, որ առաւ սրով և գերութեամբ ի Հայոց» (էջ 103): Սկիւիցեսը Արծնը անվանում է «գյուղաքաղաք», Ատտալիատեսը *πολιτεία* (էջ 148), որի տակ նա քաղաք է հասկանում: Մի այլ տեղում Ատտալիատեսը Արծնը կոչում է գյուղաքաղաք, ցույց տալիս, որ այն գտնվում էր Կարինին մոտ, իր աշխարհազրական հարմար դիրքի պատճառով առինքնել էր Թեոդոսուպոլսի բնակիչներին, և Թեոդոսուպոլիսը դրա հետսանքով անմարդաբնակ էր դարձել (*ἵστορικὸς*): Արծնում կարելի էր գտնել Պարսկաստանից, Հնդկաստանից և Ասիայից բերված ապրանքներ (*Attal.*, p. 148):

560. Մատթեոս Ուղհայեցու մոտ՝ «բերդն՝ որ կոչի Կապուտու» (էջ 107): Հայ պատմիչը ցույց է տալիս, որ բերդն է «ի տեղին՝ որ Արշովիտ ասի»: Արշովիտը գտնվում էր Բասենի դաշտում: Հաստիվերցին այն տեղադրում է «ի դաշտին Բասենայ» առանց նշելու բերդի անունը (էջ 80): Կարծես Կապուտունն նկատի ունի Ասողիկը՝ VII դարի վերջերի դեպքերի առնչությամբ: Հուստինիանոս II կայսրը ներսեհին նշանակեց «կոմս Կապուտիրոց» (Ասողիկ, էջ 101: Այլ գրչագրեր տալիս են Կապուտուու ընթերցումը):

561. Նույն բանն է ասում և Ուղհայեցին. «և ասէր ի պարիտն՝ եթէ «Շաբաթ է, և ոչ է օրէն վրացեացս յաւուր շաբաթու ի պատերազմ» (էջ 107):

562. Քննական բնագրում՝ Χωροσάντης, Բոննի հրատարակութեան մեջ՝ Χωροσάντης (սորասանցի):

563. Քննական բնագրում՝ Ἀσπὴν Σαλαρίου, Բոննի հրատարակութեան մեջ՝ Ἀσπὰς Σαλαρίου: Անուն չէ, այլ «սպասարի» (ասպասար) աղավաղումը:

564. Սկիւիցեսը գրում է *ανεβίος*, որ և՛ բեռորդի, և՛ եղբորորդի է նշանակում: Մատթեոս Ուղհայեցին տալիս է նրա անունը՝ Չորտվանել և համարում ի պարիտի «բուրորդին» (էջ 107):

565. Մինորսկին ենթադրում է, որ Կապուտուուի ճակատամարտը և ի պարիտի գերումն Իբրահիմ Յանալի կողմից տեղի ունեցավ 1048 կամ 1049 թ. սեպտեմբերի 18-ին (*Minorsky, Studies*, p. 61. n. 2):

566. Բնագրում՝ Κατροχωμίων (Κατροχωμιά), որ թարգմանաբար «բերդագյուղ» է նշանակում: Բայց պետք է կարդալ *χίστρον Ὀχώμιον* — Օկոմի բերդ: Ուղհումը կատարել է գեոկև Բրոսսեն (*Brosset, Additions*, p. 225, n. 2), բայց Սկիւիցեսի քննական բնագրում սխալը մնացել է: Հաստիվերցին այն անվանում է «մեծ աւանն՝ որ կոչի Օկոմի» (էջ 29), և մի քիչ հետո ավելի հստակ. «աւան մի էր ի գաւառին Բասենոյ՝ մերձ առ սոտորոտով լերինն որ կոչի Միրանիս, և անուն նորա Օկոմի մարդաշատ և ընչաւէտ» (էջ 102):

Ավելորդ չէ նշել, որ Օկոմին հիշում է և Ասողիկը. «Վանս, որ Ակսիկոմս ասի, ի Բասեան գաւառի, ... առ ստորոտով լերինն Միրանեաց» (Ասողիկ, էջ 185):

567. Այս պատերազմում, բացի Կեկավմենոսից (Կամեն), Անհարոն Բուլղարից (Աոն) և Լիպարիտից, մասնակցում էր նաև «Գրիգոր Վասակայ որդին», այսինքն՝ Գրիգոր Մագիստրոսը, որ այն ժամանակ լինելով Միջագետքի կառավարիչը («... գորընդ ձեռամբ իւր ունէր՝ և զղթսութիւն Միջագետացն», Վարդան, էջ 133), պետք է որ ի պաշտոնն մասնակցեր մարտին: «Ձայսու ժամանակաւ,— գրում է Վարդանը,— Գրիգոր՝ որդի քաջին Վասակայ... առնու ընդ իւր գԱպիրատ (հավանաբար՝ Լիպարիտ—Ն. Բ.) զիշխան Վրաց և այլ ևս երկու մագիստրոս (երևի՝ Ահարոն Բուլղարին և Կատակալոն Կեկավմենոսին—Ն. Բ.) և երթայ ընգզէմ Իբրահիմայ զօրագլխի Տուղրիլ պէկ սուլտանին» (Վարդան, էջ 133):

568. Պարսկաստանի Ռեյ քաղաքը:

569. Վասպուրականի կատապան Ահարոն Բուլղարի փոխքարտուղարը:

570. Բուլղորովին այլ կերպ է նկարագրում Լիպարիտի գերվելը Մատթեոս Ուռհայեցին: Հալ պատմիչի ասելով, սկզբնական շրջանում նա ջարդ տվեց թշնամիներին, բայց հոռոմոց զինվորները, տեսնելով Լիպարիտի քաջությունը, լքեցին և փախան, որպեսզի նա «մի առցէ զանուն քաջութեան»: Բացի այդ, Լիպարիտի ձիու ոտքի ջլերը կտրեց «մի ոմն ի զօրաց Վրացն» (էջ 108), որով նա ընկավ գերի և տարվեց «ի հորասան առ Տուղրէլ սուլտանն»: Լաստիվերցին ևս ցույց է տալիս, որ բյուզանդական զորահրամանատարները «ինքեանք իսկ չէին միաբան առ միմեանս», որ պատերազմի ժամանակ «որդի Բուլղարին (այսինքն՝ Ահարոն Բուլղարը) իւրայնովքն ի թիկունս դարձեալ համարձակութիւն տայր թշնամեացն. որք մեծաձայն աղաղակաւ զմիմեանս յորդորէին, և ի մէջ փակեալ զԼիպարիտն իւրով քաջ արամբքն զոմանս սպանանէին, և գերիվարի նորա զջիւսն հատեալ սուսերաւ՝ զինքն ձերբակալ առնէին: Զոր տեսեալ այլ զօրացն՝ ի փախուստ դառնային» (էջ 81): Ալիլիցեսի մոտ, ամենայն հավանականությամբ, տեղ է գտել բյուզանդական զորավարների կայսեր տված զեկուցագիրը, որտեղ պարտության մեղքն աճրողովին զցված էր Լիպարիտի վրա: Այդ բանը հաստատվում է և դրանով, որ Լիպարիտին ազատելու համար ինքը՝ Մոնոմախը մեծ փրկագին է վճարում սուլթանին և նրա ազատվելուց հետո մեծ պատիվների է արժանանում կայսեր կողմից (հմմտ. նաև Վարդան, էջ 133—134):

Ստեփանոս Օրբելյանը Լիպարիտին Օրբելյան է համարում և ցույց տալիս, որ բյուզանդական կայսրը թուրքերի վտանգի առաջն առնելու համար 1049 թ. հայերից ու վրացիներից զինական շքանշան է խնդրում: Վրաց Դավիթ և Կաբսի Գագիկ թագավորները համոզում են «զբաջն անպարտելի՝ զԼիպարիտն Օրբէլեանց՝ գնալ և խառնիլ ի չօրն Յունաց և ընդդիմանալ մարտին եկելոյ»: Պատմիչի ասելով «կոտորեալ յաղթեաց Իսմայելացւոցն. և փախստական արար զսակաւ մնացեալսն քաջն Լիպարիտ»: Օրբելյանը շարունակում է. «Իսկ անիծեալ և տիրասպան ազատքն Վրաց երկուցեալ յահագին զօրութենէ նորա. և խորհուրդ առեալ ընդ դէդեպուլ զօրագլուխսն Լիպարտի. և յանկարձակի հատին զջիլ երիվարին նորա. և ընկեցին յերկիր զԼիպարիտն: Եւ ի մէջ առեալ բազմութեանն սպանին զնա ի տեղւոջն...» (Ստեփաննոս Օրբելյան, Պատմություն, էջ 374—377):

Իրն ալ Աթիրը գրում է, թե 440 (1048/9) թթ. մուսուլմանները հաղթանակ տարան հոռոմները դեմ, փախուստի մատնեցին նրանց, շատերին կոտորեցին և բազմաթիվ պատրիկների գերի տարան: Նրանց թվում էր և «Ափխազների մելիք (թագավոր) Կարի-



տր»: Բ. Սիլադաձեի կարծիքով խոսքը Բասենի ճակատամարտի մասին է և Լիպարիտ գորավարի (էրիսթավի): *Sb' u Ci. lazaձձե*, К уточнению одного места, стр. 69:

571. Շերիֆ Նասիր (Նադիյյա?) իրն Իսմայիլ ալ-Հասանին (տե՛ս *Cahen*, *La diplomatie orientale*, p. 13):

572. Դենպր զետր:

573. Ուզերր (օղուղները) թուրքական ցեղ են: Դյուլորիեն կարծում էր, որ Ուոհայեցին «ազգք ածիցն» ասելով (էջ 109) նրանց նկատի ունի (ուզ-օձ): (*Sb' u Matthieu d'Edesse*, p. 404): Այս ներքին կռիվների մասին հետաքրքիր տվյալներ ունի Ուոհայեցին. «ազգք օձիցն ելին և հարին զհարտէջքն, և հարտէջքն ելին և հարին զՈւզն և զՊածինակն, և միարան ըրրորքեցան ի վերայ տանն Հոռոմոց» (էջ 109): Այսպիսով, Դյուլորիեի ենթադրությունը ուզ-օձ-ի նույնությունը մասին չի հաստատվում: Բացի այդ, հիշյալ դարձվածքը հանդիպում է նաև Ղևոնդի մոտ և դործածված է արարների վերաբերյալ. «իրրև օձք թևաւորք յառաջեցին թշնամիքն» (էջ 9):

574. Պածինակները դեռ 1036 թ. շարդ ստանալով Կիևյան իշխան Յարոսլավից, սկսել էին գաղթել արևմուտք: Նրանք բյուզանդական տիրապետություններն անցան 1048 թ. Ա. Կաթղանի կարծիքով Կեդենի պածինակները մուտք գործեցին 1045 թ. ոչ ուշ, Տյուրախր ներհուծեց 1046 թ. հունվարին (տե՛ս *Каждан*, Иоанн Мавропод, стр. 182):

575. Մերձդանուբյան շրջանների:

576. Խոսքը սլավոնական Օվչեպոլի մասին է:

577. Բյուզանդա-սլավոնական այս դեպքերի ու հետևանքների մասին մանրամասն տե՛ս *Каждан*, Иоанн Мавропод, стр. 177—184; *Stanescu*, *Le crise du Bas-Danube*, p. 49—73:

578. Թվում է լատիներեն բառ է, խորհուրդ նշանակող:

579. Հավանաբար նույն Օկոմին (տե՛ս ծանոթ. 566):

580. Բնագրում՝ *Μανζιχίερτε*: Մատթեոս Ուոհայեցու համաձայն սուլթան Տուզրիլը նախքան Մանազկերտ հասնելը, «իջեալ ի քաղաքն, որ կոչի Բերկրի, և պատերազմաւ առեալ զքաղաքն», ապա «պատեալ զքաղաքն, որ կոչի Արճէշ»: Բնակիչները նրան հնազանդություն հայտնեցին և խորհուրդ տվեցին, զնալ ու գրավել Մանազկերտը, քանզի դրանից հետո «մեք և մմենայն աշխարհն Հայոց քեզ լիցուք ի ծառայութիւն» (էջ 118):

581. Ուոհայեցու խոսքերով. «և էր զօրապետ քաղաքին իշխանն Հոռոմոց Վասիլն՝ որդի Ապուբապին», որին նա բնորոշում է որպես «այր բարի և աստուածապաշտ» (էջ 119): Լատիվներցին նրան հիշում է «Վասիլն՝ որ քաղաքին իշխանն էր» ձևով (էջ 94), իսկ դրանից առաջ, առանց անունը տալու, նրան բնութագրել էր հետևալ կերպ. «իսկ իշխանն որ ունէր զհոգ վերակացութեան քաղաքին, քանզի այր բարեպաշտ էր, զամենակալն Աստուած կարդայր յօգնականութիւն» (էջ 90): Վասիլ Ապուբապի և ընդհանրապես Ապուբապների մասին տե՛ս *Каждан*, Армяне, стр. 67—70:

582. Սկիիցեսը խոսում է բարանների մասին: Ուոհայեցին ցույց է տալիս, որ թուրքերը մարդ ուղարկեցին Բաղեշ և բերել տվեցին Վասիլ կայսեր՝ Հեր քաղաքի գլխավոր համար պատրաստած «ահաւոր և զարմանալի» բարանը (էջ 119—120), որը սակայն Վասիլ Ապուբապը կրակի տվեց մի ֆրանկ զինվորի օգնությամբ: Այդ բարանը (առանց Ուոհայեցու տված մանրամասնությունների) հիշատակում է և Ատտալիատեսը, որը ևս վկայում է, որ այն կրակի տվեց մի լատին զինվոր (*Attal.*, 46—47):

Մովսես Խորենացին նման մի մեքենա կոչում է «էշ» և տալիս նրա հետաքրքիր նկարագրությունը. «նւ է այս գործի մեքենայից անուաւոր, յերից երից արանց մղելով

տարեալ, և ի ներքուստ կացնովք և սակրօք երկբերանովք և կտցաւոր մրճովք՝ փորել զհիմունսն» (Գ, 28):

583. Ալկանն, ամենայն հավանականությամբ, նույնանում է Լաստիվերցու հիշատակած «Դելմից զօրուն» իշխանի հետ, որ իսկապես գերի ընկավ քաղաքի պաշտպանների ձեռքը (էջ 92): Ուոհայցին այս ընդհարումների ժամանակ հայերի ձեռքում գերի ընկածների թվում հիշում է սուլթանի աներոջ, որին Ոսկեծամ է կոչում: Կ. Յուզբաշյանը նրան նույնացնում է Ուոհայցու «Դելմից զօրուն» իշխանի հետ (տե՛ս ЮЗБАШАН, Дейлемнты, стр. 146—148):

584. Ուոհայցին չգիտե Ալկանի գլուխը բաբանով դեպի սուլթանը շարտելու մասին, բայց նա ցույց է տալիս, որ բաբանով սուլթանի կողմը գցեցին մի խոզ, ասելով, թե «Ա՛ռ սուլտան, զայգ քեզ կին արա, և մեք տամք զՄանծկերտ քեզ պոռոզ» (էջ 122):

585. Սուլթանը հեռանալով Մանագկերտից, մտավ Արծկե քաղաքը և կոտորելով, թալանելով ու գերեվարելով բնակչությունը, հեռացավ (Արխսո. Լաւտ., էջ 94):

586. Նկատի ունի մեծ հետերիարխ Կոստանդին ներքինուն, որը 1047 թ. Աբու-լ-Ասվարի հետ պայմանագիր էր կնքել՝ բյուզանդական տիրույթների անձեռնմխելիությունն ապահովող (տե՛ս վերը, էջ 150):

587. Այս արշավանքը թվագրվում էր 1048—1049 թթ., այժմ ոմանք գտնում են, թե 1055—1056 թթ. հետո է տեղի ունեցել: Ըստ Մինորսկու դեպքերը տեղի ունեցան 1048-ին կամ 1049-ին, նախքան Աբու-լ-Ասվարի Գանձակի վրա տիրապետությունը տարածելը (տե՛ս Minorsky, Studies, pp. 55—56, 59—64):

Ռեօտոր Նիկեփորին հանդիպում ենք և վրաց «Մատիանե Քարթլիսայ»-ում («Матиане Картлисай», стр. 52), որտեղ նա հանդես է գալիս «Լիխտուրի» «անվան» տակ: Վրաց մասնաղետները «Լիխտուրի»-ն համարելով վրացերեն բառ, մեկնաբանում են «սպարապետ» (նույն տեղում, էջ 86), այնինչ դա բյուզանդական «ոքսոտոր»-ի պարզ աղավաղումն է:

588. Այս «Երկաթե կամուրջը» (σιδῆρι γέφυρα) Լիտավրինը սխալմամբ նույնացնում է Անտիոքից Տյուսիս-արևելք, Օրոնտես գետի վրա նետված Σιδεραγεφυρον-ի (Երկաթե կամուրջի) հետ, ժամանակակից Gisc al-hadid-ի («Советы и рассказы», стр 641): Սկիլիցեսի պատմածից պարզ երևում է, որ Գանձակից (Կիրովաբադ) հեռու չէր գտնվում:

589. Նկատի ունի ժամանակակից Կիրովաբադը:

590. Բնագրում՝ Ἀθιναεῖς, արաբ. թրք. Աբու Մելիք (կամ Աբդուլ Մելիք):

591. Այս դեպքերը տեղի ունեցան 1049 թ. առաջ, քանզի այդ թվականին Աբու-լ-Ասվարը իր գերիշխանությունը տարածեց նաև Գանձակի վրա: Երբ Լաստիվերցին Աբու-լ-Ասվարի մասին գրում է, թե նա «գ՛ուրին և զԳանձակ ունէր» (էջ 96), նկատի ունի 1049-ից հետո տեղի ունեցած դեպքերը: Սկիլիցեսը տարբերություն է դնում Դվինի իշխանի (αρχων τῶν Τιβισοῦ), այն է Աբու-լ-Ասվարի և Գանձակի իշխանի (κατσργων τῶν Καντζακισοῦ) միջև: Վերջինս Լաշկարին էր, որ իշխեց մինչև 1049 թ.: Սկիլիցեսի ասելով Արտաշիրը [Աբու-լ-Ասվարի] եղբայր, Գանձակի տիրոջ Փադլունի որդին էր: Մինորսկու կարծիքով Արտաշիրը կարող է լինել միմիայն Լաշկարիի որդին (Minorsky, Studies p. 48—49):

592. Բառը ռունարեն չէ, գուցե արաբերեն Մայդա՞նը (դաշտ, հրապարակ):

593. Ապստամբ Լևոն Թոռնիկի:

594. Հերվե Ֆրանկոպոլոսին հիշատակում է Մատթեոս Ուոհայցին 511 (1062) թվականի դեպքերի առնչությամբ, անվանելով նրան «մեծ իշխանն, որ կոչէր Փրանգապօլ»:



(էջ 142): Ֆրանկոպոլոս թարգմանաբար նշանակում է ֆրանկորդի: Պահպանվել են նրա արճճե կնիքները, «մագիստրոս, վեստ և արևելից ստրատելատ» մակագրությամբ:

595. Հավանաբար թուրքական կուլի (ծառա, ստրուկ) բառից:

595ա. Կատակալոն Կեկավմենոսը այսքան վերքեր ստանալուց հետո հագիվ թե կենդանի մնար, գեռ ավելին, առողջանալուց հետո շարունակելու իր ռազմական գործունեությունը (արմատից կտրված լեզվով): Հետևաբար հետագայում հիշվող մագիստրոս Կատակալոն Կեկավմենոսը այլ անձնավորություն է: Սկիզբներ առաջին Կեկավմենոսին երբեք մագիստրոս չի կոչում, ամենաշատը՝ վեստ: Առաջինը Սկիզբների գիտական բնագրի հրատարակիչ Քուլոնը նրանց երկու տարբեր անձնավորություններ է համարում, հակառակ դրան նորագույն աշխատություններում շարունակում են այդ երկու անձնավորություններին նույնացնել (տե՛ս *Каждан, Армяне: նաև՝ Shepard, Synopsis*):

596. Տոպոտերետներ ռազմական աստիճան էր Բյուզանդիայում, տագմայի հրամանատարից անմիջապես հետո եկող և նրան ենթակա (*Ahrweiler, Recherches, p. 31*):

597. Բյուզանդական աղբյուրներում հստակ տարբերվում են ֆրանկ և վարանգ (այսինքն՝ վարյագ, սկանզինավացի) հասկացությունները: Հայկական աղբյուրներում հաճախ վրանգը շփոթվել է ֆրանկի հետ և ձեռագրերում գրիչների մեղքով ֆրանկ են կոչվել վրանգները (տե՛ս Արխտ. Լաստ., էջ 88: Մատթ. Ուոհ., էջ 350): Հարցի վերաբերյալ տե՛ս *Еремян, Юрий Боголюбский, стр. 390*: նաև՝ Կ. Ն. Յուզբաշյան, Արիստակես Լաստիվերցու Պատմության մեկ տարբերակիցվածքի մասին, էջ 77—79: Վարյագների մասին տե՛ս *Benediktz, The evolution, p. 20—24*:

598. Տլուքում, Սև լեռում և Կարկառում բնակվում էին բազմաթիվ հայեր: Գեռևս Ինոմանոս III Արգիրոս կալսեթ ժամանակ Սև լեռան շրջանում կային մեծ թվով հայադավան վանքեր ու մենաստաններ (Արխտ. Լաստ., էջ 42—43), որոնց բնակիչներին էլ այսօր բռնի գինվորագրեց: Կարկառը (այժմ Գերգեր Եփրատի ափին) մտնում էր Ուոհայի կատապանության մեջ (Մատթ. Ուոհ., էջ 142):

599. Բնագրում՝ εἰς ὄρη: Հավանաբար օտարերկրացիներից բաղկացած զորքերի հրամանատար:

600. Բնագրում՝ ἀπολοῦσιος: Այդպես էր կոչվում վարյագների զորահրամանատարը: IX և X դարերում ակոլոթոսը գլխավորում էր օտարերկրացի վարձկան գինվորներին, որոնք գլխավորապես ֆրանկներ էին: Նա անմիջականորեն ենթարկվում էր Արիթմոսների կամ վիգայի դրունգարին և իր աստիճանով հավասար էր սխուրի պրոքսիմոսին և էքսկուբիտորների պրոտոմանդատորին, դրա համար էլ կոչվում էր նաև ἀπολοῦσιος τῶν ἀριθμοῦ: Բոլոր ժամանակներում վարյագները մաս էին կազմում կայսերական գվարդիայի: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում աղբյուրները հիշում են միայն այս ակոլութոս Միքայելին: Մի ակոլութոսի էլ հիշում է Մատթեոս Ուոհայցիին (էջ 83): Սրանց մասին մանրամասն տե՛ս *Guilland, Les commandants de la garde imperial, p. 79—96*:

601. Բոյիլասները հայտնի ընտանիք էին Բյուզանդիայում, ծագումով հավանաբար բուլղար (բոյիլաս հին բուլղարների մոտ նշանակում էր բոյար): Բյուզանդական աղբյուրներում անունն առաջին անգամ հանդիպում է Քեոփանեսի «Ժամանակագրության» մեջ, 798 թ. դեպքերի առնչությամբ: Նշանավոր էր Եվստաթիոս Բոյիլասը, որ 1059 թ. կտակ է գրել, որից երեւում է, որ նա հաստատվել է Տայք-Կղարջքում և ունեցել լայնատարած կալվածներ: Մանրամասն տե՛ս Բարթիկյան, Բոյիլասի կտակը:

602. Մալիք իրն Իբրահիմ Ինալ:

603. Բնագրում *Kärse* (Կարսե: Հմմտ. ծանոթ. 25): Գրիգոր Բակուրյանի Կանոնագրության մեջ (տե՛ս *Georgica*, t. V, էջ 246) նույնպես գրված է *Kärse*: Լաստիվերցին Կարսի գրավմանը նվիրել է իր աշխատության մի ամբողջ գլուխը (ԺԾ) «Քե որպէս անհնարին հարաւ քաղաքն յղփացեալ, որ կոչի Կարս» վերնագրով: Քաղաքի գրավումը նա թվագրում է հայոց 502 թ. (8 մարտ 1053—7 մարտ 1054), Քրիստոսի Հայտնության տոնին (6 հունվար), հետևաբար 1054 թ. հունվարի 6-ին: Նա ևս նշում է, որ թշնամին շկարողացաւ գրավել միջնաբերդը. «թէ ոք ժամանեաց յամուրն ելանել որ ի վերայ քաղաքին կայ, նա միայն ապրեցաւ» (Արիստ. Լաստ., էջ 84): Շարունակելով իր պատմությունը, Լաստիվերցին ցույց է տալիս, որ թուրքերը քարուքանդ արեցին տները, ապա քաղաքը կրակի տվեցին և գերիններով ու թալանով հեռացան իրենց երկիրը: Դեպքերի մասին տե՛ս *Еремян, Присоединение*, стр. 12:

604. Արիստակես Լաստիվերցին «Վասն գալոյ սուլտանայ» գլխում ցույց է տալիս, որ 503 (1054) թ. սուլթանը բանակեց Ապահունյաց գավառում. Մանագկերտ քաղաքի շուրջ, որտեղից «արձակեաց ասպատակս յերեսին կողմանս աշխարհիս, ի հիւսիս՝ մինչև յամուրն Ափխազաց և մինչև ի լեառն որ կոչի Պարխար և մինչև ցստորոտն Կովկասու. և յարևմուտս՝ մինչև յանտառսն Ճանեթոյ, իսկ ի հարաւ մինչև ցՍիմն կոչեցեալ լեառն» (էջ 84—85): Պատմիչը շարունակում է. «Իսկ որ ի Տայսն մտին, առեալ ղերկիրն և հասեալք մինչև ի գետն մեծ՝ որ կոչի Ծորոխ, և զկնի գետոյն դարձեալ իջին յաշխարհն հաղտեաց. և առեալ զառ և զգերի գաւառին՝ դարձան, և եկեալ մինչև ի բերդաքաղաքն որ կոչի Բաբերդ» (էջ 87): Տայքը, հարկավ, նույնանում է Սկիլիցեսի Իբերիային, իսկ վերջինիս հալոթիայի տակ՝ ենթադրվում է Լաստիվերցու հաղտիքը:

Այս նույն գլխում Լաստիվերցին ցույց է տալիս, որ սելջուկները ասպատակեցին նաև Խորձյանն ու Անձիտը, ՚երջանն ու Եկեղյաց գավառը, բայց, ինչպես իրավացի նշում է Կ. Յուզբաշյանը, Լաստիվերցին նկատի ունի տարբեր տարիներում տեղի ունեցած արշավանքները («Повествование», стр. 165):

605. Այդ մասին գրում է Լաստիվերցին: Տողրուլ բեկի դեմ, ասում է նա, Բաբերդում դուրս եկավ «գունդ մի ի ղօրացն Հոռոմոց, որ կոչին Վոանգը» (էջ 87—88):

606. Սկիլիցեսը ցույց է տալիս, որ սուլթանը կովի շքանվեց Միքայել ակոլութոսի գլխավորած ֆրանկների և վարյագների հետ, այնինչ ըստ Լաստիվերցու ճակատամարտ տեղի ունեցավ և հոռոմները հաղթեցին, աղատեցին գերիներին: Պատմիչը գրում է նաև, որ սուլթանի մի այլ զորք Վանանդում սլատերազմի բռնվեց Գադիկ Արասուանի քաջազուն իշխանների հետ, նրանց պարտության մատնեց և, ի միջի այլոց, գերեց Քաթուլ իշխանին, որին տարան Տողրուլ բեկի մոտ և մահապատժի ենթարկեցին (էջ 88):

607. Ատտալիատեսի վրա այս փիղն ու ընծուղտն այնքան մեծ տպավորություն գործեցին, որ նա ամենայն մանրամասնությամբ նկարագրում է այդ կենդանիներին, որոնց նա, անկասկած, առաջին անգամ էր տեսնում (*Attal.*, p. 48—50):

608. Կոստանդնուպոլսի ամենանշանավոր վանքերից մեկը: Իր գոյությունը պահպանեց մինչև մայրաքաղաքի անկումը, որից հետո անցավ դերվիշների ձեռքը: 1467 թ. Մեհմեդ II-ը այն քանդեց և նրա տեղում կառուցեց սերայլը, նրա շինարարության համար օգտագործելով սբ. Գեորգի վանքի և եկեղեցու քարերը:

609. «Իբերական» (և Միջագետքի) զորքերի լուծարքի մասին տե՛ս նաև՝ *Glycae Annales*, p. 598. Կեկավմենոսը գրում է, որ Կոստանդին Մոնոմախի հրամանով Սերվիխսը գնաց Իբերիա և Մեսոպոտամիա՝ ունեցվածքի հաշվառում կատարելու (*ἀναγράψασθαι*, դա կատարվում էր 15 տարին մեկ և հաշվառման էին ենթարկվում հար-



կատու բնակչութեան շարժական ու անշարժ ունեցվածքը, ամենից առաջ հողն ու լժկան անասունները): Սերվիասը այնպիսի հարկեր նշանակեց, որպիսիք այդտեղի մարդիկ, կեկավմենոսի ասելով, իրենց օրում չէին տեսել: Հենց այդ բանն էլ «բնակիչներին ստիպեց տնով տեղով անցնել պարսից (իմա՝ սելջուկների) թագավորի (հավանաբար՝ Տողրուլ բեկի—Չ. Բ.) կողմը: Նրան ամբողջ զորքով բերելով ընդդեմ Ռոմանիայի, երկիրը ողողեցին բյուր փորձություններով ու արհավիրքներով» («Советы и рассказы», стр. 152—154, Հմմտ. և *Attal.*, p. 44—45).

Ավելորդ չէ ասել, որ Սկիլիցեսի (և բյուզանդական մյուս հեղինակների) հիշած «իբերական» զորքը չի կարելի միայն վերագրել Իբերիային (Տայքին): Է. Հոնիդմաննի կարծիքով դա հայկական զորք էր՝ «iberische Heer, d. h. die einheimische Miliz Armeniens» (*Honigmann, Die Ostgrenze*, S. 178):

610. Շատ պատկերավոր է նկարագրում այս քաղաքականությունը Ջոնարասը: «Կային երկրներ,— գրում է նա,— որ կայսեր հարկատու չէին, այլ ամեն տեսակի հարկատվության փոխարեն պաշտպանում էին (երկրի) դժվարանցանելի վայրերը և հոռմաշիհներին հպատակ երկրների առջև բարբարոսների ճանապարհն էին պարսպապատում: (Կայսրն) այդ երկրների վրա հարկեր նշանակեց և ցրեց պահակազորերը: Դրա հետեւանքով բարբարոսների մուտքը հոռմեական շրջանները հեշտացավ: Միանգամայն շնախապաշարված մարդիկ հենց այս մարդուն (կայսեր—Չ. Բ.) պետք է համարեն (պետություն) արևելյան մասը բարբարոսական նիդակի կողմից նվաճվելու պատճառ» (*Zonar.*, IV. p. 178):

611. Ավելի մոայլ գույներով է բնութագրել Կոստանդին Մոնոմախին կեկավմենոսը: Նա գրում է, որ Մոնոմախը «ավերեց ու ամառացրեց հոռմայեցիների թագավորությունը» («Советы и рассказы», стр. 288): Նրանցից ետ չի մնում լաստիվերցին: Մոնոմախի առնչությամբ նա բերում է Սողոմոնի առակը (ԻԹ, 4) թե «թագաւոր արդար կանգնէ զաշխարհս, իսկ անօրէնն կործանէ»: Վերջինիս տակ նա Մոնոմախին նկատի ունի, որ «միշտ ուտելեաց և ըմպելեաց պարապեալ, զաղբիս մեծացուցանէր, և զգանձս, զոր ի հարկաց ամենայն աշխարհաց ժողովէր... ի բոզից ծախսն վճարէր և ոչինչ ցաւէր նմա աշխարհի աւերումն» (էջ 95): Նա «թագաւորեաց ամս երեքտասան, ոչինչ բարի յիշատակաց արժանի եղեալ» (նույն տեղում):

612. Կոստանդին Միրանածինը բացատրում է տերմինը. «Նա ում վստահված է կայսերական գրչի հոգսը»: Կի: ավոր քարտուղար:

613. Բառացիորեն նույն բանն է ասում լաստիվերցին, «իսկ Թէոդոսայ... կալաւ զթագաւորութիւնն իբրև զիւր սեպհական ժառանգութիւն հայրենի» (էջ 95):

614. Թեոդորայի թագավորության առնչությամբ լաստիվերցին մի հետաքրքիր տեղեկություն է տալիս, որ չկա Սկիլիցեսի մոտ: Հայ պատմիչի ասելով, սուլթանը (Տողրուլ բեկը) կայսրուհու մոտ դեսպանություն է ուղարկում, պահանջելով Բյուզանդիայի՝ արարների ձեռքից խլած քաղաքներն ու բերդերը, կամ, հակառակ դեպքում, օրական հազար դահեկան: Թեոդորան նրան ուղարկեց ձիեր, ջորիներ, բազում գանձեր ու ծիրանի հանդերձներ (էջ 96): Մի այլ տեղում պատմիչը գրում է. «Թագուհւոյն զՍուլտանն իբրև զքաղցեալ զագան՝ տրոց առատութեամբ յագեցուցեալ» (էջ 101):

615. Պրետորիոնը, հալկեն, Ստրատեգիոնը Կոստանդնուպոլսի բանտեր էին:

616. Սկիլիցեսի մոտ սենատ (συγκλητος) և սենատոր (συγκλητικος) տերմինները շատ բնականորեն և իրականում նշանակում են աստիճանավորների ամբողջությունը և բարձրաստիճան պաշտոնեությունը (տե՛ս *Guilland, Le Preposite*, p. 349):

617. Տե՛ս ծանոթ. 615:

618. Չշփոթել նիկեփոր II Փոկասի ժամանակ գործած Միքայել Բուրցիսի հետ: XI դ. կեսերին այդ ընտանիքը համարվում էր ամենանշանավորներից: Սկիլիցեսը մի քիչ հետո Բուրցիսներին, Արգիրոսներին, Սկլերոսներին և Բրիեննիոսներին կողքին, համարում է Անատոլիկոնի առաջին արիստոկրատները (*Καждан, Армяне, стр. 86*):

619. Հմմտ. Մատթ. Ուռհ., էջ 133. «առաւել քան զգազանս» շար և արյունարբու ամիրա Սամուխ:

620. Հմմտ. Արիստ. լաստ., էջ 103. «իսկ ընդ մեծամեծսն ատենախօս եղեալ, ասէ. կամ ելէք ընդդէմ Պարսից ի պատերազմ, և մի՛ տայք զերկիր ապականել. կամ թէ ոչ, զձեր հոռոն հարկեցից Պարսից, և պահեցից զաշխարհս ի խաղաղութեան: Որում ոչ հաւանեալ իշխանացն՝ ելին... և միաբանութեամբ զաշն արարեալ՝ անցին ընդ ծովն, և ժողովեցան զօրք բազումք, որոց ոչ գոյր թիւ: Որոց առաջնորդք էին Կոմիանոսն (իմա՛ Իսահակ Կոմնենոսը—Հ. Բ.) որ և թագաւորեացն իսկ և Կամենասն (Կատակալոն Կեկամենոսը)»:

621. Բառացի շհասկանալ: Նշանակում է և կալված: *Տե՛ս ծանոթ. 405*:

622. Հավանաբար Վասպուրական:

623. Մերվանյան ամիրա Նասր աղ-Պաուլա Աբու Նասր Ահմադ (1010—1061):

624. Սկիլիցեսը գրում է Ֆրանկոպոլոսի սոսկ գերման մասին: Ուռհայեցին չգիտէր զա, բայց գրում է, որ նրան կայսրը Կոստանդնուպոլիս կանչեց ու ծովահեղձ արեց, քանզի վերջինս պատճառ էր դարձել Ուռհայի կառավարիչ Իվատանոսի (Իվատանոսի) սպանութիւն: Ուռհայեցու շարադրանքից երևում է, որ դա տեղի ունեցավ Տուկիծ (Դուկաս) կայսեր օրոք (էջ 144):

625. Ռոմիկ ենք թարգմանում բնագրի *σικτρησιου-ի Դա*, ինչպես բառն է ցույց տալիս (*σικτος- ցորեն*), սկզբնական շրջանում պետութեան կողմից կենտրոնական (և ոչ բանակաթեմային) զինվորին տրվող ուտեստ-կերակուրն էր: Այդ կերակուրը հավանաբար չէին ստանում բանակաթեմերի զինվորները, որոնք, զինվորական ծառայության դիմաց, պետութունից հողակտոր ստանալով, իրենք էին իրենց ալդ կարիքները հոգում: Բայց նրանք ստանում էին վարձ՝ դրամ: XI դ., ինչպես ցույց է տալիս Սկիլիցեսի վերոհիշյալ տվյալը, *σικτρησιου-ի* և *ռոմիկի* միջև տարբերությունը վերացել էր և կենտրոնական զինվորներն իրենց կերակուրը ստանում էին դրամով: Ավելի մանրամասն տե՛ս *Ahrweiler, Recherches, p. 7—8, 12, 25*:

626. Կաստամոն (*Castra Comneni*), այժմ Կաստամբուլ Թուրքիայում:

627 Տաբսիսը 128 ռազմիկներից բաղկացած զորամաս էր:

628. Բնագրում՝ *και τους οικειους*: Այդ դարձվածքի տակ կարելի է հասկանալ ինչպես պետության կողմից զորավարին վստահված զորքը, այնպես էլ ֆեոդալի սեփական զորամասը (տե՛ս *Литаврик, Был ли Кекавмен... феодалом?, стр. 231 и сл. 236—238*):

629. «Կնոջ» բառից հետո Սկիլիցեսի երկի երկու գրչագրերում կա ընդմիջարկություն. «էկատերինեին, Բուլղարիայի (*βατ. բուլղարների*) թագավոր Վլադիսլավի դրստեր»:

630. Նշանակում է՝ «իշխանակից»:

631. Բնագրում՝ *ωσπερ εκ χυχλου γραιμαί προς αυτον ως εις τι σημειον νενευχασιον εν ισω και απαλλαχτω βουλήματι*:

632. Քննական բնագրում՝ *Տրախանիոտես, Բոննի հրատարակության մեջ՝ Տարխանիոտես*: Ծիշոր Տարխանիոտես ձևն է, քանզի անունը ծագում է թուրքական «թարխան» բառից (տե՛ս *Moravcsik, Byzantinoturcica, Bd. II, S. 299—300*: Ավելորդ չէ ասել,



որ երկու ձեռագիր տալիս է Ταρωνιτης (Տարոնացի) սխալ ընթերցումը: Ուոհայեցին նրան կոչում է Տարխանիատ (էջ 200):

633. Բոննի հրատարակությունը տալիս է Մավրոկատակալոն ընթերցումը: Հայկական աղբյուրներում վկայված է Կատակալոս ձևը (Հմմտ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, հտ. Բ, էջ 313: նաև՝ Ալիշան, Հայապատում, էջ 396):

634. 'Ο τῶν φιλοσόφων ὑπατος: Երևելի գիտնականներին տրվող տիտղոս էր:

635. Վանական դառնալուց հետո կոչվեց Միքայել: Նշանավոր քաղաքական գործիչ, գրող ու գիտնական, Կոստանդնուպոլսի բարձրագույն փիլիսոփայական դպրոցի առաջին ղեկավարը:

636. Սրանց դեսպանության մասին տե՛ս Արիստակես Լաստիվերցու մոտ, էջ 112. «սկսաւ դեսպանս առաքել. պարգևս խոստանայր ե զԿիրապաղատին իշխանութիւնն յարևելս տալ նմա»:

637. Քննական բնագրում՝ ἀπαξειν (իրենց հետ տանել), Բոննի հրատարակության մեջ՝ ἀπαγγειν (խեղդել, խեղդամահ անել):

638. Հմմտ. Արիստ. Լաստ. էջ 112. «Եւ քանդի պատրիարքն ի կողմն Կոմիանոսին էր, զբաղումս ի գլխաւորաց քաղաքին միաբանեաց ընդ ինքեան. և տարեալ ի ներքս զԿոմիանոսս, թագաւորեցուցին»:

639. Հմմտ. Լաստիվերցի, էջ 112. «Եւ զՄիխայիլն արեղայ արարեալ, ի կղզի անցուցին. բայց ասնն թէ ինքն յօժարութեամբ շոգաւ»:

640. Կոստանդնուպոլսի աղբյուր:

641. Հմմտ. Մատթ. Ուոհ., էջ 125. «Եւ հրամայեաց թագաւորն Կոմանոս դեկան (դահեկան) զարկանել յիր անուն և զթուրն հանել ի վերայ ուսոց իւրոց, եթէ «Թրով առի զաթոռ թագաւորութեանս»:

642. Կայսրուհի:

643. Ասել է հոետոր Դեմոսթենեսն իր Առաջին Օլիմպիական ճառում (Ա. 20):

644. Օֆֆիկիա նշանակում է այն պաշտոնը, որ կրում էին եկեղեցական, արքունական, քաղաքական և զինվորական պաշտոնյաները: Ոմանց համար դա պատվավոր մի տիտղոս էր, ուրիշների համար նշանակում էր որոշակի պաշտոն:

645. Սյուբարիսը հարավային Իտալիայի հունական հին քաղաք էր: Նրա արտակարգ հարստությունը պատճառ դարձավ բնակիչների՝ սյուբարիտների հզիպացման ու նրանց բարբերի անկման, որով սյուբարիտ բառը ստացավ բացասական իմաստ:

646. Շատ տարածված առած է: Տե՛ս Πολιτης, Δημῶδεις παροικιαί:

647. Կոստանդին III Լիսուդեսը: Աթոռակալել է 1059 թ. փետրվարի 2-ից 1063 թ. օգոստոսի 9-ը:

648. Բնագրում՝ τῆς τῶν Μαγγάνων προνοίας (այսինքն՝ Մանգանան տվեց որպես «պրոնիա»): Պրոնիա, որ հոգացողություն է նշանակում. Բյուզանդիայում ուներ նաև որոշակի տեխնիկական տերմինի իմաստ, «պրոնիա» այսինքն՝ պարգև: Սկիլիցեսի տվյալ հիշատակությունը որպես տեխնիկական տերմին են ընգունում մի շարք պատմաբաններ (տե՛ս Сборник документов, стр. 190): Օստրոգորսկին (Feodallite p. 20) գտնում է, որ սա պրոնիայի հիշատակության առաջին դեպքն է: Յուլիսիսը ցույց է տալիս, որ Սկիլիցեսի «Շարունակության» մեջ հաճախ հանդիպող այդ բառը տեխնիկական տերմինի նշանակություն չունի, այլ պարզապես նշանակում է «հոգացողություն» (Τσολιχης, 'Η Συνέχεια' σελ. 191): Հավանաբար նրա օգտին է խոսում և Մանգանայի պրոնիայի մասին հիշատակող պարբերության վերջում դարձյալ հանդես եկող այդ բառը (τῆς αὐτοῦ προνοίας — «նրա հոգացողությունից»), որի մեջ և ոչ մի տեխ-

նիկական տերմին տեսնել հնարավոր չէ, ինչպես և հնարավոր չէ ենթադրել, որ հեղինակը նույն պարբերության մեջ երկու անգամ հիշատակեր նույն բառը, մի անգամ մի կերպ հասկանալով, մյուս անգամ՝ այլ:

Արիստակես Լաստիվերցին Միքայել Պափլագոնացու ժամանակվա դեպքերը շարագրելիս, գրում է, թե կայսրը «հաւատայ ի նա (այսինքն՝ իր եղբոր—Ն. Բ.) զհոգս Բուլղարացն և արևմտական կողմանցն» (էջ 47): Կ. Յուզբաշյանը ընդգծված բառը թարգմանում է «прония» և նրա տակ տեսնում տեխնիկական տերմին, բյուզանդական տերմինի սլատճենահանումը, իսկ նրա կրողին նույնացնում է բյուզանդական աղբյուրների *πρωνοτης*-ի հետ (տե՛ս նրա «Варяги и прония», стр. 21—24: նաև՝ «Повествование», стр. 24, 74, 151—152): Բայց նման դարձվածք, ինչպես Յուզբաշյանն է ցույց տալիս, կա դեռևս Մովսես Խորենացու մոտ. «հաւատացեալ զՄաժաք և զհոգս Միջերկրայն» (էջ 127): Հետևաբար հիմք չկա Լաստիվերցու «հոգի» մեջ անպայման բյուզանդական տեխնիկական տերմին տեսնել: Լաստիվերցու «հոգը» իմաստային առումով կարելի է նույնացնել բյուզանդական *πρωνοια* բառի հետ՝ *φρωνοτις* իմաստով:

Պրոնիայի վերաբերյալ բյուզանդական աղբյուրների տվյալները մինչև XII դարը Կ. Վ. Խվոստովան համարում է ոչ բավարար շափով հստակ: Դրա էությունը պարզ է դառնում XII—XV դդ. աղբյուրների տվյալներից: Պրոնիան ուսումնասիրողների մեծ մասի համաձայն իրենից ներկայացնում էր պետական ծառայության դիմաց հողի ժամանակավոր պարգևում, եվրոպական բենեֆիցիումը կամ լենը: Պ. Խարանխուր և Ա. Կաթղանը գտնում են, որ պրոնիան ոչ թե հողի պարգևում էր, այլ հարկի: Տե՛ս *Каждан*, *Аграрные отношения*; նաև՝ *Хвостова*, *О некоторых особенностях*, стр. 212—230, որտեղ և մանրամասն գրականություն:

649. Մատթեոս Ուոհայեցին գրում է, որ Կոմնենոսը գահ բարձրանալուց հետո արշավեց պաժինակների դեմ: Հայ պատմիչը ևս հիշում է Տոնալիս» (Դանուբ) գետը, ինչպես և կալսեր պարտության հիմնական պատճառը. «եւ զի ահա ելանէր ամպ յարևմտից և զայր ի վերայ բանակին Կոմանոսին... և եղեն ճայթմունք և որոտմունք, և հրացայտ փայլատակմունս յարուցանէր. և յայնժամ սկսաւ ի կարկուտս մեծամեծս և բախեալ հարկանէր զբանակն և սաստկապէս դիպէր ամենայն զօրացն» (էջ 125—126): Հայ պատմիչի ձեռքում հավանաբար բյուզանդական աղբյուր է եղել:

650. Զարմանալիորեն նման շարադրանքի ենք հանդիպում Ուոհայեցու մոտ. «գիտացեալ Կոմանոսն, եթէ այս ամենայն աստուածասատ բարկութիւնս վասն իմոյ յանցանացն եհաս ի վերայ քրիստոնէից... եկեալ ի Կոստանդնուպօլիս և անկեալ առաջի Աստուծոյ՝ խնդրէր զթողութիւն մեղաց իւրոց, զոր արար. և այնուհետև խնդրէր ելանել յաթոռոյ թագաւորութենէն և մտնել ի կարգ ապաշխարութեան պահօք և արտաւուօք» (էջ 126). «կամեցաւ զգենուլ զգեստ կրօնաւորութեան և միաւորիլ ի վանք կրօնաւորութեան» (էջ 127): Դարձյալ կարելի է բյուզանդական սկզբնաղբյուրի առկայությունը ենթադրել: Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

651. Կարևոր մանրամասնություններ է տալիս Ուոհայեցին: Կոստանդին Դուկասը (պատմիչի մոտ՝ Տուկիծ) Ուոհա քաղաքի դուքսն էր: Կայսրը «առաքեաց ի կողմն Տաճկաց ի քաղաքն յՈւոհա և բերեալ զտուկ քաղաքին Ուոհայոյ, որում անուն էր Տուկիծ, վասն զի ի մեծամեծաց ազգէ էր, և առեալ զթագն դնէր ի զլուխ Տուկծին և երկրպագէր նմա, և նստոյց գնա յաթոռ թագաւորութեանն և ինքն գնացեալ յանապատ և եղև վանական» (էջ 127): Դուկասների մասին նորագույն ուսումնասիրությունը. *Polemis, Doukai*: Աղբյուրների հիշատակած բոլոր Դուկասները միևնույն ընտանիքին չեն պատկանում: Առաջին Դուկասը հիշատակված է 855 թ.: Արտահայտվել են կարծիքներ, որ



Դուկասների այս առաջին ճյուղը հայկական ծագում ունեն, մի բան, որ Պոլեմիսը մերժում է: Վասիլ II-ի ժամանակ հանդես եկած Դուկասների ճյուղը արևելյան ծաղում ունի (Պափլագոնիա) և Բյուզանդիայում բարձր դիրքի հասավ 1050—1150 թթ. (տե՛ս նաև՝ V. Laurent-ի գրախոսականը վերոհիշյալ գրքի մասին Byzantinische Zeitschrift-ի 65-րդ հատորում (1972), էջ 94—97):

652. Մյուրելիոսի պալատը Ռոմանոս I Լակապենոսի պալատն է, որ վերջինս վանքի էր վերածել նույն անվամբ: Այժմ՝ Բողրում ջամի: Գտնվում էր Թևոզոսիոսի հրապարակից մի փոքր հարավ-արևմուտք:

653. Այս դավադրությունը տեղի ունեցավ 1061 թ. ապրիլի 23-ին (տե՛ս Polemis, Notes, p. 61): Օրը որոշվում է սբ. Գեորգի տոնով, որ հունական եկեղեցին նշում է այդ օրը:

654. Սեկրետների (մինիստրությունների) հետ առնչություն ունեցող:

655. «Ուժեղներին»՝ այսինքն հողատեր ֆեոդալների:

656. Ամենայն հավանականությամբ, նկատի ունի «Հայաստանի և Իբերիայի» բանակաթեմը: Թվարկած տեղանունների մեջ բացակայում է Հայաստանը, պիտի բացատրել «Իբերիա» հասկացության մեջ նաև Հայաստանի առկայությամբ:

657. Հաստիվերցին հիշյալ դեպքերին նվիրել է իր աշխատության երկու գլուխը՝ ԺԹ «Վասն աւերանաց երկրին Միջագետաց և որ ինչ ի նմա քաղաքք, և անշափ կոտորածին» և ԻԱ՝ «Կործանումն Մելիտենոյ շահաստան քաղաքին» վերնագրով, որտեղ շատ ավելի մանրամասնություններ է հաղորդում, քան Սկիլիցեսի Շարունակողը: Հայ պատմիչը ցույց է տալիս, որ թուրքերը, հասնելով Կամախ, բաժանվեցին երկու մասի, մեկը գնաց Կոյունյա, մյուսը՝ Մելիտեննե, որոնք գրավեցին ու ավերեցին, ավարտեցին ու թալանեցին: Մելիտենեից թուրքերը գնացին մինչև Խորձյան, այսինքն՝ ոտք դրեցին նաև Չորրորդ Հալք: Տարոնում, սակայն, սասունցիներից ջարդ ստացան: Հայոց ղորքերը գլխավորում էր Մուշեղի որդի քաջ Թոռնիկը, որը «աղատեաց զանթիւ բազմութիւնն զՄելիտենոյ քաղաքին ի ծառայութենէ անօրէն աղգին Պարսից» (Մատթ. Ուոհ., էջ 131): Սկիլիցեսի Շարունակողը այս դեպքերից հետո խոսում է Անիի գրավման մասին, որ տեղի ունեցավ 1064 թ., այն էլ ոչ թե Տողրուլ բեկի, այլ նրա հաջորդ Ալի Արսլանի կողմից: Մինչ այդ թուրքերը դեռ բազում անգամ ասպատակեցին բյուզանդական արեւելքը: Նրանք 508 (1059) թ. Սամուխի, Ամրքափրի և Գիճաճիճիի գլխավորությամբ գրավեցին, ավերեցին՝ Սերաստիան, 511 (1062) թ. մտան Պաղնատուն (Չորրորդ Հայք) և Թլմուխ: Նրանց գլխավորում էին Սլար Խորասանը (Սկիլիցեսի Խորոսալարիոսը), Ճմճճը և Իսուլվը (Մատթ. Ուոհ., էջ 133 և հտ.):

658. Բնագրում՝ Χωροσάν σελάριος, այլ ձեռագրերում՝ Χωροσαλάριος, որ սխալմամբ անուն է հաճարված, այնինչ տիտղոս է և նշանակում է Խորասանի սպասալար (տե՛ս Moravcsik. Byzantinoturica, II, S. 349): Տե՛ս և նախորդ ծանոթագրությունը: Ատտալիատեսը գրում է, որ «իրենց զորահրամանատարներին թուրքերն անվանում են ամիրաններ և սելարներ» (Aital. p. 276—277):

659. Խոսքը Բագարատ Վիկացու մասին է, որ 1059 թ. Վասպուրականի կատապանն էր: Անիի մայր տաճարի վրա փորագրված իր արձանագրությունում նա գրում է, թե «...ողորմութեամբ սուրբ և ինքնակալ թագաւորին Կոստանդեա Դուկի կամ եղև իմ Զագրտա մադիստոսիս և Արևելից կատապանիս Վիկացոյս՝ առնել ողորմութիւն մայրաքաղաքիս Անու...» («Դիվան», պր. Ա, էջ 37): Հետևաբար նա Անի է ուղարկվել Կոստանդին X Դուկաս կայսեր (1059—1067) օրոք, բայց քանի որ Անին թուրքերը գրավեցին 1064 թ., ապա մնում է 1059—1064 թթ. միջև որոշել նրա Անիի (Հայաստան)

տանի և Իբերիայի) կառավարիչ նշանակվելը: Բենեշևիչը գտնում է, որ գա կատարվեց 1063 թ., քանի որ, ըստ Սկիլիցեսի Շարունակողի, մինչև այդ Ալփ Արսլանը (հիշենք, սակայն, որ Սկիլիցեսի Շարունակողը նրա անունը չի տալիս), ամայացրել էր բազում շրջաններ և հասել էր մինչև Վասպուրական (Бенешевич, Три Анийские надписи, стр. 24—25): Ավելորդ չէ ասել, որ Սկիլիցեսի Շարունակողը, ճիշտ է, Բագարատի Անի ուղարկվելու մասին խոսում է թուրքերի կողմից տվյալ երկրների ավերման մասին պատմությունը տալուց հետո, բայց գա դեռևս փաստ չէ, որ Բագարատն իրադարձություններից հետո է ուղարկվել Անի: Դժվար չէ համոզվել, որ Սկիլիցեսի Շարունակողը մի տեղում և մի քանի տողում շարադրում է թուրքերի տարիներ տևած ասպատակությունների մասին ընդհանրապես: Հետևաբար Բագարատը կարող էր Անի ուղարկված լինել 1063 թ. առաջ:

Բագարատի գործունեությունը Անիում մոայլ գույներով է նկարագրում ժամանակակից պատմիչ Միքայել Ատտալիատեսը: Կայսրությունից Անին զրկողը, գրում է նա, Մոնոմախի կծծիությունն էր: Անիի կառավարիչը, շարունակում է նա, ոռճիկ (στρατήσιον) էր ստանում, բայց կայսեր ներկայացավ ոմն հայ Բագարատ անունով, և նրա ասաց, թե կառավարչի պաշտոնն առանց վարձի կարող է վարել և ավելի լավ պահպանել քաղաքն ու նրա ողջ շրջակայքը: Կայսրը նրան ընդառաջեց, նշանակեց դուքս և հանձնեց կառավարչի պաշտոնը (ηγεγονία): Բայց Բագարատը վատ էր վարում գործերը, նա միջնաբերդը հացով շապահովեց, պատերազմական կամ քաղաքական ոչ մի հարց ճիշտ ու հաստատ չլուծեց և հոյակապ քաղաքը գցեց մեծ վտանգների մեջ, քանզի ի վերա ամենայնի այս «անվարձ գորավարը» (ἀμισθὸς στρατηγός), ինչպես անվանում է Ատտալիատեսը Բագարատին, կայազորն էլ էր ցրել՝ պետությանը օգուտ տալու համար և խոստացել քաղաքն առանց կայազորի պաշտպանել (Attal. p. 80—81):

Նույն կերպ է նրան բնութագրում և Մատթեոս Ուռհայեցին. «անօրէն իշխանքն Հոռոմոց՝ զորս կացուցեալ էր թագաւորն պահապանս տանն Հայոց, Բագրատ հայրն Սմբատայ և Գրիգոր Բակուրանին որդին» (էջ 148): Բակուրանի որդի Գրիգորին (Գրիգոր Բակուրյանին) հիշում է Դավիթ Շինարարի «Պատմությունը»: «Գրիգորի թագավորը, — ասված է այնտեղ, — գնաց իր տիրույթը՝ Տայք և հասավ Բանա: Այնտեղ իր մոտ եկավ արևելից կառավարիչ Բակուրանի որդի Գրիգորը, որը տիրում էր Օլթիին, Թեոդոսուպոլսին և Կարսին» (Каучушвили, Грузинские источники, стр. 12): Գրիգոր Բակուրյանի մասին տե՛ս Арутюнова, Типик Григория Пакуриана: Նաև՝ Մուրադյան, Գրիգոր Բակուրյանի «Մահամբը», էջ 103—118: Шанидзе, Великий доместник: Каждан. Армяне, стр. 60—63.

660. Անիի հետ կապված դեպքերը նկարագրելիս, Ատտալիատեսը տալիս է քաղաքի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ: Նրա ասելով Անին մեծ ու բազմամարգ քաղաք է, ամեն կողմից բնական խրամներով, գահավեժ ժայռերով շրջափակված, իսկ այնտեղ, որտեղ չէան կիրճեր, այնտեղից էլ հոսում է շատ խոր և անանցանելի գետ: Քաղաքի այն փոքր մասը, որտեղից մատչելի է, այն էլ ամուր պարիսպներով է պաշտպանված: Այդ էր պատճառը, որ Մոնոմախը չկարողացավ այն զենքով գրավել (Attal. p. 79, տե՛ս նաև վերը, ծանոթ. 520):

Անին գրավվեց 1064 թ. օգոստոսի 16-ին: Քաղաքի անկման մասին կարևոր մանրամասնություններ է հաղորդում Ատտալիատեսը, որոնք չկան անգամ հայկական աղբյուրներում: Անիի բնակիչները, գրում է նա, լինելով վաճառական մարդիկ և պատերազմական գործերում անփորձ, որոշ ժամանակ դիմադրեցին, բայց չկարողացան դիմանալ, քանզի ի վերա ամենայնի դուքս Բագարատի և կայսեր կողմից նրա օգնության



ուղարկված ոմն «Թագավորական ծառայի» (սրա տակ ենթադրվում է Գրիգոր Բակուրյանի: *Sb'ю Арутюнова, К истории, стр. 68—72, նույնի, Из истории, стр. 100*), միջև քաղաքի իշխանության շուրջ սուր պայքար էր սկսվել: Եվ երբ սելջուկ թուրքերը տարրեր տեղերից պարիսպների վրա ճեղքվածքներ առաջացրին, բնակիչները դիմեցին փախուստի, իսկ թուրքերը, տեսնելով դա, բացեցին դարբասները, մտան ներս ու դրոհով առան քաղաքը, որտեղ մեծ կոտորած եղավ. թուրքերը շխնայեցին ոչ սեռ, ո՛ր տարիք, իսկ ով էլ խուսափեց սրից, գերության քշվեց: Միջնաբերդ փախչելով, փրկվեց քաղաքի բնակչության փոքր մասը, այդ թվում՝ «վատագույն կառավարիչները», որոնք սակայն պարեն շունենալով շուտով բանակցությունների մեջ մտան թշնամու հետ և հանձնեցին միջնաբերդը, որով ողջ քաղաքն իր շրջակայքով ու ավաններով ընկավ թուրքերի ձեռքը (*Attal, p. 81—82*):

Անիի գրավման մասին կարևոր մանրամասնություններ են պահպանել նաև արաբական աղբյուրները: Իբն ալ Աթիրը գրում է, որ Ալի Արսլանը 1064 թ. փետրվարի 22-ին դուրս գալով Ատրպատականից, Նախճավանի վրայով շարժվեց Վրաստան, իսկ որդին՝ Մելիք Շահր, գրավելով երեք բերդ (նրանցից մեկի անունն է միայն հիշում՝ Սուրմառի), կրակի տվեց Մարիամ Նիշինը (Մարմաշեն), շարժվեց Սաբիդ շահրի (Սպիտակ քաղաք, ենթադրում են վրաց Թեթրիսցիխեն կամ Ախալքալաքը) վրա, կրակի տվեց այն և ապա երկուսով հարձակվեցին Անիի վրա: Արաբ պատմիչը Անին անվանում է մեծ ու ծաղկուն, շատ ամուր ու անառիկ բազմամարդ քաղաք, որն ուներ 500 եկեղեցի: Թուրքերը պաշարմամբ գրավում են այն և հաստատում կալազոր՝ մի ամիրայի գլխավորությամբ: Անիի գրավման մասին խոսում է նաև Սիբթ իբն ալ-Ջավահին, որն իր երկրում մեջ է բերում տվյալներ, համաձայն որոնց Անին ուներ 700 հազար տուն և հազար եկեղեցի ու վանք: Նա նշում է, որ բնակիչներից հիսուն հազար հոգի գերվեց: Անիի անկման մասին վկայում է և սելջուկների անանուն մի պատմություն, որ հայտնի է Ախբար ադ-դաուլա աս-սելջուքիյա անունով: Մանրամասն տե՛ս *Canard, La campagne arménienne, p. 249—253*:

Ասորի հեղինակներից Անիի անկման մասին վկայում է Բար Հեբրեոսը: Միքայել Ասորին ոչինչ չի գրում՝ այդ մասին, բայց հավանաբար նրա երկրի հայ թարգմանչինն են պատկանում «...Ալիփասլան որ անձամբ եկն ի Հայս» բառերից հետո բերված հատվածը. «և հնազանդեաց զնոսա (ղՀայս) առեալ զՇամշուլտէ. և անցեալ յԱնի հարիւր հազարաւ առ զնա և սպան հազար այր ի փոս մի, և լոգացաւ արեամբ. և դարձաւ ի Նախշուան» (Միխայել Ասորի, 1870, էջ 404: 1871 թ. հրատարակության մեջ այս հատվածը բացակայում է): Այս գրույցը հանդիպում է Վաղդան Արևելցու «Պատմության» մեջ (էջ 136), այն Վարդանի, որ համարվում է Միքայել Ասորու «ժամանակագրության» թարգմանիչը:

Անիի անկման մասին մանրամասն խոսում են հայկական աղբյուրները (տե՛ս Արխտ. Լաստ., էջ 133—136, Մատթ. Ուռհ., էջ 146—150):

661. Վասիլ Ապուքապր, Դավիթ կուրապաղատի վրանապահ, ապա Ուռհայի կառավարիչ Ապուքապի որդին: Բյուզանդացիների և ուղբրի այս պատերազմին մասնակցեցին նաև հայոց զորքերը. «Եւ զօրածողով արար թագաւորն Տուկիժ զամենայն ազգն Յունաց և զօրս Հայոց աշխարհին և կացոյց ղօրագլուխ զմեծ իշխանն Հոռոմոց զՎասիլն զորդին Ապուքապայ» (Մատթ. Ուռհ., էջ 151):

662. Ուռհայեցի Ռստրոս գետն անվանում է Տօնաիս, այսինքն՝ Դանուբ (*Δούναβις*):

663. Վասիլի գերման մասին գիտե և Ուռհայեցին. «և զօրք Ուզացն սրով յարձակե-

ցան զհետ մեծաւ կոտորածով և կայան զՎասիլ զօրապետն Հոռոմոց և տարան զնա ի գերութիւն յաշխարհն իւրեանց» (էջ 152):

664. Այսինքն՝ Մերձիստրոսյան քաղաքների կառավարիչներ: Ուոհայեցին ցույց է տալիս, որ Վասիլ Ապուրապր բազում օրեր մնաց գերության մեջ, նրան շկարողացան փրկագնել, քանզի շատ մեծ գումար էին պահանջում, բայց մի այլազգի զինվորի օգնությամբ նրան հաջողվեց փախուստի դիմել, գալ կայսեր մոտ, այնտեղից էլ «առ Ապուրապ հալոն իւր ի յՈւոհ, և հայրն և ամենայն աղգ իւր լցան ցնծութեամբ» (էջ 152—153): Այս կառավարիչների մասին ավելի մանրամասն տե՛ս Banescu, Les duchés, p. 141—143: Diaconu, Vasile Apokapes, p. 437—451.

665. Կայսեր «բարեպաշտության» մասին (բյուզանդացու տեսանկյունից) վկայում է այն հանգամանքը, որ նա ծայր աստիճան սաստկացրեց հայադավանների հալածանքները: Ուոհայեցու ասելով «կամէր թագաւորն շար միաբանելովք իւրովք բառնալ զՀայոց հաւատոյ դաւանութիւնն և խորհէին եղծանել զհաւատս սուրբ Հուսաւորչին Գրիգորի. և կամեցաւ զիւր դիւարուն և զխառնափնդոր և զթերակատար զհաւատսն հաստատել ի Հայք» (Մատթ. Ուոհ., էջ 160): Կոստանդին Դուկասի ժամանակ միաբանակների (հայ և ասորի) հալածանքների մասին վկայում է և Միքայել Ասորին (*Michel le Syrien, Chronique, t. III, pp. 166—167*):

666. Այն տեսանկի էր և Հալաստանում. «իսկ ի փոխել թուականութեանս Հայոց յամս ՇԺԵ (1066) երևեցաւ աստղ մի գիսաւոր յարևելից կողմանէ և յարևմուտս ընթացեալ. և կացեալ նորա ամիս մի՝ և եղև անբերեոյթ» (Մատթ. Ուոհ. էջ 185): Գիսավոր այդ աստղի մասին գրում է և Կեկավմենոսը («Советы и рассказы», стр. 254): Գիտական հաշվումներով այն երևաց 1066 թ. ապրիլի 2-ին (տե՛ս Grumel, La Chronologie, p. 473):

667. Հովհաննես VIII Քսիֆիլինոսն աթոռակալել է 1064 թ. հունվարի 1-ից 1075 թ. օգոստոսի 2-ը:

668. Փոքրասիական Օլիմպոսի:

669. Սիմպոնոս (Συμπωνος) օգնական: Համպեն գտնվում էր Փոյուզիայի հարավ-արևմուտքում, ժամանակակից Սոնդուրլուի մոտ:

670. Այսինքն ծնվել էր այն ժամանակ, երբ հայրը ծիրանի էր հագած, կայսր էր:

671. Եվզոկիայի ստորագրած երդմնագիրը պահպանվել է (տե՛ս Oikonomidès, Le serment, p. 101—128): Ն. Աղոնցի ենթադրությամբ, Կոստանդին Դուկասի կին Եվզոկիայի կերպարը տեղ է գտել բյուզանդական «Դիգենիս Ակրիտաս» էպոսում: Դիգենիս Ակրիտասն ամուսնացավ Դուկաս զորավարի դուստր Եվզոկիայի հետ (տե՛ս Adontz, L'épopée, p. 23):

672. «Տեղացի» (բնիկ) զինվորներին» (ἰθαγενέσι στρατιώταις) աակ հավանաբար ենթադրվում են հայկական զորքերը:

673. Գույե Ամիրթեբի՞ն (ամիր Թեբին):

674. Այս ժամանակաշրջանում բյուզանդական բանակի թուլության պատճառներից մեկն էլ իշխանութունների կողմից նրանց ոռճիկի ոչ ժամանակին և ոչ լրիվ վճարումն էր: Այդ բանը հստակ կերպով ցույց է տալիս Կեկավմենոսը:

675. Այստեղից պարզ երևում է, որ հագարացի (արաբ) ցեղանունն արդեն թուրք է նշանակում: Նման երևույթի հանդիպում ենք նաև հայերի մոտ: Տաճիկ, որ միջնադարում արաբ էր նշանակում, հետագայում սկսեց թուրք նշանակել:

676. Բնագրում՝ εὐρύς εἰς ἀλόγην (սրաքարով սրած ածելի): Առած է: Սուղայի



բառարանում ասված է, թե այդ դարձվածքը օգտագործվում է այն մարդկանց վերաբերյալ, որոնք իրենց մտքում դրածին հասնում են:

677. Ըստ Զոնարասի՝ զարմիկը:

678. Ալի Աբսուլան: Պսելլոսը նրան անվանում է «պարսից կամ քրդերի թագավոր» (ὁ σουλταν, ὁ τῶν Περσῶν ἢ Κούρτων βασιλεὺς — Psellos, Chronographie, II, p. 161): Ինչպես արդեն տեսանք, բյուզանդական (և հայկական) աղբյուրներում պարսկի տակ այս ժամանակ թուրքերն էին ենթադրվում:

679. Ռոմանոս IV Դիոգենեսի գորթի խայտարղետության մասին հետաքրքիր տեղեկություններ է պահպանել Իմադ էդ-դին Իսպահանցին: Նա Դիոգենեսի բանակը հաշվում է 300 հազար հոգուց ավելի. հույներ (ոռում), ռուսներ, օղուղներ, ղվչաղներ, վրացիներ (կուրջի), ափսազներ, խաղարներ, ֆրանկներ (ֆերինջի) և հայեր (տե՛ս Ρουθεν, Арабские сказания, стр. 198):

680. Ինչպես տեսնում ենք, «բանակաթեմ» բառը արդեն կորցրել է իր տեխնիկական իմաստը և ունի պարզ աշխարհագրական նշանակություն: Այդ փոփոխությունը կապված է բանակաթեմային ղորքերի վերացման և զորավարի ֆունկցիաների փոփոխության հետ: XI դ. «բանակաթեմ» նշանակում էր վարչական մի շրջան, որը կառավարվում էր դատավորի (χριτῆς-πραίτωρ) կողմից (տե՛ս Ahrweiler, Recherches, pp. 82—83):

681. Հմմտ. Եսայի, Բ՝ 4. «Եւ ձուլեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս, և զսուինս իւրեանց ի մանգաղս»:

682. Հին հունական դիցաբանության պատերազմի աստվածի:

683. Պավլիկյանների նշանավոր բերդաքաղաքներ Տիվրիկն ու Արզովանը:

684. Գտնվում էր Հուստինիանոս I-ի կազմած Երրորդ Հայքի սահմաններում: Այժմ Գյոքսուն:

685. Այժմ՝ Մարաշ:

686. Ատտալիատեսը ճշտում է. «հայերի կողմից Տյուբ կոչվող բանակաթեմը» (Attal., p. 107):

687. Երկու տաքսիսի կամ տասնվեց լոխոսի (250 հոգուց բաղկացած զորամասի) հրամանատարը:

688. Ատտալիատեսի մոտ՝ Ավսինայիոս: Խոսքը Ավշինի մասին է, Մատթեոս Ուոհայեցու «ամիրայն Պարսից՝ որ ասի Օշէն» (էջ 185)», «անօրն և շար գազան Օշէն, որ և անպատմելի է ասացողացս գործ նորա» (էջ 186): Հայ պատմիչի ասելով, նա «յապականութիւն դարձոյց զբազում գաւառս, և արեան ճապաղիս արարեալ զդասս հաւատացելոցն Քրիստոսի. և բազում սուգ և խաւար տարածեցաւ ի վերայ երկրի ի ձեռաց անօրինիս այսմիկ» (էջ 185): Ուոհայեցու ասելով նա հիմնականում գործեց Սև լեռան գավառում:

689. Կարելի է ենթադրել՝ ռուսների: Իմադ էդ-դին Իսպահանցին հիշում է ռուսների առկայությունը Դիոգենեսի բանակում (տե՛ս ծանոթ. 679): Սակայն մի քիչ հետո Սկիլիցեսի Շարունակողը գրում է. «վարձկան սկյութները, ես նկատի ունեմ ուղերին»:

690. Իմա՝ Մեմբիջ:

691. Այս Ամերիտիկին, հավանաբար, ընդհանուր ոչինչ չունի վերևում հիշված դասալիք Ամերտիկիի հետ: Ամերտիկին գուցե ամիր Թեքինի ազավաղումն է, որի տակ թաքնված է Կումուչտեգինը, Ուոհայեցու Գոմեշ տիկինը: Նրա ասելով 515 (1066) թ. «ելանէր ամիրայ մի մեծ և հզօր ի դրանէ Արասւանայ սուլտանայ, որ էր հեճպ նորա՝ Գոմեշ-Տիկին անուն նորա» (էջ 186):

692. Ռոմանոս Դիոգենեսի բանակում ծառայող հայազգի զորքերի և նրանց՝ Դիոգենեսին դավաճանելու մասին տե՛ս նաև *Michel le Syrien, Chronique, III, p. 169*: Ասորի պատմիչը այդ քայլը բացատրում է դրանով, որ հայ ռազմիկներին ուղում էին ստիպել ընդունել քաղկեդոնականությունը: Հետաքրքիր է նշել, որ Միքայել՝ Ասորու երկի հայ թարգմանիչն ավելացնում է մանրամասնություններ, որոնք դժվար է այլ աղբյուրներով ստուգել. «Իսկ Դեօժանն (Ռոմանոս Դիոգենեսը—Հ. Ք.) կուտեալ անթիս ցօրս, շոգաւ ի վերալ նորա (Ալիս Արսլանի—Հ. Ք.). և եկեալ ի Կարս այրեաց զՀայոց եկեղեցին. և երգուաւ եթէ յաղթէ Թուրքաց կամ ջնջէ բնաւ զՀայս կամ ի կրօնս իւր դարձուցանէ» (Միխայել Ասորի, 1870, էջ 404—405; 1871 թ. հրատարակության մեջ այս մանրամասնությունը բացակայում է):

693. Ատտալիատեսի ասելով Հիերապոլիսը գրավեցին կայսեր սպասավորները և հայ զինվորները, որոնք որևէ դիմադրության չ՝անդիպեցին, քանզի Թուրքերը, իմանալով կայսեր գալստյան մասին, փախել էին Եփրատից այն կողմ (Attal., p. 109): Հիերապոլիսի (Մեմփիշ) գրավման մասին ավելի հանգամանորեն գրում է Մատթեոս Ուոհայեցի (էջ 191—192):

694. Սկիլիցեսի Շարունակողը գրում է Հիերապոլիսի միջնաբերդի բնակեցման մասին: Ատտալիատեսը ավելացնում է, որ միջնաբերդի բնակեցումը հնարավորություն կտար, որ մնացած քաղաքն էլ բնակեցվի հռոմայեցիներով և հայերով (Attal., p. 116):

695. Սկիլիցեսի Շարունակողը Փարեսմանին համարում է իբեր, բայց Ատտալիատեսը՝ հայ (ἐξ Ἀρμενίων το γένος ἔλχοντα): Առաջին հայացքից իրար հակասող այս փաստերը բացատրվում են դրանով, որ Փարեսմանը վրացազավան հայ է:

696. Խոսքը Ալեքսանդրոսի (Սանչակի) մասին է, որ նոր շրջանի հայ հեղինակները (Ալիշան և ուրիշներ) Ալեքսանդրյակ են կոչում: Ասորիներն անվանում են Փոքր Ալեքսանդրիա, արաբները՝ ալ-Իսկանդարիյա:

697. Այժմ՝ էսքիշեհիր Թուրքիայում:

698. Մավրոկաստրոն (Μαυροχαστρον) թարգմանաբար նշանակում է Սև բերդ: Ռամգեյի ենթադրությամբ նույնանում է ժամանակակից Կարա Հիսարին, որ թուրքերեն նույն բանն է նշանակում: Նույն հեղինակը հավանական է գտնում արև նույնացնել Կոլոնիայի հետ (Ramsey, HGAM, p. 267):

699. Բնագրում՝ νεμετίζης: Նույնն է, ինչ ոռուսերենում և այլ սլավոնական լեզուներում неметц-ը (գերմանացի կամ ավստրիացի):

700. Ատտալիատեսը Կեսարիան հիշելուց հետո, նշում է նաև Լարիսան (Attal., p. 126), որը, ինչպես գիտենք, 1021 թ. Սեբաստիայի հետ տրվել էր Արծրունիներին: Ատտալիատեսի գրածը կարևոր է, քանզի պարզվում է, թե մոտավորապես ո՞րտեղ ունեցավ այս ընդհարումը թուրքերի հետ:

701. Ռոմանոպոլիսի տեղագրությունը մինչև վերջերս վիճելի էր: Հ. Գելցերը տեղադրում էր Բալուում (տե՛ս *Georgius Cyprius, p. 177*): Հոնիգմանն իր «Բյուզանդական կայսրության արևելյան սահմանները» գրքում այն տեղադրում էր Տիգրիսի արևմտյան վտակ Արգանա սուի վրա (Honigmann, Die Ostgrenze, S. 90—92): Սակայն նույն հեղինակը, հենվելով ավելի ուշ լույս տեսած մի փաստաթղթի վրա, Ռոմանոպոլիսի տեղադրությունը դարձնում է անվիճելի: Խոսքը ղպտի-արաբ աշխարհագրական «scala»-ի մասին է, որտեղ օգտագործվել է X դ. մի պատմական աշխատություն՝ բյուզանդացիների և Սալֆ ադ-դաուլայի պատերազմները նկարագրող: Տարբեր տեղանունների շարքում հիշված է և Ռոմանոպոլիսը՝ ղպտի տեքստում, որի դիմաց արաբերենն ունի Ջանջուր: Քանի որ այդպիսի անունով քաղաք հայտնի չէ, Հոնիգմանն այն ուղղում է Ճա-



պաղջուր և գտնում, որ Ռոմանոպոլիսը Հայաստանի ճապազըուն է (տե՛ս Honigmann, Une „scala“ géographique, p. 87, 98, 122—123): Յակուտ ալ-Համաձիի տվյալներով ճապաղջրի «բնակիչները քրիստոնյա հայեր են: Ունի բերդեր և գյուղեր» (Նալ-բանդլան, Արաբական աղբյուրները, էջ 46):

702. Խլաթը գտնվում էր թուրքերի ձեռքում: Ռոմանոս Դիոգենեսը որոշել էր վերադառնալ Կոստանդնուպոլիս, բայց բանակում գտնվող Միքայել Ատտալիատեսը, որ զինվորական դատավորի պաշտոնն ուներ, կոչ արեց կայսեր պաշարել և գրավել Խլաթ քաղաքը (τὸ ἀστὺ τοῦ Χλιατ) և նրա շուրջ եղած ավանները, զինվորներն ավար ձեռք բերելով, ավելի պատրաստակամությամբ դիմեն պատերազմի, այգ շրջաններում հաստատվի հռոմեական գերիշխանությունը, որպեսզի դրանք թշնամու հենակետերից ու մատակարարման կետերից, վերածվեն նրանց դեմ ուղղված պատվարների (Attal., p. 131):

703. Խոսքը նշանավոր զորավար Փիլարտոս Վարաժնունու մասին է: Բյուզանդական աղբյուրների համաձայն Ռոմանոս կայսրը նրան նշանակեց զորավար, կամ զորավարավտոկրատոր, կամ էլ գոմեստիկոս: Նրա վերաբերյալ աղբյուրների տվյալները շատ հակասական են, մի բան, որ իր արտացոլումն է դտել նաև ուսումնասիրողների երկերում: Նրա վերաբերյալ մանրամասն խոսում է Մատթեոս Ուոհայեցին, որին նա բնորոշում է որպես «անօրէն և ամենաչար իշխանն», որ «վարքն և կրօնքն զՀռոմոցն ունէր, և հայրենեօքն և մայրենեօքն Հայ էր... սա տիրեալ բազում աշխարհաց և քաղաքաց... և եկեալ բնակեցաւ ի Մշարն» (Մատթ. Ուոհ., էջ 206): Երբ Վասակ Պահլավունին, Անտիոքի կառավարիչը, սպանվեց, նրա ազատագունը դիմեց Փիլարտոսին: Վերջինս տիրանալով քաղաքին, որոշ ժամանակ իր ձեռքում պահեց այն (Մատթ. Ուոհ., էջ 213): Փիլարտոսը, ըստ Ադոնցի պատկանում էր Վրախամիտոսների (Վահրամյանների) ընտանիքին, որ ժամանակին մասնակցություն ունեցավ Վարդաս Սկլերոսի ապստամբությանը՝ ի դեմս Սահակ Վահրամյանի (Adontz, EAB, p. 148—149): Յուսուլին չի բաժանում Ադոնցի ենթադրությունը (Yarnley, Philaretos, p. 334, n. 17): Միքայել Ասորին ցույց է տալիս, որ Փիլարտոսն իր իշխանությունը տարածեց Տարսոսի, Մոպսուեստիայի, Մարաշի, Քեսուղի, Ռաբանի, Եղեսիայի, Անազարվայի, Անտիոքի, Զահանի և Մելիտենեի վրա (տե՛ս Michel le Syrien, Chronique, p. 173, 187 sq., 280): Պահպանվել են Փիլարտոսի արձճե կնիքները, որոնց հիման վրա հնարավոր է վերականգնել նրա cursus honorum-ը: Տե՛ս Шандровская, Печати Филарета, стр. 47: Փիլարտոսի մասին հանգամանորեն տե՛ս Laurent, Les origines médiévales, p. 50—51: Նույնի, Byzance, p. 81 և հտ.: Նույնի, Des Grecs aux Croisés, p. 367—449: Վերահրատարակվել է հեղինակի հայագիտական հոդվածների ժողովածուում՝ Etudes d'Histoire Arménienne, Louvain, 1971, p. 61—128: Նույնի, Byzance et Antioche, p. 61—72 (վերահրատարակությունը վերոհիշյալ ժողովածուում, էջ 148—159): Կոմմագենացի, Փիլարտոս Հայը, Հալեպ, 1930: Քասունի, Կիլիկիոյ Հայկական իշխանապետությունը: Yarnley, Philaretos, pp. 331—353: Каждан, Армяне, стр. 26—28:

704. Սկիլիցեսի Շարունակողի մոտ՝ Մունգարոն, Ատտալիատեսի՝ Մուղուրոն: Հայոց Մրնձուրը (Մձուր) Պաղինի մոտ:

705. Եկեղյաց գավառը:

706. Ատտալիատեսը գծում է ավելի մանրամասն երթուղին: Թուրքերը մտան Կապադոկիա անցնելով Եփրատ գետը՝ Մելիտենեից վերև (Attal., p. 135):

707. Ատտալիատեսի մոտ ավելի հստակ. ινα μὴ ἀπαταλαῖσανόμενοι σποράδες ἐξ ἐρημῆς



ὕπὸ τῶν Ἀρμενίων ἀπόλωνται—*Attal.*, p. 135 («որպեսզի ցիր ու ցան եղած ու մենակ մնալով, հայերի կողմից կորստյան շմատնվեն»):

708. Բնագրում՝ *καὶ τῶν Ἀρμενιῶν θείων: Զշփոթել Արմենիականների բանակաթեմի հետ: Այստեղ «բանակաթեմ» բառը չի օգտագործված վարչական առումով: Պատմիչը ցույց է տալիս, որ Ռոմանոս Դիոգենեսը Կոլոնիայի և «Արմենիական բանակաթեմերի վրայով» հասավ Սեբաստիա: Նա նկատի ունի հայերով բնակեցված շրջանները, քանզի Արմենիականների բանակաթեմը գտնվում էր Սեբաստիայից արևմուտք և եթե նա նկատի ունենար Արմենիականների բանակաթեմը, ապա այն գտնվում էր Սեբաստիային կից, կայսրը կարիք չուներ նախապես գնալ Կոլոնիա, որ Սեբաստիայից արեւելք է գտնվում (տե՛ս այդ մասին *Ahrweiler, Recherches*, p. 80, n. 3):*

709. Հավանաբար՝ Հերակլիան, այժմ՝ էրեզլի:

710. Անտիոքի դուքս Խաչատուրը, որին Ատտալիատեսը (*Attal.*, p. 172) *անվանում է հայ. «ὁ τῆς μεγάλης Ἀντιοχείας κατεπεὶνω, Χατατούριος ἐπονομαζόμενος, ἐξ Ἀρμενίων ὁ ἔλαχων τὸ γένος»:* Նրան Ռոմանոս Դիոգենեսը նշանակել էր Անտիոքի կառավարիչ 1068 թ.: Զարմանալին այն է, որ Խաչատուրի մասին հայկական աղբյուրներում չենք հանդիպում որևէ տեղեկության: Այդ ուսումնասիրողներին դրդել է ենթադրելու, որ Խաչատուրը հայկական աղբյուրներում հանդես է գալիս այլ անվան տակ: Սկսած Զամչյանից ենթադրել են, որ Մատթեոս Ուռհայեցու մոտ 1065 թ. տակ հիշատակված Անտիոքի հալազի դուքս-կառավարիչ Բեխտը (*Մատթ. Ուռհ.*, էջ 157) հենց Խաչատուրն է: Զամչյանն այդ նույնացումը կատարելով («Հայոց պատմություն», հտ. Բ, էջ 972) գտնում էր նաև, որ Բեխտ անուն չէ, այլ բյուզանդական վեստ պատվաստիճանը (նույն տեղում): Զամչյանի ենթադրությունը կրկնում են Բրոսսեն (նրան նա անվանում է *Vest Khatchatour: St'ou Lebeau, Histoire du Bas-Empire*, t. XIV, 1833, p. 441: *Հմմտ. նաև հտ. XV, 1833, p. 71, n. 1*), Ալիշանը (տե՛ս նրա Վարզան Բարձրբերդցու Պատմության 105-րդ ծանոթագրությունը) և այլ ուսումնասիրողներ, այդ թվում մեր օրերում նաև Ծ. Քասունին (տե՛ս նրա *Հողվածք. «ԺԱ դարու Անտիոքի հայ կառավարիչներ»*, էջ 123—134):

Դեռևս 1929/1930 թթ. Ժ. Լորանն իր մի հոդվածում (տե՛ս նրա *Le duc d'Antioche Khatchatour*), ապացուցեց այդ նույնացման անհնարինությունը և հանգեց այն եզրակացության, որ Բեխտը ոչ թե Մեծ Անտիոքի կառավարիչն էր, այլ, հավանաբար, Իսավրիայի Անտիոքի:

711. Ատտալիատեսը տալիս է կարևոր մանրամասնություններ: Նրա ասածից պարզվում է, որ «Սելևկիայի լեռնային շրջաններում բնակվող հայերը» (*ἐν τοῖς ὄρεινοῖς τῆς Σελευχείας κατοικούντων Ἀρμενίων*) կարգադրություն էին ստացել նեղանցքներում հարձակվելու ու վնասելու թուրքերին, այսինքն պարզվում է, որ խոսքը ոչ թե հայերի ինչ-որ զորամասի մասին է, այլ տվյալ շրջաններում բնակություն հաստատած հայերի (տե՛ս *Attal.*, p. 137):

712. Սկիլիցեսի Շարունակողի մոտ՝ *Σαρβανιχὸν ὄρος: Ատտալիատեսը ավելի ճիշտ է գրում. Σαρβανόχον ὄρος (Attal., p. 138):* Խոսքը Սարվանդիքարի մասին է:

713. Կուրապաղատ Մանուիլ Կոմնենոսի Սեբաստիայում պարտվելու և գերվելու մասին մանրամասն խոսում է Մատթեոս Ուռհայեցին, տալիս և այլ տեղեկություններ: Նրա ասելով Սեբաստիայի վրա էր եկել «ամիրայ մի Կտրիճ անուն», որ «էր... յաղգէ Արասլան սուլտանին»: Դիոգենեսը նրա դեմ ուղարկեց Կուրապաղատին, որը սակայն պարտվեց ու գերի ընկավ (էջ 192):



714. Փոյուգիայի հնում Կոլոսսե կոշվող քաղաքը (Պողոս առաքյալն առ Կողոսացիս թուղթն այս քաղաքի բնակիչներին էր ուղղել), Լավոդիկիայի և Հիբրասուլուսի մոտ: Այն կոշվեց Խոնե՝ XI դ.: Այս քաղաքից էին ծաղում Միքայել և Նիկետաս Խոնիատեսները:

715. Նրանք, հարկավ, հերետիկոսներ էին բյուզանդացիների հասկացողությամբ: Խոսքը հայերի (հայադավանների) մասին է, որոնք երկաթնակների համար հերետիկոս էին: Հարցի մեջ պարզություն է մտցնում Ատտալիատեսը: Նույն բառերով, ինչ Սկիլիցեսի Շարունակողը, շարադրելով այս դեպքերը, նա գրում է. τῶν αἰρετικῶν, οἱ τε τῆν Ἰβηρίαν καὶ Μεσοποταμίαν καὶ ἄγχι Λυχανθοῦ καὶ Μελιτηνῆς καὶ τῶν παραχειμένων οἰχοῦσιν Ἀρμενίων, այսինքն պարզ ցույց է տալիս, որ Իբերիայում, Միջագետքում՝ մինչև Լիկանոս և Մելիտես և (նրանց) մոտակայքում ապրում են հերետիկոս (միաբնակ) հայերը (Attal., p. 97):

716. Ակեֆալ (անգլուխ, առանց պարագլխի) էին կոշվում Եգիպտոսի միաբնակ վանականները, որոնք հանդես եկան Ջենոն կայսեր Հենոտիկոնի դեմ, քանզի վերջինս դատապարտում էր ոչ միայն Նեստորին և միաբնակության առաջնորդ Եվտիքեսին, այլև որովհետև հստակորեն չէին դատապարտվում Քաղկեդոնի որոշումները: Այստեղ պարզապես հին տերմինն է օգտագործվում ընդհանրապես միաբնակների վերաբերյալ:

717. Հին կտակարանի համաձայն կռպաշտ մի ժողովուրդ («Ռատաւորաց», Գ, 5—7):

718. Բնագրում՝ ὁ πατρις τῶν φιλοσόφων, հյուպատոս (գերագույն) իմաստասիրաց: Ֆիլոթեոսի «Կլետորոլոգիոն»-ում փիլիսոփաների հյուպատոսը սպաթարից ցածր էր կանգնած: Կարևոր աստիճան էր հատկապես բարձրագույն կրթության ասպարեզում (տե՛ս Bréhier, Les Institutions, p. 50)

719. Այս թուրք ամիրայի անունը ըստ Ուռհայեցու Կտրիճ էր (տե՛ս ծանոթ. 713): «Քագաւորն Հայոց (իմա Գագիկ II-ը)—գրում է հայ պատմիչը,—և իշխանքն և ամենայն նախարարքն արարին սէր և միաբանութիւն -րնդ մանուկ ամիրային» (էջ 192): Թուրք ամիրայի Կոստանդնուպոլիս գնալու մասին վկայում է նաև Ուռհայեցին (էջ 193):

720. «Ուղղափառության կիրակին» (մեծ պահքի առաջին կիրակին) նշվում էր 842 թ. և նվիրված էր պատկերապաշտության տարած հաղթանակին:

721. Հելենուպոլիս նշանակում է Հելենեի քաղաք, աղավաղելով դարձել են էլեյ-նուպոլիս (թշվառ քաղաք):

722. Տե՛ս ծանոթ. 201:

723. Եվգոկիա կայսրուհու որդիներին նկատի ունի:

724. Նիկեփոր Բոտանիատեսը ազնվական ծագում ուներ, Անատոլիկոն բանակաթեմի ամենից հարուստ ու երեկելի մարզն էր, որ դարձել էր նաև հիշյալ բանակաթեմի գորավարը (Attal., p. 213: Տե՛ս նաև ստորև, ծանոթ. 778):

725. Պաղ Աղբյուրը (Κρύα πηγή) Ռամդեյի ենթադրությամբ նույնանուն է վաթիոհաբսի հետ, այն վայրի, որտեղ 872 թ. Վասիլ I-ի զորքերի և պավլիկյան առաջնորդ Խրիստիփորի միջև ճակատամարտ տեղի ունեցավ (Ramsey, H.G.A.M., p. 267, n.): Հավանաբար գտնվում էր Տիվրիկի մոտ: Վաթիոհաբսը Ա. Վասիլեի ենթադրությամբ նույնանուն է ժամանակակից Ենի Խանի հետ, Սեբաստիայից հյուսիս-արեմուտք (Βασιλευς, Βυζαντινα և арабы, II, стр. 32: Վաթիոհաբսի տեղադրության մասին տե՛ս նաև Տաշլամ, Արևմտյան սահմանը, էջ 459):

726. Հմմտ. Արխտ. լաստ., էջ 138. «և բազում զօրս ի ձեռն սպարապետաց ընդ այլ ճանապարհ արձակէր. և ինքն բազում ամբոխիւ յարևելս ճանապարհ կալեալ զայր հասանէր ի մեծ քաղաքն Թէոդուպօլիս. և անդ գայրուծի կազմէր»:

727. Ատտալիատեսը պարզաբանում է. «գերմանացիների, որոնք ֆրանկ են կոչվում» (Attal., p. 148): Ռուսելիոսը Rousset de Bailleul-ն է:

728. Բնագրում՝ Μαντζουιερα: Տալիս է Մանազկերտ տեղանվան հայերի մոտ տարածված տարատեսակներից մեկը՝ Մանծկերտ: Բյուզանդական բանակի էթնիկական խայտաբղետության մասին Ուոհայեցին գրում է. Դիոգենեսը «արար ժողով մեծ և ահագին բազմութեան զամենայն աշխարհն Գդաց (գոթաց, արևմտականների—Ն. Բ.) և զհամօրէն ազգն բուլղարաց և զամենայն կղզիս հեռաւորս, զԳամիրս և զամենայն Բիթանիա, զԿիլիկիա և զԱնտիոք, զՏրապիզոն և զամենայն տունն Հայոց՝ որք էին մնացեալ ի քաջ զօրականացն. և բերեալ այլ զօր յայլազգեացն իստաստանացն» (էջ 198):

729. Ուոհայեցին գրում է, որ «առ ի շոյէ պահապանաց քաղաքին՝ յաւուր միում առաւ քաղաքն Մանծկերտ, վասն զի փախեան Հոռոմօց պահապանքն» (էջ 194):

730. Ատտալիատեսը (Attal., p. 149) ցույց է տալիս, որ սուլթանը Մանազկերտում հաստատեց մեծաթիվ թուրքերի և «ղիլիմիտների» (ղայլամցիների):

731. Հմմտ. Մաուր. Ուոհ., էջ 200. «և յայնժամ ...զՏարխանիատն երեսուն հազարով զարձուց (կայսրը—Ն. Բ.) ի վերայ իլաթայ»։ Իմադ էդ-դին Իսպահանցին գրում է, որ Դիոգենեսը իլաթ ուղարկեց ռուսների հրամանատարներին՝ 20 հազար հեծյալներով, որ նրանց դեմ դուրս եկավ իլաթի զորքը՝ թուրք Սնդակի գլխավորությանմբ, նա ջարդեց բյուզանդական զորքերին և դերի վերցրեց նրանց հրամանատարին։ Պատմիչը այս դեպքը թվագրում է հիջրայի 463 թ. Զուլ-Կադ ամսի շորսին, երեքշաբթի օր (1071 թ. օգոստոսի 3, Сбъу Ръзеи, Арабские сказания, стр. 138—199):

Ուոհայեցին ցույց է տալիս նաև, որ կայսրը 12 հազար հոգու էլ ուղարկեց «յԱպիսազք» (էջ 200): Այս փաստը Սկիլիցեսի Շարունակողի մոտ չի արձանագրված, թեև տվյալ պահին անասկանալի է Ափխազիա բյուզանդական զորք ուղարկելու իմաստը։ Իմադ էդ-դին Իսպահանցին ցույց է տալիս, որ Դիոգենեսի բանակում կային և ափխազներ։ Ուոհայեցու «յԱպիսազք»-ը գուցե ուղղել «յափխազա՞ց»:

732. Ավելի խորամուտ հալ պատմիչը բյուզանդացիների անհաջողությունն հիմնական ու միակ պատճառը հենց ուժերի վոշիացումն է համարում (Մաուր. Ուոհ., էջ 200):

733. Մանազկերտի վերստին առման մասին գրում է և Ուոհայեցին. «և յարուցեալ Տիօժէն ամենայն բազմութեամբն գնաց յարևելք՝ յաշխարհն Հայոց և իջեալ ի քաղաքին Մանծկերտոյ՝ և էառ ղնա. և զօրք սուլտանին՝ որ կալր ի քաղաքն՝ փախեան. և զօրս ըմբոնեաց՝ կոտորեաց» (էջ 199):

734. Սկիլիցեսի Շարունակողի սլատմածից այն տպավորությունն է ստացվում, որ Մանազկերտում թուրքերը Դիոգենեսին դիմադրություն չցուցաբերեցին և առանց պատերազմի հանձնեցին քաղաքը։ Ատտալիատեսը, սակայն, ցույց է տալիս, որ Դիոգենեսը բանակեց քաղաքին մոտիկ, ապա վերցնելով զորքի լավագույն մասը, պատեց քաղաքի շուրջ՝ առավել խոցելի տեղ փնտրելով և բաբաններ գործի դնելու հարմար վայր։ Ատտալիատեսի ասելով, այդ կովում մասնակցում էր հայոց հետևակազորը, նա էր, որ արձակվեց միջնաբերդից դուրս գտնվող պարիսպների վրա և գրոհով վերցրեց։ Այս սրանից հետո է, որ թուրքերը ստիպված եղան բանակցություններ սկսելու կայ-



սեր հետ և հանձնել քաղաքը: Այս դեպքերին ականատես էր Ատտալիատեսը, նա հետե-  
վում էր Դիոգենեսին:

735. Թեոդոսուպոլսի դուքս Նիկեփոր Վասիլակի «բնիկ զինվորները» հավանաբար  
հայեր էին: Հայ էր և ինքը Վասիլակը: Մանազկերտի ճակատամարտին Ռոմանոս Դիո-  
գենեսը Ուոհայեցու ասելով «կացոյց զօրագուիս զօրաց իւրոց զնատապ և զՎասիլակ  
իշխանս և Հայեցիք՝ զայր քաջք և պատերազմողք, (էջ 201): Կածղանը, ելնելով այն  
նկատառումից, որ Նիկեփոր Վասիլակը Մանազկերտում շսպանվեց, այլ գերի ընկավ  
(Ուոհայեցու հիշած Վասիլակը սպանվեց), ապա նրանց տարբեր անձնավորութիւններ  
է համարում, թեև շի ժխտում այն հնարավորութիւնը, որ աղբյուրներից մեկն ու մեկը  
սխալ է (Каждан, Армяне, стр. 103):

736. Տե՛ս նախորդ ծանոթագրութիւնը:

737. Մատթեոս Ուոհայեցին տալիս է մանրամասնութիւններ, որոնք բացակայում  
են Սկիլիցեսի Շարունակողի մոտ. «Թագաւորն Տիօֆէն,— գրում է նա,...—զՈւզն և  
զՊածունակն կացուցանէր ընդ աջմէ իւրմէ և ընդ ձախմէ և զայլ զօրսն զառաջոյ և  
զթիկանց» (էջ 201—202): Սկիլիցեսի Շարունակողն ասում է, որ թուրքերի կողմն ան-  
ցան միայն ուղերը, այնինչ Ուոհայեցին գրում է «Ուզն և Պածինակն ի սուլտանի  
կողմն անցանէին» (էջ 202), իսկ Հաստիվերցին, թե «մեծ գունդ մի՝ առ որս շիք ի  
նոսա աստուածապաշտութիւն, ապստամբեալ ի Թագաւորէն Յունաց՝ ի կողմ թշնա-  
մեացն յաւելուին» (էջ 139): Մանազկերտում քաջաբար կռվեցին հայերը: Հայոց զին-  
վորները, գրում է Հաստիվերցին, «ոչ զանգիտէին ի կորովի աղեղնաւորացն Պարսից,  
այլ արութեամբ ընդդէմ կային հանդիսին, և ոչ զթիկունս դարձուցանէին. թէպէտև բա-  
զումք ի սիրոյ Թագաւորին բաժանեցան, սակայն միամտութեամբ նոքա զմա՛ յանձն  
առին» (էջ 139):

738. Մատթեոս Ուոհայեցին վճռական ճակատամարտի վայրը Տողոտափ է անվա-  
նում. «մերձ ի Մանձկերտ, ի տեղին՝ որ կոչի Տողոտափ» (էջ 201):

739. Ատտալիատեսը գրում է, թե Դիոգենեսին ինքը խորհուրդ տվեց իր բանակում  
ծառայող ուղերին հավատարմության վերաբերյալ երդումներ պահանջել և ինքը շի  
սխալվել, քանզի նրանցից և ոչ ոք այդ պատերազմում չանցավ թշնամու կողմը  
(Attal., p. 158—159): Դա, հարկավ, իրականութեանը շի համապատասխանում (տե՛ս  
ծանոթ. 737):

740. Ալիփ Արսւանը ամենևին էլ խաղաղութեան կամ հաշտութեան հետամուտ չէր:  
Դեսպանութիւն ուղարկելով, նա նպատակ ուներ լրտեսել (տե՛ս Ραζεν, Αραβские ска-  
зания, стр. 199—200): Խաղաղութեան վերաբերյալ սուլթանի առաջարկը, ըստ Իմադ  
էդ-դինի, Ռոմանոսն համարեց թուլութեան նշան, դրա համար մերժեց և պատասխա-  
նեց. «Ես այդ առաջարկին կպատասխանեմ Ռեյում» (նույն տեղում, էջ 200):

741. Տե՛ս ծանոթ. 723:

742. Մանազկերտի ճակատամարտը տեղի ունեցավ 1071 թ. օգոստոսի 19-ին: Հու-  
նարեն մի ձեռագրի (Athenensis graecus 1429, folio 45) հիշատակարանում ասված է,  
որ Ռոմանոսը գերի ընկավ օգոստոսի 26-ին շաբաթվա 6-րդ օրը (ուրբաթ). Պ. Գո-  
տիենն այս փաստի հիման վրա ուզում է ուղղում մտցնել Մանազկերտի ճակատամարտի  
ընդունված ամսաթվի մեջ (տե՛ս Gautler, Monodie inedite, p. 157):

Բյուղանդական կայսեր գերվելը մեծ տպավորութիւն գործեց ժամանակակիցների  
վրա: Արիստակես Հաստիվերցին դրան նվիրեց իր աշխատութեան ԻՅ գլուխը. «Յա-  
ղագս Թագաւորին Յունաց, որ ի Թագաւորէն Պարսից ձերբակալ եղև» ի միջի այլոց  
նշելով. «Արդ զայն աշխարհակալ և զմեծ աթոռոյ տէր, իբրև ստրուկ մի անարի մե-

դացն՝ ձերբակալ արարեալ՝ առաջի թագաւորին Պարսից կացուցանէին» (էջ 140: Հմմտ. Մատթ. Ուռն., էջ 202): Մանազկերտի ճակատամարտի վերաբերյալ վերջին գործերից տե՛ս. Toumanoff, The Background: Гусейнов, Из истории, стр. 160—163: Նույնի, Последствия сражения при Манцикерте, стр. 148—152: ճակատամարտի մասին նաև՝ Cahen, La campagne de Mantzikert, p. 613—642: Streater, The battle of Mantzikert, 1071, p. 257—263: Minorsky, Studies, p. 59:

743. Իմադ էդ-դին Իսպահանցու ասելով, սուլթանի հարցին, թե «Ասա ինձ անկեղծորեն, ի՞նչ կուզենայիր, կամ ի՞նչ կանեիր դու եթե հաղթեիր», 'Իրոզնեսը պատասխանեց. «Ես որոշել էի ձեզանից գերի վերցրածներին շների հետ մի տեղ փակել... Իսկ եթե ես քեզ գերի վերցնեի, (շան) վզնոց կ'ազցնեի, այնքան զագաղած էի ես քո վրա» (Розен, Арабские сказания, стр. 202):

